This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

3 2044 009 530 643

Digitized by Google

HARVARD COLLEGE
LIBRARY

FROM THE BEQUEST OF
E. PRICE GREENLEAF
OF QUINCY, MASSACHUSETTS

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Geog. Thghthotz.

This book has no definite author. It is a collection of letters, writings, discussions and debates on religious questions written by ~~church~~ Armenian church dignitaries, ~~gover~~ governors, rulers etc.

It is dedicated to ~~Jacob~~ Joseph Smerjantz.

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ե.

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ

ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՆԵՑ

ԹԻՓԼԻՍ
Տպարան Տ. Ռօտինեանց եւ Մ. Շարաժէ
1901

Digitized by Google

~~IL, 10090~~
~~OL 40946.5~~
~~OL 45420.5~~
OL 45450.36
HARVARD COLLEGE
NOV 10 1906
LIBRARY.
Price Greenleaf Fund

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Августа. 1899 г.

Digitized by Google

Ի ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ԱԶԳԱՍԻՐՈՒ ԱՌՆՆ

ՅՈՎՍԵՓԱՅ ԻԶՄԻՐԵԱՆՑ

ԼԶԼԱՐԵՑԻՈՅ

Անքառիր վարուպէ՝ անմոռոյ յիշատակ
Քոռ խօսքն է՝ որ էր ինքնիր նպատակ, —
«Կռա գայ օր, երկիրն՝ տար ինքնիշխանան,
«Մինոյն բարի գործ յաւիտեան ելմնան»։

Digitized by Google

ՆԱԽԱԲԱՆ

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Բարեյիշատակ Աղա Յովսէփ Իզմիրեանց՝ Ղզլարցի վաճառական, որ 1874 Ապրիլ 13-ին կտակագրով Սահակ—Մեսրոպեան գրական մրցանակը հաստատեց և իւր կենդանութեան իսկ սկսաւ զայն գործադրել, երբ մրցանակի արժանաւոր երկասիրութիւն չներկայացաւ՝ մրցանակներու գումարով նախնեաց մատենագրութիւն հրատարակելու խորհուրդը լղացաւ և իրագործեց, և մրցանակի սահմանուած դրամագլխին արդիւնքներով երկու հրատարակութիւններ կատարել տուաւ։

Յովսէփ—Իզմիրեանց Գրական Յանձնաժողովը, որ պաշտօն ունի Կ. Պոլսոյ Ազգային Պատրիարքարանի հսկողութեան ներքև նոյն բարեյիշատակ Անձին կտակը գործադրելու, պարտանձին համարեցաւ հետևիլ միևնոյն ուղղութեան։

Բարեյիշատակ կտակարարին մանուանէ յետոյ՝ Յանձնաժողովոյն գործի ձեռնարկելէն առաջ անցած տարիներուն տոկոսները և պատահաբար խնայուած մասերը դրամագլուխի վերածուելով և շահի դրուելով՝ առձեռն դումար մը գոյացած է արդէն, որուն արդիւնքովը որոշուած է մերթ ընդ մերթ հրատարակութիւններ ընել «ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» անուան ներքև, նախադասելով միշտ նախնեաց անտիպ երկասիրութիւնները, որք զանազան պատճառներով և մանաւանդ տպագրութեան ծախուց անշահաբերութեան պատճառաւ տակաւին մատենադարաններու անկիւնները մնացած են, և երբեմն ալ օրինակաց նուազութենէն կորսուելու վտանգի ևս ենթակայ են։

Սահակ—Մեսրոպեան Մատենադարանի առաջին հատորներ պէտք է համարուին այն երկու հրատարակութիւնները, զորս կտակարարն Յովսէփ Իզմիրեանց իւր կենդանութեան կատարել տուած է, և են։

Digitized by Google

Ա. ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ, Պատմութիւն Հայոց, հրատարակուած Թիֆլիզ, տպարան՝ Յովհաննէս Մարտիրոսեանցի 1881։

Բ. ԱԳԱՆԹԱԳԵՂԵԱՑ, Պատմութիւն, հրատարակուած Թիֆլիս, տպարան՝ Յովհաննէս Մարտիրոսեանցի 1882։

Այս երկու հրատարակութիւններուն վրայ երկու եաւելցուց Վսեմ. Գ. Կարապետ Եղեանց, որ կատարեալ նշանակուած էր Աղա Յովսէփ Իղմիրեանցի կողմանէ, և սորա մահուանէ ետքը (1883 Նոյեմբեր 15) մատակարարեց նոյն կատարեալին գործերը՝ մինչև Յանձնաժողովոյ կազմութիւնը։

Վերջին երկու հատորները եղան.

Գ. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՏԱՐՕՆԵՑԻՈՑ ԱՍՈՂԿԱՑ, Պատմութիւն Տիեզերական, հրատարակուած է Ս. Պետերբուրգ, տպարան Ի. Ն. Սկորոխոդովի 1887։

Դ. ՂԵՒՈՆԴԵԱՑ մեծի վարդապետի Հայոց, Պատմութիւն, հրատարակուած Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխոդովի 1887։

Այդ հրատարակութեանց իբր շարունակութիւն կամ իբր Սահակ-Մեսրոպեան Մատենադարանի հինգերորդ հատոր կը նկատեմք ներկայ հրատարակութիւնը։

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ

Ուխտանէս պատմիչ՝ Վրաց խնդրոյն վրայ խօսած ատեն, կը լիշէ ԳԻՐՔ ԹՂԹՈՑ անուամբ աղբիւր մը, ցաստի քաղած է եղելութեանց պարագաները և մանաւանդ գլխաւոր անձանց՝ Վրթանէսի, Մովսէսի, Աբրահամու և Կիւրիոնի մէջ փոխանակուած թղթակցութիւնները։ Ահա իւր խօսքերն համաձայն Ս. Էջմիածնի 1871 տարւոյ տպագրութեան, « ի ժամանակն Աբրահամու Հայոց կաթողիկոսի եղև բաժանումն Վրաց՝ քաջալայտ գոլով՝ որպէս ուսուցանեն մեզ ԳԻՐՔ ԹՂԹՈՑՆ։ Բայց այսոքիկ գրեալքս ի մէջն մինչև ցայս վայր ի ժամանակս Մովսիսի Հայոց կաթողիկոսի եղև, որպէս պատմեցաք ձեզ առաջիւ, այլ և այնմ վկայեն ԳԻՐՔ ԹՂԹՈՑՆ». (Հատոր Բ. երես 23)։ Եւ ուրիշ տեղ Մովսէսի և Կիւրիոնի թուղթերուն համար կ'ըսէ թէ «ոչ գտաք ի գրել ի ԳԻՐՍ ԹՂԹՈՑՆ» (եր. 14)։ Նմանապէս Կիւրիոնի թուղթերուն պակասներուն համար կըսէ թէ « ոչ գտաք գրեալ ի ԳԻՐՍ ԹՂԹՈՑՆ » (եր.

Digitized by Google

45), և կը լաւելու պատճառը. « Ոչ արժանի և պաշտաւմ հա-
« մարեալ զանարժան և զանընդունակ նոցա պատասխանիսն
գրել ի ԳԻՐՍ ԹՂԹՈՑՆ » (եր. 46.)։

Այսպիսի հաւաքածոյ մը՝ որ հեղինակութիւն մ'է լաչս պատմչին, շատ աւելի կարևորութիւն ունի քան պարզ ժամանակագրի մը գործը։ Այս տեսութեամբ՝ բանաւոր կը համարինք կարծել թէ այդ թուղթերու հաւաքածոյն պաշտօնական խմբագրութիւն մ'էր, նման կանոններու հաւաքածոյին, ուր կ'ամփոփուէին հեղինակութիւն ունեցող և գործելու ուղեցոյց եղող գրութիւններ։ Ըստ այսմ ԹՂԹՈՑ ԳԻՐՔԸ՝ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻ տեսակէն հաւաքածոյ մըն էր և հոգևոր իշխանութեան ձեռօք կը կազմուէր հայրապետանոցի մէջ և հետզհետէ կաճէր, լաւելմամբ նոր ու կարևոր գրուածոց։

Կանոնագիրքը առաջին անգամ Ս. Յովհան Օձնեցի Իմաստասէր հայրապետին ձեռքով կազմուեցաւ, և հայրապետանոցի օրինագիրքը եղաւ, բայց հետզհետէ Կանոնագիրքը քննդարձակեցաւ նոր գտնուած և կամ նոր կազմուած կանոններով, որք երբեմն Հայրապետներու կամքով և երբեմն ալ թերևս լոկ գրիչներու և ընդօրինակիչներու ձեռքով հաւաքածոյին մասը կազմեցին։

Ձենք գիտեր ստուգիւ թէ ո՞վ առաջին անգամ Թղթոց Գիրք մ'ալ կազմելու նախաձեռնութիւնը ունեցաւ, սակայն և այնպէս բոլորովին անհաստատելի պիտի չլինէր, եթէ նորա ծագումն ալ Կանոնագիրքին ծագման միացնէինք։ Առ այս կը նպաստէ նկատել Գէր։ Թղթոցն սկիզբները գտնուած գրութեանց ժամանակն ու արժէքը, որք խոհական ընտրութեան մը կնիքը կը կրեն. մինչ լետ ժամանակաց միևնոյն խստութիւնը չէ պահուած, ինչպէս կերևի ինչ ինչ կանոններու անընտրողաբար ընդունելութենէն։

Թղթոց Գէր։ին պարունակութիւնն ալ դիտելով, կրնանք լաւելու թէ առաջելապէս Նեստորական և Քաղկեդոնական մեծ խնդիրը եղաւ պատճառ՝ որ անոր վերաբերեալ գրութիւններ ի մի հաւաքուին և ծառայեն Հայաստանեայց Եկեղեցւոյն և Հայրապետական Աթոռոյն իբր ձեռնարկ մը, այդ խնդրոյն վրայ որոշ ուղղութիւն մ'ունենալու համար ընդդիմախօսից հանդէպ։

Այս է Թղթոց Գէր։ին նկատմամբ մեր զաղափարը, զոր

պարզապէս դիտողութիւններով և մերձեցումներով կազմուած ենք, քանի որ լայնի բան մը գրուած չենք գտներ, և զայն պարզապէս բանասիրաց կարծիքին կ'ենթարկենք։

Թղթոց Գէրէին գոյութեանը մասին Ուխտանէսէ դուրս ուրիշ լիշատակութիւն առ այժմ չենք գտներ նախնեաց մօտ, և անոր օրինակին անգամ չենք հանդիպիր այն մատենադարանաց մէջ, ուր հայ գրչագիրներու մեծագոյն հաւաքածոներ կազմուած են։ Միայն Անտոնեան Միաբանութեան մատենադարանին մէջ տեսնուած էր ձեռագիր մը այս անունամբ, իր տեսակին մէջ միակ, և որ արդէն բանասէրներէ ոմանց հետաքրքրութեան առարկայ դարձած էր։ Նոյն իսկ Վենետիկոց և Վիէննայի Մխիթարեան հայրերէն ազգային և բանասիրական նիւթերով զբաղողներ առիթ ունեցած էին տեսնել զայն, մասեր ընդօրինակել և տանիլ, և յետոյ իրենց աշխատասիրութեանց մէջ անկէ օգտուիլ, երբեմն լիշատակելով աղբիւրը և երբեմն ոչ։

Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովը տեսնելով որ միակ օրինակ մը միշտ կորստեան վտանգի ենթակայ է, և միւս կողմանէ Թղթոց Գէրէին պարունակութիւնը նոր և կարևոր լոյսեր կը սփռէ ազգային մատենագրութեան և պատմութեան և եկեղեցական տեսութեանց վրայ, փափաքեցաւ զայն ամբողջովին իլլուս ընծայել և իր առաջարկութիւնը ներկայեց Անտոնեան Միաբանութեան Արքահայր Գերապայծառ Հ. Ռափայէլ Ծ. Վարդապետ Միսէրեանի, և գրչագիր հատորը ամբողջութեամբ և նոյնութեամբ ընդօրինակել տալով և տպագրութիւնը աւարտելով ահա կ'ընծայէ զայն լուսամնասիրութիւն և ի քննադատութիւն հայազգի և հայագէտ բանասիրաց։

Հարկաւ աւելի լաւ կը լինէր, որ Թղթոց Գէրէին հրատարակութիւնը պարունակէր միանգամայն քննական և քննադատական տեսութիւններ, լուսաբանութիւններ և բաղդատութիւններ, սակայն այսպիսի աշխատութիւն մը Յանձնաժողովոյ գործառնութեանց շրջանակէն դուրս ըլլալով հանդերձ՝ միւս կողմանէ թերևս տարապայման պիտի լայնազէր հրատարակութիւնը, եթէ օրինաւոր աշխատասիրութեան մը լրման ուսաուէր։

Հետևաբար Յանձնաժողովը, որ միայն և միայն հրատա-

Digitized by Google

բակութիւնը իրեն նպատակ ընդունած է, հոգ տարաւ որ պարզապէս ձեռագրին օրինակները շատցուին ամենայն ճշդութեամբ և հաւատարմութեամբ։ Ըստ այսմ տպագրութեանս մէջ մուծուած փոփոխութիւնները կը վերաբերին այնպիսի կէտերու, որք բնաւ օրինակը չեն այլայլեր։ Այդպէս են՝ յատուկ անուանց գլխագիրները՝ որք հին գրչագրաց մէջ չեն գործածուիր, կէտադրութիւնները՝ որ գրչագրին մէջ բոլորովին անկանոն էին, հատուածոց բաժանումները՝ որոց մտադրութիւն չէր դարձուցած ընդօրինակողը՝ գրեթէ միահետ դրութիւն մ'ընծայելով, տեղ տեղ ալ տառից և գրութեանց տարբերութիւններ՝ երբ ասոնք հաստատուն սովորութեան մը նշանները չէին կրեր և լոկ գրողի անմտադրութեան պէտք էր վերագրուէին պատահական ըլլալնուն համար. երբեմն ալ պակաս գիրերը կամ մացած բառերը նոյնոր գիրով լրացուցինք։ Ասոնցմէ դուրս որչափ հնար էր, ամենայն ինչ բառ առ բառ և տառ առ տառ տպագրուած է, պահելով մինչև իսկ ---, ---երկբարբառները, առոգանութեան ինչ ինչ նշանները, ընդօրինակողին լիշատակարանները, և այլ հնութեան հետքերը, ուզելով այսու ամէն դիւրութիւն ընծայել բանասիրաց և քննադատից, որոց կը թողունք ամէն ուսումնասիրութիւն և ամէն հետազօտութիւն՝ վաւեր գրութիւնները անվաւեր գրութիւններէն զատելու, հեղինակները որոշելու և ճշդելու, ընթերցուածները ուղղելու, պատմական խնդիրները ուսումնասիրելու, հին և նոր աղբիւրներ և բնագիրներ բաղդատելու, և վերջապէս համեմատելու այն մասերը որք Թղեռոց 'Ի՝ էրէէն դուրս ուրիշ հեղինակութեանց մէջ կը գտնուին կամ ուրիշ հրատարակութեանց մէջ ի լոյս ընծայուած են, օրինակ իմն Վրաց խնդրոյն թղթակցութիւնը Ուխտանէսի մէջ *), և Սահակայ թուղթերը Սոփերքներու մէջ, և այլն, մէկ խօսքով Ցանձնաժողովը պարզապէս նախնական նիւթ մը կը դնէ գրական ճարտարներուն ձեռքը իւր բնական վիճակին մէջ,

---

*) Այդ հեղինակի էջմիածնական տպագրութեան համաձայն երբ ոգնէի նշանակած ենք ի կարգի վրիպակաց՝ քանի մը նամակներու կարեւոր տարբերութիւնները։—Նոյնպէս ուղղագրած ենք ինչ ինչ բառեր՝ որոնք յայտնի սխալներ կրնային նկատուիլ՝ ըստ պահանջման իմաստից։

Digitized by Google

որպէս զի զտեն և լցկեն և ամէն հնարաւոր օգուտ քաղեն անկէ։

Ձեռագրին ընդօրինակութեան և առաջին բաղդատութեան հսկողը եղաւ գլխաւորապէս Տ. Յովհաննէս Աւագ քահանայ Մկրտեան. տպագրութեան հոգը կատարեց Տ. Գիւտ Աւագ քահանայ Աղանեանց. իսկ՝ Տ. Բարգէն Ծ. վարդապետ Կիւլէսէրեան՝ վերջին բաղդատութիւնը ըրաւ և կազմեց լատուկ անուանց և վրիպակներու ցանկերը։

ԳՐՉԱԳԻՐ ԱՆՏՈՆԵԱՆՑ

Անտոնեան Միաբանութեան Կոստանդնուպոլսոյ մէջ ունեցած Օրթաքէօյի վանքին մատենադարանին կը պատկանի և գրչագրաց ցուցակին մէջ ԺԲ թուահամարով արձանագրուած է սոյն թղթոց Դէպ։, ինչպէս և կոչուած է այն կողքին ներսի կողմը գրուած ծանօթութեան մէջ. Դէպ։ թղթոց է Վանոց Սրբոյ Լուսաւորչի . . . է Հռովմ. թէպէտև ցուցակին մէջ լիշուած է Նոմանի Նանէց անունով։ Գրչագրին առաջին ստացողը եղած է Գրիգոր արքեպիսկոպոս Բաղինեան որ Հռովմի մէջ կապրէր իբր ձեռնադրող հայ եպիսկոպոս, և իւր գիրքերը նուիրած է նոյն Անտոնեան Միաբանութեան Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ Հռովմայ մէջ ունեցած վանքին շուրջ 1840 թուականներուն։ Իսկ 1871-ին լիշեալ վանքին փակուելուն առթիւ ուրիշ գոյից հետ այդ ձեռագիրն ալ փոխադրուած է ի Կոստանդնուպոլիս և զետեղուած Անտոնեանց վանքին մատենադարանը, Օրթաքէօյ։

Գրչագիր հատորիս մեծութիւնն ու թանձրութիւնն են 24×18×8 հարիւրորդաչափ (սանտիմէթր), կողքը փայտեայ և կաշէպատ, այլ թէ կաշին և թէ կազմը հինցած և խախտած վիճակի մէջ։

Թուղթը բամպակեայ է, հնութեամբ գորշացեալ, և կը պարունակէ այժմ 355 թերթ կամ 710 երես։

Թուղթերը թուահամարեալ են վերջէն հայ տառերով լուսանցքին մէջ, իսկ երեսները սովորական թուանշաններով երեսներուն ներքևը. թուղթերուն թուահամարը կը հասնի մինչև ՅԿԱ—361, և երեսներուն թուահամարը՝ մինչև 722, բայց միջանկեալ անճշդութիւններ և տարբերութիւններ կան,

Digitized by Google

ինկած թերթերուն պակասը նկատի առնուելէն կամ չառնուելէն յառաջ եկած։

Թուղթերուն թուահամարը չունի Ժ. և ԺԱ. և ԺԲ. թիւերը, թէպէտև գրուածքին ընթացքը, Ակակաւ թղթոյն Ե-ՈՒ յոյն այլոփն և Ֆայց յոմէնայնէ Գրքոց։ (եր. 14) բառերուն միջև բնաւ թերի մաս մը չցուցներ։ Այս տեղ երեսներուն թուահամարը ուղիղ կ'ընթանալ և 18էն կ'անցնի 19։

Երեսներուն թուահամարը տասը թիւի սխալ մ' ունի, ՂԴ. թուահամարեալ թերթին վրայ և առաջին երեսը 181 նշանակուած ատեն ետեր 192 գրուած է և այնպէս շարունակուած անմտադրութեամբ։

Թուղթերուն թուահամարէն կը պակսին ՃԼԹ և ՃԽ թերթերը, և իրօք ալ այստեղ երկու թերթ ինկած են և կը պակսին Աբրահամ կաթուղիկոսի թղթոյն վերջը և Կոմիտաս կաթուղիկոսի թղթոյն սկիզբը (եր. 211)։ Իսկ երեսներու թուահամարը պակասին միտ չդներ և 280էն կանցնի 281։

Թուղթերուն թուահամարէն կը պակսի ՃԿԲ թերթը, և իրօք թուղթ մըն ալ այստեղէն ինկած է, և կը պակսի Կելեմտինոսի Հայրապետին թղթոյն վերջը և Պետրոս Հայրապետին թղթոյն սկիզբը (եր. 242). իսկ երեսներու թուահամարը առանց պակասին մտադրութիւն դարձնելու 322-էն կ'անցնի 323։

Երեսներու թուահամարին մէջ դարձեալ երկու թիւ կը պակսին անմտադրութեամբ, որովհետև գրուած կը գտնենք հետզհետէ 403, 405, 406, 408, իսկ 404 և 407 թիւերը բոլորովին մոռցուած են միևնոյն թերթի յետ և յառաջին մէջ։

Թուղթերուն թուահամարէն ՃԹ թերթին թուատառը երեսին ներքև գրուած է, որովհետև թուղթին կէսը վերէն վար պատռած է, և թէպէտ թուղթի կտորով մը նորոգուած, բայց միշտ ընթերցուածը անկատար մնացած է (եր. 453)։ Երեսներուն թուահամարը կարգաւ կը շարունակէ։

Երեսներուն թուահամարներուն մէջ երկու թիւ կրկնուած անմտադրութեամբ և գրուած է 622, 623, 622, 623, 624 և ըստ այսմ շարունակած, այլ թերթերուն թուահամարը չունի կրկնութիւն։

Թուղթերուն թուահամարին մէջ ՃԻԸ թերթէն ետքը թուղթ մը ինկած է և տեղը ճերմակ թուղթ դրուած և անոր

վրայ 655 և 656 երեսներու թուահամարը չարունակուած, մինչ թուղթերու թուահամարը պակասին մտագրութիւն չընծայեր և ՑԻԸ թերթէն ետքը կը գրէ ՑԻԹ։ Այս տեղ կը պակսի Հայրապետի և Պատրիարքի վիճաբանական գրուցատրութեան սկիզբը (Եր. 483)։

Վերջապէս հատորին վերջէն ալ կը պակսի ընդօրինակողին լիշատակարանին վերջը, և գոնէ թերթ մը ինկած պէտք է ըսենք, թէպէտ գրքին ամբողջութիւնը լրացած կը լինի լիշատակարանի սկզբնաւորութեամբ։

Գիրքը նախադուռ ալ չունի, սակայն տետրները 12 թուղթէ կազմուած լինելէն և առաջին տետրը այժմ 9 թուղթ ունենալէն կրնանք հետևցնել թէ 3 թուղթ ինկած են ընկիզէն, որք նախադուռը, գուցէ և նախաբան մը կամ բովանդակութեան ցուցակը պարունակէին։ Այսու հանդերձ գիրքին բովանդակութիւնը ամբողջ է, որովհետև ճիշտ ու ճիշտ առաջին գրուածին մակագրութենէն կ՚սկսի ձեռուընլս գրտնուած հատորը։

Գրուած էջերուն ընդարձակութիւնն է 20×12 հարիւրարդաչափ, իւրաքանչիւր երես 30 տող, սովորական և լաստակ և կանոնաւոր բոլորգիր, սև մելան, լաւ պահուած։

Իսկ մակագրութիւններ հաւասար բոլորգրով, բայց կարմիր մելանով գրուած են, զարդագիրեր և զարդեր բոլորովին կը պակսին։ Գրութիւնը ընդհանրապէս ինամոց ձեռքէ ելած է, թէպէտ ընդօրինակութեան վրիպակներէ զերծ չէ, որոց մէջ կան ես քերականական սխալներ կամ լեզուական աղաւաղումներ։ Լատանցներուն մէջ երբեմն ուղղուած են գլխաւոր վրիպակները, երբեմն ալ մոռցուած բառերը աւելցուած են, զորս մենք տպագրութեան մէջ ուղղեցինք կամ ներս առնելով աւելցուցինք։

Պարունակեալ գրութեանց մակագրութիւնները համառօտ կերպով իւրաքանչիւր թերթին ներքև կրկնուած են մինչև ՑԻԸ թերթը կամ 655 երեսը և անկէ ետքը զանց եղած է։ Մեր տպագրութեան մէջ ատոր նմանութիւնը ըրինք իւրաքանչիւր էջին ճակատը մակագիրը կրկնելով համառօտ կերպով։

Գրութեան տեղւոյն և թուականին վրայ երկար կրելու պէտք չունինք, որովհետև բոլոր լիշատակարանները նոյնու-

թեամբ տպագրուած են և բանասէրք պէտք եղածը կրնան ուսումնասիրել։ Բայց կարևորը դիտել տալու համար կըսենք թէ ընդօրինակողն է Թումաս քահանայ Հռոմկլայեցի, որ նոյն բերդին առումէն տարի ու կէս առաջ մեկնած է անտի, բայց թէ ուր հաստատուած և գրած է, չէ բացատրուած, այլ հաւանաբար Սիս եղած ըլլալ կ'ենթադրուի։

Գրութեան թուականն է՝ Հռոմկլայի առումէն վեց տարի ետքը (էջ. 537.) և որովհետև առումը տեղի ունեցաւ 1292 Ծռազատակի տարին, գրութեան թուականը կը լինի 1298։

Գրեալ.ոմ Ցեռ 435 ծանօթութիւնը, զոր մենք ալ տըպագրութեան մէջ պահեցինք (էջ. 8), գիրքին գրութեան հետ կապ չունի, այլ ետքէն նոտոր գրով դրուած ծանօթութիւն մ'է. Պրոկլի թուղթին թուականը ցուցնելու մտքով՝ օտար ձեռքէ աւելցուած։

Թումաս քահանայ իր հաւաքածոյին առաջին մասին համար առջևը ունեցած է նոյն իսկ Գրիգոր Բ. Վկայասէր կաթողիկոսին ձեռագիրը Շիէ—1078 թուին դրուած (էջ. 219), որով նախատիպ բնագրին յարգին հետ կը շատնայ և կը բարձրանայ մեր օրինակին ալ յարգն ու պատիւը։ Այդ առաջին մասը կը հասնի մինչև Կոմիտաս կաթուղիկոսի թուղթը։ Ցաւոնի չէ մեզ թէ գիրքին մնացորդը ուր տեղէն ընդօրինակուր է, գուցէ լիշատակարանին պակաս մասերուն մէջ բացատրած էր։

Փոքրիկ լիշատակարան մըն ալ կայ Անաստաս կայսեր յայտագրին ներքև թէ «Մինչէ՝ Գրեցոս և այլն». (էջ. 278) սակայն այդ ծանօթութիւնն ալ ընդօրինակութեան համար չէ, այլ պարզապէս Անաստաս կայսեր թղթին թուականը կուզէ յայտնել։

Այս բոլոր խնդիրները, ինչպէս ըսինք, կը թողունք բանասէրներու զննութեանց և քննադատութեանց, մեզի պահելով միայն Նախնեաց կարևոր մատենագրական մէկ առանձին կորստեան վտանգէ ազատած լինելու և քննադատներու ուսումնասիրութեանց առաստ նիւթ մատակարարած լինելու գոհունակութիւնը։

ՑՈՎՍԷՓ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԳՐԱԿԱՆ ՑԱՆԶՆԱԺՈՂՈՎ

Digitized by Google

ՑԱՆԿ ԹՂԹՈՑ

Ա. Թուղթ Գրիգորեայ եպիսկոպոսի առ սուրբն Սահակ հայրապետ հայոց եւ առ սուրբն Մաժդոց, էջ՝ 1.

Բ. Պատասխանի թղթոյն Գրիգորի երանելոյ ի Սահակայ եւ ի Մաշդոցէ սուրբ վարդապետացն հայոց. էջ՝ 9.

Գ. Թուղթ յԱկակայ եպիսկոպոսէ Մելիտինացւոյ առ սուրբ Սահակ հայոց հայրապետ. էջ՝ 14.

Դ. Պատասխանի Տեառն Սահակայ թղթոյն Ակակայ. էջ՝ 16.

Ե. Թուղթ յԱկակայ եպիսկոպոսէ ի հայս. էջ՝ 17.

Զ. Երանելի մեծի Գերգոդահարն Մովսէսի Խորենացի, եպիսկոպոսի. էջ՝ 22.

Է. Երանելոյն Յովհաննու հայոց եպիսկոպոսապետի, ապացոյց երկուց բնութեանց ասել զփրկիչն եւ կամ մի բնութիւն. էջ՝ 29.

Ը. Թուղթ հայոց ի պարսս, առ ուղղափառս. էջ՝ 41.

Թ. Թուղթ հայոց ի պարսս առ ուղղափառս. էջ՝ 48.

Ժ. Թուղթ Ասորեաց ուղղափառաց ի հայս. էջ՝ 52.

ԺԱ. Պատասխանի թղթոյն Ասորեաց, ի Ներսեսէ հայոց կաթուղիկոսէ. եւ ի Մերշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսէ. էջ՝ 55.

ԺԲ. յԱրդիսոյէ եպիսկոպոսէ Ասորեաց առ Տէր Ներսէս հայոց կաթուղիկոս թուղթ ողջունի. էջ՝ 59.

ԺԳ. Արդիսոյի եպիսկոպոսի Ասորեաց ուղղափառաց, առ Տէր Ներսէս կաթողիկոս հայոց, եւ առ Աթոռակիցս Նորին. յաղագս անիծեալ Նեստորականաց հերձուածողաց. էջ՝ 62.

ԺԴ. Նորին Արդիսոյ եպիսկոպոսի, յաղագս անիծեալ Նեստորականաց եւ ամենայն հերձուածողաց. էջ՝ 66.

ԺԵ. Նորին Արդիսոյի եպիսկոպոսի յաղագս նզովելոյ զամենայն հերձուածողս, որք էին հակառակ ուղղափառաց. էջ՝ 68.

ԺԶ. Տեառն Ներսէսի հայոց կաթուղիկոսի թուղթ մեղադրութեան առ եպիսկոպոսունսն. էջ՝ 70.

Digitized by Google

ԺԷ. Ուխտ միաբանութեան հայոց Աշխարհիս ի ձեռն. Ներսէսի հայոց կաթուղիկոսի. եւ Մերչապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, եւ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի, եւ այլոց աթոռակցաց եւ Տանուտէրանց եւ Ազատաց եւ համաւրէն ժողովրդականաց. էջ» 72.

ԺԸ. Թուղթ զոր Տէր Յովհաննէս հայոց կաթուղիկոս եւ այլ եպիսկոպոսք առ սիւնեաց եպիսկոպոսն եւ առ Տէրն արարին. էջ» 78.

ԺԹ. Թուղթ զոր Տէր Յովհաննէս հայոց կաթուղիկոս եւ այլ եպիսկոպոսունք, առ Աղուանից եպիսկոպոսունս արարին. էջ» 81.

Ի. Յովհաննու հայոց կաթուղիկոսի ի Յայտնութիւնն Քրիստոսի. էջ» 85.

ԻԱ. Փառաւորելոյ տերանց Վրթանիսի տերանց նուիրակի եւ վարդապետի Գչկան որդոյ, ի Սորմենայ Սորատելատէ. եւ հայոց զաւրավարէ. էջ» 90.

ԻԲ. Պատասխանի թղթոյն Սորմենայ, որ առ Վրթանէս վարդապետ գրեաց. էջ» 93.

ԻԳ. Հաւատարմագունի եւ իմաստնագունի եւ աստուածասիրագունի եղբաւր՝ ողորմելիս Պետրոս տերամբ խնդալ. էջ» 99.

ԻԴ. Սրբասէր եպիսկոպոսաց Մանասէի, Յովանէսի եւ Տեառն Դիգայ Դաշտկարանի եւ Տեառն Սարգսի եւ Տեառն վարդապետի ի Սահակայ կորուսեալ ծառայէ խոնարհ երկրպագութիւն. էջ» 108.

ԻԵ. Այս առաջին թուղթ գրեցաւ ի Մովսէսէ եպիսկոպոսէ առ Վրթանէս Քերդող սրբոյն Գրիգորի Տեղապահ. էջ» 110.

ԻԶ. Պատասխանի թղթոյն Մովսէսի ի Վրթանիսէ. էջ» 112.

ԻԷ. Թուղթ շրջագայական Մովսէսի եպիսկոպոսի. էջ. 113.

ԻԸ. Պատճառք Դ. ժողովոյն երկաքնակացն, Մովսէսի վրաց ուղղափառ եպիսկոպոսի. էջ» 119.

ԻԹ. Պատասխանի թղթոյն Մովսէսի եպիսկոպոսի. էջ. 128.

Լ. Թուղթ շրջագայական Տեառն Վրթանիսի Քերդողի. էջ» 130.

ԼԱ. Պատասխանի թղթոյն Տեառն Վրթանիսի. էջ» 132.

Digitized by Google

ԼԲ. Թուղթ երկրորդ ի Մովսիսէ եպիսկոպոսէ առ Վրթանէս Քերդող. էջ» 133.

ԼԳ. Պատասխանի թղթոյն Մովսէսի. էջ» 135.

ԼԴ. Տեառն Պետրոսի ի Վրթանիսէ. էջ» 136.

ԼԵ. Տեառն Կիրովպի ի Վրթանիսէ. էջ» 138.

ԼԶ. Թուղթ երրորդ Մովսէսի եպիսկոպոսի առ Վրթանէս Քերդող. էջ» 140.

ԼԷ. Պատասխան թղթոյն Մովսէսի եպիսկոպոսի ի Վրթանիսէ. էջ» 141.

ԼԸ Կանոնք որ եղան ի Դուինի, մինչդեռ մտածութիւն էր ժողովելոյ եպիսկոպոսացն կարգել կաթուղիկոս հայոց յետ մահուանն Մովսէսի կաթուղիկոսի, եւ խափանեցան այնմ անգամ. էջ» 146.

ԼԹ. Ձեռնարկ՝ զոր խնդրեաց Սմբատ Վրկան Մարզպան, յայն եպիսկոպոսունս, որք դարձեալ ժողովեցան նորին հրամանաւ ի Դուին, կարգել կաթուղիկոս հայոց, յետ մահուանն Մովսէսի. եւ զայս ձեռնարկ ետ նոցա՝ էջ» 149.

Խ. Ձեռնարկ՝ զոր ետուն Աբրահամու հայոց կաթուղիկոսի ի միաբանութեանն աշխարհիս հայոց, այնոքիկ որ էին ընդ իշխանութեամբ հռոմոց ի թագաւորութեանն Մաւրիկան. էջ» 151.

ԽԱ. Սրբասիրի Տեառն Աբրահամու հայոց կաթուղիկոսի ի Գրիգորէ նուաստ Քերդողէ. էջ» 153.

ԽԲ. Առ սրբասէր Տէր Աբրահամ, ի Մովսիսէ. էջ» 161.

ԽԳ. Պատասխանի. էջ» 163.

ԽԴ. Թուղթ առաջին Տեառն Աբրահամու հայոց կաթուղիկոսի, առ Կիւրիոն վրաց կաթուղիկոս. էջ» 164.

ԽԵ. Պատասխանի. էջ» 166.

ԽԶ. Թուղթ Տեառն Սմբատայ Վրկան Մարզպանի, առ Կիւրիոն՝ վրաց կաթուղիկոս. էջ» 168.

ԽԷ. Պատասխանի. էջ» 170.

ԽԸ. Առ Տէր Սմբատ ի Մովսիսէ. էջ» 172.

ԽԹ. Պատասխանի. էջ» 174.

Ծ. Թուղթ երկրորդ Տեառն Աբրահամու՝ հայոց կաթուղիկոսի, առ Կիւրիոն վրաց կաթուղիկոս. էջ» 174.

ԾԱ. Պատասխանի. էջ» 178.

Digitized by Google

ԾԲ. Թուղթ երրորդ Տեառն Աբրահամու հայոց կաթուղիկոսի, առ Կիւրիոն վրաց կաթուղիկոս. էջ՝ 180.

ԾԳ. Պատասխանի—186. Չորրորդ՝ Քաղկեդոնի ժողովն. էջ՝ 185.

ԾԴ. Թուղթ շրջագրական Տեառն Աբրահամու հայոց կաթուղիկոսի. էջ՝ 189.

ԾԵ. Պատասխանի ի հայոց թղթոյն Աղուանից, Վրթանէսի Քերդողի. էջ՝ 196.

ԾԶ. Տեառն Կոմիտասու հայոց կաթուղիկոսի վասն հաւատոյ. էջ՝ 212.

ԾԷ. Յովհաննու իմաստասիրի հայոց կաթուղիկոսի սակս ժողովոց որ եղեն ի հալք. էջ՝ 220.

ԾԸ. Նորին Տեառն Յովհաննու հայոց կաթուղիկոսի ընդդէմ այնոցիկ որ ապականեն զսուրբ խորհուրդն ի ձեռն խմորոյ եւ ջրոյ. էջ՝ 234.

ԾԹ. Յովհաննու Մանդակունւոյ հայոց կաթուղիկոսի. էջ՝ 239.

Կ. Երանելոյն Կելեստիանոսի եպիսկոպոսի Հռոմայ, թուղթ առաջին առ Նեստոր. էջ՝ 241.

ԿԱ. Առաջին թուղթ Պետրոսի առ Ակակ. էջ՝ 243.

ԿԲ. Երկրորդ թուղթ Պետրոսի առ Ակակ. էջ՝ 244.

ԿԳ. Թուղթ Ա. Ակակայ առ Պետրոս պատրիարգ. էջ՝ 245.

ԿԴ. Երրորդ թուղթ Պետրոսի առ Ակակ հայրապետ. էջ՝ 247.

ԿԵ. Թուղթ երկրորդ Ակակայ առ Պետրոս. էջ՝ 249.

ԿԶ. Թուղթ չորրորդ Պետրոսի հայրապետի առ Ակակ. էջ՝ 250.

ԿԷ. Թուղթ երրորդ Ակակայ առ Պետրոս. էջ՝ 251.

ԿԸ. Թուղթ հինգերորդ Պետրոսի առ Ակակ. էջ՝ 253

ԿԹ. Թուղթ չորրորդ Ակակայ առ Պետրոս. էջ՝ 256.

Հ. Թուղթ վեցերորդ Պետրոսի առ Ակակ. էջ՝ 258.

ՀԱ. Ջեռնարկ զոր արար ի թղթին Ակակիոս հայրապետ, որ է ի Կոստանդնուպալիս. էջ՝ 264.

ՀԲ. Թուղթ հինգերորդ Ակակայ առ Պետրոս. էջ՝ 265.

ՀԳ. Թուղթ եօթներորդ Պետրոսի առ Ակակ. էջ՝ 267.

ՀԴ. Թուղթ վեցերորդ Ակակայ առ Պետրոս. էջ՝ 268.

ՀԵ Միաւորութեան գիր՝ որ առաւ բերել ի ձեռն երա-

Digitized by Google

նելոյն Պերգամիոս Ապատեղիոսի ի բարերար արքայէ Զենոնէ եւ յԱկակայ գլուխ եպիսկոպոսաց՝ որ են ի Կոստանդնուպաւլիս, առ երանելին Պետրոս՝ գլուխ եպիսկոպոսաց եւ հայրապետ հաւատարիմ՝ քաղաքին Աղեքսանդրացոց էջ։ 269.

ՀԶ. Թուղթ ուղերորդ Պետրոսի առ Ակակ. էջ։ 272

ՀԷ. Վեցերորդ ? Ակակայ առ Պետրոս. էջ։ 274.

ՀԸ. Թուղթ իններորդ Պետրոսի առ Ակակ. էջ։ 276.

ՀԹ. Թուղթ զոր արար Անաստաս թագաւորն ընդդէմ ամենայն հերձուածողաց. էջ։ 277.

Զ. Պատճէն թղթոյն հայրապետին Կոստանդնուպաւլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխանն. էջ։ 279.

ԶԱ. Պատասխանի թղթոյն Փոտայ. գրեալ Սահակայ հայոց վարդապետի հրամանաւ Աշոտայ իշխանաց իշխանի. էջ։ 283.

ԶԲ. Թուղթ Գագկայ Վասպուրականի հայոց թագաւորի. առ Կայսրն Յունաց Ռոմանոս, վասն հաւատոյ. էջ։ 295.

ԶԳ. Տեառն Խաչկայ հայոց կաթուղիկոսի, բան խոստովանութեան, պատասխանի Յունաց գրոյն՝ զոր արձակեալ էր առ նա Մեսրապոլիսն Մելետինոյ.

Ի չորանցն՝ Թուղթ Սամուիլի Կամրջաձորեցոյ հայոց փիլիսոփայի, պատասխանի թղթոյն Թէոդորոսի Մեսրապաւլտի Մելիտենոյ, գրեալ հրամանաւ Խաչկայ հայոց կաթուղիկոսի. էջ։ 302.

ԶԴ. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, մեծի իմաստասիրի, պատասխանի թղթոյն Անաստասի եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալն էր. էջ։ 323.

ԶԵ. Տեառն Գէորգեայ հայոց վերադիտողի եւ հոգեշնորհ փիլիսոփայի. պատասխանի թղթոյն Յովհաննու Ասորւոյ պատրիարգի. էջ։ 335.

ԶԶ. Թուղթ հոռոմոց ի հայս, ձայնակից և համախոհ ժողովոյն Քաղկեդոնի եւ Տոմարի հայհոյութեանն Լեւոնի, զոր եբեր աստուածապատիւ Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, յառաջ քան զեպիսկոպոսութիւնն իւր, որ վասն թարգմանութեան հասեալ ի թագաւորական քաղաքն ի Կոստանդնուպաւլիս. իսկ նոցին յաղագս միաբանութեան հաւատոյ ընդ ձեռն նորա գրեալ, եւ առաքեալ հայրապետին կապարեալ կնքով, զոր ոչ ընկալեալ զնոցայն հայհոյութիւն մերոյ աշ-

Digitized by Google

խարհիս, այլ արձանացեալ ի հաւատս սուրբ Առաքելոցն, եւ ի խոստովանութիւն երիցս երանելոյ Սրբոյն Գրիգորի, ամենեին անշարժ մնացեալք ոչ ետուն տեղի դրդուելով ի շաւղաց ուղղափառութեան. էջէ» 358։

ԶԻ. Պատասխանի թղթոյն՝ զոր գրեաց Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, առ Տէր Գերմանոս Կոստանդնուպաւլսի հայրապետն, որք երկու բնութիւնս և երկուս ներգործութիւնս և երկուս կամս խոստովանին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ որք ի կենդանարար խորհուրդն չուր խառնեն, հետեւեալք ժողովոյն Քաղկեդոնի. էջէ» 373։

ԶԸ. Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի առ Նեստոր, զի տայր նմա տեղի ապաշխարութեան լառաջ քան զմերժել նորա. զի չեւ ես էր լեալ սուրբ Սիւնհոդոս որ կամաւքն Աստուծոյ ժողովեցան Եփեսոս։ Թուղթ Կիւրղի առ Նեստոր. էջէ» 396։

ԶԹ. Երանելւոյն Մակարայ սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետի, կանոնական թուղթ ի հայս վասն կանոնագրութեան կաթուղիկէ եկեղեցւոյ կարգաց, զոր չէ արժան ընդ սահման եւ ընդ կարգ անցանել. Գլուխք ինն. էջէ» 407։

Ղ. Բացայայտութիւն համաձայն աստուածաբանութեան հոգելից հարցն սրբոց ըստ առաքելասահման աւանդիցն եկեղեցւոյ Քրիստոսի, հանդերձ հաւատարանութեամբ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց, ասացեալ սրբոյ վարդապետին Սահակայ հայոց կաթուղիկոսի եւ մեծի թարգմանչի ընդդէմ երկաբնակաց Նեստորականացն. էջէ» 413։

ՂԱ. Զրոյցք Կոմիտասայ հայոց հայրապետի եւ Պատրիարգի Կոստանդնուպաւլսոյ. էջէ» 484։

ՂԲ. Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց ի հոլակապ եւ յականաւոր ուխտն Կճաւայ, վասն կարծեացն անիծելոյ Թոնրակեանց Յանեսի եւ Յամրեսի, որ եկն զգեստու ոչխարաց, եւ ի ներքոյ գայլ յափշտակող, որ եւ ի պտղոյ ծանուցաւ ամենից, զոր լուեալ սուրբ վարդապետին գրեաց սակս ազատութեան ի չար կարծեացն. էջէ» 488։

ՂԳ. Թուղթ Կոստանդեայ կաթուղիկոսի հայոց, զոր գրեաց առ Հեթում թագաւորն ի յաստուածապահ դղեկէս, ի հայրապետական աթոռոյս Հռոմկլայէս ի մայրաքաղաքն Սիս. պատասխանի թղթին որ ի Պապն Հռոմայ բերաւ առ թագա-

Digitized by Google

ւորն Հայոց Հեթում ի ձեռն Լիկաթին որ կոչէր իմանչ, ի թուիս Հայոց ի ՍՂԵ. ի ձեռն արդիւնական վարդապետին Վարպանայ յարմար իրիս. էջ» 503.

ՂԴ. Բանք իրատականք վասն հաւատոյ զոր յայտնեալ է հոգին սուրբ՝ առտուածասէր արանց աւգտակարք ի ժամանակս ժամանակս. էջ» 510.

ՂԵ. Վարդանայ վարդապետի ասացեալ. էջ» 526.

ՂԶ. Տեսիլ առն Աստուծոյ սուրբ և ճգնազգեաց կրաւնաւորին Յովհաննու Գառնեցւոյն. էջ» 530.

ՂԷ. Վանական վարդապետի ասացեալ Բան հաւատալի ազգիս մերում. էջ» 533.

ՂԸ. Ալլ բան է ասացեալ Վանական վարդապետին. էջ» 536.

Յիշատակարան. էջ» 537.

Յանկ անուանց. էջ» 539.

Յանկ վրիպակաց տպագրութեան. էջ» 574.

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՊՐՈԿՂԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌ ՍՈՒՐԲՆ ՍԱՀԱԿ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՌ ՍՈՒՐԲՆ ՄԱԺԴՈՅ։

Աւգնեա՛ Հոգի սուրբ փչոր նորոգողիս։

Երանի որ հանապազորդ լինիցին ի քաղցրահայեաց տեսիլ աստուածագեղ երեսացդ. և զի ասեմ հանապազ. այլ զոնեա յաւուրս, կամ յամիսս, կամ ի տարեկանս։ Ասասցէ և իմ անձն սառնացեալ, ո՛ առնէր զիս արժանի հասանել անկանել յոտս աւետարանիչս և ասել. Մեղայ յերկինս և առաջի քո, և չեմ արժանի եթէ անուանեցայց քո որդի, այլ համարեաց քոյով բազմագութ ողորմութեամբդ իբրև զմի ի վարձկանացդ։ Եւ ուստի ինձ այդ լինիցի, բայց եթէ յաղաւթից սրբոյդ. զոր մեծ պատերազմաւ միշտ ի վերայ արժանեաց և անարժանեաց, ամենասուրբն Աստուծոյ հատուցանես։

Եւ վասն հաստատութեան եկեղեցեաց, զոր կարծեաց յանկարծյարոյց հողմ մոլորութեան շարժել՝ աղաւթից քոց տեառն սրբութեան դադարեաց. և ի միաբանութիւն եկին ամենայն եպիսկոպոսք Հոռոմոց, ունել հաստատուն զառաջին երեք հարիւրոցն հաւատս, և նզովեցին զի մի *) որ իշխեսցէ դնել նորատին ինչ և աւտարոտի հաւատս. այլ ի նորին վերայ շինել և զնոյն ուսուցանել։ Խոստովանել զՔրիստոս Աստուած ճշմարիտ, Որդի Աստուծոյ, և միածին, ծնեալ ի Հաւրէ յառաջ քան զամենայն արարածս, և Տէր արարիչ ամենայնի, և զնոյն Բանն Աստուած ի վախճան ժամանակաց զգենեալ մարմին, եղեալ վասն մեր մարդ առանց շրջելոյ և անկանելոյ և խախտելոյ յիւրոյ աստուածային ինքնութենէն, և ծնեալ ի սուրբ կուսէն Աստուած՝ ըստ մարմնաւոր ծննդեանն մարդ կատարեալ.

---

*) Յորինակին որ.

և կոչի և է կոյսն Տիրածին և Աստուածածին. և կատարեալն Աստուած ասի մարդ կատարեալ, վասն զի կատարեալ անդամով, և շնչապատեաց զիւր սուրբ մարմին. և ոչ իբրև մարդ։ Եւ յայտ արասցեն հակառակողքն, և հանապազ իւրեանց բարբանջանացն զոստայնս հանցեն, ապա թէ այս նոյն է հասարակ բուսոյն ծննդեանն սկիզբն։ Իսկ Աստուած Բանն ճշմարտիւ եղև մարդ. վասն էր է, զի խոստովանին զբնութիւնն, և բամբասեն զանցս անցից ծնընդեանն։ Արդ մի ի յերկուց անտի ընդրեսցեն. կամ ամաչեսցեն յանցս անցից անտի ծննդեանն. ուրասցին ի բարուց բնութենէ անտի, և զախտն հիւանդացեալ Մանիքեցւոցն ընդ ամբարիշտսն համարեսցին. կամ թէ յարեն յանձինս իւրեանց զաւգուտն մարդանալոյն. և խոստովանին զբնութենէ անտի, մի ամաւթ համարեսցին զանցս անցից բուսոյ ծննդեանն։

Արդ ես զարմացեալ եմ ընդ պակասամտութիւնն որ նոր նոր ճանապարհս խոտորս ձևեն. զի իմ զմինն դիտացեալ և ուսեալ բարեպաշտութեամբ Որդին, և մի խոստովանութիւն ունիմ զմարմնացելոյն Աստուծոյ Բանին զաւրութիւն։ Իսկ արդ զի մի է որ անցից անցից համբերութեամբ յանձն առ, զմեծասքանչ զաւրութիւնսն կատարեաց. արդ ընդէր զաստուածեղէնս. լռեալ՝ զվատթարագոյնսն յերկարեալ բարբաջեն. զի նա ինքն իբրև կամեցաւ թէ հաւատարիմ արարիչ Աստուած եմ և Բան, հաստատեցաւ՝ կաց որ էրն, իսկ եղև մարմին և մանուկ և մարդ, ոչ միով իւիք բա....թեամբ զխորհուրդն թշնամանեաց. նոյն ինքն և զմեծասքանչ զաւրութիւնսն առնէր, և նոյն ինքն ընդ չարչարանաւքն մտանէր։ Նշանաւքն և արուեստիւքն կալ և մնալ յայնմ որ էրն իսկ՝ երևեցուցանէ. իսկ չարչարանաւքն որ եղևն զինչ ստեղծն՝ հաստատէ։ Արդ՝ մի և զնոյն մշտնջենաւոր իսկզբանէ և ի կատարածի մարմնացեալ խոստովանեցուք Որդի և մի՛ ինչ այլ ամենևին յաստուածութեանն բնութիւնդ աւտարոտի և խոտան խառնեսցուք. զի ոչինչ այլ աւելորդ զոյ յայն աթոռ։

Իսկ արդ ապաքէն ի միւս ևս այլ ի բաղում հոչակաւոր խորհուրդս նիւթեալ տողեն տկարագոյն քան զսարդի ոստայնս։ Եթէ Երրորդութիւնն, ասէ, միապաւոր է, Երրորդութիւնն առանց անցից անցից չարչարանաց է. ապա թէ Երրորդութիւնն առանց անցից չարչարանաց է, ապա թէ Աստուած Բանն առանց չարչարանաց

Digitized by Google

է, զտանի որ ի խաչն ել այլ ոմն բան զԱստուած Բանն որ առանց չարչարանացն է։ Արդարեւ ճշմարիտ սարգի ոստայն հենուն որ զայդպիսիս խաւսին, և ի վերայ ջուրց գիր հանեն, որ զընդունայն խորհուրդս զայս վարեն. ասեն բայ իմաստունք են. և մոր սեցան և խաւարեցան անմտութեամբ սիրտք իւրեանց. զի աչք բժաբերք զարեգական ճառագայթս սուրբս ընդունել չկարեն, և միտք հիւանդացեալք ի հաւատոց բարձրութիւն անդր հայել չկարեն։ Արդ զինչ ասեմք մեք, եթէ լուր բանին աստուածութեանն. Երրորդութիւնն միապաւր է և առանց չարչարանաց, արդ ոչ եթէ զի ասեմք զՈրդին մտեալ ընդ չարչարանաւք, ըստ բանի աստուածութեանն ասեմք եթէ չարչարանք հասին նմա, զի առանց զամենայն չարչարանս ընդունելոյ է բնութիւն աստուածութեանն. այլ խոստովանիմք զԱստուած Բանն՝ որ մի յԵրրորդութենէ անտի է՝ մարմնացեալ. և տամք մեք պատճառս իմաստութեան գտանել այնոցիկ որք հաւատովքն հարցանեն վասն որոյ մարմնացաւ։ Քանզի կամեցաւ Աստուած Բանն խափանել զչարչարանս ամենայն ցանկութեանց, որոյ վախճան էր մահ. և թողուլ դարձեալ զչարչարանսն ի տեղոջ՝ անմահ բնութիւնն ոչ առնոյր յանձն. զի եթէ ամենայն չարչարանք հակառակութիւն է և կոիւ է կցկցեալ արարածոց, իսկ որ անհիւթանիւթն է ոչ մի կցկցութիւն ի նա ժամանելոց է չարչարանաց, քանզի ոչինչ կցկցութիւն ի նմա չգոյր։ Արդ կամեցաւ նա որ բռնադատէին զբանաւոր մարմինն չարչարանքն՝ խափանել, որպէս և յառաջն ասացաք, որոց գլուխն ինքնին է մահ։ Մարմնացաւ նա ի կուսէ անտի, որպէս զիտէ Աստուած Բանն. և կերպարանեցաւ իբրև զմարդ, զի այս ինքն կամք էին նորա, և ինքն զինքն յինքն ամփոփեաց. ի կերպարանս ծառայութեան եղև. ոչ մի ինչ պակասութիւն աստուածութեանն արար, և այնպէս փրկեաց զամենայն ազգս մարդկան, և մարմնով իւրով խափանեաց զամենայն չարչարանս, ողջ և անարատ զաստուածութիւնն պահեաց։ Վասն այսորիկ և Գաբրիէլ ի տալ զաւետիս ծնընդեանն զինքնիշխան զաւրութիւնն գոչէ առ Մարիամ։ Նա ինքն, ասէ, փրկեսցէ զժողովուրդ իւր յամենայն անաւրէնութեանց նորա։ Իսկ արդ ժողովուրդ ոչ լինի մարդոյ այլ Աստուծոյ, և ոչ զաշխարհ ոք կարէ փրկել ի մեղաց որ ինքն անպականութեամբ յերկիր անկեալ և ոչ իցէ սկիզբն ծննդեան իւրոյ առանց արատոյ. ապա՝ յայտ է եթէ նոյն Աստուած է և մարդ, ոչ եթէ բաժա-

Digitized by Google

Նեալ ինչ յերկուս, այլ կայ մնայ մի և նոյն։ Ծնանելն ի կնոջէ յայտ առնէր՝ եթէ մարդ էր, իսկ առանց ամուսնութեան կոյս պահել զմայր՝ յայտնի վկայեալ թէ Աստուած է. զի ապրեցոյց զաշխարհ Յիսուս, որ Քրիստոսն է, որ եկն յերկիր և ընդ մարդկան շրջեցաւ։ Ապա թէ Քրիստոս դոյզն մարդ ոք է, և ոչ ինքն Աստուած Բանն. զիարդ ստեղծ նա իսկզբանէ զամենայն, մինչդեռ չէրն. զի եթէ կրտսեր ամենայն արարածոց է մարդն, յայտ է եթէ որ յառաջն էին բան զնա, նոցա զկենդանութիւն չէ շնորհեալ Քրիստոսի. իբրև կրտսերոյ արարածոց, իբրև դոյզնաքեաց ինչ մարդոյ։ Իսկ զիարդ Պաւղոս գոչէ. Մի է Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն ինչ եղև. զի եթէ ի Քրիստոս է ամենայն ինչ, յայտ է եթէ Քրիստոս Աստուած է Բանն, որպէս գոչէ աւետարանիչն. Իսկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն, նա էր իսկզբանէ առ Աստուած, ամենայն ինչ նովաւ եղև. եւ Պաւղոս զնոյն բարոզէ և ասէ. Մի է Տէր Յիսուս Քրիստոս որով ամենայն, յայտ է եթէ Քրիստոս Աստուած է Բանն։ Ապա եթէ բերեն ի մէջ որ ի սուրբ գիրս բարբառք են, յորում անուանեալ մարդ, զի Պետրոս ասաց զՅիսուսն որ ի Նազարեթէն՝ այր, և Պաւղոս աղաղակէ, յառն անդր յորում հաստատեաց զհաւատսն. և նոյն իսկ Տէրն ասաց, Զի խնդրէք զիս սպանանել զայր մի. զիտասցեն նոքա եթէ կամ վասն վատթարութեան հեղգութեան տգիտութեան պակասեցան ի զրոցն խորհրդոց, և կամ վասն խորամանգութեան խարդախութեան խոտորեն զգեղեցիկ զրեալն. զի ասէ մարդ իսկ է ճշմարտիւ Քրիստոսն. այլ ամենայն նովաւ՝ եղև. ոչ եթէ յառաջ ինչ էր մարդ, բայց միայն Աստուած էր. զի զոր աւրինակ Աստուած ոչ ստեղծանելով է, և նոյն մարդ երևելով. և զոր աւրինակ Հաւրն ըստ աստուածութեանն միալաւր է, սոյն աւրինակ և կուսին ըստ մարմնոյ հոմատոհմակ է. յամենայնի ճշմարտութեան խորհրդոյն ճառագայթեալ. և յամենայն խարէութեանց դատարկացեալ, ապա թէ՝ ոչ ծնաւ զԱստուած Կոյսն, և ոչ բաղում զարմանալեաց արժանի է, որ առանց ամուսնութեան ծնաւ. զի բաղում և այլ կանայք պտղարեր եղեն արդարոց յաշխարհ։ Ապա թէ մարգարէիցն լեզուք զանճառ խորհուրդն յառաջագոյն փող հարեալ գոչեն. Ահաւասիկ կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Եմմանուէլ, զոր թարգմանեաց Գաբրիէլ՝ ասէ Ընդ մեզ աստուած,

Digitized by Google

արդ ընդէր վասն ծննդեանն խոնարհման, զփառս ծնելոյն շուրջ յապաւեն։

Դարձեալ ընդդէմ դնեն զայս. ամենայն ծնունդ համատոհմակ է ծնելոյն, զի եթէ մարդ է որ ծնաւն, ապա յայտ է եթէ մարդ է զոր ծնաւն։ Զայս բարւոք ասացէք պսակիսիք. նա յայնժամ համատոհմակ ծնանի, որ երկնայն *), երբ ըստ բուսոյ բարուց ծննդեամբ ծնունդն երևեսցի, իսկ բուսոյ բարուց ծննդեան սկիզբն խառնակութիւն ամուսնութեանն է. քանզի խառնակութիւն յառաջագոյն լինի քան զապականութիւնն, իսկ ուր թշնամանայս այսոցիկ բնաւ և ոչ զմտաւ ածելով, անդ ամենևին ժամանակ երևի, այլ յանկարծակի համառաւտ որ ի վերինն է, քան զասել մնծասքանչ զարմանալիքն, իսկ որ ի վեր է քան զբոլոր բարուցն՝ անդ ծնունդն ինքն աստուած։

Արդ խոստովանիմք այսուհետև եթէ նա ինքն է որ զաշխարհ արար, և զաւրէնսն եդ, և ի մարգարէսն շնչեաց, և ի կատարածի մարմնացաւ, և զառաքեալսն ի փրկութիւն հեթանոսաց և ժողովրդոց որսացաւ, փախիցուք ի պղտորչաց անտի, և ի խոհերական խաբէութեան հեղեղաչուրց անտի, զի ընդ աստուածամարտ հերետիկութիւն խոստմանցն ասեմ, զԱրայ, Մաթեայ, Մարաթոնիայ **) մոլեգնութիւնսն ասեմ, որ ի մէջ մատուցեալ ի մէջ անրաժին երրորդութեանն, բաժինս արկանեն, զԵւնոմեայ ժպրհութիւնսն ասեմ, որ չափէ լուրջ գիտութեամբ զանհաս բնութիւնն, զՄակեդոնի կատաղութիւնն, որ քակէ յաստուածութենէ անտի զանքակ բղխումն Հոգոյ. և զնորակերտ զնորաձայնս զայս ասեն զնոր ընդունայն հայհոյութիւնսն, որք բազմապատիկ հայհոյութիւն հրէութեան խորհրդովք, բազմապատիկ անցանեն զանցանեն ըստ նոցա հայհոյութեամբն, զի նոքա զՈրդին անարգելով զլանան զարմատ շառաւեղին, սոքա քան զՃշմարիտն, որ էր՝ միւս ևս այլ ի ներքս, մատուցանեն, թշնամանեալ նշկահեն իբրև զբազմածին զանարատ բնութիւնն։ Արդ մեք ևկայք ասասցուք Պաւղոսիւ հանդերձ. Քրիստոս է խաղաղութիւն մեր, որ արար զերկուսին մի, և զհրեայս և զհեթանոսս ի մի նոր մարդ ստեղծ միաբանեաց հաւանեցեալ զաւրութեամբն, այն որ մեկնեալ էին ի միմեանց գործովք գնացիւքն իւրեանց.

*) Երևի. երկնէն։

**) Այսպէս ի ձեռագրին։

արդ սոսկացին ի դատապարտութենէ անտի, որ զնորաձայն ամպարշտութիւնն ի ներքս արկանեն, զի եթէ որ այլոց պատուամանցն ի միաբանութիւն հաւանութեան եղև արարիչ և որ հաւանեցոյց և միաբանեաց, ինքն յերկուս բաժանեալ գտանիցի ըստ նոցա բանիցն ասացեալ։ Բայց արդ այսուհետև զերկայնութիւն բանիցս թողեալ ի համառաւտ անդր եկեսցուք ուղղութեան հրամանին։

Եթէ ոք կամեսցի գիտել ճշմարտութեամբ թէ սա ինքն է մի և միայն Որդին, որ յառաջ քան զԱբրահամն էր, և ի կատարած հաս մարմնոյն հասակաւ, զի կայ միշտ յաստուածութեան անդ կատարեալ, հարցջիր ցՊաւղոս և նա որոտացցէ զաստուածպաշտութիւնն ցուցեալ. զի աստուած էր յաւիտենից և եկն ի հրէից մարմնով, զի վասն Հեբրայեցւոցն ասաց զկերևուրաց և զաստուածամարտաց ազգն զորս յարգէրն վասն արմատոյն, զԱբրահամն և զլաւակն որ է Տէր Յիսուս Քրիստոս. զի այսպէս ասէ, Որոյ, ասէ, որդեգրութիւնն էր. ինքն Աստուած կոչէ ի բերանոյ մարգարէիցն. Որդի իմ անդրանիկ Իսրայէլ, և փառքն, զի անչափ փառս շահէ զանգիտելոցն, մի զմիով արկեալ էր զսքանչելիսն. զկտակարանս ասէ, որ առ Աբրահամն էին. զբազմութեան զաւրհնութիւնն յերաշխեալ, զաւրինադրութիւնն ասէ որ ի լերինն մատամբն Աստուծոյ գրեալ էր, և զաւետիսն ասէ, զերկրին Պաղեստինեայ, և ի զաւակէ անտի ասէ Աբրահամու աւրհնեալ զամենայն հեթանոսս. ուստի հարքն՝ ոչք ի մոլորութեան գիշերին ծագեցին իբրև լուսաւորք հաւատովքն, ուստի և Քրիստոսն է ըստ մարմնոյ զի յայտնեսցէ զծնունդն։ Եւ ոչ եթէ կացցոյց այսուհետև Պաւղոս զբանն, զի ոչ եթէ յորմէհետէ ծնունդն Մարեմայ է՝ յայնմհետէ սկիզբն անսկզբնականին գոյութեան, այլ աստուած թափեաց վաղվաղակի և ասէ ըստ մարմնոյն յայտնութեան, այլ ոչ եթէ ըստ աստուածութեանն ծնունդն. արդ ով է այս. ինքն Քրիստոս որ ի կուսէ անտի ծնաւ, որում այրք եղեն բաւական զոր ինքն միայն գիտէ. որ ի մնուր անդ բաղմեցաւ, որ ի ժամանակի ըստ մարմնոյ աճեաց, որ մինչ ի ստորինս երկրի էջ, որ զամենայն անցս մարմնոյ համբեր. զի հաւատարիմ արասցէ ճշմարտութեամբ եթէ եկն եղև մարդ, ոչ եթէ այլ ոմն է բան զայն որ էջն, այլ նա ինքն է որ էջն և որ ելն. զի ոչ եթէ ել նախ, այլ էջ, իբր ոչ եթէ ուրուք ձեռամբ ինչ

Digitized by Google

յառաջ ածելով է աստուած. քա՜ւ լիցի. այլ վասն գթութեան իւրոյ եկն և եղև մարդ, զի այսուիկ իսկ էաք մեք կարաւոր։ Արդ մի՛ յինէն ուսանիր զայդ կամ յայլմէ ումեքէ, այլ ի Պաւղոսէ. որ ի Հաւրէ յայտնութեամբ ուսաւ զՈրդի և ասէ. Այլ յորժամ հաճոյ թուեցաւ Աստուծոյ որ ընտրեաց զիս ի միջոյ մաւրի իմոյ, և կոչեաց զիս ի ձեռն շնորհաց իւրոյ յայտնել զՈրդին իւր յիս. նա ուսուցէ քեզ ճշմարտիւ՝ Ո՛ է Յիսուս Քրիստոս. զի ինքն աղաղակէ և ասէ. Ուստի Քրիստոսն է ըստ մարմնոյ որ է ի վերայ ամենայնի Աստուած աւրհնեալ յաւիտեանս։ Զինչպիսի սպրդութիւնս հայհոյութեան մարդկան ոչ քակեն Պաւղոսի բանքն բամբասասէր մարդկան։ Ասաց զնա բա՜յ Քրիստոս, զի յայտ արասցէ եթէ ճշմարտիւ եղև մարդ։ Ասաց զնա ի հրէից ըստ մարմնոյ, զի յայտ արասցէ, զի ոչ եթէ յորմէհետէ մարմնացաւ, յայնմէհետէ միայն է։ Ասաց զնմանէ թէ էր, զի անսկիզբն երևեցուցեալ որոտասցէ Պաւղոս։ Ասաց զնա ի վերայ ամենայնի, զի արարածոց ամենայնի Տէր զնա քարոզեսցուք։ Ասաց զնա Աստուած, զի մի՛ որք վասն չարչարանացն և կերպարանացն լշմորեալ զանսատակման նորա՝ ուրասցուք զբնութիւնն։ Ասաց զնա աւրհնեալ, զի իբրև ամենակալի երկիրպագցուք նմա, և ոչ իբրև զծառայակից մեր բամբասեսցուք։ Ասաց զնա յաւիտեանս, զի յայտ արասցէ, թէ որ բանիւ արար, միշտ մշտնջենաւոր ի մէջ նոցա իբրև Աստուած փառաւորի։ Արդ ունիմք զՔրիստոս որ էրն, և աստուած է, և աւրհնեալ է, նմա երկիրպագցուք, և ասասցուք ցայլանդակսն յայտնապէս, եթէ որ զՀոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա, զի մեք զմիտս Քրիստոսի ունիմք. քանզի և ակն ունիմք գալստեան երևելոյ փառաց մեծին Աստուծոյ, և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ հատուցանէ բարեպաշտիցն զյաղթութեան փառաց պարգևս, և ժխտողացն անհնալանդիցն ժպրհութեան պատիժս։

Եւ զի այս ամենայն զի գրեցաք առ ձեր սէր այդր, զի լու եղև մեզ եթէ արք ոմանք ժանդախաւսք ցնորախաւսք, անկան ի յաշխարհ այդր, և կամին ժանդաժող իմն գրովք, հակառակութեամբ, ստաբան խստախորհուրդ գիտութեամբ, խոտորել զպարզամտութիւն, զանպաճոյճ, զանմեքենայ, զուղղափառ գեղն հաւատոյն, բայց ես ներանելոյն Պաւղոսի զառաքելոյն դարձեալ ասեմ ձեզ. Զգոյշ լինիջիք զուցէ իցէ որ, որ զձեզ կապուտ կողոպուտ թողուցու ճարտարմտութեան բանիւք, և ընդունայն խա-

Digitized by Google

րէութեամբ վարդապետութեան, ընդունայն խորհուրդն մարդկան, և ոչ ըստ վարդապետութեանն Քրիստոսի. զի հիմն սրբութեան հաւատոյ, այլ ինչ-ոք ոչ կարէ դնել քան զայն որ եղեալն է, այսինքն է Յիսուս Քրիստոս։ Արդ կացէք հաստատուն ի մի հոգի, և ի մի անձն, նահատակակիցք եղեալ հաւատովք աւետարանիս, և մի՛ խրտուցեալք ընդուստանիցիք. մի՛ յիմիք ի չարեաց թշնամոյն, և մի՛ ի նզով և ի կորուստ մատնիչիք ընդ Նեստորեայ, և ընդ Թէոդորեայ որ վարդապետն լեալ էր Նորա, և որ զչար ըղձն երևեցոյց և չարարան՝ Նորաձայն, որ անցուցին զանցուցին ըստ ուրացութիւն հրէութեան, և ըստ հերետիկութիւն առաջին Արիանոսացն, Թեանցն, և Մարեթոնեաց *) և այլոցն որ խոտորեցան ի փառացն սրբութենէ և յուղիղն հաւատոց, նզովեցան նոքա յամենայն ժողովրդոց և այրեցան որ վատի խորհրդոց գիրք էին նոցա, յանդիման ամենայն ժողովրդոց, յորմէ և դուք պահեսջիք զանձինս, և զնոյն գործ գործեսջիք զոր սուրբ ժողովք եպիսկոպոսացն գործեցին, և մի ոք զառ-ժամանակեաց ամաւթն, ամաւթ անձին համարեալ, զյաւիտենից ամաւթն ժառանգեսցէ, և ընդ նոսա դատապարտեալ ի դժոխս կործանեսցի։ Այլ պահեսջիք դուք զվարդապետութիւն, զոր ընկալեալ ի հարցն սրբոց որ ի Նիկիա սիւնհոդոսն էր ժողովոյն, և զուղիղ սուրբ փառս հաւատոցն հաստատեցին։ Եւ զոր վարդապետութիւն սուրբքն Երանելիք, Բասիլիոս, և Գրիգորիոս, և որ միանգամ նմանեն նոցա, որ սրբութեամբ և հաւանութեամբ, սուրբ հաւատս ի կեանս իւրեանց հաստատեցին, որոց անուանքն գրեալ են ի դպրութեան կենացն։ Ողջ լերուք ի տէր և շնորհեալ լիջիք մեզ աստուածասէր եղբարք։

գրեալ յամի Տեառն

435

*) Ա. յապէս ի Ձեռագրին։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ՊՐՈԿՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Ի ՍԱՀԱԿԱՑ ԵՒ Ի ՄԱՇԴՈՑԷ, ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՀԱՅՈՑ.

Առ ճշմարիտ և աստուածաւէր պատուական տէր մեր և հայր՝ սուրբ եպիսկոպոս Պրոկղոս. ի Սահակայ և ի Մաշդոցէ ողջոյն։

Ճառագայթք վշտնջենաւոր յաւիտենական լուսոյդ որ առ մեր տկարութիւնս երևեցան ի ձեր լուսաւոր սրբութենէդ, յոյժ ի ծագել իւրեանց զաւրացուցին զմեր տկարութիւնս, և զմեր տկար խորհուրդս բաղմապատիկ զաւրացուցին, և մեծապէս զկողմն տկարացեալ անդրէն արծարծեալ նորոգեցին, զի անդէն վաղվաղակի թուեցաւ մեզ որպէս նոր ինչ անցք ի վերայ հասանել բազում անձկալի գթոյն զոր աւրինակ անցք անցանիցեն ընդ քաղցրաբեր բոյսս արտոյն քաղցրութեան ցաւղոյն ի վերայ իջանելով և զտապ տառապոյն հասկալից բուսոյն ի ջերմախառն յանբարեխառն աւդոյն՝ իւրով քաղցրութեամբն յառողջութեան բժշկութիւն դարձուցանելով։ Արդ ցայս վայր զեղեցիկ իմն ցանկալի և ուխտիւք խնդրելի էր մեզ լսել և ասել զզաւրութիւն թղթոյդ ի միջի՝ որ զերանելի պատգամս ի ձէնջ առ մեզ հասուցանէին՝ և մեր աղաւթք հանապազորդեին արժանի լինել յամենայնի՝ ընդունել և վայելել յաւրհնութիւնս հոգևորս ձերոյ մեծասքանչ սրբութեանդ։ Զի քաղցրայեալ էր մեզ կալ մնալ մեզ աստէն ի սմին ընտանացեալ տգիտութեան՝ որպէս ի բերդ ինչ ամուր և յաշտարակ հզաւր փախստեայ անկեալք յանգիտութիւնս։ Արդ պահպանութիւն զմեզ առեալ զաւգնականութիւն աղաւթից ձերոց սրբութեանդ, հաստատեալք և զաւրացեալք պահել զհաստատութիւն հաւատոյ, զոր ի սկզբանէ ի ձեր ճշմարիտ վարդապետութենէդ ընկալեալ ունեաք, մի՛ պղտորութիւն ընդունել ի վերայ մկրտութեան տգիտութեան պարզամտութեան մերոյ։ և բնաւ ամենևին՝ չընդունել

զվեր կորստական մոլորութիւնս, մանաւանդ զվնասակար նորարարն նորաձայն զհերետիութիւնս, զոր պլանդակաշատ ամբարշտութիւն՝ տակաւին զբոյսս դառնութեան սերմանցն ցանէ ի վերայ սրբութեան սերմանեաց որոմնախառն ուսումն, որք ի հանճարամիտս սատանայախառն սովորեալ են։ Արդ որովհետև մոլարն առաջին և գլխաւորն ի չարիս զիւր ժանգ աղտեղութեանն կարկառեալ սերմանել ժպրհեցաւ. զայս մեր մեղաց գործ համարեցաք։ և ընդ մեծամեծ բազում և անչափ ձերում թղթոյդ տրտմակից եղեալ՝ ըստ մերում տկարութեանս ողբացաք, և յամենայն տեղիս որ շուրջ զմեզ բնակեալ էին յղեցաք, մեծ և պատուհասալից պատուիրանաւ մի՛ լսել բնաւ ամենևին զայդպիսի բարբարոսս, մի ընդունել ամենևին զվնասարեր կորըստական մոլորական հերետիութեանն վարդապետութիւնն։

Այլ մեք հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ արարիչ երկնից և երկրի, երևելի և աներևելի արարածոց։ Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս ի միածին Որդին Աստուծոյ, այսինքն է եութիւն յեութենէ, եութիւն ծնեալ՝ որով ամենայն եղև, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, ծնեալ և ոչ արարեալ, իսկակից Հաւր, որ վասն մեր մարդկութեան էջ և մարմնացաւ, յանձն առ չարչարանս, յարեաւ յերիր աւուր, և ել յերկինս, և գայ դատել զկենդանիս և զմեռեալս։ Եւ ի սուրբ Հոգին հաւատամք։ Իսկ որք ասեն էր երբեմն զի չէր, և մինչև ծնեալ էր չէր, և ասեն ի չեութենէ եղև, և յայլմէ իմեմնէ և զաւրութենէ, և կամ եղծանելով և փոփոխելով, զայնպիսիսն նզովեմք։ զի միշտ Հայր, միշտ Որդի, միշտ սուրբ Հոգին, Հոգի Աստուծոյ Հոգի սուրբ, կատարեալ, բարեխաւս, անստեղծ, անեղծ, որ խաւսեցաւ աւրինաւք և մարգարէիւք և առաքելովք, որ էջն ի յորդանան։

Եւ վասն մարմնացութեան Որդոյ այսպէս հաւատամք. զի առ յանձն լինել մարդ կատարեալ յաստուածածին Մարիամայ սրբով Հոգւով, առեալ շունչ և մարմին ճշմարտիւ և ոչ կեղծեաւք, այսպէս և կատարեաց փրկել զմեր մարդկութիւնս, և ճշմարտիւ չարչարեցաւ ոչ եթէ ինքն պարտէր չարչարանաց, զի ապատ է աստուածութիւնն ի չարչարանաց. այլ վասն մեր եառ յանձն զչարչարանս, խաչեցաւ և թաղեցաւ և յերիր աւուր յարեաւ, և յերկինս համբարձաւ, և ընդ աջմէ Հաւր նըստաւ, և գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս։ Այլ առ կա-

Digitized by Google

տարման հաւատոց՝ հաւատամք ի մի մկրտութիւն ապաշխարութեան, և մի կաթուղիկէ եկեղեցի. և ի յարութիւն մեռելոց, և յարքայութիւնն երկնից և ի դատաստանն յաւիտենականս։ Եւ աստուած խոստովանիմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, մի Աստուածութիւն սրբոյ Երրորդութեանն, զի Հոգի է Աստուած, և կամաւք երևեալ, խաւսեալ աւրինաւք և մարգարէիւք և առաքելովք։

Հաւատամք ճշմարտիւ անգիտութեամբ և անհասութեամբ. զի ամենայն մարդ ըստ պատկերի Աստուծոյ, այլ թէ որպէս կամ զինարդ, Աստուծոյ միայն է զիտել բայց զարմացեալ եմ ընդ այնս որք աւելի քան զինքեանց չափն ջանան և նկրտին ըմբռնել զանհասն զառանց ըմբռնելոյն։ Բայց կարծեմք զայնպիսին, իբրև ի մեր տգիտութեան կարծեաց. թէ այնպիսիքն ոչ զիտեն ամենևին զզիրս, և ոչ զկաւրութիւն հոգոյն. որ ի գիրս է, բայց եթէ հրեարէն, միայն զմուրն նկատիցեն։ Եւ որպէս զողացեալ համարիմք զնոցա միտս ի թշնամոյն, զի արբեցեալ են զչար հիւանդութեան արբեցութիւն, որոց ի բաղում և ի թանձր արբեցութենէն զգայութիւն ճաշակելեացն թարշամեցուցեալ է, և ոչ ճաշակելեացն անգամ կարեն առնուլ զհամ գինոյն, ի բաղում կիզմանն զայրութենէ զգայութիւնն կորուսեալ է. և կամ զայս իմանամք ի կարծել մերում, թէ ի զուր տատապարտուց է գիտութիւն բաղում ուսմանն, զի ի սատանայութեան մոլորութիւնն կործանեալ են. հասանել անհաս չափոցն ժպրհին. զի ոչինչ է այլ տգիտութիւն, այլ խաւար խորհրդեան և ամենայն կեղծաւորութեան խորամանգութիւն, և գործ սատանայութեան։ Երկուս որդիս և երկուս տաճարս մեքենայեն գտանել ընդ միտս իւրեանց, խորհել աներկիւղութեամբ և անամաւթութեամբ, զամաւթ իւրեանց լրութեամբ յայտնապէս պատմն. զի և Տէր մեր Յիսուս Քրիստոս կամաւք Հաւր գթացաւ ի վերայ մոլորութեան մարդկան. Բանն որ ի սրտէ Հաւր բղխեալ. կամեցեալ հաճոյ առնել, հովանի լինելով Սրբոյ Հոգւոյն, մարմին լինել յարգանդի Կուսին սրբութեան, և ընդունել զմարմին հնացեալ որ ըստ խաբէութեան սատանայի յապականութիւն դարձեալ էր, նորոգել մարմնով շնչով և հոգով, զի առանց ապականութեան ստեղծուածն առաջին ի միւս անգամ ծննդեանն յարութեան մեռելոց երևեսցի, զի ճշմարիտ մարմին զգեցաւ վասն մեր. և սերմանեաց ի մեզ հաւատով զաս-

Digitized by Google

տուածութիւնն, և արար նշանս և արուեստս ի նորա Աստուածութեամբն հաւատարմասցուք։ Ինքն յանձն եառ քաղց և ծարաւ, աշխատութիւն և քուն, իբր ոչ եթէ աստուածութիւնն ի մարմնոյն չարչարանաց ի պարտութիւն մատնեալ էր, այլ զի խոյժէ զանամաւթ բերանս և անաւրէնութեամբ սրեալ զլեզուս, որ արդէն իսկ յաւժարեալ են հայհոյութիւնս խաւսել։ որք ասենն՝ ոչ ճշմարտութեամբ այլ կեղծեաւք ի ցնորս առ աչաւք երևելով գալուստն եղև, համբեր յանձն առեալ ապտակս և անարգանս, խաչ և մահ, իբրև ոչ եթէ ինքն պարտական և արժանի էր այսմ։ և ոչ մահուն արժանի էր զոր մեռաւ, զի անմահ է Աստուածութիւնն, այլ զի զմեր անարգանս որ ի մեղաց մերոց եղև, սրբով Աւետարանաւ և պատուական արեամբն ջնջել ի մէջ և լուանալ արժանի արասցէ։ Եւ որ ի փայտէն զայթագղութիւն եղև ի դրախտին՝ ի մէջ միջնաժողով ժողովրդոյ զխաչն կանգնեաց՝ փայտ առ փայտ, և ծառ առ ծառ, և զպտուղն կենայ, փոխանակ ապականարեր պտղոյն զկենդանարեր փայտէն կախեաց, կամաւք կամակարութեամբ, և ոչ ակամայ կամաւք զանձն մատնեաց. ինքըն զինքն եղ, և անդրէն ինքն զինքն յանձն իւր ընկալաւ, զսուրբ մարմինն և զպատուական արիւնն պաշար կենաց մեզ (որք ճշմարտութեամբ հաւատացաք) յաշտիճանաւոր ճանապարհն որ յերկինսն է, սիրելեաց իւրոց պատրաստեաց։ Այլ վասն տարապարտ և անաւգուտ, մանաւանդ վասն նզովեալ մոլորութեան նոցա, զի՝ պարտ է գթալոյ բանիւք անկանել և զսուրբ ալտութեանն լսելիս, զանարատ մտաց հաստատութիւն մեզ իշխել ալտեղել. զի որ միանգամ մոլորական եղեն ի ճշմարտութեան ճանապարհէն, և յուղեղ հաւատոյն վրիպեալք ընկեցան։ Այլ զինչ խորհիցին, կամ զի՞նչ խաւսիցին թէ՞ ոչ որ ի հուր գեհենին պատրաստեալ հատուցումն նոցա է. զի մեք աստ, որ զայնպիսի իշխեն յանձն առնուլ և կամ ուրեք ուրեք ի տեղիս այնպիսի գտանիցի խորհել կամ խաւսել, ոչ միայն չընդունիմք կամ հալածեմք, այլ բաղում և մեծամեծ պատիժ պատուհասի առնել ոչ դանդաղիմք։ Որչափ ևս առաւել պարտ և պատշաճ է ձեզ որ ի մեծամեծ իշխանութիւնդ վայելէք, նախանձել զնախանձ Աստուծոյ և ի գլուխ վարել զայնպիսին նախանձու վրիժուց հատուցմունս, և ոգով և մարմնով ջանալ զի բարձցին ի միջոյ եկեղեցոյ Քրիստոսի մնուանարկ անաւրէն ամբարշտութեանն զայթագղութիւնք։ Մանաւանդ զի թագաւորս ունիք, որ զՀոգ Աստուծոյ յանձին

բարձեալ բերեն, և հաւասարութեան Երրորդութեանն սրտի մտաւք ընդանեցեալ են, կարող են զփուշն ի միջոյ սրբել զի բոյսն սուրբ սերմանեաց հաւատոյն, բարձրացեալ ծաղկալից պարարտացեալ լի արմտեացն բաղդրութեամբ՝ զանկեալ զՀատն սերմանողացն մատուցէ ատոքացեալ, բաղմապատիկ զբերրի զպտուղն մատուցանել մարթասցէ և ուրախ արասցէ զտէրն արդիւնարարաց և զմշակն արդարապէս հատուցման պարգևաց արժանի արասցէ։ Զի եթէ որ երկրաւոր թագաւորաց սպասաւորք իցեն դուզնաքեայ ինչ բանք, մանաւանդ որ վասն ծիրանեաց լինին, ոչ յանձն առնուն դատարկացուցանել, թէ ոչ մեծապէս պատժիւ և պատուհասիւ մեծապէս վրէժ խնդրեսցեն, ուրչափ ևս առաւել պարտ և պատշաճ է որ զանեղծ և զանարատ հաւատն յապականութիւն դարձուցանել զանան, և որ անհաան է՝ հասանելի ժպրին. և յաւիտենական լուսոյն գեր ի վերոյ լինել յաւժարեն, և սրբոյ զանձառ զանքննին Երրորդութեանն՝ քննութիւնն զանան ընդ խնդիր արկանել. առաւել ևս նոցա ընդունել պատիժս պատուհասի ըստ իւրեանց խորհրդոյ, զի սրբութի ն Երրորդութեանն անմատոյց հրեշտակաց և աներևելի քերովբէից և սրովբէից, լոկով միայն փառաւորութեամբ և աւդնութեամբ պաշտի։

Արդ տէր մեր և ճշմարիտ աստուածասէր հայր մեր, և ամենայն եկեղեցոյ Աստուծոյ ընդունելի, և ի սուրբ աղաւթս քո յիշել զմեզ հանապազ անդարշ լինիցիր. և զմեր տկարութիւնս զաւրացուցանել մի դանդաղիցիս, և եթէ ինչ ըստ չափ թըղթոյդ առ տգիտութեան վրիպեալ իցէ, ուղղել անգարշ լինիցիր. Եւ որ Թէոդորեայ Մամուեստացւոյ աշակերտեալք իցեն՝ առ ժամանակս ի շնորհացն աստուծոյ այնպիսի ինչ աստ չև է յայտնեալ, ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ աղտեղութեան, ի հարկէ զան լիցի մեզ խլել զխոչն, և զգայթագղութիւնն զայն ի միջոյ ի բաց կորուսանել, զի միաբանութիւն ոչպէս ի ձերում միջի փառաւորի, և զմեզ ի նմին հաւասարութեան փառաւորութիւն առ Աստուած հասուցանել արժանի արասցէ։

Ամենայն ուխտի որ ընդ ձերով սրբութեամբդ են, մեք և եղբարք որ ընդ մեզ են ողջունի թղթովդ աղաչեմք, զի աղաւթիցէք ի վերայ եղբայրութեանս հասարակաց։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՅԱԿԱԿԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՄԵԼԻՏԻՆԱՑԻՈՑ, ԱՌ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ.

Որ ամենայնիւ աստուածասէրդ ես և լի սրբութեամբ տէր իմ և գործակից, ըստ Նմանութեան միոյ մարմնոյ յաւդապատեալ, այսպէս բաղում ազգս ի միաբանութիւն հաստատեաց ըստ Պաւղոսեան բանին թէ Որ ոչ զոյ հրեայ, և ոչ յոյն այլ զոյն՝ բայց յամենայնի Քրիստոս, ցուցանէ այս զմիաբանութիւն հաւատոյն, զոր շարժեաց չար աղանդն Նեստորի, որ էր նա ի քաղաքի Կոստանդինեայ եպիսկոպոս. և ապա հերետիկոս գտեալ կործանէր յաշտիճանէն, որով ծանեաք զդայլն յափշտակող յարձակեալ ի վերայ սուրբ եկեղեցեաց, և ուրեք ուրեք զպարզամիտս յիւր դարձուցեալ ի չարակամութիւն։ Զահի հարեալ թէ գուցէ և ի ձեր եկեղեցիդ արատ գտեալ ճարակեսցի, լաւ համարեցաք ապդել առ ձեզ զհասարակաց աւգուտն խորհելով, զի ոչ ուստեք են դէմքն այլ ի հրեարէն ախտն զանգեալ գտանին. զի սխալեն ի խոնարհելոյն Տեառն ընդ բնաւ կիրս մարդկաւրէն անցանելոյն բաց ի մեղայ։ Ծպրհին զլանա՞լ զերկրպագութիւնն Տեառն, ընդ ամենայն գիրս հակառակ եդեալ. ոչ ընդ այն հայեցեալ որ ի ծնէ կոյրն բժշկեցաւ ի Տեառնէ, և հարց ցնա և ասէ. Դու հաւատաս յՈրդի Աստուծոյ. ետ պատասխանի և ասէ. Տէր ո՞վ է զի հաւատացից ի նա, և ասէ Տէր. Եւ տեսեր զնա և որ խաւսիդ ընդ քեզ՝ նա է. խոնարհեալ երկիր պագանէր ասելով, Հաւատա՞մ Տէր։ Իսկ փրկիչն ասէ. Ի դատաստանս եկի յաշխարհս, զի որք ոչն տեսանեն՝ տեսցեն. և որք տեսանենն՝ կուրացին։ Ոչ աւելի առնեն զնա քան զառաքեալսն և զայլ սուրբսն. Պա՞ւղոս լցեա՞լ աստուածային զաւրութեամբն բարբառէր. Թէ զփորձ ինչ առնուլ կամիք զՔրիստոսի որ ինեա ընդ ձեզ խաւսի, և բոլոր սուրբքն զոր ինչ արարին սքանչելիս, ոչ իւրեանց զաւրութեամբ, այլ աստուածութենան

շնորհիւ։ Ցաղագս նորին և Տէրն ասէր ցմատուցեալսն, Հաւատայք եթէ կարող եմ զայդ առնել, յայտ արար զանձնէ եթէ ոչ է մարդ դուշնաբեայ, այլ Աստուած ճշմարիտ։

Բերեն ի մէջ ասելով զբանն, թէ Մարմին ինչ ոչ աւգնէ։ Իսկ զիարդ Տէր ասաց, Եթէ ոչ կերիջիք ի մարմնոյ իմմէ և արբջիք յարենէ իմմէ, ոչ ունիք կեանս յանձինս ձեր։ Արդ այս բան՝ է՞ յանդիմանիչ և կշտամբիչ նոցա անաւրէնութեան, որչափ պատշաճ է ըստ չափոյ թղթոյդ առաջի արկեալ։ Բայց և զայն ևս պարտ է ասել որով նախատեն զմեզ, և գիտուն առնել սիրոյդ ձերում, զի բամբասեն զմեզ իբրև թէ Աստուած զայն պաշտեմք որ ընդ չարչարանաւք է։ Իսկ մեք ոչ միայն չընդունիմք զիմաստս նոցա, այլ և նզովեմք որ զայս իշխեն ասել թէ ի բնէ իսկ էր Աստուած ընդ չարչարանաւք. մահկանացու զան մահս, և եղծանելի զանեղծն և զանարատն համարին. ոչ հային ի գիրս սուրբս, և ոչ ի վարդապետութիւնն, ՅԺԼ եպիսկոպոսացն որ ի Նիկիայեաց քաղաքին։ Այլ մեք հաւատամք և հաստատիմք, և ի վկայութիւն հասանեն մեզ վարդապետք սուրբք և գիրք աստուածաշունչք, Բանն ասէ մարմին եղև, ոչ եթէ եղծաւ ինչ յիւրմէ բնութենէն, կամ փոփոխեցաւ, այլ ըստ անհաս զարմանալեաց մարդկային մտաց և խորհրդոց եկաց ի նմին որպէս էրն իսկ և եղև զինչ կամեցաւ։ Որպէս եմուտ ընդ չարչարանաւք, ոչ լոկով մարդկութեամբն, այլ և Աստուածութեամբն, ըստ բարբառոյն Թումայի, որ իբրև շաւշափեաց զվէրսրն, ասաց մնծաձայն, Տէր իմ և Աստուած իմ։ ոչ ասաց եթէ՝ զիարդ Աստուծոյն իմոյ ըստ ամբարշտացն մտաց։

Արդ իբրև առնուցուք զթուղթդ, ի վերայ իմոյ տկարութեանս աղաւթս անպակաս մատուսցիք Աստուծոյ։ Բայց մեզ երկիւղ է, թէ գուցէ ի Թէոդորեա Մամուեստեայ ոխմանէն աշակերտեալ ոք գտցի և ի չար ժանգէն Նեստորի, ի միամիտ անձինս ապդիցէ։ Զի զնորա մնացեալ գրեանն իբրև խնդիրս այս յայտնեցաւ, և մանաւանդ որ վասն մարմնախառնին գրեալ էր, վճիռ հրամանի ետուն սուրբ աշխարհաժողով եպիսկոպոսացն, որ յԵփեսացւոց քաղաքին եղև. ի մի վայր ժողովել զբնաւ գրեանն և այրել։ Արդ փոյթ լիցի ձեզ առանց պղտորութեան զհաւատսն պահել, զի կատարեալ զարդարութիւնն անապական ընկալջիք։

Digitized by Google

ՊԱՏԱՄԽԱՆԻ ՏԵՍՈՒՆ ՍԱՀԱԿԱՑ, ԹՂԹՈՑՆ ԱԿԱԿԱՑ

Առ ճշմարիտ և աստուածասէր տէր մեր և հայր սուրբ եպիսկոպոս Ակակ, ի Սահակայ ի տէր ողջոյն։

Ճառաղայթք մշտնջենաւոր յաւիտենական լուսոյդ որ առ մեր տկարութիւնս երևեցան ի ձեր լուսաբեր սրբութենէդ, յոյժ ի ծագելն իւրեանց զաւրացուցին զմեր տկարութիւնս, և զնուազ խորհուրդս մեր աճեցուցին, զոր աւրինակ տապ ինչ ջերմագին յանխառն աւդոյ հասեալ ի բոյսս արտոց, և զկնի նորա ցաւղ քաղցրութեան, հասեալ՝ վութով յառողջութիւն դարձուցանէ, այնպէս զեղեցիկ իմն ցանկալի և ուխտիւք խնդրելի էր մեզ լսել զերանելի պատգամս ի ձէնջ առ մեզ հասեալս։ Մեր աղաւթք հանապազորդ էին արժանի լինել յամենայնի ընդունել և վայելել յաւրհնութիւնսդ հոգևորս ձերոյ մեծասքանչ սրբութեանդ զի քաղցրացեալ էր մեզ կալ մնալ աստէն ի սմին ընդանացեալ տգիտութեան. իբրև ի բերդ ինչ ամուր փախստեայ անկեալ յանզիտութենէն։ Արդ պահպանութիւն զմեր առեալ զաւղնականութիւն աղաւթից ձերոց, պահել զհաւատսն ճշմարտութեան ոչ ի ձեր ի սուրբ վարդապետութենէդ ունէաք և անպղտոր լեալ տգիտութիւն և պարզամտութիւնս մեր, մանաւանդ ի նորաբան հրեութենէն զոր այլանդակքն տակաւին զբոյսս դառնութեան և աղտեղութեան սերմանեացն ցուցին և ցանեցին ի վերայ սուրբ սերման զորոմնախառն ուսմանն, որ ի հանճարամեաս սատանայէ խառնման ուսեալ սովորեալ են։ Արդ որովհետև մոլարն առաջին զլխաւորաւքն չափ ցիւր ժանգ աղետութիւնն սերմանել ժպրհեցաւ, զայդ մերոց մեղացն գործ համարեցաք, և յոյժ ձերում թղթոյդ տրտմակից եղեալ ողբացաք, և ընդ բնաւ տեղիս մերոյ նահանգիս մեծաւ պատուհասալից պատուիրանաւ արձակեցաք՝ մի՛ լինել ամենևին այնպիսի բարբարոսացն, մի՛ ըն-

Digitized by Google

ընդունել կչար հերետիութեանն բարբաջանս։ Բայց ես զարմացեալ եմ ընդ այնոսիկ որ աւելի քան զաւրինացն չափն ջանան և նկրտին ըմբռնել զանըմբռնելին. այլ կարծեմք զայնպիսեացն չգիտել ամենևին զգիրս և զաւրութիւն նորին, բայց եթէ հրէարէն միայն զմուրն նկատիցեն։ Եւ իբրև դողացեալ ինձ համարիմք զմիտս նոցա ի թշնամոյն և ախտացեալ ի չար հիւանդութիւն, արբեալ ի թանձր արբեցութենէ, և զգայութիւնս ճաշակացն թարշամեցուցեալ չկարէ առնուլ զհամ գինոյն, ի սաստիկ կիզմանէ ընկղմին միտքն ի թմբիրն խելագարութենէ. թէ զոր տարապարտ գիտութիւն քաղում ուսմանն ի սատանայութիւն զառածէ, որ հասանել անհաս չափոցն ժպրհին։ Քանզի ոչ գոյ այլ գիտութիւն խաւարահեղց. քան երկուս որդիս կամ երկուս տեարս անուանել ի Քրիստոս. աներկիւղաբար անամաւթաբար զլրբութիւնն իւրեանց յայտնապէս պատմեն։ Այլ զի խցցին անամաւթ բերանքն, և անաւրէնութեամբ սրեալ լեզուքն. ճշմարիտ մարմնայաւ բանն առ ի նորոգել միւսանգամ մարմնով շնչով և ոգւով, զմարդն հնացեալ զապականեալն ի մեղաց, և զի ի փայտէ գայթակղութիւն եղև և մահ. փայտ կենաց առ փայտն կանգնեաց, և ծառ առ ծառն բարձրացոյց պտուղ կենդանարար փոխանակ այնր մահածին պտղոյն պարգեւէր, ինքն զինքն եդ, և ինքն զինքն անդրէն յանձն իւր ընկալաւ, զսուրբ մարմինն և զպատուական արիւնն պաշար կենաց մեզ հաւատացելոցս յաշտիճանաւոր ճանապարհն պատրաստեաց։

Եւ արդ որ միանգամ յայն ի ճանապարհէ և յուղիղ հաւատոյն վրիպեցան, հուր գեհենին պատրաստեալ պահի նոցա. և մեք աստ եթէ յանկարծ յայնպիսեացն գտցուք, ոչ միայն չընդունիմք կամ հալածականս առնեմք, այլ և ընդ մեծ պատժովք արկանել ոչ դանդաղիմք։ Որչափ ևս պարտն է ձեզ որ ի մեծամեծ իշխանութեանդ վայելէք նախանձել զնախանձն Աստուծոյ. և մարմնով և հոգով ջանալ բառնալ ի միջոյ չխոչդ եկեղեցոյ Քրիստոսի, մանաւանդ զի թագաւորս ունիք, որ զՀոգ Աստուծոյ յանձինս իւրեանց բարձեալ բերիցեն. կարող են ըզխոչդ ի միջոյ խլել, և զբոյս սուրբ սերմանց հաւատոյն պարարտացեալ արմտեացն քաղցրութեամբ զանկեալ հասկն սերմանաւղաց, նմա մատուցէ ատոքացեալ, բազմապատիկ զբերրի պտուղն հատուցէ, և ուրախ արասցէ զտէրն արդիւնարարաց, և զմշակն առատապէս պարգևաց արժանի արասցէ։ Զի թէ որ

Digitized by Google

երկրաւոր թագաւորաց սպասաւորք իցեն, և դուշնաքեայ ինչ բանք մանաւանդ որ վասն ծիրանեայց լինին, ոչ յանձն առնուն դատարկ ունցուցանել՝ եթէ ոչ մեծապէս պատուհասիւ զվրէժն խնդրիցեն. Որչափ ևս պարտ է որ զանեղծ և զանարատ հաւատսըն յապականութիւն դարձուցանեն և յանհասն հասանել ժըպրհին և մշտնջենաւոր լուսոյն գեր ի վերոյ լինել յաւժարեն, զանքննին Երրորդութեանն քննութիւն չանան ընդ խնդիր արկանեն։ Պարտ և պատշաճ է առաւել ևս նոցա ընդունել պատիժս պատուհասի։ Քանզի սրբութիւն Երրորդութեանն անմատոյց հրեշտակաց և աներևոյթ քրովբէից և սրովբէից, լոկով միայն փառաւորութեամբ և աւրհնութեամբ միայն պաշտի։ Արդ տէր մեր և հայր, յընդունելի և ի սուրբ աղաւթս քո յիշել անդարշ լինիցիր. և եթէ ինչ ըստ չափոյ թղթոյդ առ տգիտութեանս վրիպեալ իցէ ուղղել կամեսցիր, և զտկարութիւնս զաւրացուցանել մի՝ դանդաղեսցիս։ Այլ յաղանդոյն որ գրեցեր գարշել, առ ժամանակս ի շնորհս աստուծոյ պսպիսի ինչ չև է հասեալ. ապա եթէ իցէ ինչ ծածկեալ ի ժանգոյ անտի, ի հարկէ ջան լիցի խլել զխոչն ի միջոյ զի միաբանութեամբ փառաւորեսցուք զՔրիստոս։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՑԱԿԱԿԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ, Ի ՀԱՑՍ.

Պատուական և առաքինի նախարարք Հայոց, սիրելիք և ծառայք Քրիստոսի, մեծամեծք և փոքունք, յԱկակայ եպիսկոպոսէ Մելիտինէ. ի կրտսեր ծառայէ խոնարհութեամբ և սիրով ողջոյն.

Վասն դիմադարձացն ճշմարտութեան որ վկնի գնացին ամբարշտութեանն Նեստորի, և Թէոդորի, և ոչ հեղգացան գովիչք լինել ամպարշտութեան նոցա և մինչ ի սահմանս ձեր փութացան առաքել զԹունաւոր և զապականիչ վարդապետութիւնն, անմարթ և անկարգ համարեցաք լռել, որք ունին զճշմարիտ վարդապետութեան քարոզութիւն, և եթէ յայսպիսի ժամանակի ոչ ճգնեսցուք ցուցանել ձեզ, որոց ընկալեալ զճշմարիտ հաւատոյն քարոզութիւն, աւգնել անձանց անմեղաց և յստակամիտ մարդկան, զի մի վնասեսցին ի խարդախամտացն և ի նենգաւոր մշակացն։ Արժանի և իրաւ համարեցաք գրել առ ձեր աստուածսիրութիւնդ, զի տացէ ձեզ շնորհիւն Աստուծոյ. եթէ սուրբ և ճշմարիտ վարդապետքն ձեր հաստատուն և անշարժ կան ի վերայ հիման ճշմարիտ հաւատոյ, և ոչ տան տեղի յափշտակող գայլոյն, ունել ժամանակ գողանալ զոք ի հաւատէ Քրիստոսի. զի արդ լցեալ է ժամանակն զոր յառաջագոյն ասաց երանելին Պաւղոս, եթէ գիտեմք զի եկեսցեն առ ձեզ գայլք յափշտակողք որք ոչ խնայիցեն ի հաւտ Տեառն, զի և ի ձէնջ յարիցեն որ խաւսիցին անարժանս, ձգել զոմանս յաշակերտելոցն զկնի իւրեանց։ Արդ կատարեցաւ և այն մարգարէութիւնն որ ասէր, դարձեալ ասէ թէ՝ Գալոց է նախ ապստամբութիւնն, և ապա յայտնեսցի որդին կորստեան, մարդն անաւրէնութեան հակառակորդն հպարտացեալ ի վերայ ամենայնի, որ ասի աստուած կամ պաշտաւն, ի գալ մտանել նմա ի տաճարն Աստուծոյ. և նստել որպէս աստուած և ցուցանել զանձն

իւր թէ աստուած իցէ։ Ահա ժամանակ ապստամբութեան, ահա ժամանակ դայլոց, ահա ժամանակ որ խաւսիցին խոտորնակս, արդ աղաչեմ զձեր, մի՛ խաբեսցեն զձեզ բանք սնոտիք, մի՛ նայիք ընդ պատուականս պատուականութեան մարդկան, և մի՛ ընդ բազմութիւն որ միաբանիցին լինել ընդդէմ իւրեանց կենարարին Քրիստոսի և ճշմարիտ հաւատոյ, զի պարտ է կատարել ասացելոյ բանին Տեառն որ ասէ, թէ Եկեսցէ որդի մարդոյ, գտանիցէ՞ արդեաւք հաւատս յերկրի։ Զի բազմութիւն որ ի չարիս և յամպարշտութիւնս միաբանին, չէ պարտ պատուոյ արժանի համարել քան զճշմարտութիւն. այլ գիտել պարտիմք զի ժամանակս փորձութեան է, և ապստամբութեան, ձգել ընդ բազում յամպարշտութիւն։ Այլ երկիւղածաց Աստուծոյ պարտ է պահել զկրաւնս հարցն և զուսումն ՅԺԸ իսն եպիսկոպոսաց սրբոց, զհաստատութիւնն որք մեծաւ ճշմարտութեամբ և խորհրդիւ և հրամանաւ սրբոյ Հոգւոյն առաքելութեան և աւետարանութեան վարդապետութեամբ ուսուցին մեզ հաւատ, զոր ասեմք հանապազ ի սուրբ եկեղեցիս։ Ըստ այնմ հաւատոյ, սուրբ եկեղեցիք զկոչեցեալսն մկրտեն մինչ ի ժամանակս անաւրէն Նեստորի և չյիշելի անուանն Թէոդորի վարդապետութեանն, զոր ամպարիշտն Նեստորիոս յայտնեաց և բազումք գնացին զկնիք Նոցա ամպարշտութեան։ Սակայն զուսումն ճշմարտութեան յերկուս ցուցանել ոչ կարացին ի սինհոդոսին և ի ժողովն որ եղեն յԵփեսոս. Մ. և թէ սակաւ աւելի կամ պակաս որք ժողովեցան սուրբ եպիսկոպոսքն յամենայն տիեզերաց, և եկին միաբանութեամբ, բաց յԱնտիոքացւոյն, զնոյն ուսումն հաստատեցին որք գայցեն ի հաւատս և ի մկրտութիւն։ Եթէ ոք արտաքսս քան զայն ուսուցանիցէ, և երկուս որդիս քարոզիցէ, մի որ ի Մարիամայ, և միւս որ յԱստուծոյն Բան, կամ շրջելի և այլայլելի որք ասիցէ զԱստուած ի մարմնանալն նզովեսցի, որ ոք և իցէ, զի ոչ մեք նզովեմք զայնպիսին. այլ սուրբն Պաւղոս ասէ. Եթէ ես կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր ընկալայքն, նզովեալ լիցի։ Եւ մեք Երրորդութիւն ընկալաք, և զխաչեալն ի սուրբ Երրորդութենէն գիտեմք, և մահուամբ նորա մկրտիմք, որպէս և ասաց. Մկրտեցէք զնոսա յանուն Հաւր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ. ոչ ասաց որդոց, այլ որդոյ, և երանելին Պաւղոս թարգմանեաց թէ զինչ է անուամբ Որդոյ մկրտել. որ միանգամ ասէ մկրտեցաք Քրիս-

տոսիւ Յիսուսիւ, մահուամբ նորա մկրտեցաք. թէ ի թշնամութեան մերում հաշտեցաք ընդ Աստուծոյ, մահուամբ Որդոյն նորա։

Աղաղեմք մի ոք զձեզ խաբեսցէ, մի՝ պատուականութիւն երեսաց, մի՝ բազմութիւն, մի՝ թողացուսցուք զշնչմարիտ հարցն կրաւնս և զհաւատ որով հաւատացայքն, որով ապրեցայքն, զայս հարկեցայ գրել առ սէր ձեր. զի ի գալ առ մեզ սիրելեաց մերոց երիցանց, Հոնայ, Քոթայ, Անձնայ, պատմել մեզ կբարի գործսըն զոր գործեցէք, զի զգրեալսն Դիոդորի կապեցէք կնքեցէք։ Արդ մի՝ ոք հաւանեցուսցէ զձեզ տալ անդրէն զայնոսիկ որք փութով և ախորժելով ստանան զայն ի կործանումն ստացաւղայ նոցա և լսաւղայ. զի եթէ Նեստորիոս, վերացաւ յամենայն եկեղեցեաց՝ զիարդ Դիոդորն, գիրքն և խումն ընդունելի՞ցէ որք զնոյն միտս և զնասակարութիւն ունին։ Զայնպիսին գիտասցիք, զի են նոքա սուտ մարգարէք, մշակք նենգաւորք կերպարանեալ կերպարանաւք պաշտաւնէից Քրիստոսի. յայնպիսեացն դգուշասցիք, և նզովեալս համարեսցիք. և մի՝ ընդունիցիք զսուտ համբաւս նոցա զոր բերեն առ ձեզ ի կողմանցն արևելեայց։ Այլ ես թէպէտ և խոնարհ և գձուձ եմ քան զամենայն մարդիկ, սակայն վասն փրկութեան ձերոյ հոգալ ոչ դադարիմ։ և ես երկնչիմ գուցէ զոք շարժիցէ ի ձէնջ պատրանք մոլորութեանն. եդի զայս վկայութիւն առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի և սրբոյ Հոգոյն և ընդրելոց հրեշտակաց։ Արդ ձեր է գիտել, զի ոչ ունի պատճառս յաւուրն յայնմ, որ երթայցեն զկնի մոլորութեանն։ Այլ դուք դգուշացարուք անձանց և ընկերաց ապրել ի մոլորութենէ և ի պատրանաց վրիպելոցն լինել պատճառք կենաց և առաջնորդք ժառանգութեան զոգոյն Աբրահամու և բնակիչք արքայութեանն երկնից։ Ողջ լերուք Տէրամբ ամենայն սիրելիք նորա, սուրբ ծառայք Քրիստոսի։

Digitized by Google

ԵՐԱՆԵԼԻ ՄԵԾԻ ՔԵՐԴՈՂԱՀԱՒՐՆ ՄՈՎՍԷՍԻ ԽՈՐԵՆԱՑԻ, ԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

Յաղագս ի յոլովիցն կատարեալ կենդանի՝ ընդէր մի բնութիւն, այլ միոյ կենդանոյն՝ հարկ է և բնութիւն մի լինել։ Ահա և արարչական բանին տնաւրէնութեանն, մի՛ բնութիւն ասի ըստ աստուածային գրոց։ և եղծ զբաժանողացն, զանքննելի աստուածութեանն գործ, նախախնամաւղարարչութեանն, ի կարասցէ հասու լինել, պատմե՛լ սահմանադիր լինել բանիւ, զի անզիտելի՝ նշանակեսցաւ որպէս զոսկերս յորովայնի յղեսցն։ Եւ լինելութեանն իսկ ծանուցումն, մեծի մարգարէին՝ սանձահարելով դադարեցուցանէ առաւել քան զչափ խորհաւղն։ զի անխոնջ ինն, և հրաշալի հրամանաւ զբոլոր զոյացելոյն պատմէ յարմարութիւնս։ և զկազմութիւն տիրական մարդոյն, և զորպիսութիւն ընդհանուր կենդանեացն լռելով, բանականաւն միայն պատմեցելոյ իմանալի ձեռաւք։ Զի հողոյն ասէ կառուցեալ մարմին և փչել շունչ և հոգի, և զնուստն և զինչ ոչ հալանէ *)։ զի փոքրն, անհառութեամբ ուսուցանելով պատմել, կարճեսցէ ի վեհագոյն պատճառէն, զտարապատկան՝ խնդիրս յուզել, բաւական համարելով զաստուածաշունչ գրոց զյայտարարութեան կէտն։ Արդ զի զամենայն զստեղծեցելոյն ճշդիւ և համաաւտարար կատարէ զվերծանութիւնն, ազգարարական շնորհիւ սուրբ Հոգոյն երևելի է. բայց արդեամբք զշինութեանն յարմարութիւն, չհամարի իրաւացի ուսուցանել։ Ընդէր արդեաւք, զի կարծողական. . . . . **) վարկանի զառաջադրութիւնն։ Քանզի վարժեալ էր բովանդակ եգիպտական քննութեանցն խրատուք, և գիտէր զգուշարս ստեղծմանցն որ ի նմա և եղծիս, վասն այնր ոչ ճոխարանէ յինքենէ ինչ, կամ ի շահեալն պիտակաբարն հրահանգաց։ Մանաւանդ թէ չթողացուցանէ իսկ պարգևաւղ վերակացութեանն զգետնաքարշիցն ի կիր առնուլ վսամախոհու-

*) Թերևս հոլանէ. **) Ի բնագրին ելթեալ.

թիւն։ Այլ անսայթաք և ճշմարիտ սահմանաւ աստուածային հաճոյիցն, սքանչելի նորակերտութեան յուցանէ հաստատութիւն, և աններհական զնոյն մարգարէից և առաքելոցն, վկայեալ մատենիցն մեծարին ի տիեզերական եկեղեցիս, ըստ արժանի վայելչականն ընդունելութեանն։ Թոյլ ունի և ինչ յունական հետազաւութիւնն, և առ սուրբ կտակարանսն փոքր մի յանկութիւն, Քանզի ընկալան որպէս յաւետաբաղաց աղբերէ, յերջանիկն Մովսէսէ աւգուտ ի տիրական պարապմանցն իւրեանց։ և է զոր քակտելով իմաստասիրութեանն, հաւանականս խաւսեցան։ Զի զմարդ ի չորից նիւթոց բնաւորեցին, ի հողոյ, և ի ջրոյ, և յաւդոյ, և ի հրոյ. յաղագս ջերմութիւն և ցրտութիւն և խոնաւութիւն և ցամաքութիւն ի նմա համեմատելով. և զանձն ևռամանն, և զոյ հնար դատողութեամբն յաւելուլ և պակասեցուցանել ըստ մասանցն, որ ի շնչականն և ի զգայուն կենդանոջն և ի բանականումն և յանհատին հարցափորձի բնութեան անուամբն յեղանակելով։ Զի այսքանեաց կատարելութիւն մարդոյն, ընդէր ասի մի բնութիւն. զի առ հասարակ սեռին անստգտանելի է սահմանդ։ Իսկ ի վերայ անհատին առաւել պարսաւելի, և և՞ յոլովիւքն մաքառիցիմք։ Քանզի մարմին իսկ չէ հոգի, և ոչ անձն մարմին։ և կիրք այլ և այլ երկաքանչիւրոցն, և անպանգ և անշփոթ է կցորդութիւնն, և յայտնի այն ի բաժանմանն։ Այլ զի անձեղքելի և անանջատապատ՝ պատկանեալ յարդարեցան տեսակն, թերևս անբաղայարար կոչեցաւ։ Մի զի՝ յիմանալի ի բաց՝ յարձակութենէն, զարմանն ունի անբաժանութիւն, և ի զատուցմանն, ոչ ևս կարէ անուանիլ նոյն։ Այսպիսի ուրեմն գաղափարաւ և արարչական բանին իմանի տնաւրէնութիւնն։ Թէպէտ և ոչ զաւրին հասու լինելով միտք մեր զի համանգամայնիւքն գերազանցեալ և անյա՞նգ է առեցումն ի մինչ անչափ իսկութիւնն. չգոյ հուն յերկուանալ ումբք, այլ զի ա՞նդր եւս քան զՀրաշս է խոնարհելն, զծառային ընդունելով պատկեր՝ ոչ յեղլով կամ սպառելով ի բաց բարձութեամբ միայն զմիւսն, այլ անմեկնելի հաղորդութեամբն։ Վասն որոյ ի դէպ և յոյժ ճահողագոյն Թուի խոստովանողաց մի բնութիւն ասելով. զի և յաչմէ նստեալ համեմատութեամբ մի՝ Ցէր քարոզի։ ապեթէ հակառակս ինչ վարկանիցին ոմանք զպատասխանեալդ անկարելի համարելով, որպէս թէ երկուս բնութիւնս պատշաճիցէ ասել Գիտասցեն զի զնոյն զանհնա-

*բութիւն և ի մարդումն գոյ՝ նկատելով ճանաչի ոչ միայն ի փիլիսոփայական ստորոգութիւնն, այլ և սուրբ գիրք աստուածաշունչք։ Թէպէտ և բնութեանց վարդապետութեամբ ոչ վայրին որպէս նոյն ինք տեղեկացուցանեն պատմութիւնքն, սակայն պատուականն յաւէտ յարգանաւք և արհամարքն բազում միջոց ունին տարբերութեամբ։ Զի մարմին յանարգ կաւոյ ստեղծանիլ զնկուցին՝ և շունչ և հոգի անեղին փչումն։ Ծանուցանէ և նուիրական առաքեալ ստուգիւ գիտելով զիւրաքանչիւրոցն զանազանութիւն, և աղաւթէ՝ Անրիծ պահել զհոգի և զմարմին և զշունչ մինչև ի գալուստն տեառն։ Լուսաւորագոյնս և փրկչին վարդապետութիւն յայտնէ՝ զհոգին առաւելն ասելով քան զմարմին, և այլք բազմապատիկք յաղագս նորին։ Արդ զի ի նոցանէ կանգնիցէ ընկեր։ զերկուս կամաւտն ցուցանել բնութիւնս Ապոդինարի լինելով ջատագով և նորին հետևեալոց որ են աղճատանք, և շամրուշ յիմարութեան ձեռնարկութիւն։ Զի թէ չէր ըստ պատկերի գումարութեանն մի, բոլորեցունց ծանաւթանայ այլ և այլ գոլ։ Բայց թերևս ասիցեն եթէ մարմնոյ կազմութիւն արարածական է՝ և թէպէտ յոքունց գոյ հնար, մի լսել։ Իսկ անրադատելի արարաւղին ո՞չ ևս նոյնպէս։ Թէ այդպէս իսկ ուրանալ պարտին և զմարդանալոյն վկայութիւնս։ Բանն մարմին եղև ասէ, և զծառայի առնուլ՝ նմանութիւն, զի զայն ուսուցանէ առնուլ՝ զոր ոչն ունէր, յոր չբռնադատեցա՞ն յումեքէ, և ոչ ամաւթ վարկաւ. յոր չէաք յանկ եղբայրութեան, եղբարս անուանեաց։ Ապա թէ անչափ անկարելի համարեսցին զմիաւորութիւնն, պարսաւելով զբաղցրութեամբն խոնարհաւղ յանշփոթութիւն և զանգումն փաստարանելով մի՝ ևս վարեսցին ձայնիւ միաւորութեանն՝ մանաւանդ դիմացն։ Որ ի կերպարանս Աստուծոյ էր ասէ, զկերպարանս ծառայի էառ։ Ցեսա՞նեա, զի կերպ և կերպ ասէ։ զոր արդեաւք կերպարան զանկեալ եղծանիցեն ըստ նոցա դաւանութեանն։ զի թէ զրովանդակին հպաւորութիւն, խառնակումն պատճառին՝ զնոյն և դիմացն պարտին իմանալ. ծաղո՞ւ արժանի են բանքն։ զպատուականն, ոչ զանգիտես, ըստ նոցա շմկեալ *) և խառնափնդորեալ վարկի՝ յոնձն առնուլ և զայլն ևս սարսափեալ քստմնին. Զի ըստ առասպելական բարբաջմանցն, զգլուխն մի գոլ ստեղծցեն և*

*) Այսպէս յոր.

զտտունն երկաքանչիւր։ Աւա՜ղ թշնամանացն որ լի՛ է դառնագոյն ամպարշտութեամբ. մինչդեռ զմեզ բամբասէին, տխմարս և հայհոյիչս գոլով յաղագս զմարդկայինն նաւթձել անկատանելի, ինքեանք ոչ զտնտեսութեանն լոկ պատառեալ անչատեցին զքանչելի փրկութեանն անքակութիւն. այլ զնորին իսկ էակից Հաւր Բանի բնութիւն։ Քանզի զԱստուածային զէմն, այլայլելի՛ բացայայտեցին, միաւորութեամբն զանգեալ և չփոթեալ որպէս իւրեանց լեզուքն վկայեն։ և զայն ամրողջ պահել զի առանց կերպարանի հնարեցին յուցանել զանձնաւորութիւնն Որդւոյ։ Նոյնպէս և զմարդոյն՝ ի խելայեղ բարբաջանս ընկղմին, և զյաւիտենական կորուստն ժառանգեն. զայսպիսի տոկալի պղտորութիւնս զգայուելով։ Ոչ գիտեմք ուստի՛ եկին յայս, զի հաւատ որ ընդ տիեզերս տարածեալ բարերանի. յետ զմարմին և զհոգի և զմիտս ստանալոյ Բանին, մի Տէր զՔրիստոս Քրիստոս քարոզեն. ի կենդանարար բերանոյն բղխեալ պատգամս ոչ դոյզն ինչ մարդոյ, այլ որ ի ծոցոյ անսկզբնականի Հաւրն է, նմա՛ վկայեն պատմել և զսխրագործականսն և զաղքատութիւնն նմին մարմնոյն ծագեցելում, անքակելի բարբառին։ Եւ ճշմարտիւ զոյ զնոյնս յարարարդեցելումն տեսանել. զի եթէ մոլեգնեալ ըստ ոմանց, քարկոծել ոք փութասցի, Մարդ՝ է. և թէ նշանս խնդրել բարեպաշտարար յորդորիցի. Ա՛ստուած իսկապէս։ Քանզի մի՛ և ոչ երկուս անձնաւորութիւնս տեսին ի Տեառնէ ապաքինեալքն, և զերանութիւնս ընկալեալք։

Զինչ և աստանաւր կամիցիս, ո՞վ անչրպետողդ. ուրեմն աստուածային զէմն, ի մարդկային անհաւասար բնութեանն միաւորեալ անարգութիւն կրեաց, միշտ մնալով յանպատուին. և թարց պատկերի մնացեալն, զգերաշանցութեանն ընկալաւ ճոխութիւն։ Քստմնի՛ր յաւեժ սարսափմամբ յամպարշտութեանս յամելով թշնամանս. Քանզի պարտ է կամ ըստ արժանի միաւորութեան՝ ի բաց թողուլ զանոպայ բաժանմունս, կամ ամենևին իսկ ուրանալ։ Ընդէ՞ր իսկ կրճատել սիրէք կիսով հաղորդութեամբդ որպէս թէ երկու կատարեալք, ոչ կա՛ր մի կատարեալ լինել։ զայդ հարկաւորութիւն խմաստուն և առաւել բարգաւաճեալն հովիւ ուսոյց Բասիլիոս՝ յամաթ առնելով զժպիրհ աթոյնանն։ և կատարեալ անշփոթ տնաւրէնութեանն Աստուծոյն և մարդոյ մի բնութիւն ասել զնոյն զմի

Digitized by Google

ջնաւրինական եղելութիւնն։ Եւ Յոհան կոստանդնոյպաւլսեայց ունի ի փիլիպեցւոց Թղթին ընդդէմ հերձուածողացն դաւանեաց. Մի՛ շփոթեսցուք ասէ, և մի անջրպետ ի մէջ արկցուք. վասն զի միութիւն խոստովանիմք, և ո՛չ քայքայութիւն ինչ և լուծումն, այսր բնութեան յայն, կամ այնր յայս, այլ միացեալ ասեմ և մի լեալ։ Նոյնպէս և մեծն Յուլիոս ի Թղթին որ առ երջանիկն Դիոնիսիոս Աղեքսանդրացի։ Եւ Կիւրեղոս յԱղեքսանդրացւոց քաղաքին պայծառացեալ յերկրորդում ճառին, որ առ Սուկենոս Դիոսկուրացի. և յորս առ Նեստորն։ և որ առ մեկնութեան հաւատոյ երեք հարիւրոցն՝ և Երեքթեայ երանելոյ Անտիոք Պիսիդեայ եպիսկոպոսի, և յաստուածայայտնութիւնսն ի Կոստանտինոյպաւլիս. և Գրիգորիոս Նեոյկեսարացի յորում ըստ մասին հաւատոյն. եւ Եփրեմ ի ճառին որ ի սուրբ երրորդութիւնն. եւ Գրիգորիոս Նազազացի աստուածաբանութեամբն մեծարոյ, յոլովագոյնս ասելով ժամանակի զարմանս և այլ անթիւ հովիւք ուղղափառութեանն համարարբառք սոցին մի Տէր, և մի զնորին բնութիւն գիտելով անբաժ միաւորութեամբն աւետարանեալ յաշխարհի, հաւասարելով առաքելոց և մարգարէից պատգամաց, որք վայելչական լծակցութեամբ աւարտեն զԽորհուրդ միաւորութեանն։

Զի աստուածափառ նախամարգարէն, զ՚ի փայտէն կախեալ կեանս կոչէ։ Եւ որդին որոտման Յովհաննէս, ճշմարիտ Աստուած և կեանս յաւիտենականս. Սերովբէից տեսաւղն Եսայիաս, զ՚ի կուսէն ծնիցեալն ընդ մեզ Աստուած լինել ճոխաբանէ։ Եւ Տարսոնացի փողն բարեձևագոյնս գոչելով հնչեցուցանէ զբարբառն՝ Մի՛ կարծէք ասէ ի ժամանակեան կուսէն առնուլ զսկիզբն. զի Աստուած առաքեաց զՈրդին իւր, որ եղև ի կնոջէ, և եմուտ ընդ աւրինաւք զաւրինաւորսն ապրեցուցանելով։ Եւ դարձեալ նոյն տեսանաւղ հանդերձ միւսովն, թէ Ոչ պատգամաւոր ոք և ոչ հրեշտակ ոք, այլ ինքնին Տէր փրկեաց զմեզ. զոր ինքնին իսկ կենարարն ուսոյց, ի խաւարէն բուժեցելում կուրին ասելով, Դու հաւատա՞ս յՈրդի Աստուծոյ։ և նորա զարմացեալ, զՈ՞ՎՔ առաջի դնէր, և նա ասէ Եւ տեսեր զնա, և որ խաւսիդ ընդ քեզ նա է։ Եւ յԵրեմիայ ասէ, բայ՚ Սա է Աստուած մեր ընդ որում ոչ համարեսցի այլ որ ետ զիմաստութիւնն Յակովբայ. յետ այսորիկ ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ։ Երևեալն յաշխարհի աղաղակէր,

Digitized by Google

զնոյն հաստատելով, թէ Որ առաքեացն վիս Հայր ընդ իս է, և որ տեսանէ զիս, զՀայրն իմ տեսանէ, զի ես և Հայր իմ, մի՛ եմք։ Եւ թէպէտ և զբազմապատիկն քննեսցուք կամ քննեսցէ ոք յաղագս այսորիկ յայտարարութիւնս ի սուրբ գիրս՝ ոչ ուրեք գտանի երկուց բնութեանց բաժանելոց, հանկանակաւ բաշխել տալ, այլ եղում մարմնով յայտնեցելում, նոյն հովիւ և ոչխար, քահանայ և պատարագ. ճանապարհ և դուռն. լոյս և ճշմարտութիւն։ Իսկ եթէ ըստ արտաքին փիլիսոփայեցն պանձացեալ, մարտնչել պէս պէս բնութեամբ թէպէտ աւտար է նոցա այն բազում իւիք յաստուածապարգև պատուիրանէն՝ բեր աղէ՝ անցուցուք ի հանդիսի, քողա՛յայտելով զխղեայթեալդ։ Քանզի նշանակեցաւ ի մէնչ փոքր մի և յառաջագոյն, զի մարմին չէ հոգի, և ոչ շունչ որ ի մեզ՝ մարմին. թողցուք զայլն ևս։ արդ մի բնութիւն բանին աստուածութիւնն է, իսկ միւս ևս ընկեր շարայարմարութեանն կամ զուգաճանապարհորդութեանն, ըստ անուղղայ բարբաջմանցն. զի՞ կանկնիցեն ի մարդկային բնութենէն՝ զհոգին առանց մտայ, թէ զանզգայ մարմինն, զի ոչ ևս գոյ հնար յաղագս այդորիկ ճոռոմել, մի բնութիւն ասելով զմարմին և զանձն։ Այդ ուրեմն է բարձրայաւն նալանացն խորհուրդ. որ նման է գերեզմանաց բռելոց. զարտաքոյսն գեղեցիկ կեղծաւորելով, և ծածկեցելոյն փեռեկումն՝ ժահահոտութիւնս բղխէ։

Աստանաւր անբաւ տարակուսանաւք ունին պապանձել պարտութիւն յանձն առնելով, զի թէ երկուս ասել մաքառին, զմարդկային բնութիւնն աւցտեն, զրկելով զհոգին կամ զմարմինն ի փրկութենէ առաւղին։ Նոյնպէս և զաստուածայինն հատանեն յերկուս, զդէմն ընդ մարդկային դիմիս միաբանելով. և թէ հաւանեսցին միաւորութիւն խոստովանելով, որպէս էն իսկ, ո՛չ ևս այլ համարձակեսցին անդուռն բերանովք երկուց ձայնիւ ղաւղանչել։ Այլ մեք, ով սիրելիք, յամենայնի կարող և բաւական զանսկզբնական էութիւնն Հաւրն երկնաւորի փառաբանեսցուք, որ իմանալի ձեռաւքն զմարդոյն յարմարեաց կազմութիւն։ այսինքն Որդւովն և սուրբ Հոգւովն, ո՛չ որիշ զարտաքին կամ զներքին մարդն ասել, այլ մի։ Եւ զարարչական բանին զտնաւրէնութիւնն ի Մարդ և յԱստուած, մի յաւակնեալ բաժանեսցուք ամպարշտարար, զի խորհուրդ է անքննելի։ գուցէ ի փայլակնացայդ մեծի աւուր գալստեանն, և զմեզ հրամայեա-

ցէ կտրել ընդ մէջ յառաջ հետևող հրոյն ընդ կեղծաւորսն տալով բաժին. այլ ամրիծ հաւատով հանդիպել նմա, զի մի տէրութեամբ և կերպարանաւք ծագելոց է արեգակն ի բարձանց փառաւք Հաւր և ոչ երկուք։ Եւ յայնժամ հայեցին ի նա բաժանաւղքն որպէս որ խոցեցինն, սաստիկ ամաւթ կրելով յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից։

Զայս քեզ փոքր ի շատէ պատճառ յանդիմանութեան, յաղագս բաժանեալ ուսման պլանդակացն, զի ծանիցես, ո՞վ աստուածասէր, յոմանց փախչել և բաղձալ անսասանելի և անշուշտ հաւատոյ դաւանութեան ի մարգարէիցն տնկեալ, և յառաքելոցն զարգացեալ, պայծառացուցանելով ընդ տիեզերս, զի ընդ նոսին և պարգևացն հասանիցեմք։ շնորհաւք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հաւր և Հոգւոյն փառք յաւիտենի՛ց յաւիտեանս։

Զ[illegible] նուաստս յամենայնի՝ յիշեսջի՛ր ի փէր։

Digitized by Google

ԵՐԱՆԵԼՈՑՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊԱՍՏՊԵՏԻ, ԱՊԱՑՈՅՑ ՅԵՐԿՈՒՑ ՌՆՈՒԹԵԱՆՑ ԱՍԵԼ ՋՓՐԿԻՉՆ ԵՒ ԿԱՄ ՄԻ ՌՆՈՒԹԻՒՆ։

Եւ քանզի առաքելականն և մարգարէիցն կտակքն ոչ ուրեք յիշատակեն զերկուց բնութեանց այլութիւն. ապա պարտ է անդրդուելի խոստովանութեամբ դաւանել ի սուրբ Երրորդութեանն զԲանն Աստուած զմարմնացեալ։ Որք ալեկոծութեան յաղթողք լինիցին և բազմապատիկ առաքինութեամբ պայծառացեալք բոլորովիմբ նուիրելով զինքեանս մաքրութեանն՝ ընկալեալ զՀոգի որդեգրութեանն շնորհի, բաւական՝ լիցին ասել զինքեանս քրիստոնեայս. քանզի գրեալ է, եթէ Ոչ ոք համարձակիցի ասել Տէր զՅիսուս եթէ ոչ Հոգւովն սրբով։ Իսկ եթէ Հոգւով սրբով է գիտութիւն վայելչապէս խոստովանողացն զՔրիստոս. մի ոք յաւակնեալ մոլեգնութեամբ. զնորայն յափշտակել զպատիւ, որ և զդիւացն զանց առնէ զամպարշտութեամբ։ Հոգին զամենայն քննէ, ասէ, և զխորս Աստուծոյ. ապա ուրեմն թէ ոք լկնելով ժպրհիցի խնդիրս յուզել խորոցն Աստուծոյ, վաղվաղակի հեղձամղձելով մատնի սատակման։ Զարքունի ճանապարհ գնասցուք, ոչ խոտորելով յաջ կամ յահեակ. քանզի հմուտ նաւաստին ոչ երբեք բաղձայ ստերիւրելով անկանել ի յորձանուտն, այլ անսայթաք մաղթանաւք ցանկայ հանգիպել յապահովական նաւահանգիստն։ Իսկ մեզ զինչ զուցէ այլ փափաքելի կամ խաղաղաւետ նաւահանգիստ՝ եթէ ոչ անսասանելի ճշմարիտ հաւատոյ ամրութիւն. յառաքելոցն և ի մարգարէիցն աւանդեալ. հաւատալն ի Հայրն ամենակալ. և յանսկզբնական Բան նորա և ի Հոգին սուրբ։ Աստանաւր յաւէտ զգուշանալով յոլովայեղանակ զաղփաղփուն մտաց մերոց, զսուրբ Հոգին ձայնեսցուք ի Թիկունս աւգնականի զի մի կործանեսցուք

զանկանգնելին։ Քանզի ասեմք Ամենակալ զՀայրն և յաղթեմք. ոչ առնելով ի միտ այսպիսի ինչ. զի ամենակալն զընաւս պարունակէ, ինքն անրովանդակելի մնալով։ Արդ զի զբոլոր գոյացեալսն ընդ երկնի և յերկրի արարչական Բանիւն և էակից Հոգւովն, հաւատամք. բայց թէ որպէս, ոչ առնումք ի միտ. այլ անհետազաւտելի արարչութեանն նուիրեմք զկարաւղութիւնն։

Խոստովանիմք զգալն *) ընթանուրս երկրպագելով երիցն իսկապէս անձնաւորութեանցն, և միում աստուածութեանն։ Ունիմք զաւանդութիւնս զայս, սիրելիք, յերչանիկ առաքելոցն և ի ճշմարիտ հարցն, որք ամենակալ քարոզեցին զՀայրն, և զի Տէր զՅիսուս Քրիստոս առ ի զերկուսին աղանդն ի բաց կտրել, մանաւանդ թէ զբազմապատիկսն։ Քանզի ամենակալն բարբառելով՝ զբազմաստուածութիւնն և որք յոլով զյաւիտեանսն առասպելաբանելով տողեն, առ հասարակ տապալեալ կործանեսցին և զի Տէր զՅիսուս Քրիստոս վարդապետելով վիրաւորեսցին անբուժշկելի վիրաւք, որ զանբժշկելին մոլեգնեալք բաժանեն. այլ ոմն զՅիսուսն գոլով ախտակրելի, և այլ զՔրիստոսն, անախտ և անչարչարելի միշտ մնալով առանց հաղորդութեան երկաքանչիւրոյն, զոր իսկապէս տապաստելով, նշան կանգնեալ յաղթութեան հռչակեցելումն ընդ տիեզերս կաթուղիկէ եկեղեցւոյ։ Եւ նմա զվայելչականսն իմանալ և զխոնարհագոյնսն. զի ճշմարտութեամբ եղև մարմին խոնարհութեան մերոյ՝ Բանին Աստուծոյ մարմին. վասն որոյ անորոշաբար յերկնաւորաց և յերկրաւորաց. և ի վայր սանդարամետիցն ընդունի երկրպագութիւն։ Զի թէ անչրպետութիւն գոյր յանրաժ հաղորդութեանն ոչ վերծանէր Բանն որդի մարդոյ գոլ զինքն, կամ խոնարհական մերկ մարդն՝ Որդի Աստուծոյ զանձն ճոխաբանել, համեմատական ձայնիւ՝ Ես և Հայր բայ մի եմք. Եւ թէ՝ Որ ետես զիս՝ ետես զՀայր իմ։ և դարձեալ թէ Ծանիջիք և տեսջիք զի ես ի Հայր և Հայր յիս է։

Տեսանե՞ս, զի կերպարան զինքն բացայայտէ. ի լուսոյն ծագեալ մեզ ճառագայթ. և ոչ երբեք զերկուց ոմանց շարընթացութիւնս ճառէ կամ զուգաճանապարհութիւն տարբերութեամբ երկաքանչիւրոյն։ Որպէս Պետրոս և Յովհաննէս շարընթանալով ի ճանապարհակցութեան կէտն, և անյարմար է

*) Թերեւս զգոյն

զերկեսկան՝ մի թարգմանել։ Իսկ փրկաւորին զմեզ Տեառն բազմաւորական անուանքն. ոչ յոլով երեսս կամ գանազան բնութիւնս, այլ մի Տէր զՅիսուս Քրիստոս վարդապետելով հանդերձ մարմնովն։

Բայց կամիմ փոքր ի շատէ անցանել բանիւ յաղագս ճառի բնութեանցն, զոր ոմանք չարաչար ի կիր առեալ վարեցան, զամպաստանութիւնսն ի վայելչապէս ճառաւղսն կամելով թափել։ Բայց նախ ճանաչել պարտ է. զի ոչ յիշատակեցաւ բնութեանցդ անուն՝ ի դէմն քրիստոսասէր ուղղափառաց. այլ չարաչարն պատառմամբ խոստովանողաց, զորս անվրէպ գոյ ասել. քան զընաւս անաւրինագոյնս և տարագրեալս յուխտէ աւետեացն, որք ըստ գոյացութեանց իմն բնախաւսելով, զէակս քննել առին ի կիր, զերկրիս խորհելով ընդ նոյն շաղեալք, ի խլրդենի կաւրութեան հաղրս։ Իսկ լուսաշաւեղ պատգամ վարդապետական սահմանին ի նուիրականն առաքելոյ ընկալեալ խրատ, գիտեն լինել ընդ անաւրէնս՝ որպէս զանաւրէն, ըստ հնարաւորութեան ճարտարապետ բժշկաց, որ ի դժնդակ և ի խիստ պյտմունս մարմնոյ կամ պէս պէս ախտիցն խղխայթելոց, զվիրացն միայն նկատելով զապաքինութիւն, զհատանողականն և զխարմանն և զյուժգնակի կսկծեցուցիչ դեղսն, նա և յանարբոցն առ հասարակ առեալ ի կիր։ Իսկ կապդուրեցելումն և յաւէտ առողջականին ոչ ևս նոյնպէս, զի անկարգ է և շամբուշ յիմարութեան ձեռնարկութիւն։ Արդ ճշմարիտ վարդապետացն յաղագս այնպիսի իմն գաղափարի տուեալ զանձինս ի ջան՝ որք բնութեանց պատճառաւ վարէին, զի զմոլեկանաց սոյն աստուածարանութիւն ի մահ ծնկելոցն յանդիման կացուցանելով. թերևս շահեսցի զանգիւտն կորուսեալս։ Վասն այսորիկ իսկ զիւրաքանչիւրոցն փութացեալք տալ ապացոյց լինելոցն, զրնութիւն տրտմական և ախտակիր հոգւոյս մերոյ խոցումն ընդունաւղ շաւշափելի մարմնոյս և զիշխանական մտացն։ Քանզի յոլով ուրացեալք զփրկիչն մեր և զՏէր՝ ունել զճառեցեալս, որպէս Ապաւղինարի թուի և նորին հետևեցելոցն զորոց փորձ ձախողակի մաքառմանց ի նոցին հակառակութեանց դիւրաւ գոյ ուսանել։ զի բոլորովին գտանին տարագրեալք ի հրաշալի փրկութենէն մեզ պարգևեցելումն։ Ապա ուրեմն վասն զարտաքինսն պապանձեցուցանել նոցին մարտուցեալք տրամիմացութեամբ, ըստ առաքելական սահմանադրութեանն

լինել ընդ հրեայս, իբրև հրեայ, ոչ որպէս ոմանք ի հերետիկոսացն՝ հրէիցն հաւասարել խորութեանց և հեթանոսաց կռամոլ զոհից, այլ ուղղակի ծանուցեալ զխրատն, ընդ հրեայս՝ նոցին գրովք պատերազմել ընդ հեթանոսս՝ անհաւաստի կարծողական մատենիւքն։ Եւ մի չարաչար զբարիոք գրեցեալս յեղանակել կամ ընդ սուրբ Կտակացն համեմատելով, ճառել զճառս նոցա։ Քանզի բազում ինչ զտանեմք ասացեալ այլուստ երջանիկն Պաւղոսի, զԿրետացիսն հանապազաստուս, զԱրին որ ընչեսդ, և զՂուկանացուցն առասպելարանութիւն, և զայլն ևս։ Սակայն ոչ ոք համարձակի ի ճշմարիտ քրիստոնէից, յաղագս զուգապատութեան *) յիշատակել, այլ պիտակապէս. և մանաւանդ զանզգամն, անզգամացն մատենիւք յանդիմանել. զի մե՝ արանաւք ասել զընդունելն ի պատասխանիս վարդապետութեանն, յանրաւ կործանմանէ ամպարշտութիւնն, ի միտն հայելով ճառիցն նովին կանոնաւ դրնութեանցն պարտիմք ճանաչել ձեռնարկութիւնս, որպէս նոցին իսկ բացայայտեն առաջարկութիւնք։ Զի որք զՀոգի և զմիտս մարդկային ժխտեին ունել զփրկիչն մեր, կամ մարմին յոլով բնութեամբք եդեալ մարտ կռուէին, ամրիծ հաւատոյն ախոյեանի, զանպանութիւնս որոշելով զիւրաքանչիւրոցն։ Քանզի այլ բնութիւն է մարմնոյ, և այլ հոգւոյ, նոյնպէս տիրական մտացն։ Սակայն առ հարկի հիւանդացելոցն ի հաւատս, քննեալ լինիւր այս ամենայն։

Այլ բնախաւսութեամբ ո՞ ոք ի մարդկանէ զաւրեսցէ յանդիման կացուցանել զորչափութիւն մտայ և ոգւոյ և զտարացոյց երկաքանչիւրոցն յեղանակի, կամ զկապակցութիւն ի մարմնին՝ զի մի, և ո՛չ բազում ասի մարդն։ Ցեսանե՛ս, քննեալն անքննելի մնայ, ի բազում տարակուսանս արկանելով զքննաւղն։ Քանզի՝ ոչ ոք կինքն տեսանեն միտքն, որպէս առաքելականն ստուգաբանէ յայտարարութիւն, թէ Ո՞չ ոք է որ ճանաչէ զմարդոյն բայց հոգին որ ի նմա եթէ. Ապ եթէ յանդգնեալ համարձակեսցի ոք ասել ճշդիւ գիտել, ուրեմն և զխորսն Աստուծոյ քննէ, քանզի յերկուցունց է հրաժարեցուցեալ անկարելի գոլով զխնդրելն. այլ որպէս վերագոյնն ասացաք յաղագս ախտացելոցն ի հաւատս զանասելին խաւսել։ Զի թէ չէ հնար ի յովմից մի եղեալ զմարդն քննել, կամ զմարձակայ ընկերն, կամ

*) Յոր. զուգապատութեան.

ինքն իսկ գլխովին, կիարդ արարչին ոք բաւիցէ լինել հասու, սահման դնելով անհետազաւտելի տնտեսութեանն խորհրդոյ. թէ այդպէս է խորհուրդն, ոչ ևս է խորհուրդ։ Տի նա ճոխ և վեհագոյն պարտի ասել զինքն սահմանագիր խնդրաւոն։ քան զայն որ սահմանն ընկալաւ. զի մեծ է հասու եղեալն քննաւղ սահմանագիրն, քան զայն որ ընդ չափովն անկեալն սահմանն ընդունի։ Տեսանես զնաւաբեկութիւն անուղղայ հայրցման, զայսպիսեաց ասէր՝ երանելին Պաւղոս, թէ նաւակոծեցան ի հաւատսն. քանզի ոչինչ պարտիմք աւելի ածել զմտաւ, բայց միայն խոստովանել զնա յամենայնի կարող, և արարիչ, է Տէր։ Եւ զարարչութեանն իսկ աւրինակ, որպէս զմեզ յանեութենէ ի գոյութիւն ստեղծանէ, ինքն միայն գիտէ։ Քանզի չեն բաւական միտք մեր նկատել զբովանդակն։ Վասն որոյ և անվրէպ գոյ ճանաչել զհարցն. զի և առ հարկի հիւանդացելոցն ի հաւատս՝ քննեալ լիներիր այս ամենայն. զոր վայելչապէս գոյ ի նոցին տեղեկանալ անստգիւտ վերասացութեանցն։ Քանզի ՅԺԼ քն ի Նիկիա գումարեալքն ,յարիանոսացն ի քակումն, ոչ կալան փոյթ երկուց կամ յոլով ևս բընութեանց առնել ընդրութիւն զանազանութեամբ, այլ ըստ վիրաց վիրաւորելոյն բարբառեալ վաղվաղակի՝ կտրելով զարմատ ժահրոտ փտութեանն։ մի բնութիւն ասացին նպատակ ուղղափառութեան կանգնելով յաղթութեանն յերեսս լրբենի լկնողաց, որք ուրացան զՈրդի յեւթենէ Հաւր՝ յաղքատութիւն և յապականութիւն իջուցանեն տաժանեալք. նոյն բնութիւն Բանի *) Հաւր որով ամենայն եղև. և այս առաւել ինն դիպողագոյն, զի բնութիւն Բանին աստուածութիւնն է, բոլորեցունց դաւանելի է։ քանզի չէ ոք. ի սուրբ Երրորդութեանն յայլմէ եւթենէ կամ ի գոյութենէ, մի նետիւ երեքսայրեան սլաքաւորաւ, սպանեն զմշնամիս արդարութեան՝ աւետարանելով զյաղթութիւն, հանդերձ հրաշալի տնտեսութեանն ձրիւք. Իջեալ, ասէ, մարմնացաւ և մարդացաւ և ծնաւ կատարելապէս ի Մարիամայ ի սուրբ կուսէն։ Դարձեալ պատանաւր զիջանելն. ոմանք կերպարանաւք, և ոչ ճշգմարտութեամբ վարկանին. զի տեղեացն ի տեղիս փաստրանելով, փոփոխումն հաճութեամբ ինն և կամաւք, զխոնարհմանն տան աւրինակ. և ոչ գիտեն թէ որ զայլսն բամբասեն՝ ին-

*) Ցոր. բան:

Digitized by Google

քեանք վարմին նովին, յայտ առնելով թէ միով վայրաւ բովանդակին։ Եւ վասն այնորիկ իսկ ղայլն դատապարտեն, հայհոյիչս գոլ յամենայնի, և ղայն ոչ իմանան թէ տարրական նիւթեղինաց այնպիսի իրք ուրեմն լինել, և ի հեռաւիգսն կամաւք մի և հաճութիւն ունել անարդիւնաւոր՝ զոր ոչ վաւրէ բոլորն աւարտել։ Իսկ անրովանդակելի եութեանն՝ ո՞ կարէ առնել որոշումն վայրաւք զանալանելով. յայտ է թէ ամբարիշտն։ Ո՞չ ապաքէն զերկինս և զերկիր ես ընում, ասէ Տէր, և երկինք աթոռ իմ են և երկիրս պատուանդան ոտից իմոց։ Եւ հեղն Դաւիթ բողոք բարձեալ յուժգնագոյն, գոչէ. Մի մոլորիք, ասէ. զի Աստուած մե՞ծ յերկինս և յերկրի է, ի ծովս և յամենայն խորս. և այս է ամենակալ. ապա թէ անկարելի գոլ թուի բնութեամբ մարմնանալն, և յընթանուրսն լինել, գիտասցէ զի և հաճութիւն՝ ի հաճելումն աւարտի. ոչ ևս ուրեք բաւելով, բայց ճշմարիտ քրիստոնէին ոչ է պարտ ընդ այնպիսի տղմուտ խոհերս դեգերելով թաթաւել, քանզի մահ գործէ։ Եւ որք ժպրհեցան քննել զխորս Աստուծոյ, իսկապէս շահեցան զսատակումն, այլ հաւատալ մարմնացելումն բանին Աստուծոյ և ապա զարմացմամբ փառաւորել, որ զծառային կերպարանս առնելով երևեցաւ և է ի վերս քան զՀրաշս խոնարհութիւնն։

Այլ Բանն յաշխարհի էր, որպէս աւետարանագիրն իսկ ասէ, և աշխարհ նովաւ եղև, և որպէս էրն, է՞ միշտ ծածկատեսն։ Միայն յայտնի եական աւետաւոր պատգամացն, և մարգարէիցն գուշակութեան երթիցուք զհետ. և մի՛ բնութեամբք գուպար եդեալ զանճառելիսն բաց ասելով չարաչար աւցտիցեմք։ Իսկ արդ եթէ չէին մոլեգնեալ դասք հերձուածողացն, որք յառաքելոցն ընկալան զքարոզութիւն՝ արդեաւք չէ՞ին քրիստոնեայք. քանզի բնութեանդ անուն և յականչալուրս ուրուք չէր հասեալ, այլ նորին հակառակն։ Կեանքն յայտնեցան, ասէ, և տեսաք և վկայեմք. քանզի որ էրն առ Հաւր, և երևեցաւ մեզ։ Ո՞վ սքանչելի առաջի եդեալ նպատակիս որ առաւել ինն ուշմնագոյնս տայ ընթանալ ի կէտ կոչմանն Աստուծոյ. զի որք զմարմնոյն միայն տեսանէին կերպարան՝ որպէս էր իսկ ճշմարտիւ եղեալն մարդն, որդի Յովսէփու կոչէին. այլ և սամարացի և հայհոյիչ։ Իսկ զիմանալին ունաւղք հոգևորական աչս՝ Լոյս փառաց և նկարագիր էութեան անսկզբնականի Հաւրն խոստովանէին։ Քանզի լուան ի կենսատու փրկչէն, և հաւատացին թէ

Ես ի Հայր և Հայր յիս է։ Ապա զինչ ասիցէ աստուածաւոր բնութեանցն խնդրաւղ որ քրիստոնեայ զինքն անուանէ. զոր բնութիւն տեսին աշակերտքն. զաստուածութեանն եթէ զմարմնոյն։ Յայտ է զի զմարմինն տեսին։ Այլ թէպէտ բիւր անգամ կամիցին ուսանել, զիրն բողոք բարձեալ աղաղակէ՝ թէ Շաւշափեցէք զիս և տեսէք զի ոգի, մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս և զիս տեսանէք զի ունիմ. զոր եառն ի զաւակէ Դաւթի։ Քանզի հայեին ի նա որպէս ի մի ոք ի մարդկանէ, այլ Բանն միացեալ էր ի մարմնին, բառնայ ի բաց զկտրութիւնն անջրպետութեան։ Քանզի ոչ ասաց թէ՝ Որ ետես զաստուածութեանն բնութիւն կամ զմարմնոյն, այլ անորոշաբար ասէ թէ՝ Զիս։ Եւ դարձեալ՝ թէ Ոչ ոք ելյերկինս եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ որ էն յերկինս. ուր էր որդին մարդոյ յերկինս զորմէ իջանելն ասէ. աղէ ցուցցե՛ն։ Զի թէ երկնաւոր էր մարմինն, ոչ յորջորջիւր Որդի մարդոյ, և թէ յերկրէ և ի զաւակէ Աբրահամու որպէս խոստովանիմ իսկ պանՀալով, զի՞արդ էր յերկինս, եթէ ոչ ուղղակի իմասցուք յաղագս անրաժ միաւորութեանն։ Արդ եթէ ստուգիւ հաւատամք ասայելում փրկչին և Տեառն՝ ի բաց թողցուք զկտրութեանն բաժանմունս, զի մի նմանեալք լիցուք փարիսեցւոցն, թէ Դու մարդ ես, և զանՀն քո Աստուած առնես Զի եթէ որոշութիւն դոյր տարբերութեան, ընդէ՞ր դատապարտին հրեայք, զի նոքա ի մարդն արկին ձեռս նախանձ ունելով յաղագս անտեսանելի և անըմբռնելի աստուածային բնութեանն։ Եւ զի լուեալ էր յահեղ ցուցականութենէն՝ թէ Ո՞չ ոք տեսանէ զերեսս իմ և ապրի. և Տեսիլ նորա անարգ նուազեալ քան զամենայն որդոց մարդկան, և այլ ևս. զի զհրապուրաւղսն պաշտել կաստուածս աւտարս, յանխնայս հրամայեն սպանանել աւրէնքն, որչափ ևս առաւել՝ որ զինքն լոյս կոչէ աշխարհի համեմատ Հաւրն, թէ Ես և Հայր իմ մի եմք։ Թէ այդպէս իցէ. քան զամենայն նախնեացն բարեպաշտագոյն էր հրեիցն զԲարձն ի մէնջ ասել և հան ի խաչ։ Որպէս կայր մի ի հարուածսն գիտէր համբերել յաւոց, այլ գիրք ընդդէմ սմին ասեն. զի իբր և զայր մի որ կայր ի հարուածսն. Նոյն ինքն տեսանողն ասէ. Նորա վիրաւքն բժշկեցաք ամենեքին, յայտ առնելով զվիրացն Տեառն գերազանցութիւն։ Զաղգատոհմն նորա բայ, ո՞ պատմեցէ, զի բառնան յերկրէ կեանք նորա։ Եւ եկեղեցւոյ փողն Պաւղոս, փառաց Տէր կոչեաց զխաչելեալն. զոր մարդարէն

կանխաւ զուշակեաց, թէ Ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեզ. եթէ ոչ պատգամաւորք և ոչ հրեշտակք, այլ ինքնին Տէր փրկեաց զմեզ։ Զ Քրիստոսի գալուստն գրեթէ ակնյանդիման տեսանելով, մատամբ ցուցանէին, Ահաւասիկ ասէ Աստուած մեր։ Ո՞վ բանի զաւրութիւնն, որ առհասարակ տապալէ զդաս բաժանող երկաբնակ աղանդոյն։ Ոչ ասաց, թէ ահաւասիկ աստուածային բնութիւնն՝ կամ մարմնոյն՝ կամ հաճութեանն ասպնջական՝ կամ մարգարէն, այլ անորոշարար գոչէ. Ահաւասիկ Աստուած մեր, և բարիոք ասէ՝ մեր. զի որք մարգարէին լինին ձայնակիցք խոստովանութեան, նոցա է Աստուած և Հայր հանդերձելոյ աշխարհին, իսկ պատառուղացն ցոնաւրէնութեանն պատմուճան, հատուցանողն զդատաստանս, և հատուսցէ։ Վասն որոյ վկայութիւն դնէ. վաստակաւքն առաւելեալ նահատակն պահել զպատուիրանն ամրիծ անարատ մինչև ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ զոր յիւր ժամանակս ցուցցէ, երջանիկն և միայն հզաւրեղ թագաւոր թագաւորաց և Տէր տէրանց՝ որ միայն ունելով ասէ, զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց։ Դարձեալ և աստանաւր պապանձեցուցանէ զանջրպետութեանն զանազանաւղս. քանզի Կորնթացւոցն գրէ զոր ինքն ընկալաւ, թէ Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց, և աստ թէ Միայն ունի զանմահութիւն։ Երկուս արդեաւք քրիստոսս քարոզիցէ։ զայն ինքն իսկ դաւանեալ կնքէ, թէ մի Տէր Յիսուս Քրիստոս։ Կամ բնութեամբք ինչ վարդապետեսցէ, և ոչ երբէք, քանզի յոյժ հեռագոյնս կամին փախչել յայսոսիկ բարբառոյ յառաքելոյն և մարգարէիցն դասք, զմի Տէր գիտեն զմեռեալն և անմահ մնացեալն, որպէս ի միում մարմնի անդամքս բազումս ունիմք զանազանեալս գործով։ Զի ոչք աչք լսեն, և ոչ ականջք տեսանեն. և ոչ ձեռք ալեալոյն պատկանեն զպատգամաւորութիւն, և միանգամայն իսկ անդամքն զնոյն ունին աւրինակ, այլ ոչ ոք հակառակեալ ցկարի իսկ անարգագոյնն ասիցէ եթէ Ձես ինձ պիտոյ. որպէս առաքելականն ստուգէ գուցականարար։ Վասն զի բազում անդամովք աւարտեալ մարմին՝ կոչի մարդ. քանզի բազումքն մի մարմին են և մարդ։ Այսպէս զփրկչին մերոյ և տեառն իմացուք՝ որպէս հաւատոյն ուսուցանէ կարգ։ Բանն Աստուած մարմնացաւ և մարդացաւ ասէ, զի միաւորեաց աստուածավայելչարար զմարմինն խոնարհութեան մերոյ բովանդակ զհոգի և զմարմին, զի ճշմարիտ

եղև մարմին Բանին Աստուծոյ։ Վասն այնորիկ ասի անտեսանելոյն տեսանիլ, և անշաւշափելոյն շաւշափիլ, խաչիլ, թաղիլ, և յառնել յաւուր երրորդի. քանզի ինքն էր չարչարելին և անչարչարելի, անմահ, և որ զմահն ընկալաւ։ Ապա թէ ոչ, զիա՞րդ լինիւր տուեալ Հաւր զՄիածինն. կամ փառաց Տէր գոլ խաչեցեալումն։ Այս է ի բազում անդամոցն մի՝ մարմին. թէպէտ և զնոյն գործ չունին։ Զի ոչ հոգին ըստ ինքեան խոցումն ընդունի, և ոչ մարմինն տրտմութիւն, և Բանն գերիվերոյ և անընդունակ երկաքանչիւրոցն։ Եւ է ամենայնիւ տարեալն և անտանելին, և վասն այնորիկ ասի մարդ և Աստուած, ընդունելով սահման աստուած մարդայեալ։ Ապաքէն թէ զմի ինչ ի բաց բառնայցեմք յանդամոցն անջրպետելով. կրճատութիւն է թշնամանելի։ Մի թշնամանեսցուք որպէս հրեայք, տարաւրէն անչատմամբ զաստուածավայելչարար միութիւնն։ Յիսուն ամ չէ՝ ևս է բան քո և զԱբրահամ տեսեր, և փոխանակ զընդդիմազոյնսն լուան. Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես։ Արդ ուր տայցեմք իրաւունս բաժանորդ լինելով մասին. աւետարանչին՝ որ զտէրունակունն երկրորդէ զպատասխանիս, թէ հրեիցն։ քանզի մարդ տեսին՝ զծնունդն անգամ գիտելով. վասն այնորիկ իսկ փութայեալ, մատնել ի սպանդ խաչի, զի աստուած զինքն քարոզէր։ Իսկ եթէ բանն էր մարմին եղեալ բնութեամբ և բան ինչ էր մարմինն, նոքա զմարդն ուրացան մահու մատնելով։ Բարեպաշտագոյն պարտ է համարել զգործն. զի ունէին հրամանս Տեառն Աստուծոյ միայն երկիրպագանել և պաշտաւն մատուցանել. զՄի առնիցեսն քեզ նմանութիւն յերկնի և յերկրի, և ի ջուրս։ Ի յերկինս ասելով՝ ի լուսաւորայ հրաժարեցուցանէ, և յայլ ևս զաւրութեանց պաշտամանէ. իսկ յերկրի՝ ի մարդոյ և առհասարակ ի սմա բնակելոցս, շնչական և անշունչ արարածոց տարերքն հանդերձ, համապղգ նմին և ջրոց. թէ որ ինչ միանգամ ի դոսա է նմանութիւն համարելով արարչին և երկրպագել անաւրէնութիւն է. Այլ ասեն իւր համարէր զերկրպագութիւն Բանն. նոյնպէս և զթշնամանս կամաւք և ոչ բնութեամբ գոլով ի մարմնի, Որ ի վերայ այլոց սրբոցն կան մեծարանք։ Ոչ զձեզ անարգեցին, ասէ Աստուած ցՍամուիէլ, այլ զիս մերժեցին. և զմովսէս, ասէ, Աստուած Փարաւոնի, և զնոսա առ որս բանն Աստուծոյ եղև, Ես ասէի թէ աստուածք իցէք, և Տէրն ցաշակերտսն. թէ Որ զձեզ

ընդունի զիս ընդունի։ Այս է համարելն, որք յորջորջանս միայն ընկալան, և ոչ ևս գտանեմք ուրեք աստուած քարոզեալ զնոսա։ Զի Մովսէս գլուխ գոլով մարգարէիցն, և բոլոր մարգարէքն որ ի Մովսէսէ և այսր խաւսեցան, ոչ աստուած, այլ հաւատարիմ ծառայ զնա կոչեցին։ Զի որ պիտակարարն ընկալաւ անուն յորջորջանաց վրէժ առնուլ ի Փարաւոնէ, փոխարկի դարձեալ հաւատարիմ մարգարէ. նա զի ընկալաւ իսկ պատիժ պատուհասից յաղագս բամբասական ջուրցն, ոչ մտանել յերկիր պարգևացն։

Իսկ ծնիցեալն ի կուսէն, Եմմանուիէլն Ա՛ստուած և հզաւր, իշխան, և ոչ գոլ ումեք կարողութիւն զնորայն պատմել զաղգատոհմ, և լոյս Երուսաղէմի, և ծագումն փառաց Տեառն, և ի քեզ Տէր յայտնեսցի, և ի զալ անդր արանց Սաբէացւոց, ի քեզ աստուած է, և սա է Աստուած մեր՝ ընդ որում ոչ համարեսցի այլ տուաւզ զիմաստութիւն Յակովբայ, այսինքն բարեպաշտելի աւրէնս։ Եւ զնոյն ասէ յերկրի երևելով ընդ մարդկան շրջել։ և ահաւասիկ Աստուած մեր երևեալ արեգակն ի բարձանց. ունելով բժշկութիւն ի թևս. լուսաւորել զխաւար մեր. և ոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս. որ վերծանէ զփչումն առաջին մարդոյն։ Նաև ի մառնամուտ և ի վիմափոր գրին զնոյն ապդէին զՅարիցէն Աստուած։ և Զարթիր ընդէրն ննջես Տէր և Զարթիր սաղմոսարան և քնար. և Զարթեաւ որպէս ի քնոյ Տէր։ Քանզի Տէր զմարդացեալն և ամենակալ զիտէին մարգարէքն։ Ահաւասիկ ես եկիր և ընակեցայր ի միջի քո, ասէ Տէր ամենակալ և Ծանիջիք թէ Տէր ամենակալ առաքեաց զիս։ Ամենակալ զԱմենակալ առաքէ, այսինքն, Հայր զՈրդի։ Տեսանե՞ս, զի ոչ է ասացեալ թէ ամենակալն առաքեաց զամենակալն համարեալ, և ոչ զՏէրն համարեալ, և ոչ զԱստուածն։ Թէ պարզ բազմապատիկն ոք քննեսցէ զՃառս որ յաղագս փրկչին մերոյ. մարգարէականն պարունակէ ասացեալ, նոյնպէս և առաքեալքն, որոց խաւսեցաւ թէ Որ զձեզ ընդունի, զիս ընդունի, ոչ ուրեք տեսանեմք համեմատել զինքեանս անհամեմատական էութեանն։ Ո՛չ եթէ զանձինս ինչ քարոզեմք, ասեն. այլ զՅիսուս Քրիստոս Տէր, և զմեզ ծառայս ձեզ վասն Քրիստոսի. և թէ Նա է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք, և Ակն ունիմք յայտնութեան մեծին Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. և Յորոց Քրիստոս ըստ մարմնոյ որ է ի վերայ ամենեցուն Աս-

Digitized by Google

տուած. Հանդերձ մարմնովն գիտելով զնա Աստուած. և լոյս փառաց և նկարագիր եութեան նորա, և չհամարել ումեք յափշտակութիւն զգոյն հաւասար Աստուծոյ։ Զի թէ համարելով է կամ յափշտակութիւն է, բռնագրաւութեամբ կամ պարգևական տուր, և զերկաքանչիւր յաստուածայինեութեանն իմանալ մեծագոյն ամպարշտութիւն է։ Այլ գիրք զսորին հակառակն ասեն, եակից Հաւր ցուցանելով թէ Բանն էր առ Աստուած, և իսկոյն զարարչականն յարէ ի նոյն, թէ Աստուած էր Բանն և Զնա հայր կնքեաց Աստուած, այսինքն սքանչելի վկայութեամբն, որ ահեղ որոտմամբն բարբառեցաւ, զի վկայել՝ կնքել փոխարկի։ Եւ Թովմաս զ'ի հրեից խոցեալն Տէր և Աստուած խոստովանեաց, զիշխանականն և զարարչութեանն անուն և գտանե՞մ ուրեք զՀամարեալդ դասակիցս։ Զի համարեալդ՝ զերկուց կերպարանաց ցուցանէ ընդրութիւն. որպէս այն թէ Որ զիս ընդունի, զառաքիչն իմ ընդունի, և ահա առաքիչ հանապազ զ՚ի՞այր ծանուցանէ, թէ Որ առաքեացն զիս հայր ընդ իս է. և յաստուց երբեր թէ Որդի առաքեաց։

Արդ մեք զի՞նչ ասասցուք կամ զոր ընտրիցեմք. մարգարէիցն և առաքելոցն հաւանիցիմք պատգամաց, որք Աստուած և Տէր փառաց և ամենակալն դաւանել ուսուցանեն մեզ զկաչեալն, թէ կռուասէ՞ր պոռոտարան Աստուծոյ քայքայութեանց և խնդրոց, և սոսկալի բաժանմանց։ Այլ մի՛ լիցի. քանզի բանն մարմնոյն է բան, և մարմինն՝ բանին մարմին. ոչ կարծեաւք կամ համարելով՝ պատուոյ միայն ճոխութեամբ, այլ ճշմարիտ միաւորութեամբ։ Քանզի հանապազ քարոզի ընթանուր ի կաթուղիկէ եկեղեցիս, թէ Դալոյ է նովին մարմնով. զոր երանելի առաքեալքն տեսին երթեալ յերկինս։ և զոր տեսինն՝ աւետարանագիրն վկայէ. թէ Իսկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն Բանին։ ընդ Որս և մեզ եղիցի զերանատրական պատգամն լսել, թէ Երանի՞ որոց ո՛չ լիցէ՛ տեսեալ զիս և հաւատացեն։ Եւ այս է հաւատն, եթէ զոր տեսին առաքեալքն և շուշափեցին զԲանն կենաց, նա՛ է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք, զոր ցանկային տեսանել զոնեա ընդ աղաւտ հրեշտակքն։ Եւ որք ոչ հաւանին այսմ. զԽնդիրան յուզաւղքն, և ոչ զտնտեսութիւնն Աստուծոյ հաւատովք։ Փախիցո՞ւք ի ստանուն գիտութենէ նորաձայն բանից նոցա զարշելի՝ և պե՛ղծ համարելով. և մի եղիցուք հաղորդք չար գործոց նոցա, զի յերևել փրկչին մերոյ

Հայրական փառաւքն, արժանաւորս արասցէ զթութեամբ իւրով որպէս և էն, ըստ աւետարանչին, ընդունելով ի բաւական աչքոյն զանվախճան պարգևացն զեղմունս, և միշտ փառաւորել զանծկիզքն Հայր՝ եակից Որդւովն, և սուրբ Հոգւովն յաւիտենից յաւիտեանս. ամէն։

Զնաւասպ ի զանպիսան գրոցս Լուսոյ ի զծնաւղն ի՛ յիշէ-
ցէք ի փրկութեան ասպուաւծ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՀԱՅՈՑ Ի. ՊԱՐՍՍ, ԱՌ ՈՒՂՂԱՓԱՌՍ

Արրասէր և ճշմարտասէր, և սուրբ հաւատոց, և առաւել Քրիստոսիւ ծառայեցելոց. տէրանց մերոց և եղբարց սրբոց հաւատակցաց։ Տէր Դանիէլ Քարմա եպիսկոպոս։ եւ Մաղբայ և Շաւտայ քովրիսկոպոսունք, և Արայ և Մարի երիցունք, Միրհորմիզդ, և Արղահայ սարկաւագունք, և ալատ մարդիկ, Արտաշիր և Բրատոկ, և այլ քրիստոնեայք սուրբ հաւատացեալք յԹրմրան շահաստանի, ի Գարմեկան շահաստանի՝ Կարմենանան նահանգ։ Յոհան երիցապետ, և ալատ մարդիկ։ և Վարազպանդակ ի Մաղոկան, տաճկաց պահապետ, և Հարթայ ի Մուշեղեան, և այլ քրիստոնեայք սուրբ հաւատացեալք, որք ի Պերոզշապուհ ի տաճկաց քաղաքի՝ Յոնթաթան անապատաւոր, և այլ սուրբ հաւատացեալք քրիստոնեայք յԱսորեստանի և ի Խուժաստանի, և ի Հերթ և ի Նանարարսադէ։ Որիկնի անապատաւոր, և Սահակ՝ Բղադ շահաստանի, քովրիսկոպոս. Յակոբ Բեղ՝ևկաթարա, և որ այլ սուրբ հաւատացեալ քրիստոնեայք յԱսորեստան ի Մծբին նահանգ, և Բասադէ Իմաթեան անապատաւոր, և ալատ մարդիկ, Գնիբա, և այլ հաւատացեալ քրիստոնեայք, Նոշիրականին ի Նինուէ նահանգ. և առ ամենայն եպիսկոպոսունս, և առ քովրեպիսկոպոսունս, և առ երիցունս, և առ սարկաւագունս, առ անապատաւորս, և առ աշխարհականս, առ ալատս. և առ գեղջաւագս, առ մնծամեծս և առ փոքունս, և առ ամենայն հաւատացեալս Պարսից աշխարհի, որ ընդ Կաւատայ արքայից արքայի ընդ իշխանութեամբ էք։

Ի Մեծաց Հայոց ի Բարգենայ ի Հայոց Եպիսկոպոսապետէ, և ի Նորին աթոռակցաց, ի Մերշապհոյ Մամիկոնից եպիսկոպոսէ, ի Ներսեսէ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Տեառնտրոյ Հարքայ եպիսկոպոսէ, ի Սամուելէ Բզնունեաց եպիսկոպոսէ։ ի Փովկասայ և ի Սամուելէ Բզնունեաց եպիսկոպոսէ, ի Փովկասայ և ի Սամուելէ Բասենոյ եպիսկոպոսաց։ ի Թաթլոյ Արշարունեաց եպիսկոպոսէ, ի յԱղանայ Խորխորունեաց եպիսկոպոսէ, ի յԱտատեայ Տայոց եպիսկոպոսէ, ի Տաճատայ

Digitized by Google

Արշամունեաց եպիսկոպոսէ, ի Դանիելէ Ռուշտունեաց եպիսկոպոսէ, ի Ցափկանէ Մոկաց եպիսկոպոսէ, ի Խարբայ Արծրունեաց եպիսկոպոսէ, ի Շահէ Ամատունեաց եպիսկոպոսէ, ի Սահակայ Պալունեաց եպիսկոպոսէ, ի Պաւղոսէ Գնունեաց եպիսկոպոսէ, ի Մովսեսէ զարիհունի եպիսկոպոսէ, ի Դաւթայ Ցմորեաց եպիսկոպոսէ, ի Դանիելէ Անձևացեաց եպիսկոպոսէ, ի Թէմրայ Մեհնունեաց եպիսկոպոսէ. զնոյն համարձակապէս բերելով զողջոյն, յաստուածապաշտ և յուղղափառ ճգնաւորաց եկեղեցւոյ, երիցանց և վանականաց և միայնացեալ մոնազանց, և ի բարեպաշտ պետաց և իշխանաց Հայաստան աշխարհիս, որ բերեն զուղղափառ հաւատ յինքեան, Վարդ Մամիկոնեան, Սահակ Կամսարական արշարունեաց տէր, Սպանդիատ Հայոց սպետ, Արտաշիր Հայոց մախաշ, Զիկ վանադայ տէր, Մանգեն Ամատունեաց տէր, Տիրոտ Պալունեաց տէր, Վարազներսեհ Դաշտակարանի, տէր, Վստամ Ապահունեաց տէր, Գնէլ Գնունեաց տէր։ Բաշխեն Վահևունեաց տէր, Արտաշիր Սիւնեաց տէր, Նորներսեհ Ռշտունեաց տէր, Արտաշիր Առաւեղինից տէր, և յայլ յամենայն յուղղափառ իշխանաց ի մեծաց և ի փոքունց, և որք ընդ նոցին իշխանութեամբ են։ Ի սուրբ կաթուղիկէ և յառաքելական եկեղեցւոջ, որք կճշմարիտ հաւատս ունիմք, ի Հայր, և յՈրդի, և ի սուրբ Հոգին, յամենայն Հայաստան աշխարհէս, յեպիսկոպոսաց, յերիցանց, և ի վանականաց. յաղատաց, և ի շինականաց, առ ձեր ուղղափառ սրբութիւնդ, սիրովն Քրիստոսի ուրախանալ։

Վասն զի ուրեմն՝ զամի Կաւատայ արքայից արքայի, մինչդեռ ես Բարգէն Հայոց եպիսկոպոսապետ, ամենայն եպիսկոպոսաւք և վանականաւք և նախարարաւք ժողովեալ էաք յԱյրարատ գաւառ, յոստանն Հայաստան աշխարհիս ի Դուին քաղաք, եկեալ հասին առ մեզ արք ոմանք, որք ասացին զինքեանս լինել ի կողմանցդ յայդցանէ, ի Տեսրոնէ և ի Գարմիկանէ, և ի Վեհարտաշիր Նահանգէ, ծանուցանելով մեզ ստուգագոյն զանունս և զտեղիս ընակութեան իւրեանց, Սամուիէլ Մահարձոյ վանաց երէց ի Կարմիկան նահանգէ, Շմաւոն Բերդոշայ երէց, և Աթայ երէց, ի Պերոզ շապուհ ի Տաճկաց քաղաքէ. ի Վեհարտաշիր նահանգէ, և Մարայ դպիր, և այլ ընկերք նոցին։ Եւ կացեալ յատենի յանդիման ամենեցուն, ունէին զիր ի ձեռս՝ որով խոստովանէին ի վերայ ուղիղ հաւա-

Digitized by Google

տոյ. ընդ բազում աշխատութեամբ կանձինս արկեալ, առ ի գտանել զՃշմարիտ և զուղղափառ հաւատ սրբոյ Երրորդութեանն։ Եւ վասն նորին համարձակութիւն առեալ թագաւորական հրովարտակ, զԿաւատայ արքայից արքայի, յորում առեալ իշխանութիւն կի ըստ կամայ և խնդրոյ ստուգութեան քրիստոնէութեան, հաւատ յանձինս հաստատեցի ըստ կանոնի և գիտութեան աշխարհին Հռոմոց, Վրաց և Աղուանից, և մի՛ վայրապար բանիւք և աւելորդ իմացուածովք խրամատեցի և սահման առ ի Քրիստոս հաւատացելոց։ Եւ զպատճառս գալոյն առ մեզ ուսուցին այսպէս, եթէ ծառայ՝ եմք մեք Կաւատայ արքայից արքայի. և վասն ամենայն բարւոյ թագաւորին և որք ընդ թագաւորութեամբ նորա՝ հանապազ փոյթ ունիմք յանձինս ըստ կարի մերում խնդրել զԱստուծոյ գառողջութիւն և զխաղաղութիւն և զերկայնակեցութիւն, և որ միանգամ այսպիսի բարիք են՝ զի շնորհեցի յԱստուծոյ։ Եւ հաւատ ունիմք զայս ի նախնեաց հարց մերոց զՃշմարիտ երեք հարիւր տասն և ութիցն ի Նիկիայ ժողովելոցն, ի ժամանակս թագաւորութեան երանելոյն Կոստանդիանոսի, զոր ամենայն տիեզերք ընկալան, և ի նոյն հաստատեցաւ սուրբ և ընդհանրական կաթուղիկէ եկեղեցի, զոր և ի սկզբանն իսկ տերունեան բարբառն վարդապետեաց աշակերտելոցն ասելով. Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հաւր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյ. որ բարձր և հռչակաւոր կնիք եդաւ ի վերայ ամենայնի։ Զայս հաւատս ստուգեալ ունէր աշխարհս մեր միաբանութեամբ, և ոչինչ ամենևին արատաւորութիւն յայտնի երևեցաւ, մինչև ի քսաներորդ եւթներորդ ամին թագաւորութեանն Պերոզի։ Իսկ ի ժամանակին յայնմիկ երևեցաւ խմոր չարութեանն, որ էր ծածկեալ յանձինս անսուրբս. որք և սկսան այնուհետև պղտորել զյստակ հաւատ ճշմարիտ Երրորդութեանն պատրել կանձինս անհաստատս մարմնասէր ցանգութեամբք, և տարածեցաւ երկրայութիւնն, և հիւանդացան բազումք զախտ անհնարին, մինչև ի տեղիս տեղիս ժողով արարեալ զլխաւորս հայհոյութեան հերձուածոյն, երբեմն ի Գունտշապուհ, երբեմն յԱսորեստանի, Ակակ և Բարծումա, և Մանի, և Յոհանան. և Պաւղէ, և Մէքա, և այլք նոցին հաղորդք, զնեստորի և զԹիոդորի. և զԹէոդորոտի միաձայնելով զմի ասացուածս և զամպարշտութիւնս անձանց. և այսու ձեռնարկութեամբ յամենայն ժամ

առաջի իշխանաց և դատաւորաց բաղում աշխատութիւն և վըտանգս հասուցանեն յանձինս մեր, և այլոց ամենեցուն ուղղահաւատից որ յաշխարհին մերում են։ Եւ ոչ կարացեալ մեր տանել այնպիսի չար անհնար և դառն հայհոյութեան, փութացաք առ թագաւորս ցուցանել, հասաք և առ ձեզ վասն նորին վտանգի և նեղութեան, գտանել աւգնականութիւն վկայութեամբ աստուածային գրոց, որպէս զի հաստատուն կացցեն անշարժ սրբոց հարցն աւանդութիւնք և պատուէրք։ և մի՛ հանապազորդ նեղութիւնք հոգէկան և մարմնական տարակուսանաւք վասն այդպիսի իրաց տառապեցուսցէ զմեզ։

Տեղեկացեալք զայս ամենայն առ ի դոցանէ, է ինչ որ բանիւ, և է ինչ որ գրով, զոր և ինքնատեսք եղաք. երանելիս այսուհետև համարիմք զանձինս ձեր, ո՞վ աստուածասէրք, որք զբարի նախանձ նախանձեցայք և զերանելի և զյանկալի կեանս անձանց ընտրեցէք ուղղափառ հաւատով և կատարեալ վարուք առաքինութեան, որք զփափաքելի զբարրառ փրկչին զանպա՞ն սիրողութեամբն զաստուած երևեցուցէք տեսաւղաց։ Եթէ անարգելով զընչիցն փափագ, եթէ արհամարելով՝ զփառս մարդկեղէնս. եթէ աղքատանալ՝ վասն Քրիստոսի, եթէ սրբութեամբ սրտի՝ տեսաւղ լինել Աստուծոյ և ևս որ առ նոսին կատարելագոյնք ի Քրիստոսէ, և քրիստոսասիրաց աւետարանել։ Արդ հարկաւոր է և մեզ զբղխումն սրբոյ հաւատոյն զոր երանելի հարցն ի Նիկիևա ժողովեցելոցն, ՃԺԸ եպիսկոպոսացն ընկալեալ պարկեշտութեամբ, և առանց զայթակղութեան զսոյն աւետարանել։ ընդ որս պատահեաց ըստ աստուածային շնորհաց ի սուրբ ժողովին, երանելի հայրապետն մեր Առիստակէս, և ընկալեալ ի սուրբ հարցն բոլորովիւք զհաւատն ճշմարտութեան, երեր յաշխարհս ճշմարտութեամբ։ Զոր առեալ ի նմանէն հայոց, և նովին հաւատովք լուսաւորեցաք, և ի նմանէն յաջորդեցաւ մինչև ցայժմ, ձեռնադրութիւն քահանայապետութեան աշխարհիս Հայոց, և կամք հաստատուն ի նմին։ Եւ այսպէս, հաւատամք ի մի Աստուած. Հայր ամենակալ, ամենեցուն երևելեաց և աներևութից արարիչ, և մի Տէր Յիսուս Քրիստոս. յՈրդին Աստուծոյ, ծնեալ ի Հաւրէ, Միածին այսինքն է ի գոյութենէ Հաւր։ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ. նոյն եութիւն Հաւր, որով ամենայն ինչ եղև յերկինս և յերկրի։ Որ վասն մեր

մարդկան, և վասն մերոյ փրկութեան, էջ և մարմնացաւ ի սրբոյ կուսէն Մարիամայ. չարչարեցաւ վասն մեղաց մերոց. մեռաւ և յերրորդ աւուր յարեաւ. ել յերկինս, նստաւ ընդ աջմէ Հաւր, գայ դատել կենդանիս և զմեռեալս։ Եւ վասն այնոցիկ զոք ասեն, էր երբեմն զի չէր, և մինչչև ծնեալ էր չէր, և զի յոչնչէ եղև. կամ իրև յայլմէ եութենէ կամ ի գոյութենէ համարին թէ իցէ, կամ փոփոխելի, կամ անցանելի զՈրդին Աստուծոյ, զնոսա նզովէ՝ կաթուղիկէ առաքելական եկեղեցի։

Այսպէս հաւատացաք, որպէս մկրտեցաք, և սուրբ հարքն կանոնեցին։ և այլ սահման արտաքոյ այսորիկ կանոն ոչ է, և ոչ ընկալաք. և ոչ ընդունիմք։ Քանզի և վարդապետն երկնային Սաւղոս յոյժ զգուշացուցանէ զմեզ յերկրաւոր իմաստից մարդկան և ի մոլար խարեութենէ։ Բաղում են վկայութիւնք սուրբ գրոց, յոլովագոյն և սրբոց հարց ուղղափառաց լուսափայլ վարդապետութիւնք, որով լուսաւորեալք լուսաւորին, և զգենուն մխիթարութիւն վշտեալքն հոգւով, ի սէր, և ի յոյս, և ի հաւատս սրբոյ Երրորդութեանն, հիմնաւորեալ որ կենդանութիւն է, և պաշտպանութիւն հոգւոյ և մարմնոյ։ Զայս հաւատ Հոռոմք և մեք Հայք և Վիրք և Աղուանք ունիմք։ Բայց որպէս ասացին առ մեզ առաքեալքն առ ի ձէնջ եղբարք Սամուէլ վանական, Շմաւոն երէց, և այլ նոցին ընկերք, եթէ Բարէ՝ Ասորեստան կաթուղիկոս, և այլ որ եպիսկոպոսք են Նեստորիանոսք՝ զայս խաւսին. երկուս Որդիս ասեն լեալ Աստուծոյ. զմին Աստուածն բանն հաւասար Հաւր՝ որ էգն յերկնից. և այլն Յիսուս՝ մարդ մահկանացու նման մեր, որ ծնաւն ի Մարիամայ, և վասն զի արդարացաւ աւելի քան զամենայն մարդ՝ պատուեցաւ և շնորհաւք կոչեցաւ Որդի Աստուծոյ, անուամբ միայն և ոչ Որդի Աստուծոյ. և ոչ հաւասար Հաւր. այլ մարդ էր արարեալ մահկանացու որպէս զմեզ։ Եւ վասն զի աւգնեաց նմա Հոգին սուրբ, կարաց յաղթող լինել սատանայի և յանկութենից։ և վասն արդարութեան նորա և վասն բարի գործոց արժանի եղև շնորհի, լինել տաճար Աստուծոյ Բանին։ Եւ ասեն. թէ արժանի է բաժանել և ասել յայտնապէս՝ Աստուած կատարեալ և մարդ կատարեալ։ այսինքն է, Աստուած կատարեալ եառ մարդ կատարեալ զՅիսուս Քրիստոս. և վասն զի սիրեաց զնա. արժանի արար զնա պատուել ընդ իւր յերկրպագութիւն, և պատուեցաւ մարդն որ

Digitized by Google

եաւ շնորհս յինքն։ և նշանս և սքանչելիսն զոր առնէր բանիւն Աստուծոյ՝ որ էջն յերկնից և բնակեաց ի նմա այսինքն է ի Յիսուս, և զաւրացան ի նմա սքանչելիքն զոր առնէր, և զամենայն ցաւս և զխոնարհութիւն ունէր յինքեան, և զտաւ մահկանացու որպէս զմեզ, լեալ՝ ի մարդկան ազգէս հաւասար իւր, բանիւն Աստուծոյ, որդի Աստուծոյ։] Եւ ասեն ոչ վասն Յիսուսի եկն ձայնն յերկնից ի Յորդանան՝ Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, այլ ի Բանն Աստուծոյ էջ որ է հաւասար Հաւր, որ էջ յերկնից և բնակեաց՝ ի նմա։ Եւ ասեն, դրաւքն փակելովք յորժամ եմուտ առ աշակերտսն, ոչ էր փակեալ զդուրսն, այլ աշակերտացն յերկիւղէ հրեից ի բաց թողեալ էր զդուրսն։ Եւ ասեն հերձուածողքն. թէ Յիսուս Քրիստոս մարդ էր մահկանացու, արարեալ հաւասար մեր և ոչ յերկնից իջեալ. և ոչ յերկինս ելեալ։ այլ որպէս Եղիա և Ենովք վերացան յաւդս և չէ՛ ևս տեսեալ զԱստուած. և ոչ տեսանեն զնա մինչև լինի յարութիւն։ Զայս ասեն Նեստորիանոսքն ընդդէմ մեր, ուժաւորութեամբ գրոց Դիոդորի և Թէոդորի և Նեստորի և Թէոդորիտի և Հարայի, կանոն է, զոր եդին, Ակակ և Բարծումէ և Մանի և Պաւղի, և այլ ընկերք նոցուն։ Եւ այդպէս ասեն, թէ Հոռոմք, և Հայք, և Վիրք, և Աղուանք՝ զնոյն կանոն և զհաւատ ունին զոր մեք ունիմք։ Զայս լուաք ի սոցանէն թէ ասեն Նեստորիանոսքն։

Եւ զի կամեցայք ի մէնջ վասն նորին իրաց ուսանել, ծանուցանեմք ձեզ եթէ Հոռոմք և մեք Հայք, և Վիրք, և Աղուանք, զհայհոյութիւնս զայս ոչ ընկալաք, և ոչ ընդունիմք, և ոչ հաղորդիմք, և ոչ հաւատամք, այլ և նզովեմք. որ այսպէսն ասեն և ուսուցանեն։ որպէս Պաւղոս առաքեալ ասաց. Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առնէքն, նզովեալ լիցի, և դարձեալ զնոյն երկրորդելով ասէ, Այլ թէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի։ Եւ զնոյն հաստատեցին աստուածային շնորհաւքն լցեալ երանելի հարքն ՃԺԸ եպիսկոպոսունքն ժողովեալ ի Նիկիայ. Միարանեցին նմին կանոնի և ՃԼ և Ծ եպիսկոպոսունք ուղղափառք ժողովեալ վասն նորին խնդրոյ ի Կոստանդիանուպալիս որոց մեք միարանեալ նզովեմք զհակառակորդսն այն ճշմարիտ հաւատոյ և և կատարեալ աստուածաշնորհ կանոնի։

Digitized by Google

Եւ զայս խնդիր ճշմարիտ հաւատոյ գրեցաք և կնքեցաք։ Ես Բարգէն Հայոց Կաթուղիկոս ամենայն եպիսկոպոսաւք, իշխանաւք և նախարարաւք Հայաստան աշխարհիս։ Եւ Սերգիս որում Բարգէն անուն է, Արդիշոյեան խուժիկ, ի Շոշտրի շահաստանէ, ի նմին յանջմնի՝ *) առաջի մեր ամենայն Հայոց ասաց. թէ այդ այդպէս է։ լսեմ յաղագս այդ իրաց և ի Խուժաստանի հերձուածք են, և յայսմ հաւատոյ, ինձ հաւատոյ նամակ պիտի, և հաւատոյ նամակ հաստատ և ճշմարիտն և զանշարժ արարէք։ Եւ ես Բարգէն Հայոց կաթուղիկոս և ամենայն եպիսկոպոսունք, և Վարդ Մամիկոնեան։ և այլուր միանգամ իշխանք, և նախարարք էաք, գրեցաք հայերէն և պարսկերէն, և կնքեցաք մերով մատանեաւ. և Սամուիէլի, և Շմաւոնի, և Աղհայի, և Մերայի, և այլ ընկերակցաց առեալ ի մէնջ էր, զոր ի ձեռն Սերգեսեայ ետուն, և զայս հաւատոյ նամակ ընդ իւրեանս առին յաշխարհ իւրեանց։

Զնուաստս ի գանգրծանս յամէնայնի գթութեան ի գնաւոյն իմ յիշեցէք ի Քրիստոս, ով դասք ուղղափառաց։

*) Բառս յ'անջմնի մարդեաք էնճիւմէն բառն է պարսկական, որ նշանակէ ժողով։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՀԱՅՈՑ, Ի ՊԱՐՍԱՍ ԱՌ ՈՒՂՂԱՓԱՌԻ

Եղբարց մերոց սիրելեաց ուղղափառաց և հաւատարմաց, մտերիմ ծառայից Աստուծոյ, եպիսկոպոսաց և վիճակաւորաց, վանականաց և ժողովրդականաց. Բարգէն Հայոց Եպիսկոպոսապետ, Մերշապուհ եպիսկոպոս Տարաւն գաւառի ի Հայս, և այլոց եպիսկոպոսաց Հայոց որք ըստ գաւառաց և ըստ տանց և յամենայն ուխտէ սրբոյ եկեղեցւոյ մերոյ, և յիշխանաց ի Վարդայ Մամիկոնից տեառնէ և ի Հայոց Մարզպանէ Եւ ի Սահակայ Կամսարականէ և յԱրտաշրէ Մաղխազէ և յամենայն ազատաց մեծամեծաց և փոքունց. սիրոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ուրախանալ։

Քանզի եկեալ երկրորդ անգամ ի ձէնջ առ մեզ Սիմոն երէց աշխատասէր և անձանձրոյթ յամենայն ժամ ի խնդիր հաւատոյ, որ պատմեաց տակաւին զմարտ պատերազմի Նորոգելով միւսանգամ Նեստորի, ոչ ընդունելով զգրեալսն ձեզ յամենայն ուղղափառաց յաղագս ճշմարիտ հաւատոյ, ընդ նմին և զառի մէնջն՝ զի ապրեսցին. այլ զի թերևս կարասցէ շարժել զհաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ նսեմացուցանելով զհաւատս ուղղափառութեան յաշխարհի ձերում. և թէ որպէ՞ս աճեցեալ տակաւին ևս առ նոսին մոլորութիւն վտանգեցուցանէ զճշմարիտ հաւատ եղբայրութեան ձեր, որպէս սովորեաց նախանձ խանտանեաց իսկզբանէ, որով տարագիր եղև ազգ մարդկան յաստուածայնիցն բարեացն, և ոչ դադարեաց մինչև ցայսաւր ժամանակի, ալեկոծեալ սուրբ եկեղեցի, ի ժողովոյն Քաղկեդոնի զաւրացեալ Սկիզբն առնելով ի Նեստորէ չարիմաց խորհեցուղէ, յաղագս սրբոյ Երրորդութեանն. բաժանելով զմարմնանալն Տեառնն ի սրբոյ կուսէն Մարիամայ, որ իսկապէս մարդ միանգամայն և Աստուած խոստովանիմք և երկրպագեմք հանդերձ Աստուածութեամբն զմարմնաւորութիւնն, և հանդերձ մարմ-

Digitized by Google

նաւորութեամբն զԱստուածութիւնն. նովին աւանդութեամբ խոստովանիմք և մեք զոր ընկալաք ի սուրբ ժողովոյն որ ի Նիկիա. Ց և ԾԼ եպիսկոպոսաց, և նոցին խորհրդոց հաղորդիմք ի կանոնացն շարագրեցելոց, քանզի է ճշմարիտ արդարև աստուածային գործակցութեամբ. Եւ փախչիմք ուրացեալ զ'ի Քաղկեդոնին ստութիւն Նեստորի և այլոցն նմանից, զոր գիտեմք կեղծաւորութեամբ փախուցեալ ի հեթանոսութենէ, և ի հրէական մոլորութենէ, և զնոյն խոստովանին զհեթանոսութիւն, միանգամայն և զհրեութիւն, պատրել ի մոլորութիւն զմիտս անմեղաց՝ որ է տգիտաց, վրիպեցուցանելով ի ճանապարհէ կեցուրս, որով սահմանեցաւ ի սրբոյ Հոգւոյն մարգարէիւն հատուցումն նոցին, զոր սուրբ հարքն միաբանութեամբ իւրեանց ի Նիկիեա յանդիմանեալ խզեցին զընթացս չար խորհրդոց նոցա. ի սրբոց գրոց նկուելով զՆեստորիոս, և Արիոս, և զԴիոդորոս, և զԹէոդորիտոս, և զԵւտիքոս, և զՊաւղոս Սամուստացի, և զնմանս նոցին, որ խառնակութիւն զանգուածոյ զմարդանալն քրիստոսի. ասել իշխեցին, իբր զլոկ մարդ, ոչ կատարեալ աստուած ի մարմնի կատարելում. Զոր և մեծն Ամպեղիս եպիսկոպոս Քերսոն քաղաքի, ճշմարիտ հաւատոյ սիրաւղև սպասաւոր, գրեաց ճշտիւ, ճշմարտապէս, յորում փութացեալ ոչ վերջացաւ. Նմին գրոյ նախանձաւոր լեալ երէցն բարեպաշտ Անատոլիս Կոստանդիանուպաւլսի վկայեալ սրբոյ եպիսկոպոսի Ամպեղի գրոյ, յաւելուած սրբոյ Երրորդութեանն ոչ գիտացեալ՝ զ'ի սրբոյ կուսէն զծնունդն Որդւոյ, այլ զնոյն ինքն Աստուած և Բան մարդացեալ անախտաբար՝ մնաց նոյն, որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագի ընդ Հաւր և ընդ սուրբ Հոգւոյն. ճշմարտապէս գրեաց սուրբ քահանայապետն Քերսոնեայցոց Ամպեղիս, հանդերձ երկոտասան գլխովք Կիւրղի եպիսկոպոսի երանելւոյ, ի նոյն յարելով և զմուղձն Զենոնի բարեբանելոյ թագաւորին Հոռոմոց, ստուգութեամբ վկայեաց երէցն աստուածասէր Անատոլիս. Քանզի սրբոց հարանցն է աւանդութիւնս այս, մշակայն առաքինութեան, որոց ստուգիւ զհետ գնացեալ արդարութեան հալածեցին զստութիւն. Հաւանեալ եմք ամենայն իրաւք գրելոցն առ ի նոցանէ և նովին վարիմք հաւատովք, ի սրբոց ՅԺԸ. իցն ժառանգեալ և ի ՃԾ. իցն հաստատեալ. Իսկ որք ոչն խոստովանին այսպէս՝ ուրանալով զՈրդի. Նոքա մոլորեալք ի տուընչենէ, մոռանան զՀայր, զոր

Digitized by Google

յիրաւի ծայնէ առաքեալն. Ծառս պտղակորոյս խլեալ արմատաքի, աստեղս մոլարս, որոց վիհ խաւարին յաւիտենից պատրաստեալ մնայ, յաղագս որոց Քրիստոս Տէրն փառաց զուր մեռաւ։ Քանզի զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակեցին քաղցրութիւն, և հնազանդեցան կարծեաց աւտարաւտեաց։ Յաղագս որոյ յամառեալ, ոչ գիտեն զինչ խաւսին, և յորում պնդեալն են։ վասն զի աստուած աշխարհիս այսորիկ, ըստ ասացելումն, կուրացոյց զմիտս նոցա, զի մի ծագեսցէ ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փրկչին արարածոց. զոր յամենայն ժամ ընթերցեալ, և երբէք ոչ ծանեան։ Քանզի ոչ խոստովանելով զՈրդի ուրանան և զՀայր, զոր ասաց ուրանալ և ինքն Քրիստոս առաջի Հաւր, և պատուիրեաց և մեզ հրաժարել ամենևին ի նոցանէ, և ատել մինչև բանիւ անգամ զողջոյն նոցա։ Արդ զի և յայտնագոյն եղիցի խոստովանութեանս մերոյ բան, որպէս հաւատամք մեք Հայր ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, յորոյ վերայ շինեալ և հաստատեալ է սուրբ եկեղեցի. Խոստովանիմք զՀայր, և զՈրդի զծնեալն ի Հաւրէ յառաջ քան զյաւիտեանս, անսկիզբն, մարմնացեալ ի սրբոյ կուսէն Մարիամայ, ի փրկութիւն արարածոց. անքննելի անարատ ծննդեան աւրինակաւ, կոյս մնալով մաւրն, և ի սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն։ աստուած զՀայր, աստուած զՈրդի, աստուած զսուրբ Հոգի, յորում մկրտեցաքն, և մկրտիմք, ոչ հրեարար պակասեցուցանեմք, և ոչ հերձուածողաւրէն վրիպեալ յաւելուածով և ոչ նուազ և առաւել քան զմիմեանս։ Այլ երկրպագեմք, զերիսն ի միութեան փառաւորելով, և զմին յերրորդութեան։ Այսպէս հաւատամք որպէս աւանդեցին մեզ սուրբ հարքն ՅԺԸ եպիսկոպոսքն ի Նիկիա, նահատակք ճշմարտութեան, և որք յԵփեսոս։ և նզովեմք զՆեստորիոս, և զԱրիոս, զԹէոդորոս, զԴիոդորոս, զԹէոդորիտոս, զԵւտիքոս, զՊաւղոս Սամուստացի, զԻբա, զԱկակ, զԲարծումէ, զԲարէ, որք ի Պարսից աշխարհի զնոցուն զկանոն և զհաւատ, զարմատն դառնութեան, ի վեր երևեալս, յորոց բազումք նեղեալ արտաքս հալածեցան, ի ճշմարտութենէն սերման որսմամբ, առ ի նոցանէ մշակեալք։ Զոր և աստուածանշան արանցն առաքինեաց, և երիցս երանելեացն Նմանիցն նոցուն, Իգնատիոս որ յառաքելոցն տունկ բարեպտուղ Աթանասիոս ճառագայթն լուսոյ աշխարհի, Բարսիլիոս Կապովդկացւոց եկեղեցւոյն կոչեցեալ։ Գրիգորիոս մեծն և երկուն ևս նո-

Digitized by Google

ին համանունք։ և Ցուլիոս վարեմտացն ճանապարհին կենաց առաջնորդ. և Ամպրոսիոս, Յովաննէս, և Ատտիկոս, և Թէոփիլոս և Կիւրղոս, և Պրոկղոս, և չքնաղ հայր մեր Առիստակէս, վաւակն արդարութեան սրբոյն Գրիգորի, և վՀայոց եղեալ սկիզբն և պատճառս աստուածային սիրոյն, և հաշտութեան. Սոքա ամենեքեան ժողովեալ սրբոց, ասպնջական Երրորդութեանն, հաստատեցին վկայութեամբ հին և նոր կտակարանաց ընթանուր ի կաթուղիկէ եկեղեցւոյ, այսուիկ վարիմբ հաւատովք կոր և գրեցաք իսկ ձեզ յառաջագոյն, Վրաց և Աղուանից միաբանութեամբ իւրաքանչիւր աշխարհի գրով։ Եւ այժմ զնոյն երկրորդեցաք, ի ձեռն հասարակաց եղբաւր ըստ հաւատոյ Սիմէոնի նախանձաւոր երիցու, զի մի ոք համարձակեսցի յայսմ հակառակել և ընդդիմանալ պատճառաւ առ ի մէնջ։

Այլ զի և այսու ևս խզեսցի յանդուգն և ախտաւոր խորհուրդ հերձուածոյ նոցա, և աղաւթեսցուք հասարակաց, զի նոյն ինքն Երրորդութիւնն խափանեսցէ զմշնամիս իւր, զՀակառակորդս ճշմարիտ հաւատոյ։ Եւ զաւրացուսցէ զպաշտաւնեայս և զերկրպագուս անուան իւրոյ։ Եւ զայս ևս ծանիցէ եղբայրութիւն ձեր, թէ որք ատեցին զՀայր՝ ուրացան զՈրդի՝ ոչ հնազանդեցան, սուրբ Հոգւոյն, Նոքա, ոչինչ են զարմանք, թէ և զգրեալսն ի բարւոյ խորհրդոյն ուղղափառաց և ի մէնջ ոչ ընկալան, զի եւյցեն յաչաց ամենեին ամաւթալից եղեալ յորժամ եկեսցէ Տէր, առնել վրէժխնդրութիւն ի վերայ այսորիկ և յայտնել զգաղտնիս խաւարի և զծածուկս սրտից նոցուն ի դատապարտութիւն և զզչումն տարաժամ։ Եւ վասն թղթոյն սրբոյ Ամպեղի եպիսկոպոսի, և Անատոլեայ երէցու, հրամայեցաք աստ գրել։ Եւ եթէ ի հերձուածողաց ոք գայ և դառնայ ի մեր սուրբ հաւատս, ընդունել արժան է զնոսա, վասն զի դուռն ողորմութեան աստուծոյ հանապա՛զ բա՛ց է խոստովանողաց և ապաշխարողաց։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԱՍՈՐԵԱՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ Ի ՀԱՅՍ

Լաւաց ճշմարտի՛ց և աստուածասիրաց։ Հովուաց արդարոց, և հարանց հոգևորաց, որ էք լոյս աշխարհի և սիւնք հաւատոյ. քարոզիչք արդարութեան, և աշակերտք առաքելոց, ընկերք սրբոց, և բարեկամք արդարոց. սիրելիք Քրիստոսի, և պահապանք խաչին Նորա։ Տէր Ներսէս Կաթուղիկոս Հայոց Մեծաց, և Մերշապուհ եպիսկոպոս Տարաւնոյ և Մամեկոնենից, և այլ աթոռակցաց, և իշխանաց աշխարհիդ. Սամուիէլ քովեպիսկոպոս։ և Դանիէլ վանից երէց և Սիւնական Սարեբայի, Գաբրիէլ վանից երէց Ովփեսի և Եղիա սիւնական և վանից երէց Սուսինայի, և Հապուհ վանից երէց Գնիսմայի, և Ցապգեն վանից երէց Գումայի, և Դանիէլ վանից երէց Բդնայի, և Բդեշխ վանից երէց Սաղիմայի, և Մեղրի վանից երէց Ցովդամնայի, և Դաւիթ վանից երէց Սոքփոնեի, և այլ երիցունք և սարկաւագունք գաւառիս եկեղեցեաց, և վանից սպասաւորք, և ամենայն ժողովրդականք ուղղահաւատք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր՝ Ողջոյն։

Գիտեմք մեք, թէ ճշմարիտք, զի հարք արդարք և հաւատացեալք էք, և բժիշկք իմաստունք հիւանդաց, և վասն այսորիկ որպէս որդիք որ խնդրեն ի հարանց, նոյնպէս և մեք խընդրեմք զկարաւտութիւն մեր ի ձեր հայրութենէ։ Եւ որպէս հիւանդք որ ցուցանեն զցաւս իւրեանց բժշկաց, նոյնպէս և մեք ցուցանեմք զմեր ցաւս առաջի սրբութեան ձերոյ։ Ծանուցանեմք ձեզ, զի եմք մեք յաշխարհի հերձուածողաց. և բնակեալ եմք ի մէջ սոցա որպէս գառինք ի մէջ գայլոց, և համարեալ եմք սոցա թշնամիք. զի քարոզեմք զճշմարիտ հաւատս և կրեմք ի սոցանէ զբազումս չարչարանս, կապանս, զհարուածս, և զհալածականութիւնս և զաւարառութիւնս կենաց. և վասն այսորիկ աղաչեմք զճշմարտութիւն ձեր. եթէ աւգնեցէք տկա-

Digitized by Google

թութեանս մերում, և տուք ձեռն եկեղեցւոյ Քրիստոսի ի ժամանակի նեղութեան. կայուցանել մեզ հովիւ որ ժողովէ զմեզ· և հայր և ուսուցիչ մեզ. զի մի յափշտակեսցուք ի գայլոց յափշտակողաց, և մի՛ երթիցուք զկնի թշնամեաց արդարութեան։ Հայր էք դուք մեր արդարութեան, և մեք որդիք եմք ձեր հաւատովք, զի հաւատ մեր և ձեր մի է. զոր քարոզեցին մարգարէք և առաքեալք, և ուսուցին հարք ճշմարիտք Ը և ԺԸ. եպիսկոպոսքն որ ժողովեցան ի Նիկիա քաղաք և ՃԾ քն այն որ ժողովեցան ի Կոստանդնուպալիս. և Մ. քն որք ժողովեցան յԵփեսոս։ Զայս հաւատս ունիմք, և զայս երիս ժողովս. և Հաւատամք եթէ սուրբ Մարիամ կոյս, աստուածածին է. զի ի նմանէ մարմնացաւ Աստուած Բանն ստուգապէս ի մարմնոյ և յոսկերաց, և մարդացաւ կատարելապէս, մինչ եառ ի կուսէն մարմին ճշմարիտ և անձն և միտս. չարչարեցաւ, խաչեցաւ և մեռաւ վասն մեր որպէս և կամեցաւ, ստուգապէս և ոչ կարծեաւք, և ապականութիւն ընաւ ոչ գտաւ ի նմա, զի մարմինն՝ որ ի մեզէ առաւ, անապականութիւն էր և փառաւոր ի նմանէ միութենէ, և նովին մարմնով յարեաւ, և նստաւ ընդ աջմէ Հաւր։ Դու այսպէս փառաբանեմք, սուրբ Աստուած. սուրբ և հզաւր, սուրբ և անմահ, *) որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ։ Եւ նզովեմք զՆեստորիոս պեղծ. և զԹէոդորոս, և զԴիոդորոս. և զգիրս իւրեանց, և զխորհրդակիցս նոցա, և զԲարծումա, Հնծիհնա **) և զպեղծ կանոնս նոցա, և զԹէոդորիտոս, և զժողովն Քաղկեդոնի, և զտումարն Լևոնի. և զԱպաւղինարիս, և զԵւտիքոս, և զՍևերոս, և զգիրս իւրեանց ապականութեան. և զՊաւղոս սամուստացի, և զՄանի, և զՄարկիոնն, և զԱրիոս, և զամենայն խորհրդակիցս նոցա։ Եւ որ ընդունի մի յայդ դիմաց և յուսմանէ, ընդ նմա ոչ հաղորդիմք, զի գիտեմք եթէ դուք զայս հաւատս ունիք. և զայն հերձուածողսն նզովէք, և ընդ խորհրդակիցս նոցա ոչ հաղորդիք, վասն այսորիկ ի ձեզ ապաւինեցաք յետ Աստուծոյ, և ընդդրեցաք արս ի մէնջ և առաքեցաք առ ձեզ, և թուղթս ալաչանաց, որ ծանուցանեն զսիրտս մեր և զխորհուրդս, և արս զոր առաքեցաք առ ձեզ, անուանքն են այսոքիկ. Ահարոն վանից երէց Մարհալայի, Դաւիթ վանից երէց Խափայի, Յակոբ

*) Յոր. Սուրբ անմահ **) այսպէս յոր. Թերեւս Մծբնայ·

քահանայ ի վանայ Սարեբայի, Նոյ վանից երէց Կենայի, Բրիխիսոյ քահանայ Միայնակեաց, Սէթ պաշտաւնեայ Տամոքա, Դաւիթ վանից երէց Փարթենայի, և Եղիա. և Յովսէփ ի Նմին վանայ Սարեփայի, և Դաւիթ սարկաւագ ի վանից Բդնայի, և Սերգիս երէց գեղջ Մարտի. Զայդ եղբարս և միապաշտաւնս որ տան ձեզ զթուղթս աղաչանայ, և մատուցանեն առաջի ձեր կամաւք մեր և կամաւք սրբոյ Հոգւոյն կՀեզ այրդ Աբդիսոյ երէց, ի վանայ Սարեբայի, մեք խնդրեմք ի ձեզէ, ողորմութեամբն Աստուծոյ, զի իշխանութեամբ *) զոր ընկալայք ի Քրիստոսէ տայէք ձեռնադրութիւն դմա որ ընդրեցաւ, և առաքեցէք առ մեզ զդասարդարեալ լուսով Աստուծոյ. ի ձեռն ճշմարտութեան ձերոյ, և դարձցի առ մեզ վառեալ ի ձեռն գրոյ ձերոյ և պինդ հրամանաւ ընդ եղբարս իւր, որ առաքեցան ընդ դմա, և ծանուցէք ստուգապէս, թէ հաւասար է հաւատս մեր ընդ հաւատոյդ ձերում, և ցուցանել այնոցիկ որք կամին ճանաչել զհաղորդութիւն մեր ընդ ձեզ։ Եւ եղեցի ձեռնադրութիւն ձեր զոր տայք, որպէս կանոնք եկեղեցական, և յերկրայս ինչ մի լինիցիք վասն դորա, զի վառեալ է ճշմարիտ հաւատով և սիրովն Աստուծոյ ի կարգ հեղ և խոնարհ, և ունի զբան վարդապետական, և կարող է աւգնել ուժովն Քրիստոսի խաչինս, որ փրկեալ է արեամբն Աստուծոյ, զի նմա փառք յաւիտեանս ամէն։ Հարցանեմք զողջոյն սրբոյ եկեղեցւոյդ ամենայն հաւատացեալք ի Քրիստոս Յիսուս, շնորհք Տեառն ընդ մեզ աղաւթիւք ձերովք, և ընդ ձեզ Հոգւովն սրբով յաւիտեանս. ամէն։

ԶԼուսաւոր յիշեա ի գէր։

*) Յոր. *իշխանութիւն.*

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ԱՍՈՐԵԱՑ, Ի ՆԵՐՍԵՍԷ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ, ԵՒ Ի ՄԵՐՁԱՊՀՈՑ ՄԱՄԻԿՈՆԷԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ։

Ի բաղում ժամանակաց լուեալ զեղբայրութեանդ ձերոյ ուղղափառութիւն համբաւով, իսկ այժմ ընկալաք գրով առ ի ձէնջ աներկբայանալ ի սրբոյ հաւատոյ հաստատութիւն, որպէս ունին ճշդաբար ընդ ամենայն տիեզերս եկեղեցիք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ըստ բարոյութեան սրբոց առաքելոց, և վկայութեան սրբոց մարգարէից, որ առաք ի ձեռաց եղբարցդ եկելոցդ առ մեզ. Արղիսոյ երբեմն քահանայի, իսկ այժմ շնորհիւն Քրիստոսի եպիսկոպոսի, և այլոց ընդ նմա ուղևորելոց զործակցաց. Ահարոն վանից երէց Մարհալայի. և Նոյ վանից երէց Կենայի և Բրխիսոյ քահանայ միայնակեաց. և Սէթ պաշտաւնեա Դամբա. և Դաւիթ վանից երէց Փարթնայի, և Եզիայ և Յովսէփ ի Նմին վանից Սարեբայի, և Դաւիթ սարկաւագ ի վանից Բդնայի, և Սարգիս քահանայ ի գեղջէ Մարտի. և Դաւիթ վանից երէց Խափայի, և այլ հաւատարիմ վանաց երիցունք, և քահանայք. և սարկաւարգք *), զիր որ ունէր այսպէս զկնի բանիցն ողջունականաց. թէ հաւատ մեր այս է, որ միարանեալ է ընդ ձեր լուսաւոր հաւատոյ ուղղափառութեանդ, զոր քարոզեցին մարգարէք և առաքեալք, և ուսուցին հարք ճշմարիտք. Յ և. ԺԸ. եպիսկոպոսքն որ ժողովեցան ի Նիկիա քաղաք, և ՃՈ. քն ի կոստանտնուպալիս, և Մ. քն որ ժողովեցան յԵփեսոս։ Զայս հաւատ ընդունիմք և զայս երիս ժողովս, և հաւատամք եթէ սուրբ Մարիամ կոյս աստուածածին է, զի ի նմանէն մարմնացաւ Բանն Աստուած աստուգապէս ի մարմնոյ և յոսկերաց, և մարդացաւ կատարելա-

---

*) այսպէս յոր.

պէս, մինչ եառ ի կուսէն մարմին ճշմարիտ և անձն և միտս, չարչարեցաւ, խաչեցաւ, մեռաւ վասն մեր որպէս և կամեցաւ, ստուգապէս և ոչ կարծեաւք, և ապականութիւն բնաւ ոչ գըտաւ ի նմա, զի մարմինն որ ի մեզէ առաւ անապականութիւն էր, և փառաւոր ի նմանէ միութենէ, և նովին մարմնով յարեաւ, և նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հաւր. և այսպէս փառաբանեմք, Սուրբ Աստուած, սուրբ և հզաւր, սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ։ Եւ նզովեմք զՆեստոր պեղծ, և զԹէոդորոս, և զ'Իւեոդորոս, և զգիրս իւրեանց և զՀաղորդս նոցին, և զԲարծու

կիսովն, և զԲարծու�, և զՍևերիոս, և զԻբա, *) և զԱկակ. և զպիղծ ժողովն Նոցա և զստանուն կանոնս Նոցա, և զ'Թէոդորիտոս. և զանաւրեն ժողովն Քաղկեդոնի, և զթշնամանաւզ և զանիշելի բռնադատեալ կանոնսն ի Նոցանէ՝ զորս Նոյովեաց և ժողով սրբոցն ՃԺԸ-իցն ի Նիկիա. և Ճ և Ծ-իցն ի Կոստանդինուպաւլիս և Մոցն յԵփեսոս, զոր հնպանդեալ ունին եկեղեցիք Քրիստոսի կարգաւորեալ։ Այլ և զամենայն իսկ պիղծ և արհամարհելի հերձուածս հեռացեալս ի ճշմարտութենէն, ուրացաք և ուրանամք և միշտ ուրասցուք. մի' լինիլ հաղորդ անպտղութեան գործոց Նոցա. և մի' լսել հրապուրող և չարաթոյն բանից Նոցա մահարերաց, որ հանապազ վառեն անձանց զհուր գեհենին, անուցանեն զորդն անվախճան, թանձրացուցանեն զխաւարն շաւշափելի։ Զնոսա որոշեաց առաքեալն մանգունս անիծից, և զնոցին կորստական վարդապետութիւնն անուանեաց ամրս անչըրդի'ս, վարեալս ի մրրկէ ի կորուստ. ծառս զաւսս պտղակորոյսս, նիւթս կիզմանն յաւիտենականի։ Եւ հրամայեցաւ մեզ ճշմարիտ հաւատացելոցս ի սրբոյ աւետարանչէն Յովհաննէ, ամենևին չընդունել ի տունս, և ոչ ողջունել բանիւ, զի մի' ոք ի մենջ լիցի հաղորդ չար գործոց նոցա։

Ճշմարիտ դտաք զձեզ հաւատով, և հաւատարիմ ծառայս Աստուծոյ. զրեցաք ձեզ հաստատուն ունել զնոյն ամենայն քաջութեամբ, ոչ երկնչել ի սպառնալեաց նոցա, համբերութեամբ տանել, եթէ դիպեսցի, զկապանս, զբանդս, որով լցան խնդութեամբ սուրբ առաքեալքն, ցուցեալ մեզ աւրինակ բարի քաջալերութեան կամաւք, և յաւժարութեամբ ընդունել զյափշտակութիւն ընչից ապականելեաց ժամանակեան կենցաղոյս. արհամարհել զամենայն նեղութիւնս եկեալս ի վերայ վասն անուանն Քրիստոսի։ Եւ մեք դոհանալով յուսամբ ի ձեր հաստատութիւն հոգւոյ, և հաղորդիմք կամաւք և խորհրդովք, կարեկցեալ ամենայն կարեաց ձերոց, և խնդրեմք ի տուողէն բարեաց, զի ինքնայորդոր յաւժարութիւն ձեր, յաւելուածով պահել աւր ըստ աւրէ աւգնականութեամբ և շնորհիւ փրկչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Հնպանդեցաք և հաւանեցաք հրամանի ձերում, և վկայութեամբ ձերով ձեռնադրեցաք զայրդ ընտրեալ ի ձեզէ զԱրդիսոյ, ի մեծապատիւ աշտիճան քահա-

*) Յոր. զզԻբա։

նպատակութեան, ամենայն եպիսկոպոսաւք աշխարհիս հանդերձ քահանայիւք և վանականաւք և ուխտիւս սրբոյ եկեղեցւոյ. կամաւք ազատաց, աշխարհականաց, և համաւրէն ժողովրդականաց. և առաքեցաք առ ձեզ Աղաւթեմք և մեք ի մեր եկեղեցւոջ, լերուք մեզ աղաւթակիցք և դուք միանձնութեամբ հաւատոյ՝ հայցել յԱստուծոյ, զի աստուածատուր շնորհիւ դորա, եղիցի խաղաղութիւն աշխարհի, հաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ, զաւրութիւն ուղղափառութեան։ Եւ ձեր հնազանդութիւն եղիցի առ դա ստոյգ, որպէս առ հրեշտակապետ Աստուծոյ, ողջամիտ պահել զվկայութիւն ձեր ի վերայ դորա, զի բաւական եղիցի կարգաց սրբոյ եկեղեցւոյ, վարուց ուղղութեան, պաշտաման և աղաւթից պայծառութեան, և փութոյ եղբայրութեան, զի ամենայնաւք զարգարուն եղեալ ձեր թելադրութեամբ եղիցի ձեզ պարծանք՝ և մեզ ուրախութիւն երկնաւոր. որով փառաւորեսցի հասարակաց սուրբ Երրորդութիւնն Հաւր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն, ամէն։



Digitized by Google

ՅԱՐԳԻՍՈՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՍՈՐԵՍՈՅ ԱՌ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԹՈՒՂԹ ՈՂՋՈՒՆԻ

Հայր հոգևոր, կարգի՛չ իմաստուն, հովի՛ւ արթուն, անձրն լուսաւոր, նահատակ արդարութեան, դանձաւոր այր արդար հաւատոց, ընկեր առաքելոց, հաւասար վարդապետաց. որոյ է պարծանք խաչն, և նովի՞ն պարտես զպատերազմունս, հալածես զգունդս թշնամոյն, լոյս պայծառ, կոր գրեաց Աստուած յեկեղեցւոջ լուսաւորել հոգևորութեամբ զամենայն աշխարհս. Տէր Ներսէս, ողորմութեամբն Աստուծոյ կաթուղիկոս Հայոց Մեծաց, և այլ աթոռակցաց, եպիսկոպոսակցաց, երիցանց, և սարկաւագաց, և այլ իշխանաց աշխարհիդ, և ամենայն ուխտի սրբոյ եկեղեցւոյ. Յարգիսոյէ շնորհիւն աստուծոյ եպիսկոպոսէ ասորեաց, և սրտի սրբութեան ձերոյ, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր ողջոյն։

Նախ քան զամենայն աղաչեմ զձեզ աղաւթել ի վերայ մեր փրկիլ մեզ յայնչանէ որ ապստամբեն ի ճշմարիտ հաւատոյ։ Եւ մինչ ի ձէնջ գնացաք ողորմութեամբն Աստուծոյ յամենայն աւթևանս ուր հասաք, սիրով ընկալան զմեզ. և մինչ ի մեր գաւառս հասաք աղաւթիւք ձերովք, և ցուցաք զառ ի ձէնջ գրեալ թուղթս ուղղափառաց աշխարհիս, խնդացին եկեղեցիք, ուրախացան անապատք, փախստական եղև մոլորութիւնն, և տիրեաց խնդութիւնն, պայծառացաւ գիր ողջունի ձերոյ որպէս զարեգակն, կորեաւ մոլորութիւնն որպէս ստուեր, և եառ հաստատութիւնն զյաղթութիւն. քայքայեցաւ խաբէութիւն, և զաւրացաւ ճշմարտութիւն յաղթողական ուժովն, կործանեաց զատելիս, ցրուեաց զթշնամիս, և կատարեցաւ ի վերայ կորուսեալոցն ասացեալն ի մարգարէէն, Մերժեցան մեղաւորք ի Սիոնէ, և դողումն կալաւ զՀեթանոսս։ Ընթացաւ, լուր համբաւի գրե-

լոյ ձերոյ յամենայն Ասորեստանի, ոչ միայն ի հաւատացեալս, այլ և ի հերձուածողս, զի մինչ լուան թէ եպիսկոպոս ձեռնադրեցէք ուղղափառաց, և նզովեցէք զմոլար վարդապետն խաբէութեան զՆեստոր պղծի, և զԹէոդորոս, և զԴեոդորոս, և զԹեոդորիտոս, և զժողովն Քաղկեդոնի, և զտումարն Լեւոնի, և զՍեւերիոս. և զգիրս իւր ապականութեան, և զամենայն հերետիկոսս. և մինչ զայդ ամենայն լուան զեղծքն՝ անկաւ ի վերայ նոցա դողումն և երկիւղ, զի հարան ի նզովից ձերոց որպէս ի նետից խոցեալք։ Ծողովկեան առ միմեանս, որպէս զի տացեն ընդ մեզ պատերազմ, խորհեցան ընդ միմեանս վասն իմ. եթէ զդա, Հայոց կաթողիկոսի, և եպիսկոպոսայն ձեռնադրեալ է միաբանութեամբ տանուտերաց, և այլ իշխանաց աշխարհին, և պատուիրեալ ընդ մեզ չհաղորդել, և արքայից արքայի հրաման է, թէ իւրաքանչիւր որ զիւր հաւատ կալցի, զուցէ յորժամ մեք ընդ դմա կռուիմք և խռովեցուցանեմք, դա Հայոց գիտել տայ, և Հայք արքայից արքայի ցուցանեն, և մեզ չարաչար աշխատութիւն հասուցանեն, և յայդ երկիւղէ լռեցին, և ոչ աշխատեցին ինչ զմեզ։ Բայց և այլ հերձուածողք որ ունին զՍեւերոսի չար ուսումն, և ասեն եթէ՝ Մարմին տեառն ապականացու էր ի խաչին, և ապականութեան հնազանդեցաւ, և յանդգնեալ նոյնպէս ասեն, եթէ Յորժամ չարչարեցաւ տեառն *) ապականութիւն ընկալաւ, և զայն ոչ լսեն զոր Պետրոսն ասէ թէ Մարմին նորա ոչ ետես զապականութիւն։ Եւ արդ ասեն նոքին իսկ Սեւերիանոսքն, թէ մեք ի Հայս երթամք, և զկաթուղիկոսն և զեպիսկոպոսսն ուսուցանեմք, և ի նոցանէ թուղթս բերեմք թէ հաւատ այդ արդար է զոր դոքայդ ունին, և մեք այնպէս հաւատամք. և առ ձեզ որպէս յանգէտս կամին գալ։ Բայց դուք, Հարք հոգևորք, վառեալ հաւատով Աստուծոյ որ ընակեալ է ի ձեզ։ Որպէս իմաստութիւնդ ձեր աստուածային է, խաւսել ընդ նոսա բանիւ գիտութեան, զի նոցա տեսեալ եթէ ոչ ընդունին զմեզ, ամաչեցեն ի խաբեբայ իմաստից իւրեանց և մեք զլաւրացուք ի վերայ նոցա ուժով հաստատութեան հրամանաւ ձերով։ Ո՞ զիտէ թէ մինչ ի ձէնչ նեղին և ի մենչ, ապաշաւեալ յապաշխարութիւն եկես-

*) Այսպէս յորինակին։

ցեն և խնդրեսցեն զՀաստատութիւն, և մեք թէ կամեսցի Աստուած ընդ մաւտ առ ձեզ հասանեմք յերկրպագել ձեզ տերանց և հարանց, և ի ձէնչ աւրհնիլ։ Գրեցաք զայդ սիրոյ ձերում. ողջոյն տան ձեզ սուրբ եկեղեցիքս. և վանաց երիցունք, և ամենայն հաւատացեալք աշխարհիս, աղաւթելՙ ի վերայ մեր ընտրեալը Աստուծոյ։

Զքառասն նահատակս յամենայնի Ի զծնաւղն իմ յիշեցէՙ ի Քրիստոս Աստուած։

Digitized by Google

ԱՐԴԻՍՈՑԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՍՈՐԵԱՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ, ԱՌ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ, ԵՒ ԱՌ ԱԹՈՌԱԿԻՑՍ ՆՈՐԻՆ. ՑԱՂԱԳՍ ԱՆԻԾԵԱԼ ՆԵՍՏՈՐԱԿԱՆԱՑ ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ

Ուղղափառաց, և ճշմարիտ հաւատացելոց, ընկերաց առաքելոց, որդոց արդարոց, և բարի նահատակաց, և հովուաց ընդրելոց. Տեառն Ներսէսի Կաթուղիկոսի Հայոց Մեծաց և Մերշապհոյ Տարաւնոյ և Մամիկոնենից եպիսկոպոսի, և պլ եպիսկոպոսաց աշխարհիդ, վանից երիցանց, քահանայից և ամենայն ուխտից սրբոյ եկեղեցւոյ հանդերձ իշխանաւք և ամենայն ժողովրդականաւք. Արդիսոյ ողորմութեամբն Աստուծոյ եպիսկոպոս Ասորեաց ուղղափառաց, որդի և մնունդ սրբութեան ձերոյ. Յիսուսիւ Աստուծով, լուսով կենդանութեամբ և անապական փրկութեամբ, ողջոյն։

Պարտ է մեզ յիշել այժմ զսրբոյ Պաւղոսի առաքելոյ զբանն որ ասէ. թէ Ով է մեր յոյս կամ խնդութիւն, կամ պսակ պարծանաց եթէ ոչ դուք առաջի Աստուծոյ։ Եւ զի՞նչ փառաբանութիւն կարեմք մատուցանել աստուծոյ վասն փութոյ որ ի ձեզ յաղագս ճշմարտութեանն. դուք ձեզէն գիտէք, զի գրեցեալք որ ի մէնջ առ ձեզ, և որ ի ձէնջ առ մեզ, ոչ միայն վասն հաստատութեան ճշմարիտ հաւատոյ, այլ և վասն նկովելոյ զմոլորեցուցիչ հերձուածողն զամենեսեան, մանաւանդ զպեղծն Նեստոր, և զժողովն Քաղկեդոնի, և զԱեւերիոս զլուսուցիչն ապականութեան, որք յիրաւի իսկ նզովին, զի նոքա են զլտորիչք եկեղեցւոյ աստուծոյ. յայժմու ժամանակիս յամենայն տեղիս։ Եւ վայել էր իսկ ձեզ, որ աստուածասէրք, զի ատեցէք և հալածեցէք, և նզովեցէք զըմբռնեալն ի չար մտածութեանն Նեստորի նզովելոյ, զի մի ապականեսցեն պեղծ ուսմամբ իւրեանց զհաւատդ շնորհեալ ձեզ ի Քրիստոսէ Աստուծոյ, որք անուանեցան

ֆակ ի սրբոց առաքելոց եղբարք սուտք, և մշակք անաւրէնութեան, թշնամիք խաչին, և վախճանն նոցա կորուստ. ասաց գնոսա և սուրբ մարգարէն՝ արծաթ պեղծ զի անարգեաց զնոսա տէր։ Եւ երանելի ևս էք, ով ճշմարիտք, եթէ զգուշանայցէք հաւատի Աստուծոյ զորս փրկեաց պատուական արեամբն իւրով. զի յաւուր գալստեան նորին ընդունիցիք ի նմանէ զարդարութեան պսակն. զի դուք էք լոյս աշխարհի և աղ երկրի, և որպէս ոչ կարեն հողմք և մրրիկք խաւարեցուցանել զարեգակն, և ոչ մոլորութիւն հերձուածողաց կարող է խափանել զճշմարտութիւն։ Տեսէք, Հարք հոգևորք, մի՛ գուցէ հաւատս մեր որ է մարգարիտ, որում ոչ գոն գինք, ապականիցի ի մոլորեցուցչաց, և խռովեցուցանիցէք զսուրբ Հոգին, որով մկրտեցաքն յաւուրն փրկութեան, զի գրեալ է, թէ Ցաւուրս յետինս, քակեսցին ոմանք ի հաւատոց, և հայեսցին յայսս մոլորութեան, և ի վարդապետութիւնս դիւաց։ Բայց մեք ուղղափառքս՝ հսկեսցուք հաւատով, խորհրդով, բանիւ և գործով, սիրեսցուք զհաւատ, զդեղն կենդանութեան, ըստ գրեցելումն, թէ Արդարն ի հաւատոց կեցցէ, և եթէ ոք երկմտեսցէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ։ Բայց մեք ոչ առաք զհոգին երկմտութեան, այլ առաք զՀոգին հաւատոյ, սիրոյ, և ճշմարտութեան, և ուսաք թէ ոչ հաւատայ յՈրդին Աստուծոյ, ունի կենդանութիւն յաւիտենական. և որ ոչ հաւատայ յՈրդին Աստուծոյ, ոչ գոյ նորա կենդանութիւն յաւիտենից։ Զի Տէրն ասէ, Ես և Հայրն իմ մի եմք, և Որ ետես զիս, ետես զՀայր իմ։ և դարձեալ թէ Ելի ի Հաւրէ և եկի յաշխարհ, և ելանեմ յաշխարհէ, և երթամ առ Հայր. և առաքեմ առ ձեզ զՀոգին ճշմարտութեան, նա ուսուսցէ ձեզ զամենայն։

Արդ որպէս աւանդեցաւ ի սրբոյ Հոգւոյն ճշմարիտ հաւատ սրբոց հարանցն և աւանդեցին մեզ, նոյնպէս և խոստովանիմք։ Հաւատամք ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, ի Հայր, որոյ հայրութիւնն անհասանելի է. և յՈրդի, որոյ ծնելութիւնն՝ անքննելի է, և ի սուրբ Հոգին, որ ի Հաւրէ ելանէ, և ընդ Հաւր և ընդ Որդւոյ երկրպագի և փառաւորի. և ի մի Երրորդութիւն երկրպագեալ, և զուգեալ յեութեան։ Ես հաւատամ թէ ի մի դէմ իցէ Երրորդութեանն, այսինքն Որդի ճշմարիտ ի Հաւրէ ճշմարտէ, բարձրեալ որպէս զՀայր, փառաւորեալ որպէս զծնաւղ, զաւրութիւն և իմաստութիւն Հաւր, բաղուկ և

Digitized by Google

կարողութիւն, ճառագայթ և ծնունդ եութեան, և զուգեալ զաւրութեամբ, և կարողութեամբ և գործակցութեամբ, ընդ Հաւր և ընդ սրբոյ Հոգւոյն։ Որդի մշտնջենաւորութեամբ ի բնութենէ Հաւր, իջեալ յերկնէ աւետաւորութեամբ Գաբրիէլի հրեշտակապետի ընակեցաւ յարգանդին Մարիամայ սրբոյ կուսին աստուածածնի, վասն փրկութեան ամենայն մարդկան. և ոչ հեռացեալ ի Հաւրէ, և որպէս Աստուած որումամենայն ինչ դիւրին է, արար իւր ճանապարհ գալստեան և յայտնութեան ստուգապէս, որով մատոյց զինքն առ մեզ սիրովն անպատմելի, և առ ի կուսէն մարմին անապական և շունչ անփոփոխելի, զի անամուսնութեամբ մարմնացաւ, և զմարմին մեր արար մարմին իւր, և զշունչ մեր՝ շունչ դիմի իւրոյ։ Ընակեցաւ յարգանդին ինանմանեայ, որ նկարէ զսաղմն յարգանդի, ծնաւ որպէս զմարդ, և ոչ ելոյծ կկուսութիւն ծնաւղին։ Այն՝ որոյ ոչ գոյ սկիզբն ծնելութեանն ի Հաւրէ, պատեցաւ ի խանձարուրս, որ շրջապատեալն է ճառագայթիւք, և սնաւ հասակաւ, որպէս տղայ, որոց ոչ չափի բարձրութիւն մեծութեանն. մկրտեցաւ ի Յորդանան գետ ի Յովաննէ, որ և զանդունդս չափեաց ափով իւրով, վկայեաց Հայր ի յերկնից թէ Դա է Որդի իմ սիրելի, ի դա հաճեցայ. և յայտնեցաւ մեզ Երրորդութիւն ի մկրտութեանն Միածնին. Հայր ձայնիւ, Որդի յայտնութեամբ, և սուրբ Հոգի իջանելով. և մկրտութեամբ իւրով սրբով եդ հոտ *) և հոգի ի ջուր, զի մեք սրբեսցուք մկրտութեամբն և եղիցուք հոգևորք։ Եւ ել յանապատ փորձիլ ի բանսարկուէն որ զարհուրեցուցանէր զարարածս, ցուցակութեամբ ճշմարտութեանն, և պահեաց, և քաղցեաւ յագեցուցիչն ամենայն մարմնոյ. ծարաւեցաւ, և ծարաւմամբն իւրով անցոյց զծարաւ մեր. ննջեաց որ անքուն էր, վաստակեցաւ և նստաւ ի վերայ ջրհորին որ հշաւրն է, և կամաւք պատրաստեաց զանձն Երուսաղէմառ սպանողն զմարգարէսըն։ Եւ եմուտ ի դատաստան, դատաւորն կենդանեաց և մեռելոց, և հայհոյեցաւ յամպարշտաց արարիչն ամենայնի, հարցաւ ի Պեղատոսէ՝ որ սերովբէք և քերովբէք երկեղիւ աւրհնեն զեութիւն նորա, կռփեցաւ եղեգամբ ի պղծոց՝ լոյսն արդարութեան, տանջեցաւ հեծանաւք՝ հուրն ծախողչ ընկալաւ թուք ի պղծոց՝ որ փչեացն շունչ յերեսս Ադամայ, երարձ զխաչ իւր և ել ի

*) Այսպէս յորինակին։

Գողգոթայ, որ ունի զաշխարհ ակնարկութեամբ հրամանի իւրոյ. պրկեցաւ ի վերայ փայտին՝ որ ձգեաց զերկին, հայեցաւ յերկիր՝ և դողաց, ակնարկեաց երկնի և խաւարեցաւ, արեգակըն փախոյց զճառագայթ իւր, զի մի տեսցէ զՏէրն իւր կախեալ զփայտէ. աղաղակեաց թագաւորն կենդանեաց ի վերայ փայտին՝ և դողացին հիմունք երկրի, աղաղակեցին և վէմք թէ ովք է. քարոզեցին և բնութիւնք թէ ոյր որդի է. համբարձ զձայն իւր ի վերայ Գողգոթայի, և խրամատեաց զդժոխս մուռելոց, սասանեցան տարերք ի լուծանել՝ եթէ չէր կալեալ զաւրութեան խաչեցելոյն, և ճշմարիտ չարչարանաւքն՝ խափանեաց զչարչարանս մեր. և մահուամբն կենդանացուցաւ՝ սպան զմահ մեր, էջ ի գողգոթայէ զաւրութեամբ ի դժոխս, և զարհուրեալ դողացին ի նմանէ. անկաւ մահ յաթոռոյ իւրմէ, և կործանեցաւ ապականութիւն ի պատուոյ իւրմէ, և կամեցաւ անմահն լուծանել զիշխանութիւն մահու չարչարանաւքն իւրով։ Յերրորդ աւուր յարեաւ ըստ գրոց. և բացան դրունք գեբեզմանին ընդդէմ դրանց երկնից, և իջին զաւրք հրեշտակաց պատուել զՏեառնորդին իւրեանց զկենդանի, որ էջ և եհան զզաւրութիւն մարդկան յաշխարհէն մահու, զի ոչ ի չարչարանացն արատաւորեցաւ. և ոչ ի մահուանէն ըմբռնեցաւ, զի զոր կամեցաւն արար, և զոր էրն ոչ կորոյս, և մինչ վայելչանայր իշխանութեամբ իւրով, արար փրկութիւն ամենեցուն. և մինչ եղև մարդ, և չարչարեցաւ և մեռաւ վասն մեր. ի բնութենէ մեծութեան իւրոյ ոչ փոփոխեցաւ, ել յերկինս նստաւ ընդ աջմէ Հաւր, և թագաւորութեան նորա ոչ գոյ վախճան։

Յաղագս այսր հաւատացեալ եկեղեցի, աղաղակէ ասելով, Ինձ մի լիցի պարծել, բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ ամենայնի. որուն փառք և պատիւ, և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զանարժան ծառայս Աստուծոյ, զԹումաս յիշեցէք ի Քրիստոս։

Digitized by Google

ՆՈՐԻՆ ԱՐԴԻՍՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ. ՑԱՂԱԳՍ ԱՆԻԾԵԱԼ ՆԵՍՏՈՐԱԿԱՆԱՑ ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ

Քանզի այսպէս հաւատամ առ։ զնորդութեամբ Միածնին որ վասն մեր մարդացաւ, խոստովանիմ որպէս ուսուցին զիրք սուրբք, և վարդապետեցին ճշմարիտքն հարք. ՅԺԸ. քն որ ի Նիկիայ. և ՃԾ. քն որ ի Կոստանդինուպաւլիս, և Մ. քն որ յԵփեսոս, որ հաճեցան և հաստատեցին զհաւատ և զսահմանս անշարժելի զոր եդին. ՅԺԸ. հարքն, որ ժողովեցան ի սրբոյ Հոգւոյն և յիւրեանց ժամանակի հալածեցին զմոլորեցուցիչս որպէս գայլս ապականիչս ի հաւտէ Քրիստոսի, և զի նահատակեցան հաւատով, և նզովեցին զամենայն հերձուածողս։ Ահա զբոլոր են անուանք նոցա ի գիրս կենդանութեան, և մեք որդիք և ժառանգք հաւատոյ նոցա, քանզի նախանձաւորք նոցա եմք. և զաւրանամք հաւատովք, նզովեմք զհերձուածողս զառաջինս և զմիջինս և զվերջինս որպէս զն սա։

Նզովեմք զԱրիոս որ հայհոյեաց և ասաց, թէ Որդի ոչ է ի բնութենէ Հաւր։

Նզովեմք զՄակեդոնիս, որ ասաց թէ Հոգին սուրբ նուազ է քան զՀայր և զՈրդի։

Նզովեմք զՊաւղոս Սամուստացի, զի ասաց թէ Յիսուս մարդ էր և իմաստութեամբ զաւրանայր և ուսանէր, և իմաստութիւնն մեծ էր քան զՅիսուս։

Նզովեմք զՄանի, և զՄարկիոն, և զԲարդեծան և զԵւտիքոս. որ ասացին թէ որպէս նմանութեամբ և ստուերիւ և կարծեաւք երևեցաւ յաշխարհի Որդին Աստուծոյ, և ոչ ստուգապէս առ մարմին և հոգի և շունչ ի սուրբ կուսէն աստուածածնէ։

Digitized by Google

Նզովեմք և զԱպաւղինար որ ասաց թէ մարմին եառ ի կուսէն, և հոգի և շունչ և միտս ոչ առ։

Առաւել նզովեմք զպեղծն Նեստոր որ հայհոյեաց և ասաց եթէ Մարիամ ոչ ծնաւ զԱստուած, բայց զմարդ արարած, որպէս զմի ոք ի մարգարէիցն. և այսու մեծ էր քան զմարգարէսն, զի տաճար եղև բանին աստուծոյ։

Նզովեմք և զԹէոդորոս, և զԴիոդորոս, և զԹէոդորիտոս, և զԻբաս, և զԱկակ, և զԲարծումայ հնծիհնայ և զպեղծ կանոնս նոցա, և որք միանգամ հնայանդեցան, և կամ հնայանդին չար ժողովոյն Նեստորի, որ ամպարշտութեամբ իւրով ասաց, եթէ ի ձեռն շնորհի արժանաւորեցաւ Քրիստոս լինել տաճար բանին Աստուծոյ. և նոյն այս մարդ Քրիստոս ի զաւակէ Դաւթի, չարչարեցաւ և մեռաւ վասն մեր և մահուամբ իւրով արար փրկութիւն ամենեցուն, և յաղագս այսր պատուեցաւ լինել Որդի Աստուծոյ, և հայհոյեն և ասեն, եթէ այլ որդի է որ ի Հաւրէ, և այլ այն որի Մարիամայ։ և մինչ խելագարեցան՝ արհամարհեցին զՀայր երկու որդւովք, միովն բնութեամբ. և միւսովն եկամտիւ, և այսու մուծին չորրորդութիւն ի խոստովանութիւն իւրեանց, և մոռացան զսուրբ երրորդութիւնն որ յերկնայնոց և յերկրայնոց Երրորդութիւն փառաբանի։

Եւ ըստ նոցա բանիցն անաւրէնութիւն հաստատի. եթէ նոր աստուած երկրպագիցի որոյ սկիզբն ի Մարիամայ և այսր, եթէ այդպէս իցէ, ամենայն ազգք և տոհմք կորեան. եթէ մարդոյ խաչի երկրպագանեն և զմարմին և զարիւն մարդոյ ճաշակեն։

Նզովեմք զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի զի ասացին երկուս բնութիւնս և երկուս դէմս քրիստոսի յետ միաւորութեանն։

Նզովեմք և զսևերոս և զզիրս նոցա ապականիչս որ աբար բաժանումն աստուածութեանն ի մարմնաւորութենէն, և ասաց եթէ ապականացու էր մարմինն աստուծոյ որպէս ամենայն մարդկան, ի կուսէն մինչև ցյարութիւնն, և անփառաւոր և անկատար. բայց ի յարութեանն փառաւորեցաւ և կատարեցաւ, և ոչ լուաւ զբանն Պետրոսի որ ասէ, եթէ Մարմին նոցա ոչ ետես զապականութիւն։

Digitized by Google

ՆՈՐԻՆ ԱՐԴԻՍՈՑԻ, ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՅԱՂԱԳՍ ՆԶՈՎԵԼՈՑ ԶԱՄԵՆԱՑՆ ՀԵՐՁՈՒԱԾՈՂՍ, ՈՐՔ ԷԻՆ ՀԱԿԱՌԱԿ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ

Որ ոչ հաւատոյ եթէ բնութեամբ եութեանն Ճանաչի միութիւն Երրորդութիւն՝ միութիւն եութենէ, և երրորդութիւն դիմաց. և անս կիցրն է միութիւն եութեանն և երրորդութեանն դիմաց, եղիցի Նզովեալ։

Որ ոչ խոստովանեսցի զՅիսուս Աստուած որ համբերեաց խաչի, զխաչն կամաւորութեամբ վասն մեր, մի ի դիմաց Երրորդութեանն և ի բնութենէ Աստուծոյ Հաւր. այլ փոխանակ պղորիկ ասէ, եթէ մարդ է բնութեամբ, և պէր է արարած, և Աստուած է շնորհաւք, և որդի է ընդրութեամբ և ապականացու մարմնով, և չարչարելի և մահկանացու բնութեամբ մարդկայնւով, եղիցի Նզովեալ։

Որ ասէ եթէ յերկնից, և կամ յայլմէ բնութենէ եառ աստուած մարմին և արիւն, և ոչ առաւել խոստովանի եթէ ի Մարիամայ ի սրբոյ կուսէն որ ի մեր բնութենէս եառ Տէրն մարմին և շունչ, և չարչարեցաւ և մեռաւ վասն մեր որպէս և կամեցաւ, եղիցի Նզովեալ։

Որ համարձակին ասել զմարմինն աստուծոյ ապականացու ի միաւորութեանն, և ասէ բաժանումն աստուծոյ և մարմնոյն և ոչ առաւել խոստովանի մի Աստուած անապական, և մի բնութիւն անմահ և մի դէմ երկրպագեալ, զի է Աստուած և մարմին մի բնութիւն և մի դէմ աներկբայանալի, եղիցի Նզովեալ։

Որ ասէ զկնի միաւորութեանն անբաժանելոյ, երկուս բնութիւնս ի Քրիստոս, և կամ երկուս դէմս, և երկուս կերպարանս, և այդու մուծանէ չորրորդութիւն յերրորդութիւնն, եղիցի Նզովեալ։

Որ ասէ զմահն Տեառն կենդանացուցիչ և զչարչարանսն փրկարար՝ ապականացու՝ և ոչ առաւել խոստովանի, եթէ չար-

Digitized by Google

չարանաւքն անչարչարելի, և մահուամբն անմահ որպէս Աստուած, որում ամենայն ինչ դիւրին է, եղիցի նզովեալ։

Որ ասէ զմարմինն Ճշմարտի Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի, եթէ ի միաւորութենէն մինչև ցյարութիւնն ապականացու էր և անփառաւոր և անկատար, բայց ի յարութեանն փառաւորեցաւ և կատարեցաւ, և ոչ առաւել խոստովանի, եթէ որպէս զկնի յարութեանն, նոյնպէս և յառաջ քան զյարութիւնն կենդանի և կենդանացուցիչ, փառաւոր և կատարեալ և անապական, եղիցի նզովեալ։

Զայս ամենայն զոր գրեցար և նզովեցար զկեղծ հերձուածողս, զի ուսաք ի մարգարէից, առաւել ի Դաւթայ երանելոյ. եթէ Զատելիս՝ քո Տէր ատեցի, և ի վերայ թշնամեաց քոց մաշեցայ, ատելութիւն կատարեալ ատեցի զնոսա, և եղեն ինձ ի թշնամիս. և իմաստնացաք յառաքելոյն որ ասէ եթէ Փախիր ի պղծ և ի նորաձայն բանից և ի հակառակութենէ և ի մոլորեցուցիչ գիտութենէ, և Ճշմարիտ վարդապետն, որ պատուիրեցին մեզ, Գրիգորիոս և Բարսեղիոս, և Աթանասիոս և Կիւրիղոս և ամենայն ուղղափառ վարդապետք, որ նահատակեցան վարդապետութեամբ սրբոյ եկեղեցւոյ, և ուսուցին յայտնապէս ամենեցուն. եթէ որ ոչ հաւատայ թէ աստուած ծնաւ ի Մարիամայ ի սրբոյ կուսէ, չարչարեցաւ խաչեցաւ և մեռաւ վասն մեր, յարեաւ յերրորդ աւուր, համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հաւր, և գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս անվախճան թագաւորութեամբ. եղիցի նզովեալ։

Եւ յաղագս այդր փառաբանեմք. Սուրբ Աստուած, Սուրբ և Հզաւր, Սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ. և առաւել քան զայս հաւատ ոչ ընդունիմք, քանզի ասէ առաքեալ, Եթէ մեր կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ եղիցի։

ԶԼուսաւոր Հաւատոյն իմ յիշեցէք ի Քրիստոս։

Digitized by Google

ՏԵՍՈՒՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ. ԹՈՒՂԹ ՄԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ

Սրբասիրաց և քրիստոսասիրաց ամենակցաց մերոց. Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի, Սահակայ Ռշտունեաց եպիսկոպոսի, Սողոմոնի Մոկաց եպիսկոպոսի, Ստեփաննոսի Անձևացեաց եպիսկոպոսի. Հովհաննոսի Ակիոյ եպիսկոպոսի. Փիլիպատրոսի Պալունեաց եպիսկոպոսի. Միքայէլի Զարեհաւանից եպիսկոպոսի. Աստուածատրոյ Բժնունեաց եպիսկոպոսի. Թադէոսի Մեհնունեաց եպիսկոպոսի. ի Ներսիսէ Հայոց կաթուղիկոսէ. ի Մերշապհոյ Տարաւնոյ և Մամիկոնեաց եպիսկոպոսէ. ի Գրիգորէ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Պարգևեայ Հարբայ եպիսկոպոսէ. ի Տիրկանէ Բագրևանդայ եպիսկոպոսէ. ի Գրիգորոյ Բասենոյ եպիսկոպոսէ. ի Պետրոսէ Սիւնեաց եպիսկոպոսէ. ի Մաշդոցէ Խոսխոռունեաց եպիսկոպոսէ. ի Խոսրովայ Ամատունեաց եպիսկոպոսէ, հոգևոր սիրով ողջոյն։

Վասն անիծեալ խուժկայ նեստորականաց՝ որ եկեալ բնակեցան յաշխարհիս մերում պատճառաւ վաճառաշահութեան, և այժմ չարահնար պղծալից անիծարեր արուեստիւ իւրեանց յոգիս մեր ապդեցին, մինչև իւրեանց պղծութեան հաւատոյ առաջնորդ չեպիսկոպոս ածեալ, և մեզ լուսաւոր և ուղղափառ հաստատուն հաւատոյս խոչընդակն կացուցանել, յառաջագոյն վասն նորին իրաց, մեք և աշխարհիս մերոյ տանուտեարք, և ազատք միաբանութեամբ ի ձեռն գրոյ հրաման արարաք վասն ձեր, փութապէս ի Դուին ի սուրբ եկեղեցիս ժողովելոյ. և աստ միաբանութեամբ ըստ հաճոյիցն Աստուծոյ առնել խորհուրդ. և հնար լինել բառնալ զայսպիսի անհնարին աղէտս, և զհանապազորդ հեծութիւն հոգւոց մերոց։ Եւ ձեր ոչ ունելով զնախանձ վասն Աստուծոյ, հեղգացեալ սպուժեցէք, և ի ձեր առ-

Digitized by Google

նելոյ՝ բազում գործ սրբոյ եկեղեցւոյ մնաց. բանզի գործ Աստուծոյ է, և հանդէս հոգևորական, ձեր զմարմնոյ հեշտութիւն կարևոր համարելով. որոյ յոյժ մեղադիր եմք։

Արդ վասն նորին զայս զիր միաբանութեամբ առ ձեզ հրամայեցաք առնել և զձեզ տեսաս, ստիպեմք փութով հասանել, ոչ վասն մարմնաւոր պիտոյից. այլ նախանձախնդիր լինելոյ գործոյ Աստուծոյ և հոգւոյ փրկութեան ի սահմանեալ ժամադրութիւնս, ամենայն հաստատութեամբ առանց յապաղանաց ի սրբոյ Գրիգորի ժողովն. միաբանութեամբ ի սուրբ եկեղեցիս ժողովել։ Ապա թէ որ առանց պատճառի հիւանդութեան, այլ սքաւսանաւք կենցաղոյս հնդգայեալ գոյի. և ի սահմանեալ ժամդ ոչ եկեսցէ, այնպիսին ի միաբանութենէ եպիսկոպոսութեան որոշեալ լիցի։ Իսկ որ կամաւոր յաւժարութեամբ ի ժողով միաբանութեան ուղղափառ հաւատոյս ի սուրբ եկեղեցիս փութասցի, նա հատուցումն բարի ի սուրբ Երրորդութենէն ընկալցի, և ի մէնչ և յաթոռակոյաց մերոց աւրհնեսցի։ Եւ դուք տեարք, որպէս թուի կամաւորութեամբ, ի ձեռն զրոյ պատասխանի արարէք։ Ողջ լերուք յուսովն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Digitized by Google

ՈՒԽՏ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԽԱՐՀԻՍ Ի ՁԵՌՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ԵՒ ՄԵՐԶԱՊՀՈՑ ՄԱՄԻԿՈՆԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ։ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ։ ԵՒ ԱՅԼՈՑ ԱԹՈՌԱԿՑԱՑ, ԵՒ ՏԱՆՈՒՏԵՐԱՆՑ։ ԵՒ ԱԶԱՏԱՑ։ ԵՒ ՀԱՄԱՒՐԷՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՑ։

Վասն զի եհաս մեզ վտանգ հոգևոր դիպուածի, որ եղև հանապազորդեան հիւանդութիւն. եկաք ի խորհուրդ միաբանական, զի բարձցուք զհառաջագին հեծութիւն ցաւոյս այսորիկ հոգւոյ մերոյ և զխիղճ ի խորհրդոյ փախել ի մեղաց աւտարոտեաց, որում լինել երբէք չէր ակնկալութիւն։ Եւ վասն զի եղև, վասն այնորիկ հարկեցաք առնել զմիարանութիւնս զայս համաշխարհական, մեր ամենայն Հայր, ի քսան և չորրորդ ամի Խոսրովու արքայից արքայի, ի սուրբ ի քառասներորդն, ի կիւրակէի իւղոգոմնին, վասն չար աղանդին խուժկաց Նեստորականաց, զորս Նզովեաց սուրբ Հոգին ի ձեռն սրբոյ ուղղափառ եպիսկոպոսաց ՃԺԸ. իցն ժողովելոց ի Նիկիայ։ և ՃԾ. իցն ի Կոստանդիանուպաւլիս։ և Մ. ոցն յԵփեսոս, որոց անիծեալ զՆեստոր խլեցին ի բաց ընկեցին, արարեալ զնա հալածական յաւտար աշխարհ ի կողմանս Մծբնացւոց, զորս երթեալ խմորեաց, չարագիւտ արուեստիւ իւրով զոգիս նոցա, արարեալ զնոսա փշարերս և խաւարաբնակս, յոր ըմբռնեցան և կողմանքն Խուժաստանի, յորոց ումանք հասեալ յառաջագոյն յաշխարհ մեր, վաճառաշահութեամբ կեցին ընդ հարսն մեր և ընդ մեզ, միաբանութեամբ ի մեր եկեղեցւոջ խոստովանելով զինքեանս միահաւատ ընդ մեզ։ Եւ ի տասն և յեթներորդ ամի Խոսրովու արքայից արքայի, ի մարզպանութեանն Նիհորականայ, արարին իմն շինած յանուն Մանաճրհի ՌաՀկի որ հաւատացեալ ի

Digitized by Google

Քրիստոս և մկրտեալ անուանեցաւ Գրիգոր, և սպանաւ վասն նորին հաւատոյ, և ապա անուանեցին զնա տեղի ժողովոյ պըղծութեան իւրեանց։ Աջին և վարդապետս առաջնորդ կոչեցան ինքեանց, որք եկեալ ձեռնարկեցին՝ զապականութիւն իւրեանց բերելով ի սուրբ և ի ճշմարիտ հաւատ մեր, և պատրեցին ի ժողովրդականաց տգիտաց զարս և զկանայս, հաղորդել հաւատոյ յաղտեղութեան աղաւթից նոցա, տանել հայ ընծայի ի տեղի անաւրէնութեան նոցա. ընդունել ի ձեռաց նոցա հաղորդութիւն՝ իբրև յուխտէ նուիրաց պաղիկենայ, յանդգնեցան տալ զիւրեանց ջնջագիր կնիք անկնիր մանկանց ժողովրդեան մերոյ՝ առ ի մեռանել նոցա առանց մկրտութեան զմահն յաւիտենական, և զգողս և զպոռնիկս և զայլ վնասակարս զոր մեք արտաքոյ եկեղեցւոյ և աւրհնութեան առնեաք և չհամարեաք արժանի սրբոյ հաղորդութեանն, երթային առ նոսա և նոքա ընդունէին յիւրեանց ի պիղծ և յանաւրէն աւրհնութիւնն և հաղորդութիւն ժողովարանին՝ հակառակ մեզ։ Զայս աղէտ հոգևոր տեսանելով ի նոցանէն, հասաք՝ թէպէտ և անագան, ի վերայ պատճառող ստութեան նոցա, զի կեղծաւորութեամբ ունելով զանուն քրիստոնէութեան և ուրանան զճշմարտութիւնն։ Իսկ մեր ոչ կարացեալ համբերել այսպիսի չար գործոց նոցա, համաւրէն ամենեքեան արարաք զդիրս զայս ուխտի և հաստատութեան ամենեցուն կամաց յաւժարութեամբ, առաջի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Քանզեալ աւերեցաք զտեղի ապաւինի անաւրէնութեան նոցա՝ և բարձաք ի մէջ զիշերային զայն խաւար։

Եռ Ներսէս Հայոց կաթուղիկոս։ Եւ Մերշապուհ Տարաւնու և Մամիկոնեից եպիսկոպոս. Գրիգոր սեպհական գնդին եպիսկոպոս։ Պարգև Հարքայ եպիսկոպոս։ Տիրակ Բագրևանդեայ եպիսկոպոս։ Գրիգոր Բասենոյ եպիսկոպոս, Ներսէս Մարդաղոյ եպիսկոպոս։ Վաղոտ Արշամունեաց եպիսկոպոս։ Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս։ Գրիգոր Արծրունեաց եպիսկոպոս։ Մարկոս Բագրևանդեայ եպիսկոպոս։ Մաշտոց Խոռխոռունեաց եպիսկոպոս։ Յոհան Ապահունեաց եպիսկոպոս։ Արդիսոյ Ասորեաց ուղղափառաց եպիսկոպոս։ Յովնան Վանանդայ եպիսկոպոս։ Հաւուկ Արշարունեաց եպիսկոպոս։ Քրիստափոր Պալունեաց եպիսկոպոս։ Յոյս Գողթան եպիսկոպոս։ Թադէոս Մեհենունեաց եպիսկոպոս՝ և ամենայն եպիսկոպոսունք Հայոց աշխարհիս։ Եւ

Digitized by Google

իշխանք. Համազասպ ի Գուգվառաձեան ի տանէ Մամիկոնից։ Գարջոյր Հայոց մաղխազ։ Սամէղ յԱրդտաւաղդան սպարապետ։ Գրիգոր ի Հմայական։ Սահակ ի Վարդանան։ Աստուածատուր Վանանդայ տէր։ Դատոյ ի Գարջուղեան։ Գրիգոր և Վարդան ի Վասակայ։ Զաւրակ ի Գղաւոնան։ Վարազ՝ Յոհան ի Յոհանան։ Վարդան ի Մուշեղեան։ Համազասպ. Սահակ ի Հմայակեան։ Գնեալ Գնունի։ Վարազ Գարեղեան։ Գրիգոր Արեղեան։ Մերշապուհ ի Շինական։ Համազասպ Զիւնականեան։ Աստուածատուր Հաւենունի։ Ար՛շոտ ի Վարազտիրոցեան։ Մուշեղ ի Հմայեկեան։ Վրիւ յԱրտաշրան։ Աստուածատուր Արշաւրեան։ Սամուեղ՝ ի Մամական։ Վարդ ի Հմայական։ Ներսէս ի Սամսոնեան։ Վարդան Վահևունի։ Հմայեակ Վարաժնունի։ Մանուեղ Սպանդունի։ Վարդ և Արտաւազդ ի Մամական։ Համազասպ ի Սահական։ Սահակ ի Մանուեղ՝եան։ Վարդան ի Մուշեղեան։ Եւ ոչ ոք արտաքոյ մնայ յաշխարհականաց ի յայս ի կամաւոր գործոյ, ի քահանայից, ի վանականաց, ի ժողովրդականաց, ի բարեսոհմից, և յամենայն շինականաց։ Եւ բարձաք ի միջոյ զնոցա կրճիմն չար։ ի լոյս խաղաղական ոգւոյ և մարմնոյ։

Եւ սահմանեցաք ըստ հրամանի սուրբ առաքելոյն, և Եբանելի ուղղափառ վարդապետաց, ամենեքիմք մի վիճել ընդ նոսա հակառակաբանութեամբ, այլ՝ հեռանալ ի նոցանէն՝ արդարև որպէս ի թշնամեաց Քրիստոսի Աստուծոյ։ և մեր կալ ի նմին ուխտի հաստատուն որպէս արարաք և գործեցաք հանդերձ Աստուծով։ յաշաղս սրբոյ հաւատոյ խոստովանութեան։ Ապա թէ իցէ ոք որ սայթաքիցէ ի մէնջ կամ ի գաւակէ և կամ ի գաւակաց զաւակէ մերմէ մինչև յաւիտեան, և կամիցի թիւրել և դառնալ յուխտէ հաստատակաց. և խորհիցի առնել ինչ ընդդիմութիւն կամակոր մտաւք. բանիւ և կամ գործով, հաւանել երբեք՝ միսանգամ շինութիւն քանդման աւերեցելոյն միաբանեալ նեստորիանոսաց։ և հեռանալ ի մէնջ այսու մասամբ՝ և առեալ գանձն յետս կալով ի մեծ խորհրդոյ քրիստոնէութեան։ Նզովեսցի հոգւով. նզովեսցի մարմնով. և ամենայն կենցաղիւ իւրով ի սուրբ Երրորդութենէն. և որոշեալ լիցի հալածանաւք. և արտաքս ընկեցեալ լիցի յամենայն ուղղափառաց. ի ժամանակի դիպեցելոյ նովին անիծիւք, եթէ ի կաթուղիկոսաց ոք իցէ, եթէ յեպիսկոպոսաց, եթէ ի քահանայից՝ եթէ յիշխա-

Digitized by Google

Նայց՝ եթէ յայդ՝ ժողովրդականաց։ Եւ արարաք զայս հաստատութիւն պատուիրանի. մեզ և որդւոց՝ և որդւոց որդւոց մերոց, մինչև ի կատարումն ժամանակաց։ և կնքեցաք առաջին սրտիւք մերովք յուսովն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և ապա մատանեաւք մերովք։

Digitized by Google

ՈՐՈՉՈՒՄՆ ՆԵՍՏՈՐԱԿԱՆԱՑՆ Ի ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ուղղափառաց և ճշմարիտ հաւատացելոց ամենակալաց մերոց, Գրիգորի Մարդպետական եպիսկոպոսի. Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի, ի Ներսէսէ Հայոց կաթուղիկոսէ, ի Մերշապհոյ Տարա՛ւնոյ և Մամիկոնենից եպիսկոպոսէ, ի Պետրոսէ Սիւնեաց եպիսկոպոսէ, հոգևոր սիրով ողջոյն։

Գիտութիւն լիցի սրբութեանդ ձերում յաղագս հոգևոր վտանգիս որ եհաս մեզ յանիծեալ Նեստորականաց, քան և հինգերորդ *) Խոսրովու արքայից արքայի, մեք և այլ եպիսկոպոսունք և իշխանք և ազատք Հայոց, ամենեքին համաւրէն ժողովեալ ի սուրբ եկեղեցիս, զանիծեալ Նեստորիանոսս որոշեալ ի սրբոյ եկեղեցւոյ և յամենայն ուղղափառ կարգաց մերոց խլեալ ի բաց ընկեցաք. և միաբանութեամբ ամենեքեան հրաման արարաք ճշմարիտ հաւատացելոց ի Քրիստոս՝ ամենևիմբ մի՛ հաղորդել ընդ նոսա. մի՛ յաղաւթս, մի՛ ի կերակուրս, մի՛ յըմբելիս, մի՛ ի բարեկամութիւն, մի՛ ի խնամութիւն, մի՛ ի դասկութիւն, և մի՛ վասն մարմնաւոր իրաց տալ և առնուլ ինչ ի նոցանէ, բայց միայն վաճառել ինչ և կամ գնել՝ որպէս ի Հրեից և կամ յայլ ազգաց. որք ոչ ճանաչեն և ոչ խոստովանին լիապէս կսուրբ Երրորդութիւնն։ Իսկ որք հաղորդիցին ընդ նոսա և կամակից լիցին նոցա պղծալից հաւատոյն և անաւրէն գործոցն, այնպիսիքն նզովեսցին հոգւով, նզովեսցին մարմնով, և ամենայն կենդաղով իւրեանց, և որոշեսցին ի սրբոյ եկեղեցւոյ, և ի ճշմարիտ հաւատէ Քրիստոսի, և սատնեսցին սատանայի և հրեշտակաց նորա, և եղիցին խաւարաբնակք, և յաւիտենից հրոյն կերակուր։

Եւ վասն ծանուցանելոյ ձեզ այնոցիկ որոց չիցէ լուեալ կայս պատուէր, վասն նորին կայս թուղթ առ ձեզ տեարս

---

*) Ա՛յսպէս յոր. իմա՛ ի դասանեւինգերորդ ամի.

հրամայեցաք գրել։ Դուք, տեարք, վանից երիցանց և քահանայից և համաւրէն ժողովրդականաց՝ ճշմարիտ հաւատացելոց ի Քրիստոս. որք մերձաւորք և որք հեռագոյնք են ի ձէնչ, հրաման տուք և պատուէր արարէք, սի ամենեքին մի՛ հաղորդեսցին ընդ նոսա, այլ հեռասցին ի նոցանէ ամենայն կարգաւք, որպէս ի վերոյդ գրեալ է։ Իսկ որք վասն պատրանաց կենցաղոյս սիրեսցեն զնոսա առաւել քան զՏէրն և զՓրկիչն մեր Քրիստոս Աստուած և զսուրբ և զճշմարիտ հաւատ մեր, իշցեն նզովքդ այդ ամենայն զոր ի վերոյդ գրեալ է ի վերայ գլխոյ նոցա, և աստէն ի կենցաղումս երերմամբ շրջեսցին ըստ նմանութեանն Կայենի։ Իսկ որ կամաւոր յաւժարութեամբ զամենայն պատուիրանս ընկալցի և պահեսցէ, այնպիսին աւրհնեսցի հոգւով, աւրհնեսցի մարմնով. և ի կենցաղումս զուարճացեալ բերկրեսցի. և յաւիտենից բարիսն վայելեսցէ։

Զթո՛ւռ ի՝ զնոսա՝ զոն ի՛մ յիշեսցի՛ ի Քրիստոս։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՋՈՐ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԱՅԼ ԵՊԻՍԿՈՊՈՍՔ, ԱՌ ՍԻՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԵՒ ԱՌ ՏԷՐՆ ԱՐԱՐԻՆ։

Քրիստոսիւ պայծառացելոյ սիրելի եղբաւր և աթոռակցի մերոյ տեառն Վրթանէսի Սիւնեաց եպիսկոպոսի. և մեծավայելչի և փառաւորելոյ Միհր արտաշրի Սիւնեաց տեառն, ի Յովհաննիսէ Հայոց կաթուղիկոսէ, յԱբրահամայ Տարաւնոյ և Մամիկոնենից եպիսկոպոսէ, ի Ներսայ Բասենոյ և Մարդաղոյ եպիսկոպոսէ, ի Մաշդոցէ Խոռխոռունեաց եպիսկոպոսէ, ի Գտայ Վանանդեայ եպիսկոպոսէ, յԱրդիսոյ Ասորեաց ուղղափառայ եպիսկոպոսէ, ի Բաբայ Ամատունեաց եպիսկոպոսէ, աւրհնութեամբ և հոգևոր սիրով ողջոյն։

Դուք ինքնին գիտէք զանհնարին վտանգս, որ այժմ յաշխարհս մեր եհաս. զի յառաջագոյն երանելի հարքն մեր և զկնի նոցա մեք ընկալաք զհաւատ ճշմարտութեան. զայն զոր քարոզեցին մարգարէքն և առաքեալքն, և ուսուցին հարքն ճշմարիտք, սուրբն Գրիգորիոս սրբոյն Թադէոսի յաջորդն, և ՅԺԸ. եպիսկոպոսքն որ ժողովեցան ի Նիկիայ քաղաք, և ՃԾ. քն որ ժողովեցան ի Կոստանտնուպալիս, և Մ. քն որ ժողովեցան յԵփեսոս. որ սրբոյ Հոգւոյն ազդմամբ ուսուցին մեզ, զոր և ի սկզբանէ իսկ տէրունական բարբառն վարդապետեաց աշակերտացն ասելով. Գնացէք աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյ սրբոյ, և բարձր և հռչակաւոր կնիք եդաւ ի վերայ ամենայնի։ Զայս հաւատ ճշմարտութեան ստուգեալ ունէր միաբանութեամբ աշխարհս Հայոց, և ոչինչ ամենևին յումեք արատութիւն յայտնի երևէր, և բնակեալ էաք ի սուրբ կաթուղիկէ եկեղեցւոջ. ընդ հովանեաւ սուրբ խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի խոր խաղաղութեան։ Իսկ ի ժամանակիս յայսմիկ, Նեստորի անիծելոյ, որ

Digitized by Google

կուրացոյց չարահնար հերձուածովն իւրով կկողմանս Խուժաստանի, երևեցաւ խմոր չարութեան և յաշխարհիս մերում. որ էր ծածկեալ յանձինս անսուրբս, որք սկսան պղտորել զյստակ հաւատս ճշմարիտ սուրբ Երրորդութեանն. պատրել զանձինս անհաստատաց մարմնասէր ցանկութեամբք, և տարածեցաւ երկբայութիւնն, և հիւանդացան բազումք զախտ անհնարին։ Եւ ոչ կարացեալ մեր տանել զայսպիսի չարաչար և դառն հայհոյութեան, փութացաք մեք՝ և զայլ աշխարհիս Հայոց եպիսկոպոսունք, ընդ որս էր և երանելին Պետրոս եպիսկոպոսն ձեր, և քահանայք և ուխտ սրբոյ եկեղեցւոյ, և վանայց երիցունք, ազատք և համաւրէն ժողովրդականք ուղղափառք ժողովեալք ի սուրբ եկեղեցիս. և միաբանութեամբ զպեղծ Նեստորիանոսս. և զԿաղկեդոնիտս, և զայլ հերձուածողս ի մեր սուրբ եկեղեցւոյս, նզովիւք հալածական արարաք, և սուրբ և փառաւորընկալ սեղանոյս և կենաստուր սուրբ աւետարանիս և փրկչական սուրբ խաչիս առաջի՝ պայման արարաք ամենեքիմբ հեռանալ ի հաղորդութենէ նոցա, և չլսել բանից նոցա մահարերաց։

Եւ վասն զի ի հաւատարիմ մարդկանէ լուաք եթէ պեղծ Նեստորականք բազումք և ի ձեր աշխարհիդ բնակեալ են, և դուք զդոսա ի սուրբ եկեղեցիս ընդունիք, և ընդ դոսա հաղորդիք. յիշելով զսրբոյն Գրիգորի զմեծ վաստակ և զչան որ ի մեր և ի ձեր աշխարհիդ վերայ հասարակաց, և զսուրբ ծնունդն զոր սրբով աւազանաւն վերստին ծնաք, և զլուսաւոր և զճշմարիտ հաւատ զոր մեք և դուք ընկալաք և այժմ ունիմք, զհոգևոր սէր զոր ընդ ձեզ ունէաք, առաւել բան զամենայն զայդ հոգ յանձին կալաք հեռացուցանել և ի ձէնջ զչարի որոմանն սերմանս։ Վասն նորին յուխտէ մերմէ զհաւատարիմ այր Մաթէոս քահանայ, առաքեցաք առ ձեզ և աղաչեցաք Քրիստոսիւ Աստուծով մերով, որպէս զայժմ լեալ էք ազդ սուրբ, ժողովուրդ սեպհական տեառն Աստուծոյ, նոյնպէս և այժմ էք և մինչև յաւիտեան, դուք և զաւակք ձեր, զաւրացարուք Տերամբ, և կարողութեամբ զաւրութեան նորա, և առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, և զսուրբ և զճշմարիտ հաւատ զոր ի սուրբն Գրիգորէ և զայլ հոգևկիր երանելի հարանցն ընկալաք, հաստատուն և անշարժ պահեցէք զանձինս ձեր. և զպեղծ Նեստորիանոսադ և զայլ հերձուածողս որ յաշխարհիդ ձերում են, նոյնպէս ի սրբոյ եկեղեցւոյ և ի ձեր հաղորդութենէ նզովիւք

ի բաց մերժեցէք, և ամենայն ուղղափառաց պատուիրեցէք, մի՛ լինել հաղորդ անպտղութեան գործոց նոցա, և մի՛ լսել հրապուրող և չարաթոյն բանից նոցա մահաբերաց։ Քանզի զնոսա որոշեաց սուրբ առաքեալն մանկունս անիծից, և զնոցին կորստական վարդապետութիւնն անուանեաց ամպս անջրդիս՝ վարեալս ի մրրկէ ի կորուստ ծառս դաւսս պտղակորոյսս, նիւթս կիզման հրոյն յաւիտենից, որք յիրաւի իսկ նզովին, զի նոքա են պղտորիչք եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ, յայժմու ժամանակիս, յամենայն տեղիս. որք և անուանեցան իսկ ի սրբոյ առաքելոյ. եղբարք սուտք, մշակք անաւրէնութեան, և նեռինք եկեալք յաշխարհ, և հրամայեցաւ մեզ ճշմարիտ հաւատացելոցս ի սրբոյ աւետարանչէն ի Յովհաննէ՝ ոչ ընդունել զնոսա ի տունս, և ոչ ողջունել բանիւ. այլ հեռանալ ամենեքին ի նոցանէ որպէս ի թշնամեաց խաչին Քրիստոսի։

Եւ մեք աղաւթեմք զի նոյն ինքն սուրբ Երրորդութիւնն խափանեսցէ և նկուն արասցէ զթշնամիս իւր զհակառակորդսն ճշմարիտ հաւատոյ. և զաւրացուսցէ զպաշտաւնեայս և զերկրպագուս անուան իւրոյ սրբոյ։ Եւ եթէ յումեք ի հերձուածողսդ գտցի զղջումն և ամենայն կամաւք իւրովք դառնայցէ ի սուրբ հաւատս մեր, և ոչ խաբէութեամբ. նզովեալ գրով զպեղծ Նեստոր և զամենայն հերձուածողս և զժողովն Քաղկեդոնի, և ապա ընդունել զայնպիսին ապաշխարութեամբ, վասն զի դուռն ողորմութեանն Աստուծոյ խոստովանողաց և ապաշխարողաց հանապազ բաց է։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԶՈՐ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԵՒ ԱՅԼ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ, ԱՌ ԱՂՈՒԱՆԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ ԱՐԱՐԻՆ։

Լաւաց և ճշմարտիկ աստուածասիրաց, սիրելի եղբարց և աթոռակցաց մերոց, Աբասու Պարտաւայ եպիսկոպոսի, Յովսէսի Բ.... ղատու եպիսկոպոսի, Գրիգորի Կապաղականու եպիսկոպոսի, Հռոմակայ Ամարասու եպիսկոպոսի, Տիմաւթէի Բաղասականու եպիսկոպոսի, Ամրակումայ Հարիոյ եպիսկոպոսի, Յոհանկայ Գարդմանայ եպիսկոպոսի, Ղևոնդի Մեծկուանց եպիսկոպոսի. ի Յովաննէսէ Հայոց կաթուղիկոսէ, յԱբրահամայ Տարաւնոյ և Մամիկոնենից եպիսկոպոսէ, ի Գրիգորէ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Ներսայ Բասենոյ և Մարդաղոյ եպիսկոպոսէ, ի Ստեփանոսէ Տայոց եպիսկոպոսէ. ի Մաշտոցէ Խոռխոռունեաց եպիսկոպոսէ, ի Գտայ Վանանդեայ եպիսկոպոսէ, յԱրդիսոյէ Ասսրեաց ուղղափառաց եպիսկոպոսէ. ի Քրիստափորէ Թրշտունեաց եպիսկոպոսէ, ի Բաբայ Ամատունեաց եպիսկոպոսէ, ի Սեկունդոսէ Մոկաց եպիսկոպոսէ, և յայլ եպիսկոպոսաց աշխարհիս աւրհնութեամբ և հոգևոր սիրով ողջոյն։

Քանզի եհաս առ մեզ լուր դժնդակ համբաւոյ, եթէ են ոմանք զայլք յափշտակողք զգեստու ոչխարաց, որք եկին յաշխարհ ձեր ի վանաց պղծոյ Պետրոսի, որ անուամբ Աղբատաւէր կոչի, և գործով Քրիստոսատեաց և ուրացող զսուրբ Երրորդութիւնն. զչար որոմն անիծելոյն Նեստորի և զժողովոյն Քաղկեդոնի անարգելաբար սերմանեն յոգիս անմեղաց, թիւրելով զնոսա յուղղափառ հաւատոյ. մատնել ի յաւիտենական կորուստն, զորմէ լսելով առհասարակ ոգւոյ և մարմնոյ եղեն անբժշկելի ցաւք, վասնորոյ ամենայն հարկաւորութեամբ փութացաք կարեկից լինել և գրել ձեզ. յիշեցուցանելով զբանս սրբոյ առաքելոյն, Զգուշանալ անձանց և ամենայն հաւտիդ. յո-

Digitized by Google

ռում եդ գձեց սուրբ Հոգին տեսուչս և վարդապետս, հաստատուն պահել զհաւատ ուղղափառութեան, զոր ընկալան հարքն մեր ի սրբոց զրոց, ի հին և ի նոր կտակարանաց ի ձեռն սրբոյն Գրիգորի, որ յերից երանելեաց ժողովն, ՅԺԸ.իցն ի Նիկիա, ՃԾ.իցն ի Կոստանդիանուպալիս, և Մ.ոցն յԵփեսոս, որոց ձայնակից և ժառանգաւոր նոցա հաւատոյն եղաք մեք ամենայն եկեղեցիք։

*Խոստովանիմք մեք, զմի Աստուած Հայր ամենակալ յարարաւոր ամենայն երևելեաց և աներևելեաց, և ի մի տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ ծնեալ ի Հաւրէ. Աստուած յԱստուծոյ. լոյս ի լուսոյ. Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, որով ամենայնքն. և ի սուրբ Հոգին՝ որ ի Հաւրէ ելանէ, և ընդ Հաւր և ընդ Որդւոյ երկրպագի և փառաբանի, արարչակից և հաւասար Հաւր և Որդւոյ. Երրորդութիւն կատարեալ միով բնութեամբ. փառաւք և զաւրութեամբ և իշխանութեամբ. նախախնամութեամբ ընդհանուր եղելոյ *)։ Իսկ ի վախճան ժամանակիս, Աստուած զոլ մշտնջենաւոր Բանն Աստուծոյ եկև մարդ կատարեալ անյեղաշէս. մարմնացեալ ի սուրբ Կուսէն անձառաբար, ոչ հեռացեալ ի բնութենէն, և ոչ քայքայեալ ի մարմնաւորութիւն, այլ եկաց մնաց նոյն որ էրն անփոփոխելի և անայլայլելի։ Աստուած մարմնացեալ ոչ մասամբ, այլ բոլորիւ, ոչ պակասութեամբ. այլ լիութեամբ. ոչ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի. ոչ Հայր եառ մարմին, այլ Որդի. և ոչ սուրբ Հոգին թանձրացեալ մարմնով, այլ Միածինն ի Հաւրէ. բայց կամաւք Հաւր, զաւրութեամբ սուրբ Հոգւոյն. այլ գոյութեամբ միայն Բանն Աստուծոյ։ Այսպէս սուրբ ծընունդն ճանաչի. նոյն ինքն անբովանդակելին խանձարրապատեցաւ, զի մեք զգեցցուք զանապականութիւն. եդաւ ի մուր, զի զանանականն ի բաց փոխեսցուք զբարս. ի հրեշտակաց փառաբանեցաւ, զի մեք կոչեսցուք լինել փառաբանակիցք նոցա. ընձայեցաւ ի մոգուցն, զի պտղաբերեսցուք զհաւատս. կամնաբուծեցաւ, զի զանմեղութիւն ընկալցուք. կարգացաւ ըստ մարմնոյ ամենակատարն, զի ժամանեցուք ի չափ հասակի լրմանն կատարմանն Քրիստոսի։ Եկն կամաւք ի չարչարանս, զի ի տանջանաց մեղայն զերծուցէ. խաչեցաւ, զի ի կենդանու-*

---

*) Այսպէս յորինակին.

թեան պտղոյն վայելեսցուք. մեռաւ, զի մահուամբ սպանցէ զմահ. եդաւ ի գերեզմանի, զի խորտակեսցէ զնիզս դժոխոցն. յերրորդ աւուր յարեաւ, զի զմեզ ի նորոգութիւն կենդանութեան փոխեսցէ. համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հաւր, զի և մեք դասեալք լիցուք ընդ աջմէ նորա։ Գալոց է միւսանգամ դատել զկենդանիս և զմեռեալս, և թագաւորութիւն նորա վախճան ոչ ունի։

Այսպէս հաւատամք և երկրպագեմք և փառաբանելով ասեմք. Սուրբ Աստուած, սուրբ և հզաւր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ։ Իսկ զոչ խոստովանողսն այսպէս նզովեցին սուրբ հարքն. նմանապէս և մեք նզովեմք զՀինս զամենեսեան եղեալ հերձուածողս և զնորս, զԱրիոս և զՊաւղոս Սամուստացի, զՄանի և զՄարկիոնն, զԵւնոմիոս և զԵւտիքոս. զԱպաւղինարոս և զկեղծն Նեստոր, և զԹէոդորոս, և զԹէոդորիտոս, և զսնոտի ժողովն Քաղկեդոնի. և զտումարն Լևոնի, որ լրբարար յանդգնեցան ասել երկուս բնութիւնս և երկուս դէմս ի վերայ միոյ Քրիստոսի Աստուծոյ, և թէ սուրբ կոյսն ոչ ծնաւ Աստուած, այլ մարդ սոսկ ըստ մեզ և տաճար բանին Աստուծոյ։ Այլ են ոմանք որ ասեն, մինչ յերկրի էր Քրիստոս՝ ոչ էր յերկինս, և մինչ ի խաչին վերայ էր՝ ոչ էր յաթոռ փառաց և մինչ ի գերեզմանին էր՝ ոչ էր յաջմէ Հաւր. զխորհեցողսն այսպէս՝ նզովե՞մք, և զԿիրա և զԱկակ, և զԲարծումա ի Մծբնայ, որք հնազանդեցան ժողովոյն Նեստորի, և եղեն պատճառք կորստեան բազմաց, և զՍևերիոս և զզիրս ապականութեան նորա, այլ և զամենեսեան իսկ զայնոսիկ որ այսմ հաւանին և հնազանդին նոցա ամպարիշտ սպանող վարդապետութեանն՝ նզովե՞մք։

Եւ առաքեցաք առ ձեզ ի յուխտէ մերմէ զայր հաւատարիմ զՄաթէոս քահանայ, բերել զգրեալսն մեր առ ձեզ, ընդ նմին յիշեցուցանելով զբանս Յովհաննու աւետարանչի որ ասէ, Եթէ ոք եկեսցէ առ ձեզ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի՛ ընդունիցիք զնա ի տունս, և մի՛ բանիւ ողջոյն ասել նմա. եթէ ոք ասիցէ այնպիսումն ողջոյն, հաղորդեսցի և չար գործոց նորա. զի որ ոչ խոստովանի զտէր Յիսուս մարմնով եկեալ. նա իսկ է նեռն և մոլորեցուցիչ. զայնպիսին ի տանց և ի սահմանաց ձերոց հալածել և զմահաբեր վարդապետութիւն նոցա ամենևին ոչ առնել արժանի լսելութեան։ Արդ

վասն զի հարքն ձեր հաւատակից էին հարանց մերոց, և դուք մեզ, հաճոյ թուեցաւ զալ ի ձէնջ այսր եպիսկոպոսաց երից կամաւելեաց. լսելով ի մէնջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն, զի մի՝ ոք կորիցէ ի հովուաց կամ ի հաւտից. այլ ի վերայ բարւոյ զիւտի ձերոյ եղիցի ուրախութիւն հրեշտակաց յերկինս, և մեզ յերկրի ծառայիցս և երկրպագուայս Նորին Քրիստոսի Աստուծոյ։

Digitized by Google

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Զգարնանային ժամանակին աւուրսն նշանակելով, որ և աշխարհի լինելութեան սկիզբն՝ ըստ մեծի մարգարէին Մովսէսի, խաւսելով ընդ Եբրայեցական ազգին, Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց. և աստուածապաշտ ազգին ի դառն ծառայութենէ ազատութիւն ելանել ի խոստացեալ երկիրն պարգևաց մարդասիրին Աստուծոյ կանխաւ հասանել, հետևակելով ընդ ատակս Կարմիր ծովու զմեծամեծ սքանչելեացն յիշատակս ի միտ ունելով. Խորհրդաբար և զճշմարիտ աշխարհարարութեանս պասորիկ սկիզբն, զգալստեանն Տեառն նորոգելով զհնացեալ զպականեալ զառ ի ներքոյս երկնից յայլատութիւն ճշմարիտ, ի ծառայութենէ քրիստոնեայս Աստուածապաշտս ի հեթանոսութենէ առնելով, զյառաջ ասացեալ բանն դարձուցանելով ի սա. Տաւնս այս եղիցի ձեզ սկիզբն ամենայն տաւնից. Ո՞վ քրիստոնեայք, առաջին է յամենայն տաւնս սրբոյ եկեղեցւոյ, յորում՝ Նորոգումն համաւրէն աշխարհի լեալ. յոյժ վեհագոյն քան յոչընչէն լինելութիւն. առաջին գտաւ ի ծագել արեգականն արդարութեանն, ամենայն հոգևոր կարգք զիւրաքանչիւր կալան զտեղի, որ ի հրեշտականման պաշտաւնէից կատարին հանապազ. ոչ յերկիր անցաւոր պարգևացս, այլ յերկնից արքայութիւնն, և յաւիտենական պարգևսն. ոչ ծառայակցաւ Մովսէսիւ առաջնորդութեամբ, այլ ճշմարիտ աւրինադրաւ Տերամբ և Աստուծով Մովսէսիւ, և ամենայն արարածոց Քրիստոսիւ. որ թէպէտ և զկերպարանս ծառայի եառ կամաւք վասն մերոյ փրկութեան, զի զմեզ առ ինքն մերձեցուցէ, և ազգակցաւ մերով մարմնովս՝ զոր խառնեաց և միացոյց ընդ իւրումն Աստուածութեանն, կեանս մշտնջենաւորս շնորհեաց մեզ. սակայն եկաց մնաց յիւրում Աստուածութեանն անփոփոխելի.

Digitized by Google

Եւ թէ զանուն ոք կամի ուսանել զտաւնիս, յորում սքանչելիք մեծամեծք կատարեցան, լուիցէ զանսուտ բանն երկուս ի միասին գումարեալ ծնունդս, միոյ և նորին Միածնի Որդոյն Աստուծոյ. առաջին յԱստուածածին կուսէն սրբոյ. և երկրորդ յետ երեսուն ամի ի սմին աւուրս մկրտութեամբ ի Յորդանան ի կարապետէն իւրմէ ի Յովհաննէ ծանուցեալ աշխարհի. վըկայեալ Հաւր ի վերուստ բարբառով՝ Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ. և ականատես Հոգին սուրբ ի նմին աւուր իջեալ յերկնից նմանութեամբ աղաւնոյ. հանդէր ի վերայ՝ յայտնելով զնա փրկիչ աշխարհի, որպէս ի Ծննդեանն, նոյնպէս և ի Մկրտութեանն։ Յաղագս որոյ և Յայտնութիւն ասի աւրս և Ծնունդ. միոյն պատճառաբ, վասն զի Բանն Աստուած մարմին եղեալ բնակեաց ի մեզ հաւատացեալս. և միւսոյն՝ վկայութեամբ Հաւր և Հոգւոյն սրբոյ ի մարդիկ ծանաւթութիւն. զորոյ կենի ճշմարիտ վկայութեանցն համարձակեալ և Մկրտչին բարբառէր մեծաձայն ասելով. Ահա գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի։ Յայտնագոյնս ասացիս. հիմն և արմատ ամենայն շինուածոյ սուրբ եկեղեցւոյ, և ամենայն աստուածապաշտից քրիստոնէից, զայս տաւն անդրանիկ ամենայն տաւնից հաւատացելոց ի փրկիչն Քրիստոս, պատուեսցուք զսա որպէս սկիզբն փրկութեան մերոյ ամենայն սրբութեամբ և հոգեւոր աւրհնութեամբք և երկնային ուրախութեամբ լցեալ Բայց յաղագս կրկնապատիկ լինելոյ պատճառաբ տաւնիս այսորիկ երկուցուն սքանչելի ծընդոցն, մերով մարմնով ի սուրբ Կուսէն, և մկրտութեամբ ի Յորդանան հոգեւոր աւազանաւն, ի մի եկեալ միաբանութիւն յաւուրս յայսմիկ. բազմապատիկ արարին զուրախութիւն. միոյն զի ի բնութենէ մարդկան առեալ զմարմինն՝ ընդ անճառելի Աստուածութեանն խառնեալ միաւորեցաւ, և միւսոյն զի բարբառ Հաւր ի յերկնից ոչ որոշեաց զմարդկութիւնն, այլ զմիաւորեալն ի մարմնի աստուածութիւնն, մարդկութեամբն՝ իւր Որդի սիրելի անուանեաց. ասէ, Ընդ որ հաճեցայ։ Մեզ հրամայեաց լսել նմա և հնազանդ լինել, պատուեսցուք առաւելագոյն զայս ուրախութեամբ մեծաւ, յորում բնութիւնս մեր պատուեցաւ, յաղագս առեցելոյ ի մէնջ ընդ ճշմարիտ աստուածութեանն միաւորեալ, և դուստր ազգիս մերոյ Աստուածածին կոչեցաւ և եղև, որում ի սպասու կան բիւրաւոր բանակք հրեշտակաց Որդւոյ մարդոյ։ Եւ զտաւնիս այսորիկ զպատճառս ին-

Digitized by Google

քեանք բարբառէին և մարդկան ուսուցանէին ասել. Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն և ընդ մարդկան հաճութիւն։ Քանզի ասէ, ակնկալութիւն արարածոց յայտնութեան Որդւոյն Աստուծոյ սպասէր, առ ի մերժել և ի բաց ընկենուլ յինքեան կծանրութիւն նզովիցն, որք յաղագս յանցանաց մարդոյն եդան։

Լուիցուք պսուհետև և յաւետարանչէն. եթէ զիարդ եղև ծնունդ բանին, ասէ. Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ. և դարձեալ ինքն Հայր բերանով մարգարէին Դաւթայ, որպէս յերեսաց Միածնի Որդւոյն խաւսեցեալ Բանն ընդ Հաւր. Տէր ասաց ցիս որդի իմ ես դու, և ես այսաւր ծնայ զքեզ. Վասն զի ծառայի կերպարան եառ կամաւք, ոչինչ դանդաղի տէր իւր կոչել զծնանիլն իւր բնութեամբ։ Որդի իմ ես դու, ի վերայ բերէ. զառաջին ծնունդն նախ քան զամենայն յաւիտեանս լեալ անուանէ, վասն զի երիս ծնունդս ամենայն մարդոյ հնար է լինել, ի գրոց սրբոց ուսանիմք։ Առաջին ըստ բնութեանն ի միմանց. երկրորդն որ յոյժ լաւագոյն ևս է քան զառաջինն և աստուածային, վերստին ծնունդ ի ջրոյ և ի Հոգւոյ սրբոյ, առանց որոյ ոչ յորդեգրութիւն Աստուծոյ ոք դասի. և ոչ զերկնից արքայութիւնն կարէ տեսանել. վասն զի և թողութեան մեղաց ոչ լինել արժանաւոր հասանել, ընդ որ թէպէտ և Նիկոդիմոս տարակուսեալ յերկուանայ թանձրագոյն մտաւք, անհնարին ծերոյն ասելով անդրէն միւսանգամ յարգանդ մտանել մաւր իւրոյ և վերստին ծնանիլ և յանդիմանի ի փրկչէն Քրիստոսէ, իբրև զտգէտ վարդապետ Իսրայելի։ Այլ մեք ուսեալք ի հասարակաց Վարդապետէն և յիմաստութենէն Աստուծոյ. հաւատամք եթէ է հնար մտանել հին մարդովն, ապականեալովն մեղաւք ցանկութեան. ի հոգևոր արգանդ աւազանի ջրոյն սրբութեան և ելանել հաւատովք նոր մարդ ամենևին առանց մեղաց, զգեցեալ զլաւրութիւն Աստուծոյ զկատարեալ սրբութիւնն։ Եւ երրորդ ծնունդ զհամաւրէն մարդկան նորոգումն ի հոդոյ, ընդ որ զքանչանալով մարգարէն Եսայիաս, Ո՞վ լուաւ, ասէ, կամ՞ով ետես թէ երկիր զազգ մի բովանդակ ծնանիցի ի միում աւուր։ Թուի այ՛ղ աւրինակ ծննդեան լինել, որ ըստ ուսման և բանի վարդապետութեան հաւատոց է. որպէս երանե-

---

*) Այսպէս յօրինակին

լին Պաւղոս զԿորնթացիսն աւետարանաւն ծնեալ ի Քրիստոս Յիսուս, և զՍնեսիմոս ի կապանս ծնեալ ասէ։

Արդ մարդկան այսոքիկ են ծննդեան աւրինակ. իսկ Քրիստոսի հանդերձ երեքումքք այսոքիւբ որ ի Կուսէն սրբոյ. Դաւթի և Աբրահամու որդի ասի։ Եւ մկրտութեամբն ի Յորդանան ի կարապետէն իւրմէ ի Յովհաննէ, երկոքեան ծնունդքս ի նըմին աւուր հանդիպան. *) յետ երեսնամեայ ժամանակի. և յարութեանն որ ի մեռելոց, չերրորդ աւուր։ Այսոցիկ երիս ծննդոց փրկչին մերոյ Քրիստոսի եղելոյ ի վերջին ժամանակ աշխարհիս. է՝ և չորրորդ ծնունդ նորա նախ քան զամենայն յաւիտեանս, անճառելի և անպատում ի Հաւրէ միայն, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ։ Զի թէպէտ և ամենայն աւրինակք ծննդեան նորա, աստուածայի՜ն և անճառելիք, այլ՝ այն առաւել ևս է սքանչելի և անպատում, և վերազոյն քան կամիս մարդկան. զի յորմէ հետէ Հայր իմանի և Որդի ընդ նմին, ոչ պատուով. և ոչ երիցութեամբ առաւել ոք քան զոք, բայց միոյն միայն որոշեալ ի միմեանց. զի մին ծնաւղ միայն է, և միւսն ծնեալ, իսկ միւսն ի նոսին էութենէ։ Նոքա այսաւր ի Յորդանան ծանուցան աշխարհի. վասն որոյ առաւել զայս տաւն պատուեսցուք մեծաւ ուրախութեամբ։ Եւ Կիւրղոս Երուսաղէմի եպիսկոպոս, վարժեալ հոետորական արհեստիւք և լի Հոգւով սրբով, որ ի Սիմոն կախարդէ և ցիւր ժամանակն զամենայն աղանդս յանդիմանեալ կշտամբեաց և զանիրաւ ժողովս նոցա, և զտաւնս և զընթերցուածս և զսաղմոսս ի սրբոց առաքելոցն զեղեալսն հաստատեաց, և զյիշատակս մարգարէից և առաքելոց և մարտիրոսաց ստուգեալ կարգեաց. և զլուսոյ տաւնիս զյայտնութիւնն եդ՝ զոր սուրբ առաքելոցն էր կարգեալ, և չասաց զծնունդն յառաջ քան զյայտնութիւն, այլ կամ և զնոյն։ Եւ զոր յայլ քաղաքս ըստ Արտեմոնադիր ընթերցուածոց դեկտեմբերի ամսոյ ի քսան և հինգն ծնունդ առնեն, զայն Յակովբայ. առաքելոյ և Դաւթայ մարգարէի յիշատակի աւր եդ Կիւրեղ. քանզի և սուրբ հարքն որ ի Նիկիա ժողովեալ և երանելին սուրբն Գրիգորիոս և սուրբն Արիստակէս ոչ կարգեցին երկուս տաւնս զԾնունդն և զՅայտնութիւնն, այլ մի տաւն։ Եւ ըստ նոցունց հոգեկիր վարդապետքն և թարգմանիչք, որք յԱղեքսանդր և յայլ յայտ-

*) Ա յսպէս յորինակին.

նի քաղաքս վարժեալ, ոչ աւելիս և նորս ինչ թարգմանեցին, և ոչ ընկալան, և ոչ մեկ աւանդեցին. այլ հաստատեալ եմք ի վերայ հիման սուրբ առաքելոցն և երանելի հարցն, որ կամի և նպան տաւն կատարեցին, և կատարեմք ի պատիւ սուրբ Երրորդութեանն, զաւր սուրբ Յայտնութեանն՝ ոչ բաժանելով յերկուս զայսաւր ի Յորդանան գնիցեալ Բանն։

Զքո՝ հաս յիշեա՛ ի Տէր։

Digitized by Google

ՓԱՌԱՒՈՐԵԼՈՅ ՏԵՐԱՆՑ ՎՐԹԱՆԻՍԻ ՏԵՐԱՆՑ ՆՈՒԻՐԱԿԻ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՔՋԿԱՆ ՈՐԴԻՈՅ. Ի ՍՈՐՄԵՆԱՑ ՍՏՐԱՏԵԼԱՏԷ ԵՒ ՀԱՅՈՅ ԶԱՒՐԱՎԱՐԷ

Մեք բաղում անգամ յանդիման բանիւք, և ի հեռուստ գրով խաւսեցաք ընդ ձերում իմաստութեանդ, և ակն ունէաք գտանել զձեզ որպէս զմիաժառանգս ի սրբոյ աւազանին հարազատ եղբարս և որդիս հասարակաց հաւատոյ մեր հաւրն սրբոյն Գրիգորի, և դուք շատ ինչ աւտարաբար վարեցայք առ մեզ, և հաւասար առաջնոցն այժմու պատասխանիքս լի խարդախանաւք և պատճառանաւք խարէութեան։ Զի եթէ չէր իշխան, որպէս գրեցէքն, տեղապահդ ձեր եկեղեցւոյդ առանց ամենառակցաց իւրոց ասել ընդ մեզ և կամ լսել, և կամ որ ասէրդ քերդող, նստեալ ի Դունայ, աւերածին հաւատոյդ նոր կարապետդ, և յառաջնութաց նեռին, պաճուճեալ սնափառութեամբ ի մէջ ախմար և մտամոլար մարդկան, և ցուցանէ զանձն իւր թէ ես իսկ եմ վարդապետութիւն, ապա պարտ է ինձ անսալ համախոհ միաբանութեան և կամ ժողովական գրոց առ միմեանս հաւանութեան. և ոչ այնպէս յանկարծաւրէն, և վարկպարագի որպէս զոչինչ՝ զսրբոց հարանցն հաստատեալ սեղանս կործանել, և որպէս զպիղծ ինչ և զանաւրէնութեամբ թաթաւեալս վերստին մկրտել, և զանմեղ քահանայս բռնադատել, և տալ հաստատել գրով մի իշխեսցեն հաղորդել ընդ մեր բարեպաշտութիւնս՝ Իմացաք և զասացեալսդ ձեր կինուորական կարգի, առանձին ի դոցանէն. զի այդ ըստ դոցա կամայ լինիցի. առ ի լինելոյ պատիր պատճառանաց առ ի յապա, եթէ առաքեցէ զոր կամիք,

Digitized by Google

թող գան, զՀարցն հաւատ կարգեալ տեսանեն։ Եթէ զԴէոսկորոսին ասէր, զՖիլոթէոսին զԱղէքսանդրացւոյ որ ընդդէմ բարեպաշտութեան հոգեկիր հարցն յանդգնեցան ասել, ուստի և մերժեցան ի սրբոյ եկեղեցւոյ, և անջինջ վիճակեցան յիշատակի նզովից, զայդ և մեք քաջ գիտեմք, և ունիմք ի կապարճս հաւատոյ մերոյ ճշմարտի, որպէս զսուտ և զաւտար և զանգործ նետս։ Այլ ինչ եթէ ունիր զոր ոչ գիտեմք, որ ոչ է հասեալ առ մեզ, տուք բերել։ Իսկ եթէ զսրբոյն Աթանասի՝ որ զՀոգեխառն ժողովն զարդարեաց, և զմեծին Բարսղի. և զՏրիգորանցն, և զանխարդախ վարդապետութիւնն տեառն Յովհաննու և զնմանից նոցունց ասէք. այս ի սիրտս մեր առ մեզ է. և ոչ կարաւտիմք Խորասանիկ և Ատրպատիճ կանոնադրութեան և վարդապետութեան։ Աստ ունիմք և զմեծի հաւրն Կիւրղի Աղեքսանդրի եպիսկոպոսապետին զժողովական զթուղթսն՝ որ զամպարշտութիւնն Նեստորի վանեալ ճաղեաց։ Եւ յուսամք յամենեցունց աղաւթս սոցա և ի բարեխաւսութիւն և ի բոլորովին ի ճշմարիտն Աստուած Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ մարմնացաւ և մարդացաւ ի սուրբ և յԱստուածածնէն ի միշտ կուսէն Մարիամայ, և յանձն էառ զչարչարանս և համբեր խաչի, և մեռաւ և թաղեցաւ և յարեաւ, և ելյերկինս և նստաւ ընդ աջմէ Հաւր, եթէ պահէ անսասանելի և անխռով զընդհանրական զսուրբ եկեղեցի իւր։

Եւ զայս կամիմք զի գիտացէք, եղբարք, զի որ ի ձեր տեսութիւն կարի թեթև և ոչ համարիք, մեր տառապելութիւնս զայս ոչ կարաց բառնալ այլ կենի շատ ողբոյ և արտասուաց, հարկ եղեւ ծանուցանել մեր բարեպաշտ և խաղաղական տերանց։ Եւ մի որ փորձեսցի ըստ իւրում սովորութեան մտանել կեղծաւորութեամբ և նենգութեամբ ընդ նեղ դուռն սիրոյ, և բանալ զլայն դուռն թշնամութեամբ։ Այլ պարտ է այնպիսեացն մեծախիղճ լինել և հայել ի դատաստանս և յիրաւունս և ի վրէժխնդրութիւնս անաչառ դատաստանին Աստուծոյ աստ և ի հանդերձելումն։ Եւ թէպէտ այսպէս եղև մեր բանս, և հարկաւորութեամբ եկաք ի բաղում ինչ իրս, սակայն նա է քաջ և յաղթող նահատակ՝ որ վասն սիրոյն Քրիստոսի խոնարհի և զգլուրեալն չանայ կանգնել։ Վանորոյ աղաչեմք յայսմ ևս նուազի, եթէ հաճոյ է ձեզ, պատուիրեցէք ժողովեալ եպիսկոպոսաց և երևելի քահանայից, յոր կարծէք ունել գիտութիւն բանի, և

զպատշաճ տեղի յայտ արարէք, և զժամադրութեան ժամանակ ստուգեցէք, և մեք զառաջնորդ մերոյ եկեղեցւոյ աղաչեմք. զըտանել և սոցա անդ միաբանութեամբ։ Եւ յուսամք ի Քրիստոս Աստուած մեր եթէ այդպիսի համբաւակոծ և սնոտի երկպառակութիւն յանդիմանութեամբ միմեանց լուծանի, և ըստ աւետարանին բանի լինիմք Մի հաւտ և մի հովիւ։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՍՈՐՄԵՆԱՑ, ՈՐ ԱՌ ՎՐԹԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՐԵԱՑ

Գիտեմք կի բաղմադէմ և պէսպէս աւրինակաւք խաւսեցեալք ցուցանել կանձինս համախոհս և միարանս ընդ մեկ հաւատով, զոր տնկեաց երանելի նահատակն Քրիստոսի և հայր մեր Գրիգորիոս ի մշտնջենաւոր պայծառութիւն Հայաստան աշխարհիս. համարեցաք եթէ այդպէս իցէ. վասնորոյ յոլով անգամ թախանձեալ զսրբասէր եպիսկոպոսս քննութիւն առնել, և ուսոյց մեկ, թէ ոչ է աւրէն առանց միարանական ժողովոյ՝ զոր այպանեալ էր ձեր մտաց՝ ի պատասխանել անձանց թըշնամանս յանձախելով. թէ յորժամ չէր իշխան ընդէ՛ր զհաստատեալ սեղանն յուղղափառացն կործանեաց. և վերստին մկրրտութիւնս արար։ Վասն որոյ տեղեկացաք, եթէ ո՛չ այդպէս, այլ զկանոնակա՜ն և զիրաւացի՜ն կատարեաց։ Եւ դուք ըստ որումն անձամբ անձին յաղթել անարդանա՜ք, քան զամենայն յաղթութիւնս առաջին և քաջ վարկայք զմեր քերդողս, նեռինն կարապետ առնելով ոտնհար եղայք. եթէ ի Դունա այրեցեալ և յաւերակ եկեղեցւոյդ նստի՝ և նորոգաձևութի՜ն վարդապետ։ Նեռի՜ն ասպնջական և առաջնորդ, և կարապե՜տ զնա պատրաստել որ ազգի միոյ ապստամբութեան եղեալ պատճառ, և զարս ի կանանց վարատելոյ. և զկանայս յարանց, յորոց բաղումք թափառական կենաւք ի տար աշխարհ վախճանեցան, թաղման անդամ ո՛չ լինել արժանի և մանաւանդ յիւրընակ և յուղղափառ վարդապետաց կարդէ՝ սրանալով է փախուցեալ. որպէս զամպարիշտն՝ առանց ուրուք հալածելոյ, և տարաղի՛ր եղեալ յամրիծ և հոչակաւոր՝ և կեցուցանող նոցին հաւատոց։ Բայց և զայն պարտ է ճանաչել՝ կի որ բերանովք աւրհնէր, այսինքն ժառանգաւորս հաւատոյ համբաւելոյ զՀեր սրբոյն Գրիգորի, զընծայ այրեցմանս այսորիկ և աւերածի.

Digitized by Google

դո՞ւք մատուցէք նմա. Թողումք ասել զայն ևս։ Եւ վանից ե-
ռիցունք և դոցին քահանայք, որք ձեռն արկին, նզովելով զա-
նաւրէն ժողովն Քաղկեդոնի. զի առանց բռնադատելոյ արարին՝
ամենեցուն է յայտնի։ Քանզի որք ոչ կամեցան ձեռնարկել
տակաւին ևս ի տեղւոջս գնան առանց իրիք խոշտանգանաց, և
ոչ որպէս բացումք ի ձէնջ հալածական եղեալ յաւուրս ձմե-
ռայնոյ՝ վէրս ընկալան, և ցարդ ևս մորմոքին։ Եւ բանզի վըս-
տահ էաք ի սահման հաւատոյ հարցն և ճշմարիտ վարդապե-
տացն մերոց, ո՛չ ակամայ՝ այլ կամաւք երանելի եպիսկոպո-
սին՝ և այլոց կոչէաք ի պարծանս անձանց մերոց տեսանել, և
ի պտուղ խաղաղութեան։

Բայց այս առաւելագոյն ևս սքանչելի, և յոյժ զարմաց-
ման արժանի. զի մինչդեռ ուրանային երդմամբ հաստատելով,
ոչ աւելի ինչ ունել կամ պակաս զգրութիւն հաւատոյ. քան
զոր Հայաստան աշխարհիս է ընկալեալ, այս եկեղեցւոյս ա-
ռաջնորդաց և հնազանդել կամ ընդունել զժողովոյն Քաղկե-
դոնի բռնադատեալ կանոնսն՝ ամենևին չառնուիք յանձն, այժմ
ի ձեր դրեալսն՝ զնորին հակառակն ևհաս տեսանել։ Զի զոր
մեր պատուական հարցն և հոգեկիր վարդապետացն ընդ ուղ-
ղափառ հովիւսն և ընդ մարտիրոսս է դասեալ. զԴիոսկուրոս.
և զՏիմոթէոս Աղեքսանդրացի, անչինչ նզովից վիճակի առնէք
արժանի, սուտ և մոլորեցուցիչս կարդալով. և զթիւրսն և
զչարապաշտսն և հերձուածողս զՔաղկեդոնիտսն՝ բարեփառ ա-
սէք, և փոխանակ միաւորութեան երևեցուցանէք։ Գիտեմք
արդ. թէ և այլ ինչ զոր ունիմքն՝ կարևորագոյն են. և աւգ-
տակարագոյնք ցուցանիցեմք. չիք ի ձեզ տեղի. ընդէ՞ր ևս և
զառաջինն քաջ և անդրդուելի վարդապետացն զանուանսն ի
կիր առեալ. փաստաբանութեամբ պարծիք զսրբոյն Աթանասի,
և զԲարսղի, և զսքանչելի Գրիգորանցն. և զյորդորաբանն Յով-
հաննու և զմեծի հաւրն Քրիստոսասիրի Կիւրղի, և զերից ա-
կանակիտ և անթերի ժողովոցն, որք ի պատիւ ամենասուրբ
Երրորդութեան գումարեցան։ Զի թէ ճառեցելոյդ մեծարոյ
թուէր ձեզ՝ լիութիւն հաւատոյ, զմեզ ի Քաղկեդոնի նորաձևսն
կցկցեալ կարկատէիք. և ոչ նմանեալ Աստուածընկալ հարցն որ
յԵփեսոս՝ մի Որդի դաւանելով՝ գնայիք զհետ խոստովանու-
թեան հաւատոյ բարեպաշտ հարցն։ Այլ զի ընդդէմ նոցին է,
չգոյ յումիք հնար ծածկել. բայց զոր ճառելոցս եմ, ճարտա-

Digitized by Google

բարանեալս ի ձէնչ ամենապատիկ ծաղ՞ւ է պատարուն, թէ չեմք կարաւտ Խորասանիկ և Ատրպատիճ կանոնաց և վարդապետութեան։ Սակայն յոյժ ստեցէք և ոչ մասնաւոր պյսպիսի ինչ. զի Խորասանիկն յարուցեալ ընդ առաւաւտս լուանայ և համարի թէ զամենայն գործեալ աղտեղութիւնսն ի բաց մաքրեցի։ Եւ դուք մտանելով առ բոլս, ի բաղանիս լոգացեալ՝ նոցին հաւասար սուրբ կարծէք լինել։ Վասն որոյ անխտիր ի տէրունական մարմինն մերձենայք՝ զոր պատգամն Աստուածային ընդ դատապարտութեամբ փակեաց։ Եւ Ատրպատիճս՝ զի ոչ գիտեն եթէ խնդիր զհաւատ լուծանէ, մի՛շտ ծփին փոփոխելով ի բազմաստուածութիւնս, զոր և վասն ձեր ճշմարտութեամբ է ասել հանդերձ արտասուաւք, զի անդադար էք ալէկոծական պղտորութեամբ շփոթեալք, այլ և այլ սահմանադրութիւնս առնել հաւատոյ ոչ շատանայք։ Ապա ուրեմն սուտ էր և կարի անպատրաստաբար զԽորասանիկն բամբասել և զԱտրպատիճս, զի ոչ կարէք ժխտել զայս՝ որպէս թէ չէցէք այդպէս։ Այլ կպարծանայ յոյս ունել ի Փրկիչն մեր և ի Տէր Յիսուս Քրիստոս, որ ի վերայ ամենեցուն է Աստուած՝ բաղձալի պանծանաւք առնումք յանձն. մարմնացեալն, մարդացեալն յԱստուածածին և ի միշտ կուսէն Մարիամայ. խաչեալն և թաղեալն, և յարուցեալն յաւուր երրորդի. ամբարձեալ յերկինս, նստեալ ընդ աջմէ Հաւր Աստուածախառն մարմնով կամենայն կատարեաց արդարութիւնս։

Արդ զի արտաքոյ ամենակալ Երրորդութեանն. Աստուած զոք ասել հաւասար անհամեմատականին ամպարշտութիւն է. ըստ այնմ թէ, չէք Աստուած՝ բայց ի միոյն. որ է ամենասուրբ Երրորդութիւնն։ Անձնաւորութիւնն որոշմամբ, և միաւորեալ Աստուածութիւնն։ Զի՞արդ զՔրիստոս Աստուած խոստովանիք, և զխաչն արտարքոյ Երրորդութեանն. ոչ է ասէք պարտ յԵրրորդութեանն դնել զնորա խաչն. զի չՀաճի Աստուածութիւնն. որ ի թշնամանս ինչ նմա բերի. և պատճառս՝ զՆիկիական հոգեյարդար ժողովն ունիր։ Եւ այս զի նանիր և սնոտի պատրանաւք և պաճուճեալ. լուր, զի ի Նիկիա հաւքն դաւանելով ըստ Հայր ամենակալ, ի նոյն վաղվաղակի յարեալ մի Տէր զՅիսուս Քրիստոս քարոզեցին, ծնեա՛լ յԱստուածոյ Հաւրէ յառաջ քան զամենայն յաւիտեանս. և զնոյն մարմնացեալ ի Մարիամայ միշտ կուսէն և խաչեալ. ահաւասիկ յԵրրորդութենէն նորա խաչն։

Digitized by Google

Քանզի Բանն Աստուած, մի ի դիմաց Երրորդութենէն՝ մարմնով իւրով, որ բնութեամբ մարդկային էր. և միաւորութեամբ տնաւրէնութեանն Աստուածային, արար զփրկութիւն ի մէջ երկրի։ Ապա ուրեմն ոչ Երրորդութեանն այլ յԵրրորդութենէն խաչն. զոր դուք արտաքոյ հանեալ առանց զանդիտելոյ, ասէք թէ չէ յԵրրորդութենէն խաչն. կարծեալ աւրինադրել ինչ, և մե՞րկ մարդոյ տալք զփրկական և զկենդանա՞ր զչարչարանսն, որում ոչ զոյ հնար ապրեցուցանել զոք։ Այսպիսի վկայութեամբ չարաչար ի կիր առնելով զբարիոք ասացեալսն. թէ Մատնելոց է որդի մարդոյ ի ձեռս մեղաւորաց. և թէ Պարտ է որդւոյ մարդոյ բաղում չարչարանս կրել և զՅիսուս Նազովրեցի զայր ցուցեալ յԱստուծոյ. և որ ինչ ի կարգին է, և զայն Յիսուս զոր դուքն սպանէք. և զայլն ևս նման սոցին, զոր Բանն Աստուած զծառայի առաջին առնլով կերպարանս՝ ոչ համարեցաւ ամաւթ կատարեալ սոսկ մարդոյ կրել ձեռնարկել, և մարդն է Յիսուս Քրիստոս ըստ Պաւղոսի։ Արդ եթէ սոսկ մարդ է Քրիստոս որ մեռաւն վասն մեր՝ ընդունայն են հաւատք և դատարկ աւետիքն փրկութեանն՝ և լի Նզովիւք, քանզի գրեալ է, թէ Անիծեալ է որ դիցէ զյոյս իւր ի մարդ։ Եւ եթէ Աստուած խոստովանիք՝ յայտ է, եթէ եկամուտ և պիտակ համարիք զԱստուածութիւնն և շնորհաւք ընկալեալ, վասն որոյ և զխաչն արտաքոյ Երրորդութեանն դնէք, և այսպէս յայտաբար երկուս որդիս քարոզէք՝ մի բնութեամբ զԱստուածն Բան, և միւսն շնորհիւ զ'ի Մարիամայ մարդն, բանզի լցեալ է ամենայն աշխարհ հայհոյութեամբս այսորիկ ի ձեր գրեցելոցն։

Եթէ Որդի Աստուծոյ՝ ոչ միայն Աստուածութեան բնութեամբն ի վերայ կայ, այլ և ի մարմնոյն բնութեան այսպիսի երևութիւք. թէ Ես եղէց նմա ի Հայր, և նա եղիցի ինձ յորդի. ահաւասիկ, ասեն, որդիս անուն և ի մարմնոյս բնութեան վերայ կայ։ Եւ դարձեալ թէ. Տէր ասաց ցիս, որդի եմ ես դու, և ես այսաւր ծնայ զքեզ միայն, և այս ասեն որդի մարմնոյ բնութեան կոչի։ Եւ՝ աւետաւորութիւնն նոր առ երջանիկ կոյսն ի հրեշտակէն՝ թէ Ահա յղասցիս և ծնցիս որդի. և կոչեսցեն զանուն նորա Յիսուս. նա եղիցի մեծ և որդի բարձրելոյ կոչեսցի։ Տեսանե՞ս, ասեն, զի և ի մարմնոյն վերայ կայ որդիդ անուն՝ և ոչ միայն Աստուածութեանն բնութեան։ Այսպիսի և ևս դժնդակագոյն իրաւք լի են ընդհանուր դաւառք, ոչ գիտեմ

ուստի՝ յորդեցայք ղվաղնչուցն շիյուցեալ արծաթել. զ՝ի վաղենտիանացն, և այլ ստանուն գիտնական. քանզի այն դըպրոցի էր գուպար վստահութեանդ այդորիկ. այլ զոմն չարչարեալն աղանդելով. և այլ զչ չարչարեացն, որոց գլուխ և արմատ դառնութեան Սիմոն ճանաչիւր կախարդ, երկուս որդիս անուանելով, մի ըստ բնութեան՝ և մի շնորհաւ. զոմն անմահ, և զոմն մահկանացու։ Արդ որ նորանշան հարուածովքն անկեալ հերձաւ՝ վայրապարին ճապաղեալ քրիստոնէրն *) ճարակ լինելով յաւիտենական հրոյն, մեծարանաւ առեալ ի կիր համառաւտէր բարեպաշտս ծանուցանել յամառեալը զաստուածվայելչարար միաւորութիւն Բանին ի մարմնին իւրում։ Սահմանեցին խոստովանել՝ և մի լինել մշտնջենաւոր անրակութեամբ. վասն որոյ մի Քրիստոս և Տէր բարոյի յերկնաւորայ և յերկրաւորայ. անշինչ նշովիչ պարտաւոր էր։

Ոչինչ նուազ և հանդերձեալ պատասխանիքս ընդայնն զարմացումն այսպիսի ինչ. թէ զտեսութիւն ձեր թեմեա՞ համարեալ, մեր նուաստութիւնս՝ ոչ զաւրայ բառնալ. այլ յաճախազոյն արտասուաւք փութացայք տեղեկութիւն տալ թագաւորաց մերոց։ Արդ տեսութիւն թուել ծանր՝ ըստ իրաւանց արդեաւք էր, բայց զանձին իւրոյ զողբս թողեալ, որ սաստկագոյն քան զամենեցուն իցէ, կարի իսկ յետին անմտութիւն լինի՝ զայլոց ի կիր առնուլ զաշխարումն։ Պարտ է ձեզ զձերոյին աշխարհդ լա՛լ անմխիթար սգով թախծանաւք. զի ճեղքեալ էք և աղմկեալք անլծիւ աղանդոց զանապանութեամբ. և միաբանել կամ ցանուլ ոչ նկատէք. Իսկ յորժամ ոք իւրում տան վերակացութիւն առնել չգիտիցէ կամ չզաւրիցէ, զի՞արդ ի վեհագունիկ հրապարակախաւս համարձակեալ հրաման տայցէ ճոռոմաբանելով. ո՞չ ապաքէն յամենեցունց կրիցէ ծաղր և ա՛յպն կատականաց. և փոխանակ նեղ դրան, ի թշնամանաց գլա՛ն բանայցէ։ Զանձինս քննեցէք, և ոչ դատապարտիք. զի իւրաքանչիւր ոք ընդ անձին իւրոյ տալոց է դատ առաջի Աստուծոյ։ Այլ թէպէտ այս՝ այսպէս է. սակայն պարտ և պատշաճ է մեզ յուսալ ի Քրիստոս Աստուած մեր, լինել ձեռնտու բառնալ ի միջոյ զնորոգաձև գայթակղութիւն որ ի Քաղկեդոնի յարձանէն Լևոնի բռնաբաւսութեամբ սերմանեցաւ

*) Ա. յոպէս յօրինակին։

Digitized by Google

Քանզի նա միայն է քաջ և յաղթող հովիւ և սիրող պատուիրանապահաց իւրոց. խոնարհ և պյտելու. որ երբեմն զԱրիանոսացն քակեաց կարճեալ ճոխութիւն. նոյնպէս հաւատաւ, և զՔաղկեդոնիտսդ տեսանել նորին զաւրավիգն աւգնականութեամբ. և ապա լինի հաճոյ ժողովել միշտ ի բարեպաշտութեան ամրացեալ բոլոր եպիսկոպոսաց մերոց և ճշմարիտ քահանայից ամենայն ուխտի սրբոյ եկեղեցւոյ, խորտակել և բառնալ ի միջոյ զտիեզերակործան արձանին գայթագղութիւնս. և զանբաժանելի և զանայլայլելի զքաջ Հովիւն Փրկիչ և Տէր մեր խոստովանելով ձայնին տալ լսել

Զյոգնամեղ ի զանարժան ծառայս Աստուծոյ զԹումաս ի զծընաւղն իմ յիշեցէք ի Քրիստոս Աստուած։

Digitized by Google

ՀԱՒԱՏԱՐՄԱԳՈՒՆԻ ԵՒ ԻՄԱՍՏՆԱԳՈՒՆԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐԱԳՈՒՆԻ ԵՂԲԱՒՐ՝ ՈՂՈՐՄԵԼԻՍ ՊԵՏՐՈՍ ՏԵՐԱՄԲ ԽՆԴԱԼ։

Աւրհնեալ է Աստուած՝ որ ամենայն բարւոյ տուիչն է, և ամենայն կատարեալ պարգևաց լոյսիչն և պահաւղն ըստ զրեցելումն. որ ետ իմաստութիւն մարդոյ՝ խնդրել զինքն և հաւատոյ աչաւք հասանել, և հաստատութեամբ ի նմա կալ մնալ յուսով կենացն յաւիտենականաց, զոր խոստացաւ անսուտն Աստուած, ըստ որում ասէ աստուածային առաքեալ, Ցառաջ քան զժամանակն յաւիտենից, բայց յայտնեաց այժմ ի ձեռն յայտնութեան Միածնի Որդւոյն իւրոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։ Աւրհնեալ է Աստուած որ ետ մեզ ուրախութիւն կատարեալ հոգևորական առ Միմեանս՝ սիրովն և հաւատովք ուղղափառութեան, զոր սիրեցեր ի մանկութենէ՝ և սննդակից քեզ արարեր. և ամենեցուն մեզ առաւել նախապատիւ՝ Ո՞վ Աստուածասէրդ ըստ իմաստնական Սողովմոնի խրատտուութեան։ Եւ զըկայէ բանիցս այսոցիկ յառաջեալ քո վարքն, և վկայեն այժմուքս իրք. քանզի ի բացուստ լինելդ քեզ ի նոյն նախանձ և յուղղափառ տարփաւղացն և միչի թողանիլ յորոյ ոչ նմանապէս զայս սիրողայ և նմին ունել զզուշութիւն և համարձակութիւն։ Այսղան նմանի քո յանկութեանն առ Աստուած բերէ ճշմարիտ նշանակ և զհաստատութեան առ աւետարանն՝ յորում պարտ է կալ մեզ պինդ եղեալս և անշարժս. ըստ որում ասէ Աստուածային դիրն. պատրաստ միշտ առ պատասխանատրութիւնս ամենայնի որ խնդրիցէ ի մէնջ բան յաղագս որ ի մեզ ուղղափառութեան հաւատոյն. այլ հանդերձ հեզութեամբ ցուցեալք։ Զի ոչ յաղագս փոքունց մեզ է հանդէսս, և ոչ յաղագս դիւրաբար արհամարհիլ չարացելոց, այլ յաղագս տիրականա-

Digitized by Google

գունին՝ որոց ի մարդիկ բարեաց, և առանց որոյ անկարելի է ապրել։ Քանզի Առանց հաւատոյ, ըստ գրեցելումն, անհնար է հաճոյ լինել Աստուծոյ։ Բայց գիտեմք զի և հոգևոր իմաստութեամբն՝ մեծատուն է քո կատարելութիւնդ, և ոչ ևս աշխատեսցի առ ի ցուցումն ուղիղ և ճշմարիտ բանին, ունելով մարտակից՝ նախ առաջին զԱստուածային շնորհն, և առ այսուիկ ևս զսրբոց հարանցն խոստովանութիւն, զոր իբրև զխարիսխ ունիցիմք, զդուշաւոր և հաստատուն առ ի հերձուածոցն առարկուածս, որք զաւրէն յանդուգն ալեաց ի վերայ եկելոց ընդդիմասցուք. տրտմեալք ի վերայ ըստ ժամու ժամու անտեղաբար շարժանց ընդդէմ ուղիղ հաւատոց։ Եւ սակայն ոչ աւտար կարծեցեալք, յաղագս յառաջագոյն լսելոցն յաստուածային գրոց հանդերձեալ լինել հերձուածս, զի ընդիրքն երևելիք լինիցին պայծառացեալք լուսով բարեպաշտութեանն իբրև զլուսաւորս յաշխարհի, բան կենաց ունելով ըստ պատկերի առաջնոցն հաւատովք հաճոյացելոց, զոր թուէ մեզ աստուածայինն առաքեալ, սակաւս ըստ թուոյն ի մէջ բազմութեանն անչափի. և ապագայ յաւիտեանս։ Բայց մեծս և առաւելս վասն առաքինութեանն և առ ի յԱստուծոյ պատուոյն, և գգալի զստացուածս զայսոսիկ յաղթութեամբն, քանզի ասէ գիր. Զորս ոչ արժէ աշխարհ. վասն զի ճշմարտութեամբ ոչ ի բազմութենէ կերպարանաց բարեպաշտութիւն, այլ ի պաշտամանցն ճշմարտութենէ. և առ պաշտաւնն փութոյ և յարակայութեանց՝ ցուցանելով զառ ի Տէրն սէր։ Քանզի հաւատոյն փրկական և ինքն ծնաւղացն մերոց բաղում անգամ լինի պարգև դեռ ևս մեզ տղայոց երևեցեալ։ Իսկ առ Տէրն ցանկութիւն՝ յետոյ ի վերայ եղեալ առանձինն իւրաքանչիւրում գործէ զկատարելութիւն, բաժանելով զփոյթն ի յուղղացելոյն, և զճշմարիտ հաւատացեալն ի լոկ և ի միայն և յանպտուղ անուանն ունաւղէ. ապա ուրեմն թէև թողանին յԱստուծոյ՝ փորձութիւնք լինել և հերձուածոցն զանազանմունք վասն այնորիկ թողանին՝ զի ընդիրքն՝ երևելիք լիցին, արժանիք եղեալք հանդերձելոցն նոցա տուելոց պակացն՝ յերանելում և յանմահ կեանսն։ Այլ վասն զի մեզ և արքունոց պէտք են խորհրդոց բարեպաշտից և փութոց, քան[illegible] ընդ մէջ որոգայթից ըստ առակողին, և ի վերայ [illegible]ծանաց գնամք, անընդհատ մեզ պէտք են աղաւթից առ ի պահիլ ի հլաւրացն ձեռանէն, որպէս զի մի յեղեալ անկցուք ի վարս պեղծս.

Digitized by Google

և կամ ի չարահաւատութեան մեղադրութիւն։ Եւ որչափ մեծագոյն այժմ հաւատոյ ընդդէմ աճեաց գայթակղութիւնն, այսչափ պնդագոյնս զարթուցանել ամենայն պարտ է առ ի պահպանութիւն և ի փոյթ Աստուածայնոցն աղանդոց, մի՛ գուցէ եթէ դաղտնաբար ամենայն չարահաւատութեանն նետք վիրաւորեսցեն։ Արդ յառաջնումն յորժամ եկեղեցեաց խաղաղութիւն քաղաքավարիւր և պատեալք էին գայթակղութիւնքն, ոչինչ մեզ վնաս էր պարզամտութիւն բաւական եղելոյ խաղաղութեանն սրբոց եկեղեցեաց ի զգուշութիւն իւրաքանչիւրում տալ։ Իսկ այժմ վասն զի վնաս ի ներքս եղև եկեղեցւոյ և կալաւ ամենայն ուրեք, սկսեալ ի Նեստորի մոլորութենէն և հաստատեալ ի Քաղկեդոնի ժողովին, վասն այսորիկ ցայժմ ոչ պարզամտութեան մեզ պէտք են, այլ իմանող սրտի. բանի դրեալ է, Զամենայն ինչ փորձեցէք, և զբարին ընկալարուք։ Քանզի այսպէս ճշմարտութեամբ բարին՝ եղիցի ի բարի, յորժամ անխառն իցէ ի չարէ։ Եւ զի զայս ոչ ընդունայն ասեմք այլ ծածկեաց ճշմարտապէս մոլորութիւն ցեկեղեցիս Քաղկեդոնի ժողովն. և զվաղուցն դատապարտեալ Նեստորի աղանդն՝ ի նմա հաստատեաց. ոչ է դժուարին ցուցանել ի յեղելոց, որոց ի նմին իսկ ի ժողովին կացելոց բանիցն, և յորոց Նեստորի և յորոց միախորհ նմա աղանդոցն, սոցա զհամաձայնութիւն յանդիմանողաց մեր՝ և զնորին մտաց ցիմացուած։ Իսկ զսրբոցն հարանց մերոց զընդդէմ սոցա կոիւ, և զ'ի բաց շրջումն զԱթանասի ասեմ զմեծին, և զԹուղիոսին զՀռովմայեցւոց առաջնորդին, և զԲարսղի զիմաստնոյն և զսքանչելեացն Գրիգորայն և զՅովհաննու, և զԿիւրղի յաղագս հաւատոյ ճգնեցելոցն և զայլոց զամենեցունց, որք մեզ զկնի առաքելոցն առաջնորդք փրկութեան եղեն։ Ոմանք առ Ց. և ԾԸ. ից սրբոց հարցն ժողովոյ պայծառացեալք. իսկ ոմանց զկնի յայլ ժողովս, այլ զի ըստ մասին առնուլ, յաղագս այսոցիկ երկայնագոյնից է բանից։

Եւ ունի բո աստուածսիրութիւնդ զամենապատուականին և զերանելի հաւրն մերոյ Տիմոթէի զգիրս՝ որ ընդդէմ Քաղկեդոնի ժողովին, յանդիմանելով զայս ամենայն յայտնապէս՝ յաղագս այսոցիկ զայլն ամենայն թողեալ միոյ որպէս գլխաւորի յիշեցից ժողովականի նորա՝ քան ամենեցուն։ Սուրբ հարքն մեր զտնաւրէնութեան և զմարմնանալոյն Աստուծոյ Բանին զանասելին պատմելով բան, մի ասացին հաւատալ պարտ է, և

խոստովանել զԱստուծոյ Բանին բնութիւն զմարմնացելոյն կատարելապէս, և ոչ երկուս բնութիւնս կամ երկուս ներգործութիւնս, ըստ որում և յայնժամ ոմանց թուէր հերձուածողաց. զի մի՛ երկաւորութիւն որդոց՝ ի ներքս ածիցեմք։ Որպէս ոչ եղև ի մարմնանալոյ Միածնին յաւելուած Որդւոյ. ո՛չ ընկալելոյ Աստուծոյ բանին, այլ ունայնացելոյ թափեցելոյ զինքն անյեղաբար յաղքատութեան չափս. կցորդութիւն առեալ մարմնոյ և արեան յԱստուածածին Մարիամայ. ըստ որում ասէ առաքեալ մերձաւորութեամբ մեզ և իմանալի անձին, զի ըստ ամենայնի զառ ի մեզ նմանութիւն ցուցցէ յինքեան ճշմարիտ առանց մեղայ մնացեալ, որպէս և էրն Աստուած Բանն, նորոգելով յինքեան զմեր բնութիւնն յաղագս առ մեզ ազգակցութեան հնարաբար ունաւղայս մեզ լինել վասն զաւրացելոյ մեղացն, և զյարութեանն յոյս պարգևելով որոց զնմանէ առ մարմին ի վեր քան զապականութիւն և զմահ եղեալ վասն տնաւրէնութեան։ Իսկ Աստուածարար զմեզ ապրեցուցանելով վասն բնական իւրոյ անչարչարական բնութեանն և իշխանութեանն։ Քանզի անփոփոխելի ոչինչ նուազ և անայլայլելի մնայ, ըստ որում ինքն է և եղեալ մարդ։ Քանզի այս է մեծ բարեպաշտութեան խորհուրդն, որպէս զի մեզ, մի և զնոյն խոստովանել՝ և յորս սքանչելագործէն՝ և յորս չարչարին, և զխոնարհութեանցն կրէ, ունելով ի մարմնանալոյն զպատճառս խոնարհութեան։ Իսկ որք ի Քաղկեդոնի ժողովին՝ երկուս բնութիւնս ներգործել ի Քրիստոսի կամին առաջնակի, և ըստ մասի միոյն զխոնարհականսն խաւսեցելոյ, իսկ միւսոյն զԱստուածայինսն գործաւղի. և զայս բան ամենայն գործեցելովքն ի նա զդիմացն երկաւորութեան գաղտնաբար ի ներքս ածեալ աղանդ՝ պարկեշտական ձայնի բնութեանցն. զի ստուարացեալ եղիցի մնասն։ Եւ բայում անդամ զի և յայտնապէս իսկ զայս խաւսին կերպարանաց ներգործութիւնս, և երկուց ոմանց հաղորդութիւնս ի ներքս ածեալք, և ոչ որպէս յաղագս միոյ ուրուք Տեառն խաւսեցեալք, այլ որպէս յաղագս երկուց շարամանեցելոց միմեանց պատոյ և անփառութեան, և այլոց ամենեցունց, ըստ որում եթէ ոք թողայուսցէ ճշմարիտ լինել՝ որչափ ի նոսա եկն, ոչինչ եղիցի աւտար և կամ զարմայման արժանի տնաւրէնութիւնն Տեառն։ Այլ և ոչ թափման ճշմարտապէս. և ոչ խոնարհութեան համբերեալ երևեսցի Աստուծոյ

Digitized by Google

բանն, և ոչ Հաւր զՄիածին Որդին իւր՝ յաղագս մարդկան փրկութեան տուեալ այլ և ոչ փառաց Տէր լինել խաչեցեալն։

Զի թէ զխոնարհականն մարդկային բնութիւնն ըստ ինքեան ներգործէր, իսկ Բանին դարձեալ ըստ ինքեան զԱստուածայինն գործաւղի, որպէս ոչ սրբոց հարցն մերոց՝ և ոչ կշռող բանի ճշմարիտ թուեցաւ լինել բնութեամբն՝ ընկալեալ Աստուծոյ Բանին զմարդեղութիւնն. և այսպէս իւր անձինն աբարեալ զշնչական մարմինն որպէս իւրաքանչիւրում մարդոյ առանձին իւր մարմինն։ Զի այսպէս ամենայնի միոյ դիմաց անբաժանարար վերագրեսցի. և միում էացելոյ Աստուծոյ Բանին մարմնացելոյ։ Իսկ որք յառաջ ասացելոց ընդունայնաբանութեան զհետ երթեալք, բովանդակ կոչելում տումարին համաձայնութեամբ նմա արարին արտադրեցին սահման հաւատոյ, յորում և յայտնապէս ընդդէմ հարցն բերեալք՝ եղեն բարեպաշտութեան ի բաց քարոզեալք։

Զոր ասեն մի բնութիւն գոլ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ոչ երկուս, ոչ պատկառեալք ոչ ի մերձաւորագունից լուսաւորացելոց եպիսկոպոսաց պատ.ոյ որպէս ի Կիւրղէ Աղէքսանդրացւոյն ասեմ, և յԱկակայ՝ որ ի Հայոց աշխարհին քահանայապետ եղելոյ, և ոչ յորոց Կիւրեղ Նոյն յորս առ Սեկունդոս. և Վաղերիանոս թուղթն, և ոչ միայն յաշխատասելումն, յորում վերագրեալն է. թէ մի է Քրիստոս, զյաղագս այսոյիկն արտադրէ բան. եթէ պարտ է մեզ ասելով մի բնութիւն զԱստուծոյ բանին մարմնացելոյ խոստովանել՝ և ոչ երկուս բնութիւնս ի ճշմարիտ միութիւն երկաւորութեան բան ոչ մնացելոց։ Իսկ Ակակ միւսն՝ յորում առ Անդրէաս աշխատութիւնսն յորում առ երանելին Կիւրղի թղթի, զնոյն ունի բան. և զի և այլոց բազմաց եպիսկոպոսաց են յաղագս այսոյիկ պէտք, գիտէ քո իմաստութիւնդ յառաջասացելոց զրոյն երանելոյն Տիմոթէոսի։ Բայց ուստի որք քաղկեդոնայուց ժողովն յայսոսիկ յառաջ եկին ի բանս՝ Թէոդորիտոս, և Իբաս առաջնորդք նոցա, որք Նեստորի խորհրդակիցք էին համախորհուրդք, և զուգութեան նորա լուծման յեպիսկոպոսութենէն հասեալք, ևս առաւել եթէ նորին նզովից որք մնացեալք եղեն մինչև ի Քաղկեդոնի ժողովն առ ի բազմաց մնաս. զի և յայլ փոխադրեսցեն յընտանեկան մոլորութենէն, և որպէս բազմաց հաւատարմացուցին զմեզ բանք. եթէ կենդանի եւս էր Նեստոր յաբսորն

մինչդեռ ժողովին ժողովեցելոյ, և առաքեցան վերստին ածաւղք ընա Մաղիստրիանոսք հանդերձ բազում պատուով, և ուսեալ ըպս Նեստորի պարծէր ի վերայ Աստուածածնին, որպէս թէ արդարապէս՝ որ արժանի արարեալ ընա այսմ անուանակոչութեան թէ չէր Աստուածածին Մարիամ, ասէր։ Եւ ասայ հայհոյութիւն ի բարկութեան Աստուծոյ, արդարապէս վայել է ի լեալն յորմէ յառաջ զհայհոյութիւնն երեր, քանզի լուծելոց՝ որք ի ներքուստ ունաւղայ անդամոցն երկայնացեալ բազում յատամանց արտաքս վազեաց. և վիրաւոր ի ժանտահոտ թաքախով՝ բղխեցելոյ որդանց բազմութեան, և այս աւրինակաւ թշնամանելի մատնեալ մահու՝ արդելաւ աթոռակից ժողովոյն։ Եւ այս առաւել յայտնի ի վերայ ամպարշտութեանն լինի, որպէս զի մի այնոցիկ որ զնորայն իմանան ընդդիմաբանութեան տեղի թողցի, զոր իմացեալ որք զոյդ նորա չարահաւատութեան էին՝ առ մին միայն հայեցեալք, եթէ որպէս զիւրեանց աղանդն հաստատել կարասցեն, և եկեղեցեաց սերմանել։ Խորհին այնուհետև ընա նզովել, առ ի խարէութիւն պարզամտաց, զի զիւրեանցն ի ներքս ածելով հերձուածս՝ ոչ մի ինչ վնաս կրել կարծեցեալք յիւրեանց աղանդն ի նորա երեսայն մերժմանէ. և վասն այնր բանի՝ ի նմին իսկ ժողովին՝ զայրն հայհոյեալք՝ զնորին հերձուածս հաստատեցին։

Արդ ոյ՞ց բարի խորհաւղայ ոչ ընդդրելի է ի նոցա փախչել հաղորդութենէ, թէ և հարկ լիցի ի բիւր ըմբռնիլ չարիս։ Քանզի գրեալ է. Ո՞վ մնկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւն թէ անձկութիւն. և որ զկնի այսոցիկ։ Ապա թէ որ ասիցէ յաղագս պիտոյից Եւտիքեայ աղանդոյն՝ ուրացողին զայրն ճշմարիտ մարմնանալն, այսպէս հարկաւորութեամբ շարագրելն զտուարն բազում այսպիսին պարտական է անմտութեան. քանզի զոր աւրինակ բժշկաց մանգունք՝ յորժամ հիւանդացելոց անդամոց հոգ տարցին, ոչ է հարկ զիւրեանցն վիրաւորել մարմինս՝ զի այլոց առողջութիւն տայցեն. քանզի զինչ աւգուտ է հիւանդացելումն յընկերին վիրաց, այլ պիտանացուաւ վարիլ դեղովքն աւգնականութիւն հիւանդին։ Այսպէս և ոչ սոցա հարկ էր ըմբռնիլ յաղանդից ի բաց դառնալ կամեցելոց զմիւսն, այլ որպէս կարգաւոր է ուղիղ համառաւտաւղայ զբանն ճշմարտութեան. դադարեցուցանելով զնա ի մոլորութենէն, զի լցեալ են Աստուածային զիրք և լիր և սրբոց հարցն շարագրութիւնք,

Digitized by Google

առողջ և փրկական բանիւք, յորոց է դիւրաբար զամենայն հերձուածողս յանդիմանել։ Այլ որպէս յառաջեալ ասացաք, մի եղև սոցա փոյթ և ոչ այլ ինչ զիւրեանց հերձուածսն աղանդել ժամանակ գտեալք ի հաստատութիւն այսորիկ. զի աւգնականութիւն այնորիկ որ յայնժամ առ ժողովն Քաղկեդոնի բոլոր իրաց իշխէր, որ յոյժ ջերմութեամբ յարեալ ի Նեստորի աղանդն։

Այլ վասն զի բազումք առ պատասխանատուութիւն ասացելոցս չարեացս՝ վասն գիտութիւն եղելոցս՝ առաջի արկանեն. և այլք դարձեալ գդատապարտութիւն չարեացս մինչև ի յանցուցեալսն որոշեն, և ոչ մի ինչ զինքեան ասացեալ վնաս կրել յայլոց յանցանայն, հարկ եղև զնոցա զանմտութիւնն՝ բում Աստուածսիրութեանդ՝ յաղագս անմեղացն ուղղութեան, յուցանելով նոցա յիւրեանց յանդգնութենէն զվնաս։ Քանզի նախ առաջին ոչ յանուրջս եղեն չարիքս, և ոչ սակաւուց մարդոց զի մի մոռասցի եղեալս. այլ ի մեծագունին և ի պայծառագունին բաղարին, և յայսչափաց եպիսկոպոսաց՝ գրեթէ յամենայն աշխարհաց ժողովելոց, որպէս զի մի՝ ինչ ի գործելոցն անլուր լինել հաւատարիմ եպիսկոպոսացն՝ հեծելով զեղեալն, և բբոնութեամբ յայնժամ ունաւղացն զչարիսն վերագրելոցն։ Բայց ևս և այսպէս՝ և ոչ լռութեան իսկ իրքս մատնեցելոցն ընդդէմ ասեմ, և ի նմին իսկ ի թագաւորական բաղարին, և յայլս ելեալս քաղարս ժողովրդոց պատրաստաբար միշտ զժողովն զայն նգովաւղաց, յորժամ զփոքր ինչ պատճառաց բուռն հարցեն. զի ամենայն իրաւք և զայս գիտացեալք զի և ի բաց և քաղաքավարութեան չարիք՝ և խտրութիւնք պատերազմաց անդուստ զսկիզբն առին, որպէս զի և զառաջինն զայն՝ զթագաւորականն զՀռովմայեցւոց՝ յորմէ կոչեցեալ տումարն առաքեցաւ՝ չարեաց զփորձ առնուլ։ Քանզի ի ժամանակէն յայնմանէ առանց թագաւորի և բազմաւիկ եղեալ և կցորդութիւն ընկալան, ոչինչ նուազ և այլ բաղաք չարեաց՝ որպէս զի ժամ լինել Ցեառն ձայնին ասացելոց։ Հանդերձեալ էք, ասէ, լսել պատերազմունս և համբաւս պատերազմաց. քանզի որպէս ի վերայ զգուշաւոր ամրութեան զաւրաւորի որ առ դաւաճանութիւն թշնամւոյն է յորժամ ի ներբուստ բնակաւղացն՝ մասն ինչ ի սմանէ հատցի դիւրելակ թշնամեացն առնէ զելն, և փոքր մի սորա ի վերայ ելեալք մինչև ի կատարեալ առուն։

Digitized by Google

Այսպէս են ուղիղ հաւատոյն մատնեցելոյ, որ քան զամենայն է զգուշութիւն, և մերոց անձանց և այլոց իրաց պահպանաւղ, ճանապարհ եղիտ թշնամին առ ի մեզ, և ի հասարակաց իսկ նենգութեան, և վասն այսորիկ ամենայն ուրեք խռովութիւնս ծաւալեցոյց։ Այլ զայս ևս խորհիլ պարտ է, զի Տեառն ասացեալ է անորոշաբար՝ եթէ Որ ոչ է ընդիս՝ հակառակ իմ է. հարկ է ամենայնի ընդ այնոսիկ կարգիլ, ընդ որս և հաղորդութիւն ունին թէ գիտիցէ և թէ ոչ գիտիցէ։ Քանզի որպէս որք ուղղափառութեան հաւատոյն են զլուխ, և փրկիչ ունելով իւրեանց զՏէրն, միմեանց անդամք յայտնին շաղկապաւ հաւատոյն և սրբոյ Հոգւոյ զաւրութեամբ՝ որչափք և իցեն, կամ թէ ուր և վարեցին. կամ ո՛ր չափում հասակի, այսպէս և ի վերայ առանց ուղիղ հաւատոյն՝ հարկ է ընտրել, և որպէս ի վերայ այլոց հերձուածոյն դատիմք. և մանաւանդ զի բիւրացելոց ի նոսա անզիտից զհերձուածոցն չարութիւն. կամի այսուհետև զմեզ բանն ճշմարտութեանս ստոյգ լինել և արթուն, ըստ որում յառաջագոյն ասացաք յաղագս ուղղափառ հաւատոյ։ Վասն զի չարիքն ոչ մինչև յարարաւղն հաստին՝ այլեւայլս տարեալ լինին, որք նոցա հաղորդութեանն կցորդ եղեալք։ յաղագս միաւորութեան բանին զոր պարտ է առ միմեանս ունել՝ որք ի նոյն պատարագս վայելեմք։ Զայսոսիկ գիտացեալք, մանաւանդ թէ ուսեալք յԱստուածաշունչ գրոց ի հարցն վարդապետութեանց՝ ի ձեռն Աստուծոյ մարտակցութեանն պահեսցուք զմեզ, ոչ եղեալք հաղորդ պատրանաց այսոցիկ, այլ աղաւթելով զսուրբ հաւատն՝ անրիծ պահել և անշաղախ մինչև ի գալուստն Տեառն, որում սպասեսցուք. ոչինչ մեծ կարացեալք զմերձակայսս. քանզի անցցէ ձև աշխարհիս այսորիկ, իբրև զտաղաւար լուծեալ, յորժամ ճշմարտութիւնն՝ առ միշտ հաստատուն կացեալսն մերձեսցի, յորժամ երանելի եղիցի ուղղափառութեան հաւատոյն, Որդին Աստուծոյ եկեալ երևեսցի գտցէ զնա, և ամրիծ վարուք, յոս և զբոյդ աղաւթեմք և հաւատամք, լինել Աստուածսիրութիւն՝ համբերութեամբ առ նա սիրոյն, և այսու առ Աստուած սէրն, ասէ Աստուածաբանն Յովհաննէս. զի ըստ պատուիրանաց նորա գնասցուք, քանզի բազում սուտ մարգարէք ելին յաշխարհ։ Ոմանք ուրացեալք, մարմին համագոյական առնուլ մեզ զՏեառնն՝ որպիսի լինել ասեն զԵւտիքոսի տգիտի։ Իսկ ոմանք ընութեան

երկաւորութիւն, երկուս բնութիւնս առանձինն գործով ներգործել ի Քրիստոս. ասացեալ երկաքանչիւրոցն առանձնակի և կատարելապէս ըընտանեկան գործաւղաց, որ է բաժանումն անասելի Աստուծոյ Բանին, որպիսիս լինել ասացաք զորս ի Քաղկեդոնին՝ և որք՝ յարևելս ցարդ ևս եպիսկոպոսք պնդաբար աւղնական են Նորոգաձևութեան այսպիսեացս աղանդից։ Քանզի ուսաք և որ ի Մծբին զաթոռն ունի եպիսկոպոսութեան՝ յայտնապէս զՆեստորին գովել անամաւթաբար զամպարշտութիւն զդայռելով. յորոց մեզ ի բաց կալ բովանդակ ամենայն իրաւք. և որչափ է զաւրութիւն, քանզի ասէ դիր. Ելէք ի միջոյ նոցա և մեկնեցարուք, և ի պիղծս մի՛ մերձենայք, և ես ընկալայց զձեզ։ Բայց դու ո՛վ Աստուածասէրդ՝ յայսոսիկ յառաջատեա՛, և որ ոք քեզն հաւանին, բարի խորհելով պահեա՛, և զոր անխտրաբար ամենեցուն հաղորդել յանձին ունին՝ յորում և իցեն յերկրի, քանզի նմին ամբաստանութեան և սոքա արժանիք են, որոց և յանցուցեալք են, զի կատարեալ զհամբերութեան վարձն քո ի բաց առցես։ Քանզի ինքն ասաց ի ձեռն մարգարէին. Կա՛ց մնա՛ ինձ յաւուրն յանդիմանութեան իմոյ, աղաչեա՛ զՑէր, և զմեզ զամենայն ուղղափառս՝ պահել ի յուսացեալումս յայսմիկ յերանելի հաւատիս, և հոգալ պիտանացու վարուց՝ զի արժանի լիցուք հասարակաբար ընդ սուրբս հասանել ողորմութեանն Աստուծոյ՝ սուրբ կառ ի նա պաշտաւնն պահեցեալք՝ ամէն։

Եւ զմեզ տառապեալքս որ գրեցաք զայդ, յիշելոյ արժանի արարէք, ո՞ ոք և կարդասցէ. և եթէ ոք ի մենջ կոչեսցէ պատրաստ եմք վասն նորին հաւատոյ պատասխանի առնել և եթէ իցէ յումեք ճշմարիտ նախանձ հաւատոյն Քրիստոսի՝ յայտ արարէք՝ կարդալով զթուղթդ զայդ, և մի՛ լոկ պարծեսցի Քրիստոնեայ լինել, զի ոչ բանիւք արքայութիւնն Աստուծոյ, այլ գործով։

Զամենանուանեալս, և զանպիտանս, զթուռնս և զծնունդս իմ յիշեցէք ի սուրբ աղաւնս ձեր, ո՛վ դասք ուղղափառաց։

Digitized by Google

ՍՐԲԱՍԷՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՄԱՆԱՍԷԻ, ՅՈՎՀԱՆԷՍԻ ԵՒ ՏԵԱՌՆ ԳԻԳԱՑ ԴԱՀՋԿԱՐԱՆԻ ԵՒ ՏԵԱՌՆ ՍԱՐԳԻՍԻ ԵՒ ՏԵԱՌՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ՍԱՀԱԿԱՑ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԹԱՌԱՑԷ ԽՈՆԱՐՀ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ։

Զսահման հաւատոյ՝ զոր ուղղափառ վարդապետաց Հայաստան աշխարհիս հաստատեալ էր անշարժելի պահել, և հեռանալ յամենայն հերձուածոց, մանաւանդ յաղանդոյն տարաձիր եղելոյ ուրացողին Նեստորի, և յորմէ առաւելագոյն պարտ էր փախչել և պիղծ և աղտեղի համարելը բարիատեաց չար բանսարկուն մտամոլար և պակշոտեալ պատրանաւք զիս գայթագղեցոյց, խնամութիւն առնելով ընդ աշակերտս անյիշելոյն Նեստորի։ Վասն որոյ արժանի էի տանջանաց և իսպառ կորըստեան ըստ անաւրէն գործոց իմոց, և դուք, տեարք, զղղորմութիւնն Աստուծոյ արարէք ի վերայ իմ տալով ինձ տեղի ապաշխարութեան. և ես պայման արարի առաջի վարդապետաց իմոց և տերանց Աստուածային ուխտիւ, ամենեին չհաղորդել ընդ պատուիրանապանցս և թերահաւատ ոգոին և որ ծնաւղքն անուանեալ են կնոջ իմոյ, մի՝ յաղաւթս, և մի՝ կերակուրս, և մի՝ յոյլ ինչ երթևեկութեան սէր և ընդանութիւն, այլ որպէս զմի ոք յաւտարականաց համարել։ Եւ թէ թերի գտայց միով իւիք նկովեալ եղէց յամենասուրբ Երրորդութենէն. և ի ձէնջ տերանց պատուհաս կրեցից, և հալար ստեր *) դրամ տուգան

---

*) Այսպէս յորինակին.

տացէց ի սուրբ եկեղեցի, և կնքեցիս *) դայս պայման նամակ։ Ես Սահակ Համալասպայ որդի յԱրածի գեղջէ իմ մատամբ։

Եւ վաւերական մատանի՝ Մանասէ Բասենոյ եպիսկոպոս. և Յովհաննէս Ամատունեայ եպիսկոպոս, և Գիգ Դաշտկարին. և Սարգիս Զաւրականեան, և վարդապետ Քչկան ի վերայ եդին։

*) Այսպէս յօրինակին։

Digitized by Google

ԱՅՍ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ ԳՐԵՑԱԻ Ի ՄՈՎՍԷՍԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԱՌ ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԴՈՂ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԵՂԱՊԱՀ

Փափաքելի վիճակի Քրիստոսեան հաւատոյն սիրելութեամբ ընդունաւղ, և ինձ երևեալ հայրաձև և մերձաւոր Տէր Վրթանէս. ի Մովսէսէ անարժանէ, քեզ և քոյոցդ, բազում խոնարհութեամբ երկրպագութիւն. ընդ որով և առաւել ոգչունի հարցութիւն։

Ծանուցանեմ փոքր ի շատէ Տեառն մերում զդժնդակ նեղութիւնս որ եհաս մեզ։ Դէպ եղև ինձ ի տիս տղայութեան հասանել յեպիսկոպոսարանն Ցուրտաւայ՝ որոյ եկեղեցւոյ ըստ աւրինաց աշակերտ իսկ էի. որ սնայ և ուսայ դպրութիւն հայերէն և վրացերէն, ուր և պարզևեցաւ իսկ ինձ արժանի ի Տեառնէ հասանել յաթոռ վարդապետական նոյն տան դրանն ըդեշխի։ Ոչ եթէ ըստ արժանեաց ինչ իմոց ասեմ. այլ որպէս կարծեմ ի յանդիմանութիւն ուրացաւղաց զՈրդին Աստուծոյ. քանզի յայսչափ անցելոց ժամանակաց ապա ևս հասի ի վերայ. թէ որպէս Վիրք զկանաչագեղ տերևն միայն ունէին. ո՞ստս առանց պտղոյ ունելով յինքեանս, ըստ աւրինակի սաղարթաւլից թզենւոյն՝ յորում ոչ եղիտ պտուղ Տէրն, այլ տերև միայն. ըստ որում և այսոքիկ ի հաճոյս մարդկան, զամենայն պաշտաւնն լի և կատարեալ կարծեցուցանէին ցուցանել։ Իսկ յորժամ ծանեաք զմեծարանսն հրէական սահմանի ժողովոյն Քաղկեդոնի, և զհայհոյութիւնս՝ որ յՈրդին Աստուծոյ. նա և ոչ տերևն կանաչ զոյր ի նոսա, վասն որոյ զրանն ի վեր առեալ՝ թշնամի՞ եղեաք կաթուղիկոս անուանն, և ամենայն իշխանացն և աշխարհին։ և վախճան՝ հալածեցայ. և թէպէտ վասն իմ մե-

Digitized by Google

ղացն. ի ժամուս յառաջնորդութենէ գրկեալ է աշխարհս Հայոց, հարկ համարեցայ զալ ծանուցանել սրբութեանդ ձերում զկորուստ աշխարհին, և զիմ տառապանս. և թէ ո՞րպէս վասն խստութեան ձմրայնւոյս և դնդայոյզ լինելոյ, արգելեալ եղէ ի սրբոյ Մկրտչի Յովհաննու ի վանս որ յԱրեգածու ոտին. և ընկալեալ ես ի ձեռն երանելւոյ տեառն Բարիւլասայ վանից երէցու՝ զայդ ի մանկանէդ լսէք։ Բայց առ ժամս գրեցի և ես ի հայ լեզու ցիշխանութիւնն Յուրտաւայ Եկեղեցւոյն։ Հրամայեցէք գրել և դուք զի նախանձաւոր են ուղղափառ հաւատոյ. թո՛ղ զի յաղանդոյն առաւել զգուշանան. Եւ ինձ ի ձեռն թղթոյ խրատ տո՛ւք բերել. և զողջոյն սրբութեան ձերոյ ծանուցէք։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄՈՎՍԷՍԻ. Ի ՎՐԹԱՆԻՍԷ։

Զգիրս ողջունի սրբութեան քո ընկալեալ զոհանալով զԱստուծոյ ուրախացայ. զի նախանձաւոր էք ուղղափառ հաւատոյ. և ասպնջական սուրբ հարցն։

Ճշմարիտ վարդապետութեանն որ տնկեցաւ յաշխարհս մեր ի ձեռն երից երանեալ սուրբ և բաց, և անվանգիտող նահատակին տեառն Գրիգորի, և զի յապստամբող, և ի վերջն ժամանակս հասեալ եմք, ոչինչ են զարմանք տեսանել՝ զոր սրբութիւնդ ձեր գրեաց։ Քանզի տակաւին ևս տեսանեմք զգուշակութիւն նուիրական առաքելոյն, թէ Հերձուածք լինելոց են ի ձեզ, և զայն ևս թէ Որ ընդիրքն են ի ձեզ՝ երևեսցին. զոր ճշմարտիւ սրբութիւնդ քո կատարեաց. հալածանաց և բազմապատիկ նեղութեանց համբերելով։ Եւ ի վերայ դորին եղիցի քեզ միշտ արիանալ. և անկնքելի շնորհիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և լրմտութեամբ ստանալ պարգևս՝ ի բաւական աջոյն։ Իսկ որ ի բազմացն փութայք շահաւորութիւն, ցանկալի է. և որ յընկերսիրութիւնն ընթանայք աւգուտ, տենչալի է. ըստ այնմ. թէ Ոչ խնդրեմ զանձին աւգուտ՝ այլ զբազմաց, զի ապրեսցին։ Զթուղթն զոր խնդրեցեր ի հայ լեզուն, արարի. և եթէ կամի Քրիստոս Աստուած ի մաւտէ աւուրս Կաթուղիկոս կամին նստուցանել, զհոգս ձեր շնորհիւն Քրիստոսի Աստուծոյ՝ նա հոգայ և մեք սատարեմք մինչև ի կատարումն գործոյդ ըստ կարի մերում։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԶՐՋԱԳԱՅԱԿԱՆ ՄՈՎՍԷՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ։

Ի ժամալրութիւն երկնից վեհակեալք սրբութեամբ երկրպագեալք սրբոյ Երրորդութեանն, Քրիստոսեան հաւատոյն սիրելութեամբ ընդունաւղք. ի ձեռն երեք երանելոյ անպանգիտող նահատակին տեառն սրբոյն Գրիգորի հայալեզու իշխանութեանդ Ցուրտաւայ եկեղեցւոյ, առ որս առաւել հարկ համարեցայ գրել իսկ յաւժարութեամբ լսաւղաց, առ հասարակ ամենայն պաշտաւնէից սրբոյ եկեղեցւոյ հանդերձ միաբանական ժողովրդեամբ. ի Մովսիսէ անարժանէ Ցերամբ ողջոյն. ընդ որոյ և առաւել ի խաղաղութեան պահպանեալք լիջիք, յուսով սրբոյ Երրորդութեանն։

Սիրելիք. ի սկզբանէ իսկ ընդ որս հաճեցաւ Աստուած և կոչեաց ի սպասաւորութիւն մեծի տէրութեան իւրոյ, զյոյժ քաջահաճոյսն ընդրեալ՝ իմացեալ տեսանեմք, որոյ գվերակացութիւն ժողովրդեան շնորհեաց, և կամ որոյ զմարգարէութեան շնորհն առաջի էարկ։ Ոմանք տեղի ետուն և յաւժարութեամբ լուան կոչմանն, և կէսք յապաղէին զշնորհն և բամբասէին՝ և ոչ մի որ ի նոցանէ, վասն զի կէսքն ի սպասաւորութեանն մեծութենէ զարհուրեալ երկնչէին, այլքն հաւատովքն. համարձակեալք կոչաւղին զհետ չոզան։ Վասն որոյ ոմանք հրաժարմամբն զզաւրութիւնս նշանացն պահանջեն որ յԵգիպտոսն, և այլք յաւժարութեամբն հաւատացան այլոց բերան լինել և ոմանք համարձակութեամբ ի ձեռն սերովբէին կայծակամբն սրբեցան, և այլք երկչոտութեամբն զաւետիսն պահանջեն՝ թէ յարգանդի իսկ սրբեցի։ Բայց դարձեալ տեսանեմք և այլս ոմանս կոչեցեալս և ի նոյն սպասաւորութիւն կարգեալս. զոմանս աւծեալ ի թագաւորութիւն ի հրամանէ Աստուծոյ. և զոմանս դասեալ յառաքելութեան շնորհս. և զի չետուն զինքեանս բովանդակ Հոգ-

Digitized by Google

ւղն սրբոյ, և զի ոչ յուցին զնացս արժանաւորս ըստ կամաց կոչողին, ոչ միայն չաւգտեցան ինչ ի շնորհէն, այլ զի և պատժեցան. ևս և պատժելոց են չարաչար։ Քաջայայտ է ամենեցուն զի Աստուած մեր ոմանց է լոյս. բայց ոմանց հուր, ըստ իւրաքանչիւր նիւթոյ որպիսութեանն. ապա ուրեմն զստացուած զոր տայ ումեք Տէր յաւանդ, պարտ է երկիւղիւ զգուշանալ և պահել և առաւել ևս աճեցուցանել, այլ ոչ ևս կորուսանել. զի պարզեալ Աստուծոյ առանց համարողական հանդիսի ոչ ունին դիւրանալ, այլ որպէս տուեալն լինի առատութեամբ ըստ նմին և հատուցանելի է աճելութեամբ. մանաւանդ զառաջնորդութեան ստացուած զաւրինաւոր, որոյ որքան է բարձրութիւն՝ նոյնքան և վտանգն։

Որ ոք չանայցէ կատարել զհրամայեալսն բովանդակ, որ եպիսկոպոսաց և երիցանց կարգեցան, աշխոյժ և ողջախոհս լինելն և ուսուցիչս անբաղդաղայս յամենայնի. ծախելով զմարմինն ի հոգին յաւելուլ, զդայլսն հալածելով ի գահավիժութենէ զփարախն պահել, մերձենալ առ Աստուած և ընծայել զայլս։ Արդ վասն զի և մեզ զդիպուած աշտիճանին. թէպէտ և կարգ մի զհրաժարելն ուսուցանէր, և առաւել ևս երկնչոտանալ ընդ երկնչոտսն. զի թէ յարժանաւորաց իսկ ոք լեալք, և յոյժ իսկ ի քաջահաճոյիցն, սակայն ի վերագոյն էր քան զմեր տկար ընութիւնս. միջնորդ ընդ Աստուած և ընդ մարդիկ լինել. զմտաւածելով թէ զուցէ վրիպեալք ինչ պատուհասիցիմք, թող թէ և յանարժանից ևս։ Բայց դարձեալ միւս ևս կարգն. զշնաղանդելն ուսուցանէր, զի որպէս ի հայրենեաց իմն ի սննդեան տեղւոյ կոչեցեալ եղեալք հաւատովք Աստուծոյ նախախնամութեանն զշնորհս վարկանելով, յաղագս որոյ տ՛եղի տուեալ յաւժարութեամբ լուաք կոչմանն. վասն որոյ և յանկարծակի իմն ի վերայ հասեալք հայհոյութեան ինչ զոր յՈրդին Աստուծոյ էր հաստատեալ շնորհակորուսացն, առ որս ծանուցեալ զվէրս անհընարինս. և չիշխեցեալ ընկենուլ ընդ լռութեամբ զախտն զոր և շարժեցաք իսկ։ Վասն որոյ և թշնամի եղեալք ամենեցուն, և որչափ յանդիմանեցաք, առաւել ևս սպառնացեալ եղեալք, ի քահանայապետից և յիշխանաց, մինչև հալածելն Ինձ այսպէս թուի թէ զոր աւրինակ ընդ դատապարտութեամբ անկեալ լինէի թէ զիտէի զախտն և ծածկէի, նոյնպէս և չարաչար բարկութեան էի արժանի, որ լսէն և անփոյթ առնէ, որպէս և ա-

Digitized by Google

բարին իսկ անփոյթ. որք զառաջնորդել ուրուք չունին յանձին, և ինքեան և ոչ զդիւրազիտելին անգամ կարեն առնուլ ի միտ, թէ ԵՐՐ և կամ յումմէ դերեալք եղեալ իցեն ի գեղեցիկ Հայրենի իւրեանց ժառանգութենէն, այլ և վարիցեն ևս ընդ ինքեանս ի գերութեան և ցհաւտն, որ պարտէին կենաց։ Ապա ուրեմն յիրաւի լուիցեն զսպառնացեալսն Աստուծոյ, զորս և աստուածանուագն Երեմիայիւ. Քահանայք, ասէ, ոչ ասացին, ուր է Տէր. և հովիւք ամպարշտեցան յինէն, և ցրուեցին զոչխար արաւտի իմոյ։ Եւ ապա զի՞նչ. Ցաղագս այդորիկ, այսպէս ասէ Տէր. Ո՞վ հովիւք, որ կորուսէք և ցրեցէք զոչխարս արաւտի իմոյ, արդ ահաւասիկ ես վրէժ առից ի ձէնջ, զի լցան աւուրք ձեր ի հողհողումն *)։ Արդ զի զսիրելի զՄիածին Որդին Աստուծոյ զսպանաւղայն ախտացան, յայտ է. թէ ըստ աւրինակի նոցա և ոչ ի մարմնաւոր պատուհասէ վրիպելոց են։ Եւ նոքա զինչ պատուհաս կրեցին արդեաւք. սովոյն դեղ արարին կանայք նոցա զսիրելի որդիս իւրեանց՝ զորս խորովէին և ուտէին ի պաշարելն Տիտոսի զԵրուսաղէմ։ Զորս Զբիւր՝ սովոյն սատակեաց, ՃԾ. և Ի. բիւր սրով կոտորեաց, Ծ. բիւր ի գերութեան վարեաց. և պատճառք այսչափ բազմութեան ի քաղաքին գտանելոյ՝ գատիկ տաւնին էր. յորում ամենայն ազգն ի մի վայր գումարեալ էին և իրրև ի բանդի արգելան. զի յորում աւուր նենգեցին զկեանսն իւրեանց զՔրիստոս Աստուած, ի նմին աւուր զհատուցումն ընկալան։ Եւ այժմ որք զնոցայն ախտանան՝ յայտ է թէ ընդ նոսին և պատժելոց են՝ և զաստիս և զանտին։

Արդ զի ընդ որս մի՛ և մեզ լիցի լսել զահագին սպառնալիսն Աստուծոյ, և կրել կանոնորմ զպատուհաս զայն, հարկ համարեցայ ի ձեռն զգուշացուցիչ թղթոյս խաւսել յականջս Աստուածսիրութեանդ ձերոյ. զգոյշ և աշխոյժ լինել ի հաղորդութենէ տէրուրացաց և տիրասպանաց մեծարողաց ժողովոյն Քաղկեդոնի։ Քանզի առաջնորդք ժողովոյն՝ աղանդակիցք Նեստորի էին, և հալածեալք յեկեղեցւոյ, որոց սատար գտեալ զթագաւորն Մարկիանոս և զկին նորին Պաւղքերիանէ. սոքա քինախնդիրք եղեալ Նեստորի, յեղեալ ի բաց տապալեցին զառաջին սահմանս զերանելի վարդապետացն. և ոչ մնաց խոստովանութիւն առաքելոցն, որք ի սկզբանէ ականատեսք և սպա-

*) Այսպէս յորինակին.

սաւորք եղեն բանին, և այլ սահման հաստատեցին, այլաձև քան զնեստորին. և նոյնամիտ որպէս զնորին, զի դիւրաւ կորուսանել մարթասցեն զպարզամիտս։ Զորոց զկեղծաւորութիւն, նոցին իսկ գրեալքն յայտ առնեն. զի յետ հրաշալի խառնմանն և ճշմարիտ միաւորութեանն, երկուս բնութիւնս սահմանեցին ի վերայ միոյ Քրիստոսի, բաժանեալս և անչատեալս ի միմեանց. և վրիպեցուցանելով, մերթ ասեն մի՞ է և միադէմ. և նոյն Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ և Տէր և Միածին։ Եւ անդրէն դարձեալ ասեն, և յերկուց բնութեանցն անխառնելի է, և որք խառնել համարին՝ ասեն զերկուս բնութիւնսն Քրիստոսի այսինքն զմարդկութիւն իւր բովանդակ, ընդ իւրում Աստուածութեանն, զնոսա նովեմք ասեն, վասն որոյ իսկ և յերկուս դէմս և յերկուս գաւրութիւնս բաժանեն զբանս գրոց սրբոց. և որ խոնարհագոյնք ասացեալ՝ միում բնութեանն առանձինն որոշեն. և զբարձրագոյնսն՝ միւս ևս բնութեանն առանձին զատուցանեն։

Այսպէս՝ զասելն, թէ Ես և Հայր իմ մի եմք. և ի վերայ ծովուն զգնալն, զփորձչին ցյաղթելն, զխեղսն ողջացուցանելն, զբաղցեալսն կերակրելն, զչորեքաւրեայ զմեռեալն յարուցանելն, և որ ինչ նման է դորին, միայնոյ՝ և մերկի Աստուածային բնութեանն առանձին զատուցանեն։ Իսկ ասելն, թէ Հայր իմ մեծ է քան զիս. և զվաստակելն, և զննջելն, զբաղցնուելն, և զծարաւելն, և զահագին զչարչարանսն, և զկամաւոր մահն, մարդկային բնութեանս միայնոյ առանձին որոշեն, և իբրև սոսկի մարդոյ, զամենայն տկարութեամբ կրել վարկանին՝ Բանին զնա վարելով յայն։ Եւ այսպիսի կեղծաւորութեամբ՝ բնութեանցն բաժանմամբ, զհայհոյութիւն առաջնոցն սահմանեցին։ Զի թէ բնութիւնք երկուք անհաղորդելիք և անխառնք են ի միմեանց՝ որպէս ասեն, յայտ է թէ և դէմք երկուք. ապա և որդիք երկուք։ Եւ արդ զի ևս ըստ առաջին կեղծաւորութեամբ մեղմխանայն նոցա վեր ի վայր ընթացուցանեմք զբանս. յորում ժամանակի գետնազողի, և սողեցուցանելով մուծանէին զհերձուածն, վասն զի և աշխարհ ծաղկեալ ևս էր տակաւին սրբով հաւատովն։ Իսկ այժմ՝ առաւել ևս յայտնապէս գրեալ տեսանեմք զաղանդն Նեստորի, յևս առաւել նորաձև գրեալս նոցա, զոր ես տեսի և կարդացի նոցին իսկ գրով, որ թարգմանի ի մեր լեզուս այսպէս։ Ասէ, Զոյ աւրինակ այնիւ հիւսան, զը-

Digitized by Google

տնալ նիւթ ինչ՝ առնէ զնա անաւթ պատուական, այնպէս Աստուածութեանն գտեալ զարգանդ կուսին սուրբ և ամբիծ, արար ի նմա ասէ, զմարդն զոր զգեցաւ և ծնաւ ի կուսէն։ Եւ դարձեալ, զի՛ զարմանաս, ասէ. Եվ այր դու, զի՛ զոր աւրինակ զկինն ի կողից առնն ստեղծ, սոյնպէս և զայրն յարգանդի կուսին արար ասէ, զոր զգեցաւ և ծնաւ ի կնոջէն։ Եւ յայլում տեղւոջ ասէ, և ոչ ամաւթ համարեցաւ զի որ արարեալ զմարդն՝ զգենուլ և ծնանել ի կուսէն. և զոր միանգամ երանելի վարդապետացն զմիաղթս տեսի և կարդացի՝ զոր յաղագս հրաշալի խառնմանն և անճառ միութեանն էր ասացեալ, զամենայնն յայսպիսի հայհոյութիւնս փոփոխեալ տեսի։

Իսկ զևս առաւել հրէական սարսափելի հայհոյութիւնս նոցա, վիճելովն մերկացուցեալ զարմանալաք. թէ ոչպէս ամենևիմբ իսկ արտաքոյ Երրորդութեանն, այլ և եթ զմն զքաչեալն Քրիստոս, հրէաբար հայհոյէին։ Արդ զայս ամենայն գիտացեալ, սիրելիք, զճանապարհ արքունի գնացուք. մի՛ յաջ խոտորեցուք, և մի՛ յահեակ։ Զամենայն ծառոյ դրախտի Աստուծոյ կերիցուք, այսինքն սուր և սուրբ աչուք մտացն հայել յամենայն ի սուրբ եկեղեցական գրոց և յուղղափառ վարդապետաց ճաշակեացուք զքանն Աստուծոյ և կեցցուք։ Իսկ որ աւտարաւտին բերեն ի մէջ, ի նոցանէն ասաց Աստուած՝ ոչ ճաշակել մեզ, զի մի՛ մեռցուք։ Քանզի չաւատք են ամենայն բարեաց գործոց գլխաւորութիւն. և առանց ուղիղ հաւատոյ՝ անհընար է հաճոյ լինել Աստուծոյ։ Պահեցին նոքա սրբութեամբ, և մի՛ ոք պղծեսցէ զնոսա. քանզի հիմն սրբութեան հաւատոց այժմ, այլ ոք ոչ կարէ դնել քան զեղեալն որ է Յիսուս Քրիստոս, մի Յերրորդութենէն. մեծատունն՝ վասն մեր աղքատացեալն, որով ամենայնքն ըստ Պաւղոսի. զորմէ և Յովհաննէսն ասէ. թէ Որ էրն ի սկզբանէ Բանն կենաց՝ առանց որոյ եղեն և ոչինչ. զնա՝ աչք իսկ մեր տեսին, ասէ. և ձեռք մեր շաւշափեցին։ Արդ՝ թէ սոսկ մարդ է ծնեալն ի կուսէն ըստ բանին նոցա, յորմէ մեծութենէ արդեաւք աղքատացաւ, և կամ ամենայնքն նովաւ զիարդ եղեն, և թէ ոչ բնութեամբ էր խառնեալ և միացուցեալ Աստուածն Բանի զբովանդակ մարդկութիւն իւր. այսինքն մարմին և հոգի և միտս և զինչ ի մարդ է ընդ իւրում Աստուածութեանն որպէս գիտէ միայն Երրորդութիւնն զանտեսանելի զբանն. զի՛ արդ Արդեաւք տեսանէին. և կամ զանեւևոյթն զի՛ արդ

շաւշափէին։ Այլ զի յաղագս պյսպիսեացս իսկ որք ասէին. թէ ոչ եկն Տէրն մարմնով, փութով պնդութեամբ չհամառաւտ գրէ առաքեալն և աւետարանիչն ասելով՝ թէ զԻ սկզբանէ Բանն՝ առանց որոյ եղեն և ոչինչ. աչք մեր իսկ տեսին, ասէ, և ձեռք մեր շաւշափեցին, և որ ինչ այլ պյսպիսիք։

Արդ մեք, սիրելիք, պարտական զթով շարժեցեալք ի վերայ եղբայրական կորստեանն վախճան, անձանց ցգուշացուք որպէս և պարտ է, և ի վերայ նոցա աղաւթս արասցուք որպէս արժան է. դառնալ նոցա ի վրիպեալ մտացն և գալ յուղեղ հաւատս, որ տուեալ են ի սկզբանէ յեկեղեցիս, յաստուածատես առաքելոցն, և յերանելի վարդապետացն։ Եւ զայս այսչափ փոքր ի շատէ հարկ համարեցաք գրել ձեզ, և զմեզանս յանձանց ի բաց թափել առաջի Աստուծոյ և մարդկան։ Եւ ետու բերել զպատճառս ժողովոցն, և այլ հաւասարս հաւատոց զերանելի վարդապետացն, և զընդդիմակաց հերձուածողացն, զյոլովագոյնն պտի տեղեկացիք։ Եւ որք յետ այսր պատուիրանի անփոյթ առնելով անխրատարար վարեսցի ի հաղորդութիւն աղանդին, ինքն բարձցէ զդատաստանն ի Ջեառնէ և զասդիս և զանդին՝ որք և իցէ, և մեր անպարտ լիցուք։

Digitized by Google

ՊԱՏՃԱՌՔ Դ. ԺՈՂՈՎՈՅՆ ԵՐԿԱՐՆԱԿԱՑՆ, ՄՈՎՍԷՍԻ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Արդ յետ փոխելոյ յանարատ և յաստուածահաճոյ կենաց պանդխտութեանն երանելեացն Թէոդոսի թագաւորի բարեպաշտի. և Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրի. և վասն զի որդի ոչ զոյր Թէոդոսի, թագաւորութիւնն քեռն անկ էր որ զկուսութիւնն պահել կեղծաւորեալ, և ապա կին լեալ ումեմն Մարկիանոս անուն, զորմէ ասեն աղանդակից Նեստորի։ Եւ սորա թագաւորեցելոյ, նախանձ ունելով յաղագս Նեստորի, հրամայէ ժողով լինել ի Քաղկեդոնի. ՈԼ. և Զ. եպիսկոպոսաց. և իբրև հրամանն յանգ ելանէր և ժողովն լինէր. եպիսկոպոս էր ի Հռոմմ՝ Լևոն, յԱնտիոք՝ Մաքսիմու, ի Կոստանդնուպալիս՝ Անատոլի, յԵրուսաղէմ՝ Յուբենաղ. յԱղեքսանդրիա՝ Դիոսկուրոս։ Զայս երանելիս Դիոսկորոս՝ ամպարիշտն և անհաւանք ճշմարիտ հաւատոյ. Ո և Լ քն զրպարտեցին խորհրդակից Եւտիքի համբաւելով. թէ վասն սոցին իսկ՝ եղև ժողովն. զորոյ ստութիւն՝ անսուտ յիշատակարանք մեր յանդիմանեն։ Զի Եւտիքէս՝ լեալ մենակն ի Կոստանդնուպալիս, և Փղարիանոս պաղատան եպիսկոպոս, զորմէ ասէին սիրելի քեռ թագաւորին Թէոդոսի. և վիճեալ ընդ միմեանս առաջի Թէոդոսի, հրամայէ ժողով լինել երկրորդ անգամ յԵփեսոս. և քննեալ և ոչ գտեալ յուղղութեան՝ զերկուսին մերժեն և արտաքսեն յեկեղեցւոյ։ Այլ խորհուրդ ամպարիշտն Մարկիանոսի զժողովն առնել ի Քաղկեդոնի. վասն զՆիկիական սահմանադրութիւնն ի սուրբ նախահարցն փոխելոյ էր, և ոչ յաղագս երանելոյն Դիոսկուրոսի։

Արդ Թէոդորիտոս Կիւրոս քաղաքի եղեալ եպիսկոպոս հաստատեալ Նեստորի՝ զոր լուծեալ յեպիսկոպոսութենէ յԵփեսոսի ժողովին, զսա հրամանաւ ամպարշտին Մարկիանոսի ընկալեալ եղև յառաջնորդութիւն Քաղկեդոնի ժողովին։ Եւ Յուբենաղ՝ որ

Digitized by Google

նախ ի յԵփեսոսի ժողովին ընդ ուղղափառսն նշովեաց զԹէոդորիտոս. սորա թագաւորին և թագուհւոյն երեսաց ակն առեալ հնազանդեցան։ Եւ Նեստոր դեռևս կենդանի էր յաքսորն, և առաքեցին ածել զՆեստոր ի ժողովն։ Եւ ի հասանել հրովարտակին, ժամանեալ բարկութեանն Աստուծոյ՝ սատակեաց զՆեստոր։ Եւ նոցա իմացեալ զիրաւական վճիռն, զսուրբ կոյսն Աստուածածին խոստովանին կեղծաւորութեամբ. և սկիզբն արարեալ կանխապատրաստ եղելոյ՝ մահացան խորհրդոյն ի տումարէն Լևոնի։ Իսկ բաղումք յուղղափառացն որ յԵփեսոսի ժողովին, միաբան ասեն. Այդ՝ ի Նեստորի խմորոյն է։ Եւ անաւրէն վիրազն Մարկիանոս՝ ի սաստիկ յաստմանէ շարժեալ՝ հրամայեաց խոշտանգել զնոսա. և նոքա ոմանք յերկիւղէ, և ոմանք աչառութեամբ՝ հաւանեցան հրէական սահմանի ժողովոյն Քաղկեդոնի։ Բայց երանելին Դիոսկուրոս՝ եպիսկոպոս Աղեքսանդրի, բազում չարչարանս կրեալ ի Մարկիանոսէ, աքսորեալ լինէր, որ և խոստովանող Քրիստոսի կոչեցաւ, զի մեռանել լաւ համարեցաւ քան թէ կալ անաւրէնութեամբ ի ժողովոյն Քաղկեդոնի։ Իսկ նոցա նզովեալ կերանելին Դիոսկուրոս հերձուածող անուանելով։

Եւ Թէոդորիտոս առեալ զգրեալսն հրամանաւ թագաւորին, հասանէ յԱնտիոք, ի դուրս խցկանն հռչակաւոր և երանելոյն Սիմէոնի. և իսկոյն տեղեկութիւն տուեալ, թէ ոմն ի թագաւորէն եկեալ է և խնդրէ տեսանել զքեզ. և նորա յառաջագոյն հրատ լուցեալ՝ հրամայէ ի ներքս թողուլ։ Եւ Թէոդորիտոս մտեալ ի ներքս, բազում թախանձանս մատուցանէր, և աղաչէր ձեռնարկ առնել և հաւանել անաւրէն սահմանադրութեանն։ Եւ նորա յինքն առեալ վաղվաղակի զգրեալսն՝ ի վառեալ հրատն ընկենոյր ասելով. Նզովեալ Մարկիանոս, և նզովեալ ժողովն Քաղկեդոնի, և նզովեալ որք հաւանին այնմ սահմանադրութեանն։ Եւ նորա դարձեալ առ թագաւորն պատմեաց զոր ինչ արար երանելին Սիմէոն։ Եւ ապա յայնժամ եկեղեցիք ամենայն արեամբ շաղախեալ լինէին. և մետաղք և կղչիք կապանաւորաւք լցեալ, զի ուղղափառքն չարչարիլ լաւ համարեցան քան հնազանդել և հաւանել երկարնակ սահմանադրութեանն ժողովոյն Քաղկեդոնի. և բազում խռովութիւնք ի ժողովրդականաց լեալ, յաղագս չընդունելոյ զՀերձուածող զեպիսկոպոսունն, և թշնամանելով զթագաւորն Մարկիանոս։ Եւ էր աղմուկ մեծ և ամբոխ յոյժ

յաշխարհին Հռոմոյ. զի մանկունք եկեղեցւոյ վանեալ լինէին աւարառութեամբ և պէս պէս տանջանաւք եւ վարդապետք սուրբք հալածեալք յեկեղեցւոյ. նոյնպէս և յաստուածակերտ քաղաքին Երուսաղէմ եկեալ Յուրնաղ արքունի զաւրականաւք՝ վեր ի վայր տապալեաց զաստուածային և զառաքելական հաւատն, և զկարգ եկեղեցւոյ սրբոյ, և հաստատեաց զնեստորական հայհոյութիւն ժողովոյն Քաղկեդոնի։ Եւ էր սուգ տրտմութեան մեծի սուրբ քաղաքին զի ելից արեամբ ծայր ի ծայր իրրև յաւուրսն Մանասէի, զի ոչ կամեցան ճշմարիտքն ընդունել զառասպելարան հայհոյութիւն տումարին Լևոնի։ Նոյնպէս և Աղեքսանդրացւոց քաղաքն դժնդակ նեղութեամբ բազում կոտորածս ընկալաւ յամպարիշտն Մարկիանոսէ, յաղագս չընդունելոյ զեպիսկոպոսն Պրոտորէ, զի ի սկզբանէ իսկ ուղղափառք էին և հնազանդեցան աղծապիղծ կրաւնիցն և ատելի կարգաց Ո և Լ-իցն եղելոց։

Արդ զայս գիտասցէ ձեր սիրելութիւնդ. զի ողորմելին Նեստոր, թէպէտ և ամպարշտեաց, այլ ինքն զդժոխսն ժառանգեցուցանել, փոխումն որոմանն ոչ կարացաւ աւանդել աշխարհի. այլ ժողովեալքն ի Քաղկեդոնի զնեստորին և զյոլովից այլոց հերձուած զաղտագողի և սողեցուցանելով մուծին, և այսու պատրեցին զպարզամիտս։ Զի Նեստորն ամպարիշտ զԱստուածածինն ձայն՝ ի վերայ կուսին ուրացաւ. իսկ նոքա խոստովանեցին, և այսու մոլորեցուցին զրաղումս, որք ոչ կարէին գիտել զմիտս գրոց սրբոց. զի թէպէտ և ձայնքն որիշ են, այլ միտքն զնոյն բերեն զնեստորին։ Զի Նեստոր ամպարիշտ՝ մարդ սոսկ ասաց զՔրիստոս, շնորհաւք արժանաւորեալ տաճար բանին Աստուծոյ լինել, և ի Քաղկեդոնի ժողովեալքն, նոյնպէս երկուս անձնաւորութիւնս և երկուս դէմս համբաւեն զկնի միաւորութեանն. և ասեն, այլ էր որ ի Հաւրէ, և այլ որ ի Մարիամայ. այլ էր որ վաստակեցայր *) և քաղցնոյր, և այլ էր որ զՀանգիստն խոստանայր և զքաղցեալսն կերակրէր. այլ էր որ զսքանչելիսն առնէր, և այլ էր որ չարչարեցաւն։

Արդ Հրէայքն ոչ հաւատալով Աստուածութեանն՝ ի խաչ հանին. և նոքա երկուս բնութիւնս ուսուցանելով՝ սոսկ մարդասեն զխաչելեալն և յաղագս հաւատացուցանելոյ զամպարշտու-

*) Ա. յոգնէս յորինակին.

թիւնն՝ զնեստոր նզովեն ժառանգս սատանայի անուանելովք, զորոց կեղծաւորութիւն, նոցին իսկ գրեալքն յայտ առնեն։ Մերթ ասեն մի է և՝միադէմ։ և նոյն Քրիստոսն Որդի Աստուծոյ և Տէր Միածին. և անդրէն դարձեալ ասեն յերկուց բնութեանց անխառնելի, և որ խառնեալն համարին ասեն զերկուս բնութիւնսն Քրիստոսի. զմարդկութիւնն իւր բովանդակ ընդ իւրում Աստուածութեանն, զնոսա նզովեմք ասեն։ Արդ եթէ երկու բնութիւնքն անխառնք և անփոփոխելիք են, որպէս թէ երբեմն մարդ, և երբեմն Աստուած, ապա չորրորդութիւն դաւանի։ Այլ սուրբ Հարքն ՃԺ և Ը, որ ի Նիկիա հաւատացեալ ասացին, ի մի Տէր Յիսուս Քրիստոս, որպէս ուսանն ճշմարտութեամբ ի սուրբ առաքելոցն քարոզութենէ. և զՈրդի մի յԵրրորդութենէն՝ իջեալ և մարմնացեալ. մի լեալ քարոզեցին։ Եւ ասեն այսպէս. թէ Մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Եւ դարձեալ թէ Յորոց և Քրիստոս, որ է ի վերայ ամենեցուն Աստուած աւրհնեալ յաւիտեանս ամէն։ Եւ ի կաթուղիկէին ասէ. Սա է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք. Եւ ո՛չ ուրեք ասացին երկուս բնութիւնս. և որ ասացեալն է յաղագս ճշմարիտ մարդանալոյն՝ թէ մարդով եղև յարութիւն մեռելոց. կամ թէ երկրորդ մարդն Տէր յերկնից. ո՛չ եթէ զբնութեանց ինչ ճառեաց, այլ զնոսա կշտամբէ, որք ասեն եթէ ոչ էառ ճշմարտութեամբ մարմին և հոգի ի սուրբ կուսէն և Աստուածածնէն։ Սոյնպէս և յաղագս ամենակեցոյց խաչելութեանն՝ զի՞արդ է զերկուանալ. որ և նախ վերինք իսկ եղեն քարոզ. զՅիսուս խնդրէք զնալովքեցի զխաչելեալն. և Պաւղոս. Ոչ եթէ ի մտի եդի գիտել ինչ ձեզ, բայց միայն զՅիսուս Քրիստոս. և զնոյն ի խաչ ելեալ։ Եւ Պետրոս, Քրիստոսի չարչարելն մարմնով վասն մեր. և, Մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն. և դարձեալ ասէ. ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք։ Ապա ապականելի էր, և ընդունայն այն քարոզութիւն առաքելոցն. զի նոքա Աստուած ճշմարիտ, և Տէր փառաց. և կեանս յաւիտենականս, և զնոյն ի խաչ ելեալ քարոզեցին։ Եւ որք իշխեցին ասել երրեք ապականացու. նզովեն զնոսա սուրբ Հարքն և ասեն այսպէս. Որ ասէ զմահն Տեառն կենդանացուցիչ և զչարչարանսն փրկարար՝ ապականացու. իբրև սոսկի մարդոյ, և ոչ առաւել խոստովանեսցի, եթէ չարչարանաւքն՝ անչարչարելի. և մահուամբն [անմահ որպէս Աստուած՝ որում ամենայն ինչ

ղիւրին է. եղիցի նպովեալ. Զի ամպարշտութիւն մեծ է զԱստուծոյ մարդկապէս կարծել. թէ ուրեք է՞ և ուրեք ոչ Այլ ճշմարիտ հաւատ այս է. Իջեալն ի յերկնից և բնակեալ ի յարգանդի կուսին սրբոյ. և ոչ մնկնեալ ի ծոցոյ Հաւր. շրջեալ ընդ մարդկան յերկրի. և ի կուարթնոց պաշտեալ ի յերկինս. ի վերայ խաչին տարածեալ, և ոչ հեռացեալ ի Հաւրէ. ճշմարտութեամբ և ոչ կարծեաւք։ Այսպէս բարոյեցաւ ի սուրբ առաքելոցն սփռեալք ի սուրբ քաղաքէն։ Ըստ այնմ, Աւրէնք ի Սիոնէ ելցեն, և բան Տեառն յԵրուսաղեմէ։ Եւ ճշմարտապատում սուրբն Գրիգորիոս վնոյայն ուսոյց մեզ, և ոչ եթէ յանձնէ ինչ. Նոյնպէս սուրբ ամենագով հարքն ժողովեալք ի սուրբ Հոգւոյն՝ որոց դահաղլուխ էր անսրեւութեամբ ինքն Քրիստոս, ըստ այնմ, Ժողովելոց յանուն իմ՝ անդ եմ ես ի մէջ նոցա. այսպէս հաստատեցին։

Արդ՝ պահեսցի սա անարատութեամբ, և մի՝ որ պղծեսցէ նորաձայնութեամբ իրրև պաւցտող ժողովն Քաղկեդոնի։ Քանզի հարկ է զկնի ընթեռնլոյ սուրբ աւետարանին՝ յամենայն եկեղեցիս Քրիստոսի հաւատն որ ի Նիկիա աւանդեցաւ. առեալ պատուէր ասել զեղուն և պատարուն, և ոչ յաճախել և ոչ պակասեցուցանել այլ սոսկալի նզովիւք իրրև ցանկով ինչ փակեալ Նոյնպէսև երիցս սրբասացութեամբ՝ որ խաչեցար հրամայեցին մեզ ասել անդանդաղ յարձակ աւուրս առաւաւտու և երեկորի. իսկ ի յարութեանն առաւաւտու և երեք ժամու. և երեկորի. երիցս սուրբ Աստուած. սուրբ և հզաւր, սուրբ և անմահ՝ որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ։ Իսկ բաղումք հանդերձ բնակչաւք սրբոյ քաղաքին՝ ոչ կացին ի Նիկիական սահմանին, և ուրացան զհրաշալի խառնումն և զանճառ միաւորութիւնն, և զամենակեցոյց խաչելութիւնն. իրրև սոսկի մարդոյ հաւրաւեցին. և վասն այնորիկ ոչ ի հաւատ ինչ նզովեն, և ոչ ի սրբասացութեանն՝ որ խաչեցար ասեն. և այսու հաւանեցուցանեն զպարզամիտս, թէ խաչեցարն ասել՝ սուրբ Երրորդութիւնն խաչել է. որ մի լիցի կարծել այլ որպէս տնաւրէնութիւնն Որդւոյ միայն առանձին է, նոյնպէս և խաչելութիւնն. և վասն զի Աստուած է ճշմարիտ որ խաչեցաւն, պարտ է ի հարկէ խոստովանել ընդ-դէմ ուրայողացն, թէ Աստուած ես. և հզաւր ես. և անմահ ես. և վասն մեր խաչեցա՞ր.՝ ողորմեա՞ մեզ։ Եւ ոչ սոսկ մարդ էր։

Արդ՝ զսուրբ և զպարկեշտ հաւատն սոսկալի Նղովիւք և զերիս սրբասացութիւնսն որ խաչեցարն ասելով՝ իբրև դըժնդակ ինչ ցանկով փակեալ՝ և մի ոք խրամատեսցէ. ապա թէ ոչ գիրն բողոք է. Որ քակէ, ասէ, զցանկ՝ հարցէ զնա աւձ. այսինքն զամուր պարիսպ հաւատոյն. և Որ գլէ զվէմ, այսինքն զհաստատուն հիմն ճշմարիտ խոստովանութեան, ի վերայ անձին իւրոյ գլեսցէ։ Եւ զայս տեղեկացեալք գիտասջիք. զի բազում գիրք մեծարանաց անաւրէն ժողովոյն հասեալ են ի տեղիս տեղիս, ուղղափառ ուսուցանելով զչարափառութիւնն Մարկիանոսի և ժողովոյն Քաղկեդոնի. և մեք ոչ միայն ի խմորոյն Նեստորի ունիմք ի սուրբ հարցն պատուէր հեռանալ և նզովել, այլ առաւելի տիեզերակործան ժողովոյն Քաղկեդոնի, և ի ջնջեալ տումարէն Լևոնչ, և ընդ ընդունաւղսն նոցա ոչ հաղորդել ըստ պատուիրանի առաքելոյն և աւետարանչի։ Եթէ ոք զայդ առ ձեզ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի՛ ընդունիցիք զնա ի տուն. և մի՛ ողջոյն տայցէք նմա, և որ ասիցէ նմա ողջո՞յն, կցորդ լիցի չար գործոց նորա։ Եւ երանելին Պաւղոս, Աղաչեմ զձեզ գիտել զայնպիսիսն որ հերձուածս և գայթակղութիւնս առնիցեն արտաքոյ վարդապետութեանն, զոր դուքն ուսարուք, և ի նոցանէն խորշեցարուք։ Եւ դարձեալ՝ Յիսուս Քրիստոս երեկ և այսաւր՝ նոյն և յաւիտեանս. յուսմունս պէսպէսս և աւտարաձայնս՝ մի՛ դանդաչէք։

Արդ՝ որպէս առաք պատուէր ի սուրբ հարցն ոչ հաղորդել անխտիր ընդ ամպարիշտս, և ոչ միաբանել և զուգել զտաւն մեծի զատկին ընդ հրէայսն, և ընդ անուանեալ Կաթարոսսն, նոյնպէս և յաղագս միաւորական տաւնին Յայտնութեան՝ որ է հրաշափառ ամենասուրբ ծնունդն՝ յունուարի ամսոյ ի վեցն կատարել. զոր կանոնեալ հին ընթերցուածոց։ Վասն զի մի աւր դիպեցաւ Ծնունդն և Մկրտութիւն։ Եւ ոչ հաւասարել ընդ նոսա, և ոչ ընդ մեզ հաղորդել հաւատով, և ոչ ապականել զեռրհուրդ եւթն շաբաթուցն պահոց. այլ ընուլ զսուրբ քառասներորդսն, հինգաւրեայ յառաջաւոր պահովքն։ Ահիւ և տրտմութեամբ և սրբութեամբ։ տանել ի գլուխ զսուրբ քառասներորդացն պահս, և ոչ վայրապար յաւուրս պահոցն քարոզել աւետարան և մատուցանել պատարագ հրամայեցին. թէև յիշատակ ուրուք դիպեսցի, բայց ի շաբաթու և ի կիւրակէի։ Եւ սահմանեցին այսպէս. Եթէ ոք կատարեալ հասակաւ, առողջ մարմնով, քրիստոնեայ անուն ի վերայ, և զքառասնաւրեայ պահսն ի

Digitized by Google

գլուխ ոչ տանիցի, նղովեալ լիցի։ Եւ եթէ յաւագ շարաթուն ի հինգշաբաթին աւր քան զՀաղորդեալ սուրբ խորհրդեան՝ բերան որ լուծցէ, նղովեալ լիցի և ամենայն պահք քառասներորդացն ընդունայն լիցին։

Արդ մի պատրեսցուք հոչակաւոր և տենչալի անուամբ սրբոյ քաղաքին, և մի պաշարեսցուք աստուածապարգև շնորհելոյ աթոռոց սուրբ առաքելոցն. զի որպէս յաթոռն Մովսէսի նստան քահանայապետքն և դպիրք, և փոխանակ մեծի հրաբանեացն զտուիչ աթոռոցն ի խաչ հանին, նոյնպէս Լևոն և Թէոդորիտոս և Ցուբենաղ և Փղաբիանոս և այլ համախոհակք նոցուն վեց հարիւր և երեսուներն. նստեալ յաթոռ սուրբ առաքելոցն, որ դատելով զսուրբ հաւատն, վերստին ի խաչ հանին անձանց զՈրդին Աստուծոյ, և դարձեալ խայտառակեցին։ Այլ դուք, եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կայէք, առաւել լերուք ի գործ տեառն յամենայն ժամ. գիտասջիք զի վաստակքն ձեր՝ ոչ են ընդունայն առաջի Աստուծոյ. և Պետրոս. Պատրաստ լինել միշտ առ ի պատասխանատուութիւն ամենայնի որ խնդրէ ի ձէնջ զրանն որ վասն յուսոյն ձերոյ է։ Եւ եթէ զիպեսցի ձեզ յանիշտակութիւն ընչից ձերոց. խնդութեամբ ընկալարուք։ Գիտասջիք թէ որպիսի ստացուած ընդունելոց էք, այլ թէև կապանք և նախատինք և չարչարանք ևս յաւժարութեամբ մատուսցուք զանձինս. զի եթէ չարչարանացն Քրիստոսի կցորդ լինիմք. և փառայն հաղորդ լինելոց եմք։ Եւ զայս հաւաստեաւ քննեալ ծանիջիք, թէ յետ երկուս ընութիւնս խոստովանելոյ, զինչ մոլորութիւն յաշխարհ եմուտ, և առ ոտն հարկանել զՈրդին Աստուծոյ, և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարել, որով սրբեցաւն, և զՀոգին շնորհայ թշնամանեալ ըստ գրեցելումն, այսինքն անկարգ կրաւնիւք գահեղ և զսոսկալի և զսուրբ խորհուրդն յանպարտ և յանպատշաճ տեղիս կատարել և անարժանութեամբ հաղորդել, ընդդէմ առաքելական հրամանին և աւանդութեան սուրբ նախահայրն։

Վասն զի հին աւրէնքն զսուրբ սեղանն յաղագս անշարժութեան հողեղէն հրամայեցին առնել, և ի քարանց անշարժից, և ի տեղին մին մատուցեալ՝ ուր ողջակէզքն և զոհքն մատչէին։ Ո՞րչափ ևս առաւել, որ նորոյ ուխտիս է միջնորդ կենդանարար և աղատիչ պատուական մարմնոյ և արեանն Տեառն, յանշարժ և հաստատուն սեղան ելանել։ Վասն որոյ և կարգե-

ցին իսկ առաքեալքն և հաստատեցին ընդհանուր ի սուրբ եկեղեցիս. և ճշմարտեցին սուրբ սեղան Տէրունեան և աւազան մկրտութեան, որով արժանաւորիլ որդեգրութեան շնորհին. ի քաղաքս և յաւանս և ի գեաւղս և յագարակս և յանդաստան, ուրեք ի վանորայս կուսանաց, և այլ հաւատացեալ կրաւնաւորաց, այլ ոչ եթէ ուր և պէտ յամայի վայրս մատրունս անուանել, ուր ոչ հանապազորդելոյ և սրբութիւն պաշտաման կատարեսցի, յաղագս որովայնապարարութեան ուխտ անուանեալ, և երթեալ կիսարան ինչ տարեալ և կամ քար ինչ կանգնեալ, զարդարեալ կտաւովք՝ և ի վերայ զահեղ սուրբ խորհուրդն Տէրունեան կատարել. և համարին ուղղութիւնս ինչ առնել և ոչ գիտեն և իմանան՝ եթէ զանձինս իւրեանց ի դատաստան մատնեն. ըստ այնմ եթէ Է՞ ճանապարհ որ թուի մարդկան թէ ուղիղ իցէ. բայց կատարած նոցա հայի յատակս դժոխոց։ Քանզի սուրբ Հարքն ՃԾ. և Ը. Ն. որ ի Նիկիա գումարեալք ի սուրբ Հոգւոյն, ոչ հրամայեցին վայրապար ուրեք մատուցանել և անխտիր հաղորդել սուրբ խորհրդոյն. այլ ընդրեալ կարգարութիւն ի մեղաց, և սահման եդեալ ոչ անցանել ըստ այնմ։ Իսկ ընդունաւղք Քաղկեդոնի ժողովոյն, թէ և կարի զանգեալ և շաղախեալ ի մեղս անհնարինս իցեն, զոր ծանր ապաշխարութեամբ հալիւ ոք կարասցէ քաւել. հանապազ անխտիր ճաշակեն ի պատուական մարմնոյն և յարէնէն Տեառն, զարիւն նորոյ ուխտին խառնակ համարելով։ Արդ՝ դու նախանձաւորդ աստուածայնւոյն, քննելով զայս. ապա զզոյշ զի Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ, զի Իմ են վրէժխնդրութիւնք և ես հատուցից ասէ, Տէր։

Եւ որ յանդիմանեն և նզովեն զժողովն և զտումարն՝ թուղթն Զենոնի ուղղափառ թագաւորի, որ կոչի Հենատիկոն և թուղթն երանելոյ Անաստասայ թագաւորի, և գիրք Տիմոթէոսի Աղեքսանդրացւոյ. և թուղթ Յովհաննու եպիսկոպոսապետի. և թուղթն Պետրոսի Անտիոքացւոյ. և պատճառն իսկ. և այլ բազում թուղթք ուղղափառաց։ Եւ մի զարմանար, սիրելի, թէ զի ծաւալեցաւ ստութիւն և նուաղեաց ճշմարտութիւն։ Նա և յութերորդ դարուն՝ ութ ոգի միայն գտաւ ըստ հաճոյիցն Աստուծոյ. յաշտարակաշինութեանն՝ Փաղէկ միայն, իսկ ի Նոյէ ի տասներորդ դարուն՝ Աբրահամ միայն. ի Հրէաստանի ճշմարիտ մարգարէքն՝ սակաւ, սուտքն անսակաւ. ըստ

Digitized by Google

այնմ թէ Բալումք են հրաւիրեալք, և սակաւ ընդրեալքն։ Աղաչեմ կՁեզ եղբարք իմ սիրելիք, Ռափայէլ և Նաթանայէլ։ Հեղութեամբ ընդունիցիք գրանն՝ որ կարողն է կեցուցանել զոգիս ձեր։ Մի բանավէճ լինել ճոխարար գանձինս առ դիտունս համարել և հպարտանալ ի վերայ ընկերին. այլ նախ աղաւթիւք խնդրել յԱստուծոյ՝ որ տայն առատապէս և ոչ նախատէ, և առաքեսցէ զՀոգին սուրբ ի թիկունս ձեր. և դուք հանդարտութեամբ և պարկեշտութեամբ համբերել ամենայն բանի, զաւրէն աշակերտաց սուրբ առաքելոցն, տեղի տալով խաւսել և մի գոռոզասատ, որ է սկիզբն աղաղակի։

ԶՔուանա նուաստ և անարժան յանէնայնի և գծուաղն ի՛, և զանէնայն ապգապահն և գերմեռաւորն յիշեցէք ի Քրիստոս Աստուած մեզ զատ ուղղափառաց։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ՄՈՎՍԷՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Զգիր ողջունի սրբութեան քո՝ պերատտութեան և զգուշացուցիչ ընկալեալ ամենայն եղբայրութեանս, զոհանալով զԱստուծոյ մեծաւ ուրախութեամբ լսեալ, որ Տէր, սրբոյ Երրորդութեանն պահպանութեամբ, ողջ է։

Եւ որք մնացեալ ի ձէնջ դաշխարհս հոգայք որպէս արժան իսկ է, ամենայն ուղղափառ խոստովանողաց աղաւթիկ լուիցէ Աստուած. և առաքեսցէ զՀոգին սուրբ ի քեզ տէր, և յաւդնականս քո՝, զաւրացուցանելով զՆել և լինելով վերակացու և աւգնական զարտուղեալ կողմանցս մերոց, և վերստին ի ձեռս ձեր տերանց սուրբ Հոգին քարոզեսցի, և հաստատեսցէ՛ յաշխարհիս մերում զընդհանուր բանն կենաց՝ որ յառաջ քան զյաւիտեանս ի Հաւրէ և ընդ Հաւր։

Եւ ի վախճան ժամանակացս վասն մերոյ փրկութեան ի սրբոյ կուսէն մարմնացեալ լինելով ամենայնի՜ն որպէս զմեզ բա՜ց ի մեղաց մնալով և այնպէս Աստուած որպէս էրն յառաջ ընդ Հաւր իւրում և սուրբ Հոգւոյն. զոր և յառաջավաստակ սուրբ մարգարէիցն զծածկոյթ խորհրդոյն որ յաւիտենից ընդ Հաւրն մարգարէացեալ. զոր և երանելին Պաւղոս մեկնէ. թէ որ այժմս յայտնեցաւ զյովք սրբովք։

Եւ ամենայն ուղղափառաց ընկալեալ հաստատեցաւ ի սրբոյն Գրիգորէ ի Հայաստանեայս հաւատն, և յոյսն, և սէրն, զոր Աստուածային Պաւղոս աւանդեաց եկեղեցւոյ՝ զհաւատն ի Հայր, զյոյսն՝ յՈրդի՝. զսէրն՝ ի սո՜ւրբ Հոգի։ Զայս երիս պտուղս ի ձեռն քո տեառն, և երանելի վարդապետացդ, լի՛ և զեղուն յեկեղեցիս կողմանցս մերոց, պահեսցէ Քրիստոս Աստուած մեր. և զաւրութեամբ Հոգւոյն սրբոյ, ժողովաւղ լինել ձեզ երից պտղոյն. ընդու-

Digitized by Google

Նել ընդ միոյ երեսուն. և ընդ միոյն ճ. Նորոգեսցէ Տէր Աստուած և զաթոռն քո տեառն ի նմին եկեղեցւոջ՝ յոր վիճակեցարն ի ձեռն ուղղափառ խոստովանողացդ Քրիստոսի. ապա թէ ոչ և մեզ պէտք ինչ ճար չէ. բայց կամ կալ յաշխարհիս և ըստ կամաց սորա լինել, կամ թողուլ և գնալ ի բաց։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԶՐՋԱԳԱՅՑԱԿԱՆ ՏԵԱՌՆ ՎՐԹԱՆԻՍԻ ՔԵՐԴՈՂԻ

Սրբասէր ուղղափառաց և ճշմարտից և վանից երիցանց և զեղջ քահանայից, ազատաց և շինականաց, ծերոց և տղայոց. և համաւրէն ամենայն ժողովրդականաց, հայալեզու աշխարհացդ, որ էքդ ընդ իշխանութեամբ եկեղեցւոյն Ցուրտաւայ, ի Վրրթանիսայ և յայլ պաշտաւնէից սրբոյ եկեղեցւոյս Տերամբ ողջոյն։

Վասն զի եհաս լո՞ւր չախորժելի, եթէ զՏերձուածն Նեստորի և զժողովոյն Քաղկեդոնի՝ զոր Հայոց և Վրաց և Աղուանից միաբան կանոն եպիսկոպոսաց և իշխանաց սոսկալի նոր-վիւք անյիշատակութեամբ էր ի բաց բարձեալ, արդ կաթուղիկոսդ անուանեալ եպիսկոպոսակցաւքդ, հանդերձ իշխանաւք ընդունելութիւն և մեծարանս առնեն հերձուածոյդ։ Լուաք և վասն արդարութեանդ ձերոյ ունել նախանձ վասն ուղղափառ հաւատոյ ամենայն բարեպաշտութեամբ ընկալեալ ի սկզբանէ յաշխարհիդ ձերում, և աղաւթիւք միշտ հաստատուն մնալ և արիանալ՝ անպանգիտող համարձակութեամբ։ Գիտացէք, եղբարք, զի ի վերջին ժամանակս եմք, և չար գայլանին հրապոյրք մերձեալ են, ապստամբութիւն առնելով յուղղափառ հաւատոյ. զի սովորութեան իւրոյ կալմեսցէ ասպնջական։ Վասնորոյ արթո՞ւն կացէք և հսկեցէք և մի՛ իւիք մեղկիցիք, զանգիտելով ի մահկանացուացն երկիւղէ, այլ համարձակութեամբ զայն հաստատեալ՝ զոր ի սկզբանէն ունեաք զճշմարիտ հաւատն. զի և պարգևացն Աստուծոյ արժանի լինիցիմք. գուցէ ձեռն զմաճով արկեալ՝ լքանիցիմք աչառելով կամ զանգիտելով յոմանց, վասն որոյ գայ բարկութիւնն Աստուծոյ։ Այլ դի՛ք ի սիրտս ձեր զյորդորական բան Փրկչին մերոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ. եթէ մի՛ հոգայցէք, որպէս թէ զի՞նչ խաւսիցիք

ընդ հակառակորդս ձեր. զի հոգի իմ պարգևէ՞ որ ինչ պիտոյ է ձեզ խաւսել։ Եւ եթէ աւելի ինչ պէտք եղիցին հակառակութեան և պատասխանաց, հրամայեսցէ գրել առ մեզ Սրբութիւնդ ձեր. և շնորհիւ ամենասուրբ Երրորդութեանն հասեալ առ ձեռն պապանձեցուսցուք զբերանս՝ վՀայհոյութեան բանս բանախաւսողացն։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ՏԵԱՌՆ ՎՐԹԱՆԻՍԻ

Տեսաք զԹուղթ ուղղափառ հաւատոյ ձերոյ. և լուաք զողջոյն ձեր և զամենայն պաշտաւնէից սրբոյ եկեղեցւոյդ՝ մեծաւ ուրախութեամբ լցեալ գոհացաք զՔրիստոսէ Աստուծոյ մերմէ, և որպէս երկիր ծարաւի՝ ի բազում երաշտութենէ պասքեալ, ընդունելով անձրև շահեկան՝ զուարճացեալ յինքեան ցուցանէ զսովորութիւն, զանուշահոտ ծաղիկսն երևեցուցանելով տեսաւղացն,զի էք իսկ շնորհիւն Քրիստոսի հոտ անոյշ, ըստ գրեցելումն, կենաց ի կեանս ոչ միայն ի ձերում աշխարհի. այլ և ամենայն հիւսիսային կողմանս, զոր մեր ընկալեալ զգրեալն ի ձէնջ. ցուցեալ ամենայն եղբայրութեան մերում, զոր ախորժելով լուեալ ետուն գոհութիւն վարդապետութեան ձերում հոգալով զաշխարհս մեր. յիշեցուցանելով սուրբ և զուղիղ հաւատն զոր մեծին սրբոյն Գրիգորի սերմանեալ էր յայս ի Կաւկասային կողմանս։ Արդ համարձակիմք և աւրհնեմք զՏէր Վրթանէս. և եղիցիս աւրհնեալ ամենայն ուխտիւդ հանդերձ, և պահպանեալ լիջիք հոգւովն սրբով յայս ի ծովածուփ կենցաղիս. աղաւթեմք միշտ նորոգել և սրբոյ Աթոռոյդ Գրիգորի. զի արասցէ խնդիր մոլորեալ աշխարհիս մերում ըստ աւրինակի առաջնոց վարդապետացն. զի մեզ առանց այսր աւգնականութեան և թիկանց՝ աստ չմարթի կալ. զի այնպիսի բռնաւոր զոռոզի որ հայրապետս անուանի դիպեաց եմք, բայց թողուլ զաշխարհս և գնալ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԵՐԿՐՈՐԴ Ի ՄՈՎՍԻՍԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԱՌ ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԴՈՂ

Տեսի կգիր ողջունաբեր սրբութեան քո, և լուեալ ըզբանս մխիթարութեան որ ի սմա, գոհանալով կՔրիստոսէ Աստուծոյ անհոգացայ։ Զի ձեր ի ձեռն առնելով զիս, ահա կըրկին կենայ դիպեցայ, հոգալով զիս և զաշխարհն որպէս արժան իսկ է. և իմ վստահութիւն էր։ Արդ որպէս զսկիզբնդ յաւժարութեամբ արարէք, աղաչեմ բարեխաւսութեամբ սրբոց ջանացարուք և ի գլուխ տանել։ Այս անգամ հրամայեցէք գրել Թուղթ մի առ կաթուղիկոս անուն, և առ Ատրներսեհ և Վահան և Բրգմիհր. յանդիմանելով կժողովն Քաղկեդոնի. և Թուղթ մի առ Պետրոս յանձնութեան. և ամէն աւրինակ ի ձեռն ձերոյ աշակերտի առաքեցէք որ իմ մանուկս տանի և ածէ խաղաղութեամբ՝ շնորհիւն Քրիստոսի Աստուծոյ։ Եւ յորժամ զպատասխանիսն ընդունիք, ապա թէ ձեզ պիտի երթալ, թող զի լինիք աշխատ, յիշելով զյորդորականն Տեառն՝ բարբառով մարգարէին. թէ երթայք ի դրունս իմ, դուք որ կարող էքդ և զքարինսն ի ճանապարհէն ի բաց ընկեցէք, զի մի իւիք սայթագիցին ժողովուրդ իմ։ Զի և մեք թէպէտ և կամ վասն տգիտութեան և միայնութեան, կամ վասն չարութեան առաջնորդին մերոյ զանգիտեցաք ինչ, յոյս ի ձեզ եդաք, զի և նախ իսկ այդր սրբոյ Աթոռոյ աշակերտ մեք հանդերձ, թէպէտ և ի ժամուս ի սնոտի մեծութենէն իրրև զգետ ինչ ի բաղում ուխտից է յարուցեալ. և իրրև զգայան ինչ դժնդակ ճիրանամբքն և մագլամբքն է սաստկացեալ, զոր ամաչեցուսցէ Տէր Աստուած աղաւթիւք սրբոյն Գրիգորի, և ըստ առաջնոց վարդապետացն ի ձեռն ձեր խլել զայդ վարմ խորամանգ անձին, և երգակցել ընդ երանելոյն Պաւղոսի, թէ յԱղուանից մինչև յաշխարհն Վրաց, մեզ եհաս լի՝ առնել զաւետարանն

Digitized by Google

Քրիստոսի։ Եւ լսել զուրախարար զբարբառն զՀրաւիրական, թէ Բարի մշակ և հաւատարիմ, հանդերձ ընդ քեզ փրկեալ գնդաւոր, եկ մո՛ւտ յուրախութիւն Տեառն քո. որոց լիցի ձեզ հասանել Տէր Վրթանէս, հանդերձ ամենայն ուխտիւդ. ի ձեռն ձեր և մեզ՝ շնորհիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Digitized by Google

ՊԱՏՄԱԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ՄՈՎՍԷՍԻ

Զգիր ողջունի սրբութեան քո ընկալեալ՝ զԱստուծոյ գոհացաք և ուրախ եղեաք, որ Տէր, պահպանութեամբ ամենասուրբ Երրորդութեանն՝ ողջ է։

Եւ զոր գրեալս էր առ նուաստութիւնս մեր, բայմապատիկ շնորհակալութեամբք և արդիւնաւոր աւրհնութեամբք էր պատարուն։ Զթուղթն զոր խնդրեցէքն առ կաթուղիկոսն անուանեալ, և առ այլ իշխանս աշխարհին, արարաք որպէս արժան էր. բայց որ վասն մանկանն գրեալ էր, մի՞ յաղագս նուաղութեանն, և մի՞ յաղագս ժամանակիս դժուարութեան, չեղև հնար արձակել, Տէր. անմեղադիր լե՛ր։ Թո՛ղ զի քո մանուկդ պատասխանի բերէ, որ մեք ըստ նմին իմանալ գիտեմք, և թէ շնորհէ գթութիւն ամենասուրբ Երրորդութեանն և ի ձեռն գրեցելոցդ խաղաղութիւն լինի, որպէս և ունիմք իսկ յոյս, բարի է որ դուք ի ձեր սուրբ եկեղեցին հասանէք բարգաւաճեալ անուամբ։ Ապա թէ յերկարէ ինչ յամառութիւն ուրացելոցն, պատուէր տուք ծանաւթիւ ձերոյ և սիրելեաց իշխանաց, որ զրեն առ փառաւորեալ իշխանս աշխարհիս մերոյ, որ մեզէն իսկ երթամք հրամանաւ սոցա, և աւգնականութեամբ Քրիստոսի Աստուծոյ յանդիմանեմք, է՞ զի զան յուղղութիւն։ Ապա թէ վասն բազում մեղաց մերոց զհակառակն և զընդդէմն հասանէ լսել, զփոշի ոտից մերոց ի նոսա թաւթափեմք, և յաղագս այդր պատճառի է զի անմեղադրելիք յԱստուծոյ և ի մարդկանէ լինիմք։

Digitized by Google

ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ, Ի ՎՐԹԱՆԻՍԷ

Փառաւորելոյ Տեառն Պետրոսի Աստուածաշնորհ պարգևաւք պայծառացելոյ, ի Վրթանիսայ և ի միաբանական սրբոյ եկեղեցւոյս պաշտաւնէից Տերամբ ողջոյն։

Գրէ երանելի առաքեալն որ հանդերձեալն էր լինելոց. թէ Հերձուածք լինելոց են ի ձեզ, և որ ընդիրքն են երևեսցին։ Լուաք յաղագս պատուականութեան քո, եթէ նախանձաւոր ես և սիրաւղ ճշմարիտ հաւատոյ. զի որպէս յառաջագոյն երանելի հայրապետն մեր Մովսէս գրեաց յաշխարհդ հեռանալ ի Խուժիկ չեպիսկոպոսէն խարէութեանց. առաւելագոյն ևս պարտիմք յանաւրէն ժողովոյ Քաղկեդոնի հայհոյութեանցն. զի հաւասար հրէութեան է. զոր համրաւ. չախորժելի այժմ եհաս մեզ լսել. թէ յաշխարհիդ ձերում մեծարանս մատուցանեն ժողովոյն այնորիկ. վասն որոյ եպիսկոպոս աշխարհիդ փախստական գնացեալ է, զդառն և զանրժշկելի վիրառութիւն ժողովոյն այնորիկ ճանաչելով։ Արդ՝ որպէս ընկալայք զնախանձ Աստուծոյ յանձինս ձեր, պինդ կայէք մինչև ի կատարում գործոյդ, զի և պարգևացն երկնաւորաց արժանի լինիցիք։ Թուղթ արարաք վասն դորին իրաց ցկաթուղիկոսդ և ցայլ իշխանսդ, զի Ներոգաձևութիւն ինչ հաւատոյ մի՛ եղիցի ի մէջ երկուց աշխարհացս. և մի՛ աւտարութիւն հոգևոր և մարմնաւոր սիրոյ թուեսցի պատուականութեանդ քում, որպէս եղեր իսկ ասպնջական ուղղափառ հաւատոյ, զոր ի ձեռն սրբոյն Գրիգորի հաստատեաց բաղում աքանչելագործութեամբք Տէր Աստուած յաշխարհիս։ Առաւելագոյն խաղաղութեան պատճառս լեր, զի Ներոգաձևութիւնքն որ ստութեամբն է պաճուճեալ՝ կորիցէ, և ճշմարտութիւնն հաստատեսցի, և սրբասէր եպիսկոպոսս, որ

Digitized by Google

Ճշմարիտ հաւատոյ նախանձաւոր է, ի տեղի իւր դարձցի, զի թէ պդ՝ պդպէս ոչ լինի յաւիտենական թշնամանք մնան ի վերայ աշխարհիդ։ Եւ եթէ ի ձեռն գրելոցդ հակառակութիւնդ չբառնայ, գրեցէք առ փառաւորեալ իշխանս աշխարհիս մերոյ, որ զմեզ պդր արձակեն, և այնպէս լինի որպէս Աստուածն կամի։

Digitized by Google

ՏԵՌՆ ԿԻՐՈՎՆԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ.

Սրբասիրի Տեառն Կիրոնի Վրաց կաթուղիկոսի, և Ատրներսեհի և Վահանայ, և Իսմիրի իշխանաց, ի Վրթանիսայ, և ի միարան պաշտաւնէից սրբոյ եկեղեցւոյս՝ Տերամբ ողջոյն.

Ցառաջագոյն առ պատուականութիւն ձեր զրեաց երանելի Հայրապետն մեր Մովսէս յաղագս Խուժիկ չեպիսկոպոսին խաբէութեանց. զի մի եղիցի նորոգաձևութիւն հաւատոց ի մէջ երկուց աշխարհացս, որ սքանչելի հիմնադրութեամբ տնկեցաւ յանպանդիտող և ի քաջ նահատակէն Տեառն Գրիգորի. Արդ՝ ոչ միայն ի Նեստորի խմորոյն ունիմք պատուէր ի հարցն և յուղղափառ վարդապետացն մերոց հեռանալ և նզովել, այլ և զԵւտիքոս և զԵւնոմոս, և զՍևերոս և զՄարկիոնն, զՍաբէլիոս և զայլ նմանիս նոցա, և առաւելագոյն ևս զտիեզերակործան և և զանյիշելի զժողովն Քաղկեդոնի, որ յետ ճշմարիտ միաւորութեանն Տեառն երկուս բնութիւնս բաժանեալս և անջատեալս ի միմեանց սահմանեցին ի վերայ միոյն Քրիստոսի. Այժմ լուաք թէ դուք զանաւրէն ժողովոյն Քաղկեդոնի և զտումարն Լեւոնի ուղղափառ համարիք և մեծարանաց արժանի. վասն զի չունիք կրթութիւն քննել զհերձուածոց չարութիւնս, զի չարագոյն քան զհրէական ուրացութիւնս՝ հեռացուցանէ ի միաբան հաւատոյն՝ որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր է. Արդ՝ ոչ է պարտ Աստուածսիրութեան ձերում աւելի ինչ վարդապետութիւն զուրուք ընդունել, քան զերից սուրբ և անարատ ժողովոցն՝ որք ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն գումարեցան, ՅԺ և Ը. իցն ի Նիկիա. և ՃՁ իցն ի Կոստանդնուպաւլիս. և Մ. ոյն յԵփեսոս. և աւելի քան զայս սահման հաւատոյ, մեր և ձեր հարցն և վարդապետաց ոչ կալեալ է և ոչ ընդունիմք. և որ ընդունի և կամի խառնել յականակիտ և յամբիծ

Digitized by Google

սահման հաւատոյ վարդապետութեան նոցա հրապոյրս ինչ պըղտորս, գիտասցէ զի աւտար է և տարագիր յուղղափառ հաւատոյ. զի հաւատով ուսանիմք, հաճոյ լինել Աստուծոյ։ Արդ՝ զի ի վերջին ժամանակս եմք՝ չգոյ յումեք լինել յերկրայս. և զի նախ ապստամբութիւնն է գալոց՝ երանելի առաքեալն ուսուցանէ, և յաղագս նորին, նոյն ինքն հանդիպողական պատասխանին, Եթէ ոք աւելի ինչ աւետարանեսցէ ձեզ քան զայն նզովեա՛լ լիցի։ Զի ընդ ամենայն տիեզերս յեկեղեցիս ուղղափառաց, յետ ընթեռնլոյ զսուրբ աւետարանն, որ ի Նիկիա սահմանեցաւ սուրբ հաւատն՝ ասեմք, ոչ եթէ զՔաղկեդոնի ժողովոյն դայհոյութիւնս, ապա թէ այսպէս է, ոչ պարտիմք զամուրցցանկ հաւատոյս մերոյ խրամատել զի Որ քակէ զյանկ՝ հարցէ զնա աւձ. զի՞ն րողոքէ, և Որ գլէ զվէմ, այսինքն զհաստատութիւն ճշմարիտ հաւատոյ, զանձն իւր կորուսանէ։ Արդ՝ պարտ է պատուականութեանդ ձերում նախանձաւոր լինել ճշմարիտ հաւատոյ հարցն որ սքանչելեաւք և աստուածաշնորհ պարգեւաւք արժատացաւ յաշխարհիս մերում։ Եւ թէ է ինչ երկբայութիւն ի միտս ձեր և կամիք զփորձ առնուլ յաղագս այդորիկ, գրեցէ՛ք առ միաբան փառաւորեալ իշխանս աշխարհիս մերոյ, որ գամք այդր. և որպէս ի հեռաստանէ թղթոյս պատգամաւ՝ նոյնպէս յանդիման վկայութեամբ գրոց սրբոց յայտնի առնեմք զճշմարտութիւն բանիցս։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԵՐՐՈՐԴ ՄՈՎՍԷՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌ ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԴՈՂ։

Սրբասիրի Տեառն Վրթանէսի, ի Մովսէսէ անարժանէ Տերամբ ողջոյն։

Զթուղթսն զոր գրեցէք առ կաթուղիկոսն անուանեալ և առ պլ իշխանս աշխարհին, ետու տանել մանկան իմոյ, և պժժ եկն։ Բայց յաշխատութենէ պյդր ոչ կարաց գալ և ձեզ ղրոյց տալ. թէ որպէս նախ յանդիման իսկ որ չիշխեաց տանել զթուղթն կաթուղիկոս անուանն. ապա թէպէտ վերջոյ տարան, յընթեռնուլ թղթոյն, ասէ, ի սաստիկ բարկութիւն շարժեալ, զպարացեալ սրրտիւ և եղծեալ գունով զաւրէն ցաւածաց, նզովէր և թշնամանէր, ասէ, զՀայաստանեայս, և թղթոյն պատասխանի ոչ ինքն արար և ոչ պյոցն ետ առնել։ Զայս յԵրուսաղէմ առ հպրապետ քաղաքին տամ տանել, ասէ, ոչ պատասխանի առնէ։ Բայց սակաւուց ոմանց որոց արարեալ է պատասխանի, ետու բերել առ Տէր, հրամայեցէք ընթեռնուլ, և մեզ ծանուցէք զինչ գրեալն է։ Զձեզ յարաժամ յաշխատութիւն պահեցի, Աստուած եղիցի վարձահատոյց։ Բայց ձանձրանայք մի, աղաչեմ. որով աւրինակաւ և է, յանձին լիցի մոլորեալ աշխարհն և անձն իմ տառապեալ։ Եւ զայս ևս աղաչեմ զՏէր. զգիրս երանելոյն Տիմոթէոսի բովանդակ ստացայ. և թուղթք որ ի սուրբ եկեղեցւոյդ և առ ձեզ գտան զամենայնն գրեցի։ Հասին առ իս և պլ թուղթք բովանդակ տեղոյ տեղոյ երանելի վարդապետացն որք յանդիմանեն և նզովեն զժողով երկաբնակացն։ Բայց յետ ի բաց բարձութեան սահմանի հրէական ժողովոյն. բարեպաշտ թագաւորացն երանելոյն Զենոնի և Անաստասայ. ոչ գտի ուրեք, թէ որպէս դարձեալ նորոգաձևութիւնն շարժեալ կործանեաց գրաքում եկեղեցիս, և կամ ի ձեռն որոց. որպէս տեղեկացեալ է սրրութիւնդ ձեր, հրամայեցէք գրել առ մեր նուաստութիւն։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆ ԹՂԹՈՑՆ ՄՈՎՍԷՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ։

Զողջոյն սրբութեան ձերոյ լուայ և ուրախ եղէ։ Ծանեայ, և զպատճառսն թղթոյն պատասխանի չառնելոյ, և զոր արարեալն իսկ է առ իս ապատ արանց ոմանց այնպէս է՝ որք ի հիւանդութեան ինչ ընդ բարբաջ անկեալ զինչպէտ խաւսին։ Ասեն, մեք և զայս ունիմք հաւատ և զայդ, աւրինաց աստ հաղորդիմք և այդր։ Մովսիսի եթէ կամք են եկեսցէ կաթուղիկոսիս հնազանդ լիցի, զի մեզ այս հաճոյ է, և զիւր տեղի կալցի։ Աւելորդ համարիմ ես ինչ ասել այսմ ամենայնի, Աստուծոյ զաւրութեանն պահեսցի։ Բայց յաղագս զաշխարհս մեր նկովելոյ և թշնամանելոյ, որպէս և այլ կորստեան և աստուածառաք բարկութեանն ասպնջական եղեն, թերևս և զայդ յանդգնութիւն արարին, անրժշկելի վէրս անձանց իւրեանց կապմեցին, զինքեանս ինքեամբ խոցոտելով։ մեք հեռի եմք յայնմ անիծիցս։ Դու Տէր աղաւթեա, զի ի ժամուս պնդեալ են առաջնորդ կարգել. եթէ զայս գործ աւգնէ ի կատարումն տանել Քրիստոս Աստուած մեր. ապա գիտեմք եթէ ձեր կամք այնպէս կատարին՝ որպէս Աստուծոյ ողորմութեանն թուի։ Բայց վասն խնդրոյն զպատճառս ընթերձուածասէր և ուղղափառ պատուականութեանդ յաղագս վերստին հաստատելոյ աւտարացուցանող և կորստական անաւրէն ժողովոյն Քաղկեդոնի. զոր եբարձ ի միջոյ բարեպաշտն Զենոն միաւորիչ թղթովն. և յետ նորա՝ նորին սահմանի նախանձաւոր եղելոյ, յանկարին հրեշտակայ և մարդկան Անաստասիաս, արդ այսպէս ունի պատմութեանս այսորիկ պատճառս։

Քանզի յետ փոխելոյ յանարատ և յԱստուածահաճոյ կենաց պանղխտութեանս այսորիկ երանելոյ քաջ անուանն Անաստասայ, Յուստին անուն կալաւ զ յաջորդութիւն իշխանութեանն, այր ժանդ և անաւրէն, որ վարժեալ էր աղանդովն Նեստորի

և ի նմին զանգեալ և հաստատեալ։ Նորա թագաւորեցելոյ ըստ ցանկութեան անձինն և կանխապատրաստ եղելոյ մահացան խորհրդոյն, սկիզբն արար թշնամանել, հերետիկոս կոչելով զբարեպաշտ և զխաղաղասէր թագաւորսն՝ զԶենոն և զԱնաստաս։ Եւ զզեղծեալն ի նոցանէ զտումարն Լևոնի և զժողովն Քաղկեդոնի, հրամայն տայր շրջարերական թղթովք գոռոզասաստ և անխիղճ իշխանաց անդրէն հաստատել. եթէ որ համարձակեսցի ընդդէմ կալ թագաւորին հրամանաց, սրով սպառել և պէսպէս տանջանաւք։ Ցայնժամ եկեղեցիք ամենայն արեամբ լինէին շաղախեալք. և մետաղք և կղզիք կապանաւորաւք լցեալք։ Զի քայ հովիւքն զմեռանելն լաւ համարէին, և անարատութեամբ առ Քրիստոս ժամանել. քան թէ կալ անաւրէն վարդապետութեամբ ժողովոյն Քաղկեդոնի։ Իսկ անաւրէն վիրագին, զաղանդոյն սիրաւոր և աշակերտս և որք զանցաւոր պատուոյս քան զմշտնջենաւորին կամեցեալք ընտրել զփառս, եպիսկոպոս կարգեալ քաղաքաց քաղաքաց հաստատեաց զժողովոյն խորհուրդ։ Աստանաւր էր ինչ յիշատակի արժանի, բայց այլում ժամու պահեսցի. քանի բազում խռովութիւնք եղեալ ի ժողովրդականաց. յաղագս չընդունելոյ զհերձուածող եպիսկոպոսսն։ Արդ՝ սուղ ինչ ժամանակ կալեալ զթագաւորութիւնն Յուստինէ, վախճանէ ծանր ախտից հարուածովք, և թագաւորէ Յուստինիեան *), որ յետ Նորա, և աղմուկ հակառակութեան ժողովոյն Քաղկեդոնի տակաւին ևս հնչէր և ի Նորա ժամանակս։ Իսկ յաւուր միում խորհուրդ արարեալ ընդ ոմանս ի մեծամեծացն, յաղագս սպանման ուղղափառ եպիսկոպոսաց, և հալածանաց. թէ իցուր արար թագաւորն զխռովութիւնս զայս ամենայն քաղաքաց. և այժմ ոչ է պարտ մեզ անտես առնել և ոմանք ի յանդիման կացելոցն, որք աղանդոյն այնր էին աշակերտք, ասեն զթագաւորն, թէ անհնարին է ումեք ի մարդկանէ ասել զայդ, զի Սիմեւոնի ձեռն արկեալ է և հաւանեալ է սահմանադրութեան ժողովոյն Քաղկեդոնի, և ցարդ ևս պահի զզուշաբար ի ներքս ի տապանին սրբոյն Եւփիմեայ, ուր ժողովն իսկ եղև։ Քանզի Սիմեւոնս այս եղեալ միայնակեաց յԱնտիոք քաղաքի, հրաշալի և հռչակաւոր, և ընտանի սրբոյ Հոգւոյն շնորհաց, որպէս և զմի որ ի տեսողացս։ Եւ ոմն ի մաւտաւորացն նախանձաւոր եղեալ ուղղափառ

*) Յոր. Յուստինի բան.

հաւատոյ, ասէ ցԹագաւորն. եթէ երանելի Սիմեւոնի ձեռն արկեալ և հաւանեալ է սահմանադրութեան հաւատոյ ժողովոյն Քաղկեդոնի, և կայ ի տապանի սրբոյն Եւփիմեայ, ես դառն չարչարանաւք ընկալայց զրաւումն կենաց իմոյ։ Քանզի պէսպէս ունի պատմութիւն անսուտ յիշատակարանաց մերոյ, թէ Թէոդորիտոս որ համակոյգ Նեստորի գտեալ՝ լուծեալ եղև յեպիսկոպոսութենէ իւրմէ, և հրամանաւ ամպարշտին Մարկիանոսի ընկալեալ եղև յառաջնորդութիւն Քաղկեդոնի ժողովոյն, և առեալ զսահմանեալ գրեալսն ըստ հրամանի Թագաւորին հաստատեր ի դուրս խցկանն երանելոյն Սիմեւոնի։ Իսկ նորա յառաջագոյն ծանուցեալ զգալուստն, հրամայէ սպասաւորայ՝։ յարգելանոցէն զինքն ի խոնարհ իջուցանել և հրատ լուցեալ. վասն որոյ յոյժ զարմացեալ սպասաւորացն եթէ զինչ լինիցի այն, և իսկոյն տեղեկութիւն տուեալ երանելոյն, թէ ոմն ի Թագաւորէն եկեալ խնդրէ տեսանել զքեզ։ Եւ նորա հրաման առեալ թէ վասն այդորիկ իսկ եկի ի տեղս յայս, և մտեալ ի ներքս Թէոդորիտոս, բազում բանիւք թախանձանս մատուցանելով առաջէր ձեռնարկ առնել և հաւանել առաջիկայ լինել սահմանին, քանզի ամենևին ի մարդկանէ յայսպիսի իմն գործուղաց և ոչ ակն առնուլ գիտէր երեսաց։ Վաղվաղակի զգրեալսն յինքն առեալ ի վառեալ հրատն ընկենոյր. նզովելով զՄարկիա՛նոս և զժողո՛վն և զհաւանեալսն այնմ սահմանի. և աւելի ինչ քան զայդ՛ոչ գտանես ասէ, ո՛վ Թագաւոր։ Իսկ Թագաւորին Թոյլ տուեալ առ ժամն լուռ լինելով, հրամայէ ի միւսմ աւուրց մակուկաչուուղղեգնացութեամբ ի Քաղկեդոնն ելանել սակաւուք արամբք, և մտեալ ի վկայարանս սրբոյն Եւփիմեայ ստիպեն զսպասաւորն քանալ զտապան ոսկերացն պահարանի։ Իսկ նա ասէ, ո՛վ դուք որ զայդ համարձակեք գործել, զոր ոչ ուրուք արարեալ ի մարդկանէ. և իմացեալ զմուտ ինքնակալ Թագաւորին վաղվաղտկի քանայ նմա, և սփռեալ զքղամիթն, հրամայէ զնշխարս սրբոյն անդր հանել, և ասէ ցսպասաւորսն, այլ կայ ինչ ի ներքս. և նա ասէ, այլ ոչինչ գոյ ամենևիմբ։ Եւ հայեցեալ Թագաւորին տեսանէր ինքն իսկ. զի այլ ինչ ոչ գոյր. հոգւոց հանեալ ծեծէր զձակատն, ապաշաւելով և ողբալով զսուրբ և զերանելի հովիւն. որք յաղագս ուղղափառ և ճշմարիտ հաւատոյն հալածեցան և սպանան, և խորհուրդ արարեալ ընդ մեծամեծս իւր՝ բառնալ ի միջոյ զսահման նորոգաձևութեան ժողովոյն Քաղկեդոնի.

Digitized by Google

և զվաղընջուցն յառաքելոցն և սուրբ հարցն զթարոզեալն հաստատել, և իսկոյն հասեալ նմա մահ դաւողական, որպէս բազմաց բան է, ի նմին մնաց յառաջագոյն գործեցեալն։ Եւ դու մի՛ զարմանար. ո՞վ նախանձաւորդ Աստուածայնոյն, թէ ընդէր նուաստեաց ուղղափառութիւնն և զարգացեալ ծաւալեցաւ հրէական սարսափելի հայհոյութիւնն։ Վասն զի ի յետին ժամանակս եմք. և զարհուրեալ կասկածեմք թէ ի մեր իսկ աւուրս հասցէ կատարած։ Եւ քանզի բազում ինչ եղեալ էր ի նշանաց, պարտ էր և այդմ լինել. զոր կանխաւ զուշակեաց բանն երջանիկն առաքելոյ։ Եւ ո՞ր իցէ այն. Նախ եկեսցէ, ասէ, ապստամբութիւնն և ապա յայտնեսցի մարդն անաւրէնութեան։ որդին կորստեան։ Ապստամբութիւն աստ ոչ եթէ վերկրաւոր թագաւորացս ճակատամարտից ինչ ասէ, զի այդ ի վաղընջուց կալաւ սովորութիւն. այլ ի ճշմարիտ հաւատոյն քակելոցն, և այսուն մոլորութեան զհետ երթաւղայն, ասէ, ըստ այնմ եթէ Ի ժամանակս յետինս քակեցին ոմանք ի հաւատոց։ Եւ զի յոյժ նուապունք մնալոց են անբիծ և կեցուցանող հաւատոյն պաշտաւնեայք Փրկչի՝ մերոյ և Տեառն, հաւանեցուցէ զքեզ անշուշտ բանն, զոր ի դէմս մեր որպէս ըղձալով իմն ճառեաց. Իսկ Որդին մարդոյ, ասէ, եկեալ գտանիցէ արդեաւ հաւատս յերկրի։ Վասն այնորիկ վաղվաղակի գայթագղեցուցանէ և տիրէ դերաքրիստոսն. զի յուղիղ ճանապարհէն գմոլորեալն դիւրաւ ըմբռնելով, յափշտակէ զայլն ապականիչ, և յաճախէ զչոլիրս ձախակողմանն գասու դժոխըմբարՀ կորստեան։ Յաղագս որոյ պարտ է մեզ զգուշանալ և անսասանելի պահել զանձինս ի վերայ ճշմարիտ հաւատոյ ի մարգարէիցն տնկեալ. և ի սքանչելագործ առաքելոցն աճեցեալ, և պտղաբերեալ ոռոգմամբ ի սուրբ Հոգւոյն. և ի սուրբ հարցն դաւանեալ և համառաւտեալ ՅԺ և Ը. իսն ի Նիկիա, և ՃՕ, իսն ի Կոստանդնուպալիս. և Մ. ոսն յԵփեսոս. որք ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն գումարեցան։ Եւ զի՞ ոք բանիւ կամ գործով ըստերիւրեսցուք ի հետոց նոցա. թէ և ի պատուոյ ինչ հասցէ անկանել և մերկանալ ի փառաց երկրաւորաց, կամ բանդիցս կամ կապանաց մատնել. սովոյ և սրոյ յաւժարութեամբ մատուսցուք զպարանոցս մեր, զի առանց այսց աստուածահաճոյ երիցս ժողովոցս անթերի հաւատոյ խոստովանութեան՝ անհնար է հաճոյ լինել Աստուծոյ։ Զորոց կդրութիւն հաւատոյ, և ոչ ի Քաղկեդոնի ապստամբեալքն իշխեցին

Digitized by Google

յայտնապէս հայհոյել այլ ի ծածուկ գաղտնապէս երկուս բնութիւնս ասելով անխառնս և անհաղորդելիս, քստմնելի անչատմամբ, և զգործ երկաքանչիւրոցն բաժանեն տա՜ն լրբենի յանդգնութեամբ. զի և զաստուածավայելչաբար միաւորութեանն խառնումն և հաղորդութիւն ուրանալ և ի բաց բառնալ հնարեսցին։ Վասն որոյ պարտ է ճանաչել Աստուածսիրութեան քում. զի կտակ այս չարեաց և հիմն Սիմոն է մոգն և կախարդն՝ որ առ սուրբ երանելի առաքելովքն էր. և ձաղածանակ նշաւակութեամբ հերձեալ կորեաւ. զոր և ի հինգետասանները որդում սաղմոսին մեկնութեանն ծանուցանէ։ Այս փոքր ի շատէ ծանուցումն քում Սրբութեան։

Զնոսա՝ զգրող և զսիրող այսմ պատի զթուամս և զգնաւոցն իմ, զաղաչէմ յիշել զաղաւնիւ ի Քրիստոս Աստուած, և մեղայ Լուսաւորիչն խնդրել ինչ և իմոցն։

Digitized by Google

ԿԱՆՈՆՔ ՈՐ ԵՂԱՆ Ի ԴՈՒՆԻ, ՄԻՆՉԴԵՌ ՄՏԱԾՈՒԹԻՒՆ ԷՐ ԺՈՂՈՎԵԼՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ ԿԱՐԴԵԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՅԵՏ ՄԱՀՈՒԱՆՆ ՄՈՎՍԷՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ։ ԵՒ ԽԱՓԱՆԵՑԱՆ ԱՅՆՄ ԱՆԴԱՄ

Վասն զի յառաջագոյն սուրբ Հարքն և ուղղափառ վարդապետացն՝ մերժեալ էր և ի բաց ընկեցեալ սոսկալի նզովիւք զամենայն հերձուածողս. զՍարելիոս և զԱրիոս, և զԵւնոմոս և զՄանի, և զՄարկիոն և զնոցին նմանիս, և զՊաւղոս Սամուստացի, և զԹէոդորոս *) և զԹիոդորէ զանյիշելին Նեստոր և զԹէոդորիտոս, և զԵւտիքոս և զՍևերոս, և զԱնդրէաս և զնոցին հաղորդս, և զԵւզոյիոս Նիկոմիդացւոյ եպիսկոպոս և զնոցին հաղորդս, զանաւրէն ժողովն Քաղկեդոնի և զկիրճ տումարն Լևոնի, որ զյոլովիկ յառաջ ասացելոցդ հաստատեաց հերձուածս. և այժմ բարումբ ընդ խոստովանողս և ընդ ընդունաւղս ժողովոյն Քաղկեդոնի և տումարին Լևոնի հաղորդեցան յաշխարհէս մերմէ. ոմանք կամաւորութեամբ յաղագս սնոտի փառասիրութեանն և աչառութեան, և կէսք ակամայ բռնադատեալք ի նոցանէ. և այլք առ տգիտութեան և կամ անձեռնհաս լինելոյ. վասն որոյ ժողովեցաք եպիսկոպոսքս այս ի մայրաքաղաք եկեղեցիս Դուինայ. Թէոդորոս մարդպետական եպիսկոպոս, Յովհաննէս Արծրունեաց եպիսկոպոս, Քրիստոփոր Սիւնեաց եպիսկոպոս, Մանասէ Բասենոյ եպիսկոպոս, Աբրահամ Ռշտունեաց եպիսկոպոս, Յովհաննէս Ամատունեաց եպիսկոպոս, Գրիգոր Անձևացեաց եպիսկոպոս, Սիոն Գողթան եպիսկոպոս, Եհարան Մեհնունեաց եպիսկոպոս, Ներսէս Բոժունեաց եպիսկոպոս, Յոհանիկ Եղոյ եպիսկոպոս, Թադէոս Առնայոյ ե-

---

*) Յոր. Դէոդորոս.

Digitized by Google

պիսկոպոս. Եպիսկոպոսք Ծ. և Հարք և քահանայք Ճ. և Ղ. կամաւք և պլոց, հաստատել սահմանս կանոնականս յաղագս պնպիսեացն, որք գան ի խոստովանութիւն զղջանալով զվնաս և զմեղս զոր գործեցին կամաւ և ակամայ, զի գիտասցին պատրաստութեամբ գտանել անձանց փրկութիւն ի Տեառնէ։

Եթէ ոք յեպիսկոպոսաց եկեսցէ զղջանալով և խոստովան լինելով զվնաս անձին իւրոյ, որպէս թէ ակամայ եղև հաղորդութիւնն ի բռնութենէ ձգեալ յայն, և չէր ձեռնհաս. և կամ թէ տգիտութեամբ ինչ եղև, այլ ոչ յաղագս փառասիրութեան և զաւշաքաղութեան, այնպիսոցն ներելով տայցէ գլխաւոր վարդապետն կապաշխարութիւնն, մինչև երդմամբ և ձեռնադրաւ իւրով նոցովեսցէ զվերձուածն յեկեղեցւոյ առաջի ամենեցուն։ Բայց ի պատիւն մատուցանել, մի և երկուք մի՛ իշխեսցեն առանց կամայ և քննութեան ամենայն եպիսկոպոսայ։

Իսկ եթէ ոք չառնուցու յանձն զվնասն, և կամաւորութեամբ իցէ արարեալ զհաղորդութիւն, և այլոց ևս պատճառք իցէ եղեալ բռնադատութեամբ գայթակղեցուցանելոյ, ծանր քննութիւն եղիցի. և քաջ փորձեսցեն. յոլով զապաշխարութիւնն տալով նմա գլխաւոր վարդապետին. մինչև երդմամբ ուխտեսցէ պահել զուղղութիւն, և նոցովեսցէ զվերձուածն ձեռնարկութեամբ իւրով. ապա թէ կամք իցեն կաթուղիկոսին ամենայն եպիսկոպոսաւք հանդերձ. շնորհեսցէ զպատիւ աթոռոյն, բայց զղջումն կալցի զամենայն աւուրս կենաց իւրոց։ Նոյն կանոն և քահանայիցն եղիցի։

Եթէ ոք եկեալ կամաւորութեամբ խոստովանեսցի. և նոցովեսցէ զվերձուածն ձեռնարկութեամբ իւրով, և ապա անդրէն երթայ, ի նոյն փսխած դառնայցէ, և դարձեալ այսրէն գայցէ, զայնպիսին խոշտանգեսցեն բանիւք վարդապետութեան, և խստագոյն կապաշխարութիւնն տալով գլխաւոր վարդապետին։ Քաջ քննութիւն արասցեն և յանդիմանեսցեն. զի և այլքն երկիցեն. բայց կպատիւ աթոռոյն մին կամ երկուքն մի՛ իշխեսցեն տալ, բայց եթէ ուղղութիւնս և կրաւնս առաքինութեան ցուցցէ յանձին իւրում և ամենայն եպիսկոպոսաց լինիցին կամք։

Իսկ որք ոչ են հաղորդ ընդ մեզ հաւատով, և աւտար ի մարանութենէս յայսմանէ, և ի պատճառս ինչ պիտոյից հասա-

Ներցեն առ մեզ եպիսկոպոսք կամ քահանայք, մի՛ ոք իշխեսցէ հաղորդել կամ պատուել քահանայական պատուով, այլ որպէս զմի յաշխարհականաց ընկալցին վանատրութեամբ և այլ կարգաւք։

Ապա թէ ոք զայցէ ի խոստովանութիւն ի քահանայից, զձեռնարկութիւնն առաջի եպիսկոպոսին արասցէ՝ յորոյ վիճակի կալն կամիցի. և մի՛ ոք իշխեսցէ վանից երէց կամ քահանայ առանց եպիսկոպոսին իւրոյ ընդունել զոք յայսպիսեացս յընտանութիւն կամ ի հաղորդութիւն։

Արդ՝ եթէ ոք յաւժար ութեամբ ընկալցի զկանոնական սահմանս մեր և արասցէ, աւրհնեսցի հոգւով և մարմնով, և ի կենցաղումն զուարճացեալ բերկրեսցի. և ի յաւիտենից բարիսն վայելեսցէ։ Իսկ եթէ ոք՝ ոչ լուիցէ և ապստամբեսցէ յաստուածահաճոյ կեցուցանող պատուիրանէս՝ յիշխանաց կամ ի քահանայից կամ յեպիսկոպոսաց կամ ի ժողովրդականաց, նզովեսցի՛ հոգւով և մարմնով և ամենայն կենցաղով իւրեանց և ընկալցին անողորմ՝ պատուհաս յարդար դատաստանացն Աստուծոյ՝ աստ և ի հանդերձելումն։

Digitized by Google

ՁԵՌՆԱՐԿ՝ ՁՈՐ ԽՆԴՐԵԱՑ ՍՄՐԱՏ ՎՐԿԱՆ ՄԱՐԶՊԱՆ, ՑԱՑՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ, ՈՐՔ ԴԱՐՁԵԱԼ ԺԱՂՈՎԵՑԱՆ ՆՈՐԻՆ ՀՐԱՄԱՆԱՒ Ի ԴՈՒԻՆ, ԿԱՐԳԵԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ, ՑԵՏ ՄԱՀՈՒԱՆԸՆ ՄՈՎՍԷՍԻ. ԵՒ ՁԱՅՍ ՁԵՌՆԱՐԿ ԵՏ ՆՈՅՑ։

Ամենագովելի և փառաւորելոյ և աստուածաշնորհ պատուով պայծառացելոյ Տեառն Սմբատայ Վրկան մարզպանի և տերանց զինուորի, և Տեառն Գիգայ Դաշտկարանի, և վարդապետի Հայոց Շարասղարի. Ի Մանասէէ Բասենոյ եպիսկոպոսէ, ի Քրիստոփորէ Սիւնեաց եպիսկոպոսէ, յԱբրահամայ Ռշտունեաց եպիսկոպոսէ, ի Յովհաննէսէ Ամատունեաց եպիսկոպոսէ, ի Գրիգորէ Անձևացեաց եպիսկոպոսէ, ի Սիմոնէ Գողթան եպիսկոպոսէ, ի յԱհարոնէ Մեհնունեաց եպիսկոպոսէ, ի Ներսէսէ Բժունեաց եպիսկոպոսէ, ի Յոհանկայ Եղոյ եպիսկոպոսէ, ի Թադէոսէ Առանոյ եպիսկոպոսէ, Տերամբ ողջոյն։

Եւթնուտասներորդ ամի Ապրուեալ Խոսրովու արքայից արքայի, յամենեանն մարերի, որպէս փառաւորութիւնդ ձեր յայս եպիսկոպոսաց՝ զոր ի վերոյդ գրեալ է. որ ի ժամուս ի Դուլնի ի սուրբ եկեղեցւոջս դիպաք, ձեռնարկ խնդրեցէք վասն սուրբ և ուղղափառ հաւատոյ, զոր մեր հարանցն և երանելի վարդապետացն կալեալ է, և այժմունիմք կամաւքն Աստուծոյ։ Արդ՝ որպէս յառաջագոյն հայրապետացն Հայաստան աշխարհիս, և եպիսկոպոսացն և քահանայից և իշխանաց և աշխարհականաց, սոսկալի նզովիւք մերժեալ և ի բաց ընկեցեալ է զամենայն հերձուածողս. զԱրիոս և զՄակեդոն, և զանայիշելին Նեստոր և զԵւտիքոս, և զժողովն Քաղկեդոնի և զպիղծ տումարն Լևոնի, և հեռանամք ի հաղորդութենէ նոցա ճշմարտութեամբ. Ապա եթէ խաբէութեամբ ինչ իցեն բանքն մեր, նզովեալ եղիցուք յամե-

նասուրբ Երրորդութենէն։ Նոյնպէս և ես, Սմբատ Վրկան մարզ-պան և տերանց զինուոր, և Գրիգ Դաշտկարեն, և վարդապետ Հայոց Շարսաղար, նզովեմք զնզովեալսդ ի ձէնջ, որպէս հարքն մեր երանելիք նզովեցին զնզովեալսն ի ձերոց հարանցն, և աւրհնեմք զաւրհնեալսդ ի ձէնջ, որպէս և հարքն մեր աւրհնեցին զաւրհնեալսդ ի ձերոց հարանցն երանելեաց և վարդապետաց աշխարհիս։ Եւ յայս ուղղափառ հաւատոյս վերայ հաստատուն և անշարժ կացցուք. ի կեալ և ի մեռանել ընդ ձեզ։ Ապա թէ խաբէութեամբ ինչ իցեն բանքս մեր. նզովեալ եղիցուք յամենասուրբ Երրորդութենէն։

Եւ կնքեցաք զձեռնարկս այս, և եդաք ի սուրբ եկեղեցւոջս Դունայ։ Ես Մանասէ Բասենոյ եպիսկոպոս, իմ ամենակցաւք հանդերձ, որոց անուանքն ի վերոյդ յիշատակեալ են։ Եւ Սմբատ Վրկան մարզպան, և տերանց զինուոր, իւր եղբարաւք հանդերձ, առաջի ամենասուրբ Երրորդութեանն, նախ սրտիւք մերովք, և ապա մատանաւք մերովք։

Digitized by Google

ՉԵՌՆԱՐԿ՝ ԶՈՐ ԵՏՈՒՆ ԱՐՐԱՀԱՄՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆՆ ԱԶԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԱՅՆՈՔԻԿ ՈՐ ԷԻՆ ԸՆԴ ԻԶԽԱՆՈՒԹԵԱՄԲ ՀՈՌՈՄՈՑ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆԸՆ ՄԱՒՐԿԱՆ

Ելթն ու տասներորդ ամի Ապերուէջ Խոսրովու արքայից արքայի, իմ Աբրահամու Հայոց կաթուղիկոսի և աթոռակցաց իմոց, Մանասէի Բասենոյ եպիսկոպոսի, Քրիստափորի Սիւնեաց եպիսկոպոսի, Յովանիսի Ամատունեաց եպիսկոպոսի, Գրիգորի Անձևացեաց եպիսկոպոսի, Սիոնի Գողթան եպիսկոպոսի, Ահարոնի Մեհնունեաց եպիսկոպոսի, Ներսէսի Բոժունեաց եպիսկոպոսի, Յոհանկայ՝ Էղոյ եպիսկոպոսի, Թադէոսի Առանայ եպիսկոպոսի և իշխանաց մերոց. Տեառն Սմբատայ Վրկան մարզպանի և տերանց զինուորի, Եւ Գիգա Դաշտկարանի, և վարդապետի Հայոց Շարաղարի, և այլ իշխանաց և աշխարհականաց և ուղղափառաց առաջի կացեալ Թէոդորոս սեպհական գրնդին եպիսկոպոս, Ստեփանոս Բագրաւանդայ եպիսկոպոս, Մովսէս Խոռխոռունեաց եպիսկոպոս, Քրիստափոր Ապահունեաց եպիսկոպոս, Ներսէս Վանանդայ եպիսկոպոս, Հանդերձ վանից երիցամբքս այսոքիւք, Արրահամ սրբոյ կաթուղիկեի *) վանից երէց, Սամուիէլ սրբոյ Հռիփսիմեի, Բարիւրաս սրբոյ Յովհաննու վանաց երէց, Խոսրով Աւշականու, Յաւիտեան Աղիվարդայ, Դաւիթ Երևանայ, Իսմայէլ Գառնոյ, Յունանէս Աւանի, Իսրայէլ Պողավանից, Ջոջիկ Երևանից, Յոհանիկ Արտաւազդայ ապարանից, Աբաս և Որդեակ և Աբրահամ Փարպիոյ, Միքայէլ Աղցից, Գիորգիս Արճոյ, Կոյմաս Ուրդայ, Մայէն միւս Արճոյ, Յոհանիկ Արծափայ, Սիմոն Դատ աւանից, Սամոտ Բագարանի, և այլ վանից

*) Այսպէս յօրինակին.

երիցամբ հանդերձ. եկեալ յանդիման մեր զբարեպաշտութիւն խոստովանեցին, նպովելով նոյնաձևս ըստ երանելի հարցն մերոց զամենայն հերձուածողս, և զԱրիոս. և զՄակեդոն. և զՆեստոր, և զԵւտիքոս, և զչար ժողովն Քաղկեդոնի, և զպիղծ տումարն Լևոնի, և աղաչանս մատուցանելով առաջի մեր, խառնել զինքեանս ի միաբանութիւն եկեղեցւոյ ճշմարիտ հաւատին Քրիստոսի. և ասացին միաբանութեամբ ամենքեան. թէ զխոստովանութիւն և զսահման զոր հաստատեցին երանելի հարքն մեր անշարժ պահեսցուք առաջի Աստուծոյ և հոգևոր հարանցդ մերոց, և զապաշխարութիւն զոր տայք, յաւժարութեամբ ընդունիմք, և կամաւք կատարեմք, և ի հաղորդութենէ նզովելոցդ ամենևին հեռանամք։ Եւ թէ խարէութիւն ինչ եկէ ի կամս ուրուք, նզովեսցի հոգւով և մարմնով յամենասուրբ Երրորդութենէ։

Եւ ընկալեալ զնոսա ապաշխարութեամբ, ըեռն ինչ և մեր բառնալով զնոցա, ըստ գրեցելումն. կնքեցաւ ձեռնարկս այս ի նոցանէն յանդիման մեր ամենեցուն, վկայութեամբ սրբոյ Երրորդութեանն։

Digitized by Google

ՍՐԲԱՍԻՐԻ ՏԵՐՈՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ ՀԱՑՈՑ ԿԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ԳՐԻԳՈՐԷ ՆՈՒԱՍՏԷ ՔԵՐԴՈՂԷ

Պարտ է կարաւղայն, ասէ առաքեալ, զտկարութիւն տկարացն բառնալ վասն շինութեան, և ըստ մարգարէին Հրամանի զքարինս ի ճանապարհէ ի բաց ընկենուլ, զի մի՝ որ կաղըն իցէ զլորիցի. և ոչ դնել առաջի սակաւատեսի գայթագղութիւն, և այս թէպէտ և առ այլս է, բայց առաւելագոյն պատշաճեցաւ առաջնորդաց։ Եւ այժմ իմ և ըստ մեզ խորհաւղացս բանքս են առ երանելի հարս մեր ի Քրիստոս, որք ի մերում ժամանակիս զՀետ երթաւղաց սրբոց առաքելոցն խրատու և նմանութեան՝ որոշեալք ի ստոցն։ Եւ աղերս ապարանութեան, զարժանն թուեցեալ մեզ խնդրել առ արգելաւոս համառաւտագոյն ձայնիւ. քանզի յեկեղեցիս և ի ժողովանոցս՝ զորս Աստուծոյ շինած գիտեմք բանաւոր արժանացելովքս, զսեղանն մեծ ուսաք ի նոյն ինքն ի Բանէն Աստուծոյ և ի նորին առաքելոցն, զնոյն պաշտելի և զատուցեալ և որոշեալ զՇմարիտն և զանմերձենալին։ Վասն այլապէս է խորհիցն. և ոչ զնմանութիւն պաշտաման առաքելոցն վարդապետութեան ունաւղաց, որպէս գրէ երանելին Պաւղոս Եբրայեցւոցն կանոնեալ սովորութիւն առ և այնց, որք ոչ ուղղակի խորհին ի հաւատ, յամառական պնդութեամբ, արտաքս վարել, հանելյեկեղեցւոյ քարոզական ազգմամբ յաղագս ոչ աղաւթակցելոյն և Քրիստոսի երկրպագու լինելոյ ընդ մեզ։ Եւ գոչէ ևս թէ սուրբ սրտիւ և անխիղճ միտս ունել ի կատարեալն հաւատ, և կալ առաջի սուրբ և Աստուծոյ սեղանոյ։ Եւ զի Աստուծոյ սեղան խաչարգաբար *) աւրհնութեամբ յուշղոցն և ի կատարելոցն զլեաւորացն եղանի, ամենեցուն յայտ է։ Իսկ զորս և ոչ առաջի սեղանոյն սովորութիւն ընկալաք

*) Ա յապէս յորինակին.

թողուլ. վասն հարման նոցա մտացն խղճի։ Քանզի չէ հաղորդութիւն լուսոյ ընդ խաւարի, զի նոցանէ յուղղութիւնն առարկեալ զսեղանն մեկ կեցուցանող մարմնոյն, և մեղսակէպ հրոյն՝ ո՞ յանձն առցէ հաւաստի եղանիլ. զի Տէրն մեր և Աստուած ի ձեռն սեղանոյն ճշմարտագործ է, որպէս պատմէ աւետարանագիրն և զքինքն իսկ առնէ յուտել կերաւղայն. ապա հակառակ ունարան *) ի լուծումն փոխէ զէութիւն գտնչալ ի հրոյն կայծակն. որպէս և ոչ կենդանի ջուրն առ գերութեամբն, որ թուի ինձ դասք հերեսիոտաց. զոր փորեցին իւրեանց դուրս ըստ մարգարէին ամբաստանութեան։ Բայց սեղան Տեառն կենդանի ջրով շրջագայեալ, կարէ հուրն իմանալի փութանակի բորբոքել որպէս առ Եղիպիւն։ Իսկ ապա որք պատուէրս առաք փորձել քննութեամբ զրարի՞ն ընդունել, և ի չարեաց իրէն հեռանալ, անընդդրող և խառնակ մտաւք վարիլ արդեաք ո՞չ լինիցի առիթ դեհենին. թողից զպատուէրն զամենայնիւ ոչ հաղորդելն ընդ այնպիսին։ Բայց պատճառ զայլոց եղեալ մեծի դատապարտութեան յԱստուծոյ ակնունելի է։ Զի կամ անդրէն շինիցի հաղորդել կամայ հերձուածողաց հեռացեալն, ևս չարագունիցի զայրացական մտաւք, ի Քրիստոս գմեղանչելն ամբարիցէ, կամ բամբասեալ և զմինչ իբրև զմի յորոշելոցն. ի սուրբ հարսն ընթացուցանէ զպատճառս յանդգնութեանն իբրև ամբարհաւաճելոց և զիւրեանցն խնդրաւղ կացուցողի, թէ միութիւն այժմ յայտի։ Եւ ահա կորնչիցի տկար եղբայրն՝ վասն որոյ Քրիստոսն մեռաւ, և պատճառաւղին եղելոյ ըղձալի և հեշտ է երկանաքար հարստեալ ընդ պարանոցն, և տալ զինքն ովկիանեան յորձանացն վըճիռ հրաւիրէ։ Բայց այժմ ինձ ընդ միտ ածէք ձեզ Աստուծով զթշնամանողն մեր աւանդիս հանդերձ աւանդաւղաւքն, և կամեցող շրջել զաւետարանութիւն՝ ասի ի մինչ մեծի միջոցաւ, ի բաց հեռացուցանել նշովին ձայնիւ, և ըստ նորա զնուիրեալն նորին միում շարայարութեան կրկնակացն Քրիստոսի, որպէս իւր թուի. որ է արդարև թշնամանք մարդացելոյն Աստուծոյ։ Մեզ արժանի համարիք ասել ի ձեռն մաղթման զՀայր, առաքել զսուրբ Հոգին ի նա, զի արասցէ ճշմարիտ մարմին և արիւն փրկաւղին մերոյ Բանին մարմնացելոյ, և զ'ի նոցանէ խորհրդոյն հրաժարեցուցանէք, զի թէ ի նմա թերութիւն և անվայե-

*) Ա յապէս յօրինակին.

լուէք Աստուծոյն մարդացելոյ. նոյն և աստ հաւասար նմին։ Քանզի ոչ առանց աւրհնութեան, որպէս ասացի, ուսաք զսա գոլ, և ըստ երկրորդ բանի զդարձեալսն ի խոստովանութիւն, ի հովուական աշտիճանի կացելոցն՝ սակս առաջին գործոյ, զի ոչ յուղղոց ընկալան զձեռնադրութիւնն յապաշխարութեան կարգի կացուցանէք, ոչ համարձակել ի սեղան աւրհնել, և զյառաջն կանգնել, որպէս յուղղոցս համարիք։ Բայց թէ վասն քահանային մերձեցման զվատթարագոյն սրբեալ համարիք, մի՛ գուցէ և նա վարակիցի. քանզի վատթարի և առաքինւոյ առ միմեանս յարմամբ հարկ է և զհառնումն *) առնուլ. որ լինի ո՛չ առաքինի և ո՛չ վատթար. և այս ի բազումս։

Արդ՝ հայցաւղքս ի ձեռն զրոյ աղաչեմք զսրբութիւնդ ձեր, թէ այլ ինչ յայտնեցաւ ձեզ ի հին և նոր կտակարանաց, ցուցէք և մեզ, և կամ թէ ի ձեռն հոգւոյն շնորհի նշանակել ձեզ։ Քանզի սովոր է զհակառակութիւնս լուծանել. և զկամս երկիւղածաց առնել, ապա թէ ոչ զհայցումս մեր կատարեցէք, փոխել զսեղանս նո՞ր ի նորոց հաստատեալս, որ ոչ ըստ հարանցն մերոց որ ի Քրիստոս կացեալ, այլ ըստ աւտարատեսուչ հովուաց յաչորդութիւն առին։ Եւ քանզի որպէս նոքա զբարեպաշտութիւնն խոստովանելով յառաջին ի մտացն փոխեցան, այսպէս գոյ հնար փոխարկել յառաջին սրբութեանն պատուականութիւն և զսեղանս, որպէս առ Մակաբայեցւովքն եղև, յեղեալ զեղծեալին յանխղճագոյնս։ Սակս փոխելոյ է՝ մեր բանս աւրինակեալ՝ թէ կար գոյ, այլ ոչ զհինն աւրինադրեմք տապալել, քանզի թէպէտ և լայով և արտասուաւք և քոքովք և թերահաւատութեամբ ծածկեցին զսեղանն Ցեռոն, բայց հաստատուն հիմն Աստուծոյ կայ և ունի զկնիքս զայս զորոց ասեն, թէ ծանեաւ Տէր զկուրան։ Իսկ յանաւրինացն և յանհաճելեացն բացակայի։ Իսկ զորոց խորհրդագէտն և վարդապետն հեթանոսաց որոշումն դնէ. զի՞նչ ոք առ այս ասիցէ։ Ապա թէ անընդրութեամբ վարիցիմք. մի՞թէ կայ ինչ ի միջի. ի բաց քակել զարգելումն, և զմեզ յեկեղեցիս նեստորականաց մտանել. և ի նոցա հաստատեալ սեղան կատարել զեռորհուրդն տէրունեան, և զնոցին չերիցունս ի մերս։ Ո՛չ առաքէն առաջինքն՝ յորժամ կամին միաբանել հաւատով, այ-

*) Ա. յոգէս յորինակին.

սու իրաւք զմիաւորութիւն ցուցեալ՝ համարձակէին կատարել ի միմեանց եկեղեցւոյ սեղանս։ Արդ՝ որք զկերպարանս Քրիստոսադաւանութեանն, թէև բազումք ունին, ի զաւրութենէն հեռիք են. որպէս այժմ առ մեզ հերիսիոտայքս, և կամ յարևելս ի Պարսս, ի Տիսպոն, և յայլ տեղիս ամենևիմբ իսկ զատուցեալ յեկեղեցեացն, զի և զդուշնոքա *) անդ երկրպագութիւն դատապարտութիւն ի հոգևորին ուսուցանէք։ Վասն այսորիկ սեղանակտաւս աւրհնէք և երիցունս արձակէք, կարեկցել նոցա որք արքունի հրամանաւ անդր երթան։

Արդ՝ վարդապետացն հրաման հաստատուն կայցէ, և առանց հաւասարութեան խոտորելոցն զպաշտաւն կատարեսցեն. ապա թէ յաշխարհիս թիւրացելոցն արարուածի թոյլ տայք, ոչինչ արգելէ և ի մէնջ յիշատակելոցդ սեղան գնոյն սովորութիւն ունել. և լոկ ի հայէն և ի բաժակէն աւրհնութեանց արգելուլ ծիծաղելի է։ Արդ՝ աղաչեմք, մի՝ լիցի մերոցս լսել զՑէրունեան զայն ձայն. Առաջնորդ կայր. զի՝նչ մեծ է. հա՞ցն՝ թէ սեղանն որ սրբէ. և ի վերայ երեր, թէ Ուրեմն վկայէք դուք ձեզէն, զի որդիք էք այնպիսի հարանց։ Ոչ ապաքէն կամակար մտաւք յանձն առին մերքս յայն յեղուլ, ոմանք վասն ազահութեան, և այլք սակս սնափառութեան. և կէսք կաշառովք եղեալք ընդ սուրբ հարանցն նզովիւք։ Իսկ յաթոռոցն իշխանութեան արժանաւորելոյ ըստ կանոնին սահմանի, դուք առաւել ողորմութեան արժանի արարէք, և այժմ զա՞յս ևս մինչ ընդարձակէք։ Վասն որոյ ասեմքս մեկէն իսկ որոշիմք յառաքելոցն և ի սուրբ հարցն. և չէ՛ ինչ անուամբ լոկ յորջորջելն, զի լսելոց եմք. Թէ որդիք նոցա էիք. զգործս նոցա կատարէիք։ Քանզի նոքա և զբաղանիս անգամ ի հերձուածողաց կոխեալս պիղծ համարէին, և արդարև ապաշաւելի մասին հասանեմք, մինչ այդմ ևս թոյլ տայք լինել։

Արդ՝ թողեալ զսուտ քահանայականն դաս, և զխորհուրդ հացին բեկման և զբաժակին. զսեղանոյս միայն քննութիւն յառաջ ձգեսցուք, և յայսոսիկ զհեթանոսականն, որում բազին սովորեցին ասել. և զհրէիցն յառաքելոց չյիշատակեցաւ առ մերս յարակցել։ Նոյն կանոն և ասա։ Իսկ առ սա որպէս բանս է, մինն ուղիղ ըստ լի հաւատոյ, և միւսն թիւրացեալ ըստ

*) Այսպէս յորինակին.

պակասահաւատն բարուց։ Քանզի սա, Տեառն կաւրութեանց և նա՝ ոչ։ Սա զսուրբս միայն ընդունի և զխոստովանողս, որպէս և նախացուցաւ Եսայեայ աւրինակելով զսա։ Քանզի նախ՝ զՏէր զաւրութեանց ետես, և առ նմին զնուէրին սեղան կայծակնապարուկ *), զի և խոստովանողին զՏէր զաւրութեանց տեսեալ աչաւք՝ կայծակն պղծակէզ ի նորին սեղանոյ առաքի, որպէս և մերքն ասեն, տեսաք մեք զնա, և առ մեզ հաւաստի եղանիլ։ Իսկ պղծաշուրթն ժողովրդեան՝ որ զՏէրն զաւրութեանց մեզ ասեն, անսրբութեան ընդունիչ, և զայս զնդէ, Երեմիաս, մեղքն Յուդայ, ասէ, գրեալ ի տախտակս սրտից նոցա և յեղջիւրս սեղանոց ձերոց. այսինքն զոր նոքա մեղանչէին. թէ դու մարդ ես, նորին մեղաւք գրեցան թիւրացս սեղանոյ եղջերք։ Քանզի և նա՝ նոցա և ձեր ասաց. որք ըստ հնոգն մտաց, և որդիքս Քաղկեդոնիտք զխոստովանութիւնն ի սեղանս գրեցին աղամանդեայ եղեգամբ։ Եւ որոշեալ դարձեալ առաքեալ՝ այսպէս ունիմք մեք սեղան՝ ուստի ոչ ունին իշխանութիւն այսպիսիքն ճաշակել և մեզ ի նոցայն թէ Մի մերձենար, մի՛ ճաշակեր, և մի՛ հպիր, որ է ի պէտս ապականութեան։ Եւ դարձեալ քաջերեսագոյն իսկ դրաւշէ ցմին Տեառն, և որք ըստ Տնառն խորհին, և զմիւսն դիւաց, որք ի բաց դարձեալ ի ճշմարտութենէն։ Եւ թէ ոչ այսպէս, զի՞ր այլ վատապաշտի սեղա՞ն՝ հա՞՝ կամ բաժա՞կ ելանէ յաւրհնութիւն, քանզի զոչ կարողութիւնն հաւասարապէս եղ, որպէս ի բաժակէն դիւաց, մերձեցելոցն ի Տէրունականսն։ Եւ յանդգնութիւն ինձ ոչինչ թուի զոլ ի բանիս առ ասել զայս ձայն ի վերայ հերձուածողաց, զի թէ հակառակող՝ սատանայ անուանի, որպէս Տէրն մեր և Աստուած Պետրոսի կոչեաց սատանելով յորժամ զվարդկաւրէնն միայն խորհէր ի վերայ նորա՝ և ո՞չ զԱստուծոյն, թէ Ցե՞տս երթ սատանայ՝ զայթագղութիւն իմ։ Եւ դարձեալ թէ այսս և դեռ չարս՝ զհրապուրողս յաւտար վարդապետութիւնս կարդայ, վասն զտրգէտն զ յողդողդս շարժահիմն առնելոյն։ Ըստ երկնաքաղաքացւոյն առնն, որ ասէր զպատերազմ ունել ընդ այսս չարս, որ ի ներքոյ երկնից, որք խոովեն և տատանեն հողմով վարդապետութեամբ և թէ այնպիսի վարդապետութիւն, որ է հողմ, այսքանուանին, որպէս սաղմոսերգակն ասէ, թէ Այսք և մրրիկ՝ աւր-

*) Այսպէս յօրինակին.

հնեցէք զՏէր, զոր ի լսումն ածողքն՝ հողմս փոխարկեն։ Եւ այսակի հողմոյ սկիզբն ի չարադեն Սիմոնէ կախարդէ եղև։ Իսկ ապա ո՞՛մ խղճելի է ի Պաւղոսէ զսեղանս դիւացն ասացեալ՝ զՀերձուածողացն իմանալ, որ ստուգապէս կարծի ինձ և առանց երկբայութեան։ Եւ վասն քննութեան այսքան իսկ զլիագոյնսն ի պարապ ժամու խնդրոյացն մատուցցուք։

Բայց առ հակառակամարտսն կայ և ասել. որք սուրբ Երրորդութեամբն ասեն սրբել թէպէտ և հաւատ ի Քրիստոս ոչ լի՛ իցէ։ Մի՛ փոփոխել, ասէ մարգարէն, զսահմանս հաստատեալս ի հարանց մկրտութիւն։ Այո՛, զի ի հարցն լուաք զարժանն. և է սա այսպիսի ինչ։ Նախ՝ ասել. թէ վա՜յ ինձ, զի պիղծ շրթունս ունիմ, և խոստովանել զարժանաւորութիւն հաւատոցս անպակաս ունելով, հանդերձ ողորմութեամբ, որպէս գրէ առակողն, և ապաշաւելով զոչ բարւոքն յառաջագոյն. ապա սերովբէ ի մն մատուցանէ զմաքրական դեղն, զմարմինն Աստուածն Բանի, հրացեալ աստուածային հրո՜վն Դախականաւ։ Իսկ ի վերայ սեղանոյ՝ այսպէս ուսաք. թէպէտ և սուրբ Երրորդութեանն անուն՝ պատմիւր և առ գրաւորականն ի նորա վերայ. որպէս Բանիւ Տեառն և հոգւով բերանոյ նորա ամենայն հաստատեալք և Լաւսով երեսայ քոյ տեսանեմք զլոյս։ Եւ երիցս սուրբն ասելով, զմի Տէրութիւնն խոստովանելով, և այլք բազում այսպիսիք բազումք բարբառք ի տաճարին։ Բայց զի ի Քրիստոս Յիսուս զհաւատն կատարեալ ոչ ունէին, թէպէտ սեղան է, այլ առաքեալ որոշեաց զմերս ի խորանին պաշտաւնէիս, զսոյն իմանալի է և ասա։

Այլ ասեն ոմանք, թէ սաղմոսերգն՝ նշանակարարս զխաչն ցուցանելով մե՜զ, զսեղանդ անուն յիշատակեաց, որ ձև և գաւրինակ յայտեալ վասն վերունակ լինել մարմնոյն Տէրունեան։ Ապա աւրինադրի մեզ. զի՛ նոցունց արարեալ խաչ նիւթեղէն՝ քակտել կամ չընդունել. ապա թէ այս ո՛չ, հանգոյն նորին և սեղանն։ Ասասցուք և առ այս, թէ հրաման ունէաք ի գրոց, կամ ի ճշմարիտ հարանցն. այո՛. որպէս և այժմ բազում անգամ հրաժարիմք ի տէրունական նշանէն որ հանաւ յայսց՝ ի վերայ հացին բեկելոյ և բաժակին, հրամանաւ ներբարգաւաճիցն, թէ և է պատուական։ Իսկ զնիւթեղէնդ վասն այնր ոչ զի թէ և նոցա յիմարութիւն է, իսկ մեզ զաւրութիւն Աստուծոյ. քանզի պատուիրէ. Մի՛ ինչ քան զգրեալսն իմանալ։

Digitized by Google

այս ըստ տիրագոյն մտաց։ Բայց աղէ՝ ինչանակ սիրաւղդ, և զպատիւ անպանապանողդ, վասն զի զխաչն նշանակէ և գաւազանն, յաղագս նոր պտուղն բերելոյ, և բարունակ՝ վասն ճռին ողկուզոյ. և ծառ՝ սակս կախման խոյին, թէ կամիս յաւելից և զսանդուղսն։ Իսկ ստուգագոյն է՝ տուեալն երկիւղածաց նշան։ Արդ՝ հաւասարապէս տալի է մեզ զպատիւն, որք զՀշմարտութիւնն գլխաւորեալ առաք, որով նշանաւ պարծիմք իսկ. և այնց որ յառաջ նշանակարարսն ցուցանէր, և կամ թէ ըստ անձնիւր հարկաւոր պիտոյիցն առ նոսա, որ գուզնաքեայ խնամ ունիմք, անարդութիւն ինչ հասանիցէ ի խաչ կամ ի սեղան։ Ապա ուրէմն ոչ հասարակ է պատիւ խաչին և սեղանոյ։ Իսկ որք ասեն մանկանց անրանից ունել զպատուականութիւն սեղանոյս, և հասարակ զընկալումն. քանզի բան ոչ զոյ երկաքանչիւր խոստովանութեան, յայտնի են պատճառք կամաց նոցա. ի լսելն թէ ոչ է երկրորդ մկրտութիւն որ ի սուրբ Երրորդութիւնն, չանան անորոշ մտաց իմացուցանել զի երկուցեալք ի հարանցն աւանդութեանց փոխելոյ, տկամայ յայնպիսի սեղանոյ վայելեսցեն, զանվայելն մակարդ, առ այնպիսիսն՝ և ոչ մի բան առնել պատասխանի, կատարեալ իմաստութիւն։

Իսկ առ բարի հովիւդ ասասցուք, ո՞չ ապաքէն կանոն աւրինադրեցաւ ծնաւղաց յանկգուշութենէ մահ ի վերայ հասեալ համբակաց, ապաշխարութիւն ամաւք որոշելովք. եթէ յեղգութիւն մարմնոցն հասցէ գգուանաց անաւթովք, զծնաւղսն ասեմք պարտաւոր։ Եւ թէ չարափառ եղեալք կամ առանց մկրտութեան զերկնաւղսն մեղադրութեան արժանի առնեմք։ Եւ առաքեալ ծնաւղացն պատուիրէ. Անուցանիցիք, ասէ, .ուսմամբ և վարդապետութեամբ։ Եւ Աստուածարանն իմ Մովսէս՝ որդւոցն պատուիրէ զաստուածս քո բաց մի՛ ըամբասիցես. զի որպէս Աստուածն մեր զմեզս մեր՝ նա վերացոյց. այսպէս հարք և մարք մեր ի տղայութեանն զմեր։ Եւ զբնութիւնն իսկ ասէ առաքեալ թէ որ կամենկերն է, տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ է. իսկ կատարեալքն են կիրթ վասն ի չափն հասմանն։ Ճանաչելիքն՝ հասու են ընտրութեան բարւոյ և չարի, քաղցու և դառինն, որք և զպարտսն պահանջին. ապա թէ ոչ ո՞ հաւատայ առաջնորդաց համարս ընդ մեր պահանջել։ Այսպէս իմացի և ի վերայ տղայոցն, քան համբակացն ծնաւղացն խոստովանութիւն յաղագս անձանց և նոցա՝ բաւական իմանամք։

հնեցէք զՏէր, զոր ի լսումն ածողքն՝ հոգմս փոխարկեն։ Եւ այսակի հոգմոյ սկիզբն ի չարագեն Սիմոնէ կախարդէ եղև։ Իսկ ապա ո՞ւմ խղճելի է ի Պաւղոսէ զսեղանս դիւացն ասացեալ՝ զՀերձուածողացն իմանալ, որ ստուգապէս կարծի ինձ և առանց երկբայութեան։ Եւ վասն քննութեան այսքան իսկ զլիագոյնսն ի պարապ ժամու խնդրոցացն մատուցցուք։

Բայց առ հակառակամարտսն կայ և ասել. որք սուրբ Երրորդութեամբն ասեն սրբել թէպէտ և հաւատ ի Քրիստոս ոչ լի՝ իդէ։ Մի՝ փոփոխել, ասէ մարգարէն, զսահմանս հաստատեալս ի հարանց մկրտութիւն։ Այժ, զի ի հարցն լուաք զարժանն. և է սա այսպիսի ինչ։ Նախ՝ ասել թէ վա՜յ ինձ, զի պիղծ շրթունս ունիմ՝ և խոստովանել զարժանաւորութիւն հաւատոցս անպակաս ունելով, հանդերձ ողորմութեամբ, որպէս գրէ առակողն, և ապաշաւելով զոչ բարւոքն յառաջագոյն. ապա սերովբէ ինն մատուցանէ զմաքրական դեղն, զմարմինն Աստուածն Բանի, հրացեալ աստուածային հրո՜մն Դախականաւ։ Իսկ ի վերայ սեղանոյ՝ այսպէս ուսաք. թէպէտ և սուրբ Երրորդութեանն անուն՝ պատմիւր և առ գրաւորականսն ի նորա վերայ. որպէս Բանիւ Տեառն և հոգւով բերանոյ նորա ամենայն հաստատեալք և Լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Եւ երիցս սուրբն ասելով, զմի Տէրութիւնն խոստովանելով, և այլք բազում այսպիսիք բազումք բարբառք ի տաճարին։ Բայց զի ի Քրիստոս Յիսուս զհաւատն կատարեալ ոչ ունէին, թէպէտ սեղան է, այլ առաքեալ որոշեաց զմերս ի խորանին պաշտաւնէից, զսոյն իմանալի է և աստ։

Այլ ասեն ոմանք, թէ սաղմոսերգն՝ նշանակաբարս զխաչն ցուցանելով մեզ, զսեղանդ անուն յիշատակեաց, որ ձև և կաւրինակ յայտեալ վասն վերունակ լինել մարմնոյն Տէրուն։ Ապա աւրինադրի մեզ. զ՝ի նոցունց արարեալ խաչ նիւթեղէն՝ քակտել կամ չընդունել. ապա թէ այս ոչ, հանգոյն նորին և սեղանն։ Ասասցուք և առ այս, թէ հրաման ունէաք ի գրոց, կամ ի ճշմարիտ հարանցն. այո. որպէս և այժմ բազում անգամ հրաժարիմք ի տէրունական նշանէն որ հանաւ յայսց՝ ի վերայ հային բեկելոյ և բաժակին, հրամանաւ ներբարգաւաճիցն, թէ և է պատուական։ Իսկ զնիւթեղէնդ վասն այնր ոչ զի թէ և նոցա յիմարութիւն է, իսկ մեզ զաւրութիւն Աստուծոյ. քանզի պատուիրէ. Մի՝ ինչ քան զգրեալսն իմանալ։

Digitized by Google

այս ըստ տիրագոյն մտաց։ Բայց աղէ՝ զնշանակ սիրաւոր, և զպատիւ անպանպանողդ, վասն զի զխաչն նշանակէ և զաւանդն, յաղագս նոր պտուղն բերելոյ, և բարունակ՝ վասն ճռին ողկուզոյ. և ծառ՝ սակս կաթման խոյին, թէ կամիս յաւելից և զսանդուղսն։ Իսկ ստուգագոյն է՝ տուեալն երկիւղածաց նշան։ Արդ՝ հաւասարապէս տալի է մեզ զպատիւն, որք զՀշմարտութիւնն գլխաւորեալ առաք, որով նշանաւ պարծիմք իսկ. և այնց որ յառաջ նշանակարարսն ցուցանէր, և կամ թէ ըստ անձնիւր հարկաւոր պիտոյիցն առ նոսա, որ դուզնաքեայ խնամ ունիմք, անարդութիւն ինչ հասանիցէ ի խաչ կամ ի սեղան։ Ապա ուրէմն ոչ հասարակ է պատիւ խաչին և սեղանոյ։ Իսկ որք ասեն մանկանց անբանից ունել զպատուականութիւն սեղանոյս, և հասարակ զընկալումն. քանզի բան ոչ զոյ երկաքանչիւր խոստովանութեան, յայտնի են պատճառք կամաց նոցա. ի լսելն թէ ոչ է երկրորդ մկրտութիւն որ ի սուրբ Երրորդութիւնն, ջանան անորոշ մտաց իմացուցանել, զի երկուցեալք ի հարանցն աւանդութեանց փոխելոյ, սկամայ յայնպիսի սեղանոց վայելեսցեն, զանվայելն մակարդ, առ այնպիսիսն՝ և ոչ մի բան առնել պատասխանի, կատարեալ իմաստութիւն։

Իսկ առ բարի հովիւդ ասասցուք, ո՞չ ապաքէն կանոն աւրինադրեցաւ ծնաւղաց յանզգուշութենէ մահ ի վերայ հասեալ համբակաց, ապաշխարութիւն ամաւք որոշելովք. եթէ յեղգութիւն մարմնոյն հասցէ զզուանաց անաւթովք, զծնաւղսն ասեմք պարտաւոր։ Եւ թէ չարափառ եղեալք կամ առանց մկրտութեան զերկնաւղսն մեղադրութեան արժանի առնեմք։ Եւ առաքեալ ծնաւղացն պատուիրէ. Սնուցանիջիք, ասէ, .ուսմամբ և վարդապետութեամբ։ Եւ Աստուածարանն իմ Մովսէս՝ որդւոցն պատուիրէ զաստուածս քո քաջ մի՛ բամբասիցես. զի որպէս Աստուածն մեր զմեզս մեր՝ նա վերացոյց. այսպէս հարք և մարք մեր ի տղայութեանն զմեր։ Եւ զքնութիւնն իսկ ասէ առաքեալ, թէ որ կամենկերն է, տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ է. իսկ կատարեալքն են կիրթ վասն ի չափն հասմանն։ Ճանաչելիքն՝ հասու են ընտրութեան բարւոյ և չարի, քաղցու և դառինն, որք և զպարտսն պահանջին. ապա թէ ոչ ո՞ հաւատայ առաջնորդաց համարս ընդ մեր պահանջել։ Այսպէս իմացի և ի վերայ տղայոցն, քան համբակացն ծնաւղացն խոստովանութիւն յաղագս անձանց և նոցա՝ բաւական իմանամք։

Իսկ սեղանոց՝ ոչ այսպէս։ Քանզի որպէս սովորութիւն կալաւ առ ոմանս շարժել զսեղանոցն զՀաստիչն ինչ ոչ վնասեաց։ Արդ՝ որպէս այս եկն բանս. Է՞զ որ շնորհատուր իշխանութեամբ յարժանաւորութիւն կոչէք. և Է՞զ որս խոստովանութեամբ՝ ասել նախ զանաւրէնութիւնն յորմէ արդարանան։ Իսկ սեղան ուրեմն փոխել իրաւունք են։

Այս ի մէնջ աղերս առ ձեզ. և խնդիր ըստ գրոց. ուղղել ի պատուիրանաց զսխալումն կամաց մերոց. ձեզ է բաւականութիւն. ապա թէ իշխանութեամբ ինչ կամիք և ոչ ըստ գրոց, մեր վերջին բան վասն այդր դոյնդ է։

Digitized by Google

ԸՆ ՍՐԲԱՍԷՐ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄ. Ի ՄՈՎՍԻՍԷ

Սրբասիրի Տեառն Աբրահամու Հայոց Կաթուղիկոսի. ի Մովսէսէ անարժանէ բաղում խոնարհութեամբ երկրպագութիւն. ընդ որով և առաւել զսրբութենէ ձերմէ ողջունի հարցութիւն։

Լուայ, հայր պատուական, պայծառութեամբ զնորոգութիւն սրբոյ աթոռոյդ Տեառն Գրիգորի, և բաղում խնդութեամբ լցաւ անձն իմ տառապեալ, զի ի վաղուց հետէ փափաքեալ սպասէի լսել զայդ։ Մանաւանդ զԱստուածասէր առաքինութենէդ ձերմէ. յորժամ լուայ, որ ի մանկութենէ, վասն որոյ ընտրեաց իսկ Աստուած, և պարգևեաց առաջնորդ և վարդապետ աշխարհիս, ի նեղութեան ժամանակի, յոյժ խնդացաք և ուրախ եղաք։ Քանզի ահա արդէն իսկ աւրհնեաց Աստուած յոտին քում զաշխարհս հայոց. և ամենայն բարեաց հիմնադրութեան սկիզբն և առաջնորդ, իշխանացդ բազմամեայ ժամանակաւք հեռացելոց յաշխարհէս, պայծառացեալք պատուովք և գոհութեամբ թագաւորաց այսրէն դարձ։ Սրբոյ եկեղեցւոյդ շինութեան և նորոգութեան աշխարհիս յերկոցունց կողմանց, հոգևոր և մարմնաւոր պատառմանն՝ անդրէն միաւորութիւն։ Եւ որպէս հիմնս բարիոք եդաւ ի ձեռն ձերոյ սրբութեան, յուսամք յողորմութիւն Քրիստոսի Աստուծոյ զկատարումն ևս լաւագոյն լինել։

Արդ՝ փութասցուք ծանուցանել և զյաւս մեր՝ սրբութեան ձերում, որպէս հիւանդք որ ցուցանեն զվէրս իւրեանց ճարտար բժշկաց, և խնդրեն զառողջութիւն ի նոցանէ։ Աղաչեմք և մեք ձեռնտու լինել ձեզ եկեղեցւոյ Քրիստոսի, որ հաւատակից և աշակերտ ձեր էր, և այժմ հիւանդացեալ ի նեղութեան է։ Նախ աղաւթիւք խնդրելով զԱստուծոյ և աշխատասէր վարդապետութեամբ ձերով, սատարութեամբ և փառաւորեալ իշխանացդ, ջանացարուք դարձուցանել զժողովուրդն

Digitized by Google

ժխտող և կապտամբեալ յուղղութիւն, և ածել ի նոյն գաւիթ միոյ հովուի։ Եւ փութացարուք այսուհետև և որ ի հասարակացն է շահաւորութիւն և ի բազմաց կարեբարձութիւն. ըստ աւրինակի երանելոյն Մովսէսի և սրբոյն Պաւղոսի. յորոց մինն առանց իւրայոցն թողութեան հասման, և կինքն տարագրեալ ի դպրութենէն կենաց աղերսէր. և միւսն ասէր, եթէ Ուխտիւք խնդրէի ես իսկ ինքն նզով լինել ի Քրիստոսէ՝ վասն եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնոյ։ Որոց ահա առաքինութիւնն ընդ ամենայն բոլոր ազինս, մշտաքարոզ բանիւ ընթանայ պայծառացեալ. զի ունելով զնոցա գործսն աւրինակ, և հետևելով նոցա, եղիցի և ձեզ պարծել ի Քրիստոս՝ թէ ինձ տուան շնորհքս այս ի Տեառնէ, ի Վրաց մինչև յաշխարհն Աղուանից քարոզել զանքննին մեծութիւն փառացն Քրիստոսի. և զայսչափ ազգս շահել ձեր, և Քրիստոսի պատարագեալ։ Ընդ որոց եղիցի լսել և զբարբառն հրաւիրական. թէ Բարի մշակ և հաւատարիմ, հանդերձ ընդ քեզ սատարիչ բարեկամաւքդ և փրկեալ զնդաւդ, եկ մուտ յուրախութիւն Տեառն քո, ընդ նախնիս քո, և ընդ սիրելիս անուան իմոյ։ Իսկ եթէ զանարժանութենէս մերմէ հարցանէք, ի Վրթանէսէ քերդողէ տեղեկանայք. և անձն իմ տառապեալ և աշխարհն մոլորեալ սրբութեան ձեր յանձն եղիցուք։

Զաղաղակեալ ի զանարժանս թուս ի զծնաւղսն իմ յիշեցէք ի Քրիստոս ո՛վ սուրբք ընկերցողք։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Սրբասիրի Տեառն Մովսէսի եպիսկոպոսի յԱբրահամայ, թէպէտ և ոչ կամաւ՝ Հայոց Կաթուղիկոսէ Տերամբ ողջոյն։

Տեսի գիր ողջունի որ լի՛ էր բազում գոհութեամբ կողորմութեանցն Աստուծոյ և արդիւնաւոր օրհնութեամբք կմեր տկարութե՛ւէ. Նաև արժանաւոր ասել վանրաւականութիւնս իմ. որ և յանձնեցաք իսկ պարգևաբաշխին բոլորեցունց շնորհհատոյց լինել ձեր սրբութեանդ։

Իսկ կսոսկալի և վծանր բեռանցն բառնալոյ, որում ոչ ունէի ակն. անգիտելի է ինձ որպէս ըմբռնեցայ, և կամ թէ կրակմութեանն կամս ի միաբանութիւն գալ։ Քանզի թէ ի վերուստ կարծիցի ումեք, վանարժանութիւնս իմ դիտելով, որ ոչ այսմ աստիճանի նմանութիւն ցուցանի, այլ և ոչ փոքրագունին քան կսոյնս՝ կոր ունէին, և եթէ ի փորձութիւն և յերեւոյթ ամենեցուն եդ Աստուծոյ. այս յոյս՝ ոչ ուստեք է ինձ. բայց թէ յետ Աստուծոյ ողորմութեանն, ի ձեր սրբութեան աղաւթս։ Արդ՝ աղաչեմ, զձեր սրբութիւնդ ոչ դադարել աղաչանս մատուցանել առ Ամենակալն, զի տագէ ինձ ոյժ կարողութեան ըստ իւրն հաճոյից, կատարնագոյնս ցուցանել վնորայն ամենասութիւն առ մերս երկիր. նմանարարս և առ աշխարհն Վրաց և Աղուանից, պայծառանալ ի Քրիստոս Աստուած ճշմարիտ հաւատով. ի ձեռն մերոյ նուաստութեան, և կամիմ աւրհնել ի ձեր սրբութենէդ։ Մի՛ դանդաղիցիս ի սուրբ Զատիկն գալ պսպ, զի բազմաց լինի խնդութիւն և գործք հոգեւորք առաջի կայ՝ մինչդեռ Տէր Սմբատ աստէն է, փութամբ որով և է աւրինակաւ նախ զայդ ի գլուխ տանել՝ շնորհիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԱՌԱՋԻՆ ՏԵՍՈՒՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ԱՌ ԿԻՒՐԻՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սրբասիրի Տեառն Կիւրոնի Վրաց կաթուղիկոսի, և այլ եպիսկոպոսաց քոց. յԱբրահամայ Հայոց կաթուղիկոսէ, և յայլ եպիսկոպոսաց ամենակցաց իմոց. Տերամբ ողջոյն։

Ցառաջագոյն երանելի հայրապետն մեր Մովսէս գրեաց առ ձեզ մեղադրութիւն յաղագս հաղորդելոյն ձեր ընդ այնոսիկ՝ ընդ որս չէր պարտ. և ձեր զրով և պատգամաւորաւ յանձն էր առեալ, չհեռանալ ի միարանական հաւատոյ հաղորդութենէ աշխարհիս մերոյ։ Այժմ զչարաղոյնն և զծանրագոյնն մեզ եհաս լսել զի զմիաւորութիւն հաւատոյ, և զասպնջականութիւն զերկուցունց աշխարհացս Ցուրտաւայ եկեղեցին անշարժ միջնորդութեամբ պահէր, ուստի սէր և խնամութիւնք մարմնաւորականք և հաղորդութիւնք հոգևորականք կատարէին ցնծալից ուրախութեամբ։ Աստի, ի Մծխիթայի ի Խաչն գալով. և այսր ի Սուրբ Կաթուղիկէ։ Այժմ զՑուրտաւայ եպիսկոպոսն հալածեալ թէ ընդէր խոստովանել հրամայեն զհաւատ ուղղափառութեան, և զպաշտաւնն հայերէն սրբոյ Շուշանկան զկարգաւորեալն՝ լսեմ թէ ի բաց փոխեալէր։ Մեզ՝ մահուշափ և ևս չարաղոյն թուեցաւ զործդ այդ։ Զի թէպէտ և յաւս հաւատոյ՝ արքայից արքայի եղև խնդիր քննութեան մեր աշխարհիս և Հոռոմոց, որք զժողովն Քաղկեդոնի ընկալան, և զտուամարն Լևոնի, Մեր և ձեր աշխարհիս վարդապետք և իշխանք հեռացան ի հաղորդութենէ նոցա, և միարանութեամբ և գրով պահի ի միջի մերում մինչև ցայժմ։ Այժմ ոչ է պարտ սրբութեանդ ձերում աւտարութիւն ի մէջ արկանել երկուցունց աշխարհացս, և հեռացուցանել զսէր և զխնամութիւն զմարմնաւորական և զհաղորդութիւն հոգևորական, զի մի որ եկես-

Digitized by Google

ցէ աղաւթել աստի ի սուրբ Խաչդ. և պտի ի սուրբ Կաթուղիկէ. Զի թէ ի ղինուորաց ոք լինէր պատճառ այսպիսի պատառման և չար խռովութեան, սրբութեան ձերում պարտ էր խնամ ունել և լինել պատճառ խաղաղութեան։ Իսկ եթէ դուք լինիք պատճառ աւտարանալ մեզ ի միմեանց, ո՞ր բան բովանդակիցէ կայդպիսի աղէտս։

Կամեցայ եպիսկոպոսունս արձակել առ սրբութիւն ձեր, և գՆմուտս դրոց սրբոց, ծանուցանել զվնասամտութիւն ժողովոյն Քաղկեդոնի և զտումարին Լեոնի և զաղծապիղծ կրաւնս և զանսուրբ վարս որ յայնմ հետէ եմուտ յաշխարհ, զոսն որոյ սրբասէր եպիսկոպոսս հալածեալ է։ Բայց ապա առժամս պատշաճ համարեցաք նախ ի ձեռն պատուական ազատ արանցդ, թղթով ընդունել ի ձէնջ պատասխանի. զի է՛ ինչ՝ որ չաւատալի իսկ թուեցաւ մեզ. զի ընդ աւտար թագաւորութիւն՝ արքայից արքայի ծառայից սիրոյ միաբանութիւն առնել և զբնական հաղորդակիցս որոշել կարի իսկ դժուարին է։ Ողջ պահեսջիք Քրիստոսիւ Աստուծով մերով։ Եւ զպատասխանի թղթոյս, և զողջոյն ձեր ըստ հաճոյիցն Աստուծոյ եղիցի մեզ լսել, որ առեթն և միաւորութեան և խաղաղութեան։

Digitized by Google

ՊԱՏՇԱԽԱՆԻ

Սրբասիրի և պատուական Տեառն Աբրահամու Հայոց Կաթուղիկոսի, և ամենայն եպիսկոպոսաց աթոռակցաց քոց, ի Կիւրիոնէ Վրաց կաթուղիկոսէ, և յամենայն եպիսկոպոսաց աթոռակցաց իմոց, աւրհնութեամբ սրբոյ Խաչիս՝ ողջոյն։

Թուղթս զոր արարեալ էր՝ տեսի, և զինչ գրեալս էր իմացայ, վասն արժանի լինելոյ տեառնդ զսուրբ աթոռ երանելոյն Գրիգորի ժառանգելոյ, վասն ողջութեան ձերոյ մնծապէս ուրախ եղէ և զԱստուծոյ գոհացայ։ Եւ որ գրեալ էր թէ յառաջագոյն երանելի հայրապետն մեր Մովսէս գրեաց առ ձեզ մեղադրութիւն յաղագս հաղորդելոյ ձեր ընդ այնոսիկ ընդ որս չէր աւրէն, եթէ վասն Խուժկայն ասէք, մեք յայնժամ ընդ աշխարհի խորհելով հանդերձ եպիսկոպոսաւքս աթոռակցովքս իմովք և լաւաւք աշխարհիս, և որպէս աւրէնք հրամայեն ոչ ի բաց ընկենուլ, այլ ընդունել՝ որք դառնան ի չարութենէ ինչ և կամ ի հերձուածոյ յապաշխարութիւն, այն իրաւք ընդունելութիւն արարաք։ Այլ յորժամ գիտացաք, թէ նոքա կիսոստովանութիւնն ստութեամբ արարին և անդրէն յիւրեանց ի տիրմն չարութեան դարձեալ՝ կործանեցան, նկովեցաք զնոսա, և ի բաց կործանեցաք ի կաթուղիկէ եկեղեցւոյ, և ի մէնչ քրիստոնէից։ Այժմ նոցա ողջոյն որ չիշխէ տալ։

Եւ որ գրեալ էր թէ վասն հոգևոր հաղորդութեան և մարմնաւոր սիրոյ եկեղեցին Ցուրտաւայ հաստատեալ էր ի մէջ երկուց աշխարհացս, և այժմ Ցուրտաւայ եպիսկոպոսն վասն ուղղափառութեան հալածեալ է, և զպաշտաւնն հայերէն ի բաց փոխեալ է. մեր զպաշտաւնն չէ փոխեալ։ Բայց զի որ եպիսկոպոսն եղև՝ վրացի ուսումն գիտէ և հայ նոյնպէս, և երկուքումբ դպրութեամբք պաշտաւնն կատարի։ Այլ վասն Ցուրտաւայ եպիսկոպոսին հալածման, զործք իւր ծա-

Digitized by Google

նուցանեն եթէ վասն ուղիղ հաւատոյ գնացեալ է, թէ վասն այլ իրիք։ Քանզի որպէս և գրեալ է, թէ Որ գործէ կէր՝ ատէ զլոյս, և որ գործէ զճշմարտութիւն՝ գայ ի լոյս։ Ես զնա ոչ հալածեցի, այլ էր ինչ որ լսեցի վասն նորա յետին գործոց, և կոչէի առիս և կամէի խրատ տալ, և ուսուցանել որպէս պարտ էր աշակերտի. իսկ նա յիմ կոչ չեկն, այլ զեկեղեցին եթող և ի գիշերի գաղտ գնաց։

Իսկ այն որ վասն հաւատոց և ժողովոյն և տուժարին գրեալ էր, և զայս գրեալ էր թէ, արքայից արքայի ծառայից ընդ աւտար թագաւորաց ծառայս հաւատի ի զուգաց ունել և զբնական հաղորդակիցս ուրանալ՝ յոյժ անհնարին թուի։ Մեր և ձեր հարքն արքայի ծառայք էին, և զհաւատ զԵրուսաղեմի ունէին, և մեք և դուք նոյնպէս։ Թէպէտ և ծառայք արքայից արքայի եմք, զհաւատ զԵրուսաղէմի ունիմք և կալցուք. Զի թէ ցայժմ խոնսունդ *) էին Տեառ՝ այժմ որչափ ևս առաւել երանելի եմք, որք յարքայից արքայի ծառայութեան հասեալ եմք։ Զի մինչ երկինք և երկիր լեալ էին, չէր եղեալ և ոչ մի տէր, որ ամենայն ազգի զիւր աւրէնս ի վերայ թողեալ էր, որպէս այս տէր եթող, և մանաւանդ զմեր քրիստոնէից հաւատս. իսկ ալատի աշխարհի մերոյ աւելի քան զամենայն աշխարհաց, և բարի անձինս իմոյ՝ լաւագոյն քան զամենայն ընկերաց իմոց. և արքայից արքայ, նո՛յնպէս տէր է Հռոմոց, որպէս և տիրեաց աշխարհի. և չէ այսպէս, որպէս դուք գրեցէք, թէ որիշ որիշ թագաւորութիւնք են։

Եւ որ գրեալ էր թէ կամէաք եպիսկոպոսունս արձակել, որ գային և ուսուցանէին. թէ կամիք արձակեցէք, թո՛ղ զի գան որ ուսուցանեն և ուսանին։ Բայց պարտ էր ինձ զի գայի և յաղաւթս կայի ի սուրբ եկեղեցիսդ և ի ձէնչ աւրհնէի. կամ արձակել զիմ աշակերտս որ զողջոյն սրբութեանդ ձերոյ առ մեզ բերէին. բայց վասն չար ժամանակիս և աշխարհի կարեաց խափանեցաք. ի բնի մի ունիք. ողջ պահեսցիք Քրիստոսիւ Աստուծով մերով, և զպատասխանի թղթոյս՝ ըստ հաճոյիցն Աստուծոյ և մեզ տացէք լսել ի ձէնչ։

*) Այսպէս յոր.

ԹՈՒՂԹ ՏԵՍՈՒՆ ՍՄԲԱՏԱՅ՝ ՎՐԿԱՆ ՄԱՐԶՊԱՆԻ, ԱՌ ԿԻՒՐԻՈՆ՝ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Սրբասիրի Տեառն Կիւրոնի՝ Վրաց կաթուղիկոսի, և այլ եպիսկոպոսաց ամենակցաց ձերոց, և իշխանաց աշխարհիդ Ատրներսեհի և ամենայն լաւաց, ի Սմբատայ Գուրիան մարզպանէ և տերանց գինուորէ, և ի Գիգայ Դաշտկարանէ, և ի վարդապետէ Հայոց Շարսաղարէ, և յայլ աղատ որերոյ խոնարհութեամբ և սիրով ողջոյն։

Քանզի յառաջագոյն հարանցն մերոց և ձերոց, և վարդապետաց աշխարհիս միարանութեամբ գյետին կարգս ոմանց և գատելի վարս տեսեալ, որ աննման և թիւր էր մեր հաւատոյ, և կանոնաց մերժեալ էր գնոսա նզովիւք, և վասն հեռաւորութեան մեր և նոցա աշխարհաւ և ոչ խիղճն այն առ ամենեսեան ի մտի էր, բայց առ սակաւս ոմանս հաստատուն կայր։ Իսկ մինչ մեղայ յաճախութիւն եղև առ միմեանս եհաս . . . . . ապըստամբեալք ի ընիկ տերանց՝ ա . . . . . վասն հաւատոյ էր, և կամ՝ վասն կար . . . . . վարուց նոցա, ևս քա՛ղ ի վերայ հասաք . . . . . նմանք և թիւրք էին ամենևիմբ մեր կար . . . . . այլ տեսանէաք և յարեաց աշխարհի քրիստոնեայքն ուղղափառք էին. զնոյն պայման մեր և ձեր հարանցն և նոցա . . . . . աչ պատուիրանաւ։ Ապա առաւել ևս հասաք ի վերայ, թէ որք ի մէնչ էին և միարանեցին ընդ նոսա պակասամիտք և լոյծք ուրէմն էին յառաքինութենէ և ի հաւատոց, և այս պատերազմս որ ընդ հաստատունսն և ընդ լոյծսն էր, չար և դառնագոյն թուէր քան զամենայն չարս. և յորժամ մարդասէրն Աստուած ողորմեցաւ, և արքայից արքայ բարերարութեամբ արար, և զմեզ յաշխարհարձակ հաւատոյ և եկեղեցեաց կարգի աւելագոյն պատուէր

Digitized by Google

ի վերայ արար, զի ընդ միմեանս խաղաղութիւն եղիցի, բանզի էր ինչ որ լուաւ։ Եւ մինչ բարեաւ յաշխարհս հասաք առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն հայրապետ կարգեցաւ, և այն ամենայնի հակառակութեան և թերութեան, ուղղութիւն եղև, Քրիստոս Աստուած փառաւորի, որպէս յառաջագոյն ուսուցին մեզ երանելի վարդապետքն, և եղեաք ամենեքեան մի հաւատ, որ ընդ արքայից արքայի իշխանութեամբ եմք։ Զնո՛յն հարկաւորեցաք գրել և առ ձեր սրբասիրութիւն, զ Ներս պատմել ձեզ, և զձեզ ընդ մեզ միաբանել, որպէս և մեր հարքն էին։ Քանզի միոյ իսկ վարդապետի աշակերտ և վիճակ եմք, կեալ և մեզ նովին հաւատով՝ որպէս և հարքն մեր, և զհաւատս առ Աստուած ունել, և զսէր առ միմեանս։ Բայց է և ինչ լուր որ յաշխարհականացս լուայ և սակաւ ինչ հաւատացի։ Իսկ հաւատի յեպիսկոպոսէս Ցուրտաւայ որ աստս է՝ լուար և կարի դժուարացաք, բանզի մեր, և այդ աշխարհի ազատ որերոյ թէպէտ արիւն և հարպատութիւն ի միջի կայր, բայց հաստատութիւն և վստահ լինել մեզ որպէս յերդումն ինչ. այդ սուրբ վկայարան որ ի Ցուրտաւ, պատուական եկեղեցիդ հաստատեցաւ, և պաշտաւնդ և կարգդ հայերէն ի ձեր միջի էր, և փոխելդ թշնամութիւն ի մէջ արկանէք. մանաւանդ թէ և թերութիւն, արգելուլ և մեզ աստ որք կամին գալ և երկրպագանել սրբոյ Խաչիդ, և ոչ տալ մրտանել որք պտի գան ի սուրբ Կաթուղիկէ եկեղեցի, և յայլ վկայարանս յաղաւթել։ Եւ այսմ մեծի պարգևի որ յԱստուծոյ տուան մեզ և ձեզ, և խափանիչ թէ որ յանխրատից և կամ ի տգիտաց լինէր, ձեզ պարտ էր խրատել վարդապետութեամբ զայնպիսիսն և պատուհասել որ հակառակութիւն ի միջոյ բառնայր։ Թող թէ ձեզ առնել զայդ որ կարի անհնարին և չար է։ Կամէաք եպիսկոպոսունս հանդերձ քերդողաւք արձակել, զկիրթսըն գիտել կչարութիւն հերձուածոց, որ զձեզ ի վերայ հասուցանէին։ Բայց ապա առ ժամս բաւական համարեցաք ի ձեռն ազատ արանցդ, նախ թղթով կամս ձեր գիտել։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ.

Փառաւորելոյ Տեառն, Սմբատայ Գուրկան մարզպանի, և տերանց զինուորի. և Գիզայ Դաշտկարանի. և Վարդապետի Հայոց Շարսաղարի. և այլ ազատ որերոյ Հայոց աշխարհիդ՝ ի սրրոյ Խաչէս աղաւթք. և ի Կիւրոմէ Վրաց կաթուղիկոսէ, և յամենայն եպիսկոպոսաց աթոռակցաց իմոց և իշխանաց Ատրներսեհէ . . . . . շա . . . . և յամենայն լաւաց աշխարհին վրաց խնարհ երկրպագութեամբ և սիրով ողջոյն։

Գոհանամ զամենասուրբ Երրորդութենէն՝ որ զքեզ Տէր Սմբատ ի ժամանակի յայսմ փորձութեան պատրաստեաց ի բարեխաւսութիւն բարերար տերանց՝ որ գոհ են զքէն, և ետ մեզ Քանզի ազատիդ ձեր և փառաւորութիւն մեծութեամբ հանդերձ, ոչ միայն Հայոց աշխարհիդ խնդութիւն է, այլ և Վրաց։

Թուղթս զոր արարեալ էր տեսի. և զողջոյն ձեր լսելով խնդացաք, և որ գրեալ էր թէ Հարանցն ձերոց և մերոյ՝ զթիւր և զատելի կարգս ոմանց և զհաւատս տեսեալ, խոտեալս էր և ի բաց ընկեցեալ։ Վասն որոյ էր ինչ՝ որ այժմ եղև հակառակութիւն ի մերում աշխարհիս, որ մինչև յարքայից արքայ եհաս. և արքայից արքայ բարերարութեամբ արար զիս աշխարհարձակ, և վասն եկեղեցեաց և հաւատոյ և ընդ միմեանս խաղաղութիւն ունելոյ՝ պատուէր ի վերայ արար. և յորժամ բարեաւ յաշխարհ եկաք, ի մեր ձեռն Աստուած զհակառակութիւնն կայն եբարձ ի միջոյ։ Վասն այդր բարերարութեան հրամանի և զՏէր յայտ գործ պարապեցուցանելոյ, Աստուած զարքայից արքայ անմահ արասցէ, և զքեզ, Տէր, աւելի տերանց վասպուրականագոյն արասցէ զաւակաւդ հանդերձ, քան որչափ եսդ, զգիտութիւն և զիմաստութիւն և զհրահանգ տերանց աւելի ետ Տէր Աստուած քան զրաւմս։ Նախ՝ Քեզ Տեառն և տպա ինձ, զի ազտիհոր և ինձ հասեալ է ի տերանց վասն իւրեանց բարերարութեան, թէ ամենայն քրիստոնեայք զձեռ-

Digitized by Google

յերկինս համբառնային և զնոցա անմահութիւն խնդրէին, արժան էր։

Եւ այնր որ վասն հաւատոյ գրեալ էր, թէ հարքն մեր և ձեր ապաքան ունէին յորմէհետէ և սուրբն Գրիգոր զուղղափառ հաւատ կարգեաց։

Բայց զի եպիսկոպոսն զոր արարաք՝ Վրացի և Հայ դըպրութիւն զոյգ գիտէ և զպաշտաւն կատարէ երկուքումբ դըպրութեամբքն։ Բայց ի մարտի պակասութիւն մի է. և մեծ է մարդոյ միոյ բանէց հաւատալ ձեզ՝ որ իւր գլխոյ չէր հաւատարիմ։ Թող թէ վասն մեր, որ վասն չար գործոյ իւրոց գաղտ ի գիշերի փախստական գնաց, և յապստամբս չոգաւ առ Վահրամ, և այնպէս չարութեամբ գիտաց առնել, զի սակաւիկ ինչ պիտեցաւ, և դեռ զքաղաքն առնուլ տայր, և Արեաց աշխարհի մեծ զիեան հասուցանէր։

Եւ արդ զուք նմա հաւատացէք, և նորա բանիւ առ մեզ խափանեցէք գալ, և երկրպագել պատուական և կենսատու սրբոյ Խաչիս Մծհիթայի, յորմէ խնդրելով պարգևեսցար հաւր և մաւր քում, և սորա առաջի սնար, և սորա առաջնորդութեամբ ի բարի հասեր։ Թէպէտ և զուք չեկիք յերկրպագել, այլ մեք յամենայն ժամ յաղաւթս յիշեմք առաջի սրբոյ Խաչիս, Տէր մեր Յիսուս Քրիստոս բարեխաւսութեամբ սրբոյ Աստուածածնին, և պատուական խաչին, վասն քեզ ի կամս հասուցանելոյդ և առաւել բարի առնելոյ, զարքայիս արքայ անմահ արացէ. և աւելի ի կամս հասուսցէ. և զքեզ Տէր նոցա զոհութեամբ, շատ կեցուսցէ զաւակաւդ հանդերձ, և ի կամս հասուսցէ. և արժանի լինիցիք ի մաւտէ աւուրս գալ և երկրպագել սրբոյ Խաչիս։

Digitized by Google

ԱՌ ՏԷՐ ՍՄՐԱՏ Ի ՄՈՎՍԷՍԷ

Աստուածաշնորհ պատուովք պայծառացելոյ Տեառն Սմրատայ՝ Գուրկան մարզպանի, և տերանց զինուորի, ի Մովսէսէ Նուաստէ, Տերամբ ողջոյն։

Զպատասխանիս թղթոցս տեսի, զոր անաւրէնութեամբ և ամպարշտութեամբ գրեալ էր Վրաց աւերչի կաթուղիկոս անուանն. և առ մեր տէր կաթուղիկոս՝ և առ քեզ տէր։ Եւ յաղագս տեառն կաթուղիկոսի չէ՛ սրտի պակասութիւն. զի տեղեկացեալ է և բովանդակ ի վերայ հասեալ. թէ վասն է՛ր և կամ զի՞ հալածեցայ. բայց վասն բո տեառն, և կարի պակասութիւն է սրտի։ Գուցէ՛ արդեաք ամպարիշտ թղթովքն զոր գրեաց առ ձեր փառաւորութիւնդ երկմտեցոյց ինչ զձեզ։ Բայց տեառն ձեռնհասութիւն է ողորմութեամբն Աստուծոյ, թէ և ի հեռագոյն տեղիս՝ քննութեան իմիք պէտք էին տեղեկանալ։ Թող թէ որ կարի ի մաւտոյ է. Հայք և Վիրք սահմանակիցք են միմեանց. շատ յաչատաց և յոլովք ի շինականաց՝ աստի անդր հասանեն, և անտի՝ այսր. յորոց մարթի տեղեկանալ և թէ արդարև այդպէս գտանիմ, որպէս առ ձեր փառաւորութիւնդ գրեցաւ ի նոյանէն. և ես այլ տարաշ ծանուցի զիս ձեզ, և զայսպիսի վարդապետս և զեշխանս, և զաշխարհ խարեցի. պատուհաս՝ զայն արժան է առնել ի վերայ իմ, զի որ ընդ իմն նայի, այլ զլուս չկարէ խարել։ Բայց թէ քաջ քննել հրամայէք, յուսամ յողորմութիւնն Քրիստոսի Աստուծոյ թէ զամենայն բանս թղթոցն՝ որ վասն իմ գրեալ էր, սուտ գտանէք, և մանաւանդ զի հալածանացն ժամ, զինն աւր ի Տփղիս ի նորա դուրս կայի, և յանդիման չարար. և աշխարհն ամենայն գիտէր զի չէ՛ր վասն այլ ինչ իրաց, բայց վասն հաւատոյ. և յետ ինն աւուրն ինքն ի ՄծՀիթա գնայ. ես այսր, լուսով գնացի, և ոչ ընդ իաւար. որպէս նոքայն գրեցին, և որ աւր ևթն էր ի սուրբ Յովհաննու վանս եկի. և չեմ առ Վահրամ երթեալ։

Digitized by Google

Այլ և այսու ևս անզուման առնեմ զՏէր, զի Վահրամայ առ իս գրեալ էր, թէ ի սրտի մեծ պակասութիւն է ձեր ի սրբոյ եկեղեցւոյն հեռանալդ. բայց մինչ գնացէքդ՝ ճանապարհ առ մեզ պիտէր ունել. զի և եկեղեցւոյն մեծ բաժին կայ աստ, որով կանձն ունել մարթ էր։ Զայս թուղթ Տեառն կամ թուղիկոսի ցուցեալ է, և քեզ Տեառն ցուցանեմ։ և ես անդրէն պատասխանի արարի։

Արդ՝ ասեմ ապա անտի զի գնացի, զի առ ձեզ գայի, զի հաւատ ձեր՝ և նոցա մի՛ է։

Իսկ որ վասն չար գործոցն գրեալ էր թէ հալածեցաւ, ի ծածուկ՝ մարդ բան զիս մեղաւոր չմարթի լինել. զմեղս իմ զոր Աստուած միայն գիտէ և ես։ Բայց յայտնի զի կարի շատ աշխարհի զիմ յետնութիւն չկարէ ցուցանել։ Եւ զպաշտաւնն զի փոխեցին՝ յայտ է, և զչեպիսկոպոսն Նեստորական զոր արարին, դպրութիւն զի և վրացերէն չգիտէ՝ որպէս արժան է, թող թէ հայերէն, և այն յայտ է։ Բայց փառաւորութեան ձերում տեղեկութիւն լիցի, զի նա այդպիսի չարութեան մեքենայս շատ գիտէ և զձեզ հաւատացուցանել կամի և զգործդ խափանել։ Բայց վասն Աստուծոյ և ձեր հոգւոյ ջանայարուք որով և դրաւք։ Ո՞գիտէ տառապեալ աշխարհին փրկութիւն առնէ Տէր Աստուած ի ձեռն փառաւորութեան ձերոյ, վարձս յԱստուծոյ ընդունիք, և բարգաւաճանք ի մարդկանէ լինին. և անարժանութիւնս իմ մինչև է կենդանի, զտեառնդ և զորդեկիդ՝ զփրկութիւն հոգւոյ և մարմնոյ, որպէս զանձինս խնդրեմ ի Տեառնէ Աստուծոյ։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Զգիր ողջունի սրբութեան քո ընկալաք, և ի Քրիստոս ուրախացաք։ Որ վասն թղթոյն պատասխանեաց կոր ասացեալ էք, զոր առ մեզ գրեալ էր Վրաց կաթուղիկոսին. մեք աւելի զարմացեալ կայաք յերկուցունց կողմանց՝ յաղագս Նորա. եթէ զիարդ զայսպիսի մահարեր բաներ՝ սուտ գրէր առ մեզ, և վաղիւ յանդիմանէր ի մէնջ. և զէնջ, թէ կի յանձն չէր վստահ աստանաւր ի մաւտ, զի՞արդ կայր արդեաք և զմեզ յորդորէր և թուղթս տայր առնել յաշխարհն. և զինքն ինքեամբ յանդիմանէր։ Ապա էր ինչ որ յառաջագոյն իսկ յաշխարհականաց լուեալ էր յաղագս սրբութեան ձերոյ, և այժմ ի Վրթանիսէ քերդողէ աւելի տեղեկացաք. թէ ո՞րպէս հալածեցայք և եկիք այսր. և մանաւանդ վասն հոգևոր իրաց, որում Տէր կաթուղիկոս ի վերայ հասեալ է և տեղեկացեալ և զձեզ ընկալեալ։ Մեզ աւելի քննութիւն առնելոյ զի՞նչ պէտք են։ Արդ զիս աւասիկ փութով ի դուռն խնդրեալ է. քեզ վաղ ասացի թէ գրեմ առ արքայից արքայ որ բարերարութեամբ հրաման տայ, և որ երթաս ի քո եկեղեցւոջ նստիս և քո հաւատով կրօ ժողովուրդս ունաս։ Դու ասես, ես Ատրներսեհի և Վահանայ եղբարց ի՞նչ եմ, և ոչ սուր առնուլ և ընդ ամենայն Վիրս կռուել։ Արդ՝ քո հոգդ և գործդ նախ ողորմութեանն Աստուծոյ յանձն լեցի, և ապա Տեառն կաթուղիկոսի. թող զի գրէ երկիցս և երիցս անգամ, ո՞ զիտէ, թող զի զան յուղղութիւն. ապա թէ ի նոյն յամառութեան կան, զի ի Նորա ի թղթին իսկ աւանիկ գրեալ էր, ասէ, հարքն մեր և ձեր կերուսաղէմի հաւատն ունէին, և սուրբն Գրիգոր զայն ետ նոցա, և մեք զնոյն ունիմք։ Արդ՝ այդում պատասխանի Տէր կաթուղիկոս առնէ, և թէ ի նոյն խելագարութեան կան և ի միաբանութենէ մերմէ հեռանան, զարիւն նոցա ի գլխոց իւրեանց խընդ-

Digitized by Google

քեսցէ Տէր Աստուած, և մեք անպարտք եղէցուք։ Բայց սակայն գի՞արդ գործդ ի գլուխ երթայ, գրեցէք և առիս։ Թէ պան-հնազանդութենէ լսեմ, և տայ Տէր Աստուած ժամ յաջողց՝ գիտէ թէ և աստէն իսկ ընդունի հատուցումն յԱստուծոյ ի ձեռն մարմնաւոր տերանց։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Սրբասիրի և պատուական Տեառն Աբրահամու Հայոց Կաթուղիկոսի, և ամենայն եպիսկոպոսաց աթոռակցաց քոց, ի Կիւրիոնէ Վրաց կաթուղիկոսէ, և յամենայն եպիսկոպոսաց աթոռակցաց իմոց, աւրհնութեամբ սրբոյ Խաչիս՝ ողջոյն։

Թուղթս զոր արարեալ էր՝ տեսի, և զինչ գրեալս էր իմացայ, վասն արժանի լինելոյ տեառնդ զսուրբ աթոռ երանելոյն Գրիգորի ժառանգելոյ, վասն ողջութեան ձերոյ մնծապէս ուրախ եղէ և զԱստուծոյ զոհացայ։ Եւ որ գրեալ էր թէ յառաջագոյն երանելի հայրապետն մեր Մովսէս գրեաց առ ձեզ մեղադրութիւն յաղագս հաղորդելոյ ձեր ընդ այնոսիկ ընդ որս չէր աւրէն, եթէ վասն Խուժկացն ասէք, մեք յայնժամ ընդ աշխարհի խորհելով հանդերձ եպիսկոպոսաւքս աթոռակցովքս իմովք և լաւաւք աշխարհիս, և որպէս աւրէնք հրամայեն ոչ ի բաց ընկենուլ, այլ ընդունել՝ որք դառնան ի չարութենէ ինչ և կամ ի հերձուածոց յապաշխարութիւն, այն իրաւք ընդունելութիւն արարաք։ Այլ յորժամ գիտացաք, թէ նոքա զխոստովանութիւնն ստութեամբ արարին և անդրէն յիւրեանց ի տիղմն չարութեան դարձեալ՝ կործանեցան, նզովեցաք զնոսա, և ի բաց կործանեցաք ի կաթուղիկէ եկեղեցւոյ, և ի մէնջ քրիստոնէից։ Այժմ նոցա ողջոյն ոք չիշխէ տալ։

Եւ որ գրեալ էր թէ վասն հոգևոր հաղորդութեան և մարմնաւոր սիրոյ եկեղեցին Ցուրտաւայ հաստատեալ էր ի մէջ երկուց աշխարհացս, և այժմ Ցուրտաւայ եպիսկոպոսն վասն ուղղափառութեան հալածեալ է, և զպաշտաւնն հայերէն ի բաց փոխեալ է. մեր զպաշտաւնն չէ փոխեալ։ Բայց զի որ եպիսկոպոսն եղև՝ վրացի ուսումն գիտէ և հայ նոյնպէս, և երկուքումբ դպրութեամբք պաշտաւնն կատարի։ Այլ վասն Ցուրտաւայ եպիսկոպոսին հալածման, զործք իւր ծա-

Digitized by Google

նուցանեն եթէ վասն ուղիղ հաւատոյ գնացեալ է, թէ վասն այլ իրիք։ Քանզի որպէս և գրեալ է, թէ Որ գործէ զչար՝ ատէ զլոյս, և որ գործէ զճշմարտութիւն՝ գայ ի լոյս։ Ես զնա ոչ հալածեցի, այլ էր ինչ որ լսեցի վասն նորա յետին գործոց, և կոչէի առիս և կամէի խրատ տալ, և ուսուցանել որպէս պարտ էր աշակերտի. իսկ նա յիմ կոչ չեկն, այլ զեկեղեցին եթող և ի գիշերի գաղտ գնաց։

Իսկ այն որ վասն հաւատոց և ժողովոյն և տուժարին գրեալ էր, և զայս գրեալ էր թէ, արքայից արքայի ծառայից ընդ աւտար թագաւորաց ծառայս հաւատի ի զուգաց ունել և զքնական հաղորդակիցս ուրանալ՝ յոյժ անհնարին թուի։ Մեր և ձեր հարքն արքայի ծառայք էին, և զհաւատ զԵրուսաղեմի ունէին, և մեք և դուք նոյնպէս։ Թէպէտ և ծառայք արքայից արքայի եմք, զհաւատ զԵրուսաղէմի ունիմք և կալցուք. Զի թէ ցայժմ՝ խոնսունդ *) էին Տեառ՞ր, այժմ որչափ ևս առաւել երանելի եմք, որք յարքայից արքայի ծառայութեան հասեալ եմք։ Զի մինչ երկինք և երկիր լեալ էին, չէր եղեալ և ոչ մի տէր, որ ամենայն ազգի զիւր աւրէնս ի վերայ թողեալ էր, որպէս այս տէր եթող, և մանաւանդ զմեր քրիստոնէից հաւատս. իսկ աղատի աշխարհի մերոյ աւելի քան զամենայն աշխարհաց, և բարի անձինս իմոյ՝ լաւագոյն քան զամենայն ընկերաց իմոց. և արքայից արքայ, նո՛յնպէս տէր է Հռոմոց, որպէս և տիրեաց աշխարհի. և չէ այսպէս, որպէս դուք գրեցէք, թէ որիշ որիշ թագաւորութիւնք են։

Եւ որ գրեալ էր թէ կամէաք եպիսկոպոսունս արձակել, որ գային և ուսուցանէին. թէ կամիք արձակեցէք, թո՛ղ զի զան որ ուսուցանեն և ուսանին։ Բայց պարտ էր ինձ զի գայի և յաղաւթս կայի ի սուրբ եկեղեցիսդ և ի ձէնջ աւրհնէի. կամ արձակել զիմ աշակերտս որ զողջոյն սրբութեանդ ձերոյ առ մեզ բերէին. բայց վասն չար ժամանակիս և աշխարհի կարեաց խափանեցաք. ի բնի մի ունիք. ողջ պահեսցիք Քրիստոսիւ Աստուծովք մերով, և զպատասխանի թղթոյս՝ ըստ հաճոյիցն Աստուծոյ և մեզ տացէք լսել ի ձէնջ։

*) Այսպէս յոր.

ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ՍՄՐՏԱՅՍ՝ ՎՐԿԱՆ ՄԱՐԶՊԱՆԻ, ԵՒ ԿԻՒՐԻՈՆ՝ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Սրբասիրի Տեառն Կիւրոնի՝ Վրաց կաթուղիկոսի, և այլ Եպիսկոպոսաց ամենակցաց ձերոց, և իշխանաց աշխարհիդ Ատրներսեհի և ամենայն լաւաց, ի Սմբատայ Գուրկան մարզպանէ և տերանց վինուորէ, և ի Գիգայ Դաշտկարանէ, և ի վարդապետէ Հայոց Շարսաղարէ, և յայլ աղատ որերոյ խոնարհութեամբ և սիրով ողջոյն։

Քանզի յառաջագոյն հարանցն մերոց և ձերոց, և վարդապետաց աշխարհիս միարանութեամբ գյետին կարգս ոմանց և զատելի վարս տեսեալ, որ աննման և թիւր էր մեր հաւատոյ, և կանոնաց մերժեալ էր զնոսա նզովիւք, և վասն հեռաւորութեան մեր և նոցա աշխարհաւ և ոչ խիղճն այն առ ամենեսեան ի մտի էր, բայց առ սակաւս ոմանս հաստատուն կայր։ Իսկ մինչ մեղայ յաճախութիւն եղև առ միմեանս եհաս . . . . . ապըստամբեալք ի ընիկ տերանց՝ ա . . . . . վասն հաւատոյ էր, և կամ՝ վասն կար . . . . . վարուց նոցա, ևս քա՜ղ ի վերայ հասաք . . . . . նմանք և թիւրք էին ամենևիմբ մեր կար . . . . . այլ տեսանէաք և յարեաց աշխարհի քրիստոնեայքն ուղղափառք էին. զնոյն պայման մեր և ձեր հարանցն և նոցա . . . . . աչ պատուիրանաւ։ Ապա առաւել ևս հասաք ի վերայ, թէ որք ի մէնչ էին և միարանեցին ընդ նոսա պակասամիտք և լոյծք ուրէմն էին յառաքինութենէ և ի հաւատոց, և այս պատերազմս որ ընդ հաստատունսն և ընդ լոյծսն էր, չար և դառնագոյն թուէր քան զամենայն չարս. և յորժամ մարդասէրն Աստուած ողորմեցաւ, և արքայից արքայ բարերարութեամբ արար, և զմեզ յաշխարհարձակ հաւատոյ և եկեղեցեաց կարգի աւելագոյն պատուէր

Digitized by Google

ի վերայ արար, զի ընդ միմեանս խաղաղութիւն եղիցի, քանզի էր ինչ որ լուաւ Եւ մինչ բարեաւ յաշխարհս հասաք առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն հայրապետ կարգեցաւ, և այն ամենայնի հակառակութեան և թերութեան, ուղղութիւն եղև, Քրիստոս Աստուած փառաւորի, որպէս յառաջագոյն ուսուցին մեզ երանելի վարդապետքն, և եղեաք ամենեքեան մի հաւատ, որ ընդ արքայիչ արքայի իշխանութեամբ եմք։ Զնո՛յն հարկաւորեցաք գրել և առ ձեր սրբասիրութիւն, զ Ներս պատմել ձեզ, և զձեզ ընդ մեզ միաբանել, որպէս և մեր հարքն էին։ Քանզի մեզ իսկ վարդապետի աշակերտ և վիճակ եմք, կեալ և մեզ նովին հաւատով՝ որպէս և հարքն մեր, և զհաւատ առ Աստուած ունել, և զսէր առ միմեանս։ Բայց է և ինչ լուր որ յաշխարհականացս լուայ և սակաւ ինչ հաւատացի։ Իսկ հաւատի յեպիսկոպոսէս Ցուրտաւայ որ աստս է՝ լուաք և կարի դժուարացաք, քանզի մեր, և այդ աշխարհի աղատ որերոյ թէպէտ սրիւն և հարապատութիւն ի միջի կայր, բայց հաստատութիւն և վստահ լինել մեզ որպէս յերդումն ինչ. այդ սուրբ վկայարան որ ի Ցուրտաս, պատուական եկեղեցիդ հաստատեցաւ, և պաշտունդ և կարգդ հայերէն ի ձեր միջի էր, և փոխելդ թշնամութիւն ի մէջ արկանէք. մանաւանդ թէ և թերութիւն, արգելուլ և մեզ աստ որք կամին գալ և երկրպագանել սրբոյ Խաչիդ, և ոչ տալ մըտանել որք պտի գան ի սուրբ Կաթուղիկէ եկեղեցի, և յայլ վկայարանս յաղաւթել։ Եւ այսմ մեծի պարգևի որ յԱստուծոյ տուան մեզ և ձեզ, և խափանիչ թէ որ յանխրատից և կամ ի ագիտաց լինէր, ձեզ պարտ էր խրատել վարդապետութեամբ զայնպիսիսն և պատուհասել որ հակառակութիւն ի միջոյ բառնայր։ Թող թէ ձեզ առնել զայդ որ կարի անհնարին և չար է։ Կամէաք եպիսկոպոսունս հանդերձ քերդողաւք արձակել, զկիրթսըն գիտել զչարութիւն հերձուածոց, որ զձեզ ի վերայ հասուցանէին։ Բայց ապա առ ժամս բաւական համարեցաք ի ձեռն ազատ արանցդ, նախ թղթով զկամս ձեր գիտել։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ.

Փառաւորելոյ Տեառն, Սմբատայ Գուրկան մարզպանի, և տերանց զինուորի. և Գիգայ Դաշտկարանի. և Վարդապետի Հայոց Շարսաղարի. և այլ ազատ որերոյ Հայոց աշխարհիդ՝ ի սրբոյ Խաչէս աղաւթք. և ի Կիւրոմնէ Վրաց կաթուղիկոսէ. և յամենայն եպիսկոպոսաց աթոռակցաց իմոց և իշխանաց Ատրներսեհէ . . . . . շա . . . . և յամենայն լաւաց աշխարհին վրայ խնարհ երկրպագութեամբ և սիրով ողջոյն։

Գոհանամ զամենասուրբ Երրորդութենէն՝ որ զքեզ Տէր Սմբատ ի ժամանակի յայսմ փորձութեան պատրաստեաց ի բարեխաւսութիւն բարերար տերանց՝ որ գոհ են զքէն, և ետ մեզ Քանզի ազատիդ ձեր և փառաւորութիւն մեծութեամբ հանդերձ, ոչ միայն Հայոց աշխարհիդ խնդութիւն է, այլ և Վրաց։

Թուղթս զոր արարեալ էր տեսի. և զողջոյն ձեր լսելով խնդացաք, և որ գրեալ էր թէ Հարանցն ձերոց և մերոց՝ զթիւր և զատելի կարգս ոմանց և զհաւատս տեսեալ, խոտեալս էր և ի բաց ընկեցեալ։ Վասն որոյ էր ինչ՝ որ այժմ եղև հակառակութիւն ի մերում աշխարհիս, որ մինչև յարքայից արքայ եհաս. և արքայից արքայ բարերարութեամբ արար զիս աշխարհարձակ, և վասն եկեղեցեաց և հաւատոյ և ընդ միմեանս խաղաղութիւն ունելոյ՝ պատուէր ի վերայ արար. և յորժամ բարեաւ յաշխարհ եկաք, ի մեր ձեռն Աստուած զհակառակութիւնն կայն երարձ ի միջոյ։ Վասն այդր բարերարութեան հրամանի և զՏէր յայտ գործ պարապեցուցանելոյ, Աստուած զարքայից արքայ անմահ արասցէ, և զքեզ, Տէր, աւելի տերանց վասպուրականագոյն արասցէ զաւակաւդ հանդերձ, քան որչափ եաղ, զգիտութիւն և զիմաստութիւն և զհրահանգ տերանց աւելի ետ Տէր Աստուած քան զբազմաց։ Նախ՝ Քեզ Տեառն և ապա ինձ, զի ապտիհոր և ինձ հասեալ է ի տերանց վասն իւրեանց բարերարութեան, թէ ամենայն քրիստոնեայք զձեռս

յերկինս համբառնային և զնոցա անմահութիւն խնդրէին, արժան էր։

Եւ այնր որ վասն հաւատոյ գրեալ էր, թէ հարքն մեր և ձեր ապաքան ունէին յորմէհետէ և սուրբն Գրիգոր զուղղափառ հաւատ կարգեաց։

Բայց զի եպիսկոպոսն զոր արարաք՝ Վրացի և Հայ դըպրութիւն զոյգ գիտէ և զպաշտաւն կատարէ երկուքումբ դըպրութեամբքն։ Բայց ի մարտի պակասութիւն մի է. և մեծ է մարդոյ միոյ բանից հաւատալ ձեզ՝ որ իւր գլխոյ չէր հաւատարիմ։ Թող թէ վասն մեր, որ վասն չար գործոյ իւրոց գաղտ ի գիշերի փախստական գնաց, և յապստամբս չոգաւ առ Վահրամ, և այնպէս չարութեամբ գիտաց առնել, զի սակաւիկ ինչ պիտեցաւ, և դեռ զքաղաքն առնուլ տայր, և Արեաց աշխարհի մեծ զիեան հասուցանէր։

Եւ արդ դուք նմա հաւատացէք, և նորա բանիւ առ մեզ խափանեցէք գալ, և երկրպագել պատուական և լենսատու սրբոյ Խաչիս Մծհիթայի, յորմէ խնդրելով պարգևեցար հաւր և մաւր քում, և սորա առաջի սնար, և սորա առաջնորդութեամբ ի բարի հասեր։ Թէպէտ և դուք չեկիք յերկրպագել, այլ մեք յամենայն ժամ յաղաւթս յիշեմք առաջի սրբոյ Խաչիս, Տէր մեր Յիսուս Քրիստոս բարեխաւսութեամբ սրբոյ Աստուածածնին, և պատուական խաչին, վասն քեզ ի կամս հասուցանելոյդ և առաւել բարի առնելոյ, զարքայից արքայ անմահ արասցէ. և աւելի ի կամս հասուցէ. և զՔեզ Տէր նոցա զոհութեամբ, շատ կեցուսցէ զաւակաւդ հանդերձ, և ի կամս հասուսցէ. և արժանի լինիցիք ի մաւտէ աւուրս գալ և երկրպագել սրբոյ Խաչիս։

Digitized by Google

ԱՌ ՏԷՐ ՍՄԲԱՏ Ի ՄՈՎՍԷՍԷ

Աստուածաշնորհ պատուովք պայծառացելոյ Տեառն Սմբատայ՝ Գուրկան մարզպանի, և տերանց զինուորի, ի Մովսէսէ Նուաստէ, Տերամբ ողջոյն։

Զպատասխանիս թղթոցս տեսի, զոր անաւրէնութեամբ և ամպարշտութեամբ գրեալ էր Վրայ աւերչի կաթուղիկոս անուանն. և առ մեր տէր կաթուղիկոս՝ և առ քեզ տէր։ Եւ յաղագս տեառն կաթուղիկոսի չէ՛ սրտի պակասութիւն. զի տեղեկացեալ է և բովանդակ ի վերայ հասեալ. թէ վասն է՛ր և կամ զի՝ հալածեցայ. բայց վասն քո տեառն, և կարի պակասութիւն է սրտի։ Գուցէ՝ արդեաք ամպարիշտ թղթովքն զոր գրեայ առ ձեր փառաւորութիւնդ երկմտեցոյց ինչ զձեզ։ Բայց տեառն ձեռնհասութիւն է ողորմութեամբն Աստուծոյ, թէ և ի հեռազոյն տեղիս՝ քննութեան իմիք պէտք էին տեղեկանալ։ Թող թէ որ կարի ի մաւտոյ է. Հայք և Վիրք սահմանակիցք են միմեանց. շատ յաճատայ և յոլովք ի շինականաց՝ աստի անդր հասանեն, և անտի՝ այսր. յորոց մարթի տեղեկանալ և թէ արդարև այդպէս գտանիմ, որպէս առ ձեր փառաւորութիւնդ գրեցաւ ի Նոգանէն. և ես այլ տարաշ ծանուցի զիս ձեզ, և զայսպիսի վարդապետս և զեշխանս, և զաշխարհ խարեցի. պատուհաս՝ զայն արժան է առնել ի վերայ իմ, զի որ ընդ իմն նայի, այլ զլաւս չկարէ խարել։ Բայց թէ քաշ քննել հրամայէք, յուսամ յողորմութիւնն Քրիստոսի Աստուծոյ թէ զամենայն բանս թղթոցն՝ որ վասն իմ գրեալ էր, սուտ գտանէք, և մանաւանդ զի հալածանացն ժամ, զինն աւր ի Տփղիս ի նորա դուրս կացի, և յանդիման չարար. և աշխարհն ամենայն գիտէր զի չէ՛ր վասն այլ ինչ իրաց, բայց վասն հաւատոյ. և յետ ինն աւուրն ինքն ի ՄծՀիթա գնայ. ես այսր, լուսով գնացի, և ոչ ընդ իաւար. որպէս նոքայն գրեցին, և որ աւր ևթն էր ի սուրբ Յովհաննու վանս եկի. և չեմ առ Վահրամ երթեալ։

Digitized by Google

Այլ և այսու ևս անգուման առնեմ զՏէր, զի Վահրամայ առ իս գրեալ էր, թէ ի սրտի մեծ պակասութիւն է ձեր ի սրբոյ եկեղեցւոյն հեռանալդ. բայց մինչ գնացէքդ՝ ճանապարհ առ մեզ պիտէր ունել. զի և եկեղեցւոյն մեծ բաժին կայ աստ, որով զանձն ունել մարթ էր։ Զայս թուղթ Տեառն կաթուղիկոսի ցուցեալ է, և Քեզ Տեառն ցուցանեմ. և ես անդրէն պատասխանի արարի։

Արդ՝ ասեմ ապա անտի զի գնայի, զի առ ձեզ գայի, զի հաւատ ձեր՝ և նոցա մի՛ է։

Իսկ որ վասն չար գործոցն գրեալ էր թէ հալածեցաւ, ի ծածուկ՝ մարդ քան զիս մեղաւոր չմարթի լինել. զմեղս իմ՝ զոր Աստուած միայն գիտէ և ես։ Բայց յայտնի զի կարի շատ աշխարհի զիմ յետնութիւն չկարէ ցուցանել. Եւ զպաշտաւնն զի փոխեցին՝ յայտ է, և զչեպիսկոպոսն Նեստորական զոր արարին, դպրութիւն զի և վրացերէն չգիտէ՝ որպէս արժան է, թող թէ հայերէն, և այն յայտ է։ Բայց փառաւորութեան ձերում տեղեկութիւն լիցի, զի նա այդպիսի չարութեան մեքենայս շատ գիտէ և զձեզ հաւատացուցանել կամի և զգործդ խափանել։ Բայց վասն Աստուծոյ և ձեր հոգւոց ջանացարուք որով և դրաւք։ Ո՞գիտէ տառապեալ աշխարհին փրկութիւն առնէ Տէր Աստուած ի ձեռն փառաւորութեան ձերոյ, վարձս յԱստուծոյ ընդունիք, և բարգաւաճանք ի մարդկանէ լինին. և անարժանութիւնս իմ մինչև է կենդանի, զտեառնդ և զորդեկիդ՝ զփրկութիւն հոգւոց և մարմնոց, որպէս զանձինս խնդրեմ ի Տեառնէ Աստուծոյ։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Զգիր ողջունի սրբութեան քո ընկալաք, և ի Քրիստոս ուրախացաք։ Որ վասն թղթոյն պատասխանեաց կոր ասացեալ էք, զոր առ մեզ գրեալ էր Վրաց կաթուղիկոսին. մեք աւելի զարմացեալ կայաք յերկուցունց կողմանց՝ յաղագս նորա. եթէ զի՞արդ զայսպիսի մահարեր բաներ՝ սուտ գրէր առ մեզ, և վաղիւ յանդիմանէր ի մէնջ. և զձէնջ, թէ զի յանձն չէր վստահ աստանաւր ի մուտ, զի՞արդ կայր արդեաք և զմեզ յորդորէր և թուղթս տայր առնել յաշխարհն. և զինքն ինքեամբ յանդիմանէր։ Ապա էր ինչ որ յառաջագոյն իսկ յաշխարհականաց լուեալ էր յաղագս սրբութեան ձերոյ, և այժմ ի Վրթանիսէ քերդողէ աւելի տեղեկացաք. թէ ո՞րպէս հալածեցայք և եկիք այսր. և մանաւանդ վասն հոգևոր իրաց, որում Տէր կաթուղիկոս ի վերայ հասեալ է և տեղեկացեալ և զձեզ ընկալեալ։ Մեզ աւելի քննութիւն առնելոյ զինչ պէտք են։ Արդ զիս աւասիկ փութով ի դուռն խնդրեալ է. քեզ վաղ ասացի թէ զրեմ առ արքայից արքայ որ բարերարութեամբ հրաման տայ, և որ երթաս ի քո եկեղեցւոջ նստիս և քո հաւատով զքո ժողովուրդս ունաս։ Դու ասես, ես Ատրներսեհի և Վահանայ եղբարց ինչ եմ, և ոչ սուր առնուլ և ընդ ամենայն Վիրս կռուել։ Արդ՝ քո հոգդ և գործդ նախ ողորմութեանն Աստուծոյ յանձն լիցի, և ապա Տեառն կաթուղիկոսի. թող զի գրէ երկիցս և երիցս անգամ, ո՞ւրեմն, թող զի զան յուղղութիւն. ապա թէ ի նոյն յամառութեան կան, զի ի նորա ի թղթին իսկ աւանիկ գրեալ էր, ասէ, հարքն մեր և ձեր կերուսաղէմի հաւատն ունէին, և սուրբն Գրիգոր զայն ետ նոցա, և մեք զնոյն ունիմք։ Արդ՝ այդում պատասխանի Տէր կաթուղիկոս առնէ, և թէ ի նոյն խելագարութեան կան և ի միաբանութենէ մերմէ հեռանան, զարիւն նոցա ի գլխոց իւրեանց խընդ-

Digitized by Google

գրեցէք Տէր Աստուած, և մեք անպարտք եղէցուք։ Բայց սակայն կի՞արդ գործդ ի գլուխ երթայ, գրեցէք և առիս։ Թէ կանհնազանդութենէ լսեմ, և տայ Տէր Աստուած ժամ յաչողս՝ գիտէ թէ և աստէն իսկ ընդունի հատուցումն յԱստուծոյ ի Ձեռն մարմնաւոր տերանց։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԵՐԿՐՈՐԴ ՏԵԱՌՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ՝ ՀԱՑՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ԱՌ ԿԻՒՐԻՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ։

Ամբասիրի տեառն Կիւրոնի Վրաց կաթուղիկոսի, յԱբրահամայ Հայոց կաթուղիկոսէ Տերամբ ողջոյն։

Զգիր ողջունարեր ձերոյ սրբութեան ընկալաք. և որ զբրեալ էր թէ ընդ նորոգութիւն սրբոյ աթոռոյդ Տեառն Գրիգորի յոյժ խնդացաք, և կանարժանութիւնս մեր աւրհնեալ էր գոհացեալ զԱստուծոյ. յաղագս այդորիկ շնորհաւորեալ Աստուած եղիցի տեառնդ։

Իսկ զոր ընդդէմս և զկաղառակս գրեցէք, ծանեաք և զայս։ Արդ՝ մեր զկաղառակարանութեան պատասխանիսն թողցուք. զի չզրեմք ի վիճաբանութիւն, այլ փութամք ի սէր և ի հաւատս հայրենի միաւորութեանն, և չխնդրեմք միայն զանձին աւգուտ, այլ զբազմայ զի ապրեսցին։ Արդ՝ մի պաշարեսցուք իւիք, յորմէ ոչինչ աւգտիմք, և մի պարծեսցուք միայն բարգաւաճեալ և նակելի անուամբ սրբոյ քաղաքին Երուսաղեմի, յորմէ զԱստուածային փառն կողոպտեալ մերկացուցին, և զհաւատն առաքելական զերծեալ բարձին ի նմանէն, և յոլովս և զանազան հերձուածս ի հաւատս և ի գործս աղանդեցին ի նմա, զոր դուք այժմ ևս պարծելով գրեցէք առ մեզ, թէ հարցն մերոց և ձերոց սուրբն Գրիգորիոս զԵրուսաղէմի հաւատն ետ, և մեք զնոյն ունիմք։ Արդ՝ քաջ քննեցէք և տեսէք, զի դուք և յոլովք այլք հանդերձ ընակչաւք սրբոյ քաղաքին, փոխեցայք յայնմանէ, այլ ոչ եթէ զնոյն ունիք։ Իսկ մեք և այժմ ունիմք զհաւատն Երուսաղէմի, զայն՝ որ ի Սիոնէն ելանել մարգարէացան աւրինացն յառաջագոյն մարգարէքն, և բանն Տեառն յԵրուսաղէմէ, ուստի և Փրկիչն մեր ծագեաց Քրիստոս Բանն, և

շնորհաւք Հոգւոյն սրբոյ ելից զերանելի առաքեալսն, և նոքաւք որսայ զամենայն տիեզերս ի կենդանութիւն, և բղխեցոյց նոքաւք զկենդանարար վտակն. և զաշխարհ ի մեռելութենէ դարձոյց ի կենդանութիւն և զամենայն եկեղեցիս ծաղկեցոյց յաշխարհի, և արար ոչ ստորին՝ այլ վերին Երուսաղէմի, և զժողովս հաւատացելոց տէրունական աւետարանաւն փութացոյց յաճելութիւն, զորս գնեաց և ազատեաց կենդանարար մարմնով և արեամբն իւրով, և արար ժառանգորդս արքայութեանն վերին Երուսաղէմի։

Այլ ոչ եթէ զհպհոյութիւնն ունիմք զանիծեալ ժողովոյն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի, զոր երբեմն բերեալ սերմանեաց Ցուրնաղիոս եպիսկոպոս անուանեալ յԱստուածակերտ քաղաքին. և զամենայն աստուածային և զառաքելական հաւատս և զկարգս ապականեաց և վեր ի վայր տապալեաց։ Եկն մոլորութիւնս այս, որպէս յառաջագոյն զրեցաք և ի մեր աշխարհս առ Բարգենաւ Հայոց կաթուղիկոսաւ և առ Գարրիէլիւ վրաց Կաթուղիկոսիւ, և միաբանութեամբ եպիսկոպոսաց և ազատ որերոյ, նզովեցին և ի բաց հեռացան ի միաբանութենէ մեծարաւղայն ղժողովն և զտումարն հրէական և այժմ գրով պահի առ մեզ։ Արդ՝ աղաչեմք և մեք զձեր սրբութիւնդ, մի՛ ախտանալ զախտ ուրացողացն, զի մի՛ ընդ նոսա պատժիցիմք, և մի՛ ընդ նզովիւք հարցն եղիցուք, զի մի՛ զգեհենն ժառանգիցեմք։ և մի՛ հանգոյն թշնամեաց զխրատտուն վարկանիցիմք, և յանձինս պանձայցեմք. զի մի՛ անմիտ և անխրատ երևեսցուք, այլ լցեալ և աճեցեալ առաքելական և հայրենի հաւատովն փութացուք կանխել և յառաջինութեան շաւիղս. զի արժանի լիցուք հասանել և պարգևացն խոստացելոց ի Փրկչէն մերմէ Քրիստոսէ Աստուծոյ։

Իսկ որ յաղագս սրբասէր եպիսկոպոսիս Ցուրտաւայ զրեցէք. բաչ հասեալ եմք ի վերայ սորա բարեպաշտութեան և լաւութեան. և աւելի վկայ ոք չէ պիտոյ. ապա թէ է՛ ինչ երկրայութիւն ի միտս ձեր վասն սորա, միայն բան մխաւորութեան յաղագս սուրբ հաւատոյն զրեա առ իս, և ընդ նմին պատմեա՛ ինձ վասն տեղւոյ ի քո սահմանի, կամ ի մեր, որ յետ սրբոյ Զատկին զմիմեանս տեսանեմք. և եթէ առ սմա ինչ թիւրութիւն գտանի, թող զի աշխարհաւ յանդիմանի և մեք անխռով պահիմք։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ.

Սրբոյ և Ճշմարտի Տեառն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի, ի Կիւրինէ Վրաց կաթուղիկոսէ, խոնարհ երկրպագութիւն և սիրով ողջոյն.

Զթուղթս ձեր տեսի, և զինչ գրեալ էր իմացայ. Բայց թէպէտ և դու ինքն իսկ բաղ դիտես, սակայն յիշեցուցանել և մեղ չէ զլեան. զի որ յառաջ քան զրեդ յայդ ի սուրբ եկեղեցւոջ վարդապետք էին, և որ ի մեր տեղւոջ վարդապետք լինէին, ընդ միմեանս խաղաղութիւն էր և սէր. և մին հաւատ էր և կարդաւորութիւն, և մանաւանդ յիմ ի ժամանակիս, մինչ Մովսէս աւրհնեա՞ կենդանի էր՝ գրեաց առ իս, թէ չէր պարտ հաղորդել ընդ Խուժիկոդ, և զիտէի թէ արդար է. Ըստ նորա հրամանի հեռացուցի զնոսա ի մէնջ.

Եւ դայդ Մովսէս, մինչ Ցուրտաւայ եպիսկոպոս կամեցաք առնել, դմա պարտ էր ասել, թէ ես ի ձէնջ, չաւրհնիմ, զի չէ ուղղահաւատ. Մինչ յայնժամ աւրհնեցաւ ի մէնջ, արդ զի՞ պարտի զմեղ բնել. միթէ չետ այնր ինչ փոխեցաք զհաւատս. Եւ յառաջ քան զդա եպիսկոպոսունք որ ի Ցուրտաւ լեալ են, ի սրբոյն Շուշանկանէ և այսր, Աւիոց, Գառնիկ, Սահակ, Եղիշայ, Յակոբ, Յոհան, Ստեփանոս, Նոյի, Սամուիէլ, Ստեփանոս, Յոհանէ, և այլ եպիսկոպոսունք ի հայոց և ոմանք ի վրաց էին ի հայս ուսեալք զիտունք և վարդապետք. Նորա և մեր վարդապետք ընդ միմեանս խաղաղութեամբ կեցին. ի միմեանց ուսանէին. և զմիմեանս ուսուցանէին, և մեր քան զմեր հարանցն ոչ թողեալ ինչ է, և ոչ յաւելեալ ի հաւատոց. Եւ ապատ մարդիկն որ ի Հայոց ի Վիրս խնամութիւն արարեալ էր, ի սրբոյ Շուշանկայ պաշտաւնն զայնն, և ի սուրբ Խաչս Մծխիթայի առաւթել և աւրինաց հաղորդէին. Նոյնպէս և որ աստի այդր դային ի սուրբ Կաթուղիկէ և յայլ եկեղեցիսդ աղաւթել, ան-

Digitized by Google

խիղճ ի միմեանց աւրինաց հաղորդէին։ Եւ միաբանութիւն էր Վրաց և Հայոց ընդ միմեանս, և ամենայն իսկ վիճակիս սրբոյ տեառն Գրիգորի միաբանութիւն էր ընդ հաւատոյն Երուսաղէմի, որով Հոռոմք վարին. և այլ ինչ բանք և խաւսք չէին ուրուք եղեալ ի ներքս։ իսկ այժմ՝ ուստի եղեն։ Հռովմայ հայրապետն ի սրբոյն Պետրոսի աթոռն նստի, և Աղեքսանդրացին ի սրբոյ Մարկոսի աւետարանչի, և Անտիոքացին՝ ի սրբոյն Ղուկասու աւետարանչի և Կոստանդնուպալսացին ի սրբոյն Յովհաննու աւետարանչի. և Երուսաղէմացին՝ ի սրբոյն Յակովբայ Եղբաւրն Տեառն։ Արդ՝ զոր նոցա հաւատն կալեալ է և մեզ տուեալ և մեր հարանցն, և մեր մինչև ցայժմ պահեալ, այժմ զի՞արդ թողուցումք զայն և ձեզ հաւատասցուք։ Եւ այլ եպիսկոպոսունք ուղղափառք որոց համար չկայ, և թագաւորք և իշխանք և աշխարհք ամենայն ուղղափառք, զնոսա զամենեսեան զի՞արդ մարթի թողուլ, և ընդ ձեզ միայն միաբանել։ Եւ կամ միանգամայն, Լ և Ե. եպիսկոպոսունք են ի Վիրս, Մովսէսդ այդ ո՞ւստի գտաւ միայն ուսեալ և ուղղափառ և այլքս ամենեքեան հերձուածող. մանաւանդ զի յիմումս Տէր Աստուած մեր, զեկեղեցիս մեր աւելի պայծառացոյց, և զհաւատս մեր առաւել հաստատեաց, և յարբայից արքայի փառաց զիս աւելի մեծացոյց. և յառաջադէմ արար քան զհարսն իմ, մանաւանդ թէ, և քան զամենայն ընկերս իմ։

Արդ՝ թէ միաբանութիւն և սէր կամիս պահել, և կեալ ընդ մեզ խաղաղութեամբ, որպէս հարքն մեր և ձեր կեցին, մեք պատրաստ եմք ի խաղաղութիւն։ Իսկ եթէ այլ տարաք ինչ կամիք խորհել աւելի աշխատ մի՛ լինիք, և յաղագս այդորիկ այլ մի՛ դրէք առ մեզ. զի ապա ինձ ընդ Հայս, բայց թէ ճանապարհս։ հասանէ անցանել երբէք՝ թէ Աստուած արժանի առնէ երթեալ երկրպագել սուրբ տեղացն Երուսաղէմի. թէ ոչ այլ ինչ գործ չկայ. և որ վասն ինձ և ձեզ ի մի տեղի դալոյն դրեալ էր, ինձ ձեր տեսութիւն կարի պիտի. բայց վասն ժամանակիս անպարապ եմք. անմեղադիր լերուք։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԵՐՐՈՐԴ ՏԵԱՌՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ԱՌ ԿԻՒՐԻՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Զի՞նչ առնեմք, ո՞վ պատուական եղբայր, զաստուածային պատուիրանայն զձայն որ միշտ բողոքէ մեզ. թէ զգոյշ կացէք հաւատիդ՝ յորում եդ զձեզ Հոգին սուրբ տնսուչս, հովուել զժողովուրդ Տեառն՝ զոր փրկեաց պատուական արեամբն իւրով. և ասել թէ Համարս տալոյ էք ընդ Նոցա. և մեք ի ծուլութիւն հատեալ եմք, և մեղկք և ծոյլք լինիմք իբրև զքնածս որ ոչ երբէք սթափին ի ննջելոյ. և ոչ զմի ինչ չիորձեմք զայն զոր գրեալն է, թէ Փորձեցէք զամենայն ինչ, և զբարին ընկալարուք, և յամենայն չարէ ի բաց կացէք։ Քանզի առաջնորդի եկեղեցւոյ և գլուխ կացելոյ զրաւականութիւն զիտութեան ի հարկէ պիտի ստանալ և ուսանել, և այնպէս ապա զԱստուած առաւել սիրել բան զեղբայր և քան զորդի և քան զայլ զամենայն սիրելիս. և յայնժամ ապա Աստուծոյ արժանի լինի որդեգրութեան, և մանաւանդ զիս վասն այսր որ սիրոյ եղբայրութեանդ քում աւելի հասանէ ինձ ակն առնուլ, և պատուիրանին առաքելոյ ի խոնարհ մնալ. այն որ ասէ, Հաստատեցէք զմիմեանս և շինեցէք զիրեարս. և միոյն առաւելութիւն՝ զմիւսոյն պակասութիւն լցցէ։ Բայց արդ մի՛ հեղգասցուք, զսէրն Հոգևոր՝ որ կայր ի մէջ երկուց ազգայս նորոգել, զայն՝ որ ի միոջէ աղբերէ առեալ էր զվարդապետութիւն, որ նախ ինքեանք զկենդանութեանն լոյս առին, որպէս ուսուցին մարգարէքն և առաքեալքն և ապա մեզ և ձեզ հասարակ սերմանեցին զԱստուածպաշտութիւն։ Նախ երանելին սուրբն Գրիգոր, և ապա Մաշդոց, և զդրոց ծանաւթութիւն ի պնդութիւն հաւատոց, և այժմ ազաւթեսցուք նովիմբ կալ մեզ, մինչև ի զա-

Digitized by Google

լուսան Աստուծոյ մերոյ Տնաւն Յիսուսի Քրիստոսի, և զնոյն հաւատ ճշմարտութեան ընծայել նմա։

Քանզի և սէր իսկ աստուածային այն է, և յայդ վրիպեալ մտաց ի բաց փոխել արժան է. գոնեա՛ թէ այժմ զոր ասէքդ. թէ մեք զՀայրենի ունիմք հաւատ և այժմ։ Զի թէ զՀայրենի հաւատն ունիք, մեր այլ խնդիր զինչ էր, և կամ բնաւ զաշխատութիւնս զայս զի՞ կամիք տեսանել, այլ զի փոխեցայք յայնմանէ. վասն այնորիկ այս երրորդ թուղթ գրեցաւ ի մէնջ առ ձեր սրբութիւնդ, քանզի գրեալ է. յերկուց և յերից վկայից հաստատեսցի ամենայն բան։ Զի յառաջ մինչ առաքինի հարքն մեր ապգացս երկոցունց, և որք յայս իշխանութիւն կարգեալ զոր այժմ մեք ունիմքս, նոքաւք հանգերձ միաբանէին յամենայն բարիսն, և զուգաց հեռանային յամենայն չարէ. թուի ինձ թէ տեղեակ է ձեր սրբութիւնդ այնմ։ Եւ յեկեղեցւոջ սուրբ զՆրրորդութիւնն փառաւորել մեզ ուսուցին առաքեալքն, և որք ի նոցանէն ճշմարտութեամբ ուսան, և ի նոյն սուրբ Երրորդութիւնն մկրտիլ, և զՈրդի յԵրրորդութենէն մարմնացեալ՝ միացեալ՝ մի լեալ բարոյեցին, և զնոյն Աստուած՝ ընդ Հաւր և սուրբ Հոգւոյն։ Եւ ասեն այսպէս. Մի՛ է Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Եւ դարձեալ. յորոց և Քրիստոս, որ է ի վերայ ամենեցուն Աստուած՝ աւրհնեալ յաւիտեանս։ Եւ այլ դարձեալ ի Կաթուղիկէին. Սա՛ է Աստուած ճշմարիտ և կեանք յաւիտենականք, և այլք բազումք նոյնպէս քարոյեցին առաքեալքն, որ վասն ժամուս այսչափ բաւական համարեցայ։ Նոյնպէս և մարգարէքն յառաջագոյն ծանուցեալ վկայեցին։ Երեմիա ասէ, Սա՛ է Աստուած մեր ընդ որում ոչ համարեսցի այլ որ. սա՛ որ ետ զիմաստութիւնն Յակովբայ. յետ այսորիկ յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, և այլք նոյնպէս վկայեն։

Իսկ եթէ վասն ճշմարիտ մարդն լինելոյ, է ուրեք որ յիշատակէ, որպէս զայն թէ՝ Մարդով եղև յարութիւն մեռելոց, և կամ թէ՝ Երկրորդ մարդն՝ Տէր յերկնից, ոչ թէ զրնութեանց ինչ ճառեն առաքեալքն. այլ վասն այնր զի իւրով մարմնովն ի սրբոյ կուսէն Աստուածածնէ եառ՝ մարդ է, և իւրով մարմնովն Աստուած, և ոչ երբեմն մարդ և երբեմն Աստուած է։ Մի՛ լիցի. չքարոզեն այսպէս։ Նոյնպէս և երանելի հարքն որ ի Նիկիայ ժողովին այսպէս ուսուցին ըստ առաքելոցն վարդապետութեան. Հաւատայ, ասեն, ի մի Աստուած ի Հայր ամենակալ։

այլ ոչ երկուս բնութիւնս, կամ երկուս Որդիս ասացին, այլ զմի Տէր Յիսուս Քրիստոս՝ ծնեալ ի Հաւրէ անճառաբար, և զնոյն մարմնացեալ, և մարդացեալ, և խաչեալ, և թաղեալ, յարուցեալ. և գայ ի դատել, որոյ թագաւորութեանն վախճան ոչ կայ։ Եւ ի սուրբ Հոգին՝ որով խաւսեցան առաքեալք և մարգարէքն։ Զայս կալաւ հաւատ եկեղեցի Աստուծոյ ի սրբոց առաքելոց. և սովիմբ պարծի ի վերինն Երուսաղէմ ժողով լինել։

Իսկ ի Քաղկեդոնի ժողովեալքն՝ հակառակ առաքելոցն և սուրբ ժողովոյն, խոստովանեցին երկուս բնութիւնս ասելով մեզ Քրիստոսի, խաբելով զպարզամիտս, և փոխանակ Երրորդութեանն՝ չորրորդութիւն քարոզեն. յաւելուն ներմարդութեան բնութիւն և որդոց երկուկաց, և այլ նոյնպիսիս բարբաջեն որ է ի սատանայի վարդապետութենէն։ Նոյնպէս և ի ջնջեալ տումարէն Լեւոնայ այսպէս պատմէ վասն Քրիստոսի Աստուծոյ ասէ, Ապդէ՝ կերպարան երկուցունց բնութեանցն ընդ ընկերին շարայարութեամբ, միովն գործել զաստուածայինսն որ ինչ Աստուծոյ վայել է, իսկ միւսովն զմարդկայինսն՝ որ ինչ մարդոյ արժան է, և այլ ինչ բազումս այսպիսիս։ Արդ՝ զայս յորմէ՝ առաքելոյ լուան, և կամ ո՞ր ճշմարիտ վարդապետ պատմեաց։ Եւ թէ ճշմարիտ էր ասացեալ ի ժողովոյն Քաղկեդոնի և ի Լեւոնի տումարէն, ապա մինչ փառս տան, զի՝ չասեն Փառք Հաւր և Որդւոյ երկուց բնութեանցն, և Հոգւոյն սրբոյ. և կամ ի մկրտութեանն, եթէ՝ Մկրտի այս անուն յանուն Հաւր և Որդւոյ երկուց բնութեանցն և Հոգւոյն սրբոյ. և կամ ի ժամ պատարագին. թէ՝ Հայր սուրբ Որդւոյ երկու բնութիւնքն սուրբ և Հոգի սուրբ. ապա թէ չիշխեն ասել այդպէս, այլ Հաւր և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ փառս տան. ապա ուրեմն լոկ խոտորումն յԱստուծոյ ուսուցանեն ժողովն Քաղկեդոնի և տումարն Լեւոնայ։

Արդ՝ եթէ չէք փոխեալ ի Հայրենի հաւատոյ որպէս բազում անգամ գրեցեր առ մեզ, եկ նզովեա և դու զանիծեալ ժողովն Քաղկեդոնի և զպիղծ տումարն Լեւոնի, որպէս նախնին քո երանելին Գաբրիէլ կաթուղիկոսն Վրաց նզովեաց ընդ երանելի հարսն մեր հանդերձ աթոռակցաւք իւրովք. որոց անունքն են այսոքիկ։ Որ ինքն Գաբրիէլ եպիսկոպոս Մցխիթայի անուանի և Պաղդէն եպիսկոպոս թագաւորութեան

Digitized by Google

տանն. Եղիփաս եպիսկոպոս Սամուրիաղ. Սամուէլ եպիսկոպոս Տումասուէլ. Դաւիթ եպիսկոպոս Բողնիս. Յակովբէ եպիսկոպոս Որտաւի. Ստեփանոս եպիսկոպոս Ուսթաւի, Սահակ եպիսկոպոս Տփղեաց, Եղազէս եպիսկոպոս Մանգղեայ, Ենէս եպիսկոպոս Մարուէլ, Եւգենէս եպիսկոպոս Սամթաւացի, Յովսէփ եպիսկոպոս Ադսուէլ, Յովան եպիսկոպոս Սառուսթիէլ, Յովսէփ եպիսկոպոս Կուխորդոյ, Եղրաս եպիսկոպոս Կիսդադ, Ենովք եպիսկոպոս Ծիղկանու, Յովսէփ եպիսկոպոս Միդամիդ, Ղազար եպիսկոպոս Փողդրիդ, Թէոդորոս եպիսկոպոս Փորթայ, Զաքարիաս եպիսկոպոս Կասդրայի, Փոկաս եպիսկոպոս Տսերմիդ, Իսահակ եպիսկոպոս Քունանակերտ, Թովմաս եպիսկոպոս Տարսի, Եստեփան եպիսկոպոս Քորչոնաւ. Արդ՝ այս երանելի եպիսկոպոսունքս որ յաշխարհէ ձերմէ էին, և ընդ Աղուանիւք և ընդ Սիւնիւք ի Հայս դիպեցան յաւուրս Բարգենայ Հայոց կաթուղիկոսի, յայն ժողովի յորում անիծաւն ի նոցանէն միաբանութեամբ ժողովն Քաղկեդոնի և տումարն Լևոնի. Եւ զի պայման նամակն՝ որ Հայերէն գրով էր, յապստամբութեանն կորեաւ, և թարգմանեցաւ այս յՈւրհայ քաղաքի ի Հոռոմ գրոյ. քանզի և նոքա ունէին ի մէջ. և ստոյգ և սուրբ, որպէս արժան էր, չկարացին թարգմանել, զի են որ քաջ յայտնի են եպիսկոպոսայդ և եպիսկոպոսարանացն անուանք, և են որ կարի ի ծածուկ և այլաձևք. Բայց թէ կամիք անուամբք եպիսկոպոսացն և յաջորդաւք տեղեացն և այլաձև անուամբք եպիսկոպոսացդ՝ որպէս գրեալ են, կարէք զստոյգ անուանս եպիսկոպոսարանացն գտանել. և զայլոցն ևս, քանզի և մեք զմերս, այդ տարպուս մարթացաք գտանել, և մանաւանդ թէ զպայման նամակն իսկ գտանիցէք գրով ձերով.

Իսկ զոր դարձեալ գրեցէքն յոլովիցս անգամ, թէ յառաջ և դուք զՆերուսաղէմի հաւատն ունէիք, և արդ ունիմք մեք զայն որ յառաքելոցն քարոզեցաւ, որպէս և գրեալ է թէ Աւրէնք ի Սիոնէ ելցեն, որ են առաքեալքն ժողովեալք ի վերնատունն, և Բան Տեառն յԵրուսաղէմ, որ է Բանն Աստուած Քրիստոս, և զոր ի նոցանէն ուսաք պահեմք և պահեսցուք մինչև յաւիտեան, և այլոց պատուիրեմք մի՛ խոտորել և մի՛ զաւտար ուսումն ուսանել. Քանզի զայս զիտէր Պաւղոս առաքեալ, գրէր, եթէ՝ Զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայլ աւետարան, որ ոչ գոյ այլ աւետարան. և ոչ միայն

Երուսաղէմացիք, այլ թէ՝ Եւ մեք, ասէ, և կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ՝ աւելի քան զոր առէքն, նզովեալ լիցի։ Զնոյն և ես ասեմ զոր առաքեալքն ասէին։

Իսկ զոր վասն եպիսկոպոսիս Ցուրտաւայ գրեալ էր, թէ յորժամ չգիտէր զմեզ ուղղափառս՝ չէր արժան աւրհնիլ ի մէնջ. երդմամբ հանդերձ հաստատեաց զայդ տեղի, թէ չգիտէաք, բայց զի յետ ձեռնադրութեանն ծանեաք. որ և մեզ կարի հաւատալի թուեցաւ. քանզի չգիտէր, զք յուղղափառաց ստոյգ զայդ պղպէս։ Վասն զի և երանելին Մովսէս որ յառաջ քան զիս յառաքելական աթոռս յաջորդեալ էր, չգրեաց այնպէս, թէ զուք չէք ուղղափառք, այլ թէ ընդ չուղղափառսն ընդէք հաղորդեցայք։ Արդ՝ ինձ այս անզամ յաղագս անիծեալ ժողովոյ և պիղծ քոհարին՝ թէ որպէս ընդունիք, ճշմարտութեամբ և հաւատի պատասխանի արարէք, և էջ Աստուած կամի, և բան միաւորութեան գրէք, զոր ժամադրես ինձ և քեզ ի մի տեղի զալ և Աստուծով լինի խաղաղութիւն, թէ Աստուած կամի։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Արրասիրի և ճշմարտի Տեառն Արրահամու Հայոց կաթուղիկոսի, ի Կիւրովնէ Վրաց կաթուղիկոսէ, խոնարհութեամբ և սիրով ողջոյն։

Անհաւասիկ այս և ի մենջ երրորդ թուղթ գրեցաւ Եպիսկոպոս էր ի Հռովմ Կելիստինոս, յԱղեքսանդրիա Կիւրեղ, յԱնտիոքիա Յոհան, յԵրուսաղէմ, Յովբնաղ, ի Կոստանդինուպաւլիս երևեցաւ դարձեալ այր մի՝ որ ունէր պատիւ հովութեան բայց ճշմարտութեամբ ուրացող էր, և անաւրէն որդի կորստեան և ժառանգ սատանայի, որում անուն կոչէր Նեստորիոս։ Ասաց և սա հայհոյութիւն ըստրոյ կուսէն՝ թէ չէ Աստուածածին, այլ մարդ սոսկ ծնաւ, որ և Քրիստոս անուանեցաւ։ Վասն որոյ հայհոյութեան և սուրբ ժողովն եղև, և բազում անգամ յանդիմանեցաւ ի նոցանէ, և ոչ կամեցաւ ընդրել զբարին, և տեսեալ զանաւրէն յամառութիւն նորա սուրբ ժողովոյն, նզովեցին և հալածեցին զգայլն ապականիչ ի հաւտէն Քրիստոսի, և յայտնեցին մեզ հաւատս այսպէս նոյն ինքն յԱստուծոյ Հաւրէ բնութեամբ Որդի, միայն ծնեալ յԱստուծոյ Հաւրէ, Աստուած ճշմարիտ և լոյս ի լուսոյ. զոր վասն մեր ամենեցուն պատրաստեաց Հայրն. իջանել, մարմին զգենուլ, մարդանալ, չարչարել, մեռանել և յերրորդ յաւուր յառնել Զայս խոստովանիմք և մեք զհաւատս, և զհարանցն մերոց առաջնոց, և գիտեմք ճշմարտապէս զի մարմին զգեցաւ Բանն Աստուած և մարդացաւ։ Բայց ոչ ասեմք որպէս թէ Բանն դրնութիւնն փոխեաց, այլ ի պատկեր եղև մարմնով։ Ոչ իբրու թէ ոչ ամենեքիմք մարդ բովանդակ զգեցաւ հոգւով և մարմնով։ ոչ այսպէս. այլ վերագոյն առաւել ևս հարցն մերոց վարդապետութիւն, մարմին հոգւով հանդերձ ասացին առնուլ, հոգի խաւսուն միաւորեցոյց բանիւ զաւրութեամբ հանդերձ, և էութեամբ զանքննելին և զանհասա-

Digitized by Google

նելին։ Եղև մարդ որպէս կամեցաւ, և անուանեցաւ որդի մարդոյ։ Կամեցաւ յերկուց դիմաց զէութիւն բնութեանցն զերկուսեան միաւորել, ի մի միաւորութենէ Քրիստոս եկորդի *). ոչ թէ յիւրաքանչիւր բնութենէ առ զխառնելն. այլ առաւել բովանդակեաց ի մէջ, մի Տէր, և մի Քրիստոս, և մի Որդի, աստուածութիւն և մարդկութիւն, որ զանքննելի էութիւնն մի արար որ յառաջ քան զյաւիտեանսն էր՝ և միշտ ընդ Հաւր ի գաղտնիսն ծածկեալ. այլ վասն մերոյ փրկութեան միաւորեցաւ սրբութիւն նորա զաւրութեամբ հանդերձ և փառաւք։ Եւ մարդոյ մարմնով ծնաւ ի կնոջէ մարմնաւոր, ոչ իրրու թէ յառաջագոյն սատակ **) մարդ ծնաւ, և ապա եմուտ ի նա Բանն, զայս գիտասցէ ձեր սէրդ, զի անմիտն Նեստորիոս այսպէս խմաստնանայր։ Բայց մեք հաւատամք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ, միայն ծնեալ, Աստուած կատարեալ և մարդ կատարեալ, նման Հաւր աստուածութեամբն, նման մեզ նոյն ինքն և մարդկութեամբն, զի յերկուց բնութեանցն եղև միաւորեալ, վասն որոյ մի Քրիստոս, մի Որդի, մի Տէր, զայս խոստովանիմք անխառնակելի իմանալովն։ Խոստովանիմք և զսուրբ կոյսն Մարիամ Աստուածածին. յորմէ Աստուծոյ Բանն մարմին եղև և մարդացաւ, և ի նմանէն՝ յոր բնակեցաւն ի նմա, և միաւորեաց զիւրն ի նմա՝ զոր զգեցաւն ի նմանէն զտաճարն։

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՂԿԵԴՈՆԻ ԺՈՂՈՎՆ.

Չորրորդ ժողովն որ եղև ի Քաղկեդոն ի սուրբ հարցն Ո. և Լ. իսն ի թագաւորութեանն Մարկիանոսի. եպիսկոպոս էր ի Հռովմ Լևոն, յԱնտիոք Մաքսիմոս, ի Կոստանդնուպալիս Անատոլի, յԵրուսաղէմ Յուբենաղ, յԱղեքսանդրիա Դիոսկորոս, վասն որոյ և ժողովն իսկ եղև, և վասն Եւտիքու խորհրդականի նորա։ Այս Եւտիքի քահանայ էր և վանական ի Կոստանդնուպալսի. բայց աւտարացեալ էր յարդար և ի ճշմարիտ հաւատոյ։ Վարդապետութիւն իմն ի մէջ երեր յիւրոց ուտայն սատանայականաց և ասաց. թէ յառաջ քան զմիաւորութիւնն երկուս

*) Այսպէս յոր.
**) Այսինքն՝ պարզ.

բնութիւնս խոստովանիմ Քրիստոսի. իսկ յետ միաւորութեանն մի, վասն զի ի սրբոյ կուսէն ի Մարիամայ մարմին ոչ զգեցաւ. Եւ յաղագս այսորիկ բաղում անգամ յանդիմանեալ լինէր ի սրբոյ ժողովոյն, որք խոստովանութիւն խնդրէին ի նմանէ այսպէս. Եթէ ոչ խոստովանիս յառաջ քան զմիաւորութիւնն մի՛ բնութիւն Աստուծոյ բանին, իսկ յետ միաւորութեանն երկուս անփոփոխելի և անխառնելի և անբաժանելի և եթէ ոչ խոստովանիս զԱստուածածին նման մեր, և ի նմանէ զծնեալն նման մեր, մարդկութեամբ յամենայնի նման մեր առանց մեղաց, և ոչ նզովես զամենայն հերձուածս միացեալս և խառնեալս, և ոչ հեռանաս յամենայն չար վարդապետութեանց սատանայականաց, չունիս իշխանութիւն ժառանգել զեկեղեցի Քրիստոսի.

Իսկ ողորմելին Եւտիքի ասաց. զկոյսն խոստովանիմ նման մեր լինել, բայց զմարմինն Քրիստոսի նման մեր լինել չասեմ և ոչ նզովեմ։ Ապա յարեաւ սուրբ ժողովն և նզովեցին զնոսա և ասացին այսպէս. Նզովեալ Եւտիքի, և նզովեալ Դիոսկորոս, Երրորդութիւնն սուրբ նզովէ, և հանէ *) առաքելական աթոռն սրբոյն Պետրոսի։ Եւ հալածեցին զնոսա ի սրբոյ կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ, և մեղ յայտնեցին հաւատս այսպէս։

Բաւական ահա էր առ ի կատարելութիւն բարեպաշտութեան գիտութիւն իսկ և հաստատութիւն. իմաստուն և փրկանս այս Աստուածային շնորհին հմայումն, քանզի յաղագս Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ի բաց ուսուցանէ զկատարեալն, և զՏեառնն ներգործութիւնն՝ որք հաւատովք ընդունին յառաջակայ։ Եւ ոմանք վասն մեր զՏեառն տնաւրէնութիւնն ապականել իշխեցեալք, և զԱստուածածին՝ ի վերայ կուսին զձայնն ուրանան։ Իսկ ոմանք խառնել և խառնակել ասեն, և մի բնութիւն զմարմնոյ և զաստուածութեանն կարծեն տգիտութեամբ իւրեանց և զՄիածնին զաստուածութեանն զբնութիւնն խառնակելովն ծածկեն։ Եւ ոմանք վասն չարչարանացն ձեռն արկանել իշխեն ի գաղտնին, և սոսկ մարդ լինել ի սրբոյ կուսէն ծնեցելոյն անամաւթարար առասպելաբանեն։ Եւ որք զՈրդին ձեռն արկանեն՝ բաժանել յերկուս, ի գաղտնին նոցա ընդդիմանայ։ Եւ որք չարչարել զՄիածնին զաստուածութիւնն իշխեն ասել, զայնոսիկ ի քահանայութեան ժողովարանէս հեռացուցա-

*) Ա յոպէ՝ յօր.

նէ։ Եւ վասն երկուց բնութեանցն Քրիստոսի՝ որք խառնակել համարին՝ նոցա ընդդիմանայ։ Եւ որք յերկնից պլակգ ինչ լինել չէութեանն ասեն որ ի մեզէ առեալ նորա, և զծառայութեան պատկերս արտաքոյ պատմեն, զնոսա հալածէ։ Եւ որք երկուս բնութիւնս յառաջ քան զմիաւորութիւնն զՏերութեանն առասպելաբանեն, և մի բնութիւն զկնի միանալոյն առասպելաբանեն. զնոսա նզովէ սուրբ և աշխարհի ժողովն։ Եւ խոստովանի մի և զնոյն Քրիստոսն Որդի և Տէր և Միածին և յերկուց բնութեանցն անխառնելի։ Զայս ահաւասիկ արարեալ աշխատութեամբ և պատերազմաւ, և ամենայն ճշմարտութեամբ յայտնեաց սուրբ աշխարհաժողովն։ Այլ քան զայս աւելի հաւատս ամենևին ոչ է պարտ ի մէջ բերել, և կամ գրել, և կամ խաւսել կամ բանիւք և կամ ուսմամբ։ Իսկ որք յանդգնին գրել այլ հաւատս, կամ յառաջ բերել և կամ ուսուցանել, այնոքիկ թէ իցեն եպիսկոպոսք կամ քահանայք, և կամ սարկաւագունք, աւտար եղիցին եպիսկոպոսքն յեպիսկոպոսութենէ, և քահանայքն ի քահանայութենէ։ Եթէ մոնայն իցէ և կամ գինուոր, նզովեալ եղիցին նոքա։

Արդ զայս գրեցաք վասն սիրոյ ձերոյ, զի արդար և զճշմարիտ հաւատն պահիցէք և կեանս ունիցիք։ Գիտիցէք զի անձամբ ինչ զայս ոչ գրեցաք, այլ յիւրաքանչիւր ժողովոցն գրոց, և հաւատս ողորմութեամբն Աստուծոյ ի մեզ է։ Կնքեցաւ, և զայս ամենայն վասն ձեր շինութեան գրեցաք ամենայն ճշմարտութեամբ. և ոչ եթէ սակաւ քննութեամբ, այլ մեծապէս աշխատեցաք և ծանեաք, զի այս է ճշմարիտ հաւատ։ Եւ դուք ճշմարտութեամբ հաւատացէք զարդար հաւատս զայս, և մի՛ դեղևելով ՝ուն և անդր անկանիցիք. գիտացէք զի իւրաքանչիւր որ ի մէնչ համարս տալոց եմք դատաւորին յաւուրն մեծի։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԶՐՋԱԳՈՒՇԱԿԱՆ ՏԵՍՈՒՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Նպղելի և ի վեր քան զրանի բերման պարգև, զՇնորհ զոր ետ Բանն Աստուած արժանեաց մարդկութեանս, աթոռ ունել երկնային զառաքելական ասեմ, և զնոցուն յաջորդաց, որ և ես Աբրահամ անարժան, կոչեցայ յաթոռ երջանիկն Գրիգորի յաջորդեցելոյ մեծի առաքելոյն Թադէոսի. Ամենեցուն կացելոց ընդ այսմ հովուական իշխանութեամբ, առաջնորդաց եկեղեցւոյ, վանից երիցանց, և քահանայից, և սարկաւագաց, և բնաւ ուխտի եկեղեցւոյ, անապատականաց և մենացելոց, ապատաց և շինականաց, և համաւրէն ժողովրդականաց, արանց և կանանց, ողջունիւ և խաղաղութեամբն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, հացի ձեզ զարգանալ, կարգ վարուց, և յաշտիճան իրական կոչումն։

Սովորութիւն կալաւ պատահել թէպէտ և մեծ անձանց յառաքինաւէտսն, այլ ոչ նուազ և դուզնաքեայ յառաքինութեան և ի զգաստալի խոհականութիւնս, նա և ի բաց որոշեալ ի նմանութեանցն բարուք. թէպէտ և երկուքն ի վերին տեսչութենէն ակնարկեալք. և մինն ի թոյլ տալոյ, որոց զպատճառսն ինքն միայն գիտէ, և է մեզ խորշելի, մի ըստ դուզնաքեայցն ըմբռնեցաք և մեք ակամայ ածեալք յաշտիճանս քահանայապետական ի կամողացն զայս հրաժարեալք. գիտէ զամենեցուն սիրտս ճանաչաւղն Քրիստոս՝ զի ոչ ստեմք։ Այլ զի՞նչ քան զբաւականսն զիմ զհաւատացեալսն համարէի, և արհամարհելիք, յանկացաւղք տիրել վիճակաց, նա և սոսկալի՞. մի՝ վասն գերամբարձ զահակցութեան Աստուծոյ քահանայապետելոյ. և երկրորդ յաղագս սղալեղց և ըմպահակոտի մարդկային բնութեանս. զուցէ՝ ծանրաբեռնեալ ոչ ախորժակաւքն ըստ պատուոյ, և կամ զվարդապետութեանն ընտրութիւն առ ար-

Digitized by Google

ժանս ոչ բաւականել. և թէ այսք ինձ առ նախն, քանի՞ք ևս առ արդեանս։ Բայց յետ բռնաձգութեանս դիմադարձեալ, զուցէ ի փոխաւղն կսիրտս իշխանացն հաշուէ, և ի պատուէրն հնագանդ եղանիլն վասն Տեառն, ամենայն մարդկային ստեղծուածոյ, առաւել որք ի մահ Որդւոյն Աստուծոյ կենդանացեալք, հաղորդեցան անճառարար զՀոգւոյն սրբոյ զորդեգրութեան շնորհն յինքեան բերեալ, հարկաւորեցաք հնազանդել ընդ լծով կոչմանս այսորիկ, և ընդ հուպ ի ձեռն առնուլ զայցելութեանն բան ի պատիւ անուանն Աստուծոյ, ի պայծառութիւն վարդապետութեան նորա։

Զի թէպէտ և ձեռաց ժամանակիս մարդկան գործք են, ամպարշտելն առ Աստուած, և անիրաւ գնացքն պտուղ սպառմունս պատրաստեաց, և զմնացեալս դարձեալ տասանորդել սակայն հոգաւղք վերատեսչութեանն զծուլական լքումն՝ որ դասակցէ պատժապարտիցն, ի վերջ հրամայեցաք հարկանել և ի բաւական լինել անաշխատարար յառաջատիլ զՀոգւոյն սրբոյ զվարդապետութիւնն, որ է հաստատուն միխիթարութիւն, ամենայն ումեք բաշխեալ. մանաւանդ որք պատշաճին ժամանակին. թէ պարտ է համբերել նեղութեան և տանել առարինութեամբ կարեաց, համբառնալ զանձն առ Աստուած մաքուր մտաւք և յուսալ ի նա։ Քանզի խորհուրդք թիւրք անչատանեն յԱստուծոյ, որպէս ուղիղքն և մաքուրքն անքակ պահեն։ Վասն զի յաճախութիւն թեթև նեղութեան յանհաստատ և ի վաղանցուկ ի կեանսս, յաւիտենական զմեծութիւն փառաց գործէ։ Միայն իբրև սպանող զնեղութիւնն մի՛ ընկալցէր, և զարչարելն, կամ իբրև զդող, կամ իբրև դաւտարատեսուչ, որ է հերձուածող. ապա թէ իբրև զքրիստոնեայ՝ երանելի է այնպիսին, բանզի սովոր է մարդասէրն ի բարկութեան զողորմութիւն յիշել, և կեցուցանել յորժամ դառնան առ նա և յոգւոց հանեն։ Զի որպէս երկրագործն՝ համբերէ տապախառն ջերմութեան աշխատանաց, վաճառականն՝ զերկայնուղղեաց տուայտանս, նաւաստին՝ ընդդէմ ալեացն և մրրկին հնարել, ախտաժէտն ի բուժողական կտրումն խարմամբ, մինչև առցէ իւր. . . զաւգուտն։ Այսպէս և մեք ի նեղու. . . . . թիցն փութով նահատակեալք զ. . . . ի բարձանց ընկալցուք, և զկատարել. . . . զիրան յուսոյն։ Կամաք մերով բարբառով ասել ի բարեպաշտացդ լսելիս։ Բայց ի հաբէ պիտոյից շինածոյ եկեղեցւոյս հասարա-

Digitized by Google

կացս Հայաստանեայցս որ ի Դունի՝ արգելեալ եղեալք, փութացայ ղգուշացուցանել շրջարերական թղթովս՝ ի գայթագղութեանցն ցարթուցելոյ ի մահացան թշնամւոյն, զոր թանձրամիտքն և մարմնասէրքը աթոռացեալ ի նոյն ապերախտք եղեն, և զփրկութիւնն յորդւոյն Աստուծոյ և վասն մարմնոյ նորա զհաշտութիւնն ընդ մեզ, և զմեզ ի վեր տանումն ի բարձրութիւն երկնից երկնի ուրանան. զի յայսպիսեացս խորշեսջիր, զընտանիսն հաւատոյ ճանաչելովն, ոչ աւտար ինչ ձայնիւ նորաձևեալ յայլայլակն, որպէս զաւցտոդսն լեալուաւ, մեր վարդապետութիւնս։

Այլ յառաջագոյն աւետարանեալքն յիսկզբանէ ականատեսացն և սպասաւորաց բանին. և ի մարգարէիցն զուշակեալք, զոր մատուցին մեզ. Ց և ԺԸ. հարքն ժողովեալք ի Նիկիա, նովիմբ քաջ նահատակքն ՃԾ.քն ի Կոստանդնուպաւլիս. կործանեցին զՀոգեմարտսն. Եւ Մ. իւրքն յԵփեսոս՝ գամպարիշտն Նեստոր. և իւրեանց խոստովանութիւն առաջնորդ կալան ի կեանսն յաւիտենից, զոր և ես կարճառաւտաղոյնս և մեկնողաւրէն յիշատակեցից, և է այս։

Հաւատամ ի մի Աստուած՝ Հայր ամենակալ, արարիչ երկնի և երկրի, երևելեաց և աներևելեաց։ Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդի Աստուծոյ, ծնեալ յԱստուծոյ Հաւրէ, միածին՝ այլ ոչ արարեալ կամ հաստատեալ, համագոյ Հաւր. այլ ոչ յոչընչէ. արարիչ ամենայնի երևելեաց և աներևելեաց։ Եւ ի սուրբ Հոգին, արարիչ և կենդանացուցանող և նորոգիչ. ո՛չ ծնունդ, այլ ելումն։ Աստուած ասի Հայր. Աստուած Որդի, Աստուած սուրբ Հոգի, ոչ երեք աստուածք, այլ մի Աստուածութեամբ կամաւք և զաւրութեամբ փառաբանի սուրբ Երրորդութիւնն, զոր իմանամ միաւորութեամբ բաժանեալ, և բաժանմամբ միաւորեալ. ո՛չ սկիզբն և ոչ դադարումն, կամ երկյութիւն, քանզի որպէս փառք առանց լուսոյ ոչ իմանի, և ոչ կամ պատկեր առանց էութեան, և զաւրութիւն առանց զաւրութեան, կամ իմաստուն առանց իմաստութեան. այսպէս և ոչ Հայր առանց Որդւոյ։ Եւ որպէս ի լուսոյ երեսաց նորա միշտ լոյս ծագէ տեսաւղացն, և ոչ զոր զատանի առանձնարար, կամ մինն յառաջ երևի, այսպէս և ոչ Հայր և Որդի առանց սրբոյ Հոգւոյն։ Իսկ ի վերջին աւուրս, Որդի իջեալ մարմնացաւ և մարդացաւ. ծնաւ անճառարար ի սուրբ կուսէն Աստուածածնէ

մարմնով, հոգւով բանականաւ, շնչովք, մտաւք, և կինչ ի մարդ յարունակ աստուածային ճախութեամբ։ Եւ է մի Տէր Յիսուս Քրիստոս, անմեկնելին ի Հաւրէ, և բովանդակ յերկրի, խաչեալ թաղեալ, և յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ յերկինս նստաւ ընդ աջմէ Հաւր, գայ նովիմբ մարմնով դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ դոյ վախճան։ Իսկ որք ասենն, եթէ էր՝ յորժամ ոչ էր, և նախ քան զլինելն չէր, և կամ զայս զսրբոյ Հոգւոյն, կամ փոփոխելի, և կամ այլայլելի, և կամ յայլմէ էութենէ և կամ ի գոյութենէ. զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

Այս է խոստումն նախատացեալ ցուցակաւրէն երանութեանցն պայծառութիւն, որ առ Թովմաս ձայնն, և սովիմբ մկրտեալք պահեցաք ի մեզ, և աւելի հաստատեալք պահեցուք. յորս զտեալ Տեառն մերոյ և Աստուծոյ, պատուականս համարի յաչակողման դասուն։ Եւ մի երբէք ըստ հաւատոյն մասին մեղիցուք, այլ և ընդ ըստդտեալսն ամենեիմբ ոչ հաղորդել, որ կամակարն զյաւիտենական կորուստն հասարակ ժառանգեցուցանէ։ Բայց եղիցին կամք ձեր ըստ մարգարէին բանից, ատել ձեզ զժողովս չարեաց և ընդ ամպարշտեալսն մի՛ նստել, և զՏեառն, ատելիսն ձեզ կատարեալ թշնամիս դնել, որք են յաշխարհիս մերում բազում չարք, բայց առաւել երկաբնակքդ։ Քանզի յաւուրս Մարկիանոսի Հոռոմոց թագաւորի, որ գրեթէ ի ժամանակս Կաւատայ Պարսից արքայի, և կամ թէ փոքր ինչ յառաջ, ժողովեալք ի Քաղկեդոնի, ի ճշմարտութենէն վրիպեցին. զի և զնոյն ինքն զթագաւորն ամենաչար կամայն Նեստորի միարանեալ, և ժողովեալքն զլխաւորք համախոհակք նմին, արձան կացուցեալ իւրեանց չարափառութեան զթուղթն Լևոնի. հաստատեաց զյառաջ եղեալ աղանդն Նեստորի, և կամ զևս վերնադունին զՍամուստացւոյն, զի թէպէտ և ձայնքն որոշին, միտքն զմիոյ բերին։ Քանզի չյիշատակելին Նեստոր անդուն բերանով, յանդգնի ասել երկուս որդիս, մի զՄարդին Աստուծոյ, և միւս, զ՝ի Մարիամայ ծնեալն, մարդ սոսկ, և տաճար բանին, և զաւրանալ զնա ի Հոգւոյն սրբոյ ուսուցանէ։ Քանզի մարդածին, և ոչ Աստուածածին ասէ զսուրբ կոյսն, և մարդ մեռեալ ասէ, և ոչ խոստովանի զԱստուածն Բան՝ իւրով մարմնովն կրեալ զամենայն, վասն որոյ նզովեցաւ։ Իսկ ի Քաղկեդոնի ժողովեալքն ոչ իշխեցեալք զնոյն ասել, երկուս բնու-

Digitized by Google

թիւնս աւրինադրեցին, որք ի սուրբ վարդապետացն՝ Երկաբնակք անուանեցան և Հայհոյողք։ Քանզի և որոշեն իսկ զկիրսն։ Միում բնութեան զբաղցենալն, զծարաւելն, զվաստակելն յուղեգնացութենէն, զլալն ի գթոյն, յանդգնին և անգիտութիւն ասել զխաչն և զամենայն տկարականսն։ Իսկ զնշանագործութիւնսն, և զաստուածային և զհրաշափառսն ի բժշկութիւն և յայլսն, միւսում բնութեանն՝ իբրև թէ պարզագունի և քաջ մեկուսացելոյ ի մարմնականացն։ Եւ այսպէս երկուս ուսուցանեն, զմինն մարդ և ընդ կարեաւք անկեալ, և զմիւսն ի վեր քան զկարիս, զմինն բնակութիւն, իսկ զմիւսն բնակիչ, զմինն՝ չարչարելի, և զմիւսն անչարարելի. թէպէտ և զէմ մի համ։ բաւեն։ Ապա յիրաւի նզովեցան յուղղահաւատից և ի վարդապետաց աշխարհիս։

Քանզի առաքեալքն Փրկչին մերոյ, մի՝ Տէր քարոզեցին զՅիսուս Քրիստոս, և զնոյն ի խաչ ելեալ Պաւղոս յայտնագոյն աղաղակէ, թէ՝ զՏէրն փառաց ի խաչ հանին, և Որդին Աստուծոյ զմահ ճաշակեաց. ասէ. Մինչ թշնամիքն էաք, հաշտեցար ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ Նորա. և թէ՝ Քրիստոս վասն մեր մեռաւ. և զնոյն ասէ՝ Ի վերայ ամենեցուն Աստուած աւրհնեալ յաւիտեանս։ Եւ այսպէս զԱստուածն Բան իւր մարմնով և անձամբ զամենայն մարդկայինսն կրեալ առանց մեղաց ուսուցին մեզ, և հրաման ետուն՝ որք այսու վարդապետութեամբ ոչ դան՝ զնոսա մի՝ ընդունել ի տունս և մի ողջոյն ասել, զի մի՝ նոցա մեղացն կցորդիցիք։ Արդ ըստ առաքելոյն և երանելի մեր վարդապետացն հրամանի՝ փախիցուք ի նզովեցելոյն, և ի նոցունց դժոխաժառանգեցուցանող փսխմանց, զամբիծ հաւատսն զառեալ ի մեզ պահելով։ Քանզի և դեռ որպէս զբաղցկեղ ճարակի խմոր հերձուածոյն, մինչ զի և զրէթէ ի սահմանակիցս և միով վարդապետութեամբ լուսաւորեալս ժամանեաց. զՎրաց ասեմ և զԱղուանից, որք զժահահոտ սերման նախասացելոյն մեծարանաւք ընկալեալ յինքեանս հաստատեցին, զԱստուածպաշտութեան լոկ զկերպարանս ցուցանելով պարզամտաց, և որք սովորութիւն ունին զմիարանելն ընդ նոսա. և ի կաւրութենէն ինքեանց նման՝ և զնոսա հեռացուցանեն. վասն այսր հարկաւոր համարեցայ գրել Յառաջագոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթուղիկոսութեան՝ յԱղուանս. իսկ մեք ի Վիրս

Digitized by Google

առ Կիւրոնն՝ որ կաթուղիկոսն անուանի, և նորին աթոռակիցս։

Քանզի ղեպիսկոպոսն եկեղեցւոյն Ցուրտաւայ, որ վիճնորդութիւն ունէր երկուց աշխարհացս, յաղագս ուղղափառ հաւատոյ հալածական արար, և ղպաշտաւնն Հայերէն զոր սրբոյն Շուշանիկն էր կարդաւորեալ, հակառակ մեզ խրոխտացեալ ի բաց փոխեաց։ Յաղագս որոյ գրեցաք դառնալ ի ճշմարիտ հաւատն, և կալ հաստատուն յաւանդութեան առաքելոցն, որ տուաւ ի ձեռն մեր վարդապետացն և նոցա ընդդիմացեալ երկիցս անգամ զհակառակն գրեցին առ մեզ։ Քանզի նոյնդ իսկ սուտանուն՝ կացեալ զլուխ եկեղեցւոյն Վրաց, ի նմին ժամանակս Խոսրովու արքայի որդւոյ Որմիզդի, ընկալեալ ի Նեստորի ուսմանէն *) եպիսկոպոս զոմն, և ի նոյն հայհոյող վարդապետութիւն զինքն տուեալ. յառաջ ունելով զՔաղկեդոնի աթոռն. ապա թէպէտ և գայրն մերժեալ զի մրուր մեղացն պահեցին, և ուժգնագոյն ևս զամպարշտութիւնս իւրեանց, յերրորդ գրին ընկալաք, և պարծանաւք խրոխտեալ, ոչ թողուլ զաղանդն, այլ և զմեզ զկնի իւրեանց թիւրեալ խորխորատն ուսուցանել **) համարձակեցաւ։ Վասն որոյ և պյառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց, զոր ի վերայ Հոռոմին հատին, և կացցէ մինչև ցքուն՝ թէ ոչ դարձցին ի ճշմարիտն, մեք զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենևիմբ մի՛ հաղորդել ընդ նոսա, մի՛ յաղաւթս. և մի՛ ի կերակուրս, և մի՛ յըմպելիս, մի՛ ի բարեկամութիւն, մի՛ ի դաեկութիւն, մի՛ աղաւթիւք երթալով ի Խաչն որ ի Մցխիթայի տեղաւքն համբաւի. մի՛ ի Մանգղեայ խաչն և մի՛ ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել. այլ և ամուսնութեամբ ամենևիմբ հեռանալ. բայց միայն գնել ինչ և կամ գնոյ տալ որպէս Հրէից։ Նոյն հրաման և վասն Աղուանին անշարժ կացցէ, զի պատկառեալ դարձցին ի թիւր ճանապարհէն։

Իսկ մեք ոչ լռեմք ի խրատելոյ որչափ և եմք ի կենցաղիս, և որք զկնիսն, աղաչեմք նախանձաւորս մեզ լինել, ածել զնոսա յուղղութիւն։ Իսկ յարդեան ժամանակիս որք հաղորդեցան ընդ յառաջ որոշեալսն, և կամ ընդ որս ի մէնջ, կամաւ

---

*) Յոր. սխմանէն.
**) Յոր. սխուցանել.

թէ ակամայ, և կամ տգիտութեամբ, մարգարէին ձայնակից լի-
ցի այնպիսին աղաւթիւք. թէ Զմեղս մանկութեան իմոյ և
զանգիտութեան մի՛ յիշեր. և այլ զգուշասցի ըստ կանոնաւոր
հրամանիդ մերոյ։ Ապա թէ անխրատաբար վարեսցի ոք հա-
ղորդելով ընդ նոսա և կամակից լիցին պղծութեան հաւատոց
նոցա, այնպիսիքն նզովեսցի՞ն հոգւով, նզովեսցի՞ն մարմնով և
ամենայն կենցաղով իւրեանց, և որոշեսցին ի սրբոյ եկեղեցւոյ
Աստուծոյ. և եղիցին խաւարաբնակք և յաւիտենից հրոյն
կերակուր։ Իսկ եթէ ոք ամրարտաւանեսցէ արհամարհելով
զնզովիւքս, գիտասցէ այնպիսին զի յետ հոգևոր պատուհասի, և
զմարմնաւորս պատրաստեմք ի վերայ ածել։

Digitized by Google

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅՈՑ ԹՂԹՈՑՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ՎՐԹԱՆԻՍԻ ՔԵՐԴՈՂԻ

Պատուական ղտեղոյդ և վեհ հռչակելոյդ, որք ցկարութիւն ընելլ յաւժարութեամբ յառարկութիւնս և զանտեղիս բացատրդք, նաև նմանք թուեցեալ ի դէպ է ինձ իմանալ կամաւք հաւասար հայոց ջանի աթենականիցն նորագունից լսաւղս և պատմիչս յարդեան ժամանակիս ի մէջ հիւսիսոյ կողմանդ տաղաւարողք զրոլոր լսաւղս տարարերմամբ, մանաւանդ սակս ջարոցել *). զ'ի խորհրդոյդ սեեռումն, Տէր Մխիթար Ամարասոյ եպիսկոպոս, և Սիմոն Մեծ կողմանց, և թէ այլ եպիսկոպոսունք նմին համախոհակք, և ուխտ սրբոյ եկեղեցւոյ, և ալատ մարդիկ կամ՝ այլ ի ժողովրդեան միարանակք, յԱբրահամայ Հայոց կաթուղիկոսէ, և ի Թէոդորոսէ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Դաւթէ Սիւնեաց եպիսկոպոսէ, ի Ստեփանոսէ Բաղրաւանդայ եպիսկոպոսէ, ի Մովսէսէ Խոռխոռունեաց եպիսկոպոսէ, ի Քրիստափորէ Ապահունեաց եպիսկոպոսէ, ի Մատթէոսէ Ամատունեաց եպիսկոպոսէ, և յայլ եպիսկոպոսաց. և յուխտէ սրբոյ եկեղեցւոյ, և յալատ մարդկանէ և ի ժողովրդականաց, ըղձամբ ապաւթալիր և ուժգն խնդրուածովք սրտի զտէրունեան հողեխառն ողջոյնն՝ համարձակապէս մեզ առ ձեզ ասել

Քանզի գրով ի ձէնչ պատմեցէք մեզ, զձեր զորպէս պաշտութիւն և զկամս. թէ անհկառակ արդեւք զէործեալ հակառակութիւն զոր ընկալաք ի նախարարէ միոյ Սիւնեաց Գրիգոր անուն Քանզի և զարբանեկէն ձերոյ ասաց. ի կէր **) ուղղոյ հրաժարի, բայց մեզ բարեպաշտութիւն խնդրել զուշակեցաւ և

*) Այսպէս յօր.

**) Այսպէս յօր.

Digitized by Google

կամաց շարժութիւն ի հաստատն և ի կատարեալ խոստովանութիւն երանելի նախահարցն հասարակաց ի Քրիստոս, թէպէտ և գլուրս ի նմա գանազանեալ տեղեկացաք, և թէ ըստ կարծեացս զորաքեցէ *), աստուածվայելուչ խոստովանութիւնք. Թո՛ղ յաշակերտելոց բանին, բայց յաւտարոտաց եղեալք. ո՞ւմ ոչ սրտալիր ուրախութիւն Թուիցի՝ Քանզի նա աւելագոյն անդր և անկումն խաւարային իշխանին է, և աշխարհի յաղթութեանն զքաջալերութիւնս ի փրկաւղէն ամենեցուն առաւելագոյնս հնչեցուցանէ, թէպէտ և ինքն անպարտելի է միշտ՝ Քանզի նա զայն ձայն լսել տայ թէ անդաստիարակ ամենեքեան դուք որդիք Աստուծոյ էք հաւատովն ի Քրիստոս՝ Զի որք ի մի հաւատ միով հոգւով նահատակեալք, թէ երկու կամ երեք խմբեալք, զամենայն զինչ է խնդիր յանուն Որդւոյ ի Հաւրէ շնորհի. քանի՝ ևս եկեղեցւոյ որ մի մարմին են բազումք՝

Արդ՝ և բարին և ուղիղ խոստովանութիւն հաւատոյ է հիմն, ի վերայ հաստատուն վիմի եդեալ, առեալ ջիմաստութիւն յԱստուծոյ իմաստութենէն, կատարեալ պրական հասակաւ, զչափ խոստովանութեան որ ի Քրիստոս, լիագոյն ընդգրկել, որքան թողանի մարդոյ ի շնորհէն որ յուղիղ վատ ամպարշտութեանն և հոգմոյ աւտարաձայն վարդապետութեանն անդրդուելի մնայ՝ Զայս զոյ իմանալ միաբանեալս ցնծութեամբ և երգով հրեշտակաց, թէ և յերկրի են նոցուն դասակից, զի զսրբոյ Երրորդութեանն խորհուրդ անյաւելուած և առանց թերանալոյ երգեն խաղաղութեան ծնիցելոյ յերկրի ի բարձունս Աստուծոյ, և հաշտարարին մարդկան փառք ասիցեալ՝ Քանզի ի Պաւղոսէ ուսայ այսպէս փոխադասել, նոյնպէս անհարկելիք յերկինս պարակիցս, զնոյն փառաբանելով ի միութիւն, և են կամհաճոյ ամենեցուն արարչին, և եթէ նորա որպէս ցուցաք սիրելիք խնդութիւն և պակ առաքելոցն՝ Անպիտանքն ի հաւատս տարագիրք են ի յաւիտեանցն ուխտէ և խոտորեալք զկնի սատանայի, քանզի զհետ երթեալք են այնր՝ որ միշտն ատեայ զՀշմարտութիւն. և էութիւն իւր ի ստութեան է, ուրախութիւն այնց որ խնդացուցանեն ի տարտարոսն ըստ չորբոտանեացն բնութեան. քանզի թողին զարդարութեան ճանապարհն, դար-

*) Ա. յոպէս յոր.

ձեալ հաւասարեցին անանոց անմտից։ Դարձեալ սովեալք իրրև շունք յերկնից իջեալ հացէն, յածին յայրատաբարս զքաղաքաւ՝ զեկեղեցեաւն Աստուծոյ. գաւղանչեն բերանով իւրեանց զորս ոչ ունէր եկեղեցի. քանզի սուր է ի շրթունս իւրեանց յաւտարայուցանել ի մաւրէն ըստ ինքեանց և զայլս և առնել բաժինս աղուեստուց դիւաց որոց նմանեն, և անհնարին կործանումն լինի այնմ տան, զի ի վերայ աւաղոյ հիմնեցաւ։

Բայց մեք եղբարք, թէ ոչ տեսանէաք պառակտեալ զեղեցիկ հաւտ քաջ հովուապետի, և զողն խարդախութեամբ ի զողաւնս, և միշտ ի մէջ հեթանոսաց վասն անմիաբանութեան անուանն Աստուծոյ հայհոյումն, թերևս զանդիմութիւն և խորհրդոյ զոչ բաշաբերութիւն փառարանէաք, ի պարսաւասիրայն բարս հայեցեալ զմեզ հրաժարեցուցանէաք, ասելով թէ ով ելանիցէ ի բարձրութիւն հաւատոյն բանի, զուցէ զՔրիստոս ըստ մեզ վայբարերիցս հաւասարել, կամ իջանել յանդունդս իմաստից զրոց ըստ մերում մեռելութեան զանծախապէս աղքատացեալն, որ ըստ մեր . . . գոյութեան վերագոյն զոյ ասել այսմ մտաց։ Իսկ զի ոոոգումն կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ հանապազաբուխ՝ որ է բան հաւատոյ, աստուածաշունչ գրովք ի բնի սրտի զրեալ ի նմա և արձանագրեալ անջինջ, ոչ տայ տարակուսել ողջամտիցս զՀայհոյողս Բանին Մարմնացելոյ, արտաքս քեցել հանել յեկեղեցւոյ Աստուծոյ, և զթիւր միտսն խորամանգեալս զպէսպէս ուսուցանողս և զաւտարաձայնութիւնս յառաքելոցն և կամ զխաւսս սպասաւորաց Բանին ի թիւր իմացումն զչանալն բազմայ ցուցանել, և զզուշացուցանել զանձինս բարեմտացն, այլ և ձեր ըստ նախնեացն հարապատ եղբայրութեանն գութ բռնի ձգեալ էած զմեզ այս։

Արդ՝ գրով ձեր առ մեզ զիոստովանութիւն հաւատոց կամեցաք համառաւտագոյնս յիշատակել, և առ նմին զՀոգւոյն սրբոյ վարդապետութիւնն դնել ըստ մասին, ի ճշմարտութենէն հեռանալ, և կամ միաբանել յետ ծանաւթանալն բազմաց, տուր և ինձ զքո միտգ, ոչ զլանալ զուղիղս, և մի դասիլ ի հակառակող կամսն. զի եկեղեցւոյ Աստուծոյ այս չէ սովորութիւն։ Քանզի ի ձէնջ զիրն՝ ծանոյց մեզ այսպէս, յետ դուշնաքեայ զմէնջ գոհութիւն իմն ասելոյ, ամբաստանութեան ճառ զմարդոյ զոտի կարագունի *) էր նշանակեալ, և զմեր նմա հա-

*) Թերևս՝ զոկարագունի.

ւատալն իրր անիմաստ անմեղի զիրն համբաւեալ, և թէ ոչ թեւրի՝ այլ լի, նման ձեզ եմք ի հաւատս, զի առաքեալքն և վարդապետքն հասարակ և միապէս աւետարանեցին։

Եւ ապա յետ սակաւ ինչ բանից զորոց Երրորդութեանն զյառաջ քան զյաւիտեանս զէութիւնն էր աստուածարանեալ տարաբերմամբ, և յետ յոլովից զմարմնաւորութիւն բանին մեզ պատմեցէք գանագանեալ մտաւք, զոր վարդապետութեան միտս եկեղեցի Քրիստոսի յառաքելոցն չէառ, և ոչ զբանս զրոց ի նոցանս բռնաձգել. այլ գայլոցն յափշտակեալ ի նմանէ արս որ խաւսին թիւրս ձգել զկնի իւրեանց զաշակերտեալսն։ Իսկ զայլ խաւսսն որք ոչ ընդ սոսայն միաբանին, իրր զպարզամիտսն խաբելոյ կեղծաւորութեան դուռն առ մեզ հաւատացեալ՝ փակի, և զի այսպէս է՝ յէ՞ պատուականը, միտ դիր խոստովանութեանդ ձեռրոյ, ուր ձգէ, և որպէս մեկուսացուցանէ ի Հոգւոյն սրբոյ վարդապետութենէ։ Անդ զՀաւրէ ասել ամենակալ կատարեալ Աստուած, արարաւղ ամենայնի, և այլքն, ձայնակից մեր են։ Իսկ յառաջագէտ և նախակարծ զնա ցուցանել աւտարին սերմն, զի եթէ յառաջգիտակ կարծող չէ, և թէ երկոքեան յանհաս էութեան ըստ քեզ մուտ և շարժումն, ուրեմն հակառակութիւն է. քանզի նախ դիտութիւն, և յառաջ կարծել . . ՝ի մանոյ հակառակք, և ի ներքս անկանի եր . . . . և ստութիւն յընդունայնանալ կարծեաց . . . . վրիպումն, և իրն վասն որոյ յառաջ. իսկ . . . . . վաղ և սկզբնագոյն քան զ . . . . . ի բանին վասն զի ըստ կարծեաց . . . . . բանն շարժի, և նորին զՀ . . . . . նմն ասէ կարծիքն իմ՝ն . . . . . բարութեանց միանդամայն վրիպել և . . . . . զիաառնումն, ուրեմն սուրբ Հոգին մարմնացաւ, զի որ խառնեցաւն, նոյն և մարմնացեալ ասի, ապա թէ զԲանն խառնեալ յառաջ ասես, ո՞վ առ զնա ի վերջնոյն։ Եւ կամ դարձեալ փոքր մի յառաջ յաշորդն որ ասէ թէ՝ Բանն Աստուած՝ և Աստուծոյ Բանն և Եմմանուիէլն, և զայն խաւսս մինչև ցայն վայր, թէ աստուածախառն և Աստուծոյ մարմնոյն ի Մարեմայ է. զԵմմանուիէլդ անուն բանին առանց մարմնոյն իւրոյ ո՞վ ուսուցանէ կոչել։ Եւ դարձեալ որպէս ասեսդ, թէ զառեալն ընդ եին է՞ արար. ըստ այնմ թէ՝ Իմաստութիւն շինեաց իւր տուն, զի թէ ըստ Պաւղոսի ասելոյն Քրիստոսդ անուն մարմնացեալ բանին առասցաւ, զով շինեաց իւր տուն ի միաւորութիւն։ Արդ՝ զանց առնելով զնո-

բաշարչար միտս բացայայտելոյ, զի իմաստնոցն յայտնի է, ի գրոց սրբոց վարդապետութիւնն փութասցուք։

Քանզի իբրև եկն լրումն ժամանակին ասէ, առաքեաց Աստուած զՈրդին իւր ի կնոջէ եղանիւ՝ Որդ՝ աւետաւորեցաւ կոյսն ի ձեռն հրեշտակապետին Հոգւոյն սրբոյն դալ ի նա. և ուժգնութեան բարձրելոյն հովանաւալ ի վերայ նորա։ Քանզի զծնունդն զեկուցանէ և բարձրելոյն որդի. և ասի Բանն մարմին եղեալ, և զի մարմինդ անուն զմարդ ասեն, Ցովել պատմէ, Հեղից ի վերայ ամենայն մարմնոյ։ Եւ Բանին ի կուսէն մարմին եղեալ և զի Բանն Աստուած հոգի է՝ ձեր իսկ խոստովանեալ, և զի մարմին ի սրբոյ կուսէն, հրեշտակապետն զեկուցանէ։ Մարմին մինչ ասեմ, ընդ նմին իմա հոգի բանական, և միտս, և զի՞ նչ ի մարդ է։ Եւ այսպէս իբր հոգի և մարմին միացեալ, Բանն մարմին եղև, սաղմնացաւ որ իսկզբաննէ Որդին Աստուծոյ, ո՛չ ի կամայ առն և ոչ մարմնոյ։ Ծնաւ կատարելապէս ի սրբոյ Կուսէն, կոյս պահելով զբստ մարմնոյ զիւր մայրն վասն որոյ և Աստուածածին ասի, և կուսածին ծնունդն է։ Որ ի կերպարանս Աստուծոյ էր, զծառային կերպ առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, և ձևով իբր զմարդ գտաւ առանց մեղայ. և Որդին Աստուծոյ եղև ի զաւակէ Դաւթի, վասն ըստ մարմնոյ սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ, զաւրութեամբ ըստ Հոգւոյն սրբութեան։ Աստ իմա ինձ և ոչ փոփոխեալ յէութենէ զՈրդի, և զՀոգին սուրբ որպէս առ Հաւր՝ Հոգի Աստուծոյ, այսպէս և Հոգի Որդւոյ, և ի մարմնանալն Որդւոյ, սոյնպէս և զՈրդի ի Հաւր, և զՀայր յՈրդւոջ, բայց ոչ զՀայր մարմնացեալ ասեմք, և ոչ զՀոգին սուրբ, այլ զԲանն Աստուած։

Քանզի համբակ դեռաձիղն որպէս ասացի յառաջ բան զարուսեակն՝ մարմնով՝ հոգւով՝ մտաւք՝ զզայնութեամբ ծնաւ, որոյ անուն կոչի Ընդ մեզ Աստուած։ Ո՞վ նոր խառնմանն . . . յեղ, որ յերրորդութեանն ոչ այլ տեսանի . . . . . ըստ մեզ, տայ աւետիս հրեշտակն Տեառն . . . . . այսաւր ծնաւ Տէր է Ցիսուս որ է Քրիստոս և ըստ . . . . . Փրկիչ՝ որ է Աւծեալ։ Արդ՝ ո՞վ է որ . . . . . ձեր յառաջ ասելոյդ, կամ զԱստուածաբառն մարմինն առնուլ, կամ Եմմանուիէլն առանց մարմնոյն Աստուածն Բանի, և կամ զմիաւորութիւն ասել, որպէս իմաստութիւն շինել տուն . . . . . Կամ նաստուն, որ յառաջ բան զյաւիտեանս որովայնի բարձրեալն երգեալն ի Զա-

Digitized by Google

քարիայ, այսպէս զմերն ի մարմնանալն յանձն առ կրել։ Աճէ չի իմաստութեամբ, քանզի իմաստութիւն Հաւր ինքն, և շնորհք Աստուծոյ Հաւր ի վերայ նորա, զի նա իսկ է շնորհն երևեալ և այսպէս ընդ ամենայն տիս հասակի աճմամբ անցեալ. զի առ մեզ պարտաւորութեանն տեղի ոչ լիցի։ Մի՛ քեզ առանց վկայութեան թուեսցին ասացեալքս զի ի գրոց է և ձեզ չէ ի ծածուկ։

Դարձեալ յիշատակեալ ձեր յայսմ վայրի թէ լինի հպատակ հաւր և մաւր իւրոյ հնազանդական աստուածախառն մարմնովն՝ թուիք մեզ երկուս ցուցանել, մի զայն՝ որ հպատակն լինի և միւս զհնազանդական աստուածախառն մարմինն իբր աւդնականաւ վարեցեալ, և զի վերագոյնն արարեալ է զսորա հարցումն արդ զայս խնդրեմք։ Ո՞վ ուսուցանէ զայդպէս նոր վարդապետութիւն՝ զոր առաքելոցն չէ խաւսեցեալ, արդեւք զառմանդ կարծիս պնու նմանութեամբ իմացայք, առանց աճման զհրամանն ընկալեալ նախնոյն, և թէ առ յինքն զկին իւր, և կամ թէ առ իւր կին, և են երկուքեան մի մարմին և . . . . . ըստ Մաղաքիայ, և որպէս Յակոբ յեր . . . . տութեանն Յովսեփայ Հռաքելիւ կատարեաց զերազոյն մեկնութիւն։ Այսպիսի միտք համարձակութիւն բերեն ասել, ոչ իշեալ յերկնից, ոչ մարդացեալ, և ոչ ծնեալ, այլ այնպէս իմանալ իբր զմարդ օր, որպէս ի հնումն զԻսրայէլ անդրանիկ որդի իւր կոչէր, այլ բա՜ մի՛ լիցի, անաստուածութիւն է այսպէս իմանալ։ Իսկ աւանդողքըն մեզ զիւրեանցն առեալ ի կերպին Աստուծոյ եղեալն կերպ . . . . . ային առ և նա եղև ի նմանութիւն մարդկան և կերպարանաւն իբրև զմարդ գտաւ. և զնա ասացին լոյս փառաց և կերպարանք էութեան Հաւր, և թէ որով ամենայնն եղև, և զնա մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն և մեք նովաւ ուսուցին մեզ, և ոչ այդպիսի կարծիս։

Գրեալ է ձեր վասն մկրտութեանն, թէ իբրև երեսնամեան լինի մկրտի. ձայն Հաւր յերկնից վկայէ. Հոգին աղաւնակերպ իջանէ։ Այ՜ ի՞նչ զուսուցեալս աւետարանացն ասես. Իսկ զՀոգւոյն սրբոյ պսակ բերել՝ զայդ ոչ ուստեք լուայ յաստուածաշունչ գրոց յեկեղեցւոջ։ Քանզի որ բնութեամբ Որդի Աստուծոյ է, և ի վերջոյ ժամանակիս ի կնոջէ ծնաւ ըստ մարմնոյ, և Հոգին նորին հոգի որպէս Հաւր. թէպէտ և դիմաւք ի բարձունս ընդհանուր. ո՞ւմ բերէ պսակ. քանզի պսակ յանարգութենէ ճոխացելոյ բերի, և զոչ պատուեալն ի պատիւ հա-

սուցանելոյ, այլ ոչ այսպէս. քանզի Յիսուս Քրիստոս երէկ և այսաւր՝ նոյն և յաւիտեանս։ Բայց որպէս եղև մեզ ճանապարհ նորոգ, ուսուցանէ մեզ վերստին ծնունդն յաւանէ։ Արդ՝ Որդի մկրտի, ո՛չ ի մաքրութիւն, այլ յաւրինադրութիւն զնոյն մեզ։ Հաւր ձայն յերկնից, Ոգին աղաւնակերպ իջմամբ, թէպէտ Մկրտիչն ուսուցանէ. Հայր և Հոգին, թէ որ ի բարձունս Որդին է մարմնացեալոյ, այլ զմեր որդեգրութեան մեծութիւն յայտնեաց աւանդաւն։ Արդ՝ զոչ գրեալսն ընդէր հարկիք ասել, և ջանայք զտնաւրէնութիւն Փրկչին այլոյ լինել, և ապա յետ այսց բանից ի վերայ բերէք թէ Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ այդ Աստուծոյ գործ։ Իսկ բաղցնուլն, և վաստակելն Աստուածընկալ մարմնոյն զմարմին Փրկչին մերոյ աստուածընկալ՝ չէ ուրուք աւետարանեալ. այլ կենդանացուցիչ, և կամ զնոյն իսկ զԱստուած մարդ։ Բայց թէ զամենայն լրումն աստուածութեանն ի նմա բնակել, զայդ ասե՞լ կարծիցես. ուրեմն ո՞չ իմանայցես թէ զմի աստուածութիւնն մարմնապէս ի նմա լինել ասէ։ քանզի ընդունաւղ յընդունաւղն անհնար է լինել, որպէս ասէն թէ էք դուք նովաւ լցեալ։ Իսկ որ զԱստուածվայելուչն զատուցանեն իրր բարի և զտնտեսութեան տնաւրէնութիւն մարմնոյն. մարդոյն արժան էր ասել ըստ քեզ, զի անձն և միտս ունէր. և համարձակեցուցանել, թէ Աստուած որ հաստեաց զծագս երկրի, ոչ բաղցիցէ և ոչ վաստակիցէ, և ոչ բուն՝ պահպանն իսրայէլի. և փոխանակ բրիստոնէի՝ լինել Հրեայ ըստ թլփատութեան, և թէ, ոչ որ կարէ տեսանել զԱստուած. և ուրանալ զդիրն որ ասէ՝ Տեսաք մեք զնա, և ոչ զոյր նորա տեսիլ և ոչ փառք՝ և տեսակ նորա նուաղ քան զորդւոյ մարդոյ, որոյ զապգատոհմն չկարէ որ պատմել, և զաղքատութիւն մեծատանն, և զթափումն անձինն, որ . . . . ութեան Աստուածութեանն էր։

Այս թէ զԲանն Աստուած մարմնացեալ ասեն յորում էր հոգի բանական, միտք ըստ մարդկութեանս, նոյն ոտիւք որով վաստակեցաւն և ի վերայ ծովուն գնաց, և ձեռաւքն աշխատողաւք, կաւ արար և եդ ի վերայ երեսաց կուրին, և զնոյն կաւ՝ ակն ստեղծագործեաց. զի ծանիցես դու թէ որ զառաջին մարդն ստեղծ՝ նոյն է և երևեալ ըստ մարմնոյ։ Այս թէ երբեմն Աստուած, և երբեմն մարդ կարծիցես, ոչ կարես զնա անմեղ ցուցանել, զի մարդոյ միտք, ի վայրկենի յեղումն ընդու-

նին ի չար և ի բարի։ Այլ մի՛ լեցի աւտարաձայնս իմանալ արտաքոյ այնց՝ քան զոր ուսաքն, զի միում դիմի մարդկացելոյ զԱստուածվայելուչս և զըստ տնտեսութեանս բարոզեցաւ։

Բայց հարկաւոր է մեզ և զհաւատալն ձեր փրկաւէտ չարչարանաց փրկչին որպէս ծանուցէքն առ ձեզ երկրորդել. բայց զի՝ կրկնարանեալ զնոյն միտս յոլովէ ի մի տեղւոջ ցուցցուք։ Արդ՝ ասացեալն այս է։ Թէ մինն կամաւք Հաւր և սուրբ Հոգւովն եկն ի խաչն. և մեք այսպէս ասեմք։ Թէ Սուրբ Քրիստոս Աստուած՝ որ խաչեցար մարմնով. և զՀայր անմահ և առանց չարչարանաց և որդւոյ խաչակից անարգութեա՛մբ համարել. և ոչ ցաւեցուցեալ զի զէութիւն զաստուածութիւն Որդւոյ, անմահ և առանց չարչարանաց ասեմք։ Բայց զՈրդւոյ զԱստուածութիւնն՝ զէութիւնն՝ զանմահութիւնն և զՀոգին ոչ ի Հաւրէ մեկնեմք և ոչ ի խաչէն, և ոչ ի գերեզմանէն, և ոչ յիւր ի մարմնոյն, և թէպէտ չմեկնեմք ի մարմնոյն՝ զանչարչարելին՝ ի չարչարելումն, չսպանանեմք, այլ զչարչարելին յանչարչարելումն չարչարեմք։ Արդ՝ փոքր ինչ հարցիս. և մանաւանդ ըստ հետապատութեան, զի ի վերայ իսկ մեր հասեալն. զՈրդի Աստուած խաչակցելն, կամաւ անարգութեամբ համարելն, որպէս է ուրեմն հանգոյն Սամուիէլին որ ասէրն. Աստուած թէ ոչ զքեզ անարգեցին. այլ զիս. և կամ՝ որպէս յառաջագոյն յՊաւղոսն ասէր ի կռփահալածն առնել զառաքեալսն. թէ զի՛ հալածես զիս, և որք այլ այսպիսիք, ապա չէ ինչ ընդ մէջ ասել. թէ վաղ իսկ էր մարմնացեալ զի դորին համարեալդ ասելոյ զՀետ երթայ. և ծննդեանն աւրինակ և կոյսն մնալոյ մաւրն, թէ կաւրութեամբ և ոչ գործով, և զիս, անդամն լինել Քրիստոսի, և զամենայն իսկ կիրսն ըստ տնտեսութեանն և յաղատութիւնն զմեզ կոչել շնորհիւն չեւ ևս է. այսպէս է և ասացեալն թէ հանդերձ սրբով Հոգւովն անմեկնելին ի խաչէն՝ և ի գերեզմանէն և ի մարմնոյն և յամենայն ուստեք, զի թէ որպէս սուրբ Հոգին էր ի մարմնի Բանին և ի խաչին և ի գերեզմանին և զԲանին Աստուծոյ զմարմնանալն՝ և ի խաչին և ի գերեզմանին չլինելն նմանապէս ասիցես, ըստ այդմ և յառաջ քան զմարմնանալն խոստովանէին աստուածապաշտք և ուղիղք, և արդ մինչև ցյաւիտեանս։

Եւ յուրաստ չիշխես լինել զլրութենէն նորա մեզ բոլորիցս առնուլ և զլնուլն զամենայնս, և զընակելն նորա ի սուրբս։

Digitized by Google

Ապա ուրեմն սուրբքն սպանեալք և կամ որ սպանին զնա՞ պիտի ասել. վասն զի զիւր կամն վասն նոցա մահու՝ զՊետրոսէ ասելն իմացուցանէ, թէ՝ Ե՛կ զկնի իմ. և զումանս վասն կալոյն։ Եւ թէ որպէս ասիցէքն կամելովն միայն, ապա անհամար քրիստոսսք եկեալ են և գալոց են։ Եւ այլ ևս՝ համարեալդ նշանակէ. զամենայն ընուն ի սմա միշտ և զմիջոցս երկնի և երկրիս. իսկ քարինս և նետս առաքեալ ումեք այսր, ուրեմն զայն իւր համարիցի. իբր թէ ծեծեալ և խոցոտեալ նոքաւք, քանզի ընու զամենայն անմեկնելին, և մարդիկ արժանիք և կամաւք, և թէ այլ կենդանիք այնպիսեաւքն ծախեալք, ահա և այս չարչարելիք յանչարչարելումն չարչարին. և անհուն աստուածք այլ և այլք աղանդաբանին մեկ պաշտել Ո՞վ մտացածնոյց յիմարութեան խաւսք, որ դարշի աւելի քան զդրեալսն իմանալ։

Եւ դարձեալ ըստ ասելոյդ թէ զՀոգին սուրբ և զՈրդւոյ աստուածութիւնն ի մարմնոյն և յամենայն ուստեք չմեկնէ՛ք, կարծիս տայր ասել վասն համարնակութեանն ցուցանելոյ, և Հոգին սուրբ մարմնացաւ, քանզի զերկուսեան ի մի յնթակայում պատմէք։ Այլ ո՛չ այդպէս ուսուցանէ վարդապետութիւն Հոգւոյն սրբոյ. զի թէպէտ և սուրբ Հոգին Բանին մարդացելոյ Հոգի ասի, ըստ այնմ թէ Զհոգի Քրիստոսի ոչ ունի, և Զհոգի Որդւոյն իւրոյ առաքեայն. այսպէս և Հաւր Հոգի ասի, և զիմաւք որոշեալ մեկ պատմի, այլ ոչ կատանի ի Հաւրէ և յՈրդւոյ. և թէպէտ անզատանելի է, այլ ոչ ի միում մարմնի, Որդի և Հոգի, և ի խաչի կամ ի գերեզմանի. իբր թէ մարմնացեալ որ յառաքելոցն և ի մարգարէիցն ասաց. Բայց միայն զՈրդին Աստուծոյ զԲանն Հաւր մարդկացեալ գրեցին։ և զի այսպէս է. լո՛ւր։ Փիլիպպոս ցՆաթանայէլ ասէ, Զորմէ գրեաց Մովսէս և մարգարէքն. գտաք զՅիսուս ի Նազարեթէ։ Եւ զի Նոյն է Բանն Հաւր մարդկացեալ որ խաչեցաւն, Մովսէս պատմէ. տեսանիցէք բայ զկեանս ձեր կախեալ զփայտէ յանդիման ձեր, զոր և Յովհաննէս մեկնեաց ասէ. Ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք։ Եւ Երեմիա, զկեանս իւր մեռուցանել ի գրի ասաց, և զիրաւորեալ և պատժեալ զնա. զորոյ գայգաստոհմն ո՛չ ոք կարէ պատմել։ Գոչէ Եսայի. և զՏէրն փառաց խաչեալ պատմէ Պաւղոս, զոր այլուր՝ լո՛յս փառաց կոչեաց, և՝ Որ ի կերպարանս Աստուծոյ էր որպէս պատմի մի ըստ միոջէ, զինքն թափեաց, հնազանդեաց մահու և խաչի։

Digitized by Google

Եւ զի ոչ ըստ ամենայն ուրեք լինելոյն էր Որդւոյ աստուածութիւնն յիւր մարմնին որպէս ասացէքն, այլ մարդացեալ. եկ տես և զաւետարանայն բարբառս։ Քանզի Ղուկաս յետ գրելոյն ականատես լինել զԲանն, նորին սպասաւորաց զաղդարանութիւնն այսպէս արար. Յիսուս որոց կարծէր՝ որ ի Յովսէփայն, որ յԱդամայն, որ յԱստուծոյ ասաց. զի որ յԱստուծոյն էր նոյն մարդացեալ և ի հովուացն տեսեալ, և ի խաչ ելեալ ասաց։ Եւ Յովհաննէս զԲանն՝ մարմին եղեալ, և զկեանսն յայտնել, զնոյն ասաց խաչեալ, և եդեալ ի գերեզմանի որպէս Երեմիաս յառաջ պատմեաց, թէ տեսեալ զմեռեալսն յաւիտենից ինքն էջ առ նոսա ի հող երկրի զի կեցցեն և Աստուած մարդացեալ այնպէս յաղթեաց զաւրացեալ մահու և ապականութեան, և եհատ զարտաւոր յամենայն երեսաց։ Իսկ թէ Հոգին սուրբ այսպէս ուսուցանէ յաստուածաշունչ գիրս, և ոչ մարդ աստուածալգեաց որպէս Ստեփաննոսն լի Հոգւով սրբով, մեռանէր չարչարելին յանչարչարելումն զՀանդոյն ամենայն ուրեքն լինել էր ի մարմնին, ի խաչին և ի գերեզմանին հանդերձ այլովքն։ Զայդ ո՞վ ոք ոչ ասիցէ թիւր վարդապետութիւն յաւելեալ ի բանսդ ասացէք զրևեռսն ոչ ի զաւրութեան անմահութեանն հարկանեմք իբրև թէ ի յաւելցուցանելոյ յաստուածացեալ մարմնին։

Բայում անգամ ասացաք, զի թէ աստուածացեալ մարմնին այլ է, և զաւրութիւն անմահութիւնն այլ, որ թուի քեզ ասել զԱստուածն Բան սոսկ, երկուս ուրեմն պատմել ձեռնարկէք, զմինն մարմնեղէն Աստուած և զմիւսն զաւրութիւն անմահական Աստուած։ Բայց զպարզամիտս խարէք. թէ զաւրութիւնն անմահական հաղո՞ղդ է մարմնոյն. մինն Աստուած է, և միւսն մարդ։ Իսկ ապա ո՞ւր է միանալոյն բան ձեր, զոր վերագոյն փորր մի խոստովանեցէքն։

Բայց մեք նախ աւրինակաւ ինչ կամիմք հարցումն առնել, թէպէտ և ոչ պատշաճ է։ Հուր եթէ ի բնութեանց իւրոց զատցի ի ջերմութենէն, ի լուսաւորութենէն մնացեալ նիւթ կարիցի՞ կոչել հուր, և կամ ձիւն ի ցրտութենէ և ի սպիտակութենէն, կարիցի՞ կալ շաւշափելի նիւթն և զձեանն ունել Արդ՝ որպէս նոցա երից տեսակաց ի մի բնութիւն եկեալ առանց զատուցման, զգոյութիւնն և զատուցանելն ջանալ եղծումն գործէ. իսկ յերևելոյ արեգականն ի բարձանց արդեաք ո՞չ առաւե-

Digitized by Google

լազոյն վմիաւորութիւնն ունիցիս ի միտդ։ Զի և յարեգականէ թէ զատչի ճառագայթ լուսոյ ջերմութեամբն, զնդաձև տարրն առանց այնց ոչ ասի արեգակն, այսպէս թէ զատցի Աստուածն Բան ի մարդանալոյն իւրմէ ծնեալն ի կուսէն, ոչ Աստուած մարդ մնացեալ, այլ մարդ ընդ մեղաւք անկեալ։ Զի եթէ միաւորութիւն Աստուծոյն Բանի. եթող մարդոյն միտք ըստ այլոց որպէս ասացաք ի վայրկենի, մերթ ի չար և դարձեալ ի բարի փոփոխելով ոչ դադարեն։

Ապա ուրեմն ոչ առանց մեղաց էր, այլ քաւ լիցի. արեգակն միշտ արեգակն եկաց, որպէս պատմէն Զաքարիաս. քանզի առաքելոցն գուցեալ զոտս և զձեռն ի վերնատանն աստուածավայելչաբար ի մտանելն, զնո՛յն ինն վարդապետեաց, Եւ Թովմայ տեսեալ զտեղի բևեռացն և զխոցումն կողիցն, Տէր Աստուած իւր խոստովանեաց։ Վասն որոյ երանեաց Տէրն զայնս՝ որոց ոչն տեսեալ, և այնպէս հաւատասցեն, որպէս տեսուղն առ տեսեալն բարբառեցաւ։ Բայց Բանին մարդկացելոյ մարմնոյն և հոգւոյն որ երեսաց մերոց է Տէր, զբևեռսն թափանցանց առնել ասել, ո՞ւմ ոչ յայտնի է յիմարութիւնն։ Քանզի զմարդիկ մի և կամ երկու անդամովք, ո՞չ ասեմք, և զոգիսն ընդ նմին հեղեալս, և կամ խոցմամբ և բևեռաւք ի փայտի մեռեալք այժմ և կամ ի հնումն, ոչ ոք կարէ ասել և զոգիսն ընդ նմին բևեռեալս և խոցեալս։ Իսկ յառաջ քան զմարմնանալն որ էութիւն Բանին էր խառնեալ և միայեալ ընդ իւր մարմնին, ի մարդկանալն զի՞արդ վիրաւորիցի։ Այլ անհնարին է ասէք այդպէս խոստովանութեամբք զնա առանց վիրաւորութեան ասել։ Հաւանեցիր յաւրինակէդ և զխոստովանութիւնն, որպէս գիրք Աստուածաշունչք ուսուցանեն։ Մի թիւրիր ի մտացն, և թէ յաղթիս զտնաւրէնութիւն նորա ի քննել, յանձն առ, քանզի դու և ամենայն իսկ մարդ կարիցե՞ն ասել զինքեանց ընութեանն էութիւն։ Որպէս հոգին ընդ մարմնոյն խառնեալ է և կամ շունչ ընդ չիլս ներգործեալ աւժանդակէ նմին մարդոյն, և կամ թէ լոյս արեգական և կամ թէ ճրագի ընդ ական յստակագունի միաւորեալ զտեսութիւն գործէ։ Իսկ տնաւրէնութիւն նորա սոսկալի ումք չթուիցի՝. և ի վեր քան զիւր միտս և զբան։ Ապա թէ ոչ, իմա ինձ զնա յարգանդի կուսին, որպէս մարմին ինքնեակ ոգւով և մտաւք, և զինչ ի մարդ է, սաղմն առեալ լինէր Բանն Աստուած ի Հոգւոյն սրբոյ յամենայն մարդկութենէս, ի սկզբանէ լինելութեան

մարդոյն, և որք ի ժամանակիս, մինչև ցկատարածն, Աստուած մարդկացեալ ծնանէր առանց մեղաց հասակաչափ միոյ մարդոյ, որպէս Պաւղոսն պատմէ, թէ Որ ոչն է Հրեայ և ոչ հեթանոս, խո՛ւժ, դո՛ւժ, Սկիւթացի ծառայ, ապատ, այլ յամենայնի Քրիստոս է։ Ունիցիս ինչ ասել զորպիսութենէն, ապա իմա և զայլսն՝ թէ են մեզ անհասանելիք. և մի խուզեր, վասն որոյ մարգարէն ի տնտեսութիւն նորա հայեցեալ երկնչել իւր և զարմանալ ասէր. ապա հաւատ պիտոյ է և ոչ քննութիւն։

Յետ այսր հակառակութիւնս ոմանս նշանակեալ էր. թէ սոքա ասեն. Սուրբ անմահ Աստուած՝ որ խաչեցար. անմահ էր.... մեռաւ, հոգւով և Աստուածութեամբն, մարմնով մեր ընութեամբ։ Արդ՝ թէ հակառակողս զմեզ կոչէք և թէ զայլ որ, որպէս ցուցայք ձեզ գրով ըստ Աստուածաշունչ գրոց վարդապետութեան զխոստովանութիւն հաւատոյն մերոյ յՈրդին Աստուծոյ, թէ բիւր անգամ հարցանէք, զնոյն երկրորդեմք։ Բանն Աստուած մի և նոյն էր որ զամենայն ըստ տնտեսութեանն, և զնշանսն նա գործեաց։ Բայց ո՞վ ոք է թերուսումն որ ի վերայ մարդոյն չգիտէ զմահ, թէ որոշումն հոգւոյ ի մարմնոյ է, և մարմնոյ յերկիր լուծանել. իսկ հոգին կենդանի և անապական, որպէս գիրք ասեն զնահապետացն՝ թէ պակասեալ յաւելաւ առ ժողովուրդ իւր, և զոմանս թէ յաւելաւ առ հարս իւր։ Իսկ վասն մարմնոյ թէ զապականութիւն ետես, քանզի մարդոյ հոգւոյ յանզգայականս լուծումն ոչ ոք գիտէ. զի Աստուած միշտ կենդանեաց է Աստուած, և որպէս ինքն կենդանի է և կարող, ոչ փոփոխեցաւ ի մարդանալն։ Բայց մեռաւ զիմ մահն և պարտեաց զմահ. և վասն զի միութիւն ոչ բաժանի, վասն այնորիկ Բանն Աստուած ոգւովն իւրով որ ի մարդկանէ երևեցաւ ի դժոխս արգելեալ ոգւոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն, որպէս ասէն Պետրոս, և այնպէս աւարեաց զդժոխս, և Աստուած մարմնով ի գերեզմանի զապականութեան իշխանութիւն ի բաց քայքայեալ՝ մեզ զանապականութիւն ստացոյց։

Եւ վասն այնորիկ ասեմք զերից սրբասացութիւնն. Սուրբ Աստուած, սուրբ հզաւր, սուրբ անմահ որ խաչեցար վասն մեր։ Երիւք սրբասացութեամբք Երրորդութեանն դիմաւք, և միով աստուածութեամբ զաւրութեամբ և անմահութեամբ ընդ Հաւր և Հոգւոյն սրբոյ խաչեայն առանց այլ երևմամբ. ի մի էու-

Digitized by Google

թենէն զողորմութիւն հայցելոք։ Քանզի առաքելական եկեղեցի այս բարբառով և ձևով միշտ պարծի, զի ի ժամ պատարագի զովաբանութեանն զգրուակս ի դէմս Հաւր արարեալ երիցս սուրբն ասելով միով տէրութեամբ ընդ Հաւր և Հոգւոյն սըրբոյ, զեկեալն և զգալոցն ի բարձունս արքայ փառաւորեալ գոչէ։ Եւ ասա թէ խաչ ասեմք մի՛ զարմանար. քանզի նա ըզչարչարանս իւր փառս կոչէր։

Իսկ յետ այլ բանից, այսպէս գրեալ էր թէ, մեք զմարմնոյն մեռանել ձեզ գրովք ցուցանեմք. թէ՝ Մարդ Յիսուս Քրիստոս որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է. թէ զՅիսուս Քրիստոս զխաչելեալն խնդրէք, և թէ Խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, և թէ՝ Մարդ Յիսուս Քրիստոս. և այլ այսպիսիս, ուր ինքն Յիսուս Քրիստոս ըստ խոնարհութեան մերոյ ցուցեալ լինի։ Արդ՝ նախ զայս հարցանեմք, մինչ այդպէս զՈրդի, երկուս ասել սիրէք, և զԵրրորդութիւնն չորրորդութիւն ի մտաց ստեղծանէք։ Յիսուս Քրիստոս անունդ, ուր ըստ մեզ կիրս նշանակէ, զի ըստ տնտեսութեանն կամ սքանչելագործութեանն, առ նմին այլ կոչ Որդի Աստուծոյ, կամ Բան Աստուած գտանէք, և թէ որպէս ի վերայ մարմնոյն լոկ որոշեցէք ասել զՅիսուս Քրիստոս միշտ, և կամ մի ուրեք կարիցէք ցուցանել սոսկ ի վերայ մարմնոյն։ Իսկ թէ լսեցես՝ մարմինն Քրիստոս է. միթէ աւտար իցէ այս ձայն յայնմանէ, որ ասէն թէ Բանն մարմին եղև, այլ քա՜. ոչ զանազան բարբառ։ Եթէ ոչ այնպէս կարծես, լո՛ւր զՔրիստոս զիտել մարմնով ասեն գիրք. Քրիստոսի չարչարելն մարմնով. արդ եթէ ըստ քոյ ասելոյդ Քրիստոս Յիսուս մարմնոյն ասիր, նորին մարմնոյ այլ մարմին որպէս էր. արդե՛ւք մարմին ի մարմնի եղեալ. մի՝ որով չարչարէրն, և միւս մարմին Քրիստոսն որ ի ներքսն։ Եւ այսպէս լիմանալն ի պառաւանց առասպելս ձգեալ տանի. այլ մի այդպէս լիցի իմանալ զքարոզութիւն առաքելոյն, զի որ ի ձէնջ կամեցեալ բանաձգել ի վերայ մարմնոյն զՅիսուս Քրիստոս անունդ, նոյն ցուցաւ ի մեծութեանն ականատեսից՝ Որդի Աստուծոյ և Բան Աստուծոյ. Այնչափ ինչ գրեցաւ ասէ, զի հաւատայցէք թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ. և թէ՝ Որ փոխեացն զմեզ յարքայութիւն Որդւոյ սիրելոյ իւրոյ որով ունիմք զքաւութիւն արեամբ նորա, զիմողութիւն մեղաց մարմնով նորա որ է պատկեր անեղութեան Աստուծոյ. և թէ՝ Քրիստոս ի վերայ

Digitized by Google

ամենայնի Աստուած. և թէ՝ Որ էրն ի սկզբանէ զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, և ձեռք մեր շաւշափեցին զԲանն կենաց։ Զոգիս ասել զլիութիւն այսպէս բանիս որ ի նոր կտակարանս, վասն խաւսիցս բազմանալոյ։

Ապա հաւատացողունս տեղեկացէք, եթէ Քրիստոս Յիսուս զԲանն Աստուած մարդկացեալ կոչեն գիրք, որպէս և սուրբ ժողովն որ ի Նիկիա ասացին, թէ՝ Ծնաւ կատարելապէս ի Մարիամայ հոգւով, ըստ այնմ, թէ՝ հոգի երևսաց մերոց Տէր Քրիստոս, և որովն հոգի և միտք և ամենայնն, այն մարդկայի՛նս։ Եւ ծնեալն կոչեցաւ Յիսուս Քրիստոս։ Եւ Պաւղոս ասէ, Ոչ զայլ ոք ի մտի եդի ձեզ գիտել զայց միայն զՅիսուս Քրիստոս, և զնոյն խաչեալ, ապա մի մեռեալ, և մի իմանալի ի ձէնջ, զի՝ առասպելարանի։

Բայց ևս առաւելագոյն տարաբէնութիւն մեկնութեամբս արարեալ ի ձէնջ իմանի. թէ վասն երկուց և մի բնութեանն Քրիստոսի ի նախագրին աւրինակեցաւ։ Հրամայեցաւ, ասէ, երկուս հաւս առնուլ և ամ՝ան խեցեղէն, և փայտ նոճի, և կարմիր զոպայ և զենուլ զմի հաւն յամ՝ան խեցեղէն, որ զուշակեցաւ ի ձէնջ, այն մարդոյն բնութիւն, և զմիւսն թացեալ յարիւն հաւուն սպանելոյ, դիցեն ի վերայ զփայտն և զայլսն. և արձակեսցեն ի դաշտն, այն՝ զԱստուծոյ զբնութիւնն ասացէք։ Եւ արդ այժմ քաջ միտ դիք ձերում մեկնութեանդ։ Պաւղոս գրէ Եբրայեցւոցն, յիշեցուցանելով նոցա զԽորանն և զնորին կահ, և զժողովուրդն, և զարեանն սրսկումն ի վերայ նոցին, և ասէ, թէ՝ Ամենայնքն արեամբն սրբէին, զի վասն մաքրելոյ արիւնն անկանէր զնորաւբ։ Ապա ուրեմն ըստ ձեր ասելոյդ, բնութիւն Աստուծոյն Բանի ի մարդոյն բնութենէ սրբեցաւ, և նորա արեամբն թացեալ ի նմանէ պիտոյ եղև առնուլ զանապականութիւն և զՀոգւոյն սրբոյ զմաքրութիւն. նմա՞ որ յէութենէն Հաւր էր։ Եւ այսպիսի բանք ո՞ւմ ոչ շարժիցեն արտասուս, զկարծիսդ տալ նմա որ գիրկութիւն ի մարդոյն հայցել։ Նոյնպէս և վասն նոխաղայն՝ թէ որ զենաւն, մարդոյն բնութիւն էր, և կենդանոյն յորոյ ձեռս ի վերայ եդեալ և զանաւրէնութիւն և զմեղն ի վերայն ասացեալ, և նորա յինքն առեալ, Բանին Աստուծոյ բնութիւնն էր։ Ապա ուրեմն ըստ ձեզ աստուածութեամբն իւրով զմեղս մեր վերացոյց։ Թէ ստեա՞լ եղև Պաւղոս, որ ասաց,

Digitized by Google

նա ամենայն մեր՝ մարմնով իւրով վերացոյց ի խաչափայտն, զրոյ կէութիւնն ի վշտաց վերադոյն կամիք ասել քան զնոյն էութիւն, ընդմեղաւք և ընդ ամպարշտութեամբ անկեալ ասացէք, այլ քա՜ և մի լիցի այ՜ոպէ՜ զարհուրելիս իմանալ ի զևտականին զգրեալսն։ Քանզի երկու հաւուրն ասելով նշանակեալ լինի Որդին Աստուծոյ մարդացեալ մահուամբն, որպէս վերագոյնն ասացաք. արեամբ նորա մեք թացեալ գտաք զփրկութիւն, և յայնժամ ի մեզ ստացաւ անապականութիւն՝ որ նոճի անփուտ փայտն. և զոպայն որ է Հոգւոյն սրբոյ ի մեզ մաքրութիւն, և կարմիրն զշնորհս զորդեգրութեանն Աստուծոյ, և կատարեցաւ բան մարգարէին, թէ Անդ եղիցի ուրախութիւն հաւուց, այսինքն մարդկանս։ Այնպէս և Նոխայն՝ յորոյ վերայ վիճակ Տեառն էր, զնաւ ըստ իմ, որպէս բայում անդամ ասացաք, և արձակման վիճակն անկաւ ի մեր վերայ, զի վիճակեալ մեզ ընդ ընտրեալսն մասն մեղաց թողութեանն, և առնու Նոխայն զանաւրէնութիւն որդւոցն Իսրայէլի, առաքելովքն առաջնորդաւք եկեղեցւոյ, որչափ նոցայն շնորհեցաւ ընդ ոմանց համարս տալ և որոց կամին յետ մկրտութեանն թողուլ զմեղս։ Իսկ անապատն եկեղեցի հեթանոսաց աւազանաւն ծաղկեալ. զոր Եսային ասէ. Ցնծասցէ անապատ, և ծաղկեսցէ որպէս շուշան անապատն Յորդանանու. Եւ այս ո՞չ թուեսցի քեզ առաքելական եկեղեցի յորում մկրտութիւն է։ Բայց թէ ի վերայ Բանին Մարմնացելոյ կամի ոք ասել, մի և զնոյն պարտի իմանալ զՏէրն նշանակեալ վիճակաւն զնանի զլիմն, և մի և զնոյն զյարուցեալն որ բարձիչն եղև դժոխոցն խայթոցաւն և զընդ աչմէ հաւր նստեալն։ Ապա ուրեմն երկուս իմանալ զնա, ըստ երկուց նոխազացն. յանաստուածիցն դասու կայուցանել։

Բայց առաջիկայ բանս թուի մեզ իմանալ յաւանդութենէ առաքելոցն ի բաց փոխումն, զի նշանակեալս ասէ այսպէս, թէ Զսուրբ Հոգին զմիայն հղաւրն, զթագաւորն թագաւորաց, և զՏէրն Տերանց, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց, զոր ոչն ոք ետես ի մարդկանէ, և ոչ տեսանել կարող է, ձեզ յայտնի լիցի, և մեք առանց չարչարանաց և մահու ասեմք։ Արդ՝ զսուրբ Հոգին, և զՀայր զԱստուած ոչ մարմնացեալ ասել քրիստոնէից, յայտնի է ամենեցուն՝ որպէս ցուցաքն և թէ ասէ ոք, նզովեալ է։ Բայց ձեզ զայդ ասել՝ զի զԱստուածն Բան է, առանց չարչարանաց և մահու զնա ցուցանել զե-

Digitized by Google

կուցանէ արդ, որպէս ասէքդ, թէ ոչ երևեցաւ և ոչ չարչարեցաւ և ոչ մեռաւ։ Է՞ի և ոչ մարդոյն, զոր ասէքն ի կուսէ ծնելոյ, Աստուածն բան ի յառելութիւն ինչ եղև, քանզի որպէս այն ո՛չ, և այս ոչ, ապա զսուրբն զայն զկոյս Աստուածածին զի՞ ասէք, զի նորա՝ ուրեմն սոսկ մարդ լինի ծնեալ։ Երեւի չարչարելի և մահկանացու, և Հոգէիցն բարբառոյ առ ի ստուգել, թէ դու մարդ ես, և զանձն քո Աստուած առնես։ Այլ և ուրեմն ի մահ մարդոյ մկրտիք։ քանզի ի նորա մահն մկրտիմք։ և զմարդ պաշտեն երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք, ի ծունր կրկնելն Յիսուսի Քրիստոսի։ Ստեցին ուրեմն առաքեալքն զնա գոլ ասելով Որդի Աստուծոյ, և մանաւանդ ի ձեր ասելոյդ, և Փիլիպպոս վրիպեցոյց զներքինին Եսայեաւ, թէ Իբրև զոչխար ի սպանդ վարեցաւ, որոյ զպզատողմ նորա ոչ ոք կարէ պատմել։ և նա զհաւատալն բարբառէր թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ և ինքն զնոյն այլոց քարոզէ։ Բայց ոչ ստեցին մարգարէքն և առաքեալքն, այլ այնք որ ի ճշմարտութենէն թիւրեալ են։ Քանզի Որդին Աստուծոյ մարդացեալն ասէ, թէ՝ Գտայ այնոցիկ որ զիսն ոչ ենդրէին. յայտնի եղէ . . .

Թուղթք երկուք անկեալ զուլվ յորինակին, պակասին ասասէն աւարտն Թղթոյն Աբրահամու առ Աղուանս, և սկիզբն Թղթոյն Կոմիտասայ ի Միջագետս։

Digitized by Google

ՏԵՍՈՒՆ ԿՈՄԻՏԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ

. . . . . անչրդիս, ծառս պտղակորոյսս կըրկնամեռս, նիւթս կիսման հրոյն յաւիտենականի, որք վառեն անձանց ըՀուր դեՀենին, սնուցանեն զորդն անմահ։ Արդ՝ ոչ ևս յամել ի նախերգութեանս, այլ պատրաստարար և խոՀականաղոյնս յԱստուածային վերաձգել զմիտս։

Եւ և հաւատացեալ ինձ հաւատս, այսպէս հաւատամք և խոստովանիմք, որպէս և հանգիտապատիւ սուրբն Գրիգորիոս Հայրապետ սրբոյ եկեղեցւոյ Հայաստան աշխարհիս ուսոյց մեզ։ Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ և ի Ցէր, արարիչ երկնի և երկրի, երևելեաց և աներևելեաց։ Եւ ի Միածին Որդին Աստուծոյ որ ի Հաւրէ և առ Հաւր և ընդ Հաւր։ Եւ ի սուրբ Հոգին՝ որ ի Նորին յէութենէ, և նոմա արար զամենայն, որ է մի տէրութիւն, մի զաւրութիւն, մի աստուածութիւն։ Հայր յանձնէ, Որդի ի Հաւրէ, Հոգին ի Նոցունց է նոսին իսկութեամբն, էութեամբն, աստուածութեամբն, երեք անձինք, մի կատարեալ կամք, հարթ հաւասար, հասարակ ի բարձրութիւնս, ի խորութիւնս, ի լայնութիւնս, ի յերկայնութիւնս։ Մի ընութիւն աստուածութեանն, մի պատկ Երրորդութեանն, և լի են երկինք և երկիր փառաւք Նորա։ Այսպէս հաւատամք և խոստովանիմք, և երկրպագեմք սրբոյ Երրորդութեանն ի Միութիւն անդր, Նոյնպէս և սրբոյ Միաւորութեանն յԵրրորդութիւն անդր, անարարք, անխառնք, անսկզբունք, համագոյականք, զի որպէս անխառնելի է սուրբ Երրորդութիւնն, Նոյնպէս և անրաժանելի անխառնելի յաղագս իւրաքանչիւր յատուկ առանձնաւորութեանցն։ Իսկ անրաժանելի, վասն զի ամենակալ է Հայր, ամենակալ Որդի, ամենակալ սուրբ Հոգի մի ընութիւն աստուածութեանն, մի իշխանութիւն մի զաւրութիւն մի պետութիւն։ Եւ ի վերջին ժամանակս Միածին

Digitized by Google

Որդին Աստուծոյ կամաւք Հաւր և Իւր և սրբոյ Հոգւոյն, վասն մեր և վասն մերոյ փրկութեան խոնարհեցոյց զերկինս և էջ յարգանդ կուսին, և էառ մարմին ի Մարիամայ սրբոյ կուսէն Աստուածածնէն, և միացոյց զանմեռն ընդ մեռոտն. և զապականացուն և զմահկանացուն ընդ անմահ աստուածութեան իւրոյ, խառնեաց և միացոյց, և արար անապական, զի առանց ամենայն հակառակութեան, նուազն ի լաւէն աւրհնեսցի։ Աստուածավայելչարար ծնաւ ի սրբոյ կուսէն, որոյ հետք կուսութեանն ոչ ապականեցաւ, և ի խանձարուրս պատեցաւ կաթնասուն լեալ. և յետ երկոտասան ամի եկն ի տաճարն, զի յայտնի արասցէ զիւր աստուածութիւնն։ Ի վերայ երկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ միաւորութեամբ տնաւրէնութեան, քաղցեաւ և ծարաւեցաւ, ոչ սոսկ մարդկային բնութեամբ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեան աստուածավայելչաբար։ Եւ յետ երեսուն ամի եկն ի մկրտութիւն, մկրտեցաւ ի Յովհաննէ Յորդանիս, վկայեցաւ ի Հաւրէ՝ Դա է որդի իմ սիրելի, պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ յետ այսորիկ փորձեցաւ. ի սատանայէ։ Բանն մարմնացեալ քաղցեաւ և ծարաւեցաւ։ Բանն մարմնացեալ զկոյրս լուսաւորեաց, և զգիշերն ի տիւ փոխարկեաց, զչորեքաւրեայն զսիրելին ձայնին զուգընթաց արար։ Բանն մարմնացեալ ապտակեցաւ, չարչարեցաւ, ոչ սոսկ մարդոյն ասեմ զչարչարանսն, զխաչն և զմահն, և ոչ զնշանագործութիւնսն միայնում Բանին Աստուծոյ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն. քանզի Բանին Աստուծոյ մարմնացելոյ են ամենայն բարձրագոյնքն և խոնարհագոյնքն։ Եւ այսպէս կամաւք եկն ի խաչն, մեռաւ, և թաղեցաւ, և յերրորդ յաւուր յարեաւ ըստ գրոց, զի տիրեսցէ կենդանեաց և մեռելոց։ Եւ յետ քառասուն տուընջեան և քառասուն գիշերոյ համբարձաւ յերկինս, որպէս տեսին առաքեալքն, և նստաւ ընդ աջմէ Հաւր, որպէս ետես սուրբն Ստեփանոս, ի վկայելն իւրում ասէ. Ցեսանեմ զերկինս բացեալ և զՅիսուս զի կայ ընդ աջմէ Աստուծոյ։ Եւ գալոց է նովին մարմնով և փառաւք դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Եւ յետ այսորիկ, որպէս Նապիանցունն Գրիգոր Աստուածաբանն ասէ. Մի է Աստուած Հայր կենդանի բանին էական իմաստութեան և զաւրութեան կերպարանին իւրոյ, կատարեալ

կատարելոյ ծնաւղ. Հայր Որդոյ Միածնի, մի Ցէր մի՛ այն՝ միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր աստուածութեանն։ Բանն գործաւոր իմաստութիւն պարառական ամենեցուն ընդ լինելութեամբ անկելոցս, զաւրութիւն և բոլոր էիցս արարաւղ, Որդի ճշմարիտ անտեսանելոյն, անապական՝ անապականին, անմահ՝ անմահին, մշտնջենաւոր՝ մշտնջենաւորին։ Մի սուրբ Հոգի Աստուծոյ զէութիւնն ունելով, և Որդւով երևեալ յայտնապէս մարդկան, պատկեր Որդւոյ կատարեալ ի կատարելոյ, պատճառ կենդանեաց, սրբութիւն՝ սրբութեանց շնորհաւղ, որով ծանուցանի Հայր՝ որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Որդի Աստուած՝ որով ամենայնք։ Երրորդութիւն կատարեալ փառաւք և մշտնջենաւորութեամբ և թագաւորութեամբ, անբաժանելի և անաւտարելի, ոչ ստեղծական ինչ և ոչ ծառայական յԵրրորդութեանն, և կամ ի ներքս ածական, որպէս թէ յառաջագոյն ոչ եղելոյ զկնի ի ներքս ածաւ և ոչ երբէք նուազեայ Որդի ի Հաւրէ, և ոչ յՈրդոյ Հոգի, այլ անփոփոխելի և անայլայլելի է միշտ Երրորդութիւնն։ Եւ մեք երկրպագեմք Հաւր և Որդւոյ և սուրբ Հոգւոյ։ Աստուած զՀայր, Աստուած զՈրդի, Աստուած զսուրբ Հոգի. մի բնութիւն երից առանձնաւորութեանցն իմանալեաց, կատարելոց ըստ ինքեանց էութիւնս, բաժանելոյ թուով, ոչ բաժանելոյ Աստուածութեամբն։

Ընդունիմ և զերկոտասան գլուխսն երանելոյն Կիւրղի որ ընդդէմ Նեստորի ասացեալ է այսպէս։ Թէ որ ոչ հաւատայ թէ Բանն Աստուած չարչարեցաւ մարմնով, խաչեցաւ մարմնով, ճաշակեաց զմահ մարմնով, և եղև անդրանիկ ի մեռելոց, քանզի միշտ կենդանի է, և կենդանացուցանէ զամենեսեան որպէս զԱստուած՝ եղիցի նզովեալ։ Եւ յետ այսորիկ որպէս Աստուածաբանն Գրիգորիոս, և Գրիգոր Նէոկեսարիայ, և Բարսիլիոս Կեսարու եպիսկոպոս, և Աթանասիոս և Կիւրիղղոս հայրապետ աղեքսանդրի։

Եւ սուրբն Գրիգորիոս Պարթև հայրապետ Հայոց Մեծայ, ուսումնասիրութեամբ և գիտութեամբ սոյա ճանաչելով զհին և զնոր կտակարանս, այսչափ հաստ եղեալ մի բնութեան աստուածութեանն երից առանձնաւորութեանցն։ Ըստ որում ես և հաւատացեալ ինձ հաւատս այսպէս խոստովանիմք աներկբայելի հաւատովք և զարդարիմք երիւք ժողովովք այսորիւք ի պա-

Digitized by Google

տիւ ամենասուրբ Երրորդութեանն. սահմանաւ զոր եղեալ է ՅԺ և Ը աստուածաշունչ սուրբ հարցն որ ի Նիկիա, որոց գլուխ սուրբ Արիստակէս հայրապետ Հայոց Մեծայ։ Եւ ասացին այսպէս վասն Բանին մարմնացելոյ. թէ Աստուած է ի Աստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ. իջեալ ի յերկնից, մարմնացեալ մարդացեալ ի սուրբ կուսէն Մարիամայ, չարչարեալ այսինքն խաչեալ, թաղեալ և յերիր աւուր յարուցեալ, համբարձեալ յերկինս, և զայ դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ է վախճան։ Նոյնպէս և զամենայն աղանդս նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ։

Նախ առաջին զԱրիոս՝ որ զՈրդի արարած կոչէ, և ոչ զԲանն մարմնացեալ ի սրբոյ կուսէն, այլ ասէ, նա է անդրանիկ ամենայն արարածոց, և նովաւ արար զամենայն։

Ըստ նմին և ՃԼ. և Ծ քն որ ի Կոստանդնուպաւլիս ժողովեցան, որք մարտնչէին ընդ Հոգին սուրբ, նզովեցին և ի բաց ընկեցին։

Նոյնպէս և Հրկերիրքն որ յԵփեսոս ժողովեցան, և զամպարիշտն Նեստոր նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ, որ անդուն բերանով ասէ, ոչ է պարտ և արժան զՄարիամ սուրբ կոյս Աստուածածին խոստովանել՝ այլ մարդածին, և զխաչելեալն Քրիստոս՝ ոչ Աստուած, այլ տաճար եղեալ Աստուծոյ Բանին, և զԲանն ոչ խոստովանեալ մարմին եղեալ ըստ աւետարանին աւանդութեանցն, այլ ի մարմնի բնակեալ այսինքն ի Քրիստոսին ի Մարիամայ ծնեցելոյ մարդոյն, զուղղապատիւ զնա կամեցեալ ցուցանել, կամ նուազ ինչ, մնծագոյն միում ի սրբոց և ի հոգէկիր արանց, և բազում և այլ հայհոյութիւնս խաւսեցաւ զի յորժամ զսորա աղանդակցայ բանս ի մէջ բերիցուք, պատմեսցուք զբովանդակն։

Նզովեցին և զԵւտիքոս, որ էր վանական ի Կուկի կղզի, որ զմարմինն Տէրունական առ աչաւք խոստովանի, և ոչ ի մարդկային ընութիւնէս, այլ ինքն իսկ մարդ կերպացաւ, ասէ, յարգանդի կուսին և ծնաւ ոչինչ առնլով ի ընութենէ կուսին։

Նզովեցին և զՍարէլիոս Լիբացի՝ որ զսուրբ Երրորդութիւնն մի դէմ խոստովանի, և ոչ երիս անձինս կատարեալս։

Նզովեցին զԱպողինարիս Լաւոդիկեայի, որ մասն ինչ ա-

Digitized by Google

ունալ, ասէ, Քրիստոսի՝ այսինքն մարմին միայն, և ոչ բովանդակ մարդ եղեալ, Աստուածորդին էր, ասէ, հոգևորութեամբ հոգիացեալ, և պէտք ինչ ոչ էին նմա մարդկեղէն հոգւոյ։

Նզովեցին և զՄարկիոնն Պոնտացի, որ՝ ասաց թէ, Աստուած որ զամենայն արար՝ չէ բարերար, և ոչ հայր բարերարին Քրիստոսի. այլ, այլ ոմն է արդար, և ստոյգ Քրիստոս մարմին ի մէնջ ոչ ա՛ռ։

Նզովեցին և զՄարկեղլոս, և զՓոտինոս, և զՍոփիոնիոս, որ զԲանն ապդումն ասեն, և զապդումն բնակեալ յայնմ որ ի զաւակէն Դաւթի եղև, և ոչ էութիւն ինչ անձնաւոր։

Նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ զՊաւղոս Սամոսատացի և զտումարն Լևոնի և զժողովն Քաղկեդոնի, զի ասացին երկուս բնութիւնս և երկուս կերպարանս ի Քրիստոս Յիսուս, յետ միաւորութեան տնաւրէնութեանն ի սուրբ կուսէն, որ լինի յայտնապէս երկու անձինք։

Նզովեցին և զՍևերոս, որ ասաց թէ մարմինն Քրիստոսի ապականացու էր մինչև ցյարութիւնն, և յետ յարութեանն արար զնա անապական։

Նզովեցին և զՄոնտանոս որ զինք Հոգի սուրբ անուանէ, և կախարդութեամբ և պոռնկութեամբ վարի։

Նզովեցին և զՄակեդոնիոս՝ որք զՀայր և զՈրդի խոստովանին և զՀոգին սուրբ ուրանան։

Նզովեցին և զՄելքիսեդեկիդան, որ զՄելքիսեդեկ Աստուծով ասեն թէ նա է Որդին Աստուծոյ։

Նզովեցին և զԳայինոս, որ զմարդկային բնութենէ ասեն, զրի որպէս մոմ մատանեաւ, և շուրջ զան ոգիր փոփոխմամբք, և ցանկութեամբք ի միմեանս իջանեն։

Նզովեցին և զՀերովդիանոսն, որ ասեն թէ Հերովդէս էր Քրիստոսն, և արդ նմա՞ մնան։

Նզովեցին և զԱրքանգեղիտան որ զՀրեշտակապետն Աստուած զոլ ասեն, թէ նա մարմնացաւ ի սուրբ կուսէն։

Նզովեցին և զՆաւատիանոս, որ զապաշխարութիւն ոչ ընդունին։

Նզովեցին զՎաղենտինն, և զՄանի, և զԿումբրինոս, և զԹէոդորոս Տարսոնացի, և զԹէոդորիտոս որ եպիսկոպոս էր ի Կիւրոս քաղաքի, և զԱկակ, և զԲարծու

անչարչարելի ասեն, զխաչն և զմահն մարդոյն միայն կալմեն, և ոչ միաւորութեան տնաւրէնութեանն խոստովանին։

Ըստ նմին նոցովեմք, եւ՝ և հաւատացեալ ինձ ժողովուրդս, և արտաքս ընկենումք ի սրբոյ եկեղեցւոյ զամենայն հերձուածողս, զորս նզովեալ է սուրբ և աստուածահաճոյ հարցն իմոց և վարդապետացն։ Քանզի գրեալ է թէ, Զգոյշ եղերուք ի չար մշակացն, և զիտեսջիք զայնպիսիսն՝ որ այնպէսն գնայցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր դուքն ուսարուք, և խորշեցարուք ի նոցանէ, զի այնպիսիքն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ծառայեն։ Եւ ամենայն հաւատիդ՝ յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ Տեառն։ Արդ՝ ես զոհայայ զԱստուծոյ ի վերայ այսոցիկ որ ասացանս յիմ նուաստիմաստ դիտութենէս. և աղաչեսցուք զմարդասէրն Քրիստոս, տալ մեզ զգուշութիւն առ ի պահել զոր ինչ լուարս և ծանեաք՝ զուղիղ հաւատս, զի և մեր և դուք ուրախ լիցուք, և հերձուածողքն զամաւթ զգեցցին։ Խնդրեսցուք ի Տեառնէ զի ընդ հաւատոցս և վարս արժանաւորս շնորհեսցէ մեզ, զի ի նորա փառս կեցցուք, և մի աստեաւքս վրիպիցեմք յաւիտենական հանգստեանցն, զորս պատրաստեալ է ընդրելոց իւրոց, այլ բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին եղիցուք նմանողք այնոցիկ որք հաւատովք և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն Աստուծոյ։

Նմա փառք ամենատեառն որ վասն մերոյ փրկութեան մարդացաւ և մարդակերպ շրջեցաւ, եկեր իբրև զմեզ և արբ, տանջեցաւ, չարչարեցաւ, խաչեցաւ, բևեռեցաւ, սպանաւ, թաղեցաւ, կենդանացաւ, յարեաւ և վերացաւ, և նստաւ ընդ աջմէ Հաւր ծնաւղին իւրոյ։ Եւ Հայր կենդանացոյց զամենեսին որ ի նա հաւատացին, և հաղորդեցան աստուածեղէն փառացն, և նորոգեցան ի փառս անապականս։ Եւ իշխանութիւն ետ որդիս Աստուծոյ լինել, և եցոյց նոցա Հայր շնորհաց զծնաւղն իւր, և հրաման ետ մեզ կոչել Հայր զԱստուած։

Արդ ճշմարիտ Որդւոյն Աստուծոյ եղբարք անուանեալ, զորս առեալ Որդւոյ առ Հայր մատուցէ, եթէ՝ Ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Հայր։ Եւ դարձեալ ասէ, Պատմեցի զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցեաց աւրհնեցից զքեզ։ Որպէս վասն բարիոք դաւանութեանն Պետրոս՝ զՔրիստոսն Որդի Աստուծոյ ծանուցեալ, ըստ որում և զերանութեանն անուն ժառանգեաց. և թէ՝ Դու ես վէմ, և ի վերայ այդր

վիմի շինեցիս վեկեղեցի իմ, և դրունք դժոխոց չնա մի՛ յաղ-
թահարեսցեն։ Ընդ նմին և տուան նմա փականք արքայութեան
երկնից, կապել և արձակելն յերկինս և յերկրի։ Որոյ եղերուքն
դուք որդիք և ժառանգաւոր նորին աթոռոյ, ուղիղ հաւատով
և բարիոք խոստովանութեամբ. Կամբիշոյ մետրապոլիտ, Պաւ-
ղոս Արուաստայ եպիսկոպոս, Գաբրիէլ Տաճկայ եպիսկոպոս,
Յովհան Հերթայ եպիսկոպոս, Սիմոն Նինուէի եպիսկոպոս, Սա-
բաիսոյ Կոհոնի հորական եպիսկոպոս, Գաբրիէլ Քարմայ եպիս-
կոպոս, Բենիամին Մնգրի եպիսկոպոս, Ստեփանոս Արզն եպիս-
կոպոս։ Եւ այլ բազում եպիսկոպոսք, եպիսկոպոսակցաւք և
սարկաւագաւք և ուխտիւ սրբոյ եկեղեցւոյ, որ խնդրեցէք ըզ-
հաւատ Քրիստոսասէր Հայոց որք ի դրան արքունի հասեալ կայիք։

Ի խնդրոյ ձերմէ, հրամանաւ տերանց, ես Կուիտաս Մա-
միկոնիս եպիսկոպոս, որ յաջորդեցայ ի կաթուղիկոսութիւն
Հայոց Մեծաց, ետու զյետկարս զայս բոլորով սրտիւ և ան-
երկբայելի հաւատով, առաջի նախարարաց Հայոց և այլազգաց
ազգաց քրիստոնէից, որք ի դրան արքունի հասեալ կային։ Մա-
նաւանդ առաջի մեծի տանուտեառն Խոսրովշնում կոչեցելոյ,
որոյ ճանաչիւր անուն Սմբատ՝ յազգէ Բագրատունեաց, շինեալ՝
ես և իմս հաւատացեալ հաւատ, ի վերայ հիման առաքելոց և
մարգարէից. և սրբոյ Գրիգորի՝ կենդանի մարտիրոսին Քրիս-
տոսի, և որք ըստ նմանէ սուրբ Հարքն։ Որով և մեք ոչ խո-
տորեսցուք քան զասացեալ հաւատս զսուրբ և զաստուածաշունչ
հարցն, ո՛չ յաջ, և ոչ յահեակ։ Զճշմարիտ զովելին Աստուծոյ
միայն վայել է ասել, և որոց յայտն է սուրբ հարանցս, մարդ-
կան՝ այլազգ զողել բանիւք անբաւ լայնութեան ծովու յիմաս-
տութենէ։ Սակայն ի մեզ մին և եթ պահեսցի զգուշութեամբ,
ուղիղ հաւատով և առաքինիասէր գործովք հասանել ի նաւա-
հանգիստն խաղաղութեան երկնից արքայութեանն, անշարժ
կալ ի հնազանդութեան Հաւրն հաւատոց, և կամարար մարմ-
նականաց, և ձայնակցելով մեզ ուղիղ հաւատով, մի հաւատ լի-
սուք Քաջ Հովուին, և կամ որդիք ըստ աւետարանին բանի,
զի յերևել ճշմարիտ Հովուապետին արժանի եղիցուք ընդու-
նել զմեզ յաւիթեանս և առնուլ զանթառամ փառաց զպսակն։
Միասնական և սուրբ երրորդութեանն փա՜ռք յանարժան ըե-
բանոյս, ամէն։

Digitized by Google

Աւրինակ գրոցս՝ որ լեալ էր Տէր Գրիգորիսի Վկայասիրին՝ մինչև յայս վայր էր. և նա այսպէս էր գրեալ. Զվահրամ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, յիշեսջիք յաղաւթս ձեր, ո՞վ երջանիկ դասք ուղղափառաց խմբիցդ Ակքանազեան սեռի։ ՇԻԷ. թուական։

Զմեղապարտս, ի պանարկէսս գրոզ լուսաւոր սուրբ պատիս, զթուաս անարժան փահանայ, ի գնաւանն իմ ի դամէնայն ապգատարհին ղկենդանիս ի դհանգուցեալն, յիշեցէք ի սուրբ աղաւնս յէր, ո՞վ սուրբ ընկերցողք։

Digitized by Google

վիմի շինեցիս վկկեղեցի իմ, և դրունք դժոխ
թահարեսցեն։ Ընդ նմին և տուան նմա փա՛
երկնից, կապել և արձակել յերկինս և
դուք որդիք և ժառանգաւոր նորին
և բարիոք խոստովանութեամբ։ **ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻ-**
ղոս Արուաստայ եպիսկոպոս **ՈՐ ԵՂԵՆ Ի ՀԱՅՔ**
Ցոլեան Հերթայ եպիսկոպոս
բահսոյ Կոհոնի հորան
կոպոս, Բենիամին
կոպոս։ Եւ այլ
սարկաւագ
հաւատ
կայի։

Ժողով արար երանելի հայրապետն մեր սուրբն Գրիգորիոս ի բոնիերորդ ամի կաթուղիկոսութեանն իւրում, և ի եւթն ամի թագաւորութեանն Տրդատայ. ի թագաւորական քաղաքն յարքայութեան Հայոց. յորժամ եկն Թոնակէս ի Նիկիայ սուրբ ժողովոյն, բերելով ընդ ինքեան կանոնաց թուեալ միահամար կարգաւ տունս ԾԱ, յորս դիր կանոնաց սուրբն Գրիգորի սուղ ինչ յաւելումն արարեալ յեղեալ կանոնսն սուրբ հայրապետացն՝ որք ի Նիկիայն ժամանեալ ժողով։

Երկրորդ ժողով արար սուրբն Ներսէս, յորժամ դարձաւ ի Կոստանդնուպալսի ժողովոյն ՃԾ. սուրբ հարցն որք անդ գումարեցան ի կործանումն Մակեդոնիի։

Երրորդ ժողով՝ արար սուրբն Սահակ և երանելին Մեսրոպ յԱշտիշատ, յորժամ հասին թուղթքն ի Կիւրղէ և ի Պրոկղէ որ յԵփեսոս երկու հարիւրքն հաւանեալ եղեն, յորժամ պՓառք ի բարձունսն կարգեցին, յաճախելով ի բանս հովուացն, պարսպելով ընդդէմ Նեստորի անիծելոյ։

Չորրորդ ժողով արար Ցովսեփ աշակերտ Մաշդոցի և սրբոյն Սահակայ նորին տեղապահի ի Շահապուվանի ի Զ ամի իշխանութեանն Ցաղկերտի, վասն կարգաւորութեան եկեղեցւոյ, ուր ժողովեցան եպիսկոպոսք Խ. և երիցունք բազումք և կանոնս յաւրինեցին սահմանեալ կարգաւ բանս քսան։

Հինգերորդ ժողով՝ արար Բաբգէն ի Քաղաքուղաշտի, ի յԸԾ.երորդ ամի թագաւորութեանն Կաւատայ արքայի, յաղագս չար հերձուածոյն Ակակայ և Բարսումայի, որք պեղծ աղանդսն վարժեալ անիծեալ աթոռին Նեստորի, ջանային շիջուցանել զուղղափառ հաւատս կողմանց արևելից, և տնկել

ացեալ որոմն զաղջին վնասակարի Նեստորի անիծելոյ։ ոչ զիր արարեալ Տէր Բարգէն, սահման կապելով, թէ եալ խարեսցեն զձեզ բանք դոցա, քանզի մեք Հայք Վիրք և Աղուանք մի խոստովանութեամբ եմք հաստարիտ հաւատով ի լաւ անդր, զոր աւանդեցին Հարքն յերիս ժողովսն, ոչ ընդունիմք զպղծիսի

[illegible] հայհոյութեան. այլ նզովեմք միաբան զնմանիս նորա. և ևս մանաւանդ որք կցորդին զկնի պիղծ աղանդոյն նոցա. նը-զովեալ եղիցին, և ի սուրբ եկեղեցւոյ արտաքս մերժեսցին։

Ի սկզբան թուականութեանս Հայոց, Վեցերորդ ժողով արար Տէր Ներսէս է Դունի. ի չորրորդ ամի կաթուղիկոսութեան իւրոյ, և ի ԻԹ. ամի թագաւորութեանն Խոսրովու արքային Պարսից. և ի ԺԹ ամի Յուստինոսի կայսեր։ Զայս ժողով արար Տէր Ներսէս, հակառակ ժողովոյն Քաղկեդոնի. վասն զի էր ախտ պղտորման խոստովանութեան Քաղկեդոնի յաճախապէս յաւելեալ ևս բան զևս յոյժ յոյժ երկարնակ հաւատն, և սկզբնաւորեալ Տէր Ներսէս սահմանադրութիւնս վճիռ տալով, և եղեալ միաւորութիւն խոստովանութեան հաստատելով նախ և առաջին զծննդեանն և զմկրտութեանն միաւորելով յոյժ ստիպմամբ հաստատութեամբ անխզելի, և անորոշաբար կանոնաւ վասն երկուց բնութեանցն միաւորելով զմիութիւն ունելով սրբեցին դարձեալ զնաչեցարն յերիս սրբասացութիւնս, ընդդէմ բաժանման նոցա վասն Քրիստոսի միաւորեալ բնութեանցն, զի թէպէտ և տեսաք զնա մարդացեալ, այլ Աստուած էր, թէպէտ և ի տկարութիւն կամաւորաբար խոնարհեցաւ, այլ հզաւր էր. թէպէտ զմահ ճաշակեաց կամաւորաբար, այլ անմահ էր։ Իսկ յետ ժամանակաց ինչ առ թագաւորութեամբն Հերակլի, որ թագաւորեաց Հռոմոց ամս ԼԱ. առ սովաւ առաւ աստուածաշէն քաղաքն Երուսաղէմ, և սուրբ Խաչն զերեցաւ ի Պարսից թագաւորէն։ Սա ի ԺԵ, ամի թագաւորութեանն իւրոյ սպան զԽոսրով արքայն Պարսից, և դարձոյց զսուրբ Խաչն. իսկ ապա զկնի ԼԺ. ամի արար ժողով ի Կարնոյ քաղաքի, յաճախաղոյն իմաստասիրաւքն Յունաց. Ածէ և զբաղումս ի հայրապետացն Հայոց հաւանել երկարնակ խոստովանութեանն նոցա, և զԵզրՙ Հայոց կաթուղիկոս հաստատեն, և զսուրբ ժողովն որ ի Դունի, նզովիւք չափ ի բաց մերժեն, և զմիաւորութիւն Ծննդեանն և զՄկրտութեանն՝ և*

Digitized by Google

թենէն զողորմութիւն հայցեմք։ Քանզի առաքելական եկեղեցի այս բարբառով և ձևով միշտ պարծի, զի ի ժամ պատարագի զովաբանութեանն զդրուակս ի դէմս Հաւր արարեալ երիցս սուրբն ասելով միով տէրութեամբ ընդ Հաւր և Հոգւոյն սըրբոյ, զնկեալն և զգալոցն ի բարձունս արքայ փառաւորեալ գոչէ։ Եւ աստ թէ խաչ ասեմք մի՛ զարմանար. քանզի նա ըզչարչարանս իւր փառս կոչէր։

Իսկ յետ այլ բանից, այսպէս գրեալ էր թէ, մեք զմարմնոյն մեռանել ձեզ գրովք յուցանեմք. թէ՝ Մարդ Յիսուս Քրիստոս որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է. թէ զՅիսուս Քրիստոս զխաչելեալն խնդրէք, և թէ Խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, և թէ՝ Մարդ Յիսուս Քրիստոս. և այլ այսպիսիս, ուր ինքն Յիսուս Քրիստոս ըստ խոնարհութեան մերոյ յուցեալ լինի։ Արդ՝ նախ զայս հարցանեմք, մինչ այդպէս զՈրդի, երկուս ասել սիրէք, և զԵրրորդութիւնն չորրորդութիւն ի մտաց ստեղծանէք։ Յիսուս Քրիստոս անունդ, ուր ըստ մեզ կիրս նշանակէ, զի ըստ տնտեսութեանն կամ սքանչելագործութեանն, առ նմին այլ կոչ Որդի Աստուծոյ, կամ Բան Աստուած գտանէք, և թէ որպէս ի վերայ մարմնոյն լոկ որոշեցէք ասել զՅիսուս Քրիստոս միշտ, և կամ մի ուրեք կարիցէք ցուցանել սոսկ ի վերայ մարմնոյն։ Իսկ թէ լսեցես՝ մարմինն Քրիստոս է. միթէ աւտար իցէ այս ձայն յայնմանէ, որ ասէն թէ Բանն մարմին եղև, այլ քա՜. ոչ զանազան բարբառ։ Եթէ ոչ այնպէս կարծես, լո՛ւր զՔրիստոս զիտել մարմնով ասեն գիրք. Քրիստոսի չարչարելն մարմնով. արդ եթէ ըստ քոյ ասելոյդ Քրիստոս Յիսուս մարմնոյն ասիւր, նորին մարմնոյ այլ մարմին որպէս էր. արդե՛ւք մարմին ի մարմնի եղեալ. մի՝ որով չարչարէրն, և միւս մարմին Քրիստոսն որ ի ներքսն։ Եւ այսպէս իմանալն ի պառաւանց առասպելս ձգեալ տանի. այլ մի այդպէս լիցի իմանալ զքարոզութիւն առաքելոյն, զի որ ի ձէնջ կամեցեալ բանաձգել ի վերայ մարմնոյն զՅիսուս Քրիստոս անունդ, նոյն ցուցաւ ի մեծութեանն ականատեսից՝ Որդի Աստուծոյ և Բան Աստուծոյ. Այնչափ ինչ գրեցաւ ասէ, զի հաւատայցէք թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ. և թէ՝ Որ փոխեացն զմեզ յարքայութիւն Որդւոյ սիրելոյ իւրոյ որով ունիմք զքաւութիւն արեամբ նորա, զիմողութիւն մեղաց մարմնով նորա որ է պատկեր աներևութին Աստուծոյ. և թէ՝ Քրիստոս ի վերայ

ամենայնի Աստուած. և թէ՝ Որ էրն ի սկզբանէ զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, և ձեռք մեր շաւշափեցին զԲանն կենաց։ Զոգիս ասել զլիութիւն այսպէս բանիս որ ի նոր կտակարանս, վասն խաւսիցս բազմանալոյ։

Ապա հաւատացոյնս տեղեկացէր, եթէ Քրիստոս Յիսուս զԲանն Աստուած մարդկացեալ կոչեն գիրք, որպէս և սուրբ ժողովն որ ի Նիկիա ասացին, թէ՝ Ծնաւ կատարեալապէս ի Մարիամայ հոգւով, ըստ այնմ, թէ՝ Հոգի երևսաց մերոց Տէր Քրիստոս, և որովն հոգի և միտք և ամենայնն, այն մարդկայի՞նս։ Եւ ծնեալն կոչեցաւ Յիսուս Քրիստոս։ Եւ Պաւղոս ասէ, Ոչ զայլ ոք ի մտի եղի ձեզ դիտել բայց միայն զՅիսուս Քրիստոս, և զնոյն խաչեալ, ապա մի մեռեալ և մի իմանալի ի ձէնչ, զի՝ առասպելարանի։

Բայց ևս առաւելագոյն տարաբէնութիւն մեկնութեամբս արարեալ ի ձէնչ իմանի. թէ վասն երկուց և մի բնութեանն Քրիստոսի ի նախագրին աւրինակեցաւ։ Հրամայեցեալ, ասէ, երկուս հաւս առնուլ և առ՛ան ի նցեղէն, և փայտ նոճի, և կարմիր զոպայ և զենուլ զմի հաւն յաման խնցեղէն, որ զուշակեցաւ ի ձէնչ, այն մարդոյն բնութիւն, և զմիւսն թացեալ յարիւն հաւուն սպանելոյ, դիցեն ի վերայ զփայտն և զայլսն. և արձակեսցեն ի դաշտն, այն՝ զԱստուծոյ զբնութիւնն ասացէր։ Եւ արդ այժմ քաջ միտ դիր ձերում մեկնութեանդ։ Պաւղոս գրէ Եբրայեցւոցն, յիշեցուցանելով նոցա զխորանն և զնորին կահ, և զժողովուրդն, և զարեանն սրսկումն ի վերայ նոցին, և ասէ, թէ՝ Ամենայնքն արեամբն սրբէին, զի վասն մաքրելոյ արիւնն անկանէր զնորաւք։ Ապա ուրեմն ըստ ձեր ասելոյդ, բնութիւն Աստուծոյն Բանի ի մարդոյն բնութենէ սրբեցաւ, և նորա արեամբն թացեալ ի նմանէ պիտոյ եղև առնուլ զանապականութիւն և զՀոգւոյն սրբոյ զմաքրութիւն. նմա՞ որ յէութենէն Հաւր էր։ Եւ այսպիսի բանք ո՞ւմ ոչ շարժիցեն արտասուս, զկարծիսդ տալ նմա որ կփրկութիւն ի մարդոյն հայցել։ Նոյնպէս և վասն նոխազացն՝ թէ որ զենաւն, մարդոյն բնութիւն էր, և կենդանոյն յորոյ ձեռս ի վերայ եդեալ և զանաւրէնութիւն և զմեղսն ի վերայն ասացեալ, և նորա յինքն առեալ, Բանին Աստուծոյ բնութիւնն էր։ Ապա ուրեմն ըստ ձեզ աստուածութեամբն իւրով զմեղս մեր վերացոյց։ Թէ ստե՞լ եղև Պաւղոս, որ ասաց,

Digitized by Google

նա ցմեղս մեր՝ մարմնով իւրով վերացոյց ի խաչափայտն, զորոյ կէութիւնն ի վշտաց վերադոյն կամիք ասել քան զնոյն էութիւն, ընդմեղաւք և ընդ ամպարշտութեամբ անկեալ ասացէք, այլ քա՜ և մի լիցի այդպէս զարհուրելիս իմանալ ի զևտականին զգրեալսն։ Քանզի երկու հաւուրն ասելով նշանակեալ լինի Որդին Աստուծոյ մարդացեալ մահուամբն, որպէս վերադոյնն ասացաք. արեամբ նորա մեք թաղեալ զտաք զփրկութիւն, և յայնժամ ի մեզ ստացաւ անապականութիւն՝ որ նոցի անփուտ փայտն. և զոպայն որ է Հոգւոյն սրբոյ ի մեզ մաքրութիւն, և կարմիրն զշնորհս զորդեգրութեանն Աստուծոյ, և կատարեցաւ բան մարգարէին, թէ Անդ եղիցի ուրախութիւն հաւուց, այսինքն մարդկանաւ Սոյնպէս և նոխայն՝ յորոյ վերայ վիճակ Տեառն էր, զեռնաւ ըստ իմ, որպէս բազում անգամ ասացաք, և արձակման վիճակն անկաւ ի մեր վերայ, զի վիճակել մեզ ընդ ընտրեալսն մասն մեղաց թողութեանն, և առնու նոխայն զանաւրէնութիւն որդւոյն Իսրայէլի, առաքելովքն առաջնորդաւք եկեղեցւոյ, որչափ նոցայն շնորհեցաւ ընդ ոմանց համարս տալ և որոց կամին յետ մկրտութեանն թողուլ զմեղս։ Իսկ անապատն եկեղեցի հեթանոսաց աւազանաւն ծաղկեալ. զոր Եսային ասէ. Ցնծասցէ անապատ, և ծաղկեսցէ որպէս շուշան անապատն Յորդանանու։ Եւ այս ո՛չ թուեսցի քեզ առաքելական եկեղեցի յորում մկրտութիւն է։ Բայց թէ ի վերայ Բանին Մարմնացելոյ կամի ոք ասել, մի և զնոյն պարտի իմանալ զՏէրն նշանակեալ վիճակաւն զենանի զիմն, և մի և զնոյն զյարուցեալն որ բարձիչն եղև դժոխոցն խայթոցաւն և զընդ աչմ Հաւր նստեալն։ Ապա ուրեմն երկուս իմանալ զնա, ըստ երկուց նոխաղացն. յանապատուածիցն դասու կացուցանել։

Բայց առաջիկայ բանս թուի մեզ իմանալ յաւանդութենէ առաքելոցն ի բաց փոխումն, զի նշանակեալս ասէ այսպէս, թէ Զսուրբ Հոգին զմիայն հզաւրն, զթագաւորն թագաւորաց, և զՏէրն Տերանց, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց, զոր ոչն ոք ետես ի մարդկանէ, և ոչ տեսանել կարող է, ձեզ յայտնի լիցի, և մեք առանց չարչարանաց և մահու ասեմք։ Արդ՝ զսուրբ Հոգին, և զՀայր զԱստուած ոչ մարմնացեալ ասել քրիստոնէից, յայտնի է ամենեցուն՝ որպէս գուցաքն և թէ ասէ ոք, նպովեալ է։ Բայց ձեզ զայդ ասել՝ զի զԱստուածն Բան է, առանց չարչարանաց և մահու զնա ցուցանել զե-

Digitized by Google

կուցանէ արդ, որպէս ասէքդ, թէ ոչ երևեցաւ և ոչ չարչարեցաւ և ոչ մեռաւ։ Է զի և ոչ մարդոյն, զոր ասէքն ի կուսէ ծնելոյ, Աստուածն բան ի յառելութիւն ինչ եղև, քանզի որպէս այն ո՛չ և այս ոչ, ապա զսուրբն զայն զկոյս Աստուածածին զի՞ ասէք, զի նորա՝ ուրեմն սոսկ մարդ լինի ծնեալ։ Երեւի չարչարելի և մահկանացու, և Հրէիցն բարբառոյ առ ի ստուդել, թէ դու մարդ ես, և զանձն քո Աստուած առնես։ Այլ և ուրեմն ի մահ մարդոյ մկրտիք։ քանզի ի նորա մահն մկրտիմք։ և զմարդ պաշտեն երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք, ի ծունր կրկնելն Յիսուսի Քրիստոսի։ Ստեցին ուրեմն առաքեալքն զնա գոյ ասելով Որդի Աստուծոյ, և մանաւանդ ի ձեր ասելոյդ, և Փիլիպպոս վրիպեցոյց զներբինին Եսայեաւ, թէ Իբրև զոչխար ի սպանդ վարեցաւ, որոյ զապդատումն նորա ոչ ոք կարէ պատմել. և նա զհաւատալն բարբառէր թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ և ինքն զնոյն այլոց քարոզէ։ Բայց ոչ ստեցին մարգարէքն և առաքեալքն, այլ այնք որ ի ճշմարտութենէն թիւրեալ են։ Քանզի Որդին Աստուծոյ մարդացեալն ասէ, թէ՝ Գտայ այնոցիկ որ զիսն ոչ խնդրէին. յայտնի եղէ . . .

Թուղթք երկուք անկեալ զոլով յորինակին, պակասին ասասէն աւարտն Թղթոյն Աբրահամու առ Անդուանս, և սկիզբն Թղթոյն Կոմիտասայ ի Միջագետս։

Digitized by Google

ՏԵՍՈՒՆ ԿՈՄԻՏԱՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ

. . . . . անչրդիս, ծառս պտղակորոյսս կըրկնամեռս, նիւթս կիլման հրոյն յաւիտենականի, որք վառեն անձանց ցՀուր զեՀենին, սնուցանեն զորդնն անմահ։ Արդ՝ ոչ ևս յամել ի նախերգութեանս, այլ պատրաստարար և խոՀականաղոյնս յԱստուածայինսն վերաձգել զմիտս։

Ես և Հաւատացեալ ինձ Հաւատս, այսպէս Հաւատամք և խոստովանիմք, որպէս և Հանդիտապատիւ սուրբն Գրիգորիոս Հայրապետ սրբոյ եկեղեցւոյ Հայաստան աշխարհիս ուսոյց մեզ։ Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ և ի Տէր, արարիչ երկնի և երկրի, երևելեաց և անտեսանելեաց։ Եւ ի Միածին Որդին Աստուծոյ որ ի Հաւրէ և առ Հաւր և ընդ Հաւր։ Եւ ի սուրբ Հոգին՝ որ ի Նորին յէութենէ, և նովաւ արար զամենայն, որ է մի տէրութիւն, մի զաւրութիւն, մի աստուածութիւն։ Հայր յանձնէ, Որդի ի Հաւրէ, Հոգին ի Նոցունց ի Նոսին իսկութեամբն, էութեամբն, աստուածութեամբն, երեք անձինք, մի կատարեալ կամք, հարթ Հաւասար, Հասարակ ի բարձրութիւնս, ի խորութիւնս, ի լայնութիւնս, ի յերկայնութիւնս։ Մի բնութիւն աստուածութեանն, մի պսակ Երրորդութեանն, և չի են երկինք և երկիր փառաւք նորա։ Այսպէս Հաւատամք և խոստովանիմք, և երկրպագեմք սրբոյ Երրորդութեանն ի Միութիւն անդր, նոյնպէս և սրբոյ Միաւորութեանն յԵրրորդութիւն անդր, անարարք, անխառնք, անսկզբունք, Համագոյականք, զի որպէս անխառնելի է սուրբ Երրորդութիւնն, նոյնպէս և անբաժանելի անխառնելի յաղագս իւրաքանչիւր յատուկ առանձնաւորութեանցն։ Իսկ անբաժանելի, վասն զի ամենակալ է Հայր, ամենակալ Որդի, ամենակալ սուրբ Հոգի. մի բնութիւն աստուածութեանն, մի իշխանութիւն, մի զաւրութիւն մի պետութիւն։ Եւ ի վերջին ժամանակս Միածին

Որդին Աստուծոյ կամաւք Հաւր և Իւր և սրբոյ Հոգւոյն, վասն մեր և վասն մերոյ փրկութեան խոնարհեցոյց զերկինս և էջ յարգանդ կուսին, և էառ մարմին ի Մարիամայ սրբոյ կուսէն Աստուածածնէն, և միացոյց զանմեռն ընդ մեռոտն. և զապականացուն և զմահկանացուն ընդ անմահ աստուածութեան իւրոյ, խառնեաց և միացոյց, և արար անապական, զի առանց ամենայն հակառակութեան, նուազն ի լաւէն աւրհնեսցի։ Աստուածավայելչարար ծնաւ ի սրբոյ կուսէն, որոյ հետք կուսութեանն ոչ ապականեցաւ, և ի խանձարուրս պատեցաւ կաթնասուն լեալ. և յետ երկոտասան ամի եկն ի տաճարն, զի յայտնի արասցէ զիւր աստուածութիւնն։ Ի վերայ երկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ միաւորութեամբ տնաւրէնութեան, քաղցեաւ և ծարաւեցաւ, ոչ սոսկ մարդկային ընութեամբ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեան աստուածավայելչարար։ Եւ յետ երեսուն ամի եկն ի մկրտութիւն, մկրտեցաւ ի Յովաննէ Յորդանիս, վկայեցաւ ի Հաւրէ՝ Դա է որդի իմ սիրելի, պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ յետ այսորիկ փորձեցաւ ի սատանայէ։ Բանն մարմնացեալ քաղցեաւ և ծարաւեցաւ։ Բանն մարմնացեալ զկոյրս լուսաւորեաց, և զգիշերն ի տիւ փոխարկեաց, զչորեքաւրեայն զսիրելին ձայնին զուգընթաց արար։ Բանն մարմնացեալ ապտակեցաւ, չարչարեցաւ, ոչ սոսկ մարդոյն ասեմ զչարչարանսն, զխաչն և զմահն, և ոչ զնշանագործութիւնսն միայնում Բանին Աստուծոյ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն. քանզի Բանին Աստուծոյ մարմնացելոյ են ամենայն բարձրագոյնքն և խոնարհագոյնքն։ Եւ այսպէս կամաւք եկն ի խաչն, մեռաւ, և թաղեցաւ, և յերրորդ յաւուր յարեաւ ըստ գրոց, զի տիրեսցէ կենդանեաց և մեռելոց։ Եւ յետ քառասուն տուընջեան և քառասուն գիշերոյ համբարձաւ յերկինս, որպէս տեսին առաքեալքն, և նստաւ ընդ աջմէ Հաւր, որպէս ետես սուրբն Ստեփանոս, ի վկայելն իւրում ասէ. Տեսանեմ զերկինս բացեալ և զՅիսուս զի կայ ընդ աջմէ Աստուծոյ։ Եւ գալոց է նովին մարմնով և փառաւք դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Եւ յետ այսորիկ, որպէս Նապիանցունն Գրիգոր Աստուածաբանն ասէ. Մի է Աստուած Հայր կենդանի բանին էական իմաստութեան և զաւրութեան կերպարանին իւրոյ, կատարեալ

կատարելոյ ծնաւղ. Հայր Որդոյ Միածնի, մի Տէր մի՛ պան՝ միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր աստուածութեանն։ Բանն գործաւոր իմաստութիւն պարատական ամենեցուն ընդ լինելութեամբ անկելոցս, զաւրութիւն և բոլոր էիցս արարաւղ, Որդի ճշմարիտ անտեսանելոյն, անապական՝ անապականին, անմահ՝ անմահին, մշտնջենաւոր՝ մշտնջենաւորին։ Մի սուրբ Հոգի Աստուծոյ զէութիւնն ունելով, և Որդւով երևեալ յայտնապէս մարդկան, պատկեր Որդւոյ կատարեալ ի կատարելոյ, պատճառ կենդանեաց, սրբութիւն՝ սրբութեանց շնորհաւղ, որով ծանուցանի Հայր՝ որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Որդի Աստուած՝ որով ամենայնք։ Երրորդութիւն կատարեալ փառաւք և մշտնջենաւորութեամբ և թագաւորութեամբ, անբաժանելի և անաւտարելի, ոչ ստեղծական ինչ և ոչ ծառայական յԵրրորդութեանն, և կամ ի ներքս ածական, որպէս թէ յառաջագոյն ոչ եղելոյ զկնի ի ներքս ածաւ և ոչ երբէք նուազեաց Որդի ի Հաւրէ, և ոչ յՈրդոյ Հոգի, այլ անփոփոխելի և անայլայլելի է միշտ Երրորդութիւնն։ Եւ մեք երկրպագեմք Հաւր և Որդւոյ և սուրբ Հոգւոյ։ Աստուած զՀայր, Աստուած զՈրդի, Աստուած զսուրբ Հոգի. մի բնութիւն երից առանձնաւորութեանցն իմանալեաց, կատարելոց ըստ ինքեանց էութիւնս, բաժանելոյ թուով, ոչ բաժանելոց Աստուածութեամբն։

Ընդունիմ և զերկոտասան զլուխսն երանելոյն Կիւրղի որ ընդդէմ Նեստորի ասացեալ է այսպէս։ Թէ որ ոչ հաւատայ թէ Բանն Աստուած չարչարեցաւ մարմնով, խաչեցաւ մարմնով, ճաշակեաց զմահ մարմնով, և եղև անդրանիկ ի մեռելոց, քանզի միշտ կենդանի է, և կենդանացուցանէ զամենեսեան որպէս զԱստուած՝ եղիցի նզովեալ։ Եւ յետ այսորիկ որպէս Աստուածաբանն Գրիգորիոս, և Գրիգոր Նէոկեսարիայ, և Բարսիլիոս Կեսարու եպիսկոպոս, և Աթանասիոս և Կիւրիղղոս Հայրապետ աղեքսանդրի։

Եւ սուրբն Գրիգորիոս Պարթև Հայրապետ Հայոց Մեծայ, ուսումնասիրութեամբ և գիտութեամբ սոյա ճանաչելով զհին և զնոր կտակարանս, այսչափ հասու եղեալ մի բնութեան աստուածութեանն երից առանձնաւորութեանցն։ Ըստ որում ես և հաւատացեալ ինձ հաւատս այսպէս խոստովանիմք աներկբայելի հաւատովք և զարդարիմք Երիւք ժողովովք այսոքիւք ի պա-

Digitized by Google

տիւ ամենասուրբ Երրորդութեանն. սահմանաւ զոր եղեալ է ՅԺ և Ը աստուածաշունչ սուրբ հարցն որ ի Նիկիա, որոց գլուխ սուրբ Արիստակէս հայրապետ Հայոց Մեծայ. Եւ ասացին այսպէս վասն Բանին մարմնացելոյ. թէ Աստուած է ի յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ. իջեալ ի յերկնից, մարմնացեալ մարդացեալ ի սուրբ կուսէն Մարիամայ, չարչարեալ այսինքն խաչեալ, թաղեալ, և յերիր աւուր յարուցեալ, համբարձեալ յերկինս, և գայ դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ է վախճան։ Նոյնպէս և զամենայն աղանդս նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ։

Նախ առաջին զԱրիոս՝ որ զՊրդի արարած կոչէ, և ոչ զԲանն մարմնացեալ ի սրբոյ կուսէն, այլ ասէ, նա է անդրանիկ ամենայն արարածոց, և նովաւ արար զամենայն։

Ըստ նմին և ՃԼ. և Ծ քն որ ի Կոստանդնուպալիս ժողովեցան, որք մարտնչէին ընդ Հոգին սուրբ, նզովեցին և ի բաց ընկեցին։

Նոյնպէս և Եր կերիւրքն որ յԵփեսոս ժողովեցան, և զամպարիշան Նեստոր նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ, որ անդուռն բերանով ասէ, ոչ է պարտ և արժան զՄարիամ սուրբ կոյս Աստուածածին խոստովանել՝ այլ մարդածին, և զխաչելեալն Քրիստոս՝ ոչ Աստուած, այլ տաճար եղեալ Աստուծոյ Բանին, և զԲանն ոչ խոստովանեալ մարմին եղեալ ըստ աւետարանին աւանդութեանցն, այլ ի մարմնի բնակեալ այսինքն ի Քրիստոսին ի Մարիամայ ծնեցելոյ մարդոյն, զուղղապատիւ դնա կամեցեալ ցուցանել, կամ նուազ ինչ, մնծագոյն միում ի սրբոց և ի հոգէկիր արանց, և բազում և այլ հայհոյութիւնս խաւսեցաւ զի յորժամ զսորա աղանդակցայ բանս ի մէջ բերիցուք, պատմեսցուք զրովանդակն։

Նզովեցին և զԵւտիքոս, որ էր վանական ի Կուկի կղզի, որ զմարմինն Տէրունական առ աչաւք խոստովանի, և ոչ ի մարդկային բնութենէս, այլ ինքն իսկ մարդ կերպացաւ, ասէ, յարգանդի կուսին և ծնաւ ոչինչ առնլով ի բնութենէ կուսին։

Նզովեցին և զՍաբէլիոս Լիբացի՝ որ զսուրբ Երրորդութիւնն մի դէմ խոստովանի, և ոչ երիս անձինս կատարեալս։

Նզովեցին զԱպողինարիս Լաւոդիկեցի, որ մասն ինչ ա-

ունալ, ասէ, Քրիստոսի՝ այսինքն մարմին միայն, և ոչ բովանդակ մարդ եղեալ, Աստուածորդին էր, ասէ, Հոգևորութեամբ Հոգիացեալ, և պէտք ինչ ոչ էին նմա մարդկեղէն Հոգւոյ։

Նզովեցին և զՄարկիոնն Պոնտացի, որ՝ ասայ թէ, Աստուած որ զամենայն արար՝ չէ բարերար, և ոչ Հայր բարերարին Քրիստոսի. այլ, այլ ոմն է արդար, և ստոյգ Քրիստոս մարմին ի մէնջ ոչ ա՛ռ։

Նզովեցին և զՄարկեղլոս, և զՓոտինոս, և զՍուփիոնիոս, որ զԲանն ապդումն ասեն, և զապդումն ընակեալ յայնմ որ ի զաւակէն Դաւթի եղև, և ոչ էութիւն ինչ անձնաւոր։

Նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ զՊաւղոս Սամոսատացի և զտումարն Լևոնի և զժողովն Քաղկեդոնի, զի ասացին երկուս բնութիւնս և երկուս կերպարանս ի Քրիստոս Յիսուս, յետ միաւորութեան տնաւրէնութեանն ի սուրբ կուսէն, որ լինի յայտնապէս երկու անձինք։

Նզովեցին և զՍևերոս, որ ասայ թէ մարմինն Քրիստոսի ապականացու էր մինչև ցյարութիւնն, և յետ յարութեանն արար զնա անապական։

Նզովեցին և զՄոնտանոս որ զինք Հոգի սուրբ անուանէ, և կախարդութեամբ և պոռնկութեամբ վարի։

Նզովեցին և զՄակեդոնիոս՝ որք զՀայր և զՈրդի խոստովանին և զՀոգին սուրբ ուրանան։

Նզովեցին և զՄելքիսեդեկիդն, որ զՄելքիսեդեկ Աստուածոյ ասեն թէ նա է Որդին Աստուծոյ։

Նզովեցին և զԳայինոս, որ զմարդկային բնութենէ ասեն, զրի որպէս մոմ մատանեաւ, և շուրջ զան ոգիր փոփոխմամբք, և ցանկութեամբք ի միմեանս իջանեն։

Նզովեցին և զՀերովդիանոսն, որ ասեն թէ Հերովդէս էր Քրիստոսն, և արդ նմա՛ մնան։

Նզովեցին և զԱրբանդեղիտոն որ զՀրեշտակապետն Աստուած զոլ ասեն, թէ նա մարմնացաւ ի սուրբ կուսէն։

Նզովեցին և զՆաւատիանոս, որ զապաշխարութիւն ոչ ընդունին։

Նզովեցին զՎաղենտինն, և զՄանի, և զԿումբրինոս, և զԹէոդորոս Տարսոնացի, և զԹէոդորիտոս որ եպիսկոպոս էր ի Կիւրոս քաղաքի, և զԱկակ, և զԲարծումա Ընծիւղնացի, որ զբնութիւն Որդւոյ յերկուս բաժանեն և աստուածութեամբն

Digitized by Google

անչարչարելի ասեն, զխաչն և զմահն մարդոյն միայն կապմեն, և ոչ միաւորութեան տնաւրէնութեանն խոստովանին։

Ըստ նմին նոյնմամբ, ես՝ և հաւատայեալ ինձ ժողովուրդս, և արտաքս ընկենումք ի սրբոյ եկեղեցւոյ զամենայն հերձուածողս, զորս նզովեալ է սուրբ և աստուածահաճոյ հարցն իմոց և վարդապետացն։ Քանզի գրեալ է թէ, Զգոյշ եղերուք ի չար մշակացն, և զիտեսջիք զայնպիսիսն՝ որ այնպէսն գնայցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր դուքն ուսարուք, և խորշեցարուք ի նոցանէ, զի այնպիսիքն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ծառայեն։ Եւ ամենայն հաւատիդ՝ յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ Տեառն։ Արդ՝ ես զոհացայ զԱստուծոյ ի վերայ այսոցիկ որ ասացանս յիմ նուաստիմաստ դիտութենէս. և աղաչեսցուք զմարդասէրն Քրիստոս, տալ մեզ զզուշութիւն առ ի պահել զոր ինչ լուարս և ծանեաք՝ զուղիղ հաւատս, զի և մեր և դուք ուրախ լիցուք, և հերձուածողքն զամաւթ զգեցցին։ Խնդրեսցուք ի Տեառնէ զի ընդ հաւատոցս և վարս արժանաւորս շնորհեսցէ մեզ, զի ի նորա փառս կեցցուք, և մի աստեաւքս վրիպիցեմք յաւիտենական հանգստեանցն, զորս պատրաստեալ է ընդրելոց իւրոց, այլ բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին եղիցուք նմանողք այնոցիկ որք հաւատովք և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն Աստուծոյ։

Նմա փառք ամենատեառն որ վասն մերոյ փրկութեան մարդացաւ և մարդակերպ շրջեցաւ, եկեր իբրև զմեզ և արբ, տանջեցաւ, չարչարեցաւ, խաչեցաւ, բևեռեցաւ, սպանաւ, թաղեցաւ, կենդանացաւ, յարեաւ և վերացաւ, և նստաւ ընդ աջմէ Հաւր ծնաւղին իւրոյ։ Եւ Հայր կենդանացոյց զամենեսին որ ի նա հաւատացին, և հաղորդեցան աստուածեղէն փառացն, և նորոգեցան ի փառս անապականս։ Եւ իշխանութիւն ետ որդիս Աստուծոյ լինել, և եցոյց նոցա Հայր շնորհաց զծնաւղն իւր, և հրաման ետ մեզ կոչել Հայր զԱստուած։

Արդ ճշմարիտ Որդւոյն Աստուծոյ եղբարք անուանեալ, զորս առեալ Որդւոյ առ Հայր մատուսցէ, եթէ՝ Ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Հայր։ Եւ դարձեալ ասէ, Պատմեցի զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցեաց աւրհնեցից զքեզ։ Որպէս վասն բարիոք դաւանութեանն Պետրոս՝ զՔրիստոսն Որդի Աստուծոյ ծանուցեալ, ըստ որում և զերանութեանն անուն ժառանգեաց. և թէ՝ Դու ես վէմ, և ի վերայ այդր

վիմի շինեցիս վեկեղեցի իմ, և դրունք դժոխոց չնա մի՛ յաղ-թահարեսցեն։ Ընդ նմին և տուան նմա փականք արքայութեան երկնից, կապել և արձակելն յերկինս և յերկրի։ Որոյ եղերուքն դուք որդիք և ժառանգաւոր նորին ամենոցդ, ուղիղ հաւատով և բարիոք խոստովանութեամբ. Կամրիշոյ մետրապոլիտ, Պաւղոս Արուաստայ եպիսկոպոս, Գաբրիէլ Տաճկայ եպիսկոպոս, Յովհան Հերթայ եպիսկոպոս, Սիմոն Նինուէի եպիսկոպոս, Սաբաիսոյ Կոհոնի հորական եպիսկոպոս, Գաբրիէլ Քարմայ եպիս-կոպոս, Բենիամին Մնգրի եպիսկոպոս, Ստեփանոս Արզն եպիս-կոպոս։ Եւ այլ բազում եպիսկոպոսք, եպիսկոպոսակցաւք և սարկաւագաւք և ուխտիւ սրբոյ եկեղեցւոյ, որ խնդրեցէք ըս-հաւատ Քրիստոսասէր Հայոց որք ի դրան արքունի հասեալ կային։

Ի խնդրոյ ձերմէ, հրամանաւ տերանց, ես Կումիտաս Մա-միկոնիս եպիսկոպոս, որ յաջորդեցայ ի կաթուղիկոսութիւն Հայոց Մեծաց, ետու զյետկարս զայս բոլորով սրտիւ և ան-երկբայելի հաւատով, առաջի նախարարաց Հայոց և այլազգաց ազգաց քրիստոնէից, որք ի դրան արքունի հասեալ կային։ Մա-նաւանդ առաջի մեծի տանուտեառն Խոսրովշնուամ կոչեցելոյ, որոյ ճանաչիւր անուն Սմբատ՝ յազգէ Բագրատունեաց, շինեալ՝ ես և իմս հաւատացեալ հաւատ, ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. և սրբոյ Գրիգորի՝ կենդանի մարտիրոսին Քրիս-տոսի, և որք ըստ նմանէ սուրբ Հարքն։ Որով և մեք ոչ խո-տորեսցուք քան զասացեալ հաւատս զսուրբ և զաստուածաշունչ հարցն, ո՛չ յաջ, և ոչ յահեակ։ Զճշմարիտ գովելին Աստուծոյ միայն վայել է ասել, և որոց յայտն է սուրբ հարանցս, մարդ-կան՝ այլազգ զողել բանիւք անբաւ լայնութեան ծովու յիմաս-տութենէ։ Սակայն ի մեզ մին և եթ պահեսցի զգուշութեամբ, ուղիղ հաւատով և առաքինիասէր գործովք հասանել ի նաւա-հանգիստն խաղաղութեան երկնից արքայութեանն, անշարժ կալ ի հնազանդութեան Հաւրն հաւատոց, և կամարար մարմ-նականաց, և ձայնակցելով մեզ ուղիղ հաւատով, մի հաւատ լի-սուք Քաջ Հովուին, և կամ որդիք ըստ աւետարանին բանի, զի յերևել ճշմարիտ Հովուապետին արժանի եղիցուք ընդու-նել զմեզ յաւիթևանս և առնուլ զանթառամ փառաց զպսակն։ Միասնական և սուրբ երրորդութեանն փա՜ռք յանարժան բե-բանոյս, ամէն։

Digitized by Google

Աւրինակ գրոցս՝ որ լեալ էր Տէր Գրիգորիսի Վկայասիրին՝ մինչև ցայս վայր էր. և նա այսպէս էր գրեալ. Զվահրամ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, յիշեսջիք յաղաւթս ձեր, ո՞վ երջանիկ դասք ուղղափառաց խմբիցդ Ագքանազեան սեռի։ Շիէ. թուական։

ԶՏեղապարտս, և զանարժէսս գրող լուսաւոր սուրբ պատիս, զթուամս անարժան փահանայ, և զքնաւանն ի՛ և զամենայն աղգապահին զկենդանիս և զհանգուցեալսն, յիշեցէք ի սուրբ աղաւնս յէր, ո՞վ սուրբ ընկերյոդք։

Digitized by Google

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍԱԿՍ ԺՈՂՈՎՈՑ ՈՐ ԵՂԵՆ Ի ՀԱՅՔ

Առաջին ժողով արար երանելի Հայրապետն մեր սուրբն Գրիգոր, ի քսաներորդ ամի կաթուղիկոսութեանն իւրում, և յերեսուն և եւթն ամի թագաւորութեանն Տրդատայ. ի թագաւորանոցն քաղաքն յարքայութեանն Հայոց. յորժամ եկն Ուստակէս ի Նիկիայ սուրբ ժողովոյն, ընդունելով ընդ ինքեան ոգիր կանոնաց թուեալ միահամար կարգաւ տունս ԾԱ, յորս նայեցեալ սուրբն Գրիգորի սուղ ինչ յաւելումն արարեալ յեղեալ կանոնսն սուրբ հայրապետացն՝ որք ի Նիկիայն ժամանեալ ժողով։

Երկրորդ ժողով արար սուրբն Ներսէս, յորժամ դարձաւ ի Կոստանդնուպալսի ժողովոյն ՃԾ. սուրբ հարցն որք անդ գումարեցան ի կործանումն Մակեդոնի։

Երրորդ ժողով՝ արար սուրբն Սահակ և երանելին Մեսրոպ յԱշտիշատ, յորժամ հասին թուղթքն ի Կիւրղէ և ի Պրոկղէ որ յԵփեսոս երկու հարիւրքն հաւանեալ եղեն, յորժամ ոգեաւոր ի բարձունսն կարգեցին, յաճախելով ի բանս հովուացն, պարսպելով ընդդէմ Նեստորի անիծելոյ։

Չորրորդ ժողով արար Յովսեփ աշակերտ Մաշտոցի և սրբոյն Սահակայ նորին տեղապահի ի Շահապուվանի ի Զ ամի իշխանութեանն Յակերտի, վասն կարգաւորութեան եկեղեցւոյ, ուր ժողովեցան եպիսկոպոսք Խ. և երիցունք բազումք և կանոնս յաւրինեցին սահմանեալ կարգաւ բանս քսան։

Հինգերորդ ժողով՝ արար Բաբգէն ի Քաղաքուդաշտի, ի յԸԺ.երորդ ամի թագաւորութեանն Կաւատայ արքայի, յաղագս չար հերձուածոյն Ակակայ և Բարսումայի, որք պեղծ աղանդաւն վարժեալ անիծեալ աթոռն Նեստորի, ջանային շինջուցանել գուղղափառ հաւատս կողմանց արևելից, և տնկել

զժանդացեալ որոմն զաղջին վնասակարի Նեստորի անիծելոյ։ Վասն որոյ զիր արարեալ Տէր Իարգէն, սահման կապելով, թէ իւ պատրեալ խարեսցեն զձեզ բանք դոցա, քանզի մեք Հայք և Հոռոմք, Վիրք և Աղուանք մի խոստովանութեամբ եմք հաստատեալ ճշմարիտ հաւատով ի լաւ անդր, զոր աւանդեցին մեզ սուրբ Հարքն յերիս ժողովսն, ոչ ընդունիմք զպղծիսի բանս հայհոյութեան. այլ նզովեմք միարան զնմանիս նորա. և եւ մանաւանդ որք կցորդին զկնի պիղծ աղանդոյն նոցա. նըզովեալ եղիցին, և ի սուրբ եկեղեցւոյ արտաքս մերժեսցին։

Ի սկզբան թուականութեանս Հայոց, Վեցերորդ ժողով արար Տէր Ներսէս ի Դունի. ի չորրորդ ամի կաթուղիկոսութեան իւրոյ, և ի ԻԹ. ամի թագաւորութեանն Խոսրովու արքային Պարսից. և ի ԾԻ ամի Յուստինոսի կայսեր։ Զայս ժողով արար Տէր Ներսէս, հակառակ ժողովոյն Քաղկեդոնի. վասն զի էր ախտ պղտորման խոստովանութեան Քաղկեդոնի յաճախապէս յաւելեալ եւ բան զեւս յոյժ յոյժ երկարնակ հաւատն, և սկզբնաւորեալ Տէր Ներսէս սահմանադրութիւնս վճիռ տալով, և եղեալ միաւորութիւն խոստովանութեան. հաստատելով նախ և առաջին զծննդեանն և զմկրտութեանն միաւորելով յոյժ ստիպմամբ հաստատութեամբ անխզելի, և անորոշաբար կանոնաւ վասն երկուց բնութեանցն միաւորելով զմիութիւն ունելով սրբեցին դարձեալ զխաչեցարն յերիս սրբասացութիւնս, ընդդէմ բաժանման նոցա վասն Քրիստոսի միաւորեալ բնութեանցն, զի թէպէտ և տեսաք զնա մարդացեալ, այլ Աստուած էր, թէպէտ և ի տկարութիւն կամաւորարար խոնարհեցաւ, այլ հզաւր էր. թէպէտ զմահ ճաշակեաց կամաւորարար, այլ անմահ էր։ Իսկ յետ ժամանակաց ինչ առ թագաւորութեամբն Հերակլի, որ թագաւորեաց Հոռոմոց ամս ԼԱ. առ սովաւ առաւ աստուածաշէն քաղաքն Երուսաղէմ, և սուրբ Խաչն գերեցաւ ի Պարսից թագաւորէն։ Սա ի ԾԵ, ամի թագաւորութեանն իւրոյ սպան զԽոսրով արքայն Պարսից, և դարձոյց զսուրբ Խաչն. իսկ ապա զկնի ԼԾ. ամի արաւ ժողով ի Կարնոյ քաղաքի, յաճախաղոյն իմաստասիրաւբն Յունաց. Ածէ և զքաղցումս ի հայրապետացն Հայոց հաւանել երկարնակ խոստովանութեանն նոցա, և զԵզր՝ Հայոց կաթուղիկոս հաստատեն, և զսուրբ ժողովն որ ի Դունի, նզովիւք չարի ի բաց մերժեն, և զմիաւորութիւն Ծննդեանն և զՄկրտութեանն՝ և

վեհաչեցարն յերիս սրբասացութեանցն ի բաց մերժեցին. և հաւանեալ լինէր Եկր կաթուղիկոս, վասն նորընկալ իշխանութեանն իւրոյ, և ժառանգելոյ զաթոռ հայրապետութեանն մինչև ցեղիպ, որ եկաց ամս ԺԴ. Սոքա հնազանդեալք խոստովանութեանն քաղկեդոնի անիծելոյ և ոչ ընկալան զսուրբ ժողովն Դունի, զաւանդեալն ի Տէր Ներսէսէ և ի Պետրոսէ քերդողէ Սիւնեաց եպիսկոպոսէ, որ զմիաւորութիւն ճառեալ աւանդեցին Հայաստանեայցս ամենեցուն. զոր ընկալան Հայրապետքն որ զկնի յառաջ քան զսոսա յաջորդեալ էին յաթոռ հայրապետութեան սրբոյն Գրիգորի, որ են այսոքիկ. Առաջինն Տէր Ներսէս՝ ամս Թ. առ որով ժողովն Դունի եղև. և Տէր Յովհաննէս ամս ԺԵ. և Տէր Մովսէս՝ ամս Լ. և Տէր Աբրահամ՝ ամս ԻԳ. և Տէր Կոմիտաս՝ ամս Ը. և Տէր Քրիստափոր՝ ամս Բ. Այսոքիկ են կաթուղիկոսք Հայոց, խոստովանութեամբ սուրբ ժողովոյն Դունի. որք են կարգեալ մինչև ցեղր կաթուղիկոս քաղկեդոնիկ, զոր ոչ ընդունի սուրբ եկեղեցի. վասն զի այս Եղր ընկալաւ զհայրապետութիւնն հրամանաւ Հերակղի թագաւորին Հոռոմոց, և ընդդէմ եղև սուրբ ժողովոյն Հայոց, վասն զի հաւանեալ ընկալաւ զժողովն քաղկեդոնի, և բաժանեաց ի միմեանց զմիաւորեալ Ծնունդն և զՄկրտութիւնն, և զվեհաչեցարն յերիս սրբասացութեանցն որոշեաց, և զկնի նորա կաթուղիկոսք Զ. կարգեալք մինչև ցեղիպ՝ որ էր աւանդութեամբ նոցա.

Արդ՝ զկնի Տեառն Եղիպի ի տուչութենէ ամենախնամ շնորհաց սուրբ Հոգւոյն, պարգևեալ ընձեռեցաւ աթոռ հայրապետութեան Սրբոյն Գրիգորի, ինձ Յովհաննիսի ներգևեալ տարապատկան փանաքէի, մեղաւոր և անարժան ծառայի Քրիստոսի Աստուծոյ, և ձեռնտու եղև ինձ շնորհք կամաց բարձրելոյն. ոչ ըստ իմոյ անարժան տկարութեանս ըստ դուշնաքեաց մեղսամակարդութեանս, ի յաստեաց աթոռոյ երիկեան վայրահայեաց բնութեանս, այլ ըստ իւր ամենակարող զաւրութեանն առաջնորդ եղև մեզ ամենատէրն մեր Քրիստոս ըստ շնորհի *) սուրբ կամաց իւրոց, և զայր հասանէր մեզ ի թիկունս հանդերձ Հարբ և Հոգւով սրբով, առ ի զաւրացուցանել զմեզ առնել սիւնհոդոս հաւատոյ ճշմարիտ ուղղափառութեամբ խոստո-

*) Ցոր. շնորհիւ.

վանել մեզ զսուրբ աւանդ միացեալ բնութեան բանին Աստուծոյ, միութիւն խոստովանելով, և ոչ երկու բնութիւնս, լինել մեզ վրէժխնդիր առաջնոյն որ նախ քան զմեզ հաստատեալ էին ի սուրբ հաւատ միութեան անապականաբար, ի ձեռն Տեառն Ներսէսի որ ի Դուին հաւաքեալք ընդ ձեռամբ նորա, և ջատագով լինել իւոյ անարժանութեանս առ ի խնդրել զվրէժ պարտուց հատուցման երկրնակ խոստովանութեանն Եզրի, որ քաղկեդոնական սխտիւն զմայրեալ կործանեցաւ յուղղափառ հաւատոյ սուրբ ժողովոյն Դունի, և վասն աթոռընկալ տէրութեան իւրոյ հրապուրեաց զբաղումս զկնի իւր, և առ զաթոռ տէրութեան իւրոյ ի ժողովոյն Կարնոյ ի թագաւորէն Հերակղէ, որ տիրելով թագաւորեաց Հայոց և Հոռոմոց, վասն զի սպան զԽոսրով արքայն Պարսից և երարձ զթագաւորութիւն նորա, քանզի ցայն վայր հնազանդեալ էին Հայք ընդ ձեռամբ Խոսրովու արքային Պարսից։ Իսկ նորա հաստատեալ զաթոռ հայրապետութեան Եզրի զՀայք քաղկեդոնիկ սրար, վասն զի կաթուղիկոսք յԵզրէ նստեալք մինչև ցայժմ, նոյն խոստովանութեամբ Քաղկեդոնի վարեալ լինէին առ ի յաստեայս, որ էր չար պատառումն հերձուածոց՝ զորս ոչ ընդունի սուրբ եկեղեցի, այլ նզովելով արտաքս մերժէ զշփոթ և զերկաբնակ հաւատ նոցա։ Վասն որոյ հրամայեցաք ժողով լինել ի քակումն և ի խլումն աղանդոյն Քաղկեդոնի և Եզրի և ի նորոգումն հաստատման սուրբ ժողովոյն Դունայ, որ աւանդեցաւ մեզ սուրբ և ճշմարիտ հաւատ ի ձեռն սուրբ խոստովանողացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Արդ՝ շնորհիւ կամաց բարձրելոյն և ամենաշնորհակ սիրոյ Հոգւոյն սրբոյ շնորհեցաւ ինձ Յովհաննէսի կաթուղիկոսի առնել է բրորդ ժողով ի Մանազկերտ գեաւղ ի սահմանագլուխ վիճակին Հարքայ՝ բազմաւրեայ ժամանակաւ միատեղաբ համաժողովք։ Այս եղև ի ՃՀԵ, թուականիս Հայոց։ յԷ. Տրէ ամսոյ, որոյ ժողովեալ ի մի վայր յԱպահունեաց գաւառ ի գեղն Մանազկերտ, ամենայն եպիսկոպոսաց համաբնակ խոստովանութեամբ աշխարհիս Հայոց, և առաջնորդութեամբ քաջին և իմաստասիրի առն փիլիսոփայի Գրիգորիսի Արշարունեաց քորեպիսկոպոսի, ժողովեալ Քրիստոսասէր տեարք եպիսկոպոսք, որք են այսոքիկ։ Աղրէոս Հարքայ, Թադէոս Ոստան, Սահակ Մամիկոնենից, Յեսու Բասենոյ, Սարգիս Տայոց, Թէոդորոս Բզնունեաց,

Digitized by Google

Գրիգորէս քորեպիսկոպոս Արշարունեաց, հանդերձ ամենայն եպիսկոպոսաւք Հայոց, քահանայք և սարկաւագունք, և ուխտի մանկունք սուրբ եկեղեցւոյ, որք աւգնականութեամբ Հոգւոյն սրբոյ, ի մի վայր ղումարեալք, հաստատելով զհաւատս ուղղութեան տնաւրինական Բանին Աստուծոյ։

Եկին ընդ մեզ դարձեալ արք ոմանք եպիսկոպոսք Զ. ի Յակոբիկ տանէ, վասն միաբանութեան խոստովանութեան ընդ մեզ լինելոյ, որոց անուանքն են այսոքիկ. Առաջինն Կոստանդին եպիսկոպոս, Երկրորդն Մետրապաւլիտ Ուռհայ քաղաքի, Երրորդն՝ Շմաւոն Խառանու եպիսկոպոս, չորրորդն Թէոդոս Գարդմանից եպիսկոպոս, հինգերորդն Տէր Ամանաս Նփրկերտոյ եպիսկոպոս, վեցերորդն Թէոդորոս Ամասիա *) եպիսկոպոս։ Սորա ամենեքեան հրամանաւ արքեպիսկոպոսին Անտիոքայ եկաւորեալ եղեն առ մեզ ի միաբանեալ ժողովն, և միաբանեալք ընդ միմեանս հաւատով զմիութիւն խոստովանելով, կարդեցաք ճառս բաղումս հակառակ երկաբնակացն Քաղկեդոնի, և խրեցաք զբոլոր ապականութեան, որ սփռեալ էր յԵդեսիայ ցայս վայր տարածեալ, վասն որոյ բաղումք կործանեցան յերկրնակ հաւատն, և մերժեցաք զախտ ժողովոյն Քաղկեդոնի, և որք անկեալն էին ընդ խոստովանութեամբ նոցա, զայնս ևս յուղղութիւն ածելով, շինելով յայսմհետէ և յաւիտեանս ժամանակաց, զի այլ մի ևս կարասցեն հակառակել խախտել զուղղութեան զիր խոստովանութեանն որ ի Քրիստոս։

Վասն զի խոստովանիմք մի բնութիւն Բանին և մարմնոյն Աստուած կատարեալ և մարդ կատարեալ, և միաւորեալ անբաժանարար յստակ միացեալ բնութեամբ և անշփոթ միութեամբ՝ անսկզբանն ընդ սկզբանն, Բանն ընդ մարմնին, ըստ այնմ եթէ՝ Իսկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն։ Բանն մարմին եղև, և բնակեաց ի մեզ, և ինքն Որդին ասէ, Ոչ որ ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ որ էն յերկինս։ Եւ Լուսաւորիչն մեր մեկնէ ասելով, Տեսանեմ իջեալն յերկիրս, և էն յերկինս, այս է առ ի զմարդն աստուածացուցանելոյ, զոր և ասէ իսկ դարձեալ, թէ՝ Տեսանիցէք զՈրդի մարդոյ զի ելանիցէ, ուր էր զառաջինն, այսինքն զմարդն աստուածացուցանել կոչէ, և մի բնութեամբ հանգոյն Հաւր ի ծոց

*) Ամասիա յոր.

էութեանն գերազանցէ զմարդկային բնութիւնս։ Ահա ճշմարիտ մի բնութիւն աստուածութեան և մարդկութեանն, զոր և ասէ Յովհաննէս. եթէ՝ ԶԱստուած ոչ ոք ետես երբեք, բայց Միածին Որդին՝ որ ի ծոց Հաւր, նա պատմեաց մեզ։ Այս է ելանելն ուր էր զառաջինն, և յառաջ քան զարև անուն նորա. վասն զի արդանդ և ծոց ասի ինքնին էութիւն Հաւր, զոր և Տէր, Աստուածորդին մեկնեալ ուսուցանէ մեզ, վասն երկուց բնութեանց միաւորութեան, որով յոյժ վստահացեալ առաւելապէս խոստովանիմք անորոշաբար միութիւն աստուածութեանն և մարդկութեանն ըստ վարդապետութեանն իւրում։ Իսկ Աստուած Բանն յասելն՝ Ոչ ոք ել յերկինս եթէ ոչ, որ էջն յերկնից որդի մարդոյ որ էն յերկինս, և՝ Որպէս Մովսէս բարձրացոյց զաւձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ. ահա որդին մարդոյ այս է. աղէ՞ նայեա թէ զինչ մեկնեալ դաստիարակէ իմեալ որդին մարդոյ։ Վերագոյն որդի մարդոյ ասէ. իսկ ի ներքսագոյն ճառեալ՝ Աստուած միացեալ ի մարմնի և որդի Աստուծոյ։ Քանզի ասէ թէ, Այնչափ սիրեաց Աստուած զաշխարհս մինչև զՈրդին իւր Միածին ետ. ահա մեկնեաց զորդին մարդոյ, որ է մարդ և Աստուած ճշմարիտ, մի բնութեամբ, և՝ Որ հաւատայ ի նա ընդունի զկեանսն յաւիտենից։ Արդ՝ աղէ՞ նայեա և միտ դիր, վերագոյնն ասէ, Ոչ ոք ել յերկինս՝ եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ որ էն յերկինս, և ի բացուստ ի ներքսագոյն ասէ տեսանիցէք զորդի մարդոյ զի ելանիցէ, ուր էր զառաջինն։ Ահա ամփոփեաց միայոյց զԱստուածութիւնն և զմարդկութիւնն, և ընկղմեաց զմերայինս, խառնեաց յիւր Աստուածութիւնն, վասն զի անբակեցաւ ի մարմնի բնութեամբ և մեկնեալ պարզեաց ի մեզ զյստակութիւն միացեալ բնութեանն։ Քանզի միութեամբ աստուածացոյց յասելն այսպէս, եթէ Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ աւգնէ, և դարձեալ թէ՝ Բանն զոր խաւսեցայ ընդ ձեզ հոգի է և կեանք. և այլ վերագոյն ասէ. Հոգի է Աստուած, և երկրպագուայ նորա պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկրպագանելը Ահաւասիկ բան, և հոգի, և կեանք, և մարդ, և որդի մարդոյ միացեալ՝ Աստուած ճշմարիտ ուսուցանելով մեզ. քանզի ասէ դարձեալ եթէ՝ Ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ, զի զոր նոյն առնէ, զնոյն և Որդի նմին նման գործէ. և դարձեալ թէ՝ Որպէս Հայր յարուցանէ զմե-

Digitized by Google

ռեայս և կենդանի առնէ, նոյնպէս և Որդին զորս կամի կեն-
դանի առնէ. և Որ կրանն իմ լսէ և հաւատայ այնմ որ առա-
քեացն զիս, և որ ի կարգին է, և դարձեալ թէ, արդարև ասեմ
ձեզ, զի գայ ժամանակ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լուի-
ցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ, և որ ի կարգին է և որոշէ ի
կողմանս երկուս, յարութիւն կենաց և տանջանս դատաստանի։
Ահա պատշաճապէս դաստիարակեալ ճշմարտեաց զմիութիւն
բնութեանցն, ասելով որդի մարդոյ վերագոյնն, և ընդ Հաւր
համեմատեալ, միաւորէ յասելն, Տեսանիցէ զՀայրն զի առնէ և
ի ներբսագոյն դարձեալ թէ՝ Յորժամ մեռեալք լուիցեն ձայնի
Որդւոյն Աստուծոյ, մեկնեաց ճշմարիտ զորդի ի մարդոյ, Որդի
Աստուծոյ կատարեալ և դարձեալ անդրէն վերստին հաստա-
տեաց միաւորելով զաստուածութիւնն և զմարդկութիւնն. քան-
զի ասաց դարձեալ թէ՝ Որդի մարդոյ է, ընդ այն զի զար-
մանայր։ Ասաց եթէ Որդի Աստուծոյ է և Աստուած բովանդակ
և ամենայնի ստացող և արարիչ, քանզի ինքն իսկ ասաց եթէ
Ես եմ յարութիւն և կեանք. և Յովհաննէս ասէ, թէ՝ Սա է
Աստուած ճշմարիտ և կեանք յաւիտենականք, և ի կաթուղի-
կէական ի Յուդայեան թղթին ասէ, Միայն Աստուծոյ և Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի վայելէ փառք յաւիտեանս ամէն. և
Պաւղոս ի Գալատացւոց թղթին ասէ ի սկզբանն թէ՝ Պաւղոս
առաքեալ ոչ ի մարդկանէ, և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի և ի ներբսագոյն ասէ, Զուցանեմ ձեզ եղ-
բարք զաւետարանն, զի ես ոչ ի մարդոյ առի և ոչ ուսայ յու-
մեքէ, այլ ի Քրիստոսէ Յիսուսէ և ի Հռովմայական թղթին
ասէ, Ըստ մարմնոյ՝ որ է ի վերայ ամենայնի Աստուած աւրհ-
նեալ յաւիտեանս։ Այս է ճշմարիտ միութիւն Աստուածութեան
և մարդկութեան անբարժանաբար, և ոչ երկութիւն բարժա-
նարար հակառակ ի միմեանս, որոշելով զախտականն յանախտա-
կանէն ըստ անչատման ի միմեանս չար աղանդոյն Քաղկեդոնի,
որ զՍերբորդութիւնն դաւանեալ չորրորդութիւն խոստովանին
ըստ անիծեալ տումարին Լևոնի, և Բ. բնութիւնս խոստովա-
նեալ ասեն, այլ որ յԱստուծոյ և այլ որ ի Մարիամայ, այլ
աստուածութիւնն, և այլ մարդկութիւնն, յատուկք և գանա-
զանք ի միմեանց։ Վասն որոյ նկովեալ խոստովանութիւնն ին-
քեամբք հանդերձ։

Իսկ մեք խոստովանիմք զմարմինն զախտական և զցանկա-

կան, զմեռոտ և զմաշական բնութիւնս մեր, խառնեալ զանախտականն ընդ ախտականիս և արարեալ անախտական, անմեռն ընդ մեռոտս և արարեալ զմեռոտն՝ անմեռ. միաւորեալ Աստուած բանն ընդ մարդկութեանս անախտարար, և անորիշ միշտ Աստուած և մարդ, և ոչ երկուութիւն, այլ միութիւն հանապազորդ։ Այսպէս գրաւեալք եղիցուք խոստովանութեամբ, և կարգեալ դիցուք ճառս յաճախս և առաւելս ըստ կարգի խոստովանութեանս մերում, զոր ես Յովհաննէս Հայոց հայրապետս կարգեցի ձեզ կէտ սահմանագրութեան, միութիւն խոստովանելով աստուածութեանն և մարդկութեան անապականաբար, վասն որոյ բարիընկալ հաճութեամբ զայս խոստովանութիւն ընկալեալ հաճեցան հայրապետքն Ասորոց, և ընկալեալ ողջոյն գնացին խաղաղութեամբ յաշխարհն իւրեանց, փառաւորելով զԱստուած յաւիտեանս ամէն։

Արդ կէտ եղեալ սահման կարգեսցուք մերովք հաւատովքս ակիզբն առեալ, քակելով զապականութիւն խորհրդոյ բնութեանց, որով փրկագործութիւնս կատարի, այսինքն է մարմնոյ և արեան Տեառն, և քակեսցուք այսպէս զապականացուն յանապականէն, զմահ և զչուր յայսմհետէ արտաքս ընկեսցուք, ի սուրբ և ի կենսատու խորհրդոյն, զի մի յայս նայելով առաջնորդացն որք դայցեն կենի մեր, դարձեալ ապականութեամբն խոտորեսցին անկանել յերկրաբնակն Քաղկեդոնի, և այսու խոտորեցուցեն զվիճակս Հայոց, որպէս երբեմն ի ձեռն Եզրի սփռեալ տարածեցաւ, զոր Տէր Հրամայեաց մեզ քակել զորոմն բարկութեան նորին անբարժանելի և անորոշ յաւրինելով, յանկ հաստատելով, և խորհիմն հաստատակ լայնապարիսպ ամրափակեալ քառանաւրեայ պահաւք. Ե. աւրեայ առաջաւորաւրն։ Եւ զշաբաթ և զկիրակէ որոշեսցուք յուրախութիւն ճաշակման գաւշտացն, զի թերևս հնարեսցին ի հնարանութիւն խոստովանութեան մերոյ, զի այսու ածցուք զբռամբ զարտաբինն և զանհաւան ազգս մեր։

Դարձեալ յաւրինաւոր սուրբ Զատկին ի մեծի Հինգշաբաթոջն, ոչ հրամայեմք հաղորդել ժողովրդեան մարմնոյ և արեան Տեառն, զի մի քաղկեդոնական ախտիւն շաղախեալ կործանեսցին յուղիղ հաւատոց անտի, զի պէսպէս ախտիւք խածեալք այսոցն չարէ, և մի՝ անմաքրապէս հպեալք մերձեսցին ի մարմինն Տեառն, ոչ խոստովանեալք զյանցանս անձանց իւրեանց,

երախայապէս առեալ զմարմին որդւոյն Աստուծոյ հաղորդիցին անմահաբուր, սատանայապատիր և որովայնամոլ ըստ քաղկեդոնական հաւատոյ, որք ասեն, սուրբ մարմինն մերձենալով ի շրթունս մեր, մերժէ զանարէնութիւնս մեր։ Եւ մանաւանդ զճաշակս իմն կերակրոց անխտրապէս զկնի հաղորդելոյ նոցա ի մարմնոյ և յարենէ Տեառն, և ապականեցին զլեռվին զամենայն պահս քառասնորդացն։ Եւ դարձեալ զի մի խափան լիցի ալատութիւն Զատկին, այսինքն աւր աւետաբեր յարութեանն, յորում պատմի զենումն զառինն անարատի եռաւրեայ յարութեամբն, զի ի մեծ հինգշաբաթին Նուիրի մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ մեզ ի փրկագործութիւն, և տպաւորէ զպատկեր հացին ինքեամբ, և անուանէ զնա հաց կենաց, և կոչէ մարմին իւր և արիւն, և իւր ընտրելոցն տայ զինքն կերակուր, և աշակերտաւրն մեզ պատմիչ լինի և առ յապա աւրինակ և հընոյն կատարումն, և նորոյս սկիզբն, պատուիրէ երկոտասանիցն ասելով. զայս արարէք առ իմոյ յիշատակի. և յաւրհնելն ճաշակէ ինքն Աստուածորդին, և ինքեամբ կերակրէ զերջանիկ աշակերտսն, և մատնչին առեալ արտաքս ելանէ։ Ի դարձողաց հաւատացեալ ժողովրդոց որ ի Տէր Յիսուս Քրիստոս, ոչ հպեալ յայս խորհուրդ կենաց առ ի ճաշակել, և ոչ ի լուր պատմութեան երախայիցն խորհրդոյ, ուրուք ի գրեհականացն հասեալ և հասու եղեալ այսմ խորհրդոյ մեծի Զատկին։ Յայս աւրինակ և մեք տրոհեալ որոշեմք զժողովուրդն ի սուրբ խորհրդոյ մեծի հինգշաբաթին, զչ թէպէտ և փրկագործութեան կատարի խորհուրդն, այլ ալատութիւն երախայիցն չև ևս է կատարեալ. բայց ի թարգմանութեան նստելով քահանայիցն պատմիչ լինելով ժողովրդեանն, և հրաւիրելոցն կալատութիւն խոստանալով, իբրև Աստուածորդին իւրայոցն, նոյնպէս և քահանայն իւրոյ հաւատին։ Եւ դարձեալ ևս, զի թիւ պահոց պասեքին չև ևս կատարեալ, և յուծումն ալատութեան չև ևս եղեալ է ի ծառայութենէ մեղսածին ախտիցն, յորում լինի թողութիւն ծառայից, գեղից և պարտուց, զի Տէր մեր Յիսուս Քրիստոս չև ևս խաչեալ և զմահ լուծեալ և անարգեալ, և ոչ ի գերեզմանի եղեալ, և ոչ եռաւրեայ զյարութիւնն ի մեզ ցուցեալ, և ոչ կաւետիս յարութեանն ընկալեալ ուրուք յումեքէ. զայս ամենայն ի հինգշաբաթոջն ոչ զտանեմք այսպէս եղեալ, այլ ասեմք ի Տեառնէ պատմիչ լինելով դեռ զկնի այնր ամենայնի, և ի հին

Զատկին գիրկագործ խորհուրդն կատարեմք, և մեք Քրիստոսի մարմնովն սպասաւորեալք յաւրինակ Տեառն մերոյ Փրկչին իւրով աշակերտաւքն, որպէս և այժմ վերադիտողին միայն հրամայեմք քահանայիւք հաղորդել ահաւոր խորհրդոյն և գոռհիկան արտաքս ելանել։

Նա և ոչ գոք ի դպրաց կամ ի մանկանց ուսումնասիրաց հրամայեմք կալ յեկեղեցւոյ սակս վկայութիւն տալոյ, զի զատեալ որոշեսցուք ամենայն կարգաւք յերկարնակ աղանդոյն Քաղկեդոնի։ Քանզի նոքա անխտրապէս և անխոստովանաբար ոչ լեալ մաքուր. մերձենան յահաւոր խորհուրդն, իբրև ոչինչ համարելով, համարձակութիւն ետուն և մերոյ վիճակիս յոր սոսկալի և ահաւոր է մատչել երախայից, զի այսպէսն ոչ է բաժակ անմահութեան, այլ բաժակ այրման։ Իսկ մեք նախ քան զսոսկալի խորհուրդն, երախայիցն պարգևս շնորհեմք, և զպատուիրան խոստանամք, մուծանեմք ընդ դուռն արքունական պողոտային, և հրաւիրեմք յառագաստն լուսոյ ասելով, Այդ դուռն Տեառն է, և արդարք մտանեն ընդ սա. և յայնմ աւուր խորհրդոյ մարմնոյ և արեան Տեառն սրբոյեալ պատրուակեմք զնոսա, և զերախայս զգուշացուցանեմք հրաժարելով ի նոցանէ, և ի խոստովանութիւն ուղղութեանց մերոց վերարերիլ վարժիմք, և զերախայս և զպասքեալ սիրտս նոցա զովացուցեալս սփոփեմք. և նուիրեալ հրաւիրեմք զնոսա յուրախութեանն աւուր աւետեաց, և զպատուիրան կենացն անվախճանից, որ է նոր արքայութեան սկիզբն, և տեսչութիւն էական փառացն և նկարագիր լուսոյն յաւիտենից, յորում ապատեալքն փրկագործեալ ցնծան։ Անդանաւր աւարտումն յորեղինին, և ապատութիւն ծառայից, զիւղից, և պարտուց, իսկ աստ ազատութիւն երախայից, մերձումն ի սուրբ առագաստ, և հաղորդել ճաշակման ահաւոր խորհրդոյն, և բայմել յերկնաւոր փեսային հարսանիսն, և երանաւետեալք ի փառս Աստուծոյ։ Արդ՝ այս աւուր յարութեան ճաշակի, զառն զենեալ, որ է նոր զատիկ աւետեաց յարութեան համասփռական, տիեզերատարած և լուսաստիւռ, հրեշտակաբարոյ և առաքելաբարբառ պատմի աւետաբեր երբաւրեայ յարութիւնն։ Ատանաւր արձակումն կապելոց ոգւոց ի յանդրնդական բանդէն, և ուրախացեալք յանմահական ճաշական հոգևոր կերակրոց հանդերձ մարմնովն, Տէր մեր Յիսուս Քրիստոս ինքն մեր ճաշ կէ զմ քրե լսն Հ նդիպմամբ ի

մարմնի. և արբեալք լինէին յուրախութեան լուսոյ անմահ բաժակին և լցեալ լինէին անսպառ փառաւք կենաց անմահ աստեղին, զի ի հանդէպ արարչին սուրբ հոգւոյն, որք յԱդամայն ի փառս Աստուածորդւոյն ճաշակեալք լինէին, և անպրաւական կենացն հանդիպեալք մնային, դասագրեալք ընդ անմարմնոցն երամս, և ապատեալք ի վերինն Երուսաղէմ։ Սոյնպէս և երախայքն զայս աւրինակ դնելով, զի որպէս ոգւոյն հանդիպեալ մարմնացեալ Բանին անճառ փառաւք ճաշակեալ եղեն և ապատեալք ի բանդէն կապանաց։ Ըստ նմին աւրինակի և երախայքն յաւուր սուրբ յարութեանն, հանդէպ սուրբ աւետեաց հրեշտակին քարոզման, և լուծման դառն դժոխոց, ի կապանաց լուծումն հրամայեմք, և ի Քրիստոս ճաշակումն հաղորդելոյ մարմնոյ և արեան փրկչին մերոյ, զի աստանաւր հանդիպելովն ի Քրիստոս բոլորովիմբ հոգիացեալ ոչ ևս կոչին երախայք, այլ հայրք աստուածարոյլք, և տունկք աստուածաղիկք, և ճրագունք յարալուցեալք, յորս Հոգին սուրբ հանապազ բուրէ ի նոսա. զի աստանաւր լուծումն երախայութեան, և մուծանիլ յերկնաւետեալ առաղաստն, և երկնաւոր փեսային փեսաւէրք, իբր տղայացեալք արդարութեամբ ի կատարեալ գութ եկեալք։ Եւ մանկունք հարսանեաց լցեալք պայծառ խորհրդովք հոգիացեալք և ի ճաշ մտեալ ընդ անմահ փեսային, ճաշակեն ի լուսոյ հարսանեային, և լինին անմահացեալք. զի այսուհետև ոչ ևս երախայացեալք, այլ քրիստոսաւետեալք, և աստուածաբարբառ կրթեալք յաւետարեր քարոզութիւնն՝ աւրհնել զեկեալ փեսայն, և առաղաստի երգել երգս, և յերգեն, աղաղակեն է այս. Աւրհնեալ որ եկիր յանուն Տեառն, աւրհնեալ որ գալոցդ ես, և Այսաւր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախասցուք ի սմա, զի և նոր արարած ի Քրիստոս կոչեցաւ։ Վասն այսորիկ ոչ հրամայեմք երախայացեալ ժողովրդոցն յաւուր մեծի հինգշաբաթոյ հաղորդել մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ, զի կարկեալ փակեսցի աղանդ երկարնակացն, և կապմիչ հաղորդելոյ ի սուրբ խորհուրդն եղիցի յաւուր յարութեանն, և աւետիր հրեշտակին, և ընթացումն կանանցն ի ցնծութիւն։

Իսկ զնուիրական աւուրսն ի սուրբ քառասնորդն կատարեալ յոբեղինին, այսինքն զշաբաթ և զկիրակէ, յուրախութիւն պայծառութեան ի կթոց կերակուրս հրամայեմք լուծանել զաւ-

շոտացն և որովայնամոլիցն, և այդու ընդդէմ հերձուածողացն ցանկս պարսպեմք և շրջափակեմք զպարսպեալ առագաստն, զի մի սպրդեալ մուծցի ի ներքս չար աղանդն հերձուածոյն Քաղկեդոնի, որ սփռեալ տարածեալ էր ընդ բոլոր Հայք, և կանոն կարգեմք այսպէս։ Զձու և զձուկն և զձէթ և զիմաստ և զկեղ և զպանիր և զդինի միաձաշակ կերակուր կարգեսցուք։ Արդ՝ եթէ ոք յայս աւրէհետէ և առ յապա ժամանակ զայս ամենայն բաժանէ ի միմեանց, նզովեալ եղիցի։ Ահաւասիկ զայս գրեցաք կանոնս. ես Յովհաննէս Հայոց կաթուղիկոս *), ամենայն եպիսկոպոսաւք և քահանայիւք, և ուխտի մանկամբք եկեղեցւոյ սրբոյ *)։ Ո՞վ անհեթեթ զգայարան. այդ իսկ Նեստորի անիծելոյ աղանդն է, զի Բարսեղ Կեսարացին զձուկն գալան ասէ, և առաքեալն վկայէ այլ մարմին է ձկանց։ Արդ առաքեալ մարմին ասէ, և հերձուածողն չուր։ Արդ՝ ի՞ իցէ չուր, զի կենդանի է, և ահա յաւդք և ոսկերք, սիրտ և աղիք և ամենայն որ ինչ կենդանւոյ է։ Ա՛ղէ ընենա խորհրդիւ ի ձկունս և ի գալանս որ ի ցամարի են, առիւծ, իւնծ, արջ, վիշապ որ է աւձ, զիրք ասեն սիկղ և հիդրայն՝ ծովայինք, սիկղն՝ շուն ասի երեքգլխի, և հիդրայն չար քան զնա. և զիւրեանց որդիսն ոչ ուտեն, իսկ ձուկն զմերձաւորս իւր ուտէ. և զիարդ իցէ չուր։ Կան և հաւք չրայինք և անասունք, և ո՞վ իցէ որ առանց չրոյ սնանի։ Եկ առ ձէթ. զիրք զեղ և զձէթ մի ասեն. Եսայի ասէ՝ Փայտ եղոյն, և Դաւիթ՝ ծերութիւն իմ ի ձէթ պարարտութեան։ Ե՛րթ առ աւետարանագիրն որ ասէ վասն կուսանաց, թէ՝ Ձէթ ոչ առին, և դարձեալ թէ՝ Տո՛ւք մեզ յեւղոյդ ձերմէ, և ահա յայտ է թէ եւղ և ձէթ մի են։ Եւ Ադամ ոչ եթէ պանիր եկեր և ել ի դրախտէն։ Գիրք ասեն թէ՝ Արբեցողն չար է քան զդիւահար և առաքեալ ասէ, Մի՛ արբենայք գինւով, յորում զեղխութիւն է. զի յորժամ կեցակուր ուտեմք և ընումք, ի նմին կամք, իսկ իրրև գինւով ընումք, զայլ խորհուրդ խորհիմք։ Եւ եթէ ոք զկիրակէ իրրև չուրբաթ պահէ անհնարին մեղք են, և որք յուրբաթու և ի չորեքշաբաթոջ յիշատակ առնեն մարտիրոսաց՝ մեղք են։ Զի եթէ կարգ էր, ապա Զատիկ յուրբաթուն պարտ էր առնել, զի Քրիստոս Աստուած մեր յուրբաթուն խաչեցաւ և ընթերցուածք և սաղ-

*) 'Ի լուսանցն.

մոսք և աւետարանք՝ այն աւուրն շատ են, և ամենայն մարդիկ յայնմ աւուր ապատեցան ի ծառայութենէ մեղաց. և դրախտն յայնմ աւուր բացաւ աւազակին, և ամենայն կարգ եկեղեցւոյ զայն ուրբաթ պահել հրամայեն. և զայլ ուրբաթսն ի Զատկէն մինչև ՅՊենտեկոստն ուտել։ Եւ որ զծնունդն յառաջ քան ըզՑայտնութիւնն առնեն, մեծ մեղք են. և յայտ յԱւետարանէ անտի է, որ ասէ, և Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս. և ի սոյն դէմս աւրինակի փակեալ կայ գիր ընթերցուածովն. զորս կարդեալ են ուղղափառացն սրբոց։ Մի՛ դիր խոստովանութեանն՝ որ նախ քան զմեզ հայրապետք։ Այս աւանդ կացցէ ի վիճակիս մերում և այս մատենագիր եղեցի ամենայն Հայաստանեայց, որք ընդ ձեռամբ մերով հաւանեալ կան ի պահեստի։

Ահաւասիկ ես Յովհաննէս Հայոց կաթուղիկոս, գրեցի իմով ձեռամբ զայս կանոնս, հաստատութեամբ սուրբ հաւատոյ, յընդունելութիւն ուղղափառաց, ի պայծառութիւն ուղղակարգ եկեղեցւոյ, յընդունելութիւն հաւատացելոց, և ի զովութիւն բարեբանութեան համագոյ Երրորդութեանն՝ ամէն։

Դարձեալ հաստատութեամբ հիմնարկելով հրաման տամ մեծի փիլիսոփայիս Արշարունեաց քորեպիսկոպոսի, զի զառաջաւորսն ընդ սուրբ պահս քառասնեկին՝ մեկնումն արասցէ, որ ախեալ կնքեցաւ ի մէջ Ն. աւրեայ առաջաւոր պահոցն, և պասեքին Բ. շաբաթս լուծեալ բարեկենդան կոչին, և անխտրաբար յամենայն կերակրոց։ Արդ՝ ձեռնարկու լեր, սիրելիդ Աստուծոյ, քաջդ յիմաստակս. և նախընդիրդ ի վարդապետս Հայոց, կարկիչդ Յունաց, և դադարեցուցիչդ աղանդոցն Քաղկեդոնի, և կորուսիչ ապականաբնակ հերձուածոցն Նեստորի անիծելոյ, բռնահարեա զկամացն Աստուծոյ իբրև հանդիսի նահատակ, կոչեա՛ քեզ ի թիկունս աւգնականութեան զվարմնացեալն ի մէջ ճշմարիտ Աստուած Յիսուս Քրիստոս, առաջնորդունելով զՀայր արարիչ և անեղ անքննին յարարածոց, որպէս զի Հոգւովն սրբով, որ է ուղղեկից, սկզբնեալ ընթերցուածոց մեկնումն արարեալ բանաստեղծեսցես, որպէս զի թարգմանեսցես զամենայն կարգ ընթերցարանիս մերոյ, մանաւանդ զխորհրդածութեան ընթերցուածսն չորից յարմարմանցն, որ զանց առնէ զպասեքիւն և սկզբնեալ առաջաւորաւն հանդերձ։ Իսկ դու ինքնին աշխատելով մատենագրեսցես, և ի լուր ականջաց բերելով տգիտաց ծանու ցես զայս իր խորհրդոյ որ զան զա-

նեալ աստուածասքանչ խորհուրդ Տեառն բարձրելոյ. և ընդ միոյ սակաւուդ՝ վարձս ընկալցիս յԱստուծոյ մերմէ. բիւրապատիկ հաղարաւորեալ, բիւրաբաշխ և մշտալցոյց. և յանվրաւորաթութեան երախտաւորեալ, ծաղկաւէտ շահաւորեալ, փառաւք վայելելով ըերկրեսջիր ի Քրիստոս Յիսուս, յահեղ փառաց յայտնութեան նորա, որում փառք յաւիտեանս ամէն։

Digitized by Google

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴՈՒԷՄ ԱՅՆՈՅԻԿ ՈՐ ԱՊԱԿԱՆԵՆ ՋՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ Ի ՁԵՌՆ ԽՄՈՐՈՑ ԵՒ ՋՐՈՑ։

Ահա յառաջագոյն ծանուցեալ առաքելոյն վաստակութիւն հերձուածոյն ի ճշմարիտ հաւատոյն, եթէ այսպէս վերորհուրդ տնաւրէնութեանն Քրիստոսի, յառաջագոյն հաստատեցին զդեղ բժշկութեան ի գիրս և ի դլուխս ընթերցարանաց, զի որք հակառակին ոչ զոյ Աստուածածին զկոյսն՝ գտանեն ի գիրս Ծննդեան և Յայտնութեանն որ նոյն ինքն է Մկրտութեանն, եթէ Ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և ծնեալն Սքանչելի՝ Աստուած՝ Հզաւր՝ Իշխան և Հայր։ Իսկ ի գիրս չարչարանաց գտանես, եթէ Աստուած էր որ չարչարեցաւ վասն փրկութեան մարդկան, զոր յայտնէ Եսայի, թէ Նա կմեղս մեր վերացոյց և վասն մեր չարչարի։ Եւ եթէ մարդոյ համարի և ոչ Աստուծոյ, որպէս սովոր են գնալ ի ճշմարտութենէն, այլ ոմն քեզ վկայէ ի գիրս չարչարանացն, եթէ՝ Եկեսցէ հացէ Տէր Աստուած մեր, և ամենայն սուրբք ընդ նմա։ Յաղագս պնորիկ անխտիր մերձենան ի մարմին և յարիւնն Տեառն, զի սոսկ մարդոյ համարեցան, և ոչ Աստուծոյ միաւորելոյ ընդ մարմնոյ, և ոչ պատկառեցան ի հրամանացն, որ Պաւղոսիւն խաւսէր ընդ հաւատացեալս թէ՝ Որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, և որ այլն։

Գտանես յսկզբանն ընթերցականացն ճառ հոգեպատումն, որք արմատաքի խլեն զհերձուածն, որ ապականացու խոստովանին զանապական մարմինն Քրիստոսի, և յաղագս պնորիկ արկանեն խմոր և ջուր զղծել և ապականել զանապական խորհուրդն, յանհետ առնել հրամայեաց նոցա. յաղագս անխմոր աւրինաց նշանակէ և զևթն աւր ճաշակել առանց խմորոյ զբա-

Digitized by Google

զարջն՝ զնոյն բերէր աւրինակ, զի խմորեալն ոչ լինի կենդանի հայ, որպէս ասայ Աստուածարան ի Զատկին Ճառի։ Իսկ յետ ելիցն յԵգիպտոսէ, յորժամ վասն այսորիկ աւրինադրէր Մովսէսի Աստուած, ոչ ապաքէն յերկնից զայր մանանայն, ուստի հրամայէր առնել զշաւթս և զնաշիխս զոհիցն և զհացն կառաջաւորութեան, որ բերէին զաւրինակս մարմնոյն Քրիստոսի, զի իւրեանց արմտիք ոչ գոյր և յաւտար աշխարհաց ոչ առնոյին զի պիղծ էր. և միւս վասն այնորիկ, զի աւրինակ էր մարմնոյն Քրիստոսի, ոչ կամէր Աստուած թէ ուտիցեն միս ընդ սուրբ հային, մինչև երթիցեն յերկիրն աւետեաց։ Եւ այս անտի յայտ է զոր ասայ Աստուած, թէ յորժամ մտանիցէք յերկիրն, եթէ ցանկանայցէք մսոյ յայնժամ կերիցիք միս. և վասն այսորիկ ասէ Դաւիթ թէ՝ Ոչ անսացին խորհրդոց նորա, այլ ցանկացան ցանկութիւն յանապատի, և բարկութիւն Աստուծոյ էջ ի վերայ նոցա, այլ զխմոր ոչ էր պարտ գտանել։ Իսկ անաւրէնք ասեն թէ յերկնից իջանէր խմորն ընդ երկնային հային, և կամ եթէ զոր ասէ Տէրն, եթէ՝ Ես եմ հայն կենաց՝ որ ի յերկնից իջի. արդեւք խմորեալ են կեանքս մեր։ Բայց մի՛ լիցի ուսումնասիրաց զմտաւ ածել գաղծապիղծ կրաւնս նոցա, թէոդ թէ գործով ի կիր արկանել։ Բայց այսու հաւանեցուցանեն զպարզամիտսն, մանաւանդ եթէ զանմիտսն այսպէս ասելով, եթէ Տէր ասայ եթէ՝ Որ ուտիցէ ի հայէս յայսմանէ, մի ճաշակեսցէ զմահ։

Եւ ասեն թէ հայ կատարեալ խմորեալն է, զայս ի մտայ ասեն և ոչ ի գրոյ։ Եւ եթէ չեն սուտ և անոտի, յուցցեն յաւրինայ կամ ի մարգարէից զաւրինակ մարմնոյն Քրիստոսի, եթէ արժան է ածել զապականեալ խմորն. այլ ոչ զգիրս գիտեն, և ոչ զզաւրութիւն գրոյ կամ թէ զոր ասայ Մովսէսիւ Աստուած, Որ ուտիցէ խմորեալ սատակեսցի, նշանակէ զյաւիտենական սատակումն, որ ճաշակեն ի սուրբ խորհրդոյն զխմորն։ Նա թէ և կամէր ոք գտանել զխմորեալն յաւուրս զատկին յԻսրայէլն՝ ոչ գտանէր, բայց միայն ի տունս հեթանոսայ։ Բայց դու նայեա և քննեա զխորհուրդ հինգշարաթին. զի նմա կատարեայ Քրիստոս, պատառելով զխմոր և զչուր, զոր վասն ապականութեան խառնեն թէ ապականացու է մարմինն Քրիստոսի և ոչ լուան մարգարէին, եթէ՝ Մարմին նորա ոչ ետես զապականութիւն, և կամ Պետրոսի եթէ՝ Զոր Աստուածն յարոյց, ոչ ետես զապականութիւն։ Այլ ոչ գիտեն մոլորեալքն եթէ զի՞նչ է ապակա-

Digitized by Google

նութիւն։ Այլ մեք ճշմարտապէս յաղագս այսորիկ իմաստասիրեսցուք յԱստուածաշունչ գրոց։

Կոչեն Աստուածաշունչ գիրք ապականացու գծառայն մեղաց. իսկ ով կարէ ասել զնմանէ թէ մեղս գործէր, որ յառաջ քան զտնաւրէնութիւնն բարոկեաց մարգարէն թէ՝ Առանց մեղաց ընթացայ, և ուղիղ է, և այլ ոմն եթէ՝ Անաւրէնութիւն ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա. և Պաւղոս ասէ զնմանէն՝ Սուրբ անմեղ, զատեալ ի մեղաւորաց, առեալ զխորհուրդս զայս և ասաց, թէ Զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Աղէ՞ ցուցցեն թէ խմորեալ էր հացն կամ ջրով խառնեալ բաժակն, այլ ոչ կարեն ցուցանել ի գրոց այլ անձնահանճար իմաստիւք իրակերպին ընդդէմ ճշմարտութեանն։ Զի փերկիչն ասէ, յետ աւրհնելոյն զբաժակն. Ոչ ևս արբիցի ի բերոյ որթոյ. ուստի յայտ է, թէ որթն զինի և ոչ ջուր ծնանի, և այս ոչ յաւրինաց և ի մարգարէից այլ Աստուածային բերանոյն աւրէնք են։ Եւ զայս ամենայն գեղեցիկ իմն յեղյեղուն, Գրիգոր Աստուածաբան և Յովհան Ոսկիբերան, որք համառաւտ բանիւք պատմեցին մեզ զառաքելական և զաւետարանական տառիցն միտս, և զայս ամենայն հաստատուն եկեղեցական կարգաց, ևս առաւել ընթերցականաց ծագեն պատմութիւնք։ Արդ՝ եթէ հաղար ինչ ճարտարեն երկարնակ աղանդոյն պաշտաւնեայքն, և բարձրացեալ քան զերկինս ամբարտաւանութեամբ. Արդ՝ եթէ ի սերմանէ էր ծնեալ Քրիստոս, ապականացու էր մարմինն. իսկ եթէ ի Հոգւոյն սրբոյ, ապա մի՛ ոք իշխեսցէ ասել ապականացու։ Բայց հացին անուամբ զարհուրեցուցանեն զպարկամիտսն, և ասեն հաց՝ կատարեալ խմորեալն է։ Սուղ ինչ և յաղագս այսորիկ ասասցուք։

Հաց անուն՝ սովորական ի խաւսից է, և հասարակ անուն ի բերանս բազմաց, այլ ոչ յատուկ ձայնի նշանակ, և զայսքան զհայարարութեան արուեստն հասկացն և շեղջիցն ի վերայ ասեմք։ Այս անուն, ասեն, հաց շատ ժողովեաց, աղէ՞ ասիցեն անաւրէնքն, եթէ հասկք և շեղջք խմորեալ է։ Իսկ մեք ի գրոց ցուցանեմք, եթէ զբաղարջն հաց կոչեն Աստուածային գիրք։ Յորժամ՝ քաղցեաւն Դաւիթ, որպէս կայ ի թագաւորական մատենին, եթէ ի պահանջելն ի քահանայիցն հաց՝ պատասխանի տուեալ ասեն, Զիր աստ հաց. բայց առաջաւորութեան հաց, ահա զբաղարջն։ հաց կոչեն Աստուածային գիրք որպէս ասացաք։

Digitized by Google

Եւ սուրբն Գրիգոր վնոյն ուսուցանէ մեզ, զի ասէ նա ուրեմն ի Հոգէապատումն վարդապետութեանն, եթէ Հայն առաջաւորութեան բերէր զաւրինակ մարմնոյն Քրիստոսի։ Տես դու և զմի պատկառելի աւրինակն. զի ի ճաշակելն նոցա ասէ քահանայն. Եթէ սուրբ իցեն ի կանանց մանկունքդ՝ մարթ է ճաշակել ի սուրբ հացէն. իսկ ի պատասխանելն եթէ Յերեկէ և յեռանղէ, ապա համարձակեցցից սուրբ հացին։ Արդ եթէ ի հնումն որ ստուերն էր հանդերձելոց բարեացս Քրիստոսի, պատկառանաւք և երկիւղիւ էր ճաշակելն, որ աւրինակ բերէր զայժմուս, եթէ արժանաւորս պարտ է կալ յհաւատ խորհրդեանն. զի՞արդ երկաբնակ աղանդոյն պաշտաւնեայքն անխտիր մերձենան. և զՈրդին Աստուծոյ առ ոտն հարկանեն, և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարելով, որով սրբեցաքն, և թշնամանեցին զշնորհաց հոգին։ Այլ ես պատկառեմ յայնմանէ որ ասացն, Իմ են վրէժխնդրութիւնք և ես հատուցից։ Վասն որոյ պատկառեսցուք ապաչեմ և մի յանարժան անձինս մատչիցիմք ճաշակել, այլ ապաշխարութեամբ մերձեսցուք ի կենդանութիւն ի Քրիստոս Յիսուս Աստուած մեր, որում փառք յաւիտեանս։

Ի տասներորդն Նիսան. արարին որդիքն Իսրայէլի զՀատիկն յԵգիպտոս, և ապա ելին յերկրէն Եգիպտացւոց, և յաւուրն չորրորդ ընդ ծովն անցին, զոր առաքեալն մկրտութիւն կոչէ, աւրն միաշաբաթ, և մանանային աւրն միաշաբաթ. որ զառաջին պատարագն որթք *) մատուցին երիտասարդքն Իսրայէլի Տեառն Աստուծոյ, զի դայնժամ չէ էր աւծեալ քահանայ.և նախանձեալ ընդ այն սատանայի՝ որթուն ետ կրկրպանել և ոչ եղիտ Ահարոն եթէ զո՞ր նման արասցէ զկուռսն. ի տագնապել զնա ժողովուրդն. Եւ իբրև ել ոսկին ի հրոյն չունէր ինչ նմանութիւն որթու. ապա կոչեաց Ահարոն բանդակիչս և ետ մաքրել զնա ճշմարիտ որթ. Արջառ և ոչխար բազում ունէր ժողովուրդն յանապատին, բայց միս ոչ ուտէին զի այնպէս աւրինադրեալ էր Աստուծոյ։ Եւ պատարագ զոր առնէին՝ հուրն ճարակէր. և յայտ անտի է զի ասայ Աստուած. Յորժամ մատնիցես յերկիրն ժառանգել, եթէ ցանկաս մոգ, յայնժամ ուտիցես միս, և զարիւն մի ուտիցես, այլ յերկիր հեղցես։ Որով յայտ է թէ յԵգիպտոս զանսուրբն անխտիր ուտէին.

*) Այսպէս յոր.

իսկ յանապատին աւրէնս ընկալան չուտել միս, վասն որոյ և մարգարէն ասէ, Ցանկացան ղյանկութիւն յանապատին։ Բայց առաջաւորութեանն բաղարջ էր որ բերէր զաւրինակ մարմնոյն Քրիստոսի, և շաւթ էր նաշիհ զոհիցն։ Խնդրելի է մեզ եթէ ցորեան է, եթէ մանանա, զի իւրեանց արմտիս ոչ զոյր և յաւուտար ազգայ չառնուին զի պիղծ էր. և զմանանայն յերկանի աղային և ի թոնրի եփէին, որ բերէր զաւրինակ մարմնոյն Քրիստոսի. զի թէ աւրինակն անխմոր էր, զի՞արդ ճշմարտութիւնն խմորեալ լինի։ Փառք Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւիտեանս։

Զմեղաւորաց գրողս զԹոմաս և զԴնուաղն իմ յիշեցէք ի Քրիստոս։

Digitized by Google

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ ՀԱՑՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Արդ՝ վասն կի ի պահոց քառասնորդն կոչի աւր Փուրբաթ՝ չարչարանք խաչելութեանն Տեառն, և առիթ կոչման չարչարելոցն յաշխարհիս, ունել յանձին զաւրինակ չարչարանացն Տեառն՝ առ ի փրկութիւն հոգւոց չարչարակցացն Տեառն, և առ ի պահպանութիւն անձանց պատուիրանապահացն Տեառնըն, առ ի լինելոյ չարչարակից խաչելութեանն Տեառն, փառակից յարութեանն, և առիթ կոչման մեղաւորացն յապաշխարութիւն։ Արդ՝ յայսմ քառասներորդի, որպէս կի աւրէն է զշաբաթ և զկիրակէն որպէս զուրբաթ և զչորեքշաբաթ պահել զհետ աւրինացն առնլոյ։ Եւ յայնմ՝ քառասներորդի որ կոչի կիւրակէն կոչի աւր առաջին, և սկիզբն աւուրց յարութեան, և ուրախութիւն աշխարհի, և աւետիք արքայութեան, լի ամենայն ուրախութեամբ անձանց պատուիրանապահացն արդարութեան. աւրէն է զուրբաթն և զչորեքշաբաթի իբրև զկիւրակէն և զշաբաթն ուտել։ Քանզի զոր աւրինակ ի զատկէն մինչև ցվերացումն կիւրակէ կոչի, այսպէս ի բարեկենդանէ մինչև ցզատիկն՝ ուրբաթ։ Արդ՝ քեզէն ած զքեզ ի հաւան, զուգեա զայս քառասուն քաւութեան և զայն քառասուն ուրախութեան։ Կշռեա զքառասուն ընդ քառանի, և զուրբաթ և զչորեքշաբաթ՝ ընդ շաբաթու և ընդ կիւրակէի. և գտանես հասարակ. ի սմա յաղումն և ուրախութիւն. և ոչ ի նմա պահք և տխրութիւն, Այս քառասուն առիթ քաւութեան մեղաց տարւոյն, և այն քառասուն յաջորդ ուրախութեանց տարւոյն։

Արդ՝ աւրէն է զայս պահոց քառասնորդս հարթիկ պահել ի բարեկենդանէն մինչև ցզատիկն. այլ գինի և իւղի, ձու, ձուկն, պանիր, կոգի, կաղտի, բաժին, շճուկ, կաթն, խեր, և ձկան մորէ, զայս բնաւ ամենևին չէ աւրէն, և ոչ վայել է ճաշակել ամենայն ումեք մեծի և փոքու, արդարոյ և մեղաւո-

Digitized by Google

բրի։ Շատ են մեզ այլ կամաքն քառասուն աւուրն, կանեփ հատ, կտաւատ, փոխինդ, հատ, սամիթաջուր։

*Արդ այսու քառասնորդաւ Տէրն ի լերինն փորձութեան տարաւ յետս զփորձիչն սատանայ, որ է աւրինակաբեր յաղթութեան ամենայն հաւատացելոց։ Միթէ Աստուծոյ պահել ինչ պիտոյ էր ոչ ապաքէն վասն աւրինակի մարդկան առնէր զայն։ Արդ եթէ զհանապազաւրն մեռանել ոչ կարեմք ըստ բանին Պաւղոսի, այլ զոնեա՛ քառասուն աւուրքքս լինել հաղորդ չարչարանացն Քրիստոսի։ Զի զբազանակեալ *) մեղք տարեալն, քառասուն աւուրքքս ընկեսցուք յանձանց։ Ոչ գիտես, զի որ միտեալ մեաւք չարչարակից լինին չարչարանացն Քրիստոսի, նոքա միայն կարեն լինել փառակից յարութեանն։ Քանզի ասէ թէ՝ ոչ միայն հաւատալ ի Քրիստոս, այլ վասն անուան նորա չարչարանս ընդունելոյ։*

Արդ՝ այս քառասունք չարչարանք խաչելութեանն Տեառն, և այն քառասունք յարութիւն կենդանութեան Տեառն։ Այս քառասուն քացախ և լեղի չարչարանացն Տեառն, և այն քառասուն խորխոխ մեղու, և ձկան խորովելոյ յարութեանն Տեառն։ Այս քառասուն զինուորացն կնքով պահել զգերեզման Տեառն և այն քառասուն, հրեշտակացն զաւետիսն տալ Մարիամանցն զ յարութենէն Տեառն։ Այս քառասուն միջնորդ ապաշխարութեան, և այն քառասուն երաշխաւոր թողութեան։ Այս քառասուն քաւիչ յանցանաց. և այն քառասուն թողիչ մեղաց։ Այս քառասուն լալոյ և արտասուաց, և այն քառասուն ցնծութեան և ուրախութեան։ Այս քառասուն սերմանելոյ ցաւով և տրտմութեամբ, և այն քառասուն ժողովելոյ փառաւք և գովութեամբ։ Արդ՝ այս քառասնորդաւ մեծ մարդարէն Մովսէս ետ զաւրէնս ժողովրդեանն, և այն քառասնորդաւ քաւեաց Մովսէս զ յանցանսն Ահարոնի և զ յանցանս ամենայն ժողովրդեանն։ Այս քառասներորդաւ չոքաւ Եղիա ի լեառնն Սինէական առնուլ հրաման ի Տեառնէ զվերանալոյն իւրոյ յերկինս։ Այսու պահաւք ապրեցան երեք մանկունքն ի բարձրարերձ տոչորական հրոյն սատակման։ Այսու պահաւք լուծին Նինուէացիքն զվճիռ մահուան զՏէրունական հրամանին առ ի լինելոյ ընդունելական պահք ապաշխարութեանն նոցա, և արագաթող լինելոյ մեղք յանցանաց նոցա։

---

*) Այսպէս յոր. 'ի լուսանցս. զգարան.

Digitized by Google

ԵՐԱՆԵԼՈՅՆ ԿԵԼԵՍՏԻԱՆՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀՌՈՄԱՅ, ԹՈՒՂԹ ԱՌԱՋԻՆ ԱՌ ՆԵՍՏՈՐ

Ոչ գիտեմ ուստի ի մերս հասանէ լսելիս, իբր թէ հաւատ ինն հեղեալ ի քէն Նորաձևս, որ է արտաքոյ բարեպաշտութեանն, այլ կլուր քոյոց հաւատոյդ անտես արար զբ, քանզի զարմացումն մերձ է առ մեզ, եթէ դու որ յիմաստութիւնն մեծագոյնս խորհեցեալ, և վայելչիցս գիտութեան բարձրութիւն բարձրացեալ զի՞արդ այդպէս վաղվաղակի յանգիտութեանց ընկղմեցար խորխորատ։ Իսկ եթէ այսպէս, որպէս բանս հաստատէ, թշնամանեալ լինի ուրեմն ի քէն Երրորդութեանն համագոյութիւն։ Ուրացեալ լինի և արժանաւոր պատիւ Աստուածածնին Մարիամայ, վասն որոյ պատշաճաբար համարիմ ըստ քեզ, և առ քեզ և ընդդէմ քո զասացեալն որ զոչելով աղաղակէ, եթէ՝ Բազում դպրութիւնքդ՝ զքեզ ի մոլորութիւն դարձուցին։ Բայց ես ոչ դարձուցին միայն ասեմ, այլ և կանգուցին ևս։ Քանզի ձգեցեր զձեռս քո առ ի յԱստուածամարտութիւն, և զաւտի ածեալ տարեալ եղեր, ուր ոչն կամէիր և ոչ գիտէիր. զի թէ էիր գիտացեալ, ոչ արդեաւք զԱստուած խորհէիր քեզ ընդդիմամարտ, և կամ ընդդէմ խթանի աքացել, որ ոչն էր քեզ կարողական։

Ուստի և վայելուչ կարծեմ յաղագս քո առնուլ զՄովսէսեանն ձայն փոխ, և սուղ ինչ այլարանելով ընդ քո յեղափոխութեան հաւատոյդ, մանաւանդ թէ յանհաւատութեանդ կամաց, ասեմ, Այս այր յիմար և ոչ իմաստուն. ո՞չ առ ինքն է հայրն քո որ ստացաւ, արար և ստեղծ զքեզ, և դու զայդ Տեառն հատուցանես, քանզի Աստուած զոլով ստացաւ զքեզ և էած յանգոյութենէ ի գոյութիւն։ Իսկ դու անստացար զբազմազին մարգարիտն Քրիստոս, և ոչ Նարովթայ արեանն զոչելով յերկրէ զնոյնգունակ ի քեզ ըերելով նմանեցուցեր։ Քանզի

Digitized by Google

նա ի հայրենի ժառանգութեանցն զրկել ո՛չ առնոյր յանձն, և զմահ յաղագս այնորիկ կրէր։ Իսկ դու զՀարցն նախասահմանեալ ի քեզ հաւատս ի բաց մերժելով, զրկեցար և. փախստական եղեր իբրև զամպարիշտն ոչ հալածեալ։ Եւ այժմ մեր այսչափ աղաչելովս և նախագոչելովս զքեզ, ոչ կամիս դառնալ որպէս զնմանին։ քո զԱսպայէլ, որ երրեմն հալածելով զԱբենները յուսացեալ ի յիւրոցն արագութիւն ոտից. ոչ կամեցեալ լսել աղաչանացն մինչև զանլսաւղութեանն ժողովեաց զվարձ, նոյնժամայն խոցեալ կայր մեռեալ յերկրի հանդերձ մատնչաւքն իւրովք ոտիւք։ Վասն որոյ և ես քեզ խրատ տամ, ոտիցդ քոց ոչ հաւատալ զքեզ. քանզի աւձն դարանակալ հարկանել զգարշապարսդ. այլ մանաւանդ զլեռդ եթէ իցէ Քրիստոս, յորմէ ամենայն մարմինն յաւդիւք և խաղալեաւք տարպերերի և խառնեալ աճէ գաճումն Աստուծոյ։

Ապա երբ հաւանեսցիս դառնալ յընդունայն յանսուրբ մոլորութենէդ, մեք ընդդէմ. . . . . շնորհին արտաձայնեսցուք։ Քանզի չէ պարտ զսրբութիւնս շանց տալ, և կամ զվարդսրիտն առաջի խոզից։ Քանզի ո՛յր արդեւք զքեզ տեսանելով ի բարեպաշտութենէն յամպարշտութիւն հաստատեալն ոչ զարմասցի. և կամ ո՛յր զայդպիսի լսելով համբաւ, և ոչ երկոքին հնչեսցեն ականջքն։ Քանզի գիս. . . . *)

*) Աստանօր թերթ մի անկեալ է յօրինակէն և պակասին վերջն թղթոյն Կելեստինոսի, և սկիզբն առաջին թղթոյն Պետրոսի։

Digitized by Google

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ՍԿԱԿ

. . . . զոր սերմանեաց սատանայ ի մէջ եկեղեցեայ։ Եւ մինչ զայդ զամենայն լուայ ես կրտսերս Պետրոս, երկեայ յոյժ ի դատաստանէն Աստուծոյ, և ասեմ ցՑուլիանէ սարկաւագ իմ. թէ արա ընդ իս հաստատութիւն, և մի ոք զիտասցէ զխորհուրդդ զայդ, մինչև կատարեսցին կամք Աստուծոյ։ Եւ երդուաւ ինձ Յայնժամ վստահացայ և գրեցի թուղթ իմով ձեռնարկութեամբ, և ետու ցՑուլիանէ զնոյն բան զոր ասաց ցիս, թէ գրեա՛ քոյով ձեռնարկութեամբ։ Եւ արձակեցի զնա և ասացի, թէ կոչէ զքեզ. և տայ թուղթ ի ձեռն մարդոյ որ քեզ հաւատարիմ թուի, տո՛ւր բերել, նոյնպէս և ես ի նորա ձեռն տամ բերել, և երդումն տուր նմա զի մի՛ այլ ումեք պատմեսցէ զխորհուրդդ զայդ։ Եւ ասէ ցիս սարկաւագն Յուլիանէ, եթէ է իմ ծառայ մի որպէս զիմ անձն հաւատարիմ։ Եւ մոյծ զնա յեպիսկոպոսարանն իմ, և երդմնեցուցի ի սուրբ աւետարանիչն, և հրամայեցի ցսարկաւագն իմ Յուլիանէ, զի նստցի ի քաղաքն Կոստանդնուպալիս, և եղիցի միջնորդ թղթոցն զոր ես և նա գրեմք առ իրեարս ի ձեռն մանկանն իւրոյ Թէոդոսի. և կացեալ յաղաւթս արձակեցի զնա ի նմին ժամու, և եմուտ ի նաւ։ Այն որ Աստուծոյ հաճոյ և մարդկան. գրեցաւ առ իս վաղվաղակի, և զթուղթն իմ ետու բերել առ քեզ կընքով. և ի վերայն չգրեցի մինչև ուսանիմ ի քէն, թէ որպէ՞ս են կամք քո առ իս, և կնքեցի զթուղթս իմ խաչիւ ի վերուստ։

Digitized by Google

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ԱԿԱԿ

Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ։ Յութսուն աւուրց կատարելոց ելանելոյ աստի Յուլիանէ սարկաւագին իմոյ, ետ բերել առ իս թուղթ ի ձեռն Թէոդոսի մանկան իւրոյ, որ 'ի ձէնջ գրեցաւ առ իս, և մինչ տեսի որպէս գրեալն էր ի վերայ, ոչ առի յանձն բանալ զնա և կարդալ՝ վասն գրոյն որ ի վերայն գրեալ էր։ Քանզի գրեալ էր այսպէս. Տայի թուղթս այս առ երանելի եպիսկոպոս և հայրապետն Աղեքսանդրացւոց Պետրոս, յԱկակայ եպիսկոպոսէ, որ է հայրապետ ի Կոստանդնուպաւլիս։ Ո՞ւմ կոչես հայրապետ, ասա՛ ինձ. այն որ յառաջագոյն լի էիր բարկութեամբ ի վերայ նորա։ Քանզի հայրապետ եմ որպէս ասացերն, եթէ կամաւ և եթէ ակամայ, քանզի Աստուծոյ պահեցի և պահեցից զհաւատս իմ՝ և ոչ ուրացայ. բայց դու զքեզ զի՞արդ հայրապետ անուանեցեր, և ոչ ցաւեաց սիրտ քո թէ ո՞վ ես դու՝ որ այդպիսի չարիք կործանեցեր զերկիր, զայդ յիշեա՛ ո՞վ մարդ, և գիտեա՛ յանձն քո, թէ զամենայն չարժու

հաւատոյս ի ձեռաց քոց խնդրելոց է դատաւորն արդարութեան։ Մինչև տեսի զթուղթն զայն որ ի քէն գրեցաւ, ոչ լուծի և ոչ կարդացի որ ի ներքս ի փոքրիկն գրեալ էր։ Բայց ի նմին ժամու դարձուցի անդրէն քո կնքովն որպէս և առ իսն եհաս։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԸՆ. ԱԿԱԿԱՑ ԱՌ ՊԵՏՐՈՍ ՊԱՏՐԻԱՐԳ

Իմաստունք բժշկաց՝ կանդամս ապականեալս ի ձեռն երկաթոյ սրոյ սովոր են հատանել. նոյն աւրինակ և դու, հայր իմ իմաստուն, ի ձեռն հոգևոր սրոյ հաթէր կամս ամպարշտութեան և ցուցեր արդարութեամբ սկիզբն բժշկութեան, վասն պսորիկ և ես աւելի ևս վստահացայ. և հաւատամ յԱստուած յայն՝ յոր հաւատացեր դու ի նա։ Եթէ զամենայն յաւս և վէրս խղեալեալս սպեղանաւք կակղաւք աւծցէ ի ձեռն քո և ողջացուսցէ Յիսուս Միածին Որդին Աստուծոյ, և կաւրացուսցէ և կանկնեսցէ զանդամս կոտորեալս եկեղեցւոյ իւրոյ, և նորոգեսցէ Տէր Աստուած միւանգամ ի ձեռն քո, Հայր մեր, զայն հաւատ զոր էր յառաջագոյն, զոր ի մոլորութենէ լեալոյ իմոյ ուրացայ, և անգիտութեամբ նզովեցի զսրբութիւն քո, այժմ զղջանամ և դառնամ որպէս յայնժամ Պետրոս գլուխ առաքելոյն սրբոց, զուրացումն իւր որ եղև վասն Քրիստոսի, և ի ձեռն տրտմութեան վաղվաղակի դարձաւ։

Եւ այժմ խնդրեմ ի քէն, հայր իմ հոգևոր, եթէ հաղորդութեամբ ընդ ձեզ լինիցիմ, չարչարանաց խնդութեամբ համբերեցից, միայն այս աւտարութիւն բարձցի հարսինն եկեղեցւոյ Քրիստոսի։ Քանզի պարտ է ինձ չարչարանս կրել իմով մարմնով, որպէս և գրեալ է, և զՔրիստոս շահեցայց, յորմէ ցայժմ զրկեցի զանձն։ Զգեցիր այսու հաւատով, Հայր, զողորմութիւն քաղցրութեան, և հեշտալի զառաքելոյն Պաւղոսի, և ասա առ մեզ ամենեսեան, Որդեակք իմ զորս դարձեալ վերստին երկնեմ մինչև նկարեսցի Քրիստոս ի ձեզ։

Այլ բարիոք արարեր, որ ոչ բացեր և կարդացեր զառաջին թուղթն, քանզի որպէս ասացեր, չէր բարի ոք գրեալ ի վերայն, բայց ի ներքս այսպէս գրեալ էր։ Ծագեցաւ լոյս ուղղափառութեան, որոց այժմ ծածկեալ էր, և լուսաւորեաց որք

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴԴԷՄ ԱՅՆՈՅԻԿ ՈՐ ԱՊԱԿԱՆԵՆ ԶՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ Ի ՁԵՌՆ ԽՄՈՐՈՑ ԵՒ ՋՐՈՑ։

Ահա յառաջագոյն ծանուցեալ առաքելոյն վաստակաւորութիւն հերձուածոյն ի ճշմարիտ հաւատոյն, եթէ պայլեն վերհուրդ տնաւրէնութեանն Քրիստոսի, յառաջագոյն հաստատեցին զդեղ բժշկութեան ի դիրս և ի զլուխս ընթերցարանաց, զի որք հակառակին ոչ զոլ Աստուածածին զկոյսն՝ զտանեն ի գիրս Ծննդեան և Յայտնութեանն որ նոյն ինքն է Մկրտութեանն, եթէ Ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և ծնեալն Սքանչելի՝ Աստուած՝ Հզաւր՝ Իշխան և Հայր։ Իսկ ի գիրս չարչարանաց զտանես, եթէ Աստուած էր որ չարչարեցաւ վասն փրկութեան մարդկան, զոր յայտնէ Եսայի, թէ Նա զմեղս մեր վերացոյց և վասն մեր չարչարի։ Եւ եթէ մարդոյ համարի և ոչ Աստուծոյ, որպէս սովոր են զնալ ի ճշմարտութենէն, այլ ոմն քեզ վկայէ ի գիրս չարչարանացն, եթէ՝ Եկեսցէ հասցէ Տէր Աստուած մեր, և ամենայն սուրբք ընդ նմա։ Յաղագս պանորիկ անխտիր մերձենան ի մարմին և յարիւնն Տեառն, զի սոսկ մարդոյ համարեցան, և ոչ Աստուծոյ միաւորելոյ ընդ մարմնոյ, և ոչ պատկառեցան ի հրամանացն, որ Պաւղոսիւն խաւսէր ընդ հաւատացեալս թէ՝ Որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, և որ այլն։

Գտանես յսկզբանն ընթերցականացն ճառ հոգեպատումն, որք արմատաքի խլեն զհերձուածն, որ ապականացու խոստովանին զանապական մարմինն Քրիստոսի, և յաղագս պանորիկ արկանեն խմոր և ջուր պղծել և ապականել զանապական խորհուրդն, յանհետ առնել հրամայեալ նոցա. յաղագս անխմոր աւրինաց նշանակէ և զևթն աւր ճաշակել առանց խմորոյ զբա-

Digitized by Google

զարչն՝ զնոյն բերէր աւրինակ, զի խմորեալն ոչ լինի կենդանի հայ, որպէս ասայ Աստուածարան ի Զատկին ճառի։ Իսկ յետ ելիցն յԵգիպտոսէ, յորժամ վասն այսորիկ աւրինադրէր Մովսէսի Աստուած, ոչ ապաքէն յերկնից զայր մանանայն, ուստի հրամայէր առնել զշաւիղս և զնաշիկս գոհիցն և զհացն կառաջաւորութեան, որ բերէին զաւրինակս մարմնոյն Քրիստոսի, զի իւրեանց արմտիք ոչ գոյր և յաւտար աղգայ ոչ առնոյին զի պիղծ էր. և միւս վասն այնորիկ, զի աւրինակ էր մարմնոյն Քրիստոսի, ոչ կամէր Աստուած թէ ուտիցեն միս ընդ սուրբ հային, մինչև երթիցեն յերկիրն աւետեաց։ Եւ այս անտի յայտ է զոր ասայ Աստուած, թէ յորժամ մտանիցէք յերկիրն, եթէ ցանկանայցէք մսոյ յայնժամ կերիջիք միս. և վասն այսորիկ ասէ Դաւիթ թէ՝ Ոչ անսացին խորհրդոյ նորա, այլ ցանկացան ցանկութիւն յանապատի, և բարկութիւն Աստուծոյ էջ ի վերայ նոցա, այլ զխմոր ոչ էր պարտ գտանել։ Իսկ անաւրէնք ասեն թէ յերկնից իջանէր խմորն ընդ երկնային հային, և կամ եթէ զոր ասէ Տէրն, եթէ՝ Ես եմ հայն կենաց՝ որ ի յերկնից իջի. արդեւք խմորեալ են կեանքս մեր։ Բայց մի՛ լիցի ուսումնասիրաց զմտաւ ածել զաղծապիղծ կրաւնս նոցա, թոզ թէ գործով ի կիր արկանել։ Բայց այսու հաւանեցուցանեն զպարզամիտսն, մանաւանդ եթէ զանմիտսն այսպէս ասելով, եթէ Տէր ասայ եթէ՝ Որ ուտիցէ ի հայէս յայսմանէ, մի ճաշակեսցէ զմահ։

Եւ ասեն թէ հաց կատարեալ խմորեալն է, զայս ի մտայ ասեն և ոչ ի գրոյ։ Եւ եթէ չեն սուտ և սնոտի, յուցցեն յաւրինայ կամ ի մարգարէից զաւրինակ մարմնոյն Քրիստոսի, եթէ արժան է ածել զապականեալ խմորն. այլ ոչ զգիրս գիտեն, և ոչ զզաւրութիւն գրոյ կամ թէ զոր ասայ Մովսէսիւ Աստուած, Որ ուտիցէ խմորեալ սատակեսցի, նշանակէ զյաւիտենական սատակումն, որ ճաշակեն ի սուրբ խորհրդոյն զխմորն։ Նա թէ և կամէր որ գտանել զխմորեալն յաւուրս զատկին յԻսրայէլի՝ ոչ գտանէր, բայց միայն ի տունս հեթանոսայ։ Բայց դու նայեա և քննեա զխորհուրդ հինգշաբաթին. զի նմա կատարեաց Քրիստոս, պատառելով զխմոր և զչուր, զոր վասն ապականութեան խառնեն թէ ապականացուէ մարմինն Քրիստոսի և ոչ լուան մարգարէին, եթէ՝ Մարմին նորա ոչ ետես զապականութիւն, և կամ Պետրոսի եթէ՝ Զոր Աստուածն յարոյց, ոչ ետես զապականութիւն։ Այլ ոչ գիտեն մոլորեալքն եթէ զի՞նչ է ապակա-

Digitized by Google

նութիւն։ Այլ մեք ճշմարտապէս յաղագս այսորիկ իմաստասի-
բեսցուք յԱստուածաշունչ գրոց։

Կոչեն Աստուածաշունչ գիրք ապականացու գծառայն մե-
ղաց. իսկ ո՞վ կարէ ասել զնմանէ թէ մեղս գործէր, որ յառաջ
քան զտնաւրէնութիւնն բարոկեաց մարգարէն թէ՝ Առանց մե-
ղաց ընթացայ, և ուղիղ է, և այլ ոմն եթէ՝ Անաւրէնութիւն
ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա. և Պաւ-
ղոս ասէ զնմանէն՝ Սուրբ անմեղ, զատեալ ի մեղաւորաց, ա-
ռեալ զխորհուրդս զայս և ասաց, թէ Զայս արարէք առ իմոյ
յիշատակի։ Աղէ՞ցուցցեն թէ խմորեալ էր հացն կամ ջրով խառ-
նեալ բաժակն, այլ ոչ կարեն ցուցանել ի գրոց այլ անձնահան-
ճար իմաստիւք իրակերպին ընդդէմ ճշմարտութեանն։ Զի փերբ-
կիչն ասէ, յետ աւրհնելոյն զբաժակն. Ոչ ևս արբից ի բերոյ
որթոյ. ուստի յայտ է, թէ որթն գինի և ոչ ջուր ծնանի, և
այս ոչ յաւրինաց և ի մարգարէից այլ Աստուածային բերանոյն
աւրէնք են։ Եւ զայս ամենայն գեղեցիկ իմն յեղյեղուն, Գրի-
գոր Աստուածարան և Յովհան Ոսկիբերան, որք համառաւտ
բանիւք պատմեցին մեզ զառաքելական և զաւետարանական տա-
ռիցն միտս, և զայս ամենայն հաստատուն եկեղեցական կար-
գաց, ևս առաւել ընթերցականաց ծագեն պատմութիւնք։ Արդ՝
եթէ հաղար ինչ ճարտարեն երկարնակ աղանդոյն պաշտաւ-
նեայքն, և բարձրացեալ քան զերկինս ամբարտաւանութեամբ.
Արդ՝ եթէ ի սերմանէ էր ծնեալ Քրիստոս, ապականացու էր մար-
մինն. իսկ եթէ ի Հոգւոյն սրբոյ, ապա մի՛ ոք իշխեսցէ ասել
ապականացու։ Բայց հացին անուամբ զարհուրեցուցանեն զպար-
գամիտսն, և ասեն հաց՝ կատարեալ խմորեալն է։ Սուղ ինչ և
յաղագս այսորիկ ասասցուք։

Հաց անուն՝ սովորական ի խաւսից է, և հասարակ անուն
ի բերանս բազմաց, այլ ոչ յատուկ ձայնի նշանակ, և զայսքան
զհացարարութեան արուեստն հասկացն և շեղջիցն ի վերայ ա-
սեմք։ Այս անուն, ասեն, հաց շատ ժողովեաց, աղէ՞ ասիցեն
անաւրէնքն, եթէ հասկք և շեղջք խմորեալ է։ Իսկ մեք ի գրոց
ցուցանեմք, եթէ զբաղարջն հաց կոչեն Աստուածային գիրք։
Յորժամ՝ քաղցեաւն Դաւիթ, որպէս կայ ի թագաւորական մա-
տենին, եթէ ի պահանջելն ի քահանայիցն հաց՝ պատասխանի
տուեալ ասեն, Զիք աստ հաց. բայց առաջաւորութեան հաց, ա-
հա զբաղարջն։ Հաց կոչեն Աստուածային գիրք որպէս ասացաք։

Digitized by Google

Եւ սուրբն Գրիգոր զնոյն ուսուցանէ մեզ, զի ասէ նա ուրեմն ի Հոգեւապատում վարդապետութեանն, եթէ Հայն առաջաւորութեան բերէր զաւրինակ մարմնոյն Քրիստոսի։ Տես դու և զմի պատկառելի աւրինակն. զի ի ճաշակելն նոցա ասէ քահանայն. Եթէ սուրբ իցեն ի կանանց մանկունքդ՝ մարթ է ճաշակել ի սուրբ Հացէն. իսկ ի պատասխանելն եթէ Յերեկէ և յեռանդէ, ապա հաւարձակեցոյց սուրբ Հացին։ Արդ եթէ ի հնումն որ ստուերն էր հանդերձելոց բարեացս Քրիստոսի, պատկառանաւք և երկիւղիւ էր ճաշակելն, որ աւրինակ բերէր զայժմուս, եթէ արժանաւորս պարտ է կալ յահաւոր խորհրդեանն. զիա՞րդ երկաբնակ աղանդոյն պաշտաւնեայքն անխտիր մերձենան. և զՊարդին Աստուծոյ առ ոտն հարկանեն, և զարիւն նորոյ ուխտին խառնակ հաւարելով, որով սրբեցաքն, և թշնամանեցին զշնորհաց Հոգին։ Այլ ես պատկառեմ յայնմանէ որ ասացն, Իմ են վրէժխնդրութիւնք և ես հատուցից։ Վասն որոյ պատկառեսցուք ապաչեմ և մի յանարժան անձինս մատչեցիմք ճաշակելոյ ապաշխարութեամբ մերձեսցուք ի կենդանութիւն ի Քրիստոս Յիսուս Աստուած մեր, որում փառք յաւիտեանս։

Ի տասներորդն Նիսան. արարին որդիքն Իսրայէլի զՊատիկն յԵգիպտոս, և ապա ելին յերկրէն Եգիպտացւոց, և յաւուրքն չորրորդ ընդ ծովն անցին, զոր առաքեալն մկրտութիւն կոչէ, աւրն միաշաբաթ, և մանանային աւրն միաշաբաթ. որ կառաջին պատարագն որթք *) մատուցին երիտասարդքն Իսրայէլի Տեառն Աստուծոյ, զի գայնժամ՝ չէր աւծեալ քահանայ. և նախանձեալ ընդ այն սատանայի՝ որթուն ետ Երկրպագանել և ոչ եգիտ Ահարոն եթէ զո՞ր նման արասցէ զկուռսն. ի տագնապել զնա ժողովուրդն. Եւ իբրև ել ոսկին ի հրոյն չունէր ինչ նմանութիւն որթու. ապա կոչեաց Ահարոն բանդակիչ և ետ մաքրել զնա ճշմարիտ որթ. Արջառ և ոչխար բազում ունէր ժողովուրդն յանապատին, բայց միս ոչ ուտէին զի այնպէս աւրինադրեալ էր Աստուծոյ։ Եւ պատարագ զոր առնէին՝ հուրն ճարակէր. և յայտ անտի է զի ասաց Աստուած. Յորժամ մատնիցես յերկիրն ժառանգել, եթէ ցանկաս մսոյ, յայնժամ ուտիցես միս, և զարիւն մի ուտիցես, այլ յերկիր հեղցես։ Որով յայտ է թէ յԵգիպտոս զանսուրբն անխտիր ուտէին.

*) Այսպէս յոր.

իսկ յանապատին աւրէնս ընկալան չուտել միս, վասն որոյ և մարդարէն ասէ, Ցանկացան ցանկութիւն յանապատին։ Բայց առաչաւորութեանն բաղաբչ էր որ բերէր զաւրինակ մարմնոյն Քրիստոսի, և շաւթ էր նաշիհ զոհիցն։ Խնդրելի է մեզ եթէ ցորեան է, եթէ մանանա, զի իւրեանց արմտիս ոչ զոյր և յաւուտար ազգաց չառնուին զի պիղծ էր. և զմանանայն յերկանի աղային և ի թոնրի եփէին, որ բերէր զաւրինակ մարմնոյն Քրիստոսի. զի թէ աւրինակն անխմոր էր, զի՞արդ ճշմարտութիւնն խմորեալ լինի։ Փառք Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւիտեանս։

Զմէղաւորս գրողս զԹու�մաս և զԽնաւղն իմ յիշեցէք ի Քրիստոս։

Digitized by Google

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ ՀԱՑՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Արդ՝ վասն զի ի պահոց քառասնորդն կոչի աւր Փուրբաթ՝ չարչարանք խաչելութեանն Տեառն, և առիթ կոչման չարչարելոցն յաշխարհիս, ունել յանձին զաւրինակ չարչարանացն Տեառն՝ առ ի փրկութիւն հոգւոց չարչարակցացն Տեառն, և առ ի պահպանութիւն անձանց պատուիրանապահացն Տեառնն, առ ի լինելոյ չարչարակից խաչելութեանն Տեառն, փառակից յարութեանն, և առիթ կոչման մեղաւորացն յապաշխարութիւն։ Արդ՝ յայսմ քառասներորդի, որպէս զի աւրէն է զշաբաթ և զկիրակէն որպէս զուրբաթ և զչորեքշաբաթ պահել զհետ աւրինացն առնլոյ։ Եւ յայնմ քառասներորդի որ կոչի կիւրակէն կոչի աւր առաջին, և սկիզբն աւուրց յարութեան, և ուրախութիւն աշխարհի, և աւետիք արքայութեան, լի ամենայն ուրախութեամբ անձանց պատուիրանապահացն արդարութեան. աւրէն է զուրբաթն և զչորեքշաբաթի իբրև զկիւրակէն և զշաբաթն ուտել։ Քանզի զոր աւրինակ ի զատկէն մինչև ցվերացումն կիւրակէ կոչի, այսպէս ի բարեկենդանէ մինչև ցզատիկն՝ ուրբաթ։ Արդ՝ քեզէն ած զքեզ ի հաւան, զուգեա զայս քառասուն բաւութեան և զայն քառասուն ուրախութեան։ Կշռեա զքառասուն ընդ քառասնի, և զուրբաթ և զչորեքշաբաթ՝ ընդ շաբաթու և ընդ կիւրակէի. և գտանես հասարակ. ի սմա յաղումն և ուրախութիւն. և ոչ ի նմա պակք և տխրութիւն, Այս քառասուն առիթ բաւութեան մեղաց տարւոյն, և այն քառասուն յաջորդ ուրախութեանց տարւոյն։

Արդ՝ աւրէն է զայս պահոց քառասնորդս հարթիկ պահել ի բարեկենդանէն մինչև ցզատիկն. այլ գինի և իւղի, ձու, ձուկն, պանիր, կոգի, կաղտի, բաժին, շճուկ, կաթն, խեր, և ձկան մորէ, զայս ընաւ ամենևին չէ աւրէն, և ոչ վայել է ճաշակել ամենայն ումեք մեծի և փոքու, արդարոյ և մեղաւո-

Digitized by Google

բրի։ Հատ են մեզ այլ կամաքն քառասուն աւուրն, կանեփ հատ, կտաւատ, փոխինդ, հատ, սամիթաջուր։

*Արդ այսու քառասնորդաւ Տէրն ի լերինն փորձութեան տարաւ յետս չփորձիչն սատանայ, որ է աւրինակաբեր յաղթութեան ամենայն հաւատացելոց։ Մինչ Աստուծոյ պահել ինչ պիտոյ էր ոչ ապաքէն վասն աւրինակի մարդկան առնէր զայն։ Արդ եթէ զհանապազաւրն մեռանել ոչ կարեմք ըստ բանին Պաւղոսի, այլ զոնեա քառասուն աւուրքքս լինել հաղորդ չարչարանացն Քրիստոսի։ Զի զբագանակեալ *) մեղք տարուցն, քառասուն աւուրքքս ընկեսցուք յանձանց։ Ոչ գիտես, զի որ միտեալ մտաւք չարչարակից լինին չարչարանացն Քրիստոսի, նորա միայն կարեն լինել փառակից յարութեանն։ Քանզի ասէ թէ ոչ միայն հաւատալ ի Քրիստոս, այլ վասն անուան նորա չարչարանս ընդունելլ։*

Արդ՝ այս քառասունք չարչարանք խաչելութեանն Տեառն, և այն քառասունք յարութիւն կենդանութեան Տեառն։ Այս քառասուն քացախ և լեղի չարչարանացն Տեառն, և այն քառասուն խորիսխ մեղու, և ձկան խորովելոյ յարութեանն Տեառն։ Այս քառասուն զինուորացն կնքով պահել զգերեզման Տեառն և այն քառասուն, հրեշտակացն զաւետիսն տալ Մարիամանցն զ յարութենէն Տեառն։ Այս քառասուն միջնորդ ապաշխարութեան, և այն քառասուն երաշխաւոր թողութեան։ Այս քառասուն քաւիչ յանցանաց. և այն քառասուն թողիչ մեղաց։ Այս քառասուն լալոյ և արտասուաց, և այն քառասուն ցնծութեան և ուրախութեան։ Այս քառասուն սերմանելոյ ցաւովք և տրտմութեամբ, և այն քառասուն ժողովելոյ փառաւք և զովութեամբ։ Արդ՝ այս քառասնորդաւ մեծ մարգարէն Մովսէս ետ զաւրէնս ժողովրդեանն, և այն քառասնորդաւ բաւեաց Մովսէս զ յանցանսն Ահարոնի և զ յանցանս ամենայն ժողովրդեանն։ Այս քառասնորդաւ չոքաւ Եղիա ի լեառնն Սինէական առնուլ հրաման ի Տեառնէ զվերանալոյն իւրոյ յերկինս։ Այսու պահաւք ապրեցան երեք մանկունքն ի բարձրարերձ տոչորական հրոյն սատակման։ Այսու պահաւք լուծին Նինուէացիքն զվճիռ մահուան զՏէրունական հրամանին առ ի լինելոյ ընդունելական պահք ապաշխարութեանն նոցա, և արագաթող լինելոյ մեղք յանցանաց նոցա։

---

*) Այսպէս յօր. 'ի լուսանցս. զգարան.

ԵՐԱՆԵԼՈՅՆ ԿԵԼԵՍՏԻԱՆՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀՌՈՄԱՅ, ԹՈՒՂԹ ԱՌԱՋԻՆ ԱՌ ՆԵՍՏՈՐ

Ոչ գիտեմ ուստի ի մերս հասանէ լսելիս, իբր թէ հաւատ ինն հեղեալ ի քէն Նորաձևս, որ է արտաքոյ բարեպաշտութեանն, այլ կլուր քոյոց հաւատոցդ անտես արար զ, բանկի գարմացումն մերձ է առ մեղ, եթէ դու որ յիմաստութիւնսն մեծագոյնս խորհեցեալ, և վայելչիցս գիտութեան բարձրութիւն բարձրացեալ, զի՞արդ այդպէս վաղվաղակի յանգիտութեանց ընկղմեցար խորխորատ։ Իսկ եթէ այսպէս, որպէս բանս հաստատէ, թշնամանեալ լինի ուրեմն ի քէն Երրորդութեանն համագոյութիւն։ Ուրացեալ լինի և արժանաւոր պատիւ Աստուածածնին Մարիամայ, վասն որոյ պատշաճաբար համարիմ ըստ քեզ, և առ քեզ և ընդդէմ քո զասացեալն որ գոչելով աղաղակէ, եթէ՝ Բազում դպրութիւնքդ՝ զքեզ ի մոլորութիւն դարձուցին։ Բայց ես ոչ դարձուցին միայն ասեմ, այլ և կանգուցին ևս։ Քանզի ձգեցեր զձեռս քո առ ի յԱստուածամարտութիւն, և զաւտի ածեալ տարեալ եղեր, ուր ոչն կամէիր և ոչ գիտէիր. զի թէ էիր գիտացեալ, ոչ արդեաւք զԱստուած խորհէիր քեզ ընդդիմամարտ, և կամ ընդդէմ խթանի աքացել, որ ոչն էր քեզ կարողական։

Ուստի և վայելուչ կարծեմ յաղագս քո առնուլ զՄովսէսեանն ձայն փոխ, և սուղ ինչ այլարանելով ընդ քո յեղափոխութեան հաւատոցդ, մանաւանդ թէ յանհաւատութեանդ կամաց, ասեմ, Այս այր յիմար և ոչ իմաստուն. ո՞չ առ ինքն է հայրն քո որ ստացաւ, արար և ստեղծ զքեզ և դու զայդ Տեառն հատուցանես, քանզի Աստուած զոլով ստացաւ զքեզ և էած յանգոյութենէ ի գոյութիւն։ Իսկ դու անստացար զքաղմազին մարգարիտն Քրիստոս, և ոչ Նարովթայ արեանն գոչելով յերկրէ զնոյնգունակ ի քեզ բերելով նմանեցուցեր։ Քանզի

Digitized by Google

նա ի հայրենի ժառանգութեանցն զրկել ո՛չ առնոյր յանձն, և զմահ յաղագս այնորիկ կրէր։ Իսկ դու զհարցն նախասահմանեալ ի քեզ հաւատս ի բաց մերժելով, զրկեցար և փախստական եղեր իրրև զամպարիշտն ոչ հալածեալ։ Եւ այժմ մեր պաշտպան աղաչելովս և նախադասելովս զքեզ, ոչ կամիս դառնալ որպէս զնմանին։ բո զԱսայէլ, որ երրեմն հալածելով զԱբեներ յուսացեալ ի յիւրոցն արադութիւն ոտից. ոչ կամեցեալ լսել աղաչանացն մինչև զանլսաւղութեանն ժողովեաց զվարձ, նոյնժամայն խոցեալ կայր մեռեալ յերկրի հանդերձ մատնչաւքն իւրովք ոտիւք։ Վասն որոյ և ես քեզ խրատ տամ, ոտիցդ քոց ոչ հաւատալ զքեզ. քանզի աւձն դարանակալ հարկանել զգարշապարդ. այլ մանաւանդ զլեղդ եթէ իցէ Քրիստոս, յորմէ ամենայն մարմինն յաւդիւք և խաղալիւք տարպերի և խառնեալ ածէ դաճումն Աստուծոյ։

Ապա երբ հաւանեցիս դառնալ յընդունայն յանսուրբ մոլորութենէդ, մեք ընդդէմ. . . . . շնորհին արտաձայնեսցուք։ Քանզի չէ պարտ զսրբութիւնս շանց տալ, և կամ զվարդարիտն առաջի խոզից։ Քանզի ո՛յր արդեւք զքեզ տեսանելով ի բարեպաշտութենէն յամպարշտութիւն հաստատեալն ոչ զարմացի. և կամ ո՛յր զայդպիսի լսելով համբաւ, և ոչ երկոքին հնչեսցեն ականջքն։ Քանզի զիս. . . . *)

*) Ասասնօր թերթ մի անկեալ է յօրինակէն և պակասին վերջն թղթոյն Կելեստինոսի, և սկիզբն առաջին թղթոյն Պետրոսի։

Digitized by Google

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ՍԿԱԿ

. . . . զոր սերմանեաց սատանայ ի մէջ եկեղեցեայ։ Եւ մինչ զայդ զամենայն լուայ ես կրտսերս Պետրոս, երկեայ յոյժ ի դատաստանէն Աստուծոյ, և ասեմ ցՑուլիանէ սարկաւագ իմ. թէ արա՛ ընդ իս հաստատութիւն, և մի՛ ոք զիտասցէ զխորհուրդդ զայդ, մինչև կատարեսցին կամք Աստուծոյ։ Եւ երդուաւ ինձ։ Ցայնժամ վստահացայ և գրեցի թուղթ իմով ձեռնարկութեամբ, և ետու ցՑուլիանէ զնոյն բան զոր ասայ ցիս, թէ գրեա՛ քոյով ձեռնարկութեամբ։ Եւ արձակեցի զնա և ասացի, թէ կոչէ զքեզ. և տայ թուղթ ի ձեռն մարդոյ որ քեզ հաւատարիմ թուի, տո՛ւր բերել, նոյնպէս և ես ի նորա ձեռն տամ բերել, և երդումն տուր նմա զի մի՛ այլ ումեք պատմեսցէ զխորհուրդդ զայդ։ Եւ ասէ ցիս սարկաւագն Ցուլիանէ, թէ է իմ ծառայ մի որպէս զիմ անձն հաւատարիմ։ Եւ մոյծ զնա յեպիսկոպոսարանն իմ, և երդմնեցուցի ի սուրբ աւետարանիչն, և հրամայեցի ցսարկաւագն իմ Ցուլիանէ, զի նստցի ի քաղաքն Կոստանդնուպալիս, և եղիցի միջնորդ թղթոցն զոր ես և նա գրեմք առ իրեարս ի ձեռն մանկանն իւրոյ Թէոդոսի. և կացեալ յաղաւթս արձակեցի զնա ի նմին ժամու, և եմուտ ի նաւ։ Այն որ Աստուծոյ հաճոյ և մարդկան. գրեցաւ առ իս վաղվաղակի, և զթուղթն իմ ետու բերել առ քեզ կընքով. և ի վերայն չգրեցի մինչև ուսանիմ ի քէն, թէ որպէ՞ս են կամք քո առ իս, և կնքեցի զթուղթս իմ խաչիւ ի վերուստ։

Digitized by Google

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ԱԿԱԿ

Պետրոս Հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ։

Յութսուն աւուրց կատարելոց ելանելոյ աստի Յուլիանէ սարկաւագին իմոյ, ետ բերել առ իս թուղթ ի ձեռն Թէոդոսի մանկան իւրոյ, որ 'ի ձէնջ գրեցաւ առ իս, և մինչ տեսի որպէս գրեալն էր ի վերայ, ոչ առի յանձն բանալ զնա և կարդալ՝ վասն գրոյն որ ի վերայն գրեալ էր։ Քանզի գրեալ էր այսպէս. Տացի թուղթս այս առ երանելի եպիսկոպոս և Հայրապետն Աղեքսանդրացւոց Պետրոս, յԱկակայ եպիսկոպոսէ, որ է Հայրապետ ի Կոստանդնուպալիս։ Ո՛չ կոչես Հայրապետ, ասա՛ ինձ. այն որ յառաջագոյն լի էիր բարկութեամբ ի վերայ Նորա։ Քանզի Հայրապետ եմ որպէս ասացերն, եթէ կամաւ և եթէ ակամայ, քանզի Աստուծոյ պահեցի և պահեցից զՀաւատս իմ՝ և ոչ ուրացայ. բայց դու զքեզ զի՞արդ Հայրապետ անուանեցեր, և ոչ ցաւեաց սիրտ քո թէ ո՛վ ես դու՝ որ այդպիսի չարիս գործանեցեր զերկիր, զայդ յիշեա՞ ով մարդ, և գիտեա՛ յանձն քո, թէ զամենայն շարժումն հաւատոյս ի ձեռաց քոց խնդրելոյ է դատաւորն արդարութեան։ Մինչև տեսի զթուղթն զայն որ ի քէն գրեցաւ, ոչ լուծի և ոչ կարդացի որ ի ներքս ի փոքրիկն գրեալ էր։ Բայց ի նմին ժամու դարձուցի անդրէն քո կնքովն որպէս և առ իսն եհաս։

Digitized by Google

ԹՈՒՂԹ Ե. ԱԿԱԿԱՑ ԱՌ ՊԵՏՐՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ

Իմաստունք բժշկաց՝ կանդամն ապականեալս ի ձեռն երկաթոյ սրոյ սովոր են հատանել. Նոյն աւրինակ և դու, հայր իմ իմաստուն, ի ձեռն հոգևոր սրոյ հարէր զկամս ամպարշտութեան և ցուցեր արդարութեամբ սկիզբն բժշկութեան, վասն պսորիկ և ես աւելի ևս վստահացայ. և հաւատամ յԱստուած յայն՝ յոր հաւատացեր դու ի նա։ Եթէ զամենայն ցաւս և վէրս խղխպթեալս սպեղանաւք կակղաւք աւծցէ ի ձեռն քո և ողջացուսցէ Յիսուս Միածին Որդին Աստուծոյ, և գաւրացուսցէ և կանկնեսցէ զանդամս կոտորեալս եկեղեցւոյ իւրոյ, և Նորոգեսցէ Տէր Աստուած միւսանգամ ի ձեռն քո, Հայր մեր, զայն հաւատ զոր էր յառաջագոյն, զոր ի մոլորութենէ լեալոյ իմոյ ուրացայ, և անգիտութեամբ նզովեցի զսրբութիւն քո, այժմ զղջանամ և դառնամ որպէս յայնժամ Պետրոս գլուխ առաքելոյն սրբոյ, զուրացումն իւր որ եղև վասն Քրիստոսի, և ի ձեռն տրտմութեան վաղվաղակի դարձաւ։

Եւ այժմ խնդրեմ ի քէն, հայր իմ հոգևոր, եթէ հաղորդութեամբ ընդ ձեզ լինիցիմ, չարչարանաց խնդութեամբ համբերեցից, միայն այս աւտարութիւն բարձցի հարսինն եկեղեցւոյ Քրիստոսի։ Քանզի պարտ է ինձ չարչարանս կրել իմով մարմնով, որպէս և գրեալ է, և զՔրիստոս շահեցայց, յորմէ ցայժմ զրկեցի զանձն։ Զգեցիր այսու հաւատով, Հայր, զողորմութիւն քաղցրութեան, և հեշտալի զառաքելոյն Պաւղոսի, և ասա առ մեզ ամենեսեան, Որդեակք իմ զորս դարձեալ վերստին երկնեմ մինչև Նկարեացի Քրիստոս ի ձեզ։

Այլ բարիոք արարեր, որ ոչ բացեր և կարդացեր զառաջին թուղթն, քանզի որպէս ասացեր, չէր բարի ոք գրեալ ի վերայն, բայց ի ներքս այսպէս գրեալ էր։ Ծագեցաւ լոյս ուղղափառութեան, որոց այժմ ծածկեալ էր, և լուսաւորեաց որք

Digitized by Google

ի խաւարի և ի ստուերս մահու նստէաք. ապա ուրեմն առ մեզ աղաղակէ երանելին Դաւիթ թէ՝ Ամենեքեան խոտորեցան իւր միասին և անպիտանացան, ոչ ոք է որ առնէ զբարի, և չէ ոք մինչև ի մի։ Այն որ ասաց թէ՝ բայց մի ասաց մարգարէն, առ ո՞ ասաց, այսինքն առ Աստուծոյ մերոյ։ Բայց թուի ինձ այժմ ասել ի վերայ սրբութեան քում, քանզի դու միայն արդարութեամբ պահեցեր զճշմարտութիւն ի մէջ քահանայից. զի ամենայն քահանայք, ըստ բանի Եղիայի մարգարէին, թողաք զԱստուած և գնացաք զհետ ամպարիշտ թագաւորաց։ Քանզի զայս ուղղափառութեան, որ հանապազ լուսաւորէ ի փառս, անպիտանութեամբ փոխեցաք, և արդ ի նեղութիւն և ի չարչարանս կամք։ Այլ յայտնեա զանձն քո, ճառագայթ ծածկեալ ուղղափառութեան, և լուսաւորեա ի վերուստ. որք ի խաւարի և ի ստուերս մահու նստէին։ Լապտերդ բաղմալոյս ուղղափառ առաքինութեան, լեր նման Ստեփանոսի առաջին մարտիրոսին, և զոչեա առ Աստուած փոխանակ մեր զի հալածեցաք զքեզ, և ասա. Հայր թո՛ղ նոցա, զի ոչ գիտեն զի՞նչ գործեն։



Digitized by Google

ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ԱԿԱԿ ՀԱՅՐԱՊԵՏ։

Պետրոս Հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ։

Զգրեալսդ որ ի ձէնչ առ մեզ ետուր բերել, տրտմութիւն ի վերայ տրտմութեանց յաւելին յանձն իմ, քանզի մինչև յայժմ մի տրտմութիւն էր անձին իմոյ ո՞րպէս արժանացայց հրաժարել յայսմ աշխարհէս ուղղափառութեամբ և արդարութեամբ, և առիւ զպսակն ուղղափառութեան. և ամենեւին և անարատ կայցեալ առաջի ահաւոր բեմին Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Այժմ, ո՞վ սիրելի, զի՞նչ կոչեցիս զքեզ ոչ գիտեմ, զի ի շղթայս՝ ուստի ոչ եմ կերծանելոց փակեցեր զիս։ Եւ արդ զի՞նչ գործեցիս ոչ գիտեմ, նենգել ո՛չ կարեմ, քանզի ոչ եմ նենգաւոր Քրիստոսի։ Տրտմութիւն որ եղև ձեզ՝ ձեր կամաւորութեամբ լժշկել չեմ արժանի, քանզի ԼԱ, ամ զհատն Քրիստոսի անողորմաբար սպանէր անհաւատութեամբ ձերով, զի որք ոչն եղեն ձեզ կամակից, զնոսա սրով և ազգի ազգի չարչարանաւք ամպարիշտ թագաւորացն գրկեցէք յայսմ կենաց, և զդեղեցկութիւն եկեղեցւոյն որում փոխանակ Քրիստոսն մեռաւ՝ մինչ էրն ընդ Հաւրն և առ Հաւր՝ ուրացայք, և ձեռնարկութեամբ տումարին Լեոնի ապականեցէք, երկու բաժանեալ բնութեամբքն, նմանելով առիւծոյ անողորմի, և որպէս կերակուր յատամունս ձեր զհատն աւձտեալ պատառեցէք։ Քանզի բաժանեցէք ամպարշտութեամբ ձերով զանբարժանելին Աստուած։ Եւ արդ՝ զի՞նչ գործեցիս ոչ գիտեմ։ զի տրտմութիւնդ ձեր որ եղև կամաւորութեամբ լժշկել ոչ կարեմ, քանզի այր մի մեղաւոր եմ ես և մահկանացու, բայց խնդրուածս մատուցէք Աստուծոյ, յորմէ ուրացարուքն, և մի դադարէք որպէս զի դարձցի և ողորմեսցի և փրկեսցէ զձեզ։

Սո՛ւգ առցեն ընդ մեզ ամենայն դասք սրբոցն։ Սո՛ւգ առ-

Digitized by Google

ցեն ընդ մեզ բազմութիւնք երկնաւորացն զի մերկացաք զփառս նոցա։ Սո՛ւգ առցէ ընդ մեզ և դրախտն որ վասն մեր տընկեցաւ, այն որ ոչ ընդունի զմեզ վասն մերոյ թերահաւատութեան։ Սուգ առցէ արեգակն, այն որ ոչ կամեցաւ տեսանել զչարչարանս Ցեառն իւրոյ, բայց խաւար փոխանակ լուսոյ զգեցաւ, զի յանդիմանեսցէ զթերահաւատսն որք յայնժամ էին։ Եւ այժմ սուգ առցեն ընդ մեզ ամենայն ժողովք արդարոց երեւելիք և աներեւելիք։ Սուգ առցեն ընդ մեզ ամենայն զաւրք վերնայինք, և խնդրուածս մատուսցեն Աստուծոյ մարդասիրի Գաբրիէլ և Միքայէլ զլուխք վերին զաւրացն հրեշտակաց, խնդրուածըս մատուսցեն փոխանակ մեր Քերովբէք և Սերովբէք բազմահայեացք. կառք աւետեաց, այն որ զՍերրորդութիւնն սուրբ փառաբանեն զանսկզբնականն Աստուած. զի զողորմութիւնն իւր սրսկեսցէ ի վերայ մեղուցեալ ժողովրդեանս։ Այլ այսու ամենայնիւ խրատել զձեզ ոչ դադարիմ զի զԱստուած՝ զոր ուրացայքն, նմա աղաչանս և խնդրուածս մատուցեալ մի դադարէք, մինչև դարձցի առ ձեզ և ողորմեսցի։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԵՐԿՐՈՐԴ ԱԿԱԿԱՑ ԱՌ ՊԵՏՐՈՍ

Յակակայ առ Պետրոս Հայրապետ Աղեքսանդրացւոյ։

Ես այժմ ինձ արդար համարիմ զանձն իմ, քանզի տեսի զքեզ զի յանձն առեր զտրտմութիւնս մեր, և զսուրբ զաղաչանսդ զոր մատուցանես փոխանակ մեր առ Աստուած, որ ոչ ուրացար ի նմանէ։ Արդ ես երանեցից իմ անձինս զի խրատեցայց ի քո բարի վարդապետութենէդ, և այժմ ծանեայ եթէ աշակերտ ես սեպհական Յիսուսի Քրիստոսի. զի ըստ յանցաւորութեանս մերում ոչ արարեր մեզ, այլ խրատիչ բարի ամենայն մարդկան երևեցար յԱստուծոյ։ Քանզի բարիոք ուսուցանես թէ առ այն Աստուած զոր Դուքն ուրացարուք, վայել է ձեզ անդադար խնդրուածս մատուցանել զի դարձցի և ողորմեսցի և փրկեսցէ զձեզ։ Այլ զտումար այնր ամպարշտին այսինքն Լևոնի, կամակից եղեն հարքն մեր որ յառաջ քան զմեզ էին ամպարշտի արքային Մարկիանոսի, նոյնպէս և մեք որ յետնոցս եղաք, ուրացաք զրով ի միածին Որդւոյն Աստուծոյն ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։ Այլ զտումարն զայն ամպարշտութեան առաջի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց նզովեմ ի թղթիս յայսմ զոր գրեաց ձեռն իմ։

Այլ այժմ, ո՞վ հայր սուրբ, նայեաց յողորմութիւնն որ տուեալ է քեզ յԱստուծոյ, եթէ բարկանայցես և մատնեսցես զմեզ, և եթէ հատուցանիցես փոխանակ չարի չար, այլ հատո՛ բարիս փոխանակ չարի որպէս հաւատարիմ Քրիստոսի։ Եթէ թողուցուս զմեզ յայսմ կապանս ուրացութեան, եթէ ոչ ընդունիցես զայնոսիկ որ ապաշխարիցեն, եթէ ոչ լուծցես իշխանութեամբ որ տուաւ քեզ յԱստուծոյ՝ զայս կապանս որ ի վերայ մեր է, այլ ձեռնարկութեամբ իմով նզովեցի զամպարշտին տումար, յայսմ թղթի զոր գրեաց ձեռն իմ։ Եւ այժմ լրոեցի մինչև խնդրուածս մատուցից Աստուծոյ մարդասիրի և վարդապետութեան քում։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՉՈՐՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՌ ԱԿԱԿ

Պետրոս Հայրապետ Աղեքսանդրացւոյ.

Լռեա, սիրելի, որչափ աշխատ առնես զանձն իմ։ Լռեա՝ այն որ ցայժմ դատապարտէիր զանձն իմ. քանզի որպէս զամ-պարիշտ ի մահ մատնէիր զիս, և զսուր թագաւորին հանէիր ի վերայ իմ։ Բայց այժմ տեսանեմ զքեզ զի պատերազմող երևիս. յառաջագոյն յապականիչ մարդկան ի նեղութիւն և ի չարչա-րանս կամէիր ընկենուլ, այլ այժմ որ Աստուծոյ աղաչանս մատուցանես վասն իմ՝ ի հոգևոր սուրն այն՝ որ զանձն և զմարմին կարէ սպանանել՝ ընկեցեր զիս։ Այլ ինձ քա՜ւ լիցի հատուցանել չար փոխանակ չարի, այլ փոխանակ չարին զբարի, և եթէ թողից, և եթէ յամեցից, և եթէ ոչ ընդունիցի՛մ զայ-նոսիկ որ ապաշխարեն։ Այլ այժմ գիտեա, ո՜վ սիրելի, եթէ ա-մենայնիւ աւտար համարիմ զքեզ։ Այլ ինձ քա՜ւ լիցի հատու-ցանել փոխանակ բարւոյ չարս։ Եթէ Աստուած ոչ տայ ինձ ոչ յամեցից և ոչ թողից, այլ ընդունիմ զայնոսիկ որ ապաշխարեն։ Այլ ես մինչ կարդայի զթուղթն զայն՝ որ ձեռնարկութեամբ ձերով գրեալ էր, որ նզովեցեր ի նմա զտումար ամպարշտին, զարմացայ և ի զարմանալոյ ոչ դադարեմ, եթէ ո՛չ գիտես ո՜վ մարդ եթէ ո՛չ գիտեմ զի՞նչ արարեր, քանզի յորժամ նզո-վեցեր զտումարն, նզովեցեր զհարսն քո զայնոսիկ որ ի տու-մարին ձեռնարկ արարին, որք և զքեզն քահանայացուցին։ Քան-զի նզովեցան նոքա ի քէն, և դո՜ զքեզ նզովեցեր, քանզի դու ի նոցանէ քահանայացար։ աւտար ես այսուհետև յեպիսկոպո-սութենէդ, և զի մի սրտմտեցուցանիցեն զքեզ բանքս այսորիկ, քանզի զարդար խաւսել ոչ ամաչեմ, եթէ հատցէ զք զլուխս իմ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԵՐՐՈՐԴ ԱԿԱԿԱՅ ԱՌ ՊԵՏՐՈՍ

Յակակայ առ Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց։

Մի ժամ ասացից, և այլ ոչ յաւելից խաւսել այսուհետև։ Ո՞վ Հայր սուրբ. Նայեաց ի շնորհս որ տուեալ են քեզ յԱստուծոյ, եթէ յամիցես և եթէ թողուցուս, եթէ ոչ ընդունիցիս զայնոսիկ որ ապաշխարեսն, եթէ այժմ որ նկովեցի զրով ըստուժար ամպարշտին, և զիս նկովեցի, և խնդամ զի ոչ խնայեցի յանձն իմ, զի այսպէս զՔրիստոս շահեցայց։ Այսուհետև դանձն իմ Աստուծոյ մարդասիրին և վարդապետութեան քում յանձնեցի։ Բայց նայեաց յողորմութիւնն որ յԱստուծոյ տուեալ են քեզ փոխանակ եկեղեցւոյ իւրոյ։ Եթէ և ամենայն եպիսկոպոսքն նկովեն որպէս զիս զամպարշտին զտումար, զտանին և նոքա ընդ նկովիւք լինել։ Ո՛ւր իցեն աղբիւրք ողորմութեանն Աստուծոյ մերոյ, զի՞արդ և զգիրն ընդունիցիմք խոստովանեա՛ զմեղս քո, զի արդարասցիս. ապա ուրեմն զտանի սա, եթէ ոչ վասն թողութեան լինի ապաշխարութիւնս այս, այլ կործանումն ամենայն ժողովրդեան։ Սեղանք՝ որ արհամարհեալ են ի բազմութենէ քահանայիցս այսոցիկ, մինչ տրտմին վասն որդւոց մարդկան ապականութեան՝ որ յանկարծ որբ մնացին ի նոցանէ և բազմութիւն բարբարոսական ժողովրդոց խառնակեցին, և հերետիկոսք ծաղր արասցեն զհարսնն Քրիստոսի. և եղիցին վերջինքն՝ չար քան զառաջինսն։ Բայց այժմ լո՛ւր ինձ, Հայր իմ, և կաց զաւրութեամբ մինչև հաշտեցուցանես զԱստուած, որ ոչ ուրացար ի նմանէ, զի ջնջեսցէ ի մէնջ ի քահանայիցս որ ապաշխարեմք զձեռնարկութիւն ուրացութեան մերոյ և զարձուսցէ առ մեզ զուղղափառութեան զսակն։

Գոչեա՛ և դու, ո՞վ Հայր, առ Աստուած, զն որ ոչ ուրացար ի նմանէ, որպէս զերանելին Մովսէս որ ասէր՝ Եթէ թողուցուս դոցա զմեղս թո՛ղ, թէ ոչ. և զիս ջնջեա՛ ի գպրութենէ

քումմէ։ Նոյնպէս և Ահարոն քահանայապետ ընդ ժողովրդեանն մեղաւ, քանզի պաշտեաց ընդ նոսա զկուռսն. բայց ի խնդրուածոց երանելւոյն Մովսէսի ուրախացաւ ի բժշկութեանն որ յԱստուծոյ եղև նմա ի նմին ժամու, և ոչ աւտարացաւ ի քահանայութենէն այլ եկաց և նովիմբ պաշտեաց զԱստուած մինչև ցմահ։ Նոյնպէս և դու, հայր մեր, նմանեա երանելւոյն Մովսէսի, և զոչեա առ Աստուած, որ ոչ ուրացար ի նմանէ. և ասա. Եթէ թողուս զոգա զմեղս՝ թող, եթէ ոչ և զիս ջնջեա ի գպրութենէ քումմէ. այսպէս ասելով հաշտեցուսցես ընդ մեզ զՔրիստոս, եթէ կամեսցիս, միայն բուռն հարկանել կորուսելոցս ի ձեռն քո, և մի ամենևին կորիցուք. Էջ առ մեզ վաղվաղակի և յափշտակեա զմեզ ի թերահաւատութիւն զժոխոցս, և կայս զմեզ ի վերայ վիմին հաստատութեան որ է Յիսուս Քրիստոս, որպէս ասէ սուրբ առաքեալն. թէ Վէմն է ինքն Քրիստոս, այն որ ոչ յաղագս այլ ինչ իրաց մարդացաւ, այլ զի փրկեսցէ զաւգս որդւոց մարդկան։

Եւ այժմ հաստատուն կաց, ո՜վ հայր, քանզի հաւատացի յայն, որ այժմ հաւատամ յԱստուած զի ոչ արդելու զքեզ։ Մի դադարեր այսուհետև փոխանակ մեր յանցաւորացս խնդրուածըս մատուցանել, քանզի տուան քեզ շնորհք յԱստուծոյ մինչև ընկալցիս շնորհս յԱստուծոյ փոխանակ մեր, քանզի՝ Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, ասէ սաղմոսարանն, և զինդրուածս նոցա լսէ և փրկէ զնոսա։ Վասն այսորիկ զաղաչանս զայս Աստուծոյ մարդասիրի և ողորմութեան քում մատուցիս։ Նայեա այսուհետև, ո՜վ հայր, յողորմութիւնն որ տուեալ են քեզ փոխանակ եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, միանգամ ասացի և այսուհետև լռեմ և ոչ խաւսիմ. բայց զի մեզ՝, թող ինձ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ԱԿԱԿ

Պետրոս Հայրապետ Աղեքսանդրացւոց առ երանելի Ակակ Հայրապետ որ ի Կոստանդնուպալիս։

Նեղութիւն է ինձ յամենայն կողմանց՝ և որոգայթք մահու սփռեցան ի վերայ իմ; զի յայդպիսի յեղբարէ չապաշխարութիւն լուայ, որ ի վեր է քան զորդւոց մարդկան։ Եթէ ոչ կայցէ ընդ ձեզ և չարչարեսցայց և կեցից ընդ ձեզ, և ընդ ձեզ մեռայց, զի կեցից ընդ ձեզ, և ընդ ձեզ թագաւորեսցայց. և թէ փակեմ զդուրս առաջի այնոցիկ որ ապաշխարեն, յորոգայթս ամպարշտին Լևոնի անկանիմ, այլ ընդրեմ ինձ այժմ; եթէ ընդ բազումս որ ապաշխարեն մեռայց, զի ուրախ եղէց յողորմութիւնս Աստուծոյ մերոյ։

Լուր այսուհետև Հայր, լուր զխորհուրդս Աստուծոյ մերոյ, զքառասուն աւր պահեսցուք ես և դու մինչև այլ ոք ոչ գիտէ, բայց միայն Աստուած, որ յիմ ձեռն հրամայեաց քեզ։ Այլ զայդ քառասուն աւուրս մի՛ գիտասցեն քահանայք և ժողովրդականք, զպատճառս հիւանդի ընկալցիս, և մի՛ մտանիցես ի սուրբ սեղանն Աստուծոյ մինչև ցլնուլ հրաման կանոնին, և փոխանակ ամենայն ժողովրդեանն ուղղափառաց աւրհնութեան արժանի եղիցիս. որպէս զի փոխանակ ամենայն մարդկան արդելցիս. զի փոխանակ ամենեցուն ընկալցիս զթողութիւն։ Քանզի զամենեսեան դու զայթակղեցուցեր, քանզի խափանեցեր յաւուրս Բասիլիսկոսի լինել միաւորութիւն եկեղեցեաց։ Այլ զայդ զի՞, աւուրս կանոնի, զոր Աստուած ամենայնի Յիսուս Քրիստոս, յիմ ձեռն հրամայեաց քեզ, պահեսցուք խորհրդիւ ես և դու միայն, փոխանակ ամենայն ժողովրդեան եկեղեցւոյ սրբոյ։ Հաց ըստ կամաց ոչ կերիցուք, և իւղով ոչ աւծցուք, գինի և զեաւդի մի՛ արբցուք, բայց յընդոց ինչ երկրի, և լայով և արտասուաւք

լուսացուք զմարմինս մեր մեղաւոր զցայգ և զցերեկ, և անդադար խնդրուածս մատուցցուք Աստուծոյ մերոյ, զի նայեսցի ի խնդրուածս մեղաւորիս փոխանակ քո, և փոխանակ ամենայն քահանայից որ ապաշխարեն, և փոխանակ ամենայն ժողովրդեանս. զի Աստուած ողորմութեամբ իւրով դարձուցցէ զքահանայսն որ ապաշխարեն է արքութիւն աւծման առաջին ուղղափառութեան, և Հոգին սուրբ որ ի Հաւրէ յիս ընակեալ վասն ողորմութեան իւրում ի վերուստ. իջցեն ի վերայ քո, և ի վերայ քահանայիցդ որ ապաշխարեն։

Այլ յայն նպովից, որ դու զքեզ նպովեցեր, և զքահանայութիւն քո, ես վասն ողորմութեան Տեառն Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի, այն որ հրամայեաց ինձ Հոգւովն սրբով, արձակեմ զքեզ, և եղիցիս արձակեալ, և այսր ամենայն նոյնպէս եղեն, և կատարեցաւ Հոգւով սրբով, ամէն։

Այլ յորժամ Աստուած մեծ և հզաւր հրամայեաց ինձ, զի կանոն եդից քեզ զայսչափ աւուրս. մինչև ես մարդ մահկանացու զԱստուած աղաչեցից, զի ողորմեսցի ի վերայ իմ փոխանակ ամենայն ժողովրդոցս, կամ վաղվաղակի ընչեսցէ զիս յառաջ քան զձեզ։ Այլ այժմ ահիւ և դողութեամբ ընկալցիս զկանոնս, քանզի հաւատամ յողորմութիւն նորա, թէ ընդ ձեզ ամենեսին կեցից. զի ինքն ի սուրբ Աւետարանին իւրում ազաղակէ և ասէ։ Եկայք առ իս ամենայն աշխատեալքդ, և ես հանգուցից զձեզ։

Այլ վասն այնոցիկ որ յուրացութեան մեռան տուժարին հաւանեալք. և ոչ ապաշխարեցին, մի՛ իշխեսցես դու, և ոչ ես, և ոչ այլ ոք վասն նոցա պատարագ մատուցանել, քանզի ոչ ընդունի Տէր Աստուած մեր զպատարագսն վասն նոցա, զի ուրացան ի Նմանէ, այլ դնէ ընդդէմ նոցա զդրունս արքայութեանն՝ Յիսուս Քրիստոս Աստուածն ամենայնի, այն որ ասաց իւրով բերանովն, Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ որ ուրացցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հաւր իմոյ որ յերկինս է։ Բայց ես առաւել ասեմ քեզ վասն այնոցիկ որ զպատարագս նոցա արարեր ապիրատութեամբ, այսինքն Մարկիանոսի և Պողքերայ թագաւորաց հերետիկոսաց, և Պողինայ և Անտեղիսեայ և Եզնադիտեայ՝ որ յառաջագոյն եպիսկոպոսք էին հերետիկոսք, և Շմաւոն վանաց երիցու, և պլոց սարկաւագաց և անապատաւորաց։ Այլ զայդ ամենայն պարտ էր քեզ ծանուցանել ինձ վասն

Digitized by Google

Նոցա առաջի Աստուծոյ. զի վասն հաւատոց ասեմ զոր ինչ ասեմն, մի՛ եթէ թողացեալ ինչ ոք քննիցեմք զայդ ամենայն և անկանիցիմք։ Քանզի ոչ չարչարեցաք ինչ վասն հաւատոց, զուցէ լինիցիմք տգէտք և հաղորդիցիմք ի պատարագս հերետիկոսաց։ Ողջ լեր Տերամբ եղբայր իմ սիրելի։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՉՈՐՐՈՐԴ ԱԿԱԿԱՑ ԱՌ ՊԵՏՐՈՍ

Ակակ հայրապետ որ է ի Կոստանդնուպաւլիս, առ Պետրոս հայր իմ և հայրապետ Աղեքսանդրացւոց։

Ամենայն ինչ ըստ աղաւթից իմոց կատարեցաւ առ իս, և այժմ յանձն իմ դիտեմ թէ կոչիմ ես ի փառաւորելոյն որ յերկինս է յողորմութենէն Աստուծոյ մարդասիրի, որ հրամայեաց քեզ խոնարհել և խնդրել ի նմանէ փոխանակ մեր՝ որ էաք ի մոլորութեան։ Այլ վասն նզովիկն այնոցիկ որ զիս նզովեցի, լուծումն կատարեալ ընկալայ ի Յիսուսէ Քրիստոսէ որ ի ձեռն քո խաւսեցաւ Հոգւով սրբով։ Եւ վասն պահոցն զոր խորհրդիւ ի ձեռն քո չնամայեաց ինձ Աստուած, եթէ կամեսցի Տէր, կատարեցից որպէս սահման եդեր աւուրց քառասնից ըստ քում հրամանի։ Այլ վասն այնոցիկ որ ձեռնարկ արարին ի տոմարին, և ոչ ապաշխարեցին, եթէ ոչ մատուցից փոխանակ նոցա պատարագ, ոչ կարեմ առնել։

Քանզի ահա եպիսկոպոս Գնաղիոս, որ յառաջ քան զիս էր, մնծապէս մատուցանէր զպատարագս փոխանակ նոցա, մանաւանդ Շմաւոնի երիցու և վանականի։ Եւ արդ ես զիարդ կարիցեմ յետ այսչափ ամաց արգելուլ զժողովուրդս զայս, քանզի թէ արգելում ի նմին ժամու հրով պրիմ ի նոցանէ, այսինքն ի թագաւորաց և յեպիսկոպոսաց և յերիցանց և ի ժողովրդականաց։ Քանզի ասեն զիս այսպէս. եթէ այն ամենայն ժողովուրդք կորեան, եթէ ամենայն ժողովուրդ որդւոց մարդկան որք յառաջագոյն ննջեցին Մարկիանոսէ մինչև զայս աւր կորնչել ասեմք, լինի խառնակութիւնք մնծ ամենայն եկեղեցեաց։ Բայց զղուշացիր և քննեա, ո՞վ հայր, զուցէ անդրէն դարձցին ամենայն ժողովուրդքս ի տոմար ամպարշտին Լևոնի, որպէս յայնժամ Իսրայէլն դարձաւ յԵգիպտոս. և որպէս յառաջագոյն ասացի. լինի յետինս չա՞ր քան զառաջինն։ Բայց որպէս այժմ վասն

մեր եցոյց քեզ Աստուած որ կենդանիքս եմք, սոյնպէս և վասն պնոցիկ որ մեռանն, յայտնեսցէ քեզ, որք ձեռնարկ արարին ի տումարին ամպարշտին Լևոնի։ Նայեաց այսուհետև, ո՞վ Հայր, ի շնորհսն որ տուեալ են քեզ յԱստուծոյ փոխանակ եկեղեցւոյ իւրոյ։ Վասն այսորիկ առողջութեամբ պահեցար մինչև ցայժմ ի մարդասիրէն Աստուծոյ, զի ի ձեռն քո լուծցէ զամենայն քահանայս իւր Տէր Աստուած քո, և զամենայն ժողովրդեանս կուրացութիւնս։ Քանզի այն որ կարողն է արձակել և ազատեցուցանել ի կապանաց, դիւրաւ կարող է արձակել զայնոսիկ որ ի կապանս իցեն։ Այլ Նայեաց այսուհետև, ո՞վ Հայր, յողորմութիւնն որ տուեալ է քեզ յԱստուծոյ փոխանակ կաթուղիկէ եկեղեցւոյ իւրոյ սրբոյ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՎԵՑԵՐՈՐԴ. ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ԱԿԱԿ

Պետրոս Հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ Հայրապետ որ է ի Կոստանդնուպալիս։

Քանզի կամենեսցեան որ Աստուծոյ հաճոյ են և ընդունելի ընկալայ, այսինքն կապաշխարութիւն քո և զայլոց քահանայից որ կենդանի են և ամենայն ժողովրդեան բժշկութիւն վաղվաղակի ընկալայ. վասն որոյ յայտնելոց են ի ձեզ։ Այլ վասն այնոցիկ որք մեռան անաւրէն ձեռնարկաւ տումարին հրէականի, այն որ երևեցաւ յամպարշտէն Լևոնէ, չէ պարտ մեզ, եթէ կպատարագս նոցա առաջի Աստուածութեանն մատուցուք, կի մի և մեք ընդ նոսին կորնչիցիմք։ Եթէ երանելին Մովսէս, հեգն քան զամենայն որդիս մարդկան, մատոյց երբէք պատարագս փոխանակ Կորխեայ և Դադանայ և Արիրոնի, ապա և մեզ պարտ է փոխանակ նոցա պատարագս մատուցանել։ Եւ վասն առաքելոցն սրբոց զի՞արդ ոչ ասեմք, եթէ Պետրոս գլուխն առաքելոցն սրբոց՝ Սիմոնի մոգի որ մկրտեցաւն և անդրէն դարձաւն, մատոյց երբէք պատարագ նորա փոխանակ, ապա ուրեմն և մեք պարտիմք մատուցանել։ Եթէ երանելին Պաւղոս փոխանակ Հիմենայ և Աղեքսանդրոսի, այնոքիկ որ ի ճշմարիտ հաւատոցն ուրացան, մատոյց երբէք պատարագ, ապա և մեք պարտիմք փոխանակ նոցա մատուցանել պատարագս։ Եթէ ամենայն ժողովք առաքելոյն սրբոց, փոխանակ ամենայն հերետիկոսաց որ մեռանն, այսինքն Պրոտէի կամ Աւղոսի մատուցին պատարագս, ապա ուրեմն և մեք պարտիմք մատուցանել։ Եթէ ամենայն ուղղափառ հայրապետք և եպիսկոպոսք կպատարագս հերետիկոսաց ընկալան, այսինքն Արիանոսաց Պոտէի*),

---

*) Այսպէս յօր.

ապա և մեք պարտիմք ամենեին զՀետ հարցն մերոյ գնալ եթէ կամաւ և եթէ ակամայ։ Եւ վասն այսորիկ ոչ կարես ինձ ցուցանել, ո՛չ յԱստուածային պատուիրանաց, և ո՛չ յառաքելոցն սրբոց, եթէ մատուցին պատարագս առաջի Աստուածութեանն փոխանակ հերետիկոսաց։

Այսուհետև լո՛ւր յինէն կրտսերոյ հրամանի քեզ յԱստուծոյ, զոր ինձ՝ որպէս թէ հաւատամ յողորմութիւնս նորա՝ ի շինութիւն յանձնեաց եկեղեցւոյ իւրոյ։ Եւ վասն այնորիկ զոր ասացեր թէ ոչ կարեմ չառնել զպատարագս նոցա վասն ժողովրդեանս, զի մի եղիցի աղաղակ և խառնակութիւն եկեղեցեաց սրբոց։ Պարտ է մեզ այսուհետև հրամանաւ Աստուծոյ պատուէր տալ սրբութեան բռամ, եթէ յորժամ առնիցես զպատարագս նոցա, այսինքն Մարկիանոսի և Պողոբերայ ամպարիշաթագաւորաց, և Պեղինեայ, և Անտեղիսեաց և Գնադիսեայ, որ յառաջ քան զքեզ եպիսկոպոսք էին հերետիկոսք, և Շմաւոնի երիցու և վանականի, և այլոց բռհանայից և անապատականաց, յորժամ սարկաւագն զանուն մեծոյ ի նոցանէ քարոզէ ի պատարագամատուցին, յայնժամ դու հայրապետդ ի պատարագին յայնմ զոր մատուցանես՝ գոչեա խորհրդիւ առ Աստուած որ քննէ զծածկեալս. Տէր Աստուած ամենակալ մի՛ արհամարհեր զպատարագս վասն անուանցն որ բարոզեցաւ ի սարկաւագէն, զի անունն այն յիւր մասն գնայ, զի առաջի արդար դատաստանի քո մարդ ոչ կարէ կալ։ այսուհետև ընկալ Տէր Աստուած մեր զպատարագս զայս սուրբ, ի վերայ սուրբ սեղանոյ քո յերկինս, փոխանակ այնոցիկ որ ուղղափառութեամբ ննջեցին, վասն անուանդ քո սրբոյ և մարգասիրի։ Այսուհետև փոխանակ Պողինէի եպիսկոպոսի հերետիկոսի, մատո՛ զպատարագն քո առաջի Աստուածութեանն վասն Դէոսկորոսի հայրապետի որ էր յԱղեքսանդրիա, այն որ վկայեաց յաւուրս Մարկիանոսի թագաւորի հերետիկոսի։ Եւ փոխանակ Անտեղիսեայ եպիսկոպոսի հերետիկոսի, արա զպատարագն երանելոյն Թէոդոսի եպիսկոպոսի Երուսաղէմի, այն որ վկայեաց յաւուրս Մարկիանոսի արքայի հերետիկոսի։ Եւ փոխանակ Գնադիոսի եպիսկոպոսի հերետիկոսի, արա զպատարագն երանելոյն Տիմոթէոսի հաւատարիմ Հաւր մերում հայրապետի Աղեքսանդրացւոց։ Եւ փոխանակ Շմաւոնի վանայ երիցու հերետիկոսի, արա զպատարագն երանելի եղբաւրն Տիմոթէոսի այսինքն Անտեղիս երիցու՝ այն որ վկայեաց ի Գանգրա

Digitized by Google

յաւուրս Լեւոնի արքայի հերետիկոսի։ Եւ փոխանակ Մարկիանոսի արքայի հերետիկոսի, արա զպատարագն երանելոյն Եւսեբի երիցու եղբաւր մերում որ վկայեաց յԱղեքսանդրիա։ Եւ փոխանակ Պողբերայ թագուհոյ հերետիկոսի, արա զպատարագն երանելոյն Եւդոկեայ թագուհւոյ ուղղափառի։ Եւ փոխանակ ամենայն ժողովրդեանն և հերետիկոս եպիսկոպոսաց որ մեռանն, արա զպատարագն ամենայն ժողովրդեան փոխանակ որ կենդանի են այժմ, և ուղղափառ եպիսկոպոսաց, և քահանայից, և անապատականաց և շինականաց։

Այլ զայդ ամենայն, ո՞վ սուրբդ Աստուծոյ, մինչ խորհրդիւ կատարես, զամենայն ժողովուրդդ անարատ պահեա և ամբիծ, և փրկես ի ձեռաց հերետիկոսաց, և պատարագն այն որ ի քէն Տեառն Աստուծոյ մատչի, սուրբ անարատ և անխտիր ընդունի։ Եւ սուրբ պատարագն որ ի քէն մատչի մարդասիրի Աստուծոյ մերում, վասն այնր զի զանուանս հերետիկոսացն ոչ յիշեցեր. ո՛չ բարկանայ։ Լե՛ր այսուհետև առ Տեառն Աստուծոյ մերում յահեղ ժամուն յորժամ զաւրք ամենայն վերնայինք ահիւ և դողութեամբ շուրջ զքեզ կան. և նային ի Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ որ ի քէն հայրապետէ պատարագի փոխանակ կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ իւրոյ սրբոյ։ Գոչեա այսուհետև խորհրդիւ ի սրտի քում առ Աստուած ամենայնի շնորհաւք որ տուեալ են քեզ, և ասա. Ոչ յիշեցից զանուանս նոցա ի շրթունս իմ։ բայց յիշեցից զայնոսիկ որ վասն անուան քում ուղղափառութեամբ մարտիրոսացան, զի և մեք ընդ նոսա արժանաւոր լիցուք ժառանգաւոր լինել արքայութեան քում։ Եւ Հոգին սուրբ լուիցէ քեզ և իջցէ ի վերայ պատարագի քում, և իւրով Աստուածային զաւրութեամբն սրբեսցէ զքեզ քահանայ, և զայնոսիկ որ շուրջ զքեզ կան զաւրք երկնայինք, այնք որք յառաջագոյն շուրջ կային զքեզ, և զամենայն քահանայս, և զամենայն ժողովուրդս որ ի խնդրուածոյ քոց կան, քանզի հանգեաւ Հոգին սուրբ այն որ հաւասար է զաւրութեամբ և իշխանութեամբ ընդ Հաւր և ընդ Որդւոյ. նոյն Հոգին սուրբ զաւրութեամբ Աստուծոյ, իջցէ և լցցէ զամենայն խորանն, այսինքն զսուրբ սեղանն յորոյ վերայ Քրիստոս ի քէն քահանայէ պատարագի, բաշխի կոչեցելոց և ընտրելոց։ Ինքնին իսկ Հոգին սուրբ իջցէ ընդ քեզ բահանայապետի և ծածկեսցէ զամենայն խորանն և մեծաւ իշխանութեամբ և կարողութեամբ

իւրով դարձուսցէ և արասցէ զՀայն պայն մարմին Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. Նոյնպէս զբաժակն՝ զգինին արկեալ՝ դարձուսցէ և արասցէ իւրով Աստուածային իշխանութեամբն արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Միածին Որդւոյն Աստուծոյ, այն որ ել և հեղաւ յԱստուածային կողից ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ Քանզի յայնմ Աստուածային արեան լուացաք և սրբեցաք և փրկեցաք, և թագաւորէ կամաւորիկէ առաքելական սուրբ եկեղեցի իւր մինչև ի տիեզերս երկրի։ Այսպէս ճշմարիտ հաւատովք ուղղափառութեան, քահանայքս Տեառն ամենակալին զամրիծ և զանարատ առնուցումք զմարմին և զարիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, այլ նմա փառք և պատիւ և յաղթութիւն և արքայութիւն յաւիտենից ընդ Հաւր և ընդ կեցուցիչ Հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս ամէն։

Այլ վասն այնոցիկ որ ի բազում եկեղեցիս ուղղափառ եպիսկոպոսք, և այլ քահանայից սրբոց որոց պատարագ առնեն, այնոքիկ ձեռնարկ արարին ի յամպարշտին տումարին և անապաշխար մեռան, քանզի ոչ կարէ ամենայն մարդ խելամուտ լինել պատուիրանին Աստուծոյ՝ յորմէ ոչ լինի աղաղակ և խառնակութիւն, վասն զի չեն արժանի խորհրդեանն Աստուծոյ, այն զոր ասաց Աստուած ի մէջ երկուց վկայից . . . . . սին և զաւրութեամբ Հոգւոյն սրբոյ անքննելի Աստուծոյ ամենակալի երևելեաց և աներևելեաց, եթէ ընդունիմ այսուհետև զայս ամենայն որ յայսմ թղթի գրեալ են։ Եւ մինչ դու ձեռնարկ առնես ի ներքս, տո՛ւր բերել վաղվաղակի առ իս, զի և ես յորժամ տեսից զձեռնարկն քո որ ի նմա գրեալ ի, փառաւորեցից զԱստուած, զի այսուհետև ընկերակից եմ ես։ Այլ յորժամ ընդունիմ զթուղթն քո զուղղափառութեամբ որ վկային յամենայն ուղղափառ եպիսկոպոսաց և քահանայից և յանապատականաց, և առաքեմ ի նմին ժամու խնդրուածս և աղաչանս մատուցանել արքային Զենոնի. քանզի այսուհետև յայտնապէս ամենայն մարդկան նկուեցի զտումար ամպարշտին զի եղիցի միաւորութիւն եկեղեցեաց։

Այլ դու, ո՞վ սիրելի, պատրաստեա զանձն քո, զի յորժամ ի թագաւորէն կոչեսցիս, զի՞արդ պատասխանի արասցես հեղութեամբ և հանդարտութեամբ, որպէս թէ ոչ գիտիցես զիրս զայս, զի մի անկանիցիս ի փորձութիւն։ Եթէ գիտիցէ զԽոր-

հուրդս մեր ամենեքին և ասիցէ ցքեզ, ցայժմ և կիս մոլորեցուցանէիր և զժողովուրդս, քանզի ասէիր ամենայն մարդոյ, թէ Պետրոս Աղեքսանդրացի հերետիկոս է, զիարդ այժմ ուղղափառ համարիս դու զնա, վասն այսորիկ հրամայեմ սրբութեան քումեթէ բաղում իմաստութեամբ խաւսեսցիս ընդ արքայի, միթէ անկանիցիս և ի բանից քոց դատապարտեսցիս։ Այլ Աստուած որ յուտացար ի նա, այն որ ընկալաւ զապաշխարութիւն քո, նա տացէ զաւրութիւն և իմաստութիւն սրբութեան քում, և եղիցի միաւորութիւն եկեղեցեաց անշարժ և հաստատուն հաւատոյն։ Այսուհետև եթէ ընդունի արքայ զաղաչանս մարդկան, սրբասէրք որ այդր կան և կամեսցին ընդ ուղղափառութիւն մեր, յայնժամ և դու այնուհետև աներկիւղ խնդրուածս և յայտնապէս աղաչանս մատոյ արքայի. զի արասցէ իւր ձեռամբ զիր, զի դարձցի և նզովեսցէ զամենայն հերետիկոսս, և զամպարիշտ կործանաւղն ամենայն ժողովրդոց, որ կոչեցան Պոտէ Լևոնի եպիսկոպոսին Հռովմայ հրէական տումարն, այն որ ի Քաղկեդոնի ամպարշտութեամբ եղև ընկալեալ վասն թերահաւատին Եւտիքեայ։ Եւ զթուղթն թագաւորին մինչ ուղղափառութեամբ լինի գրեալ յարքայէ Զենոնէ և ի սրբասիրութենէդ քումմէ, տուր բերել առ իս և կարդացից զնա, եթէ նմանիցէ հաւատոյ առաքելոցն սրբոց, և հարցն մերոց սրբոց որ ի Նիկիա ՃԺԸ. և որք յետ նոցայն ժողովեցան ՃՕ. որ ի Կոստանդնուպալիս և Մ. քն որ յԵփեսոս ժողովեցան վասն ամպարշտին Նեստորի, ապա և ես ի նմին ժամու ձեռնարկ արարից ի գիրսն, և յայտնեցից զանձն իմ։ Եթէ կամք իցեն Տեառն Աստուծոյ մերում, դարձայց անդրէն յաթոռ սրբոյ աւետարանչին Մարկոսի. և առիցս զհարցն իմոց, զոր Աստուած ինքնին ետ ինձ որպէս և ես հաւատամ ի նա, և այնուհետև լինի միաբանութիւն եկեղեցեաց սրբոց և հաւատք Քրիստոսի արածեսցին ի միասին խաղաղութեամբ և խնդութեամբ, զմին կեցուցանող ճարակ ի մէնջ որ յԱստուծոյ ընդրեցաք հովիւք, և խնդութիւն կատարեալ, և ուղղափառութիւն թագաւորէ ի մի միաբանութիւն սուրբ և կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ։ Յորժամ մեր աղաւթք կատարին վասն ամենայն հովուաց և հաւատիս, այսինքն զքառասունսն զայն որ հրամայեցաւ քեզ Ակակայ հայրապետի յինէն կրտսերոյ հայրապետէ Պետրոսէ Աղեքսանդրացւոյ, ի Հաւրէ և յՈրդւոյ և ի Հոգւոյն սրբոյ միասնական Աստուծոյ մերոյ, մինչև կատարեա

ցուք խորհրդիւ որպէս և հրամայեաց ինձ Տէր Աստուած զպահս զայս սուրբ ապաշխարութեան և փրկութեան ի կատարել Խաւուրց յաւուր կիւրակէի, յայնժամ ինքն Տեր Աստուած յայտնապէս եկեսցէ, որպէս և յայտնեաց ինձ ի գիշերի, և հաւատամ ի նա, ինձ աստ, և քեզ այդր ժողովրդեամբ հանդերձ ի նոյն կիւրակէի, յերրորդ ժամու, մինչ մատուցանեմք զսուրբ Ներքարան զանապական և զանքննելի, և փառաւորեմք զսուրբ զԵրրորդութիւնն ընդ զաւրս երկնային և բազմահայեաց սերովբէք և քրովբէք. յայնժամ երևեսցի քեզ այդր, և ինձ աստ, ինքնին Աստուած Յիսուս Քրիստոս, սուրբ և զարմանալի նշան որ լինիցի այսպէս. Զի զՄիածին Որդին Աստուծոյ տեսանիցես փառաւք իւրովք յայտնապէս, ի կերպարանս մանկան, որ զգեցեալ է պարեգաւտս կտաւի, և բազմեալ ի վերայ սկհոյն և մաղզմային որ ի վերայ սրբոյ սեղանոյն եդեալ է. Եւ ձգեսցէ զձեռն քուր ի վերայ քո, և բարձցէ ի քէն զահ և զերկիւղ, և ասիցէ քեզ այդր, և ինձ աստ. Քաջալերեցարուք, քանզի չնչեցի ի ձէնջ քահանայիցդ որ ապաշխարիցէք, և յամենայն ժողովրդոց որ ապաշխարեցին զխափանումն, և զուրացութիւն որ ի ձէնջ եղև վասն իմ ի տումարին հրէականի, և այսուհետև մի՝ տեսցես դու զնա, մինչև յերկրորդ անգամ գալուստն.

Digitized by Google

ՁԵՌՆԱՐԿ ԶՈՐ ԱՐԱՐ Ի ԹՂԹԻՆ ԱԿԱԿԻՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ, ՈՐ Է Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱՒԼԻՍ

Պարդապի և ընդունիմ զամենայն որ ինչ յառաջագոյն գրեալ էր, և յայսմ թղթի, զոր գրեաց ձեռն քո Պետրոս Հայր և գլուխ եպիսկոպոսաց և հայրապետ Աղեքսանդրացւոց, ուղղափառ և հաւատարիմ, և խնդամ և փառաւորեմ զԱստուած որ ի քեզ բնակեցաւ, Հայր իմ սուրբ։ Ի նմին թղթի զոր գրեաց ձեռն քո, գրեցի և ես իմով ձեռնարկութեամբ և հաւատամ յանուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Այսպէս հաւատամ զամենայն աւուրս կենաց իմոց, և այսպէս հաւատ պահեմ զամենայն զայս՝ զոր եդի, մինչև եկեսցէ Յիսուս Քրիստոս Աստուած մեր դատել զաշխարհ արդարութեամբ, այն որ խաւսեցաւ ի ձեռն քո զայդ ամենայն ուղղափառութիւն մինչև յաւիտեան. զի նմա վայել է փառք և մեծութիւն, և երկրպագութիւն ընդ Հաւր, և ընդ Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱԿԱԿԱՑ ԱՌ ՊԵՏՐՈՍ

Ակակ հայրապետ որ է ի Կոստանդնուպալիս եպիսկոպոս, ցՊետրոս հայր իմ և հայրապետ Աղեքսանդրացւոց։

Որպէս զՀարտարապետ իմաստուն ընկալար զԱստուծոյ հիմն ապաշխարութեան հաստատուն և անշարժ յանձն առեալ զշինութիւն եկեղեցեաց սրբոց, ոչ եթէ քարամբք և երկրաւ և կրով հաստատեցեր զերկրի զհիմն հաւատոյ, այլ բանիւք հոգևորաւք լցար զերկնից զԱստուածային իմաստութենէն, այն որ ինքն միայն է Աստուած իմաստուն։ Քանզի ուղղափառ խոստովանութեամբ զամենայն մարդ խրատեցեր որպէս Մովսէս եղև յայնժամ, որպէս Պաւղոս զՀեթանոսս. զի ընդ ամենեսին ամենայն եղեր և զամենեսին շահեցար։ Եւ ո՞չ գիտեմ զինչ կոչեցից զքեզ. քանզի այլ երկրորդ Պետրոս կոչեցից զքեզ. այն մեծն և առաջինն առաքելոցն յորժամ առաքեցաւ զԱստուծոյ առ Կուռնելիոս զայս ասէր. Եւ ինձ Աստուած եցոյց ոչ զոք ի մարդկանէ խառնակ ինչ կամ անսուրբ ասել։ Նա զլուխ էր առաքելոցն դասու սրբոց և դու զլուխ ես ուղղափառաց և քահանայից որ Նորոգեցան, քանզի և դու արարեր զայն զոր նա արարն. զի ընկալար զյանցաւորս յապաշխարութիւն։ Քանզի որպէս Պետրոս զՍիմոն մոգ, աղաւթիւք կործանեալ ընջեաց, նոյնպէս և դու, ո՛վ հայր, աղաւթիւք և արտասուաւք և խնդրուածովք գոչեցեր առ Աստուածն վասն մեր և ընջեցեր զԼեւոն և զտումարն զոր եհան ամպարիշտ բերանովն, զոր նզովեցին հարքն մեր։ Այսուհետև և դու, ո՛վ հայր և քահանայ, ողորմութեամբ զամենայն ոք ընկալար, զամենեսին փրկեցեր։ Բայց յողորմութիւն կոչեմ զԲանն Աստուած, այսինքն զՔրիստոս, այն որ ի ձեռն քո խաւսեցաւ զապաշխարութիւն քահանայից, և ամենայն ժողովրդոց։ Վասն այսորիկ ընդունիմ զամենայն զոր ինչ ի Թղթի աստ գրեաց ձեռն քո։ Հաւատամ և ընդունիմ զամենայն որ ինչ գրեալ է ի Թղթիս, և խնդամ և

Digitized by Google

ուրախանամ և փառաւորեմ զԱստուած, զոյն որ բնակեալ է ի քեզ, հայր իմ սուրբ, այն որ երևեցոյց քեզ զկարմանալիս որպէս և հաւատայիր, նոյնպէս և ինձ անարժանիս ասաց թէ ցուցանեմ։

Եւ որպէս զայդ ամենայն ընդունիմ և հաւատամ, գրեցի ի ներքս ի թղթիս ձեռնարկութեամբ իմով. և հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնն զամենայն աւուրս կենաց իմոց, և այնպէս պահեցի որպէս հրամայեցեր ինձ մինչև եկեսցէ Յիսուս Քրիստոս Աստուած մեր դատել զաշխարհս արդարութեամբ։ Եւ ետու բերել առ սրբութիւնդ քո զմուղթն քո յորժամ արարի ի նմա զձեռնարկն քո։ Այլ որպէս ի սուրբ թղթին ձեր ասացէք առ մեզ ի նմին ժամու առաքեցէք զուղղափառ և զսուրբ հարսն առ բարերար արքայ Զենոն, զի աղաչանս և խնդրուածս մատուցեն վասն միաւորութեան եկեղեցեաց սրբոց, զի զյստուհետև և յայտնապէս նզովեսցի յամենայն մարդկանէ զրով տոմար ամպարշտին։ Քանզի յուսամ յԱստուած իմ զի բանայ զբերան իմ զաւրութեամբ Հոգւոյն սրբոյ, զի զամենայն ինչ որպէս Աստուծոյ հաճոյ է՝ խաւսեցայց ընդ թագաւորին։ Զի որպէս և զձեր հրամանն և զգիրն արասցէ արքայն Զենոն, և ես ըստ նմին, և վաղվաղակի տաց ներել սրբութիւնդ քո։ Բայց զայս խնդրեմ ի Տեառնէ զի հանապազ յիշեսցես զիս, որ պաշտաւնակիցս և կամակիցս եմ քո։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԵՒԹՆԵՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ԱԿԱԿ

Պետրոս Հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ զլուխ եպիսկոպոսաց որ են ի Կոստանդնուպաւլիս։

Զթուղթն իմ զոր ետուր բերել ցիս, զոր իմով ձեռնարկութեամբ գրեալ էր, յորժամ ընկալայ յերանելի Թէոդոսիս մանկանէ, փառաւորեցի զմարդասէրն Աստուած մեր, զի տեսի և կարդացի, և ընդունիմ ի նմա զձեռնարկն քո, այն որ ամենայնիւ հաւասար է ուղղափառութեան։ Ո՞ստի արդիւք իցէ այս, զի կամակից և պաշտաւնակից եղեր դու ինձ առաջի Աստուծոյ, բայց զերանելիսս որ ընդ իս են եպիսկոպոսունք և երիցունք, և որք ընդ Աստուծոյ խաւսին անապատականք, առաքեցի զի աղաչանս մատուցեն առ բարերարի արքայի Զենոնի վասն քակման ամպարշտին տումարի և վասն միաւորութեան եկեղեցեաց սրբոց։ Այլ վաղվաղակի գրեա առ իս, ո՞վ երանելի, և զգիրն որ գրեալ է ուղղափառութեամբ յարքայէ Զենոնէ, և ի սրբութենէ քումմէ, ուացես ինձ բերել, և աղաւթեա վասն մեր սուրբ և սրբասէր ընկերակից և պաշտաւնակից հայր իմ Ակակիոս։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՎԵՑԵՐՈՐԴ ԱԿԱԿԱՑ ԱՌ ՊԵՏՐՈՍ

Ակակ հայրապետ եպիսկոպոսաց որ են ի Կոստանդնուպալիս, ցՊետրոս հայր իմ, և հայրապետ Աղեքսանդրացւոց։

Յորժամ եկին յայս քաղաք թագաւորութեան, երանելիք և սրբասէր եպիսկոպոսք և քահանայք և անապատականք. զամենայն ինչ սքանչելապէս արար Աստուած զարմանալիս. քանզի ի նմին ժամու արքայ Զենոն երանելի ետ զանձն իւր և զմարմին յուղղափառութիւն, և ի նմին ժամու առաքեաց և կոչեաց զիս, զորս մի մի ի մէնջ չէ՛ պարտ ասել. քանզի ուսանիս զամենայն ինչ ի սրբասէր արանցդ՝ զորս առաքեցերդ առ իս Զի ի նմին ժամու հրամայեաց առնել զգիրն, այն որ ի նմա նզովեաց զտումար ամպարշտին, և զամենայն հերետիկոսս և զամպարիշտն Եւտիքէս, և խոստովանի զհաւատս ուղղափառութեան զոր յանձնեցին մեզ սուրբ առաքեալքն։ Եւ վաղվաղակի գալոց են առ ձեզ, նոյն սուրբ հարքն զոր առաքեցեր այսր, և պայծառացեալ մեծութեամբ իւրով Պրեգմիոս Ագստղիոս մեծ քաղաքի Աղեքսանդրիայ, այն որ զգիրսն Երանելոյ արքայի Զենոնի յիմ ձեռաց էառ, զի բերցէ վաղվաղակի առ քո սրբութիւնդ։ Այլ զայն գիր մինչ ընդունիս, ո՞վ երանելի, ի նմին ժամու ձեռնարկ արասցես ի նմա և զի յայտնեսցի այսուհետև ճառագայթ ուղղափառութեան որ ծածկեալ էր, և լուսաւորեսցէ զամենայն մարդ՝ յորժամ արձակես զմեզ յուրացմանն կապանաց, որ ի խաւարի և ի ստուերս մահու նստէաք, և առցես յԱստուծոյ զաթոռ քո և զՀարսն քո՝ զսիրելի զսուրբ զեկեղեցին Աղեքսանդրացւոց։

Ընկալ այսուհետև զհաւատարիմ Աստուծոյ զպսակն ուղղափառութեան որ տուաւ քեզ յԱստուծոյ ի դատաւորէն ուղղութեան ի Հաւրէ և յՈրդւոյ և ի Հոգւոյն սրբոյ, այն որ նմա վայել են փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ աղաւթս արա՛ ի վերայ իմ ընկերակից և պաշտաւնակից հայր իմ։

Digitized by Google

ԹՒԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԻՐ՝ ՈՐ ՏՈՒԱՒ ԲԵՐԵԼ Ի ՁԵՌՆ ԵՐԱՆԵԼՈՅՆ ՊԵՐԳԱՄԻՈՍ ԱԳԱՍՏԵԼԻՈՍԻ Ի ԲԱՐԵՐԱՐ ԱՐՔԱՅԷ ՋԵՆՈՆԷ, ԵՒ ՅԱԿԱԿԱՑ ԳԼՈՒԽ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ՝ ՈՐ ԵՆ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԼԻՍ, ԱՌ ԵՐԱՆԵԼԻՆ ՊԵՏՐՈՍ՝ ԳԼՈՒԽ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՔԱՂԱՔԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻՈՅ

Ի նքնակալ կայսր Զենոն բարեպաշտ և յաղթող և նը-շանաւոր մեծ և միշտ բարի և Աւգոստոս աշխարհակալ, որք յԵգիպտոս և յԱղեքսանդրիա և ի Լիբիու, և ի Պենտուապաւ-լիս, երկիւղածաց եպիսկոպոսաց և ուխտաւորաց միայնակեցաց և այլոց ամենեցունց ի Տէր խնդալ։ Զիշխանութիւնս և զընդ-դիմութիւնս, զաւրութիւնս և զվէնս անկուելիս մերոյ թագաւորութեանս։

Գիտացէք զի է՝ ճշմարիտ ուղղափառ հաւատն, զոր ի ձեռն Աստուածային զալստեանն եդին որք ի Նիկիա ժողովեալք ՃԺԸ, սուրբ հարքն, և հաւատացին դարձեալ ՃՕ քն նմանապէս սուրբ հարքն որ ի Կոստանդնուպալիս ժողովեցան։ Ի տուէ և ի զիշերի ամենայն աղաւթիւք և փութով և աւրի-նաւք խնդիր առնեմք բազմանալ և աճել ի ձեռն հաւատոյս այսորիկ ամենայն ուրեք զսուրբ և զկաթուղիկէ եկեղեցի ա-ռաքելական. զանապական և զանմահ մայրն մերոյ գաւաղա-նիս ի խաղաղութեան, և առ յԱստուած միաբանութեան զբա-րեպաշտ ժողովուրդս կալ և մնալ, ընդունելով ի թագաւորու-թենէս մերմէ հաստատական աղաչանս, զոր մատուցանեմք հան-դերձ ճշմարիտ եպիսկոպոսապետաւքս և Աստուածապաշտ ուխտաւորաւքս և վանականաւք և անապատականաւք, Փրկչաւն մերով Յիսուսիւ Քրիստոսիւ, որ ի սուրբ և յԱստուածածին

կուսէն Մարիամայ մարմնացեալ և ծնեալ. զի միաձայնական փառաբանութիւնս և զպաշտաւնն գովելով պատրաստեմք յընդունելս զի հակառակորդացն ազգ փշրեսցի և ի բաց ջնջեսցի։ Ամենեցուն աստուածութեանն զիւրաքանչիւր պարանոց խոնարհեցուցեալ ընդ մերով իշխանութեամբ զի խաղաղութիւն և բարութիւն ի սմանէ եղիցի, աւդոց բարեխառնութիւն, պտղոց բարերարութիւն, և այլ ինչ որ եթէ աւգտակար իցէ մարդկան մեծապէս շնորհեսցի։

Արդ՝ այսպէս ամբիծ և անարատ հաւատոյս, զմեր և ըստ Հռոմոց զիրս ապրեցուցանել աղաչանք և պաղատանք մեզ մատուցանել յԱստուածասէր վանականաց և անապատականաց և յայլ պարկեշտ մարդկանէ, հանդերձ աւտասուաւք աղաչել զմիաւորութիւն սուրբ եկեղեցեաց առնել, և ժողովել զանդամս առ իւրաքանչիւր անդամս, զոր բարիատեաց բանսարկուն ի բաղում ժամանակս որոշել և բարժանել փութացաւ։ Գիտասցեն զայս, զի եթէ որ ընդ միարան և ընդ ողջանդամ մարմնոյ սուրբ եկեղեցւոյ մարտիցէ, ի պարտութիւն մատնեսցի։ Վասն զի դիպեցաւ յայսպիսի իրաց ազգաց անբաւից և անհամարից վնասք մեծամեծք, որքան ժամանակս, յայսքան ամս կենաց մերոց որ անցին, զոմանս ի փրկական և ի վերստին ծննդենէն զրկեալս. և զոմանս յԱստուածային աւրինացն և ի հաղորդութենէն ոչ ընկալեալ, առ մարդկային անխնայ պառակտելի վախճանն հասանել մահունս բաղում անդամ իշխեցեալ գործել հեղմամբ արեամբ պղծեալ զերկիր, և ոչ զերկիր միայն, այլ և զաւդ։

Արդ՝ զայս ո՞ ոք ոչ աղաւթիցէ առ բարին փոփոխել, և զմիաբանութիւն տեսանել։ Ցաղագս այսոցիկ ծանուցանել ձեզ փութացաք զի ամենայն ուրեք ուղղափառ և սուրբ եկեղեցւոյ միաբանութիւն եղիցի։ Բայց այլ հաւատ կամ ուսումն կամ սահման հաւատոյ, քան զասացեալս յառաջագոյն սուրբ հաւատն, ՅԺԸ սուրբ հարանցն, զոր հաստատեցին ՃԾ. սուրբ հարքն, ժողովեալք յառաջագոյն յիշեցեալքն որ ի Կոստանդէնուպալիս. ո՛չ ունէաք և ոչ ունիմք և ոչ կալցուք։ Եւ ոչ եթէ ունիցի ոք և գիտեմք, և թէ ունիցի ոք, աւտար վնա ի մէնջ համարիմք։ Այսու միայն քաջալերիմք, որպէս յառաջագոյն ասացաք, և այսու համարիմք կենդանի պահել զմեր թագաւորութիւնս, և միարան զամենայն ժողովուրդս, որ փրկա-

Digitized by Google

կան մկրտութեանն արժանաւորք եղեն, զմի և զնոյն ընկալեալ նովին լուսաւորին մանաւանդ, որք յԵփեսոս ժողովեցան։ Որոց և զՀետ իսկ չոգան ամենայն սուրբ հարքն որք լուծին և ի բաց հերքեցին զանաւրէն Նեստորիոս, և որք յետ նորա զնորայն խորհին և ունին, զոր և մեր զՆեստորիոս միանգամայն ընդ Եւտիքեայ հակառակս իրերաց մտածեալս, և որք զնոցայն խորհին և մտածեն, և կամ մտածեսցեն, նզովե՞մք։ Ընկալեալ զԾՌ. գլուխն, զասացեալն յԱստուածասիրէն Կիւրղէ, այն որ եղև գլուխ եպիսկոպոսաց սրբոյ եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց։

Քանզի հաւատամք եթէ Միածին Որդին Աստուծոյ, Աստուած է ճշմարտութեամբ. այն որ մարդացաւ Տէր մեր Յիսուս Քրիստոս, այն որ ի բնութենէ Հաւր յԱստուածութեան իւրում, և ի բնութենէ մերմէ եղև մարդկութիւն իւր. այն որ էջ և մարմնացաւ ի սուրբ կուսէն Մարիամայ Աստուածածնէ Հոգւովն սրբով, քանզի մի է որդի և ոչ երկու։ Խոստովանիմք զի մի է Միածին Որդին Աստուծոյ, և նորա է սքանչելագործ զաւրութիւնքն և չարչարանքն, զոր կամաւորութեամբ կրեաց մարմնով իւրով։ Այլ զայնոսիկ որ բաժանեն, և կամ փոփոխելի ասեն, կամ այլայլելի, զայնպիսիսն ոչ ընդունիմք։ Քանզի ճշմարիտ մարմնաւորութիւն, անապական և առանց մեղաց որ յԱստուածածնէն եղև, յաւելուած որդւոյ ոչ արար, այլ եկաց մնաց Երրորդութիւնն՝ Երրորդութիւն, մինչ կամեցաւ և մարդացաւ մի յԵրրորդութենէն Բանն Աստուած։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՈՒԹԵՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ԱԿԱԿ

Պետրոս Հայրապետ Աղեքսանդրացւոյ առ Ակակ սիրելի իմ և գլուխ եպիսկոպոսաց որ են ի Կոստանդնուպալիս։

Ի տասն և ինն ամսոյն որ կոչի Փիրոն, և ըստ Հռովմայեցւոց համարոյ ի տասն և չորք ամսոյն Միպիս, որ կոչի ասորերէն Իյար. և ըստ Հայերէն բարբառոյ կոչի Մարգաց ամիս։ Մինչ եկին առ իս որ առաքեցան ի Կոստանդնուպալսոյ, ընկալայ զնոսա, Տէր, զսուրբ և զպաշտաւնակիցս իմ եպիսկոպոսս և զքահանայս զպաշտաւնեայս և զսուրբ հարսն անապատականս, որ ընդ Աստուծոյ խաւսին։ Եւ մինչ տեսի զնոսա փառաւորեցի զԱստուած մեր մարդասէր. որ զարթոյց զԵրանելի արքայ Զենոն, զի արասցէ ի ձեռն սրբութեան քո զգիրս զայս, զոր ընկալայ ի ձեռն երանելի Պրեգմիոսի Ազատոդիոսէ, և զայդ մինչ առի և կարդացի զիտացի զի նպովէ զամպարշտին տուժար որ եղև ընկալեալ ի Քաղկեդոնի. և զամպարիշտն Եւտիքոս և զամենայն հերետիկոսս։ Տեսի թէ ամենայնիւ հաւասար է զիրս այս հաւատոյն ՃԺԸ եպիսկոպոսացն որք ի Նիկիա ժողովեցան սուրբ Հարքն, և ՃՕ.ից որ ի Կոստանդնուպալիս ժողովեցան, յաղագս պնոյիկ որ ընդդէմ Հոգւոյն սրբոյ մարտնչէին։ Եւ սուրբ ժողովն որք յԵփեսոս ժողովեցան, Մ.քն ընդ սուրբ Հաւրն մերոյ Կիւրղի, գլուխ եպիսկոպոսաց և Հայրապետի մեծին եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց։ Այսուհետև փառաւորեցից զԱստուած մինչ ընկալայ և ձեռնարկ արարի ի զիրս, և խնդամ և ուրախանամ և երկրպագանեմ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. էական Երրորդութեանն անձնաւորութեանց, և միաւորեալ Աստուածութեանն։ Եւ առի յողորմութենէն Տեառն զաթոռ իմ զսրբոյ աւետարանչին Մարկոսի, և նստեմ ի վերայ սորա ընդ հարս հոգևորս, յանընդու-

Digitized by Google

նակ պղծութեան սուրբ եկեղեցւոյս Աղեքսանդրիայ, այլ յաւուրս ուրբաթու, ի տասն և ինն ամսոյն Փիքոն, և ըստ Հռովմայեցւոց ի տասն և չորք ամսոյն որ կոչի Միայիս, և յասորերէն Իյար և ըստ Հայոց Մարգաց։

Ընկալ այսուհետև, ո՞վ երանելի, ահիւ և դողութեամբ ի Հաւրէ և յՈրդւոյ և ի Հոգւոյն սրբոյ, այն որ յիմ ձեռն կրտսերոյ հրամայեցաւ քեզ, ընկալ այսուհետև զսահման քառասնից աւուրցն պահոց որ տուաւ մեզ խորհրդաբար, այն որ լինի փոխանակ քո, և փոխանակ ամենայն քահանայից որ ապաշխարեն, և փոխանակ ամենայն ժողովրդեան որ ապաշխարեն յաղագս թողութեան։ Վասն որոյ սրբութեամբ ընկալցիս զաւրհնութիւն և զկրկին նորոգումն և յաւծութիւն և զզեղեցկութիւն որ էր յառաջագոյն հաւատարիմ քահանայութիւն, այն զոր յառաջագոյն յանձնեաց մեզ Միածին Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս Աստուածն ամենայնի ի ձեռն առաքելոցն և հարցն սրբոց։ Եւ արդ սկիզբն առնեմք ի սուրբ պահն ըստ մեր համարոյ ի վեցերորդ աւուր ամսոյն որ կոչի Թովթ և ըստ Հռովմայեցւոց ի յԱ ամսոյն յերեքն որ կոչի Սեպտեմբեր, և Ասորերէն Իլուլ և Հայերէն Կթոց, և կատարեսցուք զսուրբ պահն մինչև ցչորեքշաբաթի աւր զգուշաւոր խորհրդիւ։ Եւ յաւուր կիւրակէի ի մեր համարուէ ի տասն և հինգ ամսոյն Փոպի, և ըստ Հռովմայեցւոցն ի տասն Հոկտեմբեր, և Ասորերէն Թշրին կամ, և ըստ Հայոց Տրեկանի. այսպէս կատարեսցուք զսուրբ պահն ես և դու, ո՞վ սիրելի, փոխանակ մի մարմնոյ սրբոյ եկեղեցւոյ։

Digitized by Google

ՎԵՑԵՐՈՐԴ ԱԿԱԿԱՑ ԱՌ ՊԵՏՐՈՍ *)

Ակակ զլուխ եպիսկոպոսաց որ են ի Կոստանդնուպաւլիս, ցՊետրոս Հայր իմ և Հայրապետ Աղեքսանդրացւոց։

Սուրբ և հաւատարիմ, քանզի Պետրոս կոչեցից զքեզ զքարոզիչդ ուղղափառութեան, քանզի ի զարմանալոյ ոչ դադարեմ. վասն զաւրութեան և տեսութեան և գիտութեան որ յԱստուծոյ տուաւ քեզ, Հայր իմ, այն որ ի վեր է բան զորդւոյ մարդկան։ Եւ արդ զինչ կոչեցից զքեզ՝ ոչ գիտեմ. զգովութիւն քո ոչ կարեմ ասել. զի կամակից ես սիրելի Աստուծոյ. քանզի ճշմարտութեամբ զիտացի այժմ զի սրբութեամբ և արդարութեամբ պաշտես, և մատուցանես պատարագ առաջի Աստուծոյ, և տեսանող լինիս մեծութեան զաւրութեան նորա։ Քանզի տեսի և ես, տեսի զամենայն ինչ՝ զոր ասացեր, ո՞վ Հայր սուրբ, յայնժամ յորժամ կատարեցան Խ աւուրք պահոցն, որ ի քէն հրամայեցաւ ինչ(ձ) խորհրդաբար, և կատարեցաւ որպէս հրամայեաց սուրբ բանք մարգարէութեան քո յաւուր կիւրակէի, մաւտ յինն ժամն, որպէս և ասացէք, մինչդեռ կայի ահիւ և դողութեամբ, և մատուցանէի զսուրբ պատարագն Տեառն Աստուծոյ ի վերայ սեղանոյ նորա, և մինչդեռ փառաբանէի զսուրբ զԵրրորդութիւնն. յանկարծակի ծագեաց ինձ լոյս, այն՝ զոր ոչ երբէք տեսի՝ լոյս մեծ և անճառելի, և ծածկեաց զիս ընդ սուրբ սեղանովն, և տեսի ճշմարտութեամբ և արդարութեամբ։ Եւ տեսի զՏէր մեր Յիսուս Քրիստոս ի մանկան կերպարանս, և զգեցեալ էր պարեգաւտ սպիտակ կտաւի։ Տեսի ի Նմա և զնշան ըևեռացն, և բազմեալ էր որպէս ի գահոյս ի վերայ սկհոյն և մաղզմային, որ ի վերայ սուրբ սեղանոյն էր եդեալ։ Եւ եբարձ յինէն զահ և զերկիւղ ի Նմին ժամու, և ելից զիս խնդութեամբ, և այնպէս կարծէի թէ չեմ ի

*) Պարտ է ուղղել եօթներորդ.

Digitized by Google

երկրի. և լուայ զձայնն որ ասէր ցիս, որպէս ինքն Աստուած գիտէ, քաջալերեցարո՞ւք քահանայք, քաջալերեցարո՞ւք ժողովուրդք իմ. քանզի բարձի ի ձէնջ զնախատինս ուրացման ձեռնարկութեան ամպարշտին տումարի Լևոնի անիծելոյ, և այլ ոչ տեսի զնա, և ոչ զձայն նորա լուայ. և զլոյսն պայծառացեալ ոչ ևս տեսի։ Եւ վասն այսորիկ փառաւորեմ զսքանչելագործ Աստուածն մեր. և ծանուցի զայդ ամենայն սրբութեան քում, զի յամենայն ժամ աղաւթս մատուցանիցես վասն իմ, այնմ զոր սիրեցեր, և ոչ ուրացար ի նմանէ, այսինքն յԱստուծոյ։ Քանզի խոստովանեցար զնա առաջի դատաւորաց և իշխանաց զԱստուած մեր Յիսուս Քրիստոս։ Այնմ որում ոչ էի արժանի, տեսի զնա ճշմարտութեամբ և արդարութեամբ. զի նմա վայել է փառք և թագաւորութիւն յաւիտենից, ընդ Հաւր և ընդ Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԻՆՆԵՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ԱԿԱԿ

Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ պաշտաւնակից իմ և ընկերակից, և հայրապետ եպիսկոպոսաց որ են ի Կոստանդնուպալիս։

Ահա արժանի եղեր, սուրբ հայր իմ, տեսանել զփառս Տեառն մերոյ. և լսել զբանս յԱստուծոյ մարմնացելոյ, զոր և ես ի կատարման պահոցն խորհրդեան յաւուր կիւրակէի ի մաւտ յերրորդ ժամն մեծ, մինչդեռ մատուցանէաք յեկեղեցւոջն զսուրբ պատարագն Աստուծոյ մերոյ մարդասիրի, նոյնպէս և ես տեսի, և նոյնպէս լուայ որպէս և գրեցեր առ իս ի թղթին որ քոյով ձեռնարկութեամբ գրեալ էր, և ոչ աւելի և ոչ պակաս ինչ տեսի կամ լուայ, որպէս ինքն իսկ Աստուած գիտէ։ Այսուհետև պահեա խորհրդիս գուղղափառութիւն վասն որոյ տեսաք զՅիսուս Քրիստոս Աստուած մեր, այն որ վասն ազգի որդւոց մարդկան անփոփոխելի և անայլայլելի և անբաժանելի, ինքն միայն մարմնացաւ և եկն ի ծնունդ ահաւոր և զարմանալի։ Եկն ի ծնունդ Աստուածածնին Մարիամայ, չարչարեցաւ և խաչեցաւ և թաղեցաւ, և յարեաւ ի մեռելոց յաւուր երրորդի, և վաւուրս քառասունս ընդ սուրբ աշակերտս իւր շրջեցաւ, և հաղորդեցաւ ընդ նոսա և ապա վերացաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հաւր ի բարձունս, և դարձեալ ի վախճանի աշխարհիս այսորիկ գայ յերկնից, փառաւք կաւրութեան իւրոյ դատել զկենդանիս և զմեռեալս։ Զի նմա վայել է փառք և պատիւ և յաղթութիւն և թագաւորութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԶՈՐ ԱՐԱՐ ԱՆԱՍՏԱՍ ԹԱԳԱՒՈՐՆ ԸՆԴԴԷՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ

Քանզի մի է սահման հաւատոց զոր ունիմք յ. ՅԺԸ սուրբ հարցն որք ի Նիկիա ժողովեցան. այն որ ցուցանէ մեզ թէ մի ի սուրբ Երրորդութենէն էր Տէր մեր Յիսուս Քրիստոս Բանն Աստուծոյ, այն որ մարմնացաւն ի սուրբ և յԱստուածածին կուսէն Մարիամայ և մարդ եղև. Զայս սահման ընկալան և սուրբ Հարքն ՃԾ.քն, որ ի Կոստանդինուպալիս ժողովեցան վասն սրբոյ Հոգւոյն. Ըստ նմին և երանելի ժողովն որ յԵփեսոս ժողովեցան և նզովեցին զՆեստորիոս հերձուածող և զամենայն որ ըստ նմա խորհին և հաւատան, որպէս և թուղթն որ կոչի Հենատիկոն Զենոնի ուղղափառ թագաւորի, նոյնպէս և թուղթն երանելոյն Յովհաննու եպիսկոպոսապետին Աղեքսանդրի՝ որ ցուցանեն այսպէս. յորում նզովէ զտումարն Լեւոնի և զժողովն Քաղկեդոնի, որ անցին ընդ նոյն սահման, և երկուս բնութիւնս զկնի միաւորութեանն սահմանեցին վասն Քրիստոսի.

Եւ մեք որպէս ընկալաք ի սուրբ ՃՇմարիտ հարցն, ոչ ասեմք երկուս բնութիւնս, բայց յերկուց մի բնութիւն որ մարմնացաւ Աստուածն բանն խոստովանիմք, և նզովեմք զժողովն Քաղկեդոնի և ընդ նմին և զԼեւոն և զտումարն նորա և զպնոսիկ որ երկուս Քրիստոս և երկուս որդիս ասեն, մի յաոաջ քան զյաւիտեանս. և միւս՝ որ ի վերջին ժամանակս. Եւ որք ասեն զկնի խոստովանելոյ զմիաւորութիւնն երկուս բնութիւնս, և երկուս դէմս, և երկուս աւրինակս, և երկուս յատկութիւնս, և երկուս զանազանութիւնս, և կամ երկաքանչիւր բնութեան գործք, խոտե՜մք և նզովե՜մք, վասն զի ընդդէմ երանելոյն Պիւրղի երկոտասան գլխոցն գոռանին.

Նզովեմք զՊաւղոս Սամոսատացի, և զԴիոդորոս, և զԹէո-

դորիոս, և զՆեստորիոս, և զԹէոդորիտոս, և զՂուքարիս, և զՆեդրէաս, և զՀիրաս, և զԿիւրէ, և զՅոհան Եդեսացի, և զԲարձումա, և զԱկակ պարսիկ, և զԱպողինարիս, և զԵւտիքոս, և զՍաբելիոս, և զԱրիոս, և զԵւնոմիոս, և զՄակեդոնիս, և զՄասնի, և զՄարկիոն, և զԲարդէծան, և զպիղծ ուսմունս նոցա, և որք որպէս զնոսայն հաւատան՝ եթէ ոչ ապաշխարիցեն, և զամենայն աղանդս որք մարտեան և որք մարտնչին ընդդէմ ուղիղ հաւատոյ կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ, և զամենայն որ ոչ խոստովանին եթէ Աստուածածին է Մարիամ սուրբ կոյսն, և ի նմանէ մարմնացաւ և եղև մարդ անփոփոխելի և անմեկնելի, այն որ հաւասար և Որդի է էութեանն Աստուածոյ Հաւր, և Որդի բնութեան մերոյ նոյն ըստ մարմնաւորութեան։ Եւ մի է որ յառաջ քան զմարմնաւորութիւնն, նոյնպէս և զկնի մարմնաւորութեանն, որպէս յառաջն ասացաք. մի բնութիւն մարմնացելոյ Աստուծոյ Բանին խոստովանիմք։ Զարչարեալ որպէս զմարդ, և իւր չարչարանաւքն եբարձ զչարչարանս մեր. և մեռաւ, և մահուամբ իւրով սպան զմահ. և մեռաց անչարչարելի և անմահ որպէս զԱստուած։ Նմա և Հաւր որ առաքեաց զնա, և սուրբ հոգւոյն փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զմեղապարտ գրողս զԹումա՝ զծնողսն իմ յիշեցէք ի Քրիստոս Աստուած. ո՞վ դատ ուղղափառաց։

Ի լուսանցս գտանի գրեալ.

Մինչդեռ գրեցաւ թուղթս այս զՄաւրկայ Գծաներորդ ամն թագաւորութեանն ՁԹ ամ է. և ի Քաղկեդոնի ժողովոյն ՃԽԴ ամ էր. ի հայրապետութեան Հայոց Գէորգեայ, և ի թուին ՅԻ իշխանայ իշխա. . . Ա. . . .

Digitized by Google

ՊԱՏՄԷՆ ԹՂԹՈՑՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԼՍԻ ՓՈՏԱՑ ԱՌ ԱԶՈՏ ԻԶԽԱՆԱՑ ԻԶԽԱՆՆ

Քաջայայտ բարետոհմութեամբ, հպարագոյնդ ճոխութեամբ, բարձրագոյնդ ի համասեռս Աշոտ իշխանդ Հայոց մեծաց. Փոտ, շնորհիւն Աստուծոյ գլուխ եպիսկոպոսաց Նոր Հռովմայ և պատրիարգ հանուրց։

Մեք փոյթ յանձին ունիմք վարդապետելով ձեզ զճշմարտութիւն, մանաւանդ իմացեալ զաշխարհս ձեր ի վերնական շնորհացն պահպանեալ, և լծակից եղեալ հանրական սուրբ եկեղեցւոյ յամենայնի, բայց ի միոյն որ է այս։ Քանզի ընդդէմ Աստուծոյ և հակառակ ճշմարտութեան զչորրորդ ժողովն սահմանէք, որ հաստատեաց զանկումն և պտարամերժումն Նեստորի և զբարձումն գարշելի նորա խոստովանութեանն։ Ո՞վ ոք արդեաւք ոչ իմասցի եթէ ոչ ընդունողքն զժողովն Քաղկեդոնի անպգամք են. միտս ունելով հանգոյն այնոցիկ որք զՏէրն մեր և զփրկիչն պախարակէին, հայհոյելովն որ հալածականն առնէր զդևս. զի չէիք ինչ որոշումն ընդ գլխաւորսն դիւաց, և ընդ այնոսիկ որք հայհոյեն զորս հալածական զդևսն առնէր ի մարդկանէ։ Արդ վասն զի սուրբ ժողովս այս նպովեաց զՆեստոր և արտաքս ընկէց հանդերձ հետևողաւքն իւրովք. ո՞վ ոք դեռ ևս անգիտասցի սատանայի գոլ զՆեստոր սպասաւոր, որ թշնամանեաց զժողովն սուրբ, որ յԵփեսոս գումարեցան, որ և զոմանս մոլորեցոյց ի նոցանէ զկնի իւր։ Արդ քանզի չորրորդ ժողովս երրորդիս միաբանեաց, զի՞արդ յանձին ունիք հայհոյել և չարահամբաւել։ Եւ արդ վասն զի հաստատագոյն ունիմք զգիտութիւն Աստուծոյ զոլ մեծութեանդ ձեր ի վերնական

զաւրութեանցն պահպանեալք և ժողովուրդ Աստուծոյ ազգդ ձեր և արտաքոյ անվայելուչ կարծեաց, այլ վասն զի ժամանեցին առ մեզ վասն ասացելոյս ի մէնջ անընդունակ պատճառաք ի ձէնջ ի ձեռն գրոյ։ Եւ արդ՝ յորժամ ի միջոյ բարձցի կարծիքս այս, և չորրորդ սինհոդոսն ի թիւ երից ժողովոյն ի ձէնջ խոստովանեալ փառաւորեսցի, այնուհետև բարձեալ զբոտանի ամենայն որ ըստ ձեզ անուղղայ կարծիք։

Վասն զի Հռոմն առաջին այսպէս պատուէ զժողովն չորրորդ, ըստ որում և մեք զերիս ժողովսն յառաջագոյն քան զսա եղեալ։ Սապէս պատուակցութեամբ ընդունի և մեծ աթոռն Աղեքսանդրի, և աթոռն Երուսաղէմի, և ոչ կրեն հակառակութիւն վասն ժողովոյս այսմիկ սրբոյ։ Այլ և ժողովք հետևեալք սմին, այսինքն չորրորդին՝ հինգերորդ և վեցերորդ և եւթներորդ։ Արդ ո՞վ որ իշխեսցէ չնդդէմ կալ հաւատոյն, որ սրբոնեալն և տարածեալն է ընդ ոլորտս երկրի, վասն որոյ Տէրն այսպէս ասէ թէ, Դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն։ Ապա ուրեմն ոչ է պարտ հետևել կուր բանից որք անուամբ միայն են որիշ ի դերաբրիստոսէն, որք արբուցանեն զդեղն մահացու և ապականիչ . . . .ոյն որոշելով ի վարդապետութենէ սուրբ Հոգւոյն և ի նշանաց տուելոց։ Եւ կամ զի՞արդ ոչ ասի դարձեալ եթէ որք հիւանդութեամբ մտաց իւրեանց պատարագեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս զԱստուածն և զմարդն. այսինքն յԱստուածային և ի մարդկային բնութենէն, և զկնի տեսութեանն միասին բնութիւն, զի որք զայսն բարբաչեն այնպիսիքն ուրացան զերկաքանչիւր զբնութիւնսն։ Զի եթէ զմին զայն զբնութիւնն զոր ասեն՝ սոսկ ասեն, ապաքէն զմիւսն ուրացան։ Եւ եթէ յերկուց պարզագունից խառնեալ, յայտ է եթէ ոչ մին եկաց մնաց յիւրայութեանն, այլ իւրաքանչիւրքն դատարկացան։

Արդ՝ զի՞արդ, թերևս ասիցեն եթէ այս խառնեալ որ ինքն բնութիւնս որ ի Հայր և ի Հոգին սուրբ յատկացեալ է, եթէ Նորին հակառակն է։ Արդ եթէ ասիցեն եթէ ոչ է յատկացեալ, հայհոյութիւն նոցա եղիցի ի վերայ զլխոց իւրեանց. զի բնութիւն Հաւր իմանի խառնեալ։ Իսկ եթէ յատկացեալ ասիցեն, իմանի Որդի ոչ ունել զբնութիւն Հաւր։ Արդ որ զայդ համարձակին ասել քաջայայտ է թէ յորպիսի հրաւիրին տեղի։ Եւ ո՞վ որ բաւականասցի առ ի զրովանդակն պատմել զորքա-

Digitized by Google

նութիւն պսպիսեաց բանից կհանդէս ի ձեռն գրոց. զոր և Հոգին սուրբ ի ձեռն չորրորդ ժողովոյն բացայայտեաց որոց հետևեցին իսկ նշանակք հաւատարմագոյնք առ ի հաստատութիւն հաւատոյն և ի խորտակումն հակառակողացն, և յեղծումն խաւարային նոցա խորհրդոցն։

Դարձեալ զի թէ թուղթս մի՛ր առ ոմն ի հասարակականաց մարդկան էր, թերևս յոլովագունից էր պէտք բանից առ ի բացայայտել զճշմարտութիւնն։ Այլ բոյդ մեծութեան և հանճարեղ խմաստիցդ և ցանկացողի ճշմարտութեանն և սիրոյն կապակցութեանն ախորժողի. բաւական ուրեմն են ասացեալքս, մանաւանդ զի բաղում անգամ գրեցաք յառաջնորդդ ձեր և քահանայապետդ յոլովակի բանիւք, զոր և այժմ դարձեալ աղաչեմք զբոյդ մեծութիւն հաստատել ի ձեռն սրբոց ժողովոցն յամրիծ հաւատն, և ոչ խոտորել ի թագաւորական շաւղացն, այլ ընդ նոցայն գնալ ուղիղ ճանապարհ. զի որք համարձակին ասել ի Քրիստոս մի բնութիւն, ածէ ի վերայ անձին իւրոյ զԵւտիքեայ դատապարտութիւնն, և զհաւատն զոր ունին Սալամահիկք բազմագլուխ գոլ, և ոչ մի ունել գլուխ. նաև Մանեայ ևս լինի ձայնակից։ Դարձեալ եթէ այլ ոչ խոստովանեսցի ոչ որոշեալս, և ոչ յատկացեալս յերկուս բնութիւնս, և յերկուս անձնաւորութիւնս, այնպիսին Նեստորին է արժանաւոր պատժոյ։ Վասն որոյ եկեղեցին Աստուծոյ հերքեալ զերկաքանչիւրսն մերժեաց, լուծանելով զնոցա չարափառութիւնն յիւրոց աստուածային յարկաց, և խոստովանեցաւ մի դէմ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, երկուս անուանելով բնութիւնս յատուկս անշփոթս, հակառակս սահմանելով ընդդէմ որոց զկիրսն և զչարչարանսն աստուածութեանն դնեն։

Արդ՝ մի հեղգասցիս, ո՞վ վսեմագոյնդ, ուսուցանել զժողովուրդն Քրիստոսի և ածել ի ճշմարիտ խոստովանութիւն հաւատոյ, զի չիք ինչ հաճոյագոյն Աստուծոյ քան զճշմարտութեամբ ճանաչել զնա և ուղղակի խոստովանութեամբ փառաւորել, և սիրով առաւելեալ և հաստատեալ և ոչ երբէք խոտորեալ, որով ևս քան զևս հանդիպիս ճոխութեան, նախ յԱստուծոյ. պահպանական շնորհիւն ամրացեալ ի թշնամեաց և յորոգայթից պահպանեալ պատահմանցն, զկնի և յոր Թէոդոսաց սուրբ թագաւորացն զերկաքանչիւրսն ժառանգելով զայժմուս և զհանդերձեալսն, ի ներկայումդ ասեմ և յապառնիսն,

բարեխաւսութեամբ փառաւորելոյ տիրուհւոյն և Աստուածածնէն, հանդերձ ամենայն սրբովք։

Առաքեցաք քաջատոհմութեան և մեծանձնութեանդ քո յիշատակ աւրհնութեան ի պաշտպանեալ Աստուածընկալ պատուական խաչէս։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ՓՈՏԱՑ. ԴՐԵԱԼ ՍԱՀԱԿԱՑ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԱՅ ԱԶՈՏԱՑ ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ

Քահանայապետ զգաւնայեալ պարկեշտ և առաքինաբէր որ ի Քրիստոս վարուք *), Փոտ. վերադիտող Թագաւորական մեծ քաղաքիդ, Նոր Հռոմայ պատրիարգ, Աշոտ իշխանաց իշխան Հայոց Մեծաց։

Զգիր հանձարեղ խոհականութեանդ ձերոյ, ով Աստուածարեալդ, ընթերցայ, և յոյժ ուրախութեամբ լարերանեցի զերկնաւորն զՔրիստոս, զփրկիչն մեր և զկեցուցիչ յաւէտ կենդանութեամբ, զսրբութիւնդ ձեր տեսանելով պաշտպանեալ այլ և զնախենականդ առ միմեանս զսիրոյն կապակցութիւնս, զոր ներբողակն բանիւ յիշատակեալ էիք։ Շնորհ բաղում ունիմ և կալայց ձերում սրբութեանդ, այլ ես ստորերկրայս որ Քշտ ի խոնարհ ունիմ աշխարհական խորհրդածութեամբ ըմբռնեալ և ի նիւթականիս ցանկ, անվարժ զոլով առ տեսութիւն երկնային զեղեցկութեանն և պայծառութեան արուսեկին վասն բնաբար ունելով զ'ի վայր նկատումն այլ քոյդ մաքրատեսակ առաքինասէր անձն, հետևեալ քննութեանց աստուածային գրութեանցն, և պատուիրանին՝ որ մեզն աւանդեցաւ, եթէ՝ Ցայսմ ծանիցեն իմ զոլ աշակերտք եթէ զմիմեանս սիրեսջիք։ Ցիրաւի պյսքան յորդորական և հանձարեղ բանիւք առ սիրոյն դաստիարակես կապակցութիւն, զոր եթէ ոչ ունիցիմք, ամենայն ձև պատկերին շրջեալ փոխեցաւ, նաև առանց աշխատութեան ամրարին սորայս առաքինութեան մասունք, որոյ դրուատիքն ոչ ի մարդկանէ, և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի նոյն ինքնաւոր վաւրութեանցն։ Սէր զԱստուած

---

*) Յոր. վարիւք.

իմացեալ՝ որում ոչինչ յէիցս համեմատի այնմ բարձրութեան, և անզուգական շնորհայն զոլ հաղորդ սիրոյն ունակութեամբ. և երանի թէ հաւատով ևս, զոյր կապել զկապակցութիւն խոստովանութեան սուրբ և ճշմարիտ հաւատոյս, և ի միասին պայծառանալ, և միակրաւնք ի տան Աստուծոյ բնակեալք։

Այլ վասն զի ոմանք հնստեցին սուրբ և ճշմարիտ ուղիղ խոստովանութեանն, աւանդեալ ի սրբոց առաքելոցն և զարգացեալ յերից սրբոց ժողովոցն, զոր գումարեցին երջանիկ և սուրբ թագաւորքն ի լուծումն Արիոսի և Մակեդոնի և Նեստորիանոսի՝. . . . աստուածային ամրիծ հաւատոյն լինել վրէժխնդիր, զոր ոչ հանգոյն նոցա Մարկիանոս խորհեցաւ. այլ թագաւորասատ հրամանաւ գումարեաց զչորրորդ ժողովն ի կնոջէն իւրմէ Պուլքերէ հրապուրեալ, որ երբեմն ջատագովն էր Նեստորի. յորոյ ոմանք յերկիւղէ և այլոք ակնառութեամբ թագաւորին հաւաքեցան, զոր ոչ է այժմ ըստ երկայնութեան բանից ասել, մանաւանդ թէ ման ինչ ծանուցանել ըստ սրբութեան՝ ոչ կանխուլ ի մէնջ զոլ զպատճառս ժողովոցն։ Եւ վասն զի ի թղթի աստ նախակարգեալ էր ըստ սրբութեան զչորրորդ ժողովոյն յիշատակ, և ի թիւ երից սրբոց ժողովոցն կարգեալ, և զնոյն և ի մէնջ խնդրեալ զընդունելութիւն, զոր ոչ ընկալան հարքն մեր և վարդապետքն. ծանուցեալք զնոցա աւտարաձայնութիւնս. և զլուծումն սահմանաց ժողովոցն զոր աւանդեցին ընդհանուր մի Տէր և Որդի զՔրիստոս քարոզելով աշխարհի, միացեալ յերկուց բնութեանցն անշփոթ և անքակ միաւորութեամբ, զոր սոքա յերկուս բաժանեցին բնութիւնս և ներգործութիւնս և կամս. նեստորական մոլորութեանցն հետևեալք։ Բայց զոր միաւորեալ ասացին և այնու զպարզամիտն հրապուրելով ի բաց լինել ինքեանց ի նեստորական աւանդէն, զոր և առընթեր բանիս կարգեսցուք զսահմանս երկաքանչիւր դաւանութեանցն, զնեստորին ասեմ և զՔաղկեդոնին հանդերձ Լևոնական տումարիւն, յորոյ վերայ կառոյցն իսկ ժողովն Քաղկեդոնի զսահմանս աւտարոտիս և խորթաբարոյ իւրոյ խոստովանութեանն։

Գրէ Նեստոր յիւրում գլխաւորագոյն տրամաբանութեան հաւատոյն բանի այսպէս. Ես անփոփոխելի և անայլայլելի բանին Աստուծոյ երկուս բնութիւնս խոստովանիմ. Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, և մարդ կատարեալ ի զաւակէ

Դաւթի և Արրահամու։ Գրէ Լևոն յիւրում տումարին. Աստուած խոստովանիմ ըստ այնմ ըստ որում ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն. և մարդ խոստովանիմ ըստ այնմ ըստ որում՝ Մարմին եղև և տաղաւարեաց ի մեզ։

Գրէ Նեստոր. Ոչ բանն Աստուած հանդերձեցաւ պատանեաւբ ի Յովսեփայ, այլ մարմինն ի Յովսեփայ։ Գրէ Լևոն. Մինն փայլէր նշանագործութեամբն, և միւսն ընդ չարչարանաւքն ստոր անկեալ։

Գրէ Նեստոր. Բանն մարմին եղև և տաղաւարեցաւ ի մեզ։ Գրէ Լևոն, Իմաստուն շինողին իւր տուն. չի բանն մարմին եղև և տաղաւարեաց ի մեզ։

Գրէ Նեստոր. Զերկակն առ Քրիստոս որոշեմ բնութիւն, չի կրկնակ ահա բնութեամբ, իսկ արժանաւորութեամբ մի։ Գրէ Լևոն, քաղցնուլն և ծարաւելն, վաստակելն, ննջելն, խոստովանարար է մարդոյ, այլ ի հինգ հացէ զհինգ հազարսն յագեցուցեալ, և սամարուհւոյն զկենդանական ջուրն շնորհեալ, և ի վերայ մկանանց ծովուն ճեմելն, և զկոհակս այտմանց ծովուն վերասաստելով մրրկին խաղաղացուցանել, աներկբայապէս է Աստուծոյ։

Տեսե՛ր, ո՞վ սիրելութիւն, զհամաձայնութիւնդ Նեստորի ընդ Լևոնի, առ բնութեանցն զանազանութիւն և ներգործութեանցն յատկութիւն։ Արդ՝ զի՞նչ աստանաւր իմասցուք, որ տախիմ ի քոյդ սրբութենէդ ընդունել զժողովն Քաղկեդոնի։ Տեսան մերոյ ասացեալ է, Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, չէ ինձ արժանի։ Արդ ո՛չ կարեմք զՔաղկեդոն սիրել զրաժանողն յերկուս զմի Քրիստոսն, և զՔրիստոս ատել, որ իւրովն փրկեաց զմեզ պատուական արեամբն։

Ցիշատակեցիս դարձեալ Նոյն ինչ և ի Քաղկեդոնական սահմանացն հաւատոյ, և առընթեր զսրբոյն Կիւրղի, և տեսցուք թէ ունի՞ն ինչ առ միմեանս զհամեմատութիւնս։ Գրէ ժողովն Քաղկեդոնի, եթէ՝ Ոչ եբարձ զբնութեանցն զանազանութիւնս վասն միանալոյն. այլ առաւել ողջ պահեաց զյատկութիւն երկաքանչիւրոցն բնութեան։ Գրէ սուրբն Կիւրեղ յառաջնում թղթոյն Սիւնկիտոսի. Մի ասեմք Որդի որպէս և հարքն ասացին, մի է բնութիւն բանին մարմնացելոյ։ Արդ՝ զի՞նչ հաղորդութիւն կայցէ Քաղկեդոնի ընդ Կիւրղի, զի զոր

նա մի բնութիւն միաւորեալ յերկուցն սահմանեաց ըստ սուրբ ժողովոյն Եփեսոսի, Քաղկեդոն յերկուս բնութիւնս որոշեալ սահմանեաց։ Եւ վասն զի ոչ ի թղթի աստ փոյթ կարգոց վարդապետացն և հարցն ընթերցաք զպիտառութիւնս, և ոչ մեք կարդեցաք յորոց ունէաք զրաղումս. այլ միայն ըստ քոյին խընդրոյս, ո՞վ սիրելութիւն, կարգեմք զպատասխանիս։

Արդ՝ վասն զի գրեցաւ ի քոյդ սրբութենէդ առ մեզ, եթէ՝ Որք մի ասեն ի Քրիստոս բնութիւն՝ Եւտիքեանք են, և զնոցայն ընկալցին զհատուցումն. աստանաւր ո՛չ ուղիղ դատեցար, վասն զի ամպարիշտն այն Եւտիքէս մի բնութիւն ի Քրիստոս ըստ փոփոխմանն ասաց, տալով աւրինակ պսպիսի ինչ. Որպէս անգործ ոսկի ի պատկեր ի ձեռն գործաւորութեանն երկաթոյ ձևացեալ, և զնկարագրութիւնն միայն յերկաթոյն ընկալեալ յինքն. այլ ոչ ի նիւթոյ երկաթոյն ընկալեալ յինքն. այսպէս և ոչ Ցեառն մերոյ յԱստուածածին կուսէն Մարիամայ բնութիւն մարդկային ինչ ընկալեալ, այլ մեծոյ յորովայնի կուսին փոփոխումն միայն աստուածային բնութեանն ի մարդկութիւն գործեաց։ Ցեսե՛ր զամպարիշտ մտացն կչարաչար խորհուրդն և զդաւաճանող խորամանկութիւնն. թէ յո՛րպիսի հայհոյութեան յանդունդս գլորեցաւ։ Արդ զի՞արդ հաւանեալ քո ամենասատար գիտութիւնդ ի մեզ յարել զայդպիսի աւտարոտի խորհուրդ զրարանութեան առ ի չարահամբաւել զմեզ, զոր ոչ վայել է քո սրբութեանդ, զոմն նզովեալ և յաստուածային ընկեցեալ յարկացն ի մեզ յարելով։ Վասնորոյ և ասեմք, եթէ որք այդպիսի խորհրդածութեամբ ասեն ի Քրիստոս մի բնութիւն, և կամ ընդունին զնորա վարդապետութիւնն, ընդ նովին նզովիւք փակեալ մեասցեն յաւիտեանս ժամանակաց։

Եւ արդ՝ ընդարձակագոյն բանիւ ասասցուք զմեր դաւանութիւն, ըստ որում Մի ասեմք ի Քրիստոս բնութիւն, որ և ամենեցուն բաղայայտ է։ Ապաքէն մի բնութիւն յերկուս դէմս իմանի և ասի. բանզի է՝ որ ըստ պարկութեանս է մի՝ որ ոչն յաւդական, որպէս Գաբրիէլ և Միքայէլ. և է՝ որ ըստ յաւդաւորութեանն է մի, որպէս Ադամ և Նոյ։ Արդ եթէ ըստ այնմ ասէաք ի Քրիստոս մի բնութիւն ըստ որում պարզն է, ոչ էր ի դէպ ասել նմա Աստուած մարդացեալ։ Իսկ եթէ ըստ այնմ ասասցուք, ըստ որում յաւդականն մի բնութիւն, ոչ

Digitized by Google

լինի բարձումն Աստուածային կամ մարդկային բնութեանն։ Արդ եղիցի մեզ աւրինակ մարդս. որպէս ի վերայ սորա ասի որ ինչ անկ է մարմնոյ, և որ ինչ մարթ է հոգւոյ։ Բայց մարդն ոչ ասի երկու բնութիւնք՝ այլ մի։ Իսկ եթէ ոք ընդդէմ եկեալ երկուս ասիցէ բնութիւն Քրիստոսի, երիս լինի հաստատեալ. երկուք մարդկային և մի աստուածային։ Արդ զո՞ր յերիցն զմինն կամին բառնալ՝ երկուսն ասելով ըստ այսմ բնութեան, զի եթէ զմարմինն, այնպիսին Եւտիքեան է։ Իսկ եթէ զհոգին մարդկային, Ապողինարիտ է։ Իսկ եթէ զԱստուածայինն, նման է Հրէիցն որք ասէին դու մարդ ես. և զանձն քո Աստուած առնես։

Եւ արդ ի հանդիսի անցուցաք զոր ասեմքս մի բնութիւն ըստ միաւորութեանն երկուց անշփոթ բնութեանցն։ Եւ վասն զի յորժամ զմարդոյն զգոյացութիւնն ի կիր առնու աստուածային պատմութիւնն. երբեմն զհոգին յիշէ միայն՝ ասելովն՝ ի պատկեր Աստուծոյ արար զմարդն, և երբեմն զմարմինն միայն՝ ասելովն, Հող էիր և ի հող դարձցիս. և այն՝ վասն երկուց բնութեանցն զմիաւորութիւն ունելոյ։ Դարձեալ զի երբեմն զհոգին յիշելով, զմարմինն նշանակէ, որպէս յորժամ ասէ, Մի հոգայք վասն հոգւոց ձերոց թէ զինչ ուտիցեն կամ զինչ զգեցցին. զհոգիսն յիշելով, զմարմինն նշանակեաց։ Եւ դարձեալ ասէ. Ոչ գիտէք թէ մարմինք ձեր տաճար են Աստուծոյ. զմարմինսն յիշելով զհոգիսն նշանակէ. զի ի հոգիսն բնակէ Աստուած։ Դարձեալ ասէ. Եւթանասուն և հինգ ոգի մտին յԵգիպտոս. զհոգիսն յիշելով զբոլոր մարդիկսն նշանակեաց։ Եւ դարձեալ թէ, Առ քեզ ամենայն մարմին եկեսցէ. զմարմինսն յիշելով, զբոլոր մարդիկն նշանակեաց։

Այսպիսի աւրինակաւ գիրք սուրբք և ի վերայ Քրիստոսի Աստուծոյ միաւորեալ բնութեանցն ասեն, որպէս յորժամ գրէ առաքեալն, Քրիստոսիւ եղև ամենայն որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի, զաստուածութիւնն միայն նշանակելով։ Դարձեալ գրէ ասելով. Մի է միջնորդ Աստուծոյ և մարդկան, մարդ Յիսուս Քրիստոս, զմարդկութիւնն նշանակելով։ Եւ այսոքիկ և վասն յերկուց բնութեանցն անորիշ զմիաւորութիւնն ունելով։ Դարձեալ զի զաստուածութիւնն յիշելով՝ զմարդկութիւնն նշանակէ, և զմարդկութիւնն յիշելով՝ զԱստուածութիւնն նշանակէ, որպէս Յովհաննէս ասէ. Որ էրն ի սկզբանէ զորմէ

յուաքն, որում ականատեսն իսկ եղաք. և ձեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց. կտեսեալն և զշաւշափեալն ասելով, զաստուածութիւնն նշանակեաց, զի առ Հաւր, և ընդ Հաւր Բանն էր. և շաւշափեալն մարմինն։ Դարձեալ ասէ, Ոչ ոք ել յերկինս՝ եթէ ոչ, որ էջն յերկնից որդին մարդոյ որ էն յերկինս. զորդին մարդոյ յիշելով՝ զՈրդին Աստուծոյ նշանակեաց։ Զայս ամենայն գործէ անճառ միաւորութիւնն։

Արդ՝ ոչ ի վերայ սոսկ մարդոյ ասեմք, որ ինչ ի ծնընդենէն մինչև ցհամբարձումն, և ոչ ի վերայ մերկ աստուածութեանն, զի մերկ Աստուած ոչ տեսանի, և ոչ շաւշափի, և սոսկ մարդ ոչ կարէ ասել թէ՝ Ցառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես։ Եւ ոչ եթէ զփառսն՝ զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի, այլ ասեմ զայսոսիկ ի վերայ բանին մարմնացելոյ։ Որովք հետևին նմա երկուք նշանակութիւնքն. այլ ոչ որոշին կիրքն և ներգործութիւնքն երկուց բնութեանցն, զի յորժամ որոշեմք զբնութիւնսն. գան ընդ նոսա և երկաքանչիւրքն յատուկքն բնաւորարարք ըստ Նեստորի մոլորութեանն։

Դարձեալ վասն որոյ գրեաց սրբութիւնդ քո թէ՝ Հիւանդամիտք են, որ զկնի պատարագելոյն զփրկիչն մեր Յիսուս Քրիստոս և ականատեսք լինելոյ, մի ասեն բնութիւն։ Մեք յորժամ մատուցանեմք զպատարագն կենսաբեր, ոչ իբրև լոկոյ ի մէնջ մարդոյ մարմին և արիւն գոլ ասեմք. զի լոկ մարմինն կենդանութիւն տալ ոչ կարէ, որպէս ասաց Փրկիչն թէ՝ Մարմին ինչ ոչ աւգնէ, հոգին է կենդանարար։ Այսու իմանի և է կենդանարար. որպէս փրկիչն ասաց, թէ՝ Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, կենդանի եմ ես վասն Հաւր, և Որ ուտէ զիս և նա կեցցէ վասն իմ։ Իմաստութեամբ նպատակաւոր ի խորհուրդ բանիս, վասն զի ի Հաւրէ առաքեալ Բանն է, և կերեալ յերկրի մարմինն։ Արդ եթէ բաժանեալ են բնութիւնքն որպէս ասէք, յայտ է եթէ ճաշակողքն զԲանն ուտեն, զկենդանի զառաքեալն ի Հաւրէ, ըստ որում ասացն թէ՝ Որ ուտեն զիս. զոր սարսափելի է իմանալ. իսկ եթէ զմարմինն ուտեն, և մարմինն կենդանարար է, յայտ է թէ միաւորեալ է ընդ առաքեցելոյն ի Հաւրէ, և ոչ ունի բաժանումն։

Դարձեալ ոչ փոքր ինչ հիացայ վասն որոյ գրեցէք ի Թղթի աստ, եթէ յորժամ խառնումն ասիցէք ի վերայ Քրիստոսի երկուց բնութեանցն, յայտ է թէ և ոչ մինն եկաց ՆՈՅ

յիւրութեանն, այլ լուծեալք ի միմեանց դատարկացան. զի եթէ այս խառնեալ բնութիւնս ի Քրիստոս, որ ի Հաւրէ և ի Հոգւոյն սրբոյ է, յայտ է թէ Հաւր և Հոգւոյն բնութիւնն զխառնումն ունի ընկալեալ։ Իսկ եթէ յատկացեալ է Որդւոյ բնութիւն առանձնաւորութեամբ և խառնեալ, յայտ է թէ ոչ ունի Որդի զՀաւր բնութիւն։ Այ են բանքս աղտեղութեամբ, զի եթէ ապականութեան խառնումն ասէաք ի վերայ Քրիստոսի բնութեանցն, որպէս զուր ընդ գինի խառնեալ և ելկոքին ի միմեանց լուծեալ, և կամ որպէս պլասեռ հրահալքն, զոսկին ասեմ և զարծաթն, և ի միմեանց ապականեալք, թերևս ի դէպ էր կոր ասէիրդ։ Իսկ եթէ արտաքոյ սորին է կոր ասեմք, զի խառնումն Բանին Աստուծոյ ընդ իւրոյ մարմնոյն, որպէս լոյս ընդ աւդ՝ կամ հուր ընդ ոսկի՝ կամ հոգի ընդ մարմին, անփոփոխք և անանջատք գոլով, ուրեմն ի զուր չարահամբաւէք զմեզ՝ պախարակելով զճշմարտութիւնն։ Սմին և մեծ և հռչակաւոր հոետորն Աստուածարան վկայէ ասելով. Ո՞վ նոր խառնմանս, ո՞վ սքանչելի խառնուածոյս, արդարև նոր իսկ՝է աստուածութեանն ընդ մարդկութեանն խառնումն, և սքանչելի խառնուածանեղի ընդ եղականի։ Դարձեալ նոր իմն գրէ երանելիս. քանզի մաքուր զնորա զաստուածութիւնն բերել ոչ է հնար, ի լինելութեան և յապականութեան է բնութիւնս. վասն այնորիկ և զանխառնելիսն խառնէ։ Գրէ և սքանչելագործ այրն Աստուծոյ և հաւատարիմ ծառայն սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայոց. Այս է ճշմարիտ խոստովանութիւն, խոնարհեցաւ և խառնեաց զաստուածութիւնն ընդ մարդկութիւնս, և զանմեն ընդ մեռոտս։ Եւ դարձեալ ասէ. Կորոյս զչարն և զարտաւորեաց զմեղս աստուածախառն մարմնովն։ Եւ դարձեալ ասէ, Խառնեաց միացոյց զմարմինն ընդ աստուածութեանն։

Տեսեր, ո՞վ պատուական գլուխ, ո՞րպէս վկայեաց յաստուածապանիցն խառնումն և անշփոթ միաւորութեանն բնութեանցն որ ի Քրիստոս, ըստ որում և բաղումս ունէի առ այս գրել, այլ քոյոյդ կատարելութեանդ բաւական համարեցաք ըստ իմաստնոյն խրատու՝ թէ տրամամիտն պատճառաւն բաւականասցի։

Դարձեալ խնդրելի է, թէ ընդէ՞ր սուրբ հարքն, երկուք այսմ վարեցան ձայնիւք, երբեմն խառնումն ասելով և երբեմն միաւորութիւն։ Այլ վասն զի խառնումն ոչ ունի բաժանումն, և միաւորութիւնն ոչ ունի բակտումն, վասն այսորիկ երկոքումքքս

Digitized by Google

պյսոքիւք վարեցան բանիւք։ Քանզի որպէս որոշմունքն ոչ ունին խառնումն, այսպէս և ոչ խառնումն՝ ասի բաժանումն։ Եւ որպէս երկուութիւնն զմիութիւնն բառնայ, այսպէս և միաւորութիւնն բառնայ զերկուութիւնն. զի եթէ ոչ էր խառնեալ անշփոթաբար ընդ մարմնոյն, ընդէ՞ր ասեն՝ Մարմնացաւ։ Եւ եթէ ոչ էր միաւորեալ ընդ մարդկութեանն, զի՞արդ ասեն՝ Մարդացաւ զի մարմնանալ և մարդանալ անմարմին էութեանն ասի, զի մարդն ոչ ևս կարէ այլազգ լինել քան եթէ մարմնով։

Նա և այլ ինն հրաշալի ընթերցաք ի թղթի աստ, եթէ ժողովն Քաղկեդոնի մի դէմս և երկուս բնութիւնս վասն այսորիկ ասաց ի Քրիստոս, զի մի ի Բանն Աստուած ընթացցին չարչարանքն։ Ծաղու ուրեմն արժանաւոր են բանք նոցա թերահաւատութեանցն։ Վասն զի զնոյն զայս բան և պիղծն Նեստոր աքստացաւ, այսպէս ասելով ընդդէմ մեծին Կիւրղի։ Եթէ յորժամ ասիցես բնութեամբ զմիութիւնն՝ ապա ի Բանն իսկ ընթանան վիշտքն։ Իսկ երանելին Կիւրեղ այսպէս պատասխանեաց. Եթէ վնասեցի ուրեք բնութիւն մարդոյ կամ անդամին ինչ յանդամոյ, կամ կուրացի ակն, կամ հարցի այլ ինչ անդամ երկաթով, կամ ժանեաւք գազանի. խելեցի՞ն արդեւ՞ք և ոգիքն։ Եւ ո՛չ, ասէ, երբէք։ Արդ՝ եթէ զսա միացոյց Աստուած ի մարմնի միաւորութեամբ բնութեանն, և առանց վշտանալոյ և խեղութեան եկաց մնաց յիւրում բնութեանն, վշտանա՞յր արդեւք Բանն Աստուած յիւրում բնութեանն, զի՞ աչէն ասեմ և զամենայն վշտացն։ Գրէ դարձեալ և նոյն ինքն Կիւրեղ՝ Որպէս հրացեալ ոսկին և կռանահարեալ նիւթ ոսկւոյն ընդունի զկռանահարութիւնն, այլ ոչ և ընդ նմա միաւորեալ հուրն, սակայն ոչ որոշի և ոչ բաժանի յիւրում նիւթոյն. այլ յերևել ոսկւոյն երևի և հուրն, և յայդմանէ հրոյն, ալդէ և ոսկին, և զտանին ամենևիմբ մի, թէպէտ և ժամանակաւ զտանին յարեալ ի միմեանս։ Այսպէս և աստուածութիւնն ընդ մարմնոյն իւրոյ, մանաւանդ թէ առաւել քան զայս։ Այլ և զայս ևս ծանիցէ բոյդ խոհականութիւն, Վասն զի աւրինակն մասն ինչ նմանէ զճշմարտութիւնն։ Զի եթէ բովանդակ ճշմարտութիւնն յաւրինակին զտանէր, նաև ոչ էր այնուհետև աւրինակն, այլ նոյն ինքն ճշմարտութիւնն վասն որոյ աւրինակն։

Ասասցուք դարձեալ ընդդէմ միւս ևս անընդրող բանիցն զոր ասեն, որպէս ընթերցաք, զբնութիւնսն բաժանեալ և ըստ

դէմն միաւորեալ անտեղի խորհրդով։ Զի եթէ բնութեանցն միաւորութիւն խառնակումն է, որպէս ասեն, որո՞ւմն և դիմացն *) պարտի լինել, զոր մինն ասեն. վասն զի Առաքեալն երկուս դէմս զրէ, Որ ի կերպարանս Աստուծոյ էր, զկերպարանս ծառայի առ, կերպիւ և կերպ ասաց։ Արդ զոր յերկուցն ախորժեն բառնալ դիմաց, ըստ որում մինն ասեն. զի թէ աստուածութեանն, զՍաբելի ախտն ախտանան, իսկ եթէ զմարդկութեանն, զինչ այն որ ի ճշմարիտ կերպարանս մարդոյ զՏէրն տեսանէին։ Արդ՝ կամ եղեցի դէմն ըստ միաւորութեանն մի՝ սրտաքոյ շփոթման, որպէս էն ճշմարտութեամբ, այսպէս և բնութեանն միաւորութիւն մի՝ անշփոթաբար, և կամ բաժանելով զբնութիւնսն, բաժանեալ իմացի և դէմքն, զի և ոչ ուրեք երբէք իմացողացն իմանի և ասի երկուք կատարեալ անձնաւորութիւնք ի մի դէմ։ այլ իմացեալք թէ ըստ երկուսն ասելով բնութիւնս և ներդործութիւնս և կամս. երկուս և զդէմսն ևս ասելով, երկու որդիք իմանին կատարեալք զանալանեալք ըստ Նեստորի չարափառութեանն. մինն ի Հաւրէ բնութեամբ Որդի, և միւսն ի մաւրէ շնորհիւ յարելութիւն և ձոխութիւն պատուոյ միայն ընկալեալ մարմնոյն ի Բանէն Աստուծոյ. որով իմանի Քրիստոս ինքն իւր Տէր և իւր ծառայ, այսինքն աստուածութեամբն՝ Տէր, և մարդկութեամբն՝ ծառայ։

Արդ զի՞արդ կամ որպէս երկրպագեն ծառային ընդ Տեառնն, և պաշտեն զարարածն ընդ արարչին, լուծանելով զսահմանս հաւատոյ սուրբ Երրորդութեանն՝ յոր մկրտեցանն, և կամ՝ պախարակեն զայն՝ որ զնեցան զնոսա իւրով պատուական արեամբն։ Եւ վասն զի ընդ հմտագոյն և կատարելագոյն սրբութեանդ քո է բանս, բաւական զասացեալս վարկանիմ, և զայս միայն կամիմք ծանուցանել հեղահայեաց քոյդ տեսողութեան, եթէ յիսկզբան մերոյ սքանչելագործ Հաւրն և նախաշար վարդապետին Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի ուղղակի սահմանադրութեան ամբիծ հաւատոյն, որովք աշակերտեցայն զՀայաստան աշխարհս, հանելով յաղջամղջին խաւարէ կռապաշտութեանն ի լոյս Աստուածգիտութեան, նշանագործ և հրաշալի զաւրութեամբքն, զոր կատարէր բազմաւրինակ հրաշագործութեամբքն, որ ոչ անհմուտ զքոյդ վարկանիմ ճոխութիւն, ոչ կարաց երբէք ուրեք

*) Երևի. որո՞ւմ ի դիմացն.

Digitized by Google

մտանել հերձուած յաշխարհս հայոց, այլ ի նմին ամրիծ հաւատոցս հաստատեալք անշարժ և անփոփոխք կացին մնացին զոր շինեաց սուրբն այն ի վերայ առաքելական վիմին, զոր ոչ կարայ երբէք դրունք դժոխոց յաղթահարել ըստ բանին Տեառն մինչև ցայսաւր ժամանակիս, ոչ խոտորեալ յաջ կամ յահեակ, ուստի և ոչ պէտք եղեն նորաձայն վարդապետութեանց և ժողովոց ի տեղիս տեղիս գունակ գունակ, որոց գիտեմք առ ի նորաձևութեան կարգաց և սահմանաց հաւատոյ որ կարգեցաւ ազդեցութեամբ սուրբ Հոգւոյն, ընդ որ այժմ առաջի կայ անցանել դուկնաքեայ բանիւ առ ի բացայայտել զոր ուսաք ի Քրիստոս փրկողն մեր զբարիոք դաւանութիւնն։

Եղիցի Եւտիքիանոսացն յաւէտ բացակայութեամբ պիղծ աղանդոյն լինել հեռաւորագոյն, որով կարծէք զմեզ չարահամբաւել։

Խոստովանիմք զՈրդին Աստուծոյ զԲանն Աստուած զէակից Հաւր և փառակից սուրբ Հոգւոյն, խոնարհեալ կամաւ Հաւր և սուրբ Հոգւոյն, բնակելով յորովայնի Աստուածածնին և միշտ կուսին, առեալ կատարելապէս զմարդ բնութիւն, զհոգի և զմարմին և զմիտս, ոչ փոփոխելով զմարմինն յանմարմնութիւն, և ոչ Բանն Աստուած փոփոխեալ յանփոփոխելի յիւրմէ բնութենէն, այլ միաւորեալ ի մարմնի անշփոթապէս և անբաժանաբար, կրելով կամաւորաբար զամենայն կիրս մարդկայինս՝ բայց ի մեղաց, սուրբ և միաւորեալ իւրով մարմնովն, ըստ որում աւետարանականքն պատմեն ճշմարտապատում ճառքն. նորա իւր զոլով բարձրագոյնք կրիցն և խոնարհագոյնքն, իւրացուցանելով զվարմինն և որ ինչ մարմնոյն սովիմբ անշփոթ և անքակ մարմնով, խոստովանիմք զորդին Աստուծոյ զՔրիստոս կամաւորաբար չարչարեալ և մեռեալ, և իշխանաբար յերիր աւուր յարուցեալ։ Քրիստոս մեռաւ, ասէ, ըստ մեղաց մերոց ըստ գրոց, և դարձեալ եթէ՝ Միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց։ Մի Քրիստոս քարոզեաց աշխարհի և ոչ երկու, մինն մեռեալ և միւսն անմահ մնացեալ։ Զայս ինքն իսկ առաքեալն բացայայտեալ կնքէ. Մի է Տէր Յիսուս Քրիստոս որով ամենայն։ Եւ՝ Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց։ Եւ եթէ՝ Յիսուս Քրիստոս երէկ և այսաւր՝ նոյն ինքն է և յաւիտեանս։ Եւ՝ ոչ երկուց բնու-

Digitized by Google

թեանց բաժանեցելոց և շարընթացելոց, և զուգաձանապարհացելոց, իբրև հանգանակաւ բաշխել զբարձրագոյնսն։ Այլ միոյ Տեառն և փրկողի զմեզ Յիսուսի Քրիստոսի, իւրով անզուգական արեամբն զմերս դաւանելով փրկութիւն, զի մի՛ այլոյ պաշտաւնեայք լինիցիմք և մի ասիցեմք թէ՝ ի բաց լեր ի մարմնոյդ Բանդ Աստուած, զի երկրպագեցից քեզ՝ այլ ճշմարիտ աստուածապաշտք, ըստ որում միաւորեաց կՀոգի և զմարմին և զմիտս, և եղև ճշմարիտ մարդ առանց փոփոխման և այլայլման, և ոչ բևեռումն մերոյ էակի *) սոսկացեալ մարդոյն ասեմ՝ ըստ բաժանմանն Նեստորի, և ոչ զդրախտն բանալ մերկ աստուածութեանն, զի և ոչ այլ ոմն կախեմ զփայտէն, և այլոյ լեզուն որ զդրախտն աւազակին խոստանայ, այլ մի և նոյն ինքն մարմնացեալ և մարդացեալ Աստուածն Բան, որպէս յորժամ ասաց, Որ ետես զիս ետես զՀայր և յայտ է թէ մարմնովն տեսաւորեցաւ աշխարհի, այլ ոչ յատուկ աստուածութեամբն։ Արդ՝ յայտ է թէ ոչ Հայր մարմին ունի, և ոչ զՈրդի մերկ աստուածութեամբն տեսին, այլ զՀայրենի բնութիւնն, ի մայրենի բնութեանն միաւորեալ ցուցանէր աշխարհի։ Ըստ որում և Յովհաննէս վկայէ թէ՝ Որ էն առ Հաւր՝ երեւեցաւ մեզ. ըստ որում և Թումայի շաւշափեալ և զկինահարեալ կողմն՝ անորոշաբար Տէ՛ր և Աստուած վերակոչեաց։ Որում և մեք հետեւեալք առաքելական ճշմարիտ վարդապետութեանն. խոստովանելով զՔրիստոս անշփոթ և անբաժանելի մարմնով՝ մի Որդի և Տէ՛ր և փրկի՛չ կեցուցի՛չ և ապատի՛չ զմեզ իւրով անապական մարմնով և արեամբն. փառաւորեալ ընդ Հաւր և ընդ Հոգւոյն սրբոյ, յամենայն յանսպառ յաւիտեանս։

Յաւէտ հեշտութեամբ ընկալայ, ո՞վ պատուական գլուխ և Հայր սուրբ, զառ ի քէն գրեալսդ, անխախտելի կալ մնալ մեզ ի սպասաւորական հնազանդութեան, սուրբ և աստուածապարգև թագաւորութեանդ, ըստ աստուածային գրութեանցն որ մեզ աւանդեցաւ, յորմէ ոչ երբէք խոտորեալ, քան եթէ միշտ ի նոյն խոկալով հնազանդութեան և սպասաւորութեան խորհուրդս, ցանկ սպասելով ազդեցեալ ինչ ի մեզ հրամանի ինքնակալ թագաւորութեանդ, զորս անսայթաք և առանց հեղգալոյ կփոյթ յաւժարութեանն արդիւնաւորիմք խորհրդով և երկիւղիւ վեր-

*) Ի լուս. պլով գրչաւ մերունակի.

նական շնորհացն այդեցութեամբ։ Այլ և զքոյդ պատուական սիրելութիւնդ անընդմիջարար ի խորհուրդս իմ յաւէտաբար կրեմ, զսիրոյն կապակցութիւն ըստ արժանաւոր քոյդ մեծութեան, և պարկեշտ և նպելի և մաքուր վարուց, ըստ որում հայցեմ ի Նուիրական և մշտահայց յընդունակ քո աղաւթս և զմեզ յիշատակել՝ հայցելով յապէնիայն Աստուծոյ զի և ի մեզ կանխեսցէ զառատապարգև շնորհացն իւրոց զողորմութիւն։ Եւ խաղաղութիւնն Աստուծոյ վերահովանացի ձերում սրբութեանդ պահպանելով անվրդով յամենայնի զքոյդ արժանաւոր և պարկեշտ գլխաւորութիւնդ։

Աւրհնութեանս զոր առաքեալ էիք յաստուածընկալ և յամենայաղթ նշանէդ, խոնարհ երկրպագութիւն մատուցի և շնորհակալութիւն յաւէտ մտաւս ևս վայելչական ողջունիս։



Digitized by Google

ԹՈՒՂԹ ԳԱԳԿԱՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ, ԱՌ ԿԱՅՍՐՆ ՅՈՒՆԱՑ ՌՈՄԱՆՈՍ, ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ։

Հովուապետի հանդարտի և զգաւնակլոյ, ցածուն և պատուական վարուք ի Տէր, գլուխ եպիսկոպոսաց Նոր Հռոմայ, պատրիարգի յընթանուրս, Գագիկ ի ծննդաբանութենէ Սենեքերիմայ, երկրպագող սուրբ խաչիդ, և ծառայ սուրբ հայրապետիդ, ի Տէր խնդալ։

Գրել առ սրբութիւնդ ձեր դանդաղելի է, և չգրելն զըրկանք մեծ, այլ յաւժարութիւնս ստիպեաց կերկոսեանն ի բաց բառնալ՝ զդանդաղումն և զզրկանս, զի չէ փոքր զրկանք մերժել հեռանալ ի սուրբ հայրապետական խնամարկութենէ, և յարդիւնաւոր աւրհնութեանց և սրբամատոյց աղաւթից։ Զնոյն համարձակութիւն առ ի գրել առ սուրբ և քրիստոսապսակեալ թագաւորն և զընդունելութիւնն առ սուրբ հայրապետդ ապաստան արարի, զոր յակն առեալ ձեր հեկաբար՝ զիս ծառայ սուրբ և բարձրագահ արքեպիսկոպոսիդ, և առաքելաժառանգ պատրիարգիդ, և սուրբ թագաւորիդ քրիստոսեան աթոռաժառանգ աւանդապահի, զի ընարար ունէաք աշխարհս Հայոց զՏնաղանդութիւն կայսերական աթոռոյդ, և հայրապետական զահակալութենանդ. որպէս ցուցանեն գիրք պատմագրացն։ Զի ոչ միայն սիրողաբար հարկս հարկանէաք կայսեր, այլ և առ սուրբ հաւատոյն միաւորութիւն խոստովանութեան հաղորդս և հաւասարս գտանէաք։ Որպէս և մեծն Առիստակէս որդի մեծի սրբոյն Գրիգորի ի սուրբ ժողովին ՅԾԸ. սուրբ հայրապետացն որ ի Նիկիա Բիւթանացւոց ժողովեալք առ ի կործանումն Արիոսի մոլորութեանն։ Նոյնպէս և մեծն Ներսէս յերկրորդ ժողովին ՃԾ. սուրբ հարցն որ ի Նոր Հռոմ, աճապարեալ փութացան վասն պեղծ կատաղեալ Մակեդոնի յամառութեանն։ Դարձեալ որք յԵփեսոս

Ասիա Ժողովեցան Մ. սուրբ հարքն վասն Նեստորի յիմարութեանն, որ թէպէտ ոչ ոք էր ի մերմէ աշխարհէս անդր հասեալ, սակայն երանելոյն Կիւրղի և Պրոկղի և առ Ակակայ զգուշացուցանող թղթովք փութացան հասին առ մեծն Սահակ և երանելին Մաշտոց, և միաձայնութեամբ ի մի ուղղափառ խոստովանութիւն վերագրեցան ընդ սուրբ հայրապետն՝ Ժողովեալք յԵփեսոս ծովահայեաց։

Իսկ վասն չորրորդ Ժողովոյն՝ որ ոչ կամիաձայնութիւն յանձին ունին վարդապետքս Հայոց հաղորդել ընդ Ժողովոյն ՈԼՋ. եպիսկոպոսացն, հարցի յառաջնորդաց մերոց, թէ ընդէր և վասն որոյ պատճառանաց մեկուսի գոլով ի նոցանէ, և այնու պատճառանաւ ի հայրապետական և ի թագաւորական խնամարկութենէն և յընտանեբար դիմասիրութենէն աւտարացեալ ի մէջ արկեալ լինի, և այդր աղագաւ ոչ ուղղակի սուրբ հայրապետքն, և սուրբ թագաւորքն զնպատեցածն առ աշխարհս Հայոց բացակարգեալ գլխաւորեն։ Պատասխանի տուեալ ասեն, Վասն զի ընդդէմ երից Ժողովոցն զտաք զվարդապետութիւնն նոցա և բացեալ զգիրս ամբաստան լինէին, ասելով թէ Նեստորաբար խմացմամբ սահմանեցին յետ անձառ միաւորութեան Բանին և մարմնոյն՝ երկու բնութիւնս բաժանաբար ի մի Տէր Յիսուս Քրիստոս խոստովանեցին, և երկուս կամս, և երկուս ներգործութիւնս, և զխաչն և զմահն մարդոյն միայնոյ սահմանեցին, և ոչ Աստուծոյ մարդեղելոյ ի սուրբ կուսէն Աստուածածնէն, զոր ոչ աւանդեաց մեզ Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր հանդերձ պայաւք վարդապետաւք, զորս եդ Աստուած յեկեղեցւոջ, զոր սակաւ ինչ ի բաղմաց գրեմ զասացեալս վարդապետաց մերոց ի զրոց սրբոց, Նախ՝ վասն բնութեանցն, միաւորութեանց, և ապա՝ խաչի խորհրդոյ։

Գրէ Յուլիոս Հռոմայ հայրապետն առ Դիոնէսիոս այսպէս. Քանզի հարկ է զնոսա որ երկուսն ասեն բնութիւնս, ըստ միւսն երկրպագելի. իսկ զմիւսն ո՛չ յԱստուածայինն մկրտիլ. իսկ ի մարդկայինն ոչ մկրտիլ. իսկ եթէ ի մահ Տեառն մկրտեցաք, մի խոստովանիմք բնութիւն զանախտակիր աստուածութիւնն, և զախտակիր մարմնոյն, քանզի ի մահ նորա մկրտութիւն՝ ի մարմնոյն յարութիւն և թողութիւն մեղաց տուեալ լինի։ Ասէ և Երինոս հետևողն առաքելոց. Որ եկն և մի բնութիւն Աստուծոյ և մարդոյն գործեաց, մեր ոչ կարացելոյ այլ

աւրինակարար ինչ կգորդութիւն ընդունել զանապականութեանն, եթէ ոչ նորա էր եկեալ առ մեզ Աստ և սուրբն Մեթիտոս Անտիոքու եպիսկոպոս. Մի ընութիւն խոստովանիմք և երկու գոյացութիւնք, քանզի իմացեալ, և որպէս ճառեմք, զԱստուած Բանն, որ խաչեցեալ, որ Հաւրն անապական Որդին՝ ի ձեռն անապական մահուանն իւրոյ, զառ ի մեզ զմահն խափանեաց։ Ուստուցանէ և Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր. Հաւատք ճշմարիտ այս են. խոնարհեցաւ աստուածութիւնն, և խառնեաց զմարդկութիւնն ընդ իւր աստուածութիւնն։ Եւ դարձեալ ասէ. Խառնեաց միացոյց ընկղմեաց զմարմինն յաստուածութիւնն։ Եւ դարձեալ ասէ. Քանզի միացաւ ի մարմնի ընութեամբ, և խառնեաց զմարմինն ընդ իւր աստուածութեանն։ Եւ այլ յոլովագոյնս զնեն առաջի իմ ճառս վարդապետականս Ցունաց և յԱղեքսանդրացւոց վարդապետաց։

Հարցի դարձեալ վարդապետացս մեր. եթէ ընդէ՞ր դուք զԽաչեցարդ յերիս սրբասացութիւնսն սահմանէք. թերևս սուրբ Երրորդութեանն պարտիցէք զխաչն կազմել, որով յիրաւի՞ խորշին և մերժին ի մէնջ իմաստունքն Ցունաց։ Պատասխանի ետուն և ասեն. Քա՜ւ մի լիցի. ոչ Երրորդութեանն զփառաբանութիւնս զայս վերաձայնեմք, այլ Որդւոյ միայնոյ. որպէս ըզմարդանալն ի կուսէն Որդւոյ միայնոյ հաւատամք. այսպէս զխաչն և զմահն Որդւոյ խոստովանիմք։ Քանզի մեծն Եսայի զՈրդի ետես նստեալ ի վերայ աթոռոյ բարձրացելոյ, և նմա սերովբէքն աղաղակէին զերիս սրբասացութիւնսն. որպէս աւետարանիչն Յովհաննէս վկայէ. Զասն այսորիկ, ասէ, Ոչ կարէին հաւատալ ի Յիսուս, զի գրեալ է, կուրացոյց զաչս նոցա և ապշեցոյց զմիտս նոցա. զայս ասաց Եսայի զի ետես զփառս նորա և խաւսեցաւ վասն նորա։ Եւ այսր աղաղաւ երիս սրբասացութեամբ զՈրդի փառաւորեմք խաչին խորհրդովք։ Եւ ասեն եթէ վարդապետքն Ցունաց, վասն զի ոչ պարտիցեն զմարմինն Քրիստոսի ի փառս Երրորդութեանն բարձրացուցանել, և ոչ զԱստուած ասեն խաչեալ վասն աշխարհի, այլ մարդ սոսկ, և յարելութեամբ առ Բանն մերձեցուցեալ որպէս Նեստորի և Թէոդորիտէ և Պաւղէ սամուստացւոյ և այլոց հաճոյ թուի։ Զասն այսորիկ մերձեցուցանել հաճոյ համարին առ հերձուած, զոր ոչ է ծանուցեալ մեր, և ցուցանեն ի գրոց սրբոց այսպէս, առ բնութեանցն միաւորութիւն, որով ոչ սոսկ մարդ զխաչեալն

Digitized by Google

խոստովանիմք, այլ Աստուած մարդ լեալ։ Եւ մատուցին առաջի իմ գիրս Սոկրատայ պատմագրի եկեղեցական շարածի, և ունէր յիշատակարանն այսպէս. եթէ Յովհան Ոսկերերան ընդդէմ Արիանոսացն կարգէ դասս պաշտաւնէից մի փառաբանութիւն և պատիւ տալով Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Իսկ յերեկոյս և ի վաղորդեան կերիս սրբասացութիւնսն միոյ անձնաւորութեանն սահմանեալ ի վերայ Որդւոյ ի կուսէ մարդեղելոյ, որ խաչեցաւն վասն մեր, և երգէին Սո՛ւրբ Աստուած, սո՛ւրբ և հզաւր, սո՛ւրբ և անմահ, որ խաչեցա՛ր վասն մեր, ողորմեա՛ մեզ։ Եւ ասէ կարգեալ զայս յԵգնատիէ Անտիոքացւոյ. որ ասի լինել յեւթանասուն առաքելոցն։ Տեսանէ, ասէ, սուրբն Իգնատիոս զչաւրս երկնային՝ որ երիս սրբասացութեամբ զսուրբ Երրորդութիւնն փառաբանէին։ Զնոյն դարձեալ և ի վերայ Որդւոյ կերիս սրբասացութիւնն ընծայեցուցանէին։ Եւ սուրբ Լուսաւորիչն մեր ի կարգադրութեան սուրբ պատարագին կերիս սրբասացութիւնսն ի վերայ Որդւոյ կանոնեաց։

Զնոյն յարեն, և զառ ի վարդապետաց առաջնոց բանս առ ի հաւատարմութիւն իւրեանց աւանդեն մեզ։ Գրէ Յուլիոս Հռոմայ հպարապետ ի Պռոսդոկիոն թղթին. Որ միւս փառաբանութիւն ի ներքս ածէ քան զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, և որ յաւելու միւս փառաբանութիւն քան զձայն սերովբէիցն. և որ զ՝ի Մարիամայ մարմինն ոչ խոստովանեսցին ներմարմին, Աստուած համազոյ Հաւր, և անախտակրին աախտակրութիւն. նզովեա՛ր եղիցի։ Գրէ և Երինիոս հետևողն առաքելոց այսպէս. Որ ոք զատանէ զՅիսուս ի Քրիստոսէ, զոր և անչարչարելին ասեն, Բ. անձինս յայտնեն, քանզի ոմն չարչարեցաւ, և ոմն անչարչարելի մնաց ո՛չ մի, այլ երկու. բայց մի է ծնունդն և չարչարեալն, և նոյն միածին Որդին Աստուծոյ, զոր ետ Հայր վասն անրաւ մարդասիրութեան իւրոյ աշխարհի։ Եւ դարձեալ Պաւղոս զայլ ոք ոչ գիտէ բայց զխաչեցեալն և զչարչարեալն և զմեռեալն, և զյարուցեալն, զոր և մարդ իսկ ասէ։ Եւ Կիւրեղ Երուսաղէմի այսպէս ասէ. Ոչ եթէ մարդ ոք էր դուկնաքեայ որ չարչարեցաւն այլ Աստուած որ մարմին զգեցաւ։ Արդ՝ եթէ մի է Քրիստոս, և ոչ երկու, ապա Աստուած է որ խաչեցաւն, և ո՞ մարդ սոսկ. յաւէտ յիրաւի՞ փառաբանեմք երիս սրբասացութեամբն որ խաչեցաւն վասն մեր։ Եւ Գրիգոր սքանչելագործն այսպէս ասէ. Ոչ եթէ այլ ոք է

Digitized by Google

որ խաչեցաւն և այլ որ ոչ խաչեցաւն. և որ ոչ խոստովանի պատուանց չարչարանաց Բանն իւրով մարմնովն չարչարեալ. Նոր-վեա՞լ եղիցի։ Եւ Գրիգոր Նազիանզացի Աստուածաբան ասէ. Որ ոչ խոստովանեսցի զխաչելեալն զոլ Աստուած, նզովեսցի. և կարդեսցի ընդ աստուածասպանսն։ Ի վերայ բերէ նոյն և ասէ. Ցի՞մ մերժէք ի լինելոյ Աստուած ճշմարիտ, զայն որ ի կուսէն Աստուած ճշմարիտ և չարչարեալ. զի եթէ ոչ է Աստուած որ ի կուսէն, և այլ ոմն է և այլ. ապա մինն միւսումն տէր հանդիսանայ և միւսն ծառայ, և արդ տեսցուք թէ ո՞վ է տէր և ո՞վ ծառայ։

Գրեալ է, թէ Հանէր Յիսուս զդիշերն ի գլուխ յաղաւթսն Աստուծոյ, որ մերձ ի խաչելն արդեւք մարմին Բանին առ ինքն Բանն աղաւթէր ի միում դիմի և անձնաւորութեան, զի մի մատնեսցին խաչին, և մի դէմն՝ նոյն դէմի ծառայ և Տէր յարմարի, և ինքն զինքն աղաչեսցէ, քանզի ահա խոստովանութիւն ժողովոյն յայտ է, մի դէմ և մի անձն և Բ. բնութիւն, բաժանաբար անհաղորդս ի միմեանց ունել Քրիստոսի։ Բայց արդ՝ զի՞արդ մի դէմ և մի անձն ապտակի և խաչի և Բ. բնութիւն։ Արդ՝ զանձն և զդէմն, որո՞ւմ բնութեան պարտ է խոստովանել. աստուածութեանն, եթէ մարդկութեանն։ Զայս հարցեալ վարդապետքս մեր ի տարակոյս արկին զիս։

Դարձեալ ասէ Գրիգոր Աստուածաբան. Աստուած խաչեալ և երկիր շարժեալ, և դարձեալ պարտ էր արարչին չարչարակից լինել արարածոցս։ Դարձեալ ասէ. Կարաւտացաք Աստուծոյ մարդանալոյ և մեռանելոյ. Եւ դարձեալ ասէ, Արիւն Աստուծոյ և չարչարանս և մահ. Այսպէս և Աթանաս Աղեքսանդրացի . . . . ի խաչին բանի այսպէս, Զ Պեղատոս այնպահելոյ ինչ էր, այլ հաւատալոյ, եթէ ոչ զդատելոյն զոլ Աստուած։ Եւ այլ անթիւ հոլովք գրոց եդին առաջի իմ, զոր աւելորդ համարեցայ յերկարանել ի թղթի աստ, զի ոչ յուսուցանել կամ ի վարդապետել ձեզ առաջի արկի զոր ինչ գրեցիդ, այլ քննել և ի միտ առնուլ զերկպառակութիւն որ ի մէջ երկոցունց ազգաց հաստատեալ կայ։

Ասեն դարձեալ. թէ նոքա ասեն, թէ երից սրբասացութեամբ ո՞չ վայել է փառս տալ միոյն անձնաւորութեան, բայց միայն սուրբ Երրորդութեանն, և Քրիստոս մի է յԵրրորդութենէն, և Երրորդութեանն միայն յարմարական զոլ սրբասացու

թիւնքն։ Ապա ուրեմն այլ է Քրիստոս և այլ Բանն Աստուած, եթէ այդպէս է, ապա ո՞չ՝ Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն արարաւ, և ոչ Բանն մարմին եղև, և ոչ՝ ԶՏէրն փառաց ի խաչ հանին, այլ զմարմինն Տեառն փառաց, և ո՞չ փառացն և գաւրութեանն անուն Քրիստոս, այլ կամ յատուկ Բանն Տէր փառաց և ըստ բնութեանն սոսկ Աստուածութեանն խաչեալ և չարչարեալ, և կամ սոսկ մարդն Տէր փառաց և Քրիստոս որ խաչեցաւն վասն մեր, և նմա կրկնեսցի ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց, ապա և ամենայն մարդիկ երկրպագեալ եղեցին, և յաւելցի այլ փառաբանութիւն որով փառաբանի խաչելեալն, և այլ որով փառաբանի Բանն յԵրրորդութենէն որ ոչ ունի հաղորդութիւն բնութեամբ առ Բանն։

Դարձեալ համառաւտեն զբանն ասելով, թէ ոչ միայն մեք Հայք ոչ ընկալաք զսահման չորրորդ ժողովոյն, այլ նախ ինքեանք յինքեանս բաժանեալ այպանեցին զխոստովանութիւնն։ Աղեքսանդրացիքն յինքեանս բաժանեցան և ընդդէմ կացին ժողովոյն. Դիոսկորոս և Պետրոս և Տիմոթէոս և Անատոլիս և այլք յոլովագոյնք, և Երուսաղէմացիքն՝ թէպէտ և առ փոքր մի ունկընդիր եղեն Յովնաղի, այլ յետոյ և նոքա քամահեալ յետս ընկեցին զսահման ժողովոյն, մինչև յաւուրս Յուստիանոսի կայսեր, որ թագաւորասաստ հրամանաւ հաւանեալ հնազանդեցոյց։ Անտիոք ասորւոց և որք ընդ նոքաւք՝ նոյնպէս և նոքա մերժեալ յետս ընկեցին զժողովն, մինչև ցայսաւր ժամանակի։ Հայք և Վիրք և Աղուանք միաձայն խոստովանութեամբ, ի ժամանակս Բաբգէն Հայոց կաթուղիկոսի, ժողովեալ ի սուրբ կաթուղիկէն Հայոց, ընդ որս Գաբրիէլ Վրաց կաթուղիկոս, և ընդդէմ ժողովոյն միախորհ եդին ընդդիմակս. մինչև ցԿիւրիոն Վրաց կաթուղիկոս։ Զենոն կայսր Յունաց քամահեալ զժողովն Հենատիկոն թղթովն, յաւժարագոյն զբոլոր թագաւորութիւն Հռովմայեցւոց միաւորեաց ի բաց կալ ի սահմանէ ժողովոյն, և սահմանեալ շինեաց ի վերայ ԲԺ. գլխոցն Կիւրղի Աղեքսանդրացւոյ վարդապետութեանն, յորոյ յաւուրս Ակակ Կոստանդնուպալսի հայրապետն խնդրեաց ի Պետրոսէ Աղեքսանդրացւոյ զուսումն ուղղափառութեան, որ և ընկալեալ ի նմանէն, զոր ինչ և խնդրեաց Ժ. թղթովք և Ժ. պատասխանաւք։ Անաստաս և Յուստիանոս և Յուստինոս կայսերք, և Նոքա ի բաց բարձին զաւանդութիւն տումարին Լևոնի և զկանոն ժողովոյն։ Ագաթոն

Հռոմայ Հայրապետ և Մաքսիմոս Կոստանդնուպաւլսի մոնազն, որ ծայրատեալ ի ձեռս և յոտս լուծին զնա ի կենաց որպէս զընդդիմակ ժողովոյն, զի հակառակս լեալ միմեանց յաւելին ի սահման հաւատոյն ըստ իւրեանց մտացն հաճութեան, և ապա ի վերայ սպանմանն Մաքսիմոսի ընկալան զ յաւելադրութիւնն։ Արդ եթէ ուղղակի խորհեցաւ Մաքսիմոս, ի զուր եղև ի մահ դատապարտեալ, և զտանին պարտականք արեան սպանելոյն. և եթէ ոչ բարիոք իմացաւ, ընդէր ապա զոչ ուղղագոյնսն յետոյ ի զղջումն եկեալ յանձն առին և տեղի ետուն քաջ ախորժելով։

Արդ բաղում անգամ զրեալ է իմ ի թղթի աստ, ոչ փորձողականս կամ վիճողականս, այլ պատմողական և ցանկացող կապակցութեան սիրոյ, և ծառայական հարկատրութեան առ բարեպաշտ թագաւորդ և առ սուրբ Հայրապետդ հաւատարմացուցանել, եթէ արդեւք հնարաւորել, ի բաց բառնալ զկրճիմն որ կայ ի միջի ըստ առաքելոյն Պաւղոսի, զցանկն քակել և զմիջնորմն յատակել, և զերկուսին հաստատել ի մի նոր մարդ, յոր կոչեցաք ծննդեամբ սուրբ աւազանին. Եւ յայնժամ կատարեսցին ասացեալք փրկչին ի կտակի աւուր նորոյ ուխտի, յորժամ տնտեսարար ընդ Հաւր միակամութեամբ աղերսէր. Որպէս ես ի քեզ Հայր և դու յիս, կամիմ զի և սոքա ի մեզ եղիցին Ես ի սոսա և դու յիս, կամիմ զի և սոքա ի մեզ եղիցին. Ես՝ ի սոսա և դու յիս, զի եղիցին կատարեալք ի մի, և ոչ վասն սոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւ սոցա յիս։

Digitized by Google

ՏԵՍԻՆ ԽԱՉԿԱՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ԲԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ, ՊԱՏԱՍԽԱՆԻ ՅՈՒՆԱՑ ԳՐՈՑՆ՝ ԶՈՐ ԱՐՁԱԿԵԱԼ ԷՐ ԱՌ ՆԱ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՆ ՄԵԼԵՏԻՆՈՑ

Ի ԼՈՒՍԱՆԵՑՍՆ ԹՈՒՂԹ ՍԱՄՈՒԻԷԼԻ ԿԱՄՐՋԱՑՁՈՐԵՑՈՑ ՀԱՅՈՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ, ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ԹԷՈԴՈՐՈՍԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻ ՄԵԼԻՏԵՆՈՑ, ԳՐԵԱԼ ՀՐԱՄԱՆԱՆԻ ԽԱՉԿԱՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Բերաւ զիր ողջունարեր առյցեալ իմաստասիրական քննութեամբ, և բազմահանճար խոհականութեամբ։ Գիր մեղադրական և հաւատաբանութեան, և հրաւիրականի ի ձերմէ Սէրբունէդ։ Սիրելի եղբայր և պատուական գլուխ եպիսկոպոսաց, Տէր Թէոդորոս մետրոպոլիտ մայրաքաղաքիդ Մելետինոյ. առ մեզ Հայաստանեայս՝ ի Հայրապետական Աթոռ սրբոյն Գրիգորի, և սրբոց առաքելոցն Բարդողիմէոսի և Թադէոսի, առ իմ նուաստութիւնս որ շնորհաւբն Աստուծոյ եմ տեղապահ առաքելական աթոռոյս, նոցին աշակերտ և որդի կրտսեր, ողորմութեամբն Աստուծոյ Կաթուղիկոս Հայոց Մեծաց։

Ընթերցեալ վերահասու եղար բովանդակ գրելոցս ի սմա և յոյժ ուրախացաք ընդ ձեր բարեմտութիւնդ, որ տիրաբար մտաւք կամիք, զի ամենեքեան կեցցեն, և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն. զի իբրև կրաչ հովիւ զՀետ ընթացեալ որպէս մոլորելոց, հրաւիրեալ էք զմեզ թղթովս ընդ այլ հեթանոսս ի կաթուղիկէ եկեղեցի՝ ի հաւատս ճշմարիտս՝ և առ զաւազանն երկաթի որ մանրէ կաշխարհս։ Բարի է հրաւէրդ, եղբայր սիրելի, բայց անազան է յոյժ. այլք նախ քան զքեզ և քան զրագումս հասին առ մեզ հրաւիրակք ի սուրբ Հոգւոյն,

Digitized by Google

առաքեալք և մարգարէք և աւետարանիչք և նոցուն աշակերտք Հրաւիրեցին զմեզ կանխաւ, և մուծին ի հարսանիսն երկնաւոր առ փեսայն Քրիստոս՝ յեկեղեցիս Աստուծոյ կենդանւոյ, ի հաւատս ամրիծս և անարատս, և ի գաւազանն որ յառաջ քան զարբև բուսաւ յանեղ լուսոյն և յարմատոյն Դաւթի, գարձեալ շառաւիղեաց ի վեր քան զբնութիւնս Քրիստոս Թագաւորն, նա հովուէ զմեզ յեկեղեցւոյն իւրում, և հովուեսցէ մինչև յաւիտեան։ Այլ և յերկաթի գաւազանէն մեք ոչ եմք ապստամբք, այլ ընդ նոմաւ եմք նուաճեալք, և զաւրութիւն մեծ գաւազանին զոր կոչես երկաթի, է՛ աղգս Հայոց, և սոմաւ վանէ զաշխարհս։ Բայց դու ոչ բարիոք գործես, չի ոչ միայն ի մնասաններորդ ժամուն ըստ աւետարանին, այլ ընդ երեկս կամ թէ ի մէջ գիշերի տաս զհրաւէրդ, որ թէ և փութասցուք ի կոչդ քո հասանել, ոչ ժամանեմք յաւելեանսն. զի մերձեալ է ժամանակ դատաստանին, և դատաւորն առ դուրս հասեալ կայ, այսուհետև հանդիսից և բրտանց, և ոչ հրաւիրման է ժամանակ։ Դադարեա՛, ո՞վ սիրելի, յայդմ խնդրոյ, թո՛ղ զմեզ և երթ լեր աւետարանիչ քարոզ և հրաւիրակ այնոցիկ, որ ոչ ճանաչեն զԱստուած, և ոչ հնազանդին աւետարանի փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զբարեացն առցես զհատուցումն, և մի՛ չանար շինել ի վերայ այլոյ հիման, զի մի՛ անվարձ մնասցես։

Վասն զի մեք վաղ ուրեմն ընկալաք զլոյս զիտութեան սրբոյ Երրորդութեանն, և հաւատովք Որդւոյն Աստուծոյ կընքեցաք ի մի լոյս կոմանն մերոյ, միով հոգւով ի Քրիստոս միացեալ, միոյ Աստուծոյ ընծայեցաք յորդեզրութիւն ի ձեռն սրբոյն Գրիգորի, որ երբև զարեզակն ծագեալ յարևմտից՝ առաքելական հանդիսիւ լուսաւորեաց զարևելեայս Երրորդութեանն ճառագայթիւք. յինքն լցեալ զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի։ Երկնաւոր նահատակութեամբն ետ զձայն իւր ընդ ծագս երկրի. և զ՝ոտումն բանին կենաց ի մեզ հնչեցուցեալ՝ տեղալով զանձրև քաղցրութեան հոգւոյն սրբոյ, ելոյծ զամպարշտութեանն կռապաշտութիւն՝ զչար ձմեռն, և փարատեաց զխաւար մեղացն, ծագեաց ի մեզ զքաղցր ճառագայթ տիեզերածաւալն լուսոյ աւետարանին, և ետ մեզ պարգև զպաշար ճանապարհին կենաց, զքաղցրուսոյց վարդապետութեանն իւրոյ զբանսն. որ միաբանի առաքելոց և մարգարէից և ամենայն տիեզերախաւս վարդապետաց եկեղեցոյ սրբոյ, նա շինեաց զե-

Digitized by Google

կեղեցի Հայաստանեաց ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. և լցոյց աստուածեղէն կրաւնիւք առաւել ևս քան զայլոց ազգաց հաւատացելոց։ Բազում ինչ աւանդութիւնս և կրաւնս աստուածային առաքելաբար հրաման ետ պահել իւրում եկեղեցւոյ. ինքն զոյով վկայ ճշմարիտ՝ խոստովանող, և առաքեալ և աւետարանիչ Միածնին, առ ի նմանէ՝ լուսաւորեալ մեք։ Ընկալաք դարձեալ զնոյն հաւատ առաքելական ի սուրբ հարցն յերեք հարիւր և տասն և ութիցն որ ի Նիկիա ի ձեռն սրբոյն Առիստակէսի նորին որդւոյ, զոր ունիմք առանց յաւելման և պակասութեան։ Նոյնպէս և զՃ. և Ծ. սրբոց հարցն որ ի Կոստանդնուպաւլիս ի ձեռն սրբոյն Ներսէսի, և զերկու հարիւրոցն որ յԵփեսոս ի ձեռն աշակերտացն սրբոյն Սահակայ և Մեսրոպայ։ Զայս երից սրբոց ժողովոց խոստովանութիւն և զհաւատ ընդունիմք և քարոզեմք, հաւասար սրբոյն Գրիգորի և սրբոց առաքելոցն հրեղէն լեզուացն աստուածախաւսութեան։ Եւ աւելի քան զայս որ առաքս, թէ և հրեշտակ յերկնից աւետարանեսցէ. նզովե՛մք և ի բաց բառնամք։

Դուք եղբայրասէր մտաւք ջանայք վասն միութեան եկեղեցւոյ և կապակցութեան հոգևոր սիրոյ և միաբանութեան առ միմեանս. վասն այնորիկ շատ ջանիւ և մեղադրութեամբ յայտնեալ էիք ի թղթի աստ զամենայն սրտից ձերոց զծածուկս։ Ուսուցանելով զմեզ մի ըստ միոջէ, թէ որպէս հովիւքն առաջինք եղեն բարոյք և աւետարանիչք, մշակք քաջք, որ սերմանեցին ընդ տիեզերս զբանն կենաց և լցին անուշահոտ պտղովք զտիեզերս ամենայն՝ ջնջելով զգայթակղութիւն թըշնամւոյն յերկրէ, հաստատեցին զտիեզերս ի հաւատս ճշմարիտս։ Թուեալ էիք ի թղթի աստ և զայդս հեթանոսաց, ըստ Թուրքս, զԱյանս, զՃիկս, զԼախուարոս և զայլս նման սոցա. և վկայեալ էք թէ ամենեքեան սոքա ի մի բերան փառաւոր առնեն զԱստուած յեկեղեցւոջ. հնազանդեալք ընդ երկաթի գաւազանաւն, որ է տէրութիւն Հռոմոյ և ոչ ոք հերձաւ ի կաթ.ղիկէ եկեղեցւոյ։ Հոգացեալ էիք և զմեզ զՀայաստանայսս որպէս աւտարս զոլով յեկեղեցւոյ Աստուծոյ, աթմարս և տրզէտս բանիւ և իմաստութեամբ, և մեղադրեալ՝ թէ զարատաւորն ոչ ճանաչէք, զի ոմանք յառաջնոցն անտի սերմանեցին ի ձեզ զորոմն չարին, զդպարտելով զՀարսն մեր ի բանս սուտ՝ զոր ոչ նոցա. և վասն այնր ոչ ընդունիք զժողովն Քաղկեդոնի,

Digitized by Google

հաւանեալք Դիոսկորոսի, որ մի բնութիւն ասաց զՔրիստոս։ Եւ յայտնի աստուածաբանական արտաճառութեամբ իմաստասիրեալ էիք մեզ զխորհուրդ բոլոր անաւրէնութեան Աստուածն Բանի, թէ ո՞րպէս անմարմինն Բանն մարմնացաւ առանց սերման ի կուսէն և ի Հոգւոյն սրբոյ, և ընդ ամենայն կիրս բնութեանս մերոյ անցանելով իւրով մարմնովն, յանձն էառ կամաւորութեամբ զխաչն. և թաղեցաւ, յարեաւ և համբարձաւ, նստաւ ընդ աջմէ Հաւր, զալոց է միւսանգամ դատել զաշխարհս. և թէ կերպարանակից լինելոց է մարմին խոնարհութեանս մերոյ նմանութեան մարմնոյ փառաց նորա ըստ Պաւղոսի ձայնին։ Զի զայս եկն ցուցանել, առեալ յապականացու մարմնոյս, զզեցուցեալ աստուածութեանն և ցուցեալ զսա անապական և անմահ։ Զայսոսիկ յայտնապէս մեզ ատենարանեալ։

Գրեալ էիք զարձեալ, եթէ երկու բնութիւն խոստովանիմք ի վերայ միոյ Քրիստոսի, որպէս ասաց Ժողովն Քաղկեդոնի, և հաստատեաց զհաւատս առաքելական, և մեզ մեղադրեալ էիք թէ, Տէոսկորոս ընկեցիկ եղև ի Ժողովոյն Քաղկեդոնի, մոլորեցոյց զձեզ ի բանս սուտս, զրպարտելով զԺողովն Քաղկեդոնի, այլ նոքա ուղղապէս խորհեցան ի վերայ այսր ամենայնի։ Առ իս գրեալ էիք ցաւակցարար, թէ ի քա՞ց կաց ի Հայաստանեայց գրոց և ի ձայնից, ապաշխարութեամբ և զղջմամբ գրէ՛ առ կայսր և պատրիարգն ի թաղաւորեալ քաղաքն, և միացի՛ր ի սուրբ հաւատս, և կեցցես։ Արդ ըստ ամենայն դրելոց առ ի քէն, եղբա՛յր սիրելի, հարկաւորիմ պատասխանի առնել քեզ կարճ ի կարճոյ համառաւտ բանիւ, ոչ ճարտարութեամբ և սնոտի փիլիսոփայութեամբ, զի մի՛ ընդունայն լիցի խաչն խորհուրդն, որ խափանեաց զիմաստութիւն աշխարհիս. և յիմարութեամբ քարոզութեանն ապրեցուցանել զհաւատացեալս. զի հաւատ քրիստոնէից ոչ իմաստութեամբ մարդկան է, այլ աստուածային հոգւովն շնորհիւ վերաձայնաբար քարոզի ընդ տիեզերս աշխարհալուր աւետիք։

Արդ թէպէտ և ոչ իցեմք հմուտ և տեղեակ պղատոնական պերճաբանութեամբ բարձրայունակ վարժից և կրթութեանց, սակս ոչ ունելոյ նմա հաղորդութիւն ընդ աւետարանին, մեք Հայաստանեայքս, նուաղ և փոքունք, աղքատք և տգէտք արհեստից և մակացութեանց, այլ սակայն շնորհիւ զաւրութեամբ Հոգւոյն սրբոյ լիով ունիմք յանձինս զվարդապետութիւն սըր-

Digitized by Google

բոց առաքելոցն և մարգարէից, հանդերձ կենսաբեր աւետարանաւն Քրիստոսի, զսուրբ և զտիեզերական երից ժողովոցն զխոստովանութիւն և զհաւատս, զվարդապետութիւն սրբոյն Գրիգորի՝ որ է սիւն և հաստատութիւն ճշմարտութեան. զաստուածաբանութիւն տիեզերախաւս երիցս երանեալ պայծառ և մեծ սրբոց հայրապետացն դասուց, զԴիոնէսիոսի և զԵրինիոսի հետեւողի առաքելոցն, զԿղեմայ և զմիւս Դիոնէսիոսի, զՊետրոսի վրկայի, զԱթանասի սրբոյ և զԿիւրղի Աղեքսանդրացւոց հայրապետաց, զՄակարայ երանելոյ և զԿիւրղի և զՅովհաննու որ յԵրուսաղէմ, զսրբոյն Սեղբեստրոսի և զՅուլիայ երանելոյ, զԴամասոսի և զԿէլէստիանոսի որք ի Հռոմ. զԵւսեբի ժամանակագրի որ ի Կեսարիա Պաղեստինացւոց, զԵւսեբի Եմեսու, զՍերեբրիանոսի, և զԵփրեմի խորին ասորւոց, զԳրիգորի զքաջանչելագործի որ ի Նիւկեսարու, զԳրիգորի ա՛ստուածաբանի Նազիանզացւոց, զսրբոյն Բարսղի և զԳրիգորի նորին եղբաւր, և սրբոյն Եպիփանու Կիպրացւոյ, զԱղեքսանդրի և զՅովհաննու ոսկերերանի, զՆեքտարեայ և զՊրոկղի երանելոյ որ ի Կոստանդնուպաւլիս։

Սորա են սիւնք հաւատոյ և լուսատուք տիեզերաց, աշտանակք կենդանիք՝ վերամբարձեալ ունելով զլոյս եւթնարփի շնոյհայն ի պայծառութիւն և ի փառս սրբոյ եկեղեցւոյ, որք են կնիք հաւատոյ մերոյ և ճանապարհ խոստովանութեան մերոյ, ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, որք յայտ յանդիմանութեամբ վարդապետեալք ուսուցին մեզ սուրբ Հոգւովն վասն մշտնջենաւոր աստուածութեան Երրորդականութեանն, և գծածկեալ խորհուրդ տնաւրէնութեան Աստուածորդւոյն ընթանուր մեզ քարոզեալ լուսաւորեցին զմեզ լուսով ճշմարտութեանն, և արտաքոյ աւանդութեան սոցա ո՛չ հարքն մեր և ո՛չ մեք ուսաք այլ ինչ նորաձայնութիւն հաւատոյ և կրաւնից, ո՛չ դու և ո՛չ այլ ոք ի մարդկանէ կարէ յայտնել այլ որպէս ընկալաք զլոյս ուղղափառութեան հաւատոյ սոցա և կրաւնից՝ պահեմք հաւատով յանձինս մեր, աներկմիտ և անվրդով յեցեալ և հաստատեալ ի վէմն կենդանի, որ է գլուխ անկեան Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Թէպէտ և հալածեալք յամենայն աղգաց, այլ ո՛չ երբէք լքեալք ի հաւատս, միշտ պատերազմ ունելով ընդ հեթանոսաց՝ Պարսից՝ Տաճկաց և բարբարոսաց, դերեալք, կողոպտեալք, նեղեալք, ձանձրացեալք յանաւրինաց յարուցելոց ի վերայ մեր,

Digitized by Google

այլ զաւրութեամբն Աստուծոյ հաստատուն է յոյս մեր կենդանի, և սիւն հաւատոց մերոց որ երբէք շարժեցաւ ի հիմանէ նախաճառեալ սրբոց աստուածազգեստից հարցն, զորոց վերագրեցի զանուանսն, այլ վարդապետութեամբ նոցա որ ի միջի մերում հաստատեալք ի հաւատս ճշմարիտս, փառաւորեմք զսուրբ Երրորդութիւնն յեկեղեցիս սրբոցն, ակն ունելով յուսոյն յաւիտենից։ Արդ, դու, եթէ աւտար ասես զմեզ յԱստուծոյ եկեղեցւոյ, նախ ասա՛ աւտար զսոսա զամենեսեան, զի սոքա են վարդապետք մեր. և ուսուցիչք, և զայլ որ բնաւ ոչ դիտեմք, և աւտար զսոսա ասելով, աւտարանաս և դու ի յուսոյն բուսմէ։ Տե՛ս քաջ, մի՛ գուցէ զուր նախատես զժողովուրդ Աստուծոյ՝ զոր գնեաց արեամբ իւրով։

Գրեալ էիք, թէ Ուր քարոզեացն Պետրոս և այլ առաքեալքն, ո՛չ ոք երևեցաւ անդ հերձուածող, և եթէ՝ Դուք առանձինութեան մոլորեալք կարատաւորն ո՛չ ճանաչէք, որ զհաւատս պղտորեցին, և զըպարտէք զժողովն Քաղկեդոնի՝ հաւանեալք Դեոսկորոսի։ Սիրելի հաւատարիմ։ ուր քարոզեաց Պետրոս և այլ առաքեալքն, ո՞չ ապաքէն ի Հրէաստանի, ի Սամարիա յԵգիպտոս, յԱսորեստանի, ի Միջագէտս, յԱսիա, ի Յոյնս, և ի Հռովմ։ Արդ եթէ ոչ որ գտաւ անդ հերձուածող, ասա՛ ինձ, ո՞ւստի էին սոքա։ Նախ և առաջին Սիմոն Սամարացի, Մենանդրոս, Կարպոկոստէս, Սատառնիլոս, Կորնթոս, Դովսիթէոս, Վաղէնտիանոս, Մարկիոն, պեղծն Արտեմոն, Կարդոն, Մանի անիծեալ, Մոնտանոս պեղծ, Արտեմոն, Փոտինոս, Պաւղոս սամուստացի, Սարել Լիբացի, Ապաւղինարէս լաւոդիկեցի, Աբիոն Աղեքսանդրացի, Եւնոմիոս, Ղուկիանոս, Նաւատիանոս հռոմայեցի, Մակեդոն, Նեստորիոս, Եւտիքէս Բիւզանդացի, ամենեքեան սոքա ո՞չ ապաքէն յառաջասացեալ աշխարհացոյ էին՝ ո՞ւր քարոզեցին առաքեալքն։ Դու զի՞ ասես թէ ո՞չ ոք երևեցաւ անդ հերձուածող։ Ոմանք ի սոցանէ, և թագաւորեալ քաղաքիդ առաջնորդք իսկ էին և այլոց մայրաքաղաքաց ձերոց, որպէս Մակեդոն և Նեստոր և Պաւղոս Սամուստացի որ յԱնտիոք, որք յայտնապէս երևեցան, սերմն ժանդ, որդիք անաւրէնք, շառաւիղք չարին, և արմատ անիծից, զոր թոյնք մահաբեր աւձին քուսուցին, զի ո՞չ ասեմ եթէ առաքեալքն եղեն պատճառք կորըստեան նոցա, այլ ի սերմանէ չարին ի մէջ ցորենոյն բուսաւ որոմն ընդ ամենայն աշխարհս, որք անշէջ հրոյն յաւիտենից դան-

ձեալ կան, զորս երանելի հարքն մեծաւ աշխատութեամբ և բրտանրք վանեալ հերքեցին ի դարս իւրաքանչիւր։

Արդ թէպէտ և դուք ոչ զոք ընդունիք ի սոցանէ, այլ նզովէք, բայց ի վիճակի ժառանգութեան սրբոյն Գրիգորի և ոչ երբէք երևեցաւ յայլ աղանդից անտի, վասն զի փոքր իսկ է փարախս, սակայն ի գայլոց անկոխելի է զաւրութեամբ յուսոյն մերոյ Քրիստոսի Աստուծոյ։ Այլ դու որ ասես թէ՝ դարատաւորն ոչ ճանաչել, արատաւորք ո՞չ ապաքէն սոքա են զորոց գրեցի զանուանս։ Ճանաչեմք և նզովեմք զամենայն հերետիկոսս, զառաջինսն և զմիջինսն և զվերջինսն, զորոց զիւրաքանչիւր աղանդոց և զհայհոյութեանց ասել մի ըստ միոջէ, ոչ է ժամ։ Թողից քեզ որպէս զիտոցի զամենայն, զի աւելորդ է զայսոսիկ գրել առ քո աստուածսիրութիւնդ։

Այլ որ Դէոսկորոսիւ ստէպ ստէպ թշնամանես զմեզ լրաւաբանելով, հարցանեմ զքեզ, ասա ինձ, ո՞վ է Դէոսկորոսն այն, ո՞չ ապաքէն հայրապետ քո է, զքեզ և առաջնորդ երկրորդ ժողովոյն որ յԵփեսոս, զորոյ ոչ գիր խոստովանութեան, և ոչ սահման հաւատոյ և ոչ այլ ինչ աւանդութիւն ունի աշխարհս Հայոց. միայն լսեմք թէ ոչ հաղորդեցաւ համախոհից անիծելոյն Նեստորի, և Փղարիանոսի ասեմ և Թէոդորիտեանց և Յովհաննու Դդուացւոյ. և վասն այնորիկ աքսորեալ ընկեցին զնա Մարկիանոս և ժողովն. այնր աղաչաւ ոչ նզովեմք զնա, այլ ընդունիմք զի չար ինչ զնա մեք ոչ գիտեմք։ Արդ նա եթէ արժանի հաւատարմութեան է, ընկալեալ լիցի. և եթէ աւտար ինչ խորհի, մեզ չէ ինչ փոյթ, վասն զի քո է։ Բայց վասն ոչ ընդունելոյ մեր զժողովն Քաղկեդոնի, զոր ասես դու սուրբ և հաւասար երից ժողովոցն, զայդ ոչ ի Դէոսկորոսէ ուսաք մեք, այլ ի նոցունց սահմանադրութեանցն, և ի տոմարէն Լևոնի Հռոմայեցւոյ, որ էր առ՛թ և պատճառ ժողովոյն Քաղկեդոնի, որք ոչ միաբանին խոստովանութեան առաջին սրբոց հարցն, զոր ընկալաք մեք։ Վասն զի իշխեցին ասել յետանձառ միաւորութեան Աստուծոյ Բանին՝ երկու բնութիւնս և երկու ներգործութիւնս և երկուս կամս, շինելով չարապէս ի վերայ հիման Նեստորի։ Գողանալով զպարզամիտսն, ասացին մի անձն և մի դէմ և երկու բնութիւնս, և առանձնապէս զկիրս նոցա, պատճառելով զանիծեալն Եւտիքէս, թէ նա ասաց մի բնութիւն. շփոթեալ խառնակութեամբ, յեղաշրջեալ

գրանն ի մարմին, և Աստուածային բնութեամբն իւրով ախտակրեալ և մեռեալ, այնր աղագաւ հաստատեալ աւրինագրեցին ի Քաղկեդոնի հաւաքեալքն, երկու բնութեանց յայտարարութիւնք առ ի զԵւտիքէսն պապանձեցուցանել։

Ո՞վ վատթար յաղթութեանն, չարիւ զչար բժշկել կամելով. և թիւրութեամբ զթիւրութիւն ուղղել, զի ասացին այսպէս, թէ Խոստովանիմք մի Տէր զՅիսուս Քրիստոս զՈրդին Միածին երկու բնութիւնս անշփոթելիս, անխառնակելիս, անորոշելիս, անմեկնելիս ծանուցեալ։ Ոչ երբէք ի բաց բառնալով զբնութեանցն զանապանութիւնն յաղագս միաւորութեանն, այլ առաւել ամբողջ պահելով զիւրութիւնն երկաքանչիւրոց բնութեանցն, ի մի դէմ և յանձնաւորութիւն ենթակայեալ։ Համաձայնարար այսոցիկ գրէ Լևոն յիւրում տոմարին ասելով, Ապրելոց այսուհետև, և յատկութեամբ երկաքանչիւրոցն բնութեանց և ի մի դէմ էակցելոց, ամբարձաւ յաստուածութենէն նուաստութիւնն, նոյնպէս և ի նուաստութենէն աստուածայինն։ Եւ գարձեալ թէ ներգործէ իւրաքանչիւր բնութիւնն միւսոյն հաղորդութեամբ, և որպէս ոչ ի բաց բառնայ զծառային կերպ՝ Աստուծոյն կերպ, այսպէս և ծառային կերպ՝ զԱստուծոյն կերպարան ոչ բացաբառնայ. զներգործութիւն և զկերպն յաւել ի սահման ժողովոյն։ Այսոքիկ ոչինչ ընթատ երևին մեզ ի Նեստորի չար իմացմանցն, զի և նա զբնութիւնսն խոստովանի անորոշելիս և անխառնելիս ասելով. մի զանգցես զբնութիւնն և մի գարձեալ զարժանաւորութիւնն այսր անդր կորզիցես, զի անորիշ է շարայարութիւնն և անխառն։ Ահա ասաց Նեստոր յայտնապէս բնութիւնս անորոշելիս և շարայարութիւնս անխառն, որպէս ասաց Ժողովն և Լևոն, և գտաւ համաձայնորհ նոցա։

Արդ՝ զի՞ հարկաւորես զիս հաղորդել Նեստորի անիծելոյ, զի և ես ոչ ուրանամ զբնութիւնն՝ որպէս Եւտիքէս, և ոչ բարժանեմ՝ որպէս Նեստորիոս, այլ մի բնութիւն ասեմ անշփոթելի։ Բայց միութիւն յորժամ ասեմ, ոչ փոփոխումն այնր բնութեան յայս, և ոչ այսր յայն, այլ միացեալ մի՛ լեալ անճառապէս և ի վեր քան զբան, որպէս ասաց սուրբն Յովհան Ոսկեբերան ի մեկնութեան թղթին Փիլիպեցւոց. Քանզի ըստ ճշմարտութեանն մարդ եղև և տնաւրինաբար Աստուծոյ Բանն, և անտեսանելին եղև տեսանելի մնացեալ անյեղլի բնութեանն։ Արդ որք բարժանեն զբնութիւնսն յետ միաւորութեանն յայտ-

նապէս երկուս որդիս քարոզեն ըստ Նեստորի, և ոչ կարեն մկրտել ի մահն Տեառն, որպէս ասաց երջանիկն Կիւրեղ Հայրապետն Աղեքսանդրացւոց առ Սեկունդոս, Թէ յետ միաւորութեանն ոչ ի բաց հատանեմք զբնութիւնսն և ոչ որոշեմք յերկուս, զի մի՛ երկուս որդիս ի ներքս ածցուք։ Եւ մեծն Ցուլիոս Հայրապետն Հռոմայ վկայէ թէ, Հարկ է զնոսա որք երկուս ասեն բնութիւնս, զմինն երկրպագելի, և զմինն ոչ, զմինն մարդկային, իսկ զմիւսն. աստուածային, և յաստուածայինն մկրտել, իսկ 'ի մարդկայինսն ոչ մկրտել։ Իսկ՝ եթէ ի մահն Տեառն մկրտեցաք, որպէս ասաց առաքեալն, մի խոստովանիմք բնութիւն անախտակիր աստուածութեանն և ախտակիր մարմնոյն, զի այսպէս յԱստուած իցէ մկրտութիւնն մեր և ի մահն Տեառն կատարեալ։ Վասն այնորիկ ոչ հաւանիմք Նորաձայնութեան ժողովոյն Քաղկեդոնի և տումարին Լևոնի ասելովն երկու բնութիւնս ի մարմնացեալն Աստուածն բանն, այլ խոստովանիմք զՔրիստոս ոչ Աստուած մերկ, և ոչ մարդ սոսկ, և ոչ Աստուած և մարդ որոշեալ հակառակ, այլ Աստուած մարդացեալ, և որպէս Միածին ի Հաւրէ, նոյնպէս միածին ի մաւրէ, մի որդի. և որպէս մի որդի՝ մի Քրիստոս, և որպէս մի Քրիստոս՝ մի անձն, և որպէս մի անձն՝ մի դէմ, և որպէս մի դէմ՝ մի կամք, և որպէս մի կամք՝ մի ներգործութիւն, և որպէս մի ներգործութիւն՝ մի բնութիւն, որպէս և է մի բնութիւն։

Արդ եթէ բարժանես զբնութիւնն, բարժանին ընդ նմին և երկաբանչիւրքն, զի ոչ այլ ինչ է բնութիւն մարդկային, այլ կամք և ներգործութիւն, անձն և դէմ, որ է մարդ կատարեալ։ Իսկ եթէ այլ է բնութիւն մարմնոյն, և այլ է բնութիւն Բանին, այլ է կատարեալ մարդն, և այլ Աստուածն Բան, որպէս ասաց Նեստոր, զոր նզովեցին սուրբ հարքն ասելով, եթէ ասասցէ ոք մարդ կատարեալ զՔրիստոս բարժանելով, և զԱստուածն Բան բարժանելով, և ոչ խոստովանեսցի մի Տէր զՅիսուս Քրիստոս, նզովեա՛լ եղիցի։ Եթէ այլ բնութիւն է մարմնոյն անխառնելի ի Բանն, ապա այլ է և կամք բնութեանն, այլ և ներգործութիւն կամացն, այլ է և անձնիշխանականն՝ որ իշխէ կամացն և ներգործէ, այլ է և դէմք իշխանական անձինն՝ որ է մարդ կատարեալ, արտաքոյ Բանին զաւրացեալ ի Բանէն, և զայս Նեստոր ասաց, զոր նզովեցին դարձեալ սուրբ հարքն ասելով. Եթէ ոք ասասցէ մարդ զաւրացեալ յԱստուծոյ Բանէն

Digitized by Google

զՅիսուս, և ի Միածինն՝ փառս մերձեցեալ, որ արտաքս քան զնա իցէ, նզովեա՛լ եղիցի։

Ասէք, երկու բնութիւն ի Քրիստոս և անձն և դէմ մի. ասեմք և մեք, մի բնութիւն ի Քրիստոս. նոյնպէս և անձն, և դէմ մի։ Արդ եթէ շփոթեսս զբնութիւնն, վասն միանալոյն, զի՞նչ արասցես և զդիմացն միութիւն, զի և դու ասես դէմ և անձն մի, և բնութիւնս երկու. զի մի՛ շփոթեսցի, և թէ շփոթեալ է բնութիւնքն վասն միութեանն, շփոթեալ է ըստ քեզ և կերպարանն վասն միութեանն, զի ճշմարտապէս կերպարանն Աստուծոյ, կերպարան ծառայի եղև ըստ զրոց։ Եթէ բարժանես զբնութիւնսն զի մի՛ շփոթեսցին, բարժանեա՛ դարձեալ և զդէմսն, զի մի՛ ի բաց բարձցէ զծառային կերպ՝ Աստուծոյն կերպ ըստ Լևոնի ասելոյն, և որ ասաց յայտնապէս երկուս դէմս, որպէս ասաց Նեստոր, զոր նզովեցին դարձեալ սուրբ հարքն ասելով Եթէ ոք զմի Տէր Յիսուս Քրիստոս բարժանեսցէ յերկուս դէմս յետ միանալոյն՝ և միայն մերձաւորութիւն և պատիւ, և ճոխութիւն տացէ նմա՝ և ոչ միութիւն բնութեամբ, նզովեա՛լ եղիցի։ Եթէ ոչ ի բաց բառնայ բնութեանցն զանապականութիւն վասն միանալոյն, այլ առաւել ամրողջ պահի իւրութիւն երկաքանչիւր բնութեանցն ըստ Քաղկեդոնի սահմանին, և ըստ Լևոնի տումարին ասելոյն, ապրի՛ իւրաքանչիւր բնութեանն յատկութիւն. ապա իւր առանձինն է մարդկային բնութեան յատկութիւն՝ յղանալ և ծնանել, սնանել և զարգանալ, ներգործել և կրել, չարչարել և մեռանել։ Արդ՝ եթէ ոչինչ յայսցանէ կրեաց Բանն զի ամրողջ պահեսցէ զիւրութիւն իւրոյ բնութեանն, ապա զի՞արդ ասէք՝ յղանալ և ծնանիլ Աստուծոյ Բանին, սնանիլ և զարգանալ, ներգործել և կրել, չարչարել և մեռանել իւրով մարմնովն, զի այսոքիկ առանձին իւրութիւնք են մարդկային բնութեան, արտաքոյ Բանին բնութեան, զի բնութիւն Բանին առանձին՝ է անմարմնութիւն, անփոփոխութիւն, անայլայլութիւն, անախտութիւն, անմահութիւն։ Եւ եթէ պահեաց զիւրութիւն իւրոյ բնութեանն, ապա ոչինչ յայսցանէ կրեաց բանն, այլ մարդ սոսկ ըստ ասացելոյդ կրեաց զայս ամենայն, և փրկեաց զմեզ զայդ և ոչ Նեստոր իշխեաց յանդգնել։

Արդ տես, սիրելի, զասացողսն երկու բնութիւնս այլ և այլս, եթէ որպէս իհարկէ հաղորդին Նեստորի։ Վասն զի ասաց Լևոն յայտնապէս յիւրում հաւատաքանութեանն այսպէս. Եւ է

իմաստութիւն շինողին իւր տանն, Բանն մարմին եղև, և տաղաւարեաց ի մեզ. այս է յայսմ ի մարմնի զոր էառ ի մարդոյ, և զոր հոգւով կենդանութեան բանականի անձնաւորեաց։ Տաղաւարիլ ասաց Լևոն ի Մարիամայն մարդ զԱստուածն Բան, այլ դոլով քան զ'ի կուսէն ծնիցեալ Փրկիչն Քրիստոս Տէր։ Գրէ և Նեստոր նման սմին ասելով. Խոստովանեա, ասէ, զբագինն այլ ներբնակեցելումն շարայարել։ Թող Աստուածոյ Բանին շարայարել ի բագին յընտանի, մի՛ զընակեալն Աստուած յիւրմէն մերկ սգուցանես բազնէ, և մի՛ զբագինն ի բնակեցելոյն աւտարա յուցանես յաստուածութենէն։ Եւ դարձեալ դրէ Բանն մարմին եղև, և տաղաւարեաց ի մեզ. քանզի տաղաւար ընկալաւ Բանն զմարդկութիւնս։ Գրէ և Պաւղոս Սամոստացի հանգոյն սմին ասելով. Բնակեաց իմաստութիւնն ի մարդն որպէս հնար զոյ բնակել անմարմին ի մարմնի։ Այսպէս բնակէ, որպէս կի մի՛ ի Դաւթայն աւծեալ աւտար իցէ իմաստութիւնն. և մի իմաստութիւնն ի յայլում այսպէս բնակեսցէ։ Եւ դարձեալ թէ՝ ի միում տան՝ իշխանապէս բնակէ քանզի և ի մարգարէսն էր, այլ առաւելապէս ի Քրիստոսի. որպէս ի բագնի Աստուծոյ։ Ահա ասացին Նեստոր և Պաւղոսն Սամոստացի, բագին և բնակիչ, տուն, և զիմաստութիւնն շինող, և զբանն տաղաւարեալ յիւրում մարմնին, որպէս ասացն Լևոն, և զտաւ համախորհ և միաձայն Նեստորի և Պաւղոսի Սամոստացւոյ. քանզի տուն ասաց զ'ի Մարիամայ առեալն, ընակել զԱստուած Բանն ի տանն աւրինադրէ, որպէս թուեցաւ հերձուածողացն առաջնոց, զի մի՛ Աստուած բանն՝ զոր կոչեաց իմաստութիւն՝ թափեալ զինքն գտանիցի վասն մեր, ըստ առաքելոյ ասելոյն, և մի տուեալ վասն մեր ի Հաւրէ ըստ գերագանցութեանն սիրոյ. Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհս, ասէ աւետարանիչն, մինչև զորդին իւր միածին ետ, այլ և զի մի՛ Տէրն փառաց, այլ Տեառն փառաց տուն ասասցի ի խաչելեալ։ Քանզի եթէ տուն իւր շինեաց ըստ Լևոնի ասելոյն, և յայնժամ բնակեաց ի Հարսնի, ամենայն ի Մարիամայ մարդ՝ Աստուծոյ բանն՝ արտաքոյ ի շինեցելոյ տանէ, մինչ զի ինամսեայ ժամանակաւ զնա շինեսցէ, այլ դոլով քան զ'ի կուսէ ծնեալն։ Ապա ուրեմն ոչ յղացաւ անճառաբար յարգանդի Աստուածն Բան, և ոչ մնաց Աստուածածինն կոյս։ Քանզի ոչ լանն բնութեամբ ծնաւ, այլ զտաղաւար բանին, և ըստ այսմ զիմանի Քրիստոս ինքն իւր տէր, և իւր ծառայ. բագին և բնա-

Digitized by Google

կարան, տուն և որ շինէ զտունն, տաղաւար և որ բնակէ ի տաղաւարին։

Բայց ոչ այսպէս ուսուցին մեզ աստուածային գրութիւնքն, այլ զինքն զԲանն մարմին եղեալ քարոզեն, մնալով Աստուած անփոփոխելի, տաղաւարեալ կամ բնակեալ ի մեզ ի մարդկութեան։ Քանզի բնակեցայց, ասէ, ի նոսա, և գնայից. և Բնակել զՔրիստոս ի սիրտս մեր, աղաւթէ երանելին Պաւղոս. և Աստուծոյ միայն բնակել ի մարդկան։ Իսկ Քրիստոս՝ իւր ոչ տուն և ոչ բնակիչ ասի յաստուածային գիրս։ Թէպէտ և ուրեք մարդկային վարի ձայնիւ վասն հաւատարմութեան. զի մի երևցցի կարծիցի մարմնաւորութեան իւրոյ խորհուրդ։ Քանզի մնալով Աստուած եղև անյեղապէս և անխառնակաբար մարդ. և նոյնպէսոյգ Հաւր և Հոգւոյն սրբոյ՝ և յորժամ եղևն ըստ մեզ։ Իսկ մարմնաւորութեան և ծնելութեան նորա խորհուրդ անճառելի է և անիմանալի ամենեցուն, որպէս միայն գիտէ ինքն միածինն Աստուած ըստ իւրումն Հաւր և Հոգւոյն սրբոյ. զի թէպէտ և զմարմին իւր ասաց տաճար յաւետարանին իւր, իբրև աւծեալ տնաւրինաբար Հոգւով սրբով՝ ունելով յանձին զՀայր և զՀոգին սուրբ, զի և մեք զնա ընդունելով՝ մարմին նորա լիցուք ի մեզ բնակեցուցանելով զՀայր և զՀոգին սուրբ. զի Անդամք եմք մարմնոյ նորա, և ի լրութենէ նորա մեք ամենեքեան առաք, և բնակութիւն նորա եղեաք։ Այլ ոչ եթէ ուրոյն առանձնապէս արտաքոյ աստուածային էութեանն ասաց տաճար զոլ զմարմինն, իբր զի բնակից է ինքն այլ յայլում, որ զմարմինն իւր, ասէր, հաց կենաց յերկնից իջեալ և աշխարհի կեանս տայ։ Այլ ինքն Աստուած Բանն մարմնացեալ, որպէս մեղք կոչեցաւ վասն մեր՝ որ զիմն երարձ զմեղս, և անէծք՝ որ զիմն ելոյծ զանէծսն. և ծառայ՝ որ զիսն ազատեաց. նաև տաճար զինքն ասաց տնաւրինաբար վասն իմ, միաւրեա քակեալ, և երեք աւրեա յարուցեալ, և մնացեալ յաւիտեան, զի և ես զնա առընկալայց, և տաճարացայց նովաւ Հաւր և Հոգւոյն սրբոյ, զի ոչ այլ էր զոր քակեցին, և ոչ այլ որ յարոյց զքակեալն, այլ ինքն Աստուած Բանն մարմնով իւրով կատարեաց զամենայն, զի որ խաչեցաւն և թաղեցաւ, այն է որ յարեաւն։ Ոչ այլ ոք և այլ ինքն Աստուած և ինքն մարդ. նոյն ինքն ճշմարտապէս մեռեալ որպէս մարդ, և միշտ կենդանի որպէս Աստուած, որպէս ասաց սուրբն Եպիփան եպիս-

կոպոս Կիպրացւոցն ի զիրն հաւատոյ. եթէ ինքն Աստուած և ինքն մարդ, ոչ շփոթութիւն գործելով՝ զերկուսինն ի միասին խառնելովն, ոչ դոյութեամբ, այլ ի մի կաւրացուցեալ զերկրայինն ընդ Աստուածութեանն, և ի մի աստուածութիւն կաւրացեալ. և մի աստուածմիութիւն ժողովեաց։ Ոչ երկու բրիստոսք և ոչ երկու որդիք, ոչ այլ ոք և այլ, ի նոյն մարմին հոգևորական, ի նոյն աստուածութիւն անհասանելի, չարչարեալն ոչ ապականեալ, անապականելին՝ անապականելի, անապականութիւն ամենայն։ Աստուած Տէր նստեալ ընդ աջմէ Հաւր։

Արդ ըստ այսմ ամենայնի, իմաստութիւնն Աստուծոյ որ շինեաց իւր տուն, և բնակեաց ի նմա, ո՛չ ըստ ասելոյն Լևոնի, Բանն շինեաց տուն զմարմինն և տաղաւարեաց ի նմա, այլ ինքնին մարմնացեալն Աստուած շինեաց իւր տուն հոգեկան՝ զմեզ ի նա հաւատացեալքս, և բնակեաց ի մեզ, վասն այսորիկ և զկամաւորն համբերեաց թափումն, անթափին զընութիւն իրրև զԱստուած, և զաղքատութիւնս մեր զամենայն իւր արարեալ զի մեք փարթամացուք ի ձեռն ի նա հաւատոցն, և բնակութիւն նմա եղիցուք սրբով մկրտութեամբն. սակս որոյ և ընդ մեզ է մինչև ի սպառել յաւիտենից։ Զի նա է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք, որ և ի սիրտս հաւատացելոց բնակէ հանդերձ Հարրն և սուրբ Հոգւովն։ Քանզի մի է Միածինն Աստուծոյ, որպէս Աստուած, և անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց. ըստ որում եղև մարդ տնաւրինաբար գոլով, և այսպէս ըստ բնութեան Աստուած՝ և մարդովն ըստ մարդ։

Արդ թէպէտ և հարքն առաջինք ի մարտս հերձուածողացն յիշեցին ուրեք բնութեան հետս, միայն վասն հաստատելոյ զտնաւրէնութիւնն, եթէ ճշմարտապէս մարդ եղև Աստուծոյ Բանն և մարմնով իւրով կրեաց զամենայն. այլ ոչ ուրեք սահման հաւատոյ զբնութիւնսն կարգեցին երբեք. իսկ ժողովն Քաղկեդոնի, հաւանեալք Լևոնի յայտնապէս կարգեցին սահման հաւատոյ երկուս բնութիւնս առանձնացեալս, և շփոթեցին և բարժանեցին զեկեղեցիս տիեզերաց։ Խոյեանք իսկ պարտաւորեցին զանձինս, զի ասացին յԵփեսոսի երկրորդ ժողովն. Եթէ ոք ասէ ի վերայ միոյ Քրիստոսի երկուս բնութիւնս, նզովեա՛լ եղիցի։ Եւ նովին դարձեալ ի Քաղկեդոնի,

Digitized by Google

Նպովեցին զՆեստորիկ՝ որք ոչ ասեն ի վերայ Քրիստոսի երկուս բնութիւնս. զոր ոչ ընդունիմք զսահմանադրութիւն հաւատոյ նոցա. և ոչ ասեմք երկուս բնութիւնս զանապանարարս ի Քրիստոս. այլ մի խոստովանիմք բնութիւն բանին մարմնացելոյ, ոչ շփոթեալ և ոչ անխառն մնացեալ, այլ և խառնեալ և միացեալ բնութեամբ, անշփոթաբար և անբաժանաբար ի վեր է քան զմիտս։ Ոչ երկու բնութիւն աստուածութեանն և մարդկութեանն, և ոչ շփոթումն, այլ միութիւն անշփոթաբար։ Վասն զի առ Աստուածն Բան միացաւ, և նորին փառաց և բնութեան գտաւ հաղորդ, որպէս անձինն և կերպարանին։ Ոչ իբր ոմն առ ոմն՝ համապատուարար լծակցեալ, այլ իբրև զքնար ինն ընդ բնարհարաւ եղեալ առ նորայն յարմարեցաւ շարժութիւն կամաց. և կամ որպէս լոյս ճրագի յարեգական միացեալ ճառագայթից, առանց ի բաց բառնալոյ ոչինչ կարէ զիւրն ներդործել ճառագայթիցն զանապանութիւն. այսպէս և մարդկային էութիւնն ընդ աստուածայնոյն միացեալ անիրաբաբառնալի, ոչինչ առանձնապէս զիւրն ներգործէ զաւրութիւն։ Քանզի յաղթէ զաւրաւորագոյնն տկարագունին. ընդ ինքեան զնա միաւորելով և աստուածացուցանելով, որպէս ասաց Գրիգոր Աստուածաբան ի ճառին որ յաղագս Որդոյ. եթէ՝ խառնեցաւ ընդ Աստուածութեանն և եղև մի, վեհագունին յաղթելով։ Եւ դարձեալ ի Զատկի ճառին ասէ, Որպէս աւծելոյ Աստուածութեամբն, և եղելոյ որպէս որ էաւծն, և համարձակիմ ասել զոյդ Աստուած։

Յետ այսպիսի անձառ և անհաս միաւորութեան, ո՛չ որ իշխէ երկու բնութիւն ի ներքս խառնել իմաստս, զի մի՝ որիշ իցէ յերկուս դէմս և յերկուս որդիս ըստ Նեստորի, այլ միայն զի մարմին յառաջն և մարմնացեալ յերկրորդումս կատարեալ ի կատարելումն, և ի մի կատարեալ կենդանի, որպէս ասաց սուրբն Բարսեղ առ Ապողինարէս։ Քանզի Բանն մարմնացեալ և միացեալ նոյնպէս մարմինն աստուածացեալ և ոչ փոփոխեալ յանմարմնութիւն, որպէս ասաց սուրբն Սեբերիանոս. զի թէպէտ և ծածկեցաւ, ասէ, մարմինն աստուածութեամբն և ներկաւ անմահ արմատովն, և եղև ամենեին անմահութիւն, չկորոյս զնկարագիր մարմնոյն, այլ կայ և մնայ նկարագիր մարմնոյն, ներկեալ և ընկղմեալ ի կենաց անտի։ Քանզի յորովայնի կուսին, զանփոփոխելի լուսոյն ճառագայթ, զփոփոխականաւն

Digitized by Google

փայլատակեաց գնիւթով, և կայծակ իմն անշուշտ նոյնակերպ հրաշարուսեալ գլխաւորիւր յըմբռնել զնա լուսոյն անապականութեան յանհարսնացեալ յարգանդին։ Սակս որոյ մի դէմ և անձնաւորութիւն միով էականութեամբ, և մի է նորաբանութիւն. ըստ որում Աստուածածին ծնաւղն, և ծնեալն ի նմանէ Աստուած մարմնացեալ, և նոյն բնութիւն Հաւր և մարմնացելոյ Որդւոյն։ Քանզի բնութիւն Բանին կերպացաւ բնութիւն մարմնոյն, և եղև բնութիւն Աստուծոյ՝ մնալով մարմին անապական, և մնաց Երրորդութիւնն պարզ և անշարադիր, զի մի է յԵրրորդութենէն մարմնացեալ Բանն, և մի է նորա բնութիւն, զի Երրորդութիւնն պարզ է, և առանց ի բաղմաց գոյացեալ, և ոչ ոք յԵրրորդութենէն ծառայ և աւտար, որպէս ասէ Աստուածաբանն, և մարմնացեալ Բանն ընդ Հաւր և ընդ Հոգւոյ թուեալ երեք անձինս ասի, և մի բնութիւն, ապա ոչ ուրեմն ի Քրիստոս բնութեանց պանպանութիւնք, այլ մի է բնութիւն բանին մարմնացելոյ, որպէս և խոստովանիմք մեք, ուսեալք ի սուրբ գրոց և ի վարդապետաց եկեղեցւոյ։

Քանզի երանելի առաքեալն Պաւղոս, զմարմնացեալն Աստուածն բան հանդերձ իւրովն մարմնով Քրիստոս անուանեաց, և Աստուծոյ զաւրութիւն և իմաստութիւն զնա քարոզեաց ընդ երկնաւս, և զնա ասաց ի խաչ ելեալն։ Մեք քարոզեցաք, ասէ, զխաչելեալն Քրիստոս. զնա, ասաց, ի Հրէից ըստ մարմնոյ՝ Քրիստոս՝ ի վերայ ամենայնի Աստուած աւրհնեալ յաւիտեանս, և զնոյն՝ մեռեալ վասն մեր, Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց. զնա ասաց մեծատուն երկնաւոր, և զնոյն աղքատ վասն մեր։ Վասն ձեր աղքատացաւ ասէ, մեծատուն երկնաւոր։ Զնա ասաց Որդի Աստուծոյ, և զնոյն եղեալ ի կնոջէ։ Առաքեաց, ասէ, Աստուած զՈրդին իւր որ եղև ի կնոջէ։ Զնա ասաց, իջեալ ի ստորինս, և զնոյն ելեալ գեր ի վերոյ երկնի. Որ էջն, ասէ, նոյն է, և որ ելն ի վերոյ քան զերկինս։ Զնա ասաց, անդրանիկ արարածոց, և զնոյն հաստիչ բոլորից. Նովաւ, ասէ, հաստատեցան որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի։ Զնա ասաց, կերպարան Աստուծոյ և զինքն թափեալ ի կերպ ծառայի. Հնազանդեալ մահու խաչի, և զնոյն բարձրացեալ. Առեալ անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն, որ է Աստուած. և Ամենայն ծունր կրկնեսցի թափեցելումն վասն մեր, և Ամենայն լեզու խոստովանի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աս-

Digitized by Google

տուծոյ Հաւր։ Զնա ասաց, Որդի որով Հայր խաւսեցաւ ժառանգ ամենայնի և զյաւիտեանս արարող. և նորա մահուամբն ասաց, հաշտել մեզ ընդ Աստուծոյ. Հաշտեցարուք, ասէ, ընդ Աստուծոյ՝ մահուամբ Որդւոյ նորա։ Զնա ասաց, Ճառագայթ փառաց և նկարագիր էութեան նորա, և զնոյն Անդրանիկ ի մէջ եղբարց բաւմաց։ Զնա ասաց, Աստուած՝ աթոռ ունելով ընդ Հաւր յաւիտեան, և զնոյն Աւծեալ ի Հաւրէ Աւծ զքեզ, ասէ, Աստուած քո իւղով ուրախութեան։ Զնա ասաց, Ամենայնի Տէր, իբրև Որդի երկրպագեալ ի հրեշտակաց, և զնոյն Բուռն հարեալ զգաւակէն Աբրահամու, և հաւասարեալ մեզ արեան և մարմնոյ։ Զնա ասաց, Կրող զամենայն բանիւ զաւրութեան իւրոյ՝ սրբութիւն մեղաց մերոց արարեալ, և զնոյն՝ Առաքեալ և քահանայապետ խոստովանութեան մերոյ, և զինքն մատուցեալ պատարագ։ Զնա ասաց, Ցարուցեալ ի Հաւրէ և ամբարձեալ, և զնոյն զինքն յարուցանէ և համբառնայ, Ցարեաւ, ասէ, Քրիստոս ի մռեալոց փառաւք Հաւր, և թէ՝ Համբարձաւ փառաւք։ Զնա ասաց, Միշնորդ Աստուծոյ և մարդկան մարդ ասաց զնա, և զնոյն Ցայտնեալ փառաւք Աստուած և փրկիչ. Ցայտնութեան ասէ, փառաց մեծին Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Արդ՝ ո՞ւր են բնութեանցն զանազանութիւնքն, ըստ սահմանի ժողովոյն Քաղկեդոնի և Լևոնի, զի ահա մի է և նոյն, և ոչ այլ ոք և այլ՝ որ կրեաց զայս, այլ ինքն մարդացեալ Բանն Աստուած որ է Քրիստոս։ Ինքն զաւրութիւն ասի Աստուծոյ և իմաստութիւն, և ի խաչ ելեալ, և ոչինչ յայտնի բնութեանց զանազանութիւնք, այլ ինքն ի վերայ ամենայնի Աստուած ասի, և մեռեալ վասն մեղաց մերոց։ Ինքն մեծատուն և վասն մեր աղքատացեալ, Որդի Աստուծոյ, և եղեալ ի կնոջէ, անդրանիկ արարածոց և հաստիչ բոլորիցս, ի կերպարանի Աստուծոյ և թափեալ ի կերպ ծառայի։ Որդի և ժառանգ, և յաւիտեանցն արարող. և իւրով մահուամբն զմեզ հաշտեցուցեալ, բացածագումն էութեանն Հաւր և անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց։ Ընդ Հաւր յաթոռ Աստուած յաւիտենական և աւծեալ ի Հաւրէ, կրող զամենայն բանիւ զաւրութեամբ, և առաքեալ և քահանայապետ և պատարագ։ Ամենայնի Տէր, իբրև Որդի, և երկրպագեալ ի հրեշտակաց, և հաւասարեալ մեզ արեան և մարմնոյ. միշնորդ Աստուծոյ և մարդկան, մարդ և յայտնեալ փառաւք Աստուած մեծ և փրկիչ։ Ապա ուրեմն մի է բնութիւն բանին մարմնացեալ.

յոյ, և իւրոյ Աստուծոյ Բանին են աստուածավայելուչքն և մարդկայինքն, որպէս առաքեալ յայտնեաց, և ստուգագոյնս զի-տէ Պաւղոս քան զԼևոն։ Պաւղոս զՔրիստոս զոր յինքեան ու-նէր խաւսող, այլ և աւետարանիչն Յովհաննէս զ'ի սկզբանէ Աստուած բանն, առ Աստուած՝ որով ամենայն, մարմին լեալ քարոզեաց՝ մնալով Աստուած անփոփոխելի։ Քանզի եղեալ անդ-բանիկ ի մէջ եղբարց, և տեսեալ յասացելոցն վկայէ, փառս ու-ննելով իբրև զՄիածնի առ ի Հաւրէ, լի շնորհաւք և ճշմարտու-թեամբ. և զէն ի սկզբանէ Աստուած Բանն կենաց՝ տեսաք, ասէ, աչաւք, և վկայէ զտեսեալն և զշաւշափեալն ձեռաւք՝ ճըշ-մարիտ Աստուած և կեանք յաւիտենականք։ Ըստ ասացելոցս մի է բնութիւն բանին մարմնացելոյ, և ինքն Աստուած Բանն մարմ-նով իւրով կրեաց զամենայն, և ոչ բարժանեցաւ ի բնութիւնս այլ և այլս, որպէս ասաց ժողովն և Լևոն, այլ և աստուածա-փառ նախամարգարէն, զ'ի փայտէ կախեալն, կեանս կոչեաց, Տեսանիցէք ասէ զկեանս ձեր կախեալ առաջի աչաց ձերոց։ Սե-ռովբէից տեսանող մարգարէն Եսայի, Աստուած ասաց զ'ի կու-սէ յղացեալն և ծնեալն և յերկրի երևեալն, և ոչ յայտնեաց բնութիւնս, այլ թէ՝ Ահա Աստուած մեր հատուցանէ զդատաս-տան, ինքնին եկեսցէ և փրկեսցէ. և թէ՝ Ահա Աստուած, ահա Տէր զայ զաւրութեամբ, և բազուկն տէրութեամբն։ Եւ զնոյն ա :աց, Այր մի ի հարուածս, վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և թէ՝ Ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նո-րա ընդ մեզ Աստուած. և թէ՝ Կոչեսցի անուն նորա, մեծի խոր-հրդոյ հրեշտակ, Աստուած հզաւր։ Եւ Երեմիա մարգարէ. զԱս-տուած ընդ որում՝ ոչ համարիցի այլ, որ եզիտ զճանապարհս ի-մաստութեան, զնա յերկրի երևեալ, ասէ, և ընդ մարդկան շըր-ջեալ։ Եւ Դաւիթ զերևեալն մեզ Աստուած խոստովանի և Տէր, ասելով, Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ։ Ահա առաքեալք և մարգարէք և աւետարանիչք մի ասացին զմարմնացեալ Բանն Աստուած, միով բնութեամբ, կամաւք և գաւրութեամբ, և նմա ետուն զրարձրազոյն և զխոնարհագոյն զձայնսն, որպէս միոյ Աստուծոյ մարմնացելոյ, և հետս բնութեանց ոչ յայտնեցին, զի մի է բնութիւն Բանին մարմնացելոյ։ Եւ ահա սնոտի երևեցաւ Լևոնի Աստուածաբանութիւնն, որ այլ և այլ զոմն իմաստա-բանէ։

Այլ և երանելի հարքն որք ի Նիկիա զ'ի զոյութենէ Հաւր

Աստուածն յԱստուծոյ, լոյսն ի լուսոյ, որով արար զամենայն զնա՝ վասն մեր մարդկան, ստոր իջեալ և մարմնացեալ և մարդացեալ և ախտակրեալ և յարուցեալ ասացին, որպէս առաքեալք և մարգարէք և աւետարանիչք ասացին. և ոչ ետուն երկաքանչիւր բնութեանցն զայն ինչ, զոր Ժողովն և Լևոն ասացին. այլ յայտնապէս զլոյսն ի լուսոյ, զԱստուածն ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, մարդացեալ և մարմնացեալ՝ խաչեալ և թաղեալ և յարուցեալ ասացին։ Եւ զնոյն Աստուած անփոփոխելի և անայլայլելի ընդ Հաւր և ընդ սուրբ Հոգւոյն իւրով մարմնովն։ Եւ արդ՝ ըստ այսմ ամենայնի հետևելով մեր աստուածային զրոց. Աստուած մարմնացեալ՝ զծնեալն յԱստուածածնէ կուսէ խոստովանիմք, զնոյն ներգործաւղ և զնոյն կրաւղ՝ ըստ մեզ կենցաղավարութեամբ՝ զաւետարանական զձայնս, վասն զի ներգործէ Աստուած որպէս և կրէ տնաւրինաբար, և սակայն յաստուածային մարդկայնովն, վասն զի աստուածացաւ և ի մարդկայինսն աստուածայնովն, զի ո՛չ ըստ բնութեան կամ յախտից։ ճշմարտապէս մարդկայնովն աստուածայինք՝ վասն զի տեսար ճշմարտապէս աստուածայնովն մարդկայինք՝ վասն զի փրկեցաք. որպէս մարդկայնովն հրաշագործեալ Աստուածն Բանի, աստուածայնովն տնաւրինեալ հրաշագործի, ըստ այսմիկ և աստուածայինքն՝ մարդկայնովն, և մարդկայինքն աստուածայնով անխտրապէս առգրեցան։ Վասն զի զնոյն զմերս շողացուցեալ Աստուածութեամբն սպեղանի վիրաց մերոց առնէր։

Արդ այսպէս իմանամք ի վերայ ամենայն կրիցն, ճշմարտապէս զևրաքանչիւր ոք ի մերոցս կրեաց, զքաղցն, զծարաւն, զվաստակն, զտրնութիւնն, զկերկիւղն, զանզիտութիւնն, զտրտմութիւնն, զարտասուն, զհոգսն՝ ճշմարտապէս և ոչ կարծեաւք, անապական և աստուածախառն մարմնովն. ո՛չ զճշմարտութիւնն ստուեր համարիմք ի մերմէս երկնչելով ապականելի կրից, զի ոչ հարկաւորարար, այլ ինքնիշխան կամաւորութեամբ կրեաց։ Քանզի Աստուած էր բովանդակն ի խնդիր ելեալ մեզ մահացելոցս՝ և որ զմեզն ապականէին, ի ձեռն առեալ պլանմանս սոքաւք վարեցաւ, վասն զի աճեաց կատարեալս զմեզ առնելով։ Կարաւտացաւ, զկարաւտութիւն ի մէնջ ի բաց բառնալով արտասուեաց, և եհատ զարտասուս յամենայն երեսաց. անզիտացաւ, զի ի մեզ դարձուսցէ զյառաջգիտութեան զշնորհսն. երկեաւ, աներկիւղս զմեզ առ ի կոխել զաւձս

և վկարիճս յորդորելով մնաս, և մահուամբն կամ մեռցց։ Քանզի մեռաս անմահականն, և տակաւին անմահ ի նմին մեռելութեանն մնայ։ Վասն այսորիկ վերջին խաչին, Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն, ասաց Պաւղոս։ Զի թէ երևեալն ի վերայ երկրի Աստուած ո՛չ է, ոչ ևս գայթակղեցաւ Հրէայն, և եթէ մեռեալն անմահ ի նմին մեռելութեանն ո՛չ մնաց, ապա ոչ յիմարի հեթանոսն։ Արդ՝ ասեմք կրեալ հաստատապէս, ոչ կայլոյ ուրուք վկիրս, այլ զմերս. վասն զի ճշմարտապէս մարդ եղև ասեմք։ Դարձեալ գեր ի վերոյ մնացեալ կրիցն. վասն զի Աստուած էր։ Ոչ կանգիտեմք յայսցանէ, վասն զի ոչ յաղթահարի ի կրից. անապական և աստուածախառն մարմինն, այլ յաղթութեան կէնս զնոսա մեզ յաւրինէ, ոչ յիմս հայելով ճշգրտեմ զնորայն. քանզի ես ոչ ի կուսէ և ի Հոգւոյն սրբոյ ծնայ, այլ ի սերմանէ առն և ի ցանկութենէ կնոջ, և ոչ միացեալ ի Բանն, եղէ մարմին Աստուծոյ, և ոչ անպարտական մահու, որպէս նորայն, այլ մարմին եմ մեղաց ընդ մահուամբ գրաւեալ. այնր աղագաւ յապականութիւն ի վայր քարշեալ հարկաւորապէս զիմն կրեմ կիրս, և պատժապարդ լեալ մահու մեռանիմ։

Այլ Նա ի Հոգւոյն սրբոյ և ի զաւրութենէ բարձրելոյն անապականաբար յարդանդի Կուսին յղացաւ, ուր նախ տիրեաց մեզ ապականութիւն, անդր կանխաւ ժամանեալ զապականութեանն քակեաց զիմն. սկիզբն ծննդեան ունելով, ոչ սերմն ապականացու այլ զՀոգին սուրբ, և զզաւրութիւն բարձրելոյն, զդատապարտեալ և զապականացուն ի կուսէն առեալ մարմին մարդկային՝ ճշմարտապէս անընդմիջաբար ինքեան միացոյց. որպէս լոյս ընդ արեգակն, եղեալ երկնաւոր հայ, առիթ անապականութեան աշխարհի, և աղբիւր անմահութեան, լուծեալ զապականութեան բնութիւն, ծնաւ ի կուսէ ոչ ըստ ապականեալ բնութեան ծնաւղին, այլ ըստ զաւրութեան ծնեցելոյն բնութեան, և բակտեցան աւրէնքն բնութեան։ Վասն զի . . . . . առմանդ անտեսեալ, և Աստուածածին կոյս բարեբանեալ, մանուկ ընդ մաւր եղեալ, և Աստուած ընդ մեզ քարոզեալ։ Եւ ըստ այսմ ստուգապէս Աստուածածին ծնաւղն, և ծնեալն անապական և անմահ, որ երոյծ զապականութեան բնութիւն, և շիջոյց զխայթոց մահու։ Վասն որոյ և զմարմինն իւր ասաց Հաց կենաց իջեալ յերկնից, մի դինքն ցուցանելով

իւրով մարմնովն յերկնից՝ որպէս Աստուած, և ի կուսէն՝ որպէս որդի մարդոյ։ Երկրորդ Ադամ, և տէր յերկնից, որ զսուրբ և գանմեղ մարմինն իւր, զոր ասաց հայ կենաց երկնաւոր և աշխարհի կենաց պատճառ, զա՛յն որպէս անիծից և մեղաց պատժապարտ և մահու պարտական կամաւորապէս և տնաւրինաբար ընդ ապականութեան արկեալ կրեաւ, թո՛յլ ետ յինքն ձգել զհրացեալ նետս չարին, զի շիջուցէ իւրով ապականելոյծ կրաւորութեամբն, և ընդ ամենայնս մեր ճանապարհորդեալ հոգեկան և մարմնականս, յամենայնի խրատս չարին ընթացեալ՝ ցանկ արկեաց, իւրով մարմնովն սպանեալ զթշնամութիւն, և դատապարտեալ զմեղս ի մարմնի։ Եղոյծ զբռնութիւն մահու, անպարտական իւրով մահուամբն մարմնովն ազատ ի մեղաց. եղեալ անդրանիկ ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց, նստաւ ընդ աջմէ զաւրութեան ի բարձունս։ Այսպէս ըստ բնութեանն Աստուած գոլով և մարմնովն։ Այս են կիրք մարմնացելոյ Բանին զոր կրեաց ոչ այլ ոք և այլ բնութիւն, այլ ինքն մարմնացեալ Բանն Աստուած, մարմնով իւրով կրեաց զամենայն կամաւորութեամբ, և ազատեաց զմեզ յապականութենէ մահու և մեղաց, որպէս Աստուած սուրբ, հզաւր և անմահ զոր միշտ խոստովանեալ փառաւորէ եկեղեցի Աստուծոյ, զի Աստուծով լիցի մեզ փրկութիւն. և մի՛ յուսասցուք ի մարդ, այլ յԱստուած որ կենդանի առնէ զամենայն։

Վասն զի սրբութիւն մեղաց մերոց արարեալ և պատուական արեամբն իւրով զմեզ փրկեալ, մշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ Աստուծոյ. Աստուած մարմնացեալ մերով բնութեամբս, կամաւք և զաւրութեամբ և էականութեամբ, և միշտ նոյնագոյ Հաւր և Հոգւոյն սրբոյ, վասն զի մի՛ է բնութիւն սուրբ Երրորդութեանն երից անձնաւորութեան ցոյցք, և մի յերից անձնաւորութեանցն մարմնացեալ Բանն Աստուած՝ որ է Քրիստոս, և մի՛ է նորա բնութիւն։ Այս է մեր հաւատ։ Զայս վարդապետեալ ուսուցին մեզ դիրք սուրբք սուրբ Հոգւովն, և ունիմք, և պահեմք յանձինս մեր, մինչև հասցուք առ այն՝ յոր հաւատացաքն։

Դո՛ւ եղբայր սիրելի և պատուական, զբարեկամութիւն սիրոյ խաղաղութեան, և զգութ եղբայրական խնամոց կալցիս ընդ մեզ, որպէս մեք ընդ քեզ, և այլ ինչ աւելի ի մենջ մի՛ պահանջեր, զի աւելի ինչ քան զոր գրեցաքդ, այլ ինչ ոչ կա-

Digitized by Google

բնեմք առնել որպէս Աստուած վկայէ, զի ոչ եթէ միայն մեք ոչ հաղորդիմք ժողովոյն Քաղկեդոնի, այլ առաւել ևս քան զայդուն զոր քո ի թղթի աստ գրեալ էիր, են և այլ ևս բազմութիւնք ազգաց, որք ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի, որպէսիք ամենայն Հայք, Աղուանք, Լիբինք, Կապիք, Կիլիք, Ասորեստանեայք՝ որք են Յակոբիկ, ամենայն Եգիպտոս, Եթիոպիա մեծ, Արարիա, Արապինար, և ամենայն աշխարհն Հնդկաց. ամենեքեան սոքա ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի, այլ ընդ մեզ մի բնութիւն ասեն բանին մարմնացելոյ. թէպէտ և ուրեմն ինչ բաժանմունս և կրաւնս իւրաքանչիւր։

Այլ մեք ոչ եթէ ապստամբ ինչ եմք, կամ անհնազանդ առ կայսր և պատրիարգ, այլ սիրով հնազանդութեամբ մտերմարար ծառայեմք, մեք և թագաւորք և իշխանք աշխարհիս մերոյ։ Եւ նոքա ի մէնչ չեն երբէք պահանջել զայն ինչ, զոր չեմք ձեռնահաս առնել։ Վասն զի՞ով ոք ոչ գիտէ թէ այս Շամ է բարժանմանս մերոյ, աւելի կամ պակաս, և բազում անգամ թագաւորքն առաջինք, հայրապետք և իմաստասէրք և վարդապետք՝ ջան եղեալ մեծաւ պնդութեամբ հոգ տարան և ոչ կարացին զմիանգամ բակեալն վերստին շինել։ Մեք զինչ կարասցուք առնել փոքունքս և նուազքս և երեկոյացեալքս և տգէտքս, հասեալքս ի դուռն դատաստանի։ Եւ եթէ վասն էր այս այսպէս գործեցաւ, և կամ էր ետ Աստուած թոյլ այսմ մեծի բարժանմանս լինել, այլ թողլի՞ է զիտողին զամենայն, որպէս և զայլսն անքննելեաց նորա դատաստանաց, և միայն զայս ասել ըստ առաքելոյ. Ո՞վ խորք մեծութեան և իմաստութեան և զաւրութեանն Աստուծոյ, զի առանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց զննելոյ են ճանապարհք նորա։ Քանզի՞ զիտաց զմիտս Տեառն, կամ՞ եղև նմա խորհրդակից. զի ի նմանէ և նովաւ, ի նոյն ամենայն, նմա փառք յաւիտեանս ամէն։

Զմեղապարտ գրոցս զլուծս և զծանոյցն ի յիշեցէք աղաղակեցէք ի Քրիստոս Աստուծ, ո՞վ տուսցէ ողորմութիւն։

Digitized by Google

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ՄԵԾԻ ԻՄԷՍՏԱՍԻՐԻ, ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ԱՆՏԻՈՔՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՋՈՐ ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ ԳԼՈՒԽԱՆ ԷՐ

Գերաբունեալ, առաւել իմաստութեամբ Աստուածային դիտութեանն, որ իւրով Աստուածային արարչական ողորմութեամբն գամենայն անձն կամի զի կեցցեն, և ի դիտութիւն ճշմարտութեան եկեսցեն։ Ուսեալ է ձեր ի Տեառնէ սիրել զՏէր և զընկերն իբրև անձն, զոր մանաւանդ հոգ տարեալ էիք վասն Արևելեան բնակչաց Հայաստան աշխարհիս, որ ի վերայ մեր եղև հեղումն արեան առաքելոյն Բարթողոմէոսի և Թադէոսի, որ վասն այսմ աշխարհի լուսաւորութեան աղաւթս արարին գալ ի հաւատս ճշմարիտս, որ և զնոյն Սուկաւեանքն՝ որ են վկայք Քրիստոսի երեք հարիւր և վաթսուն և հինգ, ամաւ յառաջ ըստ Հոգւոյն սրբոյ ապդմանն ասէին։ Աստուած տեսցէ իւր մշակ զաւրազոյն քան զմեզ, որպէս եղև իսկ։ Որպէս ի գալն Անակայ ի Հայք, աւթևան եղև ի վկայարանի սրբոյ առաքելոյն Թադէոսի, և ի ննջելն ընդ կնոջն իւրում եղև ընձայումն յղութեան մերոյ Լուսաւորչին, և ըստ շնորհաց Հոգւոյն սրբոյ որդի սուրբ առաքելոյն Թադէոսի, և փոխանորդեաց դնորին առաքելական ամենա երիցս երանելին Գրիգորիոս, մեծն պարթևս Պալհաւ՝ Արշակունի յազգէ, զերատեսակ փառաւք զարդարեալ, որ և եղև ծնաւղ մեր ըստ Աւետարանին և երաց մեզ զզուն լուսոյ ճշմարիտ Աստուածդիտութեան, որ և նորին ճգնողական աղաւթիւքն անարատ և ուղիղ մնաց հաւատս մեր, և ոչ ուստեք յաղթեաց բռնութիւն հերձուածողացն, ոչ հայրապետ որ կարաց դնել նոր կարգ ինչ և ոչ թագաւոր, և ոչ յայլ ումեք լուաք աւտար ձայն ի սակաւ հաւտիկս և փոքր փարախիկս, անկոխելի եղեալ ի գայլոց ըստ երանելոյն Աստուածարանի, զի մեր

զոր ինչ լուաք և ուսաք ի մերոյ Լուսաւորչէն, զնոյն պահեցաք և պահեմք հաստատուն և ուղղափառ հաւատով և այլ զարամբ ելանելով ի յանձանց ոչինչ յաւելաք, զոր և լսեաք զձէնչ եթէ բազում՝ ինչ ասէք զմէնչ ոչ լինել ի հաւատս ուղիղս։

Ըստ զրոց սակաւ բանիւք ցուցից քեզ զգրեցելումն *), թէ իմաստնոյն մի բան բաւական է, և որ հակառակելն կամի մեք զԴաւթայն ածեմք զմտաւ թէ՝ Ի հակառակելն անզգամին լուռ եղէ, և՝ Ոչ բացցէ զբերան իւր։ Նա և առաջին սուրբ հաւատոյս մերոյ խոստովանութիւն որ ի Հայր և Յորդի և ի սուրբ Հոգին այս է։

Խոստովանիմք զՀայր անսկիզբն և անժամանակ. և զՈրդին Բան և ծնունդ Հաւր անժամանակ և անսկիզբն ծնունդ. և զՀոգին սուրբ ելողութիւն ի Հաւրէ, և ընդ Հաւր անսկիզբն Երրեակ Միութիւն, թուով և անձամբ և անուամբ որիշ. իսկ աստուածութեամբ և փառաւք մի, հարթ հաւասար, անբաժանելի միութիւն, մինն ի յերիսն և երեքն ի մի Աստուածութիւն. և մինն ի յերիցն Բանն Հաւր որ յառաջ քան զյաւիտեանսն ծնեալն ի Հաւրէ վասն հաշտեցուցանելոյ զարարածս ընդ Հաւր՝ իջեալ յերկնից աւետաւք հրեշտակապետին, եկեալ ի սուրբ յանարատ կոյսն մարմնանալ ճշմարտապէս և եղանի Աստուած և մարդ, և որպէս էր ճշմարիտ Աստուած նոյնպէս և ճշմարտապէս մարդ, մինն յերկուց բնութեանց անշփոթ և անբաժանելի, թէպէտև մարմնացեալ, այլ ի Հաւրէ անմեկնելի, զամենայն մարդկային կիրս կրեալ բաց ի մեղաց, քաղցեալ, այլ զհինգ հազարսն կերակրեալ, այլ և յագեցուցիչ է տիեզերաց։ Ծարաւեալ, այլ ասէր, Եթէ որ ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս և արբցէ։ Վաստակեալ, այլ ասէ, Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք. և ես հանգուցից զձեզ։ Եւ զի՛նչ ասացից. ընդ նմին զբարձրութիւն աստուածութեանն աներտակիր եղեալ անչարչարելի Աստուածութեամբն, Չարչարեալ, չարչարելի մարդկութեամբն, առեալ չարչարելի մարմին, և ի չարչարելոյն չարչարեալ անչարչարելին. ինքն չարչարելի, և ինքն անչարչարելի. զի իւր ինքեան էր մարմինն որ չարչարէր. և այսպէս բնութիւն աստուածութեանն անչարչարելի, բայց ինքն Աստուած միացեալ էր ընդ չարչարական մարմինն իւր։

*) Այսպէս յար.

ոչ չարչարելի աստուածութիւն, բայց չարչարակից լինի մարդկութեանն չչարչարանն՝ իւր համարի, և ինքն մնայ առանց չարչարանաց անմահ՝ զի ինքն է կենդանութիւն. և կենդանութիւն ոչ մեռանի ըստ Պաւղոսի. եթէ Քրիստոսի չարչարելն մարմնով։ Արդ ըստ այսմ բանի Յուդա՝ աստուածավաճառ, և Հրեայք՝ աստուածասպանք, և խաչն՝ Աստուծոյ խաչ, և մեր՝ Աստուծոյ արեամբն փրկեալք։ Եւ առ սուրբ սեղանն զՀայն և զբաժակն ճշմարտապէս խոստովանիմք մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ։ Առ այսքան՝ այս բաւական լիցի։

Դարձեալ ասէք եթէ զԱւետիսն ի մարտի ի քսան և հինգն ոչ կատարէք, և ոչ զԾնունդն ի դեկտեմբերի ի քսան և հինգն։ Աղաչեմ զի ուսուցես մեզ, թէ յո՞ր զիրս կայ, յառաքելո՞ց, թէ յուղղափառ վարդապետաց. կամ ո՞րով պատճառանաւք եղեալ էք զայդոսիկ յայդմ տեղւոջ։ Եթէ զԱրտեմոնէն ասէք, ո՛չ ընդունիմք. զի մեք յԵրուսաղէմ զիտեմք զսկիզբն հաւատոյ, և առաքեալքն յԵրուսաղէմ կարգեցին զկանոնն, և Յակոբոս Տեառն եղբայրն յԵրուսաղէմ կարգեաց զընթերցուածն. և Կիւրեղ հայրապետն զնոյն դաւանեաց։ Բայց որպէս ասացի ձեզ մտերմաբար սիրով, ցուցէ՛ք մեզ ի գրոց, և մի իշխանաբար հպարտութեամբ։ Այլ մեք ի ձեր գրոց զիտեմք զի զկնի ԼԳ. ամաց վերանալոյն Քրիստոսի, ապա աշակերտեցաւ Արտեմոն Յովհաննու ամիսս եւթն, և ելեալ ի նմանէ Նորաձև կարգս դնէր ընդ հակառակս ինչ Աւետարանչին։ Վասն որոյ և ասէր իսկ յիւրում առաքելական թղթին, թէ առ ի մէնջ ելին, այլ ոչ էին Նոքա ի մէնջ, զի թէ ի մէնջ էին առ մեզ էին մնացեալ։ Եւ դարձեալ թէ՝ Արդէն իսկ ներինք բազումք եկեալ են. զայս զԱրտեմոնէ ասէր և զնորին նմանեաց։ Արդ միթէ կարէ՞ք ասել, եթէ Յակոբոս տգէտ էր ծննդեանն Քրիստոսի, որ առաջին եպիսկոպոս նա էր յԵրուսաղէմ, և ոչ մեկնէր ի տաճարէն, որոյ ծունկքն իբրև զուղտու էին խստացեալ յանդադար աղաւթիցն և ի տքնութենէն. և նա ի Տիբէթա ամսեանն ի քսանումէկն տաւն էր, որ է ըստ Հռոմին ի յունուարի ի վեցն, և այլ առաքեալքն ի նմանէ ուսեալք տաւնէին զաւր ծննդեանն և զմկրտութեանն ի միում աւուր, որ է վեց Յունուարոյ, որպէս և ի՝ կանոնքն իւրեանց իսկ կայ։ Եւ զի ինքն Յակոբոս ընդ Յովսեփայ էր յաշխարհագիրն, և ինքն էր սպասաւոր ծննդեանն Քրիստոսի յայրին, որ և ընդ նմա խսդ

փախչէր յԵգիպտոս, և ընդ նմա դառնայր, և ընդ նմին շրջէր զամենայն աւուրս որչափ և եկաց Փրկիչն յաշխարհի, և զիտէր ստուգապէս զաւրն և զամիս ծննդեան նորա, և զմկրտութեանն, և կարգէր և հաստատէր զընթերցուածն ի միում աւուր, և ինքն տաւնէր ի վեցն յունուարի։ Իսկ անիծեալն Արտեմոն, որ ոչ ծննդեանն էր սպասաւոր և ոչ մկրտութեանն և ոչ խաչելութեանն, և ոչ ինքն ծնեալ իսկ էր յայնմ ժամանակի, նա ո՞ւստի գիտէր զաւր ծննդեանն Տեառն կամ զմկրտութեանն։ Արդ եթէ առաքելոցն հրամանաւ էր գրեալ, ցուցէր մեզ. և եթէ յանձնէ, ոչ ընդունիմք, զի ոչ է հաճոյ Աստուծոյ։ Զի՞նչ կարգ է այն զառաքելոցն և զՅակոբայն թողուլ և զձերդ որ յԱրտեմոնայ է սահմանեալ և յամպարշտէն Յուստիանոսէ՝ զայդ ընդունել, և զհաւատոյ հիմն որ ի սրբոցն է հաստատեալ՝ զայն ընկեցիկ առնել։ Առ այսոքիկ դուք զիտասջիք։ Թէ Արտեմոն ընդունելի է, տաւն ընդէ՞ր ոչ կատարէք նմա՝ որպէս և Յակոբայ, և ընդէ՞ր զամենայն սրբոց անուանս դնեն քրիստոնեայք զաւակաց իւրեանց, բայց յաղագս Նորա չարափառութեանն՝ ոչ որ Արտեմոն անուն դնէ որդւոյ իւրում։ մանաւանդ զի ընդ հակառակս գնաց առաքելոյն Յակոբայ և աւետարանչին Յովհաննու։ Դարձեալ Կիւրեղ Երուսաղեմացի տրտունջ բառնայ և ասէ. թէ յայլ քաղաքս ծնունդ առնեն. յայտ առնէ եթէ երուսաղեմայիքն յայսմ կարգի էին՝ որ Յակոբայ առաքելոյ էր եղեալ, և զայս ասէր Կիւրեղ զգուշացուցանելով. այլ ինքն ոչ ընկալաւ։ Եւ եթէ ծնունդ յայսմ աւուր էր, նա զիարդ իշխէր զԴաւթի և զՅակովբայ տաւնն կատարել։

Դարձեալ ոմանք ի ձէնջ ասեն ցմեզ թէ զի՞նչ է որ երեսնամեայ այր մկրտէք, և դարձեալ զկնի ութաւուր թլփատութեան տաւն կատարէք նմա։ Ծաղու և կատականաց արժանի են բանքդ, զի թէ մեք զծնեալն և զմկրտեալն ի միում աւուր թլփատեմք, զծննդեանն զկնի ութ աւուր դուք ընդէ՞ր ի յունուարի մկրտէք, և յետ Ի և հինգ աւուր ի փետրուարի ի տաճարն ածէք, և զերեխայի կարգս տայք նմա ի զիրկսն Սիմեոնի։ Արդ մեք կարգեմք զծնունդն և զմկրտութիւնն ի միում աւուր, զի ըստ երեսուն ամի շրջարերութեանն դարձեալ ի յունուարի ի վեցն հանդիպեցաւ, և ըստ ծննդեանն համարիմք և ութաւրեա զթլփատութիւնն առնեմք, որպէս քառասնաւրեա

գալն ի տաճարն։ Վասն զի բովանդակ գաւրինացն զամենայն կատարեալ ասեմք զՔրիստոսի, քանզի ինքն է տուիչն աւրինացն, որպէս Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր ասէ, թէ Աւուրք ութ համարեալ թլփատի յառաջ քան զարուսեակ որդին աւետաւք խոստացեալ զաւակն Աբրահամու, զոր և մեծն Պաւղոս ասէր. թէ Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն լինել առ ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն։ Եւ եթէ այդ այդպէս է, որ մեք զերեսնամեայ մկրտեալն թլփատեմք, դուք զերկոտասանաւրեայ տղայ ըստ ձերոյ աւրինաց ծննդոց ընդէր մկրտէք. զի աւետարանիչն երեսուն ամ ասէ. արդ եթէ ըստ զրոց կամիք առնել, լուռ լերուք մինչև ցերեսուն ամն, և ապա տաւնեցէք, կամ արարէք ըստ կարգի այսպիսի։ Ի քսանուհինգն դեկտեմբերի ցծնունդն ձերոյ Արտեմոնադիր կանոնովդ, և զկնի ութաւրեայ ըստ թլփատութիւնն, և ի փետրուարի յերկուքն զքառասնաւրեայ գալն ի տաճարն, և յետ երեսուն ամի զմկրտութիւնն. և ապա յետ երից ամաց զգալուստն յԵրուսաղէմ ի կամաւոր չարչարանսն, ապա զմաղումն և զյարութիւնն, և այսպէս մոռացմամբ ի վայր հոսեալ յուղիղ հաւատոյս։ Բայց մեք զտէրունական տաւնս ի միում աւուր տաւնեմք, որպէս ի ծնունդն՝ զմկրտութիւնն. և եթէ ի կիւրակէ դիպի, ապա և զ յարութիւնն. և չէ ինչ հակառակ միմանց. զի տէրունական տաւնք են, որպէս և զլակերպութիւն փրկչին յարութեանն հանդիպեցաւ, և ի նմին միում աւուր տաւնեմք։

Դարձեալ ասէք և վասն կուսական աւետեացն, եթէ մեք ոչ տաւնեմք, այս տաւնեմք և կարի քաջ. որպէս ցծնունդն և զմկրտութիւնն ի միում աւուր, նոյնպէս զ յարութիւնն և զաւետիսն, և եղև այսպէս։ Զի յապրիելի ի չորսն լրումն տէրունական չարչարանացն, և ի հինգն մաղումն, ի վեցն յարութիւն։ Արդ նոյն հրեշտակն որ յապրիելի ի վեցն զաւետիսն ետ կուսին, նոյն դարձեալ յապրիելի ի վեցն զաւետիս յարութեանն։ Ցաղագս որոյ Աստուածածնին զմեծացուսցէն ի յարութեան աւուր խորհրդարար ասեմք։ Այլ թէ ընդէր ոչ կարդեաց Ցակոբոս յընթերցուածին տաւն աւետեացն, նաև ոչ Կիւրղի փոյթ եղեալ։ Զի բազում անգամ դիպէր ի սուրբ պահս չարչարանացն յապրիելի ի վեցն, վասն այսորիկ բազում անգամ յամենայն կիւրակէ հրամայեցին ընդ յարութեան տաւնել զաւետիսն։ Բայց եթէ և տաւնէաք յաղուհացսն, ոչինչ վնաս էր, զի տէրունական տաւն է, այլ զի սրբոցն երկուցեալ ի լուծ

նելոյ զպահսն, ո՛չ կարգեցին. և որ յետոյ կարգեցաւ յԱրտեմոնէ և Յորնադէ և ի Մարկիանոսէ և Յուստիանոսէ, զայն ոչ ընկալաք, զի մեք զինչ լուաք ի սուրբ հարցն և յուղղափառ վարդապետացն զնոցն պահեցաք և պահեմք ճշմարիտ հաւատովք։ Եւ այր զարամբ ելանել ոչինչ յաւելաք որպէս թագաւորքն ձեր և հայրապետքն, որք վասն իւրեանց յիշատակ անափառութեանն, իրս իրս ջանացան յանձանց կարգեալ հակառակ սուրբ հաւատոյս. որպէս Մարկիանոս նախանձեալ ընդ սրբոյն Կոստանդիանոսի և երկուց Թէոդոսացն, և ընդ Զենոնի և Անաստասայ բարեպաշտ թագաւորացն զորս ընդունիմք և տաւն կատարեմք նոցա. նոյնպէս և դուք, որ վասն զաւգտի եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ արարին ժողովս։ Բայց որք զանազան փառաց զհետ ընթացան, զնոսա ոչ դուք ընդունիք, և ոչ մեք։ Արդ Կոստանդիանոս՝ վասն Արիոսի արարի զժողովն. որ արարած ասէր զՈրդի և ոչ ի բնութենէ Հաւր, այլ ստացական և ի ներքս ածական։ Եւ մեծն Թէոդոս վասն Մակեդոնի, որ զՀոգին սուրբ նուաստ ասէր քան զՀայր և զՈրդի։ Եւ միւս Թէոդոս վասն Նեստորի, որ զՄարիամ Աստուածածին ոչ ասէր, և առ ծննդեանն երկուս բնութիւնս և երկուս որդիս ասելով, զմինն յԱստուծոյ Հաւրէ, և զմինն ի Մարիամայ։ Արդ սոքա վասն այսր հերձուածողաց արարին ժողովս, և բազում կարգս ուղղափառս և կանոնս կարգեալ յաւրինեցին։ Իսկ Մարկիանոս վասն ոյր հերձուածողի արար ժողովս, և զո՞ր կանոնս դրեաց, եթէ ոչ վասն հակառակի և յիշատակի վասն իւրոյ անուանն, և զեր ի վերոյ կամեցաւ լինել սրբոյն Կոստանդիանոսի, և Թէոդոսացն, վասն որոյ և կրկին բան զնոսայն արար ժողով. որ զ Ո և զ Լ և Զ չեպիսկոպոսացն զերեսպաշտիցն և ոչ զՔրիստոսասիրաց, և շփոթումն մեծ արար յեկեղեցի Աստուծոյ։ Վասն որոյ և զառաջին սուրբ հարան և զղլխաւորս սուրբ ժողովոյն խոտեաց և զ յոռիսն մեծարեաց, և նորա վասն պատուի թագաւորին նշովեցին զմեծն Դիոսկորոս՝ որ յառաջին յերկրորդ սուրբ ժողովն գլխաւոր էր, և զՄարկոսի աւետարանչի ունէր զաթոռն, և զսուրբն Պետրոս Անտիոքացի հանդերձ նորին սարկաւագաւքն սպանին սրով, և այլ բազումս սուրբք փախստականք եղեն ի ժողովոյն. որք մի սրան աղաղակէին թէ այդ Նեստորին ադանդն է, զի զկոյսն Աստուածածին ոչ ասէր, զերկուս որդիս ի ներքս ածելով. զոր ճարտարիմացութեամբ Յորնադ ի մէջ կացեալ զդառն դեղ խա-

քէուլթեանն ծածկեաց. երկուս բնութիւնս ասելով ի խաչին. զմինն Աստուածութեանն տալով և զմինն մարդկութեանն. Զնեստոր Նզովեաց, և ինքն զնոյն դաւանեաց զփառաց զհետ ընթացեալ։ Եւ զսուրբն Յուլիոս Ադկորնացին, և զԱնատոլիս, և զՍտեփանոս, և զՏիմոթէոս, հանդերձ այլ հայրապետաւքն նզովեաց։ Այս ամենայն ի չարափառ հայրապետացն, և ի սնոտի փառասէր թագաւորացն եղև, որ մինչև ցդահեկանս և ցլուսայն՝ կիւրեանց զանուանսն կարդէին, զոր և թշուառականն այն Կաղանդէոս, զմահն իւր անփոյթ արարեալ, ի տարեգլուխ և ի խաղս տայր դնել զանունն իւր։ Արդ վասն այս սնոտի պարծանացս նախանձեալ ընդ միմեանս, և առ սակաւ սակաւ համարձակեցան ձեռն արկանել ի սուրբ հաւատս, և զառաջին սրբոյն եղծանել զսահմանս ճշմարիտս և զիւրեանցն հաստատել։ Վասն որոյ զայս ամենայն տեսեալ մեր, և յարեցեալ յամենաթագաւորն Քրիստոս, և յառաջին սուրբ կանոնսն, և ի բաց կացաք ի բաղմադիր կանոնացդ։

Արդ նախ և առաջին մեծն Կոստանդիանոս յանձին կալաւ ի սուրբ ժողովն Նիկիա, նախ յառաջին գլուխ կանոնացն գրեալ հրամայեաց բառնալ զներքինսն յեկեղեցւոյն Քրիստոսի, զոր սառաջին անաստուած թագաւորքն, վասն իւրեանց գարշելի աստիճանն որ ի պատերազմու *) . . . . . մանէին պեղծ ցանկութեանն, զնոսա հնարեցան առնել, վասն զի քուրմքն՝ որ զկուռսըն պաշտէին, ոչ տային զապրանալ յարուամոլութիւն զոր սոքա առնեն, զի եղծումն լինէր իրնութիւն մարդկութեանս. զախտս զայս առաւել խոտեցին և անարգեցին հեթանոսք։ Իսկ սատանայի ի մէջ արկեալ, ուսոյց կտրել, որպէս և առ սկաչիւրն զարուագիտութիւնն և ի Սոդոմ և ի Գոմոր, նոյնպէս և աստ ուսուցին կտրել և չէզոք առնել ասելով, թէ դա չէ որ, այս ոչ այր է և ոչ կին, և զախտ ցանկութեան իւրեանց անխտիր կատարեալ անցուցին ընդ նոսա իբրև ընդ կանայս, զոր սուրբ ժողովն Նիկիա զրեցին զայս։ Եթէ ոք կրճատեսցի կամայ կամ ակամայ, կամ յաւագեաց կամ ի բժշկաց կամ յայլ դիպուածոյ իմեքէ, մի իշխեսցէ զալ ի կարգ քահանայութեան, եթէ յանդգնեսցի, նզովեալ եղիցի։ Եւ զայս ոչ ի յանձանց սահման եղեալ, այլ ուսեալ ի մեծ մարգարէէն Մովսէսէ որ յԱստուծոյ

*) Յոր. եղծեալ էին բանքս.

աւրէնսդրեալ զրեաց. թէ Մի մատուցանես Աստուծոյ զմոլեկանն, և մի զկրճատականն, և մի՝ զմիորձին և մի որ բնաւսուքն *) է։ Եւ դարձեալ ասէ, թէ մի եղիցի ի ձեզ ամլութիւն և սի անսերմնութիւն, զի նզովս կարգեալ է այն զոր և դուք քաջ գիտէք, և ի մէնջ չէ ի ծածուկ եթէ կուրտ յախտ ցանկութեան քան զուղտ առաւել մոլէկանք են, Զի չերմութիւն ախտի ի բնութենէն եռայ և ոչ կարէ ելանել, և նա գաւրէն աւձի ունի, որ մինչև ի չերմանալ աւուրն յար ի գաղանութիւնն. և ի ցրտին աւուրսն կաղուեալ իբրև զմեռեալ լինի։ Այնպէս և սոքա զգայգ և զցերեկ այրեցեալք ի պիղծ ախտէն անհանգիստ կան։ Եւ դուք ընդդէմ դարձեալ աւրինադրին Մովսիսի և մեծին Կոստանդիանոսի և սուրբ Ժողովոյն Նիկիա, դարձեալ այսպիսի պիղծք յեկեղեցի մուծանէք, զոր եթէ նոքա չեն արժանի հաղորդութեան, զսոսա պատրիարգունս և քահանայս կացուցանէք, մանաւանդ եթէ բնաւ ժառանգաւորս եկեղեցւոյ կացուցանէք զնոսա, զոր եթէ բնաւ չեն արժանի կոխել զսեմս եկեղեցւոյ Քրիստոսի։ Արդ մեք զայսպիսի չարիք և զ յանդգնութիւնս տեսանելով ի ձեզ, ասացաք եթէ բնաւ չունիր առաջնորդ, և ամենայն ինչ ձեր ի հիմանէ խախուտ թուեցան, զի հիմն հաւատոյ քահանայութիւնն է, և մինչ հիմն չլինի, շինուած յո՞յր վերայ հաստատի։ Արդ մեր հիմունք առաքելքն էին, և ի նոսա կուրտ ոչ գոյր։ Ցայսմ ամենայնէ սրտարեկ եղաք ի ձէնջ, և ձեզ այլ ոչ գիցուք միտ, այլ զկարգս և զկանոնս զոր ուսաք, բնաւ այլ ոչ յաւելաք։

Լսեմք դարձեալ եթէ ասէք զմէնջ եթէ մեք զխաչեցարն Որդւոյ վասն անարգանաց ասեմք. եթէ մեք զխաչեցարն Որդւոյ՝ վասն անարգանաց ասեմք, և դուք զուրանայն զովե՞ստ համարիք։ Արդ մեք ոչ ասեմք վասն անարգանաց, այլ վասն առաւել պատւոյ և պարծանաց։ Եւ ասէք դարձեալ զմեզ եթէ յումմէ՞ ուսայք, զոր բաղում ինչ ունէի ասել, եթէ բերան ի բերան էր. բայց այդ սակաւուք ցուցից ձեզ ըստ գրեցելումն, առէք ընթերցիք զձեր ժամանակագիրն զոր Սուկրատն կոչէք, եթէ յառաջնումն ձայնիւ ոչ նուագէին զՍուրբ Աստուածն խաչեցարիւն յեկեղեցւոյ եկեղեցի երթալով՝ զոր երանելոյն Ոսկեբերանի՝ ընթերցեալ գգիրս Որոգինէի, կարգէր յուրում ժամանակին։ Եւ Թէոդիլեանքն արդելուին զնա ասելով, եթէ

*) Ա. յսպէս յօր.

զՈրդինին խորհի։ Եւ ի ժողովն Եփեսոսի Կիւրեղ Աղեքսանդրացի ընդդէմ նոցա ասաց ձայնիւ. Միածին Որդի և Բանդ Աստուած, և անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սուրբ Աստուածածնէն և ի միշտ կուսէն, անփոփոխելի մարդ եղեալ և խաչեցար Քրիստոս Աստուած. և որ ի կորգին է ասացեալն։ Վասն զի զՍուրբ Աստուած խաչեցարիւն ի Հոգւոյն ազգմանէ կատարեցին գսրբասացութիւնն, զոր և այժմ Ասորիք ստոյգ ունին ընդ մեզ մինչև ցայսաւր։ Զայս Դէոսկորոս ասաց. որ էր գուխ յերկրորդ ժողովին Եփեսոսի. և զՓդարիանոս և զԵւտիքէս արտաքսեաց նզովիւք։ Դարձեալ յառաջինսն երթիցուք։ Գրեալ է Նեքտարիոս Հռովմայեցի, թէ չեղև հնար Ցուսիփայ իշուցանել զՏէրն ի խաչէն, զի փորուած ձեռաց փրկչին փայլատակունք հատանէին, և նորա ոչ ժուժկալեալ ճառագայթիցն. զձեռս ի վեր տարածելով ասէր աղաւթիւք արտասուելով, Սուրբ Աստուած, սուրբ և հզաւր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմա՛ մեզ։ Եւ ի շեռն այսր ճշմարիտ խոստովանութեան համարձակեալ, և առեալ զուր ցանեալ իշուցանէր, պատեալ և թաղեաց։ Իսկ ի ժամանակս առաքելոցն յաւուր չորեքշաբաթու և ուրբաթի սկսեալ ի ժամ պատարագին նախ զայս ասէին։ Եւ ապա ի փոխման Աստուածածնին ազգ եղև առաքելոյն Թումայի ի Հոգւոյն սրբոյ, և ասայեալ զՓառաւորեալն զաղաւթսն, զոր և այլ առաքեալքն միաբանեալ և զկնի Սուրբ Աստուածին եդեալ՝ զՓառաւորեալն զմիշտ կոչն, որ է ստոյգ վկայ խաչեցարին. Որդւոյ առ ընթեր բարեխաւս կայով մայր Նորին։ Դարձեալ քննեսցուք, թէ այսմ չհաւանիք, և տեսցուք թէ զերեք Սուրբ Տէրն՝ Երրորդութեանն ասացին Սերովբէքն, եթէ Որդւոյ միայն։ Ասէ մարգարէն, տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձր և սերովբէքն ասէին զերեքսուրբն և մի Տէր։ Մի տէր ասացին, իբրև ի մի երեսաց և ոչ Տեարք։ Եւ դարձեալ իբրև ի միոջէ ընդանոյ. Ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդն, և դարձեալ. Լի են երկինք և երկիր փառաւք Նորա. և այս ի միոյ երեսաց է, և զայս որդւոյ ետես Եսայիաս։ Վկայէ մեզ աւետարանիչն Յովհաննէս զի ասէ. եթէ՝ Ետես զփառս Նորա և խաւսեցաւ վասն Նորա։ Արդ՝ աթոռ բարձր և վերացեալ խաչն է, Նոր սեղան, և սերովբէքն սրբասացք, զոր և այժմ զարեն շուրջ զսեղանովն յաներևոյթս՝ աղաղակեն և ասեն, Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ Տէր զաւրութեանց լի՛ են երկինք

և երկիր փառաւք քո, աւրհնութիւն ի բարձունս, աւրհնեալ որ երկիր և գալոց ես անուամբ Տեառն, աւրհնութիւն ի բարձունս։ Տե՛ս թէ ո՛յր ասացին զերեքսուրքն կամ զեքեքաւրհնութիւնն. Երրորդութեանն է, թէ որ եկն և գալոց է։ Արդ դուք և մեք զերեքսուրքն և զերեքաւրհնութիւնն՝ Որդւոյ միայն ասեմք։ Եւ դարձեալ ի Փառք իրարձունսն, երեք անգամ որդւոյ ասաց ժողովն Եփեսոսի, զԱւրհնեալ Տէր ուստ՛ ինձ գարդարութիւնս քո. և ի կիւրակէ զկնի աւետարանին երեք անգամ ասելով, Ոչ դադարեցից Քրիստոս աւրհնել զքեզ, և այս որդւոյ միայն է։

Արդ եթէ կամիցիս յուցից բեզ զԱստուածն և զհզաւրն։ Դ։ եթէ երեք են սրբասացութիւնն վասն էր յաւելումք, Սուրբ Աստուած որ յառաջ քան զյաւիտեանս ի Հաւրէ և ի կուսէ ծնեալ և խաչեալ և թաղեալ անբակ աստուածութեամբն և անբարժանելի մարմնաւորութեամբն. մինչև ի մտածութիւնս անգամ սուրբ և հզաւր. զի թէպէտ և տեսաք ի տկարութիւնս մեր խոնարհեալ, այլ հզաւրեղապէս մեղայ յաղթեալ և զդժոխս աւերեալ. սուրբ և անմահ. զի թէպէտ և կամաւորաբար կրեաց զմահ, այլ անմահ էր։ Եւ եթէ խաչեցարն դժուար թուի ումեք, մեք գիտեմք որ անդունդք սարսեն յորժամ ոք զխաչեցարն յիշէ, և եթէ դուր ոչ կամիք հաւանիլ այսմ, մեք այլապէս ասեմք, Սուրբ Աստուած որ ապտակեցար և թուք ընկալար, և դանեցար և գեղարդեամբքն խոցեցար, և վասն մեր հեղեր զարիւն քո սուրբ և մեք քո արեամբդ աղատեցաք, ողորմեա՛ մեզ։ Եւ չէ ինչ պարսաւանք զաւրհնապաղ զայս ասել, զոր աւրինակ որդի թագաւորի երթեալ ի վերայ ապստամբ ծառայի իւրոյ, որ զիշխանութիւն նորա գերեալ էր, և զնախարարսն բանդարգել արարեալ, և նա երթեալ ի վերայ նորա յաղթեաց նմա, և զորս ընդ ձեռամբ նորա էին եհան և զնա սպան, և ինքն վէր առեալ և արեամբ թաթաւեալ, և գերիքն առաջի կացեալ ամենայն աւուր աղաղակէին, և ասէին թէ Մեք քո արեամբդ եմք աղատեալք և վասն մեր խոցեցար ողորմեա՛ մեզ։ Արդ ասա ինձ նախատինս համարէր թագաւորն որդւոյ իւրում թէ ոչ։ Արդ զի՞արդ ամաւթ համարիմք զկամաւոր խոցումն Նորա որ վասն մեր զսպիսն առ, և դեռ ևս ունի առ Հաւր, առ ի յանդիմանութիւն Հրէիցն և յերախտիս հաւատացելոց, զի թէ Աստուծոյ արեամբն եմք գնեալք, մեք զնորա խաչելութիւնն մեզ պարծանք

համարիմք։ Իսկ այդ ոչ է ճշմարիտ յայտնապէս։ Գիտեմք զի Նեստոր կալմէ ձերոյ խոստովանութեամբդ, զոր նա ի կոյսն Թեոտոկաւատէր, և ուրանայր զՄարիամ Աստուածածին ոչ ասելով. Թուի մեզ ասել ձեզ՝ եթէ չէր խաչն Աստուծոյ այլ սոսկ մարդոյ, արդ եթէ այդ այդպէս է, ապա և Նեստոր չէ ինչ աւելի մեղուցեալ քան զձեզ. և վասն այսորիկ զԴիոսկորոս և զՊետրոս արտաքսեաց Մարկիանոս, որ զխաչեցարն ասէին։ Եւ մեք ի Սարակինոսացն վասն խաչեցարից եմք զատեալք, զի նոքա Բան Աստուծոյ և հոգի կոչեն զՔրիստոս, և զտիեզերական դատաստան նորա ասեն առնել, և զՄարիամ լուսոյ մայր խոստովանին և Կոյս անարատ, բայց Աստուածածին ոչ. և յաղագս այնորիկ գերիմք և սրախոխոզք լինիմք ի նոցանէ, զի ասեն ցմեզ, թէ Աստուած ասէք զայն՝ որ ի Հրէից խաչեցաւ, և նորա փայտին երկիրպագանէք, վասն որոյ և փայտապաշտ կոչեն զմեզ։

Դարձեալ ասէք ցմեզ եթէ Երրորդութեանն ասէք դուք զխաչեցարն. զի՞արդ ոչ գիտեմք եթէ զամենայն փառաբանութիւն՝ զոր ինչ որդւոյ ասեմք, զայն Հաւր և Հոգւոյն արժան է ասել, բաց ի խաչէն, զսուրբն և զկեաւրն և զանմահն, և զփառսն և զերիս երկրպագութիւնս Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ բաց ի խաչէն։ Իսկ եթէ Որդւոյ. միայն ասեմք, և նորա խաչին զերիս սրբասացութիւնս և զերիս երկրպագութիւնն, ասա՛ ինձ վնաս է թէ ոչ. և այսպէս. Սուրբ Աստուած՝ որ ծնար ի կուսէն որպէս զԱստուած, Սուրբ և հզաւր որ ըզդժոխս աւերեցեր. Սուրբ և անմահ որ ի մահու անմահ մնացեր, և զմեզ քո խաչիւդ և արեամբդ ազատեցեր. ողորմա՛ մեզ։ Արդ՝ եթէ վնաս է զայդ ասել, դուք ձեզէն տեսէք։

Այլ վասն Առաջաւորի պահոցն զմեզ զի՞ հայհոյէք։ Առէք զզիրս մերոյ Լուսաւորչին, ընթերցէք. զի նա է մեր լուսաւորութեան աւուրք առաջինք, զնա եմք պահել ծոմաջան և անսուաղ մինչև յանասունս անգամ. զի յորժամ եկ նա ի վիրապէն, ետես զաշխարհս մեր զամենայն դիւամոլեալ. և ամենեքեան անկեալ առ ոտս նորա լային, մինչև ինքն ընդ նոսին յարտասուս եղեալ, և զհինգ աւրն անսուաղ պահեաց ինքն հանդերձ թագաւորաւն և ամենեքումբք, և ապա սկսաւ ի վարդապետութիւն աւուրս վաթսուն, և դեռ չէին մկրտեալք, և իբրև մկրտեցան ամենեքեան ի միասին, վասն յիշատակի մերոյ լուսաւորութեանն կրկին անգամ պահեցաք և պահեմք մինչև ցայժմ։

Digitized by Google

Եւ ապա զկնի զքառասներորդ զպահն հրամայեաց պահել որպէս Իսրայեղեանքն այն, զելիցն զփրկութիւնն ի փարաւոնէ, կամ զՆինուէացւոցն՝ որ դարձան և ապրեցան։ Արդ մինչ առաջին մեք զայս պահեցաք, դուք Սեղբեստրոսի և Կոստանդիանոսի տաւն կատարէիք, և Կոստանդիանոս զիւր լուսաւորութեան աւուրսն պահէր, և տաւն Գրիգորի և Տրդատայ տաւնէր. քառասուն և չորս ամ Հռովմ և Եգիպտոս պահեցին ընդ մեզ և ընդ ձեզ, և մինչև ցայժմ Ասորիք պինդ պահեն։ Իսկ անաւրէնն Մարկիանոս զսրբոյն Կոստանդիանոսի զլուսաւորութեան աւուրցն զպահն երարձ, և պանդրուտոյս կարգեաց հակառակ այնմ, և փոխանակ այնմ շաբաթու պանիր ուտելոյ, զքառասներորդ պահն զամենայն ապականեաց. ձուկն և ձէթ և գինի անխտիր ուտելոյ և ըմպելոյ. զոր մեք և ամենայն սուրբ գիրք աղ և հաց կոչեն, և Պաւղոս զձուկն՝ միս ասէ, և մարգարէն զգինին՝ արիւն, և աւետարանիչն զձէթն՝ իւղ։ Միւսն ասէ, Իւղ ի լապտերս նոցա, և դարձեալ ասէ. Ձէթ ամանաւք ընդ ինքեանս ոչ բարձին. և Ղուկաս *) ասէ, թէ Տուք մեզ յիւղոյդ ձերմէ։ Ցայտ է յայսցանէ, թէ ձէթ և իւղ մի են, և վասն ձկան Պաւղոս ասէ, Միս մարդկան և միս ձկան, և միս անասնոյ, և միս թռչնոյ. և մարգարէն ասէ, թէ Լուսայէ յարեան խաղողոյ զպատմուճան իւր։ Եւ վասն ձկան ջուր զի՞ ասէր, մինթէ ոսկր մեծ և արիւն չունի՞ բան զամենայն կենդանի. կամ ո՞ր դպան է բան զնա ապականիչ, վասն զի սիդոն շուն է երեքզլխեան ի ծովու դպան, և զիւր ծնունդն ոչ ուտէ, բայց ձուկն ուտէ։ Եւ մեծն Բարսեղ դպան ասէ ըզձուկն և զմարդ կլանէ։ Եւ արդ զայս շիոմեմն և զպղտորմունս Մարկիանոս արար։ Իսկ մեր պահք աղ և հաց միայն է, այլ ոչ լուր ընկոյց, ո՛չ չամիչ, ո՛չ գինի, ո՛չ բացախ, և զամենայն ինչ ի բերոյ որթոյ մինչև ցքին անդամ ոչ ճաշակել։ Արդ դուք ձեզէն ընտրեցէք դարժանն, և մի՛ ակն առնոյք ի Քաղկեդոնէ, զի մի ընդ նոսին ժառանգիցէք զանվախճան տանջանսն։

Զմեղապարտ գրոցս ի սպասող լուսաւոր պտոյն զթամաս, ի զծնողսն ի յիշեցէք աղաւելի։ ի Քրիստոս Աստուած ոչ զ պտոյ ուղղութեամբ։

*) Ա. յսպէս յօր.

ՏԵՍԻՆ ԳԷՈՐԳԵԱՅ ՀԱՅՈՑ ՎԵՐԱՊԻՏՈՂԻ ԵՒ ՀՈԳԵԶՆՈՐՀ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ, ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԱՍՈՐԻՈՅ ՊԱՏՐԻԱՐԳԻ

Զառ ի յԱստուածուստ պարգևեալ Տեառն Յովհաննու Ասորւոյ Հովուապետի և մեծապատիւ պատրիարգի. զգիծ սիրոյ և գնամակ ողջունի վերծանեայ նուաստ ծառայս Աստուծոյ Տէր Գէորգ Հայոց վերադիտող, և զարծարծումն սիրոյ տեսեալ զուարթացեալ բերկրեցան միտք իմ, և աւրհնեցի զբարեխնամն Աստուած, որ ոչ պակասեցուցանէ զողորմութիւն զբարութեան երկիւղածաց իւրոց, այլ միշտ հեղու որպէս յաւղ վաղորդեան, և իրև զլոյս արեգական որով սրբեալ պայծառանան անձինք ի նա հաւատացելոց, և բերկրին բոլոր բանակք բանականաց, և կատարին կամք սիրոյ արարչին յարարածս, որ և զձերդ շարժէ բորբոքումն սիրոյ առ ի հաստատութիւն հաւատոյ և լրումն կամայ կենարարին, որ ասացն թէ Սիրեցէք զմիմեանս, որպէս ես սիրեցի, և դարձեալ եմէ՝ Որ սիրէ զիս զպատուիրանս իմ պահեսցէ։ Եւ պատուիրանք նորա այն իսկ են զի զմիմեանց հոգասցեն անդամքն հոգևոր սիրով և հաւանութեամբ մինչև հասցուք ամենեքեան ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ որ ել ի Հաւրէ կամաւք և հաճութեամբ ծնաւղին, միածին Բանն Աստուծոյ, որ եկն սերմանել ի սիրտս որդւոց մարդկան զգիտութիւն Հաւր, որպէս ասէրն թէ Ծանուցի զանուն քո մարդկանն։

Արդ զառ ի բարի սերմանողէն սերմանել սերմանս սուրբ հաւատոյ յանդաստանս հոգւոյ ձերոց զուղիղ խոստովանութիւն սրբոյ Երրորդութեան, զլի և զանմեղի զաւանդ սրբոց հարցն և վարդապետացն ձերոց՝ պատուեմք և ընդունիմք։ Իսկ ի վերայ եկամուտ կարգացդ և աւտարախորհ թերի կատարմանցդ ոչ՝ հնծեմք տրտմագին, զոր ոչ ի սրբոյն Եփրեմէ, և ոչ ի նորին

Digitized by Google

նմանողաց ուղղափառ վարդապետաց, և ոչ ի կանոնական հրամանաց առաքելոց և սրբոց հարցն ընկալեալ ունիք, այլ յամանց չարափառաց և ապականչաց ոգեղեցիկ սերմանց սուրբ հաւատոյ, որք չանացան մտանել և եղծանել զգեղեցկութիւն հարսին Աստուծոյ եկեղեցւոյդ Ասորւոց, որք թէպէտև ոչ զաւրեցին դլխոյ ուղիղ խոստովանութեանդ, սակայն աւելորդ և անպատուական կարդաւրդ ոչ թողին զոլ գեղեցիկս զոր ծանեաք զարդարապէսն ի ձերոց գրութեանցս։

Զի գրեալ էիք յաղագս խմորելոյ և աղելոյ և համեմելոյ և ձիթելոյ զկեցուցիչ մարմին Որդւոյն Աստուծոյ, և յիշեալ զստեղծուածն առաջին մարդոյն հող յերկրէ, և ըստ ստեղծմանն Ադամայ ի չորից նիւթոց ասէք կատարել զմարմինն Քրիստոսի, և արկանել ի խորհուրդ զջրոյն՝ ջուր, և ի խորհուրդ հողոյն՝ աղբիւր, և ի խորհուրդ աւդոյն՝ խմոր, և ի խորհուրդ հրոյն՝ աղ. և առնէք մարմին մարդոյ մահկանացուի և ոչ Աստուծոյ անմահին, զի ապականելով խմորով և ձիթով և աղիւ աւրինակ մարմնոյն Քրիստոսի, ծածկապէս ցուցանէք կրել զապականութիւն՝ մարմնոյն Աստուծոյ. վասն զի խմորունն, ոչ կարէ զոլ հայ կենդանական, որպէս ցուցանէ երանելին Աստուածարան ի ճառին որ յաղագս Պասեքին, թէ Աստուստ բարձումն խմորոյն եւթնաւրեայ՝ զի խորհրդականագոյն է թուոյն և աշխարհիս պյսորիկ քաջպարմար. պյսինքն ի հնմէն *) և ի քացախուտ չարութենէն, որ են մեղք առիթ մահու և ապականութեան, զոր անպատշաճ է յարել ի մարմինն Քրիստոսի, զի զմեղս ոչ արար, և Ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա. թէ՞ով ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց, և եթէ, Գոյ իշխան աշխարհիս պյսորիկ և յիս ինչ ոչ գտանէ, Եւ ուր ոչ մեղք, զի՞արդ և ապականութիւն, զի սկիզբն ապականութեան մեղք են, և որ ի վերայ քան զմեղս, արտաքոյ ապականութեանց. զի ապականութիւն ոչ ի բնութենէ՝ այլ յայլայլութենէ բնութեանցն, զոր եբարձ ի բնութենէ արարիչն, զոր դու խմորոյ խառնուածովդ ասես աղտակրել մարմնոյն Քրիստոսի, և առնուս պյսոցիկ վկայ զրան աւետարանին թէ, Նմանեցաւ արքայութիւն երկնից խմորոյ։ Արդ եթէ զաւրինակ արքայութեան կամ զընթացս աւետարանին առցես ի խորհուրդ մարմնոյն Քրիստոսի, ոչ պարտիս

*) Այսպէս յոր.

անտես առնել և դայլսն, զի նմանեցաւ և ուղկանի և դանձի ծածկելոյ և մարգարտի և մանանեի, առցես և ի սոգանէ, զի և այսոցիկ նմանեցաւ։ Եւ զի ասէք, թէ պարտ է աղ արկանել, զի ասաց Տէրն առաքելոցն թէ, դուք էք աղ երկրի, և թէ պատուիրեաց Մովսէս ընդ զոհսն աղ խառնել, զի ի հնումն զբաղարջն ձիթով աճառէին, և յաշտանական ձէթ արկանէին, և աղաւնին տերև ձիթենոյ եբեր։ Ո՞հ մեծի մտակուրութեանդ, ասել թէ աղաւնին տերև ձիթենւոյ եբեր, մեկ պարտ է ի Քրիստոսի մարմինն ձէթ արկանել, և կամ ասել թէ արժան է ձէթ արկանել զի ի հնումն զբաղարջն ձիթով աճառէին, և կամ իմանալդ, թէ Յոբ ասաց, թէ Ուտիցի հաց առանց աղի, պարտ է աղ արկանել։ Եւ զի՞նչ այսոքիկ խորհուրդ մարմնոյն Քրիստոսի, ճրագ, տերև, և կամ ոստ ձիթենւոյ, և կամ հրէական զոհիցն աղն, և կամ բաղարջին ձէթն, որք են մանկանց անմտաց իմացուածք և ապշելոց իմացմունք, թողեալ զճշմարիտ բանն, որ առեալ զՀացն ասաց, Այս է մարմին իմ։ ի զատկին մնծին երեկոյին, յորում ամենայն աւելորդքն հետակորոյսք, և միայն բաղարջաւ և դառնձաւ կերակրեալք. և ի սեղանոյ անտի առեալ զբաղարջն ետ և ասէ. Զայս արարէք։

Իսկ եթէ ասէք, զառեալ հացն խմորուն լինել, յաղագս ժամանակին և իշխանութեանն ասէր բարձեալ զտաւնսն և խափանեալ զաւրէնսն։ Արդ եթէ ըստ ձերում կարծեացդ խափանեալ էին տաւնքն, և բարձեալ էին աւրէնքն. զի՞արդ ինքն Տէրն ասէր, Մի՛ համարիք թէ եկի լուծանել զաւրէնս, այլ ինուլ՝ զի զո՞ր ոչ լուծանէր զլուծեալն, կամ զո՞ր ինոյր զոր ոչ գոյին, կամ զի՞արդ ասէր յՀրէայսն, թէ Յաթոռն Մովսէսին նստան դպիրքն և փարիսեցիքն, և եթէ ոչ իշխանութիւնք, զի՞արդ և ամենեքեան, և եթէ ոչ գոյին տաւնք, զի՞արդ և ինքեանք Հրեայքն իսկ ասէին, թէ Մի՛ ի տաւնի աստ, զի մի՛ խռովութիւն լիցի ժողովրդեանս. և եթէ ոչ գոյին տաւնք, զի՞արդ և Պիղատոս ինքն ասէր յՀրէայսն, թէ Ի ձեր սովորութիւն արձակել ձեզ գմի որ ի տաւնի աստ. և եթէ խափանեալ էին աւրէնքն, զի՞արդ ասէր դարձեալ, եթէ Առէք ի ձեզ, և ըստ ձերում աւրինաց դատեցարուք. և եթէ խափանեալ էին տաւնքն, զի՞արդ աւետարանիչն Յովհաննէս յոլովակի զտաւնից պատմէ. եթէ Տաւն էր Հրէիցն և ել Յիսուս յԵրուսաղէմ, և դարձեալ թէ, Երրև տաւնն ընդմիջեցաւ. և դարձեալ թէ, Ի

Digitized by Google

վերջնում աւուր մեծի տաւնին կայր Յիսուս. և դարձեալ զժամ չարչարանացն ցուցանելով ասէր թէ՝ Էր ուրրաթ մեծի զատ-կին, և դարձեալ զՀրէիցն ասէր, թէ Նոքա ոչ մտին յապա-րանսն զի ուտիցեն զզատիկն։ Իսկ եթէ վասն Հերովդի զիշ-խանութիւնն ունելոյ, որ ի հեթանոսաց էր, կարծես խափա-նեալ զաւրէնսն, այլ ոչ կեայր իբրև զհեթանոս, այլ իբրև ըզ-Հրեայ, և ոչ իբրև զհակառակ աւրինացն, այլ իբրև զյոյժ աւ-րինապահ, որ առ ի կարծել պահել զաւրէնսն. զկին եղբաւրն զկենդանւոյն առնոյր, զոր աւրէնքն յետ մահուն հրամայէին, և զանզաւակն մնացեալ. և վասն խառնելոյ զազգ տանն Իս-րայեղի, բազում ազգահամար ազգին Հրէից այրեաց, զի թեր-ևս հնար լիցի առ անզիտութեան համարել ազգին նորա յազգ տանն Իսրայեղի։ Իսկ եթէ Պիղատոս ի հեթանոսաց, այլ և նա իբրև դատաւոր և հարկապահանջ, և ոչ իբրև հակառակ կամ լուծիչ, այլ պատուադիր ևս, և վկայ աւետարանիչն Յովհաննէս, որ ասէ, թէ Ի չարաբաւսել զնմանէ Հրէից առ Պիղատոս ոչ մտին յապարանսն, մինչև Պիղատոս ել առ նոսա, և ոչ զնոսա ի ներքս առ ինքն տարաւ արհամարհելով զաւրէնսն, այլ ինքն աւրինապահացն հնազանդեցաւ, և ոչ յաղագս իշխանութեանն իւր հնազանդեցոյց, և դարձեալ ասելն, թէ Առէք ի ձեզ, և ըստ ձերոց աւրինաց դատեցարուք։ Եւ դարձեալ Հրէայքն, որք ասէին թէ Մեք աւրէնս ունիմք ոչ սպանանել զոք։ Եւ արդ պարտ էր ձեզ որպէս ասաց Տէր քննել զգիրս սուրբ մտաւորու-թեամբ թէ զոյին աւրէնքն և ոչ էին լուծեալ, կային և տաւնքն և ոչ էին խափանեալ ըստ մարգարէութեանն Դանիէլի մինչև ցաւծեալն առաջնորդ, և իւր Տեառնն՝ որ ասաց, թէ Ամենայն աւրէնք և մարգարէք մինչև յՅովհաննէս մարգարէացան։

Արդ ի մէջ բերցուք որ ինչ յաղագս հային, զի ասէք ե-թէ բաղարջ՝ հայ ոչ ասի, և ոչ հայն՝ բաղարջ։ Գրէ Երանելի աւետարանիչն Մատթէոս. թէ յառաջնում աւուր բաղարջակե-րացն մատեան առ նա աշակերտքն և ասեն, ո՛ւր կամիս զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն. և նա ասէ, Երթայք ի քաղաքն առ այս անուն. և իբրև պատրաստեցին, կայր բազ-մալ երեկոյին երկոտասանիւքն հանդերձ, և մինչդեռ ուտէին ասէ ցնոսա, Մի ոմն ի ձենջ մատնելոց է զիս։ Եւ վճարեալ զիրս մատնչին, դարձեալ առնու և ասէ, թէ մինչդեռ ուտէին զյառաջասացեալ բաղարջն՝ կոչեաց հաց, զոր առեալ ետ նոցա։

Digitized by Google

Ղեղնպէս և Մարկոս պատմէ. թէ յառաջնում աւուր բաղարջակերացն յորում զզատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն, Ո՞ւր կամիս երթիցուք պատրաստեսցուք զի կերիցես զզատիկն, և առաքեաց երկուս յաշակերտաց իւրոց, և իրրև երեկոյ եղև, գայ երկոտասանիւքն հանդերձ, և իրրև բազմեցաւ և դեռ ուտէին, ասէ, ամէն ամէն ասեմ ձեզ զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս. և ապա վերստին առնու և ասէ, Եւ մինչդեռ ուտէին առ Յիսուս հաց զոհացաւ, երեկ և ետ նոցա և ասէ, այդ է մարմին իմ և վասն այնորիկ կրկին յիշէ աւետարանիչն զուտելն, զի դու մի՛ պլապգ հաց կարծիցես, այլ զայն ասէ հաց զբաղարջն, զոր ըստ աւրինացն ուտէին, և զայն իսկ առեալ ետ նոցա։ Իսկ Ղուկաս ասէ, թէ եկն աւր բաղարջակերացն, և ապա ասէ, թէ Իրրև բազմեցան ասէ ցաշակերտսն իւր, Ցանկանալով ցանկացայ, զայս պասեք ուտել ընդ ձեզ, և ընկալեալ բաժակ զոհացաւ և ասէ, Առէք զայդ՝ և բաժանեցէք ի ձեզ, այսուհետև, թէ ոչ ևս արբից ի բերոյ որթոյ, մինչև եկեսցէ արքայութիւնն երկնից։ Արդ յայտնապէս ցուցանէ աւետարանիչն զբաղարջն առեալ հաց, զոր ի պասեքին ուտէին ըստ աւրինացն. և զայն առեալ Տեառնն ասաց, Այս է մարմին իմ, և ապա թախանձանաւք ասէ, թէ Ոչ կերայց ի սմանէ։ Արդ պարտ է հաւատալ հաւատարիմ վարդապետացս այսոցիկ որք ասեն զառեալ հացն բաղարջ, զոր յընթրիսն ուտէին, զի զրեալ է թէ, յերկուց և յերից վկայից հաստատեսցի ամենայն բան, և ոչ հակառակասիրութեամբ ընդդէմ յառնել աւետարանչացն որք զժամանակն և զժամն ճշգրիտ ցուցանեն զբաղարջակերացն, և զաւր Տեառնն՝ որ ի սեղանոյն՝ առեալ զառաջի եղեալ բաղարջն և ասէ, Այս է մարմին իմ։

Ապա թէ տկարանաս տակաւին մտաւբդ և ոչ հաւատաս զոլ զասացեալ հացն՝ բաղարջ. և խնդրես ցուցանել թէ, ո՞ւր կոչեցաւ բաղարջն հաց. ինքն Տէրն տացէ քեզ վկայութիւն, որ պատուիրեաց Մովսէսի և ասէ, թէ մի՛ պակասեսցէ հաց ջերմ յերեսաց իմոց, որ և յոյժ տխմարաց յայտնի է թէ զբաղարջն կոչեաց՝ հաց ջերմ։ Եւ դարձեալ իւր Տեառնն յաւետարանին յորժամ մեղադրէին աշակերտացն վասն ի շաբաթու հասկ կորզելոյ Հրէայքն, տայ նոցա պատասխանի. թէ Զիսկէ՞ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ յորժամ քաղցեաւն, զի՞արդ եմուտ ի տաճարն Աստուծոյ, և զհացն զառաջաւորութեան եկեր

և ետ պնոցիկ որ ընդ նմայն էին. Ահաւասիկ յայտնի և հաստատուն վկայութիւն կի ի հնումն և ի նորումս կբաղարջն ասաց հայ։ Եւ արդ՝ չէ արժան ձեզ հակառակ կալ Աստուծոյ և աւետարանչացն, և յանդգնութեամբ ասել, թէ հայն խմորուն էր, և կի՞արդ կարէ ոք խմորուն ասել, կի պրն յորոյ տանն էր Հրեայ էր, և ոչ յանիշանից և ոչ աւրինագանց ոք, այլ յոյժ արդար էր, որպէս Ղուկաս ցուցանէ, եթէ Ահա այր մի Յովսէփ, որ էր նախարար. նա՛ կիշխանութիւնն՝ թէ չէր ի ռամկայ ոք, և ապա կարդարութիւնն՝ թէ Այր բարեգործ և արդար, և եթէ ասպնջականն այսպիսի ոք էր, և նոքա որ հիւրքն էին արք Հրեայք, և աւուրքն բաղարջակերաց, կի՞արդ յանդգնի ոք ասել խմորուն, և կամ ո՞ւստի բեբէին կխմորունն։ Ապա թէ ասիցես ի քաղաքէն բերին, կի՞արդ արդեւք, կի ընակիչքն Հրեայք էին և աւրէնք այսպէս ունէին, որ մինչև ի ծակս մրկանց խուզէին, և եթէ զտանէր առ ոք քարկոծ լինէր ի ժողովրդենէն։ Իսկ եթէ ասես եթէ հեթանոսք էին ի քաղաքին. ո՛չ գոյր այլ ոք բայց միայն Պիղատոս և իւր զաւրականքն, և այն եկք, և գնալոյն սպասողք. և չէր ինչ փոյթ հացարարութեան, այլ առաւրեայ զկէտս վճարէին, և զայն գրեթէ ի Հրէից իսկ։ Ապա եթէ եդիտ յումեքէ խմորուն կի ըստ քում կարծեացդ ասացից և ոչ ըստ ճշմարտութեանն, և զայն առեալ եկեր նախ ինքն ի մեծի երեկոյի զատկին, յորում առաւել պարտ էր զգուշանալ, և նա անց զաւրինաւքն և նոցա հարկ առնէր անցանել թէ, առէր կերայք այս է մարմին իմ, ապա արդարացեալ զոյ մատնիչն կի զաւրինազանց մատնեաց, և ոչ մատնիչ իսկ, այլ նախանձախնդիր որպէս զԵղիայն. և Հրէայք՝ ոչ աստուածասպանք, այլ աստուածասէրք, կի զլուծիչ աւրինայն սպանին։ Եւ եթէ այդ այդպէս էր, Յովսէփ ոչ արդար այլ յանցաւոր, կի զայնպիսին յաւուրս տաւնին ի տուն իւր ընդունէր, և ոչ լինէր վրէժխնդիր աւրինացն։ Այլ ոչ այսպէս. և վկայ աւետարանիչն, կի արդար կոչէ և յոյժ արդար, և Տէրն՝ կի եղուկ կոչէ զմատնիչն, թէ Վա՜յ մարդոյն այնմ յոր ձեռն որդին մարդոյ մատնեսցի. և զՀրեայսն՝ սպանողս. Զի՞ ասէ Խնդրէք զիս սպանանել, որ զճշմարտութիւնն ձեզ խաւսեցայ։

Ապա թէ բո ոչ է իմանալ զճշմարտութիւնն, ծառայ ես զրոյն, և կերակրիս անգործ կերակրով զաւրէն անբանից, և

ասես Հայ կիսմորունն։ Հարցիլ կրեկ թէ անուն ի բնութենէ է թէ յեղելութենէ։ Եւ գիտեմ կի ոչ կարես ասել յեղելութենէ կանուն, զի յետոյ քան զբնութիւն է եղելութիւն. որպէս մարդ բանաւոր ի բնութենէ անուն. իսկ եղելութեան՝ մարդ քար է և մարդ փայտ է։ Այսպէս բնական անուն հայ բնութեամբ, բաղարջին հայդ է, որպէս կանդործ ցորեան իսկ հայ անուանեն, և ոչ եղելութեան խմորոյն, կի խմոր եղելութիւն է, և այլայլութիւն և ապականութիւն բնութեան, կի ոչ ի բնութենէ և ոչ ի գաւրութենէ խմոր, այլ ի վատթարութեանց, որք են ապականութիւն բնութեանց և գաւրութեանց, որ յոյժ հեռի են ի մարմնոյն Քրիստոսի։ Իսկ եթէ ասասցես ըստ յառաջասացեալ տարերցդ կատարել քեզ կմարմինն Քրիստոսի ի յալերէ և ի ջրոյ և ի խմորոյ և յաղէ, մի՛ անտես եղիցի քեզ և որակութիւնք տարերցդ, այլ առցես չորս այլս այլանմանս և խառնեսցես յայդոսիկ, զի կատարեալ եղիցի ըստ քեզ մարմինն Քրիստոսի։ Իսկ եթէ ասես ըստ պատուհման զորակութիւնանն, և ոչ այլս առանձնականս, ապա աւելորդ եղիցի քեզ և ի խորհուրդ հրոյ՝ աղն, և ի խորհուրդ աւդոյ՝ խմորն, զի հուրն և աւդ նուրբք են և մերձ յորակութիւնան, և բաւական լիցի քեզ ալեր և ջուր ի խորհուրդ հողոյն և ի խորհուրդ ջրոյն, ապա թէ ոչ և ըստ չորիցն արասցես մարմին Քրիստոսի, առցես և ըստ այլ որակութեանցն այլանմանս, և միաւորեսցես զոչ միաւորեալսն, ապա արկցես և զէլթն քո, զի նշանակ է սիրոյն, և արասցես ոչ մարմին Աստուծոյ և կեցուցչի, այլ մարմին մարդոյ մահկանացուի և ոչ Աստուծոյ անապականի։

Արդ արժան է հաւատացելոց և ճշմարիտ քրիստոնէից՝ ոչ մարդկեղէն մտաւք լինել արարիչ մարմնոյն Քրիստոսի, թէ Ադամ ի չորից էր ստեղծեալ, զոր և ոչ պարզ զիւրաքանչիւրան ցուցանել, զի Մովսէս հող միայն ասէ առեալ, թէ Ա՛ռ Տէր Աստուած հող յերկրէ, և զայլսն լռեաց։ Այլ արժան է հաւատալ աւետարանչացն որք ստուգապէս զժամանակն և զաւուրսն և զժամն ցուցանեն։ Զժամանակն թէ յետ գարնանային հասարակաւորութեանն յառաջնում ամսեան ի չորեքտասաններորդ լուսնին՝ յորում զգառն զենուին, և զաւուրսն զբաղարջակերացն, և զժամն զերեկոյ պասեքին, և զտաւնն Հրէից, և զինքեանս զՀրէայսն, յորում կարի անմարթ էր այլազունակ հացի ի խնդիր լինել և լուծանել զաւրէնսն, զոր ոչ խաչահանունքն յանդգնէին այսպէս,

թո՛ղ թէ արք արդարք, զոր բաւական համարեալ թողցուք։

Եկեսցուք ի զրպարտեալն ի ձէնչ ի բանն Պաւղոսի թէ Հինն անց ասաց, ապա ո՞ւր մնաց քո բաղարջն, որ ոչ նորեցաւ։ Խնդրեսս թէ ո՞ւր մնաց, և արդ զու ասացեր թէ ուր մնաց քո աղն, որ ի հնումն ընդ զոհսն, զոր դու առեալ ի Քրիստոսի մարմինն խառնես և ասես, թէպէտ ոչ յայտնի, թէ Քրիստոսի մարմինն անհամ՝ անկատար էր, և ես կատարեալ առնեմ։ և կամ ո՞ւր մնաց քո ձէթն՝ որ ի հնումն. և կամ ո՞ւր մնաց քո Հրէական անխտիր՝ խառնակութիւնքդ ազգայնուց։ Եւ արդ զի յոյժ թանձրամիտ ես՝ սիրով ըստ քեզ զիշեալ մեկնեցից զբանն։ Գիտեն գիրք սովորութեամբ՝ հին զմեղսն կոչել վասն զմեղ հնացուցանելոյ, և այսպէս յոլովակի մարդ հին, և Ադամ հին զմեղսըն կոչէին, որպէս ասէր նոյն ինքն առաքեալ թէ Զայս գիտասջիք զի հին մարդ մեր խաչակից եղև նմա, նոյնպէս և աստ, որ ասէ, թէ Հինն անց, զիշխանութիւն և զծառայութիւն մեղացն ասէ, որպէս և ասէր իսկ թէ՝ շնորհք Աստուծոյ, զի էիք ծառայք մեղաց, և դարձեալ թէ՝ Ազատեալք ի մեղաց՝ ծառայեցէք արդարութեանն։ Ապա եթէ ըստ աւրինացն իմանաս զբանն, ոչ ասաց անցանել նոցա, զոր աստուածային ձեռքն փորագրեցին՝ զորոյ Տէրն ընուլ ասացն զինքն, և ոչ լուծանել, այլ անցանել ասաց առաքեալ զորս յաւրինացն, այսինքն է զշաբաթապահութիւնն, զթլփատութիւն, զզոհքն, զճենճերքն, զխորութիւն աւուրցն, զառաւրեայ լուացմունսն, զծերոց և զդպրաց մարդկային աւանդութիւնսն, զառտն վրէժխնդրութիւնն, զակն ընդ ական և զատամն ընդ ատաման, այսոքիկ որ յաւրինացն՝ զոր ասէ անցանել, և ոչ զմեծամեծ պատուիրանս. զսիրել զԱստուած և զընկերն, չսպանանել, չգողանալ, չշնալն, չերդնուլն, պատուել զծնաւղսն, և եթէ որք զայսոսիկ պատուեն և պահեն՝ հլեալք, որք ոչն պահեն զայսոսիկ՝ հեթանոսք և Աստարտեայ երկրպագուք։

Եկեսցուք արդ ի ջուրն զոր խառնէք սուտ կարծեաւք յանապական արիւնն Քրիստոսի, և ասէք թէ աւետարանիչն Յովհաննէս յիշէ ի խաչին, թէ Ել ի կողից նորա արիւն և ջուր, և յեկեղեցիս յիշատակ մահուն կատարի, որպէս ասաց, թէ՝ զայս արարէք յիմ յիշատակ։ Ո՞հ անտեղի անբանութեանդ. արդ ասա ինձ, ո՞ւր ասաց թէ Զայս արարէք. ի խաչի՞ն եթէ ի վերնատան. կամ զոր առաքեալ ասաց թէ Զայս արարէք, միթէ

ջուր ասաց թէ զայս արարէք և յաւետարանչացն ծածկեցաւ, և քեզ միայն յայտնեցաւ, և Պաւղոս անգիտացաւ, որ ասաց թէ Տէր Յիսուս Քրիստոս ի գիշերին յորում մատնէր առ հաց գոհացաւ, նոյնպէս և զբաժակն և ասէ, այս է արիւն իմ։ Եւ կամ դու զո՞ր խորհուրդ կատարես յիշատակ մահուն Տեառն. զասացեալն ի նմանէ ի վերնատանն զհացն և զբաժակն, թէ զոչ ասացեալն ի խաչին զչուրն և զարիւն, զի ի խաչին չասաց թէ, զոր յիս տեսանէք զայս արարէք. և ի վերնատունն ուր ասաց ջուր ոչ առ, այլ զհացն առեալ մարմին իւր ասաց, և զբաժակն ի բերոյ որթոյ արիւն իւր։ Եւ դարձեալ զի զայդպիսի կարծիս բառնալ կամելով վերստին ասէ, թէ՝ Ոչ ևս արբից ի բերոյ որթոյ, զոր Բերանն ոսկի Յովհան Կոստանդինու եպիսկոպոսապետն մեկնէ, թէ Աստուծոյ ի բերոյ որթոյ զմիւս չար հերձուածն յանդիմանէ, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն, և Գրիգոր Նիւսացի եղբայր Բարսղի կրպակաւորս կոչէ զայնպիսին որ զչուրն խառնեն և ոչ խորհրդաւգածս, և մեծ մարգարէն Եսայի ի վաղընջուց ամբաստանէ, թէ Վաճառականք ձեր խառնեն ջուր ընդ գինի։ Իսկ եթէ քեզ աւելի յայտնեցաւ քան աւետարանչացն և առաքելոցն և սրբոց հարցն, և թեթևացար մտաւոր և ընդ Պաւղոսի ի դրախտն մտեր և անդ այսոքիկ քեզ աւանդեցաւ ի Տեառնէ, թէ պարտ է ի հացն խմոր և աղ և ձէթ խառնել և ի բաժակն ջուր, զի իմ մարմին՝ քացախեալ խմորն է, և արիւն՝ ջուրբ ապականեալ բաժակն, զոր յայնժամ ոչ կարացի ասել։

Արդ եթէ այսոքիկ քեզ յայտնեցան, և դու հասու եղեր անհաս խորհրդոցն Աստուծոյ, ո՞չ պարտի քեզ անգէտ լինել և այլոց բացմաց անճառելեաց Աստուծոյ։ Ասա՛ զի՞նչ զանգանութիւն է դատաստանաց Աստուծոյ, հետազաւտեա և զճանապարհս նորա զանհետազաւտելիսն, պատմա՛ և զաւր զալստեանն, զի այդ ի նոցանէ ծածկեցաւ, ապա թէ այսոքիկ քեզ ո՞չ, և դու կամացդ քոց հետևելով և ո՞չ Աստուծոյ, և կատարես զայն որ ի խաչին և ոչ զայն որ ի վերնատանն ասաց, և ասես զբաժակն ըստ խորհրդոյ ապականել, որպէս և զհացն, արդ դու լեր նախ զինուոր և առցես սուր, թերևս և գեղարդ իսկ ըստ խորհրդոյ ժամանակին, և խոցեսցես խստութեամբ զՔրիստոս, և արկցես նախ ջուր ի սկին, և ապա զգինին, զի անդ այսպէս նախ ջուր, և ապա արիւն, թէ Ե՛լ ի կողից նորա ջուր և արիւն, և ապա որք

Digitized by Google

ուտեն ի քաւութիւն կամ ի դատապարտութիւն, իսկ քեզ բոլորովին դատապարտութիւն, զի զինուոր՝ և ոչ քահանայ, անարգող զՔրիստոս՝ և ոչ պատուող։

Արդ ի մէջ առեալ զբան աւետարանչացն լուծցուք թէ ել ի կողից Տեառն ջուր և արիւն, ոչ զխորհուրդ ջրոյն տպաւորելով թէ, պարտ է ջուր արկանել, այլ պարտ է որ յիսն հաւատան նախ մկրտել ջրով աւազանին, և ապա արեամբս կերակրել։ Եւ դարձեալ ցուցանելով յայտնապէս զմեռանելն մարմնով և կենդանի մնալ աստուածութեամբն, կշտամբելով զայնոսիկ ոյք ասեն կրել մարդկութեանն զչարչարանսն ոչ հաղորդեալ աստուածութեամբն, որոց և դու իսկ աշակերտիս խորհրդոցդ կատարմամբդ, զի ջուր արկանելով ոչ զմահ նորա պատուելով, այլ ապականացու զմարմին նորա խոստովանիս, որպէս և հացին խառնակութեամբ զմարմնոյն ապականութիւն, և այսպիսի կատարմունք ոչ ուղղափառի են, այլ մարդադաւան երկարնակ խոստովանողի որք ասեն մարդ լոկ չարչարեալ, և ոչ Աստուած չարչարակցեալ, զոր թէ տացուք, ոչ Ադամ փրկեալ և ոչ մեղք լուծեալ, և ոչ անէծք բարձեալ, և մեք անդրէն ի մեղս և յանհաւատութեանն։

Այլ յաղագս ժողովոյն Խառանայ զոր ասէիք թէ նորա բաժակ միայն ածէին ի խորհուրդն, և քննեալ ոչ համարեցաք պատշաճ, այլ հրամայեցաք արկանել ջուր։ Արդ նորա զայնոսիկ ոչ եթէ ի դոյն ումեք էին ուսեալք, այլ ի սրբոյն Եփրեմէ, և յայլոց ուղղափառ վարդապետացն, և յաղագս հաւատարիմ և զգաստ վերակացուայն պահելով մինչև առ ձեզ, զոր դուք ձերով տգիտութեամբդ և զայն ևս եղծէք, քաղկեդոնականացն հետևելով։ կատարմանց. զոր սերմանեաց ի ձեզ գիշերագող որոմնացանն այն, դարժան և դառնագոյն բղխմանց աղբիւրն Բարսումա, նախ եղեալ աշակերտ Նեստորի, և յաղագս այնորիկ հալածական յԱնտիոք և ի Հռոմ, և ի Հռոմայ յԵգիպտոս, և շրջեալ ընդ երկիր, և յածեալ ամբարտաւանութեամբ ընդ երեսս երկրի, հասեալ առկայացաւ ի ձերում սահմանի, և անդէն հարեալ հողմով հերձուածոյն իւրոյ զհաստատուն հիմնհաւատոյն և կարգաց և կատարմանց եկեղեցւոյդ սրբոյ, և եղծեալ զաւանդութիւն վարդապետաց ձերոց, զոր բազում աշխատութեամբ պահեալ, և մեծաւ ջանիւ մինչև ի ժամանակս երանելի եպիսկոպոսին Արդիշոյ։ Եւ ապա յետ նորա անընդրողք

Digitized by Google

ումանք և ուսմնատեացք ակնի միմեանց տողելով, ոչ ցգուշական գեղեցիկ գանձու եկեղեցւոյդ Ասորոց և կատարմանցդ որ ի դմա, այլ առ սակաւ սակաւ գտաւ գողացեալ ի վնասակար գաղձուէ դանակած գայլոյն կոր յառաջն յիշեցաք։

Եւ արդ դարձցուք առ հարցուածն ձեր. զոր վասն խաչ աւրհնելոյ, զի ասէք թէ աշակերտացն Հրամայեաց մկրտել և որդիս արքայութեանն լինել, և առաքեալն Պաւղոս, թէ որք ի Քրիստոս մկրտեցարուք զՔրիստոս զգեցեալ էք. արդ խաչ և ժամահար զՔրիստոս զգեցեալ են և կամ որդիք արքայութեանն են։ Արդ ասա, զո՞վ ասաց Տէրն մկրտել և կամ առաքեալ որո՞ց զՔրիստոս զգենուլ. ո՞չ ապաքէն մարդկան մտաւորաց և բանաւորաց, և ոչ անշունչ նիւթոց քարի կամ փայտի։ Նոյնպէս և որդիք արքայութեանն ասեմք լինել ոչ զանշունչ նիւթս, այլ զորդիս մարդկան որք ի ջրոյ և ի հոգւոյ ծնանին։ Այլ զխաչ. զի աւրհնեմք և հեղումք ի վերայ ջուր և զինի, ոչ եթէ որդիս արքայութեանն առնեմք զքարն կամ զփայտն, այլ զաւրինակ խաչին Քրիստոսի ի նմա տպաւորեմք, որպէս յայնժամ սուրբ փայտն առիթ մահուն բևեռելով ի նմա Բանին Աստուծոյ և բանալով զաղբերն կողի իւրոյ, և հեղ ի վերայ նորա ջուր և արիւն ի մարմնոյ իւրոյ, և ապա անսուրբն սրբեցաւ, և պատճառն մահու եղև պատճառք կենաց, նոյնպէս և մեք առնելով զաւրինակ խաչին Քրիստոսի, տպաւորեմք ի նմա և զխորհուրդ նորա. զի մի լոկ քարի և փայտի լիցի երկրպագութիւն հաւատացելոց Աստուծոյ, և հեթանոսական և դիւական, զի որք առանց խորհրդոյն Քրիստոսի ի նմա կատարելոյ երկրպագանեն, արդարև արարածոյ երկրպագանեն, և ոչ Աստուծոյ արարչի։ Եւ զի՝ անարժան թուի քեզ զմեռոնն ի խաչն մերձեցուցանել. զի եթէ Քրիստոս ի խաչին բևեռեցաւ և ոչ անարժան համարեցաւ, այլ գնա սրբեաց և ետ պահպան հաւատացելոց, զինչ վնաս է թէ մեռոն մերձեցուցանեմք ի խաչն։ Ապա թէ դու բաւական համարիս զմին խաչն և զմին պատարագն, և ամենայն խաչաձևքն աւրհնեցան և պաշտելիք են, ապա և միանգամ ասաց Քրիստոս, Այս է մարմին իմ, եղիցի քեզ ամենայն հաց՝ մարմին Քրիստոսի։ Միանգամ ասաց զՊետրոս, դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եղիցի քեզ ամենայն տուն՝ եկեղեցի։ Միանգամ ետ զիշխանութիւն երկնութեան առաքելոցն, եղիցին քեզ ամենեքեան առանց ձեռնադրութեան երի-

ցունք և եպիսկոպոսունք։ Եւ զի միանգամ պատարագեցաւ և սրբեցաւ, եղիցին քեզ ամենայն զոհք հրէականք և հեթանոսականք՝ պատարագ։ Եւ զի միանգամ պատարագեցաւ և սրբեաց զխաչն. եղիցի քեզ ամենայն խաչաձևք պաշտելիք, նախ կառք Եզեկիէլի և չորք անիւքն որ ի նմա զի խաչաձևք, և ապա աշխարհս իսկ, զի չորեքկուսի, աւդ և տարերքս, և մարդ իսկ զի խաչաձև։ Պաշտեսցին քեզ և բազմութիւնք աստեղաց զի խաչաձևք են, երկրպագցես և ձկանց և թռչնոց զի խաչաձևք, պատուեսցուք և գնկարակերտ նիւթս աւդոց կամ հանդերձից. զի նշան խաչին դրոշմեալ է։ Պաշտեսցին ի քէն և ազգ իշոց վայրենեաց և տնականաց, զի յայտնապէս զնշան խաչին կրեն ի վերայ թիկանց, և ապա եկեսցես յանտառս տնկոց վայրենեաց և կամ տանց դարաստանաց, զի բազումք են խաչանմանք, և պաշտեսցես և պատուեսցես զնոսա ոչ իբրև զխաչ Քրիստոսի, այլ իբրև զկաղնին Արամազդայ։ Ապա եթէ ասիցես ի ձեռն արուեստաւորի ի ձևանայն սրբել, ապա պաշտելի է նախ արուեստաւորն և ապա գործին, թէ ուրազ և եթէ այլ ինչ, և ապա յետոյ խաչն, և եթէ քո արուեստաւորն և արուեստն խաչ կատարէ պաշտելի և պատուելի, զի՞նչ վնաս է իմ յիշելն զԱստուած՝ որ յայնժամ ի վերայ խաչին, կամ յեղուլ չուր յաւրինակ ջրոյն, և կամ զինի՝ յաւրինակ արեանն Քրիստոսի, և մեռոն յաւրինակ Քրիստոսի, և եթէ ես կայդոսիկ յառաքելոցն և ի կանոնաց ոչ ունիմ, և մեղադրելիք են, դու կաղելդ և զհամեմելդ կամ զձիթելդ զմարմինն Քրիստոսի, իբրև զփտեալ և զապականեալ վէր, յորոյ առաքելոյ կամ յորոյ կանոնայ առեալ ունիս, և եթէ այդոքիկ քեզ արդարութիւն և ինձ մեռոնելն զխաչն՝ ոչ մեղք։

Արդ եկեսցուք որ ինչ յաղագս սկզբնաւուր և երիցուցանելոյ զգիշեր քան զտիւ, և զխաւար քան զլոյս, և ասելոյ սկիզբն զերեկոյն. և ասէք թէ մեք ուսաք ի Բանէն Քրիստոսի որ ասաց թէ, Որպէս եղև Յովնան ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպէս պարտ է լինել որդւոյ մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս։ Ահաւասիկ բերանդ քո կշտամբեալ յանդիմանեսցէ զքեզ, և բանդ քո հակառակ կայ քեզ. զրանդ յառաջ հանելով և ժչ իմանալով։ Զի զո՞ր ասաց Տէրն առաջին, ոչ ապաքէն զտիւն քան զգիշերն. զոր քո պլ ընդ այլոյ առեալ վարդապետես ի վնաս անձինդ և ի կորուստ աշակերտելոցդ։ Իսկ եթէ զլինելն ի սիրտ երկրի խընդ-

բես Նախ զայս ասա, թէ ինձ և քեզ չէ արժան Աստուծոյ քննիչ լինել և դատաւոր։ Թէ դու որպէս ասացեր, եղեր ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս թէ ոչ. զի Աստուծոյ միայն հաւատալ պարտ է և ոչ քննել, զի կամք Նորա կատարեալք են և ոչ կարաւտին ումեք։ Ասայ Աստուած Նոյի հարիւր և քսան ամ յերկարել զչրհեղեղն, և ոչ յերկարեաց, այլ ի հարիւր ամին ած, յորժամ զայն յաւգուստ դատեցաւ։ Ասայց Աբրահամու պանդխտանալ զաւակի Նորա ամս չորեքհարիւր, այլ յերկերիւր և ի հնգետասան ամին ելին յԵգիպտոսէ։ Սահմանեաց և ծառայութեան ժողովրդեանն ի Բաբելոն ամս եւթանասուն, այլ փութով ի հասարակել ամայն ելին։ Ասայց և աստ վասն մարմնոյն իւրոյ ի սիրտ երկրի լինել զերիս տիւս և զերիս գիշերս և եղև. զի ի հինգշաբաթին ետ զմարմինն աշակերտաց իւրոց. և ուրբաթին իւր գիշերաւն, և շաբաթին իւր գիշերաւն, և ի լուսանալ միաշաբաթին յարեաւ և կատարեցան երեք աւուրքն որպէս ասաց Տէրն։ Իսկ եթէ անհաւատիս այսոցիկ և ասես պակաս գոլ զտիւն հինգշաբաթին, և ըստ քում գգիշերն դնելով սկիզբն ոչ կարես ցուցանել. զի զերեկոյն ուրբաթին և իւր տիւն. և երեկոյն շաբաթին, և իւր տիւն, և երեկոյն միաշաբաթին և առաւաւտուն յարուցեալ, ահաւասիկ պակասեաց տիւն միաշաբաթին։ Թէ որպէս խնդրես և կատարես, արժան է քեզ զյարութիւն Տեառն երկշաբաթի ասել, և սուտ առնել զաւետարանիչսն որք ընդ առաւաւտս և ընդ արևագալն ասեն լինել յարութեանն։ Այլ պարտ է մեզ հաւատալ աւետարանչացն և սուրբ հոգեկիր հարցն՝ որք ասեն զյարութիւնն ի միաշաբաթուջ եղեալ, և զերիս աւուրս կատարեալ։ Որպէս ասէ Եփրեմ զուրբաթն յերկուս բաժանեալ խաւարմամբն և կրկին լուսաւորելովն։ Եւ դարձեալ փութացուցանել ասէ Տեառն զյարութիւնն վասն տկարութեան աշակերտացն, զի Յուդա խեղդեցաւ, և Պետրոս ուրացաւ, թերևս այլք կրելոց էին ասպիսիք, վասն այնորիկ կանխեաց զժամ յարութեանն։ Իսկ Յովհան Ոսկեբերան, և այլք ի մեկնչացն ասեն զկանխագոյն յառնելն Տեառն, յաղագս հաւատարիմ ցուցանելոյ զյարութիւնն և առանց կարծեաց, զի մի յամելովն կարծիցեն գողանալ զմարմինն, և ժխտիցեն զմեծասքանչ գործութիւնն վասն այնորիկ մինչ պահապանքն մերձ էին և զգոյշ ի պահպանութեանն, և կնիքն ի վէմն Նորոգ, և կանայքն տրբա-

մեալք հանդեպ նստէին, և հրեայքն խոկային լինել գյարութիւնն, արար վաղվաղակի գյարութիւնն իւր, զի առ հասարակ ամենեքեան եղիցին վկայք յարութեանն յառաջ քան ըզ-ժամադրութեանն ժամանել ժամ, և պահապանք որք մերձ, և կանայք որք կանխագոյն տեսին, և հրեայքն՝ որք լուեալ ի պահապանացն արծաթ խոստանային տալ, և շարժել երկրին և թաւալեցուցանել վիմին, և աւետել հրեշտակին առ կանայսն, և երևումն Տեառն, և ի Գալիլեա, փութացուցանել գաշակերտսն, և անդ նոցա երևեալ։ Արդ եթէ այսքան ամենայնք յառաջ քան զկատարումն երից աւուրցն եղև. և քահանայապետքն և դպիրքն ի մէջ այսչափ վկայից ստացուցանել ջանային գյարութիւնն, և համբաւէին գողանալ աշակերտացն, որք և անձանց իւրեանց չէին բաւական յապահով լինել յերկիւղէն. զինչ ապա հանդերձեալ էին ասել թէ յամելով, և յետ գնալոյ պահապանացն եղեալ էր այս վասն լինելոյ ի սիրտ երկրի։

Իսկ յաղագս սկզբան աւուր, թէ երեկոյն եթէ առաւաւտն, ոչ է արժան մեզ յանձն ապաստանել և ի մէնջ յառաջ բերել բան. այլ երթիցուք ի սկզբան արարչութեան և ի մեծ մարգարէն Մովսէս որ ասէ, Ի սկզբաննէ արար Աստուած զերկին և զերկիր։ Ահաւասիկ զերկինն վերին ասաց, որ է լոյս, քանզի հուր ասի. զի ընակեալքն ի նմա հրեղէնք որպէս ասէ մարգարէն, թէ Զպաշտաւնեայս իւր հուր կիսելոյ. և կայանս ունին ինքեանց զարփին վերին։ Ապաքէն ցուցաւ առաջին լոյսն և ոչ յետին. զի երկրորդս իրին երկիր գոյացեալ և առագաստեալ աւդոյդ խստութեամբ միջոցն երկնի, երկրի ստուերք գործեցան ի վերայ արարածոց. վասն այսորիկ դարձեալ ասէ աստուածային Մովսէս թէ, Եղիցի լոյս։ Եւ եղև լոյսն թափանցիկ ի մէջ աւդոյ, և ստուերք տարերց չբաւորեցան. քանզի ոչ եթէ ի ստուերէ գոյացան արարածք, որպէս ոմանք բարբանչեն, այլ լուսով զարդարեցան. զի թէպէտ և ոչ էր գոյացեալ արեգակն մինչև ի չորրորդ աւրն, սակայն փոխանակ արեգական, հեղեալ լոյսն տարածանէր զճառագայթս իւր մինչև յերկոտասան ժամս տուընջեան, և ապա տեղի տուեալ ամփոփէր յեթերն վերին և յառաջխաղացեալ ստուերացն գիշեր գործէր։ Վասն այսորիկ ասաց Մովսէս, թէ կոչեաց Աստուած զլոյս տիւ, և զխաւարն գիշեր, և ոչ ասաց աւր, մինչև ցյնուլ երկոտասան ժամու գիշերոյն, և վերաբերեաց առաւաւտուն

զսկիզբն երկրորդ աւուրն. ապա ասաց աւր առաջին։ Արդ եթէ գիշերն է սկիզբն աւուրն. ընդէր յետ երեկոյին անցանելոյ ոչ ասաց աւր երկրորդ, այլ մի. քանզի զկնի նորին ասաց թէ, արար զհաստատութիւն զերկինդ որ երևի և ամենեցուն յայտնի՝ թէ երկրորդին է ստեղծուած աւուր։ Բայց Աստուածային բանն լռէ զաւուրդ անուն, մինչև ցկատարումն երկրորդ գիշերոյն, և սկիզբն երրորդ տուընջեանն, ապա ասաց զնա աւր երկրորդ։ Եւ յետ սորա պատմէ զժողովումն համատարած ջրոյն, և զերևումն բուսոց և տնկոց, և զդաշտաց դալարաբերութիւն, և այսոքիկ երրորդ աւուր ստացուածք, զորոյ կանունն առընթեր ոչ դրոշմեաց մինչև ցժողովն երրորդ գիշերոյն, և ի մուտս չորրորդ տուընջեանն, ապա անուանէ զնա աւր երրորդ։ Եւ յետ սորին զեղելութիւն լուսաւորացդ թէ, Արար Աստուած զլուսաւորն մեծ յիշխանութիւն տուընջեան և զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյն. և գաստեղս, որ և յոյժ տխմարաց է յայտնին՝ թէ ի չորրորդ աւուրն են գոյացեալ տարր լուսաւորացդ, զորոյ կանունն ոչ բացայայտեաց մինչև ցկատարումն չորրորդ երեկոյին, և ի սկիզբն հինգերորդ տուընջեանն, ապա կոչէ աւր չորրորդ։ Եւ առ ետեղ պատմէ զեղելութիւն թռչնոց և ջրղաւդակ զեռնոց և գծովային կենդանեաց, և այս հինգերորդ աւուրն է գործ, զորոյ զանուն ոչ ակնարկեաց մինչև յաւարտումն հինգերորդ գիշերոյն սկզբան վեցերորդ աւուրն, ապա ասաց զնա՝ աւր հինգերորդ։ Եւ աստանաւր ասէ զլինելութիւն գազանաց և սողնոց, և անասնոց կենդանաստեղծութիւն և զմարդն ըստ պատկերի Աստուծոյ եղեալ։ Արդ ո՞ւմ ոչ է յայտնի ի վեցերորդին ստեղծեալ զմարդն ձեռամբ Աստուծոյ, սակայն ոչ ունի զանուն առընթեր տիւն, յորում վայրի և իշխանութիւն տուեալ ասի նախաստեղծ մարդոյն ի վերայ ամենայն երկրածին կենդանեացս, և զաւդական զեռնոց և ջրաթռիչ թռչնոց, և ի վերայ հողածին տնկոց և մրգաբեր փայտից, և հասեալ առ երեկն, և զանց արար մինչև առաւաւտն սկիզբն եւթներորդի տուընջեանն, ապա ասաց զաւրն վեցերորդ ի հաւաքել զիշերային մասանց, և ի նմին վայրի ասէ, թէ Կատարեցան երկինք և երկիր և ամենայն զարդ նոցա, և Կատարեաց զամենայն զգործ իւր զոր արար. և հանգեաւ յաւուրն եւթներորդի յամենայն գործոց իւրոց, զոր սկսաւ առնել Աստուած։ Արդ

ոՒր իցէ երիցութիւն գիշերոյն ո՞վ իմաստունք յաւէտ եթէ ցիմաքք։

Եւ դարձեալ նոյն ինքն աստուածայինն Մովսէս ի պատուհասական հրամանին և ի համաջինչ նաւակոծութեանն զրէ թէ, Եղև անձրևն զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. և աստանաւր ոչ փոխեաց զկարգն, թէպէտ և ոչ աստեղք երեւէին։ Եւ Աստուած յանցանել ջրհեղեղին ուխտադրէր Նոյի զանցեալ կարգն, ասելով թէ Ցուրտ և տաւթ, ամառն և գարուն, զտիւ և զգիշեր մի՛ դադարեցցեն։ Եւ Մովսէս վասն տալոյ կտակի աւրինացն գրէ այսպէս. թէ, Եղև յետ քառասուն տուընչեան և քառասուն զիշերոյ, ետ ինձ Աստուած զերկոսին տախտակս քարեղէնս. և դարձեալ եթէ Զքառասուն տիւ և զքառասուն գիշեր հաց ոչ կերայ և ջուր ոչ արբի. և յայսոսիկ և մի զիշեր ոչ յաւաչեաց քան զտիւ։ Իսկ Ցովքայ մատենագրութեանն, թէ եկեալ բարեկամքն նատէին շուրջ զնովաւ զինն տիւ և զինն զիշեր, և մարգարէն Դաւիթ իսկ զբան սաղմոսին, երանելով զայնոսիկ որ զաւրէնսն Տեառն խորհեսցին ի տուէ և ի գիշերի. և թէ Արար զարեգակն յիշխանութիւն տուընչեան և զլուսին իշխան գիշերոյ, և դարձեալ թէ, Ի տուէ կարդացի և գիշերի առաչի քո. և թէ՝ Արեգակն ի տուէ քեզ մի մեղիցէ և լուսինն ի գիշերի։ Իսկ համարձակախաւսն Եսայի աղաղակէ ի դիմաց Աստուծոյ և ասէ. Ես եմ Աստուած որ արարի զլոյս և հաստատեցի զխաւար դարձեալ ի վերայ արդարացեալ Ժողովրդեանն ասէ, Ոչ եղիցի քեզ արեգակն ի լոյս տուընչեան և ոչ լուսինն ի փայլումն գիշերոյ։ Իսկ Նորագոյն մարգարէն Երեմիա Տէր Տէր զաւրութեանց որ ետ զարեգուկն ի լոյս տուընչեան և զաստեղս և զլուսին ի լոյս գիշերի։ Դարձեալ թէ զլոյս տուընչեան ոչ հաստատեցի, ապա անարգեսցի պետութիւն զաւակին Դաւթի։ Եւ երջանիկ Մանկունքն զամենայն արարածս յաւրհնաբանութիւն ածելով, նախ զերկինս և զերկնայինսն, և ապա խոնարհեալ ի ստորակայս, նախկին ասացին տիւ և ապա զիշեր. և դարձեալ լոյս և ապա խաւար։ Իսկ ի Նորումն աւետարանիչքս յայտնի ցուցանեն սկիզբն աւուր զլոյս և ոչ խաւար։ Նախ Մատթէոս զի յետ մկրտութեան զրէ վասն Տեառն, թէ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ապա քաղցեաւ։ Իսկ Ցովհաննէս զՃանապարհորդութիւնսն Եւ եղև նմա անցանել ընդ Սամարիա, և էր ժամ

իբրև վեցերորդ, և Յիսուս վաստակեալ նստէր ի վերայ աղբեւրըն։ Եւ դարձեալ նոյն ինքն Տէրն ասէր առ Թովմաս յորժամ երկնչէր ի Հրէաստան գնալոյն. Թէ ոչ ապաքէն երկոտասան ժամ է աւուրն, որ գնայ ի տուընչեան ոչ գայթակղի, իսկ որ գնայ ի գիշերի գայթակղի։ Եւ դարձեալ զժամ չարչարանացն Տեառն ասէ, Թէ Էր ուրբաթ պատկին և էր ժամ վեցերորդ, և հանին զնա ի խաչ. դարձեալ Թէ՝ Ի վեցերորդ ժամու խաւար եղև ի վերայ երկրի։ Որպէս դու կարծես, և եռեկոյն է սկիզբն աւուրն, և ժամ խաւարին վեցերորդ էր աւրն, ապա կի՞արդ ի մէջ գիշերի խաւարն, կամ ո՞րպէս խաւարեցաւ արեգակն, զի ի մէջ գիշերի արեգակն ոչ երևի և ոչ խաւարի։ Իսկ ի պատմել սրբոց աւետարանչացն զաւետիս Միածնին յարութեանն՝ յայտնապէս ցուցանեն զորոշումն աւուրն, զի ասէ Մատթէոս, Թէ Յերեկոյին շաբաթին յորում լուսանայր միաշաբաթին տես. զերեկոյն շաբաթին ասաց, և զլուսանալն միաշաբաթին։ Իսկ Մարկոս, ևս յայտնի, Թէ Իբրև անց շաբաթն, պատրաստեցին խունկս եւղս, և ընդ առաւաւտս միաշաբաթին գան ի գերեզմանն։ Նոյնպէս և Ղուկաս ասէ։ Իսկ Յովհաննէս յետ յարութեան ժամուն զգալն առ աշակերտսն դրաւքն փակելովք ասէ, Թէ Էր երեկոյ միաշաբաթուոջ աւուրն, և դրաւքն փակելովքն եկն, ուր էին ժողովեալ աշակերտքն, տե՛ս զի զերեկոյն միաշաբաթին ասաց, և ոչ երկշաբաթի։ Արդ՝ ո՞ւր իցէ երիցութիւն գիշերոյն յետ այսքան վկայից մարգարէից և աւետարանչաց։ Արդ անոպայ ասացին լեզուք ստախաւաց, և ըմբերանեսցին հակառակամարտ խոհականութիւնք ընդդէմ սրբոյ Հոգւոյն և հրամանաց Աստուծոյ, որ ի հին և ի նոր կտակարանս ցուցանեն առ առաջին արարչութիւն զլոյս, և սկիզբն աւուրն զտիւն և զգիշեր, և յաղագս այսորիկ այսչափ շատ լիցի։

Իսկ վասն հարցմանդ զմեզ Թէ զծնունդ և զյայտնութիւն ի մի կատարէք, որպէս առաջին հարքն որք յառաջ քան զժողովն Քաղկեդոնի։ Արդ Թէ այնոքիկ խոտելիք են՝ զոր նոքայն ուսուցին կամ կանոնեցին, արժան է քեզ և զուղիղ խոստովանութիւն՝ զոր ունիս ի ժողովոյն Նիկիայ ՅԺԸ. իցն, և կամ զՃՂ. իցն, որ ի Կոստանդինուպալիս, և զ Մ. ոցն որ յԵփեսոս Թողուլ, և դաւանել ժողովոյն Քաղկեդոնի, և լինել մարդապաշտ փոխանակ աստուածապաշտի։ Իսկ զընութիւն կամ զսովորութիւն կամ զուսումն զոր ասես դու, ի վերայ արարածոց ասի, և ոչ ի վերայ

Digitized by Google

արարչի։ Եւ զիմարդ ոչ հաւատաս դու Գաբրիէլի որ ասայ առ կոյսն թէ, Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ, և զաւրութիւն Բարձրելոյն հովանասցի ի քեզ. և թէ Որ ծնանելոցն է սուրբ է, և որդի Բարձրելոյն կոչեսցի և դարձեալ առ Յովսէփ ասէ թէ, Մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո, զի որ ի նմա ծնեալ է ի Հոգւոյն սրբոյ է։ Արդ՝ ոչ ասայ յղացեալ կամ ստեղծեալ, այլ թէ ծնեալ, վասն զի աստուածային էր զործն, և ոչ բնութեան կամ սովորութեան ծնունդ, զի թէ սովորութեան կամ բնութեան կիրք գոյին անդ, պարտ էր ասել հրեշտակին, թէ որ ի նմա սաղմն ստեղծանի, զի ի վեց աւրն սաղմն արիւնանայ և յետ քառասուն աւուր ապա գոյացեալ բոլոր անդամաւք մարմնոյն շնչանայ, որ է սովորութիւն բն ութեան և ոչ աստուածային տնտեսութիւն։ Իսկ Քրիստոսի այսոքիկ ոչ այսպէս, այլ անդէն ընդ ասել հրեշտակապետին թէ Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ, բոլոր անդամաւք և շնչով գոյացեալ եղև Բանն Աստուած։

Այլ զի գրեալ էիք թէ ոչ թէ անդիտութեամբ եդան տաւնքս այս յեկեղեցիս Հռոմոմոց և Յունաց և Եգիպտացւոց և Ասորոց, այլ ի կանոնաց և իմաստուն վարդապետաց, արդ ասայիս քեզ թէ յորո՞ց վարդապետաց ընկալան Յոյնք, որոց յետոյ և դու աշակերտեցար։ Արտեմոն ոմն սուտանուն աշակերտ Յովհաննու աւետարանչի, ի վերայ գեղեցիկ սերման աւետարանչացն և առաքելոցն որոմն սերմանելով որպէս ի սկզբանն բանսարկուն յԱդամ զյոյս աստուածանալոյն, և վասն այսորիկ դիւրալուր եղեալ որք ընկալան, ոչ վասն տաւնասիրութեան կամ առաւել փառս վարկանելոյ բաժանեցին զմի տաւնն յերիս՝ յԱւետիս և ի Ծնունդ և ի Մկրտութիւն, այլ վասն հեշտասիրութեան և որովայնամոլութեան։ Եւ վասն այսորիկ ասեն լինել զյղութիւն Եղիսաբեթի յեւթներորդ ամսեանն թշրինի տասն, ի քաւութեան տաւնին, և սեպտեմբերի ի քսան և հինգն, և անտի մինչև ի քսան և հինգն մարտի թուեն ինն ամիս և հինգ աւր, և անդ ասեն զաւետիս կուսին և անտի մինչև ի քսան և հինգն դեկտեմբերի ինն ամիս և հինգ աւր ժողովեն յղութեան կուսին և ծնունդ կատարեն և յետ երկոտասան աւուր ի վեցն յունուարի յայտնութիւն։ Արդ՝ ոչ է արժան ճշմարիտ և ուղղափառ քրիստոնէից հաւանել խոտոր հերձուածոյն Արտեմոնի, որ հակառակաբար սրբոց աւետարանչացն ասայ զյղութիւն Եղիսա-

Digitized by Google

բեթի ի տան Թշրին յաւուր քաւութեանն. որ յոյժ է անտեղի։ Զի զի՞արդ մարթ էր քահանայապետին յետ այնպիսի սոսկալի տեսլեան, և ի սրբութիւն սրբութեանցն մտանելոյ, ի կին իւր գնալ. զի ամենայն Իսրայեղ, յամենայն քաղաքաց Հրէաստանի և Գալիլիայ վասն գլխաւոր տաւնիցն քաւութեան և տաղաւարահարաց յԵրուսաղէմ ժողովէին նուիրաւք և պատարագաւք, և նուիրիչ ընծայից և պատարագացն ինքն Զաքարիա էր՝ զի՞արդ կամենայն արտաքս ընկեցեալ, առ կին իւր գնայր։ Զի թէ որդիքն Հեղեայ յանխորհուրդ յաւուրսն յաղագս պղերգութեանն ի պաշտաւնն, այնպէս անրուժելի դատաստանաւ պատժեցան. զի՞ նէ ակն ունէր կրել Զաքարիա, թէ ի քաւութենէ տաւնին, յորում միանգամ ի տարւոջն ի սրբութիւն սրբութեանցն մտանէր յաւրինակ Քրիստոսի միանգամ պատարագին, յայսքան խորհրդական աւուրս խորհրդածուն ի կինն մերձ գնայր։ Եւ դարձեալ զեւթնաւրեայ տաղաւարահարացն զպատարագս և զնուէրսն յաւրինակ եւթնաւրեայ աշխարհիս տաղաւարահարաց. և ի գաղթականութեանս թողեալ զայնպիսի նշանաւոր տաւն ի կինն իւր գնայր։ Հանդերձ այսու դարձեալ և տաւնն Զաքարիայ ոչ էր յԵրուսաղէմ, այլ ի լեռնակողմն վիճակին Յուդայ, որպէս վկայէ աւետարանիչն Ղուկաս, թէ Յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Մարիամ փութանակի գնաց ի լեռնակողմն քաղաք մի Յուդայ ե եմուտ ի տուն Զաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբեթի. և դարձեալ ասէ, թէ յետ կատարելոյ աւուրցն այնոցիկ գնաց ի տուն իւր Զաքարիա, և դարձեալ թէ Երբև լցան աւուրք պաշտաման նորա։

Արդ՝ աւուրք պաշտաման կոչէ աւետարանիչն զքաւութեան տաւնն և զտաղաւարահարացն զոր ի միասին տաւնէր ամենայն Իսրայեղ յեւթներորդում ամսեան ի Թշրինի տան սկսանէր աւր քաւութեանն և կատարէր ի հնգետասան նորին ամսոյ, և տաղաւարահարացն ի հնգետասան Թշրին ամսոյ սկսանէր, և կատարէր ի քսան և երկուսն նորին ամսոյ, և ապա արձակէր ժողովուրդն յիւրաքանչիւր տունսն։ Վասն այսորիկ զրէ աւետարանիչն Ղուկաս, թէ յետ աւուրցն այնոսիկ, որ են երկոտասան աւուրք երկուց տաւնիցս այսոցիկ, ապա գնաց ի տուն իւր Զաքարիա, և եղև յղութիւն Եղիսաբեթի ի քսան երեքն Թշրին ամսոյ, որ լինի ի հոկտեմբերի յինն, և ասի մինչև յաւետիս կուսին ի նիսան ի տան և հինգն, և յապրիլի յեւթն՝

վեց ամիս ըստ Գաբրիէլի ձայնին, մինչև ցնծագնդ յունուարի ի վեցն՝ ինն ամիս և հինգ աւր, ըստ անդրանկածնութեան, և յորումաւուր քանիաւնութեան ամսոյն յունուարի ծընաւ, ի նոյն քանիաւնութեան ամսոյն և մկրտեցաւ ըստ վկայութեան Ղուկայ աւետարանչի որ գրէ թէ, Ինքն Յիսուս էր ամաց իրրև երեսնից սկսեալ։ Արդ սկսեալ ասելով զերեսներորդ ամն ցուցանէ, յայտնապէս՝ ի վեցն յունուարի լինել մկրտութեանն, զի ըստ տոմարական արհեստի յետ քսան և ինն ամի անցանելոյ երեսներորդ զնոյն ունի հանդիպուած, որպէս սքանչելին Անդրէաս ցուցանէ, յերկերիւրեակ ըղձորին յերրորդ կանոնին զաւր արարչութեանն, և տաւնել աւետայն և զծննդեանն ամենայն ամի ըստ որքանութեան ամսոյն, զնիսան զտաւն և զհինգն, և զապրիլէլի զեւթն, զյունուարի զվեցն, զմի և զնոյն պատկեր բերելով աւուրն։ Այսպէս և զծնունդն և զմկրտութիւնն յորքանիամսոյն ծնաւ, ի նոյն և մկրտեցաւ ի Յորդանան ի Յովհաննէ, որ ի վերուստ վկայէ Հայր, Դա է որդի իմ սիրելի, և Հոգին աղաւնակերպ ի վերայ իջեալ փառակցին իւրոյ, ցուցանէր զառն Աստուծոյ և բարձող մեղաց աշխարհի։ Վասն այսորիկ և եղբայր Տեառն Յակոբոս և Կիւրեղ ամենակիզ նորա ի միում աւուր ի վեցն Յունուարի կանոնեցին զծնունդն և զմկրտութիւնն զի մի բաժանեսցի խորհուրդն սքանչելի։ Եւ վկայ հաւատարիմ Աստուածաբան՝ ի վարդապետութեան Երանելոյն ասացեալ, թէ Երիս ծնունդս գիտէ մեզ բանս որ ի մարմնոյ և ի մկրտութենէ և յարութենէ, և զայս ամենայն ինքեամբ պատուեալ իմ Քրիստոս երևի։

Եւ արդ տես զի՞ արդ բաժանէ, զմին փչմամբ առաջնովն և կենդանականաւ, և զմիւսն մարմնանալովն և մկրտութեամբն, իսկ զմիւսն յարութեամբն՝ զոր ինքն սկսաւ։ Արդ առաջին ծնունդ Քրիստոսի այս է, յորովայնի կուսին ի Հոգւոյն սրբոյ, որ է փչումն առաջին և կենդանական, զի յասելն Գաբրիէլի, թէ Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ, յառաջեաց Բանն շարառեաց իւր մարմին, քանզի և ոչ ըստ բնութեան մարդկան և յառաջանալոյ առ սակաւ սակաւ ստեղծագործիւր մարմինն տէրունական այլ իսկ և իսկ իբրև զքառանաւրեայ դոյացեալ եղև, զոր ծնունդ առաջին կոչէ։ Եւ վկայ հրեշտակն, որ յառաջ քան զծնանելն ըստ երևութի ի մարմնոյ ծնեալ ասաց, թէ Յովսէփ որդի Դաւթի մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո, զի որ է նմա

ծնեալ է ի Հոգւոյն սրբոյ է, որպէս և Բասիլ կեսարացի մեկնէ զբան հրեշտակին, թէ վասն է՛ր ծնեալ ասաց և ոչ ստեղծեալ։ Իսկ երկրորդ ծնունդ՝ զմարմնանալն այսինքն զմարմնով յառաջ գալն ի կուսէն, և զվկրտութիւնն առանց բարժանման ասէ գայսոսիկ։

Արդ ամաչեսցէ Արտեմոն, յամա՞ւթ լիցի և ժողովն Քաղկեդոնի, զի ոչ կարեն ցուցանել առանձնական տաւն մկրտութեանն Քրիստոսի, ոչ ի Յակովբայ եղբաւրէ Տեառն և ոչ ի Կիւրղէ, և ոչ գտանէ ոք յընթերցուածագիրն, զի թէպէտ և գրեցին աւետարանք և առաքեալք և պրակք առաքելոյն, Ղուկասու զվկրտութիւնն Քրիստոսի, այլ ոչ հրաման սահմանեցին կատարելոյ որպէս ծննդեանն, վասն ի ծնունդն լինելոյ մկրտութեանն, և ոչ բաժանելոյ։ Եւ վկայ մեծն Բարսեղիոս՝ որ ի Հաւատոց գիրն այսպէս ասէ թէ Մեծքն և կարևորագոյնքն քրիստոնէութեանս ոչ գրեցան, այլ աւանդութեամբ ունիմք ի կատարմանէ նոցա և յաւրինակէ. և զոք են այսոքիկ ընդ արևելս յաղաւթս կալ, մկրտութիւնն, և իւղն սրբութեան զոր միւռոն անուանեմք, ձեռնադրութիւնք ամենայն աշտիճանաց, և որ այլն։ Արդ գիտեմք թէ յայտնեցաւ ի մկրտութեանն, բայց ի ծնընդեանն ընդէ՞ր թաքեաւ. ո՞վ բարժանողք, ոչ ապաքէն ի ծնընդեանն յայտնեցաւ երկնաւորաց և երկրաւորաց, ի յերկինս հրեշտակաց յայտնեցաւ. և ի հրեշտակացն հովուացն յայտնեցաւ և յաստեղէն մոգուցն յայտնեցաւ, որ և անբանիցն յայտնեցաւ ի մսրի և ի քարայրի, և այս է տաւն ծննդեան և յայտնութեանն Քրիստոսի, ըստ բարձրաձայնութեան մեծին Գրիգորի Աստուածաբանի ի Ծննդեան ճառին, Այժմ, ասէ, Աստուծոյ յայտնութեանս տաւն է, քանզի երևեցաւ Աստուած՝ մարդ ծննդեամբ։ Եւ դարձեալ նոյն ինքն վերագրէ զճառն ի յայտնութեանն Քրիստոսի, և սկսանի ի ծնունդն թէ, Քրիստոս ծնեալ լինի և ի միում աւուր ասէ մկրտութեան ճառին, թէ Մկրտութեան է աւրըս, և պարտ է վաստակել, և ոչ ասաց թէ յայտնութեան է աւրս, թէպէտ է, զի զծնունդն գիտէ յայտնութիւն։ Եւ Բասիլիոս ի Քրիստոսի ծնունդն յիւրականն, և՛ս յայտնագոյն ասէ մերձ ի կատարումն ճառին, թէ Անուն զիցուք տաւնիս մերոյ Աստուածայայտնութիւն։ Եւ արդ զի բազում են յայտնութիւնք ի հարցն սրբոց և ի վարդապետաց, բայց մեր զչափաւորութիւն սիրեալ դադարեսցուք զբանս։

Եկեսցուք յուղիղ խոստովանութիւնդ որով ընդ մեզ միաբանիք, և եղծեալ կարգաւորդ Քաղկեդոնականացն հետևիք կատարմանց, յորմէ ոչ աւգուտ և փրկութիւն։ Զի զինչ աւգուտ բերանով խոստովանել, և գործովք ուրանալ, զի Հաւատք առանց գործոց մեռեալ են, որպէս և գործք առանց հաւատոց։ Եւ արդ պարտ է մեզ Երեմիական հոգւովն հառաչել ի վերայ անզգայ հիւանդութեանդ և անգիւտ կորստեանդ, զի երկնեաց երկիր, և ծնաւ ազգ մի ողջոյն, զոր կորոյս տգիտութիւն, և հնացեալ սովորութիւն հին հերետիկոսացն։ Որոց իմաստունքն անդուստ ի վերուստ աղաղակէր, թէ Հայեաց ի քեզ մի գուցէ շաւիղ ուղղոյ իցէ երևեալն. որում անընտրող եղեալ հետևիք զընդարձակն գնալով պողոտայ բազմացդ ուղեկցութեամբ զի բազումք են կոչեցեալք, և սակաւք ընդրեալք։ Զինչ աւգուտ է քեզ ի բազմութենէ ուղղոյն, և կամ՝ որ շահ ի բազմութենէ ձախակողմանցն։ Արդ ընդրեա դու զսակաւութիւն ցորենոյ, և մի զ յաճախութիւն յարդին, զնիւթ յաւիտենական հրոյն զթեթևացեալն հոգմով ամբարտաւանութեամբ յունական յոխորտանաւքն, որք և արդարև են որդիք անհաւանութեան, որք զուղիղ խոստովանութիւն հաւատոյ առաքելոց և վարդապետաց սրբոց եղծին, և ոչ կացին յուխտին Տեառն. և ըստ պատուիրանայն Աստուծոյ ոչ կամեցան գնալ, այլ եղեալ իմաստունք յինքեանս և յաչս անձանց խորհրդականք, ոչ հնազանդեցան Որդւոյ ասաւղին թէ, Որ ոչ հաւատայ Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս, եթէ բարկութիւնն Աստուծոյ մնայ ի վերայ նորա։ Կարծեցեալք պատուել աւելի տաւնիւք և կատարմամբք, գտան անկեալք ընդ նզովիւք առաքելոյ որ ասայն Թէ որ աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առնէքն, նզովեա՛լ լիցի։ Արդ զի՞ քեզ և նոցայն աւրինակ տաւնից և կատարմանց, որ հպաւրապէս փախչիս ի մարդադաւան խոստովանութենէ նոցա, ընդէր կատարմամբ խորհրդոյդ հաղորդիս ապականեալ խառնուածով զանապական մարմինն Քրիստոսի, և մարդ մահկանացու ցուցանել զանմահն Աստուած, ապաստանել ի մարդ և ոչ յԱստուած, ուստի անէծք և ոչ աւրհնութիւն, զի գրեալ է թէ, Անիծեա՛լ որ եդ զյոյս իւր ի մարդ, որոց սպառնայ փողն տարսուկնացի թէ Արհամարհեալ ուրուք գաւրէնն Մովսէսի, առանց ողորմութեան երկու կամ երեք վկայիւք մեռանէր, իսկ որչափ սաստիկ պատժոյ արժանի համարեսջիք զայն՝ որ զորդին Աստու-

Digitized by Google

ծոյ առ ոտն ե՛հար, և զարիւն նորոյ ուխտին խառնակ համբեցաւ, որով սրբեցաւ, և զՀոգին շնորհաց թշնամանեաց. և դարձեալ թէ, Իմ են վրէժխնդրութիւնք, ասէ, Տէր, և եթէ Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ։ Երկիցուք, սիրելիք, աղաչեմ փութայարուք զերծանել յայնպիսի ահագին սպառնալեաց. զի թէ որ կամակից լինին՝ դատին ըստ Պաւղոսի, որչափ ևս որ առնեն զնոյն և յարգեն և պատուեն և ընդունին, որոց լիցի մեզ արտաքոյ լինել։ Եւ մարգարէն աղաչէ, թէ որդն նոցա ոչ մեռանի, և հուր նոցա ոչ շիջցի, և եղիցին տեսիլ ամենայն մնեղեաց։

Այլ եղիցի ձեզ ամենեցուն հովանաւոր և հաւատիցդ Տեառամբ և կարողութեամբ նորա՝ փախչել ի նոցայոցն և ի մահացու և յաւտար արաւտէ. ի վայրի դալարուոջ բնակել և ի ջուրս հանգստեան սնանել, ի վարս ուղիղս և ի գործս արդարութեան ըստ կամացն Աստուծոյ Հաւր մերոյ, և ի փառս միածնին։ Որով և ընդ որում Հաւր, և կենդանարարի Հոգւոյն սրբոյ, փառք պատիւ և իշխանութիւն, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։

ԶՏեղապարդ ի զուարթնոցն երանաւորս, ի սպասող լուսաւոր սուրբ պատիս զԹումաս, ի զծնաւղն իմ յիշեցէք ի սուրբ ի ի Տեղապարդ պապարագին, զնան սիրոյն Քրիստոսի. ի Քրիստոս Աստուած՝ զյեղ յիշեցէք։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ՀՈՌՈՄՈՑ Ի ՀԱՅՍ, ՁԱՅՆԱԿԻՑ ԵՒ ՀԱՄԱԽՈՀ ԺՈՂՈՎՈՅՆ ՔԱՂԿԵԴՈՆԻ ԵՒ ՏՈՄԱՐԻ ՀԱՅՀՈՅՈՒԹԵԱՆՆ ԼԵՒՈՆԻ, ՋՈՐ ԵՌԵՐ ԱՄՏՈՒԱԾԱՊԱՏԻՒ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ՅԱՌԱՋ ՔԱՆ ՋԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ԻՒՐ, ՈՐ ՎԱՍՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԵԱԼ Ի ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔՆ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱՒԼԻՍ. ԻՍԿ ՆՈՅԻՆ ՅԱՂԱԳՍ ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՈՅ՝ ԸՆԴ ՁԵՌՆ ՆՈՐԱ ԳՐԵԱԼ, ԵՒ ԱՌԱՔԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿԱՊԱՐԵԱՑ ԿՆՔՈՎ՝, ՋՈՐ ՈՉ ԸՆԿԱԼԵԱԼ ՋՆՈՅԱՅՆ ՀԱՅՀՈՅՈՒԹԻՒՆ ՄԵՐՈՅ ԱԶԽԱՐՀԻՍ, ԱՅԼ ԱՐՁԱՆԱՑԵԱԼ Ի ՀԱՒԱՏՍ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ, ԵՒ Ի ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԼՈՅ ՍԸՐՌՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ, ԱՄԵՆԵՒԻՆ ԱՆԶԱՐԹ ՄՆԱՑԵԱԼՔ ՈՉ ԵՏՈՒՆ ՏԵՂԻ ԴՐԴՈՒԵԼՈՎ Ի ՁԱՒՂԱՑ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Քրիստոս է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսին ՝մի, և զմիջնորմն ցանկոյն քակեաց, զթշնամութիւնն ի մարմնի իւրում։ Քանզի այսուիկ առաքելական ձայնիւ վարիլ ի սկսանել զրոյս մերոյ առ սէրդ ձեր՝ բարիոք գոլ համարեցաք, վասն զի և բոլոր դիտումնս մեր, և նորին գրոյս հնթադրութիւն, խաղաղութեան է ուղղութիւն, և խաղաղութեան ասեմք, ոչ որպէս աշխարհս տայ, որպէս տէրն ասաց, այսինքն առ համամատութիւն երկրայնոց իրացս տեսեցելոց, այլ զոր ինքն յերկնից երեր մեզ խաղաղութիւն, և ի հրաժարելն իւրում շնորհեաց իւրոց աշակերտաց, յանձինս մեր ունել մեզ ախորժ է

Digitized by Google

առ Աստուած և Հայր, որպէս աղաւթիւք ասացեալ Արդ՝ զայս ոչ յաղագս սոցա աղաչեմ միայն, այլ և վասն ամենեցուն որ հաւատան ի ձեռն բանի սոցա յիս, զի ամենեքին մի եղիցին, ըստ որում դու Հայր յիս, և ես ի քեզ, զի և սոքա ի մեզ եղիցին, զի և աշխարհ հաւատասցէ, եթէ դու առաքեցեր զիս։ Նկարագրական գոլ իւրութեան ի նա հաւատացելոց, նորին Տեառն համարեալ համամտութեամբ և խաղաղութեամբ առ միմեանս կապիլն մեզ։ Որք զնորայն վայրապտութիւն պատուել գիտացին, ոչինչ պատուականագոյն բան զխաղաղութեանն բարին համարեսցին, և ոչինչ անարգագոյն բան զհակառակ նորին իմացուածս անջատողականաց բանից և մտածութեանց գիտցեն, գիտելով եթէ ոչ նշանաց ցուցումն, և ոչ ճրշմարիտ վարուց ուղղութիւն տարաժանմամբ մարմնոյ և բաշխմամբ ընչից մինչև մարտիրոսութեամբ չափ, ստացողացն զաւգտակարութիւն առաչի գնէ՝ առանց սիրոյ եղելոցս այսոցիկ։ Իսկ սէր, որպէս ասէ այսորիկ արուեստաւորն նկարագրող աստուածայինն առաքեալ, կչար ոչ համարի, այլ խնդայ ընդ ճշմարտութիւն։ Իսկ զոր յաղագս ընկերաց չարս մտածութիւնս, և մանաւանդ որովք յաղագս Աստուծոյ բանիւք՝ ամենևին ի բաց մերժէ, որպէս խափանիչս իւրոյն ուղղութեանց գոլ զայսոսիկ համարեալ։

Արդ և մեք աղաւթելով աստուածայնոյն խաղաղութեան գոլ բաղդոչք, և ոչ խառնակութեամբ յոչ՝ բարի կարծեաց յանձն առեալ ըմբռնիլ, և ոչ է տեղականաւք մեկուսութեամբք ըզքրիստոնէից համամտութեանն վայելուչս ընդ նմին ի բաց հատանիլ ներեալ, զայժմուս առ ի մէնջ սիրովն Աստուծոյ ճառեմք բանս առ ձեր աստուածասիրութիւնդ, զնկարագիր Քրիստոսի աշակերտելոյն այսուիկ լնուլ փութացաք, և զհաւանումն բարեպաշտիկ և աւրինաւոր, յաղագս ի մեզ յուսոյն որ ի Քրիստոս և հաւատոց ցուցանել կամեցեալք։ Քանզի թէև զատելիս եղբայրս կոչել և համարել մարգարէականն զմեզ խրատէ բանն, զի՞արդ ոչ եղբայրարար առ որ ոչ այսպէս են առ մեզ բանիւ և հոգւով սիրով, որպէս զմտաւ ածեմք, վարիլ մեզ է իրաւացի։ Բայց հաւատամք յԱստուած որ յամենայնի զիտակն է զործոց մերոց և մտածութեանց. թէ զմարդուր խորհրդովս մերով վասն մարձակայ բանիս յուշ առնելոյ առաչի վ՚զայից զիւտընկալ ներգործեսցէ՞ յանձինս ձեր, քանզի զնորին Տեառնն, և ոչ

գանձին գփառս խնդրեմք։ Քանզի զայս խորհել է իրաւացի ամենեցունց որք ի հոգևորականի պատուոյ եկեղեցւոյ՝ առ ի բարեաց գործոց երկրագործութիւնն վարձկանեցաւ, որոց զլուխ ուղղափառութեանն յաւրինեցաւ Բանն, զոր և փայտ կենաց անուանեալ կմեկ Աստուածաշունչ գիրք, այսու անուամբ կոչելով յորդորէ զարդարև իմաստութիւնն։ Զինչ արդեւք իցէ իմաստազոյն քան զխորհելն առողջարար յաղագս Աստուծոյ և աստուածայնոցն, և անսուտ զէիցն փառս և կարծիս ըստ Աստուածաշունչ գրոց աւանդութեան ստանալն, զոր ճշմարտապէս և ի մէջ դրախտին առ ի յԱստուծոյ տնկեալ հաւատամք, որ առթէ և սողել ձեռնարկէ հանապազ չարութիւն աւձն, և զպատրանս բանի աստուածսիրութեան ձևով արկանէ առաջի, որպէս և ի սկզբանն աստուածահաւասար խոստմամբ նախաստեղծիցն Եդ առաջի, արգելեալ լինի առ ի պահողէն բոցեղէն սրոյն զայնպիսին ծառ, այսինքն ի Հոգւոյն շնորհէ. որով անգործ լինել նորին վիշապին խորհրդոց, և ոչ գոլ արգել որ ոք կամեսցի ուղղութեամբ սրտի զճշմարտութեան պտուղս, ոչ ճաշակել միայն, այլ և առատապէս վայելել, եթէ ընաւին ըստ ձեռս ձգիցեն այսինքն գործաւորապէս և աշխատութեամբ ըստ խուզողականն ճշմարիտ գիտութեամբ ի մտածութիւնս շարժեսցեն, զի յայսոսիկ հպեսցին, կեցցեն յաւիտեան։

Արդ և մեք աղաւթս առնելով համանդամայն, և փութացեալք ընդ հովանեաւ այսպիսոյս իմացականի ծառոյ հանգչել հանապազ ի սորայոյս պտղոյ առաքել՝ ոչ մերձաւորացս միայն, այլ և հեռաւորաց փոյթ յանձին ունիմք, զոր և առ ձեր աստուածպաշտութիւնդ առնել յաւժարեցաք՝ բարիոք համարեցաք ոչինչ իրաց ի պատճառն այսպիսոյս պարգևատուութեան ունել։

Քանզի Ստեփանոս աստուածասէր քահանայ, եղեալ յայսմ աստուածապահ և ի թագաւորական քաղաքիս, ծանուցաւ մեզ եթէ ի մեր սուրբ եկեղեցիս հաղորդել ոչ առնու յանձն, զոր ըստ աստուածայնոց աւրինաց հեգութեամբ կոչեցաք և հարցաք, թէ զի՞արդ խորհիս, և վասն զի՞նչ պատճառի ոչ կամիս հաղորդել ընդ մեզ. և խնդրեալ գրով խոստովանութիւն ի դմանէ առաք մինչև յառաջինն որ լնփեսոս սուրբ ժողովն արարեալ զխոստովանութիւնն։ Իսկ որ ի Քաղկեդոն զսուրբ և զտիեզերական ժողովն, և զորս յետ նորայն յիշում

և ոչ բնաւ արարեալ, յոլովիւք յաղագս այսորիկ հաւանակա-
նաւք առ դա վարեալ բանիւք, և իբր զի լուսացողական ազա-
ռաւք ներգոյիդ ի դմա կարծեաց ոչ արուեստական հնարիւք,
այլ պարզութեամբ բարոյիւ, և յստակ սիրով ի մէնջ յառաջ
բերեալ արարաք առ դա բանս։ Սակայն մեզ հաղորդ լինել
առանց ձեր ոչ հաւանեցուցաք, զոչ առանց ձեր խոստովանակ-
ցութեան առ այս գոլ դմա իրաւամբք պատճառ առաջի ար-
կեալ, ուստի որպէս ի Նորին յասացելում սրբասիրի առնդ զձեզ
զամենեսեան տեսեալ. ոչինչ նուազ արարաք ըստ արժան գո-
լոյ առ ձեզ բանս ի ճշմարտութիւն հաւանեցուցանելով, և ի
ձեռն գրոյս խաւսից բարբառել առ ձեզ կարժանն. այսինքն
որպէս աստուածային առաքեալ ասէ զլաւագոյնն. և զփրկու-
թենէ բուռն հարեալ, առաւել կարևոր համարեցաք զայս ա-
սել յառաջագոյն, քանզի և պիտանի իսկ նախ անգործ առնել
զմտածութիւնս առ ի յանջատումն հայելոյ մեզ Քրիստոսի
խորհրդոյն, և այնպէս որպէս ի հերկս արդարութեան ի բաց
խլելով զդայթակղութեանն փուշս, զմերոյս իմացուածոյ ընկե-
նուլ զսերմանիս։

Ա։ Եթէ ոք ոչ խոստովանի Աստուած գոլ ըստ ճշմար-
տութեան զեմմանուէլ, և զասն այսորիկ Աստուածածին զսուրբ
կոյսն, քանզի ծնաւ մարմնապէս մարմին եկեալ Աստուծոյ
Բանին, Նզովեալ եղիցի։

Բ։ Եթէ որ ոչ խոստովանի ընդ մարմնի ըստ անձնաւո-
րութեան միաւորիլ յԱստուծոյ Հաւրէ Բանին մի գոլ Քրիս-
տոս ընդ իւրոյն մարմնոյ, յայտ է զի զնոյն աստուած համա-
գամայն և մարդ, Նզովեալ եղիցի։

Գ։ Եթէ ոք ի վերայ միոյն Քրիստոսի որոշեսցէ զանձ-
նաւորութիւնսն յետ միաւորութեանն միայն հպեցուցանելով
զնոսա ըստ յարակցութեան՝ որ ըստ պատուոյ, այսինքն ըստ
իշխանութեան կամ զաւրութեան և ոչ յաւէտ ժողովմամբ ըստ
միաւորութեան բնաւորականի, Նզովեա՛լ եղիցի։

Դ։ Եթէ ոք երկուց դիմաց, այսինքն անձնաւորութեանց
զորս յաւետարանականսն և յառաքելականսն գրեալ բաժանէ
ձայնս, կամ՝ ի վերայ Քրիստոսի առ ի սրբոցն ասացեալս կամ
ի նմանէ յաղագս իւր, և է ինչ որ մարդոյ առանց Աստուծոյ
Բանին յատկապէս իմացելոյ հպեցուցանէ, և է ինչ զորս,

Digitized by Google

որպէս աստուածվայելուչս միայնոյ Աստուծոյ Բանին, Նզովեա՛լ եղիցի։

Ե։ Եթէ ոք՝ յանդգնեսցի ասել աստուածապզեստ մարդ զՔրիստոս, և ոչ յաւէտ Աստուած զոլ ըստ ճշմարտութեան, որպէս մի որդի բնութեամբ, ըստ որում եղև մարմին Բանն, և հաղորդ եղև մեզ մերձաւորապէս արեան և մարմնոյ, Նզովեա՛լ եղիցի։

Զ։ Եթէ ոք ասիցէ Աստուած կամ Տէր զոլ Քրիստոսի զառ ի յԱստուծոյ Հաւրէ Բանն, և ոչ յաւէտ զնոյն խոստովանի Աստուած համանգամայն և մարդ, որպէս մարմին եղելոյ բանին ըստ գրոց. Նզովեա՛լ եղիցի։

Է։ Եթէ ոք ասէ, որպէս մարդ ներգործիլ առ ի յԱստուծոյ Բանէն զՅիսուս, և ի Միածնին փառաւորութիւն հպիլ, որպէս այլ զոլով բան զնա. Նզովեա՛լ եղիցի։

Ը։ Եթէ ոք յանդգնեսցի ասել, առեալ մարդ երկրպագակից պարտ զոլ լինել Աստուծոյ Բանին և փառաւորակից, և ընդ նմա երևիլ Աստուած, որպէս այլ յայլում; և ոչ յաւէտ միով երկրպագութեամբ պատուէ զնմանուէն. Նզովեա՛լ եղիցի։

Թ։ Եթէ ոք ասէ, զմի Տէր Յիսուս Քրիստոս փառաւորիլ առ ի Հոգւոյն, որպէս այլոյ զաւրութեամբ ինչ ի ձեռն Նորա փառաւորեալ և առ ի նմանէ առեալ զներգործելն կատարել ի վերայ այսոց պղծոց, և կատարիլ ի մարդիկ զաստուածային նշանս, և ոչ յաւէտ իւր Նորա զՀոգին ասէ, որով և ներգործեաց զաստուածայինն նշանսն. Նզովեա՛լ եղիցի։

Ժ։ Քահանայապետ և առաքեալ խոստովանութեան մերոյ զՔրիստոս լինել ասէ աստուածայինն գիր, և մատոյց վասն մեր զինքն ի հոտ անուշից Աստուծոյ և Հաւր։ Արդ եթէ ոք քահանայապետ և առաքեալ մեր լինել ասէ, ոչ զինքն յԱստուծոյ Բանն յորժամ եղև մարմին, և ըստ մեզ մարդ, այլ որպէս այլ բան զնա յատկապէս, կամ եթէ ոք ասիցէ և վասն իւր մատուցանել նմա զպատարագն, և ոչ յաւէտ վասն մեր միայնոյ, քանզի ոչ արդեաւք լինէր կարաւտ պատարագի որ ոչն գիտաց զմեղս, Նզովեա՛լ եղիցի։

ԺԱ։ Եթէ ոք ոչ խոստովանի զՏեառն մարմինն կենդանարար զոլ, և իւր Նորա յԱստուծոյ Հաւրէ Բանին, այլ որպէս այլոյ ուրուք բան զնա ընդ նմա զոլով ըստ արժանաւորութեանն, այսինքն, որպէս միայն աստուածային բնակութիւն ունելով, և

Digitized by Google

ոչ յաւէտ կենդանարար ոչպէս ասացի, զի եղև իրրև Բանին զամենայն կենդանագործել կարողին, նզովեա՛լ եղիցի։

ԺԲ. Եթէ ոք ոչ խոստովանի զԲանն Աստուած չարչարեալ մարմնով, և խաչեալ մարմնով, և զմահ ճաշակեալ մարմնով, եղեալ անդրանիկ ի մեռելոց, ըստ որում կեանք և կենդանարար որպէս Աստուած, նզովեա՛լ եղիցի։

Արդ ամենայն Նեստորական չարամտածութեան ի ներքոյ ընթացք ի ձեռն այսոցիկ նզովիցս նախ քան զարմատանալն ի բաց խլի, և առաջի արկելովքս նորա ըստ ճշմարտութեան բանի, անգայթակղութեան առիթ լինի ամենեցուն, որք զուղղափառութիւնն սիրոցն և ոչ ի նանիր պատառել ձեռնարկեն ի վերուստ անկեալ պատմուճանն Քրիստոսի, այսինքն զնորա հաւատոյն ողջանդամութիւն։ Քանզի եթէ զայն Նեստոր զճշմարտապէս դժնդակն աւձ փախուցեալ, որպէս Եսայի ասէ, այսինքն զճշմարտութեանն պատճառս ի բաց ընկենուլ ի Նստել կարթիւ զլորմամբ, այսպիսեաց բանից միայն որ ասաց մեծն Կիւրեղ. յոր ոչ կարաց զկանաչանախոհ չարութիւնն իւր ցուցանել, այսինքն հնարել ինչ առ ճշմարտութիւնն, զի՞արդ զլոմք յամենեցուն այսոցիկ խոստովանութեամբ ոչ զանպարտաւորութիւն յամենեցունց տարցի, քանզի և իւր Նեստորի, եթէ զայսոցիկ ձայն խոստովանութեան էր ընկալեալ, ոչ արդեաք լինէր ի բաց ընկեցեալ յեկեղեցւոյ, այլ և հաղորդակից զնա և եպիսկոպոսապետ համարէր Կիւրղոս ըստ որում և յիւր թուղթսն գրեաց։

Այլ մեք ի խորհուրդս մեր սրբազան հիմն կառուցեալ զայսոցիկ ուղղափառ գլխոցս զաւրութիւն զամենայն աւրինաւոր ձայն ի միտս ի մէնջ յառաջ բերեալ շինել ի վերայ նորա ճեպիմք, և երկուս բնութիւնս խոստովանելով ի վերայ Միածնի Որդւոյն Աստուծոյ Տնտուն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յետ ըստ ամենայնի նմանելոյ նորա մեզ առանց մեղաց ոչ այլ ինչ ասեմք կամ իմանամք։ Բայց միայն զի Աստուած զոլ վ և Հաւր համագոյ, մարդ եղև ճշմարտապէս մարդկան համագոյ, այսինքն միջնորդ Աստուծոյ և մարդկան, յինքն միաւորեալ մարդկային բնութիւն, այսինքն ընդ իւրոյ Աստուածութեանն, ոչ ի բաց բարձեցելոյ այսոցիկ տարբերութեանց և յետ միաւորութեան, այլ մի դէմ մեզ և մի անձնաւորութիւն ցուցեալ Աստուած ըստ ճշմարտութեան մարմնացելոյ և կատարելապէս մարդացելոյ,

Digitized by Google

քանզի նախ քան զմիաւորելն, այսինքն միանալն Միածնի Բանին Աստուծոյ ընդ մերոյս բնութեան, միով և միայնով բնութեամբ զոլ զնա հաւատամք, այսինքն աստուածութեան էութեամբ, ըստ որում Հաւր և Հոգւոյն սրբոյ համագոյ։ Իսկ երկու բնութեամբ յետ առնելոյն զոր ի մերոյս զանգուածոյ, այսինքն որպէս Աստուածութեամբն կատարեալ, այսպէս մարդկութեամբն կատարեալ՝ և գիտեմք զնա և քարոզեմք, որպէս ի նոցունց յայսցանէ յերկուց բնութեանցս մի որդի և Քրիստոս զնոյն ծանուցեալ։ Ուստի և զմի բնութիւն ասել Բանին Աստուծոյ մարմնացելոյ, որպէս նորին զոլով մտածութեան, նոյնպէս ընդունիմք և խոստովանիմք։ Քանզի ի ձեռն ասելոյն մարմնացեալ՝ այլ էութեան քան զԲանին բնութիւն յայտնումն՝ ըստ սրբոյն Կիւրղի մուծանեմք, քանզի ոչ երկուս բնութիւնս մարմնացեալս ասեմք, այլ մի նորին բանին, այսինքն զնոյն Աստուածն Բան մարմնանալ մարմնով հոգի ունաւղ և բանականաւ իմանալի։ Եւ բնութեանցն իւրութիւնսն խոստովանելով. ոչ այլ ինչ ժողովել յայսմանէ ախորժեմք, բայց զի մարմին առեալն յԱստուծոյ էութենէն ոչ աստուածութեան բնութիւն եղև, և ոչ զզոլն մարմին ի բայ եթող։ Եւ աստուածութիւնն մարմին հոգևոր, հոգի բանական և իմանալի յինքն միաւորեալ ըստ անձնաւորութեան, ոչ ի մարմնոյն փոխադրեցաւ բնութիւն, և ոչ բնաւին ինչ յիւրոց փառաց էն եղծ կամ փոխադրեցաւ, քանզի այսպէս խորհել մեզ յաղագս նորա ասել, սրբոց հարցն ուսուցանեն բանք։

Եւ նախ քան զամենեսին իմաստունն Կիւրեղ յիւրութեանն որ ըստ բնութեանն ասելով մնացելոյ երկաքանչիւրին, այսինքն աստուածութեանն և մարդկութեանն զոլ միաւորութեան և սասց զայս ուսուցանելով մեզ, թէ ոչ փոխադրութիւն ինչ միաւորեցելոյ ի ձեռն միաւորութեանն եղև, այլ մնաց իւրաքանչիւր ի նոցանէ զիւրոյն բնութեան անփոփոխութիւն պահելով։ Նոյնպէս և Կիւրղի ուսուցիչն և վարդապետ մեծն Աթանասիոս զնոյն ճանապարհ ունի այսպիսեաց բանից և մտածութեանց, որոց զվկայութիւնսն զկնի այսորիկ դիցուք։

Արդ երկու բնութեամբք ասել զմիածին Բանն Աստուած Տէր Յիսուս Քրիստոս ի Քաղկեդոն ժողովեցելոցն Զ.Ճ. և Լ. ից հարց ըստ այսմ մտածութեան իմանալ նոցա և զնել խորհիմք և հաւատամք, ըստ որում և խոստովանիմք զնոյն ինքն Փրկիչն

Digitized by Google

մեր և Տէր, և աստուածութեամբն կատարեալ, և մարդկութեամբն կատարեալ, վասն զի և երկուց բնութեանցն զմի և զնոյն խոստովանելով յաստուածութենէ և ի մարդկութենէ ասեմք։ Եւ վկայէ մերոյս բանի յաղագս այսորիկ որ յետ նոցա յայսմ յաստուածապահ և յարքունական քաղաքի եղեալ. Ե. երրորդ սուրբ ժողովն, յիւրումն սահմանի գրեալ այսպէս. Եթէ ոք երկուս բնութիւնս խոստովանելով, ոչ որպէս աստուածութեամբ և մարդկութեամբ զմի Տէրն մեր Յիսուս Քրիստոս ճանաչել խոստովանեսցի, զի ի ձեռն այսորիկ նշանակեսցէ զկանանչութիւն բնութեանցն, յորոց անշփոթարար անպատմելի միաւորութիւնն եղև, ոչ Բանին ի մարմնոյ փոխադրեալ բնութիւն, և ոչ մարմնոյն առ Բանին բնութիւն տարեալ եղեալ, քանզի մնայ յերկաքանչիւրսն որ ինչ են բնութեամբ, և եղեալ միաւորութեանն ըստ անձնաւորութեանն, այլ ըստ անջատման որ ըստ մասին, զայսպիսիս առնու ձայնս Քրիստոսի խորհրդոյն, կամ զմիւ բնութեանց խոստովանելով և ի վերայ նորին և միոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ Բանին մարմնացելոյ, և ոչ տեսութեամբ միայնով զկանանչութիւն այսոցիկ տեսանելով, յորոց և շարադրեցաւն. ոչ ի բաց բարձեցելոյ վասն միաւորութեան, քանզի մի յերկաքանչիւրիցն, և միով երկաքանչիւրքն, այլ որ այսուիկ վարի թուով որպէս որոշեալս, և առանձին անձնաւորութեամբ զոլ զբնութիւնսն, այնպիսին նգովեաց լիցի։

Արդ հանրական ձայնիւ մեկնեալ զմիտս զերկու բնութեամբք խոստովանելով զՏէր մեր Յիսուս Քրիստոս, յորոց ի Քաղկեդոնն ժողովելք, ոչ կարեմք հաւանեցուցանել զմիտս մեր, առանց դատապարտութեան լինել առ ի յԱստուծոյ, առ այս ընդդիմաբանութեանն որք ոչն ընդունին և խոստովանին անյերկուաբար զայսպիսի ձայնս։ Քանզի ոչ պարզաբար ասացին սուրբ հարքն երկու բնութեամբ ճանաչել զՔրիստոս, այլ ամենայն ուստեք փակեալ զմիտսն Նեստորի զՄիածինն Աստուած Բանն այսորիկ ճանաչել ասացին, զի մի ոք ըստ նորա ամպարշտութեանն ասել ձեռնարկիցէ, եթէ Քրիստոսդ և Տէրդ անուն ըստ իրիք համանունութեան և արժանաւորութեան հաւասարութեան Բանին Աստուծոյ և որոյ ի զաւակէն Դաւթի ըստ անջատման կոչի։ Այլ ասելով զՄիածինն Աստուծոյ Բան երկուք բնութեամբք ճանաչիլ, զնորա չարափառութեանն մտածութիւն

ոչ փոքր ինչ ելոյծ, որ և յորս յառաջագոյնն բաւականապէս զգուշացեալք զբարեպաշտութեանն անարատութիւն նախ քան զ յաւիտեանս ծնանելոյն Նորա ի Հաւրէ, ըստ աստուածութեանն յստակ խոստովանիլ, և ի սրբոյ կուսէն և Աստուածածնէն Մարիամայ զնոյն ինքն ըստ մարդկութեանն։ Զորս ձայնս որպէս պատերազմիչս իւրոցն կարծեաց, և ոչ սուղ ինչ ի լսելիս իւր երբեք ընդունել յանձն էառ Նեստոր, այլ խցեալ զականջս իւր առաւել քան զորս ի վերայ Ստեփանոսի նախավկային սպանողաբար ժողովեալքն, յաւէտ որպէս իժի քարրի խցեալ զականջս իւր զիմովչին ճարտարի զաստուածայնոյ առնն զփրկական աւանդութեանցն ձայն ոչ լուեալ։ Քանզի արդար և երանելի պրն այն յառաջնումն թղթին որ առ նոյն Նեստորիոս գրեալ ի նմանէ, զայս խնդրէր առ ի նմանէ պսպէս ասելով. Քանզի թէև ճառեցաւ բան ի ժողովուրդ ընթացեալ, այլ ուղղեսցի այցելութեամբք. և արժանաւորեա շնորհել բան գայթագղեցելոցն Աստուածածին անուանելով զսուրբ կոյսն, զի ուրախացուսցես զտրտմեալսն, և ուղիղ փառս ունելով առ ի յամենեցունց խաղաղութեամբ և համաձայնութեամբ ժողովրդոց կատարեսցուք զլտաւնս։ Նոյնպէս և ի թղթին որ առ արևելեանսն ասէ այսպէս, նոյն երանելիս Կիւրեղ. Քանզի պարտ էր նոցա զմտաւ ածել, զի գրեթէ ամենայն որ յաղագս հաւատոյ հանդէս մեր ժողովի հաստատելով թէ Աստուածածին է սուրբ կոյսն։

Իսկ եթէ բնաւին երկուս բնութիւնս ասելն, որպէս մինչ Նեստորի այսպիսեաւ ձայնիւ վարեալ գայթագղութիւն առնէ բաղմաց, որ զայսն ածէ զմտաւ՝ իմասցի նախ ի սրբոյն հարց զոլ զձայնս զայս, և եթէ ոչ է պարտ վասն որոց չարաչարն իմանան զբարեպաշտութեամբ ասագեալսն, զայսոսիկ ուրանալ զուղղափառութեանն բանս, վասն զի և Արիանոսայն բառս ինչ ի գրոց սրբոց առ իւրեանց չար մտածութիւնսն առեալ, և ի ձեռն այսոցիկ փորձեալ զառողջութիւն հաւատոյն որ ի սուրբ Երրորդութիւնն շարժել, ոչ ուրուք որք յետ նոցայն ի բանս իւրեանց յառաջաբերելոյն զայն հրաժարեցին։ Այլ և Կիւրեղ, որ առ նոյն Նեստորիոս պատերազմն էր յԵփեսացւոց ժողովին, յորս չատագովն էին նմա ի հայրականսն վարդապետութիւնս, զմեծին Գրիգորի Աստուածաբանի երեր բանս յառաջ, որ են այսոքիկ. Եթէ ոք ի ներքս բերէ երկուս որդիս, առաջին՝ զոր յԱստուծոյ և ի Հաւրէ. իսկ երկրորդ՝ զոր ի Մարիամայ, և ոչ մի

և զնոյն յորդեգրութենէն արտաքս անկցի, զոր խոստացաւ ուղիղ հաւատացելոցն։ Բնութիւնք երկու, քանզի Աստուած և մարդ, վասն զի հոգի և մարմին, բայց որդիք ոչ երկուք և ոչ աստուածք, զի և ոչ աստանաւր երկու մարդք, թէ և այսպէս Պաւղոս զներքին մարդոյն և զարտաքին անուանեաց։ Եւ ոչ այս միայն, այլ և առ Սեկունդոս յառաջին թղթին հաւաստեաւ երկու բնութիւնս ի վերայ Քրիստոսի խոստովանեաց ասելով, Ապա ուրեմն որքան եկն ի մտածութիւն և է միայն տեսանել հոգւոյ ակամբ, թէ զինչ եղանակաւ մարդացաւ Միածինն։

Երկու բնութիւնս գոլ ասեմք միաւորեալս, բայց մի Քրիստոս և Որդի և Տէր զԲանն Աստուծոյ, մարդացեալ և մարմնացեալ, ոչինչ ի ձեռն այսպիսոյս բանի ուսուցեալ մեզ, բայց միայն զոր ինչ ի հինգերորդ սուրբ ժողովն ուսաք ըստ միայն տարբերութեան միաւորեցելոցն իմանալ, գայսոսիկ խոստովանել, որպէս և ինքն իսկ ի թղթին առ Ղէգէոս ասաց, եթէ Նեստորիոս յասելն երկու բնութիւնս, զլանպանութիւն նշանակելով մարմնոյն և աստուածութեանն, քանզի այլ է Բանին և այլ մարմնոյն բնութիւնն, ոչ ևս և զմիաւորութիւնն խոստովանելով ընդ մեզ, ստուգաղոյնս եբեր ի վերայ, եթէ մեք զայսոսիկ միաւորեալ մի Որդի, մի Տէր, և մի Քրիստոս խոստովանիմք. և որպէս հարքն ուսուցին մի բնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ, քաջայայտ և առանց ընդդիմաբանութեան, եթէ միաւորութիւնն զլանպանութիւնն ոչ ի բաց եբարձ. վասն որոյ և երկուս ասեմք բնութիւնս, իսկ մի բնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ. յայտ է զնորին բնութեան միածնին միաւորելն յինքն ըստ անձնաւորութեան բնութեան մարմնոյ, յայտ է զի հոգևորի և իմանալոյ։

Արդ բաղում ինչ և այլ բանս յաղագս այսոցիկ ունել ասելով առ ի հաւանութիւն մեզ ուղիղ և անարատ հաւատոյս, և յանդիմանութիւն առ որոց ոչ առողջապէս, և ոչ բարիոք անձանց իւրեանց զանջատումն եկեղեցւոյ Աստուծոյ հնարին առնել՝ այսոքիւք շատասցուք, խոյս տուեալ յերկպայութենէ զրոյ և Սողոմոնի հաւանեալք ասելոյն, եթէ Տո՛ւր պատճառս իմաստնոյն, և իմաստնագոյն լիցի։

Իսկ և յաղագս ներգործութեանց և կամաց կամաւորապէս արկանել ի ձեզ հոգևորականդ սեղանաւորս զհաւատացեալն մեզ տաղանդ բանի փութասցուք, զի անցեալ Տէրն ի

ձէնչ խնդրեսցէ հանդերձ տոկոսաւոր զիւրն, իսկ զմեզ ոչ իբրև զվատ ծառայս դատապարտեսցէ։ Ասեմք այժմ ի վերայ Քրիստոսի երկուս ներգործութիւնս, նշանակելով զմինն և զերկոսին ներգրծել և որպէս զմարդ, և որպէս զԱստուած, որպէս զԱստուած՝ զԱստուածայինսն, և որպէս զմարդ զմարդկայինսն. զերկաքանչիւրսն ընդ միւսոյն կցորդութեան և ոչ որոշաբար և անջատապէս, այլ ի ձեռն եղելոցն որ ինչ էրն հաւատարմացուցեալ. այսինքն թէ Աստուած ճշմարիտ և մարդ անսուտ, և ոչ ըստ ցնորիցս ցուցեալ։ Քանզի վասն ոչ հաւատալոյն ի նա Հրէիցն և ասելոյ, Վասն էր դու մարդ ես և առնես զանձն քո Աստուած, և զզերաբուսնն աստուածային նշանս ցուցանելով ասէր, Եթէ ոչ գործեմ զգործս Հաւր իմոյ մի հաւատայք յիս, իսկ եթէ գործեմ, թէ և ինձ ոչ հաւատայք սակայն գործոցս հաւատայէք, զի գիտասջիք և հաւատասջիք եթէ Հայր յիս, և ես ի Հայրս։ Իսկ առ որս յետ այնորիկ հանդերձեալ էին երևել հերձուածողս և արհամարհել ըստանաւրէնութեան նորա խորհուրդ, յառաջագոյն զգուշանալով ճշմարտութեանն. թոյլ տայր մարմնոյն ներգործել զիւրսն յորժամ և կամէր, որպէս և սուրբն Գրիգորիոս ասաց Նիւսացւոյն եպիսկոպոս, այսինքն զանանդոսնելի գործս մարմնոյ և կիրս, ի հաւատարմութիւն անընդդիմանալի, ճշմարտապէս անդրանիկ լինելոյն նորա ի բազում եղբարս, և մերձաւորապէս հաղորդ լինել մեզ մարմնոյ և արեան։ Ուստի և յետ անապականութեամբ յարութեան մարմնոյ նորա զնորին ընութիւնն հաւատարմացուցանելով ըստ մեծին Բարսղի ի կերակուր հպել արժանաւորաց։

Արդ Աստուած յաւիտենական որ միահամուռ ունի զծագս երկրի, որպէս Եսայիաս զոչէ, ոչ քաղցիցէ և ոչ ծարաւեսցի. սա և՝ քաղցեաւ և՝ ծարաւեցաւ մարմնով իւրով։ Եւ դարձեալ տեսեալ մարդ զաստուածութեանն գործէր գործս, զի այս իսկ էր ըստ իմանալոյն, և զայս իմաստունն Կիւրեղ խրատէ զմեզ ի գանձին այսպիսի ինչ ասելով. մի Քրիստոս քարոզեն աստուածային գիրք. քանզի մի է Աստուած Հայր, և մի Տէր Յիսուս Քրիստոս, քանզի ի գործոց յորքան ինչ վայել է միայնոյ Աստուծոյ ճանաչի Աստուած։ Իսկ վասն զի մարմին եղև Բանն, ըստ որում գրեալ է, պարտ էր և մարդ երևիլ, և ոչ էր այլուստ տեսանելի այսպիսի. բայց միայն ի մարմնոյն անրամբա-

Digitized by Google

սեցեալն կրից և բանից կարևորապէս, և զմարդկան վայելուչն գործէր և խաւսէր, զի արդարև ցուցցի և մարդ եղեալ և յետ սակաւուց. Քանզի Աստուած էր ճշմարիտ մարմնով և մարմին ճշմարիտ Աստուածութեամբ։

Արդ՝ որովք պարտն էր ճանաչիլ Աստուած, զայնոսիկ աստուածարար ներգործէ, և յորոց էրն կարևոր արդարև մարդ երևիլ, զայնոսիկ գործէ և խաւսի տնաւրինելով զևորհրդոյն ճշմարտութիւն։ Արդ մի ոք զմեզ այսինքն զԱստուծոյ եկեղեցիս ձեռնարկեսցէ բամբասել, որպէս այսպիսեաւք վարեալ ձայնիւք, ի հասարակաց խոստովանութեան հաւատոյս զմտաւածելով թէ ո՞րպէս ի ձեռն Արիանոսացն չարամտածութեան, և զուղիղ բանն առ իւրեանց գրել հերձուած, որք ի Նիկիա ժողովեալ սուրբ հարքն մեր, որպէս մեծն ասայ Աթանասիոս, հետաքննին եղեալք զհամագոյն եդին բառ, յաղագս որոյ հնարագիւտ ինչ լինել Արիանոսացն, ոչ ուրեք եղև կար։ Եւ զարձեալ զհաւատոյս նշանակ որ միշտ յեկեղեցւոջ Աստուծոյ ասի. խոտորեալ մտածութեամբ առեալ Նեստորի, սրանչելին Կիւրեղ զքստ անձնաւորութեանն միութիւն եմոյծ ի ներքս։ Այսպէս և որ ի Քաղկեդոնին, և Հռոմայեցւոցն առաջնորդ երանելին Լևոն, չարախոհ ծերոյն Եւտիքեայ ի վեր երևեալ, և մերոյս բնութեան զոլ զՏեառն մարմին ասել ոչ առեալ յանձն, այլ յետ միաւորութեանն. մի բնութիւն մարմնոյն և աստուածութեանն դանդաչեալ, կարևորապէս առ ի բաց բարձումն նորայոցն ցնորական, և երկուք բնութեամբք ճանաչել զՄիածին Աստուծոյ Բանն՝ ուսուցին, և զերկարանչիւրն բնութիւն ներգործել ընդ միւսոյն կցորդութեան, զոր ինչ իւրն ունէր՝ ընկալան, զի ի զանազանութենէ ներգործութեանցն, զանազանութիւն բնութեանցն մերոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ծանիցի։ Քանզի ի ներգործելոյն բնութիւնն ճանաչի, որպէս երանելիքն Կիւրղոս և Նիւսացոցն Գրիգորիոս ուսուցին ի բանն իւրեանց։

Իսկ և վասն կամաց զճշմարտութիւնն ասել ոչ է դանդաղելի, որպէս և ոչ զայն պարզաբար և առանց քննելոյ իրաւացուցաք զերկուց կամաց ձայնն. ի ժամանակս մեր այսպիսի խնդրոյս շարժեցելոյ. յորժամ լռել առաջնորդաց եկեղեցւոյ Աստուծոյ ոչ էր կարողութիւն, այսպիսոյս ձայնի հրապարակագրութեամբ եղելոյ, յունայնավայելուչս աւձտել զմարմնս

Digitized by Google

եկեղեցւոյ Աստուծոյ կարողի։ Այլ նախ կի և ոչ սրբոց հարցն է անկուռ ճանապարհ երկուց կամաց ճառումն, և ապա վասն որոյ ձեռնարկեցին, մի ներգործութիւն ասել Քրիստոսի, և ըստ գանխլութեան նմին ի ներքս բերեալ յառաջին և զգլխաւորն ներգործութիւնն մարդոյ, զիմացողականն ասեմ և կամեցողական, ոչ տեսանիլ ի նմա յառաջին զմերս ի Բանին Աստուծոյ առ ի բժշկութիւն և վերաստեղծումն, զոր պարտ էր և նախ քան զայլսն առնուլ նմա։ Որպէս յառաջագոյն աստուածեալ զմեղացն հիւանդութիւնն և զբոլորն մարդ ժանդացուցեալ, քանզի բնութիւն անմեղ և կամ անձնիշխան արար զԱդամ։ Իսկ զբնուստն Աստուած, որպէս սքանչելին Աթանասիոս ասաց։ Արդ կամեցողական զնոյն զմի Տէրն մեր ըստ երկաքանչիւրին բնութեան զոյ քարոզել աստուածելով, և ցուցանել թէ և զկամելն առեալ ըստ մարդկային մտաց, ոչ հակառակ իւր ստացաւ զայն, այլ այն բոլորն աստուածացաւ, անշեղելի գոլով առ մեղս բոլորովին. և աստուածանալոյն ոչ ի բաց բարձումն մուծեալ բնաւորականին կամաց, այլ զայն ի յայտնի կացուցեալ հաւաստեաւ, զոր ինչ և վասն նորին Փրկչին մարգարէն ասէ, թէ Նախ քան զգիտել մանկանն զբարի կամ զչար՝ անհասանելին ի չարութիւնն ընդրելով զբարին վասն փրկութեան ազգիս մերոյ զմահն կամաւորութեամբ հաճեցաւ։ Բայց ունէր բնաւորապէս և զչկամելն մեռանել վասն հրաժարելոյ մարմնոյն, ըստ ի սկզբանէ եղելոյ ի նմա ստացողէն զբնութիւնն զահն բնաւորապէս։ Զայսպիսիս ձայն, որպէս ասացի, ի հարցն իչեալ առ մեզ ընկալաք ոչ ընդդիմացումն ինչ խորհրդոյն ի ձեռն այսորիկ մուծանել աստուածելք, մի լիցի, քանզի թէև տրտմեցաւ և անզիտացաւ, և առ մահն զչկամելն եցոյց ի ժամանակի չարչարանացն, այլ ըստ հաճութեան Բանին ընակեցելոյ ի մարմնին այսոքիկ կամեցողականեաւ որ ի նորին մարմնին գործիւր, յորժամ ըստ որում մինչև կամէր տայր մարմնոյն զիւրսն ներգործել, որպէս և գրեալ է։ Քանզի բնութեանն բանիւ ստացեալ է զկալումն չկամելոյն զմահ բնաւորապէս, կալմեաց զնա երկիւղած ի մահուանէ, քանզի ոչ արդեւք էր ասացեալ ցնա սպառնալեաց բանիւ. եթէ Ցաւուր յորում ուտիցէք ի նմանէ մահու մեռանիցիք. եթէ ոչ էր կալմեալ ի նմա զմահն ահագին գոլ։

Արդ և Տեառնն հոգի ըստ բնութեանն զչկամելն ունէր

առ մահն. իսկ ըստ տնաւրէնութեանն Բանի ամենեին կամ-
ցողապէս և յարձակողաբար, ուստի և իւրոց աշակերտացն ասէ,
Ցանկանալով ցանկացայ ընդ ձեզ ուտել զվատիկս նախ քան
զչարչարել իմ, այսինքն զվախճան խորհրդոյն։ Եւ առ չարչա-
րանան զկամաւորութեամբն գալ յայտնելով. և դարձեալ եթէ,
Բաժակ մի ունիմ ըմպել, և զինչ փութամ մինչև արբից զնա,
և մկրտութիւն մի ունիմ մկրտել, և զի՞նչ փութամ մինչև կա-
տարեցայց։ Արդ ի ձևի այսոցիկ ուսանիմք ըստ իմաստնոյն Կիւր-
ղի թէ զբնաւորապէս չկամելն աստուածավայելչաբար ըստ մեզ
զբնութիւնն ի Քրիստոսի կամեցողական արար։

Արդ՝ գասացեալս ամենայն վերստին ի ձեռն առեալ, և
համառաւտ զմերոյս ասացուածոյս յայտնումն արարեալ, ասեմք,
թէ Աստուած մարդ եղև, ոչ մարդ էառ. որպէս Նեստորի
թուեցաւ. քանզի Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ, ոչ
ցնորիւք երևեալ և ոչ ստուերի տեսակաւ արարեալ զցուցումն,
այլ բնութեամբ և ճշմարտութեամբ եղև մարդ, զի ի ձեռն
պտղոյն բոլորն սրբեսցի մարդկանոյս ապգի զանգուած. և ունի
զոր մատուցանէ վասն մեր, որպէս մեծ առաքեալն ասաց։ Ուս-
տի անչարչարելի գոլով Աստուած, ոչ անարժան համարեցաւ
չարչարելի լինել մարդ. և անմահ գոլով ընդ մահու աւրինա-
կաւք լինել, զի իցէ նոյն ինքն չարչարեալ և ոչ չարչարեալ։
Չարչարեալ, զի իւրն նորա մարմին, զոր յարգանդի սուրբ կու-
սին և Աստուածածնին էառ, զբնութեանն անանգոսնելիս ե-
ցոյց կիրս, և զորս ի ժամանակի փրկական չարչարանացն ի
խաչահանուացն ընկալաւ տանջանս։ Իսկ ոչ չարչարեալ, զի ո-
չինչ յաստուածութեանն բնութիւն կրէր, և ի չարչարելն կա-
մաւորութեամբ սրբոյ մարմնոյ նորա Արդ և ի խաչին էր
մարմնապէս, և եդեալ զանձն իւր յինքենէ ըստ իշխանութեան
իւրոյ, որպէս և ինքն Տէրն ասաց, և մեռեալ ելեալ մարմնոյն,
և ոչ միոյ ի նոցանէն որիշ էր աստուածութիւնն, այլ և բոլոր
էր յանշնչէ մարմնին որ կայր ի նոր գերեզմանին. և բոլոր
էր ի հոգւոյն որ կայր ի սիրտ երկրի. որով և որոց ի պա-
հեստի հոգւոցն երթեալ քարոզեաց, որպէս գլխաւորն առաքե-
լոցն ասաց։

Արդ՝ մի՛ ոք գայթակղեսցի ի մեզ պատճառելով զպատ-
ճառս մեզաց և մի զեկեղեցի Աստուծոյ որ ի մեզ հեգնեսցէ, որ-
պէս անջատումն և որոշումն աւանդելով Քրիստոսի խորհրդոյն,

Digitized by Google

և բառս ինչ ի սրբոց հարցն մերոց հատանելով և գողանալով չարակամաբար, ժողովեսցէ որ ինչ ճշմարտութեանն բան ոչ կացուցանէ յանդիման և առաւելապէս որովք վերանելին Լեւոն Հռոմայեցւոցն եղեալ նախագահ, և զնորայսն բանս ոմանք ընդ դայթակղութեամբ առնել ի նանիր և ոչ իրաւացի, զկնի այսորիկ թղթոյ գնոցա վկայութիւնս կատարեալ իմացուածով յառաջ բերցուք, որովք և ուղղափառութիւն նորա յայտնի լիցի, և որովք ախորժեն Նեստորի համախոհ ցուցանել զնա՝ ամաչեսցեն։ Իսկ եթէ ինչ ի Քրիստոս սէրդ ձեր ընդդիմացի զրեցելոցդ ի մէնջ, մի՛ դանդաղիցիք ի ձեռն թղթոյ և զմուեցեալսն ձեզ բարուք զոլ ընդունել. և յաղագս երկբայեցելոյն խնդրել բարւոք ընդրութեամբ պատասխանատրութիւն, քանզի պատրաստ եմք առ այս ըստ առաքելականի վարդապետութեանն։ Վասն զի և մեծն Աթանասիոս ասէ, Որք մեկնեն զոր ինչ ասենն, ոչ ընկենուլ ի բաց, այլ և ընդունել արժան համարեցաւ, քանզի այսպէս ասաց ի թղթին իւրում որ առ Եւսեբիանոս և Ղուկիփերա, և առ որս ընդ նոսայն։ Արդ այսոցիկ այսպէս խոստովանելոցս աղաչեմք զձեզ, զոր այսպէս խոստովանին և մեկնեն զբառսն զոր ասենն մի՛ դատապարտել, և մի՛ առանց քննութեան ի բաց ընկենուլ, այլ յաւէտ աղաչելով և աղերսելով յանկուցանել։ Արդ գիտելով եթէ յահեղ ատենին Քրիստոսի, ուրանաւր ամենայն բանք և գործք, այլ և որ ինչ ի մտածութիւնս մեր են, բննեսցին բանքս մեր այսոքիկ։

Digitized by Google

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ՝ ԶՈՐ ԳՐԵԱՑ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ԱՌ ՏԷՐ ԳԵՐՄԱՆՈՍ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊԱՒԼՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՆ, ՈՐՔ ԵՐԿՈՒ ՌՆՈՒԹԻՒՆՍ ԵՒ ԵՐԿՈՒՍ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՍ ԵՒ ԵՐԿՈՒՍ ԿԱՄՍ ԽՈՍՏՈՎԱՆԻՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ՈՐՔ Ի ԿԵՆԴԱՆԱՐԸՐ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՋՈՒՐ ԽԱՌՆԵՆ, ՀԵՏԵՒԵԱԼՔ ԺՈՂՈՎՈՑՆ ՔԱՂԿԵԴՈՎՆԻ։

Յոքնապատիւ հռչակելի փառաւորութեամբ յառաքելական ժամանեալ ծայրագոյն նախագահութիւն, Տէր Գերմանոս, վերատեսուչ հոգւոց մեծանուն և թագաւորական քաղաքիդ Կոստանդնուպաւլսի և տիեզերական հայրապետի։

Զ-Քրիստոսի խաղաղութիւնն առբերելով մեզ աւրինակ բարեպաշտութեան և առ միմեանս կապակցութեան հոգևոր սիրոյ և միաբանութեան հաւատոյ ներգրաբար բացայայտութեամբ ի ձերմէդ ընկալաք մեծանձնութենէ, որպէս մոլորելոց զՀետ ընթացեալ մեզ, ըստ աւրինակի քաջ հովուապետին ի վերայ լերանց զկորուսեալն խնդրելով. և յաւէտ յիրաւի։ Զի զսիրելոյն ի ճշմարիտ սիրողէն՝ փոխանորդեալ զաթոռ հայրապետութեանդ հետևաբար զնորին աւրինակ սիրոյ հայարապետութեանդ, և՝ ունել ճշմարտապէս և՝ քարոզել ձեզ հաւատամբ ոչ միայն նամեսական և մերձակայիցդ, այլ և բացականաց տարակացելոցն, նաև ուր ոչ անուանեցաւ Քրիստոս, զի դոյն իսկ կոչեցարուք հաշտեցուցանել Քրիստոսի զամենեսեան ընդ Աստուծոյ ի պարծանս ձեր յաւուրն Քրիստոսի, զի յերևել ճշմարիտ հովուապետին զտանիցիք անթառամ պսակացն հաղորդ։ Իսկ մեք նուաղունք յապգ բացագոյն տարորոշեալք յոլորտս հիւսիսային ալեաց, և ոչ յոլով դեգերանաւք տեղեկացեալ իմաստութեանն ներանձնական կրթութեանն մակածութեամբք, և ոչ

Digitized by Google

բարձրայաւնական վարժից գործական և տեսական ճարտասանութեանն ճեմարանին ներհունք, նաև վերջացեալք ի գործառնութենէ երկասիրութեանն, և զանխլացեալք կոչողին ձայնի ի հոգևորականն այգի, ոլորեալք ըստ ժամանակին և յառանձնական տարիցն գծագրութենէ՝ որով զանկեալսն մարթէաք գիտել. և վերկայսս ապագայիցն թողուլ առ ի յիշատակ, անձամանչ աղչամղչաւ և անլոյս ստուերաւ պարփակեալ նստէաք ի խաւարի դիւցազանցն տաւնից և չշանցն հեթանոսականաց, հնապանդեալ ծառայէաք արարածոց և ոչ արարչի, դառնաշունչ հոտմամբ ձմեռայնւոյ պաղեալք անհաւատութեամբ, անբաժք ի պըտղոյ աստուածային արդասաւորութեանն։ Իսկ յորժամ քաղցրութիւնն և մարդասիրութիւնն Աստուծոյ կամեցաւ ծագեաց ի մեզ զարդարութեանն արեգակն և զհարաւ քաղցրութեանց վարդապետութեան Բանին կենաց ծաւալեցոյց, Ելոյծ զկարծրութիւն ստոամանեացն ի սրտից մերոց, և վարձկանեցոյց զմեզ թէպէտ հապիւ և անագան ուրեմն, սակայն մեռասաններորդ ժամուն հաղորդեալք, կոչեցաք ի կոչումն սուրբ ի ձեռն խոստովանողին Քրիստոսի սրբոյն Գրիգորի, որ սքանչելագործ գաւրութեամբն Աստուծոյ ընդ ամենայն երկիր ետ զբարբառ իւր, և մեծաւ հանդիսիւ չարչարանաց զպակասութիւն Ներդութեանն Քրիստոսի ի մարմնի իւրում ելից, և իբրև զորդիս սիրելիս վերստին կոչեաց զմեզ ի մահուանէ ի կեանս, ընծայելով երկրորդաւորս սրբոյ Երրորդութեանն, զոր ի դէպ է ասել, եցոյց մեզ զրանն կենաց, ընդ որ հայեցաք և տեսաք և խոստովանիմք և երկրպագեմք։

Եւ յետ այսորիկ յաստուածարեալ մեծի ժողովին Նիկիայ որ ի քաղաքն Արիոսի ՃԾԸ. իցն գտեալ խոստովանակիցն մեր սուրբն Առիստակէս, շառաւիղն ըստ մարմնոյ և հոգւոյ սրբոյն Գրիգորի, առեալ յԱստուծոյ զլուրն կենաց ետ մեզ գնոյն սահմանաւոր գրով զոր ունիմքս առանց յաւելման և պակասութեան։ Նոյնպէս և զժողովն որ ի Կոստանդինուպալիս որ ի կործանումն Մակեդոնիի, և զԵփեսոսին որ ի լուծումն Նեստորի, ընկալաք որպէս հիմն կենաց և առաջնորդ ճանապարհի առ Աստուած, և այսպէս ներփառական առասութեամբ ըստ տիեզերական երիցն ժողովոց ի մի բերան փառաւոր առնեմք զԱստուած։ Իսկ զժողովն Քաղկեդոնի, վասն զի ոչ ըստ սրբոց նախեղելոց վարդապետացն տեսանեմք ասացեալ, ոչ ընդունիմք։

Եւ վասն կի ընկալաբ մեղադրութիւն ի ձէնչ ի ձեռն Ստեփանոսի քահանայի բանիւ և գրով, եթէ ընդէր զանաւրէնութեանդ պատառէք պատմուճան, որ է մի հաւատն ի Քրիստոս, զոր հաստարձակագոյն ասասցուք, եղիցի գործողացն վարձն ի Տեառնէ, և վախճան նոցա յայրումն ո՞ ոք և իցէ։ Եւ վասն կի երդմնեցուցէք զմեզ թէ զոր արժանի ընդունելութեան համարիմք ի գրեցելոցդ խոստովանեցէք, և զոր հակառակ ճշմարտութեան կարծիցէք գրեցէք առ մեզ։ Արդ թէպէտ և ոչ գեղեցկագիր յարմարութեամբ ստորոգութեան կարացաք շարադասել ըստ ձերում արհեստագիտ վսեմախոհ վերտառութեան, սակայն զանտեսանելի մեր սրտի խորհուրդ մակերևապէս ընթադրութեամբ յանդիման կացուսցուք գերագոյնդ ձեր վարդապետութեան՝ որ ունի այսպէս։

Զնախակարգեալ ի մատենիս ձերում, զերկոտասան գլուխքս բանի զերանելոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ, ըստ սրբոց առաքելոցն հրեղէն լեզուաց աստուածխաւսութիւնսն նախապատուեմք և խոստովանիմք։ Իսկ առ ի ձէնչ ասացեալս, վասն զի գանխալաբար յինքեան բերէ զՆեստորի չար մտածութիւնս, ասելով երկուս բնութիւնս և երկուս ներգործութիւնս և երկուս կամս, և կի պատճառէք եթէ Եւտիքէս մի բնութիւն ասաց շրփոթեալ խառնակութեամբ, հարկաւորապէս գրեաց Լևոն Հռոմայեցի առ ժողովն Քաղկեդոնի, ասել երկուս բնութիւնս, և առանձնապէս կիրս նոցին։ Զինչ քան զայսոսիկ անտեղագոյն յաղթութիւն, չարիւ կչար բժշկել կամելով, և թիւրութեամբ զթիւրութիւն ուղղել. որ ոչ յայլ և ոչ յահեակ առաք հրաման խոտորել, այլ զմիջինն գնալ արքունական պողոտայ։ Եւ ոչ զի Սաբելիոս և Եւտիքէս շփոթարար միաւորեն, հարկ է զի արիոսաբար և Նեստորաւրէն բաժանեսցուք, այլ զերկոսեանն ի բաց վարել կողմանս իբր զապականիչս հաւատին Քրիստոսի, և զնոյն ինքն զաւանդիչս երկուց բնութեանց, և ընդդէմ դնել նոցա զասացեալսն ի սրբոց վարդապետացն, որ և զԵւտիքէսին պապանձեցուցանեն զրաբանութիւն, և զերկուցն ժողովումն մի բնութիւն սահմանեցին։ Քանզի սուրբն Աթանասիոս Աղեքսանդրացւոց եկեղեցւոյն վերատեսուչ յառ Ապողինար թղթին, մի բնութիւն Աստուծոյ բանին մարմնացելոյ՝ ասաց։ Զսոյն և հետևող նորին մեծն Կիւրեղ յորժամ եհարց ցնա Սուկենոս եպիսկոպոս Դիոյկեսարիայ քաղաքին, թէ պարտ է երկուս բնութիւնս ա-

Digitized by Google

սել Բանին մարմնացելոյ թէ մի. և նա յայտնապէս գրով պատասխանի առնէ թէ, յետ միաւորութեան ոչ անջատեմք զբնութիւնսն ի միմեանց, և ոչ յերկուս որդիս հատանեմք զմին և անբաժանելին, այլ մի ասեմք, և որպէս հարքն ասացին, մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ։ Ահաւասիկ յայտնապէս, որք երկուս ասեն բնութիւնս որոշեն զբնութիւնսն և յերկուս որդիս հատանեն, որպէս յայտ է ի հարցմանէդ և ի պատասխանւոյդ։ Եւ դարձեալ յերկրորդ թղթին առ Նոյն Սոկենոս. Այլ ասեն, ասէ, հակառակորդքն թէ մի բնութիւն է մարմնացելոյ բանին Աստուծոյ, հարկ է ամենայնիւ շփոթումն ընդունել և խառնակումն, որպէս ծախեցելոյ և ի ներրս զողացելոյ մարդկայնոյն բնութեան. և անդիտացան դարձեալ որք զուղիղն թիւրեն, եթէ ըստ ճշմարտութեան է մի բնութիւն բանին մարմնացելոյ։ Եւ դարձեալ նոյն Կիւրեղ զրէ առ Եւլոգիոս քահանայ. Արդ եթէ ասեմք, ասէ, միաւորութիւն, խոստովանիմք թէ մարմնոյն հոգևորի իմանալոյ և Բանին, սակայն զմիութիւնն խոստովանեցելոյ, ոչ ևս մեկուսին ի միմեանս միաւորեալքն, այլ մի որդի այնուհետև, և մի բնութիւն նորա։ Եւ դարձեալ զրէ առ Թէոդոս թագաւորն բարեպաշտ, Թէպէտ և ի զանազանից, ասէ, և յաննմանից եկեալ առ միմեանս բնութիւնք, մի Քրիստոս, մի Որդի, մի բնութիւն խոստովանելի հանդերձ առեցելովն։ Զնոյն գրելով և առ Ակակիոս եպիսկոպոս Մելիտինեայ, Հետևելով, ասէ, ամենայն ուրեք աստուածայնոյն գրոց՝ ի սրոց կուսէն առնուլ զմարմինն հաստատեմք այսուիկ. յորոց են մին և միայն որդի և Տէր Յիսուս Քրիստոս երկուս բնութիւնս միաւորեալ ասեմք. իսկ յետ միաւորութեանն որպէս ի բաց բարձելոյ յերկուս հատմանս մի զոյ հաւատամք զՈրդւոյ բնութիւն։ Ահա զոյցք յայտնիք, թէ հակառակաբար ունին ի ձէնջ ասացեալքս առ սրբոցն հարանց դաւանութիւն։

Դարձեալ տեսցուք և յաղագս երկուց ներգործութեանցդ, զոր համբաւէք, թէպէտ և նախ զկամն ասելի է, և ապա զներգործելն, այլ վասն զի այս կարգեալ էր ի մատենիս ձերում ըստ այսոցիկ և զպատասխանիս ընկալարուք։ Ասէք սահմանել Ղևոնի, ժողովոյն Քաղկեդոնի, զոր և գրեցէքս առ մեզ, թէ և ներգործէ երկաքանչիւր բնութիւնն ի նոյն հաղորդութեամբ։ Եւ անուանեալն ի ձէնջ վեցերորդ ժողովն, դարձեալ հաստատեն զնոյն սահման թէ երկաքանչիւրն բնութիւն կամի և ներ-

գործէ, վկամէն յաւելին յասացեալն Ղեւոնի։ Եւ այժմ դարձեալ գրէք թէ, մի և նոյն երբեմն որպէս մարդ ներգործէ, և երբեմն որպէս վԱստուած, որովք գրեթէ, մարտ եդեալ ընդ միմեանս պատերազմին ասայեալքս ի ձէնջ, քանզի այլ է ըստ երկաքանչիւրոյն ներգործել, և այլ երկաքանչիւրի վիւրաքանչիւրսն, զի մին հակառակիցէ և երկուց իշխանականաց կամ գիմաց, և միւսն միոյ, և որպէս կամեսցի միով իշխանութեամբ ներգործել։

Արդ տեսցուք և յաղագս այսորիկ զառ ի սրբոց Հարանցն ասացեալ վարդապետաց։ Ասէ երանելին Աթանաս ի չորրորդ ճառին առ Արիանոսսն, Եւ բանն զմարմնոյն բարձեալ ունէր զտկարութիւնս որպէս զիւրոյ, քանզի նորա էր մարմինն, և մարմինն գործակից աստուածութեանն գործոց զի նովաւ լինէր. զի Աստուծոյ մարմին էր։ Եւ յետ սակաւուց. Քանզի թէ Աստուծոյ Բանին գործք ոչ ի ձեռն մարմնոյն էին եղեալ, ոչ արդեաք էր աստուածացեալ մարդ։ Եւ յետ այլոց. Քանզի զգործս հաւր ի ձեռն մարմնոյն գործէր։ Եւ դարձեալ նոյն գրէ առ Դեղփոս եպիսկոպոս և խոստովանող. Քանզի զձեռն ձգեալ ասէ, Բանին յարոյց զոր ի ջերմութենէն էր ըմբռնեալ. ձայն արձակեալ յարոյց զՂազարոս։ Եւ Գրիգոր Նիւսացւոյն եպիսկոպոս յերրորդ ճառին որ ընդդէմ Եւնոմիոսի, Քանզի ներգործէ, ասէ, որպէս ճշմարիտ Աստուած ի ձեռն իւրոյն մարմնոյ զամենեցունց փրկութիւնն, որպէս զի ձայնին կամ գործոյն մարդկաւրէն ելեալ յանաջ. իսկ ի ներքուստ թագուցեալն իմանի զաստուածութիւնն ցուցանել։ Գրէ և Յուլիոս եպիսկոպոսապետն Հռոմայ, ասէ, Ոչ մի անջատումն Բանին և մարմնոյ նորա, բերի յաստուածային գիրս այլ է մի՛ անձնաւորութիւն, մի ներգործութիւն, մի դէմ, բոլոր Աստուած և բոլոր մարդ։ Նոյն ինքն և Յովհան Ոսկեբերան ի ճառին յորում եթէ՝ եկաց յաղաւթս ի լերինն, և ի կոչումն առաքելոցն ասէ. Միոյ զաւրութեամբն ներգործութեամբ զրաղմատեսակ աթոռս չարութեանն բժշկեաց և յետ սակաւուց ասէ, Զանազան զսքանչելիսն ի ձեռն միոյ ներգործութեանն ընդունի։ Եւ Կիւրեղ Աղեքսանդրացի ի Մատթէոսի աւետարանին մեկնութեան այսպէս գրէ. Ընդ իւր միաւորեաց զմարմինն որպէս ոչ է ասել ընդ Հաւր և ի Հաւրէ Աստուած բանն, և յիւր կազմեալ զնա ներգործութիւն բնաւորական, և մարմին պահեաց վասն ծնանելոյն ի մարմնոյ, և լցոյց աստուածավայելուչ ներգործութեամբ և յիւրն եհան փառս

Նորին յերկուս կոյրսն. Եւ բժշկէ ձեռին մերձաւորութեամբ և ներգործութեամբ լի գոլ կիւր մարմինն ցուցանէ. Նորին ի բժշկութիւն զոքանչին Սիմոնի. Քանզի բժշկեաց որպէս զԱստուած, զիւրոյ ձեռինն հպումն շնորհեալ անկելոյն ի մահիճսն. և վասն զի՞նչ պատճառի, զի զիւրոյ բնութեան աստուածութեան ասեմ միապաւր ցուցցէ զիւրն մարմին ի ներգործութիւնսրն։ Դարձեալ ասէ, Կարող գոլ զամենայն ինչ բանիւ ներգործել, վարի և թքովն, զի ծանիցուք թէ և մարմին նորա զամենայն ունէր զներգործութիւն զկենդանարար Բանին, և լուսաւորութեան առիթ լինի ի ձեռն սուղ ինչ մերձաւորութեան, քանզի մարմին էր լուսոյն ճշմարտի։ Եւ նոյն Կիւրեղ ասէ ի գիրս պարապմանցն. Եւ միաւորեալ միանգամայն մի համարեալ ընդ մարմնոյ իւրացուցեալ զնորայսն միաւորեալ և իւր ընդ նմա զիւրոյն բնութեանն ներգործութիւն։ Եւ արդ բաւական համարիմք զասացեալսս առ ի յանդիմանութիւն որ զերկուսդ քարոզեն ներգործութիւն հակառակ սրբոց վարդապետացն. զի ահաւասիկ զաստուածագործութիւնսն և զմարդկաւրէնագոյնսն միոյ և նորին Բանին Աստուծոյ ներգործութիւն ասեն հանդերձ մարմնովն։

Դարձեալ զերկրորդս առ ի ձէնջ զրեցեալ առցուք բան՝ Ասէք երկուս ունել կամս Քրիստոսի՝ աստուածային և մարդկային, և դարձեալ ասէք եթէ, զբոլորն աստուածացեալ ասեմք, զմարմինն և զհոգին և զմիտսն, և առնուք զասացեալսն ի սրբոյն Կիւրղէ, եթէ յորժամ կամէրն տայր թոյլ մարմնոյն զիւրսն կրել, որ անհնար է այսոցիկ՝ ի միում լինել անձին, զի եթէ հարկաւորապէս դնէք երկաքանչիւրն բնութեան, կամել և ներգործել զիւրաքանչիւրսն, ապա ոչ էր աստուածացեալ բոլորն, այլ տակաւին ևս թշնամութիւն ունէր ի մարմնին, զի յորժամ առնէաք զկամս մարմնոյ և զմտաց, էաք արդարև որդիք բարկութեան որ ոչ և Պաւղոսի ծառայական բնութեանն հաւասարեցուցանէք զպատն որ փոփոխմամբ զմիտս Քրիստոսի ստացաւ։ Իսկ եթէ աստուածացեալ ասէք զբոլորն և ի մեր փրկութիւն տնաւրինաբար միով իշխանականաւ թողացուցանէր մարմնոյն զիւրսն կրել գանանգոսնելի կիրս, յայտ է թէ զաստուածայինն միայն յայտ առնէք զկամս, զվեհագունութեամբ յաղթողն։

Արդ տեսցուք յաղագս այսոցիկ զասացեալսն ի սրբոց վար-

Digitized by Google

դապետացն։ Ասէ յաղթող սպառազէնն Քրիստոսի Աթանասիոս ի ճառին որ յաղագս յայտնութեան Փրկչին, Վասն այսորիկ եկն Բանն՝ Աստուած զոլով և առաջնոյն մարդոյ արարչագործ, լինել մարդ ի կենդանագործութիւն մարդկան, ի բաց բարձումն անիրաւի թշնամւոյն, և ծնաւ ի կնոջէ, յառաջին ստեղծուածն զմարդկայինս կերպարան ինքեամբ հաստատեալ ցուցմամբ մարմնոյ առանց մարմնականաց կամաց և խորհրդոց մարդկայնոց. ի պատկեր նորոգութեան, քանզի կամքն աստուածութեանն միայնոյ, վասն զի և բնութիւնն բոլոր բանին ցուցմամբ կերպի մարդկայնոյ մարմնոյ։ Եւ դարձեալ Ընորիոս եպիսկոպոսապետն Հռովմայ գրէ, Քանզի թէ էր, ասէ, ծանուցեալ ոչ արդեաք զՏէր փառացն ի խաչ հանէին, որ և յայտ է թէ աստուածութեանն ոչ ի խաչ ելանել էր հնար, և ոչ զչարչարանացն զմարդկայնոց զփորձ առնուլ. թէ զայսոսիկ կրէր, այլ վասն անպատմելւոյն միաւորութեան, մարդկայնոյն և աստուածայնոյն բնութեան, վասն այնորիկ և Աստուած ասի չարչարել և մարդկութիւնն յերկնից իջանել ընդ աստուածութեանն, ուստի և մի կամն խոստովանիմք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Նորին յետ այլոց: Քանզի կամք այլ և այլ հակառակ ոչ եղեն Փրկչին։ Վասն զի ի վեր քան զաւրէնս մարդկայնոյս բնութեան ծնաւ, թէ և գրեալ է, Ոչ եկի առնել զկամս իմ, այլ զառաքչին իմոյ, և ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու կամիս Հայր։ Ոչ են այս, այլ և այլ կամաց, այլ ըստ առեգելոյն մարդկայնոյն տնաւրէնութեան, այսորիկ վասն մեր ասացան, զոր ետ աւրինակ բարի վարդապետն զի զհետ շաւղաց նորա հետևեսցուք, և ոչ ընդ իւրն իւրաքանչիւր ոք, այլ յամենայնի յաւէտ Տեառն նախապատուեցին կամք, և այսորիկ այսք են։ Իսկ զանձառ միաւորութիւնն և զաստուածանալն մարմնոյն զնոյն ինքն ի ձեռն առեալ զգիրս Պարապմանց սրբոյն Կիւրղի, զի առաւելն նմա փոյթ եղև զայսոսիկ քննել ընդդէմ Նեստորի և նմանից նորա, և զգիրս Գանձուն զառաջինն և զերկրորդն, և զոր թէ մի է Քրիստոս, և զթուղթսն որ առ բարեպաշտ թագուհիսն, և ի բազում յայլ թուղթս զոր յառաջագոյն նշանակեցաք վկայութեամբք, յորում զանխառնունսն խառնեալ անշփոթաբար ցուցանէ, և մի բնութիւն սահմանեալ բանին մարմնացելոյ։ Եւ Գրիգոր Նիւսացի յերկրորդում գիրսն որ ընդդէմ Եւնոմիոսի. Քանզի մեք, ասէ, զմարմինն որով զչարչարանսն ընկալաւ, ընդ

աստուածային բնութիւնն խառնեալ. զայս ասեմք արարեալ ի ձեռն միաւորութեանն, որ ինչ է առողն բնութիւն։ Եւ նոյն գրէ առ Թէոփիլոս եպիսկոպոսապետն Աղեքսանդրի. Թէ ամենայն որ ինչ տկար և մահկանացու բնութեանն էր խառնեալ ընդ աստուածութեանն, եղև որ ինչ է աստուածութիւնն։ Եւ Գրիգոր Աստուածաբան ի Պասեքին ճառի. Կատարեալ, ասէ, զՔրիստոս ոչ Աստուածութեամբն միայն, քան զոր ոչինչ է կատարելագոյն, այլ և վասն մարդկութեանն աւծելոյն աստուածութեամբն և եղելոյ որ ինչ էաւծն։ Եւ Բարսեղ Կեսարացի զբսաններորդ երրորդ սաղմոսն մեկնելով ասէ, Կարողակից արար զմարմինն հողեղէն աստուածութեանն, ի մի ցաւրութիւն միացոյց, և ի մի աստուածութիւն ժողովեաց։

Իսկ զի՛արդ է ծննդեանն յեղանակ, կամ որպէս ունին առ միմանս իբր յաստուածային իրագործութենէ յաղթեալք, ոչինչ յանդգնեցան հարցափորձել, առաւել քան զոր Հոգին սուրբ ետ բարբառել, միայն զաստուածային ծնունդն խոստովանելով, և զորպէսն սքանչելագործին թոյլ տուեալ գիտել իբրև զԱստուծոյ խորհուրդ. ընդ որ և զարմացեալ Աստուածաբանն Գրիգոր, ասէ, Ո՞վ նոր խառնմանն, նորաձև առնեն բնութիւնքն։ Եւ Գրիգոր Նիւսացւոց եպիսկոպոս ընդդէմ Եւնոմիոսի յերկրորդ գիրսն ասէ. Անծանաւթ բնութեան ծնունդ ի վերայ ինքեան ի ձեռն կուսին նորաձևեաց, զոր ոչ ոք յայսքան ապգս մարդկան գիտաց, բանզի ոչ ի ձեռն ծանաւթից և սովորական բնութեամբ ճանապարհաց երևեցաւ ի մարդկանս կենցաղումս, այլ պլանման ինն և առանձնապէս։ Եւ Դիոնեսիոս Արիսպագացի աշակերտն Պաւղոսի զորոյ աչաւք տեսեալ զՓրկիչն, ասէ պատուութիւնն, առաջին եղեալ եպիսկոպոս Աթենացոցն, գրէ առ Գայիոս սպասաւորն Պաւղոսի. Զառ ի թագնութենէ դերագոյին ի մերս երևոյթ, մարդկաւրէն լինելով զալն. թագուն է և յետ երևելոյն. կամ զի և աստուծայնագոյնս ասացից զերևելն, քանզի և այս Յիսուսի անլայտ է, և ոչ մերոյ բանի կամ մտաց է հպելի խորհուրդ նորա, այլ ճառելով անճառելի մնայ, և գիտելով անգիտելի։ Եւ դարձեալ ի չորրորդ թղթին որ առ նոյն Գայիոս գրէ, Եւ զի միանգամայն ասացից, ասէ, ոչ մարդ էր Քրիստոս. ոչ որպէս ոչ մարդ, այլ որպէս ի մարրկանէ, անդր քան զմարդիկ և գերազոյն մարդ. ճշմարտապէս եղեալ մարդ, և ապա ոչ ըստ Աստուծոյ

զաստուածայինն ներգործեալ, և ոչ զմարդկայինն ըստ մարդոյ, այլ այրացելոյ Աստուծոյ. նոր իմն աստուածայրական ներգործութիւն ընդ մեզ կենցաղավարեաց։

Արդ՝ ո՞, ո՛վ նախապատուեալք բնական և պիտախոհութեամբ առլցեալք, խոնարհեցարուք վասն Քրիստոսի և առ մեր նուաստութիւնս, զի և զանտոհմս և զարհամարհեալս և զոչինչս ընտրեաց Աստուած։ Եռուք մեզ բանս, ընկալարուք զդարձուածս բանիս, և տուք տեղի պատասխանոյ զինչ արժան է. ձեզ լսե՛լ, թէ աստուածային խորհրդածուացս այսոցիկ։ Եւ ո՞յք այսոքիկ։ Հրեշտակապետն Գաբրիէլ որ Մարիամայն աւետարանեաց, Որ ծնանելոցն է ի քէն, ասէ, սուրբ է, և որդի բարձրելոյն կոչեսցի, ոչ եթէ բնութիւնն որ ի նմա, այլ որ ծնանելոցն է ի քէն, նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց։ Առ Հովիսան, Ծնաւ, ասէ, այսաւր ձեզ Փրկիչ, ոչ եթէ բնութիւնն ի ծնիցելումն, այլ որ ծնաւն։ Մեծն ի ծնունդս կանանց Յովհաննէս, որ հրաժարէր ի չիշխելն մերձենալ և դնել զհողեղէն աչն ի վերայ ամենակատար զգաթան նորա, զոր հուրն ճանաչէր՝ անմերձենալի հրեշտակաց, յոր մատամբ ցուցանէր՝ թէ Ահա Քրիստոս զառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի. ոչ եթէ բնութիւնն որ ի սմա, այլ զոր տեսանէր։ Պետրոս՝ զլուխ առաքելոցն, որ հարցմանն պատասխանի, զՈրդին ես Աստուծոյ դաւանեաց, ոչ եթէ բնութիւն՝ որ ի քեզ, այլ թէ, դու ես որդի Աստուծոյ, որում վրկայեաց փրկիչն, թէ Հայր իմ որ յերկինս է յայտնեաց քեզ զայդ, և երանեաց զնա։ Պաւղոս, Ըստ մարմնոյ՝ որ է ի վերայ ամենեցուն Աստուած։ Աշակերտն՝ զոր սիրէրն Յիսուս տայ աւետիս աշխարհի, թէ Ընդ որ հայեցաքն և տեսաքն, նա է Ճշմարիտ Աստուած, և կեանք յաւիտենականք, ոչ եթէ բնութիւն՝ որ ի սմա, այլ սա զոր շաւշափեցաք ձեռաւք մերովք։ Թովմաս զկողն շաւշափէր և զձեռս և զոտս, և զտեղիս ըևեռացն տեսանէր, ոչինչ միջոց արկ վիրաւորեալ մարմնոյն և աստուածութեանն, այլ համանգամայն Տէր և Աստուած խոստովանեաց զնա, ոչ բնութիւն ի նմա, այլ զոր շաւշափէր։ Եւ Փիլիպպոս՝ որ զտեսութիւն Հաւր պահանջէր ի Տեառնէ, լուաւ, թէ Որ ետես զիս՝ ետես զՀայր։ Եւ զի՞նչ ասեմք թէ մարգարէք և առաքեալք, որև նոյն ինքն առանձնաւորութիւն դիմաց սրբոյ Երրորդութեանն Յորդանան երևեալ՝

ցուցանեն կՃշմարտութիւնն։ Որդի մարմնացեալ մկրտի։ Հոգին սուրբ իջանէ և հանդչի ի վերայ փառակցին իւրոյ՝ զոր մկրտէրն Յովհաննէս, Հայր ի վերուստ ճշմարտէ, թէ Դա է որդի իմ սիրելի, ոչ եթէ բնութիւնդ որ ի դմա, այլ թէ դա, որ առաքեցիդ ի նմանութիւն մարմնոյ մեղաց, որ երևեցաւդ ասնարդ նուագեալ, որոյ վիրաւքդ բժշկեցայք, որով ընկալայք զփրկութիւն ի ձեռն արեան դորա, և կթողութիւն մեղաց մարմնով դորա։ Դա է Մխածինն իմ, զոր վասն փրկութեան աշխարհի ետուս. ոչ եթէ զբնութիւնդ որ ի դմա, այլ թէ դա՝ զոր տեսանէքդ։

Եւ արդ։ ո՞ւստի ձեզ այդ, և ո՞վ եղև գտակ նորոգ և անգիր բնութեանցդ, կամ առժամայն Աստուծոյդ. թէ պարտ իցէ ասել, զոր փորձէքդ ի ներքս մուծանել, երկրպագակից առնել հաւազոյի և սրբոյ Երրորդութեանն, զոր ոչ առնուն յանձն եկեղեցիք Քրիստոսի, որք համարձակութեամբ քարոզեմք մարմին և արիւն Աստուծոյ, որով և փրկեցաք իսկ. զի ոչ պատգամաւոր ոք և ոչ հրեշտակ, այլ ինքնին Տէր փրկեաց զմեզ, զոր դուք այլոյ իմն բնութեան համարիք, զհացն կենդանարար զմարմինն Քրիստոսի, զոր ետ վասն կենաց աշխարհի։ Արդ եթէ ձեզ այլ իմն յայտնեցաւ այժմ ծածկեալ խորհուրդ և բազմապատիկ իմաստութիւն Աստուծոյ, արարէք և զմեզ խելամուտ, թէ արդարև մոլորեալ իցեմք, զի զայսոսիկ գիտել մեզ իբր ապով զչուրս ծովու չափել, և թզաւ զերկինս՝ հանդիպի, և ապ ի բերան եղեալ ընդ արդարոյն Յովբայ առ հարցաւղն առ նա զանձառելին։ Ասացէք մեզ, զծննդեանն յեղանակ. զի՞արդ խառնեցան տնժամանակն և ընդ ժամանակաւն. զի՞արդ բոլորն ընդ Հաւր և յորովայնի կուսին, զի՞արդ մարմինն սուրբ որ ի Մարիամայն յոսկերաց և ի ջղաց կարծրացեալն շարադրեցաւ և միացաւ, և թուեցաւ ի պարզ և ի նուրբ և յանյաւդ բնութիւնն սրբոյ Երրորդութեանն, ոչինչ արարեալ յաւելումն կամ թիւ, յոր ոչինչ խառնի եղական բնութիւն ամենեին. կամ զի՞արդ քանակութեամբ չափեալ մարմնովն աթոռակից Հաւր ասի և զերկինս և զերկիր լնուլ։ Զկտիցի՞ արդեաք մարմինն ընդ աստուածային անբաւութեանն, կամ թէ անփոփեսցի՞ աստուածութիւնն ընդ մարմնոյն պարունակութեամբ. կամ թէ որպէս մեք յաստուածային ճառագայթիցն մասամբ վայելեալ յաստուածային զաւրութենէն փառաւորիցի։

Digitized by Google

Զպյսոսիկ ստոյգ գիտակաւ յանդիման կացուցէք մեզ։

Իսկ եթէ դանգիտութիւն խոստովանիք, իբրև ի խորոց Աստուծոյ յաղթեալք. յայլ փոխեցայց հարցումն։ Զինչ ինչէ այժմ երկաքանչիւր բնութեանն, զոր ասէք, ներգործութիւն և կամս. զի թէ այժմ ոչ ունիցի, աւելորդ և զաւտարի ուրեմն ունէր, և այժմ եկն ի կատարելութիւն, զի ընկէց յիւրմէ և կամ ըստ Մարկեղեայ Գաղատացւոյ ի յարեգակն եդ և կամ յաւդ ցնդեցաւ և լուծաւ, և զտաւ փոփոխելի։ Այլ ինքն իսկ Տէրն ասէ, թէ Ես Նոյն եմ, և ոչ փոփոխեցայց, զի որով ծրնաւն չարչարեցաւ, և Նովիմբ Նստաւ ընդ աջմէ Հաւր, որով և զալոցն է։ Իսկ եթէ ունիցի և այժմ ըստ երկաքանչիւրումն կամել և ներգործել, անդանաւր և հակառակութիւն և շփոթումն, որում զհետ երթայ և լուծումն. ի ներքս մտանէ և անկարգութիւն և առասպելարան աստուածաստեղծ վիպասանութիւնն հեթանոսաց. զոր յաղագս Դիոսի և Ապողոնեայ և Հերակղեայ գրարանին. և ծննդոց նոցին։ Ապա ո՞ւր տանիցիր զառ ի ձէնչ ասացեալ այլ բնութիւնն առանձնացեալ կամաւք և ներգործութեամբ, զի անհնար է ծառայ բնութեանն՝ համապատիւ լինել ապատին ըստ բնութեան։ Եւ զպյսոքիւկ զանց արարեալ տեսցուք և ի ձերոցդ պանծալի բանաստեղծիցդ զոր ճոխաբանեն զբնութեանցդ առնել զդատողութիւն։

Ի չորից ասացին բաղկացեալ ի տարերց. զմահկանացու կենդանին։ Իսկ յերկուցս հակառակից յանդիման տեսանի խառնումս, զոր և աստուածային գիրք զկատարեալ բնութիւն մարդոյս ասացին առեալ Բանին։ Արդ՝ զո՞ր արդեաք ի բաց բառնայցէք ի բնութեանցն, զմարմի՞ն, թէ զհոգին, թէ զաստուածութիւնն. զի եթէ երկուս խոստովանիք բնութիւնս, ի բաց բարձ զհոգին ըստ Ապողինարի, թերակատար եղիցի ապա և փրկութիւնն մեր, և կամ ի բաց առ զմարմին և հետևեա Եւտիքեայ առ աչաւք և ցնորիւք ասել զմարմնաւորութիւնն Տեառն, կամ որոշեա զաստուածութիւնն, և սոսկ մարդ գնա խոստովանեա ընդ Նեստորի. զի թէ զթիւ բնութեանցդ առցես ի վերայ Քրիստոսի, հարկաւորապէս մղիք յպյսոսիկ, կամ երկուս ասել բնութիւնս, կամ ի ներքոյ անկանել յառաջասացելոցդ աստուածամարտից, և կամ փոփոխելի ասել. ապա թէ ոչ հաւանել պարտիք ձերոց ճարտարաց, զի ի կենդանեւոյն զպյլութեամբ զանապանեալսն տարբերապէս՝ սեռս և տեսակս

Digitized by Google

անուանեցին, և զսեռն հասարակ մի բնութիւն. և անհատքն թուով ի բազումս կոտորեալ։ Իսկ ոմն յերկուց անձնաւորեալ, մի ասացաւ բնութիւն, որպէս մեկնէ Ցիւրիպիդէս Աթենացի, զպարզսն անուանսն զսերմանեալսն յԱրիստոտելէ, ասացեալ եղջերուաբաղս ի ստորոգութիւնսն, ոչ միայն ի վերայ պարզիցն ասէ, այլ և զշաղաշարաբար կապակցեալսն մի ասելի բնութիւն. զի այլ է ըստ բնութեանն միութիւն, և այլ ըստ անձնաւորութեանն. զի ըստ անձնաւորութեան միացեալքն թէ բաժանին ապականի կենդանին։ Որպէս մարդ ի հոգւոյ և ի մարմնոյ, որպէս և ոչ տնաւրէնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ կացցէ՝ եթէ բաժանեսցես։ Իսկ ըստ բնութեանն մի, ըստ անձնաւորութեանն բաժանել՝ ոչինչ է արգել. որպէս միութիւն սրբոյ Երրորդութեանն՝ յերիսն կատարեալ անձինս. այսպէս և ըստ երկրորդ գոյացութեանն՝ տեսակն մի բնութեամբ, ի բազումս կոտորեալ անհատ։

Եւ դարձեալ ասէր թէ հակառակ Նեստորի ասեմբ զերկուսդ բնութիւնս. զի նա զՔրիստոս և զՏէրդ անուն, ըստ իրիք համանունութեան և արժանաւորութեան առ հաւասարութեան Բանին Աստուծոյ, ըստ անչատման կոչեաց. իսկ մեք երկու բնութեամբք մի որդի ասեմք։ Այսոցիկ պատասխանի տայցէ սուրբն Կիւրեղ, զոր յառաջագոյնն ասաց առ Սուկենոս, թէ Մի ասեմք զՈրդւոյ բնութիւն, այլ զՏէրդ՝ և ոչ Նեստոր յանդգնեցաւ ասել. զի նա թէպէտ և չարաչար ժողովմամբ միաւորէր զաստուածութիւնն և զմարմինն իւր, սակայն միակամն և նոյնագործս ասէր զյարակցեալսն։ Իսկ դուք և ոչ այսքան ներեցէք լինել զմիաւորութիւնն, զի ուր երկաքանչիւր բնութիւն կամի և ներգործէ ի բաց բարձեալ լինի նոյնախոհութեան իր։ Եւ զոր գրեցէք առ մեզ զասացեալսն ի սրբոյն Կիւրղէ, նոքին իսկ բաւական են առ ի յանդիմանութիւն ի ձէնջ ասացելոցս մանաւանդ զոր ասեն եթէ երկուց բնութեանց, այսինքն անձնաւորութեանց՝ զոր յաւետարանականն կամ՝ յառաքելականն գրեալ բաժանէ ձայնս, կամ ի վերայ Քրիստոսի զառ ի սրբոցն ասացեալսն, կամ ի նմանէ յաղագս իւր և է ինչ՝ որ մարդոյ առանց բանին յատկապէս իմացեալ հայեցուցանեն. և է ինչ՝ զոր որպէս մարդոյ միայնոյ Աստուծոյ բանին. նկովեա՞լ եղիցի։ Ահաւասիկ բաժանէք զձայնս ասացելոցն, և է ինչ՝ զոր Բանին հայեցուցանէք. և է ինչ՝ զոր

Digitized by Google

մարդոյ, զի երկուց բնութեանց երկաքանչիւր կամք, և ներգործութիւնք՝ հարկաւորապէս այսպէս բաժանին ըստ Թէոդորիտեայ ձերոյ խոստովանակցին. թէ ոմն բացափայլեալ սքանչելեաւք, և ոմն ընդ թշնամանաւք ստոր անկեալ. Քանզի թէ զնուաստագոյնսն ներգործութիւնս միայն բնութեան մարմնոյն ասացէք, զի՞նչ նուաստագոյն և ծառայական կիրք, քան զծնունդ ի կնոջէ, և զմահ խաչի։ Վասն որոյ ասացէք, և ոչ Աստուած ծնաւ Կոյսն, և ոչ Տէր փառաց խաչեցաւ որպէս Նեստորի թուի. ապա ուրեմն ոչ ետ Հայր զՄիածինն փրկանս, և մարդ սոսկ փրկել ոչ կարէ. թէ արդարև կիրք կրելոցն յատուկ են, որպէս ձեզ թուեցաւ ասել, զոր մի լիցի ճշմարիտ հաւատացելոց Քրիստոսի այսպէս՝ խոստովանել, այլ զսորին հակառակն, զի յԱստուած յուսացաք, և ոչ ի մարդ։

Եւ դարձեալ զոր ասէքդ երկուս ներգործութիւնս կամեցեալ հաւատարիմ առնել և խաբել զպարզամիտս, առնուք վկայութիւն ի սրբոյն Կիւրղէ, զոր յառաջին գիրս Գանձուն ասէ, թէ ոչ ուրեք մին տացուք բնաւորական ներգործութիւն Աստուծոյ և արարածի։ Արդ ընդէ՞ր բռնադատիք յայլ քարշել մտածութիւնս զուղղապէսն ասացեալս։ Քանզի Եւնոմիոս ոչ ասէր զՈրդի ի բնութենէ Հաւր, իսկ սուրբն Կիւրեղ մարտնչելով ընդ չար ախոյեանին ասէ, Ապա թէ ոչ ի բնութենէ Հաւր Որդի, զի՞մարդ զոր ինչ գործէ Հայր՝ գործէ Որդի, վասն զի ոչ է մի ներգործութիւն Աստուծոյ և արարածի։ Արդ նա յաղագս աստուածութեան և մարդկութեան հաւարակաց ասաց։ Իսկ բբոնաւորու . . . . . եալ զայսոսիկ ընդ կրուկն դար . . . . . Բանին Աստուծոյ և մարմնոյն իւրոյ հպե . . . . . ։ էք։ Ահա երկուս ասաց ներ . . . . . սուրբն Կիւրեղ, իբր կապտեալ ինն . . . . . ութիւնս գձերդ ջանայք փայ . . . . . խրութիւնս ըստ Ուղղիանու . . . . . անութեանն, զիշերատեսակ հաւ . . . . . նսն այլոցն պերճացեալ թեաւք, որոյ վախճան զամաւթալին ածէ ի վերայ ծաղր, զի յանդիմանեալ այսոքիկ ի սրբոյն Կիւրղէ ոչ առնու յանձն վկայ լինել ասացելոցդ ի ձէնջ երկուս ներգործութիւնս։

Եւ դարձեալ երկուց կամացդ՝ զոր ասէք, առնուք վկայութիւն ի սրբոյն Աթանասէ, զոր յաղագս մարմնաւորութեան ճառին ասէ, թէ՝ Աստանաւր երկուս կամս ցուցանէ, զմին՝ աստուածային և յաւժար, և զմիւսն՝ ընդդէմ կացեալ, որպէս տը-

Digitized by Google

կարութեամբ հասարակաց մարդոյ։ Արդ զայս գրէք և զ յեռ-
պյսորիկն լռէք, զոր ի վախճանի թղթիս ասէ. թէ՝ Զիւրն Ա-
ստուծոյ կամս ասաց, և զՊետրոսին հասարակաց մարդոյ, որպէս
և Աստուածաբան Գրիգոր մեկնելով զասացեալսն, Զկամս իմ,
և զառաքչին իմոյ. Ոչ որ ըստ Փրկչին իմանի ասէ, քանզի նո-
րա կամելն ոչ ընդդէմ Աստուծոյ է, զի Աստուած է բովան-
դակն, այլ ըստ մեղս իբրև մարդկային աթորժակացս, որ ոչ ա-
մենայն իրաւք զհետ երթայ աստուածայնոյն, այլ ընդդէմ կայ
և մարտնչի. ահաւասիկ մի կամս յայտ արարին Քրիստոսի՝ աս-
տուածային միայն, և միւս զմարդկանս հասարակաց։

Եւ դարձեալ զոր գրեցէքս յաղագս տնաւրէնութեան Բա-
նին. մասն ինչ յասացելոցն սրբոցն Աթանասի և Կիւրղի և նմանից
նոցին, և առ ընթեր եդիք հատակոտորս յասացելոցն Ղևոնի
Հռովմայեցւոյ և ասէք, ի զուր բամբասել մեզ զՂևոն և զառմար
Նորա, զի յասացելոցդ, ասէք, երևի համաձայն Աթանասի և այլոցն
ուղղափառացն ասացեալ։ Եւ այսոցիկ նոյն ինքն Աթանասիոս
տայցէ պատասխանի։ Ոչ ասէ, յամենայնէ՝ զոր ասեն հերձուա-
ծողք փախչելի է, քանզի բաղում ինչ և նորա ընդ մեզ խոստո-
վանին, զի ոչինչ ամենևին չարն կարէ հաստատուն կալ. բայց
թէ ունիցի ինչ յինքեան կարծիս բարւոյ։ Արդ՝ ոչինչ սքանչելի
է թէ ունիցի Ղևոն սուղ ինչ կարծիս ուղղութեան, զի գիւրն
շինել կարասցէ առաջարկութիւն առանց հիման, իբրև պղնծով
զխաբէութիւն շուրջ եդեալ։

Եւ դարձեալ զառաջին լինելութիւն մարդոյն յառաջ բե-
րեալ նախատէք զմեզ անգիտութեամբ, և ասէք եթէ, ունէր Ա-
դամ ի բնութեանն զկամն և զերկիւղն. և յայտ է կամքն՝ ո-
րով մեղաւն, և երկիւղն՝ սպառնալովն Աստուծոյ, Թէ ուտիցէք
ի պտղոյն՝ մեռանիցիք։ Արդ թէ ասէք առեալ Քրիստոսի զբո-
լոր բնութիւնն Ադամայ, ունէր ապա և զկամն, զի կամք հոգ-
ւոյ են ծնունդ, և եթէ ոչ ունէր զկամն, և՛ ոչ հոգի, և ի
հարկէ ասէք հետևել ձեզ Ապողինարի, որ մարմին առանց հոգ-
ւոյ ասէր՝ առեալ Բանին։ Արդ նոյն ինքն Բանին Հաւր յաղա-
գս որոյ բանս է, տայցէ մեզ բան՝ ի բանալ բերանոյ մերոյ։
Ասասցուք և առ այս։ Քանզի իբրև հաստատեցաւ յարարչէն
նախահայրն պատուեալ բանաւորութեամբ՝ խմաստութեամբ, ի
բնութեանն ունելով զգիտութիւն բարւոյ և չարի, և զնախանձն
ի բարի, և զերկիւղ Տեառն՝ որ է կենաց, և այլ այսպիսի ինչ,

Digitized by Google

զի արարածական ընդ իշխանութեամբ, և ծառայ բնութեանս հարկաւորք եղեն պսոքիկ, այլ ամենայն ինչ ի բարի եղև, զի արարաւ ասէ մարդն յուղղութիւն, և կարգեցաւ ի միջատամանս վայրի կենաց և մահու, և ի ձեռս տուաւ անձնիշխանութեանն իբրև կառավարի յոր կոյս և միտիցի կամաւք վիճակեալ, եթէ կենաց և եթէ մահու։ Իսկ իբրև շեղեցաւ յաստուածային պատուիրանապահութեանն ըստ ախորժակաց իւրոց, յեւթնից պարունակութեանց դասուցն հոգեղինացն, հեռագոյն բացորոշութեամբ եւթնից աշխիճանաւ ի վայր կործանեալ ի փառացն զրաւեցաւ, ի հոգւոյ՝ մարմին եղև, և զպատիժ պատուհասին զուգաթիւ ըստ յանցանացն տուժեցաւ. թափուր եղեալ ի հոգւոյ, յիմաստութենէ, ի հանճարոյ, ի խորհրդոյ, ի գաւրութենէ ի գիտութենէ, յաստուածպաշտութենէ, ի ներքոյ անկեալ երկիւղի աւտարին՝ ստունգանելով պատուիրանին Տեառն, Ի բաց եկաց հոգւոյն շնորհն՝ կնոջն լսելով խրատու, Կորոյս զտիրական վերինն իմաստութիւնն՝ ոտիցն հնազանդեալ զլեզուն անհանճարարար Իբր գեղեցկագոյն և քաղցրաճաշակ քան զպատուիրանն աստուծոյ, զմահաբերն դատեցաւ պտուղ։ Ցանմահականն վայելից տարագիր եղև՝ անխորհրդապէս կորուսեալ զբոցաճաճանչ լուսափայլ զարդարանսն։ Հակառակաբար հայթայթանաւքն ջանայր ծածկել զամաւթալին իւր մերկութիւն պատառաւն տերևով, անյուսացեալ ի գաւրութիւն ամենակալին կարծեաց թաքչել յամենատեսչութենէ նորա, Ի ներքոյ անկեալ երկիւղին մահու, ձայնելով Տեառն յապաշխարութիւն, տգիտացեալ անզգչութեամբ՝ արտաքս անկաւ ի փափկութենէն կենաց, իբրև անծանաւթ Աստուծոյ՝ ամպարշտութեամբ յարարիչն զարձուցեալ զպատճառան որպէս ի հաղորդ յանցանացն, թէ Կինս զոր ետուրս ընդ իս, զանիծից և ցաւադին ժառանգեաց կենցաղ։ Իսկ մի և նոյն մարդկութեանս արարիչ, որ իսկզբանն և որ յետ այնորիկ, յայնժամ առեալ հող յերկրէ զմարդն ստեղծ, զարձեալ առեալ ի կուսէն հող, ոչ պարկաբար մարդ ստեղծ, այլ կինքեամբ շնչաստեղծեաց, յայնժամ Բանն մարմին արար, իսկ յետ այնորիկ բանն՝ մարմին եղև, ընդ նոյն ճանապարհ եկեալ մարդկութեանս յսկիզբն և յարմատ ծննդեանս հասեալ հասարակաց, սրբոյ Երրորդութեանն լեալ ներգործութիւն։ Հայր կամակցեաց, Հոգին սուրբ հովանացաւ, և Որդին՝ որպէս հուր միացուցիչ նիւթոյ ի բովս, կամ իբրև զմակարթ ինչ կարծ-

բացուցիչ կարիին, յորովայնի կուսին մածոյց վինքեամբ մարմին՝ ի ճշմարիտ կուսական արենէ։ Եւ ոչ ըստ ինքեան ինչ ենթակայեալ մարմին, այլ աստուածային շարառութեամբն շարժեցաւ մարմինն ի գոլ մարմին, և բնութեամբ բանին կերպացաւ բնութիւն մարմնոյն։ և բնութիւն մարմնոյն եղև բնութիւն Աստուծոյ, զի նոր էառ սկիզբն և գոլ բնութիւն յանապականացուէն սկսեալ և վասն այնորիկ անապական մարմին, զի որպէս լոյս ընդ արեգական անընդմիջարար հանդէս ընդունացեալ անապականութիւնն, ընդ յղութեանն ի բաց փախեաւ խաւարապականութեանն, յրմրոնել զնա լուսոյ անապականութեան ի սուրբ արգանդին. և առեալն եղև այն՝ որ ինչ առաւղն բնութիւն, նոյնպէս և կամք առեցելոյն, և որ ինչ զհետ երթայ բնութեանն՝ իբրև ճառագայթ ճրագի առ արեգականն հասեալ պայծառութիւն, առանց ի բաց բառնալոյ ոչ ուրեք մնաց յիւրսրն անձնաւորութիւնս, այլ հզաւրագունին յաղթեալ յինքն փոխարկէ զապատագոյն նշոյլն, և ոչինչ ընտրութիւն կամ միջոց կամ տեսութիւն ճառագայթիցն մնայ։

Այսպէս և ոչ ի մարմնական բնութեանն, կամ կամաց կամ ներգործութեան թիւ մնայ ի մարմնացելոյ Բանին Աստուծոյ, քանզի բոլորն Աստուած և Աստուծոյ կամք և ներգործութիւն ասի, զի մնասցէ Երրորդութիւնն պարզ և անզանազանապէս, անխառն ի նիւթականացս, որպէս Գրիգորի Նիւսացւոյ թուի ասել հարցման պատասխանի Բասլի եղբաւր իւրում. ասէ, Ո՞չ մի զանազանութիւն Բանին և մարմնոյն իւրոյ. պատասխանի առնէ, թէ Զանազանութիւն ասէ՝ աննմանութիւն, եթէ աննմանութիւն՝ ոչ պարզութիւն, և եթէ ոչ պարզութիւն՝ ի բազմաց դրութիւն. և զի մի այդպիսեաւք որդի վարկցի համբարձեալ յերկինս, և այսպէս աստուածագործ խառնմամբն ճշմարտապէս մարմին առեալ յոսկերաց և ի ջղաց հաստատեալ, և հոգի մտաւոր և բանական կամեցողական զաւրութեամբն, և որ ինչ մարմնոյ առանց մեղայ։ Թէպէտ և զապականացուէն բուռն հարեալ զվաւակէն Արրահամու, իսկ և-իսկ յանապականութիւն փոխեալ, զի նոյն ինքն Բանն անձնիշխանութեամբ զկամն իւր գործ կատարեալ ունէր, զի Աստուած էր բովանդակն։ Եկն ի խնդիր նախաստեղծին ապգակցին ըստ մարմնոյ, դիմեալ յԵդիպտոս՝ եգիտ զնա ընդ իշխանութեամբ բանսարկուին, և զիւր սուրբ և անապական մարմինն իբրև զանիծից և զապականա-

Digitized by Google

ցու, քաղցիւ և ծարաւով, և զմարդկայինն ոգի՝ իրրև զանգիտացեալ և զերկուցեալ առաջի արկանէր. աւրինաւոր մարտիւ թոյլ ետ յինքն ձգել զհրացեալ նետս մուխս չարին, զի շիջուցէ յինքեան, ոչ ունելով ի նորայոյն զոր սերմանեացն յԱդամ յուսով աստուածանալոյն, զի էր արգարութիւն ածեալ ընդ մէջ իւր, և ճշմարտութեամբ պատեալ զկողս իւր։ Փորձի աւուրս քառասուն պահովք, ապա քաղցնու, և սակայն յայտ առնէ, թէ յորժամ կամեցաւն, որպէս ասէ սուրբն Կիւրեղ ի գիրս Գանձուն, Զի ոչ եթէ բնութիւնն զնա հարկեցուցանէր, այլ ինքն շարժէր զբնութիւնն իւր։ Ասէ. Այժմ անձն իմ խռովեալ է և այժմ յայտ առնէ, թէ յորժամ կամեցաւ. որպէս ասէ սուրբն Աթանասիոս առ Ապողինարիս։ Անգիտանայ զԹզենւոյն անպտղութիւն և երկնչի ի մահուանէ, զի ի ձեռն նորին ուռկանի ըմբռնեցի քանսարկուն, և հրաժարմամբ բաժակին անգիտացեալ ի վերայ արձակեսցի ժպրհութեամբ, որպէս նախաստեղծին երկուցելոյ, և անգիտութեամբ ի Թզենին ապաւինեցելոյն, զնոյն գտցէ Աստուած անպարտելի։ Զաւրացեալ լինի ի հրեշտակէ փոքր մի խոնարհեալն քան զհրեշտակս, ըստ տեսչութեանն տաւնակից առնել կամելով բնութեանս մերոյ զվերին բնութիւնս։ Աղաւթէ ի խաչին. Աստուած իմ ընդէր թողեր կիս, որպէս զմի ի թողեցելոցս հաշուեալ զինքն, վասն հաղորդ լինելոյն մեզ արեան և մարմնոյ մեզ բան հնազանդութիւնն, և զինքնակատար կամացն ներգործութիւն, ի հնազանդութիւն կրթելով՝ ասէ, Ես զկամս հաւր իմոյ կատարեմ, և զշաճոյսն առաջի Նորա առնեմ, զի զՀաւրն լսելի մեզ խոնարհեցուցէ, զոր ի բացն դարձոյց անհնազանդութիւնն Ադամայ։ Եւ այսպէս թագաւորն փառաց հզաւրն ի պատերազմի, ել ի բարձունս հպարտացելոյն, կապեաց զհսկայն, աւերեաց զյափշտակեալ գանձն Նորա՝ զարքունեանս պատկեր. եմոյծ ի դրախտն զԱդամ՝ ուստի անկաւն և զեւթնեկին շնորհն զոր կորոյս եւթնեկին յանցանաւք. ի վերայ ծննդոց Նորին կոչէ, ոչ ի վերայ ինքեան, զի ի նմա էր ամենայն լրումն աստուածութեանն։ Այլ շինեաց իմաստութիւնն Հաւր զտունն. զխորանն Դաւթի՝ զհաստարակաց բնութիւնս, յորում բնակիլ ասի Աստուած, կանգնեալ վերստին զկործանեալ սիւնսն եւթն։ Եւ վասն լինելոյն իւր ծաղիկ յարմատոյն Յեսսայ, հանգչել ասի, ինքեամբ ի մեզ Հոգի Աստուծոյ, հոգի իմաստութեան և հանճարոյ, հոգի խորհրդոյ, և զաւրու-

թեան, հոգի գիտութեան և աստուածպաշտութեան։ Իսկ միւսն պատեալ կեւթամբն, կրկնապատկեալ զշնորհսն ըստ աւուր յաւրութեան իւրոյ յուլթերորդն կատարեաց, որ է աւուրց կատարումն. լցաւ Հոգւով երկիւղի Տեառն և սկիզբն յարաձգական յաւիտենի, զի ուր երկիւղ Տեառն՝ անդ պատուիրանին պահպանութիւն, և ուր պահպանութիւն՝ և՝ ոչ յանցանք։ Բարձաւ և միջնորմն, տեղի ետ և քրովբէիցն բոցեղէն շրջապատեալ սուրն՝ պահողացն զճանապարհ ճշմարիտ կենացն, զի ընդ մեզ գտաւ ճանապարհն և ճշմարտութիւնն և կեանք. անցոյց զմեզ ի վեր ընդ դրունս երկնից, եհան յանմահական յերկնաւաւրն ճոխութիւն, և նստոյց զեր ի վերոյ իշխանութեան և պետութեան և զաւրութեան, և խրախոյս տուեալ՝ Քաջալերեցէք, ասէ, ես յաղթեցի մահու։ Եւ ետ իշխանութիւն հաւատացելոց իւրոց, գնալ ի վերայ իժին և քարրին, և պարծելով ասել, Ո՞ւր է մահ յաղթութիւն քո։

Արդ՝ զայսքան և զայսպիսի առատ մարդասիրութեան և աստուածագործ գաւրութիւն, զի՞արդ ոք իշխեսցէ աւտար բնութեան, և ոչ յաւէտ Աստուծոյ համարել, ուր մարգարէքն աղաղակեն, թէ՝ Ինքնին Տէր փրկեսցէ զմեզ, և առաքեալքն, թէ՝ Կեանքն յայտնեցան, և տեսաք և վկայեմք. թէ սա է ճշմարիտ Աստուած և հետևողք ճշմարտութեանն նոցին դաւանեցին մեզ Հոգւովն սրբով ի Նիկիացւոց քաղաքին ժողովեալքն։ Աստուած յԱստուծոյ իջեալ, ասացին, ճշմարտապէս մարդ, իսկապէս մարմնացեալ ի սրբոյ կուսէն Հոգւով և մարմնով և մտաւք, և նովին մարմնով խաչեալ և թաղեալ և յարուցեալ յաւուր երրորդի, և նովին մարմնով վերացեալ յերկինս, նստաւ ընդ աջմէ Հաւր. նովին մարմնով գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս, և ոչ ուրեք թիւ բնութեանց կամաց յիշատակեցին ուրեք, որ և ոչ վայել է իսկ Աստուծոյ։

Արդ՝ ցուցէք մեզ պյլ մարգարէս, և առաքեալս և վարդապետս, նա և Աստուած մարմնալգեստ, հաւատարմագոյնքան զայսոսիկ, և եթէ իսկ արդեւք, զոր և ոչ դևք անգամ յանդգնին զայս ասել։ Զարմացան երկինք ի վերայ այսորիկ, ասէ մարգարէն, զի՝ զգրեալսն լոէք, և զոչ գրեալսն յերգ արկեալ հնչեցուցանէք, զի փրկութիւն հասարակաց մարդով և ոչ Աստուծով ասէք եղեալ։ Ո՞վ խորամանկութիւն չարին, անքուն ակամբ երկնեալ սերմանեաց զայս բանակռութիւն ի կոր-

Digitized by Google

ծանուցմն լսաւղաց, հակառակատիպն Պաւղոսի վատաշուէր Սամուստացւոյն և առոգեաց Նեստորիոս, և աճեցոյց սկզբնագիւտ չարին բանարկուն, զոր ծածկաբար ի ձեռն ժողովոյն Քաղկեդոնի գիշերային մտածութեան, ի վերայ ցորենոյն զորոմն սերմանեաց, ի ճշմարտեաց լսելիս, որոց եղաւ ժամադրութիւն ի հունձն՝ ընդունելով ի փրկչէն զհատուցումն։ Մի ոք զմեզ իբրև զյանգգնախաւսս պարսաւիցէ, և կամ իբրև զանհանճարաբար թշնամանողս, զի սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ քննել զայս ամենայն, և խաւսել առանց ամաւթոյ զվկայութիւնս Տեառն առաջի թագաւորաց։

Թողում ասել, որ յաղագս հաւատոյս զինիք ընդդէմ և հակառակ Ցիսուսի առնել և ուսուցանել չանայք, այլ և ի վերայ այսոցիկ փոխեցէք զսահմանն յաւիտենական ի հարցն հաստատեալ, կուրացուցէք զհաւան Տեառն՝ զոր գնեաց արեամբն իւրով սրբով։ Ընդէ՞ր փակէք զմեղուցելոցն ապաշխարութեան դրունս, և ծածկեցէք զկանոն աւրինաւոր ամուսնութեանն, որ հայրիւ և զերկրորդն թողացուցանէ մարմնասիրայն։ Ի բաց բարձէք զպահոցն նշմարանս՝ զոր Տէրն աւրինադրեաց։ Զի՞նչ ունիք ասել և առ բանսն առաքելոյ՝ Արհամարհութեանն կոչել զմարմնոյ պղծալից ցանկութեանն կատարաւոր, զոր և այժմ գրեթէ առ ձեզ բարբառելով Պաւղոս՝ զՀոռոմայեցիսն և զԿորնթացիսն նախատէ, յաղագս պոռնկութեան խառն անկողնոց և պղծութեան, և կծածուկսն գործելով զանց առնէ ասելով, զոր մայր մեղացդ Թեթևագոյնս կալմք կարճամտացդ, ի նոյն յուղարկել կորստեան խորխորատն, ընդ որոց զչրեհեղեղին ընկալան արկածս. և զհրակիզութիւնն Սոդոմ, և զԻսրայեղ խրատեալ յանապատին, և զՀամրի սատակելով՝ զիշատակ արդար ւթեանն հաստատեալ Փենեհեսի, Հեղի և որդիքն և բազմահազարքն սատակեալ Ժողովուրդքն. զոր և համարձակիմք ասել, վասն ասսորիկ աշխարհ ձեր հրձիգ, քաղաք ձեր աւերեալք յայգաց աւտարաց, դարձուցեալ զաւգնութիւն ի սրոյ ձերմէ, խոնարհեցուցեալ զթագաւորութիւնդ, փոխանակ զաւրացելոյ հերձուածիդ և անասնական անարգել ախտաւորութեանդ։

Զի՞նչ ևս զքահանայիցդ ասասցուք զանկարգ սովորութիւնդ, զի սուրբ հարքն և ոչ զոչխարեալսն ընդունէին ի քահանայութիւն կամ ի սարկաւագութիւն իբրև զանկեալսն ի

Digitized by Google

շնորհացն Քրիստոսի. իսկ ձեր այսոցիկ և ոչ հետք ուրեք ե-
ւեւին, այլ ըստ իւրաքանչիւր կամայ վարեցեալք բազում ա-
մուսնութեամբք և յետոյ խորհրդագծեալք աստուածայնոյն բե-
մի, և կարգեալ խորհրդածուք այլոց։ Միայն թէ զարտաբին
բաժակին և զկաւառակի բարիոք իցէ լուացեալ, և քաջագոյնս
ի թափչաց ողորկեալս ազանիցեն պարեգաւոս, և մանաւանդ
թէ զՊղատոնական պերճաբանութիւնսն վարժեցեալք հեգնեա-
ցեն բայս, քաջ քաջ համարձակագոյնս քան սերովբիմն ունե-
լեալք յաւրինակն. սոքա ձեռաւք ի ճշմարտութիւնն՝ առ կայ-
ծակն աստուածային հրոյն՝ յանդգնագոյնս մերձեցեալք ին-
քեանց ընդելլով *), և զմեղուցեալսն հաղորդեցուցանեն։ Եւ
զարմանք թէ կիարդ ոչ աստուածային հրոյն ծախիցին ընդ
Նաբադայ և Արիուդայ. զորոց ամբաստան լինի Աստուած ի
ձեռն մարգարէին Սոփոնիայ. թէ՝ քահանայքն պղծեն զսրբու-
թիւն իմ և ամպարշտեն յաւրէնս իմ. և ի ձեռն միւսոյ մար-
գարէին ասէ, Մի՛ մտանէք ի սրբութիւնս իմ՝ ասէ, և կոխել
զգաւիթս իմ մի՛ յաճախէք։

Զի՞նչ և զհեթանոսական անուանեալ ամուսնութիւնսդ
ասասցուք, զի հարալատաց որդիք և դստերք միաւորին յա-
մուսնութիւն, և ամուրիք և այրիք զուգաւորեալք երկրորդ ա-
մուսնութեամբն, և զայլմէ ծնունդս իւրեանց առ միմեանս զու-
գաւորեն, և ոչ ուստեր երկիւղ և ոչ վրէժխնդրութիւն։

Զի՞նչ զանիրաւ դատաստանսդ և զկուրացուցիչ կաշա-
ռակրծութիւնսդ ասասցուք, ընդ որ և մարգարէն զարմանայ,
թէ՝ Առաջի իմ եղև դատաստան, և դատաւորն առնոյր կաշառ։
Զի՞նչ և զագահութեանցդ և ի կշիռս մեղանչելով վաճառաշահ
աւգտածարաւութեանցդ ասասցուք, զոր կռապաշտութիւն կոչէ
խորհրդակիրն Քրիստոսի։ Զի՞նչ և զսան սուտ երդմնահարու-
թեանցդ՝ որոց Զաքարիաս սպառնայ թռուցեալ գերանդեաւն։
Զի՞նչ զսուտ վկայութեանցդ՝ ընդ որոյ ի Դանիէլէն պատու-
հասեցան ծերքն։ Զի՞նչ և զարեանցդ հեղլոյ անողորմաբար՝
ընդորոյ պատժեցաւ Կայէն նախահայրն սպանողայ։ Զի՞նչ և
զթագաւորացդ արհամարհութիւն, որոց իբրև Աստուծոյ ան-
հնազանդից դատաստան ասաց ընդունել Պաւղոս։

Եւ զայսոսիկ ասելով առ ձեզ, ոչ որպէս փարիսեցիք ո-

*) Այսպէս յօրինակին.

մանք զանձինս արդարացուցանեմք, զի որովք ստգտանեմք ըստ-ձեզ՝ Թերևս և մեք ի գաղտնի զնոյն գործեմք։ Այլ նախ այս, զի ոչ ըստ հնգից տաղանդի պահանջեմք տոկոսիս։ Քանզի պատուեցայք յարարչէն քահանայութեամբ՝ թագաւորութեամբ՝ գործական և տեսական իմաստութեամբ, և նախկին զբանն ընկալեալ քարոզութեան իբրև զանձրև՝ բազում անգամ խրատեալ յաւրինաց և ի մարգարէից, վարդապետ կարգեալ տղայոց, զոյս և աղ աշխարհի լինել։ և դէտ կարգեալք, և ոչ ստուգապէս պահողացդ զարիւնն՝ ի ձեռաց ձերոց խնդրել ասաց մարգարէն Եզեկիէլ, սպառնալով Աստուծոյ։ Իսկ ըստ մերում ազքատութեանս ի վեր երևեալ մեղք ուրուք՝ յանդիմանեմք, սաստեմք, և մխիթարեմք, արտաքոյ եկեղեցւոյ և սրբոյ խորհրդոյն կացուցանեմք, նշանակեալ զպնդիսին ըստ Պաւղոսի և այլ սրբոցն կանոնի, զոր դուք և ոչ ի լսելիս անգամ ձեր յանձն առնուք։

Եւ զիարդ ոչ պատկառէք ի մտանել ձեր ի հրաշագործդ սրբարան անուանեալդ Սուրբ Սոփի, ոչ արդարև իսկ հիմնեցաւ վերին իմաստութեամբն խորհրդարար յինքեան բերելով զլինելոցդ ձեր անկեղջ յանդգնութիւն, և գմոռացումն Աստուծոյ պատուիրանացն, իբրև զմեղն Ցուդայ գրեալ անշարժ գյանդիմանութեանդ կանոն՝ առաջի աչաց ձերոց սահմանաւ տպացուցեալ։ Քանզի յարևելից կրկին սրահիւքդ, և արծաթապատ դրամբքդ, և երեքկին գաւտաւրդ, կապուտակեայ քարամբք պատուականաւք յատակի եկեղեցւոյդ անչինչ գծագրութեամբ, եւթնեկին աշտիճանաւք մինչև ի մուտս բահանայարանիդ, զապաշխարողն ըստ ժամանակի արժանաւորեալ հաղորդութեան երևեցուցանէ. զոր դուք այժմ իբրև զծագրոյ արժանի առասպելս և ցնորս համարիք անիրաւաբար կոխելով. զոր և ոչ Մովսէս թողացուցանէր յստուերի պաշտամանն մատնել յեկեղեցի Աստուծոյ, զպտղակն ճայրոտեալ՝ առ արդարութեանն արեգակն ոչ կարացեալ հայել ուղիղ հաւատով, և կարճունչն՝ ոչ արժանաւորեալ ընդունակ լինել անուշահոտութեան Հոգւոյն սրբոյ հաւատով։ Զորձա երկդիմիս արկեալ, զգեցեալ զՔրիստոս մկրտութեամբն, և գաւտարին կերպարանս ըստ հեթանոսացն ի վերայ արկեալ, զարիւն ոչ զհել ի վերայ խմորոյ զնորոյ ուխտիս արիւն ըստ մարգարէանն փա-

Digitized by Google

բիւրեցւոց հին խմորոյն խոստովանել։ Եկն և էշ ի միասին վաթեցեալ, անուանեալ ուղիղ վարդապետութեամբ ընդ հեթանոսականն խառնակ գնացիւք անյուսութեամբն լծակցեալ. մալեալն յերկոցունց կաւրութենէ, ի բաց անկեալն ի հոգւոյն ուղղութենէ և ի մարմնոյն սրբութենէ. սապատողն՝ ոչ ուղղական տեսակաւ հայեցեալ ի վերկոյս յաստուածայինն պատուիրանս և յերկնից բարութիւնն, այլ ըստ անասնոցն ի վայր խոնարհեալ զերկրաւորս միայն, որ ինչ որովայնի և ընդ որովայնիւ է հոգայցէ. մատնեալ կծառայ տեառն իւրոյ զփառուցեալն յիշխանութենէ խաւարի առ կարծեցեալ լոյսն, իբրև զեկամուտն՝ արարեալ սրտի գեհենին՝ կրկին ևս քան զինքեանս, մատնեալ անդէն մեղաց իւրոց։ Այսոքիկ Մովսեսացիք և Ամոնացիք, պիղծք և արատաւորք, մտանեն ի տուն Աստուծոյ, և ձեր թողայուցեալ այսոցիկ գնալ իւրաքանչիւր ումեք զհետ սրտի իւրոյ չարի։ Ի բաց բարձէք ցկարգ և զխորութիւն հովուի և հաւտի. բժշկի և վիրաւորեցելոյ, ծառայելոյ Տեառն և Բահաղեմանցն, որոց այսպէս գործողացն՝ զորդն ոչ մեռանել և հուրն ոչ շիջանել, Եսայի սպառնայ։

Վասն որոյ երկնչիմք աւտարաձայն և պէս պէս ուսմանցդ ձերոց հաղորդել, յորմէ և Պաւղոս հրաժարեցուցանէ, զի մի՛ խոնարհիցիմք ի տեղի չարչարանաց և ծածկեսցեն զմեզ ստուերք մահու։ Այլ զհետ սրբոց հարցն հետևեսցուք խոստովանելով ընդ նոսին զԱստուածն Բան մարմնացեալ ամենայնիւ՝ որ ինչ մարդոյ բայց ի մեղաց, և ընդ ամենայնս ուղևորեալ կենցաղոյս անարատապէս և աստուածային խառնումն, անմեկնելի է ի մարմնոյն իւրոյ, յարգանդէ կուսին մինչև ցյաւիտեան։ Եւ ապի բոլորն Աստուած անմահ. Տէր փառաց խաչեալ, և որով ծնաւն, նովին մարմնով և հոգւով, կամաւք և ներգործութեամբ ունի զփառսն զոր ունէր ընդ Հաւր, յառաջքան զլինելն աշխարհի յԵրրորդութեանն երկրպագեալ որպէս նմին Տեառն, և այժմ հանդերձ առեցելովն։ Եւ մեաց Երրորդութիւնն՝ Երրորդութիւն առանց յաւելման և պակասութեան, և նովին բնութեամբ, մի և նոյնն գայ հատուցանել ըստ իւրաքանչիւրոցն։ Ուստի ուղղելով զգնացս մեր ի հաճոյս նորա այսու խոստովանութեամբ յանգելով զաստիս խաղաղութեամբ, հաւատամբ և յաւիտենիցն հասանել կենաց Քրիս-

տասիւ Յիսուսիւ Տերամբ մերով. որ կոչեացն զմեզ ի մասն վիճակի սրբոցն ի լոյս. որում՝ փառք պատիւ և զաւրութիւն և իշխանութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Զմեղապարտ գլուխս ողորմա՛ և ողորմա՛ն իմ յիշեցէք։

Digitized by Google

ՍՐԲՈՅՆ ԿԻՒՐՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌ ՆԵՍՏՈՐ. ԶԻ ՏԱՅՐ ՆՄԱ ՏԵՂԻ ԱՊԱՁԽԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՄԵՐԺԵԼ ՆՈՐՈՒ, ԶԻ ՉԵՒ ԵՒՍ ԷՐ ԼԵԱԼ ՍՈՒՐԲ ՍԻՆՀՈԴՈՍԱՆ ՈՐ ԿԱՄԱՒՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎԵՑԱՆ ՅԵՓԵՍՈՍ։

ԹՈՒՂԹ ԿԻՒՐՂԻ ԱՌ ՆԵՍՏՈՐ։

Առ սուրբ և աստուածապաշտ և պաշտաւնակից մեր Նեստոր. Կիւրղոս և ամենայն որք ժողովեալ են ընդ մեզ յԱղեքսանդրիայ՝ ի կողմանց և ի բնակութենէ Եգիպտացւոց, ողջոյն։

Փրկչին մերոյ ասացեալ է յայտնապէս, եթէ՝ Որ սիրէ զՀայր իւր կամ զվայր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի։ Զի՞նչ արասցուք մեք որ յաստուածապաշտութենէդ բուսմէ պահանջեմք առաւել սիրել զքեզ՝ քան զփրկիչն ամենայնի Յիսուս Քրիստոս։ Ո՞կարասցէ փրկել զմեզ յաւուր դատաստանի, և կամ որպիսի պատասխանի գտանիցեմք, որ այսչափ յերկարեցաք որ ի քէն հայհոյութիւն լինէր զնմանէ. զի թէ միայն յանձն քո լինէր մեղանչականութիւնն այսպիսի մտաց և վարդապետութեան, փոքր ի՞նչ էին հոգքն արդեաւք. այլ վասն զի զամենայն եկեղեցիս զայթակղեցուցեր, և իրրև խմոր հերձուածոց վնասակար և աւտարաւտիս արկեր ի ժողովուրդս, և ոչ առ այնոսիկ միայն՝ որ մերձաւորք էին քո, այլ յամենայն տեղիս հասին սուտ պատմութիւնք գրոց քոց։ Զի՞արդ ևս հնար լիցի լռել մեզ և ոչ ի հարկէ յիշել զասացեալսն Տեառն Քրիստոսի, եթէ՝ Մի համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր, ոչ եկի արկանել խաղաղութիւն յերկիր, ոչ եկի արկանել խաղաղութիւն՝ այլ սուր, եկի քակել զայր ի հաւրէ և զդուստր ի մաւրէ։ Զի եթէ վնասել հաւատոյն ընդունայն և անաւգուտ է, պատիւ ծնաւղաց և երկիւղ, դադարեալ են՝ և աւրէնք գթոյ և խնամոյ առ

եղբարս և սիրելիս, և աստուածապաշտից լաւ համարեալ է մահ քան կեանս, զի առաւելութեանն արժանի լիցին հասանել, որպէս և գրեալ է։

Եւ ահա մեծ սիւնհոդոսն որ եղև, որ ժողովեցան ի Հռոմ, յորում էր սուրբ և աստուածապաշտ եղբայրն մեր և պաշտաւնակից Կելեստինոս եպիսկոպոս. արդ երրորդեմք զայս բան և դնեմք վկայութիւն և գրեմք և լինիմք քեզ խորհրդակից, ուղղել քեզ ի վրիպեալ մտացդ և ի գայթակղեցուցիչ կրաւնիցդ. զոր իմանասդ և ուսուցանեսդ, և գալ քեզ յուղիղ հաւատս որ տուեալ ի սկզբանէ յեկեղեցիս, ի սրբոց առաքելոց և յաւետարանչաց, որ ինքնատես և սպասաւորք եղեն Բանին։ Զի եթէ զայդ ոչ արասցէ աստուածպաշտութիւնդ քո, որպէս սահմանեցաւ քեզ ժամադրութիւն ի թուղթսն զոր յառաջագոյնն յիշեցաք, և սրբոյ և աստուածապաշտի եպիսկոպոսի Կելեստիանոսի գործակցի մերոյ, զի գիտասցես դանձն քո, եթէ՝ ոչ ունիս ընդ մեզ բաժին և ժառանգութիւն ի քահանայութեան Աստուծոյ և յեպիսկոպոսութեան։ Զի ոչ է հնար մեզ անտես առնել զխռովութիւնս եկեղեցւոյ և զգայթակղութիւնս ժողովրդոց և զանարգութիւնս ուղիղ հաւատոյ, և ի գերութիւն մատնիլ ի քէն հաւատից՝ որ պարտ էին կենաց, զոր պարտ էր քեզ ընդ մեզ ուղիղ փառաւորութեան լինել ցանկացող, և գնալ զկնի սուրբ հարցն ընդ շաւիղս աստուածպաշտութեանն։

Արդ զայս գիտասցիր, որ միանգամ մերժեցանն և անարգեցանն ի քէն վասն հաւատոցն, ի ժողովրդոցն կամ ի քահանայութենէն, ամենեքեան նոքա ընդունելի են, և մեզ հաւասարորդ համարիմք. զի ոչ է մարթ թէ որ միանգամ ուղիղ մտաւք և ճշմարտութեան խոստովանութեամբ կացին, թէ անարգեսցին և խոտեսցին ինչ քո վկայութեամբ այնոքիկ՝ որ բարիոքն արարին և ընդդէմ կացին քո, վասն որոյ և գրեցերն իսկ դու ի մեծ քաղաքն Հռոմ, և ցուցեր թղթովն քով սրբոյ եպիսկոպոսակցին մերոյ Կելեստինոսի։ Զի ոչ եթէ այնչափ միայն պիտոյ է աստուածպաշտութեանդ քում զի խոստովանեսցիս ընդ մեզ, այլ և նշանակ հաստատութեան հաւատոցն ունել յանձին, որ եդաւ ժամանակաւք սուրբ Հոգւովն յընդդեալ և մեծ սիւնհոդոսին որ ժողովեցան ի քաղաքն Նիկիայ, զոր դուն թիւր իմացար և անարժան թարգմանեցեր։ Զի թէպէտ և խոստովանիս լոկ զբարբառն բանիւք, այլ պարտ է քեզ ըստ կարգի աւ-

բինացն գրով տալ զխոստովանութիւն, զի նզովեսցես զապա-
կանեալն և զանարժան կրաւնս վարդապետութեան քո, և ի-
մասցիս ուղիղ, և ուսցիս իբրև զմեզ ամենեսեան։ Որպէս յա-
ռաքելոյս և յարեալս եպիսկոպոսք և վարդապետք, և առաջնորդք
ժողովրդոց, որպէս և կարգեցին ի Հռոմ սուրբ սիւնհոդոսն, և
մեք ամենեքեան, որպէս ուղիղ և անվրէպ և անսխալ գրեցաւ
ի Թուղթն առ աստուածպաշտութիւնդ քո յեկեղեցւոյն. Ա-
ղեքսանդրացւոց, կարգեցաք ի Թուղթն մեր թէ զիա՞րդ աւրէն
է ուսուցանել, և յարմ՞ հեռանալն պարտ իցէ։ Զի այս են կա-
թուղիկէ և առաքելական եկեղեցւոյ հաւատք, որո՛մ միաբանին
ամենայն արևմտեայք և արևելեայք, որ թէ սիւնհոդոսք։

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայր ամենակալ, ամենայն
երևելեաց և աներևութից արարիչ։ Եւ ի մի Տէր Յիսուս Քրիս-
տոս, Որդի Աստուծոյ ծնեալ ի Հաւրէ, Միածին, այսինքն է ի
բնութենէ Հաւր, Աստուած ճշմարիտ. յԱստուծոյ ճշմարտէ,
ծնեալ և ոչ արարեալ, բնակից Հաւր՝ որով ամենայն եղև յեր-
կինս և յերկրի։ Որ վասն մեր մարդկան և վասն մերոյ փրկու-
թեան էջ և մարմնացաւ և մարդացաւ, մեռաւ և յարեաւ յա-
ւուր երրորդի, և ել յերկինս, և գայ դատել զկենդանիս և զմե-
ռեալս։ Եւ ի Հոգին սուրբ։ Եւ որք ասեն թէ էր երբեմն զի
չէր, և թէ յոչընչէ եղև, կամ յայլմէ զաւրութենէ և ի բնու-
թենէ, կամ փոփոխելի և այլայլելի զՈրդին Աստուծոյ, զայն-
պիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

Արդ ամենայնիւ երթամք զհետ խոստովանութեան սրբ-
բոց հարցն՝ որովք խաւսեցաւ սուրբ Հոգին, և զկնի մնաց նո-
ցա արասցուք զնայեցուածս գնացից մերոց, իրրև զարքունի
ճանապարհ գնասցուք և ասասցուք, թէ նոյն ինքն Միածին
Աստուծոյ Բանն, որ ի նոյն Հաւր բնութենէ իսկ է ծնեալ,
Աստուծոյ ճշմարտէ ճշմարիտ Աստուած, զլոյսն ի լուսոյ, ո-
րով ամենայն եղև յերկինս և յերկրի։ Որ վասն մերոյ փրկու-
թեան էջ և ունայնացոյց զանձն իւր, մարմնացաւ և մարդա-
ցաւ, այսինքն մարմին ի սուրբ կուսէն՝ իւր միացոյց, և յար-
գանդէ ըստ մերում նմանութեան ծնաւ, և երևեցաւ մարդ ի
կնոջէ, ոչ անկեալ ի բնութենէ իւրմէ որ էրն, այլ թէպէտ և
եղևն հաւասար մարմնոյ և արեան, սակայն և այնպէս կայ
մնայ որ էն Աստուած, յայտ է, եթէ բնութեամբ և ճշմար-
տութեամբ։ Եւ ոչ զմարմնոյ ասեմք եթէ փոփոխեցաւ ի բնու-

թիւն աստուածութեանն, և ոչ ի բնութիւն մարմնոյ զանձաւ Բանին Աստուծոյ իջուցանել զբնութիւն. զի անշարժ է և անփոփոխելի ամենայնիւ։ Նոյն կայ մշտնջենաւոր ըստ գրոց։ Երևեցաւ տղայ և ի խանձարուրս պատեցաւ և ի գոգ ծնաւղին իւրոյ սրբոյ կուսին, և յերևելն մանուկ, սակայն ընու զամենայն արարածս իբրև Աստուած, և աթոռակից է ծնաւղին զի աստուածութիւնն անչափ է և անսահման. և սահմանել չընդունի։ Միացեալ ի մարմնի բնութեամբ՝ հոգւով բանաւորութեամբ խոստովանիմք զԲանն։ մինում Որդւոյ երկիրպագանեմք՝ Տեառն Յիսուսի Քրիստոսի, և ոչ զատանեմք և բաժանեմք մարդ յԱստուծոյ մերձաւորութեամբ ի միմեանս պատուով և յարգանաւք ինչ միութեան։ զի այսպիսի միտք և բանք՝ ընդունայնութիւնք են և ոչ այլ ինչ։ Զի ոչ ուրոյն անուանեմք Քրիստոս. որ յԱստուծոյ բանն, և ուրոյն դարձեալ Քրիստոս՝ որ ի կուսէն, այլ մի միայն գիտեմք Քրիստոս որ յԱստուծոյ Հաւրէ Բան իւրով մարմնով, և յորժամ մարդկաւրէն աւծանիւր ըստ մեզ, և սակայն սրբոց իւրոց նոյն իսկ թոյ. զՀոգին և ոչ չափով, որպէս ասէ երանելի աւետարանիչն Յովհաննէս։ Այլ և ոչ կայն ասեմք, եթէ ընակեաց Բանն որ յԱստուծոյ իբրև ի լոկ մարդ՝ որ ի կուսէն ծնեալն, զի մի՛ իբրև աստուածազգեստ մարդ իմանայցի Քրիստոս։ Զի թէպէտ և ընակեաց ի մեզ Բանն, ասի և ի Քրիստոս ընակեալ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս, այլ այսպէս իմանամք թէ մարմին եղև։ Ոչ եթէ որպէս և ի սուրբսն ընակել ասի, ըստ նմին հաւասար և ի նմա ասիցեմք զընակելն, այլ միութիւն բնութեամբ, և ոչ ի մարմին փոխել, այսպէս ասի ընակութիւն, որպէս ինչ ասի և վասն ոգւոյ մարդոյ ի մարմնի իւրում։

Այսուհետև մի է Քրիստոս՝ Որդի և Տէր, ոչ իբրև մերձաւորութիւն ինչ լոկ պատուոյն միութեան, և կամ իբրև համարձակութիւն ունել մարդոյ առ Աստուած. զի ոչ կարէ միացուցանել զընութիւնսն հաւասարապատութիւնն։ Զի ահա Պետրոս և Յովհաննէս հաւասարապատիւք են միմեանց. զի առաքեալք և աշակերտք. սակայն չեն մին երկուքն. և ոչ յառելութեան մերձաւորութեան կարգաւք ինչ իմանալ։ Զի չէ մարթ այսպիսի իրաւք իմանալ բնութեամբ միութիւն. և ոչ ընդունելութիւն խնամոց, որպէս մերձենամք առ Տէր, որպէս և գրեալն է, և լինիմք մի հոգի ի նա։ Մանաւանդ ի մերձա-

Digitized by Google

տրութեանդ անուանէ ամենեքին հրաժարիմք, զի չէ բաւական նշանակել զմիութիւնն։ Այլ և ոչ Աստուած կամ Տէր Քրիստոսի անուանեմք զԲանն որ յԱստուծոյ Հաւրէ, զի մի դարձեալ յայտնի յերկուս բաժանիցեմք զմի Քրիստոս զՈրդի և զՏէր, և ի հայհոյութիւն պարտաւորութեան անկանիցիմք, յորժամ Աստուած՝ Տէր իւր անուանիցեմք զնա։ Այլ որպէս յառաջագոյն ասացաք, միացաւ Բանն Աստուած՝ մարմնի բնութեամբ, և է ամենեցուն Աստուած, և տիրէ ամենայնի, և ոչ ինքն իւր ծառայ է, և ոչ ինքն իւր տէր։ Այլ անմարթ և անարժան է և լի հայհոյութեամբ իմանալ զայս և ասել. զի թէպէտ և ասէ Աստուած իւր զՀայր, սակայն Աստուած է ինքն բնութեամբ, և ի բնութենէ նորա։ Այլ ոչ եթէ անգիտացաք ինչ այնմ, զի հանդերձ աստուածութեամբն և մարդ եղև։ և որ ընդ Աստուծով իցէ ըստ մարդկութեան կարգացն բնութեան, այլ ինքն իւր տէր իրր լինիցի Աստուած կամ Տէր։ Այսուհետև իբրև զմարդ, որչափ վայել է ըստ ունայնանալոյն կարգայ ընդ մեզ, զինքն ընդ Աստուծով ասէ, այսպէս, Եղև ընդ աւրինաւք, և սակայն գաւրէնքն ինքն խաւսեցաւ, և աւրէնսդիր իրրև Աստուած։ Հրաժարեմք դարձեալ և զայն ասել զսան Քրիստոսի, եթէ զսան զգենլոյն զգեցեալն պաշտեմ, և զսան աներևութին երկրպագանեմ երևելոյն։ Արհաւիրք և դողումն են, և դարձեալ ի վերայ այնորիկ և զայս ևս ասել. թէ որ առաւն, զսան առնլոյն Աստուած յորչորչի, զի որ զայն ասէ, բաժանէ դարձեալ յերկուս Քրիստոս, և մարդ ուրոյն անուանէ, և Աստուած դարձեալ ուրոյն և ուր ունի զխոստումն միութեանն։ Զսան զի մարթ իսկ է եթէ ընկեր յընկերէ երկրպագիցի ոք, և ոչ յորչորչի Աստուած, այլ մի իմանալի է Աստուած Քրիստոս, Միածին Որդի, միով երկրպագութեամբ պատուի հանդերձ մարմնով իւրով։

Եւ խոստովանիմք եթէ նոյն ինքն որ յԱստուծոյ Հաւրէ ծնեալ Որդի և Աստուած Միածին, որ իւրով բնութեամբն անվիշտ էր, մարմնով իւրով մեռաւ զսան մեր ըստ գրոց, և էր ի խաչ ելեալ ընդ մարմնին իւրում, և անվշտութեամբ իւրացոյց զվիշտս մարմնոյն, շնորհաւք Աստուծոյ, զսան մեր զմահ ճաշակեաց։ Եւ մահու զմարմին իւր՝ այն որ բնութեամբն է կենդանի, և նա ինքն է յարութիւն, զի անհաս զաւրութեամբն կոխեսցէ զմահ, և իւրով մարմնովն ելիցի անդրանիկ ի մեռելոց և պտուղ ննջեցելոցն, և արասցէ ճանապարհ բնութեան՝

մարդկան յանապականութիւն վերանալ և որպէս այժմ ասացաք, շնորհաւքն Աստուծոյ վասն ամենեցուն կամհ ճաշակեսցէ, և յարեաւ յաւուր երրորդի, և առ յաւարի զդժոխս։ Արդ թէպէտև ասի թէ ի մարդոյ եղև և յարութիւն մեռելոց. այլ ի-մանամք զԻսանն Աստուծոյ որ եղև մարդ և լուծաւ նովաւ զաւրութիւն մահու։ Գայ դարձեալ ի ժամանակի իւրում մի Որդի և Տէրն փառաւք Հաւր, զի դատեսցէ զտիեզերս արդարութեամբ իւրով, որպէս և գրեալ է։ Ցիրաւի և զայն ևս յաւելցուք թէ պատմեմք և աւետարանեմք զմահն Միածնի Որդւոյն Աստուծոյ, այսինքն Յիսուսի Քրիստոսի, և զ յարութիւնն ի մեռելոց և զվերանալն յերկինս։

Խոստովանիմք զպատարագս աւրհնութեան կատարեալ յեկեղեցիս այսպէս. մերձենամք ի խորհուրդն աւրհնութեան, և սրբիմք յորժամ կցորդիմք սուրբ մարմնոյն և պատուական արեանն փրկչին ամենայնի Քրիստոսի, և ոչ եթէ իբրև զլոկ մարմին ընդունիմք, քաւ լիցի, և ոչ իբրև զմարդոյ սրբեցելոյ և մերձեցելոյ ի բանն իբրև ի պատիւ միութեան, և կամ իբրև զաստուածութիւնն բնակիչ ունել յինքեան, այլ իբրև զկենդանարար ճշմարտութեամբ և Բանին մարմին, զի կենդանի է բնութեամբ իբրև զԱստուած, և վասն զի միացաւ ի մարմին իւր՝ կենդանատրեցոյց զնա։ Զի թէպէտ և ասիցէ ցմեզ, եթէ՝ Արդարև ասեմ ձեզ, եթէ ոչ կերիցէք զմարմին Որդւոյ մարդոյ և ըմպիցէք զարիւն նորա ոչ իբրև զմարդոյ՝ որ իբրև զմի ի մէնջ համարիցիմք։ Քանզի զի՞արդ էր հնար եթէ մարդոյ մարմին՝ որ բնութեամբ իբրև զմեզ ելցէ, եթէ կարիցէ լինել կենդանարար, այլ ճշմարտութեամբ միացոյց իւր վասն մեր մարմին և եղև մարդ, և յորչորչեցաւ Որդի մարդոյ։ Եւ յաւետարանի փրկչին մերոյ ի բարբառս ոչ յերկուս զաւրութիւնս և ոչ յերկուս երեսս բաժանեալ տեսանեմք, և ոչ է իսկ մին. մինաւոր Քրիստոս յերկուս բաժանեալ։ Զի թէպէտ և յերկուց ի բաց ելեալ, այլ ի միութիւն յանբաժին միացեալ, որպէս մարդ իմանալի՝ է ի շնչոյ և ի մարմնոյ, և ոչ կրկին ոք ասի, այլ մի՛ յերկոցունց։ Այլ ըստ մարդկութեանն և ըստ աստուածութեանն իբրև զմիոչէ իմասցուք ուղղութեամբ. զի յորժամ աստուածաբար ասիցէ կինքենէ ասէ, թէ՝ Որ ետես զիս՝ ետես զՀայրն իմ, և թէ՝ Ես և Հայր իմ մի եմք, զաստուածութենէ և զանհասութենէ նորա իմանամք. զի մի է առ Հայրն իւր, վասն նոյն

Digitized by Google

էութեանն բնութեան, զի պատկեր և կերպարան և ծագումն փառաց Նորա է։

Դարձեալ և յորժամ զմարդասիրութեան կարգս ոչ անարգէ և խաւսի ընդ Հրեայսն ասէ. Այժմ խնդրէք զիս սպանանել, այր՝ որ զճշմարտութիւնն ձեզ խաւսեցայ։ Դարձեալ ոչինչ նուազագոյն երևի ի ճշմարտութենէն և ի հաւատարութենէն Հաւր Աստուածն Բան, յորժամ ի կարգս մարդկութեանն տեսանիցեմք։ Եւ յիրաւի և հաւատալի է թէ որ Աստուածն էր բնութեամբ՝ եղև մարմին, այսինքն մարդ, հոգւով և մտաւք բանաւորութեամբ։ Եւ զինչ մարթ ասել աբդևք ամաւթ համարել ուրուք զբարբառս Նորա, թէ ասացի որպէս մարդկան վայել է, զի եթէ հրաժարեալ էր յայնմանէ որ ըստ մարդկութեան վայել էին բանքն, ով էր որ ստիպէր զնա լինել իբրև զմեզ մարդ, այն՝ որ ի չոյց զանձն իւր կամաւք ի խոնարհութիւն վասն մեր, վասն որոյ պատճառանաց հրաժարէր յայնցանէ՝ որ ըստ խոնարհութեան իրացն վայել էին բանքն։

Այսուհետև միում երեսաց և միում զաւրութեան զբարբառն աւետարանի վայել է դնել, այսինքն Բանին մարմնացելոյ, զի մի Ցէր է Յիսուս Քրիստոս ըստ գրոց։ Զի թէպէտ և անուանի առաքեալ և քահանայապետ խոստովանութեան մերոյ, իբրև զքահանայանալ Աստուծոյ և Հաւր, որ վասն մեր Հաւրն իւրոյ մատուցանէ զհաւատս խոստովանութեան մերոյ։ Եւ ի Հոգին սուրբ դարձեալ զնոյն ասեմք որ յԱստուծոյ բնութենէն ծնեալ է Որդի Միածին, և ոչ իբրև զմարդոյ ուրոյն համարիմք զքահանայութեանն անուն, այլ նոյն ինքն եղև միջնորդ Աստուծոյ և մարդկան և փրկանք, ածել ի խաղաղութիւն, տալ զանձն իւր ի հոտ անուշից Աստուծոյ և Հաւր։ Քանզի և ասէ, Զոհս և պատարագս ոչ կամեցար, զողջակէզս և զվասն մեղաց ոչ հաճեցար, մարմին հաստատեցեր ինձ, յայնժամ ասացի ահաւասիկ գամ ես, ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ առնել զկամս քո Աստուած։ Մատոյց զմարմին իւր ի հոտ անուշից վասն մեր և ոչ վասն իւր։ Որպիսի զոհից և պատարագաց կարաւտ էր արդեւք նա, այն որ հեռին և ի վեր է քան զմեզս, իբրև զԱստուած։ Զի թէ ամենեքին մեղան և նուազեալ են ի փառացն Աստուծոյ որով գայթակղեալ անկան ի վիշտս, և սխտացաւ բնութիւն մարդկան ի մեղս, այլ նա ոչ պսպէս, և մեք նուազեալ եմք ի փառաց Նորա։ Եւ զի՞արդ ասիցի արդեւք ե-

թէ չենաւ զառն ճշմարիտ. եթէ ասիցէ՞ ոք արդեաւք եթէ մատոյց զանձն իւր վասն իւր, և ոչ վասն մեր։ Ոչ երբեք կարեն խաւսել ի պարտաւորութենէ ամպարշտութեանն իւրեանց, զի և ոչ իւիք իրաւք զտանի յանցուցեալ, զի և ոչ արար մեզս։ Արդ՝ ուրպիսի պատարագաց լինէր կարաւտեալ, յորում ոչն էին մեղք՝ կարաւտ պատարագացն ի քաւութիւն։ Եւ յորժամ ասիցէ վասն սրբոյ Հոգւոյն, եթէ՝ Նա զիս փառաւոր առնէ, իմասցուք ուղիղ, զի ոչ եթէ նա փառաց ինչ կարաւտ է յայլմէ առնուլ, մի Որդի Քրիստոս և կամ ի Հոգւոյն սրբոյ փառս զտանել, զի ոչ եթէ ի վերս քան զնա զտանիցի Հոգի նորա, այլ վասն յայտնութեան աստուածութեանն իւրոյ, և վասն հանդիսի մեծամեծ գործոցն որ իւրով Հոգւովն ցուցանէր, փառաւորել ի նմանէ ասի։ Զոր աւրինակ և ըստ մեզ իսկ, յորժամ ասիցէ ոք վասն զաւրութեան իւրոյ կամ իմաստութեան թէ որովք փառաւորիմն ես, զի թէպէտ և Հոգին առանձինն անձնաւորութեամբ և իմանի յանձն իւր և ի Հոգի սուրբ, և՞ոչ Որդի, այլ ոչ է աւտար ի նմանէն, զի Հոգի ճշմարտութեան անուանի, և Քրիստոս ճշմարտութիւն, և երևի նովաւ, որպէս յԱստուծոյ ի Հաւրէ։

Ապդէր և Հոգին ի ձեռն սրբոց առաքելոցն և առնէր փառաւորեալս, և յետ վերանալոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերկինս, և փառաւորէր զնա զի Հաւատարիմ է թէ Աստուած էր բնութեամբ։ Դարձեալ և ինքն ազդէր Հոգւովն իւրով, վասն որոյ և ասէն իսկ թէ, Յիմմէն առնու և պատմէ ձեզ, և ո՛չ ևս ասեմք թէ իբրև առնլով Հոգին ընդունիցի զիմաստութիւն և զզաւրութիւն, զի կատարեալ է ամենայնիւ, և անկարաւտ ամենայն բարութեանց, վասն զի ի Հաւր զաւրութենէն և յիմաստութենէ Որդւոյ, Հոգին ինքն իմաստութիւն էր և զաւրութիւն։ Եւ վասն զի Աստուած միացեալ ի մարմնի բնութեամբ, սուրբ կոյսն ծնաւ ըստ մարմնոյ, զսա և Աստուածածին ասեմք, ոչ եթէ բնութեան և էութեան բանին սկիզբն ունիցի ի մարմնոյն, զի էր ի սկզբանէ, և Աստուած էր Բանն, և նա ինքն արարածոց արարիչ մշտնջենաւորակից Հաւր և արարիչ ամենայն արարածոց։ այլ որպէս յառաջագոյն ասացաք, վասն զի բնութեամբ միացոյց իւր զմարդկութիւնն, և առ յանձն ծնանիլ յարգանդէ ըստ մարմնոյ, ոչ իբրև կարաւտեալ ինչ յիւր բնութիւնն՝ և ընդ ժամանակաւք և ի վախճանի ա-

ւուրց ծնանիլ, այլ կի զծննդեանն մերոյ աւրհնեսցէ զսկիզբն։ Եւ ի ծնանելն նորա ի կնոջէ միացեալ մարմնովն, պնուհեան լուեցուսցէ յամենայն ազգացս մարդկութենէ զերկրաւոր մարմնոս մեր, և որ ի տրտմութեանն որդիս ծնեալ ատացաւ, նա-վա՛ւ խափանեսցի։ Եւ ճշմարտեսցէ զբարբառ մարգարէութեանն՝ որ ասէ, Զաւրացաւ մահ և եկուլ։ Եւ դարձեալ։ Եհատ Աստուած զամենայն արտասուս յամենայն երեսաց։ Վասն այսպիսի պատճառանաց ասեմք զտեսչութիւն նորա։ Եւ զի կոչեսցի սրբովք աշակերտաւքն հանդերձ և երթիցէ ի հարսանիս ի Կանա Գալիլեացւոց և աւրհնեսցէ զհարսանիսն։ Զայս ուսուցանել ուսաք ի սրբոց աւետարանչացն և առաքելոցն, և յամենայն աստուածաշունչ գրոց և յերանելի հարցն ի ճշմարիտ խոստովանութենէն։ Այսմ ամենայնի պարտ է և քում երկիւղածութեանդ հաւասարել և վկայել առանց ամենայն նենդութեանց, և զոր ինչ պարտ է նշովել երկիւղածութեանդ քում կարգեալ է ի թղթիդ մերում։

Ա։ Եթէ ոք ոչ խոստովանեսցի Աստուած ըստ ճշմարտութեանն զԵմմանուէլ, և վասն այսորիկ և Աստուածածին զսուրբ կոյսն, ծնեալ ըստ մարմնոյ զմարմնացեալ Բանն Աստուած՝ նշովեա՛լ եղիցի։

Բ։ Եթէ ոք ոչ խոստովանեսցի բնութեամբ միանալ ի մարմնի Բանին Աստուծոյ Հաւր, և մի Քրիստոս հանդերձ մարմնովն իւրով զնոյն Աստուած միանգամայն և մարդ։ նզովեա՛լ եղիցի։

Գ։ Եթէ ոք զմի Քրիստոս բաժանեսցէ յերկուս դէմս յետ միանալոյն, և միայն մերձաւորութիւն յառելութեան ասիցէ իբրև պատուով, և կամ ճոխութիւն և զաւրութիւն գտեալ, և ոչ միութիւն բնութեամբ. նզովեա՛լ եղիցի։

Դ։ Եթէ ոք յերկուս երեսս և կամ յերկուս զաւրութիւնս յաւետարանացն և զառաքելոցն զգրեալսն և զբարբառսն բաժանեսցէ, և կամ զՔրիստոսի ասացեալսն սրբովք իւրով, և զամ զոր իւր իսկ վասն իւր իցէ ասացեալ, և զոմանս իբրև մարդոյ ուրոյն ի բանէն Աստուծոյ՝ իբր յարելութեամբ իմանայցէ, և զոմանս դարձեալ աստուածարար միայն՝ որ ի Բանէն Աստուծոյ Հաւր. նզովեա՛լ եղիցի։

Ե։ Եթէ ոք իշխեսցէ ասել մարդ աստուածազգեաց զՔրիստոս, և ոչ Աստուած ճշմարիտ՝ իբրև զմի Որդի բնու-

թեամբ, որ եղև Բանն մարմին և հաւասարեաց մեզ արեամբ և մարմնով. նզովեա՛լ եղիցի։

Զ։ Եթէ ոք ասիցէ եթէ, Աստուած և Տէր է Քրիստոսի որ յԱստուծոյ Հաւրէ Բանն, և ոչ խոստովանեսցի զնոյն Աստուած և մարդ միանգամայն ի լինել Բանին մարմին ըստ գրոց. նզովեա՛լ եղիցի։

Է։ Եթէ ոք ասիցէ իբրու մարդ զաւրութիւն գտանէր ի յԱստուծոյ Բանէն Յիսուս, և զՄիածնին փառս մերձեցուցանէ իբրև յայլ ոք քան զնա, նզովեա՛լ եղիցի։

Ը։ Եթէ ոք իշխեսցէ ասել, եթէ վերացելոյ մարդոյն արժան է երկրպագութիւն առնել ընդ Բանին Աստուծոյ, և փառաւորակից լինել և անուանակից ընդ Աստուծոյ իբրև այլ յայլում. զի յորժամ ընդ ումեք ասիցէ ի հարկէ երկուս իմացուցանէ, և ոչ միով երկրպագութեամբ պատուեսցէ զԵմմանուէլն, և մի փառաւորութիւն տացէ նմա՝ որով եղև բանն՝ մարմին, նզովեա՛լ եղիցի։

Թ։ Եթէ ոք ասիցէ զմիոյ Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ եթէ փառաւորեցաւ ի Հոգւոյն իբրև յաւտար գաւրութենէ, և նովաւ առաւելութիւն զաւրութեան ի վերայ այսոց գլծոյ կատարել ի մարդիկ զնշանս աստուածագործ, և ոչ նորին իսկակից զՀոգին՝ որով ունէր զԱստուածագործ նշանս, նզովեա՛լ եղիցի։

Ժ։ Առաքեալ և քահանայապետ խոստովանութեան մերոյ լինել ասեն զՔրիստոսէ աստուածաշունչ գիրք, և մատուցանել զանձն իւր վասն մեր ի հոտ անուշից Աստուծոյ Հաւր։ Արդ՝ եթէ ասիցէ ոք, առաքեալ և քահանայապետ խոստովանութեան մերոյ, ոչ զայն որ յԱստուծոյ Հաւրէ Բանն էր, եղև մարմին և ընդ մեզ մարդ. այլ ուրոյն ի նմանէ մարդ ի կնոջէ, և կամ եթէ ասիցէ ոք եթէ վասն իւր մատոյց զանձն իւր պատարագ, և ոչ միայն վասն մեր, զի ոչ էր կարեաւ պատարագի, որ ոչ գիտէր զմեղս. նզովեա՛լ եղիցի։

ԺԱ։ Եթէ ոք ոչ խոստովանեսցի զմարմինն Տեառն կենդանարար, և իւր իսկ Բանին որ յԱստուծոյ, այլ որպէս այլոյ աւրու

արտաքս քան զնա մերձեցելոյ ի նա պատուով, և կամ որպէս բնակեցելոյ ի նա աստուածութեամբն, և ոչ կենդանարար, որպէս ասացի, զի եղև իւր Բանին մարմին՝ որ կամենայն կարող է կենդանացուցանել. նզովեա՛լ եղիցի։

Digitized by Google

ԺԲ. Եթէ ոք ոչ խոստովանեսցի զԲանն որ յԱստուծոյ չարչարեալ մարմնով, խաչեալ մարմնով, և զմահ ճաշակեալ մարմնով, և լեալ անգրանիկ ի մեռելոց, որ է կենդանարար, որպէս զԱստուած. Նզովեա՛լ եղիցի։

Digitized by Google

ԵՐԱՆԵԼԻՈՑՆ ՄԱԿԱՐԱՑ ՍՐԲՈՑ ՔԱՂԱՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ, ԿԱՆՈՆԱԿԱՆ ԹՈՒՂԹ Ի ՀԱՅՍ ՎԱՍՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՖԿԱՐԳԱՑ, ԶՈՐ ՉԷ ԱՐԺԱՆ ԸՆԴ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴ ԿԱՐԳ ԱՆՑԱՆԵԼ. ԳԼՈՒԽՔԻՆՆ։

Ա*հա վասն ահի և երկիւղին Աստուծոյ և ի փափաք սիրոյ բարեպաշտութեան ձերոյ փութացայ զարթուցանել ըզ-բարեսէր և կպարկապտ սիրտս ձեր ի խնդիր ուղղի բարեպաշ-տութեան ճշմարիտ կանոնադրութեան կաթուղիկէ եկեղեցւոյ, և կարևոր կարգաց Աստուծոյ, զոր պարտ է բազում զգուշա-թեամբ ստանալ, և աներկեան հաւատով պահել ամենայն երա-կիւղածաց Աստուծոյ, Զորս և դուք ոչ յապաղեալ հեղգացուցիչ ինչ դանդաղանաւք ծուլացարուք, այլ փութացեալ շնորհաւք սուրբ հոգւոյն, ջերմութեամբ, և աստուածային սիրոյն բաղ-ձանաւք, որ ոչ միայն ի մերձաւորացն յաւժարեցուցանէ ժամ-խնդրել զհոգևոր աւգտութիւնն, այլ և ի տար աշխարհ փու-թացուցանէ հասանել մեծաւ փափագանաւք, և ըղձալի տեն-չանաւք յաղագս աստուածահաճոյ խնդրոյ և հոգւոյ փրկու-թեան, զմտաւ ածելով զասացեալն, թէ՝ Մի՛ դանդաղեսցիս երթալ հեռի ճանապարհ, թէ պիտանացու ինչ ուսուցանել օր խոստանայցէ։ Որ և զոյն փափաք հոգևոր վաստակոց յանձինս ձեր երևեցուցեալ, վասն մեծաշահ աստուածային գանձուցն հոգևորաց, առաքեցէք զիր ի հեռաւոր աշխարհէ, ի կողմանցդ արևելից ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, որ ի ձեռն երկիւղա-ծաց քահանայից մատուցաւ առաջի բազմութեան եպիսկոպո-սաց, որք մի մի ժողովեալ յիւրաքանչիւր քաղաքաց, որոց առ-աջի անկեալ հոգևոր մաղթանաւք խնդրեցին զգրոյն պատաս-խանիս, զոր թէպէտ և ոչ կամէաք ծանրացեալ տկարութեամբ*

հրամանատուութեանս մեծամեծ կրաւնիւք եկեղեցւոյ, սակայն հոգևոր ժողովրդեան, և փոյթ աստուածասէր քահանայիցս հարկաւորեաց զմեզ գրել և տալ ձերում կամայաւժար բարեպաշտութեանդ, զգլուխ կարևոր կարգաց եկեղեցւոյ, զհաստատութեան հաւատոյ, ոչ մի ինչ երկբայութեամբ, և զամենայն կանոնադրութիւնս սրբոյ ժողովոյն, որ վասն հերձուածողացն եղև, զորս կարևոր է ընդունել ամենայն բարեպաշտաց, որ եղև վասն դրութեան կարգաց եկեղեցւոյ։ Այլ և տեսեալ զրաւմանզուշալի կենարար մկրտութեան սրբոյ քաղաքիս՝ հիացեալ կարմացան, թէ կողմանք արևելից թերի են զգուշութեամբ յայսպիսիս բաղում ինչ իրաւք, զի ի տեղիս տեղիս աւաղան կարգաւոր ոչ ունին, և յորպէտ ամանի մկրտեն, և է որ սարկաւագունք մկրտութիւն առնեն, և եպիսկոպոսք և քահանայք առանձնակ ձէթ աւծման աւրհնեն, և դձէթ կնքոյ որ յառաքելոյն և պյսր պահի, յաւելուածով ոչ ունին, և զբոլոր զգայարանս մանկան ոչ աւծանեն։ Եւ է զի զժողովոյն կարգեալն ոչ ասեն, ուրեք ուրեք քահանայքն ի ժամ մկրտութեանն։ Եւ ձեռնադրութեամբ ժառանգաւորքն միապատիւ հաւասարին, և ոչ ընդ աւելեաւքն հնազանդին։ Եւ բաղում և այլ շփոթութիւնք հպարտութեամբ և ծուլութեամբ, զոր ի կարգս եկեղեցւոյ մուծեալ են մարմնասէրք, զոր ծանուցին մեզ եկեալքս։

Ընդ որ հիացեալ մեծապէս զարմացաք։ և վասն երկիւղին Աստուծոյ ոչ հեղգացաք գրել փութանակի, ես Մակարիոս Արքեպիսկոպոս Երուսաղէմի և ամենայն բազմութիւն եպիսկոպոսաց՝ որ ընդ իս են, առաքել ի կողմանսդ արևելից, առ Քրիստոսասէր և երկիւղած եպիսկոպոսապետդ Տէր Վրթանէս, և առհամաւրէն եպիսկոպոսս և քահանայս Հայոց բաղում զգուշութեամբ, և երկիւղիւ կատարել զկարգաւորութիւն մեծի խորհրդոյն Աստուծոյ, որ կատարի ի կաթուղիկէ եկեղեցւոյ, որով պարգևի ի շնորհաց Հոգւոյն՝ մեղաց թողութիւն և ոգւոց փրկութիւն մկրտելոյն ի սուրբ աւազանին, և Հոգին սուրբ ոչ արհամարհէ զցանկացաւղս բարեպաշտութեանն, այլ խոնարհեալ իջանէ և սրբէ ուղիղ դաւանութեամբն ի ձեռն սրբոյ ջրոյ աւազանին։ Եւ յայսմ ամենայնի չէ պարտ ծուլանալ և դանդաղել եպիսկոպոսացն և երիցանցն ի մկրտել զայնոսիկ, որ կամին մերձենալ ի բարեպաշտութիւն աստուածպաշտութեան, զի այն է փոյթ քահանայից և գործ կարևոր առաջնորդաց եկեղեցւոյ,

Digitized by Google

կամաւորն բարեպաշտութեան խրատել և ուսուցանել բանիւ վարդապետութեամբ, մերժել ի սատանայէ և ընծայեցուցանել Աստուծոյ սրբոյ աւազանին լուսաւորութեամբ. և մի՛ ումեք լինել պատճառք կորստեան, անհնազանդութեամբ, և թերակատար ինչ կարգաւք մկրտութեան, վասն դանդաղութեան իւրոյ առ ոչ ածել զամենայն կարգաւորութիւն ի վերայ մատուցեալսն ի մկրտութիւն սուրբ աւազանին, զոր բակում զգուշութեամբ և ցնծալից դողութեամբ առանց դանդաղելոյ կատարէ ընդհանրական եկեղեցի Աստուծոյ։

Ա. Թէ արժան իցէ սարկաւագաց մկրտութիւն առնել և կատարեալ իցէ՞ խորհուրդն։

Գիտութիւն լիցի Քրիստոսասէր եղբայրութեան ձերոյ զի եպիսկոպոսաց և քահանայից միայն է իշխանութիւնս այս, և սարկաւագաց զայս առնել չէ արժան, քանզի սպասաւորք են և խափանեալ է այս առ ի նոցանէ, և աւելի է խնդրելն թէ կատարեալ է առ ի նոցանէ մկրտեալն։ Բայց պարտ է նախ քննել՝ թէ սովորութիւն իցէ գաւառին այնմիկ սարկաւագացն մկրտել. և եթէ գտցի ոք արարեալ, ընդ անմեղութեամբ է վասն անգիտութեան կարգաց եկեղեցւոյ. զի սովորութեան գաւառին զհետ չոքաւ։ Իսկ եթէ գիտէր զկարգս եկեղեցւոյ, և անց գնոքաւք, եղիցին ի վերայ նորա պատիժք ըստ կարգի յանցանաց։

Բ. Եթէ աւազան սրբեալ ոչ ունին և յանպէտ ամանի մկրտեն։

Զի եթէ ոչ էր մերձ եկեղեցի շինեալ ի փառս Աստուծոյ և ի մուտս ժողովրդոց, առանց մեղադրելոյ արդեւք էր, և եթէ եկեղեցիս ունիմք, պարտ է և մկրտատունս առնել և աւազան, յորում մկրտէ որ գայցեն յուղիղ հաւատս բարեպաշտութեան։ Ապա եթէ դիպեսցի ոք հիւանդ՝ ուր ոչ իցէ եկեղեցի և կարգաւոր աւազան, չէ արժան արգելուլ որք կամիցին մկրտել, այլ կատարել զմկրտութիւնն առանց կարգաւոր աւազանի, վասն զի հարկ է պիտոյիցն, զի մի՛ գտցի պարտական փրկութեանն, խափանելով զմկրտութիւն՝ զի Հոգին տուրբ ըստ մաղթողին տայ զշնորհն, և ըստ ամանին ոչ լինի արգելեալ, և յամենայն ժամ փափաքեալքն բաւականանան շնորհիւ Հոգւոյն։ Եւ ոչ ի գլխաւոր տաւնսն միայն է կատարելութիւնն, զի առաքեալքն ոչ ըստ ընտրութեան տաւնիցն մկրտէին, այլ ըստ բաւականի եկելոցն լուսաւորէին ի ջուրցն վերատին ծնանելոյ։ Եւ երեքկին ընկրդ-

հրամանատուութեանս մեծամեծ կրաւնիւք եկեղեցւոյ, սակայն հոգևոր ժողովրդեան, և փոյթ աստուածասէր քահանայիցս հարկաւորեաց զմեզ գրել և տալ ձերում կամայաւժար բարեպաշտութեանդ, զի զի կարևոր կարգաց եկեղեցւոյ, զհաստատութեան հաւատոյ, ոչ մի ինչ երկբայութեամբ, և զամենայն կանոնադրութիւնս սրբոյ ժողովոյն, որ վասն հերձուածողացն եղև, զորս կարևոր է ընդունել ամենայն բարեպաշտաց, որ եղև վասն դրութեան կարգաց եկեղեցւոյ։ Այլ և տեսեալ զբազմազգուշալի կենարար մկրտութեան սրբոյ քաղաքիս՝ հիացեալ զարմացան, թէ կողմանք արևելից թերի են զգուշութեամբ յայսպիսիս բազում ինչ իրաւք, զի ի տեղիս տեղիս աւաղան կարգաւոր ոչ ունին, և յորպէտ ամանի մկրտեն, և է որ սարկաւագունք մկրտութիւն առնեն, և եպիսկոպոսք և քահանայք առանձնակ ձէթ աւծման աւրհնեն, և զձէթ կնքոյ որ յառաքելոյն և այսր պահի, յաւելուածով ոչ ունին, և զբոլոր զգայարանս մանկան ոչ աւծանեն։ Եւ է զի զժողովոյն կարգեալսն ոչ ասեն, ուրեք ուրեք քահանայքն ի ժամ մկրտութեանն։ Եւ ձեռնադրութեամբ ժառանգաւորքն միապատիւ հաւասարին, և ոչ ընդ աւելեաւքն հնազանդին։ Եւ բազում և այլ շփոթութիւնք հպարտութեամբ և ծուլութեամբ, զոր ի կարգս եկեղեցւոյ մուծեալ են մարմնասէրք, զոր ծանուցին մեզ եկեալքս։

Ընդ որ հիացեալ մեծապէս զարմացաք։ և վասն երկիւղին Աստուծոյ ոչ հեղգացաք գրել փութանակի, ես Մակարիոս Արքեպիսկոպոս Երուսաղէմի և ամենայն բազմութիւն եպիսկոպոսաց՝ որ ընդ իս են, առաքել ի կողմանսդ արևելից, առ Քրիստոսասէր և երկիւղած եպիսկոպոսապետդ Տէր Վրթանէս, և առհամաւրէն եպիսկոպոսս և քահանայս Հայոց բազում զգուշութեամբ, և երկիւղիւ կատարել զկարգաւորութիւն մեծի խորհրդոյն Աստուծոյ, որ կատարի ի կաթուղիկէ եկեղեցւոջ, որով պարգևի ի շնորհաց Հոգւոյն՝ մեղաց թողութիւն և ոգւոց փրկութիւն մկրտելոցն ի սուրբ աւազանին, և Հոգին սուրբ ոչ արհամարհէ զցանկացաւոս բարեպաշտութեանն, այլ խոնարհեալ իջանէ և սրբէ ուղիղ դաւանութեամբն ի ձեռն քրիստոսի զոր ապանին։ Եւ յայսմ ամենայնի չէ պարտ ծուլանալ և դանդաղել եպիսկոպոսացն և երիցանցն ի մկրտել զայնոսիկ, որ կամին մերձենալ ի բարեպաշտութիւն աստուածպաշտութեան, զի այն է փոյթ քահանայից և գործ կարևոր առաջնորդաց եկեղեցւոյ,

Digitized by Google

կկամաւղն բարեպաշտութեան խրատել և ուսուցանել բանիւ վարդապետութեամբ, մերժել ի սատանայէ և ընծայեցուցանել Աստուծոյ սրբոյ աւազանին լուսաւորութեամբ. և մի՛ ումեք լինել պատճառք կորստեան, անհնազանդութեամբ, և թերակատար ինչ կարգաւք մկրտութեան, վասն դանդաղութեան իւրոյ առ ոչ ածել զամենայն կարգաւորութիւն ի վերայ մատուցեալսն ի մկրտութիւն սուրբ աւազանին, զոր բակում զգուշութեամբ և ցնծալիս դողութեամբ առանց դանդաղելոյ կատարէ ընդհանրական եկեղեցի Աստուծոյ։

Ա. Թէ արժան իցէ՞ սարկաւագաց մկրտութիւն առնել, և կատարեալ իցէ՞ խորհուրդն։

Գիտութիւն լեցի Քրիստոսասէր եղբայրութեան ձերոյ զի եպիսկոպոսաց և քահանայից միայն է իշխանութիւնս այս, և սարկաւագաց զայս առնել չէ արժան, քանզի սպասաւորք են և խափանեալ է այս առ ի նոցանէ, և աւելի է խնդրելն թէ կատարեալ է առ ի նոցանէ մկրտեալն։ Բայց պարտ է նախ քննել՝ թէ սովորութիւն իցէ գաւառին այնմիկ սարկաւագացն մկրտել. և եթէ գոցի ոք արարեալ, ընդ անմեղութեամբ է վասն անգիտութեան կարգաց եկեղեցւոյ, զի սովորութեան գաւառին զհետ չոքաւ։ Իսկ եթէ գիտէր զկարգս եկեղեցւոյ, և անց գնոքաւք, եղիցին ի վերայ նորա պատիժք ըստ կարգի յանցանաց։

Բ. Եթէ աւազան սրբեալ ոչ ունին և յանպէտ ամանի մկրտեն։

Զի եթէ ոչ էր մերձ եկեղեցի շինեալ ի փառս Աստուծոյ և ի մուտս ժողովրդոյ, առանց մեղադրելոյ արդեւք էր, և եթէ եկեղեցիս ունիմք, պարտ է և մկրտատունս առնել և աւազան, յորում մկրտէ որ գայցեն յուղիղ հաւատս բարեպաշտութեան։ Ապա եթէ դիպեսցի ոք հիւանդ՝ ուր ոչ իցէ եկեղեցի և կարգաւոր աւազան, չէ արժան արգելուլ որք կամիցին մկրտել, այլ կատարել զմկրտութիւնն առանց կարգաւոր աւազանի, վասն զի հարկ է պիտոյիցն, զի մի՛ գոցի պարտական փրկութեանն, խափանելով զմկրտութիւն՝ զի Հոգին տուրբ ըստ մաղթողին տայ զշնորհն, և ըստ ամանին ոչ լինի արգելեալ, և յամենայն ժամ փափաքեալքն բաւականանան շնորհիւ Հոգւոյն։ Եւ ոչ ի գլխաւոր տաւնն միայն է կատարելութիւնն, զի առաքեալքն ոչ ըստ ընտրութեան տաւնիցն մկրտէին, այլ ըստ բաւականի եկելոցն լուսաւորէին ի ջուրցն վերսին ծնանելոյ։ Եւ երեքկին ընկըղ-

մամբն թաղեալ ի ջուր սուրբ աւազանին, զերեքաւրեայ թաղումն Տեառն նշանակեմք յանձինս մկրտելոցն զոր և աստուածային առաքեալն յայտնապէս ցուցանէ ասելով, թէ՝ Թաղեցաք ընդ նմա մկրտութեամբն, նմանողք եղիցուք նմանութեան մահու նորա, զի նորոգութեամբ յարութեանն հաղորդ լինիցիմք նմա ի կեանսն յաւիտենից։ Եւ այսպէս ուղիղ դաւանութեամբ ձեռս ի վերայ դնելով պարգևեալ լինի Հոգին սուրբ ի փրկութիւն մեզ լուսաւորել զկոչեցեալսն յորդէգրութիւն։ Եւ հաւատովք աւծանիմք յիւղ սրբութեան և այսպէս ըստ իւրաքանչիւր եղեալ մասանց կարգք սրբոյ եկեղեցւոյ յաւրինին, ոչ ելանելով ըստ եղեալ սահման և գլխաւորեալք ըստ երկնաւորացն դասուց, որպէս ուսաք ի հարցն հոգևորացն յաշակերտացն առաքելոցն սրբոց։

Գ։ Եւ զի՞արդ կարգք եկեղեցւոյ սրբոյ յաւրինին։

Վերատեսուչք ըստ կարգեալ կայենից ընկալցին իշխանութիւն, ուղղել ի բարին որոց կոչեցան ի վերակացութիւն, և առեալ ի նոցանէ մի փքասցին ամբարհաւաճութեամբ զանձինս առ իմաստունս ունելով, և անկցին յիմարութեամբ, և անկցին ի չարութիւն։ Զի թէպէտ միապէս տուեալ շնորհքն ի հաւատացեալքն, այլ ոչ միապատիւ ամենեքեան։ Եւ թէպէտ և փոքր կացցոյց զինքն անքաւն, այլ զփառս աստուածութեանն ոչ ընդ նմին կորոյս, և առաքելոցն ամենեցուն յետ յարութեանն երևեալ կենարարին, այլ զմանս զեր ի վերոյ կարգէ, և նոյն սկզբնաւորեալ ի մեզ հաստատեցաւ, զոր և Պաւղոս ոչ հրամայէ զմիմեանսքք ելանել, ասելովն, Իւրաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ ի նմին կացցէ։

Դ։ Եւ ժրպէս հրամայիցի քաւականանալ իւրաքանչիւր յեղեալն կարգի։

Արդ միաբանութեամբ ժառանգաւորացս և եպիսկոպոսաց և քահանայիցս և սարկաւագաց. ես Մակարիոս Արքեպիսկոպոս սուրբ քաղաքիս Երուսաղէմի, աւանդեմ զկանոնադրութիւնս զայս ձեզ, ուսեալ յառաքելոցն պատմութեանց, և աւանդութեամբ հարցն առ մեզ հաստատել հիմանայ։ Զի զսուրբ մկրտութեանն ձեռնադրութիւն, որպէս յառաջագոյն ասացաք, եպիսկոպոսաց և քահանայից միայն է կատարել, և զիւղ սրբութեանն եպիսկոպոսապետն աւրհնեսցէ, և վասն հեռաւորութեան և կարևոր պիտոյից հրամանաւ արքեպիսկոպոսին եր-

Digitized by Google

կու և երեք միաբանեալ եպիսկոպոսք և սարկաւագունք սպասաւորք սրբութեանն։ Եւ կիւղն աւծման մեռելոցն և հիւանդացն և մկրտելոցն առանձնակ աւրհնեսցեն քահանայքն և եպիսկոպոսքն։ Զայս սահմանեցին սուրբ հարքն մեր, և մի ոք իշխեսցէ փոխել զուղիղ եդեալ սահման, զի մի՛ գնացին կապանք նզովիցն ընկալեալ որոշեսցի յԱստուծոյ։

Ե։ Եւ որպէս մերձեսցուք առ սեղանն սուրբ և կենդանարարն խորհուրդ։

Առ այդ անմահութեան վիճակ, մի՛ ոք երկմտութեամբ և մի՛ թերահաւատութեամբ և մի՛ գործովք անարժանութեամբ մերձ լինել յանդգնեսցի, զի մի զկամս Աստուծոյ բարկութեանն յամենայն երկիր շարժեսցէ, և ինքն լուիցէ զասացեալն։ Դու ընդէր բնաւ պատմես զարդարութիւնս իմ, զի ատեցեր զխրատ իմ. այլ ուղիղ գնացիւք և ճշմարիտ հաւատով մատուցեալ լուսաւորեսցի՝ և այլոց ինքեամբ գործեսցէ փրկութիւն։

Զ։ Եւ զի՞արդ է արժան զխորհուրդն կատարել, զփրկականն խորհուրդ մարմնոյ և արեանն Տեառն։

Պարտ է երկիւղիւ, և զգուշութեամբ կատարել և ուղիղ դաւանել խոստովանութեամբ՝ ուրոյն ի հերձուածողացն փորձիչ խորհրդոց, զի մի՛ Արիանոսացն մերձ լինելով ըստ առաքելոյն՝ անուն Աստուծոյ և ճշմարտութիւնն հայհոյեսցի։

Է։ Եւ որպիսի աւրինակաւ նուէր սրբութեանն յաւրինեսցի։

Հանեալ ի սեղանն զհացն սուրբ, ջերմ ըստ առաքելոցն աւանդութեան, և բաժակ անապական առանց իրիք խառնման, զի ոչ ապականացու իւիք, այլ անապական մարմնով և արեամբ ամբիծ և անարատ գտուին, և զայս մինչ ի սեղանն սարկաւագունք յաւրինեսցեն, և զկատարելն ի վերայ, քահանայքն կատարեսցեն։

Ը։ Եւ զի՞արդ եկեսցէ ի ձեռ սեղանն խորհրդոյն, և այլ ևս Գ. կարգքն։

Սեղանն քաւութեան ընդ վարագուրաւն, յորում Հոգին սուրբ իջանէ, և աւազանն յետոյ առ նմին տամք և պատուով հաստատեալ յաջէ, և ժառանգաւորքն իւրաքանչիւր աշտիճանաւ պաշտեսցեն, և ժողովրդականքն արտաքոյ վարագուրին, և երախայքն առ դրունսն ունկնդրութեամբ, զի մի ընդ միմեանս

ելանելով եղծցին կարգքն, այլ իւրաքանչիւր կայանիւ անարատ մնասցէ։

Թ։ Զայս աւանդեմ ձեզ պատուիրան հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, ըստ խնդրոյ աղաչանաց ձերոց, և նզովեմք ի վերայ այսոցիկ զայլաձևսն խորհեցեալսն, զի ի միմեանց ընկալեալ ձեռնադրութեամբ զշնորհս, ոչ բերեմք պակասութիւն, և միապատիւ. ոչ իրաւունս վարկանիմք զկարգեալսն ուղղապէս եկեղեցւոյ, և զփառամոլ անձինս կշտամբեմք, որք խորհին հակառակ որպէս պատմեալ եղև մեզ զՏուրգեայ Բասենոյ և Բագրեւանդայ եպիսկոպոսաց, որ սակաւուք ընդ Արիանոսս միաւորեալ է *), և դարձեալ խղճեալ, և արդև այլ ևս յանդգնագոյնս խորհի. եպիսկոպոս միայն աթոռաւ, և ընդ արքեպիսկոպոսին ինքեամբ անձին տայ պատիւ, զոր չէ արժան ընդունել, զի և ոչ հարքն աւանդեցին այսպիսի ինչ հակառակութիւնս յեկեղեցի մուծանել, և անվայելուչ է համարել հաւասար, մինչև կոչմամբ ի պատիւ աթոռոյն ժամանեցէ։ Եւ արդ պարտ է զայնպիսին քաղցրութեամբ ի հնազանդութիւն կոչել, և եթէ ի նոյն մնասցէ, խորշել իբրև յաւտարէ։

Ողջոյն տան ձեզ ամենայն եկեղեցիս։ Ողջ լերուք ի Տէր հաստատուն և ուղիղ հաւատով, ամէն։

*) Ա յոպէս յօրինակին.

Digitized by Google

ՐԱՑԱՑԱՑՏՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՀԱՑՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԼԻՑ ՀԱՐՑՆ ՍՐԲՈՑ ԸՍՏ ԱՌՔԵԼԱՍԱՀՄԱՆ ՍԻՆՈԴԻՑՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՔՐԻՍՏՈՍԻ, ՀԱՆԴԵՐՁ ՀԱՒԱՏԱՐԱՆՈՒԹԵԱՄԲ ՃՇՄԱՐԻՏ ՈՒՂՂԱՓԱՌ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ, ԱՍԱՑԵԱԼ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՍԱՀԱԿԱՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՄԵԾԻ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԸՆԴՊԷՄ ԵՐԿԱՐՆԱԿԱՑ ՆԵՍՏՈՐԱԿԱՆԱՑՆ։

Աստուածային իմաստութեամբն միայն վաւերացեալ Հայաստանեայք, պարզապարար ստուգութեամբ ընկալեալ հաւատք ճշմարիտք ի ծագմանէ փրկչին. իսկ նախ քան զայն պերճաբանութիւն հոգեւորական արհեստիցն ըստ Պղատոնական վարժիցն ոչ երբէք ստորագրեալ ոտնառեաց ի կողմ Հայկազնեայց, և ոչ յոլով մակածութեամբ դեգերեալ հինքն մերազնեայք ի հրահանգս հելլենական ճարտասանութեան ըստ իմաստնոցն Յունաց առ ունակութիւն եղելոց գիտութեանց, որ է առաջին մասն իմաստութեան։ Նաև և ոչ տեղեկագոյնք բարձրայաւնակ իմաստիցն ճեմարանին ներանձնական հմտութեանցն գործական և տեսական ներհմանց. նախ քան զճանաչելն մեր վեհ իմաստութեամբ, այլ և ոչ առանձնական վայելումն գծագրական առուիցն վաղագոյն հարստացեալ մեր, առանց որոյ ոչ է հնար զանցեալսն իմանալ, և ոչ զներկայս ապագայիցն թողուլ առ ի յիշատակ, այլ այնպէս պարզական իմաստիւք վարել կկենցաղս, մինչև հպիւ բանականաւն ընդրեալք յանասնականէն, մինչև ի ծագումն մեծի և ճշմարիտ լուսոյն՝ որ լուսաւորէ զամենայն իմաստ գիտութեան մարդկան սեռի եկեալ յաշխարհ։ Սակս որոյ անբաժացեալ մտաւորական տեսութիւն Հայաստանեացս յամենայն

գժընդակ գծից արտաքին փիլիսոփայական հանճարոյն, որպէս նախ ասացաք, այնպէս պատրաստք գտեալք ի գծումն հաւատոյ հոգեղէն իմաստիցն։

Եւ վկայ բանիս արքայն մեր Արգար, որ Թարգմանի Առաջ Այր յաղագս հեգութեանն անուանեալ, զի նախ քան զչորեքծագեան ոլորտս հեթանոսաց ըստ մարգարէին ձայնի յառաջագոյն ձեռնատու լեալ առ Աստուած առանց ակներևակի, միայն ի լուր բանից այլոց՝ հաւատաց ճշմարտութեանն, ըստ այնմ թէ, Երանի որ ոչն եցէ տեսեալ և հաւատացէ յիս։ Եւ վաղվաղակի թուղթս պաղատանաց յղեալ առ Փրկիչն մեր և Աստուած, զի եկեալ ողորմութեամբ բժշկեսցէ զնա և զնորայսն հոգեպէս և մարմնապէս։ Իսկ բարերարն Աստուած՝ որ գիտէ զամենայն յառաջ քան զլինելն իւրեանց, ընկալեալ զաղաչանս նորա ի ձեռն թղթոյն, և արժանի առնէ զնա պատասխանական թղթոյ, և խոստանայ յետ կենարար խաչին և ամբառնալոյն յերկինս, առաքել զմի յաշակերտաց իւրոց առ նա, զոր և արար իսկ, զԹադէոս առաքեալ, որ զփոփոխումն անուանն ընդ Պետրոսի և ընդ Որդւոցն Որոտման ընկալաւ յայնմանէ, որ նորն առնէ և փոփոխէ զամենայն որպէս և կամի։ Որոյ եկեալ սերմանեաց զրանն ճշմարիտ հաւատոց յաշխարհս մեր, և ինքն զընթացս առաքելութեանն ըստ հաւատոցն ի սմին աշխարհի կատարեալ՝ փոխեցաւ առ այն որ առաքեացն զնա, թողեալ զկամոր կենագործակ երկնային արքայութեանն ի սմա, զի մատնաւորաւն բոլորն խմորեսցի։ Եւ զկնի նորա Բարթուղիմէոս ընկեր նորին զխորհուրդ առաքելութեանն ի սմին աշխարհի աւարտեալ, զի ի ձեռն երկուց աստուածային արանց հաստատեսցի ի մեզ վկայութիւն ճշմարիտ հաւատոյն բանի, անխախտելի մնալ մինչև իսպառ, որ և եղև իսկ։ Եւ յետ սոցա ի ձեռն երիցս երանեան և ճշմարիտ վկային և խոստովանողին Քրիստոսի սրբոյ Լուսաւորչին մերոյ ընդրելոյ մեծին Գրիգորի, ծաւալեաց զճշմարիտ զլոյս գիտութեան իւրոյ միասնական սուրբ Երրորդութիւնն ի բոլոր ազգս Հայաստանեաց, և խմորեաց զամենայն կենսականաւն ըստ նմանութեան երից գրուոցն, զմիտս և զշունչ և զմարմին մեր, մարմնանալով Որդւոյ խմորեաց զմեզ ստոյգ և ճշմարիտ և սեռն հաւատով, խարսխեալ զմեզ Երրորդութիւնն սուրբ ի վերայ վիմին հաստատնոյ անշարժ, յորոյ վերայ խոստացաւ միածինն շինել զեկեղեցի իւր սուրբ, զի ան-

Digitized by Google

յաղթ մնացուք ի դրանց դժոխոց, ոչ վթարեալք մինչև յաւիտեան։

Եւ արդ ըստ որում ասէ Յովհան Ոսկեբերան, թէ տգիտութիւն յոյժ պատրաստական աւգտակարութիւն ունի յընդունելութիւն հաւատոյ։ Վասնորոյ թուի ճշմարիտ լինել բանիս այսմ յարդեանց որ առ մեզ, զի յառաջագոյն ոչ գծեալ միտք և հոգիք Հայաստանեացս արտաքին արհեստիւք ճարտասանիցն, վասն այսորիկ դիւրընկալ եղև ի մեզ հաւատոյն բան. իբրև յանգիծ տախտակի ի խորոշ սրտին դիւրագիծ նշանեալ և անվթար մնացեալ մինչև ցայսաւր։ Զի ոչ էին վթար գիծք յառաջացեալք առ ի բնդորել զգեղեցիկ գիրս գրեալս շնորհաւք վերնոյն, և զի առաջին և վերին *) իմաստութիւնն իջեալն ի վերուստ ի Հաւրէն լուսոյ, և յՈրդւոյ նորա միածնէ և փառակցէ, և ի Հոգւոյն կենագործողէ և էակցէ, յառաջեաց կալաւ զԽորհուրդս մեր, և խարսխեալ հաստատեցաւ ի սիրտս մեր և ըմբռնամբ ձգեաց առ ինքն զիմաստս մերաչնեացս, և տիրապետեալ բնութեան մերում և շրջապատեալ աստուածային հրովն պարսպեաց զտկարութիւնս մեր, և զտգիտութիւն մտաց մերոց ինքեամբ կաւրացոյց, և ի բաց մերժեաց արտահոսեաց զամենայն աղանդս չարութեան հերետիկոսացն յայգէ մերմէ, և ոչ ոք ի նոցանէ յամառեաց մտանել յեկեղեցի Աստուծոյ որ է յորդիս Թորգոմայ, և ոչ կարաց պղտորել զյատակ բղխումն ջուրցն կենդանի ճշմարիտ հաւատոցն՝ որ ի մեզ բղխեաց Հոգւովն Աստուծոյ կենդանւոյ։

Ոչ Արտեմոն ամպարիշտն որ ասաց մարդ զՈրդին Աստուծոյ իբրև զՀրէշտան։ Եւ ոչ դիւուսոյցն Կերինթոս Ասիացի, որ մարմնական վայելումն կարծեաց լինել զարքայութիւնն արդարոց՝ վասն մարմնաւոր բարուց իւրոց։ Եւ ոչ սատանայամիտն և դիւամոլ արքն Մոնտանոս և Մարկեղոս Գաղատացի և Մարկիոն Պոնդացի, որ ասացին առ աչաւք երևեցաւ Տէրն մեր յաշխարհի և ո՛չ ճշմարիտ մարմնով։ Եւ ոչ չարիմացն Սաբէլ Լիբէացի որ զԵրրորդութիւնն միանձն համարեցաւ լինել ըստ մոլորութեանն Հրէից, և ոչ երիս կատարեալ անձինս ըստ քրիստոնէական հաւատոց։ Եւ ոչ մոլեկանն Արիոս որ ասաց մեծ զՀայր, և կրսեր և արարած՝ զՈրդի, և ոչ խոստովանեաց

*) Թերևս վերին.

համագոյ զԵրրորդութիւնն։ Եւ ոչ աստուածամարտն Մակեդոն, որ ասաց նուազ զՀոգին սուրբ քան զՀայր և զՈրդի, և ոչ հաւատաց էակից և հաւասարափառ և համապատիւ աստուածութեամբ զՀոգին սուրբ Հաւր և Որդւոյ ըստ վկայութեան գրոց սրբոց։ Եւ ոչ վատաշուերն Պաւղոս Սամուստացի, որ ասաց մարդ սոսկ զՔրիստոս ծնեալ ի Մարիամայ, և ոչ Աստուած ճշմարիտ։ Եւ ոչ ճշմարտատեաց արքն Դէոդորոս Տարսոնացի, և Նեստոր, և Փղաբիանոս, և Թէոդորիտոս Կիւրացի, որք ասացին մարդ առեալ Բանին Աստուծոյ. և բնակարան ինքեան կազմեալ զծնեալն ի դաւակէն Դաւթի, երկուս կամին անուանելով կրկնապատիկ բնութեամբ, և ոչ խոստովանեցին զմարմնացեալն մի Որդի՝ միով բնութեամբ ըստ սահմանի գրոց, որոց հետևող եղեալ Ղևոն Հոռոմայեցի թագնաբար կարգացոյց զնոսա։ Եւ ոչ դիւաբերանն Նեստիքէս, որ ասաց ոչ առնուլ Աստուծոյ Բանին մարմին ի կուսէն, այլ ցնորիւք ասաց՝ զերևումն Տեառն յաշխարհի։

Արդ այս ամենայն չար աղանդք հերձուածողաց, և այլք բազումք նման սոցին ի կողմ արևմտից երևեալք յիշխանութեան Հոռոմայեցւոցն, եթէ բարձան ի միջոյ, և եթէ մնացին ի նոյն իշխանութեան՝ ուստի ելին, զայն դուք քաջ գիտէք։ Իսկ յայգէ Հայաստանեայցս ոչ ոք, ոչ ուրեք երբեք երևեալ հերձուածող, և ոչ կարէ ոք ցուցանել, այլ որպէս ընկալաք ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ ի մեծէն Գրիգորէ հաւատս ճշմարիտս, անեպեր պահեցաք մինչև ցայսաւր։ Իսկ այլ արտաքին յամենայն չար աղանդիցն հերձուածողաց որք երևեցան յաշխարհիդ Հռովմայեցւոց կամ Լիբէացւոց կամ Ասիացւոց, ոչ կարացին եկամուտ լինել յազգս մեր, զի ամրացեալ էր շնորհաւք վերնոյն ի ձեռն սրբոյն Գրիգորի և նորին ժառանգաւորացն։ Վասն այնորիկ անաղտ և անեպեր մնաց եկեղեցի սուրբ Աստուծոյ որ յաշխարհս Հայաստանեաց, ի վերայ հաստատուն հաւատոյ վիմի շինեալ և յամենասուրբ Երրորդութիւնն խարըխեալ կայ անսասանելի մինչև յաւիտեան, արտաքոյ ամենայնն չարութեան հերձուածողական կարծեաց։ Ներկեալք ստուգագոյն և սերտագոյն ներկուածով ճշմարիտ հաւատով կենարար բանին, որ աւետարանեցաւ յառաքելոցն, և վկայեցաւ ի մարգարէիցն, և աւանդեցաւ ի սրբոց վարդապետացն, զոր հաստատեաց ի մեզ երանելի Լուսաւորիչն մեր։ Եւ յետ այսորիկ յաստուածագու-

Digitized by Google

մար երից սուրբ ժողովոցն, զնոյն ստուգութիւն հաւատոյ միաբան ընդհանրական եկեղեցւոյ ընկալեալ՝ խոստովանիմք առաջի Աստուծոյ և մարդկան մինչև յայսաւր, զՆիկիայն՝ որ ընդդէմ Արիոսի մոլորութեանն, և զԿոստանդնուպաւլսին՝ որ ընդդէմ ամպարշտին Մակեդոնի, և զԵփեսոսին՝ որ ընդդէմ չարութեանցն Նեստորի և Եւտիքեայ և Փղարիանոսի ժողովեցան։

Արդ այս երրիւք սուրբ ժողովովքս ըստ խորհրդոյ միասնական ամենասուրբ Երրորդութեանն պարսպեալ է առաքելական եկեղեցի Աստուծոյ որ է ի մէջ Հայաստանեացս և յամենայն աշխարհի։ Եւ արդ այսպէս է հաւատոյն բան որ առ մեզ ճշմարտապէս մեացական եղեալ ի սկզբանէ մինչև յայսաւր։

Հաւատամք յամենասուրբ Երրորդութիւնն, ի միասնական յաստուածութիւնն, ի համադոյ բնութիւնն, անեղութիւն, իսկական գոյութիւն, մշտնջենաւոր զաւրութիւն, անսկիզբն թագաւորութիւն, անայլայլական փառք, անճառելի պատիւ, անթերանալի բարութիւն, անգիտելի և անասելի որպիսութիւն, անխուզելի և անպոռնելի բնութիւն, Երեք անձինք կատարեալք առանձնաւորութեամբ ի նոյն զոյութեան։ Հայրութիւն անհայր, զի ոչ յայլ ումեքէ նա. որդիութիւն անսկսումն և անորդի, զի ոչ ոք ի նմանէ. Հոգի ելողութիւն անփոփոխ, զի ոչ է այլ նման նմա։ Ոմն ծնաւղ և ոմն ծնունդ անսկզբնաբար. և միսն բղխումն անսկսանելի և մշտնջենաւոր, մի բնութիւն, մի կամք, մի զաւրութիւն երից անձանց, մի աստուածութիւն, մի տէրութիւն, մի իշխանութիւն, մի ունաւղութիւն, մի թագաւորութիւն, մի բարձրութիւն, մի արարչութիւն, մի կեանք, մի նախախնամութիւն, մի տեսչութիւն, մի ամենակալութիւն, մի բարութիւն երից անձանց։ Երեքեան մի նմանութեամբ առ ի բարս անպանական, զի ամենայն որ ինչ Հայր է, նոյնպէս և Որդի և Հոգի, բաց յանծնելութենէն. և ամենայն որ ինչ Որդի է, նոյնպէս և Հայր և Հոգի, բաց ի ծնելութենէն. և զի մարմին ոչ առին որպէս և Որդի։ Եւ ամենայն որ ինչ Հոգի է նոյնպէս և Որդի և Հայր, բաց յելողութենէն, զի մեասցէ Հաւր միշտ անծին և միշտ ծնաւղ Որդւոյ։ ըստ այնմ թէ, Ընդ քեզ է իմ սկիզբն. և ծնունդն միշտ ծնունդ ի Հաւրէ, և բղխումն՝ միշտ բղխումն միշտ ելող ի Հաւրէ. ըստ այնմ թէ Հոգին սուրբ որ Էն և ի Հաւրէ ելանէ։ Այսոքիկ զբնութիւնն միաւորեն։ իսկ զառանձնաւորութիւն դիմացն ամրողջ և անշփոթ պահեն, զի մեասցէ

Հայր՝ միշտ Հայր, և Որդի՝ միշտ Որդի, և Հոգին սուրբ՝ միշտ Հոգի, Երեքեան մի աստուածութեամբ և բնութեամբ և ամենակալ իշխանութեամբ և հաւասարապատիւ փառաւք։ Ոչ միոն առաւել քան զմիոն, ոչ միոն յառաջ քան զմիւսն, և ոչ ոմն յետոյ, և ոչ ոմն նախ, ոչ ոմն փոքր, և ոչ ոմն մեծ, ոչ ոմն աւագ, և ոչ ոմն կրտսեր, այլ մի անսկզբնաբար պատիւ, և մի միշտ՝ յենաւոր և ամենակար կաւրութիւն, միոյ բնութեանն միասնական Երրորդութեանն։

Զի ոչ է հնար զՀայր յառաջ ասել քան զՈրդի և զՀոգի վասն անծնելութեանն. և ոչ հնար գոյ դարձեալ զՈրդի յետոյ ասել քան զՀայր վասն ծննդեանն և որդիութեանն։ և ոչ դարձեալ հնար է զՀոգի յետոյ ասել կամ կրտսեր քան զՀայր և զՈրդի՝ վասն բղխմանն և ելողութեանն ի Հաւրէ։ Այլ որպէս հուր ծնաւղ է լուսաւորութեանն, և բղխող ջերմութեան, և ոչ է հնար զհուր յառաջ ասել քան զծնունդն իւր զլուսաւորութիւնն և ոչ քան զբղխումն իւր զպրեցողութիւնն։ Այսպէս չէ հնար Հաւր յառաջ լինել քան զՈրդի և զՀոգի։ Եւ որպէս չէ հնար արեգական յառաջանալ քան զլոյս իւր՝ որ է ծնունդ նորա. և ոչ քան զարև՝ որ է բղխումն նորա, այսպէս և ոչ հնար գոյ Հաւր յառաջանալ քան զՈրդի և զՀոգի։ Եւ որպէս ոչ է մարդոյ հնար յառաջ երևել քան զմիտս և զհոգի իւր, նմանապէս ոչ է կարողութիւն յառաջ երևեալ Հաւր քան զՈրդի և զՀոգի, զի թէ ի բաց առցես զջերմութիւն, և զլուսաւորութիւն ի հրոյ, այնուհետև հուրն՝ ոչ կարէ հուր լինել։ Եւ եթէ մերկացուսցես զլոյս և զարև յարեգականէ, ապա ոչ է հնար արեգականն լինել արեգակն՝ կամ անուանիլ, և եթէ կողոպտեսցես զմիտս և զհոգի ի մարդոյ, այնուհետև ոչ է հնար մարդոյ՝ մարդ տեսանիլ կամ անուանիլ։

Այսպէս և առաւելապէս ըստ աւրինակի տարայուցացս և գաղափարացս. եթէ ի բաց բարձցես զՈրդի և զՀոգի ի Հայրական էութենէն. զոնէ յական թաւթափել չափ ինչ մտածութեան յառաջանալ զՀայր, և կամ յետոյ իմանալ զՈրդի և զՀոգի. ապա այնուհետև չէ հնար, չէ կարողութիւն Հաւր էութեանն երևիլ կամ անուանիլ առանց էութեան Որդւոյ և Հոգւոյ։ Քանզի կատարեալ է Հայր անձամբ և զաւրութեամբ, գիտութեամբ և բարերարութեամբ, արարչութեամբ և աստուածութեամբ։ Ընդնմին կատարեալ է Որդի անձամբ՝ և զաւրու-

Digitized by Google

թեամբ, գիտութեամբ և բարերարութեամբ, արարչութեամբ և աստուածութեամբ։ Ընդ նոսին Հաւր և Որդւոյ, կատարեալ Է և Հոգին սուրբ՝ անձամբ և զաւրութեամբ, գիտութեամբ և բարերարութեամբ, արարչութեամբ և աստուածութեամբ։ Մի թագաւորութիւն, մի տէրութիւն, մի աստուածութիւն, մի անսկիզբն սկզբնաւորութիւն Որդւոյ և Հոգւոյ։ Հայր ոչ յառաջեաց զսկիզբն քան զայնս՝ որոց էն սկիզբն, այլ անսկսանելի գոյութիւն երից անձնաւորութեանցն. ի նոյն բնութենէ Հաւր՝ Որդի և Հոգի, ի նմանէ անսկզբութեամբ, և ընդ նմին մշտանջենաւորապէս, և առ նմին անվախճանաբար իմացեալ և ծանուցեալ, միաւորեալք բաժանմամբ, և որոշեալք միաւորութեամբ, հրաշափառ ունելով զբաժանումն և զմիաւորութիւն։ Զի ինքն է լոյս անճառելի, և ամենայն լուսաւորութեանց աղբիւր, կեանք անմահական, և ամենայն մահացելոց և անմահից կենագործող, էութիւն անեղ, և ամենայն էութեանց ստացիչ և արարիչ բնութիւն անհատ, տարածանումն անամփոփ, ներքութիւն անարգել, հնար ամենահաս, բաւականութիւն անծախելի, մեծութիւն անքանակ։ Կերպարան անորակ է յամենայնի, և անխառն է ի բնաւից, ունի զամենայն, և ինքն անտանելի լոյսոյ անքննելի, անգիտելի, անասելի միասնական սուրբ երրորդութիւնն, էր միշտ և է և կայ յաւիտեան։ Արդ այսպէս սեռն և ստոյգ հաւատովք պայծառացեալք Հայաստանեայքս ի սկզբանէ մինչև ցայժմ, և կամք ի սմին միշտ փառաւորելով զամենասուրբ զԵրրորդութիւնն։

Իսկ յաղագս մնաւրէնութեան Բանին Աստուծոյ, Միածնի Որդւոյն մարմնանալոյ և մարդանալոյ նորա ի զաւակէ Դաւթի, այսպէս ուսոյց մեզ հոչակելի և զարմանալի այրն սքանչելին և մեծն Գրիգորիոս Լուսաւորիչն մեր, թէ հաւատք ճշմարիտք այս են. Խոնարհեցաւ Աստուած, և խառնեաց զաստուածութիւնն ընդ մարդկութեանս, զանմոռն ընդ մեռոտս, և պարտաւորեաց զմեղս աստուածախառն մարմնովն։ Եւ դարձեալ ասէ. Սկիզբն առնու անսկզբնականն, և աւուրբք համարեալ թլփատի ութաւուրեայ։ Եւ դարձեալ ասէ. Նմա փառք ամենատեառն, որ վասն մերոյ կենաց մարդացաւ և մարդակերպ շրջեցաւ։ Եւ դարձեալ ասէ, միացաւ ի մարմնի բնութեամբ, և խառնեաց միացոյց զզմարմինն յաստուածութիւնն իւր։ Եւ դարձեալ ասէ, զմարմինն մարդկային առ խառնեաց միացոյց յինքեան և ընկղմեաց

զմարմինն յաստուածութիւնն իւր։ Եւ դարձեալ ասէ, զմեր հոգեղէն բնութիւնս զգեցաւ և խառնեաց զանխառն աստուածութիւնն, և զապականացու մարմինս խառնեաց յանապական աստուածութիւնն, և արար անապական։ Եւ դարձեալ ասէ, Աստուածորդին իսկ խոնարհեցաւ և առ զմարմին մարդկան, և խոնարհեցաւ յանարգութիւն մահու մինչև ի թաղումն անգամ։ Եւ դարձեալ ասէ, Որդին Աստուծոյ մեռաւ, զի զմեռելութիւն արարածոցս կենդանացուսցէ, զի ոչ եթէ առանց իւրոյ մահուանն կենդանութիւն տայ մեզ ոչ կարէր, այլ զի մեծացուսցէ զարարածս իւր՝ իւրով յանարգութիւն իջանելովն։ Եւ դարձեալ ասէ, Տէրն և արարիչն արարածոց խոնարհեցաւ ի բաժակն խոնարհութեան մահու անարգութեան, և արբ զխոնարհութեան չարչարանաց բաժակն ինքնայաւժար կամաւք. զի զմեր անարգութիւնս կրեսցէ, և զմեր չարչարանս յանձն առցէ, և մերում մահու հաւասարեսցէ հաճութեամբ կամաւք։

Արդ ի վերայ այսպիսի անխախտելի և անշարժելի հիման հաւատոյ հաստատութեան շինեալ է եկեղեցի սուրբ ի մէջ Հայաստանեայս, զոր հիմնեցոյց Հոգին սուրբ ի ձեռն առաքելոյն, և աւարտեաց ի ձեռն մեծին Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և կամք մնամք ի նոյն խոստովանութիւն հաւատոյ հաստատութեան մինչև յայսաւր, ճշմարիտ աւանդութեանցն՝ աւանդապահք եղեալք մինչև յաւիտեան։ Վասն որոյ ըստ այսմ ուղղափառ և ճշմարիտ հաւատոյ բանի հետևող լեալ սուրբ Լուսաւորչին մերոյ և նորին որդւոյն արանց Աստուծոյ սրբոց, որք հոգւովն Աստուծոյ յայտնեցին զամենա նորա, և զնոյն ճշմարիտ աւանդութիւն հաւատոյ հաստատեցին ի մեզ, և մեք ընկալեալ ստուգութեամբ ի հարցն մերոց սրբոց։

Խոստովանիմք զմի ի սրբոյ Երրորդութենէն զՄիածին Որդին, զիսկական և զանսկզբնական ծնունդն հայրական, զփառակիցն Հաւրն և Հոգւոյն սրբոյ, զԱստուածն ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ինքնայաւժար կամաւք, հաճութեամբ Հաւր՝ և Հոգւոյն սրբոյ խոնարհեալ յանպատում բարձրութենէն, և իջեալ յանգազանելի դիտանոցէն յարգանդ ամենասուրբ Կուսին, և խառնեաց ի բնութենէ մերմէ իւր մարմին ճշմարտապէս ի կուսական արենէ, և միացեալ ի նմա բնութեամբ, եղև մարդ ստուգապէս ի զաւակէ Դաւթի, ոչ մարդ առեալ, կամ ի մարդ բնակեալ, որպէս թուեցաւ ասել Նեստորի և Փղարիանոսի Ան-

Digitized by Google

կիւրացւոյ, այլ որպէս Աստուածաբան Գրիգոր ասէ, առ Կղոդիանոս ճառին, թէ՝ Ըստ բնութեան միաւորեալ և ընդ նմին ստեղծեալ և միացեալ, և որ զայս ոչ ասէ, եղիցի ունայն ի լաւագոյն զաւրութենէն և լի հակառակաւն։

Եւ արդ ահա ըստ բնութեան միաւորեալն ընդ աստուածութեանն ասաց ստեղծանիլ զմարմնոյն խառնումն, և լինել մի բնութիւն և մի Աստուած միաւորութեամբն և խառնմամբն, և մի կամք և մի գէմ, և մի Որդի Միածին, մարմնացեալ Բանն Աստուած, զի ոչ յաւելաւ թիւ Երրորդութեանն, և ոչ նուազեաց, այլ որպէս էրն, կայ և մնայ յաւիտեան։ Ոչ աւտար բնութիւն, և ոչ աւտար կամք, և ոչ աւտար գործ թուակցեալ սրբոյ Երրորդութեանն, այլ որպէս նախ քան զմարմնանալն Որդւոյ մի կամք և մի գործ և մի բնութիւն էր սուրբ Երրորդութեանն, և երեք դէմք. այսպէս և յետ մարմնանալոյ Բանին Աստուծոյ, մի բնութիւն, և մի կամք, և երիս դէմն սրբոյ Երրորդութեանն, ոչ առաւելեալ և ոչ նուազեալ վասն մարմնանալոյ Որդւոյն։ Այլ որպէս հուր ըմբռնեալ զնիւթ ոսկւոյն խառնեալ ի նա, ոչ յաւելու բնութիւն հրոյն և ոչ նուազէ վասն ոսկւոյն որ միացաւն և խառնեցաւն ի հուր անդր, այլ նոյնպէս կայ մնայ բնութիւն հրոյն, և գործ նորա որպէս էրն խակ, և զոսկին զոր ըմբռնեաց հրացոյց ամենեին ամենայն իրաւք, և ի ցրտութենէն ջերմացոյց զնա, և յանլուսաւորութենէն՝ լուսաւոր և ճառագայթարձակ գործեաց, և յանպղծութենէն՝ ապդող և ներգործող տիրապէս զնա արար, ոչ ի միջոյ բարձեալ զնիւթ ոսկւոյն, այլ պահեալ զնա ի նիւթութեանն, և այնպէս արար զնա ամենեին հուր և բնութիւն հրային, և ամենայն տկար և ապականացու և նուազ բնութիւն՝ ի բաց բարձաւ ի նմանէ։ Դ. այլ նիւթոյ որ ըմբռնի ի հրոյ թէ փայտ և եթէ այլ ինչ, և ոչ կոչի փայտն՝ փայտ յետ խառնման հրոյն, այլ հուր և կրակ, այծ՝ և լոյս, որ լուսաւորէ զմերձեցեալսն, և առաջին անուանքն և բնութիւնն և կամքն և գործն ի բաց բարձեալ լինի ի նմանէն ըմբռնմամբ հրոյն, և զգենու զանուանսն և զբնութիւնս, զներգործութիւն և զորպիսութիւն հրոյն ամենայն իրաւք։ Այսպէս Աստուած Բանն՝ հուրն ահաւոր և խմանալի, յորժամ նախաշաւղութեամբ Հոգւոյն սրբոյ էջ ի յարգանդ անապական Կուսին, և առեալ ի նմանէ մարմին և հոգի և միտք մարմնայինք, և խառնեալ միացոյց ի հուր աստուածութեան իւրոյ և արար

ամենևին Աստուած և բնութիւն աստուածային։ Ոչ ի միջոյ ի բաց բարձեալ և ծախեալ, և ոչ յանմարմնութիւն փոփոխելով, այլ պահեալ զմարմինն յէութեան ըստ որում շաւշափեցին առաքեալքն։ Արար զնա ամենևին ըստ բնութեան Աստուածութեան իւրոյ յարգանդի սրբոյ Կուսին, և ոչ եթող զմարմինն մնալ ըստ իւրութեան տկար և անզաւր բնութեանն ի խառնիլն և ի միանալն ի նմա, որպէս ոմանք կարծեն չարափառութեամբ, այլ անիմաստ և անասելի արագութեամբ, ի հողեղինէն՝ հրեղէն, և ի մարդկեղինէն աստուածեղէն, և յարարականէն՝ արարչական, և ի ծառայականէն ազատ արարեալ զմարմինն՝ զոր էառն ի մէնջ՝ և ապատիչ բոլորից և Տէր ամենայնի, և ի մեղանչականէն՝ անմեղական և քաւիչ ամենայն մեղուցելոց, և յապականացուէն՝ անապական, և ի տկարութենէն՝ ամենազաւր, և յանբաւականութենէն՝ ամենաբաւական, և յանկարութենէն՝ ամենակարող, և յանգէտ բնութենէ մերմէ ամենագէտ և գիտութեանց տուող ամենեցուն, և ի կարաւտականէս՝ անկարաւտական և լցուցիչ ամենայն կարաւտութեանց վերնոց և ներքնոց արարեալ զիւր մարմինն յառնուլն ի կուսէն, և յանփառութենէս՝ տէր փառաց և սքանչելի և հաւոր փառաւք՝ փառաւորեալ ի բոլորից, և յանարգութենէս ի պատիւ ամենագովելի բարձրագոյն և աստուածային, և յանիմաստէն՝ ամենիմաստ և տուիչ ամենայն իմաստութեան մարմնաւորաց և անմարմնոց, և յանիծականէն՝ ամենաւրհնեալ և լուծիչ անիծից առաջին Ադամայ, և աղբեւր աւրհնութեան բոլոր բնութեանմարդկան մարմինն Քրիստոսի, ըստ այնմ՝ եթէ, Աւրհնեալ է պտուղ որովայնի քո, և յեղծականէն անեղծական և ստացչէ և նորոգիչ ամենայն եղծութեանց, և ի խաւարատեսակ բնութենէս՝ անմատոյց և ճշմարիտ լոյս, մարմին բանին՝ որ լուսաւորէ զամենայն մարդկային բնութիւնս եկեալ յաշխարհս յաղագս ճշմարիտ և անմատոյց լուսոյն միաւորութեան։

Վասն որոյ փայլումն մարմնոյն ի լերինն անմատոյց լեալ աշակերտացն զգետնեալք եղեն, և ի չարութենէ մերմէ առեալ ոչ զչարութիւն այլ զմարմինս մեր՝ ամենաբարի զնա արար, և աղրիւր ամենայն բարութեանց, և ի մահկանացուէն անմահական, մանաւանդ խափանիչ մահու և տուիչ կենաց վերնոց և ներքնոց։ Որպէս ասէ Եփրեմ ի զիրս հաւատոցն, Բանն Աստուած լոյս և կեանք, բնութեամբ իւրով եկն միացաւ ի մարմնի, որ

Digitized by Google

ոչ էր բնութեամբ իւրով բան և ոչ լոյս և ոչ կեանք, այլ յորմէհետէ միացաւ ի նմա Բանն Աստուած, ուղղ այնուհետև մարմինն լոյս և կեանք և նոյն իսկ Բան է միութեամբ։ Եւ դարձեալ ասէ Մարմին նորա ի կուսէն առաւ, այսպէս է բղխումն որ բղխէ կկեանս ամենայն բնութեանց վերնոց և ներքնոց։ Արդ զամենայն՝ որ ինչ վայել է միայնոյ աստուածային բնութեանն եղև և մարմին նորա խառնմամբն և միաւորութեամբն՝ Աստուած ճշմարիտ, և որ ինչ վայելուչ է Աստուծոյ տիրապէս եղև և մարմինն, ոչ որոշաբար, այլ միեղինաբար, միանձնաբար, մի դէմ, մի բնութիւն, մի կամք, մի ներգործութիւն՝ մարմնացելոյ Աստուծոյ բանին։

Եւ ե՞րբ եղև մարմին Բանին համարնութիւն նմա, և կոչեցաւ մի բնութիւն, և մի դէմ Յիսուս Քրիստոս։ Ոչ եթէ յետ խաչին և յետ յարութեանն եղև մի բնութիւն և մի դէմ մարմնացեալ Բանն. որպէս ոմանք չարափառութեամբ և ամպարշտութեամբ յանդգնեցան ասել. զոր քա՜ և մի՛ լիցի ըզմտաւ ածել քրիստոնէից, այլ անդստին իսկ յարգանդէ սրբոյ Կուսին ի մարմնանալ Բանին, ամենայն ինչ որ ինչ Բանն էր միշտ, եղև մարմին նորա յորովայնի անդ սրբոյ Կուսին, ըստ որում ասէ Աթանաս եթէ, Բանն մարմին եղև զի մարմինն եղիցի Աստուած Բան։ Եւ Գրիգոր Նիւսիա գրէ առ Թէոփիլոս Աղեքսանդրի եպիսկոպոս, Թէ ամենայն որ ինչ տկար և ապականացու բնութիւն էր, խառնեալ ընդ աստուածութեանն՝ եղև որ ինչ աստուածութեանն էր միշտ։ Եւ արդ տես հաւաստի զգուշութեամբ զի ի մարմնանալ Բանին ստուգութեամբ ասէ ինքն Աթանաս, զմարմինն Աստուած Բան լեալ։

Արդ երբ մարմնացաւ Բանն. ոչ ապաքէն յարգանդի Կուսին, և արդ յայտ է թէ և յարգանդի Կուսին եղև մարմինն՝ Աստուած Բան։ Քանզի յիշանել Բանին Հաւր ի մեր բնութիւնս իսկ և իսկ ի նոյնժամայն, անիմաց արագութեամբ էառ մարմին ի նուազ բնութենէ մերմէ՝ Աստուծոյ ահաւոր բնութիւնն հայրական Բանին, ստուգութեամբ և ճշմարիտ սերտութեամբ։ Արդ ուր իցէ երկուց բնութեանցն կարծիս յետ միաւորութեանն, և ոչ ուրեք։ Տես դարձեալ և զաստացածն երանելոյն Նիւսեա Գրիգորի զուգաձայն Աթանասի, զի զամենայն տկար և ապականացաւ բնութիւն խառնեալ յաստուածութիւնն ասաց լինել որ ինչ աստուածութեանն էր միշտ, և ուր խառնեցաւ ա-

Digitized by Google

պականացու բնութիւնն մարդկան՝ յանապական բնութիւն աստուածութեանն։ Ոչ ահա յայտ է հաւատեաւ եթէ յորովայնի կուսին եղև խառնումն, ապա ուրեմն յայտ է ստուգութեամբ, եթէ յորովայնի անդ կուսին՝ եղև մարմինն որ ի Մարիամայ առաւ՝ աստուածային և անապական բնութիւն, և ամենայն ինչ՝ որ ինչ աստուածութեանն էր միշտ, որպէս վկայեաց Գրիգոր Նիւսեայ։

Եւ արդ ահա յայտ է եթէ որք յառաջ քան զՔաչելն և զյարութիւնն մարդկային տկար, և ապականացու և մահկանացու բնութիւն ասեն, և կարաւտական և անփառաւոր զմարմինն Քրիստոսի, արդարացուցանեն Նոքա զՆեստոր, և զՊաւղոս Սամուստացի, և զԹէոդորոս Տարսոսացի, և զԹէոդորիտոս Կիւրոս քաղաքի եպիսկոպոս, և որք նման ւոցին ասացին մարդ ծնեալ ի կուսէն, և մահկանացու բնութիւն չարչարեալ ի խաչին, և կամ որ բնակարան բանին ասացին զմարմին, և ոչ միութիւն բնութեանն ըստ սահմանի գրոց սրբոց։ Եւ կատարի ի վերայ նոցա ասացեալն ի սուրբ Լուսաւորչէն մերմէ մեծէն Գրիգորէ, թէ՝ Որք ի մարմինն հաւատային, ծանոյց նոցա զաստուածութիւնն իւր, և որք ի մարմնոյն գթեցին՝ ուրացան զբնութիւն նորա, զանկոխն գնացին և զարտուղի անկան։

Տեսանե՞ս զի հաւատալն ի մարմինն, այն է Աստուած ճշմարիտ և անմահ և անապական, ըստ բնութեան Բանին խոստովանել զմարմինն։ Իսկ գայթակղելն ի մարմինն այն խակ է մարդկային՝ տկար՝ մահկանացու և ապականացու բնութիւն ասել զմարմինն Բանին յետ միաւորութեանն։ Տեսանե՞ս զի ուրացողս աստուածութեանն ասէ զգայթակղեալն ի մարմնոյն հրէաքար, որ բնակարան իմն համարին զմարմինն, և ոչ միութիւն բնութեամբ։ Զի եթէ երկու բնութիւն է Քրիստոս յետ միաւորութեանն՝ ապա ուրեմն, ոչ ճշմարիտն Աստուած ծնաւ ի կուսէն, այլ մարդ ապականելի՝ որպէս ասաց Նեստոր, և ոչ Տէրն փառաց խաչեցաւ՝ որպէս վկայէ առաքեալն Պաւղոս, այլ ծառայ մահկանացու, և մարդկային տկար և անփառաւոր բնութիւն, որպէս ասաց հակառակն առաքելոյն Պաւղոսի վատաշուէրն Սամուստացին։

Եւ եթէ այդպէս է, ուրեմն ստեցին առհասարակ վերինք և ներքինք։ Նախ ստեցին մարգարէքն. զի Աստուած հզաւր և անմահ և անհամեմատ ասացին զայս աւրածին մանուկն՝ որ ի

կուսէն ծնաւ։ Ստեցին և հրեշտակք, Ցէր և փրկիչ ասելով զծնեալն ի քաղաքի Դաւթի, և Փառք ի բարձունս Աստուծոյ երգելով, որ եկն յերկիր առնել խաղաղութիւն և հաշտութիւն մարդկան։ Ստեցին և մոգքն, զի թողեալ զկռապաշտութիւն դիմեցին յերկրպագութիւն ճշմարտին Աստուծոյ, և ահա եկեալ մահկանացու և ապականացու բնութեան երկրպագեցին, և ի մոլորութենէ ի մոլորութիւն փոխեցան, զի ոչ եթէ զմերկ և զանմարմին Բանն տեսին յայրին և երկրպագեցին, քաւ լիցի, այլ զմարմնացեալ և զմարդացեալն տեսին, զոր տեսին՝ նմին երկիրպագեցին։ Եւ արդ եթէ երևելի մարմինն՝ զոր տեսին մահկանացու և ապականացու, և մարդկային տկար բնութիւն էր, յայտ է եթէ մարդոյ երկրպագեցին և ոչ Աստուծոյ ճշմարտի, և ի նոյն կռապաշտութիւն զանգեալք եղեն՝ յորում էին։ Եւ եթէ այդ՝ այդպէս է, ընդ նոսին և զաւրբ երկնից մոլորեցան, զի փոխանակ աստուածային անմահ և անապական բնութեանն, մահկանացու և ապականելի մարդոյ բնութեան երկրպագեցին։ Ցետ այսորիկ ստեաց և ինքն Հայր, զի ի վերայ Յորդանանու ձայնեաց Ժողովրդեանն Հրէից, թէ՝ Դա է իմ Որդի՝ զոր տեսէքդ ի միջի ձերում ծնեալ ի Մարիամայ։ Եւ Հրէայքն՝ ոչ եթէ զանմարմին Բանն տեսին ի Յորդանան, այլ զմարմնացեալն, և զոր տեսանէին՝ զնոյնն գիտացին վկայեալ ի Հաւրէ Որդի նորա լինել երևմամբ սուրբ Հոգւոյն, և ահա եթէ զոր տեսինն՝ այն ապականացու և մահկանացու և տկար և մարդկային կարաւտական բնութիւն էր, ապա ստեաց Հայր, ընդ նմին և Հոգին սուրբ։ Պարտ էր ասել Հաւր, եթէ ի դմա է իմ Որդին, և ոչ ասել եթէ՝ Դա է, և խաբել զմարդիկ։ Եւ եթէ այսպէս է, ստեաց և ինքն Որդի, զի ասաց կուրին, եթէ՝ Տեսեր զՈրդի Աստուծոյ և որ խաւսիդ ցքեզ նա է, և ահա կոյրն զմարմինն ետես միացեալ Բանին, և ոչ եթէ զմերկ բանն, և եթէ տեսանելի մարմինն՝ այլացեղ բնութիւն էր քան զմիացեալն ի նմա Բան, մահկանացու մարդոյ և ապականելի, ապա ստեաց ճշմարտութիւնն ասելով կուրին, թէ՝ Տեսեր զՈրդին Աստուծոյ պարտ և արժան էր ասել, թէ՝ Յիս է Որդին Աստուծոյ, և ոչ ասել, թէ՝ Զոր տեսեր՝ դա է Որդի Աստուծոյ, և խաբել զնա, և զբոլոր արարածս։

Իսկ եթէ զայս խորհել կամ զմտաւ ածել յոյժ անկգամութիւն է և խորին ամպարշտութիւն, և անդր բան զամենայն

Digitized by Google

հայհոյութիւնս դիւաց և հաւր նոցա սատանայի, ստութիւն դնել անսուտն Աստուծոյ Հաւր կամ Ճշմարտութեան Հոգւոյն սրբոյ, կամ Միածնի Որդւոյն Աստուծոյ, կամ ամենայն սրբոց Նորա, որք վկայք և քարոզք եղեն մարդեղութեան Նորա, և եկեղեցական և միական կոչմամբ դաւանեցին զմարմնացեալ և զմարդացեալ Բանն Աստուած, զծնեալն ի սուրբ Կուսէն, և զմկրտեալն ի Յորդանան, զրևեռեալն ի խաչին, մի բնութիւն, մի կամք, մի ներգործութիւն, մի դէմ, մի որդի, ըստ որում վկայեաց Հայր, թէ՝ Դա է իմ Որդի՝ զոր տեսանէքդ, և Հոգին երևեալ ի վերայ աստուածախառն և աստուածացեալ մարմնոյն, հաստատեաց զվկայութիւն Հաւր ի նա, և հրեշտակք զգուշութեամբ պաշտեցին և երկրպագեցին մարդացելոյն, և երևելոյն յերկրի, իբրև Տեառն իւրեանց և Աստուծոյ, ըստ այնմ եթէ՝ Մատեան հրեշտակք, և պաշտէին զնա։ Եւ մոգքն երևեցելոյն երկրպագին, իբրև Աստուծոյ Ճշմարտի, ոչ որոշեալ բնութիւն ի բնութենէն, և ոչ մտածութեամբք հատեալք, այլ զերևեալն՝ Աստուած գիտացին, և այնպէս միոյ բնութեան և միոյ Որդւոյ մարմնացելոյ մատուցին կերկրպագութիւն։

Վասն որոյ և մեք ընդ նոսին հետևեալք ձայնին Հաւր, երևմամբ սուրբ Հոգւոյն, և վկայութեան Որդւոյ յաղագս իւր, ունկնդիր եղեալ ամենայն սրբոցն Նորա, մարգարէից և առաքելոց, և սրբոց վարդապետաց եկեղեցւոյ, խոստովանիմք հանգոյն Նորա, մի որդի, և մի բնութիւն, մարմնացելոյ և մարդացելոյ Բանին Աստուծոյ՝ անշփոթ և անքակ միութեամբ, անբընդոր և անրաժին խառնմամբ միացեալ, և մի լեալ յարգանդի Կուսին. և այսպէս անապական և անմահ և ամենալաւ մարմնով ծնաւ ի Կուսէն, և նոյն մկրտեցաւ ի Յորդանան, և նոյն բևեռեցաւ ի խաչին, և նոյն եդաւ ի գերեզմանի, և նոյն յարեաւ ի մեռելոց, և նոյն համբարձաւ յերկինս, և նոյն նստաւ ընդ աջմէ Հաւր, և նոյն գալոց է։ Վասն որոյ և Կոյսն՝ Աստուածածին՝ և ոչ մարդածին, և անապականածին՝ և ոչ ապականածին, վասն որոյ և ինքն մնաց անապական, զի անհնար է ապականացու և մահկանացու մարմնոյ ծնելոյ, զծնաւղն անապական պահել։ Իսկ եթէ յամառեսցի ոք մահկանացու և ապականացու ասել զմարմինն յայտ է, թէ զԿոյսն բարձրագոյն կամի առնել քան զծնեալն ի նմանէ Եմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած։ Իսկ եթէ ամպարշտութիւն է ասել զկոյսն մեծ քան

զծնեալն ի նմանէ Աստուած, ապա ուրեմն ծնաւղն վասն ծնելոյն ի նմանէ եղև անապական, ուստի հարկ է ինքեան որ ըստ ծնաւղն անապական պահեաց, թէ և ինքն տիրապէս էր անապական և անմահ մարմին և Աստուած ճշմարտութեամբ։ Վասն որոյ և Յորդանան աստուածակոխ և ոչ մարդակոխ, աստուածային բնութեամբն մկրտեալ, որպէս ասէն Աթանաս, և ոչ մարդկային տկար և ապականացու բնութեամբ, որպէս Թուեցաւ ասել Նեստորի, և նմանեաց նորին։ Եւ խաչն աստուածընկալ աստուածախաչ, և զենարան Միածնին Աստուծոյ, և ոչ մարդընկալ և մարդախաչ և մարդազենակ, այլ որպէս ինքն Տէրն ասաց յաղագս իւր, թէ՝ Զմի որդին հաւր զսիրելին, զկեալն ի հաւրէ առ մշկան հանին արտաքոյ այգւոյն և սպանին։ Վասն որոյ Հրէայքն աստուածասպանք՝ և ոչ մարդասպանք, զի զմի զՈրդին Հաւր զսիրելի Միածինն ասաց սպանեալ Հրէիցն, և ոչ զմարդ ոք ապականացու։ Յաղագս այնորիկ Հրէայքն աստուածուրացք և ոչ մարդուրացք, որպէս վկայեաց Մովսէս, թէ՝ Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ առաջի աչաց ձերոց։ Արդ Հրէայքն, ոչ զանմարմին Բանն տեսին կախեալ զփայտէ։ Ով յանդգնեսցի ասել զայս։ Եւ արդ ահա յայտ է թէ զմարդացեալ բանն տեսին կախեալ ի խաչին և ոչ հաւատացին, և ահա զերևելի և զտեսանելի զմարմինն խառնմամբ և միութեամբ Բանին միաւեսակ կեանս անուանեաց Մովսէս։ Արդ ո՞վ ամպարշտեսցի յանդգնել և զկեանսն մահկանացու ասել կամ ապականացու, և ոչ դէք ասեն զայս, թող թէ այլ ոք։ Վասն որոյ և գերեզմանն աստուածընկալ և ոչ մարդընկալ, զի մի փոխանակ կուսին՝ գերեզմանն երևեսցի աստուածածին։ Այլ զոր Կոյսն ծնաւ, խաչն նմին վերամբարձող եղև և զնոյնն գերեզմանն յինքն ընկալաւ, և զնոյնն արտաքս ետ, ոչ առաւելեալ և ոչ նուազեալ ի գերեզմանի անդ, այլ որպէս եմուտ ի գերեզմանն, նոյնպէս ել առանց յաւելման և պակասութեան։

Իսկ եթէ երկուս բնութիւնս էր Քրիստոս նախ քան զխաչն, որպէս ասաց Լևոն Հռոմայեցի, և մարդկայնով բնութեամբ չարչարեցաւ և թաղեցաւ, և ապա աստուածային բնութեամբ յարեաւ, յայտ է թէ փոխանակ Կուսին, գերեզմանն եղև աստուածածին, և սուտ են, որք զՄարիամ անուանեն Աստուածածին, զի ահա թէ մարդկային բնութիւն ծնաւ ի նմանէ, և մարդածին է նա յաւէտ քան աստուածածին, որպէս

Digitized by Google

թուեցաւ ասել Նեստորի։ Իսկ գերեզմանն աստուածածին փոխանակ Մարիամայ՝ որպէս թուեցաւ ասել Ցունաց։ Ապա եթէ ամպարշտութիւն է փոխանակ սրբոյ Կուսին՝ զգերեզմանն ասել աստուածածին, ուրեմն յայտ է թէ մի բնութիւն էր նախ քան զխաչն, յետ անշփոթ միաւորութեանն աստուածային մինոյն։ Քանզի մարդկային բնութիւնն եղև Աստուած խառնմամբ Բանի յարգանդի կուսին, և նոյն միոյ աստուածային բնութեան ծնաւղ Կոյսն, վասն որոյ Աստուածածին խոստովանեալ է ի վերնոց և ի ներքնոց, և նոյն մի բնութիւն անշփոթ և անքակ միաւորութեամբ ծնեալ ի կուսէն, մկրտեցաւ ի Յորդանան, և նոյն միով բնութեամբ չարչարեցաւ և մնաց անչարչարելի, և մեռաւ, և մնաց անմահ. ըստ որում եղանակի ինքն միայն գիտէ, և նոյն միով բնութեամբ եդաւ ի գերեզմանի, և նոյն բնութեամբ յարեաւ, ոչ առաւելեալ և ոչ նուազեալ, և նոյն բնութեամբ կայ և մնայ յաւիտեան, որպէս ինքն վկայեաց վասն իւր յետ յարութեանն, ասէ. Շաւշափեցէք զիս և տեսէք, զի ես նոյն եմ, որպէս էի և նախ քան զխաչն՝ և ոչ փոփոխեցայ։ Եւ Պաւղոս գոչէ ասելով. Յիսուս Քրիստոս երեկ և այսաւր, նոյն և յաւիտեան։ Եւ Պետրոս՝ գլուխն առաքելոց ասէ. Մարմին նորա ոչ ետես զապականութիւն։ Եւ Աթանաս Աղեքսանդրացի ասէ, յարեաւ յանկարծակի երեքաւրեայ, ոչ տեսանելով զապականութիւն, զորաւրինակ և՝ էր յառաջագոյն։

Արդ զի՞արդ ոք լրբիցի ասել անպահպան բերանով մահկանացութիւն, կամ ապականութիւն, կամ տկարութիւն, կամ կարաւտութիւն յաստուածեղէն մարմին Բանին, նախ քան ըզխաչն լինել հարկաւորութեամբ, զի ահա որ Քրիստոսին խաւսէր Պաւղոս, յայտնապէս ձայնեաց մեզ, թէ Յիսուս Քրիստոս՝ որպէս այսաւր է յետ յարութեանն, նոյնպէս երեկ էր նախ քան զչարչարանն, նոյնպէս կայ և մնայ յաւիտեան։ Արդ եթէ այսաւր յետ յարութեանն իշխէ ոք մահկանացութիւն կամ ապականութիւն, կամ որ ինչ հարկաւոր է մարդկային բնութեանս ասել մարմնոյ Բանին; զնոյն իմասցի և յառաջ քան զխաչն լինել նմա։ Ապա եթէ ամպարշտութիւն է հարկաւոր կիրս մարդկայինս խորհել յետ յարութեանն ի մարմին Բանին, ամպարշտութիւն է և նախ քան զխաչն ասել ինչ հարկաւորարար ի մարմին Բանին, այլ կամաւորութեամբ կամենայն որպէս զԱս-

Digitized by Google

տուած։ Զոր աւրինակ և յետ յարութեանն, նոյնպէս և նախ քան զյարութիւնն մի աւրինակ ասաց լինել զնա Պաւղոս, և նոյնպէս մինչև յաւիտեան։ Եւ արդ՝ զոր ինչ իմանայ ոք և ասէ Բանին, նոյն հանդիպի և մարմնոյն լինել յետ մարմնանալոյ Բանին. և զոր ինչ իմանայ ոք և ասէ մարմնոյն, նոյն հանդիպի և Բանին լինել յետ մարմնանալոյն։ Քանզի մի իսկ է մարմինն և բանն՝ որոյ մարմին է։ Որպէս վկայէ երանելին Եփրեմ. եթէ ոչ մի իսկ անջատումն Բանին և մարմնոյ նորա յաստուածային գիրս, այլ է և մի բնութիւն, մի դէմ, մի կաւրութիւն, բոլորն Աստուած և բոլորն մարդ, նոյն ինքն բնութիւն նորա։

Տեսանե՞ս զի զբոլոր անձն Քրիստոսի՝ Աստուած ասաց. և զբոլոր անձն նորա դարձեալ՝ մարդ, և ոչ զկէս անձին նորա մարդ, և զկէս անձին նորա Աստուած, որպէս թուեցաւ ասել Նեստորի և նմանեաց նորա, այլ զերկոսին անուանն միում անձին և միում բնութեան սահմանեաց, և ոչ միայն զերկոսին անուանսն միում բնութեան և միում անձին ասաց լինել, այլ զամենայն անուանսն Քրիստոսի՝ միում երեսաց և միում բնութեան սահմանեն գիրք։ Այսինքն զմարդն, զԱստուածն, զգաւոն, զքահանայն, զՏէրն, զորդի՞ն Դաւթի, զզճանապարհն, զկեանքն, զմիածի՞նն, զԲա՞ն, զվէ՞մն, զՈրդին Աստուծոյ, զմարգարէ՞տն, զճշմարտութիւնն, զթագաւորն, զհովիւն, զլոյսն, զՅիսո՞ւն, զՓրկիչն, զգո՞ւռն, զՔրիստո՞սն, զԵմմանո՞ւէլն, զամենակա՞լն, և որ այլ ևս ասացեալ են անուանք խորհրդաբար գիրք սուրբք ի վերայ Քրիստոսի, ամենայն անուանքն միում անձին և միում բնութեան խոստովանեալ է ի գրոց սրբոց։ Զի թէ զԱստուածն և զմարդն անուն բաժանես ի Քրիստոս, ապա հարկ լինի և ամենայն անուանցն բաժանիլ, և յայնժամ ոչ միայն յերկուս բաժանի Քրիստոս, այլ ի բազումս և յանհունս, այլ դպրոցիսի զչարաչար բաժանմանց կարծիս ի բաց վճարեաց մեծ առաքեալն յասելն թէ, Որպէս մի է Աստուած և Հայր, այսպէս մի է Տէր Յիսուս Քրիստոս։ Վասն որոյ որպէս զմինն Հայր՝ ոչ է հնար բաժանել յերկուս, այսպէս և ոչ զմի Որդին նորա Յիսուս Քրիստոս՝ հնար է բաժանել ընդ յերկուս քանզի մի խոստովանեալ է ի Պաւղոսէ, և երկութեան տեղի ոչ գոյ ի նմա։

Յաղագս որոյ Կիւրեղ Աղեքսանդրացի յայս հայեցեալ ա-

սէ, Եթէ ոք յերկուս երեսս, կամ յերկուս պաւրութիւնս բաժանեսցէ զբարրառ աւետարանչացն և զառաքելոցն և զմարգարէիցն գրեալսն վասն Քրիստոսի, և կամ որ իւր ինքեան Քրիստոսի վասն իւր է ասացեալ, և զոմանս մարդոյ ուրոյն իմանայցէ արտաքս ի Բանէն, իբր յարելութեամբ, և զոմանս աստուածաբար միայնոյ Բանին Աստուծոյ Հաւր, նզովեա՛լ ե՛ղիցի։

Տեսանե՛ս, զի միում դիմի և միում երեսաց, և միում բնութեան սահմանէ զամենայն զգրեալսն որ վասն Քրիստոսի, և զոչ այսպէս ասացողսն սաստկապէս նզովեաց։ Զնոյն և Աստուածաբան Գրիգոր միում անձին և միում բնութեան գնէ զամենայն յառ Կղաւդիանոս ճառին, սաստկապէս նախատելով զԱպողինար, որ բաժանմամբ իմանայր զներգործութիւնսն Քրիստոսի. զոմանս մարդկութեանն իմանալով և զոմանս աստուածութեանն։ Իսկ ինքն միում դնէ զամենայն և ի ճառին որ ընդդէմ Արիանոսացն ասէ, զրովանդակն աստուածաբար լինել զգործսն Քրիստոսի, զբարձրագոյնսն նորին ինքեան Քրիստոսի բնութեամբ ըստ վայելուչ բանի, իսկ զնուազագոյնս նորուն դարձեալ ինքեան Քրիստոսի կամաւորութեամբ և անաւրինաբար, այլ ոչ հարկաւորութեամբ, այլ աստուածային իշխանութեամբ, ապա ուրեմն ամենայն ինչ որ ինչ Բանն էր ի սկզբանէ, նոյնպէս եղև և մարմինն խառնմամբն և միաւորութեամբն յարգանդի անդ Կուսին։ Որպէս գրէ սուրբն Եփրեմ, թէ անրաժանելի և անորոշելի է յիւրմէ մարմնոյն Աստուած Բանն, միաւորութեամբն ըստ բնական համագոյութեան Բանին առ Հայր, վասն զի հաւասար է անուանն և մարմին նորա, և եթէ ոչ հաւասարեաց ամենայնի ի բաց եկաց յաստուածութենէն, և ոչ Բանն երկրպագեսցի, այնուհետև սուտ զտանիցի, և անդուստ և աստուածային գիրք եթէ՝ Բանն մարմին եղև։

Տես դարձեալ և աստանաւր ամենայն զգուշութեամբ զի հաւասարիլ ասաց ամենայնիւ բնութեամբ և անուամբ և գործով զմարմին Բանին բնական գոյութեանն Հաւր, իսկապէս և ճշմարտութեամբ. զոր աւրինակ ունի ասէ Բանն զբնական համագոյութիւնն առ Հայր, նոյնակշիռ պայմանիւ ասէ եղև մարմին նորա հաւասար համարնութիւն Բանին միաւորութեամբն. և ի վերայ երեր թէ, Որ ոչ խոստովանի հաւասարեալ ամենայնիւ բնութեամբ բնական համագոյութեան բանին

զմարմին նորա, այնպիսին ի բաց ուրացաւ զաստուածութիւնն, և ոչ երկրպագող է նա Բանին։ Եւ որ ոչ ասէ բնութեամբ և ճշմարտապէս աստուածայեալ զմարմինն միաւորութեամբն յարգանդի Կուսին, սուտ առնեն ասէ զգրեալն՝ Բանն մարմին եղև։ Եւ դարձեալ ասէ Եփրեմ ի գիրս հաւատոցն՝ այսպէս թէ՝ Բանն Աստուած՝ մտացաւ ի մարմինն, և հազորդեցաւ մարմինն՝ ընդ Աստուած Բանն, և է Աստուած ճշմարտութեամբ մարմինն ըստ բնութեան Բանին եղեալ որ միացաւ ի նա։ Վասն որոյ հարկ եղև զի ասցէ Բանն Աստուած՝ զանուն մարմնոյն, որպէս և մարմին՝ առ աստուգապէս զանուն Բանին Աստուածոյ, և որպէս եղև հաղորդութիւն և խառնումն երկուցունց մի բնութիւն և միաւոր։ Տես զի ըստ բնութեան Բանին ասացլինել զմարմինն Աստուած ճշմարիտ միաւորութեամբն։ Այնպէս եղեն և անունքն երկոքեան Բանին և մարմնոյն, մի անուն, միակամ, և ի վերայ բերեալ ասէ, թէ՝ Ցաղագս խառնումանն՝ մի բնութիւն միաւոր, ամենայն հարկաւորութեամբ անունք երկոքեան միոյ բնութեան, մի անուն և միաւոր։

Արդ զի՞արդ ոք իշխէ պլապան բնութիւն ասել մարմնոյն յետ միաւորութեանն։ Քանզի ըստ բնութեան Բանին ասացլինել զմարմինն ճշմարտութեամբ Աստուած միաւորութեամբն յարգանդի Կուսին, և մի բնութիւն սահմանեաց Բանին և մարմնոյ նորա ամենայն հարկաւորութեամբ։ Եւ արդ ահա յայտ է թէ զոր ինչ իմանայ ոք յաղագս մարմնոյն ըստ հարկաւորութեան լինել, նոյնք հանդիպին և Բանին լինել՝ որոյ մարմինն է, և ամենայն որ ինչ Բանին է՝ նոյն՝ ընթանայ ի Հայր։ Իսկ եթէ ի Հայր ոչ է տկարութիւն և ոչ ապականութիւն, և ոչ կարաւորութիւն, և ոչ մահկանացութիւն, զի յոյժ ամպարշտութիւն է խորհել ինչ այսպիսի յէութիւնն Հաւր, ամպարշտութիւն ուրեմն է, այսպիսի ինչ ըստ հարկի բնութեան ի վերայ մարմնոյ բանին իմանալ։ Քանզի հաւասարիլ ասացին հարքն սուրբք զմարմին միութեամբ բանին իսկական էութեանն Հաւր, անվրէպ նմանութեամբ համեմատել ամենեին, ամենայն իրաւք։ Արդ՝ զայս ասելով ոչ ուրանամք զտնաւրինական կիրսն մարդկայինս՝ զոր կրեաց Որդի բաց ի մեղաց կամաւորութեամբ, և ոչ ի հարկէ աստուածային իշխանութեամբ, և ոչ որպէս մեք։ Քանզի մեք՝ որպէս ոչ կամիմք՝ քաղցնումք և ծարաւիմք, և աշխատիմք, և ննջեմք և երկնչիմք, և անգիտանամք, և որ այլն

և սոցին նման կրեմք հարկաւորարար առանց կամաց։ Իսկ Քրիստոս Աստուած ոչ այսպէս, այլ զոր ինչ իւր վայելուչ կամացն զհետ երթայր, որպէս արդարև իմանալի է զԱստուծոյ, Քանզի ոչ եթէ բնութեանն հարկի ի ներքոյ անկեալ էր նա, այլ ինքն էր Տէր, և շարժող բնութեան իւրոյ որպէս և կամէր։ Քանզի ամենակարող զաւրութեամբ, և ամենազաւր իշխանութեամբ ամենայն։ ինչ զհետ կամաց նորա ընթանայր իբր Աստուծոյ ճշմարտի, զի կարող էր քաղցնուլ՝ երբ կամէր, և կարող էր ոչ քաղցնուլ կարող էր ննջել, և կարող էր ընաւ ոչ ննջել։ կարող էր վաստակել և ոչ վաստակել, կարող էր զարհուրել և ոչ զարհուրել, կարող էր չարչարիլ և ոչ չարչարիլ, կարող էր մեռանիլ և ոչ մեռանիլ, և զամենայն ինչ բաւական էր առնել որպէս զԱստուած, և կրեաց զամենայն կամաւորութեամբ առանց մեզայ՝ ողորմելով մեզ, և ելոյծ զամենայն որպէս զԱստուած զաւրութեամբ իւրով, որպէս դրէ սուրբն Կիւրեղ ի գիրս Գանձուն. զի ոչ եթէ բնութիւնն զնա հարկեցուցանէր, այլ ինքն շարժէր զբնութիւնն իւր։

Ահա ցոյցք յայտնիք, զի աստուածային իշխանութեամբ ապատ ասաց զնա զոլ յամենայն մարդկային բնութեան հարկէ բերման, զի Աստուած ոչ հարկի ի ներքոյ անկանի, այլ ինքն է դրիչ հարկի, և լուծիչ ամենայն հարկաւորութեանց որպէս և կամի։ Վասն այնորիկ ասէ Գրիգոր Աստուածաբան, թէ զամենայն կիրս աստուածաբար կրեաց, վասն զի կարող էր զինչ և կամէր, և վկայ այն՝ զի յետ քառասուն աւուր, ապա ասէ աւետարանիչն քաղցնուլ նմա, և ահա ապայն յայտ առնէ՝ թէ յորժամ կամեցաւն՝ յայնժամ քաղցեաւ։ Իսկ մեք և ի միում աւուր քաղցնումք, և ոչ եմք բաւական անկարիս լինել և ոչ մի աւր և ոչ մի ժամ։ Իսկ նա անկարաւտ գոլով, զոր ինչ կամէր կարող էր առնել, որպէս ասէ սուրբ Լուսաւորիչն մեր երանելին Գրիգորիոս, թէ Յետ յարութեանն հաղորդեցաւ կերակրոյ յանճաշակ յարքայութեանն, զի զյարութիւնն իւր հաւատարիմ արասցէ առաքելոցն։ Եւ նախ քան զչարչարանսն եկեր և արբ և ննջեաց, զի հաւատացուսցէ զմարդիկ թէ արդարև իսկական Որդին Աստուծոյ եղև Որդի մարդոյ։ Դարձեալ և յետ յարութեանն յանկարաւտութեանն անդ հաղորդիլ կերակրոյն ցուցումն և ստուգութիւն էր, թէ նախ քան զխաչն ի կարաւտական և ի քաղցական աշխարհիս լի և անկարաւտ ամենեին ա-

Digitized by Google

մենայն ուրեք շրջէր։ Տեսանես զի անկարաւոր ասէ զմարմին Բանին յառաջ քան զեռաչն սուրբն Գրիգոր։ Իսկ զկիրսն կամաւոր ասաց լինել վասն հաւատարիմ առնելոյ զմարդեղութիւնն իւր։

Իսկ թէ յամառեցի ոք ասել, թէ զի՞արդ երկու կատարեալ բնութիւնքն լինէր մի կատարեալ բնութիւն, զայդ Ապողինար ասաց ընդդէմ Բարսղի Կեսարու, որում պատասխանեալ ասէր, թէ՝ Մարդկան անկարելի է, իսկ Աստուծոյ ամենայն ինչ կարելի. որպէս կուսին ծնանելն, և ի վերայ ծովուն գնայն, և դրաւքն փակեալք ի ներքս մտանելն։ Եւ արդ որպէս այնքն կարելիք Աստուծոյ, նոյնպէս և զերկուս բնութիւնսն՝ մի բնութիւն առնել Աստուծոյ կարողութիւն էր խառնմամբն և միաւորութեամբն։ Բայց տեսցուք և ըստ հասարակական մտածութեանցն. ոչ ապաքէն անասունն կատարեալ բնութիւն է ըստ ինքեան, ըստ որում շնչական և զգայական է, և ունի զկամն և զարձակիլն ի հեշտալին, և ի բաց դառնալն ի տրտմեցուցանողէն։ Իսկ Հրեշտակք ըստ ինքեանց կատարեալ բնութեամբ են և էութիւն, ըստ որում կենդանիք անմահականք են, և միտք և բան ունող։ Այլ ահա տեսանեմք զերկուս կատարեալ բնութիւնս ի միասին խառնեալ, անասնականն այսինքն զգայականն, և բանականն այսինքն հրեշտակային, և անշփոթ միութիւն գործեալ մի կատարեալ բնութիւն բանական կենդանի եղև մարդ. և յետ միաւորութեանն՝ ոչ երկուս որոշեալ բնութիւնս տեսանի ի մարդում, այլ մի բնութիւն անշփոթ և անոբիշ, և մի կամք, և մի ներգործութիւն տեսանի ի մարդում հաւասարաբար, ոչ երկուս բնութիւնս, և ոչ երկուս կամս եւ եւեալ ի մարդ յետ միաւորութեանն, այլ ըմբռնեալ բանական բնութեանն և կամաց, և զանասնական և զշնչական կամն, և զբնութիւնն, և միաւորեալ ընդ նմա, եղև բոլորովին բանական կամք և բնութիւն, և խափանեցաւ ի նմանէ անասնական բնութեանն կամելն և յարձակելն, և միայն բանական իշխանական կամաւքն իբրև գործեաւ վարի անասնականաւն յամենայն ինչ՝ զինչ և կամի։ Եւ զայս ոչ միայն աստուածաշունչ գիրք և ներքին հոգեկի՛ր վարդապետք ընտանիք եկեղեցւոյ յայտ առնեն, թէ մի բնութիւն է մարդոյ և մի կամք և մի ներգործութիւն, այլ և արտաքին պանծալի բանաստեղծքն Հելլենացւոցն՝ որք հաւաստի քննութեամբ ըստ բնութեանց արարին դատողու-

Digitized by Google

թիւնք, մի բնութիւն և մի կամք և մի ներգործութիւն ասացին մարդոյ։ Որոց մի ի պերճիցն էր Արիստոտէլ, զի այսպէս ասէ, թէ Ոչ միայն պարզքն ըստ բնութեան մի են, այլ և որք ըստ շարադրութեան են յոլովից ժողովեալ մի են բնութեամբ, Տեսանե՛ս զի և արտաքինքն ճշգրիտ քննութեամբ համաձայն հոգևորացն մի բնութիւն ասացին մարդոյ։

Եւ արդ եթէ արարած ի միւս այլ արարած բնութիւն խառնեալ յինքն փոփոխեալ և միացուցեալ զանասնականն բանական արար, միացեալ բնութեամբ և կամաւք, և մի լեալ անշփոթ և անքակ միութեամբ, որչափ ևս առաւել անեղ և արարիչ Բանն Աստուած յաւրինիչ բնութեանց և ամենայն գոյացութեանց ըմբռնեալ զբոլոր մեր բնութիւնս յորովայնի սրբոյ Կուսին, զհոգի և զմարմին և զմիտս, և յինքն փոխադրեաց խառնմամբն և միաւորութեամբն։ Իսկ և իսկ զմարդկային բնութիւնս աստուածային արար, և ի մահկանացուէն անմահ և անապական արար, անշփոթ միութեամբ և անծանելի խառնմամբ անքակ և սերտագոյն միութիւն գործեալ առաւել քան հոգւոյ և մարմնոյ Բանն Աստուած ինքեան և մարմնոյ իւրոյ, և ոչ ուրեք մարդկային և տկար բնութեան կամ կամաց կամ ներգործութեանց թիւ մեաց աստուածային միաւորութեան հարկաւորապէս առնելոյ, այլ բոլորն աստուածացեալ ասի աստուածային կամաւք և ներգործութեամբ յետ անշփոթ միութեանն։ Զի մեաց Երրորդութիւնն պարզ և անպանական և անխառն և առնաւելորդ յամենայն նիւթական և ի նուազ բնութեան թուակցութենէ, նոյն միով բնութեամբ և նոյն նմանութեամբ Երրորդութիւնն յետ մարմնանալոյ Որդւոյ՝ որպէս էրն յաւիտենից, ոչինչ աննման բնութիւն յաւելեալ ի մի բնութիւն Երրորդութեանն, և ոչ այլանման կամք ի նոյնանման կամս նորա։ Որպէս և Գրիգոր Նիւսեայ ասէ առ Հարցումն եղբաւր իւրոյ Բարսղի. եթէ Որդի զմարմին զգենլով ի նոյն պատկեր ինքեան փոխեաց միաւորութեամբ, զի ոչ ներէր Հայր աննմանոյ իւրոյ՝ տալ կաթողակցութիւնն իւր։

Տեսանե՛ս զի նման Հաւր ասէ զմարմինն, և ի վերայ բերեալ ասէ, թէ ոչ էր նման Հաւր, ոչ կարէր աթոռակից նմա լինել, և արդ յայտ է թէ հարկ է մի բնութիւն լինել Բանին և մարմնոյն, զի այսպէս զանվրէպ նմանութիւն կալցի առ Հայր, զի և Հայր մի բնութիւն է, և որ նման է նմա ճշգրիտ նմա-

Digitized by Google

նութեամբ հարկ է և նմա մի բնութիւն լինել, զի այսպէս զաթոռակցութիւնն կալցի առ նա։ Ապա եթէ յամառեսցի ոք երկուս բնութիւնս ասել Քրիստոսի յետ միաւորութեանն, հարկ է և զՀայր երկուս բնութիւնս ասել զսան զնոյն նմանութիւն ունելոյ առ միմեանս Հաւր և Որդւոյ, զսան որոյ և աթոռակից միմեանց։ Իսկ եթէ ամպարշտութիւն է զՀայր երկուս բնութիւնս ասել, ամպարշտութիւն ուրեմն է և Քրիստոսի երկուս բնութիւնս ասել յետ միաւորութեանն զի ոչ կարէ երկու բնութեամբքն՝ միոյ բնութեանն Հաւր նման լինել, և ոչ աթոռակից նմա որպէս վկայեաց երանելին Գրիգոր Նիւսեայ։ Ուստի հարկ է մի բնութիւն խոստովանել զՔրիստոս, և մի կամք նորա յետ միաւորութեանն, զի այսպէս անվրէպ նմանութեամբն առ Հայր աթոռակցութեանն Բանն ամբողջ պահեսցի միշտ առ միմեանս։

Վասն որոյ սուրբն Յուլիոս Հռովմայ հայրապետն ասէ, Թէ որպէս մարդ մի բնութիւն է, այսպէս ի նմանութիւն մարդկան եղեալն Քրիստոս մի բնութիւն է։ Զնոյն և Եփրեմ ասէ, Թէ որպէս մարդ ի հոգւոյ և ի մարմնոյ միաւորեալ, ոչ երկուս բնութիւնս է, այլ մի։ Սոյնպէս և Կիւրեղ Աղեքսանդրացի ասէ ի գիրս Պարապմանցն թէ՝ Առցուք մեզ աւրինակ դարձեալ զմարդ, զի ահա այլ բնութիւն է հոգւոյ և այլ մարմնոյ, և սոքա ի միասին խառնեալ մի բնութիւն մարդոյ կատարեն, այնպէս և Աստուածն Բան խառնեալ ի մարմնի, և միացեալ ընդ նմա եղև մի բնութիւն։ Տեսանե՛ս զիարդ արտաքինք և ներքինք զմարդ մի բնութիւն ասացին, և ըստ նմին աւրինակի զՔրիստոս յետ միաւորութեանն՝ մի բնութիւն սերտազոյն միաւորութեամբ սահմանեցին։ Վասն որոյ և մեք ընդ նոսին զՔրիստոս յետ մարմնանալոյն յարգանդի կուսին մի բնութիւն խոստովանիմք, և մի կամք նորա աստուածայինք և մի ներգործութիւն և մի դէմք, վկայութեամբ ամենայն աստուածաշունչ գրոց։

Քանզի նախ Մովսէսիւ ասէ. Տեսէք տեսէք զի ես եմ Աստուած։ Այս այն է զոր ինքն իսկ ասաց ցՀրեայսն յասել նոցա թէ՝ Դու ո՞վ ես. ասէ, Յորժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ, յայնժամ գիտասջիք թէ ես եմ Աստուած։ Արդ Հրեայքն տեսին զնա և մարդ կարծեցին ասելով, դու մարդ ես, և զանձն քո Աստուած առնես։ Վասն այնորիկ զգուշացուցանէ զնոսա ի ձեռն Մովսէսի, Տեսէք ասէ, զի ես եմ ՈՐ Է՛Ն և մի մոլորիք։ Արդ մի զուցէ և սոցա ասիցէ՝ արդի և նոր Հրէից, որք մարդ

պատչելիաքն կարծեն, եթէ Զի՞ ամպարշտիք. ես եմ էն Աստուած՝ որ երևեցայ ի փրկութիւն աշխարհի և եկի ի կառս խաչին փրկել զգերեալսն ի սատանայէ։ Զայն որոյ և Դաւիթ ասէ, Ե՛լ ի բարձունս և գերեաց զգերութիւն և դարձեալ ասէ, Սիոնի ասի մայր և մարդ ծնաւ ի նմա. և նա ինքն է բարձրեալն որ հիմնեցուցիչն է նորա։ Եւ Եպիփան մեկնէ զբանն աղամոսիս այսպէս, յասել մարգարէին թէ Մարդ ծնաւ, զի մի ոք լոկ մարդ կարծեցէ զծնիցեալն ի Կուսէն. այլ ի վերայ վաղվաղակի, թէ Սա է արարիչ և Տէր, և հիմնեցուցիչ արարածոց իւրոց՝ որ ծնաւս, և բարձրեալ և Աստուած ամենայնի, և դատաւոր հասարակաց. Զայսն և Աթանաս մեկնէ, թէ Մարդս այս ծնեալս ի Սիոն՝ սա է բարձրեալն. Արդ՝ տես յայտնապէս զի Դաւիթ և Աթանաս և Եպիփան Կիպրացի, զծնեալն մարդ ի Բեթղեհէմ՝ Աստուած բարձրեալ է Տէր և արարիչ ամենայնի քարոզեցին։ Արդ ով այնքան և ամպարիշտ է անմիտ իցէ որ զբարձրեալն Աստուած կարաւտական կամ մահկանացու կամ ապականելի ասիցէ. զի ահա բարձրեալն վերագոյն գոլով քան զամենայն, ոչինչ գոտանի անդր քան զբնութիւն նորա՝ զի կարիցէ իշխել նմա, այլ ինքն գոլով վերագոյն իշխանութեամբ Տէր ամենայնի փոփոխէ զամենայն որպէս և կամի։ Ըստ որում և Մովսէս ասէ, յերկրորդում աւրինացն յաւրհնութիւնսն Ասերայ։ Ոչ գոյ իբրև զԱստուած սիրեցելոյն ի նմանէ, և մեծարարն հաստատութեամբ, և ծածկոյթ Աստուծոյ իշխանութեանն։

Արդ տես հաւաստեաւ, թէ ո՞ այնչափ կաւրասցի մինչև ծածկել զԱստուծոյ իշխանութիւնն բաւեսցէ, և ոչ ոք յարարածական բնութենէ չէ՛ ուրեք և չէ՛ հնար. բայց միայն աստուածային բնութեանն է այս, որպէս Որդւոյ առ Հայր, և Հոգւոյն սրբոյ առ նոսին, և ի նոցանէ ծածկել կամ ծածկիլ, այսինքն չափեալք ի միմեանց ճշգրիտ հաւասարութեամբ առ իրևարս։ Եւ արդ՝ աստ ծածկոյթ Աստուծոյ իշխանութեանն հաւաստեաւ կմարմինն ասաց, վասն որոյ զհաւասարութիւն ն՝անակեաց մարմնոյն ունել առ Հաւր միութեամբ Բանին, և զնոյնակշիռ սահման և չափ՝ ծածկութի անուամբ նշանակեաց։ Եւ արդ յայտ է թէ մի բնութիւն է մարմնոյն և Բանին աստուածային, և մի կամք նորա միաւորութեամբ, զի այսպէս եղիցի ծածկոյթ և չափ անչափելի բնութեանն և իշխանութեանն Աստուծոյ Հաւր՝ մարմնին մի բնութեամբ։ Վասն որոյ

Digitized by Google

ի վերայ բերեալ Մովսէս ասէ, թէ՝ Ի զաւրութենէ բազկաց մշանջենաւորաց մերժեսցէ յերեսաց քոց զթշնամին և ասիցէ թէ կորիր։ Եւ ե՛րբ մերժեաց յերեսաց մերոց զթշնամին մեր և կոծոյս զնա, ո՛չ ապաքէն ի խաչին, և ահա ամենապաւար սատայ և մշանջենաւոր զբազուկն Քրիստոսի տարածեալս ի խաչին, և մերժեաց և կորոյս զթշնամին յերեսաց մերոց։ Արդ միթէ՞ ամենապաւարն տկար իցէ, կամ մշանջենաւորն մահկանացու և ապականելի. և ո՞վ յանդգնեսցի ասել զայս։ Եւ ոչ դեռ։ Դարձեալ և Դաւիթ ասէ ի գիմաց Հաւր առ Որդի, ասէ։ Որդի իմ ես դու, և ես այսաւր ծնայ զքեզ. սակս զի զայսաւրածին մարմինն ընդ մշանջենաւոր և ընդ անսկիզբն ծնողեան իւրոյ միացուցեալ և միական որդի և ծնունդ իւր անուանեաց։ Քանզի յորժամ եղև Բանն՝ ծնունդ Կուսին և կոչեցաւ Որդի մարդոյ. վասն որոյ և Կոյսն Աստուածածին քարոզեցաւ, ի նմին ժամու մարմինն՝ որ ի Կուսէն առաւ, իսկ և իսկ եղև աստուածապէս ծնունդ Հաւր՝ և կոչեցաւ ճշմարտապէս Որդի Աստուծոյ, ըստ Գաբրիէլի ձայնին առ Կոյսն թէ՝ Որ ծնանելոցն է ի քէն Որդի Աստուծոյ և Որդի բարձրելոյ կոչեսցի։ Վկայէ պատրիկ սուրբն Եփրեմ Ասորեստանի եպիսկոպոսն ի գիրսն հաւատոցն, և ասէ այսպէս, թէ որպէս ասէ զԲանէն՝ որ ծնունդն է Հաւր յաւիտենից՝ թէ երէկ ծնաւ ի Մարիամայ, որպէս աղաղակեցին հրեշտակքն. թէ՝ Ծնաւ ձեզ այսաւր կենարար, որ է ուծեալ Ցեր ի քաղաքի Դաւթի։ Նոյնպէս ասէ և զմարմնոյն, թէ ի Հաւրէ ծնեալ է, որպէս աղաղակեաց Հայր ի բարձանց, ասէ Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։ Ապա թէ որ ասիցէ՝ վասն Բանին ասաց Հայր, պատասխանի տալի է նմա զայս ինչ. թէ զոր Հայր ոչ որոշեաց, դու մի՛ որոշեր։ Նոյնպէս և Պաւղոս ոչ որոշեաց. եթէ անդրանիկ ի մեռելոց մարմինն է, և կամ հաստիչ ամենայնի՝ Բանն է, այլ զմիոյ երեսաց ասաց զամենայն. այլ և զմարմինն արարածական՝ արարիչ ամենայնի ասաց. քանզի ասէ, Նա է նմանութիւն Աստուծոյ՝ որ ոչն երևի, և նովաւ հաստատեցան ամենայն որ երևի և որ ոչն երևի, և նա է անդրանիկ ի մեռելոց. և զմիոյ է ասացեալ զամենայն, և ոչ որոշեաց գիրք զմարմնոյն առանձին և զԲանին առանձին. Քանզի եղև մի հաղորդութիւն կատարեալ միոյ ծննդեան կատարելոյ, որ ոչ է որոշումն։

Տեսանե՞ս զի՞արդ Եփրեմ ձայնակցեալ մարգարէին Դաւ-

թէ, ծնունդ Հաւր ասաց լինել զմարմինն յետ միաւորութեանն, զոր աւրինակ և Բանն եղև ասէ, ծնունդ Կուսին։ Նոյնպէս և Գաբրիէլ ասէր ցԾուսէփ, թէ՝ Որ ի նմայն ծնեալն է ի Հոգւոյն սրբոյ է, և ոչ յայլ ումեքէ։ Արդ եթէ ծնունդ Հաւր, և ծնունդ Հոգւոյն սրբոյ եղև մարմինն ստուգապէս, զորաւրինակ և Բանն Հայրական եղև ստուգապէս ծնունդ Կուսին, արդ ո՞ այնքան մորոս և անմիտ իցէ, որ իշխեսցէ զծնունդն Հաւր՝ երկուս բնութիւնս և երկուս կամս ասել, զի ահա՛ հարկ է ըստ բնութեան ծնաւղին՝ ամենայն իրաւք և ծնիցելոյն լինել ամենայն հարկաւորութեամբ։ Վասն որոյ և Եսայի մարգարէն, զծնեալ մանուկն՝ Աստուած հզաւր, և իշխան, և Հայր հանդերձեալ յաւիտենին ասէ։ Տեսանե՞ս զի ի ծնունդեանն Աստուած հզաւր ասաց զմարմինն, և արդ միթէ հզաւրն Աստուած չէիցէ՝ մի բնութիւն և մի կամք նորա։ Այո՛ է ճշմարտութեամբ. և եթէ յանդգնի ոք ընդդէմ ինչ ասել և բաժանել զհզաւրն Աստուած յերկուս բնութիւնս և յերկուս կամս, այնպիսին զԱստուած ոչ կարէ բաժանել, զի ոչ է ձեռնհաս բաժանել, այլ ինքն բաժանի յԱստուծոյ հրէաբար։

Զի՞նչ ասէ և Երեմիա մարգարէն. Սա՛ է Աստուած մեր՝ որում ոչ գոյ այլ ոք համեմատ նմա, որ ետ զամենայն իմաստութիւն Յակովբայ ծառայի իւրոյ, յետ այսորիկ յերկրի երեւեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ. և թէպէտ և մարդ է՞ով ծանիցէ զնա, այսինքն ոչ ոք զի անքննին է և անծանաւթ ի բոլորից իրրև տիրապէս Աստուած։ Արդ միթէ անմարմին Բանն երևեցաւ յերկրի և շրջեցաւ ընդ մարդկան, և կոչեցաւ մարդ. և արդ ո՞վ իշխեսցէ զայդ ասել, ապա ուրեմն յայտ է եթէ զմարմնով երևեալն ասաց անհամեմատ Աստուած և անծանաւթ ի բոլորից։ Իսկ եթէ երկուս բնութիւնս է Քրիստոս և երկուս կամս, ապա ոչ միայն չէ անծանաւթ ի բնաւից, այլ և ծանուցեալ է ի բնաւից. և քննելի է բոլորից, և ի վայր քան զբաղումս։ Քանզի և մարդիկ իւրեանց տկար բնութեամբն ճանաչեն զնորա բնութիւնն, և հրեշտակք ի վեր գոլով քան զմարդիկ՝ քննեն զմարդիկ, և զնա ընդ մարդկան. իսկ ինքեանք անքննելիք ի մարդկանէ՝ քննին ի միմեանց և յաստուածութենէն։ Իսկ աստուածութիւնն ոչ յումեքէ քննի, բայց միայն ինքն յինքենէ, որպէս Հայր յՈրդւոյ, և Որդի ի Հաւրէ, և Հոգին սուրբ զնոսա և ի նոցանէն։ Զի որ քննի յումեքէ՝ հարկ

է նուազ գոլ քան զնա կամ հաւասար, որպէս անասունք քննին ի մարդկանէ, իսկ մարդիկ յանանոց ոչ երբեք և մարդիկք քննին ի հրեշտակաց և հրեշտակք ի մարդկանէ և՝ ոչ երբեք, և հրեշտակք քննին յաստուածութենէն. իսկ աստուածութիւնն անքննին է ի հրեշտակաց և յամենայն արարածոց։

Եւ արդ եթէ Քրիստոս երկուս բնութիւնս է, և երկուս կամս ունի, ապա նուազ է քան զհրեշտակս, իբրև զմարդկային բնութիւն քննեալ ի հրեշտակաց։ Եւ զի՞արդ պաշտեցին զնա հրեշտակք ի ծննդեանն և ի փորձութեանն և յամենայն ժամու իբրև զԱստուած ճշմարիտ, ուրեմն մոլորեցան հրեշտակք զմարդկային տկար և ապականայու և քննելի բնութիւն պաշտելով. և ստեաց Երեմիա անքննելի և անծանաւթ ասաց զնա բոլորից և անհամեմատ ամենայնիւ։ Իսկ եթէ ամպարշտութիւն է մոլորութիւն ասել հրեշտակաց, և ստութիւն մարգարէին, ապա ուրեմն մի բնութիւն է Քրիստոս, և մի կամք նորա աստուածային, և մի ներգործութիւնք։ Վասն որոյ ինքն ասէ մարգարէին թէ՝ Աստուած եմ ես ի միջի ձերում, և ոչ մարդ սուրբ։ Տեսանե՛ս զի ինքն վկայեաց վասն իւր, ճշմարիտ Աստուած ասաց զինքն և ոչ մարդ, զի մի մոլորեսցին քրիստոնեայքն իբրև զհրէայքն՝ մարդ կարծելով զնա, և մարդկային տկար բնութիւն քննելի և ապականելի. այլ Աստուած ճշմարիտ անքննելի բնութեամբ՝ անմահ և անապական։ Եւ ոչ ասաց յետ յարութեանն լինել զայս՝ մարգարէն, այլ այժմ իսկ, ասէ, մինչ եմս ի միջի ձերում երևեալ իբրև զմարդ, ոչ եմ մարդ՝ որպէս դուք կարծէք, այլ Աստուած սուրբ և ճշմարիտ։ Որպէս և Պաւղոս ասէ, թէ՝ Քրիստոս ըստ մարմնոյ Աստուած է ի վերայ ամենայնի, և աւրհնեալ է յաւիտեանս. և դարձեալ ասէ, թէ՝ Անքննելի է մեծութիւնն Քրիստոսի։ Իսկ եթէ մեծութիւնն անքննելի է որչափ ևս առաւել բնութիւնն։

Ըստ որում և Դանիէլ ասէ, տեսանէի զորդի մարդոյ զի գայր ընդ ամպս և ընդ երկինս, և հասանէր մինչև ի հինաւուրցն։ Արդ մի՞թէ զմերկ բանէն է ասացեալ գալ և հասանել յետոյ առ Հայր. ո՛չ քանզի Բանն յաւիտենից անսկզբնութեամբ և մշտնջենաւորութեամբ ունէր զհասումն առ Հայր, և ոչ եթէ յետոյ եհաս, քա՛ւ լիցի։ այլ աստ զմարմնոյն ասէ մարգարէն գալ և հասանել առ Հայր, վասն որոյ Որդի մարդոյ ասաց։ Եւ զի՞նչ իցէ հասանելն, այսինքն համեմատել և

հաւասարել, քանզի եհաս մարմին ի հաւասարութիւն իսկական բնութեանն այնմիկ, որ հնացուցանէ զաւուրս, և ինքն միշտ կայ ի նոյնութեան։ Եւ ՝ի՛ր եհաս մարմին ի հաւասարութիւն հաւր. յորժամ ասացաւ Կուսին թէ՝ Տէր ընդ քեզ. ի նմին ժամու յորժամ եղև Բանն ընդ Կուսին և հաւասարեաց ամենայնիւ մեզ առանց մեղաց, որպէս ասէ Պաւղոս, ի նմին ժամու մարմինն՝ որ ի մերմէ բնութենէս առաւ ի Կուսէն, իսկ և իսկ հաւասարեաց ամենայնիւ իսկական բնութեանն Հաւր, միաւորութեամբ Բանին յարգանդի անդ, ոչ տեղեաւ ասեմ, այլ բնութեամբ և փառաւք, զաւրութեամբ և աստուածութեամբ մինչ էրն իսկ յարգանդի կուսին։ Ամենայն ինչ որ ինչ Աստուածային բնութեանն վայել է, եղև մարմինն յարգանդին խառնմամբ Բանին, վասն որոյ և ի ծնանելն անապական պահեաց զկոյսն, և այս աստուածային բնութեանն է գործ և ոչ մարդկային։ Ապա եթէ յամառեսցի ոք ասել յետ յարութեանն եհաս մարմինն ի հաւասարութիւն Հաւր, ապա ուրեմն և յետ յարութեանն եհաս Բանն ի հաւասարութիւն մեզ։ Իսկ եթէ ամպարշտութիւն է խորհել զայս, քանզի յիշանելն յարգանդ Կուսին եհաս Բանն ի հաւասարութիւն մեզ, ապա ուրեմն ամպարշտութիւն է և յետ յարութեանն ապա ասել զմարմինն հաւասարիլ Հաւր, քանզի յայնժամ հաւասարեաց Հաւր մարմին բանին, յորժամ Բանն հաւասարեաց մեզ։ Եւ արդ ասէ մարգարէն անցանել ընդ ամպս և ընդ երկինս զորդին մարդոյ և հասանել մինչև առ Հայր։ Ամպս անուանեաց զմարդկային բնութիւնս, մանաւանդ որք միանգամ անուանեցան սուրբք և հաճոյք Աստուծոյ, ըստ այնմ թէ՝ Ո՞վ է յամպս որ նմանեսցի քեզ։ Իսկ երկինս անուանեաց զանմարմին և զհրեշտակական բնութիւնն, և ասաց անցանել ընդ ամենայն արարածական բնութիւն, և գնացեալ, ասէ, եհաս ի պայման զուգութեան անզուգական և անհաս բնութեանն, և համեմատեալ հաւասարեաց նմա ամենևին ամենայն իրաւք անվրէպ նմանութեամբ մարմինն մի բնութեամբ բանին յարգանդի անդ։

Ըստ որում ասէ աւետարանիչն Յովհաննէս, եթէ Յիսուս՝ Հայր իւր կոչէր զԱստուած, և հաւասար առնէ զանձն Աստուծոյ Հաւր. վասն այնորիկ հալածէին զնա Հրէայքն և ասէին, դու մարդ ես և զանձն քո Աստուած առնես։ Եւ արդ մի զուցէ և այժմ ոմանք հալածեն զնա հրէաբար, որք ոչ խոստովա-

նին զմարմին Բանին Աստուած ճշմարիտ անմահ և անապական բնութեամբ. Անդատին իսկ յարգանդէ կուսին բանաւոր առնէր, և հպեալ ձեռն ի մեռեալս յարուցանէր և բարբառ ապառաժեղէն լեզուին Հայնեալ Ղազարու յարուցանէր, զի ցուցցէ և յայտ արասցէ, թէ որ եռաեղծ զԱդամ ձեռաւք և յեռ յանցանացն ասէ ցնա, թէ՝ Ո՞ւր ես, նոյն ինքն վերստին եկն կեցուցանել զորդիս Ադամայ և ասէ, Ո՞ւր եդիք զԼազարոս. և յարոյց զնա յաւրինակ Ադամայ. Արդ այսու ամենայնիւ վկայի աստուածութիւն մարմնոյն նախ քան զխաչն, ըստ որում և աւետարանիչն ասէ, Բանն մարմին եղև, և տեսաք զփառս նորա, փառս իբրև զՄիածնի առ ի Հաւրէ. Զի՞նչ քան զայս այլ սերտագոյն վիճութեան ցուցումն պիտոյ է, զի զմարմին Միածնին առ ի Հաւրէ չի շնորհաւք, և հայրական փառաւքն ճոխացեալ ասաց. զի իբրն ասելով, այսինքն թէ իբրև զԲանն և մարմինն եղև Միածին, և ասի խառնմամբ և միութեամբ Բանին և նոյն միածնական անուամբն և իսկական փառաւքն պսակեալ է մարմինն միութեամբ Բանին. Արդ մի՞թէ Միածինն մի բնութիւն և մի կամք և անմահ և անապական ոչ իցէ. Այժ է աստուածութեամբ և ճշմարտապէս. ըստ որում և ինքն ասէ, Որպէս կենդանի եմ ես վասն Հաւր, և որ ուտէն զիս՝ և նա կեցցէ վասն Իմ Տե՛ս ըստ ճշմարիտ միութիւն բանին և մարմնոյն, զի թէ երկուութեան ինչ կարծիս կայր յինքն և ի մարմինն, պարտ էր ասել թէ, որ ուտէ զմարմինս՝ յորում ես բնակեալս եմ. Բայց ոչ այսպէս ասաց, այլ թէ՝ Որ ուտէն զիս. և ահա զինքն և զմարմինն իւր ճշմարիտ և սերտագոյն միութեամբ մի ասաց, և միապէս ուտել ի քրիստոնէիցն, և կենագործող կերոցացն սահմանեաց. Եւ արդ մի՞թէ որ զայս անմահացուցանէ ինքն չիցէ անապական. Այժ է հարկաւորաբար ամենայն իրաւք, և ահա նախ քան ըզխաչն է ասացեալ զայս եթէ՝ Որ ուտէն զիս՝ կեցցէ յաւիտեան. Վասն որոյ և նախ քան զխաչն տուեալ առաքելոցն կենագործութեան զնասա, զի յայտնեսցի, թէ նախ քան զխաչն անմահ և անապական էր մարմին Բանին, իբրև զԲանն անդստին. Իսկ յարգանդի Կուսին և մի բնութիւն և մի կամք Քրիստոսի միշտ և հանապազ ըստ որում ինքն ասէ. Որ ետես զիս՝ ետես զՀայր. Եւ ահա հայրական անմրէպ նմանութեամբն սահմանեաց զտեսանելն յառաքելոցն զմարմնացեալ Բանն. Վասն որոյ և Յովհաննէս ասէ, Զեռք մեր շաւշափեցին զԲանն կենա Տե՛ս զի զշաւ-

շափեալ ժարմինն՝ Բան կենաց անուանեաց և մի անուն սահմանեաց Բանին և մարմնոյն, բան և կեանք ասացեալ։

Արդ ո՞վ իշխեսցէ զԲանն կենաց ժահկանացու կամ ապականացու ասել, կամ երկուս բնութիւնս կամ երկուս կամս լինել ի նմա։ Եւ ոչ դեռ յանդգնին ասել զայս Վասն որոյ սուրբ վարդապետքս եկեղեցւոյ համարձակագոյն բարբառով քարոզեցին զՔրիստոս մի բնութիւն և մի կամք և մի ներգործութիւն նորա և անմահ և անապական զմարմին նորա, և նոյն աւրինակ զնա անփոփոխելի միշտ յարգանդէ կուսին, և մինչև ցխաչն, և մինչև ցյաւիտեան. ըստ այնմ եթէ՝ Յիսուս Քրիստոս երէկ և այսաւր՝ նոյն է և յաւիտեան։

Եւ արդ տեսցուք զի մի բնութիւն է Քրիստոս յետ միաւորութեանն։ Ասէ մեծն Դիոնեսիոս Արիսպագացի, Քանզի մի բնութիւն և պարզութիւն և թաքնութիւն Յիսուսի աստուածպետական Բանին ըստ մեզ մարդանալոյն, զմեր նուաստութիւնս ընդ իւրոց ծայրագունիցն աստուածայնոց միացուցեալ, և մարդասիրապէս ի բնութիւնս մեր տեսակացաւ, և առ բաժանակաս մեր անայլայլաբար ըստ բնութեանս մերոյ յառաջ եկն։ Տե՛ս զի գտեսակացեալն մարմնով և զեկեալն յառաջ մի ասաց և ոչ երկուս, պարզութիւն ասաց, և ոչ ի բազմաց դրութիւն, միութիւն ասաց և ոչ երկուութիւն. թաքուն ասաց և ոչ քննելի։ Եւ զի արդ ոմանք երևելապէս յանդգնին քննել զթաքուն և զանքննելին, և յերկուս զմին բաժանել Վասն որոյ Գրիգոր Սքանչելագործն ասէ, Է՞ Աստուած ճշմարտութեամբ անմարմին, ի մարմնի երևեալ կատարեալ ճշմարտութեամբ աստուածային կատարելութեամբ, ոչ երկուս դէմս և ոչ երկուս բնութիւնս, զի և ոչ ասեմ չորս երկրպագեալս, զԱստուած և զՈրդի Աստուծոյ, և զմարդն և զՀոգին սուրբ, վասն որոյ նշովեմք զայսպէս զամպարշտեալսն։ Տե՛ս զի, որ երկուս բնութիւնս ասէ Քրիստոսի, հարկ լինի նմա չորս դէմ ասել և փոխանակ Դրրոդութեանն՝ չորրորդութեան երկրպագել և նշովիլ յԱստուծոյ և ի սրբոյ Նորա։ Եւ Աթանաս Աղեքսանդրացի գրէ առ Յորինոս լծագաւոր այսպէս, Նախ Տէր ընդ Կուսին աստուածարար, ապա նոյն ինքն ի նմանէ մնաւրինաբար մանուկ։ Եւ արդ մի յաւէտ վայելուչ է ասել և խոստովանել զԲանին բնութիւն և անձնաւորութիւն մարմնացելոյ և ճշմարտապէս մարդացելոյ.

Digitized by Google

և որ զայս ոչ ասէ, աստուածամարտ է, և սրբոց հարցն պատերազմիչ։

Տեսանե՛ս զի որ ոչ խոստովանի մի բնութիւն զմարմնացեալ և զմարդացեալ Բանն՝ աստուածամարտ ասէ զայնպիսին և սրբոց հարցն պատերազմիչ։ Եւ դարձեալ ասէ Աթանաս, Խոստովանիմք զնա Աստուած և Որդի Աստուծոյ ըստ հոգւոյ, և Որդի մարդոյ՝ ըստ մարմնոյ, ոչ երկուս բնութիւնս և ոչ երկուս դէմս և ոչ երկուս երկրպագութիւնս, այլ մի բնութիւն և մի դէմս բանին Աստուծոյ մարմնացելոյ, հանդերձ միով երկրպագութեամբ։

Եւ Կիւրեղ Աղեքսանդրացի ասէ առ յԵրեմիաս հարցմանն, որ ետես զիս ետես զՀայր իմ։ և Ես և Հայր իմ մի եմք։ Եւ դարձեալ, Զի՞ խնդրէք սպանանել զիս մարդ, որ զճշմարտութիւն ընդ ձեզ խաւսեցայ, զոր լուայ ի Հաւրէ իմմէ։ Մինոյ զոյ տայցեմք և նորին զայսոսիկ զձայնս, և զայն ամենայնիւ ամենևին իսկ։ Քանզի բաժանի և ոչ բնաւ Քրիստոս, այլ է մի և միայն և ճշմարիտ Որդի զոլ, և որպէս միոյ Որդւոյ այնուհետև ըստ բնութեան և ճշմարիտ ըստ մեզ եղելոյ և մարմնացելոյ կրկնի ամենայն ծուներ որպէս ասացի այժմ։ Քանզի զայս խորհել աստանաւր և հաւատացեալք ի պարտաւորութենէ մարդապաշտութեան ի բաց վճարեմք զերկինս և զերկիր. զի գրեալ է Տեառն Աստուծոյ քոյ երկրպագցես, և զնա միայն պաշտեսցես։ Տե՛ս զի որ երկուս բնութիւնս իմանան ի Քրիստոս յետ միաւորութեանն, և զաստուածաբարն աստուածային բնութեանն տայցէ, և զմարդկաբարն՝ մարդկային բնութեանն, այնպիսին ասէ, մարդապաշտ է, և զերկինս և զերկիր պարտական առնել խորհի մարդապաշտութեանն պատժոց։ Եւ դարձեալ ասէ նոյն Կիւրեղ ի գիրս Պարապմանցն. Ոչ է բաժանեալ առանձնական այլայլութիւն իբր ըստ մասին, այլ ժողովելի է յաւէտ յանհատանելի միաւորութիւն, զի եղև մարմին Բանն ըստ Յովհաննու ձայնին, և մի Որդի և մի զոլ զբնութիւն նորա ասեմք. թէ և յառման իմանի լեալ մարմնոյ հոգի ունաւղի իմանալոյն։ Եւ դարձեալ ասէ, Արդ չարահնարութեամբ է զմինն բնութեամբ և ճշմարտապէս Որդի մարմնացեալ և մարդացեալ բաժանեալ յերկուս։ Եւ դարձեալ առ Նեստորի թղթին ասէ. Իսկ զյաւետարանն փրկչին մերոյ ձայնս, ոչ բնութեամբք երկու և ոչ դիմաւք բաժանեմք, զի ոչ

է կրկնապատիկ մինն և միայն Քրիստոս, թէպէտ և յերկուց իմանայցի և ի վանական իրաց ի մի միաւորութիւն կանքաժանելին հաւաքել, որպէս մարդ ի հոգւոյ և ի մարմնոյ ոչ է կրկնապատիկ՝ այլ մի՝, չի թէ ճշմարիտ է, այսպէս և Բանն Աստուծոյ Հաւր, թէպէտ և մարմին առեալ յառաջ եկն մարդ ի կնոջէ, ոչ է կրկնապատիկ, այլ մի միաւորութիւն, ոչ ուրեք երկու ամենևին, այլ մի և միայն յերկակաց իմանի Քրիստոս։ Եւ դարձեալ գրէ առ Թէոդոս Թագաւոր, Թէպէտ և ի վանականից և յանմանից եկեալ առ միմեանս բնութիւնքն, սակայն մի Որդի, և մի Տէր, և մի բնութիւն նորա։ Եւ դարձեալ գրէ առ Ակակ Մելիտինեայ եպիսկոպոսն, թէ՝ Աստուածային գիրք ի սուրբ Կուսէն ասեն առնուլ զմարմին Աստուծոյ Բանին, սակայն է՝ մի և միայն Որդի, և մի Տէր Յիսուս Քրիստոս յերկուց բնութեանց միաւորեալ, յետ միաւորութեանն անդէն ի քաց բարձեցելոյ յերկուս հատմանն, և մի գոլ հաւատամ զՈրդւոյ բնութիւն։ Եւ դարձեալ յորժամ եհարց Սեկունդոս եպիսկոպոս, թէ պարտ է՝ երկուս բնութիւնս ասել բանին մարմնացելոյ, թէ մի. իսկ սուրբն Կիւրեղ գրով պատասխանի առնէ նման, Ոչինչ անջատեմք զբնութիւնսն ի միմեանց, և ոչ յերկուս Որդիս հատանեմք, զմինն և կանքաժանելին, այլ միաւորեմք որպէս և սուրբ հարքն ասացին, մի է բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ։ Տեսանե՛ս զի որ երկուս բնութիւնս ասեն անջատեն զբնութիւնսն ի միմեանց, և յերկուս որդիս հատանեն, զմինն Քրիստոս, որպէս և ամենեցուն քաջայայտ է ի հարցմանէդ և ի պատասխանւոյդ՝ զոր արար սուրբն Կիւրեղ Սեկունդոսի։ Եւ դարձեալ գրէ առ Նեստոր այսպէս, Հրաժարեմք ասել զայն՝ յաղագս Քրիստոսի, թէ վասն զգեցողին՝ ըզգեցեալն պաշտեմք, և վասն աներևութին՝ երկրպագանեմք երևելոյն։ Արհաւիրք և դողումն են ի վերայ այսորիկ և զայն ասել, թէ որ առաւն վասն առաւղին՝ Աստուած յորչորչի, չի որ զայս ասէ, բաժանէ դարձեալ յերկուս Քրիստոսս, և մարդ ուրոյն անուանէ, և Աստուած դարձեալ ուրոյն. և սուտ լինի խոստումն միութեան և մարթ իսկ չէ, թէ բնկեր՝ վասն ընկերի երկիրպագեսցի. և յորչորչի Աստուած, այլ մի իմանալի է Յիսուս Քրիստոս, մի որդի, Միածին, միով երկրպագութեամբ, միով բնութեամբ պատուի հանդերձ մարմնով իւրով։ Տեսանե՛ս զի ոչ տայ թոյլ նման զգեստի իմանալ զմարմնանալ բանին,

Digitized by Google

պյլ խառնումն, որպէս ոգի ընդ մարմին, և պյլ սերտագոյն, և ոչ ներէ զերևելին պյլ իմանալ, և զաներևոյթն պյլ, պյլ մի և նոյն գիտել զՔրիստոս։

Որպէս և Գրիգոր Աստուածաբան գրէ առ Կլաւդիանոս, թէ՝ Նոյն է, ասէ, երևելին և աներևոյթն, անժամանակն և ընդ ժամանակաւն, և ոչ պյլ ոք և պյլ մի՛ լիցի։ քանզի մի է միաւորութիւն, ապա ուրեմն որք պյլ և պյլ ասեն զՔրիստոս յերկուս բնութիւնս և յերկուս կամս բաժանելով հակառակ սրբոց հարցն, որք հոգւով Աստուծոյ խաւսեցան և մի ասացին զՔրիստոս յետ միաւորութեանն անբաժանելի ամենևին։ Վասն որոյ գրէ Կիւրեղ Աղեքսանդրացի. Թէ՝ ոք ոչ խոստովանեսցի բնութեամբ միանալ ի մարմնի Բանին Աստուծոյ Հաւր, և մի Քրիստոս հանդերձ մարմնով իւրով, զնոյն Աստուած համանգամայն և մարդ, նզովեա՛լ եղիցի։ Եւ դարձեալ ասէ, Թէ ոք բաժանեսցէ զՔրիստոս յերկուս դէմս յետ միանալոյն, և միայն ճոխութիւն և պատիւ տայէ նմա՝ յարելութեամբ և ոչ միութիւն բնութեամբ. նզովեա՛լ եղիցի։ Տեսանե՛ս զի որք ոչ խոստովանիցեն մի բնութիւն Քրիստոսի յետ միաւորութեանն յերկուս դէմս բաժանեալ զՔրիստոս, և անկանին ընդ նզովիւք։ Եւ Եփրեմ ասէ, ոչ բաժանեմք զԲանն յիւրմէ մարմնոյն յետ միաւորութեանն յերկուս դէմս՝ և ոչ յերկուս բնութիւնս, այլ է մի դէմ և մի բնութիւն ի Քրիստոս, և այս է խորհուրդ փրկութեան մերոյ, մարմնանալ Աստուծոյ Բանին։ Եւ դարձեալ ասէ Եփրեմ ի գիրս հաւատոցն. Բանն և Տէր որ յաւիտենից, և մարմին նորա՝ որ երեկ ի Մարիամայ, մի է և ոչ երկուս ըստ ասացելոյն թէ, Որպէս մի է Աստուած Հայր՝ յորմէ ամենայն, նոյնպէս և մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն։ Եւ դարձեալ ասէ, Այն որ էն ի սկզբանէն Աստուած առ Աստուած, նա է անդրանիկ գլուխ՝ որ յարեաւ ի մեռելոց. վասն որոյ ասէ Պաւղոս, թէ՝ Նովաւ հաստատեցաւ ամենայն որ երկնի, և որ ոչն երևի, և նա՛ է անդրանիկ որ յարեաւն ի մեռելոց։ Եւ արդ ահա հաղորդէ զայն որ յաւիտենից՝ ընդ այն որ երէկն, և զայն որ երէկ՝ ընդ այն որ յաւիտենից, զի եղիցի այն որ յաւիտենից, այն որ երէկն, և այն որ երէկն այն որ յաւիտենից առանց որոշման, մի ծնունդ կատարեալ։ Եւ ահա զմիոջէ երեսաց ասէ Պաւղոս զամենայն, և մի երեսաց Երթայ և զայ յամենայն ընթերցուածս ցայն. Էէ՝ նա՛ է

նմանութիւն Աստուծոյ՝ որ ոչն երևի, մինչև ցայն թէ՝ Նա է անդրանիկն որ յարեաւն ի մեռելոց։ Եւ դարձեալ ասէ Եփրեմ ի նոյն ճառի, Ասել ումեք եթէ այն որ երէկն ծնաւ, չէ այն՝ որ ի սկզբանէն Աստուած է, չէ՛ հնար. զի այն որ ի սկզբանէն է Աստուած, և այն որ երէկն ծնաւն նոյն ինքն մի ծնունդ կատարեալ է։ Քանզի իբրև ծնաւ մարմին Բանին երէկ, յայնժամ ծնաւ և Բանն՝ որ յաւիտենից է, ընդ մարմնոյն՝ որ ծնաւ երէկ, զի մի՛ տացէ տեղի թէ, երկու որդիք անուանեսցին, այլ մի որդի կատարեալ է. նոյնպէս իբրև ասաց զԲանէն Պաւղոս, թէ Էր յառաջ քան զամենայն, ասաց և զմարմնոյն՝ թէ յառաջ է քան զամենայն, զի մի տացէ տեղի, թէ երկու որդիք քարոզեսցին, այլ մի Որդի յաւիտենից առանց որոշման, որպէս զի և մարմինն այնուհետև Աստուած յաւիտենից։ Եւ վասն զի ասի բնութիւն Բանին, թէ եղև, որ էր Աստուած ի սկզբանէ, նոյնանուանի և մարմինն թէ յառաջ է քան զամենայն, և թէ արարիչ է ամենայնի։ Տե՛ս զսքանչելի և զանճառ միութեանն ցուցումն Բանին և մարմնոյն. զիարդ զմարմինն՝ որ ի կուսէն էառ Բանն, արարիչ ամենայնի և Աստուած յաւիտենից, և Տէր բոլորից ստուգապէս ասաց լինել միութեամբ Բանին, սուրբն Եփրեմ վկայութեամբն Պաւղոսի՝ որ Քրիստոսիւն խաւսէր։

Եւ Թէոդորիտոս Անկիւրեայ եպիսկոպոսն ասէ, թէ՝ Մի՛ ասեր Բանիւդ զՔրիստոս մի, իմացիր և մտաւքդ, և մի մարտնչիր մտաւքդ ընդ բանիդ քո, մի ասելով՝ և երկուս իմանալով, իսկ թէ երկուս իմանաս, զմիաւորութիւնն ուրացար։ Արդ մի առ բնութիւնս որոշեալս իջուցանել զմիտս քո, զի ծայրագոյն միութիւն սքանչելագործեալ է Աստուծոյ։ Տեսանե՛ս զի որ երկու բնութիւնս իմանայ զՔրիստոս յետ միանալոյն, ուրացաւ զմիաւորութիւնն Քրիստոսի։ Քանզի սուրբն Յուլիոս Հռովմայ եպիսկոպոսն ասէ, Որ զյերկնուստն Աստուած խոստովանին ի սրբոյ Կուսէն ծնեալ, և ոչ մի զոլ զնա մարմնոյն, իսուր ծփին ի բանըս նոցա ամպարշտութեանն արտաքերեալք. զի ասեն և նոքա որպէս լսեմ երկուս բնութիւնս։ Իսկ Յովհաննէս հաւաստեաւ ցուցեալ է, մի բնութիւն զՏէրն ասելով Բանն մարմին եղև։ Եւ Պաւղոս ասէ, Մի տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն։ Արդ՝ եթէ մի ի սրբոյ Կուսէն ծնիցեալն անուանեցաւ, և նա ինքն է որով ամենայն եղև, մի բնութիւն է, վասն զի և դէմ մի

Digitized by Google

ոչ ունելով յերկուս բաժանումն. վասն զի ոչ առանձին բնութիւն է մարմինն, և ոչ առանձին բնութեամբ աստուածութիւնն յետ միանալոյն. այլ որպէս մարդ մի բնութիւն է, այսպէս ի նմա նութիւն մարդոյ եղեալն Քրիստոս՝ մի բնութիւն է. քանզի աստուածութիւնն ճշմարտապէս հանդերձ մարմնոյն մի բնութիւն է, և յերկուս բնութիւնս ոչ բաժանի, և ոչ հնար իսկ է, այլ զի հարկ լինի այնոցիկ՝ որք երկուս ասեն բնութիւնս, զմինն՝ աստուածային ասելով, իսկ զմիւսն մարդկային, զմինն՝ երկրպագելի, իսկ զմիւսն՝ ոչ երկրպագելի, յաստուածայինն մկրտել, իսկ ի մարդկայինն ոչ մկրտել իսկ եթէ ի մահն Տեառն մկրտիմք մի խոստովանիմք բնութիւն անախտակիր աստուածութեամբն, և աֆտակիր մարմնով. զի այսպէս յԱստուած իսկ մկրտութիւնն մեր, և ի մահ Տեառն կատարեալ. Տեսանես զի ամենայարիշտ ասէ զայն՝ որք երկուս բնութիւնս իմանան ի Քրիստոս՝ յետ մարմնանալոյն. Քանզի մկրտութիւնն յաստուածային բնութենէն ուրացեալ լինի և ի մարդկային յանաստուած և յաներկրպագելի բնութիւն լեալ, զոր ինքեանք ասեն չարչարեալ ի խաչին անիմաստ խորհրդով, ի հարկէ և ոչ ի կամաց.

Արդ զի մի՛ յայսպիսի խորխորատ կորստեան անկանիցիմք ուրանալով զմկրտութիւնն յաստուածային և յանմահ բնութենէ խաչեցելոյն, և փոխանակ . . . . . ի մարդկային մահկանացու և չարչարելի բնութիւն լեալ. արդ զի մի՛ լիցի այս ի խորհուրդս քրիստոնէութեանս, խոստովանիմք մի բնութիւն մարմնացելոյն Աստուծոյ հանգոյն առաքելոց և մարգարէից և հարցն սրբոց՝ զորս յիշատակեցաք սակաւուք, զի մի երկայնաբան լիցուք. զի այսպէս ճշմարիտ հաւատովք կատարեսցի խորհուրդ ամենասուրբ Երրորդութեանն ի մեզ ստուգապէս աստուած լեալ, և ոչ ի մարդ ապականելի և մահկանացու.

Եւ արդ զի բազում վկայիւք աստուածախաւս արանցն ստուգեցաւ մի բնութիւն Քրիստոսի յետ մարմնանալոյն. յետ այսորիկ տեսցուք թէ և մի կամք են նորա ըստ միոյ բնութեանն և ոչ երկուս, որպէս ոմանք ամպարշտեալ բարբաջեն. Ասէ սուրբն Աթանաս ի Ճառին՝ որ յաղագս յայտնութեան փրկչին. Ծնաւ ի կնոջէ Աստուած Բանն, զի գառաջին ստեղծուածն զմարդկան կերպարանն՝ ինքեամբ հաստատեսցէ. ցուցաւ մարմնով առանց մարմնականաց կամաց և խորհրդոց մարդկայնոց, ի պատկեր նորոգութեան ի կամս աստուածութեանն

միայնոյ, վասն զի և բնութիւն բոլոր բանին յուցմամբ կերպիւ մարդկայնոցս մարմնոյ։ Տեսանե՛ս զի աստուածային կամք միայն ասէ լինել ի փրկիչն մեր յետ մարմնանալոյն, և մարդկային կամք և խորհուրդք անհետ լեալ յաստուածային մարմնոյն ի մարմնանալ Բանին։ Եւ եպիսկոպոսապետն Հռովմայ Ենորիա գրէ այսպէս. Զփոքր կամ կրից չաբչարանաց աստուածութիւնն, ոչ մերկ և անմարմին, այլ վասն անճառ միաւորութեան մարմնոյն և աստուածային բնութեանն, վասն որոյ մի կամք խոստովանիմք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, քանզի կամք այլ և այլ հակառակք ոչ եղեն ի Փրկչին մերոյ. զի ի վերս քան զաւրէն մարդկութեանս ծանուցեալ եղև։ Տեսանես հաւաստեաւ, զի ահա մի կամս խոստովանիք Քրիստոսի, իսկ այլ կամք ընդդիմամարտ աստուածային կամացն ոչ ասէ լինել ի Փրկիչն մեր, քանզի որ երկուս կամս ասէ ի Քրիստոս՝ ոչ խոստովանի զԱստուած մարդ լեալ, այլ ի մարդ բնակեալ որպէս Նեստորի թուեցաւ, զոր մի՛ լիցի ճշմարիտ հաւատացելոց պատպէս խորհել, զի զԱստուած մարդացեալ խոստովանիմք և ոչ զմարդ որ աստուածացեալ ըստ հաճոյ լինելոյ։ Եւ մեծն Եպիփան ի գիրս հաւատոցն ասէ. Կարողակից առնել զհոլեղէն մարմինն աստուածութեանն ի մի զաւրութիւն զաւրացոյց և ի մի աստուածութիւն ժողովեաց։ Եւ արդ ահա մի զաւրութիւն և մի աստուածութիւն ասաց զմարմինն միացեալ Բանին և զիարդ ի մի զաւրութիւն և ի մի աստուածութիւն երկուս կամս հնար է լինել։ Եւ ոչ դևք յանդգնին ասել երկուս կամս ի մի զաւրութիւն և ի մի աստուածութիւն, թող թէ աշակերտքն նոցա։ Եւ սքանչելին Բարսեղ Կեսարու ընդդէմ Ապողինարի ասէ. Մարմինն բնութեամբ մարդկային, իսկ միաւորութեամբն աստուածային, քանզի աստուածացաւ միաւորութեամբն Աստուծոյ Բանին։ Եւ արդ զի՞արդ յաստուածացեալ միտն հնար է մարդկային կամաց լինել։ Ո՞չ ապաքէն կամքն՝ մտայն է ծնունդ, և եթէ միտքն ստուգապէս աստուածացաւ միութեամբ Բանին, յայտ է ահա թէ և կամքն աստուածացան, և արդ ահա յաստուածութենէն չէ հնար մարդկային խորհրդոցն ծնանել, բայց միայն աստուածային, որպէս և ինքն ասէ մարգարէին, թէ՝ Որպէս հեռի են երկինք յերկրէ, այնպէս հեռի են խորհուրդք իմ ի խորհրդոց ձերոց, ասէ Տէր։ Ահա և բան մարգարէին յանդիմանէ զայնոսիկ որք մարդկային կամք

և խորհուրդք ամպարշտաբար իմանան ի Քրիստոս յետ միաւորութեանն, և ոչ խոստովանին միայն աստուածային կամք և խորհուրդք որպէս վայել է նմա։

Վասն որոյ դարձեալ ասէ Բարսեղ առ Ապողինար, թէ որպէս ասր ներկեալ ծիրանեաւ ոչ երկգոյնս է այլ միագոյն, այնպէս և միտքն պայծառացեալ և աստուածացեալ, ոչ ևս երկու իշխանական, այլ մի, զի փոխանակ զործոյ մարդկային մտաւքն վայէր Բանն Աստուած։ Տես յայտնապէս յաւրինակէդ, որպէս ասր սպիտակ ներկեալ ծիրանեաւ կորնչի ի նմանէ ամենևին սպիտակութիւնն, և ոչ կարէ երևիլ տեսողացն առ ծիրանեաւն զի երկգոյն լեցի ասրն, այլ ամենևին միագոյն ծիրանի, այսպէս և մարդկային միտք և մարմին խառնեալ և ներկեալ ստուգապէս աստուածային բնութեամբն, ոչ է հնար այնուհետև երկատեսակ զնա իմանալ, և երկուս իշխանական կամս առ ընթեր միմեանց լինել, այլ մի աստուածային իշխանական կամք և մի բնութիւն զնա իմանալ և խոստովանել վերնոց և ներքնոց, ի բաց բարձեալ ի նմանէ ամենևին ամենայն անձնիշխանական կամք, որպէս բառնայ ծիրանութիւն՝ կպիտակութիւն ասւոյն, զի բոլորն աստուածային կամքն և մի ներգործութիւն. ասի։ Ուստի յայտ է ստուգութեամբ, թէ որ երկուս կամս ասեն ի Քրիստոս, ոչ խոստովանին Աստուած ճշմարիտ զմարմինն միութեամբ Բանին, և ոչ ասեն զԱստուած՝ մարդ լեալ ըստ Պաւղոսի՝ որ ասէ. Եկն Որդին Աստուծոյ և եղև ի կնոջէ. այլ կարծեն ի մարդ բնակել որպէս Պաւղոս Սամոսատացի և Նեստոր և նմանիք նոցա։

Յետ այսորիկ դարձեալ տեսցուք, թէ մի ներգործութիւն է մարմնացելոյ Բանին ըստ միոյ բնութեանն, և ըստ միոյ կամաց նորա, և ոչ երկուս, որպէս յանդգնեցան ասել Թէոդորիտոս Կիւրացի և Լևոն Հռովմայեցի և նմանիք նոցա։ Եւ արդ ասէ երանելին Աթանաս ի չորրորդ ճառին առ Արիոս Եւ Բանն ասէ զմարմնոյն բարձեալ ունէր զտկարութիւն որպէս և զիւրս, զի նորա էր մարմինն գործակից աստուածութեանն գործոց, զի նովաւ լինէր, զի Աստուծոյ մարմին էր։ Եւ դարձեալ ասէ. Թէ Աստուծոյ Բանին գործքն ոչ ի ձեռն մարմնոյն էր եղեալ. ոչ արդեաք էր աստուածացեալ մարմինն։ Եւ դարձեալ ասէ. Զի զգործն Հաւր ի ձեռն մարմնոյն գործէր։ Եւ դարձեալ նոյն գրէ առ Դեղփոս եպիսկոպոս. Զեռն ձգեաց յարոյց, ասէ, զոր ի ջեր-

Digitized by Google

մութենէ էր ըմբռնեալ, և ձայն արձակեալ յարոյց զԼազարոս։ Եւ Գրիգոր Նիւսեայ յերկրորդ ճառին որ ընդդէմ Եւնոմիոսի ասէ. Քանզի և ներգործելն որպէս և ճշմարիտ Աստուծոյ ի ձեռն իւրոյ մարմնոյն ամենեցուն փրկութիւն, որպէս ձայնին կամ գործոյն մարգկաւրէն եկեալ յառաջ իսկ ի ներքուստ իմացեալ լինի աստուածութիւնն։ Եւ Յուլիոս Հռովմայեցի ասէ. Ոչ մի ինչ անջատումն է բանին և մարմնոյն յաստուածային գործս, այլ է մի անձնաւորութիւն, և մի բնութիւն և մի ներգործութիւն Յիսուսի Քրիստոսի։ Եւ Յովհան Ոսկերերան ի ճառին՝ յորում ի լերինն աղաւթէր Յիսուս ասէ. Միով կաւրութեամբ և միով ներգործութեամբ զբաղմատեսակ աթոռս բժշկեաց։ Եւ դարձեալ ասէ. Զի զկանայան զսքանչելագործութիւնսն ի ձեռն միոյ ներգործութեան ընկալով։ Եւ Կիւրեղ Աղեքսանդրացի ի Մատթէոսի աւետարանին մեկնութեանն ասէ. Թէ՝ Ընդ իւր միաւորեաց զմարմինն, որպէս ոչ ասէն որ ընդ Հաւրն և ի Հաւրէ Աստուած Բանն. որպէս և կիւրան կամեալ զմարմնոյն ներգործութիւնսն բնաւորականս, և յցուցեալ զմարմինն իւր աստուածավայելուչ ներգործութեամբ՝ և յիւրն եհան փառս։ Եւ դարձեալ ասէ. Զերկուս կոյրսն բժշկէր մերձաւորութեամբ ձեռին և լուսաւորէր, քանզի աստուածագործ կաւրութեամբն ի գոլ զիւր մարմինն ցուցանէր, որպէս և զոքանչին Պետրոսի ձեռն ի վերայ եդեալ առ ժամայն բժշկէր, վասն զի իւրոյ բնութեանն, աստուածութեանն ասեմ, միսկաւր ցուցեալ զիւր մարմնոյն ներգործութիւնն՝ վարի և թքոնի, զի ծանիցուք թէ մարմին նորա զամենայն ունելով զներգործութիւն զկենդանարար Բանին և լուսաւորութեան, առիթ լինի ի ձեռն սուղ ինչ մերձաւորութեան։ Եւ դարձեալ ասէ ի գիրս Պարապմանց, թէ զՄարմինն իւրացոյց Բանն, միաւորեաց և ընդ մարմնոյն զիւր բնութեանն ներգործութիւնսն։ Եւ դարձեալ ասէ. Ընկալեալ ի մի վեհգունութիւն փառաց ըստ հաւասար Բանի վերադրի ուրեմն է, և մարմնով նմա ներիցութիւնն որպէս Աստուծոյ ըստ բնութեան միաւորեալ ի մարմնի և զիւրն բարութիւնս հասարակարդեալ իւրն մարմնով։ Եւ դարձեալ ասէ, Թէպէտ և երևէր իրրև զմի ի մէնջ, այլ գործէր զգործս Հաւր, և ոչ իւիք իրաւք կերպարանաւք խոնարհագոյն ոչ գտանէր ի զաւրութենէ և ի փառաց ծնաւղին։ Եւ դարձեալ ասէ. Մարմին բանին վայելչաբար զմաղացն շարժեաց զրնութիւն, և յաստուածայինսն հարստացեալ

անճառաբար որպէս անպատմելի միացեալ ընդ Բանին՝ սուրբ է և կենդանարար և աստուածավայելուչ ներգործութեամբ լի։

Եւ արդ բաւական են ասացեալքս առ ի հաստատել զհաւատացեալքս թէ մի ներգործութիւն է Բանին Աստուծոյ մարմնացելոյ ըստ միոյ կամաց և ըստ միոյ բնութեան նորա, և յանդիմանել զայնոսիկ՝ որ յանդգնին երկուս ներգործութիւնս ասել Քրիստոսի հակառակ հարցն սրբոց, զի ա՛հաւասիկ զաստուածագործ զաւրութեանցն և զմարդկաւրինագոյնսն միոյ և նորին Բանին Աստուծոյ մարմնացելոյ ասացին զներգործութիւնսն գիրք սրբոցն։

Դարձեալ և զայն իսկ տեսցուք թէ անապական և անմահական էր մարմինն Քրիստոսի անդստին իսկ յարգանդէ կուսին և մինչև յեաչն և մինչև ցյաւիտեան միաւրինակ. և ոչ մահկանացու և ապականացու նախ քան զխաչն որպէս ամպարշտեցին ոմանք ասել, այլ միշտ անմահ և անապական։ Իրենիոս այսպէս գրէ. Եկն Որդին Աստուծոյ և զգեցաւ մարմին անապական՝ յանապական կուսէն Մարիամայ։ Եւ դարձեալ ասէ. Անարգեն զՈրդին Աստուծոյ, և զմարմնոյն փրկութիւնն ուրանան, և զվերստին ծնունդ նորա անպատուեն, որք ոչն ասեն զնա գոլ ընդունակ անապականութեան։ Տեսանե՛ս զի անարգիչ ասաց Որդւոյն Աստուծոյ և ուրացող փրկութեան մերոյ զայնոսիկ՝ որք ոչն ասեն անապական զմարմինն Տեառն ի ծնանիլն ի կուսէն։ Եւ Յովհան Երուսաղէմացի ասէ. Խոստովանիմք եթէ Յիսուս Քրիստոս ճշմարտապէս մեռաւ, մեռաւ վասն մեզաց մերոց, թաղեցաւ և յարեաւ, զնոյն բնութիւն ունելով զմարմնոյն՝ որով մեռեալն թաղեցաւ. յայտ է թէ անապականութեամբ որպէս էրն իսկ յառաջագոյն, նոյնպէս յարեաւ։ Տեսանե՛ս զի որպէս էր նախ քան զչարչարանսն, նոյնպէս ասաց զնա յարուցեալ ի մեռելոց։ Եւ Փիլաքսոն Նարովք քաղաքի եպիսկոպոս ասէ. Սա վասն զի անապականելի էր ոչ փոխեցաւ։ Եւ դարձեալ ասէ. թէ՝ Մարմնացաւ ի սրբոյ Կուսէն երկրորդ Ադամ Նոր մարդ, ապա ի վեր է քան զապականութիւն։ Եւ Պրոկղ եպիսկոպոս ասէ, թէ ըստ բնութեան մերոյ ծնեալ էր Քրիստոս, յիրաւի ասէր չիք ի նմա ապականութիւն, և զի ապականութիւնն յամուսնութենէ լինի, ապա եթէ ի վեր է քան զամուսնութիւն, ի վեր է քան զապականութիւն։ Դարձեալ ասէ. Պատասուրեաց Կոյսն ի ձեռն անապականութեանն Քրիստոսի, և եղև Մայր անապականութեան, քանզի յորում ստեղծաւ ա-

նապականութիւնն, ոչ կարէր տեղի գտանել ապականութիւն. քանզի ոչ կարէր կանապականութիւնն պարտել ապականութիւնն։ Եւ դարձեալ ասէ. Միայն կին ծնաւ, քանզի աւտար էր ապականութիւն ծնեալն. կոյս ծնաւ վասն այնր՝ որ էր սրբութեան աղբեւր։ Եւ Եպիփան Կիպրացի ասէ. Առեալ զմահկանացու մարմինս մեր և զեղծանելի և միացուցեալ ընդ աստուածութիւնն եցոյց անապական։ Եւ Կիւրեղ Աղեքսանդրացի ասէ, Եղև մարմին Բանն և անապական և անմահ զնա ցուցեալ. քանզի ոչ մահկանացու մնալ, և ոչ ընդ ապականութեամբ եթող զնա, զոր առաքեացն ի մեզ Աղամ, զյանցանացն զպատիժս. այլ յաւէտ որպէս անապական մարմին Աստուծոյ, այսինքն իւր և ինքեան, և քան զմահ և զապականութիւն վերագոյն եղեալ։ Եւ դարձեալ ասէ. Զի յեկամուտ ապականութենէն ապրեցուցէ զմեր հոգեղէն մարմին ըստ միաւորութեան տնաւրէնութեանն զիւր կեանս ի ներս արկեալ, իւր արարեալ և զմարդկայինն հոգի, եցոյց զնա ի վեր քան զմեզս, զի զիւրոյ բնութեան զսերտութիւն և զանփոփոխութիւն իբրև յասր զներկ ինչ արկեալ և գունեալ զնա. արդ վասն զի եղև մարմինն կենարարին ամենայն բանիւ՝ քան զմահու և զապականութեան ի վեր մնայ իշխանութիւն։ Տե՛ս զի ի մարմնանալ Բանին՝ քան զմահ և զապականութիւն ի վեր եղեալ ասաց զմարմին Բանին, զի Ադամ, ասէ, մեղաց սկիզբն եղեալ զապականութիւն տնկեաց ի մեզ և զմահ։ Իսկ Քրիստոս անմեղութեան սկիզբն եղեալ մեզ՝ զանմահութիւն և զանապականութիւն սերմանեաց ի մեզ անապական և անմահ մարմնովն՝ զոր էառ ի Կուսէն։ Եւ Աթանաս գրէ առ Եպիկտիդոն Կորընթացւոց եպիսկոպոս, թէ՝ Բանն՝ որ ի մարմնի էր ի վեր քան զբնութիւն մահկանացու մարմնոյ, արար զմարմին իւր անմահ և անապական, և միացոյց ինքեան, և չնչեաց ի մարմնոյն զբնական ըզմահ. և զապականութիւն, վասն զի զգեցեալ և միացուցեալ իւր զմարմինն Բանն Աստուծոյ՝ որ ի վերն է քան զբնութիւն մարդկան, վասն որոյ եղև անապական մարմինն որ յապականացաւաց աստի։ Եւ դարձեալ ասէ. Ոչինչ ապականէ զհոգի և զմարմին՝ բայց մեղք. իսկ ապա անհոսանուտ մարմնաւորութիւնն Եմմանուէլի որ ի Մարիամայ Աստուածածնէ անմեղանչական է, քանզի յանամուսնական որովայնէ մշտակուսէն է. վասն այնորիկ և անապական խոստովանելի է քանզի ամենայն

ապականութեանց և մեղաց բարձիչ է։ Տես ամենայն զգուշութեամբ. զի ապականութեան և մահու պատճառս զմեղս ասացի լինել. արդ յայտ է թէ որք մահկանացութիւն կամ ապականութիւն ասեն լինել ի մարմինն Քրիստոսի նախ քան զխաչն, ապա ուրեմն և մեղանչումն յանմեղն և յամենասուրբն Աստուած յանդգնին իմանալ։ Իսկ թէ զայս խորհելն անդունդք հայհոյութեան է և խորք ամպարշտութեան, ապա ուրեմն Քրիստոս է սրբութեան աղբիւր բնաւիցս վերնոց և ներքնոց. զան այնորիկ և ճշմարտապէս անմահ և անապական էր մարմին նորա և նախ քան զխաչն, որպէս և այժմ իսկ է, նոյնպէս էր և յայնժամ։ Քանզի դարձեալ ասէ Աթանաս, Ադամ զանմեղ մարմինն ի դատապարտութիւն և յապականութիւն էարկ. իսկ Քրիստոս զսա անապական և խափանիչ մահու և փրկանակ մահացելոցս եցոյց. ոչ կարաց մահ զին. . . . . ածել զհոգին Քրիստոսի և ոչ ապականութիւն յափշտակել կարաց զմարմին նորա *). զի զայս . . . . . թիւն է զի թէ զմեղս աշխարհի եբարձ . . . . . կանութեան զիարդ ասեն ոմանք ի մոլ. . . . . կանացու էր մարմինն Քրիստոսի։ Արդ տե՛ս . . . . . զի ամպարիշտս և մոլորեալս ի ճշմար. . . . . սաց զայնոսիկ որք ապականութեան և մ . . . . . թեան կարծիս առնուն ի մարմինն Քրիստոսի նախ ք . . . . . զի մայր մահու և ապականութեան մեղքն են ի . . . . . մեղք ոչ իցեն, ապականութեան և մահու անհնար . . . . երեւեալ։ Ըստ որում և Բարսեղ Կեսարու ասէ առ Ապողինար. Ոչ փոփոխելի էր Քրիստոս, մի՛ լիցի, զի մի մեղանչու . . . . . ի ներս մոցէ յանմեղանչելին, թէ կարասցես գտանել անձնաւոր մարմին յառաջագոյն գոյացեալ և . . . . միաւորեալ ընդ Բանին Աստուծոյ ի մահ փոփոխումն. . . . , թէ գոյութիւն մարմնոյն՝ ոչ է առանց միութեան Բանին զի գոյացեալ զնա միութեամբ Բանին ծանեա . . . . . բես փոփոխումն, զի մարմին և միտք միաւորեալ ընդ Բանին ոչ փոփոխին։ Տեսանե՛ս զի ամենայն սուրբք համաձայն միմեանց ասացին ոչ . . . . . ապականութեան և փոփոխման մահու . . . . . մեղաց լինել. իսկ եթէ ապականութիւն և փոփոխումն, կամ մահկանացութիւն յոքու . . . . . հարկ է նախ մեղաց լինել որ

*) Թերթ մի կիսովի պատառեալ է ասասէն վերուստ ի վայր։

մայրն . . . . . սոքա ծնունդք Նորա։ Ապա ուրեմն . . . .
. . . . և քան զՀրէայսն անդէն չարութեամբ հ . . . . . .
որք ապականութեան և փոփոխութեան . . . . . այսութեան
և կամ այլ ինչ մարդկային տկարութեան կրծիս առնուի մարմինն
Քրիստոսի նախ քան զ . . . . . այսց կարծեաց և մեղացն դալ
զՀետ զ . . . . . իշխեաց զայս խորհել, զի ասէ զա . . . . .
. . . . . չ գտանէ յիւրայոցն և ցՀրե . . . . . .
Նդիմանեսցէ ի ձէնչ զիս վասն . . . . . որոյ
սաստկապէս նզովեցին զիրք . . . . . ի խորհողսն։
Սակս որոյ ասէ սքանչե . . . . . իգոր. Եթէ որ ասէ
փոփոխելի կամ այլ . . . . . և ոչ խոստովանեսցի զնա հոգ-
ւով ա . . . . . ի մարմնի որպէս և գրեալ է. Նզովեալ ե-
զէցի։ Եւ դարձեալ ասէ. Զի՞արդ ասէ որ փոփոխէլի կամ այլայ-
լելի զՔրիստոս, զի ինքն ասէ. Ես Նոյն եմ և ոչ փոփոխիմ. և
դարձեալ թէ ոչ թողաւ անձն Նորա ի դժոխս, և ոչ մարմին
Նորա ետես զապականութիւն։ Եւ արդ բաւական են ասացեալքս
ի յանդիմանութիւն այնոցիկ՝ որք ապականութեան կամ . . . .
արութեան կարծիս առնեն, կամ փոփոխման, կամ հՀկանայու-
թեան ի մարմինն Քրիստոսի նախ քան զխաչն։ . . . . ահա աս-
տուածային դիրք մի և Նոյն աւրինակ ասացին . . . . զՔրիստ-
տոս անդստին իսկ յարգանդէ կուսին և . . . . . աչն և մին-
չև յաւիտեանս, ըստ որում Պաւղոս, Յիսուս Քրիստոս երէկ և
այսաւր, Նոյն է և յաւի . . . . . ։ Յետ այսր ամենայնի տես-
ցուք զՀարց՝ . . . . . թէ զի՞արդ փոքր տեսակ չա-
փովք . . . . . տ խաչին, և դիւրակէզն կարող ա. . . .
. . . . . զանրովանդակելին և զամենա . . . . . ահա
Տէր Աստուած մեր հուր ծախիչ է։ . . . . . սնամք ընդ ան-
տեղի և ընդ անդէպ . . . . . զի թէ վասն փոքրկու-
թեան չափոյն . . . . . ոդանալ տանել, ապա ոչ երկինք և
ներ . . . . . Համուռ ամենայն արարածք բաւա . . . . . .
Նել զնա, թող թէ այս ինչ կամ . . . . . Սողոմոն յաղաւթսն
իւր թէ եր . . . . . Նից երկինք չեն քեզ բաւական. զի՞-
արդ տունս այս կարէ տանել զքեզ։ Եւ Եսայի ասէ. Ի ձեռին
Նորա են ամենայն ծայրք երկրի։ Եւ արդ եթէ յափի Նորա ժո-
ղովեալ են ամենայն արարածք երևելիք և աներևոյթք որպէս
հատ մի մարգարտի յափ մարդոյ, զի՞արդ կարեն զնա տանել,
որ ափով Նորա ծածկեալ են. կամ զի՞արդ կարէ ափոյ չափ տե-

Digitized by Google

զի տանել չանձն մարդոյ։ Իսկ եթէ վասն դիւրածախութեան նիւթոյն ասէք ոչ կարել տանել զաստուածային հուրն, ապա և ոչ լերինք և լեռնանման վէմք կարող են կալ առաջի Նորա, և ոչ բոլոր արարածք, որպէս ասէ մարգարէն, Լերինք որպէս մոմ հալեսցին յերեսաց Տեառն, յերեսաց Տեառն ամենայն երկիր։ Եւ Յովհաննէս ի Յայտնութեան անդ իւրում ասէ, թէ՝ յերեսաց Նորա փախչէին և կորնչէին արարածք, երկինք և երկիր։ Եւ ինքն ասէր յՄովսէս, թէ՝ Ոչ ոք կարէ տեսանել զերեսս իմ և կեալ։ Եւ արդ եթէ երևման Նորա չեն բաւական կեալ յանդիման Նորա ոչ լերինք և ոչ վէմք և ոչ մարդ, և ոչ այլ ինչ յարարածական բնութենէ, զի՞արդ խոռոչացեալ փայտ կամ այլ ինչ ի նիւթեղինայս մերձենալ առ աստուածութիւնն կարէր տեսել և ոչ վաղվաղակի կիզուլ։ Եւ արդ զի՞արդ ի դրախտին գնալ ասային գիրք սուրբք. ոչ ահա մի ի նիւթեղէն ապարածոցս է գրախտն։ Դարձեալ և ի խորանն Աբրահամու բազմիլ և սեղան առաջի դնիլ Աստուծոյ։ Եւ ի դիւրածախ մորենուոջն բորբոքեալ վարէր հուր աստուածութեանն և ոչ այրէր, այլ լուսաւորէր։ Եւ ի լեառն Սինա իջեալ խաւսէր ընդ որդիսն Իսրայելի, և յերկկանկեան տապանակին բնակէր, որպէս հաւատայր ամենայն Իսրայել, և ի քերովբէս նստէր։ Եւ ահա նոքա մի յարարածոց են, բայց ի Կոյսն սուրբ ոչ շնորհիւ կամ փառաւք միայն եկն Աստուած, այլ ստուգապէս բնութիւն աստուածութեան բոլոր էութիւնն Որդւոյ բնակեալ ճշմարտութեամբ ինն ամսեայ ժամանակաւ։ Նոյնպէս և ի խաչն ասային գալանել գիրք Աստուծոյ ստուգապէս և ոչ կարծեաւք, որպէս ասէ մարգարէն Ամբակում, Ելեր դու ի կառս քո և հեծելութիւն քո փրկութիւն եղև մեզ։

Եւ արդ զինչ. միթէ ստեցին աստուածային գիրք, զի անտանելի և անբովանդակելի ասացին զԱստուած, և ահա յայսց ամենայնէ տարեալ և բովանդակեալ եղև։ Իսկ եթէ անտանելի ստուգապէս ըստ սահմանի զրոց, ապա ուրեմն ոչ ի մի ի սոցանէ եկն Աստուած, կամ երևեցաւ առ Աբրահամ, և ոչ ի դրախտին, ոչ ի մորենուոջն, և ոչ յայսն ամենեսեան, նաև ոչ ի կոյսն իսկ, և եթէ ոչ ի Կոյսն, և՛ ոչ ի խաչն իսկ։ Եւ եթէ այդ այդպէս է, ուրեմն այսու դարձեալ ստեցին մեզ աստուածեղէն գիրք, զի յամենայն յայսոսիկ ասային գալ զԱստուած։ Իսկ եթէ ամպարշտութիւն է և յոյժ մոլորութիւն՝ և անդր քան զա-

մենայն. Հայհոյութիւն ստութիւն դնել Աստուածաշունչ գրոց-
զի ճշմարտութեամբ և ստուգիւ գրեալ ամենայն, ապա ուրեմն
զինչ կամեցաւ արար Աստուած որպէս ասէ մարգարէն, Եւ զոր
ինչ կամեցաւ և եղև, որպէս ասէ սուրբ Լուսաւորիչն մեր մեծն
Գրիգորիոս, և որպէս վկայեաց մեծն առաքեալ. թէ՝ Բազում
կերպարանաւք և պէսպէս տեսլեամբք խաւսեցաւ Աստուած
ընդ հարսն մեր. իսկ ի վերջին աւուրս ոչ աւրինակաւ, այլ ճըշ-
մարտութեամբ եկն առ մեզ Միածինն Աստուած ստուգապէս,
և խաւսեցաւ ընդ մեզ բերան ի բերան։ Եւ դարձեալ ասէ. Եկն
Որդին Աստուծոյ և եղև ի կնոջէ։

Արդ ուրեմն անբովանդակելի է Աստուած ըստ սահմանի
գրոց, և տկարք և անզաւրք արարածք, որպէս և վկայեցաւ ի
գրոց։ Իսկ Աստուած ամենակարող գոլով ընդ հարկաւ ոչ ան-
կանի, այլ ամենայն ինչ գիւրին է նմա զինչ և կամի, յաղագ
այնորիկ զամենայն տկարութիւն նիւթական բնութեանս զաւ-
րացուցեալ ինքեան տանելի արար յոր ինչ և կամեցաւ երևիլ։
Այնպէս և զբնութիւն սրբոյ կուսին զաւրացոյց և անբաւ և
անտանելի բնութեան իւր տարող զնա արար ստուգապէս։
Նոյնպէս և զփայտ խաչին ստուգապէս զաւրացոյց և տիրապէս
հարստացուցեալ, զի զամենազաւր և անբովանդակելի բնու-
թիւն աստուածութեանն տարաւ ճշմարտապէս առաւել քան
զմարդեղին, և քան զդրախտն և քան զքերովբէն։ Եւ նշանակ
հաստատութեան բանիս այն, զի քերովբէքն, և ամենայն զաւրք
երկնից երկրպագեն խաչին և պաշտեն զնա իբրև տարող ճըշ-
մարտապէս տեառն և արարչի իւրեանց։ Նոյնպէս և առա-
քեալքն երկրպագէին և պաշտէին զխաչն իբրև ստուգապէս
բարձող Աստուծոյ։ Նոյնպէս և ինքն իսկ սուրբ Կոյսն երկրպա-
գեաց խաչին, զի զոր յորովայնի իւր կրեաց ճշմարտապէս,
զնոյնն ճշմարտութեամբ և ստուգապէս ի վերայ խաչին ետես
բաղմեալ և բևեռեալ. վասն որոյ ամենայն աստուածաշունչ
գիրք զճշմարիտն Աստուած զՄիածինն Հաւր՝ զոր ծնաւ Կոյսն
ասացին չարչարեալ և խաչեալ կամաւորութեամբ, և ոչ ի
հարկէ, աստուածային իշխանութեամբ և զաւրութեամբ, և ոչ
ակամայ։ Իսկ եթէ մարդկային տրուպ և ապականացու բնու-
թիւն էր բևեռեալն ի խաչին, ապա ոչինչ մեղան հրէայքն զի
մարդասպանք են և ոչ աստուածասպանք, և ահա երկինք և
երկիր ի զուր պաշտեն զխաչելեալն և տարապարտ երկրպա-

դեն արարչին վերինք և ներքինք։ Իսկ եթէ ամպարշտութիւն է զայս ասել կամ խորհել, ապա ուրեմն յայտ է ահա թէ հրէայքն ստուգապէս աստուածասպանք են, և երկնային և երկրային ճշմարտապէս աստուածապաշտք, պաշտելով զքաջելեալն և երկրպագելով խաչի Նորա. և խաչն ստուգապէս Խաչ Աստուծոյ, որպէս վկայեն ամենայն գիրք հին և նոր։

Քանզի և նախ Մովսէս ասէ. Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ առաջի աչաց ձերոց, և՝ ոչ հաւատայցէք կենաց ձերոց։ Ահա յայտնապէս զտեսանելի մարմինն՝ միութեամբ Բանին՝ կեանս ասաց կախեալ ի փայտ խաչին, զոր աչաւք իւրեանց տեսին հրէայքն։ Արդ մի՛թէ զմերկ Բանն տեսին հրէայքն. և ով յանդգնի ասել զայս. այլ յայտ է թէ զմարմինն միացեալ Բանին միապէս կեանս ասաց Մովսէս Հոգւովն սրբով, զոր տեսին հրէայքն կախեալ ի խաչին, և անհաւատացեալ մարդ համարեցան զնա։ Եւ արդ միթէ կեանքն ո՞չ իցէ անապականութիւն և անմահութիւն և աստուածային բնութիւն. այո՛, է հարկաւորապէս, և այնց՝ որք նմանեալ Մովսէսի կեանս անմահս և Աստուած խոստովանին զկախեալն ի փայտ խաչին՝ աստուածագեստք լինին։ Իսկ որք մարդ ասեն ապականելի և մահկանացու բնութիւն՝ անհաւատ են իբրև զհրէայսն։

Դարձեալ և Դաւիթ ասէ, Ե՛լ ի բարձունս խաչին, և գերեաց զգերեալսն ի ստանայէ, և լցոյց պարգևաւք Հոգւոյն զդարձեալսն ի գերութենէ։ Եւ զոհանալով դարձեալ ասէ, Տէր Աստուած աւրհնեալ, և աւրհնեալ միշտ, որ հաներ զմեզ ի մահուանէ, Աստուած կենարար, և փշրեցեր զգլուխ թշնամւոյն, և ի միջոյ ժանեացն նորա զմեզ ի դուրս կորզեցեր, թանալով զտան արեամբ ի խաչին։ Տեսանե՛ս զի զտան Տեառն Աստուծոյ փրկչի և կենարարի, որ փշրեաց զգլուխ թշնամւոյն՝ ասաց թանալ և ներկանիլ արեամբ ի խաչին, և ոչ գնայուն մարդոյ մահկանացուի և տկարի, այլ զամենազաւր թագաւորի և Աստուծոյ, որ երևեցոյց զգնացս իւր ի մեզ։ Քանզի ասէ, Թացցի ոտն քո յարենէ, երևեցան գնացք քոյ Աստուած, գնացք Աստուծոյ թագաւորի մերոյ սրբոյ։ Եւ ահա գնացք Աստուծոյ ճշմարտութեան երևելապէս այն են՝ զոր ինքն իսկ ասաց. Ելի ի Հաւրէ և եկի յաշխարհս, դարձեալ թողում զաշխարհս և երթամ առ Հայր։ Քանզի ծնեալն ի Կուսէն՝ գնացեալ էանց ընդ ամենայն կիրս մարդկութեան մինչև ցխաչն առանց մեղաց,

և կատարեալ զամենայն տնտեսութիւն ամբարձեալ առ Հայր։ յաղագս այնորիկ ասէ մեծն Դաւիթ, զոսն ամենազաւր թագաւորի և Աստուծոյ թանալ արեամբ ի խաչին։ Արդ մի՛թէ ոսն ամենազաւրին Աստուծոյ բևեռեալն ի խաչին՝ չիցէ՞ անմահ և անապական. այլ է՝ ստուգապէս որպէս ասայն Դաւիթ։ Վասն զի դարձեալ ասէ Դաւիթ. Կեանք իմ մերձեցան ի դժոխս, և համարեցայ ընդ իջեալսն ի գուբ, և եղէ իբրև զմարդ, այլ առանց աւգնականի և ի մեռելութիւն անդ ազատ ի մահուանէ։ Տե՛ս հաւաստեաւ, զի զոր Մովսէս կեանս ասաց կախեալ ըստ փայտէ խաչին, զնոյն կեանսն Դաւիթ ասաց մերձեալ ի դժոխս, և համարիլ ընդ իջեալսն ի գերեզմանի։ Եւ զի մի ոք հասարակական մարդ կարծիցէ զննչեալն վիրաւք խաչին ի գերեզմանի, ի վերայ բերեալ ասէ. Եղէ ոչ պարզաբար մարդ. այլ իբրև զմարդ, այսինքն թէպէտ և նման մարդոյ ունէր ստուգապէս մարմինն Քրիստոս, այլ յամենայն տկարութենէ մարդկային հարկաւոր կրից վճարեալ էր մարմին Բանին յառնուլն ի Սուսէն, և նշանակ ստուգապէս այսմ տուեալ զոչն կարաւտիլ աւգնականութեան յումեքէ. և այս միայն աստուածայնոյ բնութեանն է, իսկ այլ ումեք ոչ բնաւ, զի ահա հրեշտակք և մարդիկ կարաւտ են միշտ վերին աւգնականութեան և խնամոյ։ Իսկ աստուածութիւնն միայն ոչ կարաւտի աւգնիլ յումեքէ, և ահա զեղեալն իբրև զմարդ անկարաւտ աւգնականութեան ասաց իբրև ճշմարիտ Աստուած։

Ապա յայտ է թէ ի մարմնանալ Բանին՝ եղև մարմինն իբրև զԲանն, անկարաւտ ամենեին ամենայն իրաւք, Աստուած ճշմարիտ, և աստուածային անապական և անմահ բնութիւն. վասն որոյ ի մահու անդ ազատ ի մահուանէ ասաց ստուգապէս։ Իսկ եթէ մահկանացու էր, պարտական էր մահու, ապա ոչ էր ազատ ի մէջ ամենայն մեռելոց, և ստեաց մարգարէն զնա միայն ասացեալ ազատ ի մեռեալս. և ահա պարտականն մահու, ոչ կարէր յաղթել մահու. զի իրաւանայր մահ ի վերայ նորա խնդրել զպարտիսն իւր ի նմանէ, և ահա մինչ զպարտսն իւր վճարէր, չէր ձեռնհաս այլոց փրկութիւն լինել։ Իսկ եթէ ամպարշտութիւն է սուտ ասել զմարգարէսն, ապա ուրեմն ազատ է և ի մէջ ամենայն մեռելոց իջանելով առ նոսա, և անկասկած ի պարտուց մահու՝ ամենայն համարձակութեամբ էջ առ մահ, և յաղթեալ նմա եհան զբոլոր ըմբռնեալսն ի նմանէ,

Digitized by Google

ըստ այնմ թէ՝ Ի Տեառնէ են ելք մեր ի մահուանէ. և դարձեալ եթէ՝ Տէր է հատուցանող ընդ իմ և ոչ այլ ոք. ըստ որում և ինքն ասէ. թէ՝ Այնչափ ւիրեաց Աստուած զաշխարհս, մինչև զՄիածին Որդին իւր ետ։ Արդ ո՞ւր ետ. ոչ ապարէն ի խա. . . . . վասն կենաց մարդկան. որպէս դարձեալ ասէ թէ՝ Զմի որդին զսիրելին՝ զսոսաբեալն ի հաւրէ առ մշակսն, կալեալ հանին արտաքոյ այգւոյն և սպանին։ Եւ արդ ո՞վ է այն մի որդի սիրելին՝ սպանեալն ի մշակացն. մարդկային բնութի՞ւնն՝ թէ աստուածային, զի թէ երկու բնութիւն էր, և մին ի նոցանէն մեռաւ, և միւսն մնաց անմահ։ Ապա ուրեմն թէ մարմինն միայն մեռաւ, ապա նա էր որդին սիրելի, և ի բաց է Բանն յորդւութենէն։ Իւկ եթէ զմերկ բանն ասէ ոք մեռանել, վասն զի նա է որդի սիրելի, ապա Արիոսին ստուգի ազանդ։ Իսկ թէ մոլորութիւն է զայս ասել, ապա հարկ է մի՛ բնութիւն խոստովանել Բանին մարմնացելոյ, և մէ Որդի գիտել զնա Հաւր սիրելի միով բնութեամբ, զմարմինն միացեալ Բանիւն. և մեռեալ ստուգապէս վասն մեղաց մերոց. և զնոյն մնացեալ կենդանի ի մահու անդր. ոչ միւս մեռեալ և միւս կենդանի, այլ նոյն մին մեռեալ և կենդանի, ըստ որում ինքն միայն գիտէր։

Զնոյն և Պաւղոս ասէ. Հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա։ Տե՛ս զի և Պաւղոս մահուամբ ճշմարիտ Որդւոյն Աստուծոյ ասէ հաշտիլ ընդ նմա, ըստ որում և դարձեալ ասէ. թէ՝ Մինն մեռաւ վասն մեր։ Տե՛ս զի մին ասաց և ոչ երկուս՝ զմեռեալն ի խաչին. ապա ուրեմն միոյն Աստուծոյ է խաչն և ոչ մարդոյ, որպէս անգիտացան հրէայքն և Նեստոր և ընկերք նորա, մարդ կարծելով զխաչեալն։ Վասն որոյ ասէ Պաւղոս, թէ էր գիտացեալ՝ ոչ արդեւք զՏէրն փառաց ի խաչ հանէին։ Արդ մի՛թէ Տէրն փառաց չիցէ՞ Աստուած, և այլ զի՞նչ եթէ ոչ Աստուած ճշմարիտ՝ տիրապէս և ստուգութեամբ. Որպէս սուրբն Դիոնեսիոս Արիսպագացի ասէ. թէ՝ Աստուածպետաս. . . . Յիսուս կենսատու մահուամբ երիս տիւս և երիս գիշերս եկաց ի գերեզմանի։ Տեսանե՛ս զի աստուածապետ, այսինքն, Աստուած աստուծոյ ասաց զՅիսուս զմեռեալն ի խաչին, և կենսատու բոլորից զեղեալն ի գերեզմանի։ Եւ միւս Դիոնեսիոս Աղեքսանդրացի գրէ ընդդէմ Պաւղոսի Սամուստացւոյ այսպէս. Զթիկունս իմ ետու ի հարուածս և զծնաւտս իմ

յապտակս. և զերեսս իմ ոչ դարձուցի յամաւթոյ ընդ երեսս թքանելոյ. Ո՞վ իցէ սա եթէ ոչ Աստուած՝ որ եթուք յերկիր և արարեալ կաւ՝ երաց զաչս կուրին։ Եւ դարձեալ ասէ. Զի-նուորքն զպատմուճան նորա չէարացին պատառել, իսկ հերետիկոսք զՈրդին Աստուծոյ պատառել կամին և բաժանել յերկուս, զայն՝ որ միայն անբաժանելին է և անբաժանելին Քրիստոս։ Տեսանե՛ս զի որք յերկուս բնութիւնս բաժանեն զՔրիստոս պատառել կամին զմիութիւն նորա, որպէս և հրէայքն զպատմուճան նորա, այլ ոչ կարեն. որպէս և ոչ նոքա զպատմուճանն, բայց ինքեանք բաժանին ի Քրիստոսէ, որպէս և հրէայքն։

Եւ դարձեալ ասէ Դիոնեսիոս, Նա ետ նոցա մեղր, և նոքա ետուն նմա լեղի, նա ետ նոցա մանանայ, և նոքա ետուն նմա քացախ, և ի սուրբ խաչին կախեցին զայն՝ որ զոչընչէ կախեաց զերկինս որ էն կեանք ամենայն կենդանեաց։ Տեսանես զի զարարողն երկնից և երկրի ասաց ի խաչին։ Եւ դարձեալ ասէ. Ծանեաք թէ չէր մարդ՝ որ խաչեցաւն, այլ սուրբ Միածինն Յիսուս Քրիստոս Բանն և Որդի Աստուծոյ, քանզի ոչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այն որ յանձին իւր էառ զսուրբ խաչն՝ որ Բանն էր Աստուծոյ և Որդի, այլ մեր Աստուած և Տէր՝ որ խաչեցաւն ի փայտին։ Եւ դարձեալ ասէ. Աստուած էր այն՝ զոր խաչեցին հրէայքն, և որդի էութեան Հաւր ծնաւղի։ Տես հաւաստեաւ զի զհաւասարն Հաւր զԲանն Միածին զէակիցն և զփառակիցն Հաւր և Հոգւոյն զՅիսուս Քրիստոս՝ զՏէրն և զԱստուածն բոլորից՝ ասաց բևեռեալ ի խաչին, և ոչ զտկար ոմն մարդ որպէս կարծեցին հրէայքն և այլք՝ որք խորհրդակից լինին հրէիցն, մարդ համարելով զխաչեցեալն, և ոչ Աստուած ճշմարիտ, որպէս քարոզեցին հարքն սուրբք։ Վասն որոյ սքանչելագործն Գրիգոր ասէ, Թէ որ ասիցէ, այլ է որ չարչարեցաւն, և այլ է որ ոչն չարչարեցաւ, և ոչ խոստովանեսցի առանց չարչարանաց զԲանն մարմնով իւրով չարչարեալ առանց փոփոխելոյ, նկովեալ լիցի։ Արդ որք երկուս ասեն զբնութիւնն Քրիստոսի, ոչ ապաքէն զմինն չարչարելի կամին ասել և զմիւսն անչարչարելի և անկանին ընդ նզովիւք։ Իսկ որք ճողոպրելն կամին ի նզովից հարցն սրբոց, մի բնութիւն խոստովանեսցին Քրիստոսի, զնոյն չարչարեալ կամաւորութեամբ, և զնոյն մնացեալ անչարչարելի, որպէս և վայել էր իսկ նմա։ Իսկ թէ որպէս չարչարելի, կամ որպէս անչարչա-

բելի, ինքն միայն գիտէ. իսկ այլ ոք ոչ բնաւ, ոչ վերինք և ոչ ներքինք։ Որպէս և Մովսէս ասէ, թէ՝ Ցայտնիքն մեզ և որդւոց մերոց, և ծածուկքն Տեառն Աստուծոյ մերոյ։ Եւ Դաւիթ ասէ, Ամենայն գործք նորա հաւատով են, և ոչ քննութեամբ։ Եւ Պաւղոս ասէ, Հաւատովք իմանամք զնա և զկարութիւն յարութեանն նորա, և զհաղորդութիւն չարչարանաց նորա։ Ահաւասիկ հաւատովք ասէ գիտել զչարչարանացն Քրիստոսի և ոչ քննութեամբ։

Իսկ արդ եթէ սրբոց մարգարէիցն և առաքելոցն անքննելի է գործքն Քրիստոսի, որչափ ևս առաւել մեզ, քանզի քննութիւն անհաւատութեան է նշանակ. իսկ ճշմարիտ հաւատոյ նշանակ է զոր լսէ ի գրոց սրբոց և հաւատայ հաստատութեամբ և ոչ մտարերէ քննել ամենեին, այլ խոստովանի զեղեալսն և ոչ քննէ զորպէսն, այլ հաւատայ ճշմարտութեամբ և պատուէ լռութեամբ, որպէս մարգարէքն և առաքեալքն և սուրբ վարդապետք եկեղեցւոյ. որպէս Աթանաս ասէ. Զխաչեցեալն ի Պոնտացւոյ Պիղատոսէ. զնա ասացին առաքեալքն Աստուած, և զնոյն մարդ, զնոյն յերկնից, և զնոյն յերկրէ. զնոյն Որդի Աստուծոյ, և զնոյնն որդի Դաւթի, զնոյն չարչարելի, և զնոյն անչարչարելի, ոչ այլ ոք և այլ, ոչ երկուս դէմս, ոչ երկուս բնութիւնս, ոչ երկուս երկրպագութիւնս։ Զի՞նչ պէտք են խնդրել և բանակռիւ լինել հաւատայն է աւգտակար և պաշտել և երկրպագել լռութեամբ։ Գիտեմ զնա Աստուած անչարչարելի, և զնոյն որդի Դաւթի չարչարեալ, ոչ գիտեմ զիարդ չարչարելի և զիարդ անչարչարելի, կամ նոյն ինքն զիարդ Աստուած կամ զիարդ մարդ։ Մի՛ գուցէ զկիարդն խնդրելով անկայց ի բարեացն որ առաջի կայ։ Տեսանե՞ս զի ի միոյ ասէ զամենայն զչարչարելին և զոչ չարչարելին և զայլ ամենայն, և զորպէ՞ն ասէ, ոչ գիտեմ։ Իսկ եթէ երկուս բնութիւն էր, զիարդ ոչ գիտէր, ոչ միայն Աթանաս, այլ ամենեքեան գիտէին զնա յայտնապէս, թէ միոն չարչարելի է և միւսն անչարչարելի, այլ զի մի բնութիւն էր և ի վերայ միոյ է ասացեալ ամենայն, վասն այնորիկ անքննելի և անգիտելի է ի բոլորիդ։

Եւ դարձեալ ասէ, Հրէայքն զՏէրն և զԱստուած և զթագաւորն ամենայնի և զամենեցուն զՀրեշտակացն զՏէր խողխողել ձեռնարկեցին, ոչ գիտելով թէ կենդանութիւն է խողխողեալն ի նոցանէ Քրիստոս։ Եւ դարձեալ ասէ. Թերևս տեսանելով զՏէրն

և զՓրկիչն և զթագաւորն բոլորից դատեալ ի Պոնտացւոյ Պիղատոսէ, խաչեալ ի հրէից սկսանիցի զակն ի վայր արկանել, քանզի և արեգակն խաւարեցոյց զընդհանուրս, տեսեալ զՏէրն՝ զտուիչ պատուիրանի իւրոյ չարչարեալ ի հրէից։ Եւ դարձեալ ասէ, Իսկ Պիղատոս զպատասխանիսն զՃարեալ ոչ այլ ինչ էր, բայց հաւատալ զդատեցեալն լինել Աստուած, և երազով կնոջն և քաջութեամբ լռութեան ի միտ առեալ ծանիցէ, եթէ ոչ զմարդ, այլ զԱստուած դատի։ Եւ դարձեալ ասէ. Խոստովանեցին ապա և որոց յառաջագոյն ուրացեալք զխաչելեալն զոլ Աստուած վրիպեալք, և հաւանեսցին բոլորից աստուածաշունչ գրոց. և մանաւանդ Թովմայի. զի յետ տեսանելոյ ի նա զնշանս բևեռացն ասէ, Տէր իմ և Աստուած իմ։ Եւ դարձեալ ասէ. Ոչ ոք կարէ զիտել զԱստուած, եթէ ոչ զխաչեալն և ի մեռելոց յարուցեալն խոստովանեսցի ընդ սրբոյն Թովմայի, Տէր և Աստուած, որ ասացյ յառաքեալսն իւր, Թէ զիս գիտէիք և զՀայրն իմ գիտէիք։ Տեսանե՛ս զի ուրացողս և աստուածս ասէ զայնոսիկ՝ որք զխաչելեալն ոչ խոստովանին Աստուած։ Արդ յայտ է թէ Աստուծոյ է խաչն և ոչ մարդոյ։ Որպէս ասէ Յուլիոս Հռովմայեցի Երանելի է ասէ, որ ոչ գայթագղեսցի յիս. և գայթակղի որ վասն մարմնոյ և կրից նորա փոփոխէ զՓրկիչն և զմարդն ի թերէ Աստուծոյ աներժէ։ Քանզի մարդ ասացեալ զծնիցեալն, և մարդ զխաչեալն, մարդ ի թերէ Աստուծոյ փոփոխեաց, ոչ կարացին գտանել առ ի յԱստուծոյ փրկութիւն, քանզի կեցուցանէ որ կրեացն զչարչարանսն կեցուցանէ որ ի կնոջէն ծնաւ, ապա ուրեմն թէ ապրեցուցանելն Աստուծոյ է, և նորոգելն զաշխարհս ոչ միւսոյ ուրեմն է։ Իսկ ապրեցուցանէ ծնիցեալն և խաչեցեալն, ոչ մարդ էր զոր ծնաւ Կոյսն, և ոչ մարդ՝ զոր խաչեցին հրէայքն, այլ Աստուած ծնեալն ի Կուսէն, և Աստուած խաչեալն ի հրէիցն։ Ապա ուրեմն որպէս կոյսն՝ Աստուածածին, և խաչն՝ աստուածախաչ, որպէս և Եփրեմ ասէ, Կոյսն զմարմինն ծնանելով զԱստուած ծնաւ, և է Աստուածածին, և հրէայքն զմարմինն խաչելով՝ զԱստուած խաչեցին, և են աստուածասպանք։ Եւ դարձեալ ասէ, Ո՞վ սքանչելիք, զի ձեռք կաւեղէնք ի հողոյ ստեղծեալ՝ զարարիչն երկնի և երկրի ապտակեաց։ Տեսանե՛ս զի զապտակեալն Քրիստոս արարիչ ամենայնի սահմանեաց։ Իսկ թէ մարդկային տկար բնութիւն էր մահկանացու և ապտակելի, զիարդ ոք իշխէր զնա արարիչ երկնից և երկրի ասել,

Digitized by Google

ապա ուրեմն ճշմարտապէս աստուածային բնութիւն էր ապտակեալ ի ծառայէն անմահ և անապական։ Վասն որոյ դարձեալ ասէ Եփրեմ. Զնոյն իսկ զԱստուած Բանն տեսանել կաթեալ գփայտէ և սպանեալ յաղագս մեղաց մերոց։ Եւ դարձեալ ասէ յառաքելոյ մեկնութեանն, թէ՝ Մինն վասն ամենեցուն մեռաւ, Նոյնպէս և մեք վասն նորա պարտիմք մեռանել։ Տեսանե՞ս զի զմինն Աստուած զԲանն հայրական զնա ասաց սպանեալ ի խաչին, վասն մեղաց մերոց, և ոչ զմարդ որ դուզնաքեայ։ Եւ դարձեալ ասէ Եփրեմ ի գիրս հաւատոց Աստուած որ եկն տալ Նոցա կեանս յերկրի իւրեանց, կալան և կապեցին զփայտէ։ Արդ մարդարէքն՝ որ կոտորեցան, ոչ կարացին խլել զբաղաքն սպանող, վասն զի արարածք էին, իսկ Աստուած որ խաչեցաւ ի միջի նորա, կործանեաց զնա, վասն զի դիւրին էր այնմ որ տընկեաց զնա շնորհաւք, խլել զնա ստուգութեամբ։ Եւ դարձեալ ասէ, Զբարբառն արձակեաց Տէր մեր ի խաչին, լուան ամենայն արարածք, և ծանեան զնոյն նորա թէ նա է հաստիչն իւրեանց և ի միասին զձիչ բարձին ամենայն արարածք, զի կարծեցին թէ այն՝ որ ի վերոյն է քան զմահ ի ներքոյ մահու փակեցաւ, խրթուէին տեղեակ թէ կալաւ զմահ և ելոյծ զնա յիշխանութենէ իւրմէ. շիջաւ արեգակն՝ ճրագն աշխարհի, զի խաչեցաւ լոյսն աշխարհի, մեղկեցան արարածք յանկանել, փոխանակ զի կապեցաւ և կծկեցաւ ի վերայ խաչին գաւրութիւնն այն՝ յորմէ ծալեալ են և կապեալ ամենայն արարածք, զի մի լուծցին և ցրուեսցին։

Եւ Յովհան Ոսկեբերան ի յԵսայոյ մեկնութեանն ասէ, Թէ հարցանէ որ ցիս, թէ զի՞նչ մեծ սարք Քրիստոս. ես թողից զամենայն արարածոց լինելութիւն ի նմանէ եղելոց յոչընչէ, թողից զմեռեալս յարուցանելն, և զհացին աճեցուցանելն, և զկոյրս լուսաւորելն. և որ մեծն է քան զամենայն խաչն՝ զայն ասացից։ Խաչեցաւ ասեմ և ապտակեցաւ և թուք յերեսս ընկալաւ, և այս Աստուծոյ գործ է և ոչ մարդոյ։ Եւ դարձեալ ասէ. Սեղանս այս կանգնեալ, ոչ այլ ինչ, բայց զմահն Աստուծոյ նշանակէ որ վասն մեր։ Տեսանե՞ս զի զգործ խաչին յորում բարձրացաւ Աստուած՝ մեծ ասաց քան զամենայն գործս Աստուծոյ, որ արարեալ է Աստուծոյ ի սկզբանէ մինչև ցայսաւր. և զի՞արդ յանդգնին ոմանք նուազ և տրուզ բնութեան ասել զԳործարարդ խաչին, զի ահա մեծ և սքանչելի է քան զամենայն։ Զոր և Բարսեղ Կեսարու ասէ. Թէ՝ Ոչինչ երկինք և ոչ երկիր,

և ոչ մեծութիւն ծովու, և ոչ ամենայն արարածոց լինելութիւն յանզոյից պնակս յայտնի կարէ կացուցանել մեզ զամենակարող և զսքանչելի զաւրութիւնն Աստուծոյ, որպէս շարամանիլ անմահ բանին Աստուծոյ ընդ մահու պարունակութեամբ։

Եւ արդ զի՞արդ ոք իշխէ մարդոյ բնութեան ասել ըզխաչն. զի ահա ճշմարիտ Աստուծոյ ասացին զխաչն ամենայն տուրբ վարդապետք եկեղեցւոյ, և ահաւոր և զարմանալի, և գլուխ ամենայն խորհրդոցն Աստուծոյ՝ զխաչն սահմանեցին։ Որպէս և Պրոկղ ասէ, բնութեամբ անչարչարելին՝ եղև զթութեամբ բազմաչարչարելի։ Եւ Կիւրեղ Աղեքսանդրացի ասէ. Ցասելոյն չարչարիլ, ոչ աւտարացուցանեմք զԲանն, զի մի՛ նախ քան զայս, ըստ մարմնոյ ծնունդն, ոչ նմա, այլ, այլում ումեք ասիցեմ զոր։ Եւ դարձեալ ասէ. Զար հնարիւք փորձին փոխադրել ի մարդ առանձնապէս զչարչարանսն. բարեպաշտութիւն վնասակար անհանձարարար խորհեցեալ, զի մի Բանն Աստուծոյ խոստովանեսցի փրկիչ, որպէս զիւրն վասն մեր տուեալ արիւն, այլ յաւէտ մարդ առանձնապէս միացեալ, և զաստուածային խորհուրդս մեր ի զաւրութիւն մարդապաշտութեան կացուցանեն։ Ցեսանե՛ս զի որք մարդոյ ասեն զխաչն և զչարչարանսն, ոչ խոստովանին փրկիչ զԱստուած, այլ ի մարդ է յոյսն նոցա, և փոխանակ Աստուծոյ պաշտեն զմարդ մահկանացու, և ոչ զտանեն փրկութիւն ի մահուանէ։ Վասն որոյ դարձեալ ասէ Կիւրեղ, Զարահնարութեամբ ասեն ոմանք մարդկայնով բնութեամբ չարչարել Քրիստոսի, որպէս ի բաց որոշեալ զմարմինն ի Բանէն, և արտաքս ելեալ առանձնապէս, զի երկուս իմասցին և ոչ մի զմարմնացեալ և զմարդացեալ ի Հաւրէ զԲանն։ Իսկ անորոշապէս դնել թուի ի մէնջ ուղղակի հաւատոյ նշանական, բայց նոքա ոչ այսպէս իմանան։ Ցեսանե՛ս, զի որ մարդկային բնութեան ասեն զչարչարանս, երկուս կամին առնել զմինն և զմիայն մարմնացեալ Բանն Աստուած, զոր և Պաւղոս ի գործս առաքելոցն ասէ, թէ՝ Բանն ձեզ փրկութիւն առաքեցաւ, յորմէ անծանաւթացան իշխանքն Հրէից ըստ մարդարէութեանն. կալեալ կախեցին զնա զփայտէ, իջուցեալ ի փայտէն եդին ի գերեզմանի։ Եւ արդ ո՞վ իշխեսցէ երկմտել թէ իցէ՝ խաչն Աստուծոյ թէ չիցէ, զի ահա զԲանն ասաց ի խաչին, և ոչ զայլ ոք։

Digitized by Google

Եւ արդ աներկիւղ հաւատով խոստովանեսցուք զԽաչն Աստուծոյ, և զմարմնացեալ Բանն Աստուած բևեռեալ ի նմա մեռեալ բնութեամբ և մեռեալ անձամբ։ Որպէս ասէ Գրիգոր Աստուածաբան, թէ՝ Արիւն Աստուծոյ և չարչարանս և մահ լսելով մի՛ ուրեք ի վայր անկցիս անաստուածաբար իբրև Աստուծոյ ջատագով։ Տեսանես զի անաստուած ասաց զայն՝ որ ոչ հաւատայ զչարչարանն և զմահն Աստուծոյ վասն մեր։ Եւ դարձեալ ասէ, Կարաւտացաք Աստուծոյ մարմնանալոյ և մեռանելոյ զի կեցցուք։ Եւ դարձեալ ասէ, Աստուած խաչեալ և արեգակն խաւարեալ զի պարտ և արժան էր ընդ արարչին չարչարակից լինել և արարածոցս։ Տեսանե՛ս զի զարարիչն ասաց չարչարիլ և ոչ կայլ ոք, և դարձեալ ասէ ի Բարսղի Ճառին, զԱստուած խաչեալ տեսանելով և զնոյն ընդ աւազակս։ Եւ դարձեալ ասէ ի Կղեմենտոսի Ճառին, Եթէ ոք խաչելոյն Աստուծոյ երկիր ոչ պագանէ, եղիցի նզովեա՛լ, և կարգեսցի ընդ աստուածասպանսն։ Տեսանե՛ս զի հրէայքն աստուածասպանք են և ոչ մարդասպանք, և որ զխաչեցեալն Աստուած ճշմարիտ ոչ խոստովանի և ոչ երկրպագէ նմա ընդ Հաւր և Հոգւոյն սրբոյ, այնպիսին ասէ եղիցի նզովեալ իբրև զՀրէայսն։

Արդ վասն այսչափ բազմութեան վկայիցս՝ որ շուրջ ըզմեաւք մածեալ են, որք միաբանութեամբ գոչեցին, զաւրութեամբ Հոգւոյն սրբոյ և ասացին, թէ խաչեալն Յիսուս Քրիստոս՝ Աստուած է ճշմարիտ, Միածին Որդի Հաւր, համագոյ և էակից Հոգւոյն սրբոյ, սկսեալ ի Մովսէսէ ամենայն մարգարէքն և սուրբ առաքեալքն և հոգելից վարդապետքն եկեղեցւոյ՝ զորս յիշատակեցաք յանուանէ, և զրանն նոցա առաք ի վկայութիւն, ամենեքեան միաբան Աստուած հզաւր և անմահ ասացին զխաչեալն և զչարչարեալն վասն մեր։ Յաղագս այնորիկ, և մեք համարձակաձայն բարբառով և բազում աչալրջութեամբ գոչեմք առ նա միշտ յերկոյս և ի վաղորդեան և ի հասարակ աւուր ասելով. Սուրբ Աստուած՝ որ ի յերկրի երևեցար, որպէս ասէ մարգարէն. Աստուած եմ ես ի միջի ձերում սուրբս և ոչ մարդ. Սուրբ և Հզաւր՝ ըստ այնմ թէ՝ Տէր հզաւր զաւրութեամբ իւրով. Տէր հզաւր ի պատերազմի. Սուրբ և Անմահ, ըստ այնմ թէ՝ Տեսանիցէք զանմահ կեանս ձեր կախեալ դիպատէ. արդ որ խաչեցար վասն մեր Աստուած հզաւր և անմահ, ողորմեաց մեզ։

Digitized by Google

Եւ զայս աւանդեցին մեզ տուրբ առաքեալքն և յետ նոցա սուրբն Իգնատիոս աշակերտ աւետարանչին Յովհաննու՝ եպիսկոպոս Անտիոքու, լուեալ ի զաւրաց երկնաւորաց՝ որք երգէին զփրկութիւնն զոր արար Որդին Միածին աշխարհի, թէ Գարան է ամենայն աւուր խոստովանել և ասել. Սուրբ Աստուած՝ հզաւր և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ։ Եւ զայս պատմէ Սոկրատէս Յունաց իսկ պատմագիրն, թէ Իգնատիոս իսկ հաստատեաց զեկեղեցին Անտիոքու զուսեալն ի զաւրաց երկնից, և անտի յընդհանրական եկեղեցի որ յաշխարհի՝ սրփռեալ հաստատեցաւ։ Վասն որոյ Յովհան Ոսկեբերան հակառակ Արիանոսացն՝ որք ոչ խոստովանէին զխաչելեալն Աստուած ճշմարիտ, համագոյ Հաւր, հրամայեաց հանապազաւր առաւաւոտու երգել և ասել. Սուրբ Աստուած հզաւր և անմահ որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ։ Իսկ Արիանոսքն ոչ ժուժեալ ճշմարիտ խոստովանութեանն՝ մարտ պատերազմի սաստկապէս արարին ընդ ուղղափառսն, որպէս պատմէ նոյն Սոկրատէս, որ էր կոստանդնուպաւլսեցի, ականատես Ոսկեբերանին Յովհաննու, և ականջալուր աւանդութեանց նորա։ Իսկ եթէ Յոյնք ոչ ընդունին զպատմութիւնն Սոկրատեայ և զաւանդութիւն երանելւոյն Յովհաննու, յայտնապէս վարդապետացն իւրեանց լինին անարգիչք, որպէս և Հրէայք մարգարէիցն։ Բայց թէ զայս ոչ ընդունին գուցցեն յաստուածեղէն գրոց թէ ո՞ ի սրբոց հարցն ասաց, Սուրբ Աստուած առանց խաչեցարի, և յորո՞ւմ գիրս գրեալ է։ Ապա թէ ոչ կարեն ցուցանել, ուրեմն ճշմարիտ է պատմութիւնն Սոկրատեայ։ Վասն որոյ և մեք ընդ սուրբս, և ընդ Իգնատիոսի և ընդ Ոսկեբերանին Յովհաննու խոստովանեալ եմք և ասեմք ի սկզբանէ մինչև ցայսաւր, Սուրբ Աստուած հզաւր և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ։ Եւ ոչ միայն մեք, այլ և Եգիպտացիք, և Աֆրիկեցիք, և արևմտեան Հնդիկք. և Եթովպացիք, և Հռովմայեցիք, և Սպանիացիք, և մեծ ազգն Փռանգաց, և արևելեան Հնդիկք, և Հենաստանեայք, և Ասորիք, և ազգ մի ի Հոնաց աշխարհին, և Աղուանք, և մեք Հայաստանեայքս։ Այս ազգք երկոտասան միաբան ամենեքեան ասեմք. Սուրբ Աստուած հզաւր և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ։

Իսկ Յոյնք, և որք հաւան եղեն Յունաց՝ վրացիք և վասն ինչ Ասորւոց որք ի Նեստորէ խարեցան, ոչ ասեն զխաչելեալն

Digitized by Google

Աստուած՝ հպաւր և անմահ՝ որ խաչեցաւ վասն մեր, և ոչ խնդրեն ողորմութիւն յանմահէն Աստուծոյ, որ կամաւ յանձն էառ վասն կենաց մերոց։ Բայց եթէ Յոյնք ընդէ՞ր կացին ի բաց ի միաբանութենէ ընդհանրական եկեղեցւոյ, ծաղու արժանի են բանքն՝ որ պատմի ի մէջ Յունաց։ Ասեն թէ, յետ բազում ամաց անցանելոյ, յետ ժողովոյն Քաղկեդոնի, պատանի ոմն ի Կոստանդնուպաւլիս յափշտակեցաւ յաւդս, և բարձեաց Նոցա մի՛ ասել զխաչեցարն ի Սուրբ Աստուածին։ Եւ արդ միթէ դեռագիւտ էր սատանայի չարութիւնն, թէ ոչ գիտէր պատրանաւք խաբել զմարդիկ որպէս և զամենայն հեթանոսս ի կերպս կերպս եղեալ մոլորեցոյց զնոսա։ Եւ արդ չէր ինչ նմա դժուար ի կերպս պատանւոյ կամ հրեշտակի լուսոյ լինել և խաբել զմարդիկ, ըստ որում ասէ առաքեալ, եթէ՝ Իշխանի աւդոյս այսու։ Արդ զի՞արդ բաղուս իմաստութեամբն խաբեցան Յոյնք, որպէս նոր աւետարան ի յաւդական այսոյն ընկալեալ ճեղքեցան ի միաբանութենէ առաքելական եկեղեցւոյ և մոռացան զասացեալն Պաւղոսի, թէ որ աւելի աւետարանէ ձեզ քան զոր առէքն ի մէնջ, թէ և հրեշտակք յերկնից է և մարդ յերկրէ, նզովեա՛լ եղիցի։ Եւ արդ ահա պատանին այն՝ յաւդս յափշտակեալ ի դիւաց ի վերին աւդս, և կամ թէ դև որ կերպարանեցաւ ի նմանութիւն պատանւոյն՝ առ ի խաբել զմարդիկ, հակառակ խաւսեցաւ Պաւղոսի և ընկերաց նորա, ոչ տալ խոստովանել Աստուած հպաւր և անմահ զխաչելեալն։

Քանզի Պաւղոս Տէր փառաց ասէ զխաչելեալն, և զբան խաչին զաւրութիւն Աստուծոյ, ասէ, ի փրկութիւն մեզ, և զՈրդին Աստուծոյ, ասէ, մեռեալ վասն մերոյ հաշտութեան ընդ Հաւր, և զԲանն առաքեալ ի Հաւրէ, ասէ, կախեալ զփայտէ իշխանացն Հրէից և եղեալ ի գերեզմանի։ Եւ Եսայի ասէ, Ժողովուրդ իմ տեսցէ զփառս Տեառն և զբարձրութիւն Աստուծոյ մերոյ։ Եւ Յովհան Ոսկեբերան մեկնէ զբան մարգարէիս և ասէ. թէ՝ Բարձրութիւն Աստուծոյ խաչն է։ Եւ դարձեալ Եսայի ասէ. թէ՝ Ինքն եկեսցէ և փրկեսցէ, և ոչ այլ որ։ Եւ Դաւիթ ասէ. Աստուած փրկեսցէ զանձն իմ ի դժոխոց. և ոչ այլ որ։ Եւ ահա որ խաչեցաւն՝ նա փրկեաց զմեզ ի դժոխոց։ Նոյնպէս և ամենայն սուրբ մարգարէքն և առաքեալքն և վարդապետք եկեղեցւոյ, զնոյն գոչեցին. թէ Աստուած է հպաւր, և անմահ խաչեցեալն վասն մեր։ Իսկ պատանին այն հակառակ

Digitized by Google

Պաւղոսի և ամենայն սրբոց խաւսեցաւ, և նզովեցաւ ի Պառղոսէ որ Քրիստոսի . . . . . և ասէր. Թէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առէքն, նզովեա՛լ լիցի։ Իսկ Ցոյնք ոչ իմացան թէ վեց հարիւր ամ յառաքելոցն մինչև ի պատանին ցոյն, ամենայն քրիստոնեայք ասացին զՍուրբ Աստուածն՝ խաչեցարիւն հանդերձ։ Եւ արդ հակառակ առաքելոցն և ամենայն սրբոց հարցն՝ չէ արժան առնել ինչ, և նզովիլ ի նոցանէ բանիւ պատանւոյ միոյ յափշտակելոյ ի դիւաց։

Քանզի և սուրբ ժողովն Նիկիայ, զԱստուածն յԱստուծոյ, և զլոյսն ի լուսոյ ասացին խաչեալ և թաղեալ և յարուցեալ։ Վասն որոյ և մեք պարծանաւք ասասցուք միշտ թէ, Խաչեալդ Աստուած հպաւր և անմահ, ողորմեա մեզ։ Որպէս և ինքն ասաց, թէ՝ Զմահ իմ պատմեցէք մինչև գամ ես։ Եւ Պաւղոս ասէ, Ինձ մի՛ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ դարձեալ ասէ, եթէ՝ Զմահն Տեառն պատմեցէք մինչև եկեսցէ նա։ Իսկ որք ոչն պատմեն զմահն Տեառն Աստուծոյ պարծանաւք, ամաչեն ի նմանէ յաւուրն դատաստանի, որպէս և ինքն ասաց, թէ՝ Որ ամաւթ համարի զիս և զբան խաչին իմոյ, և ես յամաւթ արարից զնա՝ յորժամ գամ փառաւք Հաւր իմոյ։ Արդ յիրաւի ամաչեն ի նմանէ յաւուրն յայնմիկ այնոքիկ որ մարդ ասեն զխաչեցեալն ընդ Հրէիցն և ոչ ամաչեն, քանզի նա Աստուած է ճշմարիտ. իսկ նոքա մարդ ասելով յուսան ի նա իբրև ի մարդ հասարակական և ոչ զարհուրին ի նզովից Երեմիայի մարգարէի, որ ասէ, Անիծեալ է որ դնէ զյոյս իւր ի մարդ մահկանացու, և ապաստան լինի ի մարմին բազկի նորա, ի Տեառնէ ի բաց անկաւ անձն նորա, և եղիցի իբրև գմոշ վայրի յանապատի, և մի՛ տեսցէ զբարութիւնն յաւիտենից։

Ահա ցոյցք յայտնիք, թէ որք մարդկային բնութիւն յատկացեալ իմանան ի Քրիստոս յետ անպատմելի և անճառ միաւորութեանն, և այնպէս մարդկութեան բնութեանն տալով զչարչարանն յուսան ի նա, և մարմին մահկանացու խոստովանին զքաղուկսն աստուածեղէն տարածեալսն ի խաչին, և նորին խորհրդով ապաստան լինին ի նա, այնպիսիքն սաստկապէս անիծիւք նզովիւք ըմբռնին ի մարգարէէն, և որոշեալ լինին անձինք նոցա ի Տեառնէ Աստուծոյ, և ոչ տեսցեն զյաւիտենական բարութիւնն որ պատրաստեալ է այնոցիկ՝ որք ճշմարիտ Աստուածոյ

տուած խոստովանին զխաչելեալն, և անմահ և անապական զբաղուկս նորա տարածեալս ի խաչին, և այնպէս ապաստան լինին ի նա իբրև ի բազուկ աստուածեղէնս, և ոչ ի մարդկեղէնս։ Որպէս Մովսէս իսկ վկայէ թէ՝ Ի զաւրութենէ բազկաց մշտընջենաւորաց մերժեսցէ յերեսաց զթշնամին, և ասիցէ թէ կորիր։ Արդ՝ տեսանեմ զի մշտնջենաւոր ասաց զբազուկսն խաչեցելոյն, որ խաչիւն իւրով մերժեաց զթշնամին յերեսաց մերոց և կորոյս զնա իսպառ։ Վասն այնորիկ յիրաւի նզովէ զպնպիսիսն Երեմիա որք հակառակ Մովսէսի և զմշտնջենաւոր բազուկսն խաչեցելոյն առ ժամայն և մահկանացու ասեն, և այնպէս վստահանան ի նա իբրև ի մարմին մահկանացու, վասն այնորիկ ոչ ապաստին ի յաւիտենական ի մահուանէն, ըստ պնմ թէ Նման եղիցին այնոցիկ որք յուսացեալ են ի նոսա, և ամենեքեան որք վստահանան ի նոսա։ Զի ահա որք ի մահկանացու վստահանան ամենայն հարկաւորութեամբ մահուամբ ըմբռնին։ Իսկ որք ի կեանս յուսան, ամենայն հարկաւորութեամբ և կենաւք պարփակեալ լինին։

Եւ ահա ամենայն աստուածաշունչ գիրք հին և նոր, Աստուած ճշմարիտ ասացին զխաչեալն և . . . . . անապական և մշտնջենաւոր զբազուկսն տարածեալս ի խաչին։ Իսկ որք մարդ համարին զնա . . . . . կանացու և ապականացու, և այնպէս յուսացեալ՝ լինին ապաստան ի մարմին բանի նորա իբրև յառաջամայն մարդոյ, վասն այնորիկ յարժանի և յիրաւի նզովէ զնոսա Հոգին սուրբ ի բերանոյ մարգարէին Երեմիայի։ Իսկ մեք Աստուած ճշմարիտ խոստովանեսցուք զխաչեալն Յիսուս Քրիստոս, և անմահ և անապական զմարմին նորա, և այնպիսի յուսով ապաստան լիցուք յաստուածային և մշտնջենաւոր բազուկս նորա տարածեալս ի խաչին, զի արժանի լիցուք աւրհնութեանց որ զկնի անիծիցն եդեալ է ի նոյն մարգարէէ, Աւրհնեալ է, ասէ, մարդ որ դնէ զյոյս իւր ի Տէր, և եղիցի Տէր յոյսն նորա։ Եւ արդ մեք ի Տէր յուսացաք և ոչ ի ծառայ, յԱստուած և ոչ ի մարդ, յանմահ և յանապական մարմին Աստուծոյ, և ոչ յեղծանելի և ի մահկանացու մարմին մարդոյ, յաստուածային և յամենազաւր բնութիւն, ոչ ի մարդկային տկար և ապականացու բնութիւն, ի բազուկս մշտնջենաւորս որպէս Մովսէս, և ի կենարարս և յամենարաւականս որ ափռեցան ի խաչին և ժողովեաց զմեզ առ ինքն յամենայն կողմանց, յարևելից և յա-

բեմոից, ի հիւսիսոյ և ի հարաւոյ, որպէս ասէ մարգարէն։

Իսկ թէ յամառի ոք ասել, թէ զիարդ եղև այնպիսի սքանչելի և աներկբայ միութիւն բանին և մարմնոյն, պատասխանէ Դիոնեսիոս Արիսպագացի և ասէ, թէ՝ քան զամենայն Աստուածարանութիւն յայտնագոյն ըստ մեզ Յիսուսի աստուածաստեղծութիւնն, և անճառելի է ամենայն բանի, և անգիտելի է ամենայն մտաց, և նորին նախնագունի և առաջնոյ հրեշտակին քան զամենայն նախնագոյն հրեշտակս, զի անգիտանամք թէ ո՞րպէս ի կուսական արենէ այլ այլ աւրինակաւ քան զբնութիւնն ստեղծանիւր։ Եւ Գրիգոր Աստուածաբան ասէ. Ո՞վ նոր խառնմանս և սքանչելի խառնուածոյս։ Եւ արդ նոր ասելով զարմանալի և սերտագոյն միութիւն ասաց լինել Բանին և մարմնոյն, քան զՀոգւոյ ընդ մարմնոյն, և քան զՀուր ընդ երկաթ, և քան զջուր ընդ փայլակն մարգարիտ լեալ։ Վասն զի նորն չքնաղ ինչ ասի և անծանաւթ եկեալ ի լսելութիւն, և չէ երբէք ծանուցեալ ումեք և ոչ ինքնութիւն եկեալ՝ ոչ ի վերնոց և ոչ ի ներքնոց։ Արդ՝ զի՞արդ Յոյնք զնորն և անծանաւթն բոլորից ի քննութիւն իշխեն մտաբերել, և անհաւատս լինել քննութեամբն զմին յերկուս բաժանելով։ Քանզի և Աթանաս զայնպիսի քննողն անհաւատս իսկ ասէ, ընդդէմ Պաւղոսի Սամուստացւոյ խաւսելով ասէ, Դիմեցին ի յիբրն, և որով եղանակաւ և որով հետևութեամբ յանհաւատութիւն անկեալք և սոքա։ Եւ բնակարան փոխանակ մարմնաւորութեանն կամեցին, և փոխանակ միաւորութեանն ներգործութեամբ մարդկային։ Եւ փոխանակ միոյ ենթակացութեանն Տեառն մերոյ երկուս ենթակացութիւնս և դէմս, և փոխանակ սրբոյ Երրորդութեանն՝ չորրորդութիւն, անվայելչարար և աներաւրինապէս խորհեցեալ։ Զի ահա անվայելչարար ընդ Աստուծոյ շարայարեն մարդ. և ծառայ ընդ Տեառն համարին, և արարած դէմ՝ անարար դիմացն դասակցեն։ Իսկ անաւրինաբար զմիւս ենթակացութիւն ի ներքս ածելոյ յԵրրորդութիւնն չորրորդ ենթակացութիւն առնել, աւտար ամենեին և այլազգի, և ամենայն բանակաց հոգւոյ կատարածական և վերջին։

Տե՛ս ստուգապէս, զի որք երկու բնութիւնս իմանան ի Քրիստոս յետ միանալոյն յարգանդին, ծառայ ընդ տեառն կամին դասել, և զԵրրորդութիւնն՝ չորրորդութիւն առնել։ Իսկ ապա զի մի լիցի անաւրինեալ քրիստոնէից և՝ անհաւատանալ մի

բնութիւն խոստովանելով, և մի կամք նորա աստուածային, և զորպէ՞ն մի քննեսցուք, զի քննութիւնն անհաւատութիւն առնէ։ Այլ լուիցուք աստուածայնոց գրոց, զի հա՛ մի ասացին զՔրիստոս, և հաւատասցուք առանց քննութեան։ Որպէս ասէ Նիւսեայ Գրիգորի ի մարդոյ բնութեանն թէ՝ Անտուած բանն ոչինչ ի կցորդութենէն որ առ մարմին և անձն՝ այլայլեալ, և ոչ ընդունակ եղեալ նոցա տկարութեանն, այլ յաւէտ փ-փոխեալ զնոսա և հաղորդեցուցեալ իւրոյ աստուածութեանն՝ լինի նոքաւք մի, մնացեալ մի, և այնպէս մի, որպէս և էր նախ քան զմարմնանալն, նոյնպէս և յետ մարմնանալոյն մարմնովն հանդերձ ստուգապէս միութեամբ մի և միայնակ, և Մի՛ածին Որդի է Հաւր։

Արդ ո՞ւր է երկութեանն կարծիս յանքակ միութիւնն Քրիստոսի. և ոչ ուրեք։ Որպէս դարձեալ ասէ Գրիգոր Նիւսեայ առ Հարցումն եղբաւր իւրոյ Բարսղի. ասէ, Նա զմարմինն իւր զգենլով ի նոյն պատկեր ինքեան փոփոխեաց, և նա ասէ. Այո՛ փոփոխեաց միաւորութեամբ, և ո՛չ մի զանազանութիւն է Բանին և մարմնոյն, և ոչ աննմանութիւն, այլ պարզութիւն, և ոչ ի քաղմաց դրութիւն, զի և ոչ ներէր Հայր աննմանոյ իւրոյ տալ զաթոռակցութիւն իւր։ Տեսանե՞ս զի պարզ ասաց զՔրիստոս և նման Հաւր, և աթոռակից զմարմինն մի՛ բնութեամբ Բանին սահմանեաց։ Իսկ թէ երկու բնութիւն էր, ապա չէր պարզ և ոչ նման Հաւր, և ոչ աթոռակից աննմանն նմանոյն. իսկ թէ աթոռակից է, որպէս և էն իսկ տիրապէս, ապա հարկ է մի բնութիւն լինել բանին և մարմնոյն յետ միաւորութեանն. զի այսպէս անվրէպ նմանութեամբն առ Հայր. աթոռակից նմա խոստովանեսցի ի բոլորից Յիսուս Քրիստոս։ Որպէս և Կիւրեղ Աղեքսանդրացի ասէ, Խոնարհեցոյց զինքն յոր ինչ ոչ էրն, զի և որ ինչ ոչն էր եղիցի մարդկայնոյս բնութիւն աստուածայնոյն գերունակութեանն պատուով, և համբարձեալ եղև յաւէտ որ ի վեր քան զբնութիւն։ Ահա ասաց լինել զմարդկային բնութիւնն որ ինչ ոչն էր, այսինքն աստուածային եղև։

Իսկ թէ յամառի ոք ասել թէ թէ մարդկային բնութիւնն յատկացեալ կայ յիւրութեան առ ընթեր աստուածայնոյն, ապա սուտ է ասացեալն Կիւրղի, Թէ եղև որ ինչ ոչն էր։ Իսկ թէ ճշմարիտ է, որպէս և էն իսկ, և եղև որ ինչ ոչն էր, ապա յայտ է թէ մարդկային բնութիւնն՝ աստուածային եղև ստուգապէս

Digitized by Google

խառնմամբն և միաւորութեամբն, վասն այնորիկ մի բնութիւն Քրիստոսի և մի կամք նորա աստուածային, հաւասար և նմանն Հաւր հանդերձ մարմնոյն։ Եւ արդ կի՛արդ կասացեալն ի Պաւղոսէ, Որ էրն ի կերպարանս Աստուծոյ, առ գկերպ ծառայի։ Զոյնք խոստովանին զերկուս կերպսն միաւորեալ մի կերպ և մի դէմ լեալ անշփոթաբար և անծախապէս։ Իսկ զերկուս բնութիւնսն ընդէ՞ր ոչ ասեն միաւորեալ, և մի բնութիւն լեալ անշփոթաբար։ Եւ արդ ահա եթէ բնութեանցն միաւորութիւն շփոթումն առնէ, ամենայն հարկաւորութեամբ և դիմացն միաւորութեամբն շփոթումն առնէ և ծախումն ստուգապէս։ Եթէ բնութեանցն միաւորութիւն ոչ լինի, ոչ է հնար այնուհետև, և ոչ դիմայն լինել միաւորութիւն, այլ ըստ երկու բնութեանն և երկուս դէմս հարկաւորաբար, և երկուս որդիս ըստ Նեստորի չարափառութեանն։ Իսկ եթէ ամպարշտութիւն է ասել զայս կամ խորհել. ապա ուրեմն աստուածային կերպն զմարդկայինն առեալ և ընդ ինքեան միաւորեալ՝ մի կերպ եղև ստուգապէս անշփոթաբար։

Նոյնպէս ամենայն հարկաւորութեամբ աստուածային բնութիւնն զմարդկային բնութիւնն ըմբռնեալ և ընդ նմին խառնեալ՝ մի բնութիւն եղև ստուգապէս անշփոթաբար, նոյնպէս և Աստուածային կամք ընդ մարդկայինն խառնեալ՝ մի Աստուածային կամք է Քրիստոսի, և մի ներգործութիւն նորա, զոր ինչ և կամեսցի, զոր աւրինակ և երկնային փայլակն և ծովային ջուրն . . . . խառնեալ յորովայնի ոստրիոսի և գաղտակրի մին մարգարիտ լինի և մի բնութիւն նորա. նոյնպէս և երկնային Աստուածութիւնն և երկրաւոր մարմինս խառնեալ յորովայնի կուսին ի միմեանս, մի Քրիստոս եղև միով բնութեամբ և մի կամք նորա աստուածային ստուգապէս։ Արդ եթէ կարող ես ի ներքս ի մարգարտին երկութեամբ առանձնապէս իմանալ և որոշել ի միմեանց զչուրն և զփայլակն, ապա կարողացիր զսքանչելի և զսերտագոյն միութիւն աստուածութեան և մարմնոյն, առաւել քան զչրոյն և զփայլականն որոշել և երկուս իմանալ զմիացեալն բնութեամբ յարգանդի կուսին։ Իսկ եթէ զմարգարիտն ոչ կարես բաժանել յերկուս բնութիւնս, առաւել ևս զմինն Քրիստոս՝ չէ հնար երկուս բնութիւնս իմանալ յետ միաւորութեանն։

Դարձեալ յերգս երգոցն ասէ, որպէս խնծոր ի փայտս ան-

Digitized by Google

տառի, նոյնպէս և եղբաւր որդի իմ ի մէջ որդոց։ Եւ արդ խընծոր ի չորից տարերց ժողովեալ ի մի՝ աւրինակ եղև Քրիստոսի։ Արդ եթէ կարող ես բաժանեա զչորս հակառակ բնութիւնսն խառնեալս ի միասին և մի խնծոր լեալ, և առանձնացո զխոնաւն և զցամաքն, զցուրտն և զջերն։ Իսկ թէ անկար է զայս առնել, որչափ ևս առաւել զՔրիստոս յաստուածութենէն և ի մարդկութենէն ժողովեալ և ի միասին խառնեալ. մի բնութիւն և մի Քրիստոս լեալ, չէ հնար բաժանել յերկուս առանձնութիւնս, զի թէ չորս մարմինս միաւորեալս մի խնծոր լինի միով բնութեամբ, որչափ ևս առաւել անմարմին և մարմինն ընդ միմեանս խառնեալ սերտագոյն միութիւն գործեալ՝ մի անձն և մի բնութիւն լինէր անքակտելի միութեամբ։

Եւ արդ եթէ մի անձն է Քրիստոս և մի դէմ, զի՞արդ հնար է ի միում դիմի երկուս բնութիւնս լինել և ո՞վ զայդ ասէ, ո՞վ յարտաքին իմաստնոցն, կամ ո՞վ յաստուածային գրոց, թէ ի միում անձին երկուս բնութիւնս տեսանի, առանձնական կամաւք և ներգործութեամբ, զի ահա ի միում բնութեան բազում անձանց հնար է լինել. որպէս մարդիկ մի բնութիւն զոլով յանհուն բազմութիւն անձինք են որոշեալք։ Եւ նոյն ինքն սուրբ Երրորդութիւնն մի է բնութեամբ և կամաւք, այլ երեք են անձինք կատարեալք։ Արդ եթէ յոլով անձինսն մի բնութիւն և մի կամք հնար է լինել, ո՞րչափ ևս առաւել ի միում անձին հարկ է մի բնութիւն և մի կամն լինել. զի թէ դէմն մի է, անդ և գոյացութիւնն և բնութիւնն մի և նոյն է։ Իսկ թէ բնութիւնն այլ և այլ է, ապա ամենայն հարկաւորութեամբ և դէմք այլ և այլ են։ Իսկ արդ եթէ մի բնութիւն երկնչի ասել մի գուցէ շփոթումն ի ներքս անկանիցի, նոյնպէս և երկուս բնութիւնս ասել երկիւղ է, մի գուցէ երկուս դէմս մինն Քրիստոս լինիցի, և Երրորդութիւնն՝ չորրորդութիւն քարոզեսցի, և մի բնութիւն և մի կամք սրբոյ Երրորդութեանն՝ յերկուս կամս և յերկուս բնութիւնս և ի չորս անձինս բաժանի, որ է յետին մոլորութիւն զայս խորհել։

Բայց ասասցեն մեզ, որք երկուս բնութիւնս իմանան ի Քրիստոս յետ միանալոյն, ո՞յք են այն երկու բնութիւնքն, մարմինն և հոգին՝ որ Պաւղոս Սամուսատացին ասաց. եթէ մարմինն և աստուածութիւն՝ որպէս Ապողինար ասաց, եթէ հոգին և աստուածութիւնն՝ որպէս Եւտիքէս ասաց։ Զի թէ զմիա-

Digitized by Google

բնութեանցդ առցես ի վերայ Քրիստոսի, ապա երեք բնութիւն պարտիս ասել. չի՝ահա այլ բնութիւն է մարմինն, և այլ հոգին, և այլ աստուածութիւնն։ Բայց ոչ երեք միայն, այլ վեց իսկ արժան է ասել բնութիւնս, քանզի չորս բնութիւն մարմինն է, ի հողոյ և ի ջրոյ և յաւդոյ և ի հրոյ ժողովեալ, իսկ հոգին այլ բնութիւն է՝ իմանալի և հրեշտակային և անմարմին, իսկ աստուածութեանն գատ է յամենից։ Ահա վեց բնութիւն յայտնապէս ցուցաւ, և արդ պարտ է վեց բնութիւն ասել Քրիստոսի և չորս գոյացութիւնս, մի ըստ մարմնոյ, և մի ըստ շնչոյ անասնականի, և մի ըստ հոգւոյ բանականի, և մի ըստ աստուածութեանն. և երիս կամս ասել նմա, մի անասնական՝ որ է շնչականն և զգայականն, և մի բանականն որ է հրեշտակային, և միւս աստուածականն։

Եւ արդ եթէ յամառի ոք երկուս բնութիւնս և երկուս կամս իմանալ ի Քրիստոս, ամենայն հարկաւորութեամբ ի բազումս բաժանէ բնութիւնս և կամս։ Տեսանես թէ չիարդ երկուս ասել կամս և բնութիւնս յորպիսի ամպարշտութիւնս արկանէ զմարդն։ Եւ արդ չի մի յայսպիսի խորխորատ կորստեան անկանիցիմք, մին խոստովանեսցուք բնութիւն Քրիստոսի յետ միաւորութեան, և մի կամք նորա՝ աստուածայինք և անմահ, և առնապական զմարմին նորա անդստին յարգանդէ կուսին. չի մի՛ ի հարկէ, այլ կամաւոր իշխանութեամբ յիցին կիրքն ամենայն, որպէս ինքն ասաց. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, և իշխանութիւն ունիմ առնուլ։ Իսկ թէ պարտական մահու էր, ապա ոչ էր իշխան անձինն, ապա թէ տիրապէս իշխան էր, յայտ է թէ ոչ էր պարտական մահու, այլ անմահ և անապական, որպէս գրէ Կիւրեղ առ Նեստոր, չի ոչ բնութեան պարտութեամբ այլ ցուցմամբ էութեանն եղև՝ զոր ինչ եղև։

Եւ Աթանաս ասէ, որպէս չի թէ և են ամենայն ճշմարիտ, այլ ամենայն տնաւրէնութեամբ և ոչ ի բնական հարկէ եղեն։ Եւ Գրիգոր Նիւսեայ առ Եւնոմիոս ասէ, թէ Եւնոմիոս անեղին անմատոյց լոյս ասացեալ, և ի փորձ չարչարանացն գալ ոչ կարացեալ. իսկ ի վերայ եղականին պատշաճի հետևաբարդ։ Թէ այդպէս է և ոչ մի ինչ շնորհս ունել մեզ Միածինն Աստուծոյ վասն մարդկաբար կրիցն, թէ ինքն ինքեամբ ըստ հարկի, ըստ բանի նոցա առ փորձ չարչարանացն անկաւ, ախտաւոր էութեանն բնաւորապէս յայս քարշեցելոյ, որ և ոչ միոյ գո-

հութեան է արժանի։ Քանզի ո՞վ ոք գոհանալի ցուցցէ մասինն զըստ հարկի պատահելոյն, թէպէտ և շահաւոր և աւգտակար իցէ, զի և ոչ ջերմութեան հրոյ և ոչ հոսման ջրոյ գիտեմք շնորհս ունել, զի հարկաւ բնութեամբ բերին. զի ոչ կարէ հուր արտաքսիլ ի ջեռուցանող բնութենէ, և ոչ ջուր ի վառթափի կետեղիլ։ Արդ եթէ բնութեան հարկի է զոր ի ձեռըն մարմնոյն երախտիս առ յՈրդւոյ եղեալ մարդկան, և ոչ մի շնորհք ամենայն իրաւք գիտեն, զի ոչ ի զաւրութիւն իշխանութեան, այլ ի բնաւորական հարկէ բերեն զեղեալն. իսկ թէ զգան, զերախտիսն ոչ անպատուեն։

Տեսանես զի որք մահկանացու կամ ապականացու ասեն զմարմինն Քրիստոսի նախ քան զխաչն, յայտնապէս ի հարկէ գնեն զչարչարանսն և զկիրսն ամենայն, որով անշնորհակալու առ Տէրն գտանին, հրէաբար ուրացեալք զերախտիսն Աստուծոյ, որ կամաւոր չարչարանաւքն փրկեաց զմեզ։ Այլ մեք գոհանալով շնորհ կալցուք Աստուծոյ, որ անապական, և անմահ մարմնովն իւրով չարչարեալ կամաւորութեամբ փրկեաց զմեզ ի մահուանէ։ Զի ահա և առաքելոցն նախքան զխաչն տուեալ զանապական և զանմահ մարմինն իւր կենագործեաց զնոսա, զի յայտ լիցի թէ և յետ խաչին, նոյն էր որպէս և նախ քան զխաչն։ Որպէս և Կիւրեղ Աղեքսանդրացի գրէ առ Սեկունդոս, թէ՝ Յետ յարութեանն էր նոյն մարմինն որ չարչարեցաւ, կենդանարար ամենայնի։ Եւ Եփրեմ ի գիրս հաւատոցն ասէ, թէ՝ Յետ յարութեանն և համբարձմանն ոչինչ յաւելումն եղև ի մարմինն Քրիստոսի։ Եւ Գրիգոր Աստուածաբան ասէ ի Կլաւդիանոսի ճառին, Եթէ որ յետ մկրտութեանն և յետ յարութեանն արժանաւոր լեալ, ասիցէ որպէս զոր Հեթանոսք թերի գրով ի ներսածեն, նզովեալ լիցի։ Քանզի սկսեալն և յառաջադէմ լեալն կամ կատարեալն՝ ոչ է Աստուած, թէպէտ և յաղագս առ փոքր փոքր փոփոխմամբ այսպէս ասիցի։ Տեսանե՛ս զի որք նախ քան զխաչն թերի ասեն զմարմինն յաստուածութենէն, և ապա ըստ կսեալ առ սակաւ սակաւ յառաջանալ, և ապա յետ յարութեանն ելանել յաստուածային ազատութիւնն, այնպիսիքն յիրաւի նըզովին յամենայն սրբոց։

Իսկ մեք անապական և ամենապաւար խոստովանիմք զմարմինն Քրիստոսի միշտ և հանապազ անդստին իսկ ի միանալ բանին, վասն որոյ և զՀացն սրբութեան որով և զփրկական

պատարագն մատուցանեմք բաղարջ առնեմք, որ զանապակաութիւն նշանակէ։ Իսկ խմորն չարութեան և ապականութեան է նշան որպէս ասէ Կիւրեղ ի Ղեւտականին մեկնութեանն. Վասն որոյ և ինքն կենարարն ի վերնատանն բաղարջ հաց առեալ արար իւր մարմին, և վկայէ աւետարանն, զի՝ Ցառաջնում աւուրն ասէ բաղարջակերաց, և ահա յառաջմէ աւրէ հրամայէ Աստուած Մովսէսի անհետ առնել զխմոր ի տանէն Իսրայեղի, և ամենայն անձն ասէ, որ ուտէ խմորուն սատակեսցի ի ժողովրդենէն։ Եւ ահա Յովսէփ՝ այր արդար վկայեալ, ոչ էր հնար արտաքոյ աւրինացն խմորուն հացի ի տան նորա լինել, այլ բաղարջ ընդ եղեգի ուտել գառամբ, որպէս հրամայէ աւրէնքն, այլ և նոյն ինքն փրկիչն ի կատարումն աւրինացն էր եկեալ, որպէս ասէ առաքեալ, թէ՝ Լրումն աւրինացն Քրիստոս է յարդարութիւն ամենայն, և ինքն ասէր առ Յովհաննէս, թէ՝ Վայել է ինձ լնուլ զամենայն արդարութիւնս. և արդարութիւն զամենայն հրամանս աւրինացն ասաց։ Եւ ահա մի ի գլխաւոր աւրինացն բաղարջակերքն էին, և եթէ զամենայն աւրէնսն կատարեաց Քրիստոս, առաւել ևս զբաղարջակերքն կատարէր։ Վասն որոյ ի վերնատանն, բաղարջ հաց առեալ ի ձեռն ասէ, Այս է մարմին իմ, և պատուէր տուեալ ասէ, Զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Արդ՝ զոր ինքն արար, և մեզ պատուիրեաց զնոյն առնել զբաղարջն։ Ո՞վ այնչափ յանդուգն իցէ որ իշխէ համարձակել և խմորուն առնել հակառակ Քրիստոսի։ Ահա և աւրինակ մարմնոյն Քրիստոսի բաղարջ էր, հացն առաջաւորութեան եղեալ առաջի Տեառն, որ միայն քահանայքն ճաշակէին, վասն որոյ Աբիմելէք քահանայ ասէր ցԴաւիթ, թէ չկայ հաց պիղծ այլ՝ ընդ ձեռամբ իմով, այսինքն հաց խմորուն. բայց միայն հացն սրբութեան, այսինքն հաց բաղարջ առեալ յերեսաց Տեառն։ Տեսանե՛ս զի զխմորուն հացն պիղծ ասաց, որ ոչ կարէր լինել ի գալստեանն Տեառն մարմին նորա։ Իսկ ըզբաղարջն՝ սուրբ ասաց, զի լինելոց էր մարմին Քրիստոսի։ Արդ զի՞արդ պիղծ հացն՝ սուրբ կարասցէ լինել և ո՛չ երբէք։

Բայց տեսցուք և ըստ բնութեան իրացն եղելոյ։ Եւ ասէ սուրբ աւետարանն, թէ՝ Նման է արքայութիւն երկնից խմորոյ՝ զոր առեալ կնոջ թագոյց ի գրիւս երիս ալեր, մինչև ամենայն խմորեցաւ։ Եւ ահա ոչ ասաց, եթէ խմոր է արքայութիւն երկնից, այլ թէ նման է խմորոյ. զոր աւրինակ մարգա-

բիտ և գանձ ասաց, և . . . . . մարգարիտ և ոչ գանձ, այլ թէ նման . . . . . զի՞նչ ինչ է նմանն. այլ ինքն թէ որպէս առնչին կինն Եւայ առեալ խմոր ի չարութենէ բանսարկուին, խաբեալ թագնաբար խառնեաց ի բնութիւնս մեր ըստ երիցս իրաց, ըստ խորհրդոյ, ըստ բանից, ըստ գործոց, խմորեաց չարութեամբ զամենայն բնութիւնս մեր՝ զհոգի և զշունչ և զմարմին, և յերիցս երանական կենացն, երիցս թշուառականս արար, և ի խորհրդոյ Երրորդութեանն կողոպտեաց զմեզ, և ի բարութենէ ի չարութիւն, և յանմեղութենէ մեղանչական, և ի կենդանութենէ մահկանացու, և ապականացու զմեզ արարեալ չարութեան խմորովն, և փոխանակ աստուածատեսակ կերպարանին աւձատեսակ և խաւարատեսակ կերպարանս զգեցաք։

Արդ եկն Քրիստոս, և փոխանակ չարութեանն սատանայական խմորոյն, ինքն խառնեցաւ ի բնութիւնս մեր ի ձեռն սրբոյ Կուսին, և արտաքսեալ զհին խմորն չարութեան ի բնութենէ մերմէ զոր առաջին կինն ի խրատուէ աւձին առեալ թագոյց ի սիրտ իւր, և ինքեամբ ի մեզ ամենեսեան, և յատակագոյն զբնութիւնս մեր առանց խմորոյ մեղաց առեալ ի սրբոյ Կուսէն՝ խառնեցաւ ի նմա, և զբոլորն աստուածացուցեալ ըզմարմին և զհոգի և զմիտս, և ապա իւրովն մարմնով ի բոլոր որդիս Ադամայ խառնեալ, և զամենեսին ի մեղանչականութենէ յանմեղութիւն, և ի չարութենէ ի բարութիւն, և ի մահուանէ և յապականութենէ ի կեանս փոփոխեալ եհան, և գարձեալ զաստուածատեսակ կերպարանն զգեցոյց մեզ. որպէս ասէ առաքեալն թէ Զոր աւրինակ զգեցաք զպատկեր հողեղինին, արդ զգեցցուք զպատկեր երկնաւորին։ Վասն այնորիկ, որք անմեղանչական խոստովանիմք զմարմինն Քրիստոսի առեալ ի Կուսէն, զհացն սրբութեան առանց խառնման խմորոյ դնեմք ի վերայ աստուածային սեղանոյն։ Զի որպէս ի Կուսէն զյըստակ բնութիւնս մեր էառ անմասն և անխառն ի հին չարութեան խմորոյն, և զբովանդակն աստուածացոյց, նոյնպէս և զյստակ բնութիւն երկնաւոր հացին անմասն և անխառն յամենայն բացախուտ և ապականացու թթուութենէ խմորոյ առեալ՝ ճշմարտապէս մարմին իւր արասցէ։ Ըստ որում և Ամանաս ասէ. թէ՝ Դնեմք ի վերայ աստուածային սեղանոյն ի հասկէ հաց, և յորթոյ գինի, և հաւատամք եթէ, որպէս ի Կուսէն էառ մարմին, նոյնպէս և աստ եկեալ հոգւովն իւրով ա-

բասցէ զՀայս զայս մարմին իւր։ Իսկ որք խմորուն Հայ դնեն ի վերայ սեղանոյն և համարին զնա մարմին Տեառն լինել, այնպիսիքն ոչ խոստովանին անմեղ և անապական զմարմինն Տեառն առեալ ի կուսէն, այլ որպէս թէ մասն ինչ ի հին չարութեան խմորոյն խառնեալ ի նա, քան զոր ամպարշտութիւն և անհաւատութիւն ոչ է ի ներքոյ երկնից խորհել այսպիսի ինչ յամենասուրբ և յանապական և յԱստուածեղէն մարմինն Քրիստոսի. զի ամենայն մեղաց և ապականութեանց ի բաց բարձիչ և լուծիչ և դատապարտիչ նա է։ Այլ մեք կացցուք ի խրատուն Պաւղոսի, թէ մի ի խմորս հինն չարութեան և անկգամութեան, այլ յանխմորն ստուգութեան և ճշմարտութեան, և դիցուք յանխմոր զՀացն սուրբ առաջի Տեառն, զի արասցէ իւր մարմին և կենագործեսցէ զմեզ։ Իսկ զխմորուն Հացն ասէ Աստուածաբան Գրիգոր ի Զատկին ճառի, թէ՝ Ոչ լին. . . . . կենդանական։ Իսկ մեք բաղարջ Հաց . . . . . անապականութեան նշան, անապական . . . . . և կենդանարար խոստովանեսցուք զմարմինն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի այսպէս անմահական և անապական կենացն արժանի լիցուք ընդ ամենայն սուրբս նորա։

Նոյնպէս և զմեղսաքաւիչ արիւն նորա ճշմարտապէս անապական արիւն Աստուծոյ խոստովանիմք. և ոչ ապականացու մարդոյ, այլ ստուգապէս աթոռակցին Հաւր Միածին Որդւոյն Աստուծոյ, որպէս ասէ սուրբն Կիւրեղ Աղէքսանդրացի ի գիրս պարապմանց, եթէ՝ Աթոռակիցն Հաւր ետ վասն մեր զարիւնն իւր, վասն այնորիկ անապական գինւով առնեմք մեք, զի մի ապականութեան կարծիս յանապական արիւնն Աստուծոյ մտցէ, որէ յոյժ ամպարշտութիւն ապականութիւն մտանել զանապական արիւնն Աստուծոյ։ Քանզի և մարդիկ սովոր են ըգդինի՝ որ անխառն են ի ջրոյ՝ անապական կոչել, իսկ զջրախառնն՝ ապականեալ ասեն։ Ահա յայտ է թէ որք ջուր խառնեն ի կենարար բաժակն, ապականել կամին և ամպարշտիլ ի Տէր, զոր մի՛ լիցի քրիստոնէիս խորհել զայս. այլ անապական գինւով մատուցցուք զսուրբ պատարագն։ Որպէս ասէ Սողոմոն. թէ՝ Իմաստութիւն շինեաց իւր տուն, այսինքն ինքն Քրիստոս, շինեաց զեկեղեցի իւր և խառնեաց ի խառնելիս, այսինքն արկ ի ստոման զգինի իւր և ասէ, Որ ոք պակասամիտ իցէ արբցէ զգինի իմ՝ զոր արկից ձեզ։ Տեսանես զի գինի միայն ասաց, և ջրոյ յի-

շատակ ոչ արար։ Եւ Դաւիթ ասէ, Բաժակ ի ձեռին Տեառն գի-նի լի անապակ արկեալ է։ Տեսանե՛ս հաւաստեաւ կի անապակ գինի ասաց ի ձեռին Տեառն, ամենևին անխառն ի ջրոյ, զոր առ ի ձեռն իւր ի վերնատանն և ասէ, Այս է արիւն իմ, և դարձեալ ասէ. թէ՝ յայսմհետէ ոչ արբից ի բերոյ որթոյ մինչև արբիցց զսա ընդ ձեզ նոր յարքայութիւնն։

Եւ Յովհան Ոսկեբերան ի Մատթէոսի աւետարանին մեկնութիւնն ասէ, թէ՝ Յորժամ զխորհուրդն աւանդեաց, գինւով աւանդեաց և ոչ ջրով, և յետ յարութեանն գինի արբ և ոչ ջուր, կի ի բերոյ որթոյ ասէ, կի որթն գինի ծնանի և ոչ ջուր, այլ կի կմիւս զչար հերձուածն արմատաբի խլեսցէ, զի են ոմանք, զի ի սուրբ խորհուրդն ջուր խառնեն։ Տեսանե՛ս զի չար հերձուած ասէ զ-այն՝ որ զջուրն խառնեն ի սուրբ խորհուրդն։ Իսկ թէ ասեն Յոյնք՝ թէ ի կողիցն Քրիստոսի ել արիւն և ջուր, զայդ մեկնէ նոյն ինքն Յովհան Ոսկեբերան ի Յովհաննու աւետարանին մեկնութեանն, ասէ. Ե՛լ ի կողիցն փրկչին երկու աղբեւրք, մին արեան և մին ջրոյ, զի այսու երկոքումբք հաստատեալ է եկեղեցի. զի նախ ջրովն մկրտիմք յաւազանէն, վասն այնորիկ իսկ բղխեաց ջուր ի կողիցն Քրիստոսի, և ապա յետ մկրտութեանն ըմպեմք զարիւնն կենդանարար, յաղագս այնորիկ բղխեաց միւս վտակ արեան ի կենարար կողիցն անտի։ Տե՛ս հաւաստեաւ զորիշ որիշ վտակքն որ ելին, ջուրն՝ զմկրտութեան ունէր զխորհուրդ, և արիւնն՝ զարեանն զոր ըմպեմք և կենդանանամք, զի թէ այսպէս ոչ էր, պարտ էր խառն ելանել և ոչ որոշարար։

Եւ Դիոնեսիոս Արիսպագացի ասէ, թէ զմիեղէնութիւն բաժակին առեալ, ի բազումս բաժանեմք, զի միաւորեսցուք ի Քրիստոս, ահա միեղէն ասաց և ոչ երկուեղէն, զի թէ ջրախառն առնէր զպատարագն Դիոնեսիոս, ապա ոչ ասէր միեղէն, այլ երկուեղէն, այլ զի անապական գինւովն մատուցանէր զսուրբ պատարագն Դիոնեսիոս, որպէս ուսեալ էր յառաքելոցն, և նոքա ի Քրիստոսէ. վասն այնորիկ միեղէն ասաց զբաժակն պատարագին զոր մատուցանէր։ Եւ Աթանաս ասէ, թէ՝ Դնեմ ի վերայ աստուածային սեղանոյս՝ ի հասկէ հաց և յորթոյ գինի, և հաւատամք հայիս այսմիկ՝ լինել մարմինն Քրիստոսի. և բաժակիս այսմիկ՝ արիւն Քրիստոսի։ Ահաւասիկ յորթոյ գինի ասաց ի սուրբ պատարագն անխառն ի ջրոյ ամենևին, զոր և Քրիստոս

Digitized by Google

ի բերոյ որթոյ ասաց և արար։ Զնոյն և առաքեալքն արարին, զնոյն և մեր սուրբ Լուսաւորիչն արար և ուսոյց, և մեք կամք հաստատուն և անշարժ ի վերայ հաւատոյ հիման ճշմարիտ աստանդութեան հարցն սրբոց, և կացցուք մինչև իսպառ, ոչ խոստովանեսցուք յաջ և ոչ յահեակ ի ճանապարհէ արդարութեանն հարցն սրբոց, և ոչ երկնչելով ի մարդկանէ առաւել քան յԱստուծոյ, որ Տէրն է հոգւոց և մարմնոց, այլ խաւսիմք զվկայութիւնս նորա հաւատարմութեամբ բազմաւ առաջի թագաւորացս և ոչ ամաչիմք, և խոստովանիմք անմահ և անապական զմարմին և կարիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Որպէս և Եփրեմ ասէ ի գիրս հաւատոց, Մարմինն որ զգեցաւ Տէր մեր, վերացաւ ի մահկանացու բնութենէ իւրմէ և փոխեցաւ յանմահութիւն, չի խառնեցաւ և միացաւ յայն որ զգեցաւն չնա, և է նա աղբիւր յորմէ բղխին կենաց ամենայն աշխարհաց վերնոց և ներքնոց։ Վասն որոյ և մի բնութիւն և մի կամք նորա աստուածային, յետ անպատմելի և կարմանալի միաւորութեանն, որպէս ասէ մարգարէն, թէ՝ կարմացան երկինք ի վերայ այսոցիկ։ Զարմացուք և մեք, և մեծաւ զարմացմամբ փառաւորեսցուք զանհաս և կանքննին տնաւրէնութիւն Տեառն մերոյ և Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի որով ներզործութեամբ կատարեաց զամենայն զոր ինչ և կամեցաւ առնել վասն մերոյ կենաց և կամաւոր մահուամբ իւրով փրկեաց զմեզ ի ձեռաց դժոխոց, և յաւիտենական ի մահուանէն, և արժանի արար զմեզ մասին սրբոցն ի լոյս, որուամ արժանի լիցուք հասանել ուղիղ հաւատով և անեպեր գործովք և կատարեալ գիտութեամբ որ ի Քրիստոս Յիսուս Աստուած մեր և փրկիչ, ընդ որում Հաւր միանգամայն և Հոգւոյն սրբոյ, վայել է փառք իշխանութիւն և պատիւ և զաւրութիւն յաւիտեանս, և զաւրութիւն և գոհութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յամենայն արարածոց յաւիտենից. ամէն։

Տեսցուք և զառ ի Ղևոնէ ասացեալն, և զԹէոդորիտեայ Կիւրոս քաղաքի եպիսկոպոսի ասացեալս, և զՆեստորի և զՊաւղոսի Սամուստայւոյ, և զԹէոդորի Տարսոնացւոյ, թէ զի՞արդ զուգին ընդ միմեանս։ Ասէ Պաւղոս Սամուստացի. Բանն մարդ ոչ էր, ի մարդ ընակեաց։ Ասէ Ղևոն Հռոմայեցի, Իմաստութիւն շինեաց իւր տուն, Բանն մարմին եղև և ընակեաց ի մեզ, այս ինքն յայսմ՝ի մարմնի՝ զոր առն ի մարդոյ ընակեաց։ Թէոդորիտոսի Կիւրացւոյ. Ոչ եղև մարմին Բանն, այլ մարմին կենդանի

Digitized by Google

և բանական էառ և բնակեաց ի նմա։ Նեստոր ասէ. Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ, այսինքն զմերն զգեցաւ բնութիւն. քանզի բնակութիւն կալաւ զմարդկութիւնն։ Դարձեալ Նեստոր ասէ. Ոչ այլ որդի և այլ, այլ ինքն մի որդի է կրկնակ բնութեամբ, իսկ արժանաւորութեամբ միական։ Թէոդորիտոս Կիւրոս քաղաքի եպիսկոպոս ասէ. Զբնութեանցն զանազանութիւնն ճանաչեմք երկաքանչիւրոյ բնութեանցն յատկացելոց։ Պաւղոս Սամուստացի ասէ. Ոչ ի Դաւթայ ծնեալն աւտար իցէ իմաստութեանն, և ոչ իմաստութիւնն յայլում այսպէս բնակէ, երևեալն ոչ էր իմաստութիւն, քանզի ոչ կարէր ի ձևի գտանիլ։ Ղևոն Հռովմայեցի ասէ. Ապրեցելոյ պսուհետև յատկութեան երկաքանչիւրոյ բնութեանցն և ի մի դէմ եկակցելոյ։ Դարձեալ Պաւղոս Սամուստացի ասէ. Յիսուս Քրիստոս կրեաց չարչարանս և կրեալ կեցոյց զմեզ, մեղկութիւն և թաղումն մարդոյ լուծաւ, և չարչարեցաւ նա իբրև զոչխար ի զենումն ածեալն։ Եւ Թէոդորիտոս Կիւրոս քաղաքի եպիսկոպոսն ասէ. Ոչ Աստուածն չարչարեալ, այլ ի մէնջն յԱստուծոյ առեալն մարդ։ Տեսանե՛ս հաւաստեաւ, թէ զի՞արդ Պաւղոսի Սամուստացւոյ ձայնակից է Թէոդորիտոս Կիւրոս քաղաքացի, մարդ ասելով զխաչելեալն և ոչ Աստուած. աւտարացեալ ի սրբոյն Պաւղոսէ առաքելոյ, զի նա ասէ, Հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա. և Տէր փառաց ասէ զխաչելեալն, և ի Գործս առաքելոցն ասէ, թէ՝ Զբանն առաքեալ ի Հաւրէ կախեցին Հրէայքն զփայտէն։ Իսկ Թէոդորիտոս հակառակ սմա ասէ. թէ՝ մարդ էր խաչեցեալն և ոչ Աստուած։ Եւ Նեստոր ասէ. անչատեմ զբնութիւնն, և միաւորեմ զերկրպագութիւնն։ Եւ դարձեալ ասէ, Զի՝ խնդրէք զիս սպանանել, մարդ՝ որ ճշմարտութիւն խաւսեցայ. սա է որ զփշեղէնն ընկալաւ պսակ. սա է որ ասաց, Աստուած Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս. սա է որ երեք աւրեայ զմահն համբերեաց։ Իսկ Ղևոն Հռովմայեցի ասէ, Պահէ երկաքանչիւր բնութեանն անհատաբար զինքեան յատկութիւն։ Եւ դարձեալ ասէ, թէ՝ Ոմն ի նոցանէն բացափայլ սքանչելագործութեամբ. իսկ ոմն ընդ թշնամանաւք ստոր անկեալ է։ Տեսանես թէ զի՞արդ ստուգիւ համաձայն է Նեստորի Ղևոն Հռովմայեցի, զի ահա զսքանչելիս՝ աստուածութեանն ասաց որպէս Նեստոր, և զթշնամանան և զխաչն՝ մարդոյ, և գտաւ հակառակ ամենայն սրբոց վարդապետաց։ Զի Սքանչելագործն Գրի-

Digitized by Google

գոր ասէ. Եթէ ոք ասէ, պյլ է որ չարչարեցաւ և պյլ որ ոչ չարչարեցաւ, նզովեալ լիցի։ Եւ Գրիգոր Աստուածաբան ասէ. Եթէ ոք կիսաչելեալն՝ ասէ, և երկրպագեսցէ ոչ նմա իբրև Աստուծոյ ճշմարտի, եղիցի նզովեալ և կարգեսցի ընդ աստուածասպանն։ Եւ Կիւրեղ Աղեքսանդրացի ասէ. Եթէ ոք բաժանեսցէ զբանս գրոց սրբոց վաւերարանաց և զառաքելոց և զմարգարէից, և զոմանս աստուածութեանն ասասցէ և զոմանս մարդկութեանն՝ նզովեա՛լ եղիցի։ Եւ ահա Ղևոն բաժանէ զամենայն և զնուազագոյնսն մարդոյ ասէ, և զբարձրագոյնսն Աստուծոյ, և ոչ երկնչի ի նզովից հարցն սրբոց, բայց մեզ մի՛ լիցի անցանել զաւանդութեամբ հարց սրբոց մինչև յաւիտեան։

Եւ դու, պյրդ Աստուծոյ, պինդ կաց ամենայն իրաւք, որպէս և կացեալդ ես գեղեցկաբար, և մի՛ տար տեղի ամենևին այնոցիկ որք խոտորեալ են յաւանդութենէ հարցն սրբոց, զի Քրիստոս զքեզ զէն հաւատոյ Հայաստանեացս կամեցաւ առնել յաշխարհիդ յայդմիկ, և արդ անդրդուելի կաց միշտ ի ճշմարտութեանն, և մի ի պատկերապաշտութիւն նոցա և մի յայլ ինչ խոտորեսցիս, զի պատկեր Աստուծոյ խաչն է տուեալ մեզ ի պաշտաւն, զի պաշտեսցուք զԱստուած խաչիւն իւրով սրբով, որպէս և ամենայն Քրիստոնեայք և հարքն սուրբք յառաքելոցն մինչև ցայժմ։ Իսկ զայլ պատկեր հրաժարեցուցանէ ինքն Աստուած ասելով, թէ՝ Զի՞նչ նմանութիւն յիս տեսէք՝ զի պատկեր ինձ ձևացուցէք. ապա ուրեմն այլ պատկեր երևելի չէ պաշտելի բայց միայն խաչն։ Իսկ որք այլ պատկեր արարին՝ ըստ հեթանոսական սովորութեան արարին, և ոչ ըստ աստուածպաշտութեան աւրինացն, որ հրամայեալ է մեզ ի գրոց սրբոց։ Բայց դու, խնդրողդ ուղիղ հաւատոյ բանի, զայս ամենայն առեալ և առաւելեալ, իմա՛ զհաւատոյս զաւրութիւն, և արիաբար քաջացիր և յաղթեա՛ հերձուածողական հնարից, և առ ոչինչ համարեա զբանս նոցա այլայլականս։

Զքաղմամեղ ի՝ զքեզ՝ տանտարոյ պարպանոս զթուամա՝ յիշեցէք ի Քրիստոս։

Digitized by Google

(ԹԵՐԹ ՄԻ ԱՆԿԵԱԼ Է ՋՈՐԻՆԱԿԻՆ, ԵՒ ՊԱԿԱՍ ԳՏԱՆԻ ՍԿԻԶԲՆ ՆՈՐՈՑ ԳՐՈՒԹԵԱՆՆ ՈՐ Է ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՄԻՏԱՍԱՑ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ)։

Digitized by Google

. . . . . .

փոյթ առնես, և դու զԱրտեմոն ընդունիս, որ ոչ ծննդեանն էր սպասաւոր և ոչ մկրտութեանն և ոչ խաչելութեանն։ Յետ առաքելոցն բաժանմանն ընդ երկիր, եկն անաւրէնն և աշակերտեցաւ Յովհաննու աւետարանչին յետ ԼԳ, ամի Քրիստոսի վերանալոյն։ Արդ ասա, մինչ Յակոբոս յԵրուսաղէմ եկաց հայրապետ, և առաքեալքն դեռ զվայրաւքն էին, մի՞թէ այնչափ տըգէտք էին որ ՀԲ առաքեալքն և երկոտասանքն հանդերձ Աստուածածնաւն, չկարէին գիտել թէ յո՛ր ամիս եղև Քրիստոսի ծնունդն, կամ այնչափ զԵրուսաղէմ առանց կարգաւորութեան թողցեր նա։ Թէ կերող և արբեցող էր, արժան էր քեզ ասել իրս ինչ, նա աւանիկ ծունկքն խստացեալ էր իբրև կուզտու յանդադար աղաւթիցն, և դու զայնպիսի այր թողուս և զնորա ընթերցուածսն, և Արտեմոնի անիծելոյ հաւանիս։

Պատրիարքն։ Առաքելոցն հետևող էր, պատշաճ է զոր գըրեացն։

Հայրապետն։ Զորք աւետարանիչքն կամ այլ առաքեալքն կամ հետևողք նոցա, զի՞արդ ո՛չ տաւնեցին կամ աւետիս կամ ծնունդ յայդ կարգաւորութիւնդ՝ յոր դուք տաւնէք, բայց միայն Յակոբոս՝ որ ընդ նմա էր ի Բեդխաէմ և յԵգիպտոս ի Յունուարի Զ. միանալ ծննդեանն և մկրտութեան դնէ և սաղմոս և աւետարան միաբանութեամբ Կիւրղի Երուսաղէմացւոյ, զոր և ասէ նոյն Կիւրեղ, թէ այլ քաղաք հետևեցան զկնի Արտեմոնի և ոչ կացին յուղղութեան, բայց միայն Հայք գտեալ յառաջին կանոնաց, ի դեկտեմբերի ԻԵ. Դաւթի և Յակոբու տաւնեն։ Եւ մինչ ասես թէ տրտունջ բառնայ Կիւրեղ զՀայոց, ինքն ծնընդեան կարգաւորութիւն ընդէ՞ր չէ կարգել քան մարտիրոսական տաւնախմբութիւն միայն, և զծնունդն յունուարի ի Զ. և յայտ է թէ Երուսաղէմ չէր տաւնել, թէ ոչ մինչ Յուստիանոս կայսր որ զՏեառնընդառաջն ի փետրուարի Բ, տաւնել տայր, նոքա ընդէր մեռանէին։

Պատ։ Զծնունդն ընդէ՞ր արհամարհէք և չառնէք։

Հայր։ Առնեմք, այլ ըստ առաքելոցն և ոչ ըստ ձերոց, զի Յակոբոս Տեառն եղբայրն և Անդրէաս՝ որ զտումարն շարադրեաց, և Կիւրեղ Երուսաղեմացին ի յունուարի ի Զ, ն ասեն, զի մինչ սկսանի յապրիլի ի Զ. ն զԱւետիսն, և հինգ ամիս լեալ Եղիսաբեթի յղութիւն, գտանի յունուարի ի Զ.ն ստոյգ,

Digitized by Google

և կատարի ինն ամիս յղութիւն Կուսին, և մեք ոչ անարգեմք զծնունդն այլ մեծարեմք զնա ընթերցուածովքն զոր Ցակոբոս Տեառն եղբայրն կարգեաց. Եւ հովիւքն էին. Եւ ի ծնանելն Յիսուսի. Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս, և ի ծնընդոց կարգէ՝ Ի սկզբանէ արար Աստուած. Եւ ահա կոյս յղասցի, Եւ երևեցան շնորհքն Աստուծոյ փրկիչ. և եթէ՝ Տէր ասաց ցիս որդի իմ ես դու, և թէ՝ Ասաց Տէր ցՏէր իմ։ Այսոքիկ ծընընդեանն կարգեալք առ ի մէնջ յաւուր Ճրագալուցին, վկայելով Գրիգորի Աստուածաբանի այսպէս Քրիստոս ծնեալ լինի. իսկ ի վաղիւն կատարեմք զխորհուրդ Մկրտութեան։

Պատ։ Իսկ զի՞արդ լինի այդ. զի ութ աւր զթլփատութիւն տղէ խնդրէ, ապա լնուլ մկրտութեան։

Հայր։ Դու առնե՞ս զծնունդն։

Պատր։ Այո։

Հայր։ Զթլփատութիւնն ընդունի՞ս։

Պատր։ Յետ ութ աւուր։

Հայր։ Եւ մկրտես յետ քանի՞ աւուր։

Պատր։ Յետ զծնունդն առնել ԲԺ.։

Հայր։ Մինչ աւետարանիչն Լ. ամ ասէ լինել, և ապա մըկրտել, դու զի՞արդ յետ ԺԲ. աւուր մկրտես, ո՞ւստի ուսար զայդպիսի իրս, կամ ո՞վ կայ քոյ վկայ։

Պատ։ Իմ վկայ այն է, որ քան զութ աւրն պակաս այլ չմարթի առնել։

Հայր։ Ապա չորք աւրն կո՞ր պակասութիւն լնու քեզ, կամ ինչ դու զծնունդն արարեալ ես ի քո Ճրագալուցին, ընդ իս դարձեալ էր առնես կրկին Ճրագալոյց, զի Քրիստոս միանգամ ծնաւ։

Պատր։ Ես վասն մկրտելոյն առնեմ զքո Ճրագալոյցն և ոչ վասն ծննդեանն։

Հայր։ Երեկունն ո՞ր գիրք ասեն զՔրիստոս մկրտել։

Պատ։ Այսպէս ընկալաք։

Հայր։ Զաւետարանիչն ընդունի՞ս։

Պատ։ Եւ զի՞արդ ոչ։

Հայր։ Յովհաննէս գրէ, թէ, Ի վաղիւ անդր ետես Յովհաննէս զՅիսուս՝ զի գայր առ նա, և ի կատարել մկրտութեանն ետես զերկինս բացեալ և զՀոգին զի իջանէր ի վերայ նորա, և Հայր ի խորհուրդ եկեալ, Դա է որդի իմ սիրելի, և ապա ե-

լեալ ի ջրոյն վարեաց զնա Հոգին յանապատ, նոյն ժամայն և ոչ յայրի, և թէ երեկունն մկրտեցաւ, զգիշերն ընդէ՞ր ոչ կոչեաց յայտնի։

Պատ։ Ի Հրէիցն ոչ իշխէր մկրտիլ, վասն այնորիկ ի գիշերի և ի ծածուկ։

Հայր։ Եւ զի՞արդ է այդ, զի Յովաննէս ասէ, թէ՝ Ի մէջ ձերում կայ, զոր դուքն ոչ գիտէք։ Եւ թէ սակաւք էին. զիարդ ասէ, թէ՝ Ի մկրտել ամենայն ժողովրդեանն և Յիսուսի մկրտելն, անդ ժողովուրդ ասաց և ոչ սակաւ, և առաւաւտ ասաց և ոչ գիշեր, դու զի՞ ասես։

Պատ։ Ուստի՞ դու ուսար զ Լ. ամեայ այր մկրտել յառաջ քան զուլթաւրեայ թլփատութիւնն, ես անտի զերեկունն ուսայ առնել։

Հայրա։ Մի՛ յետս ընդդէմ խոստովանիս, և մի՛ իբրև ըստրտիմն *) ջրասոյզ լինիր և թաքչիր յորժամ յորձան պտուտիցն նեղեսցէ զքեզ, և ապա ելանես փետրացամաք յաստուածային կտակարանաց։ Քանզի ուսոյց Գրիգոր Աստուածաբան, յերեկոյի աւուր Քրիստոս ծնեալ լինի, և ի միւսում աւուր. Երէկ գպպոծառ լուսաւորութեան աւր տաւնեցաք, իսկ այսաւր յաղագս մկրտութեանս իմաստասիրեսցուք։ Եւ յայտ է թէ ծնունդն առ նովաւ երեկունն էր կարդեալ, որպէս առաջնոցն, և մկրտութիւնն առաւաւտուն, զի մինչ այսաւր մկրտիլ ընդ միացեալ աւուրն ծննդեանն, յետ Լ ամի, նոյն աւր ծննդեանն և մկրտութեանն հանդիպի, և հարկ եղև առաջնոց վարդապետացն զծնունդն յերեկորին առնել, զի մկրտութեան պատիւ երևեսցի, ուստի մըկրտութեան առաւաւտն մինչև գալ ի տաճարն լինի Խ. աւրեայ Յիսուս, ուստի հաշտութիւն Հաւր ընդ արարածս վասն մեծի ձայնին մեծարեսցեն պատուով։ Բայց որ ասացեր անպարտ գոյ վարկանիմ յետ մկրտութեանն, ամաչեա՛ ի բանիցդ։

Պատ։ Զի՞արդ է այդ։

Հայր. Մինչ դու յառաջ հաւատացեր քան զիս ի Քրիստոս, ընդէ՞ր գտար յամենայն ինչ յետս ընդդէմ։

Պատ։ Յո՞ր ինչ։

Հայր։ Յաւրէնսն հրամայեալ է Խ. աւրեայ ածել զանդրանիկսն ի տաճարն, իսկ դու ընդէ՞ր յետս ընդդէմ գրաբանեալ թիւր գտար։

*) Այսպէս յօրինակին.

Պատ. Ասա։

Հայր. Առնես զծնունդն ի դեկտեմբերի ԻԵ. չմեղադրեմ զի յԱրտեմոնէ ի քո ծուռ վարդապետէն ուսար, ապա առնես զութաւրեայ զթլփատութիւնն, և Ղուկաս Լ. ամեայ ասէ գալ ի մկրտութիւն, և դու յառաջ մկրտես, և ապա զ Լ. ամեայ այրն տղայ արարեալ Խ. աւրեայ ի տաճարն ածես, և ի մկրտութիւն. և անտի յետ ութաւուր լեալ զՀոգւոյն սրբոյ իջումն ուրանայր, և զերախայիցն կարդայք նմա լրումն. արդ զինչ ասես առ այսոսիկ։

Պատ. Աւա՜ղ վտանգիս՝ որ տիրեաց ի սուտ փախստականէդ, բայց մի՛ պարսաքար լցեալ զանիւ այլ ունիմ վերայելումն *), զժողովուրդն որ ընդ ծրվն Կարմիր անցին, և թլփատութեամբ յամսն մկրտեցան, զոր և Պաւղոս վկայէ, թլփատեալ էին և ապա մկրտեցան, չինի և Քրիստոսին նոյնպէս ըստ մերոյս։ Բայց դու ցոյց ինձ վկայ զոր, որ ցուցանէ նախ մկրտութիւն տալ, և ապա թլպատութիւն, և ստոյգ դուք էք։

Հայր. Յեսու աւրինակ Քրիստոսի, և Յորդանան աւազանին, և փոխանակ ամպոյն եղէց ընդ քեզ որպէս ընդ Մովսէսի. ի Յորդանան իջեալ մկրտեցան, և յայնկոյս ելեալ թլփատեաց զամենայն ժողովուրդն ի դաշտին Գաղգաղեայ, որ է աւրինական թլփատ հեթանոսաց, իջանել յաւազանն ըստ երկոտասան քարանցն զոր ի ջուրն եդին, և հանել զքարինսն ի գետոյն. Թ. առաքեալքն սուրբ տապանակն աւրինակ Նուսին զաշխարհս ի հեղձմանէ աւրինացն ապատեցին, քարիւն զթլփատութիւն, զքարեղէն սիրտս նոցա, որ է հին հաւատոյ եկեղեցւոյ, որպէս զգայլախաչն ընդ իւր եդեալ Յեսու ի գերեզմանն զմեռեալսն ընդ Քրիստոսի մահուամբն։ Արդ՝ Քրիստոս փոխանակ Մովսէսի, և ամպն փոխանակ մկրտութեան, վասն զի ոչ եմք ըստ Մովսէսի աւրինաւքն, որ արգելաւ յերկրէն Աւետեաց, այլ ընդ Յեսուայ, որ եմուտ ժառանգել զխոստացեալ աւետիսն։ Այս է մեր կարգ պարծանաց առնել ի միում աւուր զերիս տաւնսն։ Բայց թէ ըստ գրոց կամիք առնել յետ ծննդեանն և թլփատութեանն, լո՛ւռ լերուք զաւուրս քառասունս, և ապա զտաւն գալստեանն կատարեցէք, և զամն Լ. և ապա զմկրտութեանն, և յետ ամաց երից զնաչելութիւնն, և ապա չէ պէտք այլ աստուածպաշտութեան հոգ տանել։

*) Այսպէս յօրինակին.

Պատ. Զաւետիսն յառաջ քան զԾնունդն է՞ր ոչ առնէք։

Հայ. Զի ոչ ընկալաք յԱրտեմոնէ կամ Յուբնազեայ, այլ ի Յակոբայ և ի Կիւրղէ Երուսաղէմացւոյ, բայց ի հակառակն եկեսցուք։ Ո՞ ուսոյց զԱւետիսն տաւնել աշխարհի, զի հրեշտակն միոյ կուսի ասաց ուրախանալ, և Մատթէոս՝ Գիրք ծննդեան ասաց սկզբան, և ի բազում տեղիս զԾնունդն յիշէ, բայց զաւետիսն անփոյթ առնէ, և Մարկոս ոչ յիշեաց, և Ղուկաս ի կարգս զրուցաց անցաւ, և Յովհաննէս ուշ ոչ դնէ, և Յակոբոս և Կիւրեղ աւետիս և ծնունդ առ մկրտութեան եդին։ Այլ գիտեմք թէ քան ի ծնունդ որդւոյն, թագաւորն ընդ տիրել որդւոյն ի վերայ թշնամեացն առաւել զուարճանայ։ Իսկ Քրիստոս լուութեամբ Զաքարիայ. և Սիմէոն մկրտութեամբն՝ զոր դու անուանես Ժողովուրդ Աստուծոյ, երկինք, հոգին, ջուր, աղաւնի. բայց յաւետիսն մի հրեշտակ իսկ ի ծնունդն հովիւքն, հրեշտակքն, և մսուրն, փառք ի բարձունս Աստուծոյ, զի և այլ հրեշտակքն վերինք գնոյն ոչ գիտէին, զի ի ծննդեանն ոչ էին. ի հայրարձմանն, ո՞վ է սա ասէին, և ի ներքին պարունակէն տեղեկացեալ, և ապա գիտացեալ. արժան է քեզ մեղադիր լինել. Յակոբոս Տեառն եղբայրն զաւետիսն ի ծննդեանն դնէր, և ոչ որիշ և պատուով. և Կիւրեղ զծննդեանն, և ապա զխաչելութեանն. և զՊենդակոստէին, և զտան անխախտելի վէմք եղեալ. և Յակոբոս դնէ զկարգս, այլ աշխարհս՝ երախայից և մարտիրոսաց ի միջոցն, բայց Քրիստոսի տաւնս՝ ոչ յաւելին զ՚ի քան զաւետիսն, թէ առանձինն ընդէ՞ր ոչ եդ յառաջ քան զծնունդն, ի դեկտեմբերի զվարդավառն, զի որ վերագոյն էր քան զինքեանս քննութիւնքն, ապաստան ի Հոգին սուրբ արարին։

Պատ. Կրկին մկրտութիւն ընդէ՞ր առնէք։

Հայր. Ոչ կրկին, այլ միանգամ, զի Քրիստոս միանգամ մկրտի և ոչ երկու։

Պատ. Մեք յանուն Երրորդութեանն մկրտեմք, դուք յո՞ր Երրորդութիւն մկրտէք այլ։

Հայր. Պաւղոս ուսուցանէ քեզ թէ, Ո՞չ գիտէք թէ որ միանգամ մկրտեցայք ասէ, ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցայք, ոչ ի Հայր, կամ Յորդի, կամ ի Հոգին, այլ թէ ի մահ նորա, և Քրիստոս թէ, զմահ իմ պատմեցէք։ Մեք վասնայնորիկ մկրտեմք զձեզ, ոչ զի յանուն Երրորդութեանն

մկրտէք, այլ չի վասն Քրիստոսի ուրանայք, և բաժանէք յերկուս բնութիւնս ըստ Նեստորի, ապականացու խոստովանիք վարդին, ըստ Թէոդորի Սամուստացւոյ *), և աղ և չուր զանդէք ի հաց սեղանոյն, որ յամուսնութենէ և ի կարծեաց ծնեալ զՅիսուս, և զԱստուած ոչ անկեալ ընդ մահուամբ, և ոչ նորա արիւնն զձեզ փրկել, որ խառնմամբ միացաւ ի Կոյսն. զայն խառնումն կոչէք և երկու կիրք, և յայսոսիկ կերպարանեալ վասն Քրիստոսի ուրանայք, ծածկելով Երրորդութեանն անուամբ զհերեսիոտութիւնդ ձեր, որպէս գխաչեցարն բարձեալ էք ուրանալով և զվասն, Երրորդութեանն տայք գսրբացութիւնն։

Պատր։ Ապա գմիւռոնն և զԵրրորդութեանն խոստովանութիւն զի՞նչ առնէք։

Հայր։ Մինչ զեկեղեցին պղծէք խմորուն հացովն, և զրաւ խառնութեամբ զՔրիստոս թշնամանեալ ժողովիք, և ընդ նոյն հերձուածող բերանովք, և զպեղծ աչն ի վերայ եդեալ եպիսկոպոս ձեռնադրէք, և ի նմանէ քահանայք լեալ, և զնորին իւղն ի նորին աւազանն արկեալ մկրտի մանուկ, և ոչ ի մահն Քրիստոսի, և ապա հաղորդի ի նոյն մահուրաց սեղանոյն, ըստ հերեսիոտական բաժակն և զհացն ընկալեալ. ապա ամենայն խոտելի գտանի իրք։

Պատ։ Ապա զխաչեցարն վասն թշնամանեաց ասէք դուք, թէ վասն պատուոյ տայք, թէ զուգապատուաբար։

Հայրա։ Քեզ ո՞րպէս թուի։

Պատ։ Մի կարծեր, թէ որպէ՞ս ընդ փորձ ինչ խաւսել ընդ քեզ, այլ վասն դիտելոյ, թէ ո՞ր ստոյգ է, կամ յուժմէ՞ ուսայք դուք։

Հայր։ Որդւոյ ասեմք վասն պատուելոյ պատմութեամբք զՔրիստոսի տնաւրէնութիւնն։

Պատր։ Զերրորդութիւն անդ ոչ։

Հայր։ Զի նորա արեամբն փրկեցաք։

Պատ։ Սուրբ Աստուած ո՞վ է։

Հայր։ Որդի։

Պատ։ Սուրբ և հզաւր ո՞վ է։

Հայրա։ Որդի։

---

*) Ա. յոպէս յոր.

Պատր. Սուրբ և անմահ ոմն է.

Հայրա. Որդի, որ խաչեցաւ վասն մեր.

Պատ. Զ Հայր և զ Հոգի, վասն է՞ր նուաստացուցանէք.

Հայր. Որպէս դու ասես նուաստացուցանել, նոյնպէս և դու նուաստացուցանես ակամայ, զի ես երկրպագելովն մեծացուցանեմ, և ոչ բաժանեմ, թէպէտ և զսրբասացութիւնն Որդւոյ ասեմ.

Պատր. Ես յոր վայր բաժանեմ զԵրրորդութիւնն.

Հայրա. Զի Հայր ի կուսէ ոչ ծնաւ, և ոչ թլփատեցաւ, և ոչ մկրտեցաւ կամ խաչեցաւ, ոչ Հոգին ապտակեցաւ կամ թաղեցաւ և յարեաւ. բայց այն Որդին միածին՝ որում յարութեան է պատիւ, և ասեմք այսպէս. Սուրբ Աստուած, որ յառաջ քան զյաւիտեանս ի Հաւրէ, և ի կուսէ ծնեալ, և խաչեալ և թաղեալ ի գերեզմանի անքակ յԱստուածութենէն, անբաժանելին ի միութենէ. Իսկ թէ խաչեցարն դժուարին թուի քեզ և խոչ ընդդէմ քո, ոչ ասեմ այսպէս. այլ թէ որ պատարագեցար, կամ ձաղեցար, կամ թշնամանեցար, կամ բևեռեցար վասն մեր, ողորմեա մեզ. կամ որ զքացախ և զլեղի արբեր, կամ որ կոփհարեցար, կամ դու որ գողանաս զքեզ որպէս զԱստուած, որոյ գաղտաբար ասես շրշնջելով թէ, որ ի փայտին բարերարեցար՝ ողորմեա՛ մեզ. զի նա վասն մեր գանեցաւ, և նորա վիրաւքն բժշկեցաք, և եթէ խաչն քեզ խոչ է, մահ նորա՝ քեզ կորուստ է, և եթէ ոչ, ասա՝ զինչ հարցանեմս, զի ոչ այլ իւիք փրկեցաք, թէ ոչ թքովն և խաչիւն և մահուն Քրիստոսի.

Պատր. Սերովբէքն Երրորդութեանն ասացին զսրբասացութիւնն և դու Որդւոյ, սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ.

Հայր. Ասա՝ և դու նոյնպէս սուրբ, և լռեալ և եթէ ո՛չ ասա՝, զի՞րդ ուսար. ուսար զի յաւելին ի նա Աստուած հպարտ և անմահ և ողորմեացն. Աղէ՞ ասա, ո՞ ուսոյց քեզ յետս ընդդէմ խոստովանել և թիւրել զսերովբէիցն նուագն. Սուրբն ի նոցանէ, և այլն պատուով բան ի մէնջ. իսկ այլն ինոցանէ, այն ծառայիցն, մեզ ոչ է պարտ ի թագաւորական գովեստն զնուաստն դնել. Եթէ ծառայք են, չէ արժան անգամ յիշել զնոսա, այլ նոր ինչ ասել, Աւրհնեալ Հայր, Աւրհնեալ Որդի, Աւրհնեալ Հոգի սուրբ. ապա եթէ տեարք են սերովբէքն, պարտ է զնոցայն ընդունել զսրբասացութիւնսն, զասելն Տէր զաւրու-

Digitized by Google

թեանց, լի՛ են երկինք և երկիր փառաւք նորա, այլ ասելն Եսայեայ, եթէ՝ Տեսի զՏէրն նստեալ յաթոռ բարձրութեան, և ձայն մի տէր և ոչ տեարք, և փառք նորա և ոչ ձև, զի զՈրդի տեսին գուշակմամբ, և ասէ. Զո՞ առաքեցից առ այն ժողովուրդ՝ և ասեմ, զիս առաքեա տէր, զի զոր մի դիմաց ասացին գոլ, թէ և զսուրբ Երրորդութիւնն ասացին սերովբէքն։ Բայց զայս ի հարկէ պարտիք ասել, զի առաջինքն զՀաւատամքն ի յերիս բաժին են եղեալ, զի ի սակս Որդւոյ յաւրինին բանքն, և Հաւր և Հոգւոյ, որպէս և ի Փառք ի բարձունսն՝ որ երրորդութեանն թիւ, և ոչ Որդւոյ միայն, թէպէտ զՔաղկեդոնի զերեսս ունիք, և զխաչեցարն բարձէք, զԱստուածամաւրն բարեխաւսութիւնն ուրանայք, զի հակառակս ժողովեցայք ընդ երից սուրբ ժողովոցն դնել զքայայխաւռն խմորն, վկայ ապականայու ընութեան՝ զոր ունիք, զոր ձեռնարկեալ սպանիք զմեծն Դիոսկորոս, հալածելով զՊետրոս Անտիոքացին՝ գայլ կոչելով, և զԾուլիոս Աղիկառնացի, և զՍտեփանոս եպիսկոպոս Եփեսոսի, և զԱնատաւլիս, և զՏիմոթէոս. զայս Զ. եպիսկոպոսքս փախուցիք և սպանիք, ճոռադաւանք, մոլար և խոտոր, ստափառ, գայլախո՛ւմբ, գառնակոտոր, դիածամբ, արիւնաթաթախք, պըղծաժողո՛վք, կարծես բերելով որպէս աստուածամարտք, քրիստոսապատառք՝ հերետիկոսք գոլով, զոր յերիսն այսպէս ոչ են արարեալ։

Պատ։ Արդ նոքա հերձուածողք գոլով, անիծից գործ գործեցին։

Հայրա։ Բայց ասա դու, զո՞ր հերձուած հաստատեցին Զ. հայրապետքն։

Պատր։ Զխաչեցարն։

Հայրա։ Եւ նոքա նախակարգեցին։

Պատր։ Թէպէտ և առաքեալքն ասացին ուրեք ուրեք, կամ որպէս մեծն Յովհան Ոսկեբերան և Անթիպատրու հայրապետն, այլ սակայն չէր աւրինադրած ամենայն աւուր ասել, և պատառեցին զուղիղ ցանկ հաւատոյ, ամենայն աւուր եդին զասելն անամաչ։

Հայր։ Եթէ հերձուածողք էին, ընդէ՞ր ոչ հերձան յանիծիցն որպէս զԱրիոս կամ Նեստոր, միայն զի Մարկիանոսի սուրն եղև վրէժխնդիր փոխանակ Աստուծոյ, կամ թէ սուրբ էր ժողովն Քաղկեդոնի, ընդէ՞ր Յուդայի նման սատակեցան, բայց յո-

Digitized by Google

լով ազգ Կոստանդիանոսի, և Բ, Թէոդոսի Թագաւորացն տաւն առնեն, որպէս առաքելոց, բայց որ ասացին Բ, ընութիւնս, և Բ, որդիս, որպէս Նեստոր զատեալ որոշեցին։ Իսկ դուք երկուս ընութիւնս ասէք ըստ Եւտիքէի և Լեւոնի, զոր և գրեալ է ի յիշատակարանս. թէ Աղաղակեցին յոլովք ի Քաղկեդոնի ժողովոյն, եթէ այս Նեստորի աղանդն է, չհաւանիմք։ Եւ ապա առնիծեալն Ցորնաղ ի մէջ անգեալ զերկու որդիսն Նեստորի ծածկեաց Բ. ընութեամբքն. և վկայէ նախարարեացն ասելն, եթէ՝ Նեստոր ընդէ՞ր նզովեցաւ, մինչ դուք զնորայն ընկալայք։ Բայց ասա՛ ինձ, զԻրիսկորոս ընդէ՞ր հալածեցին ի ժողովոյն, զի յԵփեսոսի յերկրորդ ժողովին նա էր գլխաւոր, զՓղաբիանոս և զԵւտիքէս պապանձեալ քասկնեցոյց, և զառաքելական հաւատս հաստատուն պահեաց մինչև ի մահ Ե, եպիսկոպոսաւքն, դուք զայն թողեալ, այլ ինչ եդիք նորաւանդ, քացախաւանդք, խմորակերք, ջրպղտորք, աղախարշք, աստուածատեացք, աղտագութք, մարդապաշտք, երեսամաչք, Քրիստոսատեացք, ամենապատառք, ընձախայտք, փարախավաչք, խրամատողք, հովուատեացք, ընդդէմ Տեառն զաւղանչողք, մարկիոնապաշտք, նորափառք, որք Ո. և ԼԶ. հաստատունչ Նեստորի, որք այլ աղարտումն արկիք յեկեղեցի Աստուծոյ, զոր ոչ այլ ոք ընդունի յուղղափառաց սրբոց։

Պատ։ Դուք բնաւ չընդունի՛ք զժողովն Քաղկեդոնի։

Հայրն։ Վասն այնր չընդունիմք, զի ոչ եթէ ժողովեցան. և զհաւատս հաստատեցին, այլ զի զառաջին սուրբ հարքն արհամարհեցին։ որպէս և արարին իսկ, զի զբուն սուրբ հարքն հալածեցին։

Պատ։ Վասն զի զնորս աւանդեցին, վասն այնր նզովեցին զնոսա, և զքե՞զ խառն։

Հայր։ Մի՛ յարձակի՛ր ի նզովս, զի մի ատամնաթափ լինիցիս. մինչ ժողով արարիք, ի Հայք ընդէ՞ր ոչ արձակեցիք և կոչեցիք, որպէս և Կոստանդիանոս առ սուրբն Գրիգոր, և մեծն Թէոդոս՝ առ սուրբն Ներսէս, կամ գալ ի ժողովն, կամ տալ գիր հաւանութեան։ Իսկ փոքր Թէոդոս առ սուրբն Սահակ գրէ գալ ի ժողովն Եփեսոսի, և զգուշանալ Բ, իրս ի Նեստորէ և ի Լեւոնի տումարէն։ Արդ դուք զո՞ր հերձուած խլեցէք ի ժողովն, և զո՞ր ուղղափառութիւն տնկեցէք։ Կամ եթէ հերձուած կայր ի Հայք, ընդէ՞ր չարարիք աղդ, կամ յառաջ, կամ զկնի, այլ

դուք լուծընկէցք լեալ, զերդմամբ Հայոց Թագաւորացն անցէք, զՏրդատայն և զԿոստանդիանոսի, նաև զձեր Հայրապետն սպանէք։ Իսկ մեք որ զխաչեցարն ասեմք, ոչ ի յանձնէ այլ ի ձերոց գրոց եմք ուսեալ, որպէս և գրէր Նեքտարիոս Հռոմայեցի, եթէ չեղև հնար Յովսեփայ զմարմինն իջուցանել ի փայտէն՝ յորժամ զբևեռսն հանէր, զի փայլատակունք ի փորուածոյ բևեռացն հատանէին, ապա զձեռսն ի վեր ամբարձեալ տարածանելով աղաղակեաց այսպէս. Սուրբ Աստուած սուրբ և հզաւր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ։ Երիցս անգամ զայս ասելով ըմբռնեալ իջոյց զմարմինն ի խաչէն, և պատեալ եդ ՝Ի գերեզմանի։ Իսկ յառաքելոցն ի ժամանակս յաւուր չորեքշաբաթու և ուրբաթու ի ժամ պատարագին սկսեալ նախ զայս ասէին կցորդիւ, և ապա զգիրսն ընթեռնուին, և պատարագ մատչէր։ Բայց որպէս ասացին, ոչ եթէ աւրէնս եդին, այլ ըստ աւուրց և ժամուց հանդիպման, որպէս մարգարէի և սպասաւորի Քրիստոսի պատիւ արարեալ կարգեցին յեկեղեցւոջն։ Իսկ ի փոխումն Աստուածածնին եդեալ ի գերեզմանին, և յետերից ;աւուրց խնդրեալ ի գերեզմանն և ոչ գտեալ, ապա ազդ լեալ ի Հոգւոյն սրբոյ ի նոյն աւուր առաքելոցն և Թումայի ասացեալ աղաւթս, զոր այլ առաքեալքն ուսեալ եդին զՀետ աղաւթից Յովսեփու, որ է Սուրբ Աստուածն, այսպէս. Փառաւորեալ միշտ Կոյս Աստուածածին Մայր Քրիստոսի, մատո՛զաղաչանս մեր Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։ Եւ այսոքիկ կայ ի գիրս Աւրեղիանոսի Հռովմայեցւոյ, որ Կանոնացն լրմունք կոչին, վասն յիշատակի եկեղեցւոյ Աստուծոյ։ Զնոյն բան գրէ Որոգինէս ի Գիրս զատկաց, զոր ընթերցեալ Յովհան Ոսկեբերան, և կարգեաց յիւրում ժամադրութեանն զոր արգելուին Թէոփիլեանքն և ասէին, թէ Զ Որոգինին խորհի, և առ ժամանակս ինչ դադարէին բանքն։ Եւ ապա Կիւրեղ կարգեաց ընդդէմ Նեստորի ի ժողովն Եփեսոսի, Միածին Որդի և Բանդ Աստուած, և անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սուրբ Աստուածածնէն և ի միշտ Կուսէն, անփոփոխելի մարդ եղեալ, և խաչեցար Քրիստոր Աստուած, մահուամբ զմահ կոխեցեր, մեզ ի սրբոյ Երրորդութենէդ՝ փառաւորակից ընդ Հաւր և ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո՛ զմեզ։ Եւ միախմբեալ Մ. սուրբ հարքն ի Հոգւոյն սրբոյ յազդմանէ ձայնիւ կատարեցին, զոր և Ասորիք ստոյգ ունին զայս, և յայնմ աւրէ և աստ։ Զայս Դիոսկորոս ասաց

յԵփեսոսի ժողովն, և ոչ յայլ տեղի ուրեք, և ի լինել ժողովոյն Քաղկեդոնի հալածական արարին զ Զ, եբին սուրբ հարքն, զոր աճապարեալ Պետրոս Անտիոքացին գրէ զեղեալ իրսն զամենայն ի Հայք, զպատառումն Ցունաց ի մահուանէն Քրիստոսի, զգուշացուցանէ զինդ կալ ի խոստովանութիւն առաջին սուրբ հարցըն, զի նոքա ասեն զԱթանասի ումեմն ապականագործի խմոր և ջուր ընկալեալ՝ ի վերայ տնաւրէնութեանն Քրիստոսի յաւելեցին, և զխաչեցարն չընկալեալ ի բաց բարձին, և զՄարիամու գովեստն արհամարհեցին յայնմ տեղւոջ որոշեցին բարձրվկութեամբ։ Զայսոսիկ լուեալ մեր եպիսկոպոսացն ժողով արարեալ ի Դուին և ի Մանազկերտ և եդին սահման, եթէ՝ Որ ոք՝ ոչ ասէ զխաչեցարն երգով Որդւոյ յամենայն ժամ, նզովեաց եղիցի ի սուրբ ժողովոյս։ Մեր պատճառք խաչեցարին՝ այդչափ երևի։

Պատր։ Եւ չէ՞ ինչ պարսաւանք, ամենայն աւուր ասել։

Հայրա։ Զոր աւրինակ. Թագաւոր երթեալ որդւովն ի վերայ ապստամբ ծառայի իւրոյ, այն որ ըմբոնեալ ունէր ի կապանս զնախարարս իւր, զերկիրն բովանդակ, և որդի թագաւորին յաղթեալ նմա ի պատերազմին հանէ զաւրսն որ ընդ ձեռամբ նորա, և զընդդիմամարտսն սպանանէ, իրրև դառնայ ի մարտէն որդի թագաւորին արեամբ թաթաւեալ, և գերիքն առաջի կայեալ աղաչեն ամենայն աւուր և ասեն, եթէ որ վասն մեր հեղեր զարիւն քո, և հաներ ի կապանաց ողորմեա՛ մեզ։ Արդ ասա՛ ինձ նախատինս համարի թագաւորն և որդի նորա զայսպիսի բարբառ և պատիւ։

Պատր։ Թէ որդին միով գանիւ փրկէր զոք, պատիւ էր գանն, թո՛ղ եթէ զբազում ոգիս, մանաւանդ եթէ ստոյգ էին արեամբն փրկեալք։

Հայր։ Զնոյն և մեք ասեմք, զի ծնա՛ւ, թլփատեցա՛ւ, և մկրտեցաւ, և մահ ոչ խափանեցաւ, և արգելեալքն ոչ ելին։ Իսկ ի խաչին իբրև եհեղ զարիւնն ի վերայ կենդանեաց և մեռելոց, և ի նոյն աւուրն և ի ժամն զմեռեալն պարտուցն պատառեաց, և ապատեալք գտաք յաւիտեանս. զի՞արդ համարիմք ամաւթ և կամ նախատինս յիշել զչարչարանսն Քրիստոսի, և զսպիսն՝ որ վասն մեր դեռ ընդ իւր ունի առ Հաւր, զի չէ հնար զոք ումեք արեամբ փրկել, բայց նա՛ որ ի խաչ ելեալ էր վասն մեր։

Digitized by Google

Պատր. Բազումք ի Յունաց՝ զայդ ևս գիտեն, և սեղի պատասխանողդ չէ ունին տալ, որպէս ես որ գիտեմ, եթէ զամենայն ինչ գիտես. Արդ ասա, և զայս ինչ, զուր գիտեմ զի չէ՞ աւրէն, բայց խմոր և աղ ընդէ՞ր ոչ արկանէք, զի աւետարանիչն ասէ, եթէ՝ Մանուկն Յիսուս աճէր և զաւրանայր.

Հայրա. Ուրեմն այն՝ որ ասէր եթէ՝ Ընդ բանն խոովեցաւ Մարիամ, կարծեմ եթէ խմոր երեր ի կոյսն. կամ որ ասէ՝ Ես եմ հացն իջեալ յերկնից, մի՞թէ խմոր էր. ապա ի վեր խմորահարք կան և քացախախոցք, այլ զոր աւրինակ վարդ և մանիշակն անապական են, և այլ ծաղիկ խառնեալ ի նա անանապական ասին, ո՛չ տան զիւրաքանչիւր հոտն, զի վարդին արմատն անգոյ է, և բուրէ առաւելապէս քան զայլոյն, նոյնպէս և յորեանն ի ձեռն մշակի սպասաւորի. Իսկ եթէ ես և դուս մեծ քննութեամբ անապական հող առեալ անխառն ի խոտոյ, և յայլ սերմանեաց, և արկանեմք ի բարձր սպառաժ վիմի, և անդ բուսանի հատ յորենոյ ատոք ի հասկէն եղեալ, զոր ոչ ի յերկնից ոք եղեալ ի նմա սերմանիս, և ոչ ի յերկրէ, և բուսանի որդն անսերմն ի փայտի, նոյնպէս և յորենահատն լեալ. Արդ զո՞վ ասես ի նմա խմոր, զի չէր մարդ ի հողոյ Յիսուս.

Պատր. Ի հարկէ անապական պարտիմք ասել, և որ այսպէս ոչ, անմտանայ.

Հայր. Այսպէս համարեա զկոյսն հող յերկրէ, և անապական յորեան ի նմանէ բուսեալ. բայց դաւանողք Բ. բնութեան, մեծն ի հերձուածողս անիծեալն Յոբնաղ, գրէր յիւր Պարապմունս յութերորդ ճառին, եթէ՝ Ոչ է պարտ դնել խմոր ամենայն աւուր, զի յորեանն ինքն խմոր ունի յինքեան, զծնանելն՝ այլ և զյորենացաւղն, և Բ. խմորն չէ գովելի. Այլ ասէր, աղ պարտ ոչ է, զի յորենահատն ի միմեանս եկեալ համեղութեամբ պարկեշտիցն զտեղի աղին ընուն, բայց սուտ է. ի ժողովն Քաղկեդոնի, այսպէս եդին սահման, եթէ չիշխեմք խոտել զսահման խմորոյ, զայսոսիկ նա ասաց. Իսկ մեք հարցանեմք զձեզ, մինչ յախտից աճմանէ էր մարմնն Յիսուսի, յեկամուտ յառնէ բնութենէ, դուք զի՞արդ իշխէք եկամուտ համեղութեամբն անապական աճուն կոչել մարմնոյն Քրիստոսի.

Պատր. Քրիստոս ի վերնատունն ի՞նչ հաց եկեր.

Հայրա. Ցառաջին աւուրն բաղարջակերացն, ասէ աւետա-

բանիչն, և Յիսուս ի տան Յովսեփու Հրէի և աւրինապահի էր, և էր ի պասեքի ղատկին, և Հրէայքն ի ծակ մկանց անդամ յուղէին ցխմորեալն, և ի տունն չմարթի ասել թէ կայր, զի չէր հնար, և Յիսուս դեռ չէր աւարտեալ կաւրէնսն, և Յուդաս տարեալ զպատառն ասէր, ո՞վ հրէայք աւրինապահք բաղարջ ի գինի թացեալ ետ մեզ և ասէ, թէ՝ Այս՝ է մարմին իմ, եթէ իւր կեանս կարէ տալ ապա և ձեզ տայ։ Զայս գրէ Լեոն յիւր երկրորդ գիրսն, եթէ Քրիստոս աւանդեաց զբաղարջն ի պասեքին, բայց պարտ է ձեզ խմոր դնել, զի լիցի ախտակիր մարմինն Յիսուսի կատարեալ մարդկութեանքն։

Պատ։ Պարտ է զՍրբասացութիւնն Որդւոյ ասել խաչեցարիւն, և առանց խմորոյ բաղարջ կալմել։

Հայրա։ Մեք ասեմք, Սուրբ Աստուած՝ որ ծնար ի կուսէն որպէս զԱստուած, սուրբ և հզաւրեղապէս զդժոխս զերեցեր. սո՛ւրբ և անմահ մարմին և ոգին ի դժոխս, ողորմեա։ Ոչ որ ապաակեցաւն կամ թաղեցաւն միայն, զի մի աւապակք աւձտողք երևեսցին, այլ որ պարկեցար ի խաչին իշխանաբար, ողորմեա մեզ։ Սո՛ւրբ Աստուած առանց մեղայ մարմնդ, զի Աստուած ես ճշմարիտ։ Սո՛ւրբ և հզաւր ի կիրս երկիւղի և անբաւ, Սո՛ւրբ և անմահ միացեալ Բանդ, որի խաչին խոստացար փրկել զքո հաւատացեալս, ողորմեա մեզ։

Պատ։ Գ, տիւք և Գ, զիշերք յո՛ր վայր կատարեցան։

Հայր։ Ի վերնատանն բաշխմանէն մինչև ի յարութիւնն։

Պատ։ Զառաջաւորաց պահն ո՞ւստի ուսայք պահել։

Հայր։ Ի գրոց սրբոյն Գրիգորի, զի Ե, աւր անսուաղութեամբ հրամայեաց ամենայն դիւաղնեալ մարդկանն, յորժամ ել ի վիրապէն, ապա յիմաստի լեալ, զաւուրս Կ, միտ եղեալ վարդապետութեանն բժշկեցան։ Իսկ յետոյ զքահանայապետութիւնն առեալ, զ Կ, աւրն ոչ եդ պահս վասն յողդողդացն, զ Ե, աւրն կարգեաց մեզ յիշատակ ունել ի մտի, որպէս Իսրայելի զտաղաւարահարսն, և զբաղարջակերսն։ Եւ Կոստանդիանոս զիւր աւուրս մկրտութեանն, որ ի Սեղբեստրոսէ եդաւ, զոր վասն մեծարելոյ զթաղաւորն պահեցին Եգիպտոս և Հռովմ և Ասորիք։ Իսկ ի դնել դաշինս ընդ իրեարս Տրդատայ և Կոստանդիանոսի, փոխեցին զմեր պահքն, և եդին ի Կոստանդիանոսի տեղին պահոցն յամառնային յաւուրս, զոր մեք առաջին աւր զմեր փրկութեան և բժշկութեան կոչեմք։ Իսկ ձեր ուղղափառքն ասացին

թէ յառաջ քան զ Խ, երորդայն զմուտն զգուշացուցանէ յառաջապահ լինել որպէս կարապետի։ Բայց մինչև ի Մարկիանոս պահեցին զառաջաւորքն Յոյնքն, որպէս և մեք, և շաբաթն աւրն հայրապետացն տաւն կատարէին։ Նոքա զսուրբն Գրիգոր և զՏրդատ մեծարեցին, և մեք զսուրբն Սեղբեստրոս և զԿոստանդիանոս։ Իսկ Մարկիանոս ի բաց եբարձ զայն, և պանտրուտոյս կարգեաց։ Նոքա զԿոստանդիանոս անարգեցին և զՄարկիանոս մեծարեցին, ապա մեք՝ զմեր հայրապետին որպէս մատանի ունիմք, նոյնպէս և պատուելով պարծիմք ընդդէմ ազգաց ժողովուրդ փրկեալ նորա արեամբն, որպէս առաքելաւն Թադէոսիւ և Բարթուղիմէոսիւ և Յուդայիւ, նոյնպէս հոգ տարեալ վասն մեր և Թովմաս, և ի բուն սուրբն Գրիգոր, որով մեք այժմ պարծիմք, այս է մեր հաւատ և խոստովանութիւն զոր ունիմք։

Պատրիարգն ասէ. Աւրհնեսցէ զքեզ Տէր ի Սիոնէ, զի զամենայնն ուղղապէս խոստովանեցար, բայց մեզ չէ աւրէն առանց մեծի ժողովոյ և հաւանութեամբ թողուլ զմեր բուն պողոտայն, թէ ոչ նեղեսցեն յայտնի և գաղտնի պատերազմաւք ի հակառակս եկեալ։ Ապա եթէ ոչ՝ եկեսցէ այն՝ որ բընոյն է գաղտնեաց և յայտնեաց։ Եւ զայս ասացեալ մեծաւ պատուով յուղարկեցին զՀայրապետն Տէր Կաւմիտաս ի Հայք։

Քառասուն գրող սուրբ պատիս զթուման, ի զծնաւղն իմ յիշեցէք ի Քրիստոս Աստուած Տէր։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԱՄԵՆԱԶՆՈՐՀ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ, ԶՈՐ ԳՐԵԱՑ Ի ՀՈՑԱԿԱՊ ԵՒ ՑԱԿԱՆԱՒՈՐ ՈՒԽՏՆ ԿՃԱՒԱՑ, ՎԱՄՆ ԿԱՐԹԵԱՑՆ ԱՆԻԹԵԼՈՑ ԹՈՆՐԱԿԵԱՆՑ ՑԱՆԵՍԻ ԵՒ ՑԱՄՐԵՍԻ, ՈՐ ԵԿՆ ԶԳԵՍՏԻՒ ՈՁԽԱՐԱՑ, ԵՒ Ի ՆԵՐՔՈՑ ԳԱՑԼ ՑԱՓԶՏԱԿՈՂ, ՈՐ ԵՒ Ի ՊՏՂՈՑ ԹԱՆՈՒՑԱՒ ԱՄԵՆԻՑ, ԶՈՐ ԼՈՒԵԱԼ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԳՐԵԱՑ ՍԱԿՍ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ Ի ՁԱՐ ԿԱՐԹԵԱՑՆ։

Տէր Հայր, զոր գրեմս, իբր ՀՀաւատալի համբաւ էր տեղեկութեամբ, զի թէպէտ և յորոց լուանն հաւատարիմք կարծէին, և չէր ինչ խէթ էարեաց քինիւ, ոչ այլ իմն ունի կերպարան հակաճառութեան, քանզի լուայ թէ յանյիշելի ամենազգիր մըծդնութիւն աղանդաւորութեան անիծելոց Թոնրակեանցդ ի միջի ձերում բարեխորհիցդ յիշատակի, և հիացայ՝ զարմացայ՝ ընդ այդպիսի անյարմար երեսս բանի, Աստուծոյ ատելեացդ՝ որ ասեն զՀէնչ ասել առաւել զայդ գիտնական անուն Մուշեղայդ, թէ տեղեկացեալ եմք ի մերմէ առաքեալ թղթաբերէ, որ չեն նոքա աւտար յառաքելաւանդ դաւանութենէ, և ըղձալ բաղձալ մեծաւ փափագանաւք հաւասարիլ մասին նոցա, և խառնիլ արեան ընդ կոտորեալսն ի սրոյ՝ վրիժախնդիր հեթանոս ամիրային Ապլվարդայ, որ արդարև՝ գաւազան սրտմութեան ի ձեռին Տեառն Յիսուսի։ Եւ թէ յո՞ր զերս հրամայէ Նկովել զոք, և զերջանիկ Տեառն մերոյ զԱնանիայի զզարմանագիծ հակաճառութիւն նամակին, զրարանականս ասել կամ անպատեհս, կամ ոչ Աստուծով խաւսեցեալը Արդ եթէ այդոքիկ ազդեցան ի ձէնչ, թողում ասել թէ հաւանեցան, և անխայեմ գրել թէ ճաշակեցան, ապա զլխաւորեցաւ առ ձեզ նախագրեալն, թէ Կերակուրժ

Նոցա ընդիրք վարդացան։ Բայում ինչ աստուածային և առաքելական ամենայն ինչ ուրացեալ է ի նոցանէ, և խափանեալ յաստուածային կարգաց։

Ա. Ձեռնադրութիւնն՝ զոր առաքեալքն ի Քրիստոսէ ընկալան։

Բ. Եւ հաղորդութիւն մարմնոյն նորա՝ զոր ասաց առաքեալ. եթէ զհացն հաղորդութեան ճաշակելով, զնոյն ինքն զԱստուած միացեալ ի մարմնի ընդունիմք և ճաշակեմք, զոր Սրբքառ հասարակաց կերակուր զսարսափելին զարդապետեաց։

Գ. Եւ զծնունդն հոգևոր երկանցն, որ ի ջրոյ և ի հոգւոյ, ծանուցեալ թէ որդիս Աստուծոյ գործէ, զուր ինչ լուալեաց զնոյն նոցին ուսոյց։

Դ. Եւ զաւրհնաբանեալ զայր կիւրակէին՝ յորում արար զլոյսն առաջին և կատարեաց զլոյսն յարութեան իւրոյ ի նմին, և զլոյսն կենարար գալստեանն նովաւ տնաւրինեաց, զայն պատկեր պաշտելի աւուր ընդ այլոցն զուգաթուեալ նոցին թարգմանեաց։ Արդ զո՞րս յայսցանէ զնոցա գիտեմք խափանեալս, ոչ առաքելական կամ աստուածականս։

Ե. Զծնրադրութեանն խորհրդական պաղատանս՝ զոր ինքն արարիչն ամենայնի խոնարհեալ կրկնեաց։

Զ. Թէ զաւազանն ուրացեալ ի նոցանէ, յորում ինքն Քրիստոս մկրտեցաւ։

Է. Թէ զհաղորդութիւն անմահութեանն զոր ինքն բոլորից Տէրն ճաշակեաց։

Ը. Թէ զմծղնէական անխտիր պղծութիւնն, զոր Տէրն ըզհայեցուածն արգելեալ խորեաց։

Թ. Թէ զնշանն երկրպագեալ զոր Աստուածն մարդացեալ յուսն իւր բարձեալ կրեաց իբր զփառս ինքեան և զիշխանութիւն։

Ժ. Թէ զմարդապաշտ ուրացութիւնն, որ գարշելի է և անիծեալ քան զկռապաշտութիւն։

ԺԱ. Թէ զինքնաձեռն քամահանաց քահանայութիւնն՝ որ սատանայի է նմանութիւն։

ԺԲ. Թէ զպսակին ամուսնութեան անգոսնութիւն, զոր Տէրն ինքեան սքանչելեաւք և մարրն իւրով Աստուածածնաւ յարդեաց և պատուեաց, զպսակն անգոսնեն, և զոր սիրով մերձենան յիրեարս՝ կատարեալ սէր համարին և յԱստուծոյ, և հա-

Digitized by Google

ՀՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ. ԹԷ՝ Աստուած սէր է և կսիրով միաւորիլն կամի և ոչ զկսակ։

ԺԳ. ԹԷ կերախայրեացն կատակերգական երգիծանութիւնն, զոր Աբէլ և Նոյ, և Աբրահամ, և Դաւիթ, և Սողոմոն և Եղիայ՝ աստուածային բարկութեանն ցուցին հաշտարարութիւն։

ԺԴ. ԹԷ որ զգլխաւոր աղանդին իւրեանց գարշութեանն յանդգնեալ Քրիստոս անուանեն, զոր Քրիստոս կանխաւ վկայեաց ԹԷ յարիցեն սուտ Քրիստոսք և սուտ մարգարէք, և այս է ասելն մարգարէին, ԹԷ՝ Խորհեցաւ անկգամն ի սրտի՝ իւրում ԹԷ ոչ իցէ Աստուած։ Արդ այդոքիկ են քննաւղիդ Մուշեղայ անխոտոր հաւատոյ առաքելականքն։

Արդ՝ զայսոսիկ հաւրեղբայրն մեր և վարդապետ, մեծաւ քննութեամբ խնդիրս արարեալ իբրեւ զԱստուծոյ ջատագով, և անդստին իբր զիմաստուն նախամարտիկ տապալեաց զառասպելաբան հայհոյութիւն անաւրինելոցն Թոնրակեանցն, ԹԷ ոչ մեք զանուն պղծոցն ի համբաւուց ի սակաւ ինչ լրոյ գիտէաք։ Արդ զի՞նչ պարգևս ընդրութեան տեսեալ ի գարշելին Կումբրիկոս, և կամ յիշատակ բարւոյ ի Սիմոն, և կամ յոյս ակնկալութեան ի Նեռն՝ որոյ նոցա են աշակերտեալք, որ զերախտիսն անպատում բարեգործին, չարչարանացն մոռացեալ, զնոսա կարդան ապաւէն՝ որ զնոցանէն ստացեալ։ Որք են շարք շանց, և գուժարք գողոց, և զունդք գայլոց, և դասք դիւաց, և ազինք աւազակաց, և կոյտք կերչաց, և բոյլք բարբարոսաց, և խումբք խաչահանուաց, և ժողովք չարեաց, և արք արեանց, և երամք թունաւոր աւձից, և վտառք մարդադէմ գազանաց, և կաճառք կախարդասարաս աղանդաւորաց, և ոչ միայն եկեղեցականաց, այլ և հեթանոսաց են անգոսնելիք։

Քանզի և այն հղաւր այր՝ խնդրող վրիժուց Նախատանացն Քրիստոսի, որ զանիծեալ զնախնիս Նոցա խայտառակամահ սատակեաց, զայս ինչ ասէր ցերկրորդն Ցամրէսի, ԹԷ՝ Քրիստոս յերիր աւուր յարեաւ, արդ մինչ դու զքեզ Քրիստոս անուանես, սպանանեմ զքեզ և թաղեմ, և դու զկնի Լ, աւուր կենդանացիր. ես գիտեմ ԹԷ Քրիստոս իցես, ԹԷպէտ այնքան աւուրքք բազմաւք յետոյ յարիցես։ Արդ նա մերձ էր և դրացի դառնացողացն մոլեգնութեան, և զայն լուր ի բազմաց ճառողաց կրթեալ էր, և Քրիստոսի ճշմարիտ յարութեանն ամենևին հա-

Digitized by Google

ատապայր, և զնոգայն այպն արարեալ իբր զարժանիս հենգնելոյ եթող յիշատակ բանից գովելեաց, քանզի և զայն Աստուած և ոչ երկրային խորհուրդ տնկեաց, հրամայեալ տնտեսեաց, նովաւ, չարաւ զչարիսն խրատեալ և կամ սատակեալ, որպէս զվիշապն ահագին հնդկային ետ կերակուր, և զՀրէայսն Քաղդէացւովքն խրատեաց, և զխաչահանուանն Տիտոսիւ և Վեսպիանոսիւ և Ադրիանոսիւ, դատեալ խորտակեաց։ Եւ զԵգիպտականացն ազգ Կիւրոսիւ կործանեալ կրկին կշտամբեաց, և մեծահեծան հարուածոց ասի նոցն ինքն Բելիար կախեալ ի տաճարին հրամանաց ահաւորին։ Արդ զևքն Աստուած գիտացին զՄիածինն և դատաւոր ամենայնի դաւանեցին. և պեղծն Սմբատ կրկին Սիմոն, իւրոցն դառնարմատ և որոմնաբոյս աշակերտացն զինքն ետ երկրպագել, որպէս մոգն այն Սամարացի և Մոնտանոս, և Պիւթագորաս, անգրական և հեթանոսային իմաստասէր։

Արդ ամենևին նուազս ի յոքունց և սակաւս ի բազմաց գծագրեցի, և մնամ յսել ի բանից ձերոց. քանզի առաջի է Տէրունական կանոնի սահման, Եւ ի բանից քոց արդարացիս, և բանից քոց պարտաւորեսցիս։ Այլ եթէ ընդ գրաբանութիւն նոցին զարմանայք, գիտեմք և զստանայ սաղմոս ասացեալ յաւր փորձութեան ամենափրկչին։ Եւ արդ՝ եթէ ոչ անէծս կըրկինս և նպովս բազմապատիկս ոչ արձանացուցանէք սկզբնահաւրն նոցա Սմբատայ և մեռելոց նոցա, և կախարդական կրաւնից նոցա և դաւանութեան նոցա, և զոր բարին կերպարանին կրկին կոկղանըս գրէք և առաւել ուրացութիւն վարկանիք, և յիմ նամակիդ ոչ նշանակէք, որով գձեզ անարատ յարմար է առնել, և զգայթակղութեանն խէթ տարագրել և գիտէք և իմանայք եթէ վասն ձեր բարւոյ և խաղաղութեան և սիրոյ գրեցի և հոգացայ, զի մի՛ ամրոգդ այդ ապաստանի ի պահոցաց դորին նենգեսցի։

Ապա դուք ձե՛զէն պատուականութեան ձերում մա՛ն եղէք, զի այդ Մուշեղ՝ վարդապե՛տ զինքն գրէ, պարտ է սխոյեան լինել ընդդէմ հակառակորդին, և զխրատն հատեալ կարկատել, և զթերին պատսպարել, և խաւարելոյն լո՛յս և աղ և խրատիչ լինել ըստ աստուածային կանոնին։ Ապա թէ լոյսդ կարծեալ ի դմա խաւար է ստուգապէս, աւձահար թոմիչ է, և անիմաստ դեղատու, զի գիտութիւն ոչ աւժանդակեալ մատամբն

Digitized by Google

Աստուծոյ, ձա՛յն է անընդրական անյարմարապէս ապդեցեալ և պատգամ է նենգական խափանիչ խաղաղութեան։ Եւ արդ ո՞ւր զիտութիւն դորա ասելդ թէ՝ յո՞ր գրոց ունին նպովել զոք. Պաւղոս և զՀրեշտակն աւտարի ոչ խորհող, նզովեալ, և զնոյն կրկնեալ ոչ պատկառեաց, և Դաւիթ զխոտորեալսն ինքն անէծ կշտամբութեամբ ստորագրեաց։ Եւ Տէրն զբնաւ ահեկանացն դասալքութիւնն ասէ, Երթայք յինէն անիծեալք. և զՀերձուածողական չարափառութիւնն ի նեագ դաւանութեանն որ զինի աւետարանին կանոնեալ պաշտի, կրկին նզովեալ ի սուրբ ժողովոյն Նիկիայ՝ ընկալաք և ուսաք, և դարձուած թղթոցն պատասխանեաց Պետրոսի և ի Սահակայ զորոշեալսն ի Քաղկեդոնականացն նզովական բանիցն խրատեաց, և Գիւրղի Աղեքսանդրացւոյ գլուխք նզովականացն հատուածոց ընդդէմ Նեստորի, և հենատիկոն թուղթն Զենոն կայսեր որ նզովէ յանուանէ զբնաւ հերձուածողսն։ Զի թէ որ ի մասնէ ունի թերութիւն՝ պատուիրանաւ պարտիմք նզովել, որչափ առաւել զբազմայերձուած ժողովոյն զդաս, որ կտրեալ են ի Քրիստոսէ, և կապեալ միացեալ ընդ սատանայի։ Եւ արդ, Տէր Հայր, մի՛ դժուարիք ընդ բանս գրոյդ, և զանխարդախ սէրդ ատելութիւն վարկանիք, զի սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ յայսոսիկ, և կամիմք զձեզ աւ՛գիծս լինել, և զՀաւրն Անանիայի, զլիագիտութեամբ զմատեանսն որ ընդդէմ հերձուածողացն հոգս տարեալ գրեաց, և դուք գրել հրամայեցէք։

Digitized by Google

ԹՈՒՂԹ ԿՈՍՏԱՆԴԵԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ ԶՈՐ ԴՐԵԱՑ ԱՌ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐՆ Ի ՑԱՍՏՈՒԱԾԱՊԱՀ ԴՂԵԿԷՍ, Ի ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑՍ ՀՌՈՄԿԼԱԷՍ, Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆ ՍԻՍՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹԻՆ ՈՐ Ի ՊԱՊԷՆ ՀՌՈՄԱՑ ՌԵՐԱԻ ԱՌ ԹԱԳԱՒՈՐՆ ՀԱՅՈՑ ՀԵԹՈՒՄ, Ի ՁԵՌՆ ԼԻԿԱԹԻՆ ՈՐ ԿՈՉԷՐ ՏԻՄԱՆՉ, Ի ԹՈՒԻՍ ՀԱՅՈՑ Ի ՈՂԵ. Ի ՁԵՌՆ ԱՐԴԻԻՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ ՑԱՐՄԱՐ ԻՐԻՍ։

Սուրբ թագաւոր ամենայն Հայոց, յառաքեալ գրոյ քո, ծանեաք զքոյին հրամանն, զոր հրամայել էիր քաղցր և կակղագոյն առնել զպատասխանին թղթի պապուն և նրբատես առնդ Տիմանչիդ, որ առաքեցաւ ի Պապէն գտանել զմեզ յետ Ռ, և Մ, և ԽԸ ամի գտանելոյս մերոյ ի Տեառնէ։ Կարծեն զՀայոց եկեղեցին աղքատ ի գիտութենէ. և յայս գիրս գտաք ծԵ, սխալ և անընդունակ բան, խառնեալ ընդ ճշմարիտն. է՞ զոր իմանալով և ի չար կամաց են գրել, և է՞ կի չեն կարացել տեսանել զմիւրն։

Յառաջ որ գրեալ է թէ Հռոմայ աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի կապելոյ և արձակելոյ և ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք։ Զայս ընդէ՞ր ոչ էած զմտաւ, զի յորժամ աբտացան այսպիսի առաքեալքն թէ ո՞ իցէ ի նոցանէ մեծ, սաստեաց Տէրն և ասաց. այդ հեթանոսաց և անհաւատից է բան, այլ ի ձեր միջի այդ ոչ լինի։ Արդ դոքա լրջութեամբ սուտ կամին առնել զՏէրն, և Յովհաննէս աւետարանիչն ասէ թէ, յետ յարութեանն փչեաց յամէն առաքեալսն և ասաց, Առէք Հոգի սուրբ, թէ ուրուք թողուցուք զմեղս թողեալ լիցի, և թէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։ Այս այլ ի՞նչ

է, քան իշխանութիւն կապելոյ և արձակելոյ, և յ Թ, աթոռն զմէկն ետ Պետրոսի։ Գ, առաքեալ յԹ-ից, և Գ, յեւթանասանից ի Հայք կան, պատեհ է, որ դոքա կապեն զՀայք։ Եւ Պետրոս նախ ի Կեսարեայ Փիլիպեան հաստատեաց եկեղեցի, և ապա յԱնտիոք, և յետոյ ի Հռոմ. ընդէ՞ր եղև Հռոմ առաջին։ Թէ ըզ-Պետրոս իւրենք սպանին ի Հռոմ, զՊետրոսի Աստուածն Հրէայքն սպանին յԵրուսաղէմ։ Երուսաղէմ ընդէ՞ր չէ հրամանատու ամենայն երկրի։ Եւ այսպիսի բանս դոքա կու տան ասել։ Թէ ոչ. Պետրոս և իր բանքն յետ Քրիստոսի է մեզ, իսկ դոցա վարքն և բանքն չէ Պետրոսին։ Եւ մեք վասն հարցն մերոց երդմանն սիրոյն և ուխտին, նոցա չարին չեմք հաւատացել և զնոցա խաղատն ջանացել եմք ողջացնել։

Երկրորդն՝ որպէս զայն՝ որ կու ասեն զՀոգին ի Հաւրէ և յՈրդւոյ, որ պղտորումն և շփոթումն առնէ մտացն լսաւղին։ Բայց մեք լսելով զնոցա բամբասանքն յայլոց ապդաց, ասցել ենք թէ չկայ վնաս և ի գրոց է բանն. և իրաւ եմք ասցել, զի իմաստնոյն միտքն ողջ մնայ ի լսելն։ Բայց ախմարացն ցաւէ՛, յաւ չասե՛լն է, զի մի է պատճառն Հայր, միոյն ծննդեամբ և միոյն ելուղութեամբ. և պատեհ է, որ մի լիցի պատճառ յատուկ, յստակ, մեկին, և պարզ։ Եւ Հոգի Որդոյ ասի, զի Որդւով բաշխեցաւ պարգև ի Հոգւոյն, որպէս հայրենի բարիքն։

Երրորդ սղալանքն, որ կայր ի թղթիս Բ. բնութիւն են ասցել զմարդ, որ թէպէտ և է երկու, անմարմին և մարմին, Հոգի և մարմին, այլ չեն ասցել ոչ եկեղեցի և ոչ արտաքինքն երկու բնութիւն զմարդն, այլ մէ՛կ, զի թէ առանձնանան՝ պակասեաց բնութիւնն, զի ոչ զՀոգին է ասցել մարդ, և ոչ զմարմինն, զի ի մի բնութիւն կապեաց զնա արարողն. և զայն իմանաս դու։

Զորրորդն որ ասցել են, թէ միշտ, նոր ստեղծանին Հոգիք հանապազաւր, և թէ այդպէս է, սուտ է Մովսէս որ ասաց, կատարեաց Աստուած զամենայն և հանգեաւ։ Ասէ զայս Նիւսացին Գրիգոր, թէ հնգիցս բիւր, մինչ զսակաւն ասացից, ամն աւր՝ մարդ ծնանի, թէ նոյնքան Հոգի ստեղծու Աստուած յաւուրն։ Այլ թէ ասեն և մարմինք նոր ստեղծանին, զի զայս այլ են խայտել, սուտ են։ Զի ի ծնաւղացն ծնանին մարմինքն, և ոչ նոր, և Հոգիք ոչ յառաջ ասին ստեղծանիլ մարմնոյն, և ոչ զկնի, և ոչ ի Հաւրէ և ի մաւրէ կտրեալ. այլ անձառելի է վա-

Digitized by Google

սքն նմա բանն, զի պատկեր Աստուծոյ է, քանզի որքան զկերպարան սկզբնատպին ունի պատկերն, ապա է պատկեր, զի թէ մեր հոգիս գիտելի էր և Աստուած անգիտելի, սուտ էր բանն, թէ պատկեր է Աստուծոյ հոգին, այլ դոցա լրբութիւն է զայդ ասելդ։

Հինգերորդ խալատն՝ այն է որ զՄարիամ կին և կոյս է գրել, և ոչ երբէք Աստուածածին է յիշել, որ յայտնապէս Նեստորին է։

Վեցերորդ և մեծ հերձուած որ գրեալ է թէ եղև կատարեալ աստուածութիւն հաւասար Հաւր, զի ի վերայ Աստուծոյ Բանին եղեալ ասելն Արիոսին է, զի աստուածութիւնն որդւոյ, ոչ է եղելութեամբ։

Եւթներորդ սղալ գրեալ է թէ՝ Եղև մարդ, որով փոքր է քան զՀայր։ Եղևն պատշաճի մարդկութեանն. բայց ասելն փոքր քան զՀայր մեծ վնաս է, զի պակասն սան զՀայր, չէ Աստուած, եթէ այդպէս է, և ոչ կարաց ի փառս ածել զմարմինն և ոչ միաւորեցաւ ընդ Աստուծոյ, և ոչ աստուածացաւ ըստ նոցա կարծեացն, և թէպէտ ինքն ասաց, Հայր իմ մեծ է քան զիս, չասաց թէ ես փոքր եմ քան զնա, և մեծն պատճառին միայն է, զի նա ի Հաւրէ և ոչ Հայր ի նմանէ, և այն առ անհաւատ Հրէայսն ասացաւ, որ հակառակ կարծէին զնա՝ Հաւր, զփառսն ի Հայր վերարերէր ամենայն ուրեք, և ասէր թէ՝ Հակառակն փառս անձին իւրոյ խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս այնորիկ՝ որ առաքեացն զնա, նա ճշմարիտ է։ Նաև զՀայրն փառաւորելով, զանձն փառաւորէր, զի Որդի էր մեծութեան նորա, այլ որպէս դոքա յանդգնին. պակասեաց Որդի՝ մարդեղութեամբն, և վկէ՞ն եղև նմա, և զղջացեալ լինի ըստ նոցա, որպէս ամենայն զրկեալ, այլ ըստ ճշմարտութեանն և ըստ մեզ հարստութիւն և ճոխութիւն Որդւոյ՝ եղև մարդեղութիւն նորա և յաճախեաց փառաբանութիւն նորա և խոստովանութիւն և Հաւր և Հոգւոյն սրբոյ, զի որքան անմարմին էր, երկնայինքն միայն փառաւորէին զնա, իսկ մարդեղութեամբն ամենայն ազգ և լեզուք ամենայն. թէպէտ նա ոչ վասն իւր փառաց, այլ վասն մեր մարդացաւ, զի և մեր փրկութիւն է փառք նորա։

Ութներորդ վնասն. Բ. բնութիւն. և Բ. կամք Քրիստոսի. զի յառաջ զմարդն Բ. բնութիւն ասացին, և արդ զՔրիստոս Բ. բնութիւն, որ ըստ իւրեանց անմտութեանն. Գ. պարտ էր ա-

սել ըստ կարգի բանիցն իւրեանց, և թէպէտ պայն ընդ խալատ ասեն ասացեալ. սակայն Բ. բնութիւն ասելն, ոչ միայն զԱստուածածինն՝ մարդածին բերէ, և զխորհուրդն մարդոյ միայն արիւն, այլ և ի յԵրրորդութիւնն մուծանեն Բ. բնութիւն և Բ. կամք, որ է մեծ մեղք։

Ինն սղալն, գրել են, թէ Զարդարան միայն եհան ի դժոխոց և զայլն եթող անդրէն։ Ապա ընդէ՞ր աղաղակէ եկեղեցի թէ աւերեաց քակեաց քանդեաց զդժոխսն, ապատեաց զհոգիսն ի սատանայէ, զի թագաւորն արարածոց մահուամբն ի բանդն երթեալ կալանաւոր մնայր անդ։ և ո՞ւմ ասէ մարգարէն՝ Դարձցին մեղաւորք ի դժոխս, երբ ի տեղն կան։ Եւ զի՞նչ է դժոխքն, եթէ ոչ իշխանութիւնն սատանայի։ Վերայ հոգւոյն յորմէ ընկէց զնա Տէրն, և թէ ի տեղւոջ ասեն. ո՛չ հակառակիմք, սակայն՝ Աւերեաց Տէրն զդժոխսն, գրեալ է՝ և յաւերն ոչ ոք բնակէ, և եթէ նոքա թողան ի տեղն, յայտ է թէ և յայնմհետէ և յաւիտեան, անդ տանին զհոգիս մեղուցելոյն դևքն, և Տէրն ինչ ոչ արար. զոր մի՛ լեցի մեզ ասել։

Տասն սղալն, գրեալ են թէ, Յետ յարութեանն և չարչարանացն, առաւել փառաւորեցաւ մարմինն Տեառն։ Յայտնի է ասաւղն բանիդ, որ ասաց թէ՝ վասն վարձու չարչարանացն, փառաւորեցաւ յետ յարութեանն։ Այլ մեք խոստովանիմք ընդ յղանալ բանին յարգանդ Կուսին և ի խառնիլն ընդ մարմնոյն փառաւորեցաւ, և այլ ոչ յաւելաւ նմա փառք, զի փառք մարմնոյն աստուածանալն է, զի թէ աստուածացաւ, և աստուածացեալ ծնաւ, ըստ որում Աստուածածին է ծնաւղն, ապա այլ ի՞նչ մնաց նմա ի փառաց։

Տասնումէկ սղալն, Զմկրտութիւնն յերկուս են հատել. քահանայն մկրտէ, և եպիսկոպոսն մեռոնէ և հոգի տայ։ Թէ այդպէս է որ քահանայն հոգի չկարէ տալ, ապա զի՞արդ զհայն և զգինին մարմին և արիւն Աստուծոյ գործէ, կոչելով զՀոգին սուրբ. ո՞չ ապաքէն մի և նոյն է խորհուրդ զախտի ծնունդն՝ անդամ Քրիստոսի, և զբոյսն հոգոյ՝ մարմին և արիւն Աստուծոյ առնելն նոյն հոգւովն՝ որ զԿոյսն մաքրեաց, և զՅորդանան սրբեաց, և զի՞արդ կարէ թողութիւն տալ խոստովանողացն Հոգւովն սրբով՝ քահանայն։

Երկոտասան սղալ, զոր մոռացեալ են յեւթն քահանայագործութենէն, Զմեռոն աւրհնելն, որ է յատուկ գործ Եպիսկո-

պոսի, զի որպէս քահանայն վերագոյն աստիճան ունի սարկաւագի՝ զքահանայութիւնն, և եպիսկոպոսն երկոքումբ գործովքն կոր գործէ, վերագոյն գտանի քան զքահանայն, քահանայ աւրհնէ և մեռոն կատարէ երկնաւոր խորհրդով, որով աւծանին ամենայն շնորհընդունակ աստիճանք և սպասք եկեղեցւոյ։

Երեքտասան սղալ, որ Զերրորդ և չէորրորդ և զևս աւելին ամուսնաւորքն աւրինաւորք են գրել, որպէս կառաջինն, և անդատապարտք և առանց խղճմտանաց։ Եւ զի՞արդ իցէ անաւրէնութիւնն աւրինաւոր։ Աստուած ասաց եղեցին երկուքն ի մարմին մի, և Ցիմանչն կու ասէ թէ Ե և Զ ի մարմին մի։ Ճ և ԺԸ Հայրապետքն զերկրորդն ընդ խղճմտանաւք դնեն, և ի նոցունցն զԳ և զԴ, և զևս աւելին առանց խղճի մտաց, թող զայլ սուրբ ժողովն, և զմեծն Աթանաս և զայլն, որք Հոգւովն սրբով, և սքանչելաւք վարէին, որ և ամենեքեան պնդեցին չլինել քրիստոնէից բոլանաց, և առանց լծոյ թողեալք և դրքա զայդ ասեն, և նոր կտակ մեզ գրեն։ Ամ է՞ր չասեն թէ բովանդակդ առաջնորդացդ չէ մեղք, նա ժողովրդականացն մէկ ունելն, ինչ մեղք է. բանգ ի յայդ է եկեալ, որ ում պիտի դոցա լսէ, և ո՞ւմ պիտի նոցա լսէ, որովք Աստուած խաւսէր։

Չորեքտասան սղալ, որ ասեն, Մինչև յաւրն դատաստանի առնուլ զվարձ արդարոցն որք դասին ընդ հրեշտակս, և անապաշխար մեռելոցն ի ներքոյ տանջանաց մատնել և չարչարիլ, զոր կոչեն Բիրկաթոր. ապա Քրիստոս յի՞նչ է գալոց ի դատաստան. երբ ի գալստեանն նորա վճարեալ է ամենայն ինչ։ Եւ զի՞նչ անիրաւ դատաստան քան զայն մարմնով արդարանալ կամ մեղանչել, և առանց մարմնոյ փառաւորիլ հոգւոյն կամ տանջիլ։ Չլլ մեք գնախամբրումն այսպէս ասեմք և գնախահանգչելին, թէ խոստովանութեամբ կատարեալ հոգիքն թէ արդարք, թէ մեղուցեալք ի միում տեղւոջ կան, մեղուցեալքն տանջին միայն վախելով և տրտմութեամբ, զի գիտեն զինքեանս, և արդարանան խորհրդով եկեղեցւոյ և քաւին և սրբին յիշատակաւքն յետնորդաց և ազաւթիւք և պատարագաւք, և համարեալ է երկիւղն և տրտմութիւնն նոցա տանջանք, և արդարոցն խնդութիւն յուսով առաջիկայ երանութեանցն, և վստահութիւնն՝ զոր ունին առ Աստուած. այն համարեալ է նոցա նախահանգիստ. զի իմացականն հոգւոյն է, ճանաչեն ո-

բոց արժանի են և խնդան, և տրտմին անդ ուր կանն. այլ ցկատարեալ փոխարէնն ոչ ունին, երկաքանչիւր կողմանքն։ Բայց այնքան միայն որպէս իցեն ծ այր ի միում տան արգելեալք ի ժամ յերեկոյին, հինգն ի նոցանէ ակն ունին ի վաղիւն պսակի, և հինգն հատման գլխոցն, և ոչ նմանապէս անցուցանեն նոքա զգիշերն, այլ խնդութեամբ և տրտմութեամբ բաժանեալք։ Այս հանգստեան և տանջանաց վախճան է, և գալուստն է երկրորդ, և ապա այն լինի որ ասէ Տէր. Երթիցեն նոքա ի տանջանս յաւիտենականս, և արդարքն ի կեանսն յաւիտենականսն։ Ասացած է ապդ մի այլ, որ Ռ. ամաւ յառաջ յառնեն բուն արդարոցն քան զանապաշխար մեղուցելոցն, բայց ոչ է ընկալած։

Հնգետասան սղալ, այս է որ գրեալ են, թէ Այնք՝ որք ընդ հրեշտակս դասեալք են, և որք ի Բիրկաթորն՝ միապէս փառաւորին, և անհաւատքն և մահուչափ մեղուցեալքն՝ ի միում տանջանս կայցեն։ Եւ մեք ուսեալք ի գրոց ասեմք, թէ չափ և համար ոչ գոյ զանազանութեան փառացն արդարոց՝ ըստ պէս պէս և բազմատեսակ առաքինութեանն, և ազգի ազգի ճանապարհացն՝ զոր Տէրն հրամայեաց՝ Ի տան Հաւրն բազում աւթեւանս լինել. և Պաւղոս ասէ, Այլ փառք արեգական, և այլ փառք լուսնի, և աստղ քան զաստղ առաւել է փառաւք. վասն զանազանեալ հատուցմանն ասելով զայս. զամենաճառագայթ երանութիւնն՝ զոր առնուցուն ըստ գործոց իւրեանց։ Նմանապէս և տանջանացն է որոշումն և զանազանութիւն, ոմանց հուր, ոմանց հուր և խաւար, կիսոց դժոխք, և կիսոց յատակ դժոխոց, ոմանց որդն և հուր, և ոմանց սառամանիք և տարտարոսք. և կիսոց յոյժ սակաւ պատիժք, և այլոց ոչ տանջանք և ոչ հանգիստ, և զոքա երկուք միայն են ստուգել։ Իսկ մահուչափ մեղք, մեք ասեմք թէ այն է, որ թէ ոք արտաքոյ աւրինաց առնէ ոչ ինչ մի, և ասէ թէ այս փոքր է, որ ոչ համարի թէ մեղք է փոքր կարծելով. ոչ խոստովանի և ոչ ապաշխարէ, թուի թէ այդ իւրեանքդ են, որ լոյծ կենաւք կեան, անպահք և խառնակեացք, և ապաշխարութեան փոյթ ոչ առնեն. թո՛ղ երթան սրբեն զիւրենք, և հանեն զգերանս իւրեանց, և ապա հային ի մեզ։

Զայս ամենս կամէաք ասել ընդ իւրենք. և ի քո հրամադրագդ արգելաք, և թէ չանացել էին կարկատել զիւրեանց

բանն և կեցնել, և մեզ չէր պակաս Աստուծոյ ողորմութեամբն ճշմարտութիւնն զոր տուեալ էաք ի դէմ։ Դուք թէ պատեհ տեսնոյք յայտնեցէք իւրենց զոր կամիք, ապա կեցիք մինչ զամէն՝ զոր կամին ասել՝ ասեն, և մեզ իմացնէք որ գայն այլ իմանանք։ Թող բերեն առ մեզ զՊետրոսի դաւանութիւնն, և զՍեղբեստրոսին և զԿեղեստիանոսին և զՑուլիոսին, զայդպիսեացդ առաջնորդաց խոստովանութիւնդ թէ չընդունիմք. յԱստուծոյ առնումք զրանադրութիւնն և ի նոցունց։ Ապա զիւրեանց արուեստակեալ առասպելն իսկի չընդունիմք, այլ և արհամարհեմք, և չիշխեն ի վերայ մեր ամենեին, և ոչ վասն դոցա ելնեմք յաշխարհականացն սիրոյ. և յաղաւթելոյ ոչ պակասիմք վասն դաշանցն հարցն մերոց սրբոց. և խաղաղութիւն կալցուք ընդ Աստուծոյ և ընդ սուրբ և ընդ անրիծ հաւատս նորա։ Եւ ի գառնալգեցիդդ զգուշացուք, որ ընդ Աստուծոյ և ընդ այնպիսի թագաւորին իւրեանց շմորեն, կամին և ընդ մեզ շմորիլ. իւրենք գիտեն։ Թէ ընդ քեզ հաւատ հարցանեն և պահանջեն, դու հրամէ. թէ ես զիմ առաջնորդացն ունիմ հաւատս և զիմ եկեղեցւոյն. և նոցա պարտիմ համարս տալ և ոչ ձեզ. Ո և Ի գաւառ են Հայք յԵկնկայէն ի վեր, և կան որ աւեր են և կան որ ի ծառայութեան. թէ կու ցաւին ընդ Հայոց, թող երթան ազատեն, և խաւսին ընդ Հայոց վարդապետարանն և ընդ դպրատունսն, որ ոչ բլայթով և խաբէութեամբ ուսուցանեն և ուսանին՝ որպէս դոքա, այլ ճշմարտութեամբ և հիմամբ առաջնոցն, և ապա գան առ մեզ։ Թէ կարեն զնոսա փոխել, մեք պատրաստ եմք, որ ոչ թողումք զճշմարտութիւնն յաւժարելով զկնի բազմաց ի կորուստ երթալ. թէ ոչ թող իսաւն առնեն և յղարկեն՝ թէ որպէ՞ս խոստովանին Հայք։ Ողջ լեր կրկին թագաւորել, թագաւոր աստուածասէր։

Digitized by Google

ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՑ, ԶՈՐ ՑԱՑՏՆԵԱԼ Է ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԸՐԱՆՑ ԱՒԳՏԱԿԱՐՔ՝ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԺԱՄԱՆԱԿՍ։

Ա. Պատմեաց մեզ Հայրն մեր և Հայրապետն սուրբն Պետրոս, եթէ սկիզբն աղանդին Քաղկեդոնի՝ Նեստորիոս եղև։ Քանզի էր ես, ասէ, ի Կոստանդնուպաւլիս, ի տաւնի սրբոց քառասնիցն, և էաք յաւագ եկեղեցին. Հայեցաւ Նեստոր ի պատկեր Ցիրամաւրն և ասաց. Ո՞վ Մարիամ, մի՛ պարծեր եթէ զԱստուած ծնար, զի դու մարդ ես, և մարդ ծնար, որպէս ասաց քահանայն իմ։ Եւ առ ժամայն հարաւ ի դիւէն և զարկաւ գգետնի. և բարձեալ զնա սարկաւագացն և տարան յարկս իւր, և այս եղև սկիզբն պղտորման եկեղեցւոյ։ Թէ և սակաւ մի լռեաց Նեստոր յետ պատուհասին, այլ ոչ եթող զանաւրէնութիւնն։

Բ. Պատմեաց ինձ և նոյն սուրբ Հայրն իմ վասն Պլակիանոսի Ուռհայեցւոյ, որ էր սուրբ ճգնաւոր և ունէր հոգի մարգարէութեան, եթէ լուաւ նա զհերձուածն Հիբասայ և յանդիմանեաց զնա, և ոչ լուաւ նմա։ Եւ զայրացաւ սուրբն և եկն ի Փղիշտ, և կայր անդ լռութեամբ. և գայր առիս ի Գազաւր ըստ աւրէ վասն հոգևոր իրաց ինչ։ Եւ յաւուր միում եղև ի զարմացման ժամն ինչ և իմացաք եթէ երևումն ինչ եղև նմա, և հարցեալ մեր զպատճառն յետ պանորիկ և ասաց. Ցառնէ թագաւոր յետ Է, ամի Մարկիանոս անուն, և առնէ ժողով և հատատէ զՆեստորին, և կրեմք ես և դու վիշտս և ի նոյն կատարիմք։

Գ. Դարձեալ նոյն սուրբն Պլակիանոս յաւուր միում եղև ի տեսլեան և ասաց. Վա՜յ Պողբեր Վա՜յ Պողքեր. և ժողովեցան բազումք հարցանել և ասէ. Պոլքեր՝ որ ի կուսանաց վանս կայր

Digitized by Google

հաւատաւոր, և յետոյ կին լեալ Մարկիանոսի թագաւորի, նուիրեաց զանձն Աստուծոյ, պոռնկեալ անկանի յԱստուծոյ, և լինի կործանիչ ուղղափառութեան։

Դ. Պատմեաց նոյն պրն Պլակիոս, եթէ գնայի ես երբեմն յԵրուսաղէմ և գտի անդ զսուրբն Աստուծոյ զԵւելիոս եպիսկոպոս ճգնաւոր և առաքինի. և սուրբն Պանփիլէ սարկաւագն աշաւէր ի սուրբ Գողգոթայ, և եղև ի զարմացման, և յետ աղաւթիցն ասաց. Եղբարք, այս Եւելիոս որ պատուեալս է յամենեցունց, լինի ժողով ի Քաղկեդոն, և ընկենուն զսա յաքսորըս վասն ուղղափառ հաւատոյ, և յայսոսիկ մեռանի։

Ե. Դարձեալ նոյն սքանչելին Պլակիոս յաւուր միում ասաց ընդ հայրն մեր Պետրոս և Յուսէփ ներբինի. Այժմ ընթերցարուք զգրեանդ, զգուշացուսջիք զհաւատն Քրիստոսի՝ զոր յանձնեաց ձեզ. զի գան աւուրք յորս ոչ պարապիք ի հալածանացն. և ասէ ցսուրբն Պետրոս. Մեծ տրտմութիւն կրելոց է եկեղեցի սուրբ յետ աւուրց, և յորժամ լինի յիշեցէք զապաքէն։ Եւ ինքն սկսաւ աղաւթել. Տէր իմ Աստուած Յիսուս Քրիստոս, մի՛ տանիր զիս ի ժամանակն յայն, ոչ փախչիմ ի հալածանաց, այլ ոչ կամիմ տեսանել զանարգանս սուրբ եկեղեցւոյ, արդ որպէս կամիս առ զոգի իմ յինէն և ուր կամիս ժողովեա զիս։ Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ գնալ նմա ի տեղի իւր, և կալաւ զնա ցաւ, և պատահեաց նմա այր մի սուրբ, և Աստուծոյ կամեցեալ լնուլ զաղաւթսն Պլակիոսի, անկեալ առաջի նորա, և ասէ. Հայր յիշեա զիս յաղաւթսն, և վճարեցաւ։ Եւ ապդ արար այրն մերձակայ գեղջն, և եկեալ տարան զնա և պատուով թաղեցին։

Զ. Պատմեաց մեզ Յովհաննէս քահանայն Աղեքսանդրացի, եթէ մինչ մանուկն էի ես, կամեցայ գնալ ի մեծ քաղաքն Ալատիս, յուսումն իմաստասիրութեան, և մտի ի յայր մի՝ ուր մարգարէն մեռեալ էր և սկսայ աղաւթել և խնդրել զկամս Աստուծոյ՝ բարեխաւսութեամբ առն Աստուծոյ։ Եւ եղև առ իս ձայն և ասէ. Որդեակ, չկայ խաղաղութիւն, չկայ ժամանակ բարւոյ, զի յառնէ թագաւոր Մարկիանոս անուն և առնէ ժողով, որ ուրանան զմահն Աստուծոյ խաչիւ, և ասեն մարդ խաչեցաւ, և յառնէ Պատրիարգ Դէոսկորոս անուն, որ կենայ ընդդէմ աղանդին և ի նոյն մեռանի վկայութեամբ, և շփոթ ժողովոյն ոչ դադարէ մինչև ցնեռն։

Digitized by Google

Է. Հայրն Զենոն ի Քրպրու գեղջէ, Փղշտացի, ասաց ցՀայրն Ստեփանոս, թէ կամիս յաւտարութիւն գնալ՝ գնա. և եթէ կամիս բարի ինչ առնել արդ՝ արա. կի ժողով լինելոց է ի Քաղկեդոն խռովիչ եկեղեցւոյ։ Եւ ինքն խնդրեաց ի Տեառնէ մահ, և վճարեցաւ ըստ սրտի իւրոյ։

Ը. Պատմեաց Հայրն Անակտիոս Պանփիւլացի, գլուխ եղբարց բազմաց, եթէ այր մի սուրբ բնակէր յառանձնական խրճիթս, եկն առ նա սատանայ և ասէ ցնա. Հնազանդեա ինձ, և նա ասէ. Մի՛ բարի քեզ։ Եւ ասէ սատանայ. Հնազանդիս. ահա առնեմ ժողով չի ամենեքին հնազանդին ինձ։ Եւ զայս ասաց զի լցին զկամս սատանայի ասել՝ թէ մարդ խաչեցաւ վասն աշխարհի, չի նա հաւանեցոյց։

Թ. Ի նմին ամի յորում լինելոց էր ժողովն Քաղկեդոնի, խաւարեցաւ արեգակն, և տեղեաց աւդ քարինս և հողս ընդ երկիր, և էին քարինքն որպէս ձեռագործս մարդկան, և որք առին զքարինս ի ձեռս իւրեանց կուրացան յԵրուսաղէմ և ի Փղիշտ։ Այլ Եւսեբի առաքեաց ի Կոստանդինապալիս առ Եւդոքսիայ, չի անդ ոչ եղև, և գուշակեաց թէ պատճառ խաւարման եկեղեցւոյ լինելոց է։ Իսկ Պետրոս և Անդրէաս աշակերտքն իւր վկայեցին, եթէ ի լինել ժողովոյն Քաղկեդոնի կուրացեալքն այն աւծանէին արեամբ սպանելոյն զաչս իւրեանց վասն ուղղափառութեան, և լուսաւորէին ի փառս խաչելոյն Աստուծոյ։

Ժ. Ի նմին ժամու յորում եդին զթագն ի գլուխն Մարկիանոսի, խաւարեցաւ արեգակն, և ասաց Մարկիանէ, Նշանս այս է, որ մինչև յիմ թագաւորութիւնս խաւար էր հաւատս և արդ լինելոց է բարութիւն և լոյս հաւատացելոց, մի՛ ինչ տրտմիմք ընդ պատահմունս։

ԺԱ. Եկեղեցւոյն՝ որ կայր ի տեղւոջ Համբարձմանն Տեառն, կայր խաչ մի ոսկի ի վերայ գումբայթին, որ ի լինել ժողովոյն Քաղկեդոնի յանկարծ այրեցաւ և փոշի եղև, և գրեցին ի Կոստանդնուպալիս, և առաքեցին խաչ պղնձի դնել ի տեղւոջն։ Եւ յորժամ եղև ժողովն՝ վիճէին ընդ միմեանս ի Կեսարիա, թէ մարդն Քրիստոս խաչեցաւ, և եղև պատարագն Նոցա միս և արիւն մարդոյ, և ոչ կարացին ճաշակել, և պահեցաւ առ բազումս ի վկայութիւն։

ԺԲ. Պատմեաց մեզ Հայրն Եսայի, եթէ ասաց Հայրն Պաւղոս Եթովպացի որ Ճ և Ժ, ամաց էր ի Տէր. եթէ զկնի Ի ա-

Digitized by Google

մաց մեծ շփոթ լինի եպիսկոպոսաց ի ձեռն Մարկիանէ, որ թագաւորէ Զ. ամ, և յետ այնորիկ լինի սակաւ մի խաղաղութիւն և դառնան վերստին ի նոյն չարիսն, մինչև ի սուտ Քրիստոսն։

ԺԳ. Ասաց Հայրն սրա սիրեաք *) մեռեալ են, որ յանդիպան *) Աղեքսանդրի էր. թէ գնացի ես առ Հայրն Եսայի և նա ունէր ի ձեռն իւր Սիրա, և միտք իւր վերացեալ էր. և յամեցի առ նմա, և պատկառեալ իմ դարձայ, և կոչեաց զիս և ասէ. Նի՛ստ և գրէ՛, թէ սուրբն Տիմոթէոս՝ որ այսաւր յաքսորս է, յետ սակաւոյ դառնայ և կանգնէ զուղղափառութիւն զերկուս ամս, և ննջէ. և յետ նորա լինի սարկաւագապետն իւր եպիսկոպոս, և յաւուրսն յայնոսիկ լինի պատառումն մեծ, որ ոչ ողջանայ մինչև յերևումն սուտ Քրիստոսին։

ԺԴ. Պատմեաց Հայրն Պաւղոս անապատաւորն և ասէ. Ոմն ի հարանցն տեսանող մարգարէ՝ տեսանէր ժողովեալ զամենայն եպիսկոպոսս երկրի, որ վառէին թոնիր, և կալեալ լուսապատկեր երիտասարդ մի, և ընկեցին զնա ի թոնիրն և ծեփեցին, և յետ երից աւուրց տեսանէր կենդանի ելեալ զերիտասարդն, և ասէ ցնա, Տէ՛ր ո՞վ էին որ ընկեցին զքեզ ի հուրն, և ո՞վ եհան զքեզ անտի։ Եւ նա ասէ. Հրէայքն, Նեստորականքն, Քաղկեդոնայքն, եպիսկոպոսքն այն՝ որ ասեն մարդ խաչեցաւ վասն աշխարհի, և այրեցին զեկեղեցի իմ։ և ծեր մի՝ որ ոչ միաբանեաց ընդ նոսա, և փրկեաց զմարմին իմ յայրմանէ հրոյն։ Եւ ասեմ։ Ո՞ էր նա Տէր։ Եւ ասէ. Դիոսկորոս, զի որպէս Կիւրենացի էր Սիմոն՝ որ երարձ զխաչն իմ, և Կիւրէն է աշխարհն Լիբիոյ, որ բառնան զխաչն իմ պարծանաց ի ձեռն Դեոսկորոսի և պահեն զուղղափառութիւն։

ԺԵ. Սուրբն Տիմոթէոս ի ժամ ննջման իւրոյ պատմեաց, եթէ մինչ մանուկն էի ես և երթայի յաւուր միում ի դպրոցն, և պատահեաց ինձ այր մի լուսազարդ ծեր, համբուրեաց զգլուխ իմ, և ասէ ցիս երիցս. Ողջոյն ընդ քեզ, Տիմոթէոս հայրապետ կատարելութեան, դու լինիս պատճառ առողջութեան անդամոցն Քրիստոսի։

ԺԶ. Պատմեաց Նոյն Տիմոթէոս, թէ գնայի ես ի տեսլեանն ի Սելովամ, և տեսի անդ վանք մի աւեր, և ամենայն

*) Այսպէս յօրինակին.

Digitized by Google

պտղաբերքն նորա դարձեալ էին ի փուշ. և այգիքն բեկոտեալք ուռք և որթք. և ասեմ. Զի՞նչ է այս։ Եւ ասեն գիս. Ա՛յս վանքն է Ցուրնաղայ, ուստի կոչեցաւն յեպիսկոպոսութիւն, և եղև հակառակ Դիոսկորոսի ի ժողովն Քաղկեդոնի, և կատարեցաւ առ նա բանն, թէ՝ Եղիցի բնակութիւն նոցա աւերակ և ի յարկս նոցա մի։

ԺԷ. Ցաւուրս աղուհացիցն, շրջէր Ցուրնաղ ըստ առաջին սովորութեանն խրատել զնոսա, և գնաց ի դուռն տեսողի միայնաւորի. և փակեաց ընդդէմ նորա. և նա երթեալ բախէր, և ասէ ցնա միայնականն. գնա՛ սուտ Քրիստոս, գնա՛ Ցուդա մատնիչ։ Եւ նորա հենգնեալ ասէ. Պահքն տարեալ է զքեզմն, թո՛յլ տուք դմա, և գնացին ամաւթով։

ԺԸ. Անագանոս մի յԵրուսաղէմ ի Պրոպատիկէէն. տեսանէր զՏէրն զի մտանէր ի տաճարն հանդերձ հրեշտակաւք. որք ունէին լապտերս շիջեալս, և ասէր Տէրն. Մոռացան զերախտիսն իմ, վա՜յ քեզ Ցուրնաղիոս, արարեր զտունս իմ այրս աւազակաց՝ բոզոց և պոռնկաց և շնանոց։ Եւ բացաւ առաջի նորա խորհրդանոց. և սկին էր ադտեղեալ և փոշոտեալ կտաւով ծածկեալ, և ասաց Տէրն. Հանէք և ձգեցէք արտաքս, զի չէ դա իմ. Եւ ցԱնագանոսն ասէ. Ե՛լ աստի. և նա ասէ. Ողորմութեամբ աւգնեա՛ ինձ Տէր։ Եւ վերացաւ Տէրն, և լուաւ Ցուրնաղ զրանն, և գիտացեալ եթէ հաւբաւեալ էր տեսիլն, և ի գիշերի աներևոյթ արարին զԱնագանոսն։

ԺԹ. Ցաւուրսն յայնոսիկ ոմն ի սրբոցն՝ Պետրոս անուն, ետես զսուրբ խորհուրդն ապականեալ ի տեսլեանն, և ոչ ևս հաղորդեցաւ մինչև ցմահ *) մահուան իւրոյ։

Ի. Ոմն անապատաւոր՝ Պաւղոս անուն, որ բնակեալ էր յԵրուսաղէմ, հեռագոյն ի քաղաքէն Ծ. մղոնաւոր տեսանէր ի տեսլեանն դաշտ մի և ի մէջ նորա բլուր մի. և ի վերայ նորա սիւն մի ոսկի ակամբք և մարգարտով զարդարեալ, և ցոլմունք շառաւիղաց հրեղինաց հատանէին ի նմանէ, և բազմութիւն զաւրաց կային նմա ի սպասու, Ոք հայարաց և բիւրք բիւրուց, և եղև ձայն յերկնից որ ասէր. Նզովեալք եղիցին որք ասեն Քրիստոսի Ի. բնութիւն, և շուրջքն ասացին. ամէն։ Եւ աղգ և լեզուք ամենայն լցեալ ունէին զդաշտն սասանեալք յոյժ. և

*) Ա. յսպէս յոր.

եղև կրկին ձայն որ ասէր, Նզովեալք եղիցին որք բաժանեն զմինն և զանբաժանելին. անիծեա՛լք են ուրացողքն մի բնութեանն, և միաձայնեալ հասարակ ասացին, Ամէն եղիցի՛ եղիցի՛։ Եւ սուրբն տեսանէր զՑուրնաղ զի անցանէր և ասէր. անցանեմ ընդ քեզ. և ակն ոչ ունիմ տեսանել զքեզ. ի ժողովն գնամք, ի պատերազմ երթամք. կոխել տան զխորհուրդն Աստուծոյ կամ մեռանել, ուրանալ տան զՀայրենի զՀաւատս մեր, և զՍիմոնին խոստովանել և զՀրէէցն և ասել. Ոչ էր Աստուած խաչեալն։

ԻԱ. Ցետ այսորիկ տեսանէր նոյն ծերն զՑուրնաղիոս յանկեան մի կանկնեալ և սևացեալ իբրև զաթունի, որ զբաղանիսն պրէ. և ասէ ցնա ծերն. Ընդէ՞ր ես այդպէս. և նա ասէ, Զի տեսանեմ զամաւթ իմ, քանզի ոսկի ժողովեմ սուտ Քրիստոսին, այնմ որ պատերազմելոց է ընդ բնութիւն Հողոյ։ Եւ իմացաւ ծերն թէ ընդ մարդկային բնութիւնս է պատերազմելոց, որ ի Հողոյ է։

ԻԲ. Վանք մի էր ի սահմանս Տրապաւլսեաց, և անուն առաջնորդին Պանփիւրիոս, որ ի հարկէ լեալ էր եպիսկոպոս, այր սքանչելի վարուք։ Իսկ Վասիլիոս եպիսկոպոսն Սեղևկիոյ, մինչ գնայր ի ժողովն, տարաւ զնա աղաչանաւք, և յորժամ եհատ նա, զի զառաջինն Նզովեցին զԲ, բնութեան ասաւղն, և դարձեալ ուրացան և արսորեցին զուղղափառսն, և տրտմեցաւ, զայրացաւ, խռովեցաւ, և առանձնացոյց զինքն ի տան միում և խնդրէր յԱստուծոյ արտասուաւք զցայգ և զցորեկ. յայտնել նմա զոր արարին նոքա, և եթէ զի՞նչ է Հաճոյ նորա կամացն։ Եւ եղև և սուրբն ի տեսլեան, և տեսանէր տուփար մի ոսկեզիր ի կամարէն երկնից մինչև առ ինքն պարզեալ, գրեալ ճարտարագրչի յերկուց կողմանց զայս աւրինակ. Նզովեա՛լ եղիցի ժողովն Քաղկեդոնի, որ ուրացան զիս, ուրացան զիս. Նզովեա՛լք եղիցին, Նզովեա՛լք եղիցին։ Եւ ետես զայս ի գիշերի միում, եմուտ ի նաւ և գնաց ի տեղի իւր, և պահեաց զբաղաքն իւր Տրապաւլիս յուղղափառութիւն ամս ԺԵ. կրելով վիշտս ոչ սակաւս ի Վասիլոսէ։

ԻԳ. Ստեփանոս հայր եղբարց Իգակիու վանից ի Սեղևկիա, ասէր թէ, Ոչ կարեմ հաւատալ եթէ Վասիլիոս անկաւ ի ճշմարտութենէն. զի շնորհունակ և գիտուն էր։ Եւ յորժամ դարձաւ ի ժողովոյն խնդրեաց յԱստուծոյ ցուցանել նմա, եթէ

Digitized by Google

ունիցի զճշմարտութիւն։ Եւ տեսանէր ի տեսլեանն զի մանէր Վասիլիոս յեկեղեցին. և ժողովուրդն պատուէր զնա, և յորժամ կամէր բանալ զբերանն և ասել աղաւթս, այր մի լուսաւոր մըտեալ ընդ նմա, և ած զմատն ի բերան նորա, և եհան զնա արտաքս և ասէ. Զես արժանի, այլ որպէս դու դարձուցեր զերեսդ յԱստուծոյ, դարձոյց Աստուած զերեսս իւր ի քէն։

ԻԹ. Դարձեալ նոյն սուրբն Ստեփանոս խնդրեաց ի Տեառնէ ցուցանել նմա թէ զի՞նչ է ժողովն Քաղկեդոնի. և տեսանէր զմի յառաքելոցն Քրիստոսի որ տանէր զնա յարքունիս ինչ, ուր կային եպիսկոպոսք ժողովոյն, և ասէ ցնա առաքեալն Քրիստոսի. Ա՛յս են ուրացողք նորա. և ետ ի ձեռս նորա խարտյան և ասէ, Հանէք արտաքս զամենեսեան զթշնամին ճշմարտութեանն։

ԻԵ. Այր մի էր հոգետես Ռոմանոս անուն, ի գեղջէ Աբէլմէուլա, ի Պաղեստին, առաջնորդ եղբարց ՃՀ ոց, որք ասէին ցնա, Ընդէ՞ր լռել կաս և ոչ նախանձիս զնախանձ Տեառն. և ասէին. խնդրեա՛ ի Տեառնէ, թէ զի՞նչ է աղմուկ ժողովոյն Քաղկեդոնի, որով խռովեալ է աշխարհ։ Եւ ասէ ցնոսա, Ներեցէք զ՝սուրս ծ։ Եւ գնաց ընդ անապատն խնդրուածովք և արտասուաւք, և եղև առ նա ձայն և ասէ. Գնա՛ և պահեա զՀաւատն Նիկիայ։ Եւ եկեալ պատմեաց նոցա։ Ասեն եղբարքն. Իսկ Ցոյնք ասեն, թէ զՆիկիայ հաւատն մեք ունիմք. Եւ գնաց Հայրն և կրկնեաց զպահքն։ Եւ ասէ ցնա երկրորդ ձայնն, Գնա՛ և պահեա զխոստովանութիւնն Պետրոսի և Բարսղի և Գրիգորեանցն. և Լկեալ ասաց եղբարցն։ Եւ նոքա ասեն, Վասն Տեառն, որովհետև դուք շնորհս յԱստուծոյ պարգեա զսիրտս մեր, նոքա ասեն թէ մեք անսղալ ունիմք զդաւանութիւն յիշեալ սրբոցդ։ Եւ դարձեալ սուրբն երրորդեաց զաղաւթսն վասն խնդրոյն. և տեսանէր կոնդակս ինչ գրեալ և պարզեալ յերկնից մինչև առ ինքն, և գիրն էր այս. Ուրացան զիս ժողովն Քաղկեդոնի, և անցին զսահմանաւք ուղղափառացն. վա՜յ է նոցա. և նզովք է բաժին նոցա։ Եւ իբրև ընթերցաւ զայս, նա ոչ չոգաւ առ եղբայրսն, այլ երթեալ յԵրուսաղէմ պատմեաց, և շարժեցաւ քաղաքն Երուսաղէմ, և հանին զչարափառսն, և հանին զԲուրնաղ, և եդին զԹէոդորոս, և լուաւ Մարկիանէ, և առաքեաց հաստատեաց զչարափառսն՝ տանջելով զընդդիմացեալսն, և լռեցին, և եղբարքն հաստատեցան։

Digitized by Google

ԻԶ. Պատմեաց քահանայն Ավփել . . . . . բացին, թէ մինչ էր Տիմոթէոս յաքսորս ի Խրաւանաս կղզի, գնացի ես առ նա, և տեսի վէր սաստիկ յոտս նորա, որ էր նա սուր ցաւ անբժշկելի, և մերձակայք նորա ոչ դարմանէին զնա. և ես աղաչէցի զնա զի լուացից զթարախն, և ասէ ցիս. Ո՞չ տեսանես զայի յաչս իմ։ Եւ ասեմ ցնա, Այո։ Եւ ասէ, Մինչ կայի ես ի ժողովն Քաղկեդոնի առանձնացեալ յաղաւթս, երևեցաւ ինձ Եթովպացի մի ահաւոր և ունէր ի ձեռին տումար ինչ, յորում կայր ձեռագիր բազում եպիսկոպոսաց, և ասէ ցիս. Դիր զձեռագիր քո ի սմա, թէ ոչ՝ առիցս զոգիդ քո։ Եւ իբրև ոչ լուայ նմա, եհար ձեռամբն զաչս իմ, և փլոյց զպտուղ մի յաչաց իմոց, և հեղաւ բազում արիւն, և անուամբն Քրիստոսի եդի զձեռն իմ ի վերայ աչաց իմոց և բժշկեցաւ, և տեսի, և մնայ սպիս այս յիշատակ իրացն։ Նոյնպէս և այս վէրքս ի սատանայէ է, որ կաղացոյց զիս, և ես հաճեալ եմ ի սա, և արդ թոյլ տուր կարող է Տէր բժշկել զսա յորժամ և կամի։

ԻԷ. Այր մի էր զաւրագլուխ Մարկիանոսի՝ Պետրոս անուն, պատմեաց զաւրավարին Զինոնի և ասէ. Ի սրտէ հաւատացեալ էի ես ժողովոյն Քաղկեդոնի, և էի ջերմ հալածիչ ուղղափառաց, մինչև տեսի ի տեսլեանն զոմն փառաւոր որ ասէր ցիս. Ի բաց կաց ի չարէդ, և ՝ի կ տես զոր ցուցանեմ քեզ։ Եւ տարեալ եցոյց ինձ տեղի անճառելի հանգստիւ և լուսով լցեալ և կային անդ Կոստանդիանոս և Թէոդոս, և տեսի այլ տեղի ուստի հուր բորբոքէր անլոյս, յորում կայր Մարկիանոս, և ամենայն դաւանողքն Լևոնի տումարին, և տեսեալ կայն՝ եղէ ընդ Դիոսկորեայ և ընդ Տիմաւթէի։

ԻԸ. Կրաւնաւորք Բ. Կիպրացիք, Կիրակոս և Յուլիոս անուանք, պատմեցին մեզ. եթէ կայր առ մեզ վկայարան մի նշանագործ, և ի լինել ժողովոյն չարի, ձայն եղև ի շնորհէն որ անդ և ասէ, Ես այլ ոչ նստիմ ասա, զի ուրացան զՔրիստոս ի Քաղկեդոն, և առաջնորդն ձեր ընդ նոսա. այլ մի գայք առ իս։

ԻԹ. Ի Կեսարիա Փղշտացւոց կային տապանք Բ. Յովանաւ Մկրտչին և Եղիսէի մարգարէի. և սարկաւագ մի Կոստանդին անուն սպասաւորէր նոցա սրբութեամբ, և զկնի ժողովոյն Քաղկեդոնի, լայր սարկաւագն հանապազաւր, և եղբայր ոմն Պաւղոս անուն եհարց ցնա, և նա ասէ. Քանի՞ ամք են որ կամ ի սպասաւ սրբոցս, և ի մնանելն իմ յամենայն առաւաւտու տե-

Digitized by Google

սանէի զսուրբսն նստեալ յիւրաքանչիւր տապանի, և ի տարածել Քաղկեդոնի աղանդոյն այլ ոչ տեսանեմ. և կամիմ գնալ աստի, և կրկիլ ի մխիթարութենէ սրբոցս։ Եւ ասէ ցնա Պաւղոս, Նախ աղաւթիւք հարց ընդ սուրբսդ և ապ կիրատն. և ապրար այնպէս։ Եւ երևեալ սրբոցն և ասեն ցնա. Արի՛ գնա աստի, զի և ոչ մեք կալոց եմք աստ, բայց մի՛ տրտմի՛ր. զի գամք ընդ քեզ ուր և երթաս։

Լ. Հայրն Զոսիմոս անապատաւորն խնդրէր տեղի, և եկն ի Բեթէլ և էր անդ վանք մի, և աղաչեցին զնա լինել առ նոսա, և նա ասէ՝ Ցաղանդոյն Քաղկեդոնի փոխչիմ ես. և նոքա ստեցին նմա ասելով թէ, առ մեզ ոչ եմուտ, և հաւատաց նոցա, և յանձին կալաւ կալ առ նոսա։ Եւ ի գիշերին յայնմիկ երևեցաւ նմա սուրբն Յակոբ և ասաց նմա։ Մի մնար այսր զի յուրացուցացն Քրիստոսի են, և գնաց անտի։

ԼԱ. Պատմեաց մեզ հայրն Պետրոս վասն Ալեքթերոսի սրբոյ՝ որ բնակեալ էր ի Կիլիկիա, ի լեառն Տորոսի, գիսաւոր և ընդակեր։ Եւ տեսեալ զնա որսորդք իրրև զանասուն, և յորժամ իմացան, աղաչեցին զնա զի կացցէ ընդ եղբարս, և լուաւ նոցա, և զգեցաւ հանդերձ, և յարեցան ի նա աշակերտք յոյովք, և մաւտ ի վախճանն իւր, ասաց աշակերտաց իւրոց. Գրեցէք որդեակք և առաքեցէք ընդ ամենայն երկիր թէ զկնի Ի՛ի, ամայ լինի ժողով ի Քաղկեդոն և ուրանան զՔրիստոս, և դուք գնացէք ի Մեծն Հայք և յԱղեքսանդրեա, քանզի առ նոսա մնայ ուղղափառութիւն, և ի նոցանէ ածէ հաւատն սուրբ, և փառաւորի Քրիստոս Աստուած յամենայնի։

ԼԲ. Դարձեալ պատմեաց Հայրն Պետրոս, թէ ի մեռանելն Թէոդոսի ոմն անապատաւոր հոգւովն իմացաւ, և զոչեաց մեծաձայն և ասաց, Մեռաւ այսաւր ուղղափառութիւն. ահա փլաւ երկինք, և ոչ ոք է որ յաւէ նմա, և ողբաց զաղէտս։

ԼԳ. Մինչ կայր Նեստոր յաքսորս ի Թբաս Եգիպտոսի, գնաց ոմն ի Թագաւորէն Կամիտոս տալ հրոք զաւրացն, և երթեալ առ Նեստոր և ասաց թէ, կամին ժողով առնել և կոչել զքեզ, և խնդաց յոյժ։ Եւ եկն կոչնականն վաղվաղակի մագիստրոս մի, և նա ոչ կարաց տանել զխնդութիւնն. այլ ասաց. Մի՛ թէ կարացի՞ փոխել զբան իմ, կամ սուտ երբէք խօսեցայ, եթէ Մարիամ չէ Աստուածածին։ Եւ առ ժամայն թափեցաւ լեկուն, և սկսաւ ծամել զլեկուն և ուտել զմարմինն, մինչև սա-

տակեալ եղև, և գերեցմանն ոչ ընկալաւ զնա։ Զայս ասաց Տի-մոթէոս ի գիրսն իւրում։

ԼԴ. Պոտիմոն Սկիւթացի եկն յԵգիպտոս առ սուրբն Պետրոս և ասաց. Հայր մի տրտմի՛ր վասն չար ժողովոյն և Պոտորի զոր առաքեցին աստ Պատրիարգ, զի երկնաւորքն աղաչեն զՏէր վասն սուրբ եկեղեցւոյ և վաղվաղակի կորնչին։ Որ և գկնի Դ, աւուր սպանաւ նա։

ԼԵ. Սարկաւագ ոմն Վասիլ անուն աշակերտ Պետրոսի Թեբացւոյ, որ էր առանձնական ԼԷ, ամ, եղև առ նա ձայն երկնաւոր, թէ՝ Ելլ ասէ, քարոզեա և աւգնեա ուղղափառութեան։ Եւ եկն ի Լիկիա գաւառ, և եղև անդ երկու ժամ, և գնաց անէծ զՆեստոր առընթեր Թէոդոսի, թագաւորն ոչ եհան զՆեստոր յաթոռոյն, և յանկարծակի անկաւ կղմինտոր մի ի վերայ գլխոյն Թէոդոսի, և ցաւեցոյց զնա շատ, և մագիստրոս ոմն տանջէր զսուրբն. և լուաւ տեսլեանն Թէոդոս. թէ վասն սրբոյն եղև, կոչեաց զնա, և ետ աղաւթել ի վերայ գլխոյն, և ողջացաւ և զղջացաւ, և նա խրատեաց զթագաւորն, և արձակեալ ժողով յԵփեսոս և ասաց թէ, Որ գկնի քո թագաւորէ, նորոգէ զաղանդն Նեստորի վերստին։

ԼԶ. Աչինէ, կին մի երկիւղած ի Տեառնէ, խաւսեցաւ ի տեսլեանն թէ Նեստոր անուն զայ պատրիարգ ի Կոստանդնուպաւլիս, մի հաղորդիր ի նմանէ, և լինի ժողով ի Քաղկեդոն նովին ախտիւն, և դու զգուշացո՛ զորդիս քո։

ԼԷ. Պատմեաց Հայրն Պետրոս Փիւնիկեցին, թէ մինչ մանուկն էի ես առ վարդապետին իմում, անկաւ յիս տարակոյս, թէ զիա՞րդ սուրբ Երրորդութիւնն իցէ հաւասար Գ, և մի։ Եւ եկն ի վերայ իմ Հոգի, և երևեցաւ ինձ սուրբ առաքեալն Պետրոս, և եհան զիս ի բլուր մի և եցոյց ինձ լոյս անպարագիր մեծութեամբ և անհաս, և ասէ ցիս. Ահա Հայր։ Եւ եցոյց ինձ այլ լոյս անպարագիր. և ասէ, Ահա՛ Որդի, և ասեմ, Նման է Հաւր յոյժ։ Եւ եցոյց ինձ այլ լոյս անպարագիր և ասէ, Ահա՛ Հոգին սուրբ. և ասեմ. Նման է Հաւր և Որդւոյ։ Բայց պատկեր Որդւոյն՝ մարդատեսակ փայլատակէր անճառ և անհաս, և Որդին ի մէջն յայմմ Հաւր, և Հոգին սուրբ յայմմ Որդւոյ։

ԼԸ. Անինոս ոմն Աղեքսանդրացի որ մկրտեալ էր ի Հաւրէ իւրմէ, և կին նորա ոչ հաղորդէր ընդ առն, զի խմորեալ էր յաղանդն Քաղկեդոնի. սա հիւանդացաւ մերձ ի մահ. և եկն ի

տեսիլ տեղոյ անապատի դրախտի, և ասէին. Այս է տեղի առն քո։ Եւ տեսանէր տեղի հրաբառն խաւարի, և գայր անտի ձայն լալոյ, և ասէին, Այդ է տեղի այդմ աղանդոյդ ուր կասդ։ Եւ առողջացեալ դարձաւ յուղղափառութիւն։

ԼԹ. Մաւտիոնէ, որ ասի խոստովանող, խնամատար եկեղեցւոյ և յոյժ ողորմած, սա հիւանդացաւ և եկն ի տեսիլ նման ասացելոյ կնոջդ, և ետ տանել զինքն ի վանքն Ռոմանոսի ուղղափառի, և հաղորդեցաւ, և զկնի երեք աւուր հանգեաւ ի Քրիստոս, զի ողորմածութիւն իւր, ոչ եթող զնա ի կորստեան։

Խ. Պոնիփտոս երէց ազգաւ Ֆրանգ, որ ոչ հաւանէր Բ, ընութիւն ասել Քրիստոսի, ոչ մտաւք և ոչ բանիւ. սա ետես ի տեսլեանն մեռեալ մի հոտեալ ի յարութեանն յԵրուսաղէմ, որ յանկարծ կենդանացաւ, և ունէր թուղթ ի ձեռն՝ երևմամբն ոսկենէրկ, և ի բանալն լի ամենայն աղտեղութեամբ. և կարթուցեալ ելոյծ և ասաց. Դարձեալ Նորոգի աղանդն Քաղկեդոնի, զի յայնժամն բարձեալ էր ի Զենոնէ արքայէ։

ԽԱ. Սարկաւագ մի սպասաւոր էր ի սուրբ յարութիւնն յԵրուսաղէմ, և անկաւ ի շնութիւն, և եկեալ ի սուրբ Գողգոթայ ննջեաց, և շնորհն որ անդ՝ ձգեաց զնա արտաքս ի փողոցն. և եղև գոչիւն ահաւոր որ ասէր. Ապականեաց Ցուբնաղ և աշակերտք իւր զսրբութիւնս իմ։ Եւ լուաւ քաղաքն և զրղջացան բազումք յաղանդոյն, և խոստովան եղև սարկաւագն զչարիսն իւր։

ԽԲ. Պատմեաց երանելին Վասիլիոս եթէ ի գեղս մեր Պոտոլինէ երէց մի էր քաղկեդոնիկ, և պարզամիտ աշխարհական մի ուղղափառ վիճէին վասն հաւատոյ, և կատարումն . . . . . բացն եկն յայս, զի կամեցան հրով փորձել . . . . . հաւատն, և կապեցին զաչսոյ ձեռսն զերկոցունց, և վառեցին ի ներքոյ հուր, և այրեցաւ ձեռն երէցուն անողջանալի, և աշխարհականին ոչ մազ մի խանձատեցաւ և աւրհնեցաք զԱստուած։

ԽԳ. Ի գեղ մի՝ անուն Սալտուն, էր այր մի Եպիփան անուն, ոչ հաղորդէր ընդ այլսն, և երէցն սպառնացաւ նմա, և նորա առեալ զորդիսն և գնաց անտի. և երէցն հարեալ բարկութեամբ Տեառն, և մեռաւ նոյնժամայն։ Եւ իմացեալ գեղջն, և դարձուցին զԵպիփան, և ամենայն գեւղն դարձան յուղղափառութիւն։

Digitized by Google

ԽԴ. Պետրոս պատրիարգն յաքսորս կայր յԱղեքսանդրիա, և եղև ձայն առ Պիուր մենաւոր և ասէ, Գնա մխիթարեա ըզսուրբն Պետրոս։ Եւ ետ նմա առաջնորդ սիւն լուսոյ, և չոքաւ ի առուն յորում կայր սուրբն Պետրոս, և ետես տանուտէրն շնորհ երկնային ի վերայ նոցա. և աղաչեաց զնոսա մկրտել զորդիս նորա և դարձաւ յուղղափառութիւն։

ԽԵ. Հայրն Պիոն ետես տեսիլ, զի բազմութիւն աբեղայից առեալ խաչ մի ձգէին առ միմեանս. և ասաց թէ հերձուած լինելոց է, որ ոչ բժշկի մինչև ցկատարած։

ԽԶ. Կին մի էր բարեպաշտաւն յԵրուսաղէմ Ուլուակիա անուն, գնաց աղաւթել ի տաճար Համբարձմանն Տեառն, և ետես զՍիրամայրն նստեալ անդ փառաւք, և անկեալ ի վերայ երեսաց իւրոց, և կանկնեաց զնա Տիրուհին և ասէ. Մի՛ երկնչի՛ր, այլ կաց յուղղափառութիւն, զի չարչարանք Որդւոյ իմոյ այլայլեցաւ ի բերանս պղծոց ոմանց. և եղև եկեղեցի իբրև զկոտորեալ անտառ զլերամբ, և ոչ խաղաղի մինչև ցկատարած։

ԽԷ. Զենոն անապատաւոր մարգարէացաւ վասն Լևոնտեայ Ասկաղոնացւոյ, թէ լինիս եպիսկոպոս, բայց ոչ մեռանիս եպիսկոպոս, որ և եղև իսկ։ Քանզի յաքսորելն Նեստորի, աղաչէր զԲուրնաղ զնորայն հաստատել, և առաւել յորժամ եղև ժողովն, զերկու բնութիւնն, և ի դառնալն ի քաղաքն իւր, կամեցան քարկոծ առնել զնա և փախեաւ ի Կիպրոս, և ցասմամբ Տեառն՝ մեռաւ անդ։ Եւ գնացին ընտանիքն բերել զմարմին նորա նաւով, և ոմն աշխարհական մեռաւ ի նաւն. և ի լինել սաստիկ հողմոյն ձգեցին զԼևոնտիոս ի ծովն, կարծելով թէ աշխարհականն է. և կատարեցաւ մարգարէութիւնն։

ԽԸ. Կին մի Ասկաղոնացի Նիկէ անուն, և սաստիկ պապանէր զքաղկեդոնիկսն, և երևեալ նմա սատանայի ի ձև հրեշտակի և ասէ զնա. Ընդէ՞ր հայհոյես զսուրբ ժողովն. և փլոյց զրմն ի վերայ նորա, և ոչինչ եղև նմա չար. այլ յարուցեալ խաչակնքեալ զինքն, և չիք եղեալ չարն։

ԽԹ. Երկու եղբարք ի Կիլիկիա պատմեցին մեզ, թէ գնացաք ի Մամուեստիա, և յանդիմանեցաք զԹէոդորոս, որ անկեալ էր ի խելայց, արարեալ էր մեկնութիւն Գործոցն և աւետարանին Յովհաննու, և ասացաք անէծս նմա, և մահացաւ։ Սա էր աշակերտ Նեստորի։

Ծ. Ի Պանփիլիա բազմութիւն արանց փայտ կոտորէին,

և էին երկու դասք ուղղափառաց և չարափառաց, և վիճեցան վասն հաւատոյ և վառեցին հուր, և բերին կտուժարն Լևոնի և զսահմանն ուղիղ, և արկին ի հուրն, և այրեցաւ Լևոնին և մեաց անվնաս ուղղափառացն. և բոլորն դարձան յուղղափառութիւն։

ԾԱ. Երեք ամաւ յառաջ քան զժողովն Քաղկեդոնի, յեւթն ժամ աւուրն, յԵրուսաղէմ քաղաք, երեք արեգակն տեսին՝ յարևելս, և յարևմուտս և ի միջոց երկնից. և ումն սուրբ միայնակեաց ասաց թէ, Երեք ժողովն լուսաւորեցին զաշխարհի կհաւատս. և այլն որ լինի ոչ է ընդունելի։

ԾԲ. Ի դառնալ ժողովոյն Յուրնաղեայ, ելին ընդդէմ նորա եկեղեցականքն յանդիմանել զնա. Իսկ հայրն Պետրոս նստաւ ի լուութեան, և երևեալ նմա Տէրն և ասէ, Ես զրկեցայ և հաւատն եկեղեցւոյ իմոյ պլպլեցաւ, և դու հանգիստ խնդրես։ Եւ նորա երկուցեալ յոտն յարեաւ, և առեալ զԹէոդորոս և գնաց, և բուռն հարեալ զուրարէն Յուրնաղայ պատառեաց, և ասաց. Զայլ գործն թ'ղ, ասե՛մ զինչ գործեցեր յայսմ գիշերի, և կոչեմ հուր երկնաւոր մաշել զքեզ, և դու հաւատ փոխես։ Եւ անկեալ Յուրնաղ յոտս սրբոյն, և ասաց. Խնայեա՛ Հայր սուրբ։ Եւ առեալ զԹէոդորոս և դարձաւ, այն որ եպիսկոպոս ձեռնադրեցին զկնի։

ԾԳ. Թէաւսէաւս, այր սուրբ և իմաստուն տարակուսէր վասն երկու բնութեանցն, և արտասուաւք խնդրէր յԱստուծոյ յայտնել նմա, և երևեալ նմա Յովհաննէս աւետարանիչն և ասէ, Որ էրն իսկզբանէ Բանն, զնա շաւշափեցաք զկեանքն, և ոչ է Բ. բնութիւն, այլ մի։ Եւ լուեալ զայս հաւատացաւ միութիւնն

ԾԴ. Ումն ի տեսողացն սրբոց, տեսանէր ժողովս եպիսկոպոսաց, և Պաւղոս առաքեալն ի մէջ նոցա ասէր, Ո՞վ եղկելիք ա՛յդ է իմ պատուէրն, զա՛յդ ուսուցի ձեզ, արդ առէք ի սափորոյս և լուացէք զերեսս ձեր։ Եւ իբրև լուացան սևացան, և ասէր. Այդպէս ամենեքեան սևք եղէք, վա՜յ է ձեզ։

ԾԵ. Մարկիանէ ումն անուն աշխարհական յանդիմանէր զՊամփիլեայ եպիսկոպոսն վասն Բ. բնութեանցն, և մատնեցին զնա Տուկի բաղաքին, և տանջեցին զնա սաստիկ մինչև իջանէր արիւն յոլով ի նմանէ, և արար բժշկութիւն յոլով ցաւոց, և հրեշտակն առ ընթեր կացեալ, և դիւրէր նմա և մրխիթարէր զնա, և զվէրսն բժշկէր։

Digitized by Google

ԾԶ. Սուրբն Տիմոթէոս պատմեաց հաւրն Յովհաննու յորժամ յաքսորս էր, թէ յորժամ եկին հրաւիրեցին զիս ի ժողովն չար, յայնմ գիշերի տեսանէի զիս ի պատարագի, և նրշխարն հնացեալ և սևացեալ էր, և զինին քացախեալ, և ոչ կարացի ճաշակել, և իմացայ զինչ լինելոցն էր։

ԾԷ. Անաստաս աբեղայ Ուռհայցի հաղորդեցաւ ի հաւրէն մերմէ Պետրոսէ, և յայնմ գիշերի նոր մկրտեալ լինէր և նոր զգեցեալ, և մեկնեցին նմա թէ դառնալն յուղղափառութիւն նոր մկրտութիւն է և նորածնեալ։

ԾԸ. Թամասիոն երէցն պատմեաց մեզ, եթէ յորժամ գայր ի ժողովոյն հերետիկոսաց, ել եպիսկոպոսն մեր. մկրտէի ես տըղայ մի, և տեսի ես և ժողովուրդն զՀոգին սուրբ զի աղաւնակերպեալ երթայր յաւազանէն ելեալ, և լուաք զի ասէր. Ես այսուհետև յաւազանս այլ ոչ լինիմ։

ԾԹ. Պատմեաց մեզ հայրն Պետրոս, թէ կայր եկեղեցեւյան մի ինձ՝ խմորեալ աղանդովն Քաղկեդոնի, և հանգիպեցաւ ինձ ի մէջ փողոցին նեղագոյն, անկաւ յոտս իմ և ողջունեաց զիս, և ես յամաւթոյն առի զողջոյնն, և յայնմ գիշերի տեսի դաշտ մի, ուր ժողովեալ կային ամենայն սուրբք և Քրիստոս Աստուած ի մէջ նոցա փառաւք նստեալ, և գնացեալ երկրպագեցին նմա, և նա դարձոյց զերեսս իւր յինէն, մինչև աղաչեցին ամենայն սուրբքն և ոչ դարձաւ յիս Տէրն։

Կ. Երկու աշխարհականք ոմանք արևելայք Հայ ազգաւ ի պատճառս սղաւթականութեան գնացին մինչև ի Բիւրիտոնեա, և կոչեաց զնոսա սիւնակեաց մի և ասէ ցնոսա, Լսեմ թէ ոչ հաղորդիք յեկեղեցիս մեր, և նոքա ասեն. Ունիմք առ մեզ հաղորդ ի մեր հարցն ուղղափառաց և անտի հաղորդիմք։ Եւ նա ասէ, Եւ դուք աշխարհական էք. զի՞արդ իշխէք, և այդ ոչ է հաղորդ։ Եւ տրտմեցան նոքա։ Եւ յաւուր կիւրակէի տեսին զհաղորդն իւրեանց վառեալ հրով և լուսով և անուշահոտով լցեալ և հաղորդեցան։ Եւ ոմն սարկաւագ մի տկարացեալ էր ի բանս Սիւնակեցւոյն, և վասն նորա եղև միս արիւնոտ, և զղջացաւ և ելաց, և փոխեցաւ դարձեալ ի նոյն, և հաղորդէին անխիղճ։

ԿԱ. Ստեփանոսի սարկաւագապետին Երուսաղէմի քոյր մի էր կուսան սուրբ և պարկեշտ, և հասեալ ի կատարելութիւն այնչափ, զի յորժամ երթայր յեկեղեցին սրբոյն Ստե-

Digitized by Google

փանոսի և Յովաննու Մկրտչին, և երևէին նմա սուրբքն, և ելնի Քաղկեդոնի ժողովոյն ըստ սովորութեանն երթայր աղաւթէր ընդ խմորեալսն յաղանդն, և երևեալ նմա սուրբն Ստեփանոս և ասէ, Քո՛յր, գնա աղաւթեա ի տան քո, և մեք զամբառ քեզ չի ոչ կամիմք լինել ընդ ուրացողացս։

ԿԲ. Կին մի ուղղափառ Պանփիւլացի, ընակէր յԵրուսաղէմ, և գնաց ի տաճար Համբարձմանն Տեառն ի տաւնի իւրում, և մնաց ի պատարագին, և յորժամ գնաց ի տուն իւր և հիւանդացաւ ի մահ, և խնդրեաց աւրէնս, և ետ զխոստովանութիւն հաւատոյն, և տեսանէր զհրեշտակս Աստուծոյ, զի ասէին ընդ նմա, թէ՝ Զի՞արդ համարիս կատարեալ ուղղափառութեամբ զկեանս քո, զի տեսեր զանարժանիցն զպատարագն և աղաւթեցեր ընդ նոսա։ Իսկ կինն այն բարեպաշտ, ապա խնդրեաց յԱստուծոյ, տալ նմա ապաշխարութեան ժամանակ, և տուաւ նմա, և յարեաւ ի հիւանդութենէ և արտասուաւք հայցէր յԱստուծոյ յեկեղեցւոյն յայտնել նմա զարժանաւոր խոստովանութիւնն, և եղև նմա բան լսելի ի սեղանոյ անտի որ ասէր. Որդին Աստուծոյ նոյն էր, որ ծնաւ ի Կուսէն և խաչեցաւ, և թաղեցաւ և յարեաւ, մի բնութիւն փառաւորեալ անշփոթ միաւորեալ ընդ նմա կատարեալ մարմին։

ԿԳ. Ցիռալիա վանք մի էր կուսանաց, անուն աւագին Զոյի, որ յափշտակեցաւ ի դրախտն մտացն թռուելով, և ետես անդ զծառն կենացն, և զի պարք մեղուաց չանային հպիլ ի նա, և սարկաւագ մի լուսապատկեր, հալածէր զնոսա և ասէր ցԶոյի. Քրիստոս է ծառն, և մեղուքն հաւանեալքն Քաղկեդոնի, որ չեն արժանի մերձենալ ի Տէր։ Եւ իբրև եկն Կլաւդոնիոս յԻտալիա և մեղադրեաց նմա Զոյի, թէ ընդէ՞ր ձեռնադրեցեր զտումարն Լևոնի, և նա ասէ. Ձեռաւք գրեցի, բայց մտաւք ոչ միաբանեցայ։ Եւ նա ասէ, ձեռք մեռեալ զի՞արդ գրէ առանց կենդանի մտացն։ Եւ հրաժարեաց ի նմանէ։

ԿԴ. Լևոնտիոս անապատական, տեսանէր զեկեղեցին մերկ և զխորհուրդն հեղեալ, այս է եկեղեցին և պատարագն, որ չորրորդութիւն խոստովանեցին ի Քաղկեդոն։

ԿԵ. Յորժամ ել համբաւն Քաղկեդոնի, ոմն ի սրբոցն տեսանէր զեկեղեցին Կոստանդինուպալսի զերդ գոմ լցեալ, գարշ և գայիր անսուրբ կենդանեաւք։

ԿԶ. Նպիկտիոս հայր վանիցն Պանփիւլեայ, տեսանէր

զԱմոիքոս զԱլեքսանդրիա քաղաքի եպիսկոպոս, որ կոչէրն ողորմած, և զԵպիփան Պերգացի թաղեալ ի յաղբ մինչև ցպարանոցն։ Եւ ասէ Ամոիքոս. Բարեգործդ, զի՞արդ եղեր այդպէս։ Եւ նա ասէր, Բարին յԱստուծոյ էր, իսկ չարս ի մէնջ եղև. զի հաւանեցաք ժողովոյն Քաղկեդոնի։ Եւ ասեն թէ, Նորոգեաց նա զտուժարն Լևոնի։

ԿԷ. Կին մի զգաստ և սուրբ Ակթասալիա անուն, զկնի ժողովոյն Քաղկեդոնի, յերկուս բաժանել մտաւք, և հայցէր յԱստուծոյ ցուցանել նմա թէ յորոց հաղորդեսցի։ Եւ տեսանէր եկեղեցի մի երկու խորանի, մինն մեծ և մերկ և քաղկեդոնիկ ի վերայ նորա, և միւսն փոքր և զարդարեալ լուսով, և մանուկ մի հրեղէն ի վերայ նորա, որ էր ինքն Քրիստոս, և ասէր՝ Ի բաց կաց յուրացողէդ, առիս եկ և հաղորդեա կենաց։

ԿԸ. Երկու եղբարք էին ի վանսն Ռոմանոսի, Տիմոթէոս և Յովհաննէս անուանք նոցա. Տիմոթէոս մեռաւ և տարան ի թաղել, և յանկարծակի նստաւ ի դագաղսն և ասէ, գիտացիք, եղբարք, զի առիս չկայր ինչ պատճառ վնասու, բայց միայն իրաւ կարծէի զերկու բնութիւնն, և այս տանէին զիս ի տանջանս, և խնայեաց Տէր ի ձեզ, և ետ ինձ ասել զայս զգուշութիւն, և խնդրեցէք և ինձ ողորմութիւն, և դարձեալ ննջեաց։

ԿԹ. Յանտիոք Ասորւոց բնակեալ էր մերձ յարքունիս, այր մի սքանչելի, որ սակաւ բանչարով ընդոյր զպէտս իւր, և չառնոյր ինչ յումեքէ, և էր յոյժ յանդիմանիչ Քաղկեդոնացւոցն, և ասէր. Հոտ անաւրէնութեան և մահու գայ ինձ ի ձէնջ, և ոչ կարեմ տանել լռութեամբ։ Եւ սպանին զնա, և բազում նշանք եղեն ի նմանէ։

Հ. Գտեալ եղև յՈւռհայ քաղաքի տապան մի Հրէի, որ ունէր գիր ի հայար ամաց հնոտէ, և այս ևս գրեալ էր ի նա, եթէ Աստուած մարմնով ծնցի ի կուսէ, և խաչիւ ծագէ լոյս փառաց նորա ընդ տիեզերս ամենայն։ Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս։

Զնուաստ գրող սուրբ պատիս ի պատենայնի հեղաւ չկենալս, զուարթանուն վանից փահանայ զԹովմաս, ի զծնաւղսն իմ, ի պատենայն ազգատոհմն իմ, յիշեցէք ի Քրիստոս։

Digitized by Google

ՎԱՐԴԱՆԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ

ՀԱՐՑՈՒՄՆ։ Ապա զի՞նչ է այն, որ ասէ ի տեսիլ սրբոյ ումեմն թէ ի վերայ վիրապին գոչէ հրեշտակապետն։

ՊԱՏԱՍԽԱՆԻ։ Դիոնեսիոս յասել է թէ ամենայն ազգի հրեշտակապետ տայ պահապան հանդերձ հրեշտակաւք. արդ յայտ է թէ ամենայն հրեշտակապետ զիւր յանձնեալ ազգն կոչէ ձայնիւ յայն տեղն՝ ուր ազգին առաջնորդն չարչարանաւք զազգն ածեալ է ի հաւատն. և այսպէս Հայոց վերակացուն ի վերայ վիրապին հնչեցեալ առ սուրբն Գրիգոր՝ ժողովին Հայաստանեայք, և նա ընդ իւր առեալ զհաւատացեալսն վերանայ ընդ առաջ Քրիստոսի ասելով, Ահա ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած։ Զայս ի մեր վարդապետէն լուաք մեք։

Այսմ վկայ պատմեմ բեզ զոր լուայ ի Գառնեցի միակեցէն ի Յովանիսէն, թէ ի թուականութեանն ի Ո և ՀԱ, կայի ես ի սուրբն Երուսաղէմ, և գնացեալ էաք ի Յորդանան ի տաւն յայտնութեանն Տեառն. և մինչ կայի ես մեկուսի յաղաւթս, եկն առ իս մուկրի մի երկու որդաւք, և խնդրէր յինէն մկրտութիւն, թարգմանաւ միով ընդ իւր։ Եւ ասեմ ցնա, Ո՞վ ես դու, և յի՞նչ պատճառս մկրտիս և լինիս քրիստոնեայ. և ասէ, Այո՛ լինիմ քրիստոնեայ և թէ ուզես և զպատճառն կամիս իմանալ, Նիստ և լո՛ւր։ Եւ մինչ նստաք, ասէ, Ես ի պարսից եմ գաւառաւ և ազգաւ. և ի քաղաքէն որ կոչի Զանկեան, և ունէի գիւղ արտաքոյ քաղաքին և շատ մուլք, նոյնպէս և ի քաղաքն և շինեցի մնիրա մի բարձր յոյժ, և ի վճարման գործոյն արարի կոչումն մեծ ժողովոյ և արարի խրախութիւնս, և նախ քան զհայկերոյթն հանին զիս ի մնարայն, տալ զառաջին ժամն մեր, և մինչ գնացի և շրջէի ի մնարայն ի գլուխն, և հայեցայ ի կողմ արևելից, և տեսի բացեալ զերկինս, և իջանէր թագաւոր մի անճառելի կերպիւ և անհուն զաւրաւք հրեշտակաւք, և եկեալ ի զաւրայն հանդէպ իմ կալմեցին աթոռ ի վերայ

աւդոյն, և եկեալ Թագաւորն Նստաւ, և հնչէին փող յամենայն կողմանց, և սկսան գալ ազգ ամենայն քրիստոնէից առաջնորդաւն իւրեանց և երկրպագանէին նմա, և Թագաւորն ընդունէր զամենեսեան գլխովն, և անցեալ նստէին ամենեքեան։ Ապա գայր ազգ մի աւտար պայծառ լուսով և փառաւորեալ զարմանալի առաջնորդաւ, և յարեալ Թագաւորն յաԹոռոյն և գնաց ընդ առաջ նորա, և զիրկս արկեալ համբուրեաց զնա, և սկսաւ գովել և գոհանալ զնմանէ ասելով. Իմ քաջ նահատակ, իմ զուարԹ և քաջ ժիր մշակ, իմ մեծ և յաղԹող սպառազէն, և տարաւ նստոյց զնա առ ինքն, և զազգն նորա համբուրեաց և ողջագուրէր, և եկն ումն առ իս և տեղեակ առնէր զիս, և ես այսպէս սպառեալ և հիացեալ կայի։ Իսկ որ ի վայրն կային զարմացեալ կային ընդ յամեայն իմ, և առաքեցին առ իս զաւագ որդիս իմ, և սա եկեալ զնոյն տեսեալ և յիմարեալ եկաց, և նոքա այլ նեղասրտեալ առաքեցին զկրսեր որդիս ստիպել զմեզ գնալ առ նոսա, և յորժամ եկն տղայս, նա էանց տեսիլն, սակայն մեք պատմեցաք սմա զտեսիլն, և ասացին ցիս որդիքս իմ. Զի՞նչ կամիս առնել, և ես ասացի. Զայնել կամիմ, Թէ Քրիստոս է Թագաւոր փառաց և պարծանք քրիստոնէից։ Եւ աւագ որդիս ասաց. Այո՛ հայր, զայդ արա՛ զի սպանցեն զմեզ, որ երԹանք խառնինք ի զաւրս Թագաւորին Քրիստոսի։ Իսկ կրսեր որդիս զայս ասաց, Ոչ է արժան զայդ առնել, զի մի զմեզ և զազգն մեր ամենայն ջնջեսցեն, և դուք իսկ ասէք Թէ ամենայն ազգն չէր վիապատիւ, այլ երԹամբ գտանեմք զսիրելի ազգն զայն և զառաջնորդն սուրբ, և խառնիմք յազգն յայն մկրտելով ի նոցանէ, և մեր հաւանեալ իջաք ի վայր և տուաք հաց ամբոխին։ Եւ երԹեալ ի գեղն մեր առաք հինգ հարիւր կարմիր և երեք գրաստ և ելաք ի գիշերի և Աստուծով եկեալ եմք աստ, և արդ տեսաք նշան ինչ ի քեզ, եԹէ յազգէն Հայոց ես, և էք դուք ծառայք Քրիստոսի, և մեք կամիմք լինել երբև զձեզ, և ելից առաջի իմ զոսկին. և ես ոչ առի անտի, և ես առեալ մկրտեցի զերեսին, և բերի յԵրուսաղէմ, և առին հաղորդ և ասացին գնալ յայնկոյս ծովուն մեծի ի պատճառս աղաւԹից։

Ցիշեսցուք բան մի այլ ի սքանչելի հաւրէն։ Ի Թուին ի Ո և ՀԲ, ասէ, էաք մեք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և կայր փակեալ սուրբ եկեղեցին Յակովբայ։ Կայր վարդապետ մի Պաւղոս անուն, և էր աշակերտ մի նորա յոյժ առաքինի, և

ի ժամ առաւաւտուն աղաւթէր նա, և ետես տեսիլս և լուաւ հրաշք և եկեալ պատմեաց վարդապետին թէ չի՛նչ պատկեր կայր յեկեղեցին, ամէնն խաւսեցան ընդ պատկերն Մարիամու Աստուածածնին. և էր այսպէս։ Գաբրիէլի պատկերն պայծառացաւ յանկարծակի և խաւսել սկսաւ, և ասէր ընդ պատկերն Մարիամու, Ուրախ լե՛ր բերկրեալ Տէր ընդ քեզ. և նա ասէ. Զի՞արդ լինիցի ինձ այդ, և նա ասաց, Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ, և զաւրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քոյ, և ասաց Մարիամու պատկերն, Եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ ապա չի՛նչ որ պատկեր կայր յեկեղեցին, սկսան աղաղակել, Ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ. և աւրհնեալ ես դու ի կանայս, և աւրհնեալ է պտուղ որովայնի քո։ Եւ վարդապետն կոչեաց զիս և ասէ, Լսե՞ս զինչ ասէ եղբայրս. և պատմեաց ինձ զնոյնն։ Եւ ես սկսայ քննել տումարական արուեստիւ զաւրն, և էր ճշմարտապէս յապրիելի ամսոյ ի Զ.Ն. և գիտացաք եթէ ճշմարիտ է կրաւնքս մեր. և ես յորժամ լուայ ի սուրբ հաւրն Յովանիսէ, հաճեցայ թէ տաւնելն պատեհ է յապրիելի ի Զն, Աւետեացն. զի սուրբ Գրիգորի դնելն վասն անահտական պատկերին տաւնին խափանելոյ էր, և այն լռեալ է, և զոր ասեմքս բանիւ՝ գործովք առնել արժան է։

Պատմեմ ձեզ յայս նման բան եղեալ յԵրուսաղէմ։ Եպիսկոպոս և վարդապետ մի, անուն Նորա Յովաննէս ի Տուոց գաւառէն, այր մեծին վարուք և ճգնաւոր, որ զերեք յիսնակն ի տարւոջն անհաց և անջուր կենայր, և զամէն պահք աւր չոգաւ նա յԵրուսաղէմ, և զամէն ադուհացան ճգնութեամբ յոտն եկաց յանդիման սուրբ գերեզմանին, և պատմեաց ինձ զպատճառն, թէ խնդրեցի նշան ինչ զվասն վկայութեան այգիս, որ յամէն ազգէ կտիրենք և նախատինս կրենք։ Տեսանէր զիս, ասէ, Ֆրանգ մի, որ զկուպա գերեզմանին ծառայէր, զի կայի այնպէս, և ոչ խաւսեցայ ամենևին, և նա սիրէր զիս, և հարկէր խաւսել կամ ուտել ինչ, և ոչ լուայ նմա։ Ապա ի մեծի շաբաթին խաւսեցայ աղաչելով զլուսարարն, և ետու նմա երկու կարմիր և մտեալ ի գերեզմանն դրի Գ. կանթեղս զորս գնեալ էի. զմէկն ի մեր ազգիս անունն, և զմիւսն ի Ֆրանգաց, և զմիւս այլն ի Հռոմին, զի այս են գլխաւոր ազգ, և ասացի Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս, տարակոյս է իմ յերկու ազգ միայն որ կու ասեն ոմանք թէ չէ ի վառել լոյս. և միայն

կամիմ գիտել, թէ յայս Գ. ազգաց ո՞վ է առաւել ըստ կամաց քոց դաւանութեամբ և կրաւնիւք. և զայս ցոյց ինձ վառմամբ լուսոյ քո ի կանթեղ ազգի յոր հաճեալ ես: Եւ զայս արարի և առի զբանալին, և զմատնեհարն, զկնի փակելոյն և մատնեհարին իմոյ. և այնպէս պաղատելով և յուսով մնայի: Իսկ յորժամ ազգումն ինչ եղև և վառեցաւ լոյսն. և ես իսկ լուայ հանգարտ հնչումն որոտման, և սոսկումն եղև ի մարմնոյ իմ. և եկն առ իս փակապահն և ասաց ինձ բանալ, և չոգայ բացի, և մտայ ես մէն զառաջինն. և գտի զմեր ազգիս նշանեալ կանթեղն միայն վառեալ: Զայս լուեալ իմ յեպիսկոպոսէն, և ունէի առ ինքն համարձակութիւն, և առաւել քննէի, և նա երգուաւ յոյժ և ասէ, Քեզ միայն յայտնեցի. և զի մի թուիմ ես թերի յայս իրք, և կամ ախմար մանաւանդ, կամ թէ վասն այլոց արարի:

Digitized by Google

ՏԵՍԻԼ ԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՍՈՒՐԲ ԵՒ ՃԳՆԱԶԳԵԱՑ ԿՐԱՒՆԱՒՈՐԻՆ ՅՈՎԱՆԻԱՅ ԳԱՌՆԵՑԻՈՅՆ

Պատմեաց մեզ բարեհոգի ճգնաւորն մինչ հանդերձեալ էր ի նոյն ամի վախճանել, մինչ էր յանառիկ գղեակն Հռոմկլայն. Ասէ. Յորժամ ես ի խցին իմում կայի ի ձորն որ կոչի Աշորնիս, անկաւ ի խորհուրդս իմ, թէ որք են յազգաց ընդունելի Աստուծոյ, և տարակուսէի զբազում աւուրս. Եւ մինչ էի յայս տարակուսանս եկն ի վերայ իմ զարմացումն. ոչ էի ի թանձրութիւն քնոյ և ոչ յարթնութեան, տեսի ես տեսիլ զարմացման. Տեսանէի զիս ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և առաջի իմ դաշտ հարթայատակ, որ ոչ բաւէի տեսանել ծագէ ի ծագ, և կայր ի մէջ դաշտին բլուր մի զարմանալի՝ ընդարձակ ունելով գագաթն և ձգեցաւ ի վերայ բլրին ամզ լուսաւոր իբրև խորանարդ, հայէի նշմարել թէ ո՞ւմ է բնակութիւնս այս. և տեսանէի բեմբ ի մէջ նորա և քառադիմի աթոռ, զորոյ ոչ բովեաց բիրք իմ նկատել ի վայելչութեան լուսոյն, զորոյ և ոչ կարեմ բովանդակել կամ աւրինակ բերել նմանութեան այլ լուութեամբ պատուեսցի. Եւ մինչ հիացեալ և զարմացեալ էի ընդ տեսիլ իրին, նա լուսաւորեցաւ երկինքն, և լցաւ լուսով աւգն ամենայն, և անթիւ բազմութիւն թեւազգեցիկ հրեշտակաց, և հրաշալի եղանակաւ աղաղակէին և ասէին. Սո՛ւրբ, սո՛ւրբ սո՛ւրբ Տէր զաւրութեանց, և յապուշ մնացի ի քաղցրութենէ եղանակացն, և անկայ ի վերայ երեսաց իմոց յերկիր իբրև կիսակենդան, և ոչ մնաց յիս կենդանութիւն. Եւ եկեալ ոմն ի բարեսիրել արանցն, կարդաց զանուն իմ, և յարոյց զիս և ասէ, Զաւրացիր և ի միտ առ զոր տեսեր, զի վասն քո է տեսիլդ. և յարուցեալ յոտն կացի և ասեմ՝ Ո՞վ Տէր, գոգացաւ սիրտ իմ ի փորի իմում, և ոչ կարեմ նկատել, արա՛ զիս

Digitized by Google

խելամուտ, զի այր տառապեալ եմ և կամ հիացեալ։ Եւ ասէ, Ցուցաւ քեզ ի Ցեսանէ որպիսութիւն հանդերձեալ գաստատանին, և ահա Երրորդական աստուածութիւնն նստեալ է յաթոռ փառաց իւրոց, առնէ հաստատումն արդարոց և մեղաւորաց, և սուրբքն ամենայն առ նա ժողովին, զոր հանդերձեալ ես տեսանել։ Եւ անկեալ երկրպագեցի հանգէպ սուրբ աթոռոյ Աստուծոյ, և ոչ զաւրեցին աչք իմ տեսանել, բայց միայն զՇամանչ լուսոյն։

Եւ եղև յանկարծակի հնչիւն ահաւոր փողոյ, և գոչեաց առ հաստատակ երկիր և ծով չորեքանկեան աշխարհիս։ և տեսանէի ամպուք եկեալ յարևելից և յարևմտից, ի հիւսիսոյ և ի ծովէ հարաւոյ, զամենայն սուրբս գունդս գունդս եկեալ յայն հարթայատակ դաշտին։ Նկատէի և ի բլուրն զարմանալի և տեսանէի ներքոյ վարագուրին առաջի սրբոյ աթոռոյն զՄայրն Ցեսառն Աստուծոյ յաղաչանս բազկատարած, և եգան երկոտասան աթոռ առաքելոցն, և նստան ի գաստատան փառազարդեալքն, և անգ էր տեսանել հոյլք արեգականց թագագլուխ սրբոյն պարք՝ առաքելոցն և մարգարէիցն, հայրապետացն և մարտիրոսացն, և ամենեքեան ի մի բերան փառաւորեցին զԱստուած ի ձայն մեծ և ասեն, Ահա ժամանակ այցելութեան առնուլ բարի մշակացն զվարձս բարեաց։ Եւ ես ջանայի ամփոփել զայնքան տեսութիւնն ի զգայութիւնս իմ և ոչ զաւրեի, զի ի վեր էր քան զհասուն մարդն հոգոյ, բայց վասն որոյ փափագէի տեսանել՝ զայն եցոյց ինձ բարձրեալն։

Ցեսանէի զԼուսաւորիչն մեր և զկենաց առիթն զսուրբն Գրիգոր, բիւրաւորաւք լուսեղինաւք հրաշազարման թագիւ եկեալ, և մինչ մատանէր ի հանդէսն, երանէին զնա հրեշտակք և երկնային զաւրք, այլ և եկեղեցիք անդրանկաց փառաւորէին զնա և ասէին, Ե՛կ ի մարմնի անմարմին, որ նորաւրէն ժուժկալութեամբ յաղթեցեր ամենայն կարեաց, և գերագոյն գտար քան զամենայն սուրբս։ մո՛ւտ յառագաստն կենաց, և ժառանգեա զքանաչանեալ փառսն։ զոր դու ինքնին քեզ հիւսեցեր։ Եւ եգաւ աթոռ նորա գերապատիւ առաքելոցն, ընդ ինքեան ունելով զանթառելի լուսաւոր գունդն իւր։ և մերձ լեալ աթոռոյ աստուածութեանն զաւարթ և համարձակ դիմաւք ասէր։ Տէր իմ և Աստուած։ ահաւասիկ ես և մանկունք իմ զոր եռուր ցիս։ և ոչ կորուսի ի սոցանէ և ոչ զոք։ բայց որ խոտորեցան

ի խրատուէն իմմէ և մնացին ի կորուստն։ Ներեա՛ Տէր, քաւեա՛ Տէր, զի քոյ է փրկելն և կորուսանելն։ Եւ եկն առ նա ձայն ահաւոր իբր զթնդիւնս որոտման, և զկնի ձայնին սրգ քաղցրալիր որ ասէ. Ե՛կ մշակ իմ խոնջեալ և քրանեալ. ե՛կ բարի վկայ ստուգութեան իմոյ, ե՛կ բազմավիշտ նահատակ, զի ես եմ որ ընչեմ զամենայն քիրան յամենայն երեսաց, և հանգուցանեմ զամենայն աշխատեալսն վասն իմ, զի ահա ժամանակ վշտին էանց, և կայ և մնայ քեզ արդարութեան պսակն, զի ուր են եմ, անդ և պաշտաւնեայն իմ եղիցի։ Եւ տեսանէի իբրև զալ ձեռին զի առեալ նստուցանէր զնա բարձրագոյն քան զամենայն սուրբս, նոյնպէս և զժողովուրդն իւր։

Եւ անդ տեսի ժողովեալ զամենայն ազգս և զազգինս, և հրեշտակքն զառեալ մեկնէին զնոսա ի միմեանց, և զառեալ զանթուելի գունդս մեղաւորացն, և տանէին յայրումն հրոյ և յազգի յազգի տանջանս։ Եւ մինչ հայէի տեսանել, տեսանէի գունդս գունդս, զի ծփէին իբրև զալիս ծովու և ջանային խառնել ի ժողովն Հայոց, և հրեշտակքն վարէին զնոսա հրեղէն գաւազանաւք, և ընթանային ի ժողովն Հոռոմոց, և հրեշտակքն և անտի վարէին զնոսա, և ընթանային ի ժողովն Ֆրանգաց, և հրեշտակքն անտի ևս վարէին զնոսա, և ծփէին և ոչ կարէին խառնիլ յազգս։ Եւ ես ասացի ցմաւտաւոր հրեշտակն որ ցուցանէր ինձ զտեսիլն. Տէր ընդէ՞ր ողորմելի շրջի ժողովն այն, և ոչ թողուն խառնիլ ի ժողովս, միթէ՞ առանց մկրտութեան են այնոքիկ։ Ասէ ցիս. Գիտեա՛, եղբայր, զի Աստուած կամեցաւ ցուցանել քեզ զստուգութիւն երիգ։ Այնոքիկ կամեցան ազգէ յազգս փոխել, և արհամարհեցին զմի մկրտութիւնն և եղեն Հոռոմ, կամ Ֆրանգ կամ Ասորի, և ահա ոչ ընդունին զնոսա իբրև զժողովուրդ Աստուծոյ, այլ իբրև զարհամարհողս, և տանջելոց են ընդ մեղաւորս։

Եւ իբրև տեսի ես զայս հրաշալի տեսիլ զարթեայ, և եկեալ յիս զգայութիւն իմ փառաւորեցի զբարեգործն Աստուած որ ոչ անտես արար զաղաչանս իմ, և երանեցի զազգն Հայոց՝ որք կացին ի կանոնս խրատու սրբոյն Գրիգորի. և ոչ յայտնեցի զսա մինչև ցայժմ, զի հանդերձեալ եմ վախճանել, և յայտնեմ ձեզ զտեսիլս զի և դուք ի միամիտ սրտէ փառաւորեցէք զՔրիստոս Աստուածն մեր՝ որ է աւրհնեալ յաւիտեան։

Digitized by Google

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԱՍԱՑԵԱԼ ԲԱՆ ՀԱՄԱՏԱԼԻ ԱԶԳԻՍ ՄԵՐՈՒՄ։

Կենաբեր սուրբ աւետարանն զԹադէոս զմեր առաքեալն յերկոտասանից է ասացել։ Ղէբէոս՝ որ անուանեցաւ Թադէոս։ Ցայտ է ի Քրիստոսէ անուանեցաւ՝ զանունն փոխեալ որպէս զՊետրոսին և զՈրդւոցն Որոտման։ Զի՞նչ է պատճառն որ ոմանք յեւթանասնից ասեն. այս է ՀԲ. աշակերտացն գլուխ և վարդապետ էր։ որպէս Պետրոս ԲԺ. իցն։ զի առաջինքն ամենայն ուրեք յետոնցն անուամբ կոչէին։ այս է ստոյգ պատճառն։ Ի վիճակել նմա յերկիրս Հայոց։ տրամեցաւ և ասաց։ երկիրն ցուրտ է և մարդիկքն բրտաբարք։ Եւ ասացին. Մի՛ ընդդիմանար Հոգւոյն. և եռուն նմա զեղն աւծման՝ զոր Քրիստոս էր աւրհնել՝ աւգնական։ և զգեղարդն և յայլ աղգ չկայ այս պարծանքս՝ մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի։ Եւ ի գալն նմա ի Կեսարիա նկ։ և զառաջին ձեռնադրութիւնն անդ արար։ և եպիսկոպոս ձեռնադրեաց Թէոփիլոս անուն։ և եկեղեցիս հիմնարկեաց։ և այս էր պատճառն Հայոց անդր ի ձեռնադրո-ւիլն գնալոյն։ և վասն այնր աթոռ սահմանեցին։ և սեփական քաղաք է Հայոց Կեսարիա. և սուրբն Գրիգոր անդ սնաւ։ և ծնաւ յղացեալ ի գերեզմանին Թադէոսի առաքելոյն։ և սնաւ ուր առաքեալն սկսաւ քահանայագործել։ և փոխեաց յինքն զշնորհս նորա։ անդ եղև եպիսկոպոս։ և գնացեալ յԵրուսաղէմ եղև Հայրապետ։ և ի Հռոմ գնացեալ։ եղև պապ։ զի այսպէս սահմանեցին։ Ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ Հայրապետ մի նստցի ի Հայս և ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ Հայրապետ մի նստցի ի Հռոմ։ և ի միմեանց վերայ գնիցեն զանձինս իւրեանց ցմահուշափ։ և գրով սոսկալեաւ եղեն եղբարք միմեանց թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն։ Եւ բաժանեալ զսուրբ տեղին տնաւրինական։ և եռուն զՍուրբ Ցա-

Digitized by Google

կորն պատրիարգարան և զԳողգոթայն, և արկեալ վիճակս ի վերայ Յարութեանն և անկաւ Հայոց, և արամեցան ոմանք յազգէ։ Ապա հեղն յամենայնի սուրբն Գրիգոր եառ ցնոսա, զի ինքեանք շինեսցին ընդարձակ, զի դեռ շինեալ, և էառ Հայոց զԳողգոթայն և զՍուրբ Կարապետն և զՍնարան, և սահմանեալ զտեղին կախեաց կանթեղս յանուն ազգաց, և նա խնդրեաց յԱստուծոյ զիջումն լուսոյն ի նշան յարութեան Քրիստոսի, և վասն այնորիկ այլ ազգդ չհաւատան, զի յառաջ չկայր մինչ ի նա, և առաւել վասն այնորիկ անուանեցաւ Լուսաւորիչ։ Եւ մի ոք անհաւատասցի, զի այնպիսի աշխարհալուր և առաքելական այր, և տիեզերասաստ թագաւոր, յարևելից յարևմուտս գնացեալ, վայրապար գնացին, կամ նոքա փոքր պատիւ համարեցան ինքեանց զգալն նոցա և յամենայն տիեզերս այլ ո՞վ կայր իբրև զնա, կամ յետոյ եղև իբրև զնոսա, և դեռ սկիզբն էր հաւատոյ։

Արք մտաւորք, պատեհ է որ Յոյնք զմեզ աւտարացնեն որպէս Հրէայք զՀեթանոսսն, և յետին ասեն։ Զի՞արդ է յետին, զի Աբգար թագաւորն յառաջ քան զխաչելութիւնն հաւատաց ի Քրիստոս և երանեցաւ ի նմա։ Եւ երեք առաքեալ ունին Հայք ԲԹ. ի յն, զԹադէոս և զԲարթուղիմէոս, և զՅուդայ Յակոբեան՝ որ կայ յՈրմի քաղաք, որ է սեփական Հայոց։ Եւ յառաջ Յրդատ հաւատաց, և ապա Կոստանդիանոս, և յայտնի է և ասէ Ագաթանգեղոս, Յայնժամ լուաւ Յրդատ եթէ հաւատաց ի Քրիստոս Կոստանդիանոս որդի Կոստդեայ, այլ և ի սուրբ Հռիփսիմեանցն գալոյն յայտնի է։ Եւ թէ ասեն թէ սուրբ Գրիգոր ի Կեսարիա ձեռնադրեցաւ, և այն մեր քաղաք է, և շատ Հայք անդ էին բնակեալ, և մեր Առաքելոյն աթոռ։ Բայց թէ գիր չունէին Հայք, թէ զայս կարեն ասել, այլ ասա զի յԱստուծոյ առաւ գիր ազգիս՝ որպէս Մովսէսիւ Իսրայելի, և այլ ո՞ր ազգ պարծի այսու։ Եւ ընդ նոսա զի՞ զարմանաս, մեր ոչինչքս Հայոց յետին ծառայքս՝ վիրք ա՛յլ նախատեն զմեզ և ուրանան։ Մեսրոպ եառ նոցա գիր և զՎարդիոյ խաչն Մեսրոպ է աւրհնել, և ՝աչ թևին կայ հայ գիր, և զայն ասկւոյ ծածկեալ են թէ թո՛ղ չերևի։ Ագաթանգեղ Հռոմայեցի է և վկայած ժամանակագիր, և վկայեալ է թէ յառաքելոցն Պետրոսի և Պաւղոսի ի նշխարացն բերին ի Հայք, և յանուն նոցա շինեցին զՍուրբ Առաքեալքն, և անդ պահեցին զնշխարս նոցա, և յոլովք ի ֆրան-

գաց ասեն թէ չկայ ուրեք ի նշխարաց առաքելոցն, ապա մեք չուրանամք և իբրև զնոսա սուտ լինիմք։

Բաղում ինչ այլայլեցին յառաքելական կարգաց, որպէս զաւան ծննդեանն և զջուրն՝ որ ի խորհուրդն արկանեն։ Թո՛ղ ցուցանեն մեզ զվէճն Կեղեստիանոսի ընդ Բարսումայի, թէ չվկայէ մեզ որ ասաց Բարսումայ թէ դուք միայն էք անխմոր և անջուր խորհրդով, և նա ասէ։ Մի՛ բարի քեզ, ահա ազգն Հայոց Մեծաց ընդ մեզ են, որք ուսան ի սուրբ Գրիգորէ որ հրեղէն սիւն է, և երկնահաս լեառն։ Զկարեն ուրանալ զի մերքն ի նոցունց թարգմանեցին, և զծննդեան աւանն մինչ ի յո . . . . . չաւանէին ընդ մեզ. Թողում զլուծութիւն եկեղեցականաց, զանհամեալ աղսն՝ որ ոչ իմիք է պիտանացու. Մեք զճշմարտութիւնն առցուք մեզ ընկեր և աւգնական, եղբարք, և նոլաւ գնասցուք, փառաւորելով զԱստուած յերեսին գէմն և ի մի բնութիւն, և ի մի կամս, և ի մի թագաւորութիւն և զՔրիստոսի մարգեղութիւնն ուղղափառութեան՝ կատարեալ Աստուած կատարեալ մարդով միաւորեալ անշփոթելի։

Զայլն է Վ.արդանայ Վրդ՝՝ի գէրդ գի՛ւ ՐԷ տողէս։

Digitized by Google

ԱՅԼ ԲԱՆ Է ԱՍԱՑԵԱԼ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ·

Յարևելից եկին մոգքն առ Քրիստոս, վասն զի դրախտն յարևելս է անկեալ, և յարևելից ելանէ արեգակն, նոյնպէս և յարևելից է հանդերձեալ գալ արեգակն արդարութեան Քրիստոս։ Եւ ոսկի բերեալ, զի ոսկի երկրին այնորիկ քան զամենայն պատուական է։ Եւ այլ պատճառ՝ զի զմի մի յաստեղացն կենդանի և բանաւոր դաւանէ Հեթանոսն։

Եւ մեր ի Հայք առաքեալքն Բարթուղիմէոս և Թադէոս և Յուդա Յակոբեան. բայց զԲարթուղիմէոս, վասն այն եգի սկիզբն, զի ոմանք զԹադէոս յեւթանասնից ասեն, և զԲարթուղիմէոս մէն յԲԺ. ից։ Թադէոս՝ զոր աւետարանն պատմէ թէ յառաջ կոչէր Ղէբէոս, և ի Յեառնէ անուանեցաւ Թադէոս։ Յուդա Յակոբեան՝ որ և սա յԲԺ. ից վկայի և կայ Յորմի քաղաք Հայոց։ Սիմոն՝ որդի Յովսէփու, եղբայր Յեառն մերոյ. և սա քարոզեաց ի Հայս, և անդ կատարեցաւ և կայ Յորմի քաղաք Հայոց։ Եւ Եղիշէ և Խադայ։ Բ. յեւթանասնից են և գնացին ի կողմանս Աղուանից հրամանաւ Թադէոսի, և անդ կատարեցան։ Թէոփիլոս՝ առաջին ձեռնադրածն՝ Թադէոսի ի Կեսարիա Հայոց ի Կապադովկիայ։ Ադդէ կերպասագործ Արգարու թագաւորին։ զոր կացոյց ի Միջագետս յՈւրհայ քաղաքի։ Զաքարիա՝ զոր ձեռնադրեաց յարևելս փոխանակ ինքեան և ասաց։ Զսա՛ եառ ձեզ վարդապետ։ զոր եցոյց ինձ Հոգին սուրբ։ Դադիւմ յեւթանասնից։ որ գնաց հրամանաւ Թադէոսի ի Մեծն Հայք։ և ի կողմանս Հիւսիսոյ։ և լուեալ զմահն Արգարու։ և դարձեալ եմուտ ի փոքր Սիւնիս։ և կրաւնաւորեալ անդէն ծածկաբար վախճանեցաւ։ և տեղին շինեցաւ վանք։ և յանուն նորա կոչեցաւ։ Որոյ աղաւթիւքն ողորմեսցի Քրիստոս Աստուած ամենայն հաւատացելոց ի Քրիստոս։

Digitized by Google

(ՑԻՉԱՏԱԿԱՐԱՆ)

Շնորհք մեծապէս և երկրպագութիւն ամենասուրբ, Աստուածն Հոգւոյ՝ ի փառս Հաւր և Որդւոյ, ամէն։ Որ անքաժանելի գոլով բազմամասնապէս բաժանէ շնորհս ըստ չափոյ ընդունողաց մեծամեծացն և փոքունց, ոչ առ մեծսն խնայելով իբր զլացմամբ, և ոչ առ նուաստսն յաճախ քան զարժանն ի վատնումն զձիրսն տալով, զորս ունաւղքն բանականապէս իւրաքանչիւր զիւրն ճանաչէ զչափ։ Ցորոց ի բնաւիցն յոքունց և իմս նուաստութիւն, որ և փոքու մասին անարժան գոլով Թովմաս ոմն անուն, տարաշխարիկ եղեալ ի հայրենի տեղոյ իմոյ, ելբեանն ի վաղնջուց ամաց հայրապետական աթոռոյ ճոխութեամբ փառաւորեցելոյ, ի նշանաւորն ասեմ դղեկէ Հռոմկլայէն, վասն իմոյ մեղաց, նախ քան զվեց ամ գրութեան տարիս ի ձեռս Տաճկաց մատնեցելոյ, յորմէ ամաւ և կիսով նախ քան զառնուլն պատահեաց ինձ ելանել և գալ յաշխարհս Կիլիկիոյ, յուսով տեսութեան սուրբ գերեզմանին Քրիստոսի. զոր վարկանիմ թէ և ոչ ըստ իմոյ արժանեաց, այլ վասն անչափ խնամոցն Տեառն դիպեցաւ այս, ոչ տեսանել ի ժամանակի պաշարման դղեկին զանհանդուրժելի նեղութիւնն, որոյ և լուրն պակուցանէ զամենայն լսաւղս։ Ուր և բազումք մանաւանդ քրնաւքն սննդակիցք իմ և աղգայինք ի պէս պէս մահս, և ի գերութիւն վարեցան մեծ թշուառութեամբ, արտաքս քարշեալք ի մայրենի գրկաց պանձալի դղեկին, զորոյ լիշատակ երջանկութեանն, և գայժմու թշուառութեան, որպէս ի դէպ է հարազատ զաւակի առ սիրելի ծնաւղն, և ոչ առանց արտասուաց բերեմ։ Վասն զի դերեալ եղն և Ա՛Ջ սրբոյն Գրիգորի և հռչակաւոր նշանն սուրբ Վանկայի. առ ստն ընկեցեալ նչխարք ոսկերաց սրբոց վկայիցն։ Այս և աստուածաբնակ և երկնանման շքեղաշուք և գերազայծառ սուրբ տաճարն, զորոյն Գրիգորի ասեմ և Տիրամարն սրբուհոյ Աստուածածնին, և յանուն Որդւոյ Նորա սուրբ Փրկչին, կոխան եղն՝ և աւթարան անհաւատիցն։ Այլ գիմ անարժանութիւն ի վեր քան զիս պատահեալ շնորհ-

Digitized by Google

քահանայութեան, և ուղիղ դատմամբ յոյժ պակաս գտանելով զիս ի վայելչականացն, գործնականացն ասեմ և տեսականաց լաւագոյն մասանց հարկաւորաց այսր աստիճանի, գրեթէ անպատշաճիւք լցեալ, և մեծապէս ընդ այսր զանձն իմ պարսաւեմ. Այլ սուղ ինչ և զայս ոչ անմասն ի բարեաց ծանեալ զճանաչելն զանձին նուաստութիւն։ Եւ թէ չէ իրաւ, գոնէ ի սակաւուց ինչ ձեռնհաս գտելոց մասանց բարեաց պղերգանալ բարձրամիտ խոկմամբ, այլ ըստ չափոյ կարողութեան ժրանալ, և այսու մտածութեամբ, իբր թէ ի հոգևոր սքաղանս տրուպ անձինս և ի սփոփանս սգապատ ոգւոյս, մանաւանդ վասն առ ի Քրիստոս յուսոյն ձեռնարկեցի գրել զսրբոց հարցն պէս պէս և զանազան ԹՂԹՈՑ զ ԳԻՐՍ, որք վասն ուղիղ հաւատոյ ի Քրիստոս խոստովանութեան ի զանազան ժամանակս հանդիսացեալք և վասն աւգտի զկնի եկելոցն լիշատակ թողեալ։ Որոց Աստուածասէրն կամաց, և ես անարժանս և տկարս հետևող եղեալ խոշոր և անարուեստ գրով ձաքուտեցի զսուրբ մատեանս հաւաքեալ թղթոցս. լիշատակ բարեաց մնալ մեղաւոր անձին խոշոր գրչիս թողմալի։ Եւս և իմոց ի Քրիստոս հանգուցեալ ծնաւղացն, և հաւրեղբայրն՝ սրով խողխողելոց, և այլոց ևս տոհմակցացն, ի վերայ պահպանութեան և զգուշութեան նախալիշեցեալ Կլայիին և այլոց . . . . . լլի ողբերգելի առման բերդին . . . . . անդ սպանելոց, և այլոց գերի վարելոց, և ի բանդի խոստովանութեամբ ի Քրիստոս վճարելոց, և ոմանց դեռևս ի բանտի կապելոց։ Ցաղագս որոյ յոտս սրբոցդ և իմաստնոց անկեալ, պատահելոցդ ասեմ սուրբ մատենիս, և աւգտեցելոց ինչ ի խոշոր աշխատութենէս . . . . . *)

Առումն Հռոմկլայի ի Սուլտանէն Եգիպտոսի եւ զերութիւն Ստեփանոսի Կաթուղիկոսի Հռոմկլայեցւոյն եղեւ յամի Տեառն 1292 յորում եւ ծոռազատիկն էր. եւ զի վեց ամաւ յետոյ ղնէ գլուխն Թովմաս զթուական գրութեան, յայտնի է թէ յամի Տեառն 1298, եւ հայոց ՉԽԷ ընդօրինակեալ է ԳԻՐՔՍ ԹՂԹՈՑ, հաւանաբար ի Սիս, զի յիշէ զաշխարհն Կիլիկիոյ առանց անուան քաղաքի կամ վանաց:

---

*) Պակասի վերջ յեշատակարանէս։

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբաս (երէց) 41.
Աբաս (եպս. Պարտաւայ) 81.
Աբաս (երէց Փարպիոյ) 151.
Աբգար (թագաւոր) 414. 534. 536.
Աբդիշոյեան Խուժիկ 47.
Աբդիսոյ կամ Աբդիշոյ (երէց, ապա եպիսկոպոս) 54. 55. 57. 59. 62. 66. 68. 73. 78. 81. 344.
Աբեններ 242.
Աբէլ 500.
Աբէլմէուլա (գիւղ) 516.
Աբիմելէք (քահ.) 476.
Աբիուդ 392.
Աբիրոմն 258.
Աբրահամ (Հայր) 6. 37. 88. 126. 285. 288. 327. 347. 388. 500.
Աբրահամ (եպս. Տարաւնոյ) 78. 81.
Աբրահամ (եպս. Ռշտունեաց) 146. 149.
Աբրահամ (Կթղ. Հայոց) 151. 153. 161. 162. 164. 166. 176. 178. 180. 185. 189. 196. 211. 222. 455.
Աբրահամ (երէց Կաթուղիկէի) 151.
Աբրահամ (երէց Փարպիոյ) 151.
Ադաթանդեղոս 534.
Ադաթոն (Հռոմայ հայրապետ) 300.
Ադամ (նախահայր) 64. 205. 230. 231. 256. 336. 341. 342. 344. 352. 370. 386. 389. 422. 440. 451. 452. 453.
Ադէ 536.
Ադուէլ 183.
Ադրիանոս (կայսր) 501.
Աթանասիոս | (Աղեքսանդրացի) 50. 69. 91. 94. 101. 214.
Աթանաս | 299. 306. 364. 369. 370. 372. 375. 377. 379. 385. 386. 389. 423. 427. 428. 436. 442. 447. 449. 452, 453. 461. 470. 474. 477. 479. 507.

Digitized by Google

Աթանաս (եպ. Նփրկերտոյ) 224.
Աթենացիք 380.
Ալանք 304.
Ալեթերիոս (սուրբ) 518.
Ախա (երէց) 42.
Ակակ (եպ. Մելիտինացի) 14. 16. 19. 103. 296. 376.
Ակակ (պարսիկ՝ հերետիկոս) 43. 46. 50. 57. 67. 83. 216. 220. 278.
Ակակ | (եպ. Կոստանդնուպաւլսոյ) 243. 244. 245. 247.
Ակակիոս | 249. 250. 251. 253. 256. 258. 262. 264. 265. 267. 268. 269. 272. 274. 276. 300.
Ակթասալիա 525.
Ակի կամ Ակէ 70.
Ալատիս (քղք.) 511.
Ահարոն (երէց) 53. 55.
Ահարոն (եպ. Մեհնունեաց) 146. 149. 151.
Ահարոն 237. 252.
Աղան (եպս.) 41.
Աղբէոս (եպս. Հարքայ) 223.
Աղեքսանդր | (քաղաք) 88. 119. 120. 121. 179. 185. 214.
Աղեքսանդրիա | 259. 260. 262. 268. 269. 273. 277. 280. 299. 306. 375. 377. 380. 396. 423. 428. 429. 435. 442. 511. 513. 518. 521.
Աղեքսանդր (եպս. Աղեքսանդրիոյ) 306.
Աղեքսանդրացիք 244. 247. 249. 250. 251. 253. 256. 258. 259. 262. 264. 265. 267. 268. 269. 272. 274. 276. 297. 300. 306. 310. 398.
Աղեքսանդրոս 258.
Աղիվարդ 258.
Աղուանք 43. 45. 46. 51. 81. 130. 133. 162. 163. 183. 193. 194. 196. 211. 221. 300. 322. 466. 536.
Աղցք 151.
Ամատունիք 42. 70. 78. 81. 146. 149. 151. 196.
Ամարաս 81. 196.
Ամասիա 224.
Ամբակում (եպս. Շաքիոյ) 81.
Ամբակում (մարգարէ) 455.

Digitized by Google

Ամղիքոս (եպս. Սևանդրիոյ) 525.
Ամոնացիք 394.
Ամպեղիս (եպս.) 49. 51.
Ամպրոսիոս 51.
Այրարատ 42.
Անակ 323.
Անանիա (Նարեկացի) 498. 502.
Անաստաս | Անաստասիաս (կայսր) 126. 140. 141. 142. 277. 300. 328.
Անաստաս (Ուռհայեցի) 523.
Անատոլի 119.
Անատոլիս (եպս.) 329. 491.
Անատոլիս (երէց) 49. 51.
Անդրէաս (Առաքեալ) 103. 146. 278. 484.
Անդրէաս (Տօմարազէտ) 354.
Անդրէաս (աշակերտ) 512.
Անթիպատր 491.
Անինոս (Աղեքսանդրացի) 519.
Անկիւրա 421. 446.
Անձևացիք 70. 146. 149. 151.
Անձն (երէց) 21.
Անոկտիոս (Գանփիւլացի) 512.
Անտեղիս (եպս.) 254. 259.
Անտեղիս (երէց) 259.
Անտիոք (աղեք.) | Անտիոքիա | Անտիոք Ասորւոց 20. 119. 120. 142. 179. 185. 186. 224. 297. 298. 300. 307. 323. 344. 466. 504. 525.
Աշոտ (իշխանաց իշխան) 279. 283.
Աշոտնիս (Զոր հռոմկլայի) 530.
Աշտիշատ 220.
Ապահունիք 42. 73. 151. 196. 223.
Ապաւղինարիոս (Լաւոդիկեցի) 24. 31. 53. 56. 67. 83. 215. | Ապոզինար | Ապաւղինարէս 278. 287. 307. 315. 375. 383. 386. 389. 430. 433. 448. 449. 453. 473.
Ապլվարդ (Ամիրայ) 498.
Ապոզան 383.
Ապրանեզ Խոսրով (արքայից արքայ) 149. 151.
Ալ (սրբոյն Գրիգորի Լուսաւորչին) 537.

Digitized by Google

Աջհա 47.
Առաւեղենք 42.
Առիստակէս կամ Արիստակէս (որդի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի) 44. 51. 88. 215. 220. 295. 304. 374.
Առնա
Առան | 146. 149. 151.
Ասալէլ 242.
Ասեր 439.
Ասիա 296. 307. 415.
Ասիացիք 416.
Ասկաղոն (քաղաք) 521.
Ասորեստան 41. 43. 60. 307.
Ասորեստանեայք 322.
Ասորի 532.
Ասորիք 52. 55. 59. 62. 73. 78. 81. 227. 306. 331. 334. 335. 336. 345. 352. 466. 493. 496. 525.
Աստարտէ 342.
Աստուածաբան տես Գրիգոր Նազիանզացի
Աստուածատուր (եպս. Բժնունեաց) 70.
Աստուածատուր (Վանանդայ տէր) 74.
Աստուածատուր (Արշաւիրեան) 74.
Աստուածատուր (հաւենունի) 74.
Ավփիլոս (Կեսարացի) 517.
Ատատէ (եպս.) 41.
Ատտիկոս 51.
Ատրներսեհ (Ռշտունեաց տէր) 42.
Ատրներսեհ 133. 138. 168. 170. 174.
Ատրպատիճ, Ատրպատիճք 91. 95.
Արա 5.
Արաբիա 322.
Արագած 111.
Արած կիւղ 109.
Արամազդ 346.
Արեաց աշխարհ 171.
Արապինար 322.
Արզն 218.
Արիանոսք 8. 33. 98. 258. 298. 366. 369. 377. 411. 430. 466.

Digitized by Google

Արիճ 151.
Արիոս 49. 50. 53. 56. 66. 83. 146. 149. 152. 215. 278. 284. 295. 307. 328. 374. 415. 417. 449. 459. 491. 505.
Արիստոտէլ 384. 433.
Արծափք 151.
Արծրունիք 42. 70. 73. 146.
Արղահա (Սրկդ.) 41.
Արշակունի 323.
Արշամունիք 42. 73.
Արշարունիք 41. 42. 73. 223. 224. 232.
Արշոտ (Վարազտիրոցեան) 74.
Արուաստ 218.
Արտաշիր 41.
Արտաշիր (մախազ) 42. 48.
Արտաշիր (Սիւնեաց տէր) 42.
Արտաշիր (Առաւեղենից տէր) 42.
Արտաւազդ (Մամիկոն) 74.
Արտաւազդ (Ապարանից) 151.
Արտեմոն 88. 307. 325. 326. 352. 484. 487. 488.
Արքանգեղտիք 216.
Աւան 151.
Աղոս 258.
Աշական 151.
Աբրելիանոս (եպս. հռովմայեցի) 493.
Ափոց (եպս. Յուրտաւայ) 178.
Ափրիկեցիք 466.

Բաբ (եպս. Ամատունեաց) 78. 81.
Բաբգէն (կթղ. հայոց) 41. 42. 47. 48. 177. 183. 220. 221. 300.
Բաբգէն (Սերգիս) 47.
Բաբելոն 347.
Բաբէ (կթղ. Ատրեստանի) 45. 50.
Բաբիւլաս (երէց) 111.
Բաբիւլաս (երէց ս. Յովհաննու) 151.
Բագարան 151.
Բագրևանդ կամ Բագրաւանդ 70. 73. 151. 196. 412.

Digitized by Google

Բահաղիմանք 394.
Բաղասական 81.
Բաշխեն 42.
Բասաղէ իմաթեան 41.
Բասեն 41. 70. 73. 78. 81. 146. 149. 150. 151. 223. 412.
Բասիլիոս, Բարսեղիոս, Բարսեղ, Բարսիլիոս, Բասիլ (Կեսարացի) 8. 25. 50. 69. 91. 94. 101. 214. 231. 306. 315. 334. 343. 355. 368. 380. 388. 433. 434. 418. 449. 453. 463. 465. 471. 516.
Բասիլիսկոս (վկայ) 253.
Բարդեծան 66. 278.
Բարդողիմէոս, Բարթողոմէոս, Բարթուղիմէոս (Առաքեալ) 302. 323. 414. 497. 534. 536.
Բարծումա, Բարծումէ, Բարսումա (Ընծիւհնացի կամ Մծբնացի) 43. 46. 50. 53. 56. 57. 67. 83. 216. 220. 278. 344. 535.
Բդեշխ (երէց) 52.
Բդնա 52. 54. 55.
Բեղդեէմ կամ Բեդիսէմ 436. 484.
Բեթել 518.
Բենեամին (եպս. Մնդրի) 218.
Բերդուշմ 42.
Բզնունիք 223.
Բժնունիք 70.
Բիւթանացիք 295.
Բիւրիտոնիա 523.
Բղաղ 41.
Բոժունիք 146. 149. 151.
Բոզնիս 183.
Բրատոկ 41.
Բրզմիհր 133. 138.
Բրիխիսոյ (քահ.) 54. 55.

Գաբրիէլ (հրեշտակ) 3. 4. 64. 248. 286. 352. 354. 381. 437. 438. 528.
Գաբրիէլ (երէց) 52.

Digitized by Google

Գաբրիէլ (կթղ. Վրաց) 177. 182. 300.
Գաբրիէլ (եպս. Տաճկաց) 218.
Գաբրիէլ (եպս. Քարմալ) 218.
Գագիկ (թգր. Վասպուրականի) 295.
Գազա 510.
Գալիլիա 348. 353.
Գաղատացիք 226. 383.
Գաղգաղա 487.
Գայինոսք 216.
Գայիոս (սպասաւոր Գաւդոսի) 380.
Գանգրա 259.
Գառնի 151. 526. 530.
Գառնիկ (եպս. Ցուրտաւալ) 178.
Գարդման 81. 224.
Գարմեկան կամ Գարմիկան 41. 42.
Գարջուր (Մաղխազ) 74.
Գերմանոս (պտք. Կ. Գաւլսոլ) 373.
Գէորգ (կթղ.) 278.
Գէորգ (կթղ.) 335.
Գիգ Դաշտկարին 108. 149. 150. 151. 168. 170.
Գիորգիս (երէց Սրճոլ) 151.
Գիւտ (եպս. Վանանդալ) 78. 81.
Գնադիոս (եպս.) 256. 259.
Գնեալ Գնունի 74.
Գնէլ 42.
Գնիբա 41.
Գնիսթա 52.
Գնունիք 42.
Գողգոթա 65. 511. 520. 534.
Գողթն 73. 146. 149. 151.
Գոմոր 329.
Գուսա 52.
Գունդշապուհ 43.
Գրիգոր | (Լուսաւորիչ, Սուրբ) 51. 71. 78. 79. 82 88.
Գրիգորիոս | 90. 93. 110. 112. 113. 123. 128. 132. 133. 136.
138. 161. 166. 171. 174. 176. 179. 180. 189. 212.
214. 218. 220. 222. 224. 237. 289. 291. 295. 296.

Digitized by Google

297. 298. 302. 303. 304. 306. 308. 323. 324. 327. 333. 334. 336. 358. 374. 414. 416. 419. 420. 424. 432. 433. 456. 492. 496. 497. 526. 528. 531. 532. 534. 535.

Գրիգոր (եպս. Արծրունեաց) 70.

Գրիգոր, Գրիգորիոս (Աստուածաբան. Նազիանզացի) 6. 50. 69. 213 214. 236. 289. 299. 306. 315. 316. 323. 354. 355. 366. 380. 386. 421. 430. 432. 445. 465. 470. 475. 478. 480. 482. 485. 486.

Գրիգոր, Գրիգորիոս (Աքանչելագործ. Նեոկեսարացի) 26. 214. 298. 306. 442. 481.

Գրիգոր (Նիւսացի) 306. 343. 368. 369. 377. 379. 380. 388. 423. 424. 434. 435. 450. 471. 474. 504.

Գրիգոր (եպս. Մարդպետական կամ Սեպհական գնդին) 70. 73. 76. 81.

Գրիգոր (եպս. Բասենդոլ) 70. 73.

Գրիգոր 73.

Գրիգոր (եպս. Արծրունեաց) 73. 76.

Գրիգոր (Հմայեակեան) 74

Գրիգոր (Վասակեան) 74.

Գրիգոր (Աբեղեան) 74.

Գրիգոր (եպս. Կապաղական) 81.

Գրիգոր (եպս. Անձևացեաց) 146. 149. 151.

Գրիգոր (Քերդող) 153.

Գրիգոր Սիւնի 196.

Գրիգոր (Մագիստրոս) 219.

Գրիգոր (Նարեկացի) 498.

Գրիգորեանք, Գրիգորք 91. 94. 101. 516.

Գրիգորիս (Վկայասէր կթղ.) 219.

Գրիգորիս, Գրիգորէս (Արշակունեաց Քորեպիսկոպոս) 223. 224.

Դաղան 258

Դաղիում 536.

Դամասոս 306.

Դանիէլ (եպս.) 41.

Դանիէլ (եպս. Ռշտունեաց) 42.

Digitized by Google

Դանիէլ (եպս. Անձևացեաց) 42.
Դանիէլ (երէց Գնիսթալի) 52.
Դանիէլ (երէց Բդնալի) 52.
Դանիէլ (Մարգարէ) 338. 392. 439.
Դաշտակարան 42. 149. 150. 151. 168. 170.
Դատ (Գարջուղեան) 74.
Դատ աւան 151.
Դաւիթ (Մարգարէ) 34. 35. 69. 87. 88. 200. 216. 231. 235. 236. 246. 285. 303. 312. 318. 324. 326. 339. 350. 354. 365. 389. 416. 419. 420. 425. 429. 436. 437. 457. 458. 461. 467. 479. 481. 484. 500. 502.
Դաւիթ (եպս.) 42.
Դաւիթ (երէց Սոքփոնիէ) 52
Դաւիթ (երէց Խափալի) 53. 55.
Դաւիթ (երէց Փարթնալի) 54. 55.
Դաւիթ (արեգ.) 54 55.
Դաւիթ (երէց Երևանալ) 151.
Դաւիթ (եպս. Բողնիս) 183.
Դաւիթ (եպս. Սիւնեաց) 196.
Դեղիոս (եպս.) 377. 449.
Դէոսկորոս, Դիոսկուրոս, Դիոսկորոս, Ցէոսկորոս (եպս. Աղեքսանդրիոյ) 91. 94. 119. 120. 186. 187. 259. 300. 305. 307. 308. 328. 331. 333. 491. 492. 493. 511. 513. 514. 517.
Դիոնիսիոս, Դիոնէսիոս (Աղեքսանդրացի) 26. 296. 306. 459. 460.
Դիոնէսիոս (Արիսպագացի) 306. 380. 442. 459. 470. 479. 526.
Դիոս 383.
Դիոսոր, Դիոդոր(է), Դիոդորոս, Դեոդորոս, Դեոդորոս, Դէոդորոս, Թէոդորոս, Դէոդոր (Դիոդորոս=Diodorus, Տարսոնացի) 20. 21. 43. 46. 49. 50. 53. 56. 60. 67. 146. 216. 277. 416. 424. 480.
Դովսիթէոս 307.

Digitized by Google

Դուին 42. 70. 90. 93. 146. 149. 150. 191. 221. 222. 223. 494.

Եբեքթոս (եպս. Անտիոքի Պիսիթեալ) 26.
Եբրայեցիք 153.
Եգիպտացիք 237. 352. 396. 466.
Եգիպտոս 113. 235. 237. 256. 269. 287. 307. 322. 325. 334. 344. 347. 484. 496. 501. 518. 519. 538.
Եգնադիոսէ (եպս.) 254.
Եգնատիոս կամ Իգնատիոս (Անտիոքացի) 50. 298. 466.
Եգուա 308.
Եդոմ 388.
Եզեկիէլ (Մարգարէ) 346. 393.
Եզնիկ 509.
Եզր (կթղ. Հայոց) 221. 222. 223. 224. 227.
Եզրաս (եպս. Կիսդաղ) 183.
Եթիոպա 322.
Եթովպացիք 466
Ել
Եղ | 146. 149. 151.
Էղ
Եղագէս (եպս. Մանդեղայց) 183.
Եղիա (Մարգարէ) 46. 154. 240. 246. 340. 500.
Եղիա Սիւնական (երէց) 52.
Եղիա (վանական) 54. 55.
Եղիա (կթղ. հայոց) 222.
Եղիշա (եպս. Ցուրտաւայ) 178.
Եղիշէ 536.
Եղիսաբեթ 352. 353. 484.
Եղիսէ (Մարգարէ) 517.
Եղիփաս (եպս. Սամուրիաղ) 183
Եմեսու 306.
Եմմանուէլ | 4. 38. 199. 200. 361. 404. 405. 426.
Եմմանուիէլ | 429. 452
Ենէս (եպս. Մարուէլ) 183.
Ենովք 46.
Ենովք (եպս. Ծիղկանու) 183.

Digitized by Google

Եպիկտիգոն (եպս. Կորնթացւոց) 452
Եպիկտիոս (հայր) 524.
Եպիփան (Կիպրացի) 306. 313. 436. 448. 452.
Եպիփան (Սալտունցի) 520.
Եպիփան (Պերգացի) 525.
Եսայի (Մարգարէ) 87. 157. 204. 210. 211. 234. 297. 318. 331. 343. 350. 363. 368. 394. 438. 454. 463. 467. 491.
Եսայի (եպս. Ցուրտաւալ) 178.
Եզայի (հայր) 512. 513.
Եստգէն (եպս. Քորչոնա) 183.
Երեմիա (Մարգարէ) 26. 115. 157. 181. 204. 205. 318. 350. 356. 438. 439. 443. 468. 469.
Երեւան 151.
Երինոս կամ Երինիոս (հետեւողն Առաքելոց) 296. 298 306.
Երկաբնակք 193. 224. 230. 413.
Երկիր Աւետեաց 487.
Երուսաղէմ 38. 115. 119. 121. 123. 140. 167. 174. 176. 177. 179. 182. 183. 185. 186. 221. 230. 280. 298. 306. 325. 327. 337. 353. 407. 408. 410. 484 504. 511. 512. 514. 516. 520. 521. 522. 523. 524. 526. 527. 528 530 533.
Երուսաղէմացիք 184. 300.
Եւա 477.
Եւգենէս (եպս. Սամթաւցի) 183.
Եւդոկէ կամ Եւդոքսիա (թագուհի) 260. 512.
Եւելիոս (եպս.) 511.
Եւղոգիոս (քհնյ.) 376.
Եւղոյիոս (եպս. Նիկոմեդացւոց) 146.
Եւնոմիոս կամ Եւնոմոս 5. 83. 138. 146. 278. 307. 377. 379. 380. 385. 450. 474.
Եւսեբի 512.
Եւսեբիոս (ժամանակագիր) 306.
Եւսեբիոս (Եմեսացի) 306.
Եւսեբիոս (երէց) 260.
Եւտիքեանք 286. 287 292.

Digitized by Google

Եւտիքոս | 49. 50. 53 56. 66. 83. 104. 106. 119. 138.
Եւտիքէս | 146. 149. 152. 186. 187. 215. 262. 268. 271.
272. 278. 281. 286. 307. 308. 309. 331. 369. 372.
375. 383. 416. 417. 473. 492.
Եւփիմէ 142. 143.
Եփեսացիք 15. 366.
Եփեսոս 20. 50. 52. 55. 57. 66. 72. 78. 82. 94. 119.
120. 138. 144. 191. 215. 220. 262. 271. 272. 277.
279. 286. 295. 296. 304. 308. 314. 331. 332. 351.
360. 374. 396. 417. 491. 492. 493. 494. 519.
Եփրեմ (Խորին Ասորւոց կամ Ուռհայեցի) 306. 335. 344. 347.
422. 429. 430. 431. 435. 437. 445. 446. 462. 463.
475. 480.

Զամբի 391.
Զանկեան 526.
Զարիհաւան 42. 70.
Զաւրակ (Գղաւոնան) 74.
Զաքարիաս (եպս. Կասդրացի) 183.
Զաքարիաս կամ Զաքարիա (Մարգարէ) 200—1. 206. 392.
Զաքարիա (քահանայապետ) 353.
Զաքարիա (եպս.) 536.
Զենոն (կայսր) 49 126. 140. 141. 142. 262. 266. 267.
268. 269. 277. 300. 328. 502. 520.
Զենոն (հայր.) 512
Զենոն (Զաւրավար) 517.
Զենոն (Անապատաւոր) 521.
Զիկ (Վանանդայ տէր) 42.
Զոլի 524.
Զոսիմոս (հայր) 518.

Ընծիհնայ կամ Հնծիհնայ 53. 56. 67. 216.

Թադէոս (Առաքեալ) 78. 189. 302. 323. 414. 497. 533.
534. 536.
Թադէոս (եպս. Մեհնունեաց) 70. 73.
Թադէոս (եպս. Առնայոյ) 146. 149. 151.

Digitized by Google

Թադէոս (եպս. Ոստանաց) 223
Թաթուլ (եպս.) 41.
Թամասիոն (երէց) 523.
Թբաս (=Թեբաս) 518.
Թեանք 8.
Թէաւսէաւս 522.
Թէմրա (եպս.) 42.
Թէոդոս (թգր.) 119. 328. 378 492. 516 519.
Թէոդոս (եպս. Դարդմանից) 224
Թեոդոս (սպասաւոր Ցուլիանէ Սրգի.) 243. 244. 267.
Թէոդոս (եպս. Երուսաղէմի) 259. 516. 522.
Թէոդոս (անապատաւոր) 518.
Թէոդոսք (թագաւորք) 281. 328. 412.
Թէոդոր
Թէոդորոս
Դէոդորոս
Թէոդորիոս
(Թէոդորոս=Theodorus, Մոպսուէստացի) 8. 13. 15. 17 20. 46. 50. 53. 56. 60. 67. 83. 146 216. 277. 489. 521.
Թիոդորիտեանք 308.
Թէոդորիտոս (Կիւրացի) 49 50. 53 56. 57. 60. 67. 83. 103. 119. 120 125. 143. 146. 216. 278. 297. 385. 416. 424. 446. 449. 480. 481.
Թէոդորոս Մարդպետական կամ Սեպհական գնդին եպս.) 146. 151. 196.
Թէոդորոս (եպս. Փորթալ) 183.
Թէոդորոս (եպս. Բզնունեաց) 223.
Թէոդորոս (եպս. Ամասիոյ) 224.
Թէոդորոս (Մեսրապոլիտ Մելեթինոյ) 302.
Թէորոտ 43. 46.
Թէոփիլեանք 330. 493.
Թէոփիլիս կամ Թէոփիլոս (Աղեքսանդրացի) 51. 380. 423.
Թէոփիլոս (եպս. Կեսարիոյ) 533 536.
Թոնրակեանք 498. 500.
Թովմաս կամ Թումաս (Առաքեալ) 15. 39. 192 206. 293. 331. 351. 381. 462. 493. 497.
Թովմաս (եպս. Տարսի) 183.
Թորգոմ 415.
Թուղթն Լևոնի տէ՛ս Տումարն Լևոնի.

Digitized by Google

Թումաս (Թովմաս քահանայ, գաղափարող թղթոցս) 28. 40. 47. 54. 61. 65. 69. 77. 89. 98. 107. 127. 145. 162. 219. 238. 278. 322. 334. 357. 395. 482. 497. 525. 537. 538.
Թուրք 304.

Իբա
Իբաս
Հիբաս | 50. 57. 67. 83. 103. 278. 510.
Իգնատիոս տե՛ս Եգնատիոս
Իդակիա (վանք) 515.
Իսահակ (եպս. Քունանակերտ) 183.
Իսմայէլ (երէց Գառնոյ) 151.
Իսրայէլ
Իսրայեղ | 6. 87. 201. 235. 237. 256. 338. 353. 391. 455. 476. 496. 534.
Իսրայեղեանք 334.
Իսրայէլ (երէց Պտղավանից) 151.
Իտալիա (=Ատալիա) 524.
Իրենիոս 451.

Լախուարտք 304.
Լաւոդիկէ 215.
Լեոն Դ՝ Լեոն (հռովմայեցի) 53. 56. 60. 67. 83. 97. 119. 120 121. 125. 138. 146. 149. 152. 164. 165. 177. 182. 183. 186. 192. 216. 226. 247. 249. 252. 256. 257. 258. 262. 265. 275. 277. 284. 285. 300. 308. 309. 310. 311. 312. 314. 317 318. 319 358. 369. 372. 375. 376. 377. 386. 416. 427. 449. 480. 481. 482 492. 517. 522. 524. 525.
Լեոն (կայսր) 260.
Լեոնտիոս (Ակաղոնացի) 521. 524.
Լիբիա
Լիբա | 215. 269. 513.
Լիբէացիք 416.
Լիկիա 519
Լփնիք 322.

Խաբբա (եպս.) 42.

Digitized by Google

Խաղ 536.
Խաչիկ (կթղ. հալոց) 302.
Խառան 224. 344.
Խափա 53. 55.
Խոսրով (եպս. Ամատունեաց) 70.
Խոսրով (Արքայից Արքայ) 72. 76. 194. 221. 223.
Խոսրով (երէց Աւշականու) 151.
Խոսրովշնում (Սմբատ Բագրատունի) 218.
Խորասանիկ
Խորասանիկք | 91 95.
Խորխորունիք կամ Խոռխոռունիք 41. 70. 73. 78. 81. 151. 196.
Խուժաստան 41. 47. 72. 79.
Խուժիկ 136. 138.
Խուժիկք 70. 72. 166. 178.
Խրաւանաս (կղզի) 517.

Միղկան 183.

Կաթարա 41.
Կաթարոս 124
Կաթուքեկ (վանք) 151.
Կաղանդէոս 329.
Կաղնի Արամազդայ 346.
Կաղփք 322
Կամբիշոյ (Մեսրապոլիտ) 218.
Կամիտոս (թգր.) 518.
Կայէն 77. 392
Կանա (Գալիլիացւոց) 404.
Կապադովկացիք 50.
Կապադովկիա 536.
Կապաղական 81.
Կասդրա 183.
Կարդոն 30[illegible].
Կարին 221. 223.
Կարմեկան, Կարմիկան 41. 42.
Կարմիր ծով 85 487.
Կարպոկոստէս (=Կարպոկրատէս) 307.

Digitized by Google

Կաւատ (Արքայից Արքայ) 41. 42. 43. 164. 192. 220.
Կաւկաս 132.
Կելիստինոս | Կելեստինոս | Կեղեստինոս (եպս. Հռոմայ) 185. 241. 306. 397. 509. 535.
Կենա 54. 55.
Կեսար կամ Կեսարիա (Կապադովկացւոց) 214. 433. 448. 512. 533. 534. 536.
Կեսարիա (պաղեստինացւոց կամ փղշտացւոց) 306. 517.
Կեսարիա (փիլիպեան) 504.
Կերինթոս (Ասիայի) 307. 415.
Կիլիկիա 518. 521. 537. 538.
Կիղբք 322.
Կիպրոս 436. 521.
Կիսդադ 183.
Կիրակոս (կրօնաւոր Կիպրացի) 517.
Կիրոմն | Կիւրիոն (Վրաց կաթողիկոս) 138. 164. 166. 168. 170. 176. 178. 180. 185. 194.
Կիւբէ 278.
Կիւրեղոս | Կիւրեղ | Կիւրղոս (Աղեքսանդրացի) 26. 49. 51. 69. 91. 101. 103. 119. 185. 214. 220. 271. 272. 285. 290. 296. 299. 300. 306. 310. 331. 363. 364. 366. 368. 369. 371. 375. 376. 377. 378. 379. 384. 385. 386. 389. 396. 435. 443. 444. 445. 450. 452. 464. 471. 474. 475. 476. 478. 482. 493. 502.
Կիւրղոս | Կիւրեղ (Երուսաղիմացի) 88. 306. 325. 326. 327. 354. 355 429. 484. 488.
Կիւրէն (քղք. Լիբիոյ) 513.
Կիւրոս (քղք.) 119. 216. 424. 449. 481.
Կիւրոս (թգր.) 501.
Կլայ տե՛ս Հռոմկլայ
Կլաւդոնիոս 524.
Կղեմէս 306.
Կղոդիանոս | Կղաւդիանոս | Կլաւդիանոս | Կլոդիանոս 421. 430. 445. 465. 475.
Կնճաւ (վանք) 498.

Digitized by Google

Կոզման (երէց Ուրտայ) 151.
Կոմիտաս նոմ Կումիտաս (կթղ. հայոց) 211. 212. 218. 222. 483. 497.
Կոսդաս (կայսր) 534.
Կոստանդիանոս | (մեծն) 43. 328. 329. 330. 334. 492. 493.
Կոստանդինէ | 496. 507. 517. 534.
Կոստանդիանուպաւլիս (=Կոստանդնուպաւլիս) 14. 26. 46.
Կոստանտինոյ պաւլիս 49. 52. 55. 57. 66. 72. 78. 82 119. 138. 144. 179 185. 186. 191. 215. 220. 243. 244. 256. 258 262. 265. 267. 268. 269. 272. 274. 276. 277. 279. 300. 301. 304. 306. 343. 351. 358. 373. 374. 417. 467. 512. 519. 524.
Կոստանդին (եպս.) 224.
Կոստանդին (կթղ. հայոց) 503.
Կոստանդին (սրկդ.) 517.
Կորիս 258.
Կորնթացիք 36. 88. 391.
Կորնթոս տէ՛ս Կերինթոս
Կուխորդ 183.
Կուկի (կղզի) 215.
Կումբրինոս
Կումբրիկոս (=Մանի) 216. 500.
Կուռնելիոս 265.
Կրետացիք 32.

Հաբաս 46.
Համազասպ (Գուգվառամեան) 74.
Համազասպ, Սահակ (Համալակեան) 74.
Համազասպ (Զիւնակիան) 74.
Համազասպ (Սահակեան) 74.
Հայաստան 42. 47. 93. 94. 108. 149. 212. 291. 323.
Հայաստանեալք 128. 140. 191. 222. 302. 304. 305. 413. 414. 415. 416. 417. 419. 420. 446. 482. 526.
Հայկաղնեալք 413.
Հայք 17. 41. 42. 44. 45. 46. 48. 51. 52. 55. 59. 60. 62. 70. 72. 73. 74. 76. 78. 79. 90. 103. 130. 146. 149. 150. 151. 163. 164. 167. 168. 170. 172. 176.

Digitized by Google

178. 179. 180. 183. 185. 196. 212. 218. 220. 221. 222. 223. 227. 231. 232. 234. 239. 295. 296. 300 302. 303. 322. 323. 335. 358. 407. 408. 413. 492. 493. 494. 497. 503. 504. 509. 526. 527. 533. 534. 536.

Հարթ (*Հարթալ*) 41.

Հարք 41. 70. 73. 223.

Հաւուկ (*եպս. Արշարունեաց*) 73.

Հեբրայեցիք 6.

Հեթում (*թգր. հայոց*) 503.

Հելլենացիք 433.

Հեղի (*քհնայպտ*) 353. 391.

Հենատիկոն կամ *Հենետիկոն* (*Զենոնի*) 126. 277. 300. 502.

Հերակղ (*կայսր*) 222. 223. 383

Հերովդէս 216. 338.

Հերովդիանոսք 216.

Հիքաս տե՛ս *Իքաս*.

Հիմնոս 258.

Հմայեակ (*Վարաժնունի*) 74

Հնդիկք 322. 466. (*Արևմտեան և Արևելեան*)

Հնծիհնայ տե՛ս *Ընծիհնայ*.

Հոն (*երէց*) 21.

Հոնք 446.

Հոռոմանոս (*եպս. Ակիոյ*) 70.

Հոռոմ-Կլայ տե՛ս *Հռոմ-Կլայ*.

Հոռոմ, *Հոռոմք* 1. 43. 45. 46. 49. 121 151. 164. 179. 192. 194. 221. 222. 223. 270. 300. 304. 325. 352. 358. 532.

Հռաքել 201.

Հռիփսիմէ (*վանք*) 151.

Հռիփսիմեանք 534.

Հռոմակ (*եպս. Ամարասու*) 81.

Հռոմ-Կլայ 503. 530. 537. 538.

Հռովմ | 119. 179. 185. 186. 241. 262. 280. 296. 298.
Հռոմ | 301. 306. 307. 310. 344. 372. 375—377. 379. 386. 397. 398. 427. 435. 446. 448. 496. 503. 504. 533.

Digitized by Google

Հռոմմայական (Թուղթ հռոմմայեցւոց) 226.
Հռոմմայեցիք 105. 272. 369. 391. 416. 466.

Ղազար (եպս. Փողոքիոյ) 183.
Ղազարոս 377. 440. 450.
Ղևոն տե՛ս Լևոն.
Ղևոնդ (եպս. Մեծկուանց) 81.
Ղէքէոս (=Թադէոս Առաքեալ) 533. 536.
Ղէգէոս 367.
Ղուքարիս 278.
Ղուկանացիք 32.
Ղուկաս (Աւետարանիչ) 179. 205. 334. 339. 340. 351. 353. 354. 355. 487. 488.
Ղուկիանոս 307.
Ղուկիփերա 372.

Ճենաստանեալք 466.
Ճիկք 304

Միգիսարիանոսք 104.
Մաթէ (Մաթեայ) 5.
Մաժոոց / Մաշոոց (=Սուրբն Մեսրոպ) 1. 9. 180. 220. 296.
Մակաբայեցիք 155.
Մակար եպս. (Երուսաղէմի) 306. 407. 408. 410.
Մակեդոնն / Մակեդոնիս / Մակեդոն 5. 66. 149. 152. 220. 278. 284. 295. 307. 328. 374. 416. 417.
Մակեդոնիք 216.
Մահարձ 42.
Մաղաքիա (Մարգարէ) 201.
Մազկան 41.
Մաղէ (քարեպիսկոպոս) 41.
Մամիկոնք, Մամիկոնեանք 41. 52. 62. 70. 72. 73. 74. 76. 78. 81. 218. 223.
Մամուեստիա (=Մոպսուեստիա) լիշատակի ընդ Թէոդորոսի.
Մալէն (երէց միւս Սրճոյ) 151

Digitized by Google

Մանազկերտ 223. 294.
Մանանքրհ (Ռաժիկ) 72.
Մանասէ (եպս. Բասենոյ) 108. 109. 146. 149. 150 151.
Մանասէ (թագաւոր) 121.
Մանդեղք 183. 194.
Մանդեն (Ամատունեաց տէր) 42.
Մանի 43. 46. 53. 56. 66. 83. 146 216. 278. 281. 307.
Մանիքեցիք 2.
Մանուեղ (Սպանդունի) 74
Մաշդոց (Սուրբն Մեսրոպ) տես Մաժդոց
Մաշդոց (եպս. Խոսրովունեաց) 70. 73. 74. 81.
Մատթէոս (եպս.) 79. 83.
Մատթէոս (եպս. Աղահունեաց) 196.
Մատթէոս (Ալեքսանդրիչ) 338. 350. 351. 377. 450. 479. 488.
Մարա (դպիր) 42.
Մարաթովն 5
Մարդաղի 73. 78. 81.
Մարդպետական (–սեպհական գունդ) 41. 70 73. 76. 81. 146. 151. 196.
Մարեթոնեալք 8.
Մարի (երէց) 41.
Մարիամ (Աստուածածին) յանախ.
Մարկեղոս, Մարկեզոս (գաղատացի) 216. 383. 415.
Մարկիանոս (կայսր) 115. 119. 120. 121. 124. 143 186. 192 249. 254. 256. 259. 260. 284. 307. 328. 333. 334 491. 497. 510. 511. 512. 513. 516 517.
Մարկիանոս (ոմն) 522.
Մարկիոզն | (պոնտացի) 53. 56. 66. 83. 138. 146. 215.
Մարկիոն | 278. 307. 415.
Մարկոս (եպս. Բագրեւանդայ) 73.
Մարկոս (Ալեքսանդրիչ) 179. 262. 272. 328. 339. 351. 488.
Մարհալա 53. 55.
Մարուէլ 183.
Մարտ (գիւղ) 54. 55.
Մաւտիոնէ (խոստովանող) 520.
Մաւրիկ (կայսր) 151. 278.
Մաքսիմոս (մոնազ Կ. Պոլսի) 301.

Digitized by Google

Մաքսիմոս (եպս. Անտիոքայ) 146. 186
Մելիտինէ 302. 376
Մելիտոս (եպս. Անտիոքայ) 297.
Մելքիսեդեկ 216.
Մելքիսեդեկիդք 216.
Մեծ կողմք 196.
Մեծկուանք 81.
Մեծ հալք 41. 59. 214. 215. 218. 279. 283 302 518. 535. 536.
Մեհնունիք 42. 70. 73. 146. 149. 151,
Մեղքի (երէց) 52.
Մենանդրոս 307.
Մեսրոպ (սուրբն) 220. 304. 534 տե՛ս և Մաժդոց
Մերշապուհ (եպս. Մամիկոնեանց) 41. 48. 52. 55. 62. 70. 72. 73. 76
Մերշապուհ (չինական) 74.
Միղամիղ 183.
Միհր Արտաշիր 78.
Միջագետք 211. 307. 536.
Միրհորմիզդ (սրկդ.) 41
Միքա 43
Միքայէլ (եպս. Զարեհաւանից) 70.
Միքայէլ (երէց Աղցից) 151.
Միքայէլ (հրեշտակապետ) 248. 286.
Մխիթար (եպս. Ամարասայ) 196.
Մծբին 41. 83. 107.
Մծբնացիք 72.
Մծխիթա, Մցխիթա 164. 171 172. 178. 182. 194.
Մնգր 218.
Մոկք 42. 70. 81.
Մոնդանոս 216. 307. 415. 501.
Մոլաքացիք 394.
Մովսէս (քերթողահայր, Խորենացի) 22
Մովսէս (մարգարէ) 23. 85. 125. 159 162 204. 225. 235. 240. 241. 251. 252. 258 265 329 330 337. 339. 341. 348. 350 356 393. 427. 435. 436. 455 457 458. 461. 469. 476 487. 504 534
Մովսէս (եպս. Զարեհաւանի) 42.
Մովսէս (եպս. Բ...ղատու) 81.

Digitized by Google

Մովսէս (եպս. Վրաց) 110. 112. 113. 119. 128. 133. 135. 140. 141. 176. 161. 163. 178. 179. 184.
Մովսէս (կթղ.) 136. 138. 146. 149. 164. 166. 222.
Մովսէս (եպս. Խոսխոռունեաց) 151. 196.
Մուշեղ (Հմայեակեան) 74.
Մուշեղ (Թոնրակեցի) 498. 500. 501.
Մուշեղեան 41.

Բազդեն (երէց) 52.
Բաղկերտ (արքայից արքայ) 220
Բակոբ Թեղ 41.
Բակոբ (քնյ.) 53—54.
Բակոբիկ 224. 322.
Բակովբ (Նահապետ) 26. 38 181. 201. 438
Բակովբ (եպս. ցուրտաւայ) 178.
Բակովբ, Բակորոս (Տեառնեղբայր) 88. 179. 325. 326. 327. 354. 355 481. 485. 488.
Բակոբ (սուրբն) 518.
Բակովբէ (եպս. Դրտաւի) 183.
Բամրէս 498.
Բանէս 498. 500.
Բաւիտեան (երէց Աղվարդայ) 151.
Բափկան (եպս.) 42.
Բեսու (եպս. Բասենոյ) 223.
Բեսու 389. 487.
Բիւրիպիդէս (Աթենացի) 384.
Բոբ. Բովբ 337. 350. 382.
Բոբիանոս (թզր.) 442
Բոհան (Կ. պաւլսեցի) 26.
Բոհան (Անտիոքացի) 185.
Բոհան (Եդեսացի) 278.
Բոհան (երիցապետ) 41.
Բոհան (եպս. Ապահունեաց) 73.
Բոհան (եպս. ցուրտաւայ) 178.
Բոհանէ (« ») 178.
Բոհանան 43.
Բոհանիկ (եպս. Գարդմանայ) 81.
Բոհանիկ (եպս. Ելոյ) 146. 149.
Բոհանիկ (երէց Արտաւազդայ Ապարանից) 151.
Բոհանիկ (երէց Արծափայ) 151.

Digitized by Google

Ցոյս (եպս. Գողթան) 73.
Ցոյն. Ցոյնք 14. 221. 232. 295. 297. 300. 302. 307. 352. 413. 428. 466. 467. 470. 479. 494. 495. 496. 516. 534.
Ցովաննէս 51.
Ցովաննէս (միայնակեաց Գառնեցի) 526.
Ցովհաննէս (եպս. ի Տուոց) 528.
Ցովքնաղ տե՛ս Ցուքնաղ
Ցովղանմնա 52.
Ցովել (մարգարէ) 200.
Ցովհան (եպս. Սառուսթիէլ) 183.
Ցովհաննէս (Աւետարանիչ) 26. 30. 57. 79. 83. 117. 204. 205. 225. 226. 287. 293 297. 318. 325. 326. 330 331. 337. 338 342. 350. 351. 352. 399. 440. 441. 443. 446. 455. 466. 485. 486. 488. 503. 521. 522.
Ցովհաննէս (կթղ. հայոց) 29. 78. 81. 85. 222.
Ցովհաննէս (Մկրտիչ) 64. 86. 88. 106. 111. 213. 338. 354. 381. 382. 476. 485. 517. 524
Ցովհան (Ոսկեբերան) 91. 94. 101. 236. 298. 306 309. 343. 347. 377. 415. 450. 463. 466. 467. 479. 491. 493.
Ցովհաննէս (եպս. Ամատունեաց) 108. 109. 146. 149
Ցովհաննէս (երիցապետ) 126.
Ցովհաննէս (եպս. Արծրունեաց) 146. 151.
Ցովհաննէս (իմաստասէր) 220. 222. 223. 227. 230. 232 234
Ցովհաննէս (Մանդակունի) 239.
Ցովհաննէս (եպս. Աղեքսանդրացի) 277.
Ցովհաննէս (Եգուացի) 307
Ցովհաննէս (պատրիարք Ասորւոց) 335.
Ցովհաննէս (քնյ. Աղեքսանդրացի) 511.
Ցովհաննէս (հայր) 523.
Ցովհաննէս (եղբայր) 525.
Ցովհաննէս կամ Ցովհան (Երուսաղեմացի) 306. 451.
Ցովհաննու (վանք) 151. 172
Ցովնագան 41.
Ցովնան (եպս. Վանանդայ) 73.
Ցովնան (եպս. Հերթայ) 218.

Digitized by Google

Ցոմնան (մարգարէ) 346.
Ցովսէփ, Ցուսէփ (հայր) 34. 205. 285. 325. 352. 354. 438.
Ցովսէփ 476. 496.
Ցովսէփ (վանական) 54. 55.
Ցովսէփ (եպս. Աղասուէլ) 183.
Ցովսէփ (եպս. Կուխորդոյ) 183.
Ցովսէփ (եպս. Միդամիզ) 183.
Ցովսէփ (գեղեցիկ) 201
Ցովսէփ Երէց (կթղ. հայոց) 220.
Ցովսէփ (հայր Սիմոնի) 536.
Ցորդանան 46. 64. 86. 88. 89. 210. 213. 354. 381. 425. 426. 427. 428. 487. 526.
Ցուքնաղ, Ցուքնաղիոս, Ցոքնաղ 119. 121. 125. 177. 185. 186. 300. 328. 488. 492. 495. 514. 515. 516. 520. 521. 522.
Ցուդա (ցեղ) 157. 353. 393.
Ցուդա (իսկարիովտացի) 325. 347. 491. 496. 514.
Ցուդայեան (թուղթ) 226.
Ցուդա (Առաքեալ) 497.
Ցուդա (Ցակոբեան) 534. 536.
Ցուլիանէ (սրկդ.) 243. 244.
Ցուլիոս (մեծն Հռովմայ եպս.) 26. 51. 101. 296. 298. 306. 310. 317. 435. 446. 450. 462. 509.
Ցուլիոս (Աղկորնացի=Աղիկառնացի) 329. 491.
Ցուլիոս (կրօնաւոր Կիպրացի) 517.
Ցունանէս (երէց Աւանի) 151.
Ցունաստան 484.
Ցուսէփ, Ցովսէփ (նախապար) 331. 340. 493.
Ցուսէփ (ներքինի) 511.
Ցուստին, Ցուստիանոս (կայսր) 141. 142. 221. 300. 328. 326. 484.
Ցուստինոս 300.
Ցուստինեան 142.

Նարադ 392.
Նաբովթ 241.
Նոբովք 451.

Digitized by Google

Նազարէթ 4. 204.
Նազիազ, Նազիանզ 26. 213. 214. 236—7. 289. 299. 306.
Նաթանայէլ 127. 204.
Նաւատիանոս 216. 307.
Նեստոր | 8. 14. 15. 17. 20. 26. 43. 46. 48. 49. 50.
Նեստորիոս | 53. 56. 60. 62. 67. 72. 76. 78. 81. 83. 91.
Նեստորիանոս | 101. 103. 104. 105. 107. 108. 115. 116. 119. 120. 121. 122. 124. 138. 139. 141. 143. 146. 149. 152. 185. 186. 191. 192. 194. 214. 215. 220. 221. 231. 232. 241. 262. 271. 277. 279. 281. 284. 285. 288. 290. 291. 293. 295—7. 307—312. 315. 328—9. 331—33. 344. 363. 365. 366. 367. 369. 371—2. 375. 379. 383—85. 391. 396. 416. 420. 424. 427. 429. 444. 449. 459. 466. 472. 474. 481. 482. 489. 491. 492. 493. 502. 505. 510. 513. 518. 519. 521.
Նեստորիանոսք. Նեստորականք 45. 46. 62. 66. 70. 72. 76. 79. 80. 155. 173.
Ներսէ (եպս. Բասենոյ և Մարդաղոյ) 78. 81.
Ներսէս (եպս. մարդպետական) 41.
Ներսէս (կթղ. հայոց) 52. 55. 59. 62. 70. 72. 73. 76.
Ներսէս (եպս. Մարդաղոյ) 73.
Ներսէս (եպս. Սամոսատայ) 74.
Ներսէս (եպս. Բժնունեաց) 146. 149. 151.
Ներսէս (եպս. Վանանդայ) 151.
Ներսէս (սուրբն, մեծն) 220. 295. 304. 492.
Ներսէս (Բագրեւանդացի) 221. 222. 223.
Նեքտարիոս (եպս. Հռովմայ) 306. 493.
Նէոկեսարիա 26. 214. 306. 375.
Նիկէ 521.
Նիկիա 8. 15. 33. 43. 44. 46. 49. 50. 52. 55. 57. 66. 72. 78. 82. 88. 95. 122. 123. 126. 138. 144. 191. 215. 220. 262. 269. 272. 277. 295. 304. 318. 329. 330. 351. 369. 374. 397. 468. 502. 516.
Նիկիացիք 390.
Նիկոդիմոս 87.
Նիհորական 72. 218.
Նինուէ 41. 218.

Digitized by Google

Նինուէացիք 240. 334.
Նոյ (երէց) 54. 55. 126.
Նոյ (նահապետ) 286. 347. 350.
Նոշիրական 41.
Նոր Հռոմ 279. 283. 295.
Նանաքարտադէ 41.
Նիրկերտ 224

Շահապուվան 220.
Շահէ (եպս.) 42.
Շապուհ (երէց) 52.
Շարաղար (վարդապետ) 149. 150. 151. 168. 170.
Շաւտ (քորեպիսկոպոս) 41.
Շաքէ 81.
Շմաւոն (երէց) 42. 45. 47.
Շմաւոն (եպս. Խառանու) 224.
Շմաւոն (Վանաց երէց) 254. 256. 259.
Շոշարի 47.
Շուշանիկ 164. 178. 194.

Ոնեսիմոս 88.
Ոնորիոս (եպիսկոպոսապետ Հռոմայ) 379. 448.
Ոստան 223.
Ովփեռ 52.
Որդեակ (երէց Փարպիոյ) 151.
Որդիք Որոտման 414. 533.
Որիկնի 41.
Որմազդ 194.
Որոգինէս 330. 331. 493.
Որտաւ 183.
Ուլուակիա 521.
Ուզպիան 385.
Ուստաւ 183.
Ուրդի 151.
Ուրհայ, Ուռհայ 183. 224. 437. 523. 525. 536.
Ուրմի 534. 536.

Պաղդէն (եպս. Վրաց Թդրկն. տան) 182. 183.

Digitized by Google

Պալունիք 42. 70. 73.
Պահլաւ 323.
Պաղեստին 6. 516.
Պաղեստինացիք 306.
Պանդրուտոյս (տօն) 334.
Պանփիւլիա, Պամփիւլիա 521. 522. 524.
Պանփիւլէ (սրկգ.) 511.
Պարգև (եպս. Հարքայ) 70. 73.
Պարթև 214. 323.
Պարսիկք 41. 50. 192. 221. 223. 306. 526.
Պարսք 41. 156.
Պարտաւ 81.
Պաւղէ, Պաւղի 43. 46.
Պաւղիկեանք 73.
Պաւղոս Տարսոնացի (Առաքեալ) 4. 5. 6. 7. 14. 17. 20. 26. 32. 33. 35. 46. 62. 88. 117. 122. 124. 128. 133. 153. 158. 162. 183. 193. 197. 199. 203. 204. 207. 209. 226. 234. 236. 240. 245. 258. 265 298. 301. 305. 313. 316. 318. 320. 325. 327. 334. 342. 343. 345. 356. 357. 367. 378. 380. 381. 391. 392. 393. 394. 410. 428. 437. 439. 440. 445. 446. 449. 454. 459. 46 . 467. 468. 472. 478. 481. 487. 502. 508. 534.
Պաւղոս Սամուստացի կամ Սամոստացի 49. 50. 53. 56. 66. 83. 146. 192. 216. 277. 297. 307. 312. 391. 416. 424. 449. 459 461. 470. 473. 480. 481
Պաւղոս (եպս. Արուաստայ) 218.
Պաւղոս (հայր. Եթովպացի) 512. 513. 514.
Պաւղոս (եղբայր) 517. 518.
Պաւղոս (վարդապետ) 527.
Պաւղքերեանք տե՛ս Պողքեր.
Պեղատոս, Պիղատոս (Պոնտացի) 64. 299. 337. 338. 340. 361. 362.
Պեղինոս 259.
Պենտուապալիս 269.
Պետրոս (Առաքեալ) 4. 30. 67. 122. 125. 157. 179. 187. 204. 207. 217. 235. 245. 258. 265. 307. 345. 347. 378. 381. 386. 399. 414. 428. 450. 504. 509. 519. 533. 534.

Digitized by Google

Պետրոս (եպս. Սիւնեաց) 70. 72. 73. 76. 79. 222.
Պետրոս (աղքատասէր) 81.
Պետրոս 99. 133. 136
Պետրոս (Անտիոքացի. Գոյլ) 126. 328. 491. 494.
Պետրոս (Աղեքսանդրացի) 243. 244. 245. 247. 249. 250. 251. 253. 256. 258. 262. 264. 265. 267—69. 271. 274. 276. 516. 521.
Պետրոս 300.
Պետրոս (վկայ) 306.
Պետրոս 333.
Պետրոս (եպս. . . . ?) 502.
Պետրոս (եպս. Վէրիոցի) 510. 511. 518. 519. 523.
Պետրոս (աշակերտ) 512.
Պետրոս (զուրագլուխ) 517.
Պետրոս (Թեբացի) 519.
Պետրոս (հայր, փիւնիկեցի) 519. 522.
Պերգա 525.
Պերոզ (արքայ) 43
Պերոզշապուհ 41. 42.
Պիոն (հայր) 521.
Պիուր (մենաւոր) 521.
Պիթագորաս 501.
Պլակիանոս, Պլակիոս (Ուռհայեցի) 510. 511.
Պղատոն(ական) 322. 413.
Պողինոս (եպս.) 254. 259.
Պողքեր 115. 254. 259. 260. 284. 510.
Պոնիփտաս (երէց, ֆրանգ) 510.
Պոնտոս 216.
Պոտէ (Արիանոսաց) 258.
Պոտէ (Լոնդի) 262.
Պոտիմոն (Սկիւթացի) 519.
Պոտոլինէ (գիւղ) 520.
Պռոսկիդոն 298.
Պռոտոր 519.
Պտղավանք 151.
Փրեգմիոս Աղատղիոս կամ Աղատեղիոս 268. 269. 272.

Digitized by Google

Պրոկղ | (եպս. Կ. Պաւլսի) 1. 9. 51. 220. 296. 306. 451.
Պրոկղոս | 464.
Պրոպատիկէ 514.
Պրոտոբէ (եպս.) 121. 258.

Ջոջիկ (երէց Երևանից) 151.

Ռաժիկ (Մանուճրհ) 72.
Ռափայէլ 127.
Ռըմբան 41.
Ռշտունիք կամ Ռուշտունիք 42. 70. 81. 146. 149.
Ռոմանոս (կայսր) 295.
Ռոմանոս (Աբէլմէուլացի) 516.
Ռոմանոսի (վանք) 520. 525.
Ռստակէս տե՛ս Առիստակէս.

Սաքարիոյ Կոտոնի հորական (եպս.) 218.
Սաքէացիք 38.
Սաքէլիոս, Սաքէլ (Լիբիացի) 138. 146. 215. 291. 307. 375. 415.
Սալսահիկք 281.
Սալտուն (գիւղ) 520.
Սահակ (Սուրբն, մեծն) 1. 9. 14. 16. 220. 296. 301. 492.
Սահակ (եպս. Պալունեաց) 42.
Սահակ (քորեպիսկոպոս) 41.
Սահակ Կամսարական 12. 48.
Սահակ (եպս. Ռշտունեաց) 70.
Սահակ (Վարդանեան) 74.
Սահակ (Մանուեղեան) 74.
Սահակ (Համազասպեան) 108. 109.
Սահակ (եպս. Գուրտաւայ) 178.
Սահակ (եպս. Տփղեաց) 183.
Սահակ (եպս. Մամիկոնէից) 223.
Սահակ (վրդ.) 283.
Սահակ (կթղ. Հալոց) 413.
Սահակ (կթղ. ?) 502.
Սաղիմա 52.

Digitized by Google

Սամարեա 307. 350.
Սամէղ (Աբուսաղդեան) 74.
Սամթաւաց 183.
Սամոտ (երէց Բագարանի) 151.
Սամուստացի տես Պաւղոս Սամուստացի
Սամուեղ (Մամական) 74.
Սամուէլ (եպս. Տումանուէլ) 183.
Սամուէլ (եպս. Բզնունեանց) 41.
Սամուէլ (եպս. Բասենոյ) 41.
Սամո.իէլ 37.
Սամուիէլ կամ Սամուէլ (Մահարձոյ Վանաց երէց) 42. 45. 47. 52.
Սամուիէլ (երէց Հաւիսիմեանոյ) 151.
Սամուիէլ (եպս. Յուրտաւայ) 178.
Սամուիէլ 203.
Սամուիէլ (Կամրջաձորեցի) 302
Սամուրեաղ 183.
Սառուսթիէլ 183.
Սարակինոսք 333.
Սարգիս (Զաւրականեան) 108. 109.
Սարգիս (եպիս. Տայոց). 223
Սարեբա 52. 54
Սաւղոս 45
Սեբերիանոս 306. 315.
Սեւեւկիա 515
Սելովամ 513.
Սեկունդոս (եպս. Մոկաց) 181.
Սեկունդոս, Սիւնկիտոս 103. 285. 310. 367. 444. 475.
Սեղբեստրոս (եպս. Հռովմայ) 306. 334. 396. 497. 509.
Սենեքերիմ 295.
Սերգիս (Բաբգէն) 47.
Սերգիս կամ Սարգիս (երէց) 54. 55.
Սեւագրիա 525.
Սեւերիանոսք 60.
Սեւերոս, Սեւերիոս 53. 56. 57. 60. 62. 83. 138.
Սէթ (պաշտաւնեայ Տամոքայ) 54.
Սիմեւոն (Ծերունի) 326.

Digitized by Google

Սիմէոն, Սիմոն (երէց) 48. 51.
Սիմէոն (Անտիոքացի) 120. 142. 143.
Սիմոն (երէց Դատաւանից) 151.
Սիմոն (եպս. Մեծկոզմանց) 196.
Սիմոն (Կիւրենացի) 513.
Սիմոն (որդի Յովսէփու) 536.
Սիմոն (Կախարդ) 88. 97. 145. 158. 258. 265. 307. 500. 501. 515.
Սիմոն (եպս. Նինուէի) 218.
Սիմոն տե՛ս Պետրոս (առաքեալ)
Սինա, Սինէական (լեառն) 240. 455.
Սիոն, Սիովն (լեառն) 59. 123. 176. 183. 436. 497.
Սիոն, Սիովն (եպս. Դողթան) 146. 149. 151.
Սիս 503 538.
Սիւնական (Սաքերայի) 52.
Սիւնակեաց (Յովհաննէս) 523.
Սիւնիք 42. 70. 72. 73. 76. 78. 146. 149. 151. 183. 196. 323. 358. 373. 536.
Սմբատ Վրկան կամ Գուրկան մարզպան 149. 150. 151 163. 168. 170 172.
Սմբատ Բագրատունի (Խոսրովշնում) 218.
Սմբատ (Թոնրակեցի) 498. 501.
Սնարք 534.
Սողոմ 329. 391.
Սոկրատ, Սուկրատ (պատմագիր) 298. 330. 466.
Սողոմոն (եպս. Մոկաց) 70.
Սողոմոն (իմաստուն) 99. 367. 454. 500.
Սորմենոս (Սորատեղատ Հայոց) 90. 93.
Սուկաւեանք (վկայք) 323.
Սուսինա 52.
Սուկինոս
Սուկենոս
Սոկենոս
(Նիոլ Կեսարացի) 375. 376. 384.
Սուրբ Սոփի 393.
Սուրբ Յակոբ (եկեղեցի Երուսաղէմի) 527. 533.
Սուրբ Յարութիւն 534.
Սուրբ Կարապետ 534.

Digitized by Google

Սուրբ Գրիգոր (տաճար Հռոմկլայի) 537.
Սուրբ Աստուածածին (տաճար Հռոմկլայի) 537.
Սուրբ Փրկիչ (» ») 538.
Սոփիոնիա 216.
Սոփոնիա (մարգարէ) 392.
Սոքփոնէ 52.
Սպանդիատ (սպասող) 42.
Սպանիացիք 466.
Ստեփաննոս (եպս. Անձևացեաց) 70.
Ստեփանոս (եպս. Տայոց) 81.
Ստեփանոս (եպս. Բագրեւանդայ) 151. 196.
Ստեփանոս ա (եպս. Յուրատաւայ) 178.
Ստեփանոս բ (եպս. Յուրատաւայ) 178.
Ստեփանոս (եպս. Ուռթաւի) 183.
Ստեփանոս (Սուրբն) 205. 213. 246. 366. 523
Ստեփանոս (եպս. Արզնի) 218.
Ստեփաննոս (եպս. Սիւնեաց) 323. 358. 460. 373. 375.
Ստեփանոս 329
Ստեփաննոս (եպս. Եփեսոսի) 491.
Ստեփանոս (հայր) 512. 515. 516.
Ստեփանոս (սարկաւագապետ) 523.
Ստեփանոս (կթղ. հայոց՝ Հռոմկլայեցի) 538.

Վահան 133. 174.
Վահանունիք 42.
Վահրամ 171. 172. 173.
Վահրամ (որդի Գրիգորոյ Մագիստրոսի) 219.
Վաղենտին 216
Վաղենտիանոս 307
Վաղենտիանոսք 97.
Վաղերիանոս 103.
Վաղոտ (եպս. Արշամունեաց)
Վանական վարդապետ 533. 536.
Վանանդ 73. 74. 78. 81. 151.
Վանկոլի Ս. Նշան 537
Վասիլ (սրկդ.) 519
Վասիլիոս (եպս. Սեւեկիոլ) 515 516.

Digitized by Google

Վասիլիոս 520.
Վարազ (Դաբեղեան) 74.
Վարազ՝ Յոհան (Յոհաննեան) 74.
Վարազներսեհ 42.
Վարազպատգակ 41.
Վարդ (Հմայակեան) 74.
Վարդ (Մամիկոնեան) 42. 47 48.
Վարդ (Մամիկան) 74.
Վարդան (Վասակեան) 74.
Վարդան (Մուշեղեան) 74.
Վարդան (Վահեունի) 74
Վարդան վարդապետ 503. 526. 535.
Վարթ 534.
Վահարամաշիր (Հահանգ) 42.
Վասգապետեանոս (կաթող) 501.
Վիրք 43. 45. 46. 51. 110. 130. 132. 162. 163. 164. 167. 168. 170. 172. 174. 176. 178. 179. 180. 185. 193. 194. 221. 300.
Վստամ 42.
Վրթանէս (եպս. Սիւնեաց) 78.
Վրթանէս (Քչկան որդի) 90. 93.
Վրթանէս Քերդող (տեղապահ) 110. 112. 130. 132. 133. 134. 136. 138. 140. 141. 162. 174. 196.
Վրթանէս (եպիսկոպոսապետ հայոց) 408.
Վրիւ (Արտաշրան) 71.

Տաճատ (եպս.) 41.
Տաճիկք 42. 218. 306. 537.
Տամոքա, Դամոքա 54. 55.
Տայք 41. 81. 223.
Տարաւն 48. 52. 62. 70. 73. 76. 78. 81.
Տարսոս (=Տարսուս, Տարսոն) 424.
Տարսի 183.
Տարսոնի 216.
Տեառնատուր (եպս.) 41.
Տէր վրդ. (Քչկան) 109.
Տիմանչ (Լիկաթ) 503. 507.

Digitized by Google

Տիմաթէոս (եպս. Բաղասականու) 81.
Տիմոթէոս (Աղեքսանդրացի) 91. 94. 101. 103. 126. 140. 259. 300. 329. 491. 513. 517. 519. 523.
Տիմոթէոս (եղբայր) 525.
Տիպոն, Տեսբոն 42. 156.
Տիտոս (կայսր) 115. 501.
Տիրակ (եպս. Բագրևանդայ) 70. 73.
Տիրոտ (Պալունեաց տէր) 42.
Տմորիք 42.
Տորոս 518.
Տումասուէլ 183.
Տումար Լեոնի 53. 56. 60. 67. 83. 103. 105. 124. 136. 142. 146. 149. 152. 164. 165. 177. 182. 183. 192. 216. 226. 247. 249. 250. 251. 254. 256—8. 262. 265. 267. 275. 277. 284. 300. 308—311. 358. 386. 492. 517. 522. 524. 525.
Տուոց գաւառ 528.
Տուրգ (եպս. Բասենոյ) 412.
Տսերմիզ 183.
Տրապաւլիս 513.
Տրդատ (թգր. հայոց) 220. 334. 493. 496. 497. 534.
Տփղիս 172. 183.

Ցուրտաս 110. 111. 113. 164. 166. 169. 177. 178. 184. 194.

Փաղէկ 126.
Փարաւոն 37. 38. 334.
Փարպի 151.
Փիլաքսոն եպս. (Փիլոքսենոս Նաբուզալ կամ Նաբոմկայ) 451.
Փիլիպեցիք 309.
Փիլիպպոս (Առաքեալ) 204. 211. 381.
Փղոփիանոս (Անկիւրացի) 119. 125. 307. 381. 416. 417. 420. 492.
Փղիշտ 510. 512.
Փոկաս (եպս. Տսերմիզ) 183.
Փողդրիզ 183.
Փուկաս (եպս. Բզնունեաց) 41.

Digitized by Google

Փոլիկաս (եպս. Բասենոլ) 41.
Փոտ (պատրք. Կ. Պաւլսի) 279. 283.
Փոտինոս 216. 307.
Փորթա 183.
Փռանգք 456.

Քաղաքաշատ 220.
Քաղդէացիք 501.
Քաղկեդոնիտք
Քաղկեդոնականք
Քաղկեդոնեաքք } 79. 94. 98. 356. 513. 525.
Քաղկեդոնի, Քաղկեդոն 48. 49. 53. 56. 57. 60. 62. 67. 80. 81. 83. 94. 97. 101—103. 105. 107. 110. 115. 119. 120. 121. 123. 124. 126. 130. 133. 136. 138. 139. 141—144. 146. 149. 153. 164. 165. 177. 182. 183. 186. 192. 194. 216. 221—224. 226. 227. 229. 231. 232. 262. 272. 277—279. 284—286. 290. 304. 305. 307. 308. 310. 311. 314. 317. 334. 344. 351. 358. 360. 364. 365. 369. 373—376. 491. 492. 494. 495. 502. 510—512. 514—520. 522. 524. 525.
Քարմա 41. 218.
Քերսոն 49.
Քերսոնեցիք 49.
Քոթ (եպ/էց) 20.
Քորչինա 183.
Քունանակերտ 183.
Քրազրու (գիւղ) 512.
Քրիստափոր (եպս. Պալունեաց) 70. 73.
Քրիստափոր (եպս. Ռշտունեաց) 181.
Քրիստափոր (եպս. Սիւնեաց) 146. 149. 151.
Քրիստափոր (եպս. Ապահունեաց) 151. 196
Քրիստափոր Բ. (կթղ. Հայոց) 222.

Ֆրանգք 528. 532. 534.

Digitized by Google

ՑԱՆԿ ՎՐԻՊԱԿԱՑ ՏՊԱԳՐՈՒԹԵՍՆ *)

Սիւ-	Տող	Սխալ	Ուղիղ (ըստ խմբագրին)
1	14	* հատուցանես	մատուցանես
1	16	* աղաւթից	յաղաւթից
2	2	Աստուած	Աստուած,
2	5	* հանդեն	հինգեն
5	27	* հալհոլաւթեամբն	հալչհոլաւթիւնամ
6	28	աստուած թափեաց	ած թափեաց
7	18	* ամոթեալ	ամոթեալ
9	14	պաւղոցն	ցաւղոցն
10	9	թղթոցդ	թղթոցս
13	26	թէոդորեալ	Դիոդորեալ
14	17	ընդ ինքս կիրս	եւ ընդ ինքս կիրս
14	30	պատուաստուեթեանն	աստուածուեթեանն
15	28	* ոխմանէն	ուսմանէն (ալապէս և մի-բես 21 և ի տողն 12 * ոխոմ ուղղագրել ուսումն ես նաև երես 194.
16	6	երևեցան	երևեցաւ
16	17	զմնք	զմեք
16	20	պարզամտութիւնս	պարզմտութիւնս
16	21	հրեութեանն	հրեութեանցն
16	23	ուսմունան	ուսմունան
16	29	* մի լինել	ի լինել
19	7	Թէոդորի	Դէոդորի
19	15	մշակացն, Արժանի	մշակացն արժանի
20	18	զկոչեցեալսն	զաւանեցեալսն
20	19	Թէոդորի	Դիոդորի
21	12	* խուսմն	ունուսմն

*) Աստղանշանները ըստ խմբագրին ուղղագրելի բառերը կը ցուցնեն։

21	20	դաղարիմ	դաղարեմ
23	3	* մատենիցն	մատեանքն
23	22-23	և անանձնատապատ պատ-կանեալ յարդարեցան	և անանձնատ պատկանեալ յարդարեցաւ
23	27	ոչ զաւրին	ոչ զաւրեն
23	32	միայն	միոյն
24	19	* մի լսել	մի ասել
24	33	* ըստ նոցա շմկեալ	ըստ նոցա աղմկեալ
»	33-34	վարկի՝ յանձն առնուլ	վարկ իւանձն առնուլ
25	26	անհաւասար	յանհաւասար
27	6	եղում	եղում
27	10	նոցա այն	նոցայն
30	26	* ոչ զերծանէր	ոչ վերծանէր
32	14	* ամպարշտութիւնն	ամպարշտութեանն
32	19	ախոյեանի	ախոյեանք
32	30	նմա եթէ.	նմա.
33	28	սպանեն	սպանին
34	10	յուժգնագոյն, գոչէ.	յուժգնագոյնս գոչէ.
34	12	և այս է	և այս իսկ է
36	12	հաստուցանողն զդատաստանս	զհաստուցմանողն դատաստանն
39	13	գտանեմ	չգտանեմ
39	29	ընդ Որս	Ընդ որս
41	8	շահաստանի՝ Կարմենանան	շահաստան, ի Կարմենանան
41	14	Ննաքարատդէ	Ննաքարատգէ
41	29	ի փովկասալ և ի Սամաւելէ Բգնունեաց եպիսկոպոս է	(ՉՆՉԵԼԻ)
42	5	զարիհուանի	Զարեհուանի
42	12	արշարունեաց	Արշարունեաց
42	13	վանադալ	Վանանդալ (=Վանանդալ)
42	15	Դաշտակարանի, տէր,	Դաշտակարանի տէր,
43	7	Հոռոմոց, Վրաց	Հոռոմոց և Հայոց, Վրաց
43	34	Մանի,	Մանի,
44	16-17	զանազան սիրողութեամբն	զանազանս իրողութեամբն

Digitized by Google

45	8	առաքելական	և առաքելական
45	29	* որպէս զմեզս	որպէս զմեզս
50	33	որոմամբ	որոմամբ
51	26	և զզիումն	և ի զզիումն
52	6	խաչին Նորա	խաչին Նորա
53	19	Դ	Եւ
54	9-10	ձեռնադրութիւն	ձեռնդրութիւն
55	3	Մամիկոնէից	Մամիկոնեանից
56	10	և զԲարծումայ, Ընծիհնայ	և զԲարծումայ Ընծիհնայ,
56	20	մարմնոյ	ըստ մարմնոյ
56	29-30	և զմարմնաւորութիւնն	զմարմնաւորութիւն
57	1	և Զիբա	և զիբա (*) Ցոր. զվիքա. (Ընդելի)).
59	14	սրտի	Ուրդի
60	21	չարչարեցաւ տեառն	չարչարեցաւ*Տէրն տեառն
63	34	Ե	Եւ
65	4	* փախուց	խափուց
66	16	որպէս զնոսա	որպէս և զնոսա
66	21	զՊաւղոս	և զՊաւղոս
67	29	և զսներոս	և զՍներոս
68	4	հաւատոյ	հաւատայ
71	2	հոգևորական, ձեր	հոգևորական. Ձեր
73	26	Ե	Ե
74	2	մաղխաղ	մաղիսաղ
79	25	զոր	որ
85	3	աւուրսն	աւուրս
85	11	զապականեալ	և զապականեալ
85	13	Աստուածապաշտս	և զաստուածապաշտս
86	5	երեսումն	Երեսուն
87	13	* զծնանիլն	զծնաւղն
87	14	լեալ	լեալ (*) Այսպէս լորի-նակին) (Ընդելի)
87	29	և ելանել հաւատովք	և ելանել և մտանել հաւատովք
87	32	ընդ որ	ընդ որս
89	4	նայն	նոյն
90	12	գրեցէքն	և գրեցէքն

Digitized by Google

90	26	* առաքեցէ	առաքիցէք
91	2	զՏիմոթէոսին	և զՏիմոթէոսին
93	3	Գիտեմք	Գիտեմ
97	1	չիցուցեալ	չիՁուցեալ
97	17	* ոչ զաւրաց	ոչ զաւրեաց
97	25	* ցասնուլ	ցածնուլ
99	19	* և միջի	ի միջի
99	21	Ալսղան նմանի	Ալս զաննմանի
99	28	չարացելոց	կարացելոց
100	9	* որք	որոց
100	21	կերպարանաց	կերպանալ
100	23	և յարակալութեանց	և յարակալութեան
100	34	անցանիմք	անցանեմք
101	17	* մոլորութիւն	մոլորութեամբ
101	25	Գրիգորացն	Գրիգորանց
101	32	զերանելի	զերանելոյ
102	5	ի մարնանալոյ	և ի մարմնանալոյ
102	24	առաջնակի	առանձնակի
103	32	համախորհուրդք	և համախորհուրդք
104	4	որ արժանի	ոչ արժանի
104	26	* զայրն	զԱյն (= զԱստուծոյն)
108	19	և մի կերակուրս	և ի կերակուրս
109	1	տացից... և կնքեցից *)	տացից *)... և կնքեցից
109	3	վաւերական	վաւերականի
110	8	ոգՁունի	ողՁունի
110	14	* ինձ արժանի	ինձ անարժանիս
110	18	քանզի յաչեսափ	քանզի յետ յաչեսափ
110	21	յորում ոչ եգիտ պտուղ Տէրն	յորում պտուղ ոչ եգիտ Տէրն
111	4	գնդալոյզ	գնդալոյզ (* փքալոյզ)
111	5-6	սուրբ հարցն։ ճշմարիտ...	սուրբ հարցն ճշմարիտ...
112	15	* և անկնքելի շնորհիւն	և անքակելի մնալ շնորհիւն
112	18	* լընկերսիրութիւնն	լընկերսիրութեանն
113	23	* հաւատացան	հաւատացն
114	9	դիւրանալ	դիւրանանալ
114	23	թէ գուցէ	եթէ գուցէ
114	26	կոչեցեալ եղեալք	կոչեցեալք եղեալք

Digitized by Google

114	37	* էի արժանի	է արժանի
115	2	և ինքեան	և ինքեանք
118	8	վախճան	վախճանի
120	2	սորա	սոքա
122	1	ժառանգա	ժառանգ
122	30	* ընդունայն այն (ընդունաւնայն)	ընդունայն
123	24	սուրբ և անմահ	սուրբ անմահ
123	31	Երրորդութիւնն	զԵրրորդութիւնն
124	4	բողոք է	բաղոքէ
124	22	ոչէսպէսս	ոչէսպէս
125	3	պատնք	պատք
125	12	զսուրբ հաստատն	զհաստատն
125	21	և չարչարանք նա	և չարչարանք նոյ
126	4	և յանդատատան	և յանդատատան
126	6	* յամարի	յամենայն
126	22	եղարքենէն	և յարենէն
128	5	* Տէր	Տէրդ
128	7	* Եւ որք մնացեալ	Եւ որք մնացեալ
128	12	ի ձեռս	ի ձեզն
128	25	ի սուրբ հոգի	ի սուրբ հոգին
130	14	հերձուածոյգ	հերձուածոցդ
130	21	* սոքորութեան	մոլորութեան
131	5-6	զհայհոյութեան բանս բանաքաւաստղացն	զհայհոյութեան բանս խաւաստղացն
132	6	չահեկան	չաեկան
132	7	* զսոլորութիւն	զդալարութիւն
133	19	սայթաքիցին	սայթաքիցեն
133	22	* նախ իսկ	նա իսկ
133	28	ընձին	աւձին
135	10	զժուարութեան	դժարութեան
138	24	քան զերկիր	քանզի երկիր (.՝)
139	11	այսպէս է	այդպէս է
141	20	ընթերձուածասէր	ընթերցուածասէր
142	8	* քանի	քանզի
144	16	քակեցին	քակեացին
147	20	երդմամբ	երեմամբ

Digitized by Google

150	6	զաւրհնեալսդ	զաւրհնեալսն
150	11	զձեռնարկս ալս	զձեռնարկս զայս
151	2	ի միաբանութեան	ի միաւորութեանն
151	16	և աշխարհականաց և ուղղափառաց	և աշխարհականաց ուղղափառաց
152	6	հաւատին	հաւատին
153	15	գնդին	և գնդին
153	17	* վասն ալլապէս է խորհիցին	վասն որք ալլապէս խորհիցին
153	25	* խաչարդաբար	խաչարդաբար, խաչարդաբար, խաչալարդաբար (?)
154	5	ճշմարտապէրծ է	ճշմարտապէրծէ
154	7	զանինչալ ի հրոյն	զանինչալի հրոյն
154	17	շինիցի	շինեցի
155	25	քոքովք	քքովք
156	13	արդեալ է	արդիւ է
157	3	նախատաքուցաւ	նախ քուզաւ
157	8	որ	որք
157	9	և զայս գնդէ	և զայս ապդէ
157	13	որդիքս	արդիքս
157	22	զոչ փարտզութիւն	զոչկարտզութիւն
157	25	առ ասեալ	առասել
158	5	ապարան խակ	ապրքան. խակ
158	13	հաւատոցս	հաւատոցդ
159	10	անուարդութիւն ինչ	անուարդութիւն ինչ
159	11	ուրեմն	ուրեմն
159	28	Բանց սկի	Բանչ սկի
159	34	զառ ինն	զառաքն
160	3	ալս եկն բանս.	յայս նկն բանս,
160	8	կամաց մերոց	կամացս մերոց
161	15	Բաղմամենալ ժամանակաւք	Բաղմաժամանակաւք
164	5	եպիսկոպոսաց քոց	եպիսկոպոսաց տիրոսակցաց քոց
164	11-12	մեզ եհաս լսել	եհաս մեզ լսել
165	14	* թագաւորութիւն	թագաւորութեամբ
167	10	* հաւատոն	հաւատ
167	31	* ի բնի	ի բանի

Digitized by Google

168	16	առ միմեանս	և առ միմեանս
168	24	ուրէմն	ուրեմն
169	26	պատուհասել	պատուհասել
170	29	զի ազատիցեր և ինձ	զի ազատիցի՝ որ ինձ
171	8	* ի մարտի	իմ սրտի
172	24	թղթոյն	թղթոցն
173	5	* զանձն ունել	զքեզ յանձն ունել
173	19	որով և	որով և է
174	3	* զոր ասացեալ	զարմացեալ
178	8	տեղւոջ	տեղւոջն
180	17	* և մանաւանդ զիա	և մանաւանդ զի
183	12	Քորչոնա	Քորզոնա
185	25	ի պատկեր եղև	ի պատկեր մեր եղև
186	3	* եկորդի	եկ որդի
188	17	ԵԹէ	Եւ թէ
191	30	* և ոչ կամ	և ոչ նկարագիր կամ...
192	1	չնչովք	չնչով
194	1	Կիւրոնն	Կիւրիոնն
194	[illegible]	սխմանէն, սխուցանել	ոխմանէն, ոխուցանել
195	5	լիցին	լինիցին
196	6	հաւատար հարց	հաւատար ընդ հարց
196	25	* ի կէր	ի կէս
198	3	զաւղանչմն	զաւղանչեն
198	6	նմանեն	նման են
190-200	37	առնելով զնորաչարչար միտս	առնելով զնորա չարաչար միտան
200	14	խակզբանն է	ի սկզբանէ
200	28	զգալնութեամբ	զգալութեամբ
201	36	ընդհանուր	ընդ հաւր
203	33	չլինելն	զլինելն
203	36	չիշխեա	չիշխեա
204	4-5	քրիստոսաք	քրիստոսք
205	2	մարդացեալ	մարդկացեալ
208	31	բանաձգել	բանաձգել
209	22	զբնութիւնն	բնութիւնն
210	37	առանց	է առանց
211	3	* ի յառելութիւն	(թերևս յարելութիւն, որպէս գտանեմք և յալլուր)

Digitized by Google

216	23	զՄելքիսեդեկիդան	զՄելքիսեդեկիսան
220	6	քաղաքն	քաղաքին
223	17	ցայժմ	Ի լուսանցս յաջոյ «Ցայժհանդէս.
223	18	վարեալ	Ի լուսանցս փոխեալ
227	24	* զորումն	զորմն
227	35	* խաղեալք	խայծեալք (?)
228	21	* ի գրեհականացն	ի զռեհականացն
229	16	Ալդ	Ավ
229	20	* վարժիմք	վարժեմք
230	3	հոգւոյն	ոգւոցն
230	8	փառաւք	փառաւքն
231	14	հերձուածողն	Ի լուսանցս յաջոյ ալինքն Ղրաբնակ և այլ անանունց, ալինքն ցամաքալինք.
235	32	* զի նմա	զի ի նմա
239	27	ցզատիկն.... յաւ՛ղ	քանզի քաւիչ և թողիչ մեղաց տարեան կոչի.
241	4	* հեղեալ	լեղեալ
241	24	ոչ առ ինքն է	ոչ սա ինքն է
245	27	բարի ոք	բարիոք
251	21	զնարանն	զհարան
252	12	ի թերահաւատութիւն	ի թերեհաւատութեան
253	10	փակեմ	փակեցից
253	28	* զնաւղի	զաւզի
261	26	գրեալ ի,	գրեալ է,
261	27	ընկերակից եմ ես	ընկերակից իմ ես
261	32	* նզովեցի զառամաք	նզովեսցի առամար
262	36-37	հայրապետէ Պետրոսէ	Պետրոսէ հայրապետէ
264	8	գրեցի	գրեցից
269	7	Ի լուսանցս «Ավ թուղթ ազաւաղ և պակաս է ի վերջն».	
274	15	ինչ(ձ)	ինձ
277	11	հաւատան	հաւատալ
280	19	* ...ոգն	գալլոն
280	23	* տեառութեանն	տնտեառութեանն
291	5	* զոր լերկուցն	զոր լերկուցն
291	14	* ըստ երկուսն ասելով	ասա երկուսն ասելով
294	13	մասաւս ես	միւս ես

Digitized by Google

296	3	Գրոկգի և առ Ակակայ	Գրոկգի և Ակակայ
296	28	և ապա խաչի	և ապա վասն խաչի
397	29	խաչհրդովք	խաչհրդով
299	29	հոլովք	լոլովք
302	25	և առ գաւազան...	և առ ի դաւազան
303	11	չի ոչ	զի ոչ
307	22	* Կորնթոս	Կերինթոս
314	37	Նովին	Նոքին
315	8	չփոթումն	չփոթութիւն
315	26-27	որիչ իցէ	որիշիցէ կամ որոշիցէ
316	4	Նորաբանութիւն	Նոցա բնութիւն
318	35	Աստուածաբանութիւնն	աստուածաբանութիւնքն
323	9	իբրև անձն	իբրև զանձն
324	5	* զգրեցելումն	ըստ գրեցելումն
327	24	ապ	ալր
328	15	* ի ներքս յածական	ի ներքսածական
330	8	* լար ի գաղանութիւնն	լարի ի գազանութիւնն
330	9	* կաղուեալ	կղուեալ
330	36	լուրում	լիւրում
334	10	պանդրուտոյս	պանրուտոյս
335	29	ոյժ	լոյժ
336	28	ի վե—բակ	ի վե—բոլ
345	3-4	* դաղձուէ գանակած	դաղձու գանակոծ
347	31	ասպիսիք	ալսպիսիք
348	1	հանդեպ	հանդէպ
349	10	* ստացուածք	ստեղծուածք
351	17	* խունկս եղս	խունկս և եղս
359	13	սարաժանմամբ	տարժանմամբ
359	36	գիւտրն—կալ	դիւրբն—կալ
360	11	* որ առթէ և սողել	որ առ թէև սողել
363	7	չարամտածութեան	չարմտածութեան
375	37	Դիոկկեսարիայ	Նիոկկեսարիայ
377	15	եւ յետ ալլոց	Ե՛ յետ ոչլոց
380	36	ի մարրկանէ	ի մարդկանէ
383	16	զբաքանին	զբաքանեն
390	37	* բանակռութիւն	բանակռուութիւն
391	30	ասսորիկ	ալսորիկ

Digitized by Google

391	2	* առոգեաց	ոռոգեաց
393	23	գաւառաւքդ	Ինքն գաւթաւքդ
394	11	սրոյն	որդի
407	19	հոգւոյ	հոգւոց
409	22	* և լանպէտ ամանի	և յորպէտ ամանի
416	29	անեզեր	անեպեր
417	32	Հաւր	Հայր
421	30	այծ	կայծ
423	33	բնութեանցն	բնութեանն
424	8	զխաչեն	զխաչն
424	12	Տարոնացի	Տարսնացի
424	15	զմարմին	զմարմինն
424	37	զայս սրածին	զայսոսրածին
425	14	եւ եթէ այդ՝ այդպէս է	և եթէ այդպէս է
425	27	այդպէս է	այդպէս է
429	2	մի աւրինակ	միաւրինակ
433	17	Հրեշտակք ըստ	հրեշտակք դարձեալ ըստ
439	18	սուրբ	սուրբս
441	37	զբանն կենաց	զբանն կենաց
442	19	մի ասաց	մի բնութիւն ասաց
446	15	նոյնանուանի	նոյնպէս անուանի
453	17	* . . . կանութեան	ապականութեան
453	18	* մոլ..... կանացու էր	մոլորելոց թէ ապականացու էր
453	19-20	* ի ճշմար... ասաց	ի ճշմարտութենէ ասաց
453	20-21	և մ . . . . թեան	և մեղանչութեան
453	21-22	նախ ք . . .	նախ քան զխաչն
453	25	* մեղանչու . . .	մեղանչութիւն
453	26	և . . . միաւորեալ	և ապա միաւորեալ
454	3	* . . . . . ացութեան	և մանկանացութեան
454	5	* քան զ . . .	քան զխաչն
454	6-7	* . . . . . նդիմանեսցէ	...լանդիմանեսցէ
454	10	* սքանչեն . . . . . իգոր	Սքանչելագործն Գրիգոր
454	11	* այլ	այլայլելի
454	21	* . . . . . աչն	. . . խաչն
454	23	* և լաւի . . .	և լաւիտեան
454	30-31	* եր . . . . . համուռ ամենայն արարածք բաւ . . . . նել զնա	երկիր միահամուռ ամենայն բաւական չեն տանել զնա
459	16	և մէ	և մի
459	31-32	* Աստուածպետա...	Աստուածպետականն
462	26	ուրեմն	ուրումն
472	32-36	միաւորուլ-թեանն	միա որու-թեանն

Digitized by Google

482	3	զխաչելեալն՝ ասէ	զխաչելեալն՝ Աստուած ոչ ասէ
487	11-12	լցեալ գանիւ ալլ ունիմ վերայելումն	լցեալ գանիւ (է չասանցալլունիմ) վերայ՝ ելումն
489	14-15	Ջրաւիրառնութեամբ	Ջրախառնութեամբ
497	6-7	* պանտրուտոյս	պանրուտոյս
498	12	չարեաց	կարծեաց
498	13-14	մրծ-ղնութիւն	մծղնէութիւն
500	25	* չարեաց	չարաց
502	5	ինքն անէծ	ինքնանէծ
504	21	պարգև ի Հոգւոյն	պարգևք Հոգւոյն
505	15	սան զՀալբ	քան զՀալբ
513	5	սրա սիրեաք մեռեալ են, որ լանդիալն	որ ասիրեաք մեռեալ են... (ըստ Մեխայէլի Ասորւոյ, ս.պ. Երզ. 1871 էջ 181—182 որ ասի երեւ-ռեալ-ն, որ լանդիման)
513	7	* Սիրա	սիրա
514	20, 23	Անագանոն	անագանուն
517	1	* Ավփել ....բացին	Ավփելոս Կեսարացին
519	12	թագաւորն	և թագաւորն
519	15	տեալեանն	ի տեալեանն
520	14	ոսկենէրկ	ոսկեներկ
520	27	* ... բացն	Լրացն
520	27-28	* ..... հաւատն	զհաւատն
522	35	* Տուկի	տուկի (=դուքսի)
523	15-16	* եկեղեցեւպան	եկեղեցպան
526	9	հնջեցեալ	հնչեցեալ
526	17	մուղրի	մուղրի
526	22	Զանկեան	Զանկիեան
530	17	* բովեաց	բաւեաց
534	4	չինեալ	չէր չինեալ
534	19	ի նաս	ի նմանէ
534	31	վիրք	Վիրք
537	14	տարիս	տառիս
538	23	. . . �	. . . ՀՀ

Այս ցուցակը փոքր ինչ ստուար եղած է հրատարակիչներու անկախ պատճառներուն։ Նախ որ բնագիրը Կոստանդնուպոլիս մեացած լինելով առձեռն ընդօրինակութիւններ Տփղիս յղուեցան և վերջնական բազդատութիւնը նոքին Կոստանդնուպոլսոյ մէջ կատարուեցաւ և երբեմն որ վրիպակներէն զատ ուղղութեանց և փոփոխութեանց ցանկն ալ է մեզի խառնուեցաւ, բնագրին յայտնի կամ հաւանական կերպով ուղղագրելի կէտերը ցուցնելու և բառասիրաց մատղուութեան յանձնարարելու համար։

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

3 2044 009 530 643

WIDENER LIBRARY
Harvard College, Cambridge, MA 02138: (617) 495-2413

If the item is recalled, the borrower will be notified of the need for an earlier return. (Non-receipt of overdue notices does not exempt the borrower from overdue fines.)

CANCELLED
WIDENER
OCT 0 6 2006
NOV 2 5 2006
BOOK DUE

Thank you for helping us to p[redacted]

Digitized by Google

3 2044 108 732 819

HD

Digitized by Google